Սերգեյ Գրիգորյան

ՁՈՐԻ ՍԻՐՈՒՆ

Հովհաննես Գրիգորյան

ՁՈՐԻ ՍԻՐՈՒՆ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ԵՐԵՎԱՆ
1983

ԳՄԴ 8427
Գ 192

Կազմեց և խմբագրեց՝
Ա. Ա. ՂԱՓԼԱՆՅԱՆ

ԲԳՄ

141953

Գալշոյան Մ. Հ.

192 Զորի Միրոն։ Վեպ, պատմվածքներ.— Եր։ Սովետ. գրող, 1983.— 504 էջ։

Ժողովածուն ընդգրկում է հեղինակի «Զորի Միրոն» վեպը, «Մարութա սարի ամպերը» պատմվածաշարը, ինչպես նաև մի հատված անավարտ վեպից։

4702080200 (7)
705(01)84 — 84 «Տ»

ԳՄԴ 8427
Ար²

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմելու, խմբագրելու և ձևավորման համար, 1983

ՁՈՐԻ ՄԻՐՈՆ

Նվիրում եմ մարդ, որ ձեռքեր ունի ծիրանենու արմատների պես և աչքեր՝ կապտամշուշ երկնքի...

1

Գյուղերին խառված մի տուն կա՝ թիկունքը գյուղն արած, շեմ ու դուռ՝ ձորի ցանցառ ու անտաշ ատամներով բաց երախին։

Քառասունհինգ տարի տունը ծուխ է ծխում և առավոտ-իրիկուն քաթրի վրա ու ձորի մեջ ծեփում-շարդոտում իր սովերը՝ մեկ կարճ, մեկ երկար։ Իսկ տնատեր Ձորի Միրոյի կոպերը ութսունինը տարի ծրարել են գիշեր և բացել առավոտ։

Միրոյի մի ուսը կախ է ընկած, հետն էլ պարանոցն է թեքվել։ Ու թե շալակ է առնում՝ միշտ ձախ ուսով։

Երեք անգամ է Երևան գնացել։

Առաջին անգամ 1920 թվականին՝ ոտքով։ «Դանթարի տակից» առել է մի կճուճ, մի ճրագ, մի քիչ մեխ, ծխնի ու դռան փակ, վերջին աբասուն՝ կես շիշ նավթ, հետո բոլորը լցրել-դարսել է կճուճի մեջ, շալակն առել, ընկել ճամփա։

Անց քանմեկ տարի Ձորի Միրոն էլի պետք ունեցավ Երևան գնալ-գալու։ Այս անգամ ճամփի կեսը կտրեց սայլով, կեսը՝ գնացքով։ Այս անգամ մեխ ու նավթի համար Երևան հասնել պետք չէր. արդեն ուներ գողհար լեզվակով նավթաճրագ ու մի Հարութ որդի, որին պետք ճամփեր կռիվ։

Ուրիշ ոչի՞նչ, ոչինչ չուներ աշխարհում՝ մի Հարութ, ու պիտի ճամփեր կռիվ։

Որդուն ճանապարհելու նախորդ երեկոյան գնաց գրասենյակ, յոթ տարվա մեջ՝ երկրորդ անգամ։ Կոլեկտիվացման ժամանակ, երբ նրա ցանքում կալի ընկեր Նհոն իր եզն արձակեց լծից, ճիպոտեց, կոլեկտիվ տարավ, և լուծը մնաց թաք եզով, Միրոն երկու օր միտք արավ, ծխնենա խոտ տվեց Բաշե եզանը, աղ տվեց, շփեց, հետո գրել տվեց։

մում, տարավ գրասենյակ, Բաշեին՝ կոլտնտեսության գոմ, ետ եկավ ու...

Տնից՝ դաշտ ու կալ, կալ ու դաշտից քայլում էր ուղի՞ղ տուն։ Սկզբում, ամեն ժողովի, կատարածուն կանգնում էր դռանը.

— Միրո, ժողովի։

Գլխով էր անում, թե՝ հա՛, հասկացա։ Բայց ուշ գիշերին, երբ ժողովի շարունակությունը թաղեթաղ բզկտվում, գնում էր, Միրոն դեռ նստած էր լինում դռան մոտ, իր քարին։ Եվ նրա կախ ընկած ուսին ու թեքված շլնքին բարդեցին նորօրյա մեղքեր՝ նրան անծանոթ, նրանից հեռու։

— Զորի Միրոն կոլեկտիվի ժողովը արհամարհում է։

— Էս գյուղում ամենավերջինը Միրոն ընդունվեց կոլխոզ։ Երեկ մյուս օր չէ՞ր։

— Զորի Միրոն մենատնտեսի հոգեբանություն ունի. իր Բաշե եղը չտաս՝ չութ չի անի։

— Անձնագրային սեղանի պետ ընկեր Լիպարիտը հարցրել է՝ որտեղացի՞ եք, ասել է՝ Սասնո գավառի Խութի շրջանի Գործվարք գյուղից։ Բա՛, Քարագլուխ գյուղը ձեռք չի տալիս Զորի Միրոյին, միտքը Սասո՞ւնն է։

— Գյուղում միայն էն հակահեղափոխական Էլբեգի ու Բաբեկի հետ էր մոտիկ, ընկերներին տարան, մնացել է մենակ։

Եվ ուզեցան ուղարկել Էլբեգի ու Բաբեկի ճամփով... Հետո ուքիշները վախվխելով մեջ ընկան.

— Ջանըմ, Միրոն խեղճ է, հոգին խռով, գործ չունեք։

Ու յոթը տարի հետո, Հարութին կռիվ ճամփելու նախորդ երեկոյան, Զորի Միրոն մեկ էլ բացեց գրասենյակի դուռը։ Նայողներ շատ եղան, ոտքի կանգնող, տեղ առաջարկողներ՝ շատ։ Ամեն նայողի հայացքում՝ Միրոյի աչքերի վիշտ ու վախից՝ պատերազմ է... ամեն տեղ առաջարկող՝ մի քիչ շփոթված։

— Սել կուզեմ, նախագահ,— ասավ։

Առարկելու բան չէր. մինչև երկաթուղային կայարան ուղում էր որդուն սայլով ճանապարհի։

Ճոռալով գնաց սայլը, հող ու քուռ ճամփին թողեց տաք հետք։

Սայլանիվների երկաթօղերից մեկը հին էր՝ կարկատանված, ճաք ու ծակերով, մյուսը՝ դարբին Եգորի մուրճի տակից նոր էր դուրս եկել՝ մի քիչ քուրայի գույն ուներ և մուրճի չմաշված հետքեր։ Հին ու նոր երկաթօղերը գլորվեցին՝ կողք-կողքի, ոլոր-մոլոր, զուգահեռ գլորվեցին։ Զորի

Միրոն առողջ ուս ու ձեռքով ամուր փաթաթվեց որդուն և գլուխը մոտեցնելու ճիգ արեց, բայց ծռված պարանոցը այդպես էլ չենթարկվեց նրան։ Ծանրացած կոպերի տակից փախչող հայացքը եզան պոզն էր քերծում, անցնում, կտրում-անցնում էր մշուշով լցված մի հարթություն, գնո՜ւմ, գնում հալվում էր մշուշ ժայթքած Հայոց լեռնապարի վրա։

Գաղթից հետո Զորի Միրոն ինչքան ասես սայլ էր նստել, ինչքան ասես սայլվոր էր եղել, գնացել այդ ճամփով, որը Քարագլուխ գյուղից կապը կտրել-գլորվում է, բայց ամեն անգամ հասել էր Աղվեսաձոր, գյուղի հող-սահմանի վերջին արտը ու ետ դառել։ Այդ օրը պիտի հասներ Աղվեսաձորն ու անցներ։ Հասներ Աշնակ, դենը գնար։ Քարագլուխ գյուղից կապը կտրած՝ դեպի մշուշապատ լեռները գլորվող այս ճամփով պիտի գնա՜ր, անցներ «Օձի Ղշլան», հասներ երկաթուղային կայարան՝ Ղարաբուռուն... Այդտեղից Արոն սայլն առած ետ պիտի գար, Զորի Միրոն Հարութ որդու հետ պիտի նստեր գնացք, գնար Երևան՝ որդուն ուղարկեր կռիվ։

Հե՛յ գիդի, Զորի Միրո... Այնպես լիներ՝ էս ամառ օրով չլիներ կռիվ, այնպես լիներ... այնպես...

Եվ Զորի Միրոյի սիրտն ուզեց սայլը Ղարաբուռունից չդարձնել ետ. սիրտն ուզեց անցնել Ղարաբուռունն էլ ու այդպես շիփշիտակ շարունակել ճամփեն։

Ուզեց՝ ու շարունակեց... մտքով։

Լծկաններին ջան ասաց, անցավ Ղարաբուռունը, գնաց հասավ Արաքսն ու անցավ գետը, հասավ Իգդիր՝ անցավ, գնա՜ց, գնա՜ց, Հարութ որդու հետ ճամփեն փակող քարերը հրեց մի կողմ, փոսերը լցրեց։ Հարութ որդու հետ գնա՜ց, գնա՜ց հասավ Մուշ, սայլը կանգնեցրեց շուկայի մոտ, Հարութ որդու հետ եկավ Առաքելոց վանք, շուրթերը հողոտած ետ եկավ, որոնեց՝ սարն ի վեր մագլցող ու սեզապատ ճամփեն ճարեց, լծկաններին ջան ասաց, եկավ սարը, մտավ Մուշի ու Սասունի սահմանագլխում նստած Փեթար գյուղն ու Փեթարից էլ անցավ։ Հասավ Խութ՝ անցավ, հարմար ճամփա ընտրեց՝ սարեր եկավ-իջավ, ձորեր իջավ-եկավ, հասավ գյուղ՝ Գարծվարք, անցավ դարբին Դավոյի դռնով, կանգնեց իրենց ընկուզենու տակ, սանդքարի մոտ, Հարութ որդուն ասաց.

«Էս է մեր օջախ, գառ»։

Եվ արձակեց եզները, սրբեց թաց ճակատն ու դաղրա՜ծ, գաղրած նստեց սանդքարի վրա...

— Օ՜ֆ,— երկար շունչ քաշեց Զորի Միրոն, բռնեց ճակատը։

— Գլո՞խդ է ցավում, հայրիկ,— հարց տվեց Հարութ որդին։

— Չէ, գառ... իմ սիրտ կցավա...

— Միրո, շարքաթ խմե,— դարձավ խորհուրդ տվեց սայլապան Արոն,— շաքար ունի՞ս։

Միրոյի «օֆի» շարոցի վրա լծկանները ոտքները կախ էին գցել. սայլապան Արոն ճիպոտեց, հո արեց, և ճռճռալով գնաց սայլը։ Միրոյի հայացքը կաթկթաց ճամփի վրա, կարմիր փոշի ու փշուր դարձավ սայլանիվների տակ ընկած խճերի նման։ Զորի Միրոն վիրավոր ուսը սեղմեց Հարութ որդուն ու էլ կանգ չառավ՝ ուշքն ու միտքն առած գնաց Էրգիր...

2

«Ընկուզասարն էր ու՝ սարի դոշին մեր տուն... Մեր տուն քարափի պես էր... Մեր տան քարեր՝ Մարաթուկի Տիրամոր վանքի քարերի պես խոշոր, Տիրամոր վանքի քարերի պես մամռոտ... Մեր տուն երեք պատուհաններ, չորրորդ՝ Ընկուզասարն էր...»։

Հա՜, Ընկուզասարի փեշը գալիս, կտուր էր դառնում իրենց տան համար։ Ինչ ծաղիկ ու կանաչ սարի լանջին կար, կար՝ կտուրին։ Ջլիներ երդիկը, չելներ ծուխ, չէր իմացվի թե՝ կտուր է։

Ընկուզասա՜ր... է՜, բեռ ու բարձով էր Ընկուզասարը, երկիր կպահեր։ Ճժերը ելնում էին Ընկուզասար, «ջուխտ ու թաք» խաղում, կենտ ընկույզի համար կոխ բռնում, ծեծկռտում իրար, արևմտոցին տարած ու տարված ընկույզները թափթփվում էին ծառերի տակ, իջնում գյուղ։

Արևգալի կողմից ծառերը, իրար թև ու թիկունք, մագլցում՝ սարի գլխին հավաքվում էին, և երկինքն ու երկիրը հասնում էին իրար։ Սարի գագաթին հավաքված ընկուզենիները ամպերն էին քշում, հով ու զով մաղում գյուղի գլխին... Չէ, իր Հարութ պապի աղոթքն էին հասցնում աստծուն... է՜, Հարութ պապ, օղորմի, Հարութ պապ, էդքան ո՞ւմ աղոթեցիր, ինչո՞ւ աղոթեցիր՝ իզո՜ւր, իզուր...

Տան կողքին սանդքար կար՝ կոշ ու կուշտ մամռոտ։

Գարունքին սանդը պոնկե-պոնկի անձրևաջրով էր լցվում։ Տան դիմաց այգի կար. ծառերը արմատները խորացրել էին, թև-թևի տվել, որ չգլորվեն լանջն ի վար։ Ամեն գարնան, երբ սանդքարի կշտից ձնծաղիկը բացում էր աչքը, Ծովասարից մի սավան ամպ էր պոկվում, գալիս նստում ծիրանենու գլխին։ Հետո սանդքարի կշտին մանուշակն էր դողում, և ալուչան ծիրանենու տնազն էր անում։ Ծաղկում էր կեռասենին։ Ծաղկում էր խնձորենին։ Ճյուղերը հացատան կտուրը հանած ընկուզենու ծանրությունից հողը ճաք էր տալիս։ Աշխարհում ինչքան գույն կա հավաքվում, հարսնապար էին բռնում տան դիմաց, երդիկից կաթկթում ներս։ Ու խևանում էր իր

Հարութ պապը, ոունգները լայնացնում, ծծո՜ւմ-ծծում էր գարնան բույրը, փափախն ու այծի մորթուց կարած ելակը նետում կավե ամբարի հետը և բաց ճերմակ գլխով և բաց կրծքով (սեզոտ էր Հարութ պապի կուրծքը), բահը ձեռքին կանգնում էր ծառերի տակ։ Մինչև աշուն դուրս չէր գալիս այգուց։

— Հարսնուկ, հաց բեր,— ձայն էր տալիս, և Խանդութը հացն ու թանով լի կուլան ձեռքին կանգնում էր ծիրանենու տակ, սպասում մեծ կեսարարի մոտենալուն։

— Հարսնուկ, գառ, արտ հաց տարա՞ր։

Խանդութը գլխով էր անում՝ հա։

Հետո պապը նստում, ձուլվում էր ծառի բնին, դառնում ծիրանենու բունը, բնի կեսը, ծիրանենու բնի կեղևը... Հարութ պապը քանի՞ տարեկան կլիներ... Ո՞վ էր թիվ ու հաշիվ պահողը... Կոտորածի տարին ինքը կլիներ քառասուն-քառասունհինգ տարեկան, Կիրակոսը՝ երեսունհինգ-քառասուն, Մանուկը ջահել տղա էր, մեծ եղբայր Զարեհ հիսունն անց էր, հայրը... հոր մազերը ճերմակել էին։ Ուրեմն... Հարութ պապը հարյուր-հարյուր հինգ կլիներ։ Գարունը բացվում էր թե չէ, մտնում էր այգի ու մինչև ձմեռնամուտ դուրս չէր գալիս։ Ճոճք ուներ, մի ծայրը քաղցրակորիզ ծիրանենուն էր կապված, մեկը՝ տանձենուն։ Սանդքարի մոտ նստում էր իրիկնահացի, հարցուփորձ անում գերդաստանի օրվա բանուդործից. վարուցանքից, ջուր ու ջրտունքից, կալուկուտից, հետո տրեխները թաղում էր ծառի տակ և բարձրանում էր ճոճքը։

— Անձրև չեկավ,— սայլապան Արոն ծայր է բացում գրույցի համար։

Ճանապարհը երկար է, սայլի միալար ճռռոցն էլ հոգի է հանում, ավելի է ձգում ճամփան, իսկ Արոն ինքն իր հետ լինել չի կարող։

— Անձրև դարձե սև աղվես,— կրկնում է Արոն և գլխի ընկնում, որ, իրոք, անձրևը շատ-շատ է պետք,— Միրո, տղեք գնացին կռիվ, մնացինք առանց թև ու թիկունքի... Անձրև գար, չկոնձեն արտեր։

— Հա՜, անձրև պետք է,— համաձայնեց Միրոն և ավելացրեց մրտքում.

«Էրգիր անձրև առատ էր...»։

Մեռաքի պես հյուսվում էին անձրևաթելերը ու վերջ չկար։ Հարութ պապը իր կոճղը գնում էր շեմից ներս, նստում, ձեռքերը ծալում ծնկներին ու նայո՜ւմ, նայում էր այգուն, գյուղի տների կանաչած տանիքներին, երդիկներից ոլորվող ծխերին. գյուղից դեն սարալանջին, սարի գլխին նստած երկնքին, նայո՜ւմ, նայում էր ու ասում.

— Քարեր ծաղկան, Միրո։

Ընկուզասարի խշշոցն էր առնում ականջը, խումար մարեի դնդնոցը ու հիշում, որ իր մարեն էլ այդ խաղը, հենց այդ խաղն էր ասում ու՝ այդպես անո՜ւշ, անուշ։ Հետո պապը իրար էր խառնում անձրևի խշշոցն ու խումար մարեի դնդնոցը, մոռանում էր, որ անձրև է գալիս և ականջներում ու մտքի մեջ մնում էր միայն իր, է՞ն, իր մարեի երգը։ Ու նինջ էր գալիս աչքերին. ննջի մեջ դառնում էր երեխա, հարյուր տարի առաջվա երեխան։ Մեկ էլ բացում էր աչքերն ու ասում.

— Ցա տե՜ր... իմ օղորմածիկ մեր էկա՜վ, կանգ տվեց իմ աչաց դեմ։

Անձրևը մաղում ու մաղմղում էր, երկինքը հասնում էր Ընկուզասարի պորտին, նստում գյուղի տանիքներին, ձորերը՝ ձեն-ձենի, զոր ու գիշեր անքուն, աշխարհը թա՜ց, խա՜ղա՜ղ, խաղա՜ղ, թա՜ց։ Հետո մի առավոտ աչք էին բացում, երկինքը մաքո՜ւր, մաքուր՝ կոունկի աչք։ Ծառերի տերևներին անձրևակաթերը շողում-դողդողում էին. խանդութի պարանոցի ուլունքներն էին, քար ու ծառից, տանիքներից ամպաշողը ալիք-ալիք առաջանում էր, ելնում Ընկուզասարը, աչքատես սար ու ձոր ծխում էր։ Հարութ պապը կանգնում էր սանդքարի քով, չափում անձրևաջուրը. «մատ է պակաս»,— ոունգները լայնացնում ու ասում էր.

— Օդ դարձե գառան բերան։

Հետո այգու մեջ պտտվում էր, թաց ոտքերով դուրս գալիս ու կորեկի արտ գնալու միտք անում.

— Միրո, էրթանք տեսնենք արտ ինչքա՜ն խոնավություն է իջե։

Գյուղեզրին կանգ էր տալիս դարբին Դավոյի դռանը, բարև տալիս, բարին առնում, հետո իջնում էին Մասրաձոր, տրեխները հանած կտրումանցնում ջուրը, ելնում ձորից, անցնում Օհանի արտի կշտով, պապը արտ ու արտատիրոջ օրհնանք էր տալիս ու՝ Ֆիդասարի ելվերն էր։

— Օհո՜, կայնի... Միրո, Ավգին կուզե տղին բարի ճամփա մաղթե։

Ավգին՝ գյուղի չորանը, ոլխարը թողած, տխո՜ւր, տխուր գալիս է։ Հարութը իջնում է սայլից, կանգնում ճամփի վրա։ Ավգին կանգնում է Հարութի դիմաց ու ձայն չի հանում։ Ուսերին պիջակ ունի, գլխին՝ փապախ։

— Մնաս բարով, քեռի Ավգի,— Հարութն է մեկնում ձեռքը։

Հովիվը մահակը ձեռքից բաց է թողնում, պիջակը սահում-ընկնում է, և փաթաթվում է Հարութին։

— Շնորհակալ եմ, Ավգի, հոգալափ շնորհակալ եմ,— ասում է Միրոն։

Հովիվը էլի է համբուրում՝ ջե՛րմ, ջերմ, ապա փոշոտ պիջակը գցում է ուսերին, վերցնում է մահակն ու նայում Միրոյին։ Արտասունք կա Ավգիի աչքերում, և ծնոտն է դողում։

— Միրո, աստված մեծ է, քո սիրտ ամուր պահե։

— Գոհ եմ, Ավգի, հոգաչափ գոհ եմ։

— Միրո,— Ավգիի շուրթերը ավելի են դողում և այս անգամ ձայնի մեջ լաց կա,— իմ Բաբիկ բռնված չեղներ, թող էրթար կռիվ։— Ու հեռանում է։

Զորի Միրոն երբեք Ավգիին այդքան տխուր չէր տեսել։ Ծրկա՞ր նայում է հովվի խառնված քայլերին...

«Էրգիր մեր գեղի չոբան Ավեն էր, Ալթնի Ավեն...»։

Հարութ պապի հետ գնում էին կորեկի արտը, Ավեի շները՝ ձեն-ձենի, վրա էին գալիս։ Պապը չէր նայում շներին՝ գլուխկախ քայլում էր։ Հովիվ Ավեն սաստում էր շներին, և Ֆիդասարի գլխին հանդիպում էին Ավեին։ Գելխեղդ շները մոտ-մոտ էին անում, գոմռում, Ավեն քշում էր շներին, դառնում Հարութ պապին.

— Քեռի Հարութ, ներող եղիր։

Ու պապը պատասխանում էր.

— Լաո, քու մեղքն ի՞նչ է, ուրախ էղի, որ շներ վրա կերթան մարդ ու գազանի։

Ավեն մահակը նորից էր թափ տալիս Օհանի գելխեղդի վրա։

— Մարաթուկի թոփ դիպնի քու ջան։

Եվ Հարութ պապը մտաբերում, հաշվում էր.

— Մարաթուկի թոփ կրակելուն մնաց էրկու ու կես ամիս։

Ու հազար անգամ մտածածը էլի էր մտածում. ամռան պա՛րզ, արև օրով, առանց ամպ ու զամպի, առանց կրակ ու կայծակի Մարաթուկը որոտում է, հազար թնդանոթի ձայն է հանում։ Ինչի՞ց է։ Ձայնը հասնում է Գիլոնք, Թաղվու, հասնում է Հավարք, Խիանք, Տալվորիկ, Մշո գյուղերն է հասնում ու մշեցին էլ չի իմանում, թե առանց ամպ ու զամպի, առանց կայծակի Մարաթուկ սարը ինչու որոտաց։ Մտածում էր Հարութ պապը, հարցը էլի մնում էր հարց ու դառնում ասում էր.

— Աստված աստված է, իր գործեր անքննելի։

Հետո պապը նայում էր Մարաթուկի կողմ, Ծովասաքի կողմ, հյուսիս, արևմուտք ու փնչատում էր.

— Աշխարհք դարձե լողցած հարս։

Սար ու ձոր ամպագոլ էին ծխում, օդը լո՛ւռ-լուռ էր, գեղնափորիկը ճկճկում էր կանաչների մեջ. պապը հայացքով որոնում՝ չէր գտնում ու

ականջ էր կախում դեղնափորիկին և՛ ճռռիկին, և՛ բզեզին... Ապա և Մասրաձորից, Սուավիզ ձորից ջրերի խշշոցն էր հասնում Ֆիդասար, խումբ արծիվներ էին ֆոֆռում սարի գլխին, ու Հարութ պապը՝ ձեռքը ճակատին հովհար, որոնում էր իր ծանոթ արծիվը՝ մի թևը սև, մեկը՝ կապույտ։ Գտնում ու ժպտում էր իր ծանոթ արծվին։

— Միրո, իմ սիրտ կուրախանա էս արծվի վրա։

Հետո ներքին թաղի չոբան Մորեն Սուավիզ ձորի մոտից ձայն էր տալիս. «Ավե՜ն...»,— Մասրաձորը արձագանքում էր, սար ու ձոր արձագանքում էին, Ավեի գելխեղդ շները գոռոում, հաչում, Ավեն ոտքի էր կանգնում, պապը պոկում էր դեմի Ջանգակ ծաղիկն ու հրաժեշտ տալիս Ավեին.

— Աստված քու հետ, քու օչխար ու շան, լաո։

Ոլորուն իջնում էին Ֆիդասարն ի վար։ Տրեխները թոն էին առնում, թաց ծիլ ու կանաչ էր մնում իրենց բրդե գուլպաներին, արտեքի միջնակներով քայլում էին, և Հարութ պապը դնդնում էր.

«Սուրբ Կարապետ պաթր պլուր,
Ըր ջամփեքն է օլուր-մոլուր,
Ըր տուռ գիկեր շատ ըխտավուր,
Կես ձիավուր, կես ոտավուր...»։

Դնդնում էր իր խաղը, ոլորվում, գնում, հասնում էին կորեկի արտ, Հարութ պապը առնում էր մի բուռ հող, շուռումուռ տալիս, տրորում, իր խոսքն էր ասում.

— Վըրա չորրորդ օրվան ցանք կարելի է։

—...Ուրեմ, Հարութ,— սայլապան Արոն իմացածն է պատմում չոբան Ավգիի Բաբիկ որդու մասին,— իմ չութ առջևից կերթեր (միշտ առաջին չթվոր եմ էղե, միշտ), էս խեղճ Ավգիի տղի չութ՝ իմ հետևից։ Մեկ էլ, Հարութ, ճնճուղ նստավ քարին, ծլվլաց։ Իմ սիրտ վկայեց. ասի, տղեք, գեղից լուր կգա ու էդ լուր բարի չէ։ Հարութ, խոսք իմ բերնեն էլավ-չէլավ՝ կատարածու Մանիշակ էրևվաց։ Մոտեցավ՝ Մանիշակի աչաց մեջ նայի, իմացա, որ գալ բարի չէր... Տղեն իր չութ հանեց արտեն, կատարածուի հետ գնաց... Ու գնա՜ց, գնաց։ Ավգիի Բաբիկ հակա էր թե՝ չէ, աստված մեղք իրնե ուզե, բայց իմ խելքով, տղեն անմեղ էր։

— Առանց մեղքի մարդու կբանտարկե՞ն, քեռի Արո, մի բան կլինի։

Սայլապան Արոն շեղ նայեց Հարութին, լռեց, քորեց ծոծրակը և գարձավ ասաց.

— Հարութ, կնայենք էդ Բաբիկի աչաց մեջ՝ ուրիշ տեսակ բան կտես.

նենք, հա, էս դադրած օր վկա՝ կտեսնենք, ես էն կիմանամ, լաո, որ յոթ գազ գետնի տակ է, կտեսնենք ու էլի իմ հավատ չէր գա, թե էդ անխիղճ տղեն էդպես միտք ունի։

Ասաց ու հարմար գտավ փոխել նյութը։

— Էս տարի ֆերման սար կելնի՞, Միրո... Վայ քու վիզ մնա քու տակ, Հիտլեր, աշխարհ խառնեց իրար։ Չէ մենակ մարդիկ, անասուններ նմանապես կմաշվին ու կհալվին... Միրո, ֆերման սար կելնի՞։

— Կելնի,— դժկամորեն, բայց հաստատ ասաց Միրոն,— կովողին ու մնացողին հաց ու թաց է պետք։

— Էս տարի էլ, հակառակ, սար արոտ չունի,— շարունակեց Արոն։

Զորի Միրոյի պատասխանը մտքում էր.

«Մեր ծաղկոտ սարեր մնացին, է՞, էն տեղ, Արո, է՞ն սարերի հետև,— հայացքը Արոյի ուսին քսվելով անցավ-գնաց,— ...Ամառ Մարաթուկ կկրակեր իր թոփ, կառնենք կով ու օշխար, կերթենք դեպ Մարաթուկ...»։

Հարութ պապը նստում էր ձին, ոլորում ճամփան, քաշում-տանում էր սարվորներին։ Մարաթուկի փեշն էին հասնում, կարգավորում ամառանոցի իրենց քոշքը, հետո Հարութ պապը, ձին թողած, ելվերում էր Տիրամոր վանքը, խումար մարեն էլ հետը, խանդութն էլ։ Պապով, հարս ու հարսի հարսով, թոռով ու ծոռով հասնում էին Տիրամոր վանք, աղոթում, մոմ վառում, դառնում ետ գալիս։ Վայրի այծեր էին պոկվում քարաքիվերից, խլշկոտում, ծփում Տապանակ հովտի կողմ։ Պապը ժպտում էր նրանց և գալիս քիրվա Շաբաթին վրանից դուրս կանչում, խնդիրք անում.

— Շաբաթ, կխնդրիմ, հրացան-չքացիս վայրի էծերի վրա՝ մեղք է։ Շունչ ու շնչավոր են, թող ապրին։

Ու մի գիշեր մնում էր Մարաթուկի փեշին, լույս առավոտի հետ, օրհնանքը թողած, ձի նստում, իջվարում գյուղ։ Եվ էլի գնում էր Մարաթուկ՝ սարվորներին բերելու, երբ սանդքարի պոնկին նստում էր առաջին եղյամը։

Աշնանը Ընկուզասարից գլտորտվում էին ընկույզները, լցվում քարերի գոգը, դիդիկալով կանգնում գյուղի պատերի տակ, թափ առնում, սարալանջով իջնում էին ընկույզները, կաթկթում երդիկ ու քիվից։ Հարութ պապը առնում էր մի քանի ընկույզ, շուռումուռ տալիս, ասում.

— Էս տարի Ընկուզասարի պտուղ խոշոր է։

Հետո հազար ծիածան էր խճճվում Ընկուզասարի գլխին, ծառերի տերևները դեղնում, կարմրում, տերևները կապույտ էին դառնում ու որ-

դան, Հարութ պապը նստում էր կտուրին նայո՞ւմ, նայում էր ու չէր հագենում նայելուց։

— Միրո, սար կրակ ընկե-կվառվի։

Եվ բոցերը ալիքվում էին սարն ի վար, և գալարվում, և՛ սարի գագաթից մագլցում երկինք։ Հետո յոթը օր յոթը գիշեր Ծովասարից փչում էր քամին, փերթ-փերթ կրակ պոկում Ընկուզասարի ծառերից, փչում մարում էր հրդեհը, հետո յոթը օր յոթը գիշեր քամին ու ընկուզենիները մեջքակռիվ էին տալիս, քամին փախչում էր սարից, մտնում գյուղ, Շերոյի հետ վնգստում երդիկի մոտ։ Ու մի նոթոտ գիշեր ձմեռը Ընկուզասարից իջնում, Սև սարի արջի պես փափո՞ւկ-փափուկ իջնում, մտնում էր գյուղ և մի գիշերվա մեջ գոտկահար ձյուն էր նստում։ Հարութ պապը լուսելուսին դուրս էր գալիս, խաչակնքում ճերմակած աշխարհը, խաչակնքում գոմի դուռը։ Բորեն վիզը երկարում մզզում-բառաչում էր, ձմռան վրա թափ տալիս գլուխը, ու պապը մոտենում, շփում էր եզին.

— Ձմռան համա՞ր քու սիրտ կնեղվի, գառ, համբերե, գարուն կբացվի։

«Համբերե, գարուն կբացվի,— մտքում կրկնեց Զորի Միրոն,— լուսոգի իմ պապ, պատերազմ է. աշխարհք ձմռան մեջ է, փոթորիկի մեջ .. Մարդ է պետք ու կանգնի աշխարհքին սիրտ տա՝ համբերե, համբերե, գարուն կբացվի... Ինչքա՞ն կքաշի էս ձմեռ... Ձմեռ է, լուսհոգի իմ պապ, ձմեռ է,— Զորի Միրոն կրկնեց,— ձմեռ է...»։

Հետո սայլի անիվները Միրոյի մտքից առան բառը՝ ճռճռացրին. «ձմեռ է, ձմեռ է, ձմեռ է...»,— ճռճռացրին, ճռճռացրին, ու Միրոյի աչքերի դիմաց փռվեց իրական մի ձմեռ՝ ճերմակ ու մաքուր, իր Հարութ պապի մազերի նման ճերմակ ու անարատ... էրգրի ձմեռն էր...

«Առավոտ շուտ կելնենք, ձնով կշփենք իմ ձեռքեր, սահնակ կհանենք մարագեն, խումար մարեն կբերեր գավով հալած եղ՝ կխմենք քանց շուր...»։ Եվ հարևան Ներսեսի ու Առաքելի հետ քաշում էին սահնակներ, բարձրանում սար...

Ֆիդասարից ամռանը կեր տեղափոխելը դժվար էր՝ թփուտ էր, քար ու քարափ էր, ճամփա ու ճար չկար և սարից խոտ ու տերև տեղափոխելը ձմեռ օրով էր։ Բարդոցից խոտ ու կաղնախի տերև էր բարձում՝ կապում-կապկպում, ուսը դեմ արած շարժում սահնակը, ուժ տալիս՝ շարժում, հետո սարալանջը քաշում-տանում էր սահնակն էլ, իրեն էլ հետը։ Սահնակը թափ էր առնում, թափ էր առնում, դառնում սանձակոտոր ձի, ծփում էր ու ետևից զզզված պոչը։ Պտտահողմը հասնում-ծեփվում էր

խոտին, իր թիկունքին, ասեղնահարում դեմքը, ու պեծպեծում էր աչքա-դեմի մշուշը...

Զմռան գիշերը կես էր լինում, Օհանի ժղլտնից ելնում էին. պապը քայլում էր առջևից, ետևից հայրը, ապա հորեղբայր Սմբատը, հորեղբայր Նշանը, ապա մեծ եղբայր Զարեն, հետո ինքը, Մանուկը, հետո Սեթոն, Վարազդատը, Կիրակոսը և Մուրադը, և՛ Պողեն, և՛ Պետրոսը... Ժղլտնից դուրս էին գալիս, ու գերդաստանը իծաշարուկ քայլում էր ձյան մեջ տափած արահետով։ Ինքը մտքում շարունակում էր հազար անգամ լսած պատմությունը։ Զենով Օհանին հագցնում քառասուն գոմշի կաշի, Զենով Օհանին կանչել էր տալիս. «Դավի՜թ...»,— ու ձայնը տանո՜ւմ-գցում էր Դավթի ականջը, մտքով շարունակում՝ Դավթի աչում շողացնում էր Թուր-Կեծակին, Դավթին հանում հորից։ Իսկ Պետրոսը ափսոսում էր կիսատ մնացած պատմության համար, չէր համբերում մինչև մյուս իրիկուն, քաշում էր Պողեի փեշից, վրա-վրա հարցնում.

— Պողե, ապել, Դավիթ ինցի՞ ընկավ հոլի մեջ... Դավիթ ինցքա՞ն մնա հոլի մեջ։

Զմռան գիշերը կես էր լինում, Ընկուզասարում գայլերը ոռնում էին ու չէին համարձակվում մտնել գյուղ, գյուղի ու գիշերվա պահակ գելխեղդ շները ձեն-ձենի հարայ էին տալիս, Հարութ պապը Շերոյի հաչոցի մեջ ահ էր լսում՝ վիրավորվում.

— Միրո, գարուն բացվավ, չորս-հինգ օչխար կտանիս Մշո դաշտ, գելխեղդ կբերիս։

Եվ մտքում կիսատ պատմությունը, գերդաստանը քուն էր մտնում ու իր հետ պատմությունը հասցնում լույս-առավոտ։ Ամեն մեկը դառնում էր իր գործին, ինքը նորեն ելնում էր սար։

Պատահում էր փոթորիկ էր սկսվում, երկինքն ու երկիրը գալիս էին իրար, աշխարհը դառնում էր մի քայլ, գոչգոչում էին ձորերը։ Գյուղ ու տուն դառնալու ճար չկար։ Ներսեսի ու Առաքելի հետ մտնում էին բարդոցի մեջ, սպասում։ Սպասում էին մի օր, փոթորիկը չէր դադարում, երկու օր, երեք օր բարդոցի մեջ՝ թիկունք-թիկունքի, իմացած հեքիաթներն էին պատմում, օր ու դեպք անցած-գնացածից. Մարաթուկի քարայրներից, Ծովասարի եղնիկներից, գյոզալ կաքավներից, գայլի հետ տված մահակակռվից, արջի ընկույզ ջարդել-ուտելուց, «չախմախ» հրացանով արջորսից, Տիրամոր վանքի ուխտից և Բերդպարից, և՛ Շորորից ու աչքունքի խաղից... Չորս օր սպասում էին՝ դադար չկար, հետո կորցնում էին օր ու օրվա ժամ ու չէին իմանում, թե որ առավոտվա հետ հանդարտվեց սարը... Կարոտած իջնում էին գյուղ, խումար մարեն, արցունքն աչքերին, կրկնում էր մատաղի խոստումը, խանդությունը հեռվից էր նայում

իրեն ու մոտ չէր գալիս, Հարութ պապը գալիս էր խնդմնդալով, համբուրում իր ճակատը, ասում.

— Իմ ասլան Թոռին փոթորիկ ի՞նչ կանե։

Է՛, էրգրի գարո՛ւն... էրգրի ամա՛ռ... էրգրի աշո՛ւն... էրգրի ձմե՛ռ... Վերի՛շ էր, ուրի՛շ...

Նորեն Ծովասարից փչում էր քամին, ձյան տակ ջուր էր ընկնում, ծոցվոր ամպերը կախվում էին, Հարութ պապը խաչակնքում էր գարնան առաջին որոտը, թիկունքը դեմ անում պատին, նույնը պահանջում թոռ Պետրոսից։

— Իմ մեջք քանց պատ ամո՛ւր, քանց պատ ամո՛ւր...,— կրկնում էր, նույնը պահանջում թոռիկ Պետրոսից։

Սարերից ձնաշերտ էր պոկվում-իջնում, հոսքի հետ հավքեր բերում վար, խառնում ձյան հետ, շաղ տալիս փեսուրները։ Ձյան փլվածքի սուլոցը գալիս-հասնում էր շեմի մոտ իր կոճղին նստած, գարուն սպասող Հարութ պապին։

— Օհո՛-հո՛-հո՛, հուսինի ձե՛ն... Միրո, դու ասես Թաքնթաղին, Գիլոնքին, դու ասես Հավարքին վնաս չհասցո՛ւց։

Եվ բեկորներ էին պոկվում ծերպերից, դղիրդ-դմբրտոցով իջնում, ջմփում հեղեղի մեջ։ Այծերը դուրս էին գալիս այրերից, ձորն իջնելու ահ ունենում, խլշտում-փախչում։ Ու երկու-երեք օրում գետինը սևանում էր, պալան-պալան ծխում, սանդքարի մոտ բուսնում էր ձնծաղիկ, և Հարութ պապը կապում էր իր ճոճքը՝ մի ծայրը քաղցրակորիզ ծիրանենուն, մեկը՝ տանձենուն...

Հուշերը քամել էին Միրոյին, մշուշել էին ուղեղը, և նա չփեց ճակատը, զգաց Հարութ որդու ուսի տաքությունը, ավելի սեղմվեց որդուն ու կամաց ասաց.

— Հարութ... Աշխարհք հող ու ջրից անուշ բան չկա։ Մարդու ուժ հողի մեջ է։ Քանի հող չեն խլե ոտաց տակեն, մարդ անպարտ է, թեկուզ զարկվի՝ անպարտ է, խլեցին՝ գերի է, դառ։

— Ես գնում եմ իմ հայրենիքի պատվի և հողի համար կռվելու,— Հարութը իրենն ասաց,— և գուցե քո կորցրածն էլ ետ բերեմ,— ավելացրեց ժպտալով, հետո այդ մտքից լրջացավ։

Ջորի Միրոն լսեց Հարութ որդու խոսքերը, կրկնեց մտքում, ճպճպացրեց աչքերը, ուզեցավ ինչ-որ ասել, չասաց և հոգու խորքում կանգնեց մի հավատ, ծփաց երազ մի ցանկություն.

«Սովետին պարտություն չկա։ Էս կռվի մեջ հաղթող Սովետն է։

Հա՜, հաղթող Սովետն է ու... Ու բարո՜վ-խերով էրգրի ճամփեն կբացվի... էն անո՜ւշ էրգրի»։

— Կմտածի՜մ, կմտածիմ, կելնիմ աշխարհքեն,— ձգեց սայլապան Արոն։— էս աշխարհքի մարդիկ ի՞նչ կուզին իրարե, իրարու ի՞նչ է տված, ի՞նչ առնել կուզին, Հարութ։

— Մարդկանց հանգիստ խանգարողները այսպիսի ֆաշիստներն են,— լցված պատասխանեց Հարութը,— այսպիսի հրձիգներին աշխարհից պետք է ջնջել։

— Բերան չէր՝ ավետարա՜ն էր,— ծոր տվեց Արոն։

«Աշխարհք ուրիշ բնույթ ունի,— Զորի Միրոն ինքն իր մեջ մասնակցեց զրույցին,— ուրիշ բնույթ ունի, Հարութ, չարհոգի մարդկանց աշխարհքի երեսեն ջնջելու ճար ու հնար չկա, գառ։ Աշխարհքի մեջ էրկու հոգի մնան, էն մեկ չարհոգի կեղնի, էն մեկ կովարար կեղնի, էն մեկ ձեռք դնել կուզե մեկելի գլխին։ Էդ մեկի արուն պղտոր է, էդ մեկի արուն բորենու է։ Էդ մեկ Հիտլերն է, Հարութ։ Հիտլերին արնակից սուլթան Համիդն էր՝ արուն ժառանգեց էնվերին, Թալիաթին, իր նմաններին։ Աշխարհքի բնույթ ուրիշ է, գառ, ուրիշ է ու էդպեսով էլ աշխարհք աշխարհք է...»։

— Է՜, տնավեր աշխարհք,— գանգատվեց Արոն։

«Մարդու ծնված օրից է էդպես,— շարունակեց Զորի Միրոն,— մեր էրգիր էդպես չէ՞ր... Մեր էրգրի էն անո՜ւշ հող ու ջրի հետ հանգիստ, խաղաղ ապրել չկար... Թուրք բեկ կմտներ շեն. խարջի վրա խարջ կուզեր, հարս ու աղջիկ եղծել կար, կռիվ-արուն թափել կար... Տղեք կառնեն զենք, կելվիրեն, կդառնեն սարի ֆիդայի։ Յոթ ֆիդայու դեմ սուլթան յոթ բանակ կհաներ...»։

Զորի Միրոն թողեց՝ նորեն Երկիր գնաց...

3

«Թիվ տասի՞ն էր, տասնմեկի՞ն...»,— կոտորածից չորս-հինգ տարի առաջ էր. արևմտոցին ասկյարները ոտք ու ձեռք շղթայած երկու ֆիդայու հետ մտան գյուղ։ Տղերքին Դիարբեքիր պիտի հասցնեին. դատ ու դատաստանի՝ վերջն էլ գլխատելն էր ու գլխատելը։ Բայց ասկյարի համար ֆիդայուն իր սարի վրա սպանելը, զարկել-սպանել չէ՞ր, ֆիդայուն հաղթել չէ՞ր, չէ՞... Ասկյարին պետք էր նստել ձի, գերի ֆիդայուն առներ մտրակի տակ, քշեր սար ու ձորով, մի ամիս, երկու ամիս, ձիու փոխարեն ֆիդայու բաց ուս ու գլխին բերեր մտրակը ու սպասել, որ նա գալարվի, գալարվի ու ծուռվիզ խնդիրք անի.

— Ի սեր ալլահի, մի զարկեք։

Ասկյարին պետք էր ոտաբաց ֆիդայուն քշել ձոր ու անապատի միջով և սպասել՝ ծունկ ծալի, դադար խնդրի։ Ասկյարին պետք էր աղբյուրի մոտ նստել հացի ու սպասել՝ գերին ձեռք մեկնի, ջրի համար լիզի շուրթերը։ Ասկյարին պետք էր... Թո՛ղ խեղճանա ֆիդային, թո՛ղ խնդրի, ծնկած ու ծուռշլինք պաղատանք անի. չմնա սարի ֆիդայի։ Ու երբ հասնի «Հուքմաթի» դուռը, սողալով գնա վալու ոտքը, երեսը քսի վալու ոտքերին, լիզի, հետո... Հետո մի քանի օր, օրը հազար անգամ, վալին ասի՝ կյանքդ բաշխում եմ, ֆիդային ժպտա, ասի՝ գլխատում եմ՝ պաղատանք անի, բաշխում եմ՝ ժպտա, գլխատում եմ՝ պաղատի... Ասեն՝ ֆիդայու երգ ասա, գյավուրի պար արի, ասեն, ասեն... Եվ ասեն ես քո ֆիդայի... Հետո նո՞ր զարկեն գլուխը։ Թո՞ւռ...

— Հարութ,— չոր-չոր ձայն հանեց Ջորի Միրոն, ու սայլապան Արոն շուռ եկավ, նայեց,— Հարութ, մարդ սպանելուց էլ հարկ է մարդ մարդ մնա։ Կսպանիս...,— Միրոն ցավ զգաց հոգում. պատերազմ գնացող երեկվա երեխա որդու հետ արյունոտ բառերով է խոսում. անիրազեցություն է։— Կսպանիս... կսպանիս, Հարութ, տղամարդի պես զարկ ճակտին, հոգու հետ խաղ չանիս...

Հարութը հարմար պատասխան չգտավ ու գլխով տրեց, թե՝ հա։

«Արևմտոցին ասկյարներ տղերքին գերի արած մտան գեղ։ Մեկ՝ մշեցի Լևոն էր, մյուս՝ սուլուխցի Շահեն...»։

Տղերքին փակեցին ռես Միհրանի մարագում, մի ասկյար պահակ կարգեցին, մյուսները մտան ռեսի տունը։ Երբ Լևոնին ու Շահենին բերեցին, ինքը կանգնած էր Դավոյի դռանը։ Շղթայակապ, բաց ոտք ու բաց ճակատ՝ անցան-գնացին, ու ինքը ամոթ զգաց, կախեց գլուխը, այդպես գլուխկախ հասավ տուն, ասաց՝ ֆիդայի են բռնել, Հարութ պապը խաչակնքեց ու դա իրեն դուր չեկավ։ Հետո այդ օրը չնստեց իրիկնահացի, գիշերը կես եղավ, քուն չեկավ աչքերին. ելավ, պատերին քսվելով գնաց... Մարագի կտուրը պոռկեց, քանդեց, իջավ ներս, արձակեց ֆիդայիների ձեռք ու ոտք....

Արև չծագած չորան Ավեի ձայնը գուժկա՜ն-գուժկան անցավ տնեատուն.

— Հե հե հե՛յ... Գեղ ի՞նչքան տղամարդ կա հավաքվի նախրգնա, նախրգնա՜... Հրաման է, հրաման։

Ասկյարների մեծավորը կանգնեց, ասաց.

— Ով ազատություն է տվել ֆիդայիներին, առաջ գա։

Մեծավորը կրկնեց պահանջը։ Սպասեց։ Գնաց-եկավ, ոտքերը տփեց քարերին, փոշի հանեց, մոլտաց, հայհոյեց, ապա կանգնեց աղբյուրի մոտ, թքեց քարին, ասաց.

— Մինչև թքիս չորանալը եթե չպարզվեց՝ կկոտորենք։

Շարք կանգնած ասկյարները հրացանները պատրաստ պահեցին։ Մեկ, երկու, երեք... հաշվեց՝ քսանհինգն էին ու մի Գործվարք գյուղ, երկու-երեք հարյուր տղամարդ՝ տագնապի մեջ։ Եղած ասկյարների հետ հաշիվ մաքրելը մի պուտ չուր էր, բայց ահ ու դող կար՝ գյուղի վրա բանակ կգա։ «Վաղվա տերն էլ աստված»,— անցավ մտքով ու քաշեց դարբին Դավոյի թևը.

— Քեռի Դավո, դու հրացան ունիս...

Մնացածը աչքերով խոսեցին։ Դավոն բան ասաց Թոռան ականջին, հետո Միհրանը մեջ ընկավ.

— Դավո, չի էղնի. էգուցվա մասին մտածե։

Եվ ալիք-ալիք գնաց, եկավ՝ կլինի, չի լինի, կլինի, չի լինի... Ո՛չ եղավ, ո՛չ չեղավ։

Հետո Օհանը կանգնեց Հարութ պապի կողքին, ասաց.

— Հարութ, դու, ես, մի վեց-յոթ էլ մեզ պես ալեհեր, բացգլուխ էլնինք՝ անինք խնդրանք։

Հարութ պապը հրաժարվեց, Հեթումը համաձայն էր, Սրկեն դեմ էր, Ադամը՝ կողմ, առաջարկությունը ալիք-ալիք գնաց-եկավ՝ խելքամոտ է, խելքամոտ չէ, խելքամոտ է, խելքամոտ չէ... Ու ո՛չ եղավ, ո՛չ չեղավ։

Էլի նոր միտք. ասկյարները Միհրանի հյուրն են եղել, իրավունքը ունի Միհրանինն է, թող ասի՝ գուցե հենց ֆիդայիների ընկերներն են սարերից իջել՝ մենք ի՞նչ մեղք ունենք։ Միհրանը վիզ չառավ, Տոնապետը համաձայն էր, Տոնապետին խոսք չհասցրին՝ ճերմակմազ չէ, մեկը ոտ գցեց առաջ եկավ, պետք-պատճառ գտան ետ պահեցին ու ասկյարների հետ բանակցելու միտքը համարվեց կողմ գցելու միտք։

Գործվարք գյուղը չեկավ մի խոսքի, և ուստա Միհրանը իրենն ասաց.

— Ջանըմ, ով սխալմունք է արե, թող խոստովանե, թուք չորցավ-կչորնա։

Դավոն որոտաց.

— Քու գլուխ քարն ես զարկե, ուստա Միրան։

Եվ Միհրանի ու Դավոյի խոսքերը ալիք-ալիք գնաց-եկավ՝ խոստովանել, չխոստովանել, խոստովանել, չխոստովանել...

Էլ չսպասեց, թե գյուղը ինչ նոր պատասխան առաջ կքաշի, կքաշի ու մի խոսքի չի գա... Կանգնեց խմբապետի ու ասկյարների դիմաց։

— Հարութ,— Զորի Միրոն դարձավ որդուն,— մարդկանց ուժ միասնության մեջ է, գառ։ Կռիվ է կերթաս, կպատահի նեղ վիճակ, շատ կպատահի, ու վիճակից ելնելու ելք կփնտրիք. ամեն մեկ իր իմացած կասե, իր խելքով կշարժվի ու կպնդե թե՝ ճշմարիտն էս է։ Ճշմարիտն էն է, գառ, որ բոլոր մեկի ասածով ոտ փոխին։ Էդ մեկ թող սխալ էղնի, թե բոլոր կանգնեցին էդ մեկի թիկունք, սխալ կդառնա ճիշտ, գառ։

— Ա՛յ հեր, ամեն մեկս հո մեզ համար չե՞նք կռվելու, ռազմական գործերից հասկացող հրամանատարներ ունենք,— ասաց Հարութը։

— Միրո, տղեն ճիշտ է,— միջամտեց Արոն։

— Կիմանամ, գառ,— որդուն պատասխան տվեց,— պատերազմ է, կյանք է, հրամանատար նմանապես սխալմունք կունենա։ Չելնիք իրար դեմ,— խրատեց որդուն։

— Հո, հո՜... էս եզ կկաղա. նալբանդ մեխ խորունկ է զարկե։ Վա՜յ, Եգոր, աչքեր կֆոֆոցու, անասունի ոտքին չի նայե, կխոսա ու կզարկե. քու խիղճ մեռնի, Եգոր,— տրտնջաց Արոն։

Ճռճռալով գնաց սայլը, անիվները Քարագլուխ գյուղից պոկված ճամփով գլորվեցին, գլորվեցին, քարշ տվեցին Զորի Միրոյի հուշերը, փաթաթեցին, տարան...

«Գեղ մի խոսքի չեկավ։ Մշեցի էռնի ու սուլուխցի Շահենի փոխարեն, որպես ֆիդայի, ինձ տարան...»։

Քշեցին սար ու ձորերով, մտրակեցին՝ ցավը շուրթ ու ատամներով ծամեց, կուլ տվեց։ Ասկյարները հացի նստեցին, երեսը շուռ տվեց, տեսան, որ չի խնդրում, հաց շպրտեցին, որ ապրի ու հասնի Դիարբեքիր, կոտրված հոգով հասնի, սողա վալու ոտքերի տակ՝ գոհացում վալուն, իրենց ասկյարության՝ արդարացում։

Երեք օր բանտում պահեցին, հետո տարան վալու մոտ։ Վալին ձեռք ու ոտք արձակելու կարգադրություն արավ, նստելու իրավունք տվեց։ Ինքը դրան չէր սպասում, զարմանք մնաց, մնաց ոտքի վրա։

— Նստիր, նստիր,— ժպտաց վալին,— ես քեզ պես քաջերին սիրում եմ։

«Շնորհակալ եմ, աղա, գոհ ու շնորհակալ եմ, քու բերանով սուրբ ավետարան կխոսա»,— մտքում հեգնեց ու նստեց։

— Այստեղ ձեր երկրացի մի բարեկամ ունեմ՝ խութեցի Մխեն։ Ճանաչո՞ւմ ես։

Խութեցի Մխե՞...— Մտքում տարավ-բերեց,— Մխե՞...

— Չեմ ճանչնա, էֆենդի։

— Դե լա՜վ, մի թաքցրու, ինձանից մի թաքցրու, ես Մխեին սիրում

եմ, շատ եմ սիրում, նա իմ լավ բարեկամն է։ Մխեն խնդրել է՝ որ այսօր հանդիպեք։ Մխեի պատվին ես քեզ կազատեմ էլ, Մխեին շատ եմ սիրում։

Վալին ժպտում ու խոսում էր, ժպտում ու խոսում էր, վալու խինդը ժպիրհ էր, ու ինքը խոսքերին չէր հավատում, հետո վալին լրջացավ, առավ թուղթ ու գրիչ, գիր արեց։ Ուրիշ մեկը չկար, և միտք ունեցավ էդ շողոքորթին բթխեղդ անի, առնի մաուզերը, դուրս գա։ Ինչ կլինի կլինի։ Միտք արեց, շարժում արեց, վալին ժպտաց, ասաց.

— Մրո, վատ-վատ բաներ չմտածես,— տասնոցը մոտեցրեց իրեն,— համբերիր, քո ազատության թուղթն եմ գրում։— Ինչ-որ խզմզեց և մեկնեց.

— Առ ու թռիր, Մխեն դռանը քեզ է սպասում։

Ճի՞շտ էր, սո՞ւտ էր, չիմացավ, միայն թե վալին ասում էր գնա, պիտի գնար։ Դուրս եկավ ու...

Է՜, Մխիկ, Մխիկ... Օղորմի քեզ, Մխիկ։ Վալու մոտից դուրս եկավ ու հանդիպեց Մխեին՝ պուճուր-մուճուր, խոփ քթով, պլստան աչքերով, շեկ, պեպենոտ... Մխեն արագ մոտեցավ, ձեռքն առավ ափերի մեջ։

— Իմ հոգին, Միրո,— ասավ, հետո ձգվեց, համբուրեց,— իմ հոգին, Միրո,— վրա տվեց։

Ինքը շիվար մնացել էր։ Պիտի ասեր.

«Խութեցի Մխեն դո՞ւ ես... Մխե, ի՞նչ հասկանանք. վալու հետ քեզ ի՞նչ բարեկամություն... Աստված վկա, բան չեմ հասկանա»,— բերանը չէր բացվում։

— Միրո, իմ հոգին, Միրո, էս արնոտ տեղեն հեռանանք, նոր զրուցինք։

Մխեն Դիարբեքիրում յոթը տարի պանդխտության մեջ էր, յոթ տարի բեռ էր բարձել-թափել, քնել ջրաղացում, յոթը տարի ղուրուշ-ղուրուշ հավաքել՝ դարձրել էր տասը քիսա ոսկի, յոթը տարվա արյունքրտինքը կաշառք տվեց վալուն։ Մխեն՝ ո՛չ բարեկամ, ո՛չ ծանոթ։

Օտար երկրում, օտար քաղաքում, անօրենների արնոտ աչքի տակ զընգ ու զընգ երկաթշղթան քարշ տվող, գզգզված շոր ու գլխով երկրացի էր տեսել, արել փրկելու ուխտ և փրկեց։

«Միրո, իմ սրտի մեջ յոթ տարվա կարոտ կա, մեր Սասնո ձորերով մեկ կարոտ՝ գեղ ու գերդաստանի համար կա՛, սար ու ձորի համար կա՛, քար ու ծառի համար կա՛... Միրո՝ մեր էրգրի գել ու գազանների, մեր էրգրի օձերու համար էլ իմ հոգու մեջ կարո՛տ կա... Տեսա դու էդպես գերի ու անօգնական. արուն զարկեց իմ գլուխ, իմ աչքեր մթնեցին...»։

Է՜, Մխի՜կ, Մխիկ... Գլուխ-գլխի հավաքված Գործվարք մի գյուղ՝ դատ ու դատաստանից փրկելու ճար չգտավ, պանդուխտ Մխեն գտավ...

— Լսե, Հարութ, կարոտ զորե՞ղ-զորեղ է, կարոտից զորեղ բան աշխարհք չկա։ Ինչքան հեռանում ես մեր Քարագլուխ գեղից, մեր քոզտիկից, մեր ձորից, էնքան քու կարոտ կմեծանա։ Կարոտի հետ տխրություն կմեծանա, գառ... Կարոտ տխրություն է, անո՜ւշ-անուշ տխրություն է։ Ու էդ տխրություն... էդ տխրություն մեծ բան կպտղե,— փիլիսոփայեց Զորի Միրոն,— մարդու հոգին կմեծացնե, մարդու կդարձնե ածդահա, հերոս։

Հարութը ցանկությամբ ժպտաց.

— Հերոսները հատուկ մարդիկ են, այ հեր, Զապաևի, Բուդյոնու, Կամոյի պես մարդիկ։ Ես կարո՞ղ եմ հերոս դառնալ։

— Դրը... դո՞ւ,— Միրոն կմկմաց, մոայլվեց, ապա մեկեն ասաց,— հա՜։ Քու կռիվ Հիտլերի դեմ էս ճամփի համար էղնի,— ու ճամփեն հայացքով շարունակեց, շարունակեց տարավ,— էս Քարագլուխ գեղի համար էղնի, քու քոզտիկ ու ձորի համար էղնի, Հարութ, քու կարոտ ու տխրության համար էղնի, ու հերոս կդառնաս, գառ։

Հետո հիշեց Հարութ պապի խոսքերը, որ իրեն էր ասում և մտքում ավելացրեց.

«Ի՞մ ասլան, Հարութ»։

— Վա՜յ, մերիկ, վա՜յ,— հոգոց հանեց սայլապան Արոն,— Միրո, էս կռիվ ինչքա՞ն կքաշե։ Մեր Մխիկ 12 տարեկան է, բայց ծննդականի մեջ 14 է գրած, գյուղխորհուրդ սխալ է արե։

— Քու տղի անուն Մխի՞կ է,— հետաքրքրվեց Միրոն։

— Հա, Մխիկ է, ծննդականով՝ Մխիթար— ծննդական սխալ է։

— Լավ անուն է, Մխիկ լավ անուն է,— կրկնեց Զորի Միրոն։

«Օղորմի քեզ, Մխիկ...»,— մտքում էլի է՜ն իր Մխեն էր...

«Մխիկի հետ Դիարբեքիրից ելանք, խեղդ աշուն էր...»։— Զոր ու գիշեր քայլեցին, առանց դադար քայլեցին, ձմռան հետ հասան Մխիկենց գյուղը։ Մինչև Գործվարք երկու օրվա ճամփա էր մնացել, բայց շարունակել չեղավ։ Էրգրի ձմեռը ուրիշ ձմեռ էր, ուրի՜շ... էսպե՞ս։ Մի գիշերվա մեջ աշխարհը գարձավ կլպած ձու ու՝ շարունակել չեղավ. մնաց Մխիկենց տուն։ Մնաց ու այդ ձմեռ Թաղավանք գյուղի ժղլտունը գնաց, այդ ձմեռ Թաղավանքում լսեց Թլոր Դավթի, պառավի շաղգամների ու Թուր Կեծակի պատմությունը։ Թաղավանքցիները, ամեն օր մեկը, հյուր տարան իրեն ու Մխիկին։

Մնաց ու սեր գցեց Մխեի քույր Խանդութին ու Մխիկենց տան մեծ ու փոքրին ու գյուղ Թաղավանքին։ Խանդութը... Խանդութը Մարաթուկ սարի եղնիկի պես զուլալ ու վախվորած աչքեր ուներ, ծուռ նայվածք, որ դիպցնում էր իրեն ու փախցնում։ Ո՞չ Մխեն, ո՞չ Մխեի կին Ալմոն, ո՞չ Մխեի մարեն, ո՞չ ոք չիմացավ, որ ինքը սեր ունի Խանդութի վրա։ Ու բերան չբացեց, Խանդութին բան չասաց։ Մնաց, սերը մաղմղե՞ց, մաղմղեց, քուն ու արթուն մաղմղեց, երկնքից իջավ ու լցվեց հոգին ու ելավ աչքերից թափվեց, և անտես չմնաց Խանդութից։ Մնաց, գարուն եկավ, գարնան հետ հասավ Գործվարը։

Անդարձ էին համարել իրեն ու քար կտրեցին։ Գյուղ-գյուղովի աչքալուսանք գնացին-եկան։

Եվ շաբաթ հետո եկավ մեկը՝ գյուղին ու իրեն անծանոթ։ Թուրք էր, ասաց. «Իմ անունը Օսման է,— ասաց,— քո մասին լսել եմ, Մրո, բարով ես եկել, ես քաջ մարդկանց սիրում եմ, ես քո ախպերն եմ, Մրո»։ Առանձին ոչխար մորթեցին, հարգանք-պատվով դրեցին ճանապարհ։ Գնաց, էլի եկավ, էլի ասավ. «ես քո ախպերն եմ, Մրո»։ Էլի ոչխար մորթեցին, տվեցին պատիվ ու երբ ճանապարհում էր, գյուղեղրին Օսմանը ժպտաց, ասավ.

— Քանի՞ ոսկի տվեցիր գլխիդ համար, Մրո։

— Օսկի չտվեցի։

— Հը՞, ես քո ախպերն եմ, Մրո, ինձ մի խաբիր. վալին գերուն միայն ոսկով է ազատում, վալին ոսկու գերի է։

Գնաց, էլի եկավ, գնաց, էլի եկավ, էլի ու էլի հարցրեց.

— Վալուն ինչքա՞ն ոսկի տվեցիր, Մրո։

Եվ չհավատաց, որ ազատումը առանց փրկագնի է եղել։

Խոստովանելուց հետո էլ չհավատաց, որ Մխեն է տվել փրկագինը։ Քու անհավատ կրոնը... Օսման։ Էլի կգար, հա՞ կգար. ավազակություն արեց, բանտարկեցին։

— Միրո, էս տարի աշուն շուտ կգա,— իր կարծիքը հայտնեց պայլապան Արոն,— ես էս սարերին կնայիմ ու կիմանամ. հա՞մ աշուն շուտ կգա, հա՞մ ձմեռ։ Հարկ է մտածել,— և ցածրաձայն, իր համար ավելացրեց,— կռիվ է...

«Էն տարվա աշուն անո՞ւշ անուշ էր... Ամեն տարվա պես անո՞ւշ աշուն...»։

Էդ աշնանը Հարութ պապն ու Խումար մարեն գնացին Թաղավան Խանդութին Գարս ուղելու։

Անո՜ւշ աշուն էր... Ու հարսանիքի օրն էր խորոտ։

Իրիկնապահ էր։ Լեռների վրա կարմիր հալավ հագած ամպերի պար կար, Ընկուզասարի փեշին՝ կար։ Զուռնաչի Սմբոն տան կտուրին կանգնած նվագում էր, տղերքը պար էին բռնել, և տանն ու կտուրին խմբված բերանաց մանկտիք մնացել էին բոլորած պարի կենտրոնում։

Ներսեսը խաղով ձայնակցում էր զուռնին։

«Սարեն իջան ջուխտըմ, խոշ.
Մեկը ջերմակ, մեկը՝ ոչ.
Գարմիր գոդոշ, ջերմակ բոշ...
Հե-հե, հե-հե, հրհիի՜...»։

Առաքելը խլում էր խաղի շարունակությունը.

«Գովան էրկու դեկերգին.
Ցըբիր վըր բուդի քերքին,
Առան փուցխ ու գերնդին...
Հե-հե, հե-հե, հրհիի՜...»։

— Հը՜հիի՜...,— պարողները միաբերան Առաքելից առնում էին խաղի բառը, Սմբոյի զուռնի շրթից ծորացող մեղեդին ու ձգում էին. հրհիի՜...

— Հը՜հիի՜...,— շարունակում էին Ընկուզասարն ու Մասրաձորը։

Իր կուրծք ու թիկունքին նորափեսի մետաքսե նշանն էր աշնան գույն ուներ։ Նշանի վրա Ընկուզասարի դեղին ու որդանից կար, Սովասարի կապույտից, իրենց կտուրի կանաչից, արևմուտքում պար բռնած ամպերի գույնից կար և արևի մի բուռ պեծ։ Եվ Մասրաձորի ջրերի պես գույները ալի՜ք-ալիք ու փշուր-փշուր ուսից հոսում էին, խաչվում կրծքի վրա, իջնում՝ դառնում գոտի։ Եվ նշանը աշնան այդ օրվա փափկությունն ուներ և տաք ու խանդոտ էր խաղ ու պարի պես։

Ապրշումն էր և գյուղից քսան տղամարդ գնացել էր Թազավանք խանդութին հարս բերելու։

— Էկա՜ն... էկա՜ն...— կանչը ծխի պես ճոթ տվեց, ճյուղավորվեց գյուղի վրա,— հարսանքավորներ էկա՜ն։— Ու Մասրաձորը ձայն տվեց. «կա՜ն»։ Գյուղեզրին դարբին Դավոն հրացան կրակեց, և լեռները համազարկ տվեցին։ Խանդութին բերող ձիավորներից մեկը պոկվեց, քամու պես անցավ գյուղով, բաշի հետ քամուն տվեց ձիու վիզը կապած խաս գլխաշորը, եկավ փոթորկեց տան շուրջբոլոր, պարը խառնեց, մեծ ու փոքրի կանչերը խառնեց ձիու վրնջոցին, մրրիկի պես պտտվեց տեղում, պոռթկաց ու էլի դարձավ... (Օհանի Մանեն ճարպիկ ձիավոր էր)։ Տղեր-

քը ընդհատեցին պարը, ուրքն[1] առած ելան տանիք։ Աղաբաշին Ներսեսն էր, տնկեց ուրքն ու կանգնեցին մոտը։ Տղերքի մի մասը շուրջպարիսպ կազմեց, թիկունքներով պաշտպանեց իրենց, մյուսները «Քոչարի» բռնեցին կտուրի վրա և սպասեցին։

Թաղե-Թաղ թավալվեց հարսանիքը, մեծացավ, դահոլ-զուռնայի ձայնը թավալվեց, և մանկտիք շողերի պես թավալվեցին, իրիկնամուտը շաղախվեց ճիչ ու ծիծաղով, աղմուկ աղաղակով, ձիերի վրնջոցով, զուռնա-դահոլի կանչով, և օրը կլոր-կլոր թավալվեց գյուղի, սար ու ձորի մեջ։ Ծփացող գյուղում ինքը Խանդութին էր սրոնում ու գտավ, ճերմակ ձի նստած, ճերմակ քողով, ճերմակ-ճերմակ ամպ՝ թաղե-թաղ սահելով, ցողելով թաղերը՝ իրեն էր գալիս։ Սահելով եկավ, եկավ կանգնեց դռան դեմի ընկուզենու տակ, հով արեց դռանը, ցող մաղեց ընկուզենու այրվող սաղարթին։ Կտուրից հայացքով համբուրում էր, հայացքով քաշում էր ճերմակ քողը, Խանդութի աչքերն էր սրոնում, որ ասեր.

«Բարի էկար մեր դուռ, Խանդութ, Թաղավանքից մինչև հոս իմ սրտի միջով էկար, Խանդութ»։

Կրակված նայում էր, ու մոռացել էր ուրքը, Ներսեսը քաշեց փեշից...

«Հակառակորդները» հասել էին կտուրը։ «Քոչարին» ընդհատվեց, նվագը՝ չէ։ Նվագի տակ ուրքի համար կոխ բռնեցին։ Գյուղի քլթքլթում էր Ընկուզասարի փեշին ու Ընկուզասարի փեշ իրենց կտուրի մոտ։ Հարայ-հրոց էր, դահոլի դմփդմփոց էր, զուռնի ծղրտոց, ծափ ու ծիծաղ էր, որոտ ու կանչ էր։ Թաղը թաղեցի «գուլաշչիների» թիկունքին էր ու առանձին-առանձին՝ ընտրած «գուլաշչու»։

— Առաքել, զա՛րկ գետին...

— Պողե՛, հարամ ուտես, Պողե՛...

— Իսրայե՛լ, պոկե՛ քու մեջք...

— Հըյ հեյրա՛ն, Սամիկ, հեյրա՛ն...

Եվ Ընկուզասարը անհանգիստ խշշում էր, Մասրաձորի քարափների մեջ կանչերը կռիվ էին տալիս, ջրերի մեջ խեղդում իրար, և լեռների վրա խառնվեց ամպերի պարը։

— Մանե, քու թիկունք մի՛ տուր, Մանե՛...

Բայց Ներսեսը Մանեին զարկեց գետին։ Մանեն թռավ ուրքի, նորից

[1] Ուրք-նորափեսի դրոշակ։ (Սասունում սովորություն է եղել՝ հարսը բերողների և նրանց սպասող հարսանքավորների միջև, փեսայի տան կտուրին, կատակ-մարտ լինի ուրքի համար)։

վրա քշեց, էլի գլորվեց, և ձորը ափ հանեց արձագանք-քրքիջը, իսկ Մանեն խանչալը հանեց։

— Մանե՜...

Ալեկոծվեց գյուղը, ծփաց, ալիք տվեց և որտեղից որտեղ Հարութ պապը կանգնեց Մանեի ու Ներսեսի արանքում։

— Քու խանչալ կարցրո՛ւ, անիծված,— գոռաց։

Մանեն կարկամեց։

— Մանե,— Հարութ պապը ցածրացրեց ձայնը,— Մանե, լաո, ես քու ազգ ու տոհմին վատություն արած կա՞մ։

Մանեն գլուխը կախեց։

— Ինչի՞ խանչալ կհանիս իմ ուրախության վրա... Ուռքակռիվ է, լաո, հանաք է, մի խենա, օրմ էլ դու Ներսեսին կզարկիս գետին։

Հետո կտուրից դիմեց գյուղին.

— Ժողովուրդ, կխնդրեմ ձեր սիրտ չմնա. ուռքակռիվ չշարունակինք, հերիք է։ Ջահելների մեջ հաղթող ճանաչեք զիս,— կատակի տվեց և առավ ուռքը։ Հետո բռնեց Մանեի թևից, Մանեն խռովկան քաշեց թևը, և Հարութ պապն ասաց.

— Աստված է վկա, Մանե, թե դու Ներսեսի կողքին ու սեղանի վերին գլուխ չնստիս, էս ճերմակ մազեր խռով կմնան քու հետ։

Է՜, անո՜ւշ, անուշ աշուն էր... Խորոտի՜կ օր ու իրիկուն էր։

Երկինքը բարձր ու կապո՜ւյտ-կապույտ... Աստղակուտակ կար իրենց երդիկի վրա... Կարմիր-կանաչ կապած նստել էր քավոր Սրկեի կողքին։ Սրկեն երկար օրհնում էր քավորթասը... Տղաները դրսում «Ժոչարի» էին բռնել... Ընկուղասարից ընկույզներ էին իջնում գլոր-գլոր, գալիս երդիկից կաթկթում էին... Մեկը շլմփաց քավոր Սրկեի գավի մեջ։ Դարբին Դավոն ասաց.

— Քավոր Սրկե, սար քու խոսքին համամիտ է, էլ խոսալ պետք չէ. անուշ խմե...

Հարսնագովք էին անում ու ինքը քավոր Սրկեին չէր լսում, ականջ էր պահել հարսնագովքին։

«Զէն քու շագագ օր քի գասեն, շրրնդի մեյդանի նման ը,
Զէն քու էրեսն օր քի գասեն, խրլաթա խնձորի նման ը,
Զէն քու ընքնիրն օր քի գասեն, խալամի քաշածի նման ը,
Զէն քու աչքիր օր քի գասեն, բիլորի շուշի նման ը,
Զէն քու քթիգն օր քի գասեն, սուլթան սիսեռի նման ը,
Զէն քու պերան օր քի գասեն, ծամգան խորանի նման ը,
Զէն քու լեզուն օր քի գասեն, բիլբուլի խուռալ նման ը,
Զէն քու ձբձերն օր քի գասեն, բոստանի շամամ նման ը։

Զէն քու թեվիրն օր քի գասեն, պամպագի քուլի նման ը,
Զէն քու մաղնիրն օր քի գասեն, կարտոլի մոմի նման ը,
Զէն քու նստիլն օր քի գասեն, սարերու սեյրանի նման ը,
Զէն քու քելիլ օր քի գասեն, չուլերու ջեյրան նման ը...»։

Ականջ էր պահել հարսնագովքին ու գովքի հետ համաձայն էր։ Հազար անգամ լսել էր գովքը, հա՞ լսել էր, բայց իրեն թվում էր, թե ինքն է հորինել, անցած ամռանը խաղը ինքը հորինեց Խանդութի մասին, Խանդութի համար...

Զորի Միրոյի կնճիռների արանքում մի ապրշումե բան էր նստել, մի դուրեկան թախիծ։ Անցած-գնացած մի անո՞ւշ բան դարձել-ետ էր եկել ու ասում էր. Միրո, օրերից, է՞, էն օրն էլ քոնն է, դու ես ապրել։ Եվ նրա ճակատի վրա ու աչքերի մեջ մի փափո՞ւկ բան կար, ամաչկոտ մի հպարտություն՝ տրտմության ամուկ քողով։ Բավի՞շ-թավիշ ճոճվում էր հայացքը, ու կուզեր, որ աշխարհը այդ պահին տեսնի իր աչքերը։ Ուզում էր, ինչո՞ւ, չգիտեր։ Եվ նայեց որդուն։ Հետո Զորի Միրոն իրեն բռնեց... բռնեց հանցանքի մեջ, կախեց հայացքը։ Ախր, որդու կողքին նստած, թողած արյուն-կոիվ գնացող որդուն, իր ջահել օրերի հետ թափառում է։

«Հարութ աչք դրած ունի՞...»,— մտածեց։

Ունի՞... Միրոյի աչքերում պահ առաջվա դուրեկան թախիծից բան չմնաց։

«Թե կռիվ է կերթա, տարիք զինվորի է... ունի»։

Մինչև հիմա ինչո՞ւ չի հարցրել։

Եվ Զորի Միրոն տարավ-բերեց այդ միտքը, արտ ու կալում տեսած աղջիկներին մտքում տարավ-բերեց։ Ո՛չ մեկը... ո՛չ մեկը է՞ն Խանդութին նման չէր և Հարութի աչք դրած աղջկան չգտավ ու դարձավ որդուն հարց տվեց. ցածրաձայն, որ Արոն չլսի։

— Հարութ, գառ, քու նամկներ ո՞ւմ աղջկան կարդալ տամ... Քեզ ո՞վ նամակ գրե։

Հարութը շիկնեց, և Միրոյի սիրտը թպրտաց՝ ունի՛։ Մի փշուր ուրախություն ունեցավ, մի փշուր կարոտ՝ թիկունքում մնացած Քարագլուխ գյուղի համար։ Հարութը ամաչկոտ ժպտաց, նայեց սայլապան Արոյի կողմ, կամաց ասաց.

— Նամակները Մակեի Հայկուշին կարդալ տուր, հայրիկ։

— Միրո, իմ սիրտ կվկայեր, որ էս տարին չար է,— ասաց Արոն ու պատասխան չառավ։

«Մակեն էրգրի ո՞ր գեղից է,— մտածեց Միրոն,— թե չսխալվիմ՝

Նիշեն... Գեղի մեջ Մակեի ձեն լսող չի էղե... Աղջիկ նմանապես հալալ կաթնակեր կեղնի...»։

— Ասա՝ ինչի՞ց, Միրո, էս տարի գարուն չկա՞մ-չկամ էկավ։

— Հա, գառ,— Միրոն գլուխը մոտեցրեց որդուն,— իմ սրտով է. քու նամակներ կարդալու Մակեի աղջկա մոտ կտանիմ... Իմ սրտով է։

— Կհիշի՞ս, Միրո, կոտորածի տարին նմանապես գարուն չկա՞մ ու չկամ էկավ,— շարունակեց Արոն։

Այս անգամ կես ու պռատ լսեց Արոյի խոսքերը։

— Արո, քու սիրտ չմնա, իմ միտք ուրիշ տեղ էր։

— Իմ սիրտ կվկայեր, որ տարին շար է,— կրկնեց Արոն,— գարուն չկամ էկավ։ Փորձած է՝ կոտորածի տարին նմանապես գարուն չկամ էր։

— Հա՜, Արո, ճշմարիտ է, քու խոսք ճշմարիտ է,— ծանր-ծանր ասաց Զորի Միրոն,— կոտորածի տարին գարուն ուշ բացվավ... կոտորածի գարնան նմանապես գերմանացու մասին մեր էրգրի մեջ խոսք ու զրույց շատ կար,— ցածրացրեց ձայնը՝ կեսը պատասխան էր Արոյին, կեսը՝ մտածմունք...

Լիներ ու հիշողությունից դուրս գային, մի կում շնչի պես, մի կում շնչի հետ պոկված գնային մռայլ հուշերը՝ լիներին երազի պես, գոց աչքով տեսած ու փուչ։ Ե՛վ էսօրը լիներ երազ, և՛ Արոյի խոսքերը, և՛ էս ճամփեն, և՛ սայլի ճռճռոցը, և՛ աշխարհի պատերազմը, և՛ Հարութի կռիվ գնալը, և՛... Ե՛վ կոտորածի գարունը լիներ երազ, գոց աչքով տեսած ու փուչ։

Զորի Միրոն աչքերը փակեց, օրորվեց...

«Չէ՜, մարդու կյանք աշխարհքի համար երազ է, իր համար՝ կյանք։ Մոռացված օրեր կդառնան երազ, մնացող՝ կյանքն է... էս օրվանից ու կոտորածի գարնանից փախնել չի էղնի, չէ՜, մոռանալ չի էղնի... Ու երազ չկա իմ օրերի մեջ։ Էն գարուն չեղներ, թե էն գարուն չեղնե՜ր...»։

— Միրո, էս եզ մեղք է. մի ոտ բորիկ, մյուսի մեջ՝ մեխ կա,— ասաց սայլապան Արոն, բայց Զորի Միրոն չլսեց...

4

«Կոտորածի տարին գարուն ուշ բացվավ։ Մի գիշեր անձրև մաղեց, ջուր ընկավ ձան տակ, ձորեր հեղեղով լցվան, գետին սևցավ, բայց...»։ Մի առավոտ աչք բացեցի՝ Ընկուզասարը էլի ճերմակել էր։ Ջմեռն էլի գնաց, էլի եկավ, էլի գնաց, էլի եկավ...

— Թո՜ւ,— Հարութ պապը նայում էր ձյունոտ երկնքին, անորոշ թքում, հետո,— մեղա՜ քեզ, ասուված,— խոսքը ետ էր առնում։ Հետո,

ամեն գարնան պես, գարուն եկավ, ամեն գարնան պես պապը փափախն ու ելակը գցեց ալյուրի ամբարի եռևը, կանգնեց ծաղկած ծիրանենու տակ։ Հետո, մի լուսելուսի, երբ ծիրանենին դեռ ծաղկաթափ չէր եղել, երբ Ընկուզասարի գլխին ամեն գիշեր եղյամ էր իջնում, Խումար մարեն այդ տարվա առաջին դաղձապուրն էր եփել, երբ... Լուսե-լուսին Հարութ պապը դուռը բացեց, կանգ առավ շեմին, ձայնեց.

— Խումար, հա՞րս...

Խումար մարեն շտապ նստեց անկողնում, շապիկի բաց օձիքը բերեց իրար։

— Խումար, հարս, գեշ, շա՞տ գեշ երազ տեսա... Խումար, հարս, ել էս լուսո աստծուն մատաղ խոստացի։

Հետո պապը ամենքին, տան մեծ ու փոքրին պատվիրեց.

— Քոչեր, առանց աստծու էսօր քելք չանիք։

Լուսելուսին բոլորը ոտքի ելան և մեկեն ամենքին թվաց, թե գիշերը շար երազ են տեսել։ Ինքը բաց ուս ու կրծքով կանգնեց դռան դեմի ընկուզենու տակ, նայեց հյուսիս, հարավ, արևծագի կողմ, արևմտոցի. ամպուզամպ էր։ Մարաթուկի գլխին սև ամպ կաբ. Ծովասարին՝ կա՞ր, տան թիկունքի Ընկուզասարին՝ կա՞ր... Ամպերի ազմոտոռ էռ։

— Կարկուտ կգա, Միրո,— Հարութ պապը սարսռացող հայացքը երկնքից բերեց ցած,— ծառերին ճյուղ ու ծաղիկ չի մնա. իմ սիրտ վատ կգուշակե։

Պապը այդ առավոտ թարս ու շիտակ էր հագել տրեխները, մտամոլոր հասավ այգու կողքով անցնող առվի մոտ, լվացվեց, լվաց բահը, աղոթաքարի մոտ ծնկեց աղոթքի, և պապի շուրթերը դողում էին, իրար չէին գալիս աղոթաբառերը ու աստծո փեշ բռնած ձեռքերը դողում էին։ Այդ առավոտ առաջին անգամ նկատեց, որ պապը ծե՞ր ու ծեր է, ճի՞պ-ճերմակ։ Խղճաց պապին ու մեկեն մտքով անցավ. պապին մի բան չպատահի՞... Ախր, ապուպապերը թե սարում չեն սպանվել, թե ձնահոսքը չի քշել-կորցրել, թե Անդոկա ձորում կայծակը չի զարկել-դարձրել մի բուռ մոխիր, թե մնացել, ապրել են, մի օր դունչ են փչել՝ միամի՞տ, խաղա՞ղ։ Մեկը թիկունքը ծառին հենած է գնացել, մեկը քնել ու մնացել է քնած... Ամեն մեկը իր ձևով է գնացել աշխարհից, ամենքն էլ իրար նման՝ Ընկուզասարի ծառերի պես կամ տապալվել են, կամ խաղա՞ղ մեռել։ Ախր, հենց ինքը, Հարութ պապն է պատմել.

«Իմ Կրկե պապ առավոտ ելավ, լվացվավ, իր աղոթքն արավ, կերավ հաց, ասաց էսօր մարդ գործի չերթա, ասաց՝ Հարութ, սրե դանակ, մաքրե իմ երես, գրկեց իմ փոքր տղին՝ անունով Կրկե, նստեց սանդքարի քով, խաղ արավ իմ տղի հետ ու... քանց ճրագ փչիս... Իմ պապ Կրկեի շունչ

փչել մ՞րդ չիմացավ։ Իմ հոր՝ նմանապես. իրիկուն հանդից եկավ տուն, կերավ-խմեց, ասեց-խոսեց, լուսացավ՝ չկա՞ր...»։

Ամառոտ առավոտ էր, Հարութ պապը դող ընկած աղոթք էր անում, ինքը տան դիմացի ընկուզենու տակ կանգնած նայում էր. տխրել էր, որ օրն ամպոտ է, գուցե կարկուտ գա... որ Հարութ պապը ծե՞ր, ծեր է և գուցե... խղճում էր Հարութ պապին և դրանից էր տխրել. պապը էլ ճոճք չի բարձրանա, ճոճքը կմնա դատարկ, պապը իր աղոթաքարին չի մոտենա, աղոթաքարի շուրջբոլոր կաճի խոտ, կծածկի աղոթաքարը։

Նոթոտ առավոտ էր և այդ առավոտ առաջին անգամ ափսոսաց, որ աշխարհում երկիրն ու երկինքը թողնել, գնալ կա։ Ինչո՞ւ կա։ Ախր, Հարութ պապը Սասնո սարերն ու ձորերը թողած ո՞ւր գնա, մեղք է Հարութ պապը, ինչո՞ւ գնա...

Հորեղբայր Նշանը անցավ իր մոտով, ասաց.

— Միրո, արծի-արի, մենք գնացինք,— կորեկի արտը ցանքի գնացին։ Հորեղբայր Նշանի ճակատն էլ օրվա պես ամպոտ էր։ Սեթոն ու Պետրոսը հորթ ու գառ քշեցին, բարձրացան Ընկուզասար, Խումար մարեն ձայն էր տալիս.

— Միրո, արի հաց կեր...

Խանդութը... Խանդութը այդ առավոտ տանը չէր. շաբաթ առաջ Մխեն գաթով եկել էր.

— Խնամ Հարութ, մարեն կխնդրե իրավունք տաս՝ Խանդութին շաբաթ մի-երգու դարձ տանինք,— տարել էր։

Առավոտ էր, ամեն մեկն իր բան ու գործին, ինքը կանգնել էր ընկուզենու տակ, նայում էր պապին, մտել էր գլուխն ու դուրս չէր գալիս. էսօր Հարութ պապը աշխարհից կթողնի, կերթա... Ու սիրտը ցավում էր. ինչո՞ւ էրթա, իր այգին թողած ո՞ւր էրթա... Մնա, մա՞նր, մանր փոր անի ծառերի տակ, հոգնի՝ մեջքը տա ծիրանենուն, ծաղկաթերթեր կաթկըթան գլխին ու կորչեն ճերմակ մազերի մեջ։ Մի շյուղ առնի ձեռքը, շուռումուռ տա ոտքերի մոտ խլվլացող որդը ու հազար անգամ մտածածը էլի մտածի.

— Հողի տակի որդ էս ի՞նչ կենդանի է. կկտրիս՝ արուն չի էլնի։

Ավեն թող կանչի իր շներին և՛ Ավեի ձայնը, և՛ շների հաչոցը գա՞ն պապի ականջն ընկնեն ու մատնագոլ, գոլ ու լուռ օդում պապը լսի նաև մեղրաճանճի բզզոցը։ Այսպես թող լինի ու աշխարհից չթողնի էրթա Հարութ պապը։ Ո՞ւր էրթա...

Ու մեկ էլ զգաց, որ իր տխրության մեջ կարոտ կա՝ ամեն-ամենի համար, ինչը Հարութ պապը պիտի թողնի էրթա։ Ու մեկեն թվաց. այդ պահին ինքը Գործվարքում չէ՛, տան դեմի ընկուզենու տակ կանգնած

չէ՝ հեռո՞ւ, հեռու, դարբին Դավոյի Պետոյի հետ Դիարբեքիր պանդխտության է գնացել, Պետոյի նման պանդուխտ է, յոթը տարի է չի տեսել Սասունը, գյուղ Գործվարքը, Հարութ պապին, Խումար մարեին և՛ խանդութին, և՛ տան մեծ ու փոքրին, յոթը տարի է Մասրաձոր չի՛ մտել, չի՛ ելվերել Ֆիդասարը, և՛ Ընկուզասարը, և՛ Մարութուկը, և՛ Սովասարը, և՛ Դավթի բերդին ու Դավթի ձիերի մսուրքին շատ է կարոտել, «Մարութուկա թոփին», սարից գլոր-գլոր իջնող ընկուզներին, սուրբ Կարապետի ուխտին և հինգ ու վեց օր չդադարող փոթորիկներին, և՛ գայլի ոռնոցին, և՛ Օհանի պատմություններին, և՛ ձնահոսքին, ո՛ւ ամպին, ո՛ւ շանթին, փլվող ծերպերին... Ինքը այդ ամենից յո՛թը, յոթ սար հեռու է, պանդուխտ է և ուզում է երգել պանդուխտի երգը.

«Կռունկ, ուստի կուգաս, ծառա եմ ձայնիգ...»։

Հանկարծ... հանկարծ կրակոց լսեց...

— Օ՞ֆ...,— Զորի Միրոն քակվեց, ափերով ծածկեց դեմքը։

— Ի՞նչ եղավ, հայրիկ,— անհանգիստ հարց տվեց Հարութ որդին։

— Իմ գլուխ կպտտվի, դառ...

— Հայրիկ, դու իզուր եկար, ասի էլ. Ղարաբուռունից հատուկ ճանապարհող ունենք, մեր շրջանի կոմսոմոլի քարտուղար ընկեր Եղիշը մինչև Փոթի մեզ ճանապարհելու է։

«Կրակոցի ձեն էկավ...»։

— Միրո, դու իմ խոսք փորձե, շարրաթ գլխի համար շատ լավ է։ Շաքար ունի՞ս։

«Կրակոց-տրաքոց շատացավ, Ներքին թաղ իրարանցում ընկավ...»։

Հարութ պապը աչքերը իջեցրեց երկնքից, տարակուսած շուրջբոլորը նայեց։ Կրակոց-տրաքոցը շատացավ, շատացավ ճիչն ու ծղրտոցը։ Ներքին թաղի մի կտուրից ծխոտ բոց պոռթկաց և իրենց այգու ցանկապատի մոտ ասկյարներ... ասկյարներ երևացին... Տո՞ւն վառվեց, ասկյարնե՞ր երևացին... Տո՞ւն վառվեց, ասկյարնե՞ր երևացին... աչքերի՞ն է այդպես երևում... Չէ՞, երազ է... Գիշերը խառնիխուռն երազ էր տեսել, արթնացել էր, չէր հիշում... Գիշերվա երազը այդպես էր ու կար... Ափերով գոցեց աչք ու ականջ, բացեց, շփեց ճակատը... Չէ՞, կրակոց կա՛ր, իրարանցում կար, ներքին թաղում ծուխ ու բոց կար, այգու պատուհանից այս կողմ ասկյար կար... Թե ասկյարն է գյուղ մտել, ուրեմն... Աչք դիպցրեց Հարութ պապին. Սուռձորի պոնկի մարդակերպ քարի նման էր՝ ծռնրած, լուռ, հանդարտ։

— Միրո, արի հաց կեր,— ներսից էլի լսեց խումար մարեի ձայնը և նորից ամեն ինչ իրական դարձավ... Ներսում խումար մարեն է, հորեղբայր Սմբատի կինը, հորեղբայր Նշանի կինը, մեծ եղբայր Զարեի կինը, հարսներ՝ իրենց բան ու գործի, հաց ու թացի հետ, մանչեր՝ իրենց օրորոցների, զանգուլակների, քուն ու երազների հետ...

Քայլ արեց պապի կողմ, կանգնեց, շուռ եկավ քայլեց դեպի տան դուռը, հիշեց, որ մարագում խանչալ կա՝ դարձավ։ Միշտ պատից կախ էր՝ չկար, մարագում լուսումութ էր, շոշափեց՝ չկար, խառնեց, շաղ տվեց խոտն ու տերևը՝ չկար, չկա՞ր... Ու հիշեց... Հորեղբայր Սմբատը խանչալը երեկ արտ էր բերել, արորի մաճն էր կոկում։ Հիշեց, կատաղեց, հայհոյեց հորեղբայր Սմբատին, իրեն, պապին, աշխարհին, հետո մարագի անկյունից խլեց արորի մաշված խոփը, դուրս եկավ, դուրս եկավ... Մարագից դուրս եկավ...

— Օհո՜, կա՜յնի... Միրո, քիչ դադար առնինք,— ասաց սայլապան Արոն։

— Չէ՜,— որոտաց Զորի Միրոն, և զարմացրեց Արոյին։

— Քշե՜,— ասաց Միրոն և աչքերը լայնացա՜ն, լայնացան, արյունոտվեցին, այդպես ու զայրացած նայեց Արոյին, կրկնեց,— քշե՜։

— Հո, հեյրան, հո՜,— Արոն խռոված ասաց եզներին,— էս մարդ խև է,— ինքն իրեն ասաց։

— Քշե՜։

Զորի Միրոյին պետք էր գոռալ, որոտալ, մռնչալ, փնչատել, ֆշշալ... Ախր... Փնտրեց խանչալը. չգտավ, փնտրեց չգտավ, ափլփեց՝ չգտավ ու... չի գտնում մինչև հիմա։

Թուր ու թվանքի դեմ ելավ խոփով, մթնդած շպրտեց թխսկանին կրակող ասկյարի վրա՝ չդիպավ, դիպավ-չարդեց դռան կշտանոցը ու դռնից ներս վիրավոր հազար-հազար թխսկանի ճիչ ու ծզրտոց կար, գալար-գալար փետուրներ, ոտատակ ճխլված խատուտիկ ճտեր, հացատան դռնից ներս թռնրի բոցերի մեջ թպրտացող թխսկան կար ու երդիկը խուփ էր ու... ու ինքը ուզում էր վազեր, ներս մտներ, հասան... հասան թիկունքից բռնեցին և մեկը կանգնեց դեմը ժպտաց.

— Մրո՞... Մրրո՞...

Օսմա՞նն է... Օսմա՞նը... Չէր հավատում, չէ։ Հազար անգամ խումար մարեի ձեռքի հացն ու թացը կերած Օսմա՞նը, խումար մարեի գործած գուլպան հագած Օսմա՞նը, խումար մարեից հազար շուրթ օրհնանք առած Օսմա՞նը...

— Մրոյին չսպանեք, Մրոն լա՜վ գյավուր է,— ասաց։ Ձեռքերը ոլոր-

ված էր թիկունքին, ու ոտքով խփեց Օսմանին, սա ետ-ետ գնաց, գլորվեց, ծուռ ժպտաց ու կրկնեց.

— Մրոյին չսպանե՞ք... Մրոն լա՞վ գյավուր է,— ու ծառից կապելու կարգադրություն արավ։ Դիմադրում էր, քաշքշում էին թևերից, մազերից, ականջներից։ Ասկյարների գերին էր, թամբելու ձին, ասկյարների մորթելու եզն էր։ Կապկպեցին ընկուզենուց ու կապկպելու ժամանակ տեսավ... տեսավ, որ Հարութ պապը դեռ կա՝ ծնրած իր աղոթաքարին, լուռ, անշարժ, համր ու անշարժ՝ Ծուռձորի պռնկի մարդակերպ քարի նման։ Շունչը փչել, գնացե՞լ էր պապը։ Ու մեկ էլ տեսավ, ու տեսան ասկյարները. Հարութ պապը շարժվեց, ոտքի կանգնեց, բահն ուսեց, արեց քայլ։

Ասկյարներն իրար նայեցին, մեկը կրոն հայհոյեց, շարժվեց, բայց հապաղեց ու ահով ետ նայեց։ Պապի մազերը ճերմակից ճերմակ էին, ձնաբուքի պես ճերմակ ու խոնված, հայացքը կախ քայլում էր՝ ծա՞նր-ծանր ու համաչափ։

Նայում էր Հարութ պապին ու ձայն չէր հանում, չէր կարող և չէր ուզում։ Թվում էր, թե պապը անցուդարձին անտեղյակ է, ո՞չ ասկյար է տեսել՝ այգու ցանկապատի վրա, այգու մեջ, տան շեմին կանգնած, ո՞չ լսել հարս ու հարսնուկի, թոռ ու ծոռի ճիչ ու ծղրտոց, ո՞չ դուռ ու երդիկ բռնած ծուխն է տեսնում, ո՞չ իրեն «աալան Միրոն» թոռին՝ մատաղացու գառ։ Հարութ պապը քայլեց, ծա՞նր-ծանր քայլեց, ասկյարը ետ-ետ գնաց, պապը ասկյարի դեմով անցավ, սա ուզեց թիկունքից խփել, էլի հապաղեց։ Պապը այգի մտավ. ջուրը դարձրեց, հայացքը տարավ պճպճացող ջրի հետ, գլորված մի քար դրեց տեղը՝ պատաշարին, ու սկսեց փորել։ Ասկյարները իրար էին նայում, բոլորի աչք ու հայացքում ահ կար։ Ահ կար, ու ինքը ուզում էր ծիծաղել, ուզում էր ասել.

— Օսման, քու հավատը... Աստված չէ՛, վախ մի ունենա, երկնքեն չի՛ իջե, վախ մի ունենա՝ իմ Հարութ պապն է, քեզ համար ոչխար մորթած քո «ապոն» է, գնա սպանե։

Ասկյարները նայում էին իրար, ահ ու դողով նայում, խլրտում էին, հետո իրար առաջ հրելով գնացին, կանգնան այգու դռան մոտ, ոտք կախ գցելով, իրար առաջ հրելով այգի մտան, աչք ետ գցելով, ոտք կախ գցելով հասան Հարութ պապի մոտ։

— Գյավո՞ւր...

Ձայն հանեց մեկը և ձայնից սիրտ առած էլի ձայն հանեց։

Պապը անծպտուն մնաց, չնայեց, շարունակեց փորել...

Ուրիշ օր այդ ժամանակ արևը մի պարան ճամփա էր կտրել, այդ օրը չկար։ Մարաթուկի գլխին սև ամպ կար, Ծովասարին՝ կար, երկնքեն

քում ամպերը գզվռտվում էին, գյուղում կրակոց-տրաքոց էր, իրարանցում էր, ծուխ ու մուժ էր, կրակ ու բոց էր, գյուղի գելխեղդ շները ոռնում-կաղկանձում էին, ինքը կապկպված էր ընկուզենուն, Հարութ պապը այգին էր փորում...

— Գյավո՜ւր...

Հետո... Հետո մի խզակոթ իջավ Հարութ պապի գլխին... Պապն ընկավ, գլուխը բարձրացրեց նայեց տան կողմ, իրեն նայեց, ասկյարները էլի զարկեցին ու պապի դեմքը թաղվեց հողի մեջ, մնաց...

Ապա Օսմանը եկավ, նստեց իր դիմաց, նստեց, ժպտաց, ոսկե խաչով ոսկե շղթան հանեց, փաթաթեց մատին։ Մեծ հարսի խաչն էր... ու ինքը ատամները սեղմեց, ծամեց թև ու թիկունքի ուժը, կոկորդ տրաքեցնող որոտը կուլ տվեց, Հարութ պապի օրինակով Հարութ պապի համբերությունը առավ շուրթերի արանքն ու մնաց։

— Մրո, քո փրկագինը ինչքա՞ն էր,— հարց տվեց Օսմանը։

Հա՜, փրկագինը...

— Մրո, է՞ն տարին վալուն քանի՞ օսկի տվեցիր։

Հարութ պապի դեմքը չէր երևում, ճերմակ մազերի մեջ կարմիր կար, ծաղկաթերթեր էին կաթկթում պապի ճերմակ ու կարմիր գլխին, տուեը խուլ տնքում էր, ինքը կիպ-կապված էր ընկուզենուց, Օսմանը նստած էր դիմացը, ծնկներին թուր ու թվանք, ֆոֆռացնում էր մեծ հարսի խաչով ոսկե շղթան, ժպտում էր և ասում.

— Մրո, օսկիների տեղն ասա, կյանքդ քեզ փեշքեշ...

Օսմանը ժպտում, հարց էր տալիս, ինքը սուս էր, մնում՝ հարց էր տալիս՝ լուռ էր։ Օսմանը հարցրեց, ինքը թքեց անօրենի դեմքին, Օսմանը թևով սրբեց դեմքն ու էլի ժպտաց։

— Մրո, թքից վնաս չկա։ Անխելք գյավուր։ Խելք հավքի մինչև գամ։

Օսմանը թողեց, դարձին Դավոյի տան կողմ գնաց, իսկ աչքադեմի մնացողը թպրտացող գյուղն էր։ Թպրտաց, թպրտաց, թպրտաց...

— Վիզ կտրած թխսկան էր,— պատառ հիշողություն ձայն առավ Ջորի Միրոյից։

— Միրո,— շուռ եկավ սայլապան Արոն,— աստված սիրիս, քու սիրտ հանգիստ պահե։ Կռիվ աշխարհքի համար է, չէ՞ մինակ քու։

Միրոն պատասխան չտվեց, աչք ու ճակատն էր շփում։

«Էս տնաշենի մարդ ջուր առե ուր բերան, մնացեռ»,— սրտնեղեց Արոն։

— Միրո, քու տնամերձ էս տարի ի՞նչ է ցանած։

— Գարի։

— Ես ցորեն ցանի՝ փոշման եմ, գարին օգուտ է, բերք շատ ունի,— հետո նայեց սարի կողմ,— երկու օր է Բուղութի գլխին ամպ կա, վատ նշան է։ Թե կարկուտ էլ էկավ, պրծանք։

«...Ու կոտորածի առաջին օր էրգիր կարկուտ եկավ»,— կտրածը կցեց Միրոն։ Հուշերը սայլի ճռռոց էին, մեջքակոտոր ճամփա, հուշերը ուրդը պոռտած ջուր էր, գնում էր պղտոր-պղտոր ու դեմն առնող չկար։ Միրոն էր ու՝ անուժ։

«Կոտորուքսից երկնքի սիրտ ելած էր... Ջէ՛, երկինք դարդակ է... Գոռուն-գոչուն ընկավ երկինք, կարկուտ էկավ, ծառերից գոգ-գոգ ծաղիկ թափվավ, ծառեր ճուղակոտոր էղան...»։

Հողը քրքրվում էր, գյուղի գելխեղդ շները ոռնում-կաղկանձում էին, գզվռտում իրար։ Շիրտալով կարկուտ էր թափվում։ Ուզում էր, որ կարկուտը գյուղի գլխից հավաքվե՛ր, հավաքվեր ու գար իր վրա ու խփեր ցրիվ տար իր անճար գլուխը։ Մի հատիկ կարկուտ դիպավ գլխին, ու ինքը գոռաց։

— Ջա՛րկ, զա՛րկ, զա՛րկ...

Գոչեց ու փակեց աչքերը։ Հետո սարերը ճերմակեցին, այգում ծաղիկ չմնաց, բզիկ-բզիկ եղան ծառերը, Հարութ պապի ճերմակ ու կարմիր գլուխը ծածկվեց հողի փղձկոցով, պապը ցեխակոլոլ դարձավ ո՛ւ Հարութ պապի վրա, և՛ թպրտացող գյուղի, և՛ սար ու ձորի, և՛ աշխարհի վրա սպիտա՛կ-սպիտակ սարսուռ իջավ։

Շերոն կանգնեց կտուրին ոռնաց, իջավ, ականջները ցից-ցից, պտրտվեց Հարութ պապի շուրջբոլոր, հոտոտեց, փշաքաղվեց, կաղկանձեց, դունչը ցցեց երկինք, հետո եկավ, կանգնեց իր դիմաց՝ հաչա՛ց-հաչա՛ց, հաչա՛ց, կատաղած հաչա՛ց, թռավ-կրծքով զարկեց իր կրծքին, շուռ եկավ, հասավ առվին, գլուխը թաղեց ջրի մեջ, դուրս բերեց, կլանչելով թափ տվեց, կաղկանձեց, ոռնաց ու պոկվեց ու գնաց Ֆիդասարի կողմ։ Հետո ոռնոցը խո՛ւլ, խուլ ընկավ ականջը։ Շերոն Մասրաձորում էր։ Մեկ էլ հեռո՛ւ, հեռվից լսեց՝ Ֆիդասարից էր, ականջ պահեց, ուզեցավ մեկ էլ լսել Շերոյի ձայնը, չլսեց, պահեց՝ չլսեց, պահեց՝ չլսեց, հասկացավ, որ Շերոն էլ չի գա, ետ չի՛ գա ու անարցունք լաց եղավ Շերոյի համար...

Գիշերը պատանքեց գյուղը։ Երկինքը դարձավ սև՛, սև՛, սևերես ու սևերես երկնքում՝ մի բուռ ճերմակ ամպ, թիկունքին Օսմանի սրի կեռ ծայրի նման մի կտոր լուսին։ Գիշեր եկավ, գիշերվա հետ ագռավների ոհմակը, ու համրացած գյուղը լցվեց կռինչներով։ Գյուղում ինչքան ծառ կար՝ սևսաղարթ էր։ Հետո ագռավները իջան ծառերից՝ կոցեցի՛ն, կոցե-

ցի՛ն, կոցեցի՛ն... Հետո Օսմանը եկավ ու կանգնեց դիմացը, մթան մեջ պսպղացին աչքերը, մթան մեջ ծուռ ժպտաց։

— Մրո, օսկիների տեղը հիշեցի՞ր...

Ո՛չ առավոտ լիներ ու Հարութ պապը իշներ ճոճքից. աղոթք աներ, փոր աներ, ո՛չ խումար մարեն խմոր հունցեր-վառեր թոնիր, ո՛չ խանդուքը հացի կապոց պատրաստեր՝ մեկը արտ գնացողների, մեկը սար գնացողների, ո՛չ Հարութ մանչը արթնանար ու խաղ աներ օրորոցի զանգակների ձեռ, ո՛չ... ոչի՞նչ, ոչի՞նչ, ոչի՞նչ... Այդ պահի իր երազն ու ցանկությունը մեկ էր՝ ձեռք ու ոտք ազատ լիներ, ճանկեր Օսմանի կոկորդը, սատկացներ, շպրտեր մի կողմ, մոտենար առվին, քար ու ճիմով քերբեր-լվացեր ձեռքերը, թողներ, գնար։

Ու միտք դրեց. խաբել... խաբել-ազատել ձեռք ու ոտք։

— Օսման...

Ասաց ու կատաղության վրա եկավ կատաղություն, որ լեզուն պըտտեց, տվեց Օսման անուն։ Թվաց, թե ինքը Միրոն չէ՝ Օսմանի ասած, Օսմանի «ախպեր Մրոն» է, ինքը վախկոտ է, վախկոտ է. դող ունի շլինքի համար և Օսմանի ձեռքից, գերդաստանը սրի քաշած ձեռքից, շունչ ու կյանք է խնդրում։ Եվ Օսմանին խեղդելու նոր մոլուցք ունեցավ, դիվոտվեց և նոթեն կանգնեց խաբել-ձեռք ու ոտք ազատելու մտքին։

— Օսման, հա հարցուփորձ ես արե, հա պատասխան եմ տվե. իմ փրկագին Մխեն բաշխեց։ Մխեն կճուճով օսկի ունի, կճուճից էլ շատ, պահած տեղ կիմանամ, հասնինք Թաղավանք, կճուճ օսկին քեզ։

— Գյավուր, միտքդ խաբե՞ն է, ձեր օսկիների տեղը ցույց տուր, ձե՛ռը։

— Մենք չունինք, աստված, երկինք, գետինք՝ չունինք, սպանես էլ՝ չունինք, Մխեն ունե։

— Անխելք գյավուր, Մխեն օսկիները քեզ համա՞ր է պահել... Թաղավանքում հիմա օսկի՞ մնացած կլինի։

— Կա. օսկու տեղ ինձնե ու Մխիկից զատ մարդ չիմանա։ Ես ու Մխեն Մուշ քաղաք էրթալու, դուքան բացելու պայման ունինք։ Տարուց ավել է Մխիկ նորեն Դիարբեքիր պանդխտության է գնացե... Օսկու տեղ ես կիմանամ։

Հորինում-խաբում էր, ինքն էլ չիմանալով թե ինչպես, հորինում-խաբում էր ու նկատեց, որ Օսմանը թուլանում է ու նկատեց, որ... Օսմանին խեղդելու իր մոլուցքը թուլացել է և ղղվեց իրենից, ինքն իր դեմ եկավ ու բռնաց.

— Օսման, ես քու կրոն... օսկի չկա, սպանե ինձ, քու ավերին գնա։

Օսմանը ժպտաց, ձայն տվեց, կանչեց, չորս-հինգ ասկյար եկան,

խանչալներով կտրատեցին իր կապերը, հետո ոտքերը ազատ թողեցին, կապեցին ձեռքերը։

— Մրո, գնացինք...

Քայլ արեց ու կարծես նոր զգաց, որ Հարութ պապը այլևս քայլ չի անի։ Քիչ առաջ, ընկուզենուն կապկպված, մի քիչ կար ու մի քիչ չկար, մի քիչ նման էր Հարութ պապին ու մի քիչ տարբեր, մի քիչ նման էր գլխատված տանն ու գերդաստանին ու մի քիչ տարբեր, ծառին կապկրպված շնչում-սպասում էր ու չգիտեր թե ինչի։ Հիմա... հիմա Օսմանի առաջն ընկած պիտի տուն ու դռնից հեռանա, պիտի բարձրանա Ընկուզասարը, պիտի քայլեն, գնան ու իբր... իբր հարմարեցնի պիտի և... և սպանի Օսմանին, որ իբր... իբր Օսմանի առջևից քայլել-գնալը, գերի-գերի, գլուխկախ, խելոք ու գլուխկախ գնալը իր շունչն ու գլուխը փրկելու համար չէ, այլ Օսմանին սպանելու, վախկոտություն չէ՝ վրեժ է։ Ե՛վ քայլ արեց, և՛ քայլի մեջ տեսավ դավաճանություն՝ դեմ այդու ու Հարութ պապի, սար ու ձոր ընկած Շերո շան, Ընկուզասարի ու իրենց սարալանջ-կտուրի, տանը շուռ եկած օրորոցների և՛ հացի տաշտի, և՛... և....

Քայլ արեց ու... պի՛րկ-պիրկ շուռ եկավ, գլխով խփեց Օսմանի կրծքին, գլորեց։ Օսմանը ընկավ և ընկած տեղից ասաց.

— Էդ գյավուրին չսպանե՛ք։

Շուռ եկավ մյուսին՝ ասկյարը խույս տվեց, ինքը երեսն ի վար ընկավ... Հետո քաշքշուկ եղավ, ինքը, մահը աչքն առած, ոտքով, կրծքով, գլխով խփում էր, կծում էր ու դրա մեջ ամոթ տեսավ, որոշեց չկրծել։ Չէր ուզում քայլ աներ Օսմանի հետ, չէր ուզում թողնել-հեռանալ և ինչքան չէր ուզում, Օսմանը այնքան համոզվում էր, որ ոսկի կա ու հա զգուշացնում էր.

— Չսպանեք էդ գյավուրին։

Քաշքշուկ եղավ, ծեծկռտեցին ու չիմացավ ինչպես հեռացրեցին տուն ու դռնից ու ինքը վերջին անգամ չնայեց Հարութ պապին ու աչք չգցեց դռնից ներս, գիշերով քաշքշեցին Ընկուզասարն ի վեր, Ընկուզասարն ի վար գլորեցին, տարան։ Ասկյարները ուժասպառ էին, իրեն դադրել չկար. ոտքով, կուրծք ու գլխով խփում էր՝ ում պատահեր, դիպներ, չդիպներ, ու գլուխը դիպավ հրացանի... Եվ գիշերը մթնե՛ց, մթնե՛ց, մթնե՛ց...

Ուշքի եկավ, արև էր։ Չիմացավ իր տեղը։ Ապա գլխացավ զգաց, Օսմանը կանգնեց դիմացը։

— Ո՞նց ես, Մրո,— ժպտաց,— ասլան տղա ես։ Ես քեզ սիրում եմ... Ուզում էին սպանել, չթողեցի։ Մինչև թաղավանք օր ու կեսի ճամ-

փա է, հասանք՝ քեզ ազատություն։ Օսկի էլ կտամ, Մրո, դու ասլան տղա ես...

Արև էր, սար ու ձոր՝ ծխոտ, կարձում էր ամպագոլ է, ցարդուխտրդ էր, մարած։ Ալարկոտ մի թմրություն էր իջել մարմին ու հոգուն։ Օսմանի խոսքերը լսում էր ու չէր լսում, Օսմանը իր թշնամին էր կամ իր ծանոթը, լիներ-չլիներ ինքը պիտի այդպես փլվեր, անմիտք նայեր երկնքին։

Հետո հեռո՜ւ-հեռվից կրակոց լսվեց, ծխահոտ առավ ու չիմացավ ինչպես անցավ թմրությունը, ըմբոստությունը դարձավ ետ եկավ, թև ու թիկունքին՝ ուժ, աչքերի մեջ կրակ ընկավ՝ ու կրակ աչքերով իմացավ, որ դիմացը Օսմանն է ու Օսմանը։

— Մրո, ե՛լ, ուշ է։

Չէ՜, խաբել է հարկավոր անօրենին,— անցած օրվա միտքը տարավ-բերեց, թե չէ ասկյար ընկերները ալան-թալան են անում, սա ինչքա՞ն պիտի համբերի, կթրխկացնի, կերթա...

— Ինձ ինչքա՞ն օսկի բաժին կտաս, Օսման։

— Մի քիսա, Մրո, ալլահը վկա, մի քիսա կտամ։

— Կճուճ օսկուց՝ քիսա՞։

Օսմանի առաջն ընկած քայլեց, ու քիսա-քիսա ավելացրեց իր «բաժինը», դարձրեց տասը քիսա և տասը անգամ Օսմանի հույսը մեծացավ. կողք-կողքի քայլեցին։ Հնարեց, ուսով գլուխը քորեց. Օսմանը ձեռքերն արձակելու սխալմունք կունենա։ Չէ։ Հնարեց.

— Ոտաց ճամփի պետք ունիմ,— ասաց։

Ձեռքերն արձակելու փոխարեն Օսմանը մոտ եկավ տարատն արձակելու և... գլխով շփփացրեց Օսմանի քունքին, մեկ էլ խփեց, Օսմանը երերաց, ձեռքը տարավ խանչալին, ինքը ոտքով հասցրեց-գլորեց ու ծունկ ծալեց կոկորդին...

— Հարութ,— Զորի Միրոն դարձավ որդուն,— ո՛չ քու պապն է սուտ խոսե, ո՛չ քու պապի պապ, ո՛չ ես, ո՛չ դու, գառ։ Սուտ խոսալ անուժ մարդու գործ է։ Բայց կռվի մեջ սուտ խոսք ասել, ստախոսություն չէ, թե դրանից քու ընկերոջ վնաս չէ, վնաս թշնամուն է՝ աբա, ամոթ չէ, հոգի ներկել չէ։ Էդ էլ իր ձևի կռիվ է, գառ։

Հարութը գլխի էլ չընկավ, թե ինչ սուտ խոսելու մասին է խոսքը, բայց մի բան պատասխանել պետք էր։

— Լավ, հայրիկ,— ասաց։ Հետո չգիտես ով անցավ-դարձավ մրտքում և ավելացրեց,— սուտ խոսելը անազնվություն է։

— Հարութ, թագավոր նմանապես սուտ կխոսի,— վիճեց Զորի Միրոն։— Էրգիր օսմանցու թագավորի կողմեն հայերին ազատության

հրաման էղավ։ Էղավ, ժողովուրդ թև առավ, թռավ, մարդիկ իրենց մանչերու անուն կնքեցին Ազատ, սարերու անուն՝ Ազատ, բայց ազատություն սո՛ւտ էր, հայերին խաբել էր, միամի՛տ-միամիտ պահել էր։ Խաբեցին ու էլան կոտորեցին անզեն ժողովուրդ, ավերեցին էրգիր, ու դարձանք թափառական, գառ։

— Օսմանցին հավատ ու հավատարմություն չուներ,— իր խոսքն ասաց Արոն։

— Գերմանացու թագավոր սուտ չխոսա՞ց,— Միրոն խոսքը շարունակեց Հարութ որդու համար,— Սովետի հետ չկռվելու պայման ուներ։ Աշխարհքի աչաց դեմ թագավորական խոսք արեց ոտատակ, կռվի էլավ էլ ինչի՞ քու հոր սխալ կհանիս, ինչի՞ կասես սուտ խոսալ չի կարելի՛, ա՛յ հեր։ Չի կարելին խոսք է, գառ, աշխարհքի բնույթի հետ մեկտեղ բան չունե, կյանքի մեջ ամեն ինչ կպատահի։

Հարութը պատասխան չուներ։

— Լավ, հայրիկ,— ասաց ու մտածեց,— հայրիկը իզուր հրաժարվեց լիկկայանից. ավելի շատ բան կիմանար։

— Միրո,— սայլապան Արոն դիրքը հարմարեցրել էր երկար զրույցի,— քու կարծիք ի՞նչ է. էս կռվի մեջ Թուրք գերմանացո՞ւ թիկունք կպահե, թե՞ մեր։

— Թուրքիան չեզոք պետություն է,— Հարութը պատասխան տվեց,— բայց, ասում են՝ մեզ օգնելու միտք ունի։

— Է՛, Հարութ, Հարութ,— տնքաց Զորի Միրոն,— դու Թուրքին ճանանչ չես, գառ։ Կյանքի մեջ Թուրք այլազգի թիկունք պահած չէ՛։ Չի՛ էղե ու չի՛ էղնի։ Քու ափի մեջ ձվածեղ պատրաստե՛-տուր, կերավ-պրծավ, կասի վառած էր։

— Միրո, ռսի հող դուրա՞ն-դուրան է, գաղթի ժամանակ տեսա՞ ո՞չ սար, ո՞չ ձոր։ Դուրան տեղ կռվել դժվար է՝ ճակատ բաց է։

— Ռուս առյուծ կռվող է,— պատասխանեց Միրոն և շարունակեց մտքում.

«Համ դուրան տեղ, համ սար ու ձորի մեջ՝ առյուծ կռվող է։ Կոտորածի ժամանակ ռուս քշե՞ց հասավ Մուշ ու առաջ էրթալ կուզեր։ Նիկոլի վիզ կոտրվի, քանց կոտրվավ. Նիկոլեն չթողեց. զորք ետ չկանչեր՝ ռուս կհասներ Տիգրանակերտ ու Դիարբեքիր»։

— Միրո, էրգրի բնույթն, մեր էրգրի սարեր կռվի համար շատ հարմար են,— խոսքն առաջ տարավ Արոն,— Գոլեի Մշոն, իր ախպեր Արշակի հետ, դիրք բռնեցին սարի վրա. էրկու-իրեք հարիր ասկարի դեմ կռիվ տվին։ Կռվա՞ն, կռվա՞ն, կռվա՞ն, Արշակ զարկվավ, Գոլե Մշոն

մնաց՝ կուվավ, կուվա՜վ, կուվա՜վ... Պոլե Մշոյի պատմություն կիմանա՞ս, Միրո։

— Կիմանամ,— մռայլ պատասխանեց ու շարունակեց մտքում.

«Տալվորիկցի Սնջոյի պատմություն կիմանա՞ս, Արո... Չես իմանա ու ինձնե զատ մարդ չի իմանա։ Գյարմավցի Մանուկի պատմություն կիմանա՞ս, Արո, սուլուխցի Իշխանի պատմություն կիմանա՞ս, դաշտադեմցի Առաքելի, Հակոյի Արթենի պատմություն կիմանաս... է՜, տալվորիկցի Սնջո, գյարմավցի Մանուկ, սուլուխցի Իշխան, Հակոյի Արթեն, դաշտադեմցի Առաքել, լուս իջնի ձեր հոգուն, տղեք... էրկու ցերեկ ու էրկու գիշեր, էրկու գիշեր ու էրկու ցերեկ ծանոթ էղանք. կողք-կողքի մնացինք, բայց ձեզնե մոտ ընկեր չունեցա։ Չի՜ էղե ու չի՜ էղնի։ Ձեզնե հետո մնացի առանց ընկեր տղեք։ Օր է՜ն օրվանից ժամանակ է անցե, էն օր սպիտակ մազ չունենք, էսօր սևն է՝ թաք ու թուք, գործվարքցի Միրոն դարձավ քարագլխեցի Զորի Միրո, դուք մնացիք ձեր անվան տեր, մազ չճերմակցիք-մնացիք՝ տղեք... Լուս կաթա էն բարձրիկ սարին ու ձեր հոգուն, տղեք...»։

5

Իծաձորում հանդիպեցին։ Թարև-աստծո բարին չեղավ, ձեռք մեկնելսեղմել չեղավ, հարցուփորձ չեղավ։ Զորսն էին՝ անծանոթ, խոժոռ աչքունքով, ճակատներով մռայլ և սեղմված շուրթերով և, ինչպես ինքը՝ մեկից խլած թուր ու թվանքով։ Ինքը դրանցից մեկն էր, տալվորիկցի Սնջոն էր կամ գյարմավցի Մանուկը, սուլուխցի Իշխանն էր կամ թե՝ Հակոյի Արթենը, նրանցից մեկն էլ, առանձին-առանձին ամեն մեկն էլ՝ ինքն էր՝ գործվարքցի Միրոն։ Եվ մեկ-մեկու միմյանց աչքի մեջ տեսան։ Հետո իրեն թվաց, թե մեղապարտ է, ամոթ մեղք ունի շլնքին, մեղք ունի այր մարդուն չսազող։ Նույնը տղերքի աչքերի մեջ տեսավ՝ առանձին-առանձին, ու նստեցին գլուխկախ, պարտվա՜ծ-պարտված։ Անուն գյուղանուն բաշխեցին իրար, կնճռի վրա կնճիռ նստեց վիրավոր գյուղանունների հետ, տնքոցի հետ ելավ տնքոց։ Ապա և միտք ունեցավ դառնա Գործվարք, հողը դնի Հարութ պապին, տուն մտնի, տուն մտնի... Եվ ուշք ու մտքով չկարողացավ տուն մտնել... Մինչև էսօր՝ չի կարող...

— Ո՞ւր, Միրո,— Սնջոն էր։

— Գործվարք կերթամ... Թաղավանք կերթամ,— գոռաց։

— Էրթալ քու կամքն է, Միրո... Թվանք տանել՝ չէ։ Մենք ընկեր ունինք, լուր բերելու է գնացե, էկավ, կելնինք սար, դիրք կբռնինք։ Թվանք թող, էրթալ քու կամքն է։

Ինքն ու Սնջոն աչք-աչքի կանգնեցին։ Սնջոյի աչքերը ասում էին.
«Միրո, դու թուլհոգի ես»։
Իր աչքերի մեջ պատասխան ուներ.
«Քու կողմից սխալմունք է»։
«Գլուխ փրկելո՞ւ կերթաս»։
«Գերդաստան թաղելու կերթամ, իմ կին ու էրեխեն գտնելու կերթամ»։
«Դու վրեժ չունի՞ս առնելու»։
«Ու վրեժի համար կերթամ»։
«Թվանք տուր, նոր գնա»։
«Չէ՛»։
«Թվանքով դուրս չես էլնի»։
«Կելնիմ»։
Ինքն ու Սնջոն աչք-աչքի կանգնեցին, կանգնեցին, ոչ ինքը աչք թարթեց, ոչ՝ Սնջոն... Անճար կատաղությունից ճաք էին տվել, կանգնել իրար դեմ։
— Սնջո, թող արա էրթա,— ասաց գյարմավցի Մանուկը, ու խոսքի հետ թարթվեցին իր աչքերը։ Սնջոն ճամփա տվեց, իսկ ինքը մնա՞ց, մնաց, դարձավ նստեց իր քարին, դարձավ ասաց.
— Սնջո, ինձ թուլհոգի մի իմանա... Գերդաստան թաղելու կերթենք, վրեժի կերթենք, Սնջո, իմ միտք գլուխ պահել չէ։
— Մենք չունի՞նք գերդաստան թաղելու,— պատասխան տվեց Սընջոն ու պատասխան չառավ։
— Ունի՞նք, Միրո,— կրկնեց,— անթաղ թող անթաղ մնա, դառնանք՝ թուր ու թվանքից փախած, սար ու ձոր ընկած մեր ազգ ու արնի մասին մտածինք, Միրո։
Ե՛վ հաշտ էր Սնջոյի ձայնը ու իր դեմ ոչինչ չկար, և՛ տխուր էր Սընջոյի ձայնը, և՛ ըմբոստ։
Հետո եկավ դաշտադեմցի Առաքելը, լուր բերեց.
— Թվով հարիր-հարիր հիսուն ասկյար դեպ Սեպասար կգան։ Ժամ-ժամ ու կեսից կհասնին սար։
Սեպասա՞ր... Ընկուզասարի պես ծառոտ չէր, գագաթին ցից-ցից քարեր կային, կող ու կշտին՝ ցից-ցից քարեր՝ հիմքից մամուռ բռնած։ Քարերի արանքում չորացած խոտ կար, հազա՞ր-հազար տարվա փտած խոտ, ու ճերմակ փառի տակից՝ նորոգ ծիլ։ Մասրենի կար, խավըրծիլ, նուխիկ, գազ ու կանգառփուշ... Սեպասարում ոտնահետք քիչ էր, թե պատահեր՝ որսորդի։ Դրմփոցի հետ վայրի այծերը դուրս էին գալիս, ծփում աջակողմ ու քարափի գլխից նետվում Իծաձոր, ծփում

ձախակողմ՝ ձոր Գիլոց։ Սեպասարի աջակողմում ձոր կար, ձախակողմում՝ կար, ձորերը դրմփացող էին, արև խեղդող, ժայռոտ, անձավաշատ։ Օտարը, Իծաձորին ու Գիլոցին օտարը՝ ո՛չ իջնել կարող էր, ո՛չ բարձրանալ։

Եվ վեցով Իծաձորից ելան, դիրք բռնեցին սարի վրա ու դիրք բռնելու հետ՝ երդում.

— Թիզ մի չնահանջինք մեր դիրքեն։

— Տղեք,— ասաց Սնջոն,— թե մենք էս սարի տերն ենք, երդում էս սարի արև ու հովուն, ո՛ւ Մարաթուկին, ո՛ւ Սովասարին, երդում մեր էրգրի սևավոր սարերուն։ Թե մենք էս ձորերու տերն ենք, երդում էս ձորերու ահ ու ջրերուն, երդում մեր էրգրի ծուխ ու դումանոտ ձորերուն։ Մեր ավեր օջախներուն՝ երդո՛ւմ, մեր կտրած ծիսերուն՝ երդո՛ւմ, մեր էրգրի գել ու գազաններուն՝ երդո՛ւմ, էս սարի քարերուն՝ երդում, հարիր-հարիր հիսուն չէ, հազար ասկյար մեր վրա գան, չթողնինք Սեպասար... Թիզ մի չնահանջինք մեր դիրքերեն։

Սնջոն քարին թիկնած ասում էր երդումը... Չէ, երդում չէր. սիրտը լցված էր, մի բան պիտի ասեր ու ստացվածը դա էր։ Ձայնի մեջ թախիծ ու կոիվ կար, աչքերի մեջ՝ արյան ու արցունք, Սնջոն ասում էր երդումը ու... ու ինքը կարծես նոր էր հասկանում, թե՝ Հարութ պապից զատ, գյուղ ու օջախից զատ, խանդութից զատ... կորցրածն ու կորչելիքը ինչքա՞ն, ինչքան է։ Եվ աչք թացել էր ուզում, և գոռալ.

«Սո՛ւս, Սնջո, սո՛ւս, անխիղճ»։

«Ու Սնջոն իր երդումին տեր մնաց, Մանուկ իր երդումին տեր մնաց, Բշխան երդում պահեց, Սրթեն՝ պահեց, Առաքել՝ պահեց, ես... չէ... Մեղա՛, մեղա՛ տղեք, մեղա՛, իմ բարձրի՛կ սար...»։

Ձորի Միրոն երեխայի պես բռունցքներով տրորեց աչքերը, և ականջն ընկավ Արոյի ձայնը.

— Բանակայինի շորերից էղնի. մարդ չորս, հինգ, մինչև վեց տարի կհագնի։ Բարով-խերով էգար, քու շորեր տուր քու հոր։

— Հարութ, լսե իմ խոսք,— չոր կտրեց Միրոն,— պատերազմ է ու դու կովելու է կերթաս, գառ,— լռեց ու մտքում ասաց. «Իմ կյանք քու աչաց մեջ առած կերթաս»,— քու գնալուն դեմ էղնիմ թե կողմ՝ կերթաս, կամոք-անկամք՝ կերթաս. երկիր նեղ վիճակի մեջ է, դու՝ երկրի տղամարդ,— դաղար տվեց։

(— Բա բրիգադիր Գևոն ի՞նչի չերթա, շրջկենտրոն հասավ-գարձավ,— Արոն էր)։

— Թե էրթալ կա ու կա, գառ, ես սիրտ ու հոգով էրթալուն եմ կողմ։

— Իսկ ես սրտով չեմ գնում, հայրիկ,— նեղացավ Հարութը։

— Հարութ, իմ խոսք ուրիշ է... Կռվի մեջ մտնող ամեն մարդ հարկ է ունենա երդում, չէ լեզվի՝ սիրտ ու հոգու։ Թե ունեցավ, թե պահեց երդում, ամո՞ւր, ամուր պահեց, երդում կդառնա թե ու թիկունք, գառ, երդում կդառնա ախպեր ու մարդու կդարձնե հաղթ։

(— Մեր Մխեն առավոտ երդում կանե, իրիկուն կդառնա տուն շորեր էլի բզիկ-բզիկ)։

Հարութը խորհեց հոր խոսքերի մասին, ուզեցավ մինչև վերջ հասկանալ։ Ինքն ու հայրը երբեք լուրջ խոսակցություն չէին ունեցել. միշտ մտածել էր, թե հայրը աշխարհի մասին քիչ բան գիտե։ Երբեմն փորձել էր իրենց ժողովուրդներից պատմել, աշխարհից լուր տալ։ Հայրը կես ու պոռատ լսել էր ու փակել.

«Հա, գառ, քու ասածն է»։

Հիմա հայրը բաներ է ասում, բոլորը նոր։ Որտեղի՞ց է ասում. ժողովի չի գնում, գյուղամեջ՝ մեկ-մեկ... Որտեղի՞ց է ասում։

— Հարութ,— շարունակեց Զորի Միրոն,— քու կռիվ գերմանացու դեմ թող մեծ երկրի համար չեղնի, էղնի էս Քարագլուխ գեղի, էղնի քու քողտիկի համար։ Ու քու երդում աշխարհքի չափ մեծ չեղնի, գառ, էղնի... էղնի,— ուզում էր ասել Զորի Միրոյի համար, չասաց,— քու հոգու մեջ երդում տուր էսպես՝ կռվիմ, ասլանի պես կռվիմ ու չը... չը...,— կմկմաց,— չզարկվիմ, չզարկվիմ. դառնամ Զորի Միրոյի մոտ։

(— Աստված մեծ է, Միրո)։

Հոր խոսքերը Հարութին նորից խորհել տվեցին։ Ժողով ու միտինգներում բոլորն ասում են կյանք չխնայենք սովետական հայրենիքի համար։ Իսկ հայրը...

«Զորի Միրոն մենատնտեսի հոգեբանություն ունի...»։

Հարութը հիշեց ականջն ընկածը և կողքանց նայեց հորը։ Խոնարհված էր։ Հետո Հարութը գյուղը տեսնելու ցանկություն ունեցավ՝ դարձավ նայեց։ Ջերևաց գյուղը։ «Էլ չի՞ երևալու»,— զգաց, որ գյուղին կարոտել է... Աչքերը կկոցած նայեց՝ չերևաց... Շա՞տ է կարոտել...

— Միրո, քու կարծիքն ի՞նչ է. գերմանացի՞ն է լավ կռվող, թե՞ օսմանցին,— սալլապանը թեքվեց Միրոյի կողմը,— ասկյարներ շատ անխիղճ են։

— Ո՛չ գերմանացու կռիվն եմ տեսե, ո՛չ ասկյարներու։

Արոն զարմացած նայեց։

«Ո՛չ ասկյարների,— մտքում ամուր կրկնեց,— է՞ն ինչ էղավ՝ կռիվ չէր։

Հայի ու օսմանցու կռիվ չէր... կռիվ ճակատ-ճակատի բանակների մեջ է, չէ՝ թուր ու թվանքով ասկյարի ու... ու Խանդութի՝ գրկանոցով

ու ծոցվոր, ո՛ւ Խութեցի հարսի, ո՛ւ Խումար մարեի, ո՛ւ պապ Հարութի... կռիվ չէ՛ր...

Տաս զենքավոր մի տեղ միացան իրար, քսան՝ մի տեղ, մի շեն դիմադիր կանգնելու ճար ունեցավ. շեն ու օջախի համար կռվել-մեռնելու ճար ունեցավ, տաս՝ չէ... Պոլի Մնջոն, ախպոր հետ, մի սարի վրա դիրք բռնեց, Մնջոյից յոթ սար էն կողմ՝ փեթարա Ախոն, յոթ սար էն կողմ, Սեպասարի վրա տալվորիկցի Մնջոն դիրք բռնեց... Ու թող էղնի դիրք չթողնելու երդում ու թող էղնի երդում պահել... օգուտն ի՞նչ...»։

«Թե էդ էլ չեղնե՞ր,— Զորի Միրոն ինքն իրեն հարց տվեց,— չեղեր կամոք մեռնե՞լ, նահատակվե՞լ...»։

Ու դարձավ պատասխան տվեց.

«Սարեր խոռ՞վ կմնեն մեզնե... էն բարձրի՞կ սարեր»։

Զորի Միրոյի միտքը ձայն դարձավ, է՞, Սեպասարից հասնող Սընջոյի ձայնը դարձավ ու զրնգաց ականջներում ու ձայնը կանչեց Միրոյին, տարավ Սեպասար...

«Ասկյարներ կեսորին էրևացին...»։

Ցաքուցրիվ գալիս էին հրացաններն ուսերին, ինչպես չոբան Ավեն մահակն էր ուսում։ Եկան, Սեպասարի փեշին դրին ոտք՝ անփույթ, թառմռելով։ Եվ խլբլթում ու ճռճվում էին Սեպասարն ի վեր, և խլբլթոցը հայհոյանք էր՝ սար ու սարատիրոջ։ Սարին, որ դիք է, գլուխբարձր, քար ու մացառոտ է, տիրոջը, որ ունեցած-չունեցածը չի հավաքել, կուտակել աչքատես, հետո օջախ ու գերդաստանով չի եկել, խմբվել Իծաձորի ու Գիլոց ձորի պունկին՝ թուր ու թվանքի դեմ։ Թե չէ, մի գյուղ էստեղ, մեկն՝ էնտեղ, մի քաղաք էստեղ ավերի, մի վանք՝ էն սարի վրա։ Մեկին մի քարի տակ վերջ տուր, հիսուն-վաթսուն՝ մի տան մեջ, հարյուր-երկու հարյուրին՝ մի մարագի, հազարին մի ձորի մեջ վերջ տուր... Այդպես մինչև ե՞րբ... Թո՞ւ, ձեր գյավուր։

Ասկյարները խլբլթալով, օձագալար սողացին ու երբ աչքերի սև փայլն էլ երևաց, Սնջոն գիշերհավքի պես ձայն հանեց ու վեցով կրակ բացեցին... Ասկյարները խառն էին, խառնիխուռն դառան՝ ալլա՜հ, ալլա՜հ...

Հե՜յ գիտի, հե՜յ, Օսմանը իր ալլահը ուներ, Մնջոյին աստված չկար, ալլահը ճիշտ էր, աստվածը սուտ, Օսմանին միս էր՝ ցավ ու մահ կունենար, Սնջոն քար էր, ո՞չ դավ, ո՞չ մահ, Օսմանի երակների մեջ արյուն էր, Սնջոյին՝ ջուր...

Ալլա՜հ, ալլա՜հ... ամեն մեկը հազար անգամ առձայնեց, ամեն մեկը հազար սպանություն էր արել ու հազար մահվան ահ ուներ։ Խառնի-

խուռն եղան, դարձան իրար ճամփա կտրեցին, գլտորտեցին, ոտատակ տվեցին իրար, հասան սարի պորտը, պահ մտան քարերի ետև, կրակ բացեցին։ Դիպնի չդիպնի՝ կրակեցին։ Գիտեին, որ սարի գլխին զորք չէ. գյավուրներին զորք որտեղի՞ց, անիծված մի քանի գյավուր կա, թող տան պատասխան կրակ, իրենք ուղղությունը բռնեն, տաս ու քսանով կրակ բացեն, մեկը չէ, մեկը՝ կդիպնի։ Ասկյարների մեծավորը աղաղակում, սարն ի վեր սողալու կարգադրություն էր անում՝ չէին լսում, օդի մեջ կրակում, պահանջում էր՝ չէին լսում, օրինակ ցույց տվեց՝ շարժվող չեղավ... Գրոհով սա՞ր բարձրանալ, արյո՞ւն թափել։ Չէ՞։ Ամեն մեկը գըրպանում ոսկե խաչ ուներ, ոսկե ատամ, ոսկե ականջող, ոսկե մատանի, ոսկի ու ամեն մեկի կյանքը քաղցրացել-թանկացել էր. մի անիծված գյավուրի երեսից դո՞ւրս տա։ Չէ՞։ Ալլահի կամքն է. իրենք կոտորողներն են, գյավուրները՝ կոտորվողներ։

— Միրո, Մանուկ,— ձայն հանեց Սնչոն,— կրակելու սխալմունք չունենաք. օգուտ չէ։ Մինչև մոտ չգան, կրակ չեղնի։

Կրակոց-տրաքոց էր, Սեպասարի քարերը վիրավորվում էին, վայրի այծերն ու սարի գազանները փախան-գնացին, և արևը գնաց սարի գըլխից, և երկինքը հեռացավ։ Օրը գնդակոծվեց-մեռավ, և մթան հետ ասկյարները սողացին քարերի տակից։ Ոլրծուն սողում էին, մթան հետ գունդ-գունդ մութ էր թավալվում Սեպասարն ի վեր։

— Տղեք,— կանչեց Սնչոն,— քար գլորեք ինչքան ձեր ուժ կպատա՝ մեծ, ինչքան ձեր ուժ կպատա՝ շատ։

Քար գլորեցին քարի ետևից, քարի ետևից՝ քար, քարը քար պոկեց-տարավ, քար ու քարաբեկոր իջան, թափ առան-գնացին, զարկեցին-զարկվեցին, բուռ-բուռ կրակ ցողաց, դմփրտոց ընկավ Իծաձորն ու Գիլոց ձորը։

Ալլա՞հ, ալլա՞հ, ալլա՞հ... Սեպասարը ժայթքել էր, ասկյար ու ասկյարի բլթբլթոց էր ճխլվում։ Ալլա՞հ, ալլա՞հ... Ամեն մեկը իր կավե տունն ուներ, կին ու լակեճ ուներ, թալան պիտի տաներ տուն, կնոջ համար՝ ականջող, լակեճի համար ոսկե ատամ, ոսկի, ոսկեղեն... Ալլա՞հ, ալլա՞հ... կսպանվի, խալին կմնա պահված, ոսկեղենը... Ալլա՞հ, պետք է դեռ հասնի Մուշ, Ալաշկերտ, Իգդիր, Ղարս, պետք է դեռ հասնի Երևան... դրախտի ճամփեն բացելու համար դեռ քանի՞ գյավուր պետք է սպանի, դեռ ինչքա՞ն ավար կունենա...

Եվ գալարվում էին սարն ի վար, և ծռմռվում էին, անում նամազ, ձեռքերը թուր ու թվանքի հետ ճոճում զորանագիր։

Մութ էր, և ասկյարների խթխթոցը հեքիաթում լսած չարքերի պարի նման էր՝ զզվելի էր ու զզվանքից նոր կատաղություն էր ծնվում։ Ամեն

ինչ մոռացել էին, կար միայն Սեպասարը, Սեպասարի քարերը ու պարող չարքերի տեսիլքը։

— Հե-հե-հե՛յ...,— մռնչում էր Սնջոն, և դղիրդ-դրմփոցը թրատվում էր, գոչյունը հասնում էր ձորերն ու ետ գալիս։ Դա հոգու մեջ գալարվող ցավ էր, գլորվող ու դեռ չգլորված քար էր, և՛ կոչ, և՛ ղղվանք, և՛ հայհոյանք։ Հեհեհե՛յ, Սնջո, հեհեհե՛յ, Սեպասար։

Սնջո՞ն էր առյուծ, թե՞ Սեպասարը։ Երկուսն էլ։ Իրենք Սեպասարի թիկունքին էին կանգնած, Սեպասարը՝ իրենց։

Եվ այդ գիշեր սարը Սեպասար մնաց, իրենք՝ երդումի տեր։

Խոո՜վ լռություն իջավ սարի վրա։ Հավաքվեցին մի տեղ, լուռ նայեցին իրար։ Ո՛չ իր հոգում էր կանգնել հաղթողի հպարտությունը, ո՛չ Սնջոյի դեմքին կար, ո՛չ՝ Մանուկի, ո՛չ՝ Իշխանի, ո՛չ՝ Արթենի, ո՛չ՝ Առաքելի։ Կռվի տաք պահն անցել էր և էլի պարտված էին ու պարտված, մեծ կորուստի տեր։ Կորուստի տեր էին, կորուստի տեր, կորուստի տեր. Սեպասարի պես սարերի, Գիլոց ձորի պես ձորերի, շենների, գերդաստանների, շների... Կորուստի տեր էին ու երդումի՝ «Թիզ մի չնահանջինք դիրքեն»։

Եվ գիտեին. երդումը կմնա, Սեպասարը՝ չէ։ Գիտեին, զարկվելու են. գիշերը, ադամամութին, գուցե՝ հաջորդ օրվա իրիկնապահին, երկուերեք օր հետո։ Զարկվելու են։ Ասկյարները տրորելու են Սեպասարը։ Բայց ոչ մեկի աչքում զարկվելու վախը չկար։ Չկա՞ր։ Զարկվելը բռնած գործի վերջն էր։ Էդպես։ Զարկվելը կորեկի արտը ցանել, վերջացնելն էր։ Զարկվելը սարերից սահնակով խոտ ու տերև բերել, մարագի դուռը հասցնելն էր։ Էդպես։ Զարկվելը... զարկվելը... Ոչ ոք չէր մտածում զարկվելու մասին։ Զարկվելը սարերից իջնող և ասկյարների մութ հոգուն նստող ահն էր, սարերից իջնող ու Հարութ պապի անթաղ գլխին քսվող ճնճղկաթև հով էր և մի բուռ հող պապի անթաղ գլխի համար, և՛ շարձակված գնդակ գյուղ Գործվարքի համար ու իրենց երկրի սար ու ձորերից անեծք չառնել, սար ու ձորերին անդավաճան մնալ էր։ Եվ զարկվելը զարկվել չէր՝ պարտք էր ու պահանջ։

Գիշեր էր, խոռով լռություն էր իջել Սեպասարի գլխին, վեցով նստած էին՝ հրացանները ծնկներին, քարերին թիկնած, ցածում՝ կրակված գյուղերը։ Երկինքն էին լափում արնոտ լեզուները, հայացքը փախցնում էր, կոպերից պոկ չէին գալիս։ Եվ այրվում էին աչքերը, չփում էր ու ամեն ժամանակ էր պոչ հայացք դիպցնում Սնջոյին, տղերքից մեկն ու մեկին. չպիտեր ինչու շիտակ նայել չէր կարող։ Ոչ մեկը մյուսին շիփ-շիտակ նայել չէր կարող. հայացքները փախցնում էին հրդեհված գետնից, հրդեհված երկնքից, միմյանց հրդեհված աչքերից։ Գիլոց ձորով մեկ օր կար

կրծքի տակ, Գիլոց ձորով մեկ օդ կար՝ փոթորիկ էր, դուրս գալու ճամփա էր որոնում, մեկե՛ն դուրս գալու։ Եվ ականջները դժժում էին, քունքերին՝ թմբուկի զարկ, ու սիրտն ուզում էր ասկյարները նորեն սողան Սեպասարն ի վեր, ու ելնի կուրծքը դեմ անի քարին, տեղահան անի, գլորի։ Ասկյարները ետ չդառնան, գան, ու քար գլորի, ձորերը էլի դըմփ-դըմփան, և ջնջվի գիշերվա լերդացած լռությունը։ Ասկյարները ետ չդառնան, գան, ինքը թողնի քարերը, թուրն առնի և առաջին զարկի հետ, առաջին հերթին Սեպասարի գլխին նստած երկնքի կարմիր դեմքը թրատի։ Հետո...

Հետո, ինչպե՞ս եղավ, թիկունքի քարը շարժվեց, գլորվեց, քար պոկեց տարավ ու... դղրդոցով իջան քարերը։ Սարի փեշին խլդրլթոց ընկավ, և քարերի ետևից քարեր գլորեց։

— Միրո՜....

Սնջոն կանգնեց գոռաց, բոլորը ոտքի ելան, ձայն հանեցին։ Սնջոն որոտում ուներ սանձած, ամենքն՝ ունեին և իր արածը առիթ էր՝ ուռած կուրծք ու սիրտ մի շնչով դատարկելու։

— Միրո... Տնավե՜ր Միրո...

Եվ այս անգամ Սնջոյի ձայնը խոնավ էր՝ Գիլոց ձորում խեղդվող հեղեղատի արձագանքի պես։

— Միրո, գեղի մեջ ցորեն գարու հետ փոխող չեղնի՞,— սայլապան Արոն դարձավ Զորի Միրոյին։

«Էրկու գիշեր, էրկու ցերեկ պաշտպան էղանք սարին...»։

— Փութ ցորենին՝ փութ ու կեսի գարի... էրեխա են, ինչ գարի, ինչ ցորեն, կուտին, ձմեռ կելնին դուրս...

«Էրկու գիշեր, էրկու ցերեկ պաշտպան էղանք սարին...»։

Երկու գիշեր ու երկու ցերեկ պաշտպանեցին Սեպասարը. ցերեկվա կրակոցների դեմ՝ նշանառու կրակոցներով, գիշերվան՝ քարերով։ Ասկյարները վիրավոր օձ էին դարձել։

Երկրորդ արևմտոցին Իշխանը խփվեց... Իշխանին թաղելու ժամանակ եղավ։ Հողին հանձնեցին զենքով։ Զենքով թաղելուն Արթենը դեմ էր, Սնջոն պնդեց.

— Գերեզմանի մեջ էլ թող զինաթափ չեղնի։

Հետո Իշխանը հայացքները հավաքեց իր շիրմաթմբին, հավաքեց ու բաց չթողեց։ Անծպատուն էին ինչպես Իշխանը։ Մինչև Իշխանի զարկվելը ոչ մեկի մտքով չէր անցել, թե՝ փոս փորել, թաղել կլինի։ Իշխանից հետո ո՞վ է խփվելու... Թաղելու ժամանակ կլինի՞... Գերեզման կունենա՞... Եվ իրեն ընեց Իշխանին երանի տալու հեռավո՞ր ցանկությանմեջ։ Իսկ Արթենի միտքը խոսք դարձավ.

— Իշխան անթաղ չմնաց... էս բարձրիկ սարի վրա գերեզման ունեցավ։

Է՜, Արթե՜ն, Արթե՜ն, ցանկացածը մի բուռ հող էր, չունեցավ։ Ամեն ծնվողի աստված մի բուռ հող է շնորհում վերջին օրվա համար, Արթենին՝ խնայեց, Սնջոյին՝ խնայեց, գյարմավցի Մանուկին՝ խնայեց, Առաքելին՝ խնայեց... հազա՜ր-հազարներին՝ նմանապես։

Երկու ցերեկ, երկու գիշեր պաշտպան եղան Սեպասարին։ Հետո ասկյարները հրանոթ բերեցին ու երրորդ լուսաբացն ու Սեպասարը առան հրանոթի բերան։ Հրանոթը որոտաց, Սեպասարը պատասխան տվեց, հրանոթը մեկ որոտաց, Սեպասարը՝ հազար, թոփը՝ մեկ, Սեպասարը՝ հազար-հազար... Հեհեհե՜յ, Սեպասար։ Բարձրաբարձր էր, գլխով անցնող ամպերը քերծվում-բզկտվում էին, և գագաթի քարերին մամուռ կար ու նախշ։ Չէ՜, գագաթի քարերը քար չէին, թագ էին, թագ և այդ լուսելուսին թափթփվեցին քարերի նախշուն մամուռները, քարերը կարմիր ճաք տվեցին։ Հեհեհե՜յ, Սեպասար... կարկուտի պես արկ թափվեց գլխին, քնած առյուծ էր, արթնացավ, թափ տվեց բաշը, դեմ ամեն արկի հազար քար ուղարկեց, հետո քարե ալիք ելավ, քարե հեղեղ պոկվեց։

Լուսաբացից մինչև արևգալ գնդակոծեցին։ Արևգալին Արթենը... զարկվեց։ Զարկվելուց առաջ եկավ Սնջոյի մոտ.

— Սնջո... Սնջո, երդում թող երդում մնա, բայց... բայց էս վիճակի մեջ դիրքի վրա մնալ միտք չունի... Թոփի դեմ կռիվ թողնինք սարին, նահանջինք, ուրիշ սարի վրա բռնինք դիրք։

Արթենի խոսքը իր... նաև իր սրտովն էր, իսկ Սնջոն խոժոռվեց.

— Թե թիկունքից զարկվելու միտք ունիս, քու երդում ոտատակ արա, գնա։

— Սնջո... Ինձ անպատիվ մի արա, երդում սրտի մեջ պահել, սարի վրա պահելուց օգուտ է։

— Սեպասար թոփի բերան թողնող-գնացող չե՜մ, դու քու սիրտ ու երդում առ, ուրիշ սար գնա։

Արթենը կոտրված գնաց, դիրք բռնեց իր քարի թիկունքին ու... արևգալին զարկվեց։ Թաղելու ժամանակ չեղավ...

Մյուս զարկվողը Առաքելն էր...

Հետո՝ գյարմավցի Մանուկը...

Մնացին ինքն ու Սնջոն։ Մնացին դիրքերի վրա։ Մնացին իրենց հերթին։ Ամեն որոտի հետ աչք էր դիպցնում Սնջոյին. կա՞, չկա՞... Իսկ Սնջոն իր քարի թիկունքին քար էր։ Սնջոն Սեպասարի գլխի նախշաթափ, կարմիր ճաք տված քարերից էր. կարող էր քարե հեղեղի հետ պոկվեր, գնար հրանոթի որոտի դեմ։ Խփվելու հերթը ո՞ւմն էր, իրե՞նը, թե՞ Սնջոյի։

ջոյին։ Նույնը չէ՞... Բայց ո՞վ առաջ կզարկվի, Սնջո՞ն, թե՞... Զարկվելը հաստատ էր ու հաստատ, և ուղեղից դուրս չէր գալիս՝ ի՞նքը շուտ կզարկվի, թե՞ Սնջոն։ Եվ կարոտ էր զգում Սնջոյի նկատմամբ, սիրտն ուզում էր գնար, մեկնվեր Սնջոյի կողքին, գրկեր թիկունքը, դեմքը սեղմեր Սնջոյի դեմքին, սեղմե՞ր, սեղմեր, հետո Սնջոն այդպես քար չմնար, թեքվեր, աչք դիպցներ իր աչքին և արցունք թող լիներ Սնջոյի աչքի մեջ, և՛ անձայն լաց լիներին... Լաց լիներին՝ զարկված տղերքի համար ու հենց այդպես գրկված զարկվելին, միասին զարկվելին, ոչ Սնջոն՝ սկզբից, ոչ՝ ինքը... Ու փորձ արեց Սնջոյին մոտ գնալու... Չգնաց...

Հետո ձորերում փշրվող հրանոթի որոտի ու Սեպասարի պատասխան-որոտմունքի հետ հեռո՛ւ, հեռվից մի հույս եկավ՝ ասկյարները եղածը կհամարեն բավարար, էլ գնդակոծություն չի լինի, կսկսեն սողալ Սեպասարը, և ինքնու Սնջոն համազարկ կտան, ամեն մեկը տասը-տասներկու լցված հրացան ունեն, համազարկ կտան և գուցե, գուցե...

Դեռ շնչում էին ինքն ու Սնջոն, շնչի մեջ՝ գալարվող վրեժ, ու մեռնել չէր ուզում։

Էլի որոտաց հրանոթը և այս անգամ...

Այս անգամ Սնջոն դիրքից հրվեց, ծնկածալ եղավ, կիսականգնել ու ընկավ թիկունքին։ Եվ այս անգամ Սնջոն աչք դարձրեց իր կողմ, ու այս անգամ՝ շուրթ շարժեց.

— Միրո... Միրո, կխնդրեմ ինձ քաշիս իմ դիրքի վրա...

Մարդու վերջին խոսքն էր՝ կատարեց, ու Սնջոն շնորհակալ նայեց, բերան բացեց, ասելիքը չդարձավ բառ և աչք ու հայացքով հասկացրեց՝ «Միրո, քու դիրքին գնա»։

Լսեց. ծունկ իջավ, առավ համբույր, իսկ Սնջոն աչքերով կռիվ տվեց.

«Քու դիրքին...»։

Էլի հրանոթի որոտ եղավ և դա միայն իր համար էր։ Չէ, Սեպասարի ու իր... Չէ, միայն Սեպասարի համար էր։ Ասկյար ու ասկյարի հրանոթի կռիվը Սեպասարի հետ էր միայն։ Սնջոյի պես ինքն էլ ճակատից զարկված լիներ, թուփ ու սարի կռիվը կլիներ էլի։

Մինչև արևագալ ու արևը մի պարան ճամփա կտրեց, կռվեց Սեպասարը։ Գագաթին ինչքան թաք քար կար, բոլորը կարմիր ճաք տվեցին, կտորկտոր եղան, փշուր-փշուր։ Ընկածը՝ կանգնածի թիկունքում չէր պահվում. պոկվում իջնում էր... Քարե ալիք էր, քարե հեղեղ։

Հեհեհե՛յ, Սեպասար... երդում ուներ Սնջոյի պես։

Հետո... հետո զարկվելու իր հերթն էլ եկավ։ Ինքն էր արյուն խառնում Սեպասարի փշրված քարերին, սարի հին ու նոր կանաչներին։ Զգում

էր, որ մահը հեռու է և ուզում էր խանձուր դնել վերքին ու կրակի մասին էր մտածում, ուզում էր այունահոսության դեմն առնել ու շապիկը պատռելու մասին էր մտածում, ուզում էր դիրքը թողներ, քաշ-քաշ իջներ սարից ու... շիտակաչք նայել չէր կարող երեսն ի վար մեկնված Սնջոյի կողմ։

Ապա թմրություն իջավ Սեպասարի գլխին, ամեն ինչ դարձավ թեթև՜, փափո՜ւկ։ Խանձրձուկ ունենալու ո՞չ ցանկություն, ո՞չ ուժ։ Թվում էր, թե ինքը սարի գլխին չէ՝ Հարութ պապի ճոճքի վրա է։ Չէ՛, հանդա՜ռտ լողում է օդում։ Կուրծքն ի վար մեկնված էր ու երբ շարժվելու փորձ էր անում, գլուխը վանքի գմբեթի չափ խոշոր էր ու Սեպասարի ամպի նման թեթև՜, թեթև...

Եվ հիշողության պատառիկներ էին պոկվում ուղեղից, անցա՜ծ-գնացած բաներ, որոնք ինքը երբևէ չէր հիշել ու չէր հիշելու։

Փոքր էր, շա՜տ-շատ փոքր էր, պորտբաց... Սանդի վրա նստած էր մի ծիտ... Ուզում էր բռնել, ծիտը մատների արանքից պոկվում-նստում էր մի՜ քիչ այն կողմ, նստում էր մի՜ քիչ այն կողմ, մի՜ քիչ...

Հոր ուսին նստած գնում էին արտ։ Քարի ետևից նապաստակ փախավ... Մի ականջը սև էր, մեկը՝ ճերմակ... Մի ականջը սև էր, մեկը՝ ճերմակ, մի ականջը սև էր, մեկը...

Թաց քարի մոտ լորը բույն էր դրել։ Բնում հինգը պուտ-պուտ ձու կար, չորսը՝ մոտի՜կ-մոտիկ, մեկը՝ մի՜ քիչ այն կողմ։ Մեկը՝ մի՜ քիչ այն կողմ... Մի՜ քիչ...

Մանո՜ւկ օրերի հիշողություններից պատառիկներ էին պոկվում ուղեղից, փափո՜ւկ ալիք տալիս, մեծ ու նախշուն շրջանագծեր կազմում օդի մեջ, գունդ ու կծիկ շարժվում, մեծանում, հետո կտրվում, խառնվում էին իրար....

Ուշքի եկավ գիշեր էր. ոչ թոփ ու որոտում, ոչ ասկյար։ Քրտ ու քաշ իջավ սարից... Չէ՛, իջնել չէր՝ տղաներից փախնել, գող-գող փախնել էր... Սեպասարի փեշին շուրթերը կպցրեց քարի թաց պռնկին, շուրթերը ձուլեց՝ ծվեց ջրի շիթը... Ե՛վ ջուր, և՛ մամուռ, և՛ նշխար հող, և՛ փշուր քար խառնեց երակներում մնացած պուտ արյան հետ...

Զորի Միրոն խոնարհեց գլուխը ու նրա մաշված թերթերունքներից կախվեց-տարուբերվեց իր կյանքի օրերի թելը՝ ո՞նց չկտրվեց... Սեպասարի փեշի ծլնգան աղբյուրի ջուրը անմահական էր՝ պահեց։

Հետո Զորի Միրոն հայացքը հավաքեց ճամփից, հայացքը տարավ հասցրեց հեռու լեռնապարը, աչքերը մանրացրեց՝ ծակեց մշուշը։ Այնտեղ, լեռնապարից այն կողմ, «տղեքից» մի բան մնացել է՝ իր համար

շնչավոր։ Նայե՞ց, նայեց Զորի Միրոն, աչքերը ծակծկվեցին՝ տրորեց ու ասաց որդուն.

— Հարութ, կովի մեջի ընկերության ընկերություն չի հասնի. թև ու թիկունքի չէ՝ հոգու ընկերություն է։ Ու կովի մեջի ընկերոջ դավաճանության դավաճանություն չի հասնի. ընկերոջ թև ու թիկունք չպահել չէ՝ մարդու վերջին շունչ հարամել է, գառ...

Հարութը լսեց, ճպճպացրեց աչքերը և ասաց.

— Ճիշտ է, հայրիկ։

— Հարութ, դու կոմսոմոլ ես, չէ՞... Մեր Մխեն էս տարի կոմսոմոլ կընդունվի,— ժպտաց Արոն, ապա լրջացավ,— վայ թե չընդունին. ծնքնդականով է տասչորս, էնպես՝ պստիկ-մստիկ, տասներկու էղնի-չեղնի... Մենդական սխալ է, գյուղխորհրդի սխալմունք... Հարութ, փոխել կեղնի՞։

— Ծթե սխալվել են, պետք է ճշտեն։ Պարտավոր են։

— Գյուղխորհուրդ Մխիկի մոր կուղարկիմ. Մխիկի մեր գիր կիմանա. էրկու տարի լիկկայան գնաց։

«Հարութ, բա քու մեր ո՞ւր է, գառ,— Զորի Միրոյի շուրթերը դողդողացին,— հեչ կհիշի՞ս... էղներ ու լար ու քեզ ճամփեր կռիվ... Իմ աչքեր ցամաք աղբյուր է... Նարե՞... Խութեցի հա՞րս... Հարութի մե՞ր... Լուսհոգի Նարե, տղեն կռիվ է կերթա,— մտքում լաց եղավ,— տղին պաշտպան էղի, Նարե՞...»։

Հետո Զորի Միրոն մտքում հա՞ կրկնեց՝ Խութեցի հարս... Նարե... Հարութի մեր... Չկրկնելու համար Զորի Միրոն ճիգ պիտի թափեր, ելներ սիրտ ու հոգու դեմ՝ չելավ, և անունները թավալվեցի՞ն, թավալվեցին ու բերան չբացած ականջն ընկավ իր ձայնը՝ խոնավ էր ու խոնավ երգ։ Անունները թավալվեցի՞ն, թավալվեցին ու լսեց Խութեցի հարսի ձայնը, Նարեի ձայնը, Հարութի մոր ձայնը, մեկ ու նույն ձայնն էր՝ խոնավ էր ու խոնավ երգ։ Հետո Զորի Միրոն պի նդ-պինդ նայեց Հարութին ու տեսավ Նարեի աչքերը, Նարեի շուրթերը և՛ ճակատը ճերմակ, և՛ անհնազանդ մազերը... պի՞նդ-պինդ նայեց ու սեղմվեց որդուն, քաշեց որդու գլուխը մոտ բերեց, սեղմեց իր դեմքին ու ասաց.

— Հարութ, քու հեռանալով... քու հեռանալով շատ բան է կհեռանա... Աշխարհքն է կմթնե, Հարութ։

6

«Գաղթի երկրորդ ամսի մեջ հանդիպա Խութեցի հարսին...»։

Բոլորը Խութեցի հարս էին ասում։ Սոցվոր էր։ Եվ ինչքան աչքը դիպչում էր Խութեցի հարսին, խանդությունն էր հիշում... Երբ Մխեն գարձ

տարավ, խանդուքը ծոցվոր էր ու գրկանոց ուներ։ Խանդուքը՝ ծոցվոր ու գրկանոցով՝ առաջնեկն էր՝ Հարութ պապը իր անունով կնքեց։

(«Իմ օր մոտեցավ, կմոտենա, իմ անուն կբաշխիմ քու տղին, Միրոն»)։

Սև սարի անտառում Խութեցի հարսը ունեցավ տղա։ Ոչ ոք չտեսավ մանչի աշխարհ գալը։ Խութեցի հարսին աչքալուսանք տվող չեղավ և ոչ մեկը միտք չունեցավ անուն բաշխել մանչին։

Բզկտված մասուենի էր Խութեցի հարսը, ծունկ էր ծալում, ոտի ետևից փոխում ոտ, օրորվում ու մեկ-մեկ հիշում էր, որ ուսերից կախ ընկած կապ քրջերի մեջ շունչ ու շնչավոր է։ Հիշում էր ու մտահան անում, օրորվում, գնում...

Չխոսկան էր Խութեցի հարսը։ Կոտորում էր, գաղթ էր՝ հարսնություն էր անում։ Խութեցու հարս էր՝ չխոսկան։

— Լաո,— ասում էր իշխանձորցի Կամեն,— քու հոր ավեր տան հետ ավրավ քու հարսնություն։ Մեծ ու փոքր, հարս ու հարսնատեր չկա, հավասար գաղթական ենք... Խոսա, կտրաքվի քու սիրտ։

Փեշերից ծվեններ էին մնացել փշերի վրա, հա՜, հա ծունկբաց պիտի մնար ու դրա համար ամաչում էր, ցուրտ ու քամուց, տոթ ու թոնից շորը փսորել էր՝ ամաչում էր. գլխաշորի ճոթերը կուրծք ու ծոցի վրա էր պահում։ Հետո, վիճակին գերի, մտհան էր անում, որ շորը ճղճղված է, ու գլխաշորի ճոթերը պլստում էին, բացում կուրծք ու ծոց։ Մեկ էլ գլխի էր ընկնում, ձեռքն ու գլխաշորի ճոթերը պահում էր կրծքի վրա։ Միայն այդ պահին էր ինքը նկատում, որ Խութեցի հարսը խորոտ է և տեղն ու տեղը մոռանում էր։

Այդպես, մինչև կոտորածի առաջին ձմեռը, մինչև ձմռան կեսը, մինչև գարնանամուտ։ Եվ Խութեցի հարսը չիմացավ, թե տղան ե՞րբ առավ լեզու, ասավ խոսք.

— Մալե, հաց։

(Ո՞վ սովորեցրեց մանչին, ի՞նչ իմացավ, որ աշխարհում հաց ու հացանուն կա...)։

Ականջն ընկած խոսքը կամ հասնում էր մոր ուղեղին, կամ ընկնում փշերի բերանը, ավազների մեջ։ Եվ չիմացավ թե մանչը իր լեզուն՝ օդ ու գետնից հավաքած իր երկու բառը ե՞րբ առավ-համբարձավ երկինք... Մատմիս անշունչ մարմինը սեղմեց կրծքին, ամո՜ւր, ամուր սեղմեց՝ առաջին անգամ։ Եվ ճչաց ու լաց եղավ ու լացի միջից հեղեղեց.

— Իմ էրեխին թաղե՞ք... կխնդրիմ՝ թաղե՞ք... Մեղքո՜ւի է... անկնո՜ւնք է... անո՜ւն չունի...

Ե՛վ սեղմեց կրծքին, և՛ կոծ ու պաղատանք արեց, և՛ ճանկեց սառած գետինը, և՛ ասաց եղերախաղ.

— ...Մեղքո՜ւկ է, թաղե՜ք...

Ջանան մարեն գետափից առավ պտղունց ցեխ, խաչ արեց մանչի պորտ ու ճակատին, հողն կնունք արեց, ու Մուրադ գետի ափին ավելացավ մի փոքրի Ի կնքեալ..

Այդ օրը առաջին անգամ լսեցին Խութեցի հարսի ձայնը։ Հետո լեզու թրջեց իշխանձորցի Կամեի հետ, հետո... Փեշերը ծվե՜ն-ծվեն կախվեցին, ծվե՜ն-ծվեն ամոթ թափվեց սար ու քարերի մեջ, ծծի մեկը բաց էր, մեկը՝ լաթ ու մաթի մեջ, և Խութեցի հարսի գլխաշորն ու ձեռքը չեկանչդողացին կրծքի վրա։

Եվ մի օր, օրը ցերեկով, ոտքի տակ գցեց հարսնությունն էլ, կինարմատի ամոթն էլ հետը...

Քոլի ձորում էին, թաքստոցում՝ համբ ու գլխաքարշ։ Մեկ էլ Խութեցու հարսը շարժվեց, թաքստոցից դուրս գալու փորձ արավ։ Կամեն զարմացավ, հարց տվեց.

— Ի՞նչ միտք ունիս։

— Հասնիմ էնտեղ, դառնամ,— ձեռքը մեկնեց ձորի ծունկը։

— Խեցա՞ր, լաու։

— Իմ սիրտ կխառնե,— ասաց գունատ ու խեղճ։

— Սիրտ խառնելու պատճառով մեռնի՞նք. ամեն քարի տակ անօրեն կա։

Խութեցի հարսի ծնկները դողում էին. բոլորը հասկացան, որ... աչքից հեռու տեղի պետք ունի։ Եվ չլսեց, քայլ արեց։

— Նստի՜... նստի՜ քու տեղ... անիծած,— խուլ ճչաց իշխանձորցի Կամեն։

— Ոտաց ճամփա էրթալ կուզիմ...,— նույն տոնով պատասխանեց Խութեցի հարսը։ Ասաց, կարմրեց, աչքերի մեջ արցունք ցողեց, արցունքի մեջ և՛ ցավ, և՛ զայրույթ։ Վճռական քայլ արեց.

— Կերթամ։

Քառասունհինգ-հիսուն աչք ոլորվեց Խութեցի հարսի վրա, քառասունհինգ-հիսուն ձեռք մեկնվեց ծվծված փեշը։

— Ինչ զալաթություն կանիս, հոս էրե,— Կամեն ոտքի կանգնեց,— քու զալաթության պատճառով ամենիս սրի կմատնիս... օուպի...

Խութեցի հարսը արցունքը ղրթացրեց, աչքերում մերկացավ զայրույթը՝ ուղղեց իշխանձորցի Կամեին.

— Քյավթառ շուն։

Ապա և ամենքի վրա ճոճեց աչքերի մերկ թուրը.

— Անօրեններ,— ճչաց, կրճտացրեց ատամները, բերանը ծռմռեց, արհամարհանքով ժպտաց՝ քիչ էր՝ ծիծաղեց՝ շատ բարձր էր, թաքստոցը արձագանքում էր ու նորեն չորչրուկ ձեռքեր կառկառեցին Խութեցի հարսի կողմ. աղաչանքի պես սպառնացին՝ փակեցին բերանը, սպառնալիքի պես աղաչեցին՝ ծվատեցին փսորված շորը։ Քառասունհինգ-հիսուն չորչրուկ ձեռք, իր ձեռքերն էլ հետը կառկառեցին՝ իրենց գաղթական կյանքի համար ժամ ու օր խնդրեցին Խութեցի հարսից։ Խութեցի հարսը ատառած ժպիտով նայեց ձեռքերին, իր զզզված դերիային, մերկացած տակի շորին, հետո տակի շորը... իշեցրեց և ինչ «զալաթություն» անում էր, արեց գաղթականների խմբի կենտրոնում...

Զորի Միրոն աչքերը փակեց։

— Ամոթ էր,— մտածեց ձայնարկու։

— Ի՞նչ, հայրիկ,— հարց տվեց Հարութ որդին։

— Հեչ, գառ։

«Մեզ էր ամոթ. չէ՝ Խութեցի հարսին»։— Եվ լռեց, և ափերով փակեց աչքերը, մնա՜ց, մնաց, դարձավ Հարութ որդուն.

— Հարութ, տղամարդ մնաս... Լսե ու մտհան չանիս՝ մնաս տղամարդ,— թունդ կրկնեց,— կռիվ է, նեղ վիճակ կպատահի, մահի հետ համաձայնվի, այրություն կորցնելուն՝ չէ... Մերը կռիվ չէր,— ցածրացրեց ձայնը. էլ Հարութի համար չէր,— մերն ուրի՞շ էր։

— Հարութ, գերմանացու էվելի անուն ֆաշի՞ստ է,— հարկ համարեց սայլապան Արոն։

— Ավել անուն չէ, քեռի Արո, ֆաշիստ նշանակում է... ինչպես բացատրեմ, որ հասկանաս...

— Իմ հասկանալով էսպես է. ոնց որ մեկ մտնի գեղ, հարց տա. Արտոյի տուն ո՞րն է։ Ձեն իմանա։ Ասի՝ «Մակ գլուխ» Արտոյի տուն՝ բոլոր կիմանան... Միրո, մեր էրգիր մարդիկ էվելի անուն չունեն, ինչի՞ց էր...

«Էդ օր Խութեցի հարս լացավ, լացավ, լացավ...»,— Զորի Միրոյի ականջներում մանվեց սայլի ճռռոցը՝ «լացավ, լացավ, լացավ...»։

Քաշվեց անձավի խորքը հոնգուր-հոնգուր լաց եղավ, կորցրած ամեն ինչի համար մինչև գիշեր լաց եղավ։

Գիշերը թաքստոցից ելան՝ խմբից բաժանվեց, գնաց։ Եվ ոչ ոք չասեց, ինքն էլ, ինքն էլ չասեց.

— Խութեցի հարս, մենակ ո՞ւր, մի բաժանվի մեզնե, մեռնինք-ապրինք՝ միասին։

Խութեցի հարսը առանձին գնաց։ Ո՞ւր։ Իրենք խմբով ձոր ու ձոր քայլեցին։ Ո՞ւր... Ուղղության մասին մտածող կա՞ր. մութ էր, չար աչքին անտես, պիտի քայլեին։ Չէ, լմկված շան պես քարշ պիտի գային. թուր ու թվանքից պահեին շլինք, անեին կտոր հացի ճար. պահեին շունչ։

Այդ գիշեր մեկ Խութեցի հարսին միտ բերեց, տաս՝ Խանդութին, մեկ-մեկ՝ Խութեցի հարսին, հարյուր՝ Խանդութին՝ գրկանոցով ու ծոցվոր։ Այդ գիշեր էլի նոր գաղթականներ հանդիպեցին, էլի հարցուփորձ արեց.

— Ձեր մեջ թաղավանքցի չկա՞... Խանդութ անվամբ հարս չե՞ք տեսե... Թաղավանքի աղջիկ, Գործվարքի հարս... Գրկանոցով... Ծոցվոր...

Հետո, այդ գիշեր ինքն ու մոտկանցի Հմայակը մահն աչք առած իջան սև շուն ու սև քոլոզով լցված գյուղ Ալթնի. մահն աչք առած փորձ արեցին երկու-երեք դուռ ու երդիկի վրա՝ չեղավ, ապա մտան մի գոմ բեկի էր, հոտաղին խեղդեցին... հա, խեղդեցին հոտաղին, մեկական ոչխար շալակած գոմից ելան, տափե-տափ, շների հետ կռիվ տալով գյուղից ելան, ծնկածալ գնացին, շունչ առան, գնացին... Եվ ինքը մոռացավ, որ Խանդութ կա, Հարութ գրկանոց կա, որ... Մնացել էր մի ոչխար ու ոչխարը հոշոտելու կիրքը....

Այդ գիշեր ինքը գայլ ու գազան էր։

Հասավ գաղթականների խմբին, ոչխարը շալակից ցած բերեց, շընչակտուր նստեց ու բաց չթողեց ոչխարի վիզը։ Չթողեց՝ իր որսն էր, գաղթականները բզիկ-բզիկ կանեին, իրեն բաժին չէր մնա։

Զանան մարեն մոտեցավ։

— Ջալ է, հա՞,— ասավ,— ո՞րձ է,— շոշափեց ու աչքերը կպցրեց ոչխարի ականջին,— յա՜, հիսուս,— խաչակնքեց,— Միրո, իմ աչք լավ չի ջոկե, տես աջ ականջին խաչ-նշան կա՞։

Պատասխան չտվեց։

— Ցա՜,— էլի զարմացավ մարեն,— աստված է վկա՝ իմ մատաղացուն է, հերու գարնան գլուխ, կոտորումից ամիս առաջ ծնվավ, սուրբ Կարապետին մատաղ խոստացա, ականջին խաչ-նշան արի... էհ, Մշա սուլթան սուրբ Կարապետ...

Մարեի մատաղացո՞ւն էր, չէ՞, մարեն տեր էր ու ներշնչվել էր, բացել ձյուն-ճերմակ գլուխը և ցուրտ երկնքի տակ աղոթք էր անում, արցունք էր թափում, գանգատ էր անում «երկնային տիրոջը», որ իր անմեղ գառներին մոռացել է... Չէ՜, հավատալու բան չէ. անօրենների ճանկից փրկված մատաղացուն վկա՝ չէ՜։ Ապա և մարեն խնդրեց, որ մատաղը կտրվի դիմանալուսուն ու ափսոսաց, որ կիրակի չէ։ Հետո ինքը

հանկարծ հիշեց Խումար մարեին, հիշեց... հիշեց Խանդութին, հիշեց և քաց թողեց ոչխարի վիզը։

Իսկ գլուխն ափերի մեջ առած-նստած Հմայակը հայհոյեց երկնային տիրոջն էլ, Մշո սուլթան սուրբ Կարապետին էլ, Զանան մարեին էլ և խլեց մարեի «մատաղացուն» ու զարկեց գետին։ Մարեն Հմայակի փոխարեն մեզա եկավ, խնդրեց աստծուն.

— Զլսիս, սիրտ էլած է։

Դարձավ պաղատեց Հմայակին.

— Գլուխ աղոթարան դարձու։

Հմայակը հրեց-գլորեց Զանան մարեն, և Մարեն լաց եղավ երեխայի պես։

Է՛, գաղթական... Շո՛ւն... Գա՛յլ... Գազա՛ն...

Կրակ չարեցին, չկար, լիներ՝ էլի չէին անի, կմատնվեին թուր ու թվանքի։ Եվ բաժանեցին, հում-հում կերան միսը և լուսաբացի հետ մտան քարանձավ։

Դարձել էին վայրենի՛, տնանկ էին, քարանձավի բնակիչ էին, վայրենի մարդ։ Շարժմունքի մեջ՝ վայրենություն, խոսք ու զրույցի մեջ՝ վայրենություն, քնել-արթնանալու մեջ՝ վայրենություն, ուտելիք ճարել՝ վայրենու նման։ Էդպե՛ս էր, հա։

Ճոթ հացի համար ձեռնքաշություն եղավ, կռիվ-արյուն թափել եղավ։ Եղավ, բայց...

Բայց ձեռք պարզել-մուրալ՝ չէ։ Չեղա՛վ։

Զորի Միրոն խորը շունչ քաշեց, շնչեց մի տեսակ հանգիստ ու ցանկությամբ ու այդ կում շնչով իրեն ապրելու իրավունք տվեց։

— Հարութ, լսե, կռիվ է. կպատահի զուրկ մնալ, անոթություն։ Հարութ... Սովից մեռնելուն համաձայն եմ, ձեռք պարզել, հաց մուրալուն՝ չէ՛։

— Միրո, Անդրանիկ նմանապես էդ կասեր,— սայլապան Արոյի խոսքը անցավ հոր և որդու արանքով։

— Ես մուրալու չեմ գնում,— նեղսրտեց Հարութը։

— Հա՛, գառ... Պատերազմ է, զորքից կտրվիլ կա, գերություն կա։

— Կմեռնեմ, ֆաշիստներին գերի չեմ հանձնվի,— նույն խռովկան տոնով պատասխանեց որդին։

— Պատերազմ է, Հարութ,— մռայլ կրկնեց Զորի Միրոն։

— Միրո, լսեցիր իմ խոսք. զորավար Անդրանիկ նմանապես մուրալուն դեմ էր։ Հավատա, Անդրանիկի խոսք էս ականջով եմ լսե։ Եկավ, կանգնեց մեր կենտրոն, հարց տվեց՝ սովա՞ծ եք։ Մեր գլուխներ կախ-

ցինք։ Ասաց. հայեր, իմ աչք մահ շատ է տեսե, էլի կտեսնի, բայց ձեռք պարզող-մուրացող տեսնել չի՛ ուզե... Միրո, էս դադրած օր վկա՝ զորավարի բերանի խոսքն է։

— Կհավատամ, Արո, կհավատամ։— Անցած ճանապարհին Զորի Միրոն առաջին անգամ լի բերան պատասխան տվեց սայլապան Արոյին և շարունակեց մտքում.

«Անզեն ժողովուրդ՝ թուր ու թվանքի բերան, իշխանություն չկար, կար տաս կուսակցություն՝ տաս գիծ։ Զորավար Անդրանիկ կզարկվեր էստեղ-էնտեղ... կյանք կռվի մեջ անցկացրեց ու...»։

— Զորավար Անդրանիկ չվիրավորվեց,— հիշեց և հարկ համարեց առել որդուն,— կյանք կռվի մեջ անցկացրեց ու չվիրավորվեց... Կիմանա՞ս ինչի, Հարութ, ժողովուրդ փրկելու երդում ուներ, երդում պահելու համար բոլոր գաղթական հայերի կամք առել էր իր հոգու մեջ ու էդ կամք չթողեց գնդակ մոտ գա իրեն։ Իմացա՞ր, գառ։

Հարությը հետաքրքիր ու երկար նայեց հորը, գլխով արեց, թե՝ հա, հասկացա, մինչև վերջ չհասկանալով սակայն հոր ասածը և հարցրեց.

— Զորավար Անդրանիկը ի՞նչ կուսակցության անդամ էր, հայրիկ։

— Զորավար Անդրանիկ մարդ էր,— մռայլ պատասխանեց Զորի Միրոն։

— Անդրանի՞կ,— Արոն էլի ձգեց՝ ոչ իր ձայնով։

«Գաղթականների երկնային ու երկրային տեր... Մարդ էր... Այր էր... իմ նմա՞ն... ես... Սեպասարից հետո կլոր տարին էրեխի ու մոր հետ, պառավ ու ծերունու հետ քրոքաշ տվի, զահրումար ճանկեցի-կերա, իմ գլուխ պահեցի քարանձավների մեջ...»։

Զորի Միրոն ծռմռեց դեմքը. է՞ն օրերի Միրոյի նկատմամբ արհամարհանք էր։

Եվ խոնավ անձավի ծաղկատար դեմքից հեգնանք ու քմծիծաղ էր թափվում բաց գլխին և ականջներում ընկնում էր ձայն.

«Միրո, քու կյանք էդքան թա՞նկ է»։

Եվ փնչատում էր, բռունցքների մեջ խեղդում բազուկների կիսված ուժը։ Իրոք, պե՞տք է այդքան սիրել սեփական շունչը և դողալ բրգոտված մի շլինքի համար...

— Ես կերթամ մեր քոչ գտնելու,— խմբից բաժանվելու վճիռ արավ։

Գնաց... Բնավեր մարդկանց խմբերի հանդիպեց, հարցուփորձ արեց. «Խուրի Թաղավանք գեղեն մարդ չկա՞ ձեր մեջ... Խանդուբ անունով հարս չե՞ք տեսե։ Թաղավանքի աղջիկ, Գործվարքի հարս... Անունով Խանդուբ... Գրկանոցով... Ծոցվոր...»։

Հարցուփորձ արեց, բաժանվեց, գնաց։ Էլի հանդիպեց, բաժանվեց

էլի, էլի ու էլի... Կլոր մեկ տարի որոնեց։ Խույս տվեց թուրութվանքից, երերալով տարավ իր անոթի ու մերկ մարմինը՝ որոնեց։ Ու փնտրտուքի տենդը մի անգամ ազատեց իրեն հաստատ մահից։ Քսան հոգու պարանով կապկպեցին կողք-կողքի, մի շարք։ Կապկպեցին, խանչալը դրեցին վիճակահանությունում շահածի աչքը, մյուսները նստեցին հացի։ Ինքը շարքի ծայրում էր՝ գոց շուրթ ու մշուշված գլխով, ինչպես բոլորը։ Հետո հոգին ծառս եղավ։ Ճիգ արեց, բացեց պարանի հանգույցը... Ետևից կրակ բացին, գոռգոռացին, հայհոյեցին... Հետո, երբ ետ նայեց, տեսավ, որ ծռած շլինքները յաթաղանից ազատողներ էլի են եղել...

— Հարութ, գառ, լսե ու մտհան չանիս, վիզ չծռիս, մահ չընդունիս կամոք։ Կռվի քու մահվան դեմ. հաղթ էղար, կապրիս, չէ՝ մեռնել կա ու կա։ Քու ձեռք ու ոտք կկապեն, սիրտ կապել չեղնի։ Մահի դեմ կռվի ճար կգտնի չկապած սիրտ... Հարութ, էն մարդ կամոք կընդունե մահ, ով վրեժ ու փափագ չունե։

— Ճշմարիտ է, Միրո,— Արոն շտապեց ձայնակցել։

«Գարնանից գարուն փնտրեցի...»։

Եվ առավ լուր.

— Խանդութ Զղնի ձորի քարափից մահ ընդունեց՝ անօրեններ անպատվել կուզեն։

Մեկն ասավ, տասը հաստատեցին։ Լսեց ու Սև սարի ամպն իջավ գեմքին, անտառի կոտրատված ճյուղերի պես կախվեցին թևերը, Անդոկա սարի մութը լցվեց աչքերի մեջ։

Հուշերը օձի պես խայթեցին Զորի Միրոյին. ցնցվեց, ավելի ամուր սեղմվեց որդուն ու քակվեց։ Տնքոցի վրա սայլապան Արոն շուռ եկավ ու տեսավ Միրոյի փակ աչքերը։

Այն ժամանակ էլ, քսանհինգ տարի առաջ, երբ իմացավ կնոջ ու որդու հետ պատահածը՝ այդպես ու ավելի սիրտքանդումով տնքաց։ Հետո ձայն հանեց անբառ, գոռաց վայրենու պես, գրկվեց մի ժայռաբեկորի, ատամները սեղմեց, շարժեց, տեղահան արավ, գլորեց։ Զորը դղրդաց, հազար տեղից, հազար ձայնով արձագանք տվեց ու առավ, և հրազեններ պայթեցին ձորը լցված որոտ-աղմուկի վրա։ Մեսրոպը մոտեցավ, բռնեց թևից.

— Աշխարհքն է կրակ ընկե-կվառվի, Միրո, տղամարդ մնա։

Թափով շուռ եկավ, կրակված աչքերով նայեց Մեսրոպին, չար ու խոժոռ ամենքին նայեց, և ամենքը թվացին օտար։

Ու ողջ գիշեր տնքաց։ Իսկ արևբացի հետ թմրություն իջավ ներվերին, հոգում՝ լուռ թախիծ։ Տունը հիշեց, տանեցիներին՝ մեկիկ-մեկիկ, տան ու տանեցու հանդիպելու հույսը խլրտաց սրտում... Ախր, մեծ եղբայր Զարեհը, հորեղբայր Նշանն ու հորեղբայր Կիրակոսը էն արևոտ առավոտ, կոտորածից առաջ, գնացին կորեկի արտ։ Պետրոսն ու Պողեն գառ ու հորթ առած ելան Ընկուզասար։ Գուցե... Գուցե ազատվել են, ու կհանդիպեն մի օր։ Հույս էր, հայտնվեց՝ չեղած տեղից։ Ու երբ հեռավոր մի կրակոց լսեց, կուչ եկավ, սեղմվեց քարին, հետո սրտապնդվեց խումբ մարդկանց մոտիկությունից ու մնաց նրանց հետ։

Եվ գլուխը մշուշի մեջ էր, երբեմն թվում էր, թե խանդութը իր կողքին է ու ոտքը կախ էր գցում. ախր, խանդութը ծոցվոր է։ Հետո ուշքի էր գալիս, բայց և անդուսպ ցանկությամբ թեքվում-նայում էր ու... ցնցվում իր ստվերից։ Այդպես, խանդութի մասին լուր տված գաղթականների հետ ոտք փոխեց մի քանի օր։

Իսկ մի առավոտ...

Ֆիդան մարեն վերջին կորեկհացն էր փշուր-փշուր անում, որ բաժաներ։ Բոլոր հայացքները խառնվել, գոգնոցի վրա բզկտում էին իրար։ Հայացքներից կրակ էր ընկել, այրվում էր մարեի ծարծրված գոգնոցը։ Մեկ էլ կովի բառաչ լսվեց։ Հայացքները շուռ եկան ու նիզակների պես շարվեցին կովին։ Կովը մարդու հոտ էր առել. տխուր մզզում էր։ Աչքերի մեջ սև փայլ ու տրտմության սև սվաղ կար։ Հղի էր, ծնելու օրերն էին։ Կանգնել էր չոած ոտքերով, լցված կուրծքը հարվում էր, հայացքը կոտրվեց Ֆիդան մարեի վրա, գլուխը երկարեց, էլի մզզաց, մոտ գալու շարժում արավ, իսկ երբ Սողոն ելավ ոտքի՝ դժգոհ թափ տվեց գլուխը, բառաչեց երկար ու զիլ, շուռ եկավ գնաց՝ ծանրաքայլ, շորորալով։ Սողոյի աչքերը փայլում էին, շուրթերը ամուր սեղմված։ Հանեց խանչալը.

— Սողո... ծանրած է,— ասաց ինքը։

Սողոն նայեց շար ու տարօրինակ։ Սովալլուկ խմբում, փուշ ու քարերի արանքից, աղավաղված աչքեր հանդիպեցին իրար՝ հույս ու կռիվ տվեցին, ապա կանգ առան մեկ իր, մեկ էլ Սողոյի վրա։ Սողոն դարանակալ շտապեց։ Ինքը թռավ տեղից, կանգնեց դիմացը։ Ճակատ ու աչքով կռիվ տվեցին։ Իսկ կովը հեռանում էր. գուցե բաժին դառնար յաթաղանակիրների կամ գաղթականների մի ուրիշ խմբի։ Ու Սողոն, աչք չկտրելով կովից, գոռաց.

— Միրո, քաշվի իմ ճամփից։

— Կդարկվիմ, բայց ծանրած անասունին մոտ չես էրթա։

Սողոյի աչքերի փայլը դիպավ խանչալի շեղբին, խանչալը՝ իր աչ ուսին։

Երկու օր հետո, երբ աչք բացեց, մշուշի միջից երևացին Սողոյի տխուր աչքերը։ Ծունկի եկավ, բան ասաց իրեն, թե ինչ՝ գլխի չընկավ։ Իսկ երբ ոտքի վրա էր արդեն, նկատեց, որ հագին նոր տրեխներ կան։ Հանեց, շպրտեց մի կողմ, հագավ ծակ տրեխները, խմբից հեռացավ՝ կաղին տալով, վիրավոր ուս ու ձեռքով և խռովահույզ ուխտ ու պայմանով...

Էլ մոտ չգնաց գաղթական ոչ մի խմբի, մնաց մուժ ու ծխով լցված ձորերի հետ, գլխներին փոշի մաղած սարերի, փշմտած աղբյուրների, մնաց սևսաղարթ անտառների հետ, գայլի ձագ ցնկնող շների հետ... Մնաց մենակ գաղթական, թափառեց, թափառեց, թափառեց... իջավ Ջզնի ձորը՝ աչքերը ծածկեց փշերի վրա, ծա՜նր-ծանր բարձրացավ, մտավ Սև ապրի անտառ. միրավոր արջի պես թքոտեց, արջի պես ընկույզ ջարդեց, կերավ։ Մոտմտեց Խութի շուրջբոլոր, մոտ-մոտ արեց Ծովասարին, և Մարաթուկին, և Սեպասարին, գնաց Ընկուզասարի կողմ և Ֆիդասարի, և Մասրաձորի, մոտմտեց գյուղ Գործվարքի շուրջբոլոր, փշաքաղվեց, դարձավ... Եվ Շերոյին հիշեց... հիշեց Խութեցի հարսին՝ հա՜ հիշեց։ Ինչո՞ւ էր հիշում... Ավեր էրգրի գաղթականներից թե կար մեկը, որի հետ ուզում էր ոտք փոխեր՝ Շերոն էր... Մեկ էլ Խութեցի հարսն էր՝ թե կար։ Մենակ լիներ հանդիպեր Խութեցի հարսը, հանդիպեր, ինքը գլուխկախ կանգներ դեմը, գլուխկախ՝ ասեր.

«Խութեցի հարս... քու առաջ մեղք ունիմ, ամո՜թ, ամոթ մեղք ունիմ, կխնդրիմ ներիս...»։

Ասեր. «Խութեցի հարս, քու անուն ինչպե՞ս է»։

Ասեր. «Իրար հետ թափառական էղնինք մեր ավեր էրգրի մեջ, Խութեցի...,— անուն ինչպե՞ս է,— մեռնինք-ապրինք՝ իրար հետ»։

Երկու գարուն ու երկու ձմեռ գաղթական ոչ մի խմբի մոտ չգնաց, տեսավ՝ մոտ չգնաց, հանդիպեց՝ ճամփեն թեքեց, թափառեց սար ու ձորի թափառական ջրերի հետ, ընկերացավ անընկեր մնացած սարերին, անընկեր մնացած ձորերին, անընկեր մնացած արտ ու անտառներին։

Գաղթականներից ով ապրեց՝ կորցրեց հույսը, ավեր տան ու տեղին դառնալու հույսը կորցրեց՝ թողեց անցավ Արաքսն էս կողմ, ու... Երկիրը գարձավ որբ։

Ապա և ինքը Երկիրը թողեց որբության հետ, անցավ Արաքսն էս կողմ։ Երկրի սար ու ձորերում ոլորած, խճճած կածանի ծայր թողեց Մարգարայի կամուրջի պռնկին, անցավ Արաքսն էս կողմ։ Անցավ ու մեկեն կարոտեց դենը մնացածին, նրանց, որ արդեն հոգնեցրել էին, տրխրության չափ կարոտեց-նայե՜ց, նայե՜ց, խաչակնքեց տամուկ աչքերով ու երկու սև կետ իջավ ոտքերի մոտ, տաք փոշու մեջ։ Անցավ...

Ավելի վտարված էր, ավելի գաղթական։ Սար չկար, ոտքերի տակ դուրան էր, էրգրի բանջար ու արմատիքից չկար, ոչ՝ անտառ ու վայրի պտուղ։ Քշեց հասուն մի արտի վրա. հասկ փշրեց-կերավ, փշրեց՝ լցրեց պարկը։

— Է՛յ, վայրենի գաղթական,— մեկը չէր, խումբ էր՝ մանգաղ ու գերանդով, քսան աչք կար իր քծծված շորերին, բաց կուրծք ու սրունքներին և ճակատ ու շլինք ծածկած, և աչք ու բերան լցված մաղ ու մրուքին։

— Քեզ հետ ենք, է՛յ, վայրենի գաղթական, արտը մի փչացրու։

Չնայեց, չպատասխանեց, բուռ-բուռ հասկ փշրեց լցրեց բերանը, փշրեց՝ լցրեց պարկը։

— Դե շո՛ւտ դուրս արի-գնա։

Չնայեց ու մտքում պատասխան տվեց.

«Ո՞ւր էրթամ, հայ, կամոք ու կարոտո՞վ հասա ձեր շեն ու մտա ձեր արտ»։

— Գաղթական, արտից դուրս արի, թե չէ գերանդին կգցեմ վիզդ։

Չնայեց ու մտքում պատասխան տվեց.

«Իմ ահն ու մահն անցել է, հայ, քու գերանդին առ գնա»։

— Հա՛լաա՛, կրակն ենք ընկել էս գաղթականների ձեռքը։

Էլ չհամբերեց.

— Քու սրտե՞ն կխոսիս, հայ, քու պապու պառեկ...

Ու քաշվ արեց։ Խումբը ետ-ետ գնաց։ Հետո մեկը գերանդին ուսից վար բերեց ու ինքը այդ մեկի վրա քշեց։ Հետո մանգաղը ու գերանդավորները փախան՝ «վայրենի գաղթականներին» հայհոյելով։ Արտը թողեցին իրեն, փախան...

Բուռ-բուռ հասկ փշրեց-լցրեց պարկը, ապա մտավ դաշտի գյուղը, մտավ մի դաշտեցու տուն, կանգնեց տան կենտրոնում, թնդաց.

— Քույրիկ, քու տաշտ առ-արի։

— Հաց չունենք... էն աստվածը՝ չունենք,— կինը ահ ունեցավ։

— Քու էրկան կանչե հոս։

— Գնացել ա էքի։

— Էքին ի՞նչ ասել է,— որոտաց, ձեռնափայտով խառնեց տան եղած-չեղածը,— գնացել ա էքի,— տնազ արեց, տակնուվրա արեց տունը, չճարեց բան,— էքի... Քու պապու էքին...,— կանգնեց, նայեց շուրջբոլոր՝ հատակին-պատերին, առաստաղին...

— Ճերմակ պատերո՞ւն մտի՞կ... Ծուխ չի՞ դիպե... Թունդիր չունի՞ն... օջա՞խ է...

Երկու տարի անձայն էր զրուցել սար ու ձորի հետ, թե շուրթ էր շար-

ժել՝ եղել էր խաղ՝ իմացած բոլոր տխուր խաղերը։ Հիմա բերան էր բացել ու խոսելու կարիք ուներ։ Եվ ինչ մտածելու բան էր, մտածում էր ձայնարկու.

— Առանց թունդիր օջա՞խ... Առանց ծխոտ պատի օջա՞խ...

Հետո աչքը դիպավ պատի ժամացույցին։

— Օհո-հո՞-հո՞, սահաթին մտիկ էրե՞, սահաթին, սահաթի՞ն...

Ու խոժոռված նայեց-նայեց ժամացույցին, թունոտ նայեց։

— Իմ կյանքի ժամե՞ր կհաշվիս, քու պապու չխկչխկոց...

Եվ ձեռնափայտը բարձրացրած վրա քշեց, շրրրխկ՝ զարկեց-փշրեց ժամացույցը, փշուրները տրորեց ծակ տրեխներով, ելավ դուրս...

Զորի Միրոն նոր ծխախոտ վառեց, ծխի գզգզված վարագույր կախեց դեմքին և մտածեց հազար անգամ մտածածը. ախր ի՞նչ էին արել օսմանի կառավարությանը։ Հե՛չ։ Օր է՛ն օրերի եղածը ի՞նչ էր. թուրքի ու հայի կռի՞վ։ Չէ՛։ Հայի կոտորում էր։ Ինչո՞ւ կոտորեցին։ Մի սուլթան, սուլթան Համիդին արնակից մի նոր սուլթան հայի արմատը արևերես հանելու հրաման տվեց ու մի աշխարհ համաձայն եղավ։ Ինչո՞ւ... Մի ժողովուրդ մերժվեց մի սուլթանի կողմից ու աշխարհի կողմից մերժվեց։ Մերժվեց, տնանկ եղավ, մնաց սար ու քարի հետ։ Հա՞, մերժված ժողովրդին տեր կանգնողը սար ու ձորն եղավ, անտառ ու քարանձավն եղավ... Էդպես էր։ Մարդու ու աշխարհի կողմից մերժված մարդու միակ բարեկամը բնությունն է մնում։ Հա՞, գաղթական էին. ուտելիք ու խմելիք իրենց սար ու ձորից էին ուզում, ապաստարան ու ապահովություն սար ու ձորից էին ուզում, բնությունից։ Ու տալիս էր։ Տվեց, տվեց ու քաշեց-տարավ, քաշեց ավելի մոտ տարավ իրեն, տարավ, տարավ դարձրեց վայրենի, մոտեցրեց սարի գազաններին։ Հետո գաղթականներն ելան իրար դեմ, հետո գաղթականները սկսեցին իրար մերժել ու կամաց-կամաց ամեն գաղթական հայ դարձավ մենակ գաղթական, մնաց մենակ՝ սար ու քարի հետ։ Խութեցի հարսը, աշխարհից խռով, թողեց, իր համար գնաց, հիթնցի ալեհեր Սանոն՝ իր համար։ Ինքը երկու տարի մենակ մնաց էրգրի սարերի, անտառների, ձորերի ու ջրերի հետ, երկու տարի վայրենացած շների պես, վայրենացած շների հետ զզվռտվեց գայլերի հետ...

— Հարութ, թե մարդ չընդունվի մարդու կողմեն՝ կմնա մե՞ն-մենակ,— փիլիսոփայեց Զորի Միրոն,— մենակ մնաց՝ գլուխ կառնե կընկնի սար ու ձոր։ Հա՞, մարդկանցից փախ՝ սարերի հետ ընկերություն կանե ու սարեր կընդունին...

Լռեց։ Լուռ մնաց նաև Հարութ որդին. հայրը ինչո՞ւ է այդպիսի բաներ ասում... Ի՞նչ մենակության մասին է խոսքը։

— Հարութ, պատերազմել-կռվել, ասել է թե՝ չընդունել իրար։ Էսօր գերմանացին քեզ չի ընդունում, դու՝ գերմանացուն... Կպատահի, գառ, կռիվ է՝ կպատահի, կյանք է՝ կպատահի մենակություն զգաս էս խառնակ աշխարհքի մեջ. մտաբերե քու հոր՝ Զորի Միրոյին, հիշե, որ աշխարհքի մեջ մի շնչավոր կա՝ քեզ իր հոգուց բարձր ընդունող։ Հիշե ու խռով չես մնա աշխարհքի հետ։

— Է՛հ, է՛հ, աշխարհք... Միրո, քու խոսք ճշմարիտ է։ Էս մեր Քարագլուխ գեղի մեջ կա մարդ՝ իմ սիրտ հետ խոսալ չի ուզե, կուզե խռով մնա, բայց չէղնի,— սայլապան Արոն իր իմացածով արձագանքեց Միրոյի խոսքին,— չէղնի, Միրո, անտեր մնա, գեղ է, ամեն օր հանդիպել կա, տալ ու առնել կա։

«Էս աշխարհքի մեջ դո՞ւ ում կողմեն կընդունվիս, Զորի Միրո»,— ինքն իրեն հարց տվեց և տվեց պատասխան.

«Հարութի»։

«Հարութ՝ որպես հեր կընդունե... Հարութի մտքի աշխարհքը՝ շ, քու մտքի աշխարհք՝ ուրիշ... Հարութի կոմսոմոլ ընկեր Եղորի Վոլոդ քեզնե մոտ է Հարութին...»։

«Էղնի թող... Հարութ կդառնա ետ կգա, Հայկուշին հարս կբերիս, թոռներ կունենաս, թոռնիկ կունենաս, անուն կկնքիս Միրո ու էդ մատմիս Միրոն Զորի Միրոյին կընդունե՛... Էրեխեքն ու ծերեր իրար լավ կհասկանան։ Ու աշխարհքի կողմեն ընդունված կերթաս աշխարհքեն...»։

Տաք-տաք քլթքլթաց Զորի Միրոյի հոգին։

— Հարութ։

— Ի՞նչ, հայրիկ։

— Հե՛չ, գառ...

«Դառնաս ետ գաս, Զորի Միրոյին աշխարհքի հետ չթողնիս մենակ»։

— Միրո, կիմանա՞ս խոսք ում մասին է։

Միրոն բան չհասկացավ Արոյի ասածից։

— Օրինակ, բրիգադիր Գևոն կքելե թիք-թիք, տնկտնկալեն, գլուխ բարձր, մարդու դեմք ու էրեսին չի նայե, տված բարև հա ընդունած, հա՝ չէ։ Բարև չտալու միտք կունենամ, կդառնամ կբարևիմ. անտեր մնա, բրիգադիր է՝ լուծ ու լծկան ուզել կա, տնամերձին ջուր ուզել կա, ձեռք աշխոր կա, ու ես՝ աշխորով ապրող մարդ։ Կդառնամ կբարևիմ։

— Ուզես-չուզես,— մտածկոտ ասաց Միրոն և ավելացրեց,— քու գեղացին է։

— Բրիգադիր Գևոն դարձե գեղի տե՛ր,— Արոն շարունակեց գան-

գատը,— բայց էս գեղի տեր, թե ճիշտ իմանան, Զորի Միրոն է,— ասաց բարձրաձայն և շուռ եկավ Միրոյի կողմ,— գեղի տեր դո՛ւ ես։

Հարութը ծիծաղեց։

— Հա՜, գեղի հիմք քու հեր դրեց, Հարութ, իմ միտք սուր է։

Զորի Միրոն հոնքերը բերեց իրար։

— Կհիշի՞ս, Միրո։

— Կհիշիմ,— ասաց մռայլ և մտքում ավելացրեց.

«Օր էսպես ամառ օր էր...»։

— Քեզնե հետո Ճախրկանցի Նհոն ու հովեցի Մեսրոպ հիմք փորեցին, հետո՝ Օհան ու Սարգիս, իմ միտք սուր է, ես լավ կհիշիմ, Գևոն մեր Մխիկի տարիքին էր (Մխիկից մեծ, Մխիկ փո՜քր է), Գևոյի ու իր հոր գալ ուշ էր։ Կհիշի՞ս, Միրո։

«Օր ամառվա էր ու աշխարհքի մեջ նորեն կռիվ կար...»։

— Էսօր Գևոն դարձե տե՜ր ու Միրոն էրթա ջուր խնդրե՝ մերժվի... Տնամերձի գարին քանի՞ անգամ ես ջրե, Միրո։

— Սելավի ժամանակ։

— Դե տե՜ս, Գևոն՝ տաս անգամ։ Է՜հ, է, աշխարհք... Տնամերձից ինչքա՞ն գարի կհավաքիս։

— Կեղնի,— անորոշ պատասխանեց Միրոն։

— Միրո, հաստատ, գեղի մեջ ցորեն գարու հետ փոխող չի՞ էղնի։ Փութ ցորենին՝ փութ ու կես գարի։

— Կպատահի։

— Թե գեղի տեր Գևոն է, խելքամոտ չէ՞ թե էղնի։ Բայց,— սայլապան Արոն դարձավ Հարութին,— բայց իմ հոգու մեջ, Հարութ, գեղի տեր քու հերն է։ Հա՜, էս դաղրած օր վկա։ Տաս ու քսան տեղ իմ խոսք էդ է էղե ու էդ կեղնի։

«Թիվ քսանն էր, ամառ օր էր ու աշխարհքի մեջ նորեն կռիվ...»։

— Միրո, էս տարվա իմ ցորենի պես խոշորհատ ցորեն չի էղե, գարուց խոշոր է։

«Դաշտեցու դռնից անիրավունք բահ ու քլունգ առա, դաշտի գեղից ելա, ուղղություն բռնեցի Արագած...»։

Սայլանիվները նորից փաթաթեցին Զորի Միրոյի հուշերը...

7

Քայլ-քայլ հեռացավ դաշտի գյուղից և դաշտի գյուղ ու Արաքսից այն կողմ մնացած իր լեռներից։ Քայլ-քայլ սար բարձրացավ և թվաց, թե ոտքերը իրեն իր լեռներն են տանում։ Քայլեց մի օր, երկու օր, կիսածուխ

գյուղեր մտավ-դուրս եկավ։ Կարող էր բահն ու քլունգը գցել անլեզու մի դռան մոտ (կայի՞ն), ճռռացնել դուռը, ներս մտնել ու հոգնած շնչով կենդանություն տալ լքված տանը։

Կարող էր հարցուփորձ անել-գտնել գյուղատերերին (թե տեր կար), խնդիրք անել.

«Գաղթական մարդ եմ. թող արա էս գեղի փեշին քողտիկ շինիմ»։

Գլուխկախ մտավ գյուղեր, ելավ, խռով-խռով անցավ գյուղակըշտերով, գնաց։ Քայլեց երկու օր, երեք օր։ Ամպի քուլաների հետ թավալգլոր տվեց, բարձրացավ սարերը։

Տնատեղ էր փնտրում...

Բահ ու քլունգ առած ծալեծունկ ոտք փոխեց՝ երեք օր, չորս օր... Անտառոտ սար էր փնտրում և մամռաշուրթ աղբյուր։ Չէ՞, սարը իր անտառով, անտառը իր գեշ փեշով և ամպ-աղբյուրով, և ճիչ ու ծխով խաչակնքված գյուղը մնացել էին դաշտի գյուղից այն կողմ, լեռնապարից դենը։

Ու խռով-խռով, մառախուղի հետ, մառախուղի պես թավալվեց, ձորեր իջավ ելավ, բարձրացավ սարերը, բարձրացավ ու չորրորդ օրը դադար առավ՝ շուրջբոլորը հազիվ թրջած պուտ-աղբյուրի կողքին։ Հաշտ ու համաձայն նստեց, հի՞ն-հին ծանոթի պես։ Ե՛վ կողքի ձորի հետ էր հաշտ, և՛ աչքադեմի կեռման լեռների գիրկ արած կիրճի, և՛ կիրճի մշուշոտ լռության։ Թիկունքը՝ քարին, փափախը՝ քարին, քարին նստած երկա՞ր, երկար միտք արեց, հայացքը կիրճից դուրս հանեց-տարավ, հալեց մշուշի մեջ, հետո կոպերը իրար բերեց. մնացած ճամփեն շարունակեց մտքով, հասավ տեղ։ Ընկուզասարն էր, Գործվարք գյուղը։ Ընկուզասարի փեշ-տանիքով իրենց տունը՝ դիմացը այգին... Հարութ պապի ճոճքը... Հետո ծանրացած ու տաք կոպերը ետ գնացին, ու խոնավ թվաց կիրճի մշուշը։

Կիրճում առաջինը ինքը փորեց հիմք...

Հինգ տարի քլունգ ու բահ չէր առել ձեռքը։ Հինգ տարի միայն տրորել էր հող՝ ափի մեջ չէր առել, չէր առել հող ու ծլի հոտ։ Հինգ տարի հողից դուրս եկող բույր ու գոլորշի, երակների մեջ արյան եռք, ճակատ ու թիկունքին քրտինք չէր դարձել։ Քլունգի ծայրը դիպավ գետնին, մի պտղունց հողի հետ պոկվեց մի ոունգ բույր ու դող ընկավ իր թևն ու թիկունքը, կարմիր-կանաչ ցոլցլացին աչքերը և շուրթերը դողացին, և ոունգները լայնացան։

Հետո խաղաղություն իջավ խռոված հոգու մեջ, մերկ լեռների վրա, կիրճում։ Մկանները ռիթմ ու թափով կծկվեցին-բացվեցին, մաղերի միջից գլոր-գլոր պոկված քրտինքը կեռ քթի ծայրից ծիր առավ ու երբ

շակեց մեջքը, թվաց, թե ոսկորների մեջ ծուծի փոխարեն հող է՝ խոնավ գովությամբ։ Ու երբ մթնշաղը ծվարեց կիրճում, ինքը գուխը դրեց սրբոտուր հողին ու դադրած մարմնով լցրեց տան հիմքը։

Շաբաթ հետո նոր մարդիկ ոտք դրեցին կիրճ։ Ինքը կես ծունկ հիմք էր փորել արդեն, լցրել չղարի բուռ-բուռ մնացորդներով և որձաքարերով ու անտաշ քարեր էր դրել իրար վրա, կանգնեցրել գոտկաչափ պատ և ձորին նայող պատի կենտրոնում կտրել դուռ։

Ոտնահետքը գտել էին՝ եկան, նստոտեցին իր կիսատ տան մոտ։ Ոչ ոք չասաց.

«Քարի աշխատիս, հայ, ի՞նչ կշինիս»։

Եվ ինքը չսպասեց բարևի։ Պոչ հայացք դիպցրեց՝ գաղթականներ էին. սիրտը ցավ ունեցավ, բայց դեմ դուրս եկավ սիրտ ու ցավի, մրտքում ասաց.

«Ի՞նչ էկաք... Ուրիշ սար չկա՞ր...»։

Եվ սիրտը համաձայն չեղավ, սիրտն իրենն ասաց.

«Ուրիշ սար թափառել միտք չունի. հերիք անտուն մնաք, գաղթական հայեր, իմ կողքի հետ հիմք փորեք»։

Հետո չդիմացավ. պարզ աչքով նայեց խոնարհված գաղթականներին, չդիմացավ՝ նստեց ճախրկանցի Նհոյի կողքին՝ նրա պես խոնարհված, նրա պես լուռ, չդիմացավ՝ գնաց քլունգ բերեց, դրեց դեմ-դիմաց Նհոյին։

Ամեն մեկը իր համար ոտք ու քայլով չափ արեց, փորեց հիմք։

Ու էլի մարդիկ ոտք դրեցին կիրճ։

Տալվորիկցի Զաքարը եկավ, դադրոտած եկավ, նստեց ձորի պռնկին։ Առավոտ էր եկավ, արևմտից եղավ՝ անշարժ էր, մթնեց՝ անշարժ էր, քարի վրա քար կտրեց-մնաց... Նորեն լույս բացվեց՝ անշարժ էր։

— Ի՞նչ նստար-մնացիր, Զաքար,— մոտ գնաց ճախրկանցի Նհոն։

Չնայեց, չշարժվեց, չտվեց պատասխան, մնաց հայացքը ձորի մեջ կախ։

— Ել, տուր քու հոգուն՝ հիմք փորե։

— Էլ ինձ տուն պետք չէ՞... կրակ ու ճրագ պետք չէ՞... Իմն անցա՞վ... Գերդաստանից մենակ մնացի, անաստված, մարա՞վ իմ ծուխ... Քար դիր քու պատին, ինձնե գործ չունիս։ Ես էդ սարերի վրա կմեռնիմ, ամպ կդառնամ...

Ինքը նայեց տալվորիկցի Զաքարի ծռված-ճմրթված շլնքին, աչքերին՝ տենդով վառվող, նայեց բացումաց բաղուկներին՝ երակները կապույտ էին, հալիվ էին տրոփում ու հասկացավ, որ այդ երակների պուտ

արյունը էլ ժառանգվող չէ։ Ո՞ւշ է... Եվ սրտի խորքում հանգուր-հանգուր լաց եղավ տալվորիկցի Զաքարի համար։

— Չէ, սխալ է. տալվորիկցին անտուն իրավունք չէ մնա,— առարկեց Նհոն,— քեզնե հետո թող գոցվի քու դուռ, մարդիկ նային, միտք բերին, օղորմի տան քեզ, քու տոհմին... հիմք փորե, Զաքար։

Նհոն քլունգը մոտեցրեց։ Զաքարը կանգնեց, ոտքով հրեց քլունգը, թիկունք արեց, գնաց սարն ի վեր՝ ամեն օր ծունկ զարկող, չվող ամպերի կողմ։ Գնաց, որ մեռնի ամպերի մեջ, դառնա ամպ, թափառի սարեսար, երկրե-երկիր, հասնի Ծովասար, Մարաթուկ... Էրգիր։ Նայեցին Զաքարի ետևից ու ոչ մեկը բերան չբացեց, չկանչեց. Զաքարը ետ չէր գա։ Միտք ու աչքով ճամփա դրեցին մինչև ամպերը, ետ դարձան և հայացք կախեցին ոտատակի հիմք ու պատերին։

«Տալվորիկցի Զաքար էսօրվա իմ տարիքն ուներ,— մտածեց Զորի Միրոն,— հա, էսօրվա իմ տարիքից չորս-հինգ տարի մեծ էղներ-չէղներ»։

Հետո զույգ ափով սղալեց կնճռոտված դեմքը ու մատների արանքով նայեց որդուն, նայեց մի քիչ թաքուն (թե ինչու՝ չիմացավ), մի քիչ՝ ահով ու նայելու այդ պահ ու ձևի մեջ չարագուշակ բան տեսավ. ձեռքերը շտապ հեռացրեց դեմքից։

— Հարութ... էս ամպշող երկնքի տակ ինչքան քու աչք կկտրե, ինչքա՞ն ու ինչքան քու աչք կկտրե, քեզնե զատ, քեզնե զատ, գառ, բա՞ն չունիմ։ Ջավերիս իմ տուն, չգոցիս իմ դուռ։ Էս ճամփեն երկտկիս, դառնաս....

— Աստված մեծ է, Միրո,— հարեց սայլապան Արոն,— քու սիրտ հանգիստ պահե ու քու առողջություն լավ պահե, որ տղեն դառնա գա ու քեզ առողջ տեսնի, ուրախանա։

— Ամեն ինչ լավ կլինի, հայրիկ,— Հարութը զգացվեց ու զայրացավ,— ես էդ ֆաշիստների... Ես կդառնամ ետ կգամ, անպայման կգամ, հայրիկ, անպայման։

— Ապրիս դու, Հարութ, ապրիս, լաո,— գնահատեց Արոն,— դու քու հորից ամուր ես։ Քու հոր խրատ տուր՝ թող իր առողջության լավ նայե, առողջության։ Ինձնե բեթար մեծ մարդ, մենակ մարդ, ունեցածը գարի։ Գարե հաց, Հարութ, հարկ է մատղաշ բերնին... Միրո, քեզ ցորենհաց է պետք։

Կիրճում առաջինը ինքը ծուխ հանեց։

Տան կենտրոնում կրակ վառեց, դուրս եկավ։ Եվ երդիկից ելավ ծուխ, և անծեփուն պատերից։ Քողտիկը ծուխ շնչեց, ծուխ դարձավ։ Մարդիկ

թողեցին բան ու գործ, հայացքները խառնեցին կիրճը լցվող, առ երկինք բարձրացող ծխին, ծխացող քողտիկին։ Մարդիկ նստած կիսատ պատերի վրա, հիմքերի մեջ կանգնած ծուխ շնչեցին, գարնան օդի պես ծուխ շնչեցին, հիշեցին շեն ու օջախ, հիշեցին ու էլի հիշեցին, ծխի հետ, ծխի պես կորեցին-անցան ժամանակ ու աշխարհներ, ծանր ու թեթև արին ճակատագրեր, և Նհոն ասաց.

— Զաքար մեղք էր...

Միտ բերեցին տալվորիկցի Զաքարին ու խոնարհեցին գլուխները։

Իրիկնապահ էր, կիրճի վրա կախված լիալուսին կար, ինքը, թիկունքը մի քարի տված, հայացքը շաղել էր ծխի հետ, հասցրել երկինք։ Սուխը մեկ պղտորված աղբյուրի տեսքով էր երևում աչքին, մեկ՝ ջարդված սյան և ճյուղակոտոր ծառի էր նման, և ծռված սրի, մեկ՝ ակոս էր, մեկ՝ հեղեղված արտ... Սուխը առել-տարել էր իր հայացքը, ու աչքերը շաղվել էին։ Եվ լուսինը լուսին չէր՝ երկնքի պատուվածք էր ու քողտիկից բարձրացողը ծուխ չէր՝ Խութեցի հարսի բզկտված շորն էր՝ ծարծրված կարկատան երկնքի պատուվածքին։

Սուխը լցվել էր իր աչքերը, երակների մեջ էր ու հոսում էր արյան հետ։ Եվ երբ աչքերը նորից դարձրեց իր տանը. մթնշաղով ու ծխով պատուրված տունը թվաց կիսավեր, ծխացող բերդ ու հիշեց Սասնո- ճախրբրկան թաղը, երիզող ձորը, կամուրջը... Ինքն ու Մխեն անցնում, գնում էին Դավթի ավերակ բերդը, նստում Դավթի ձիերի մսուրքներին։

Եվ այդ իրիկուն կարիքի համար կիրճից աշխարհ գնացած փսանքցի Առաքելը դարձավ ետ եկավ, աշխարհից բերեց լուր։

— Բոլշևիկներ հասան Երևան, հեղափոխություն հաղթանակ է տարե։

Լուրն առան, նայեցին իրար՝ ամենքի աչք ու դեմքին հարցական կար. եղածի մասին կարգին պատկերացում չունեին։

— Առաքել, քու լուր խե՞ր է, թե՞ շառ,— հարց տվեց Նհոն։

— Դաշտեցի հարուստների սրտից արուն կկաթա. բոլշևիկներ հոգեր կխլին հարուստներից, կբաշխին խուֆուրա մարդկանց։ Իմ ծանոթ թե էր առե-կթոներ։

— Հա՜... Օրհնվի քու ծուխ, Առաքել, լուր բարի է,— հանգստացավ ճախրկանցի Նհոն, հետո մռայլվեց, աչք գցեց շուրջբոլորը, և ամենքը նայեցին լերկ ու քարքարոտ լեռներին։

— Ոչ հող ունինք, ոչ՝ ջուր... Մեր մեջ ոչ հողատեր կա, ոչ՝ հողազուրկ. հավասա՞ր գաղթական ենք,— ասաց Նհոն։

Մյուս առավոտ ինքն էլ ելավ կիրճից, գնաց նոր լուրից դրնգացող աշխարհը։

Բաժին ուզելու համար չէր գնում։

Գնաց, առաջին պատահած գյուղից իմացավ «Էրիվանի» ճամփեն, գնաց՝ մի շաբաթ բեռնակիր եղավ ու հիշեց Մխեին, հետո մտավ «Ղանթարի տակ». առավ մի կճուճ, մի ճրագ, մի քիչ մեխ, ծխնի, դրկափան. վերջին աթասուն՝ կես շիշ նավթ, հետո բոլորը լցրեց, գարսեց կճուճի մեջ, շալակն առավ, քայլ արեց ու... Ու տեսավ Խութեցի հարսին։ Ձեռքերը կրծքին խաչած, նստած էր թել ու ասեղի դուքանի դռանը։ Ոտը կախ գցեց, դուքանին մոտիկ պտույտ տվեց, որ Խութեցի հարսը նկատի իրեն. չնկատեց՝ ձեռքերը կրծքին խաչած էր, կոպկախ էր ու անլուր «Ղանթարի տակի» աղմուկին։ Մոտիկ-մոտիկ պտույտ տվեց՝ չեղավ և մոտ գնաց, ձայն հանեց.

— Խութեցի հարս...

Խութեցի հարսը ցնցվեց, հետո շփոթված կանգնեց, նայեց իրեն, հիշեց... հիշեց՝ կարմրեց, շփոթված ասաց.

— Աստծու բարին, ախպեր։

— Խութեցի հարս,— ասաց ու լռեց. ի՞նչ ունի ասելու... Հա՜...,— Խութեցի հարս, քու առաջ մեղք ունիմ, ամո՜թ, ամոթ, մեղք ունիմ... Շատերն ունին... Ներող կեղնիս։

Խութեցի հարսը գլուխը խոնարհեց, աչքերի մեջ օր է՞ն օրերի արցունքից կար։

— Խութեցի հարս, քեզնե հետո ես բաժանվա խմբեն,— լռեց. ինչի՞ համար ասաց, ի՞նչ պետք էր...— Քու անուն ինչպե՞ս է։

— Նարե,— բարձրացրեց գլուխը։

«Նարե, Նարե...,— մտքում կրկնեց,— Խանդութ... Նարե...»։

— Լավ անուն է,— ասաց։

— Իմ էրիկ նմանապես իմ անվան հավան էր,— խոնարհ ասաց,— էս չէ՝ էրգրին։ Էս ինձ Նինա կկանչեն։

— Էստեղին ո՞վ է, Նարե,— խանդի պես մի բան ունեցավ,— քու անուն ինչի՞ կփչացու... քու կնունքի անուն ի՞նչ իրավունքով կփոխեն։

— Էս դուքանի տեր Վանոն է։— տխուր ասաց Նարեն,— ճարահատ առա, ախպեր... Քու անուն ինչպե՞ս է։

— Միրոն։

— Հո՞ս կապրիս։

— Հա՜ս... Ուրիշ աշխատանք էղներ կերթենք ուրիշ աշխարհը։ Սար կապրիմ, Նարե... Քողտիկ շինեցի։

— Լավ է,— իր համար ասաց Նարեն,— սար լավ է,— իրեն դիմեց,— հոս իմ շունչ կկտրվի, ճարահատ կապրիմ... Հրի՜ի, մեր էրգրի սարե՜ր...

— Մեր էրգրի սարե՞ր,— Նարեի ցավով կրկնեց ինքը ու լռեցին։ Նարեն խաղ արեց գոտու հետ, և մատները դողում էին, ինքը նայեց Նարեի մատներին, Նարեի թաց շորին, Նարեի մազերին, դեմքին, ուզեցավ էլի բան ասեր՝ չիմացավ ինչ, ուզեցավ քայլ անել, ոտը կախ գցեց, հետո շատ եղավ լռությունը, և զրույցը շարունակելու համար ասաց.

— Ես էրթամ, Նարե։

— Ո՞ւր,— երեխայի լալկան ձայն էր։

— Սար էրթամ։

— Հոն մենա՞կ կապրիս։

Հարցը դուր եկավ իրեն, և նոր տրտմություն բերեց հարցը, մի այնպիսի տրտմություն, որն ինքը երկար ժամանակ մեկին ցույց տալու պահանջ ուներ, թե ում՝ չգիտեր։ Ու մի գիրկ թաց ամպ իջավ-նստեց ճակատին, և հայացքը ճռճվեց՝ ծա՜նր-ծա՜նր։

— Մենա կ, մենակ կապրիմ,— ասաց աշխարհքի հետ մենակ եմ։

Եվ էլի լռեցին ու դա անվայել լռություն չէր. երբ էլ բերան բացեր, ժամ, երկու ժամ հետո ասեր բառ՝ կլիներ կիսատ խոսքի շարունակությունը։ Լռեցին, և Նարեի աչքերից էլ կախվեց իր թաց ու ծանր հայացքը։

— Ես Վանոյի լեզուն չեմ սիրի,— ասաց Նարեն,— կպառկիմ իմ թիկունք Վանոյին, կելնիմ՝ իմ թիկունք Վանոյին,— ասաց անկաշկանդ, չկարմրեց, անկաշկանդ նայեց,— էս դուքան իմ աչքին փուշ ու փոշի է... Իմ սիրտ սար կուզե...

... Երևանից դուրս եկան, ճամփից էլ դուրս ու տրորեցին կիրճի ուղղությունը։ Քայլեցին՝ ինքը առջևից, Նարեն՝ իր հետքով։ Մակ տրեխնեբով տրորեց կիրճի ուղղությունը, իսկ մտքում խճողվեցին ու բացվեցին, տեղ հասան ու մոլորված մնացին քառասուն-քառասունհինգ տարում անցուդարձ իր բոլոր, բոլոր ճանապարհներն ու կածանները։ Մյուս արևմտոցին հասան կիրճ, ձորին նայող դեռ անդուռ ու անծխնի իր մութ դռանը, մտքում եղած բոլոր ճամփաները դարձան հանգույց, մի սառած աչք, մի քար ու կպան մնացին ձորի ճաքած շրթին։

— Էս է մեր քողտիկ, Նարե,— ասաց։

— Հոժար եմ,— տխուր ու ամաչկոտ ժպտաց Նարեն։

Ձորի Միրոն կարոտ ունեցավ թիկունքում մնացած գյուղի, իր տուն ու ձորի համար։ Դարձավ ետ նայեց։ Քարագլուխ գյուղը չէր երևում։ Այդ պահին մտքում եղած գյուղը օր է՞ն աշուն օրվանն էր. միայն իր քողտիկը ծածկ ուներ ու երդիկ, մյուսները դեռ քար էին դնում քարի վրա, քողտիկը դեռ դուռ չուներ ու թոնիր չկար... Նարեն պատրաստեց... Նարե՞, Նարե...

— Հարութ, աշխարհք ամենամեծ կորուստ մարդու կորուստն է։ Մարդու կորուստ անդարձ կորուստ է։

Լռեց ու պահ լռության մեջ բոլոր կորուստները անցուդարձ արին, բոլորը ծա՜նր ու մեծ էին։

— Երգիր ու հողի կորուստ ծանր կորուստ է,— շարունակեց Զորի Միրոն,— բայց հող անմահ է,— լռեց,— հող ուրիշ տեր չի ընդունե,— լռեց,— հող իր տիրոջ հետ արնակից է ու իր արնակցին կսպասե՜, կըսպասե՜, ու օրերից մի օր կհանդիպին։ Հողի կորուստ անդարձ կորուստ չէ՜։

— Էն խեղճ Կոպեն թև ու թիկունք չարդեց, քար դարձրեց հող՝ տնամերձի նորմայից շատ համարեցին՝ առան,— հիշեց Արոն։

«Հողի կորուստ անդարձ կորուստ չէ,— Զորի Միրոն հավատաց իր ասածին և մտքում նորից տարավ-բերեց,— գերմանացին կպարտվի. անարդար գործ միշտ է տապալվե, էս կովի հաղթող Սովետն է։ Սովետն է ու բարով-խերով մեր երգրի ճամփեն կբացվի»։

— Հետո Կոպեն գնաց էն քարուքռա ճամփի քարեր հավաքեց, քարեր կտրեց, գետնի տակի քարեր նմանապես կտրեց, Կոպեն էն քարուքքռա ճամփեն դարձուց հող, մի տարի թութուն ցանեց (ինչ թութուն է՜ր, Միրո, ինչ թութուն, տարվա հաց բերեց), մյուս տարի կոլխոզ Կրոպեի հողի մեջ գոմի հիմք փորեց։

«Հա, ռուս առյուծ կռվող է, հաղթանակ ռուսին է... Ռուս էկավ-հասավ Մուշ ու Տիգրանակերտ, ու Դիարբեքիր առնելու միտք ուներ, Նիկոլեն չթողեց»։

— Մենակ Կոպե՞ն։ Հարութ, քու միտք չի գա. դու ծնված չէր, դու փոքր էր, Հարութ, ինչքան հող էս մեր Քարագլուխ գեղին կա, թե կոլխոզին, թե անդամներին, բոլոր արունքրտինքով էղավ։ Քար էր, Հարութ, քար ու կրա էր, էկանք, թև ու թիկունք չարդեցինք, քար դարձրինք հող։ Իմ խոսք ճի՞շտ է, Միրո։

— Ճշմարիտ է։

— Հա՜, ես լավ կհիշեմ, իմ միտք սուր է։

«Ճշմարիտ է... թիզ հողի կարոտ ենք ու...»։

— Միրո, էսօր էլ Գևոն, էրեկվա էրեխեն, գեղ ու հողին տեր է։ Տեր դո՜ւ ես, Միրո։ Գու ու Կոպեն ու ես... Իրիկուն գեղ հասա, Հարութ, իմ խոսք կկրկնիմ, հա՜, Գևոյից ահ չունիմ, գեղի հիմնադիր քու հերն է։ Զորի Միրոն է։

«Ու տանքի վրա ցանք արի, յոնչա ցանեցի... Երանի՜ էն օրվա՜ն... Նարեն կար... Հարութով ծոցվոր էր... է՜ն օրվան երանի»։

Ողջ գիշեր անձրև եկավ՝ կիրճի վրա ու անանուն գյուղի։ Իր հիմք գրած գյուղը դեռ անուն չուներ։ Մելոն միտք ուներ դնել անուն՝ Հով, Մեսրոպ՝ Հավարք, Առաքել՝ Փսանք, Օհանը միտք ուներ դնել՝ Գարմավ, Սարգիսը՝ Արուս, Նոհոն՝ Ճախրկան... Ամեն մեկն իր կորած գյուղի անվան էր ուզում շունչ տալ, բայց գիտեր, որ գյուղի անվանակոչման պատիվն ու իրավունքը իրենն է՝ Միրոյին ու... Լռում էին և լռում էր ինքը։

Ողջ գիշեր անձրև եկավ՝ կիրճի վրա, անանուն գյուղի և իր հինգվեց ամսական կտուրի վրա, և կոպերը չեկան իրար։

— Միրո... Միրո, քնի,— ասում էր Նարեն,— տարի օր քարերի հետ կռիվ ես տվե, մարդ, թև ու թիկունք ես ջարդե, քնի։

Արևբացից արևպատոց քողտիկի շուրջբոլորը քանդել էր, շարժել էր քար, գլորել ձորը։ Ատամները սեղմել էր, սեղմել-ծամել ու կտրել՝ իրեն ու երեկվա իր աստծուն իրար կապող թելը, քար էր տեղաշարժել, գլորել ձորը, արարել հող։ Արևբացից-արևպատոց եղել էր լծկան արարիչ։

— Միրո, չե՞ս դադրե, քնի...

Մի տարիգիշեր անձրև եկավ, մի տարիգիշեր աչք չկպցրեց ինքը. ախր անձրևը սար ու քարի վրա էր գալիս, կորչում գնում էր,- ախր, արտի վրա պիտի գար, արտի, ցել ու ցանքի։ Չկար։

Եվ ափը ճաքճքված արտի պես պահեց բաց երդիկի տակ, թրջեց, քսեց աչք ու ճակատին։ Ելավ կանգնեց շեմին, ունկ դրեց, սիրտ ու հոգին լցրեց անձրևի խշշոցով, ետ եկավ նորից՝ անձրևացանք արեց իր կարպետին, Նարեի կողքին։ Դռան մոտ խաչ դարձավ գարնան անձրևի համար, երդիկի տակ՝ արտ, դռան մոտ՝ խաչ, երդիկի տակ՝ արտ, էլի ու էլի և չքնեց։

Առավոտը բացվեց թաց խաղաղությամբ։ Արևը սրբեց իր խրճիթի թաց աչքերը, շեշոտ քարերի միջից կաթ-կաթ արցունք հավաքեց։ Նայեց գոլորշացող սար ու ձորին, նայեց անանուն գյուղի մարդկանց աչքերի մեջ ու հասկացավ, որ բոլորն են անքուն մնացել. թիզ ցանքի երազն են փռել անձրևի տակ։

Մինչև արևպատոց էլի քար շարժեց, քարի տակից ելավ քար, էլի ելավ, մինչև արևպատոց հող չոկեց քարերի միջից։

Հետո բարձրացավ կտուրը, կտուրի հողից վերցրեց մի բուռ ու լռեց։ Հողը սրսուռ էր ու խոնավ, գոլշունչ էր։ Այդպիսի հողով մի արտ ունենար, ունենար սերմացու, ունենար արոր լծկան՝ ցանք աներ...

Բուռ հողը տրորվում, գունդ էր դառնում, սրտի պես երկփեղկվում էր իր ափերի մեջ։ Մատով ակոս բացեց տանիքի վրա, ինչքան ձեռքը

երկարում էր՝ տարավ, հետո մատի ծայրից աչքերը ակոսն առան, քարշ տվին, տարան, ելան յոթ սար, կորեցին յոթ ձոր, մի թաց քարափի գլխից իջան վար, պտույտ եկան սիզապատ, կիսատակոս կորեկի արտի մեջ, դարձան ետ ու թոն արին կտուրին բացված մատ-ակոսի վրա... Մատը կպել էր պտղունց հողին ու չէր պոկվում։ Եղունգի տակից տաքություն էր հասնում ոսկորներին, թոքերին շունչ էր հասնում, մտերմիկ զրույց էր հասնում ականջներին, ու եփ էր գալիս արյունը։ Չէ՞, դիմանալ չի լինի, ցանք պետք է անի, ցանք. գիշերը անձրև է գալու...

Վար իջավ, տան պուճախից առավ ավույտի սերմի հանգույցը, ելավ դուրս։ Տասը բուռ հող խառնեց բուռ սերմին, որ շատանա, գոգնոց կապեց, բնազդով աչք ածեց երկինք և հող ու սերմով լցված բռով երկիր մոլորակի պտույտը գծեց իր խրճիթի տանիքին։

Կիրճի վրա ծունկ էին զարկել ծոցվոր ամպերը, օդի մեջ կայծակի համը կար, ինքը ցանք էր անում անձրևից առաջ։

Ողջ գիշեր անձրև եկավ։ Ահով ականջ դրեց ու որոշեց անձրևի թափը, կանգնեց շեմի վրա՝ աչք ու ափով որոշեց անձրևի թափը. վախեցավ տեղատարափ լինի, «արտը» քշի-տանի։

Հաջորդ օր գյուղը դրնգում էր.

— Միրոն տանքի վրա յոնջա է ցանե։

— Միրոն խելքել է։

— Զորի Միրոն...

— Միրոն... Զորի Միրոն...

Հաջորդ օրը գավառից հողաչափ եկավ նորահայտ գյուղը։ Եկավ, իջավ ձիուց, պահանջհայացք գցեց չորսբոլոր, թե՝ ձիուս սանձը բռնող ուղարկեք։ Սանձը բռնող չեղավ։ Սպասեց գյուղատիրոջ ու պիսրի, ծխատերերին կանչող գոչին՝ չեկան, զայրացած ձգձգեց սանձը, ձին վրնջաց, ու հավաքվեցին... Եկվորի գլխին թափեցին քարեկարկուտ-հայացք. էս գյուղի ճամփեն քեզ ո՞վ ցույց տվեց... ինչո՞ւ ես եկել.. Ի՞նչ է ուզածդ։ Հետո բռնեցին թևից, կանգնեցրին իր խրճիթի մոտ, չէր ուզում, քաշ տվին կտուրը։

— Ձափ արա,— ասին,— մեր գեղի հող ու ցանք էս է։

Հողաչափը փողպատը պոկեց, ձի նստեց, դարձավ ետ գնաց, գյուղին թողնելով մի անուն՝ Քարագլուխ, ծոցատետրի մեջ՝ մի թիվ ու մի գծիկ. ծխի դիմաց՝ երեսուն, հողի դիմաց՝ գիծ։ Իսկ լեզվի տակ ծլնգաց մի պատմություն, խելքը թոցրած խութ... խութ... որտեղացի՞, հա, էլի, խութեցի մի մարդ կտուրի վրա ավույտ է ցանել։

Հետո քողտիկի կտուրին հունձ էլ արեց։

...Մանգաղն առավ, սրաքարն առավ, մի կուլա ջուր, է՞, էն թաց

քարափատակի կորեկարտի կածանը մտքից գցեց ոտքերի տակ, բարձրացավ կտուրը։ Մանգաղը սուր էր՝ էլի սրեց, արձակեց կրծքի կոճակները, թաշկինակը գոտկատեղից հանեց, կապեց գլուխը, որ չզարկվի արևից, երկնքից խեր ու բարին առավ ու սկսեց... Ափի մեջ անուշ խուտուտ զգաց, արյունը խենթացավ՝ հասավ, աչքերի ճերմակը ծրեց, ետ գառավ եկավ՝ մանգաղի շեղբի հետ տակ-տկանց քսվեց «արտի» հողին... Սշշ՜... Արտի էն ծայրից լո՞ր թռավ, զգույշ, Միրո, մայր կլինի, բնի մեջ պուտ-պուտ ձու կլինի, բնի կողքերը չհնձես, հա՞, լորը հանկարծ կկորցնի բույնը, զգույշ։ Սշշ՜... Չէ՜, խամն ընկել է թև ու թիկունքդ, Միրո, կամաց հնձիր, հիմա կտաքանաս, կբացվես, դադրաշունչ առ, կուլայից ջուր խմիր, սուր պահիր մանգաղդ։

Մինչև ծունկը մի քիչ հողոտվեց, թիկունքը տաքացավ մի քիչ, մինչև մի պինչը լցվեց խոտ ու հողի բույրով... «խոտհարքը» պրծավ։

Մանգաղը սվսված ու... Արթնացավ անուշ երազից, ճպճպացրեց աչքերը։

...Երեք գարուն հետո գյուղը նորեն դրնգաց.

— Երկինք ամպեց. Զորի Միրոյի տուն մրկաթ է։

Առվույտը արմատ էր գցել-հասել գերաններին, օղակ-օղակ փաթաթվել, կախվել օճորքից։

— Տանիք շուռ տալ է պետք, Միրո, ուրիշ ճար չկա,— խորհուրդ էր տալիս Նարեն։

Զեռքը չէր բռնում... Բայց հնար ու ճար չկար։ Մի գիշեր էլ, երբ գյուղը քնած էր, բահն ու քլունգն առած բարձրացավ կտուրը...

«Էդ գարուն ձմռոտ գարուն էր, տնաքանդ գարուն էր... Տան ծածկ քանդելուց հետո Նարեն հիվանդացավ։ Նարեին սելով տարա բժշկի... տարա բժշկի... տարա ու... Հարութ մնաց մորեորբ... էդ գարնան Հարութ չորս տարեկան էր...»։

Զորի Միրոն էլի պինդ-պինդ նայեց որդուն ու գտավ Նարեի աչքերը և ճակատը ճերմակ, և անհնազանդ մազերը, Միրոն մրսած երեխայի պես ռեղմվեց որդուն և ասաց.

— Իմ աչաց միջեն աշխարհքն է կպոկվի, կերթա, Հարութ։

Ուրիշ ոչի՞նչ, ոչինչ չուներ Զորի Միրոն՝ մի Հարութ։ Պատերազմ էր, ու Հարութ որդուն ճանապարհում էր կռիվ։ Սայլով պիտի հասնեին կայարան, Արոն սայլն առած պիտի դառնար գյուղ, հայր ու որդի նըստեին գնացք ու Երևանում, տղերքին կռիվ տանող գնացքի գույժ սուլոցի տակ Զորի Միրոն մեկ էլ պիտի համբուրեր Հարութ որդուն։

Ու ճոճռալով գնաց սայլը, քարուքռա ճամփով քարշ տվեց Միրոյի հուշերը, գնաց։

Սայլանիվների օղերից մեկը հին էր՝ կարկատանված, ճաք ու ծակերով, մյուսը՝ դարբին Ծգորի մուրճի տակից նոր էր դուրս եկել. մի քիչ քուրայի գույնն ուներ և մուրճի չմաշված հետքեր։

Հին ու նոր երկաթօղերը ճոճռալով գլորվեցին՝ կողք-կողքի, ոլորմոլոր գլորվեցին, գյուղ Քարագլխից պոկված ճամփով գլորվեցին, գլորվեցին, փաթաթեցին Զորի Միրոյի հուշերը ու հասան Ղարաբուռուն երկաթուղային կայարանը։

Սայլապան Արոն համբուրեց Հարութի ճակատը։

— Էրթաս բարի, դառնաս բարի, Հարութ,— ասաց։ Կամեցավ ավելացնել. «քու հոր մասին չմտածիս, ես կօգնիմ», բայց կրկնեց,— դառնաս բարի, լաո, դառնաս բարի։

Ու սայլն առած բռնեց գյուղի ճամփան։

Իսկ հայր ու որդի սպասեցին Երևանի գնացքին։

— Էսօր գնացք կուշանա,— իր սրտինն ասաց Զորի Միրոն։

— Չի ուշանա,— համոզված առարկեց Հարութը։

— Էսօր գնացք չեղնե՞ր, էգուց՝ չեղնե՞ր, էլօր՝ չեղնե՞ր...,— իր համար մրմնջաց Զորի Միրոն։

— Ինչո՞ւ ես այդպես ասում, հայրիկ, գնացքի ուշանալը ոչ քեզ համար է լավ, ոչ՝ ինձ, մեկ է. պիտի գնամ։

— Կիմանամ, գաո։

— Բայց դու իզուր չվերադարձար քեռի Արոյի հետ, հայրիկ։ Դու...

— Հարութ,— կտրեց հայրը,— Հարութ, գաո...

Ու լռեց, սեղմվեց որդուն ու լռեց՝ ստիպեց որդուն էլ լռի, և գնացքը սուլեց-սղոցեց Զորի Միրոյի ու Հարութ որդու արանքում ծվարած տաք լռությունը։

8

Ամիսը մեկ-երկու անգամ փոստատարը նամակ բերեց Հարութից։

— Հայկուշ, մեռնիմ էն նախշուն աչքերուն, մեկ էլ կարդա։

Զորի Միրոն էլի ու էլի էր լսում Հարութի տողն ու բառը, հետո նամակ էր թելադրում.

«Հարութ, գաո. էն օրվանից, որ քու տաք դուրս եկավ տնից՝ արև չի կաթացե տան մեջ, իմ արև, Հարութ։

Էն օրվանից, որ հեռացար դռնից՝ հով չի գիպե դռան։

էն օրվանից բոց չի ընկել թունդրի մեջ, երգիկից ծուխ չի էլել... Իմ տաք թունդիր, Հարութ, իմ ծուխ, Հարութ...»։

Նամակը թելադրում, կարդալ էր տալիս, համբուրում աղջկա ճակատն ու գնում ձորապանկի իր տունը՝ բռի մեջ Հարութի կովահոտ նամակը, մտքում ու աչքերի դեմ՝ ձորաբերանին հավաքված ժողովուրդ ու զուռնա, կարմիր-կանաչ կապած փեսա Հարութ ու ճերմակ քոզի տակ աչքերը խոնարհած Հայկանուշ հարս։

Աշխարհը եռանկյունածալ նամակ էր գարձել։ Ու Զորի Միրոյի աշխարհն էր այդպես՝ եռանկյունածալ նամակ՝ մի գագաթը ձորի պռնկի քար շեմին, մեկը՝ երկնքում, երրորդը՝ է՛, յոթը սարից այն կողմ, թուփ ու թվանքի տակ։

Ոմբարկվեց երրորդ գագաթը, և Միրոյի աշխարհը դարձավ ավեր։ Քար կտրեց դռան մոտ դրած իր քարի վրա և ձորի մեջ թափեց աչքերի մշուշն ու սևը։ Դարձավ տան պատին ծեփված, աղավաղված ստվեր։

Գյուղացիները խղճացին նրան։

— Իմ սիրա կվկայեր, որ Զորի Միրոյի տղին բան կպատահի,— ասաց Արոն,— հե՛յ վախ, Միրո։

— Գոցվավ մարդու դուռ, խեղճ Միրո։

— Կտրավ մարդու ծուխ, տնավեր Միրո։

— Հրի՛, անաստված մարդ, քարհոգի է՝ կդիմանա...

Հետո ամեն մեկը երազեց եռանկյունածալ իր աշխարհը, բռնեց գաշտ ու կալի ճամփա, աչք ածեց պահեստի դռանն, ու մոռացան նրան։

Իսկ մի օր Մայրոն անիծեց իր Սառն-հարսին ու Միրոյի անունը նրա շուրթերից ընկավ որպես անեծք.

— Բայղուշ դառնաս Զորի Միրոյի պես,— անիծեց Մայրոն, և Սառնի անունը ծամոն դարձավ գյուղի բերանում։

Զկորցրին խիղճ ու հոգի և հիշեցին, որ Սառեն գոց բերան էր, մեծ ու փոքրի հարգանք-պատիվ պահող։

— Մայրոն հարսի արևով երդում կաներ։

Աղբյուրը ջրի էր գալիս, ամաչելով էր նայում մարդու աչք ու երեսի, օրոր-շորոր փեշերի հետ տանում էր հարյուր ջահելի հայացք, հարյուր անգամ կարմրում ջրի ճամփին։

— Ամեն տղատեր փափագ ուներ Մայրոյի հարսի պես հարս ունենար։

Եվ ապա հիշեցին.

— Դաշտ ու կալ գնաց, կորցուց ճակատի մեռոն...

— Բրիգադիր Գևոն ամենքի ծոց ու գոգից ցորեն կխլե, Սառնից՝ չէ...

Ու բաղմիմաստ ժպտաց, շշնջաց լաչակավոր ու ջարդված կոզիրյոկով գյուղը։ Իսկ հարսատեր Մայրոն զարկեց ծնկներին, Սառեի գլխին անեծք թափեց։

— Բայշուղ մնաս Զորի Միրոյի պես,— և դուրս արավ։

Սառեն կծկվեց մարագի պատի տակ, միտք արեց, միտք արեց, հետո սկեսրոջ անեծքների միջից ջոկեց Միրոյի անունն ու գնաց։

...Մի պարկ մութ էր թափվել դռան քարին, փշրված մի պարկ գլխեր։ Զորի Միրոն էր։ Տարտա՞մ բարձրացրեց գլուխը և սուս մնաց։ Դռոգ անցավ Սառեի մարմնով. երբեք Միրոյի հետ լեզու թրջած չէր (լսել էր՝ գյուղում կա Զորի Միրո, հեռվից տեսել էր)։ Իսկ նա լուռ էր և լուռ էր տան բաց ու մթամած դուռը և լռությունը ահ էր ու կաթկթում էր ձորի մեջ։ Կամ ձայն ու բառ էր պետք, կամ թողնել, փախչել։

— Քեռի Միրո,— շուրթերը դողացին։

— Ի՞նչ կուզես... Ո՞վ ես,— ձայնը ձորի բողազից եկավ։

— Ես Մայրոյի հարսն եմ։

— Ի՞նչ կուզես։

Սառեն կուչ եկավ փլզված ստվերից քիչ հեռու։

— Ի՞նչ կուզես,— ձորից էլ չէ, չգիտես որտեղից եկավ ձայնը և թվաց Սառեին, եթե խոսի էլ, իր ձայնը միայն ձորը կլցվի։

— Իմ կեսուր ինձ տնեն դուրս արեց...— Միրոն լուռ ու անշարժ էր։

— Գեղ իմ անուն կկապե բրիգադիր Գևոյի անվան հետ,— շարունակեց Սառեն,— իմ կիսուր ինձ տնեն դուրս արեց։

Անցած տարվա կալուկութին, երբ Հարութից «սև թուղթ» չէր եկել, ու Միրոյի ձեռքը դեռ քար ու գործի էր դիպչում, մի օր Սառեին ու բրիգադիր Գևոյին տեսել էր բարդոցի տակ, կողք-կողքի նստած։ Սրտին դուր չէր եկել. կամեցել էր գոռալ Գևոյի վրա. «Սեղջ կրակ ընկե կվառվի, դու ժղո՞ւլ կանիս», բայց մտածել էր, որ գոռալու իրավունք չունի ու թեքել էր ճամփեն։ Տարի առաջվա տապ օրը հիշեց ու մոլտաց.

— Ինչի՞ կշնաներ... Կորի իմ դռնեն։

Ու երբ Սառեն վախվխելով ոտքի ելավ և խարխափելով, ոտքերը քարերին զարկելով գնաց, ձորը հազար ձևի արձագանք տվեց, ձորը ափ հանեց ոտնաձայն ու փեշերի շրշոց։ Զորի Միրոն զգաց, որ ինքը շունչ է ու շնչավոր և վախեցավ՝ պահ հետո ձորը նորից կհամրանա ու մթով լցված երախը դեմ կանի իր աչքերին։ Առաջին անգամ ձորից ահ առավ։ Առաջին անգամ դողաց իր պատ ու դռան սառնությունից, կծկվեց ամայությունից։ Ու խեղճացած ձայն տվեց.

— Հարսե՜ ...

Այդ գիշեր Զորի Միրոն ավելի շուտ մտավ տուն։ Մեկնվեց թախտին, Սառեի անհանգիստ շնչին ականջ դրեց, հիշեց, որ Նարեին հետո իր հարկի տակ կինարմատ չի քնել, շունչ պահեց, ջիղ ու ունկով կապվեց Սառեի շնչին ու խճճվեց մտքերի մեջ։ Հարութի բոթն առնելուց հետո առաջին անգամ անմշուշ հիշեց կնոջը՝ Խանդութին, երկրորդ կնոջը՝ Նարեին, օր ու գեպք միտք բերեց իր ու նրանց հետ եղած-գնացածից, շուռումուռ եկավ։ Եվ այդ գիշերվա ախն ու վախը՝ մեկ Խանդութի, մեկ էլ Նարեի համար էր։ Այդ գիշեր ուղեղը ազատվել էր մղձավանջից և ամեն, ամեն ինչ հիշեց ու աչք կպցրեց միայն ադամամութին։

Առավոտ կանուխ կանգնեց շեմին, երկինք ուղարկեց կես բերան աղոթք։ Երբվանի՞ց աստծո անուն չէր տվել։ Հարութի նամակի փոխարեն դուռը հասած երկու մատ թղթի օրը ծաղր էր եղել, անեծք ու հայհոյանք տվել աստծուն, ճոճել ձեռնափայտն ու խփել գետնին։ Հետո սրտից հանել, ձորն էր գցել աստծու անունն ու թե մեկ-մեկ հիշել էր, աչք ու ունք խառնվել էր իրար, ձեռքերը բռունցք էին դարձել։ Եվ պահերից այդ փոթորկուն պահին էր միայն Զորի Միրոն զգում իր կենդանի շունչը, արևի ու ստվերի տեղը, անոթություն ու ծարավ։

Իսկ այդ առավոտ օձիքը բաց կանգնեց շեմին, չիմացավ ինչու, աղոթքի մի քանի բառ ասավ ու մոայլ նայեց ձորին, շուրթերը թերեց իրար և զայրացած ձեռքն առավ կուժը։ Զորում, երեսին ափուշուր զարկելիս, մի անգամ էլ բերան բացեց, տվեց աստված անուն, էլի մոայլվեց։

Դռան մոտ սայլի ճռռոց, հո ու չո ընկավ ականջը։ Է՞, երբվանից գյուղից ձայն չէր լսել։ Ականջները լցրեց կալ ու ճամփի ձայն ու նայեց գյուղի կողմ։ Հետո մտավ տուն, հայացք դիպցրեց կոլոլված, կլորված վերմակին, երկու բուռ ալյուր լցրեց տաշտի մեջ ու տեսավ, որ ունեցածչունեցածը կես պարկ է և աշխոր չունի, տաշտն ու կուժը դրեց իրար մոտ, պուճախից վերցրեց մանգաղն ու ելավ դուրս...

Ճամփի կեսին հիշեց Գևոյին, զայրացավ.

— Անիծած ծնունդ, մարդիկ արուն է կթափին, ինք մարդկանց պատվի հետ կխաղա։

Թունոտ նայեց նրա արտերի կողմ և թեքեց ճամփեն, գնաց ուրիշ բրիգադ։

Եվ ցորենի փունջ, և հուշոր առավ մանգաղի բերանը, կտրեց, արնոտեց։ Անցած երեկոն ու առավոտն էլ էր դարձել հուշ՝ զարմանալիորեն հեռավոր, ուշք ու միտք ձգող-տանող։ Հա՞ հիշեց իրիկունն ու Սառեին ու հա կրծքի տակ մի թել կտրվեց-կապվեց։ Մտքում Սառեն խմոր հունցեց, ծուռ ու կրակ գցեց թոնրի մեջ, հատակը մաքրեց, դուրս եկավ նրա-

տեց դռան քարին... «Չէ՞, դուրս չելնա...»,— Զորի Միրոն առարկեց ինքն իրեն և հանկարծ մի կասկած ընկավ սիրտը. «Չթողնի՞, էրթա...»,— ձեռքերը դողացին, մանգաղի ծայրը խրվեց հողի մեջ, կրակ ու փոշի ելավ։ Հնձած ամեն փունջ ցորենի հետ այդ միտքը ավելի հավանական թվաց։ «Ջերթա՞...»։ Ու բանթողին չմնաց՝ հնձվորների կարեկցական հայացքի տակ քայլերն ուղղեց դեպի գյուղ։

...Ջերմ շունչ ուներ տունը. թոնրի շուրթը տաք էր, օճորքից կախված սարդոստայնները չքացել էին, մուր ու փոշի չկար ճեղք-պատուհանի ապակու վրա և շեմ ու երդիկին վերջին շող արևն էր թրթռում։ Հաճույքով սրբեց դեմքի քրտինքը, ու կնճիռների միջից ժպտաց Սառեին։

Ապա նստեց հացի ու ամեն պատառի հետ կրկնեց.

— Կհավատամ, անոթի ես...

Հետո երկար լուռ մնաց, շեղ նայեց Սառեի ձեռքի ասեղ ու կարկատանին, մի ջերմություն ալիքվեց հոգում՝ հայացքը թելած կնոջ ծնկներին իր տաբատն էր։ Ու հա՜ մտքում տարուբերեց նույն հարցը։ Վերջը սիրտ արավ.

— Ազգական-բարեկամ ի՞նչ ունիս, հարսե։

Ասեղթելի կեսը քաշվեց, կեսը քարհանգույց դարձավ կարկատանի վրա։ Սառեի կոպերը չբարձրացան, խոնավ ձայնով ասաց.

— Մինչև մեկել օր էրիկ ու տուն ունենք, էսօր բա՞ն չունիմ... Կպատահի ունիմ. թե երկրի ո՞ր ծեր, աստված կիմանա... Ինձ էլու դռնից հարս բերին։

Դեռ հնձի արտում Միրոյի սիրտն ընկած ահ ու դողը՝ «չթողնի՞ էրթա»,— հալվեց, պատառ-պատառ հայացքի հետ թափվեց Սառեի գոգը։ Հետո աչքերը դիպան նրա ասեղնածեծ ձեռքերին ու զայրացավ.

«Զորի Միրո, դո՞ւ կխնդմնդաս՝ շունչ ու շնչավոր քու նման անտեր մնալուն...»։

— Մտածիմ, ճար կգտնիմ իմ չոր գլխին,— մեղավոր ու ընկճված շարունակեց Սառեն, և Միրոն նրա ձայն ու տոնից գլխի ընկավ, որ ճար անելու ճամփեն շա՜տ է հեռու։ Նաև զգաց, որ հոգու խորքում, ինչ-որ տեղ, էլի մի դավադիր խնդմնդոց կա...

Թո՜ւ, նալլաթ քեզ... Գործում չկար, ականջները գոցում էր, վերմակը քաշում գլխին, աչքերը փակում, չէ՞, հնար չկար. Սառեի շունչը տաք շշնջոց էր, և Միրոն ականջը որքան ուզում էր փախցնել-պահել, այնքան դրավում-ձգում էր շշնջոցը։ Քուն չկար։ Եվ ամեն հուշ ու միտք էր մնում կիսատ. տան անկյունից հասնող կրակ-շունչը խանձում, կտրում էր մտքի թելը։ Հենց իրեն՝ Զորի Միրոյի կամքով էին հուշերը պատառ-

պատառ դառնում, կամոք էր տկանջ բացում Սառեի շնչին։ Այդ պահին նրա մտածումների վերջը ահ ու գոռն էր՝ մարմին ու հոգու։

Մինչև ե՞րբ Սառեն պիտի ապրի իր տանը, շնչի իր սեպացած օճորքի տակ, մինչև ե՞րբ... «Կերթա. Սառեն ջահե՛լ, սիրուն հարս՝ մեկին կին կերթա...»։ Ինքը կմնա մենակ, էլի ու էլի մենակ։ Բայդուշ կդառնա ձորի պռունկին, աշխարհում իր բաժինը կմնա մեկ ձորի մութը, մեկ էլ՝ տան չարը լռությունը...

Եվ Զորի Միրոն արդեն ահ ու գոռ էր առնում, խեղճացած կուչ էր գալիս, ավելի ամուր կապվում Սառեի շնչին։ Ապա և երազում էր, որ Սառեն լիներ օրերը ապրած, մազերով ճերմակ և այտերով ծալ-ծալ ու չունենար պատճառ իր մտից հեռանալու, գնալու։ Հետո, մթան մեջ, աչքերի առջև կանգնում էր Սառեն՝ այտերով կարմիր ու լի, բոց աչքերով, որոնց մեջ թախիծն էր թշշում և անկնճիռ ճակատին կախված մազափունջը, և բոց սրունքների վրա տարուբերվող փեշերը, և... Ակամա աչքերը գարձնում էր Սառեի վրա։ Ու ծմլակում էր հաշմ ու առողջ ուսերով, ափով շփում կնճռոտված այտ ու ճակատ, արյուն լալիս գնացած ջահելության համար։

Լիներ ջահե՛լ... լիներ ջահե՛լ, օջա՜խ կազմեր... օջախ կազմե՜ր... օջախ կազմեր Սառեի հետ... Երեխաներ ունենային, և մտքում եղած անունները մեկ-մեկ բաշխեր։

Երկու անգամ ճժաճիչ ընկավ տկանջը, երկու անգամ շունչ տվեց պապի Հարութ անվան։ Զմնացին. անունն առան, դարձան նահատակ...

Նարեից հետո ինչո՞ւ ուիտ արավ՝ գլուխը չդնել կնոջ բարձի։ Էլի երեխա կունենար Հարութից բացի, Հարութը չկա՝ կլինեին նրանք. իրենից հետո ծուխ կծխեին, տոհմի շունչն ու արյունը կպահեին աշխարհի մեջ։ Խերն ու չարն առած ինքն էլ կերթա, չի ունենա ոչ մահարձան, ոչ ազգ ու անուն քարի վրա։ Տունը կդառնա փլատակ, կլցվի փուշ ու եղինջով, օձ ու խլեզ բույն կդնեն պատերի մեջ ու ոչ ոք չի հիշի, որ այդտեղ տուն է եղել, դուռը բաց ու խուփ անող նախշունաչ Նարե, կրակի կտոր Հարութ ու մի Զորի Միրո ու մի Զորի Միրո... Ոչ գործվարքցի Հարութ պապ է եղել արևի տակ, ոչ գործվարքցի գաղթական Միրո։ Տոհմի մեղքը շեփ շլինքին առած, ծվեն ծխի պես, կհալվի՜, կերթա...

Եվ հիշում է տալվորիկցի Զաքարին, որ գնաց ամպերի մեջ մեռնելու, և ցեցակեր գերանների տակ լայն բացած ակնախոռոչները լցնում ահ ու ցավով, ծրում արյունով տոհմի։ Ու երազում էր այն, ինչ լուներ արդեն և չէր ունենալու...

Լիներ ջահե՛լ... Լիներ ջահե՛լ. օջա՜խ կազմեր, ունենար կին ծոցվոր ու խլվլան հիժ...

Ու հիշում էր թե առած թռած օրերը։

Խանդութը նստում, բարձրանում էր զգույշ։ Դուրս գալու ամոթ էր անում, բարձր խոսելու՝ ամոթ։ Քայլում էր երկկողմանի կաղին տալով ու կաղլիկության մեջ՝ մի անո՞ւշ բան։ Մշեցի Օհանեսի դուքանից առած ծաղկավոր շորն էր հագել՝ մի կողմից երկար էր, մի կողմից կարճ։ Քայլ ու շարժի հետ թթխմորի պես ելած-ծորացող կուրծքը տարուբերվում, թրթռում էր։ Աչքերի մեջ՝ Ընկուզասարի սլացք ու զովից կար, գյուղի կողքի Մասրաձորի մթից՝ մի քիչ ահ ու մութ ու խումար մարեի աչքերի տրտմություն՝ մի քիչ թա՞ց տրտմություն...

Երկու գիշեր Զորի Միրոյի աչքերի դեմից չհեռացավ Խանդութը։ Եվ գիշերվա կեսին, չիմացավ թե ինչու, փորձեց Սառեին պատկերացնել... ծոցվոր։ Փորձ արավ փակ աչքերով, հետո շուռ եկավ ու աչք դիպցրեց նրան, նայեց լայնակն, կկոցած նայեց ու, որտեղից որտեղ, մթան մեջ նկատեց Սառեի մերկ ուսը, բաց ու մաց ուրիշ տեղ էլ տեսնելու ճիգ արավ և... արյունը խուժեց, զարկեց քունք ու ճակատին, մթնեցին աչքերը, շունչը բերանում հևիհև դարձավ, տաք դող ընկավ սիրտ ու ծուծի մեջ և զգաց, որ... որ այր է։

Զգաց ու կարմրեց։

Իմացավ ու մեկեն նստեց թախտին։

Աչք չէր կտրում Սառեից։ Մեղավոր ու մեղապարտ բաներ էր անցնում մշուշված գլխով։ Ոտքի էլ կանգնեց, դողքայլ էլ արավ... Հետո կանգնեց տան կենտրոնում, և օճորք ու գետին երերացին գլխի վերև ու ոտքերի տակ։ Ետքայլ անելու ճիգ արավ, ճիգ արավ, թախտի վրայից խլեց կարպետն ու փախավ...

Կտուրի վրայից թքեց ձորին, կուրծք ու փորի վրա պառկեց և սեղմած ատամներով շշնջաց.

— Մեղա՞, տեր, Սառեն ինձ տղկա տեղ կգա...

Մեկ էլ ասավ, էլի ու էլի ասավ։ Եվ ինչքան կրկնեց՝ այնքան բարձրաձայն և այնքան ատամները սեղմվեցին իրար...

Զորի Միրոն այր էր ու այր էր։

Սողաց երդիկի մոտ, գլուխը կախեց ներս, փնտրեց Սառեի մերկ ուսը, շունչը ոսկաց, իր շունչ ու աչքերի տենդը թափեց երդիկից վար և չդիմացավ։ Ափլփեբով իջավ, դողսիրտ ու գոզմարմին կանգնեց Սառեի մոտ և նրա պտտվող գլուխը դիպավ բաց ուսին։ Սառեն աչքերը բացեց, ճչաց, հավաքվեց վերմակի տակ, սեղմվեց պատին ու վախվորուկ նայեց։

— Ես եմ... Սառե...,— ձայն հանեց հևիհև,— Միրոն է...

Օտա՞ր մի ձայն ընկավ Սառեի ականջը և անունը թվաց օտար։

Փորձեց ամբողջացնել մթով ծեփված աչքադեմի երեսը, որը Միրոյինն էր, ծանոթ երանգ գտնել պահ առաջ լսած ձայնի մեջ, բայց չստացվեց։ Մտքում մի քանի անգամ կրկնեց՝ Զորի Միրո, Զորի Միրո, Զորի... Եվ որքան կրկնեց, անունն այնքան տարօրինակ թվաց, հեռացա՜վ, հեռացավ, և Սառեին թվաց, թե ինչ-որ տեղ, վաղո՜ւց, գուցե երազում է լսել այդ անունն ու ձայնը։

— Սառե՜...,— Զորի Միրոն նորից հնաց,— էս գիշեր իմ երակների մեջ արյուն կա, լուսցավ՝ կդառնա ջուր,— դեմքը մոտ տարավ վերմակով ծածկված կիսադեմին,— էրեխա՜ կուզիմ, Սառե...

Միրոյի տաք շնչից ծխախոտի հոտ պոկվեց ու մնաց Սառեի ռունգներում։ Սառեն աչքերը գոցեց. ամուսնու բերանից էլ ամեն գիշեր ծխախոտի հոտ էր առնում։ Եվ նրա ճոթ աչքերից գունդ արցունքներ կախվեցին։

— Շուն չեմ, իմ միտք շնանալ չէ, Սառե, մեր գերդաստանի մեղք իմ շեփ շլնքին չտանիմ գերեզման...

Հանկարծ Սառեն հիշեց Զորի Միրոյի կախ ընկած ուսն ու թեքված պարանոցը և ապա՝ մազերի ճերմակն ու ճակատի խորընկա կնճիռները։ Եվ Միրոն մի քիչ նման երևաց իրեն ու մի քիչ տարբեր։ Մթան մեջ ավելի առնական թվաց նա՝ ճակատը ավելի լայն ու քար կնճիռներով՝ հոնքերը խիտ էին ու թավ, իսկ փայլատ աչքերից կրակ-խուրձ էր թափում իր աչքերի մեջ, և Սառեն էլի կորցրեց նրա իրական դեմքն ու դիմագծերը։ Իսկ երբ Զորի Միրոն նորից դողդողացրեց շուրթերը՝

— Սառե՜...

Նորից Սառեի ռունգներում մնաց ծխախոտի բույր, և նա ահ ու խորշանք չունեցավ այդ շնչից։

Մի կոշտ ու կոպիտ ծնոտ սղալեց Սառեի ուսն ու լանջը։ Սառեն թև ու ափով թույլ հրեց Միրոյի դեմքը և այս անգամ թև ու ափի վրա սարսուռ զգաց...

Առավոտյան, երբ աչք բացեց Սառեն, Միրոն նստած էր անկողնու մեջ, մոտ իրեն և գլուխը կախ ծխում էր։ Թախիծով էին լցված նրա դեմքի կնճիռները, իսկ հայացքից ժպիտի պես մի բան էր կախված։ Վերմակի ծերպից երկար նայեց, նայեց ու զարմացավ, որ գիշերը կես ու պռատ հիշում ու կորցնում էր այդ դեմքն ու դիմագծերը, և խուլ տնքոցով շուռ եկավ, դեմքն արեց պատի կողմ։

Քարագլուխ գյուղը թշնամացավ Զորի Միրոյի հետ։

— Ժողովուրդ, իմ խոսք միշտ էս չի՞ էղե. Զորի Միրոն վտանգավոր է,— ասաց Արոն։

— Գևոյին կմեղադրեն... Ջահել էր՝ սխալմունք ունեցավ։ Էս քաֆթառ շան արարմունք աշխարհք չի տեսե։

— Խղճմտանք ունեցանք, թե՝ դուռ գոցվավ, ծուխ կտրվավ, իմացանք մարդ էր։ Էնպես ավերվի իր տուն, որ մենք իմանանք։

— Աստված հեռու պահի սուս ու փուս մարդուց։ Դուռ ու երդիկ արե ձորի կողմ, թիկունք՝ մեզ, գեղի պատվի հետ կխաղա։

— Գյուղից վտարել է պետք։

— Կերթա ուրիշ գեղ կկեղտոտե, տուն քշել, ձոր լցնել է պետք...

Ջրբաժինը հող-տնամերձին ջուր չտվեց.

— Դու էս գեղի անդամ չես... Գնա քու Սառեից ջուր ուզե։

Եվ Միրոն գիշերով ջուր գողացավ։

Տնամերձը կալսելու համար բրիգադիրը կամ ու լծկան չտվեց.

— Դու իմ բրիգադի անդամը չես։ Գնա Գևոյի մոտ,— հեգնոտ ժպտաց։ Եվ Միրոն հարևան գյուղը գնաց։

Փորձ արեցին վերցնել տնամերձ-հողը, և Միրոն շրջկենտրոն գնաց.

— Ինձ հող ո՞վ է տվե, թե ու թիկունք չարդեցի, քար դարձրի հող, ի՞նչ իրավունքով կառնին... Թե իմ մեղքն ինչ է։

Գյուղի կանայք չանչ արեցին դեմք ու թիկունքին և չար ու խանդոտ շպրտեցին.

— Քոպակ շուն, քյավթառ...

Քարկոծեցին, տունը հրդեհելու սպառնալիք տվեցին, հալածեցին Զորի Միրոյին։

Ամեն մեկն իր ցավն ու կատաղությունը Միրոյի թեքված գլխին էր թափում։ Իսկ Զորի Միրոն լսում, տանում էր ամեն ինչ ու խաղաղ մնում։

Սառեն ծոցվոր էր...

Հետո գյուղը բաց թողեց Զորի Միրոյին ու բռնեց չոբան Ավգիի աղջկա փեշը, Հեթումի աղջկա, «ծակ գլուխ» Արտոյի կնոջ...

Պանիր, պահեստապետ ու կոլխոզ-շուկա բերեց հասցրեց իրար ու Զորի Միրոյին հիշեց մեկ էլ, երբ... երեխա ունեցավ։

— Էդ քյաֆթառից՝ երեխա՞... Տղա՞...

— Բիճ է։

— Բրիգադիր Գևոյից է։

Զորի Միրոն երեխա ունեցավ։ Տղա էր։

Ականջներում երեխայի ճիչ-պարը, կանգնեց ձորի պռնկին, սիրտն ուզեց մեկը լիներ ու երկա՞ր, երկար զրուցեր հետը, ուզեց՝ ու Հարութ պապին բերեց, կանգնեցրեց կողքը։

«Միրո, քու աչք լուս էղնի»,— ասաց Հարութ պապը, և ինքը ժպտաց, պատասխան տվեց.

«Աչք ու լուսով կենաս, կյանք ունենաս, Հարութ պապ»։

«Միրո, դու իմ գերդաստանի շունչ փրկեցիր։ Գեղ ինչ կխոսան, թող խոսան, քու սիրտ հանգիստ պահե»,— ասաց Հարութ պապը։

«Սառեն փրկեց, չէ՝ ես,— պատասխանեց,— մեր տոհմի արուն աշխարհքի մեջ թողնելու համար Սառեին ենք պարտական»։

Զորի Միրոն ներս մտնելու, Սառեի ճակատը համբուրելու ցանկություն ունեցավ. քայլ արեց, հասավ շեմին, բայց ամաչկոտ ժպտաց, մոտեցավ, նստեց դռան մոտ, իր քարին։ Հանդարտ, հանդարտ նստեց, կեռ քթից կախված ժպիտը զսպեց բեղերի տակ, նստեց՝ ականջ կախեց երեխայի ձայնին ու հաշտ նայեց ձորին։ Զորը լայն-լայն բացեց բերանը, ծիծաղեց, չեչոտ ատամները ցույց տվեց Զորի Միրոյին։

«Անո՞ւշ ձեն ունի»,— մտածեց Միրոն ու չիմացավ՝ մտածե՞ց, թե՞ բառ-բառ ասավ և դրա համար շուրթ շարժեց.

— Անշո՞ւշ ձեն ունի։

«Միրո, ո՞վ»,— ասաց Հարութ պապը։

Եվ Զորի Միրոն ականջ կախեց երեխայի ձայնին՝ լսեց քչփչոց՝ երեխայի ձայնի մասին էր, ականջ կախեց ձորին՝ լո՞ւռ ու խաղաղ էր, աչքը դիպավ երկնքին՝ մաքո՞ւր ու խաղաղ էր, աշխարհին ականջ դրեց՝ հա՞մբոր ու խաղաղ էր և պատասխան տվեց.

«Աշխա՞րհք անուշ ձեն ունի, Հարութ պապ»։

«Միրո, իմ անուն բաշխե քու տղին»։

Զորի Միրոն ցնցվեց։

— Չէ՞,— ասաց բարձրաձայն։

«Միրո, իմ ասլան թոռ, քու պապի անունից ինչո՞ւ ես փախ»,— Հարութ պապը վիրավորվեց։

«Խանդութ տղա բերեց՝ անուն կնքի Հարութ... Նաբեն ազա բերեց՝ անուն կնքի Հարութ... Ո՞ւր են»,— պատասխան տվեց։

«Թե էդպես է, թե դրա համար ես մեղք ունիմ, ասաված թող կնքե քու տղի անուն։ Ես գնացի»,— Հարութ պապը թողեց, հեռացավ։

Զորի Միրոն շփեց ճակատը։

— Ի՞նչ դնիմ տղի անուն,— մտածեց բարձրաձայն։

Հոգու խորքում Հարութ անունն էր էլի և հոգու խորքում՝ Հարութ կնքելու ահը։ Մտածեց, ծխեց, ծխեց, հետո մեկեն ոտքի ելավ, ծա՞նր ու մեկ անցավ գյուղամիջով, բարև տվող չեղավ ու ինքը՝ չտվեց, հասավ գյուղխորհուրդի գրասենյակ, դեմ ու դեմ կանգնեց նախագահին, բարձրաձայն ասաց.

— Էրեխա է ծնվել։ Տղա է։ Տղին ծննդական է պետք։ Գրե՝ Հարությունյան Հարութ Միրոյի։

9

Վերջին անգամ վեց տարի առաջ էր, որ Զորի Միրոն Երևան գնաց։

Կանգնեց ճամփին, ձեռնափայտը ուղեփակոցի պես գետ արավ «Վոլգայի» ճակատին, կանգնեցրեց, ոչխարը տեղավորեց ավտոբուսի ետնամասում, ինքը նստեց վարորդի կողքին, Հարութը՝ իր հետևը։

Մի շաբաթ զոր ու գիշեր միտք էր արել.

«Տղեն կընդունվի՞»։

Մանոթ, միջամտող չկար, չուներ թև ու թիկունք։

«Տղին կընդունի՞ն»։

Եվ միտք էր արել և օգնության կանչել Սառեին.

— Ի՞նչ անենք, Սառե։

(Զորի Միրոն այդպես էլ Սառեին երբեք ու երբեք «կնիկ» չասեց...)։

Ապա հիշեց, որ Երևանում մի երկրացի ունի։ Քսան տարի առաջ, Հարութին կռիվ ճամփելուց, պատահականորեն, հանդիպեցին։ Տուն տարավ իրեն ու Հարութին, հարգանք-պատիվ տվեց, ողջ գիշեր խոսեցին էրգրից։ «Հիմա Գասպար կա՞, չկա՞»։ Այն ժամանակ տղան արարքը տեղ կարգալու էր գնում, մեծ մարդ դարձած կլինի։ Գասպարը կա՞, չկա՞... Թե Գասպարն էլ չլինի, որդին կա՝ ծանոթություն կտա, Հարությունին օգնել-միջամտելու խնդիրք կանի։

Հույսն ու ճարը հայանեց Սառեին ու որդուն։ Սառեն ուրախացավ, որդին ձեռքը թափ տվեց.

— Այ, հայրիկ, մի Երևան, մի խութեցի Գասպար, որտեղի՞ց կգտնես։

— Տուն կիմանամ։

— Հայ-հա՛յ, ոչ քո իմացած Երևանը կա, ոչ խութեցի Գասպարի տունը։

Հույսը չկարեց. Սառեի հետ խորհուրդ արավ, մի ոչխար հոտից ետ գցեց.

— Տանիմ Գասպարին... կամ Գասպարի տղին։

Վարորդը աչքի պոչով նայեց Միրոյի տրեխի պես թելով կապկպած չստերին, ծուռ արդուկված շալվարին, գդակի տեզ ու սավուրի ծաղիկներին, քթի տակ ժպտաց։ Հարությունը կարմրեց... Իսկ Միրոն նայում էր աջ ու ձախ, ճանապարհը, փարձում գտնել տարինե՞ր, տարիներ առաջվա իր անցած, Նարեի հետ՝ դարձած ճանապարհը ու չէր գտնում։

Ուզում էր միտք անել մի ցավի վրա, անցած օր հիշել, բայց «Վոլգան» թոցնում-տանում էր նրա մտքերը, ու Միրոն դժգոհ նայում էր վարորդին.

— Քիչ կամաց չեղնա՞,

— Չէ ու չէ, չեղնա,— Միրոյի լեզվով պատասխանում էր վարորդը։

Այդպես էլ ոչ ճամփա ու ճամփի բոլոր, ոչ հուշ միտ բերեց ու հասավ տեղ։

Խութեցի Գասպարի տունը դրել ես՝ արի գտի։ Փնտրելու ամենևին փորձ էլ չարավ։ Մաքին տխուր բոբոաց, Զորի Միրոն փորձեց որոշել անելիքը։ Ոչինչ չստացվեց. մտքերը կիսատ էին մնում, ինչպես ավտոյի մեջ, անճարությունից ու սրտնեղությունից քիչ էր մնում աչք թացի։ Հա գյուղն ու տունն էր հիշում, ձոր ու ձորաբերան։ Խղճաց և մաքուն, և որդուն։ Մեկ որոշեց դառնա երկուսին էլ տանի տուն, հետո միտք բերեց ականջն ընկածը.

— Զորի Միրոյի տղեն կուզե ինժենե՞ր դառնա, կիմանա՞ք, Զորի... Միրոյի... տղեն...

Շրջվեց, նայեց Հարութին. հույսը միայն նա էր մնացել։

«Թե չընդունվիս, հարամ էղնի քու ծծած կաթ, Հարութ,— ասաց մտքում,— Զորի Միրոյի տղա»։

Մի ցայտաղբյուրի կողքով անցնելիս աչքն ընկավ, որ ցայտաղբյուրի շուրջբոլոր քար են շարում, կպցնում կանաչ։ Քար ու կանաչը ճիշտ իրենց ձորափին եղածից էր. հարազատություն զգաց, ոտքը կախ գցեց։ Կոշտ ու փշոտ քարերի վրա մամուռ կար ու բազմազույն քարաքոս։ Քարաչեջերի մեջ՝ պտղունց հող ու հողի մեջ՝ ծաղիկ ու ծիլ։

«Էս քար ու ծիլ չոլից բերել ի՞նչ նպատակով է,— միտք արավ ու չկռահեց,— էստեղ կապրի՞ն»։

Մտահան արեց իր վիճակը, մտածեց քաղաք բերած քար ու ծիլի մասին.

«Կապրի՞ն»։

Ախր, քարերն իրենց գույնը, մամուռն ու քոսը, ծաղիկն ու ծիլը առել են հատուկ արևելյսից և գիշերվանից իր նման, և քամուց ու կարկուտից, աստղերն ուրիշ ձևի են պլպլացել այդ քարերի վրա, լուսինն ուրիշ լույս է թափել, կարկուտից ծեծվել են...

«Քաղաք կարկուտ կգա՞»։

Անձրևի տակ են մնացել, տո, թե կուզեք ճիշտն իմանալ, այծ ու ոչխարի պճեղ էլ պիտի դիպնի այդ քարերին, հովվի կոպալն էլ, որ չկորցնեն գույն ու հոտ, նախշ ու ծիլ...

«Չէ՛, չեն ապրի...»,— ափսոսաց Միրոն։

Կդառնան, ա՛յ, մայթեզրի այս որձաքարերի պես տաշուկոկ։ Հետո շուռ եկավ, նայեց Հարութին։ Հարութը, ձեռքերը գրպանում, կապվել էր մայթի հետ։ Անցնող ու դարձող ուշադիր նայում էին իրեն ու մաքուն, իսկ Հարութին ուշք դարձնող չկար։ Ինքը չէ, Հարութը ահագի՜ն նման էր մայթով անցնողներին։ Ոչ ոք չէր ասի, թե կանաչի վրա ծալապատիկ նստած գյուղացին ոչխարի հետ քաղաք է բերել նաև մի Հարութ որդի։ Միրոյին դուր չեկավ Հարութի կանգնելու ձևը և թվաց նրան, թե տղայի դեմքը երեկվա պես կարմիր չէ...

— Քեռի, ոչխարը ծախո՞ւ է։

— Չէ, ջանը՛մ,— սրտնեղությունից անծանոթին էլ բաժին հասավ։ Հետո հիշեց, որ տղային փող է պետք և իրարանցումով ետ կանչեց։

— Քանի՞ս ես ասում։

Զորի Միրոն առուծախ չէր արել։

— Ինչ կտաս, տուր։

Հարութը վրա հասավ, աչքունքով հասկացրեց հորը, որ լռի, սակարկեց, վաճառեց ոչխարը։

Գյուղը դրնգաց։

— Զորի Միրոյի տղեն ինստիտուտ է ընդունվե։

Ուսուցիչներն իրենցն ասացին։

— Այդպես էլ պետք է լիներ։

Ուրիշները ստվեր ձգեցին նրանց կարծիքին.

— Կաշառքով է. Միրոն ոչխար տարավ, փարա է տվե. իմացող կա։

Միրոն համբուրեց որդու ճակատը, հավ մորթեց և այդ օրը իրիկնապահին գյուղամեջ գնաց։ Պատի տակ կողք-կողքի դրված քարերի վերջում քար դրեց, նստեց, լուռ ծխեց։

— Միրո, քու տղեն ընդունվա՞վ։

— Ընդունվավ, փառք աստծու։

— Փառք աստծուն խոսք է, ջա՛նըմ, էսօր փառք մարդկանց կպատկանի, էն մարդկանց, որ մենք ծանոթ չենք, չունինք՝ ծանոթ չենք ու մեր էրեխեք կմնան առանց ընդունվել, կդառնան մեզ պես շալակտար,— «ճոռոթած բերան» Պետրոսը տրտնջաց, խայթեց Միրոյին։

Միրոն չնայեց, չպատասխանեց։

— Է՛, էհ, Պետրոս,— շարունակեց Արոն,— կմտածիմ, կմտածիմ, աշխարհեն կելնիմ. մարդ կա սուս ու փուս վանքի հավեր կուտե ու մա՛ռդ չի իմանա։

Միրոն չնայեց, չպատասխանեց։ Նստեց՝ ծխեց։ Մնաց՝ ծխեց։ Ու

երբ տուն եկավ, գյուղի և աշխարհի չար ու բարուց ահագի՜ն պատմություն արավ Սառեին։

Ու երբ Հարությը ավարտելու վրա էր, Զորի Միրոն խորհուրդ արեց Սառեի հետ.

— Էգուց, էլօր տղեն կավարտե. հարս էս տան մե՞ջ բերինք։

Տվին-առան, ոչխար ու գառի հաշիվն արին, հորթը պահեցին հարսանիքի համար, կովը քաշեցին մեջ ու... Միրոն քամվեց, մնաց։

Բայց հնի կողքին կանգնեց նոր տուն՝ ճերմակ տանիքով, թիկունքը ձորն արած, լուսամուտ ու դուռ՝ դեմ գյուղին։

Նոր տուն տեղափոխվելու առաջին երեկոյան Միրոն նստեց պատշգամբում, նայեց գյուղի լույսերին, միտք դրեց իր տան ճակատին էլ կպցնել լամպ ու միտք՝ էլի ուրիշ բաների վրա։ Հետո լույսերով կամեցավ որոշել տնատերերին։ Որոշեց, չորոշեց։ Կիսամութի մեջ քիչ ու մի՛չ ժպիտ թառեց դեմքին, իսկ ավելի շատ՝ մռայլություն։ Ու չիմացավ, թե ինչպես իրեն գտավ հին դռան քով, իր քարին նստած։

Մինչև լուսաբաց չքնեց։ Նոր տան լայն պատուհաններից փողոց ու ավտոյի լույսերը մտնում էին ներս, խուտուտ տալիս աչքերը։ Եվ թևին տված, գնացած օրերը դարձան, ետ եկան...

Գործվարքում իրենց տունը պատուհան չուներ, երդիկ էր։ Ամռան ամիսներին կտուրին էր պառկում, ականջ դնում Ընկուզասարի խշշոցին, Մասրաձորից՝ գիշերհավքի ձայնին, լսում, լսում էր գիշերվա զրույցը ու սիրտը լցվում էր. բան ասել էր ուզում, մի սիրուն, լավ բան, բայց չգիտեր թե՝ ինչ, չէր գտնում ու երգ էր ասում.

«Գեղի բոլոր մանդր փուշ է,
Գեղի միչի յարն անուշ է...
Ա՜խ...»։

Սրտից պոկված ախը դարձնում էր երգի մի տողն ու հնչյունը ու շարունակում.

«Տնավե՜ր,
Դու հակիր իս կարմիր սուլեր,
Թելն էրթանք շարաթ մի, էրկու մնանք չուներ...»։

Առավոտյան խանդությը նորոտ կանգնում էր դիմացը.

— Գիշեր ո՞ւմ կկանչեր։

— Ես մարդո՞ւ կանչի։

— Հա՜... Էս գեղի մեջ քու աչք դրած ո՞վ է... խաղով կկանչեր։

— Եկ խանդուք,— ծիծաղում էր ինքը,— խաղ ամենի համար խաղ է։

— Չէ՞, խաղի մեջ դու ա՞խ կքաշեր։

— Խելառ, ախ նմանապես խաղ է, էդ խաղի մեջ ա՞խ կա...

Վաղուց չէր հիշել այդ երգը։ Հիշեց, ասաց անձայն, ապա՝ շուրթ-շարժումով, հետո աչքերը լցվեցին, սիրտն ուզեց ձայնարկու երգել, բայց հայացքը դիպավ Սառեին ու ղրթալով կուլ տվեց երգը։

Սառեի գեմքը ճմրթված էր...

«Ինչ շո՞ւտ ծերացավ Սառեն»,— մտածեց Միրոն։

Սառեի ճակատին քարացել էր անմարմին մրմունջ, բերանի երկկողմանի ծալք-փակագծերում ծռմռված լաց կար։ Իր ու Սառեի ամուսնական կյանքն էլ վաղո՞ւց հուշ էր դարձել։ Եվ այդ գիշեր էլի ու էլի միտք բերեց ու տնքաց.

«Էրկու շաբաթ էրիկ էգա Սառեի համար...»։

10

Միրոն ջրամբարի ու ջրբաժնի մոտից էր գալիս. տնամերձի համար ջուր էր խնդրել, մերժվել էր ու հիմա խառով անցնում էր գրասենյակի դռնով։

— Միրո, քու հարսին տեսա՞ր։

Հարսի՞ն... Ի՞նչ հարս։ Ձեռք առնելու մի՞տք ունեն։ Կանգ տվեց, նայեց լուռ ու խոժոռ։

— Միրո, ասված վկա, հանաք չէ. Հարութ շիմշատ մի աղջկա հետ գնաց տուն,— Պետրոսի ժպիտը հասավ մինչև ականջներն ու կախվեց իլիկից կտրված թելի պես։ Չէ՞, կատակ չէր. գրասենյակի դռանը հավաքվածներն էլ հաստատեցին. մեկը՝ Պետրոսի նման խճճված ժպիտով, մեկը՝ լուրջ, աչքերով, գլխի շարժումով։

Եվ աչք ու երեսով հավաքվածների դեմ մնալն էր դժվար, և ոտք գետնից պոկել, գնալը. իր հարկի տակ հարս մտնելու մասին ճոռթած բերան Պետրոսի՞ց պիտի իմանար... «Հարութ, անիծված Հարութ»։

Խառնված քայլերով կանգնեց շեմին։ Սառեն ձեռքերը կրծքին ծալած, վիզը թեքած, նայում էր։ Մինչև Միրոյի գալը հայացքով շարունակել էր՝ ծածկել աղջկա փեշերն ու ծնկները, նույն ծաղկավոր շթից մի թզաչափ թև էր դրել զգեստին, ծածկել թևատակը, մի պատառ կտրել էր ոտնամանների կրունկից, կրունկը մի քիչ հատացրել, հոնքերից պակասած մազերը վերադարձրել, սրբել շրթնաներկը, եղունգները կտրել

էր... և հիմա Սառեի հայացքը սանրի ատամների պես խճճվել-մնացել էր աղջկա գզգզված սև մազերի մեջ։

Հարութը ծխում ու քայլում էր սենյակում։ Ծխի օղակները կոտրվում, ծռմռվում, հարցական նշաններ էին դառնում օճորքի տակ, դառնում ծխացող թել-հայացք, հետո՝ տան թիկունքի ատամաթափ ձորի միջօրեի մշուշ։ Եվ կում ծուխը փչելով մոտեցավ հորը։

— Հայրիկ, բարև։

Միրոն աջը որդու մեկնած ձեռքին դիպցրեց, աչքերը՝ զուսպ նրսատած, ծնկներն իրար բերած աղջկան։ Թրթռուն ժպիտ կար աղջկա աչքերի մեջ։ Եվ հանկարծ Զորի Միրոյին թվաց, թե բաց պատուհանից, ինչպես երբեմն պատահում էր, ծիծեռնակը էլի ներս է մտել, թիռ է անում։ Այդպիսի պահերին հայացքը կապում էր ծիծեռնակի պոչին, ժպտում մանուկ օրերի ջինջ ժպիտով և ափսոսում, որ մի փետուր կամ շյուղ թողած, ծիծեռնակը նորից գնում էր։ Աղջկա ժպտախառն հայացքը սահում էր Զորի Միրոյի ոտ ու գլխին։ Հետաքրքրությամբ բացված աչքերից Միրոն աղբյուրի զովություն առավ և սարերի երգ էր օճորքի տակ, մամոռոտ խոնավություն ու կանաչ, թավալգլոր ճամփա։ Միրոյին թվաց, թե հենց նոր տնամերձը ջրել, ոտք էր դրել ներս և ոտքերը ցեխոտ ու թաց են, և տունը հով ու զով է, չկա դրսի տապից, ոչ ճանճ ու ոչ մլակ։ Հիմա կմոռվի թախտին, աչք կփակի ու կլողա կապույտ երազների մեջ։ Եվ նրա բաց շուրթերի անկյուններում, դեմքի մացառների մեջ բույն հյուսեց մի ժպիտ։

— Հայրիկ, ծանոթացիր...

Որդու ձայնն ընկա՞վ, չընկա՞վ ականջը, կամ ո՞վ էր Զորի Միրոյին ասել՝ ծանոթացիր, բա Միրոն չի՞ իմանում, թե ինչ պիտի անի. ափերը շրխկ-շրխկ բերեց իրար, ճաքերի միջից հողն ու տոթը թափ տվեց, լոք արավ։

Հետո, երբ մի փոքր ձեռք սուզեց ափերի մեջ ու խարտոցեց, մի ճերմակ ճակատի վրա թփրտացրեց դեղնած բեղի կախ ընկած թևերը, կոշտ ու կոպիտ շփեց մազերը, առանց իմանալու, որ աղջկա հասակից մի թիզ ծալվում է, հոգում վրնջաց սանձակտոր մի ձի՝ կրակ-քաջով կայծկլտացրեց հորիզոնը։ Եվ Զորի Միրոյի սիրտն ուզեց կոխ բռնել որդի Հարութի հետ ու, չիմացավ ինչու՝ ապտակեց, սիրտն ուզեց քահքահ ծիծաղել, համբուրել Սառեին, բայց ժպտաց միայն, սիրտն ուզեց մասխարություն անել և, չիմացավ ինչու, ծուռ ցուցամատը զգույշ դիպցրեց աղջկա բաց ուսին ու ասաց.

— Գառ, քու շորի կես ո՞ւր է...

Կյանքում առաջին անգամ Սառեն մտածեց սեղան բացելու չափ ու ձևի մասին։ Հացը դրեց կենտրոնում, ապա քիչ կողմ տարավ։ Ափսեները պոնկե պռունկ փլավով լցրեց, պակասեցրեց մի քիչ, մի քիչ ավելացրեց ու աչքի պոչով նայեց Մարինեին։ Աղջիկը և հայացքով, և շուրթերով պարզ ու շիտակ ժպտում էր։ Սառեն ավելի շփոթվեց։ Անակնկալի էր եկել. չգիտեր Մարինեն իր ի՞նչն է՝ քաղաքից եկած հյո՞ւրը, Հարութի նշանա՞ծը, իր հա՞րսը։ Չգիտեր։

Ու հիմա լարված ու կաշկանդված սեղան է բացում։ Ուրա՞խ է, թե տխուր։ Գիշեր մթնով, ցերեկ արևով մտածել, երազել էր հարս ու թոռան մասին. էլ ի՞նչ, ուրիշ ինչի՞ պետք է սպասեր։ Մտքում հարսի պատկերն ու անունն էլ կար, մտքով հարսնատես էր գնացել, գնացել, առել խոսք ու պայման, տուն բերելու համար որոշել օր. աշնանային՝ գունավոր, նուրբ ու դուրեկան արևով...

Հարսը հարսնություն կաներ, իր հարսնության պես կիսատ չէր մնա։

Հարսը կնություն կաներ, իր կնության պես կիսատ չէր մնա։

Հարսը մայրություն կաներ, իր պես միաբարուր չէր մնա։

Հարսը... Ու երազների կապույտ շարոց՝ կարմրայտ մի աղջկա մասին, կարմրայտ մի աղջկա համար, որը նաև իր մասին էր ու իր համար։

Ու երազների կապույտ շարոցից բացակա այն, ինչ այդ պահին կար՝ ձեռք ու գդալի դող, ոտք ու փեշի շփոթմունք՝ իր հարկի տակ թառած մի անսքող ժպիտից։

Հավը սեղանին դնելուց առաջ մտածեց. կտոր-կտո՞ր անի, թե՞... Անցյալ տարի, երբ Հարութը ընկերների հետ եկել էր, ինչպե՞ս վարվեց... Դե, այն ժամանակ սեղան բացելու ձևի մասին չէր մտածում, ուրախ տղաներ էին՝ հենց ոտի վրա խլխլեցին, կերան։

Միրոն պատառաքաղը հրեց, ձեռքն առավ գդալը։ Լրջացել էր. մտքում հարսանիքի պատրաստություն էր տեսնում, հաշիվ անում ծախս ու մախսի։

Սառեն ճիգով տիրապետում էր պատառաքաղը, թաքուն հետևում Մարինեի շարժումներին։ Մտածում էր, թե՝ քաշվելով կմոտենա հացին։ Չէ։ Մտածում էր, թե՝ ջուր խմելուց երեսը շուռ կտա։ Չէ։ Հարութը հավի միս էր տալիս, Մարինեն գլուխը ժպտալով շարժում էր ու ընդունում։

Երբեք Մարինեն այդքան մոտ ու հարազատ չէր եղել Հարութին, այդքան գեղեցիկ ու դուրեկան չէր եղել։ Հարութին թվում էր, թե իրենից կայծեր են պոկվում, ինչպես քարայրից հանված երկաթից ու գնում Մարինեի դանդաղ շարժվող շուրթերը։ Մտքերը տենդորեն խուժում էին և լեզուն հազիվ էր պահում ատամների տակ... «Մարինե, երկու ամիս

հետո կավարտեմ։ Կաշխատենք միասին և միասին հաշվիչ մեքենա կպատրաստենք, որ Զղնի ձորից հավաքի Զորի Միրոյի խանդութ կնոջ ճիչը, երկրի կնճռոտ ճամփաներից՝ Զորի Միրոյի թափառիկ ոտնահետքերը, մեկ-մեկ հավաքի աշխարհի բոլոր պայթյունները, բոլոր ճիչերը...»։

— Հարութ, քազաքից քանի՞ շունչ կբերիս։

— Ո՞ւր, հայրիկ։

— Քո հարսանիքին։

— Հարսանիքի՞ն,— Հարութը ժպտում է,— ոչ մի շունչ էլ չեմ բերի,— ժպտում է,— մենք արդեն ամուսնացած ենք։

— Ամուսնացա՞ծ,— զարմացավ Միրոն։

— Հա՛, հայրիկ,— Հարութը նորից ժպտաց։

— Ամուսնացա՞ծ-ամուսնացած,— Միրոն այդպես էլ չէր ուզում հավատալ,— ո՞ւր կապրիք, հանրակացարա՞ն։

Հարութը լրջացավ, աչքի պոչով նայեց Մարինեին։ Մարինեն մի քիչ շփոթված էր, ավելի շուտ վիրավորված, որ «ո՞ւր կապրիք» հարցին Հարութը դժվարանում է պատասխանել։

— Առայժմ Մարինեենց տանն ենք... Ավարտեմ, տուն կվարձեմ։

Միրոյի ու Սառեի հայացքները դիպան իրար ու փշրվեցին։ Եվ մի ակնթարթի հետ ջարդուփշուր եղավ այնքա՜ն պայման ու երազ։ Չէ՞, Հարութը իրենցից պոկված մի ռունգ շունչ է, որ իրենցն էր, քանի դեռ չէին շնչել։ Շուրթ շարժեցին՝ գնա՜ց. բաց երդիկից, փակ դուռ ու պատուհանների ճեղքերից դուրս ելավ. գնաց։ Կհալվի՞։ Բզիկ-բզիկ կդառնա։ Արևին ու լուսնին կհասնի՞։ Ջո՞րը կլցվի։ Կբարձրանա սա՞ր... Ի՞նչ կլինի... Ի՞նչ իմանան, այլևս՝ տերը չեն։ Միայն կում շունչը մի պահ կյանք տվեց իրենց ու լցրեց տիեզերքը, միայն երկրի ու երկնի միջև եղած այս դատարկ խոռոչը պակասեց մի հյուլեով։ Այսքանը։

Եվ մի աչքթարթումով հասկացան, որ Հարութն արդեն քաղաքից եկողը չէ։ Ո՞ւմ համար թափեցին քրտինք, տուն շինեցին, քարեր տեղահան արեցին, գլորեցին ձորը՝ տնկեցին ծառ, և հիմա գլուխ են ջարդում, անում խնդիրք ու պաղատանք, պուտ ջուր բերելու ծառ ու հողի համար։ Պատառաքաղ են գնում, պահում ալյուրի մեջ, որ մինչև Հարութի ու հարսի գալը չժանգոտվի, մտածում են կահկարասի գնելու, օրորոց ունենալու մասին... Ծառերը թոռների անուններն ունեն։ Շատ են, արդեն հով են անում իրար, մեկը մյուսի վրա գնացող քամուն դիմադիր է, քարերը ճեղքել, արմատները խորացրել են, գնացել, ու երբ ուշանում է ջուրը, գետնի տակից խոնավություն են առնում, դիմանում, մնում կանաչ։ Հիմա Հարութը եկավ ու պիտի գնա։ Գալն ու գնալը՝ հյուրի պես։

Բա ինչ, թե Հարութն ու էս սիրուն սատանան հյուր չլինեին... հյուր չլինեին, այսօր հավ կմորթվե՞ր...

— Չէ՛, էսպես չի էղնի...

Ոչ ոքի չէ, իր համար խոսեց Զորի Միրոն։

— Ի՞նչը, հայրիկ։

Ինչը... Այդքանը բառ-բառ ասե՞լ կլինի, հասկացիր, էլի։ Միրոն երկար ու խոր նայեց որդուն։ Նրա կլոր ու կծկված աչքերն էին, նրա մուրհակ հայացքը։ Չէ, Հարութ պապի աչքերն էին, նրա մուրհակ հայացքը։ Չէ, Միրոյի ապուպապի աչքերն էին, նրա մուրհակ հայացքը։ Չէ, չէ, մի նախամարդու կլոր ու կայծկլտացող աչքերն էին, մի նախամարդու վայրատենդ հայացք...

— Ի՞նչը, հայրիկ, ինչպես կլինի։

— Էս տան ու դռան դրությունն։

— Կվաճառենք, կգնանք քաղաք, գնո՞ղ չկա։

Միրոն ցավ զգաց ուս ու պարանոցի։

— Էս տան տեր Զորի Միրոն է, ուրիշ մարդ չէ՛, Զորի Միրո՛ն է, կիմանա՞ս։

Հարութը լռեց։ Բայց... բայց հայրը, ախար, սխալ է։

— Ես անելիք չունեմ այստեղ, հայրիկ, իմ տեղն ուրիշ է։

Զորի Միրոն ծխի միջից տեսավ որդու դեմքը։

— Ճստված քու հետ, քու տեղին, ես էս դուռ ու շեմին քար կդառնամ։

Իրիկունը քարի պես մտավ օճորքի տակ, քարի պես գլորվեց ու քարդղրդոցից Սառեն հանկարծ գլխի ընկավ, որ շատ բան փոխվեց ձերդաստանի կյանքում։ Միանգամից հասկացավ ու հավատաց, որ այս մոմե մատները իր հարսինն են, այս թափանցիկ կոպերի տակ թպրտացող աչքերը իր հարսինն են։ Չգիտես ինչու, մտածեց, որ Հարութը այդ մատներն էլ համբուրած կլինի, այդ աչքերն էլ և այսուհետև այս բաց ու ճերմակ ուսերին քսվելուց հետո իրեն կհասնի Հարութի հայացքը։ Միայն այդպես։ Եվ հոգու խորքում խանդի պես մի բան խլրտաց... Ապա Մարինեի կոպերի վրա նկատեց երկու կապույտ, բարակ թել՝ ուր որ է կպայթեն, և այդ թպրտացող թել-կյանքի վրա գտավ Հարութի հայացքը ու մտերիմ մի բան զգաց Մարինեի նկատմամբ։ Եվ նայեց նրան այնպես, ինչպես սկեսուրը կնայի հարսին, նայեց ու խուզարկու հայացքը գոհացած ետ եկավ, փարվեց որդուն։ Էլի նայեց հարսի կիսաբաց լանջին և այս անգամ կրծքի տակ այլք-այլք փշրվեց մի տաքություն։

խանդ էր՝ պահ առաջվանից տարբեր, խանդ էր՝ Հարութի խանդի նման, խանդ էր՝ սկեսրոջ։

— Հարս,— անհամբեր ձայն հանեց. միտք ուներ շորը փոխելու խորհուրդ տար։ Միայն Մարինեն չէ, բոլորը նայեցին Սառեին ու իրար. «Հարս» բառ էին լսել։ Մարինեի աչքերը բռնվեցին հանկարծահաս ժպիտով, և Սառեն չուզեց ջրցան անել նրա սև աչքերի կրակը ու խոսքը ծռեց,— կսովորի՞ս։

— Ավարտել եմ,— տաք ժպտաց,— աշխատում եմ արդեն։

— Ի՞նչ գործի ես։

— Իմ գործը հաշվիչ մեքենաների հետ է։

Ամպ նստեց Սառեի դեմքին։ «Հաշվիչ» բառը կորավ, մնաց՝ «մեքենան»։ Այդ ի՞նչ մեքենա է... Դե, մեքենա, էլի... Հարսին ու այդ ինչ-որ մեքենային պատկերացրեց կողք-կողքի, հետո հարս ու մեքենայի մոտ՝ էլի մարդիկ... Այր մարդիկ։

Երբ Անուշավանը կռիվ գնաց, ինքը՝ կոլտնտեսության կալ, բրիգադիր Գևոն «մաշնի» վրա գործի նշանակեց... Գևոն, շուն, ավազակ... Գնում-գալիս ժպտում էր։ Սկզբում ինքը խուսափում էր, ապա ժպիտները սովորական դարձան, Հետո... հետո...

Ինչպե՞ս պատահեց, ինքն էլ չիմացավ...

Եկավ տուն, սկեսրոջից թաքուն լաց եղավ, ծունկ իջավ Անուշավանի նկարի առջև, էլ չսխալվելու երդում տվեց... Որոշեց չգնալ կալ, էլի գնաց, որոշեց չնայել Գևոյի երեսին, էլի նայեց... էլի սխալվեց։ Ու հա՞ սխալվեց։ Էլի լաց չէր լինում, նկարի առաջ ծունկի չէր գալիս...

Ախր, ինչպես պատահեց։ Անուշավանին հիմա էլ է սիրում, չդարձավ եկավ, հիմա էլ գա՝ կգնա, կընկնի ոտքերը, կհամբուրի, կլվա արցունքներով ու...

Էլի ետ կգա Զորի Միրոյի տունը։

Նորից նայեց Մարինեի կիսաբաց լանջին. այդպես և բաց թև ու թևատակով պատկերացրեց նրան մի «մաշնի» մոտ կանգնած, կողքին մեկը՝ դեմքին Գևոյի ժպիտից, և նորից կրծքի տակ բախվեցին տաք ալիքները, եփ եկան։

— Հարս,— ձայն հանեց վախվորուկ ու ցածրաձայն,— գիշե՞ր կաշխատիս, թե՞ ցերեկ։

— Երբեմն պատահում է նաև երեկոներն ենք աշխատում։

Սառեն մտածեց, որ հարսի դեմքից անպակաս է ժպիտը և դրան Գևոյի ժպիտով պատասխանողներ շատ կլինեն։ Ու փոթորկվեց հոգին, այնպես ցանկացավ Գևոն դեմը կանգնած լիներ՝ ապտակեր, թքեր աչքերի մեջ, Միրոյի ձեռնափայտը առներ, խփեր գլխին, շանսատակ աներ։

Կոպերը տաքացան՝ չպահեց։ Դողդողալով ելավ տեղից, մոտեցավ Մարինեին, գրկեց նրա բաց ուսերը, սեղմվեց նրան։

— Հա՛րս...

Ուզեց բան ասել ու չիմացավ թե՝ ինչ։

Եվ ոչ ոք չիմացավ, թե ինչու էր լալիս Սառեն։ Ինքն էլ չգիտեր...

Հարությը գլուխն առավ ափերի մեջ, հետո մատիտն առավ ու սկսեց խզմզել։ Խզմզեց, խզմզեց ու ստացվեց մի ձոր, ավելի խորընկա, քան իրենց տան Թիկունքի ձորն է։ Ձորի մի ափում գծագրվեցին հայրն ու մայրը, մյուսում՝ ինքն ու Մարինեն։

Կետգծեր էին սկսվում հոր մոտից, գալիս դեպի իրեն, չէին հասնում՝ անդունդի վրա թեքվում, ընկնում էին ձորը։

Կետգծեր էին սկսվում մոր մոտից, գալիս Մարինեի կողմ, չէին հասնում՝ անդունդի վրա թեքվում, ընկնում էին ձորը։

Կետգծեր էին սկսվում իրենից, գնում դեպի հայրը, չէին հասնում՝ թափվում էին ձորը։

Կետգծեր էին սկսվում Մարինեից, գնում դեպի մայրը, չէին հասնում՝ թափվում էին ձորը։

Իսկ ձորի հատակում բոլորը կետգծերը խառնվում էին իրար և դառնում մի պտղունց հող։

Ձորի Միրոն ելավ դուրս։ Գիշերը մո՛ւթ, մութ էր։ Անցավ ծառերի մոտով, ոտքերի տակ խշխշացին չորացած-թափված տերևները, փոշին ու խանձված օդը խուտուտ տվեցին պնչները, և ականջն ընկավ ծառերի գանգատը.

«Ջո՛ւր»։

— Դուք տե՛ր ունիք,— պատասխան տվեց,— Ձորի Միրոն մնռած չէ՞։

«Գիշեր կես էղավ՝ ջուր կկապիմ-կբերիմ»,— որոշեց։

— Կգողանամ՝ կբերի՛մ,— կրկնեց բարձրաձայն։

Հետո գրպանից լրագրի պատառ հանեց, հանեց մի գունդ ծխախոտ՝ քիչ էր՝ մեկն էլ ավելացրեց, պատրաստեց ջղարա, գնաց նստեց ձորին նայող քողտիկի դռան մոտ, իր քարին, լուցկու շրխկոցով խանձեց գիշերվա դեմքը և ասաց ձորին.

— Մնացինք ես ու դու։

ԿԱԾԱՆԻ ՋԱՄՓՈՐԴՆԵՐ

1

Ուրեմն, գյուղը Զորի Միրոյի հիմք դրած Քարագլուխն է ու քառասունհինգ տարեկան։

Զոր կա Քարագլխի և՛ աջ, և՛ ձախ կողմերում, իսկ դիմացը կիրճն է։ Զորերից այն կողմ սարեր կան՝ և աջ, և ձախ։ Չէ՛, Քարագլուխը կշեռք է, նժարները քարերով բարձած, և գյուղի զրուցատեղի ուռենիների ճյուղախառնումով նժարները եկել են իրար։

Գարնանից—ձմեռնամուտ Քարագլխի կենտրոնի աղբյուրի գոգ մեջ գյուղի զրույցն է կաթկթում, պղպջում ու պայթում պղպջակների հետ և գարնանից—ձմեռնամուտ ուռիները գլուխներն են օրորում զրույցի վրա։ Թագավորներ են ընկնում գահերից, բարձրանում նորերը։ Խերն ու շառն առած-գնացած թագավորները հողի տակ խաղաղ չեն մնում։ Բանակներ են արձակվում, կազմվում նորերը՝ պետական սահմաններ խախտում, և փոխվում է աշխարհի քարտեզը։ Աշխարհներ են հայտնագործվում աշխարհներից դուրս և կորչում էլի։ Գյուղը, իր քարերը թողած, քոչում է վարի նորաստեղծ սովխոզը, դառնում այգու տեր, դառնում ետ դալիս և ամո՞ւր նստում իր քարի գլխին։ Է՛, աղբյուրի գոգ մեջ Երկիր մոլորակը կաթ ջրի պես խեղդվում է ու էլի շունչ առնում։

Բայց ամենից շատ հուշեր են մանվում ու դառնում ծուխ։ Հա՛, ոմեն աշատը՝ հուշեր։ Գյուղի կենտրոնի աղբյուրի մոտ, ուռենիների տակ նստոտածներից մեկը մշեցի Առաքելն է (թե մերժել է բրիգադիր Հակոբին. «Թող արա, ջանը՛մ, ես մեռած մարդ եմ»,— ու ծխախոտ ջրելու չի գնացել)։ Փսանքցի Ասատուրն է (թե հորթը ձորափ չի տարել)։ Մեկը խնուսցի Սամվելն է, ալաշկերտցի Նշանը, դաշտադեմցի Սերոբը, մեկը... Ժամանակին սայլապան Արոն պարզել է. «Գիշեր Միխիկի մեր հաշվեց. էս մեր Քարագլուխ գեղի մեջ մեր էրգրի քսան ու մեկ գեղից գաղթական կա»։

Աղբյուրի մոտ, ուռենիների տակ նստոտածներից մեկը ճախրկանցի Նհոն է, գյուղի ամենատարեցը։

Հիմա, երբ գրում եմ՝ տարեթիվը 65-ն է, իսկ երեկ Նհո պապն ասաց.

— Էս թվի մեջ իմ տարիք կկլորի-կդառնա մեկ դար։ Ուղիղ մեջտեղից հինգ տարին հանե-ձգե ջուր, մնացող՝ իմն է։

Երբ Նհոն Արաքսի աջ կողմում էր ու՝ հիսուն տարեկան, դուռը ծխնեհան արեցին, երդիկը՝ գոց, հինգ տարի տնանկ մնաց, և այդ տարիները չի հաշվում։

— Էդ տարիք իմ թափառական ոտաց տակ մնացին։

Թիվ քսանի թնջուկ օրերից մի օր Նհոն կանգ տվեց մառախուղ ու տոթով լցված կիրճում, գործվարքցի Միրոյի կողքին, Միրոյի կողքին նոր բույն դրեց «մեջ կազերուն», երդիկ բացեց «մեջ ամպերուն» և արդեն քառասուն-քառասունհինգ տարի ծխատեր է, բայց հիմա-հիմա էլ շրջանում նրան ասում են գաղթական։

— Կարդացող մարդ ես, երկինք-գետին կքննիս, ասա տեսնեմ. մինչև ե՞րբ մեզ գաղթական ասին,— Նհո պապը խոսում է, աչքը թոռան աչքերի մեջ, ձայնը բամբ, հայացքը՝ հարյուրամյա արծվի։

Քարագլխեցի մեծերը, որ իրենց սարերն ու ձորերը, նաև ապուպապերի ծլած շիրմաքարերը մի հորիզոն այն կողմ են թողել, հիմա անուններ են ժառանգում։ Անուններ՝ Դավիթ, Մհեր, Նահապետ, Սասունիկ, Խևիկ... Եվ նստոտում են գյուղի կենտրոնի աղբյուրի մոտ, ուռենիների տակ, զրուցում են, բայց ավելի շատ դեղձի կորիզից պատրաստած թազբեհի հատիկներով կրակում հիշողությունների վրա։ Հիշողությունները՝ Սիփանա սարից, Ծովասարից, Անդոկի ձորից, Սև սարի անտառից... այն կողմ թողած ջահելությունից։ Հիշողությունները գառնում են ծուխ, և գյուղի հայացքը դուրս է գալիս կիրճից, ոչ մի սար չի փակում հորիզոնը, գնում է,— անցնում Արաքսն ու եղկո՜ւկ-եղկուկ թափվում լեռնապարի վրա, որից այն կողմ եղինջոտ գյուղեր կան՝ ամեն գյուղի գլխին դաղրադարձ մի ջրաղացքար։

— Մեր ծառի սարյակ էսօր էկավ, իր բուն կվերանորոգե,— ասում է Ասատուր քեռին։

— Սարինգյուլի կատուն բուն քանդող է, Ասատուր, քու աչք բնին պահե,— զգուշացնում է Արոն։

— Յա՜, դե ասա էրեխեքին խրատ տամ՝ կորցնեն։

— Էրգիր մի կատու ունենք, վայրի էր։ Էդ կատուն...

Եվ հիշողությունները հայտնվում են ու, մի քանի բոպե հետո, կատվին փոխարինում է արջը։

Նախկին բրիգադիր Գևոն գալիս իզուր ժպտում է, բարձրաձայն

բարևում։ Նհո պապից պատասխան չի սպասում, Ասատուրը տմբտմբացնում է գլուխը, Արոն գուցե շուրթ էլ շարժի, բայց Գևոն քաղաքավարի բարևում է, միանգամից սկսում.

— Այսօրը գնացին Կոպեի երկու հեկտարանոցը ցանելու։

Գևոն հենց խելքի է եկել, հրաժարվել է գյուղի բարբառից, խոսում է գրականով (Արոն ասում է՝ գրաբար), բայց մարդն ընկել է ծայրահեղության մեջ. գյուղի բարբառում որոշիչ հոդերը լրիվ բացակա են, իսկ Գևոն՝ օգտագործում է նաև այնտեղ, ուր պետք չէ։

— Մինչև իրիկունը կվերջացնեն,— շարունակում է և սպասում արձագանքի։ Չկա։ Նհոն ծխամորճն է լցնում, Արոն փիլիսոփայում է.

— Է՛, է՛հ, աշխարհք...

Ասատուրը հարմար է գտնում կատակել չրի եկած գեռ ոտաբաց աղջկա հետ։

— Լաո, քու տատին տո՞ւնն է։

— Իմ ժամանակ երկու հեկտար էր, հիմա երկու հեկտար չի մնացել, հազիվ մեկ ու կեսը լինի,— Գևոն է։

— Քու տատին էսօր իր շոր հագե՞լ է...

— Անհատ ժամանակ Կոպեն ձեռքով՝ և չթով քարը հող դարձրեց, այսօր ակոս-ակոս պակասեցվում է։ Այսօր էլ մի բան կպակասի հողիցը։ Իմ ժամանակը...

— Կերթաս քո տատին կասես Ասատուր քեռին կարոտո՞վ բարև կաներ, չմոռնաս, լաո։

Չխկ-չխկ-չխկ... Նհո պապի թազբեհի հատիկները կրակում են չիբուխի ծուխ դարձած հիշողությունների վրա։ Նհոյի ծխամորճը շերեփի նման է, հին շերեփի նման սևացած կող ու կշտով, այրված։ Չէ՛, ծխելը քիչ է՝ կուլ է տալիս ծուխը, ծամում—կուլ է տալիս։ Ծխում է հանդարտ, հանդիսավոր և ամո՞ւր, ամուր։ Զգելուց այտերը փոս են ընկնում, չորացած կուրծքը ճռճռում է և թվում է թե՝ ուր որ է ծուխը ոտնամանների միջից դուրս կգա։

Գրավիչ է Նհո պապի չիբուխը։ Մի քանի տարի առաջ գյուղի երիտասարդներից Խևիկը այդպիսի մի ծխամորճ պատրաստեց, դեռ ավելի մեծ և, անշուշտ, կատարելագործված։ Բայց խոսք ու զրույցի առարկա դարձավ, քարկոծողներ եղան՝ դա ի՞նչ ձև է, խանութում սիգարեթ են վաճառում, թող ծխի։

Դրա համար պապը սրտնեղեց, թափ տվեց ձեռքը.

— Է՛, լաո, էդ մարդիկ չիբուխի համ չեն իմանա։

Խևիկը ուսուցիչ է։ Լռակյաց, օրն ի բուն խոհերի մեջ։

Նստում է, հայացքը սևեռում մի կետի, հոնքերը բերում իրար։ Այդ-

պես՝ մի ժամ, երկու ժամ։ Հայրը նայում է, հազում, նայում է, հազում։ Չէ՞, որդին չի կտրվում մտքերից։

«Աշխարհը փուշ-խրձի պես շալակն է առել»,— մտածում է հայրը և փորձում է որդուն կտրել խոհերից։

— Խեռ, մի անգամ, է՞, էրեխա ժամանակ, մի օր...

Ու երազ-դեպք է պատմում մանկության օրերից։ Լսող լինի՝ հա՞ կպատմի։ Հայրը արդեն մաշվել, փոքրացել է, հալվելու հերթն արդեն ոսկորներին է, պուճուրացել, խոնարհվել է, և գույնը կորցրած աչքերը մոտեցել են հողին։ Հիշում է ու տրվում հուշերին, Խևիկը լսի-չլսի՝ կլորացնում է հուշերը և փաթաթում անձկության քողով.— է՞, մատ-միս էրեխա՞, անհո՞գ, մենք ու մեր Սև սար։

— Մատ-միս էրեխա՞, անհո՞գ,— մտքում կրկնում է Խևիկը,— մենք ու մեր Սև սար...— Իսկ ինչո՞ւ են մանկության օրերի հիշողությունները գնո՞ւմ-կապվում մի սարի հետ, մի ձորի, մի աղբյուրի, մի հատիկ ծառի, մի նախշուն քարի, տո, քամու ու անձրևի հետ, առվի ու նրա կանաչ ափերի, բնության հետ։ Հը՞, ինչո՞ւ է այդպես... Դա չի նշանակում, որ... Խևիկի հոնքերը գալիս են իրար. ինչ-որ հորինում է... որ մարդու մանկությունը բնությունն է ու կա։ Հենց այդպես՝ բնությունը։ Կամ... կամ բնությունն է մարդու թլոր մանկությունը։

Խև Խևիկ։

Համալսարանում էլ տղաներն էին ասում՝ «Խև Խևիկ»։

Բանուգործից ազատ եղավ՝ գալիս նստում է Նհո պապի կողքին, անպայման՝ Նհո պապի կողքին. երբ Նհոյի կողքին է նստած, Խևիկի համար լռության մեջ նույնպես երկար զրույց կա։ Ծերունին իր ծխամորճն է ձգում. Խևիկն՝ իր սիգարետը և շուրթին կպած ծխախոտը՝ իր ծխելը կատակի պես բան է թվում նրան, տնազ է թվում, քմծիծաղ։ Նայում է Նհո պապի դեմքին ու մտածում. «Թե ծխել է՝ այսպես պետք է ծխել»։ Իսկ Նհոն ծուխն ու հայացքը իրար խառնած տանո՞ւմ-հալում է կիրճի մշուշի մեջ։ Այդ պահին ծերունու դեմքը Խևիկին թվում է սիզապատ, հազիվհազ երևացող ակոսներով հերկ, իսկ դեմքը պարուրած ծուխը՝ անհասցե թափառող աշնան մառախուղ։

— Նհո պապ, ծխամորճդ մեծ, դու էլ ամուր ծխող, այդպես մինչև ե՞րբ։

— Մինչև ե՞րբ,— կրկնում է Նհոն, լռում, տմբտմբացնում գլուխը,— կծխիմ մինչև մեռնիմ, Խևո, իմ շունչ փչեցի, չիբուխս կտանիմ իմ հետ։ Իմ գերեզմանի հողից էլ ծուխ կելնի։

Լռում են, Խևիկը գնում է իր խոհերի ետևից, Նհոն՝ չխկ-չխկ, չխկ-չխկ... Մխի վրա կրակելուց թազբեհի հատիկները մաշվել են։

Երբեմն էլ հիշողությունները ձայն են առնում.

— Մեր էրգիր ծխողներ թաք ու թուք են։

— Իսկ մեր երկրում աղջիկներն էլ են ծխում,— ժպտում է Խեխկը։

Պապը հարցական նայում է ու հասկանում, որ լսածը կատակ չէր և զարմանքով գլուխն է շարժում։

— Աղջիկ էս լեռի ծուխ բեքա՞ն կառնեն։

Գլխի մազերի հատրանքով մեկ ահ ու դող է տեսել, բայց դեռ զարմանալ կարող է։ Եվ Խեխկը զարմանում է Նհո պապի զարմանքի վրա։— Հերն անիծած, այս գաղթական Նհոն իր տնանկ ու հալածական կյանքի շորս-հինգ տարում, ախր, դարեր է ապրել։ Աշխարհի կողքից լքվել-մերժվել է, որոնել, գտել իր քարանձավը ու չի էլ իմացել, թե ինչպես անձավի խանավ կողերի մեջ հոգում խլրտացել է նախամարդու բնազդը։ Եվ չի էլ իմացել, թե ինչպես Երկրի վրա թրև եկող «քաղաքակիրթ» ժամանակը թողել է, իր ապրած օրերից ետ դարձել, գնացե՞լ, գնացել հասել Հիսուսի ծննդյան օրը ու տարակուսել՝ հավատա՞լ այդ հյուսնի որդուն՝ արդա՞ր ծնունդ էր։ Հետո այդտեղից էլ է անցել, գնացե՞լ, հասել Վահագնի ծնունդը, հասել հեթանոս մի ժամանակ, դեռն է գնացել, ծվարել Երկիր մոլորակի արգանդում ու այնտեղից ճամփա ելել և ճամփին հանդիպած բոլոր մարդիկ նրա համար, ծխաբույր ու բանուգործի խոնջանքը կորցրած քարանձավանակ-գաղթական Նհոյի համար եղել են կռիսող կտրողներ, եղել են որսը իր ձեռքից խլողներ։ Այսքանը։ Եվ ձմռան կեսին թե կրակ է ճարել, դա եղել է հայտնագործություն, եղել է կրակի գյուտ ու, կրակի կողքին նստած, աչքերում խանձվել է Քրիստոսը, փոխարենը՝ աչքերում բռնկեցնել կրակի պաշտամունքը։

Ե՛վ այդ կրակում եփված մի կտոր միսն է գյուտ եղել գաղթական Նհոյի համար, և՛ մի լաթ ճարել-հագնելը։

Չէ՞, այս գաղթական Նհոն հարյուր տարեկան չէ, մարդկության տարիքն ունի, մարդկության բոլոր փոխակերպումները կարել-անցել է ու հիմա իր տարիքից գուցե փոքր աչք աղջկան մոտ նստել է առասպելի պես և աշխարհի անցած գնացած ու գալիք բոլոր գաղթականներին է իրար ետևից շարում թատրեհի մաշված հատիկների վրա։ Հետո էլ զարմանում է. «Աղջիկ էս լեռի ծուխ բեքա՞ն կառնի»,— և իր առասպելական հավատն է մեկնում Արևին։

Եվ Խեխկը զարմանում է Նհո պապի զարմանքի վրա։

— Խեռ,— Նհո պապը կտրում է Խեխկի խոհերը,— ես գիրքսամ, դու կմնաս, ականջ արա ու մահան չանիս. արդար արուն չի կորի... Մեր էրգիր...

Եվ հի՜ն,— զարերից եկած ձայնով, հի՜ն— զարերից եկած խոսքերով սկսում է մի պատմություն։

— Մեր էրգիր էրկու հոգի, զուտ-զաան զրկից էրկու հոգի կերթան զարիբություն...

Մեկը խորուտիկ կնոջ ու մանչի տեր, մյուսը՝ ազապ։ Կին ու մանչի տեր պանդուխտը ձեռքն եկածը խնայում է, ազապը՝ տալիս կնոջ ու գինու։

— Էսպես, յոթ տարի կբոլորի, վրա ուիին կդառնան կբունին էրգրի ճամփեն։ Ճանապարհին չար կմտնի էդ ազապի հոգին, ասեր, ընկերոջ սպանելու՝ փողերին տիրանալու միտք կունենա. կռիվ կտա իր հոգու հետ, վերջ չար կհաղթե՝ զարկիմ, կվճռեմ, էս անապատի մեջ շունչ ու շնչավոր ու վկա չկա։ Թիկունքից կզարկե...

Որտեղից որտեղ, մի բարակ քամի է պոկվում, չորացած մի փուշ գլոր-գլոր բերում, կանգնեցնում հոգեվարքն ապրողի կողքին։

— Էս անճար մարդ, ասեր, աչքեր երկնքից կդարձու փշի վրա, ձեռք կմեկնե փշին, կխնդրե, կպահանջե. «Փո՜ւշ, դու տեսար... Փո՜ւշ, դու վկա ես... փո՜ւշ, ավուր դատաստանին վկայություն տուր...»։

Ոեղեռագործը հասնում է գյուղ, ցավակցում «երկու տարի առաջ մահացած» ընկերոջ ընտանիքին, հետո էլ ամուսնանում ընկերոջ խորուտիկ կնոջ հետ։

— Կանցնի յոթ տարի, ասեր։ Օրերից մի օր...

Մի իրիկնապահի կնոջ հետ նստած անուշ-անուշ զրուցում է, մեկ էլ, հենց պատի տակից, մի բարակ քամի է պոկվում, գլոր-գլոր բերում չորացած մի փուշ։ Հիշում է էն օրն ու ժամը։ Քամու ծվեն։ Փուշ։ Ընկերոջ վերջին խոսքը. «Փուշ, դու վկա ես...»,— Ծիծաղում է։ Ինչո՞ւ ծիծաղեցիր, հարցնում է կինը։ Հեչ։ Ինչպես թե հեչ, ինչո՞ւ ծիծաղեցիր...

— Կինարմատ է, ասեր, կպավ՝ պրծում չկա։ Հա՝ պատճառ կհարցնե, հա՜ էս անիծած կծիծաղե։ Վերջը անմեղ արնի պահանջ կմոլորացնի էս անիծածին, կպատմե։ Հա՝ արնի պահանջ կմոլորացնե, չէ՝ կնոջ։ Կխոստանա ու կկանգնի գատաստանի առաջ ու կասեկի։ Չէ՜, անմեղ արուն չի կորի,— ամփոփում է Նոհ պապը։

— Նոհ պապ, պատմածդ իրողությո՞ւն է,— հարցնում է Խեիկը։

— Հա՜, լաո, հա՜, իմ պապից եմ լսե։

— Հետաքրքիր պատմություն է,— Խեիկի հոնքերը իրար են գալիս, կառչում է խոհերից։— Եվ Նոհ պապը համոզված է, որ այս պատմությունը իրողություն է... Հա՜, եղած պատմություն է։ Մի պրոֆեսոր փորձում է զարմացնել ոմն Շնեյդերի կամքի ուժով։ Իսկ ի՞նչ է արել այդ Շնեյդերը։ Աչք ու հայացքով թաշկինակ է տեղաշարժել։ Պահի լարվա-

ծությունից նա ունեցել է «սարսափելի տեսք...»։ Եվ դա նրա համար, որ պետք է թաշկինակ տեղաշարժել, այն էլ՝ փորձի համար։

Իսկ ընկերոջ դավադիր հարվածից պանդխտության ճամփին մեռնող մա՞րդը... Նրա վերջին շունչը ինչո՞ւ չպետք է դառնար ելք որոնող վրեժ ու թափառեր տիեզերքում, շմաքեր՝ թափառեր, անհանգիստ թափառեր և սպասեր՝ եղեռնագործի մոտ ոճիրը թացքնելու կամքը թուլանալու պահին։ Սպասեր ու հաղթեր։ Այդպե՞ս է։ Եվ այդպես է եղել։

Չէ՞, Նհո պապի ասածը առասպել չէ, եղած բան է, կասկածել պետք չէ, և հասկանալի է նաև Նհոյի հավատը. «արդար արուն չի կորի...»,— Նհո պապի հավատով կրկնում է Խևիկը և դիմում պապին.

— Իսկ ձեր երկրում շատե՞րն էին պանդխտության գնում։

— Շատ-շատեր, Խևո։

— Օսոյի Գուրգեն ու Գաբոն մեկել օր գնացին խամ ու խոպան,— արձագանքում է Արոն։— Օսոյի տղերքին էլ հաշված, գեղից խամ ու խոպան գնացողների թիվ էղավ ուղի՞ղ քսան ու մեկ հոգի։

— Դե, տեսնո՞ւմ եք, ասում եմ, չէ՞. հողը շռայլում են, սերմացուն առանց ախտահանելու են դաշտը տանում, առանց իրավունքի թողնում-գնում խամ ու խոպան... Իմ ժամանակը այդպիսի բանը լիներ, դատի կտային։— Իր խոսքն է ասում Գևոն և այս անգամ սպասում անպայման արձագանքի։ Չկա։

— Նհո, ի՞նչ ես այդքան մտածում։

— Է՞, Գևո, օղորմի քու հոր, քիչ խոսա։ Առավոտ-իրիկուն նույն բան՝ մի ակոս հող պակսավ, օչխար սատկավ, կոլխոզի կալից դարման գողցան. էս էղավ, էն եղավ։ Ցավաց մեր գլուխ,— Նհո պապը լուրջ դիտողություն է անում, ապա դառնում Խևիկին.

— Խևո, լսե, մեկել օր, բարձրախոս կգոռա՝ երկինք մարդ է գնացե, մարդ երկնքի մեջ է կքելե, մենք կլսինք, կփշմտինք, կնայինք իրար, մեկ էլ էս մարդ թե՝ «Ամբողջ գարին բաշխեցին աշխօրերին, հիմա էլ գնացել են գարու սերմ ճարելու։ Ջիմացա՞ք, կոլխոզը գարու սերմացուն բերե՞ց»։

Աղբյուրի գագ մեջ ծիծաղն է ծաղկում։ Հենց նոր զրուցատեղ հասած և աղբյուրին խոնարհված Օսոն սրբում է թաց բեղերը, հետո էլ դաշտից բերած շոգը, ծիծաղում է, առանց իմանալու պատճառը. ուռիների տակ նստոտածներից ետ չմնալու համար Օսոն ծիծաղում է, նորից է սրբում բեղերը, ծիծաղն էլ՝ հետը ու նոր հարցնում.

— Ժողովուրդ, ինչի՞ կծիծաղիք։

2

Օսոն դաշտապահ է։ Կովից մի ձեռքով եկավ և դաշտապահ է։ Կոպալը քրո-քրո քարշ տալով, անցնում է գյուղամիջով։

— Քեռի Օսո, ինձի ծաղիկ կբերե՞ս։

— Ինձի՝ կբերե՞ս։

— Ինձի՞, քեռի Օսո։

— Հա՛, հա՛, գառ,— բոլորին գլխով է անում,— դուք չելնիք-գաք, կբերիմ։

— Ես կգա՞մ։

— Ես կգա՞մ։

— Ես կգա՞մ, քեռի Օսո։

— Ես էլ կգամ, ե՛ս...

Օսոն քրո-քրո կոպալը քարշ է տալիս, բաճկոնի դատարկ թևը ծալած գրպանում, աչքը դիպածի մասին բարձրաձայն մտածելով, ինքն իրեն խոսելով գնում է։

— Անդոյի տնամերձ չորցավ. Անդոյի կողմից նախագահի հետ վիճել սխալմունք էր՝ ջրբաժին նախագահի գլխից հեշ կանցնի՞։

Դբխկ-դբխկ, կոպալով թակում է ոտնահետքերը, աչքը դիպածի մասին ձայնարկու մտածում է ու գնում։

— Աբրահամի ագի տուն մնաց կիսատ. արմատուրի շիշ դարձե՛ սև աղվես. մեկել տարեք շոֆերներ կբերեն, շիշ մեկ մանեթով կծախեն; կերթեն։ Բռնվա՞ն, ի՞նչ էղան, ու տղի շենք մնաց կիսատ։

— Օսո, չո՞լ։

— Հա,— պատասխանում է խոնարհ, անցնում և իր համար ավելացնում,— էլ ո՞ւր,— անցնում է և աչք դիպցնում Արոյի տնամերձին։

— Արոյի տնամերձ կանա՞չ... Արոն ծեր մարդ է ու զրնգ մարդ է... էրգրի մեջ ծնված ու մեծացած մարդկանցից Արոյի տարիքի մարդ գեղի մեջ մնացին թաք ու թուք։ Ճախրկանցի Նհոն՝ մեկ, հա՞, Նհոն բոլ տարիք ունի, Ասվատուր էրկու, Վարդոն իրեք, Զորի Միրոն չորս... էլ կա՞... հա՞, Առաքել։ Հրի՞ի՞, քու տուն քանդվի, աշխարհք, աստված տաս էրեխա տվեց մարդուն, մեկից խեր չտեսավ։ Ութ կոտորումին կորցրեց, էրկու տղա էստեղ ունեցավ, էդ էլ Հիտլեր տարավ։ Մարդ մնաց մենա՞կ-մենակ։ Քու տուն ավերի աշխարհք...

— Օսո, ո՞ւմ հետ կզրուցիս։

— Աշխարհքի,— լուրջ-լուրջ պատասխանում է ու անցնում,— քարերի,— ավելացնում է։

Գյուղից դուրս է գալիս «Կոպեի արտերն» են։ Իհարկե, արտերը

կոլտնտեսությանն են, բայց՝ Կոպեի անունով։ Մշեցի Կոպեն է քարե-ցանք ձորապռունկը դարձրել հող՝ «Կոպեի արտեր»։

— Կոլխոզի ամենալավ արտեր «Կոպեի արտերն» են,— ամեն օր ասում է, ինքն իրեն է ասում Օսոն։— Էդ անխելք մարդուն դադրել չկա՞։

Եվ դաշտապահ Օսոն մինչև իրիկուն Քարագլուխը հետը քարշ է տալիս՝ զրուցում-վիճում է, իսկ երեկոյան, երբ գյուղ է դառնում, մեկի հետ ավելի հաշտ է, մեկի հետ կիսատ վեճ ունի, մեկի հետ խռով է արդեն։

— Կոպեն քանի՞ տարեկան է,— հարցնում է Օսոն,— յոթանասուն-հինգն անց է ու անց,— պատասխանում է,— ու մինչև էսօր հող կշինե։ Տնաշեն, ո՞ւմ համար է։

Ինչ ասես հանդիպում է դաշտապահ Օսոյին. կրակված ու չկրակված գնդակներից սկսած (— Գերմանացու է... լավ բան էղեր չէր հանդիպի, քու պատրաստողի հեր...), մինչև շոկոլադի թուղթ։ «Կոպեի արտերի» մոտ շոկոլադի գույնզգույն թուղթ է նկատում. վերցնում, թափ է տալիս, հոտ քաշում, ուրիշ-ուրիշ աշխարհներ են գալիս աչքերի դեմ՝ պատերազմով տեսած քաղաք ու մարդիկ, խանութներ ու ցուցափեղկեր, ցուցափեղկերից մեկնված ու կանչող մանեկեն-իանանց ձեռքեր, և Օսոն անո՞ւշ ժպտում է ու հոգնածություն զգում։ Նստում է քարին, իր տեսած աշխարհների հոտն է քաշում շոկոլադի թղթից։

— Էս անտեր մնացած համեղ է,— մանր-մանր ժպտում է,— Կրապեն շոկոլադ կերած կա՞...

Կոպեն շոկոլադ կերած կա՞։ Ձեռքն ընկավ՝ շուռումուռ է տալիս ճաքճքված ափերի մեջ, թղթի փափկությունից հիշում է, որ ծխախոտ փաթաթելու համար «խաս» թուղթ չունի, հետո Արիկին է կանչում։ Արիկը գալիս կանգնում, աչքը գցում է պապի բուռը։

— Ի՞նչ, պապ։

Ջէ՛, այդպես շուտ թուքդ կուլ մի տուր, նախ՝

— Հաթթին ջուր տվի՞ր,— ստուգում է պապը։

Պատասխանը մեկ է՝ շոկոլադ է տեսել.

— Հա։

— Առ, կես Մնացին տուր։

Շոկոլադը ինչի՞ն է, քեռի Կոպեին հաց է պետք, թե ամառ է՝ մի քիչ էլ մածուն, ձմեռ է՝ մի քիչ պանիր, մի քիչ էլ թթու։ Գո՞հ կմնա։ Գլխարկը հանում է. կաղապար դրված ճերմակ մազերը շաղ են գալիս, ախորժակով ուտում, կանգնում է ոտքի։ Ուսերին գցած պիջակի թևերը

չափ են վերցնում աջ ու ձախ գնացող նրա քայլերի հետ, թե ձմեռ է՝ վերարկուի փեշերն են պարում շորաբ։ Վերարկուն հին է, թե՞ գույնն է այդպես՝ կարմրավուն-սև չեչերով քարի ազայ են յանել վերարկուին, փոշին կպել է ու չի պակվում։

Երբ կիրճում ծնվել է նոր գյուղ և այդ գյուղը դեռ անուն չի ունեցել, շրջկենտրոնից եկել է մարդ՝ ծուխ ու ծխատեր, հոգ ու սահման ցուցակի մեջ առնելու։ Այդ օրը Կոպեն քարերի վրա փռած իր սավերի հետ կովի մեջ է եղել։

Հողաչափը ի՞նչ իմանար, որ մի օր էլ պիտի գար, կանգներ Կոպեի շինած հողի գլխին, զարմանար, որ գյուղխորհրդի աշքի դիմաց, հանձինս Կոպե Պետրոսյանի, գյուղում «նուլակ» է ծնվում, հետո կանչել տար բատրակ Հարոյին, հարցներ.

— Արտի ո՞ր մասից եք ուզում, ընկեր Հարո։

— Ընկեր Վիպարիտ, էստեղ հող կա՞ր, քու աշքով ես տեսել՝ չկար, էս հող իմ ձեռքերով է շինվե,— վիզ է գցել Կոպեն։

Ախր, ո՞նց չես հիշում, եկար՝ գյուղի հողն ու ցանքը Զորի Միրոյի կտուրին էր։ Ախր, մի հողքի պատաշարերին մտիկ, է՛, էստեղից հավաքած, հանված, քարդված քարերն են, Կոպեն է թևութիկունք կոտրել, հոգը նրանն է... Չէ՛, Կոպեն աստվա՞ծ եղավ, տո էդ Կոպեն ի՞նչ եղավ, որ հող շինեց։

— Ընկեր Հարո, չափեք արտի որ ծայրից ուզում եք։

Հողաչափը ի՞նչ իմանար, որ մինչև մեկ էլ ոտք գնի Քարագլուխ, Կոպեն նորից «ուռչացած» կլինի։ Այս անգամ արդեն՝ կոլեկտիվ գրելու համար էր եկել։

— Ուզո՞ւմ եք, ընկեր Կոպե։

Չէ. մինչև արևը մայր է մտնում, ինքը տասը-տասնհինգ քայլ հող է շինում, իսկ Հարոն իր համար քնում է։ Հոգերը խառնեն իրա՞ր։ Թե կամոք է՝ չէ։ Հետո Կոպեն տեսավ, որ երեկվա անլծկան Հարոն ձեռքի տակ զույգ եզ ունեցավ, արոր ու սերմացու չուներ՝ տեր է, տեսավ, որ Հարոյի խոփը մեկ-մեկ էլ իր արտի մեջ է մտնում, սերմից՝ բուռ-բուռ էլ իր ցելի մեջ է շաղ գալիս, հետո տեսավ, որ Հարոն մի ճկռած սայլ ցորեն տարավ տուն, մյուս գարնան իր լուծ ու լծկանների հետ կոլտնտեսություն տարավ նաև տասնհինգ հեկտար հող. երկու արտ՝ ձորապրանկին, մեկը՝ կիրճում, երեքը՝ սարի փեշին, մեկը... Քսան արտ։ «Կոպեի արտերը»։ Եվ իր շինած հողի վրա աշխատով բանեց։

Ուրե՞մն, ինքն ու Հարոն հավասար աշխատ պետք է ունենան, ջանքմ, հավասար հաց ու թա՞ց։ Չէ՛, քնկոտ Հարո, Կոպեի թև ու թիկունքի

իրավունքն ուրիշ է։ Արևմարքից հետո գու քնիր կամ գնա գրասենյակ ակտիվանալու, Կոպեն իր գործը գիտի...

— Բարի իրիկուն, Կոպե։

Դեմքը քրտնախաշ կարմիր է, ատամները ճերմակ ժպիտ են նվագում։

— Կոպե, բարի աշխատիս։

Զը՜նգ, զը՜նգ... Չէ՜, խորընկա է քարը, թաց է, մինչև տակը չառնես, չի հանի։

— Կոպե՝ ժողովի։

— Գնա ասա հիվանդ է։

— Քու մուրճի ձեն գրասենյակ կհասնի։

— Ասա... Ասա՝ համամիտ է։

— Բարի լույս, Կոպե։

— Ա՜յ մարդ, էս քարի կար չկա, դիմանալուսից, կշարշարվիմ՝ չկա։

Քար չթողեց բաժին ընկած տնամերձում՝ ոչ աշքադեմի, ոչ խոփ ու բահի դեմն առնող։ Լավ է, պրծավ. կգնա դաշտ, կդառնա տուն, շունչ կառնի։ Հայ-հա՜յ, այդպես մինչև ե՞րբ։ Թիկունքը կսառչի, ցավ կընկնի, կհիվանդանա. ո՞վ է տերը։

Ուրեմն քարագլխեցի Կոպեն հողը շինում է, մի քանի տարի վարուցանք անում, ծխախոտ աճեցնում, տո չգիտես՝ կարտոֆիլ ու շաղգամ, մի օր էլ գրասենյակ են կանչում, մի ծխախոտ են տալիս, հողն առնում։

Մեկ ջրամբարի տակ է ընկնում մարդու արարած հողը, մեկ՝ նոր կառուցվող գոմի, ճանապարհի, չգիտես ինչի ու ինչի։

Այնուամենայնիվ Կոպեի կռիվը քարերի հետ կա ու կա։ Ճակատ ու թիկունք կթացի, ջղարա կփաթթի, անցորդից բարին կառնի, կժպտա, ճակատ ու թիկունք կթացի, ջղարա կփաթթի, անցորդից բարին կառնի, կժպտա ու... Մի շենքի կաղապարված, կարմրած քար ելնում, կանգնում է պատշար՝ քառակուսի, կլոր, զիգզագ, մի թիզ ետ, մի թիզ առաջ։ Պատշարը Կոպեի թևերի պես ամո՜ւր գրկում է մի կտոր հող։ Հետո, երբ կանաչ ու բարդոցով իր ափերի կնիքը դնում է հողի վրա, ցանկապատը արդեն պետք չէ։

— Ժողովուրդ, էս քարեր տարեք տուն շինեք, չափսի քար են, ափսոս է պատշար մնա,— ասում է։

Հենց պատշարը դուրս է գալիս, երկնքից իջած օազիսը աչք է ծակում։ Դե, թող գյուղամիջում չխոսեն. Կոպեն երկու տնամերձ ունի։

Եվ ապա, օրենք ու իրավունքով չպահանջեն։ Քեռի Կոպե, էն ճամփի մոտի հողում ինչ ցանել ես ցանել, շուտ հավաքիր, պլանի տակ է։

Ախր, էդ պլանները հենց Կոպեի շինած հո՞ղը պիտի տակով տան։

— Դպրոց է կառուցվելու։

Բա գյուղից դուրս դպրո՞ց կկառուցեն, հենց՝ իր հողի վրա՞ պիտի լիներ։ Այդքան տանջանք է կերել, թողնեին՝ մի հինգ-վեց տարի մշակեր, ախր։

— Այ մարդ, նոր դպրոց է կառուցվելու, սովորող այդքան թոռներ ունես, ուրախ չե՞ս։

Տո, ի՞նչ թոռ, է՜, մեկ Արիկը, մնացածը հե՜չ։ Արիկն է, որ մեկ-մեկ էն անտեր հորթին ջուր է տալիս, իր հետքով գալու քիչ ու միչ նշաններ են երևում, մնացածը ի՞նչ թոռ։ Էն լղպոր Մնացից ի՞նչ դուրս կգա, փքուլինքը մաքրվեց թե չէ, գլուխը կառնի-կգնա մի կողմի վրա, պապին մնաս բարով էլ չի ասի։

— Վերջը, քեռի Կոպե, ասածդ ի՞նչ է, դպրոց չշինե՞նք։

— Շինեք, ջանըմ, ո՞վ է դեմ...

Գլխարկը հանում է, սրբում ճերմակ մազերի մեջ ճղպացող քրտինքը (քար աղալուց այդքան չի քրտնում), կապտավուն աչքերի կարոտը թափում արտի մեջ, սեպերի տոպրակը Արիկի շալակն է տալիս, մուրճն ու քլունգը ինքն է առնում, գնում նոր հող արարելու։

Հիմա Կոպեն թոշակառու է և գյուղից դուրս վերջին տարիներում շինած հողի գլխին տուն է կառուցում։ Տուն ունի, բայց հիմք է փորել, ծառ է տնկում, հիմք ու արմատով կնիք է խփում նոր հողի վրա։ Հետն էլ, իհարկե, տասնամյա Արիկ թոռան հետ, քանդում, մանր-մանր ընդարձակում է հողի սահմանը։

— Բարին աշխատիս, Կոպե։

— Աստծու բարին։

Եվ բերանը բացում է թե չէ՝ ժպիտը ճնճղան թևի պես պոկվում է բեղերի տակից։

— Այ, էս մեկը արդեն չեմ հասկանում,— մտածում է Խեվիկը,— ախր Կոպեն առանց ճիգի, այդպես միանգամից չպիտի ժպտար։ Ինչպե՞ս է, որ մինչև հիմա չի ավերվել՝ մշեցի Կոպեի, քարագլխեցի Կոպեի, քեռի Կոպեի ծիծաղի բույնը։ Այդքան կածան է փաթաթվել՝ աջ ու ձախ, ձախ ու աջ գնացող ոտքերին, հող արարելու համար այդքան քար է շարժել, շուռ տվել, ջարդել, աղացել, վառոդ է շնչել, տո, չգիտես ինչ ու ինչ է եղել, բա ինչպե՞ս է անվնաս մնացել ժպիտ ու ծիծաղի բույնը։ Ախր, անդունդի վրա կախված կածանից Կոպեի ժպիտը պիտի սոտ տված-գլորված լիներ, պիտի ճխլված լիներ իրար սեղմված ատամների տակ կամ հենց՝ շուռ տված քարի, վառոդի ճուխ պիտի դարձած լիներ, ցամաքած՝ ամեն ամառ ցամաքող գյուղ Քարագլխի առվի հետ... Հը՞, քեռի

Կոպե՛, էդ որտե՞ղ ես անվնաս պահել ժպիտդ, որ քերանդ բացում ես թե չէ՝ թիռ է անում։

Հերն անիծած, հետաքրքիր են աշխարհն ու մարդիկ, ավելի շուտ՝ մարդիկ, մարդիկ։ Մարդն ինքը աշխարհն է, ծայրից ծայր՝ հող ու ջրով, ոսկով ու երկնքով, գազաթ էլ ունի, ընդերք էլ։ Մարդը, փիտե՞ս... կարող է աշխարհը մեծացնել։ Մեծացնել կամ փոքրացնել։ Հենց՝ այս Կոպեն։

— Հայրիկ, քեզի Կոպեն կարո՞ղ է աշխարհը մեծացնել։

— Ի՞նչ անի։

— Մեծացնի աշխարհը։

— Խև խևիկ։

Ախր, Կոպեն էլ, դու էլ մեծացրել եք աշխարհը։ Մեծացրել եք, բայց չգիտեք։ Թողեցիք ձեր երկիրը, բույն դրեցիք այստեղ։ Այն ժամանակ կա՞ր Քարաքուիլբ, կայի՞ն այս արտերը, «Կոպեի արտերը»։ Չէ՛։ Փորփրել, շաղել, մաղել եք, և չեղած տեղից ստեղծվեց հող ու արտ։ Քանի՞ արտ, քանի՞ ոտնաչափ։ Այդքանով աշխարհը մեծացավ։ Հողի տակից հանեցինք քար (իակ արև չտեսած քարերը աշխարհի մեծության մեջ չեն մտնում), հանած քարերը շփեցիք արևի հետ, դրեցիք կողք-կողքի, իրար վրա, կառուցեցիք տուն, մեկն էլ՝ Կոպեն, և երկրագունդը մեծացավ։ Այդպե՞ս է։ Այդպես է ու կա։ Ես էլ կարող եմ, ախր, լայնացնել աշխարհը։ Ոչ այսպես, նստած, մտածելով. կլայնացնեմ, այ, այս ձեռքերով։ Տես՝ նիհար են, մարմնի ծայրամասն են. արյունը չի հասցնում, դրա համար՝ գունատ, բայց զորեղ՝ երկրագունդը մեծացնելու չափ։ Այս ձեռքերով հողի տակից քար հանեցիր՝ աշխարհը կմեծանա, տուն շինեցիր՝ կմեծանա, անապատի սրտից փուշ հանեցիր՝ կմեծանա, քանդեցիր անապատը, անապատին փոված-կարծրացած ժամանակն ու փուշ ծնող հողը խառնեցիր իրար՝ կմեծանա, ծառ տնկեցիր՝ ծառի սաղարթով մեկ աշխարհը կմեծանա։ Կմեծանա՜, կմեծանա՜, կմեծանա՜...

Չէ՛, երկրագունդը փարթի է մեծացնել...

Նոր Գեղարդ, նոր շեն, նոր տուն, նոր ֆերմայուն, նոր հող, նոր ծառաստան ու սաղարթ՝ արևով, ծաղիկով, պտուղով... Սրանցով, ախր, աշխարհը ժանրանում է նաև։ Ժանրանո՞ւմ։ Չէ՛, թեթևանում է։ Աշխարհը ժանրանում է սուր քանող, աշխարհի ուսերին գալիք հաստցնող մարդկանցով։ Սրանք են ժանրությունն աշխարհի համար։ Եվ ժանրություն նաև այն ժամանակ, երբ չկան արդեն, բայց ունեն մահարձան։

— Հայրիկ, քեզի Կոպեն կարո՞ղ է աշխարհը փոքրացնել։

— Ինչ անի՞։

— Փոքրացնի աշխարհը։

— Խև Խևիկ։

Կարող է, եթե տուն քանդի, եթե միաչքանի ավազակի պես կանգնի ճամփի վրա և սպասի զընգը, զընգը, զընգը, է՞, հեռվից եկող, իր ճամփեն կտրող քարավանի։

Քանդած տունը աշխարհի համար ի՞նչ։ Փխրեցվածը կտրած, գըլխին հող մաղած շենը աշխարհի համար ի՞նչ։ Խրված ու լքված Երկիրմոլորակի մի անկյունը աշխարհի համար ի՞նչ օգուտ, ի՞նչ։ Այդ տան չափով, աղերված այդ շենի ու վայրենացած այդ հողի չափով երկրագունդը փոքրանում է։ Եվ գիտե՞ս, ավելի հանգիստ է փոքրացնել աշխարհը, հավաքել բռի մեջ, ա՛յ այսպես։ Մեծացնելն է դժվար։ Մեծացնելու համար է միայն պահանջվում ուժ և սրտից ձեռքերը հասող ազնիվ արյուն, ինչպես Կոպեյինն է։

Եվ մշեցի Կոպեի, քարագլխեցի Կոպեի, քեռի Կոպեի անպատկաս ժպիտը էլ աշխարհին նետած նրա ձեռնոցն է։ Ինչ էլ լինի այսպես եմ ու կամ։— Խևիկը գտնում է պատասխանը։

Դաշտապահ Օսոն գյուղից դուրս է գալիս թե չէ՝ «Գոգոի արտերն» են, անցնում է ու քայլերը դառնում են անկանոն՝ մի քայլը մեծ, մյուսը՝ փոքր, ուսքերը միայն քարերին է դիպում։ Արտերն անցնում է՝ ձորն է, մտնում, դուրս է գալիս՝ սարն է։ Մեծ ու փոքր սարերը իրար ուսի են նստած։ Մեկի թեից քաշես՝ մյուսը վար կընկնի։ Սարերը քարածեփ են, քարապատ են, քարախեղդ։ Եթե անձրև եկավ, քարերի արանքից փունջ-փունջ կանաչ է դուրս գալիս, հաղարանոն ծաղիկ՝ Կարմիր կակաչ, Սև-սիրտ կտիտչ, Ոսկի անթառամ, Նռանուշաբ, Շուշան... Քարերի տակից եկած ծաղիկն ու խոտը մեջքաթոտոր են, ոլոր-մոլոր, հաղարաբույր շուրթերը հպած քարերի տաք շուրթերին։ Բայց Օսոն կոտրելով ճամփա է բացում ձլի համար՝ թե ճար կա։ Անձրև եկավ՝ լեռնալանջի ամեն քար կանաչակն մատանի է հագնում։

— Սարեր խոտի մեջ կորած է, ժողովուրդ,— Օսոն մեկը տաս է անում։

Թե ասածն չեկավ... է՞, մեկը են քարերը. մեկը մյուսի տակերն է փնտրում։ Սարերը դառնում են մոշահոտ։ Բայց Օսոն էլի քրտ-քրտ դաշտ է գնում։

— Քեռի Օսո, ծաղիկ կբերե՞ս։

— Կբերի՞մ... շան ծիծ կերած։

— Օսո, չոլ ի՞նչ կերթաս, ի՞նչ կպահես, քարե՞ր։

Հանդապահը նայում է ոտնամանների ծայրերին՝ անգույն են, պլոկված, և գլուխը խորհրդավոր տմբտմբացնում է։

— Խոտ շա՞տ կա։

— Ո՞ւր կա։

— Քանդած բերդեր, Արշաձոր, Ցամաքասար... Ժողովող էղնի՝ կա։

— Օսոն աշխօրի տեղ կանե։

— Կուչակ կուզե դառնա, հա՞, հա՞, հա՞։

Դաշտապահը նայում է ոտնամանների ժայռագույն ծայրերին. «ի՞նչ կծիծաղին»։ Հետո թողնում-գնում է Բարձրասար, անպայման այնտեղ, որովհետև Բարձրասարի կրծքին սեղմված մի քարի տակ աղբրակ կա. ջուրը՝ սարն ի վար մեկնված տավիղի լար։ Գյուղից էլ է երևում չձգված կանաչ լարը։ Եվ Օսոն, հայացքը փաթաթած այդ լարին, գնում է՝ մի քայլը մեծ, մյուսը՝ փոքր։ Աղբյուրի առջև ծնրում է, քրտնած դեմքը պահում ջրի վրա, շնչում ջրի բույրը։ Իսկ աղբյուրի քարին արյան, յուղ ու մոմի սևացած հետքեր կան։ Մոմ են վառել ու արել մատաղ։ Աստծո՞ւն։ Չէ՛, հեթանոս պաշտամունք է սա։

Զորապռնկին Նհո պապը բաժանվում է Օսոյից։ Հայացքը ոտքերի տակ գցած գնում է փուշ հավաքելու՝ Արշաձորից, Քանդած բերդերից։ Մարդահասակ են փշերը, մի կալ տեղում՝ երեքը-չորսը։ Պապը ձեռնոց չունի, փշերը բռով հավաքում, բերում է իրար։ Հետո խուրձը առնում է թաց մեջքին, խրձի վրա մանգաղն ու բամբակյա բաճկոնն են, ճակատի վրա արյունով լցված-ելած կնճիռների կույտ կա, ճղպացող քրտինքով։

Նհոն ծունկը սեղմում է հողին, ատամները՝ իրար, ոտքի է կանգնում։ Օ՜, սար է շալակել պապը։ Թը՛մփ, թը՛մփ, թը՛մփ... Զոր ու սարով, արտերի միջնակներով, թե ճամփա է՝ ճամփի եզրով ծանր ու մեկ քայլում է։ Հացատան դռանը շալակը վար է դնում, ոտքերը մեկնում. «Օ՜ֆ»։

— Հարս... Հարս, գառ, թանչուր բեր։

Գոնե փշախուրձը հեռացներ մեջքից...

— Չէ՛, էսպես լավ է, դու չես իմանա, հարս։

Քրտինքի կաթիլները լուռ ու մունջ ընկնում են թանչրի մեջ, կաթկըթում են դեմքից, ձեռքերից։

— Էս ի՞նց է, պապի։

Է՛, դու դեռ փոքր ես, գառնուկս, չես հասկանա։

— Պապի, ծակում է։

Ծակո՞ւմ է։ Բա պապի թիկունքը ինչո՞ւ չի ծակում։ «Էլ ծակելու տեղ չի մնացե»։

— Պապ, ծակում է։

Հիմա թող ծակի, ոչինչ, դրանից վնաս չկա... Բայց... էս «մատ-միս» երեխան որ պապ դարձավ, Արշաձորից փո՞ւշ պիտի բերի։ «Էդպիսի բան չի՛ էղնի... Աշխարհքի անեծք մենակ մեզ վրա՞ նետած պիտի մնա»։

Պապը խուրձը հեռացնում է մեջքից, զայրացած կանգնում ոտքի։

— Նհո, դադրե՞ր ես։

Վառոն նանն է՝ աջն ու գլխաշորի ծայրը շուրթերի մոտ պահած։ Նհոն չի նայում, անծպտուն է, չի մաքրում փուշ ու քրտինքով շաղված դեմքը։ Թաց մեջքից մուխ է ելնում, ինչպես թաց հերկից։

— Նհո, կով էս փուշ կուտե՞։

«Կուտե՞»։ Նան, դու չգիտե՞ս, կուտի, թե չէ։ Ամեն տարի այդպես չէ՞։ Նհո պապը հինգ-վեց փուշ գցում է մսուրը՝ «Կեր պրծի, մի փունջ խոտ տամ»։ Կովը պոզերով փուշը մսուրի պատից պատ է քշում, գցում ոտքերի տակ, թափ տալիս գլուխը, նայում տիրոջը, բառաչում։ «Կգանգրտվի՞»։ Մեղք չունիս,— Նհոն մոտենում է, շոյում,— կեր, իմ հոգին, կեր... է՛, ջանըմ, անասունի մեղքի տակ է կմտնինք»։ Հետո ստիպում է. «Կե՛ր»։

— Նհո, կով էս փուշ կուտե՞,— Նանը կրկնում է հարցը։

— Էվել-պակաս ի՞նչ կխոսիս, հեռու իմ աչքից,— պոռթկում է Նհոն։

— Էս մարդ ծուռ է։

Վառոն նանը հեռանում է, քայլերը մանրիկ, աչը շրթունքների մոտ, փեշով ավելում է հացատան շեմը։

Գարնան գիշերին Օսոն պառկում է լուսամուտի դիմաց, բացում լուսամուտը, ականջ պահում ձոր ու ձորերի ձայնին։ Խը՛շշ... Հեղեղ է գնում ձորերով, լեռներում ձնհալ է։ Դբխկ, դբխկ... դղրդում է ձորը, պատուհանի ապակիները զրնգում են, հեղեղը ժայռաբեկորներ է գլորում։ «Մեկ... էրկու...»,— հաշվում է Օսոն։ Մեկը մեծ էր, մեկը՝ փոքր։ Մեկը գնաց, է՛, ձայնը որտեղի՞ց է գալիս, մեկը կանգ առավ. թիկունքը դեմ արավ ափի ժայռ ու քարերին, կանգնեց, Օսոն գիտե՝ որտեղ, առավոտյան կերթա, կկանգնի կողքին։ Մտքով շարժվում է հեղեղի ափով։ Սելավահունին ափ կա, որ քար ու քարակույտ չէ՝ հող է։ Հողեղեն ափը նեղ է, քիչ ձգվող, շուտ կտրվող։ «Մի բուռ հող է, մի ծիլ կանաչ, կքանդե, կտանե,— տնքում է հանդապահը, բորբոքում ծխախոտի կրակը։ Կրակը պատուհանից դուրս է գալիս, կպնում աստղաշոր գիշերանոցով երկընքին։— Ջլուսացա՞վ, ջաղաց չքշե՞...»։

Ջրաղա՞ց։ Որտեղի՞ց ջրաղաց։ Գիշեր է, Օսոն երազի մեջ է։ Ձորում ջրաղաց եղել է, անունը ջրաղացպանի անունով՝ «Խազարի ջաղաց»։ Հի-

մա ծառերը կան, ջրաղացը չկա։ Կան մուր ու ալյուր կերած քարերը։ Սալ կա՝ փայլը ջրաղացպան Զաքարի բամբակյա շորերից առած։ Նաև կան փրար «աուտոգ» ծաղկաստար, երփներանգ գոտիներով ջրաղացքարերը։

Հիմա գետինը ջրաղացի մի քար է, երկինքը ջրաղացի մի քար՝ մի բուռ աղուն— «ծառզարի ջաղցի» բեկորներն են ցրում։

Գյուղում էլեկտրաղաց կա։ Բախշիկը «ջաղցիպան» է։

— Քու հոր կոտրեր՝ քեզ չի տալն։

— Օսո, ինչո՞ւ։

— Փունդիր չունիա, կլոճ չես թխի... Կերթենք օղորմած հոգի քու հոր մոտ...

Է՜, դաշտապահ Օսոյի ջրաղացը մնացել է ձորում։ Հեղեղը կբշի հանկարծ, ձորերը վիշապ են դարձել, խը՜շ... Դը՜խկ, դը՜խկ...

Դա գարունքին։

Իսկ ամռանն ու աշնանը անջուր են Քարագլխի ձորերը։ Կամ գլգլան մի աղբյուրի ջուր է թավալվում, փշրվում, գոլ տալիս։ Ձորերը ծուռվիզ են, ժայռաշուրթ, արև խեզդող։ Անդունդի վրա կախվում է մասրենին, թևի տակ առնում է մի զանգակ ու սպասում գիժ մի պատանու... «Քեռի, ինձի ծաղիկ կբերե՞ս»։

— Խև ճժեր,— Օսոն ժպտում է, հետո ընկնում մաքերի մեջ։

— Մեր էրգիր էս ծաղկից կա՞ր։

Չի հիշում։ Դե, չորս-հինգ տարեկան էր, որ թողեցին էրգիրը։ Նհո պապն ասում է կար։ «Ինչ ծաղիկ էատեզ կա, Սասնո սար ու ձորում կար։ Ինչ էատեղ չկա, էնատեղ կար... Բանջար կար. խավրծիլ, նուխիկ... Մանանա կար. հարսներ դանակով կկտրեն, գոգ-գոգ կժողվեն ծառ ու քարի, գազերի վրայեն... Բեռ ու բարձով էրգիր էր, լաո»։

Դաշտապահ Օսոն ամենաշատը ծարավից է նեղվում։ Բանակից հետը բերած սապիաշիշն ի՞նչ է ար, ճար վիներ, մի կուժ ջուր կկախեր կողքից։ Էրգիր պես չէ. «Ամեն քելքին սխպուր կար, ամեն ատրտի գլխին՝ սխպուր,— Նհո պապն է ասել,— քա պատպ ատա ատրտ ուներ, ատաս սխպուր»։— Օսոյին է ասել։

Եվ դաշտապահ Օսոն ամենաշատը ծարավից է նեղվում։ Ու ոտանեղերն ընտրելով կածանով իջնում է։ Իսկ որտեղ քարերին փաթաթված կածանն է վերջանում, այնտեղ խաժուտների ժայռ կա, ատրքերի դիմաց՝ երկնքից թափված աստղեր։ Մեկ ու նալ են խփել կայծկլտացող քարի մեջ, որ չար աչքը խափանվի։ Մի քանիսն էլ Օսոն է խփել։

— Ծրհնվիս գա, օրհնվիս,— ասում է Օսոն։ Աղբյուրի՞ն է ասում,

ժայռի՞ն է ասում, ձորի՞ն։ Ամենքին էլ։ Ամեն մեկին մի քիչ հասնում է դաշտապահի օրհնանքից։

Ջուրը փշրվելով իջնում է վար։ Ամեն կաթիլ մի դաղձ է դառնում, մի պատատուկ, կանաչ անձրև է մաղվում որձաքարերի վրա։ Ջորի հատակը թացվում է, և այդտեղից ձորը դառնում է «գետ»։ Թավալվում է, փրփրում, գոլ տալիս, մինչև որ մի տեղից, ձորալանջով ձգում-հանում են։ Մի կում է մնացել։

Ժայռաճեղքից ճլճլալով դուրս է գալիս մի պուտ ջուր։ «Ճլճլան ախպուր»։ Ճեղքից ընդերքի ձայնն է լսվում։

— Փառք քո զորության,— ասում է Օսոն։ Ժայռին էլի նալ ու մեխ է խփել։ Ժայռը տեղ-տեղ սեացել է, վրան աղավնու փետուրներ կան։ Սեգին Վառ նանը ամպագույն թեուքչիով մի աղավնի է տվել Օսոյին։

— Օսո, գառ, թող Ճլճլան ախպրի քարին ուր կերթա-կերթա։

Եվ քարի վրա աղավնու ամպագույն փետուրներ կան, ու կանաչ շուրթերով ժայռը զանգակատնից ընկած քար է դարձել։

Ցլընգ, ճրլտ։ Ցլընգ, ճրլտ։ Ճլճլան աղբյուր։ Քարեղեն մի բեկոր ձորապոնկից նետվել է, բերանքաց ուկանջ է դնում։ Օրվա մեջ մի քանի կաթ ընկնում է ժայռաբեկորի վրա, և դարձ կա այնտեղ՝ քարի միջից ծլած, ուրց կա և հոպոպի հաց։

Անցած ամռանը Օսոյի բանակի ընկերը քաղաքից հյուր եկավ։

Գյուղամիջում հարցրեց.

— Երվանդյան Մարկոսի տունը ո՞րն է։

— Մարկոսն ո՞վ է,— իրար երես նայեցին,— մեր գեղ Մարկոս անուն չկա։

Հյուրը զարմացավ, հետո նկարագրեց Երվանդյան Մարկոսին և ասաց ամենազորավոր նշանը.

— Մի թեը չկա։

— Հա՜... Մեր Օսոյին կուզե,— ժպտացին,— Օսոյի ապգանուն Երվանդյան չէ՞... Հա, էլի՝, Օսոն է... Մարկոս... Հա՜, հա՜, հա՜, Մարկոս չէ մի Մարկոսիոս... հա՜, հա՜, հա՜։

Օսոն մի ձեռքով գրկեց հյուրին, զարմացրեց.

— Շատ եմ ուժեղացել, Մարկոս։

Կորած ձեռքի ուժը մյուսին է տվել։

Գառը հասցրեցին Ճլճլան աղբյուրի ուղքը։

— Քու ձեռքով մորթեմ, ախպեր։

Աղջիկը մի կճուճ մածուն բերեց և մի կապոց բաշաշ։

— Ի՞նչ գեղեցիկ աղբյուր է։

— Գեղեցիկ էն կեղներ, թե ջուր մի գիրկ դառնար։

— Չէ՞, Մարկոս, սա ժլատ գեղեցկություն է։ Նուրբ է։

— Քու ասածն է,— համաձայնեց Օսոն։

— Քանի՞ գառ ունես։

— Մնաց չորս։

— Կերուխումի մեջ ես, էլի։

— Հա՛։

Զասեց, թե՝ հինգն է եղել, որ մնացածը պիտի վաճառի, հաց գնի. «Տարին երաշտ է, աշխար՝ փուչ»։

— Մարկոս, դու մի երգ էիր ասում, հիշո՞ւմ ես։

— Մոռցվո՞ղ երգ է։

Օսոն միայն մի երգ գիտե։ Հետը կռիվ տարավ, ետ/բերեց։ Թե հարսանիք է՝ էդ երգն է, թե ոտքերը գաղրել են, նստել է մի քարի՝ էդ երգն է։ Մեկ է ու կա։ Ուրիշ երգ սովորելու ոչ ցանկություն ունի, ոչ միտք։ Վերջին քառատողը ասում է երկու անգամ, ձեռքը խփում սեղանին՝ թե հարսանքատուն է, կոպալով խփում է քարին՝ թե ձորապռունկ է.

Ջուր ե՞րբ մնամ էլու դռներ.
երթամ ժողվիմ զիմ խեղճ գառներ,
Սուքիմ զիմ բաղչան ու ծառներ,
Ջարթներիր, լաո, մեռնիմ քրզի...

— Ապրես դու, Մարկոս, կյանք ունենաս, ինչքան երգես, կլսեմ։ Էդ երգի համար էլի կգամ։

— Իմ աչքին։

Ճլճլան աղբյուրի մոտից հյուրը հեռացավ օրորվելով, մտքում Օսոյի երգը։

— Սիրեցի ձեր ձորերը, Մարկոս։

Իսկ ձորերը ծուռվիզ են, ժայռաշուրթ, գմդմփացող։ Ձորի հատակում սեզ ու պատուտակ կա, ձորապռունկից կախված՝ մասրենի, եթե անձրև է եկել՝ նաև փունջ-փունջ խոտ։ Մագլցում են, պռճկում, պոկում ճյուղ-ճյուղ խոտերը։

Թե անձրև չեկավ, օձը կախվում է մասրենու ճյուղից, թույն թափում ժայռերի վրա։ Արոյի թոռը տեսավ օձին՝ կաղաղակի, կսուլի, կքարկոծի, իսկ Օսոն երեսը շուռ կտա, տնքալով կբարձրանա ձորի կածանով։ Ձորապռունկին կարկատան արտ կա, մեջը կուլ եկած մի բարդոց։

— Օսո, արի հաց կեր։

— Նոր կերա... Ջուր կա՞։

— Սարի արտեր հասա՞ծ է, Օսո, լի՞ք են, դարդա՞կ։

Օսոն խսկույն չի պատասխանում. հիշում է, որ երեկ նախագահը մատը թափ տվեց.

— Հանդապահ Օսո, դու պանիկյորություն ես անում։

— Ինչությո՞ւն։

— Պանիկյորություն. քեֆիդ ման ես գալիս և ազդում մարդկանց տրամադրությունների վրա. թե՝ արտերը դատարկ են, էտպես, էնպես։ Թույլ տուր կազմակերպենք-ավարտենք հունձը, ինչ եղավ՝ եղավ։

Հիշում է և պատասխան տալիս հարցին.

— Սարի արտեր էստեղից լավ են. գարնան սեյավներուն ջրվան, լավ աշխատեք, ժողովուրդ։

— Օսո, նախագահը կաշառք է տվե քեզ, հա՞։

Հանդապահը լռում է, հենվում ձեռնափայտին, հայացքը կախում։

Հետո աննկատ հեռանում է, իսկ երեկոյան նորից է գտնում Խևիկին ու ոչ մեկ, ոչ երկու։

— Խևո, ջրի տեղ կիմանամ, մեկել օր գտաս էս մեկ հաստատ ջուր է։

— Որտե՞ղ գտար։

— Վերին ձորի էն ծակ քարի տակ։ Ասա ո՞նց իմացա, Խևո, նստա հանգիստ առնելու, տեսնիմ քարի տակից ձեն կելնի, կխշշա։ Քու ինժեներ ընկերոջ լուր ուղարկի՝ գա։

Խևիկը գլուխը կախ քայլում, գյուղից դուրս է գալիս, տրորում ձորապունկի կածանը, (դիտե, որ Օսոյի ասածը հորինած է, բայց գնում է)։ Հեռվում, ծալծլված կածանի կշտին խաչքար կա։ «Խաչքարը մենակ ճամփորդ է, գնո՞ւմ է, գնում, ծնկները թուլացել են»,— Խևիկը միշտ այդպես է մտածում խաչքարի մասին։ Կածանը փաթաթվում է խաչքարին, անցնում, Խևիկը չի անցնում. նստում է դեմ-դիմաց՝ ուշադիր նայելն է նրանը։ Վաղուց՝ նկատել է. խաչքարը գլխիվար է, խաչի կարճ մասը երկինք պիտի ուղղված լինի, դեպի գետինն է։ Երբվանի՞ց։ Ո՞վ գիտի, գուցե ի սկզբանե։ Կամ հոգնել՝ գլորվել է, մարդիկ ոտքի են կանգնեցրել՝ և գլխիվար։ Ի՞նչ իմանաս, խաչքարը հաստատ գլխիվար է՝ խաչքարի ծայրը խրել է հողի մեջ, կանգնել։ «Երկնքից հոգնել է»,— ամփոփում է Խևիկը, ոտքի կանգնում, թափառում երկար, և լերկ, մոայլատես լեռներից ամպ է նստում դեմքին։

Անտառը սարերի ծիծաղն է,— մտածում է,— չեմ կարծում, թե անտառապատ սարի ընդերքում մի բան լինի, այնպես, ինչպես ծիծաղելու պահին մարդու հոգում ամեն ինչ ջնջվում է, մնում է միայն մի թեթև բան, այդ պահին հոգին դատարկ է, բայց պոնկե-պոունկ լիքն է, երբ

հոգում կոիվ կա։ Այս լեռները ծիծաղ չունեն, լերկ են, գորշ են ու մռայլ։ Ուրեմն ինչո՞ւ չենթադրել, որ այդ մռայլության տակ մի բան կա։ Կա, սրանք հոգու մեջ կոիվ ունեն, բան ունեն պահած։ Ունեն։ Ի՞նչ... Իսկ ի՞նչ լիներ, ի՞նչ ունենային պահած։ Երկաթ։ Չէ։ Պղինձ։ Չէ։ Ոսկի։ Չէ՛ չէ՛, ջուր։ Ջուր չկա՞։ Երկրաբանները ասում են՝ չէ։ Դաշտապահ Օսոն ասում է՝ կա։

Խևիկի համալսարանական տարիների երկրաբան ընկեր Հովսեփը տասը անգամ խոստացավ, մի անգամ հազիվ հաջողացրեց գալ։ Օսոն ընկավ առաջ՝ ուղարկեց ճամփեն, Խևիկին ու երկրաբանին կանգնեցրեց ժայռի դիմաց։

— Կխշշա ու կերթա, ափսոս ջուր։

Հովսեփը ականջ դրեց և ասաց.

— Դատարկություն է, քամու ձայն է։ Ջուր լիներ, քամուն տեղ չէր մնա։

— Վա՜յ-ե՜ն,— ափսոսաց Օսոն, բայց չհավատաց,— «ծախս շատ կպահանջե՝ դրա համար...»։

— Ուրեմն գտնում ես, որ մեր կողմերում ջուր չկա՞։

— Չկա, Խևիկ,— համոզված ասաց երկրաբանը։

— Իսկ եթե շատ-շատ է պետք ինչո՞ւ չկա, պիտի լինի՛, պիտի գտնե՛լ։ Հող ստեղծում են. քարը ջարդում, դարձնում են հող, ջուր ստեղծելն է՞ անհնար, հասկանո՞ւմ ես, ջուր է պետք, գտի՛ր։

— Մյուս գալուց գավազանս կբերեմ,— ծիծաղեց Հովսեփը։

— Եվ քսա՛ քեզ, այս սարերի տակ ոչինչ չկա՞։

— Քար։

— Դա հեշ, ուրի՞շ։

— Լաքը,— ծիծաղեց Հովսեփը,— ա՛յ, էն սարերում խարում հայտնաբերեցինք, կար՝ գտանք, պեռլիտի անսպառ պաշար գտանք...

— Անսպա՞ռ։ Աշխարհում անսպառ ոչի՞նչ չկա։ Անսպառը երկրաբանական տերմին է։ Մի օր այդ սարերը չեն լինի և չի՛ լինի պեռլիտի քո այդ «անսպառ» պաշարը։ Եվ հետո, մի հարց. նոր հանք գտնելուց, առենք թեկուզ՝ ոսկու, շա՞տ ես ուրախանում։

— Իհարկե, ուրախանում եմ։

— Իզուր։ Ինձ թվում է, դրանից ոգևորվել պետք չէ։ Գիտե՞ս ինչ, Հովսեփ, ես խղճում եմ այն բոլոր սարերին, որոնց գաղտնիքը մատնում ես։ Ազոլհետև մարդու հարստությունը, նաև ուժը բոլորից թաքցրած իր վերջին գաղտնիքի մեջ է։ Պարզվեց՝ պարտված է։

— Դու էլի էն գիժն ես մնացել,— ծիծաղեց Հովսեփը։

Այնուամենայնիվ Խևիկը երկրաբան ընկերոջը քարշ տվեց մինչև Համբերդ։ Ճանապարհին Հովսեփը հա՛ կրկնեց։

— Ջուր կգտնենք, եթե Խևիկը շատ է ուզում՝ կգտնենք,— ու ծիծաղեց, հետո լրջացավ ու ասաց,— ջուրը հարց է ու հարց։

Համբերդում, Աշոտ Երկաթի ավեր բերդի մեջ կրակ արեցին։ Հաց ու գինու հոտ եկավ։ Խևիկը շատ խմեց. խև էր, խև դարձավ։

Եռ գալուց ճանապարհը խճճված թել էր. ամեն մետրի վրա ջարդված էին «Վիլիսի» լույսերը, ամեն մետրի վրա լույսերը թափառում էին հյուսիս-հարավ։

— Զգույշ, Դերո,— ասաց Հովսեփը։

Դերոն չպատասխանեց։

«Լավ էլ անում է, որ չի պատասխանում»,— մտածեց Խևիկը,— բա ինչ, զգույշը համարյա այն բառն է, երբ ամեն մեկը իրավունք է վերապահում իրեն օգտագործել երեխայի նկատմամբ. «Չի կարելի, չի կարելի»։

— Ինչո՞ւ զգույշ, գնա, Դերո, եթե կարող ես նոր ճանապարհ բացիր, ազնիվ խոսք։ Մի կծիկ էլ դու կապիր ոտքիդ, քարշ տուր էս սար ու ձորի մեջ։

Քիչ առաջ էլ ասում էին՝ «Զգույշ, Խևիկ, կգլորվես, փորձա՞նք ես, ա՛յ մարդ»,— և կանգնած նայելու փոխարեն, պառկած նայից անդունդին, երբ պառկած ես նայում, ավելի ես մոտենում ցածին, անդունդին։ Ամոթ է, ա՛յ մարդ, անդունդի պունկին մարդիկ, ախր, կանգնեցրել են տուն, վանք, ամրություններ, պարիսպ, ինչպե՞ս են կառուցել։ Պառկա՞ծ։

— Արագ քշիր, Դերո, ինչի՞ց ես վախենում։ Բնությունը վախի զգացումը սխալմամբ է տվել մարդուն։ Արագ քշիր, նոր ճամփով գնա։

Բայց ինչո՞ւ է այդքան խճճված այս ճանապարհը։ Ուրիշ ճամփաներ էլ կան, ինչո՞ւ այդպես չեն։ Աչքերդ կկոցում, նայո՞ւմ ես, նայում, հորիզոնդ վերջանում է, ճամփեն չի կտրվում։ Ա՛յ, եթե այդպիսի ճամփի վրա լիներ տվտոն, Դերոն այդքան լարված չէր լինի։ Ղեկը կբռներ մի ձեռքով, շուռ կգար, կխոսեր։ Հիմա երկու ձեռքն էլ քիչ է, լուծությունն էլ, երկու աչքն էլ։

— Մեր ճամփեքի օգուտն էն է, որ կստիպեն լավ մասնագետ դառնանք,— ասաց Դերոն։

Լավ տրամաբանություն ունի մարդը և գա դժվարին այս ճամփեքի հետ է կապված և այս սարերի։

3

— Էս գեղի առաջին ծնունդ դաշտադեմցի Ֆարեի Սաքոն է[1], պորտ իմ ձեռքով է կտրվել,— հիշում է տատմայր Մանիշակը։

— Հերու մի տղա Սաքոյին էղավ, մեկ՝ իր հարսին։ Բժիշկ խեղճ ճժերի պորտ սխալ է կտրե...

Ֆարեին օղորմի։ Իսկ Սաքոն կա, հաստատ գիտե, որ տարիքը քառասունհինգ է, միայն ծննդյան ամիսն ու օրն է կորցրել։ Տեր է՝ թև առած-թռած որդիների և մի «բուլկ ճժի»։ Մեծ որդին արդեն առանձին ծուխ է, և Սաքոյի կինն ու հարսը հաց ու թաց են փոխ տալիս-առնում, մեկ-մեկ էլ լեզվակռիվ են տալիս՝ մի քիչ որպես հարս ու սկեսուր, ավելի շատ՝ հարևանական պատճառներով, հարևանավարի։

Մյուս որդին բանակից եկավ, մի երկու շաբաթ իրիկունները երգ ու սուլոցով դարձավ տուն, առավոտները մարզանք արեց, գնաց գյուղամեջ, հետո թողեց և՛ երգ, և՛ մարզանք, գյուղն էլ թողեց, գնաց քաղաք։ Հիմա, ամիսը մեկ-երկու անգամ՝ գալիս է։ Ավտոյից իջնելուն պես նկատում է.

— Էս կինոն նո՞ր է հասել էստեղ։

Նկատում է.

— Կինոյի անունը սխալ է թարգմանված։

Նկատում ու հիշում է.

— Ներացել ես, Վաղո... Հիշո՞ւմ ես դպրոցում ի՞նչ էինք անում։

— Բան էլ չէինք անում,— տխրում է Վաղոն և ցանկանում վանել տխրությունը,— քաղաքում ի՞նչ կա։

— Հե՜շ,— լրջանում է, ապա աշխույժով հարցնում,— Պելեի մասին կարդացի՞ր։

— Պելեի մասի՞ն...,— խեղճանում է Վաղոն,— Պելեն ո՞վ է։

— Բա՜... մարդ էլ Պելեին չճանաչի,— ծիծաղում է։

— Ո՞վ է, է՜,— նեղսրտում է Վաղոն։

— Ֆուտբոլիստ է, բրազիլացի. իսկականից ծերացել ես,— ծիծաղում է։

Վաղոն վիրավորվում է, աչքերը ճպճպացնում, որոնում հարմար պատասխան։

— Մեծ մարդու ես ճանաչում, էլի՜,— ասում է ու հեռանում։

Երեխաները աղմուկով չեն դիմավորում Վոլոդին։ Որդու բարևին Սաքոն պատասխանում է գլխի շարժումով, մայրը՝ կոտրված ձայնով ու շաղ-եկած հայացքով։

Տունն ու Վոլոդյան իրար հետ երկար զրույց չունեն։

---

[1] Սա եղել է ակնարկ, որը հետագայում հեղինակը վերամշակել և դարձրել է վիպակի մի մասը։ (Ս. խ.)։

— Ո՞նց ես, Հայրիկ։

— Լավ եմ,— մռայլ ասում է Սաքոն։

Լռություն... տան անկյունում մայրը ամաններն է խառնում, ու խտանում է լռությունը։

— Վալոդ ջան, հիվանդ չե՞ս։— Մայրն է։

— Չէ՛, լավ եմ։

Լռություն... Վոլոդյան նայում է երեխաներին։

— Դասից եկե՞լ եք։

— Հա՛,— պատասխանողը առաջին դասարանցին է։

Լռություն... Վոլոդյայի ծխախոտն ու Սաքոյի «ջղարան» օճորքի տակ գծագրում են ծխե անորոշ պատկերներ՝ հանդիպում են ու պատուհանի մոտ դառնում մշուշ։

Հետո Վոլոդյան գնում է գյուղամեջ, ուռենիների տակ շարված քարերից մեկի վրա փռում է թաշկինակը, նստում, «Կազբեկի» տուփը հանում, հանում գլանակ, կոթը թխկթխկացնում տուփի վրա, փչում, ծխում է ու ժպտում է, հա՛ ժպտում, ինքն էլ մինչև վերջ չի հասկանում՝ թե ինչու, բայց որ ժպտալ պետք է, անպայման պետք է։

— Ասվատուր, Սաքոյի տղեն իմ աչքին ուրախ կերևա, միշտ ուրախ կերևա,— շշնջում է Արոն։

— Քու աչքեր քեզ կխաբին, միշտ կխաբին,— Ասատուրը բարձրաձայն է պատասխանում։ Արոն շարունակում է ու՝ էլի շշուկով։

— Մեկել օր մեր Մխիկ քաղաք էր գնացե...

Քաղաքում հանդիպել է Վոլոդին, ռեստորանում կերել-խմել են՝ Մխիկի հաշվին, հետո Մխիկը հինգ ռուբլի փող է տվել Վոլոդին, պարտքով էլ չէ՝ հենց այնպես տվել է։ Ախր, Մխիկը շա՜տ բաց ձեռք է, շա՜տ խղճով, հենց իմացել է, որ Սաքոյի տղան փող չունի, տվել է։

— Վալոդ,— Արոն փոխում է դիրքը, ձայնը բարձրացնում,— մեր Մխիկ անցած անգամ հանդիպել է քեզ, չէ՞։

— Հա,— խուսափուկ պատասխանում է Վոլոդյան։

— Կտեսնի՞ս, իմ խոսք ճշմարիտ է,— Արոն նորից է դառնում Ասատուրին։

Մխիկը պատմել է նաև, որ Սաքոյի տղան «ասֆալտ է կթափե», մինչև իրիկուն մրի մեջ է, ստացածն էլ՝ հե՛չ, որ Սաքոյի տղան ապրում է Հանրակացարանում և որ, հարյուր տարի էլ մնա, Սաքոյի տղային քաղաքում տուն տվող չկա։

— Վալոդ, դու ասֆալտ կթափիս ու հանրակացարան կապրիս, չէ՞,— Արոն պատմածը կնքում է։

— Հա,— պատասխանը դժկամ է, բայց Վոլոդյայի դեմքին ժպիտ կա։

— Փողից-մողից քա հոր կոժանդակիս, չէ՞։

Այս անգամ Վոլոդյան կարմրում-ծիծաղում է և մոքսամ հարհոյում Արոյին, Մխիկին էլ հետը։

— Վալոդ...

Արոն էլի հարցուփորձ ունի, բայց Ասատուրը չոր ընդհատում է.

— Ի՞նչ, Արո, ի՞նչ։ Վալոդ, հա Վալոդ։ Ի՞նչ։ Հա՝ վաթանի կապրի, ասֆալտ կթափե, հող կթաղե ու...— Ասատուրը լայն ժպտում է և նոր տոնով փակում խոսքը,— ու քու գլուխ կթաղե։ Պրծա՞նք։

Ուրեմն, Սաքոյի Վալոդյա որդին քաղաքում է ապրում և ամիսը մեկերկու անգամ գյուղ է գալիս։ Գալիս՝ «Կաղբեկի» տուփը գոտին խրած (գյուղ գալուց անպայման «Կաղբեկ» է գնում), ձեռքերը գրպանում, գնալուց՝ շուրթերը խոնավ ու յուղափայլ, մի ձեռքում ալյումինե ամանով մածուն, մյուսում՝ մի կապոց բան ու ման։

— Անցած գարնան, երբ Սաքոյի երեխաների թիվը մեկով էլ ավելացավ, Սաքոն մի ծուռ քայլ արեց ու դարձավ քարագլխեցիների աչքի փուշը։

Դաշտից ուղիղ զրուցատեղ էր եկել, թիկն տվել ծառին, ոտքերը երկարել ու ծխում էր, երբ լիքը դուլլերով մի կին փոխանցելով տեղ հասցրեց.

— Սաքո, քու աչք լույս. տղա ունեցար։

Քթի տակ խնդմնդաց։ Հետո մի ճոթ պատաքամի ելավ, փոշի ցանեց խնդմնդոցին, ու Սաքոյի դեմքը լրջացավ։ Շարունակեց կիսատ թողած խոհ ու հաշիվ, և հաշվաեզրերը ավելի հեռացան, մտքերը դեմով անցնող հոտի պես խճճվեցին։ Ոչխարների շունչ ու փորից բոլորը հասկացան, որ Աբգեուտի սմուռանոցի ցիցքար-պատվանները էլի տապալվել են։ Ամեն մեկը հոտի մեջ փնտրեց իր ոչխարները՝ աչք ու ժպիտ դիպցրեց նրանց լի կրծքերին ու հոգիի Ավդիին։ Մեկի էլ Սրոն ասաց.

— Հեյ, հեյրան, Ավդի, հեյրան, աբգեուտիցց մեքենի նորեն լցացրել է։

Ավդին, երբ հոտը քշում է գյուղի թիկունքն ի վեր, երկու տեղ կորցնում է հորիզոն ու արև, մի տեղ աշխարհին կոպ-խոխ է նայում, ամպերի միջից, հետո գնում հանանում է թերդաների փեշը։ Աբգեուտից դեռ օրենքսահմանագծով իրավունք չունի՝ դաշտի գրող Աբգեուտի սմուռանոցներն են։ Բայց Ավդին խոխոտում է սահմանը, և հոտը կուշտ-կուշտ բերում է գյուղ։

— Այգեստափցիք ուզենան, մեր հաց ու թաց կկորին, ժողովուրդ. ամիս յոթանասուն-ութանասուն մանեթի գլխից անցնին, աստանձին հանդապահ բռնին, ի՞նչ կանենք,— իր կարծիքը հայտնեց Պետրոսը։

Կես ու պռատ, կողմ ու դեմ պատասխան տվին, հետո Պետրոսը իր ոչխարների ետևից գնաց, Սաքոն էլ՝ իր։

Բակում, երբ տղան կանգնեց ու նորածնի մասին իր իմացած պատմությունն ասաց՝ թլոր ու շնչակտուր, Սաքոյի աչքը դիպավ նրա պոլզած պարտին ու հանկարծ հիշեց Պետրոսի սասածը. «Ամիս յոթանասուն-ութանասուն մանեթի գլխից անցնին...»։ Հայցի նստեց՝ էլի միտն ընկավ և, չիմացավ ինչու, յոթանասունը գցեց մի կողմ, առավ ութսունն ու սկսեց հաշիվ-մաշիվ անել...

«Քիչ փարա չէ՞...»,— համոզվեց, անկողին մտավ, բայց մտքով մնաց հաշվի հետ։

Մյուս առավոտ, գարշի համփին, Սաքոն պոչ հայտացք կպցրեց Պետրոսին ու փախցրեց, ինքն էլ չիմացավ, թե ինչո՞ւ այդպես։ Գիշերը մտքով անցել էր.

«Պապատահի՞ Պետրոս հանդապահ գառնալու միտք ունի»։ Նորից հիշեց իրիկվա հաշիվն ու թիվը և ինչքան մտածեց, այդ միտքն ավելի հավանական թվաց։ Եվ բերան բացեց-փակեց... վերջը չդիմացավ.

— Պետրոս, կպատահի՞,— ասում էր ասել պահակ դառնալու միտք ունես, բայց վտանգ զգաց (գուցե Պետրոսը ամենևին էլ պահակության միտք չունի, ինչո՞ւ հուշել) և ծռեց խոսքը,— կպատահի՞ այգեստափցիք սարին պահակ բռնեն։

— Թե խելք ունենան։

Եվ Սաքոն պահակությունը հաշվեց ակզբում երկու ու կես, հետո երեք ամիս, ապա երեք հատ ութսուն գումարեց իրար, կլորացրեց հաշիվն ու շեղ չափեց Պետրոսին։

— Անձրև ուշացավ, խանձան արտեր,— ասաց Պետրոսը։

Սաքոյի պատասխանը մտքում եղավ.

«Դու անձրևի մասին ի՞նչ կմտածես. հանդապահ կդառնաս, կապրիս»։

Շատաթ էր, որ Սաքոյի ուշքն ու միտքը շաղ էր ընկել։ Ջրուցում էին, սուս էր մնում։ Նոքն իր կոգմն էին ուղարկում, ուշ էր գլխի ընկնում։ Սիծաղում էին, ծուռ ու մուռ ժպտում էր։ Միայն Պետրոսի ասածներն էր գցում աստամների ասկ, տանում-բերում ու փապում Այգեստափի սարի պահակության մտքին։ Պետրոսի տգան գետինը թնգացնելով անցնում էր, Սաքոն նրա ոտքերի թափը վերագրում էր հոր տված կարմիր-կոշիկ խոստմանը։

Յա՜, կրակ-փորձանքի մեջ էր ընկել Սաքոն, ինչքան ուզում էր սարն էլ, պահակությունն էլ հետը, մտքից գցել ոտքերի տակ ու գլուխը կախ գնալ իր բանին, չէր ստացվում։

Այգեստափից դարձավ ձիով։ Ճամփից դուրս եկավ և սար ու ձորով բռնեց գյուղի ուղղությունը։

Եվ պահակությունն էին տվել՝ ութսուն ռուբլի ամսականով, և ձի՝ թամբ ու սանձով։ Ու Սաքոն հեծյալ էր, մի տեսակ իշխանատեր. անորոշ մի զգացում էր աչք բացել, խլրտում էր հոգու ծալքերում։ Զգացում էր՝ գդակի վրայից հող ու փոշի թափ տալու, գդակի պատռվածքը կարելու կամ հենց նոր-նոր գդակ ունենալու ցանկության նման մի բան։ Վստահ հայացքով ակոսում էր աջ ու ձախ, աչք էր կախում երևացող հոտ ու մարդկանց վրա։

Սաքոն կանգնել էր ասպանդակներին, բարձրացել թամբ ու ձիուց, ձի էր խթանում։

Ձին Սաքոյին հիշեցրեց նաև կովի տարիները։ Հեծյալ էր... «Արծիվ զարկվավ, նոր ձին չառավ Արծիվ անուն, իրար լեզու չհասկացանք»։

Բայց միտքը շատ չգնաց ճղճղված օրերի ետևից։ Վախվորուկ մի ձայն կտրակցվելով բարձրանո՜ւմ, հասնում էր մինչև կոկորդը, ղրթալով կուլ գնում, դառնում ետ գալիս նորից. «Քու արած արած չէ, Սաքո... Ո՞ւմ հանդին պահակ դարձար։ Այգեստափցո՞ց... Առավոտ ձին ո՞ւմ վրա կքշիս, քու գյուղացո՞ւ...»։

Ճիգ էր անում ականջը գոց պահի՝ կտցահարում էր. «Սաքո, քո արած արած չէ...»։

Հայացքը սար ու դաշտից հավաքվեց, խիճքարի պես ընկավ, արդեն ինքնագլուխ, ձիու սմբակների տակ։ Կախ ընկած կոպերի դեմով մարդիկ անցուդարձ արին։

Նախագահը մատ թափ տվեց։

Ջրբաժինը ցուցակից ջնջեց իր անունը։

Ասատուրը քմծիծաղեց. «Սաքո, Բաղդադ խաբման մի արատի է, չե՞ս էրթա...»։

Նհոն կտրեց դեմը, կոթնեց ձեռնափայտին, ծանր ու մեծ վերուվարեց գլուխը, «Լաո, քո օղորմած հեր թասիբի գերի էր, ինչո՞ւ կավերիս իր անուն...»։

Մանիշակը թիկունքից չանչ արավ ու ծղրտաց. «Անիծվի քու ծնունդ»։

Պետրոսի տղան պատի ետևից քարով զարկեց ձիուն ու փախավ...

Եկան-գնացին էլի ու էլի մարդիկ՝ խառնված աչքունքով, քմծիծաղով, հայհոյելով, մատ թափ տալով։

Եվ... ձիու սանձը ամուր քաշեց։ Ձին դժգոհ վրնջաց, ծամեց, զընգացրեց պողպատյա լկամները, կրճտացրեց ատամները, գլուխը թափ տվեց ու զայրացրեց Սաքոյին։ Սանձով չէ, մտրակ ու շրխկոցով ձիու գլուխը շուռ տվեց դեպի Այգեստափ։ Սանոթ գյուղը ցոլցլաց ձիու աչքերի սև հայելում, ձին փնչաց, ուզեց վարդ վերցնել, բայց զսպվեց։ Զգված սանձը ձիու գլուխը բարձրացրե՞ց, բարձրացրեց հասցրեց Սաքոյի գլխին։

Սաքոյին թվում էր, թե մի բան՝ շա՞տ-շատ կարևոր բան, ընկավ ու մնաց այնտեղ, որտեղից շուռ տվեց ձիու գլուխը։ Թվում էր նաև, թե հազար բան շաղ է գալիս, հազար բան ճմռթվում է ձիու սմբակների տակ։

Ախր, մտքով նա վազո՞ւց ստացել ու ծախսել էր պահակության վարձը։ Բաշխել՝ տեղը-տեղին։ Վերջին երեք ռուբլիանոցն էլ թողել էր գրպանում, մտել խանութ, բացել մի շիշ օղի, հյուրասիրել բրիգադավար Հակոբին, ջրբաժնին, Պետրոսին։ Մի բաժակ էլ ինքն էր անուշ արել, սրբել բերանն ու փաթաթել ջղարա։

Չէ՞, այդ բոլորից ձեռք քաշելը դժվար էր։

Եվ ինչ-որ տեղից, գուցե եղունգների տակից, գուցե ձիու սմբակներից մի ձայն տրորվում, կանչում էր. «Սաքո, ախր, էսպես չեղավ...»։

Դեպի իր Այգեստափը ոտք վերցրած ձին նորից զայրացրեց Սաքոյին, մտրակը նորից շրխկաց ու խճճվեց ձիու բաշի մեջ, և ձին նորից շուռ եկավ Քարագլուխ։

Մյուս օր իրիկնամուտին, երբ կապույտ մշուշ մաղվեց գյուղի քարե-նժարներին, հովիվ Ավգին գյուղեզրից բռնեց, թաղեթաղ անցավ, զնգացրեց.

— Բա հալալ կաթնակեր իր գեղ ու բարեկամին կթողնի, պահա՞կ կկայնի ուրիշի հանդին։

Քարագլուխ փնչաց։ Դուռ ու տանիքից մթաշաղախ խասք ու հայացք թափվեց Սաքոյի տան գլխին։ Քիչ բան չէ՞ր. գյուղում ինչքան կով ու ոչխար կար, բոլորի դնչին Սաքոյի մտրակը դիպել էր։ Կաթով լի ինչքան ման կար, Սաքոն շուռ էր տվել։

Եվ Քարագլուխը փրփուր-ալիք տվեց։

Նախագահը գրասենյակ կանչեց։ Սաքոն ո՞չ դուրս եկավ, ո՞չ գրասենյակ գնաց։ Կնոջ վրա գոռգոռաց, երեխաների ու ձիու վրա ձեռք բարձրացրեց, հայհոյեց անհասցե։

Իսկ մի քանի օր անց, երբ տնամերձը կտրելու լուրն ականջն ընկավ, դիմալուսին ձի չհեծավ, չգնաց սար. նստեց տնամերձի պատաշարին, ծխեց, աչք ածեց շուրջբոլոր, ծխեց, սպասեց։ Ու երբ փողոցում երևաց նախագահը, Սաքոն երեխաներին աղմուկով հավաքեց տնամերձի

կենտրոնում, հմայեց-կպցրեց իրար, խփեց փոքրին, էլի խփեց, որ ձայնարկու լա, հետո էլ նայեց նախագահի կողմն ու բաբիրաձայն ասաց.

— Տնամե՞ռ կկարե... Թող կարե՞... Տեսնենք էս երեխեքի պատասխան կտա՞։

Հետո հարցը լուծած, հաղթանակած մարդու նման ձի հեծավ ու գնաց սար։ Այդ օրը ահագի՞ն խնքնավստահ էր, թույլ տվեց, որ Ավգին հոտը մինչև Մեծ առվի մոտ տանի։ Իսկ երեկոյան գնաց գյուղամեջ, ճանապարհին մտածելով բարև տալ ու առնելու մասին։ Մյուս իրիկունն էլ երևաց գյուղացիների աչքին։ Բարևին չպատասխանեցին՝ վիրավորանքը կուլ տվեց, խոսք ասաց։ Չպատասխանեցին՝ անտաշ ու անորոշ մի բան սուլեց, չնայած սուլել չէր իմանում։ Հետո էլ երեսը պնդեց, ջրբաժնին քաշեց կողմ.

— Սար խոտ ծնկահար է, առավոտ էրեխեքին ճամփե...

Ջրբաժինը աչք-ունքը խառնեց, չնայեց Սաքոյին, բայց ուքն էլ ուքի առաջ չգցեց, և արևից առաջ, երեխանեքն առած, սարում էր։

Այգեստափի սարի Սաքո պահակը Քսրաղբի ջրբաժնին բարև տվեց ու անցավ։ Ետ եկավ, հացի կապոցը բացեց, կանչեց ջրբաժնին։ Հետո նայեց երկնքին, ասավ.

— Անձրև չեկավ, չորացան տնամերձներ։

Գնաց, դարձավ եկավ, խրձերը տեղափոխելու համար առաջարկեց ձին, էլի նայեց երկնքին, էլի ասաց.

— Ամպշող է, բալքի անձրև գա, չորացան տնամերձներ։

— Մթնեց, տղին կուղարկիս ջուր տանե... Նախագան չիմանա,— ջրբաժինը գործարքը կնքեց։

Այդ երեկո Սաքոն առաջին անգամ մոտեցավ օրորոցին, բացեց նորածնի դեմքը, ժպտաց։ Ժպտաց նաև կնոջը.

— Տղին անուն չդնի՞նք։

Վազուց կինը ոչ կարգին մի բառ էր լսել Սաքոյից, ոչ տեսել նրա ժպիտը. հուզվեց ու սիրտ արավ.

— Սաքո, աստված սիրես, ձին դարձրու տիրոջ...

Սաքոն նորից մռայլվեց։ Գիշեր գիշերով մինչև լեզվի ծայրը հասած բառերը կուլ էր տալիս, բայց ականջների մեջ զնգում էր. «Սաքո, քո արած աքսած չէ»։ Եվ միտք ուներ ամիսը կլորացնել, իջնել գաշտի գյուղ, ձին էլ վերադարձնել, պահակությունն էլ։

Ամիսը լրացավ։ Սաքոն իրիկունը աչք փակեց՝ ձի ու պահակություն թողնելու որոշմամբ, զարթնեց՝ գնաց սար։ Քնեց՝ որոշմամբ, եկավ, վճիռը գցեց ձիու սմբակների տակ, գնաց սար։

Մի՞ օր էլ, պահակության քառասունքը չբոլորած, այգեստափցիները

քոչ ու հոտով սար ելան, Բերդասարում հանդիպեցին Մաքոյին, բեռ բարձան թիկունքին, թե՝ կարգին պահակություն չես արել և հենց այնտեղ էլ պահակությունն ու ձին առան ձեռքից։

Մաքոն գյուղ իջավ ահագին խառնված հաշիվներով։ Ոչգետափցիներին հիշեց՝ արագացրեց քայլերը, գրասենյակ ու զրուցատեղ հիշեց՝ ոտքը կախ գցեց։ Հետո նստեց կարգին միտք ու հաշիվ անելու, հաշիվները ավելի խառնվեցին ու ձայնն ընկավ ականջը.

— Վայ, Մաքո՜, Մաքո։

4

Վաղոն հնձվոր է, կալվոր է, ջրվոր։ Յոթերորդ դասարանից։ Դրպրոցական արձակուրդների ժամանակ վաթսուն-յոթանասուն աշխոր գցեց, բրիգադիր Հակոբը գովեց, խրախուսեց, ասավ.

— Վաղո, թե տարին բոլոր աշխատես, գնա, հազար աշխոր կունենաս։— Ասաց,— ձեր տուն տղամարդ չկա, դու ձեր տան տղամարդն ես, դու արի իմ բրիգադ՝ վարդի պես պահեմ։

Եվ Վաղոն թողեց դպրոցը։

Երկու տարի աշխատեց Հակոբի բրիգադում։ Աշնանը պաբկ-պարկ ցորեն տարավ տուն, տղամարդու պես բերքը բարձեց սայլին, տարավ տուն։ Մայրը ուրախացավ, հետո էլ տրբեց աչքերը.

— Վաղո, գառ, մնացիր առանց ուսման։

Հետո Վաղոն հորթապահ դարձավ։ Ամռանը հորթերի հետ եկավ սար, փայտից հորթ քանդակեց, սարվորների հետ ուղարկեց մորը, փայտից Թուխ Մանուկ քանդակեց՝ ուղարկեց Վարդա մարեին, փայտից եղնիկ քանդակեց՝ ուղարկեց դպրոցին, Նհո պատի համար՝ ծխամորճ, Ասատուրի համար՝ տերտղամբիա... Հետո ֆերմայի վարիչը պատվեր տվեց.

— Վաղո, թե Գևոյի պատկերը քաշես, աշուն-ձմեռն էս չոր հորթը պարդեն կստանաս։

Եվ Վաղոն մի թիզ փայտի վրա փորագրեց Գևորին՝ ձեռքերը գրպանում, բերանը բաց, մի ոտքը երկար, մեկը՝ կարճ։

Դրա համար ֆերմայի վարիչը արտակարգ իջավ տարից. քանդակը կախեց զրուցատեղի ուռենուց։

Դրա համար Գևոն գնաց ռազմ. Վաղոյին ծեծեց։

...Հինգ-վեց տարի առաջ Վաղոն սարից իջավ, գնաց բանակ։ Հայրը չուներ, որ համբուրեր ճակատը, հայրը գնացել էր կռիվ ու ետ չէր դարձել, Վարդանուշ մայրն էր՝ փաթաթվեց որդու ոտքերը.

— Վաղո,— ասաց,— դու կովի առաջին օրվա ծնունդ ես, գառ, չար օրվա ծնունդ ես, զգույշ մնա։

Զորացրվեց՝ շատ էր փոխվել. բեղ ու մորուք ուներ, մատին՝ մատանի՝ պղի՞նձ էր, ոսկեջրած արծա՞թ, բայց ոսկի չէր։ Կրծքանշաններ ուներ, երեք տեղ «տողադարձ» էր արել, շարել երեք «տողի» վրա։ Վարդո մարեն շոշափեց կրծքանշանները և հիշեց, որ տղան շնորհքով է ու հարց տվեց.

— Վաղո, լաո, էս պլիկներ դո՞ւ ես շինե։

— Հա՜, մարե,— ծիծաղեց Վաղոն։

— Աստված էվելի շնորհք տա, լաո։

Մի շաբաթում կրծքանշանները մեկ-մեկ բաժանեց՝ թաղի յոթ երեխա, տղա-աղջիկ, դարձան մեդալակիր, իսկ առանց կրծքանշանների զինվորական զգեստները մոր աչքին երևացին հասարակ ու անդուր։

«Տղին շոր է պետք»,— մտածեց։

Խանութից գնեց 46 չափսի կոստյում (բանակ գնալուց Վաղոն այդ չափսին էր), փոքր դուրս եկավ՝ փոխեցին 48-ի հետ։ Փոքր էր։ Տասը ռուբլի ավելացրեց՝ վերցրեց 50-ը... Յա՜... Վաղոյին պետք էր 52 չափսի կոստյում։

Վաղոն հագավ կոստյումը, ֆոֆռաց հայելու դեմ, ինքն իրեն ժպտաց և աչքով արեց, հիշեց մոսկովյան պարերի հրապարակները, պատկերացրեց, որ երեկոյան քաղաքացիական զգեստով է պարում Նինայի հետ ու ֆոկստրոտի պտույտ արեց, հետո հայելու մեջ տեսավ իր գրկած գատարկությունը և մռայլվեց։ Կարոտեց Մոսկվային, և՛ պարերի հրապարակին և՛ Նինային, և՛ բանակին։

— Ես էստեղ չեմ ապրի,— ասաց բարձրաձայն։

«Ըլնեմ հորթարած, ֆերմայի վարիչը ֆռացնի, թե Գևոյին քանդակի՝ հորթն ուզես, Գևոն էլ գա ինձ ծեծի... կուտի»,— և գլխի ընկավ, որ իրենց գյուղի բարբառով չէ մտածում։

Մայրը տխրեց. Վաղոն, միակ զավակը՝ գնում է, ինքը մենակ մնալ չի կարող, իսկ Վաղոյի հետ ո՞ւր գնա, անցկացրած լավ ու վատ օրերը Քարագլուխ գյուղում է եղել, հիմա քաղաք գնա ի՞նչ անի։ Հարևանուհին խորհուրդ տվեց.

— Վարդուշ, տղին կարգե։

...Խնամախոսության ժամանակ Վաղոյի մայրը երեք անգամ պատմեց «չափսի» մասին, հպարտությամբ պատմեց ու ավելացրեց.

— 52-ն էլ փոքր է իմ Վաղոյի համար։

Աքլորականչի հետ գյուղի գլխին որոտաց դհոլը, պայթեց անձրևաբեր ամպրոպի նման։ Զորերը դըրմբացին, շարժվեցին ձյունածածկ քարերը, գյուղի դռները ճռնչացին և մութը սրբվեց տների աչքերից։

Աքլորականչի հետ ծիրանաշուք գոտեպատից գյուղի վրա մաղվեց «Առավոտ լուսոն»։ Մաղվեց անձրևի նման։ Պատուհանների ու երդիկների ձմռան գիշերվա սառցե քանդակները հալվեցին, գյուղի «ակնոցավոր» աչքերից իջան ուրախության արցունքներ։

«Առավոտ լուսոն» անցավ թաղե-թաղ, տնե-տուն մտավ։

Վարդո մարեն կանգնեց շեմին, խաչակնքեց առավոտը։

— Բարի լուսո աստված, աշխարհին ուրախություն տուր։ Բարի լուսո աստված, էս ուրախություն Վարդուշին շատ չհամարիս։

Անկողնում ճռնչացին Նհո պապի հին ոսկորները։

— Օղորմի քեզ, Թորո, օղորմի... Քու տուն ավերեցին, կտրեցին քու ծառեր, էլի ծիլ տվեց։

Ջահելների սիրտը թպրտաց։ Աքլորականչն ու «Առավոտ լուսոն» թուխ հյուսքերի նման շաղ եկան սենյակներում, բարձերի վրա։

Գյուղում հարյուր տեղից թրատվեց փողոցների ձյունածածկը. հարյուր տեղից ղողանջեցին ոտնահետքերը, ղողանջեցին, միացան իրար, Վարդանուշի դռանը դարձան լիճ։

Նհո պապը՝ մաքուր սափրված, հին ու մաքուր վերարկուն ուսերին, կանգնեց կենտրոնում, ծխամորճը հեռացրեց շուրթերից, հատ-հատ ասաց.

— Տղեք, Վարդանուշի մեկուճար տղի հարսանիք սրտանց ու ուրախությամբ անցկացրեք։ Կխնդրեմ,— շեշտեց։ Ամեն քարազլխեցու հարսանիքին Նհո պապի խոսքը դա է։ Հետո դարձավ զուռնաչուն.

— Յարխուշտա,— պատվիրեց ու ավելացրեց կատակով,— քու շարաշ իմ հոգուն պարտք, էրթանք էրգեր քու լավության տակից էլնիմ։

Ջահելները զույգ-զույգ փոթորկեցին, ձյան մեջ օղակ-օղակ փոթորկեցին, շուռ եկան, ափերը շրխկոցով բերեցին իրար, ոտքերի տակից պոկվող ու գալարվող ձյան պես ծունկ ու մեջքով գալարվեցին. ծառս եկան, ուժ ու թափով ափերը բերեցին-զարկեցին իրար։ Պարողների դեմքերին ու աչքերի մեջ վառվեց ըմբոստությունը, կանգնեց՝ վեճ ու կռվից հաղթող դուրս գալու վճռի, ափերը տաքացան-կարմրեցին, հայ հա, արյուն պիտի ցողեն, բայց պարից նահանջող չեղավ։ Պար չէր՝ կռիվ էր ու ոչ ոք պարտվել չէր ուզում։ Պարողների երակներում ձառս էր եղել պապերի արյունը՝ վայրենի ու ըմբոստ։ Հալվում էր ձյունը, Վարդանուշի տան լուսամուտի ապակիները դողում էին և պարը նայողներն էին անհանգիստ շարժվում, սեղմում բռունցք։

Նոր պարը ձեռքը բարձրացրեց՝ բավ է։

— Գոտքանան. կզարկին իրար,— ասաց կողքը կանգնած Խևիկին։ Խևիկը չպատասխանեց, ատամների տակ սեղմված մի բան կար։ «Ինչպե՞ս են տանեղծել այս պարը,— մտածեց,— ամենասովորական մարդը այս պարի մեջ տեր է դառնում մեծ ինքնատիրության, աշխարհի մահը զցում է ոտքերի տակ և մտածում միայն հաղթելու մասին...»։

— Խևո, մեր էրգիր Յարխուշտեն կիսատ չէր մնա, մինչև մեկի ափի մեջ չմաքեր, արուն չելներ՝ խաղ չէր թողնի։ Գյարմավցի Գրկո կար, էդ անխիղճ մարդ կմտներ խաղի մեջ, բոլորի ձեռքեր կճաքեցներ, կհաներ խաղեն գուրս, կմնար մենակ. ձեռք կդներ մեջքին կֆռեր, կֆռեր, ձան մեջ փոթորիկ կաներ՝ կկանչեր պարող։ Աղրայե՛լ մարդ էր... Պատմելով, Գրկոյին լղպոր-լղպոր, մունդատ մի ասկյար է զարկեն։

Հիշեց-ասաց Նոր պապը, հետո լրջացավ, մռայլվեց, ծխամորճը ամուր ձգեց՝ գյարմավցի Գրկոյի համար էր, էլի՝ ձգեց, հետո վերարկուն գցեց մի երեխայի ուսերին, ծխամորճը տվեց ձեռքը, հանգարտ մոտեցավ Քոչարին քաշող-տանողին, գոտուց հանեց թաշկինակը, թափահարեց, մատ կանչեց զուռնաչուն, խրատեց.

— Քոչարին ծանդր չալե։ Էսպես.

Էմ-լը՛ զո՛-զա՛ն, է՛մ-լը զո՛զա՛ն.
Է՛մ-լը զո՛-զա՛ն. է՛մ-լը՛-զո՛-զա՛ն
Մե՛գ-լը՛ զո՛-զա՛ն զի՛-ա՛-բեցի՛ք.
Հը՛ֆի՛...

Խրատեց, չափը տվեց զուռնաչուն, բարձրացրեց թաշկինակն ու քաշեց պարը։ Հանդարտություն իջավ պարի վրա. պարողները ավելի ամուր սեղմվեցին. իրար ուս ու թիկունք բռնեցին ավելի ամուր, խտացան, ձիգ ու համաչափ կոտրատվեցին, գոփեցին ծա՛նր-ծանր։ Զգվեց պարի շարոցը, բակը տեղ չարեց՝ կլաբեց պարը։ Գևոյին նույնպես քաշեցին պարի մեջ, խառվ կանգնած էր՝ քաշեցին, և Գևոյի դեմքը պայծառացավ ու շփոթ-շփոթ գցեց ոտքերը, հետո ձուլվեց պարողներին ու գնաց։

«Շատ լավ է,— մտքում ոգևորված ձայն հանեց Խևիկը,— Քարագլուխը դարձել է մի մարդ, հիմա բոլորը իրար սիրում են, ազնիվ խոսք, սիրում են։ Միշտ այդպես լիներ...»։

Հետո Վարդանուշի տան պատերը ետ-ետ գնացին, տունը լայն սրտի նման Քարագլուխը տեղավորեց մեկ մարդու պես։ Նստեցին ըստ կարգի։ Բաժակ վերցրեցին ըստ կարգի։ Նոր պապը ծխամորճը հեռացրեց շուրթերից, պահեց ձախով, աջով առավ բաժակը։ Գինու գավը

գողաց ափի մեջ. գինի կաթկթաց հացի վրա։ Օրհնանք էր՝ պոկվեց ծեր սրտից, իջավ մանանայի պես։

— Վարդանուշ, քու աչք լուս էղնի,— ասաց։

Վարդանուշը խոնարհեց գլուխը։ Աբրունքի մի կաթիլ պոկվեց։

— Վարդանուշ, մեր աչք լույս էղնի, մեր գեղի, մեր ժողովրդի աչք,— լռեց։— Կոտորուքս էղավ ու գարուն օրով տապոռեցին քու մեծ կեսրարի՝ լուսհոգի Թորոյի ծաղկած ծառ ու ճյուղ,— լռեց։— Պատերազմ էղավ ու ամառ օրով տապոռ դրեցին Թորոյի թաք ծառ բնին. Սեդրակ գնաց կռիվ,— լռեց։— Իմ լեզուն չի պատի ասիմ, շահել էր, օղորմի Սեդրակին,— լռեց։— Բայց ծառի արմատ, որ խոր էղավ, ծառ կորին էլ, չի չորանա։ Թորոյի ծառ էլի ծիլ տվեց, թող էլի ծառ դառնա, ծաղկի, լաս, հազար ճյուղ ու թև տա։ Թորոյի օջախ հուր-հավիտյան ծխա...

— Ամե՛ն, տեր,— ծեր հայացքներ դիպան տան առաստաղին։

— Նհո պապ, չիմես. Օսո, երգի...

Գիտեն, թե Օսոն ինչ պիտի երգի. Օսոն մի երգ ունի՝ «Մշեցու օրորոցայինը»։ Եվ չծանրացրեց, կանգնեց, մաքրեց էկեղորդը և սկսեց։

Լռեց հարսանքատունը։ Ձեռքները սեղաններին ծալած, խոնարհված լսեցին երգը, չէ՛, լսեցին մի պատմություն, լցվեցին, մռայլվեցին ու երբ Օսոն նախավերջին քառատողն էր երգելու, բոլորը ոտքի ելան, միացան Օսոյին և՛ երգեցին, և՛ բռունցք զարկեցին սեղանին։

Նեղճ մշեցին մեռավ լարով,
Օտար երկրներ մեն գարով,
Մեռավ խոլիի պատրաստ տարով.
Զարթնի՛ր, լաս, մեռնիմ քեզի...

Հանդարտություն ու նինջ բերող չէր Օսոյի օրորոցայինը, քայլերգ էր։

— Օսոյի կենաց։

Օսոն շոյված առավ բաժակն ու սպասեց։ Բայց Օսոյի կենացը խմող չեղավ. իրար ընդմիջելով, հերթ ու առանց հերթի բաժակաճառ ասեցին Օսոյի երգի տեքստերով և վերջում, խմելուց առաջ, մեկը հիշեց. «Օսո, քու կենաց»,— տարբ չհիշեցին։ Իսկ Օսոն այնուամենայնիվ հարկ համարեց պատասխանել.

— Գոհ ու շնորհակալ եմ, ժողովուրդ։

Հարսանիքը տաքացավ, Օսոն հա՛ կրկնեց երգը, մեջքնդմեջ՝ բաժակաճառ Օսոյի երգի տեքստերով։ Բոլորը տաքացան, բոլորը երգել ուզեցին ու խոսք ասել և գյուղին ու հարսանիքին հյուր մեկը ձեռքը

դրեց ականջին, ճակատը կնճռոտեց, փակեց աչքերն ու ձգեց լալկան մի մեղեդի։

— Չէ՛,— Արտաշը, մոռացած հյուրընկալության կարգ ու կանոն, ընդհատեց հյուրին և կանգնեց ոտքի։

Որոտաց Գևորգ — անիրավ գուշման
Եկուք քու կյանքը գնեց շատ էժան...

— Գնեմ շատ էժան...— Արտաշի հետ կրկնեցին բոլորը։ Ձեռքեր ուղղվեցին իրար, շեղ ու կրակվող հայացքներ ուղղվեցին իրար, կրքոտ կրկնեցին,— գնեմ շատ էժան...

Արոն շաղված, բայց հաշտ ու ջերմ նայեց Գևորին ու ականջի մոտ գոռաց.

— Հա՛ ջա՛ն, Գևո, հեյրան էն ձենին։

Երգի բառ ու մեղեդուց լսվեց կրակոցի ձայն ու մի հերոսի ըմբոստ որոտ, սրեր մերկացան, ճոճվեցին, և Գևորգ Չաուշը թոցրեց Քոսա Բիմբաշու գլուխը... Քարագլուխը փնչաց ու նստեց։

— Արտաշի կենա՛ց...

— Չէ՛,— Արտաշը որոտաց, ձեռքով թրատեց առաջարկությունը,— խմինք Գևորգ Չաուշի կենա՛ց...

— Գևորգ Չաուշի կենա՛ց...

— Անդրանիկի կենա՛ց...

Լեգենդ դարձած անունները եկան, իրենց լեռներով ու լեռներից կախած իրենց հայացքներով խառնվեցին իրար ու դարձան հարսանիքի տերը։ Հարսանքատան սիրտը լցվեց, հարսանքատունը հուզմունքից ու հպարտությունից որոտաց և այդ պահին Արտաշը մի Գևորգ Չաուշ էր՝ կրակված աչքերով, առնական ու հսկա և հարսանքատանը չէր, էր՝ Ֆիդասարի վրա։

— Պոլե Մջոյի կենաց,— գոռաց Արոն,— իր ախպեր Արշակի կենաց,— դարձավ Գևոյի կողմ,— Գևո, իմ հոգին, խմե Պոլե Մջոյի կենաց, իր ախպեր Արշակի կենաց,— դարձավ ալեկոծված հարսանքատանը բարձր-բարձր պատմեց և լսեց միայն ինքը,— Պոլե Մջոն դիրք բռնեց սարի վրա՝ կովա՛վ, կովա՛վ, կովա՛վ, չորս օր ասկարների դեմ կռվա՛վ... Վերջի գնդակ զարկեց իրե՛ն,— Արոն թափով ծեծեց կուրծքը,— զարկեց իրե՛ն,— աչքերից արցունք թափեց ու թափեց գինին,— զարկեց իրե՛ն...

— Լավ արեց,— Ասատուրը բռնեց Արոյի ձեռքը,— մնար ասկյարներին գերի՞ ընկներ։

— Հա՛,— լաց եղավ Արոն։— Չէ՛...

— Արտաշ, երգե՛, Արտաշ, ե՛րգե՛ն,— Արոն բառը երգեց.— Պոլի Մշոն զարկեց իրե՛ն։

Ո՞ւմ հարսանիքն էր։ Հա՛, Վաղոյի...

Առավոտյան Օսոն մոայլ կանգնեց աղբյուրի մոտ, Արոյի կոդքին և խոսք բացեց.

— Արո, կով ծնե՛ ու խոտ չկա...

— Յա՛։ Քու աչք լուս,— ասաց Արոն և հեռացրեց իրենից,— էս գարնան գլուխ խոտ թե էղնի՝ Գևոյին։ Գիշեր էլի երկու խուրձ կոլխոզի կալից տարավ։

— Գևոն գիշեր հարսանիքի մեջ չէ՞ր, Արո։

— Էղնի, դու ինձանից իմացի, Օսո, դիմալուսին էլա տանիք, տեսնիմ Գևոն ու իր կնիկ խրձեր շալակած կերքան։ Գնա Գևոյի մոտ։

— Չէ... Նախագահին չե՞ս տեսե։

— Էսօր նախագահի հետ գո՛րծ չունիս, Օսո,— խորհուրդ տվեց Արոն,— նախագահ ջղայնացա՛ծ-ջղայնացած է։

— Ինչի՞։

— Նախագահն ու Արտաշ վիճեցին։ Ես չէղնենք՝ իրար կծեծեն, ես չթողեցի։ Բայց մեղք նախագահին էր,— մեկնաբանեց Արոն,— Արտաշ ավտո ուզեց, նախագահ չտվեց։ Արտաշ ասեց. բա ես ավտո ումի՞ց ուզիմ, ես ի՞նչ անիմ։ Նախագան ծիծաղեց, կատակ արեց, հա, սըրտանց չէր, մարդ կատակ արեց, էստեղ մեղք Արտաշին է...

— Նախագան ի՞նչ կատակ արեց,— չհամբերեց Օսոն։

— Մարդ կատակ արեց,— ասաց՝ դու լավ երգել կիմանաս, Արտաշ, գնա խաղ ասա։ Օսոյին ասիմ, էստեղ Արտաշ տաքացա՛վ... Ասիմ՝ իրար խոսք ասել էղավ, իրար վրա քշել էղավ, ու ես չթողեցի։ Հետո Արտաշ... իմ բերան չի պտտի ասիմ, Արտաշ մեր հերոսներին... Ղալաթուբյուն արեց Արտաշ, Օսո։

— Ի՞նչ արեց, է՞։

— Հայհոյանք տվեց, Օսո, հայհոյեց մեր հերոսներին ու նախագահին։ Նախագահին՝ վնաս չունի, բայց... Պոլի Մշոյին հայհոյա՞նք։

Արոն պատմեց-մեկնաբանեց Քարագլուխ գյուղի այդ օրվա առաջին նորությունը, կորցրեց՝ խոտի մասին Օսոյի զցած խոսքը. Օսոն ո՛չ խնդրել է, ո՛չ մերժվել։ Արոն չմոռացավ նաև իր կարծիքը հայտնել հարսի մասին.

— Օսո, Վարդանուշի հարս մեր գեղի աղջիկ. իմ աչաց դեմ մեծացած

աղջիկ ու քթի ծռություն չեմ նկատեմ։ Իրիկուն իմ աչք դիպավ՝ ծուռ էր։ Հարսի քիթ ծուռ էր, Օսո։

Վաղոյի մայրը երեք տարում դարձավ երկու թոռան տեր։ Խլվլաց մի թորոս, պապի անունն առած և մեծ տատի անունով՝ մի Նարգիզ։

Հիմա Վաղոն նոր օջախ, նոր ծուխ ունի։ Հացատան երդիկից ծուխ է ելնում, ունի գոմ, սենյակի պատերն է կանգնեցրել։ Ջափ ու ձև անելուց կարծում էր, թե առաջինը ինքն է տուն շինում այդ հողի վրա։ Հիմք փորեց, և հողի տակից դուրս եկան քարեր՝ կողք-կողքի, ուղղաշար։ Քարերին թրխկացել էր մուրճ՝ տեղը կար։ Տան հիմք էր եղել ժամանակին։ Եվ հողի տակից ելավ մի կճուճ՝ գինեգույն շուրթին մատնահետք, մեջը զնգացող դրամ. «Տունը շեն մնա հաց ու գինով, տեր կենդանով»։ Նաև՝ ջարդված կավաման՝ յուղ են լցրել մեջը, պանիր ու շոռ, հավկուտ։ Տարին նեղ է եղել, և տատը ունեցածն է պահել կավամանում։ Երևի լցրել է հավկուտ, մի քանի հավկիթ թաքցրել մեջը. թոռան աչքից հեռու, ինչպես հիմա՝ գյուղ Քարագլխում։ Հիմք փորելուց հողի տակից ելավ ճոռշրթով կավե ճրագ և թոնիր։ Թոնրի մեջ հողը մոխրաերակներ ուներ։ Խևիկը պոռնկեց և հացի մոխրացած մի նշխար գտավ։ Է՜, ժամանակին՝ աշխարհը հացաբույրով, տատի օրհնանքով է լցրել։

Սրբապատկերներով, զարդաքանդակներով խաչաթույր քարեր ելան հողի տակից։ Ծառարմատներ ելան, լցված ալրափոշով, մի քիչ էլ մնային՝ կդառնային հող։

«Այս պատառ հողում, որի վրա Վաղոն հիմա տուն է կառուցում և կարծում է՝ առաջինը ինքն է, ինչքա՜ն-ինչքան օջախներ կան՝ մի բուռ հող դառած... Տարիք ունի այս հողը, տարի՞ք...»,— Խևիկը նստեց հենց նոր արևերես ելած զարդաքանդակ քարի վրա, հայացքը մեխեց-մնաց։— Բայց այս զառամյալ երկրագնդի վրա կա՞ մի անկյուն, մի թիզ հող, որ տարիք չունենա։ Կա՛։ Անապատը։ Հա՜, հենց անապատը։ Թե վանքերի պատին՝ կայծակալախտ է ժամանակը, անապատի վրայով քամու պես է անցնում։ Քամին ավերող էլ չէ, փոշեթև է։ Թե գետերի համար փորփրված հատակ, փլզված ափ, նոր հուն, անապատի համար... Անապատին չի դիպչում, անապատի հետ գործ չունի ժամանակը։ Իսկ աշխարհի լքված վայրերի՞... Այդ տեղերում քարանում է ժամանակը։ Այդպես է, որովհետև ժամանակը այն է, ինչ տրորվում է մարդու ոտքերի տակ։ Ժամանակը, է՜, երկար ու մեկ փռված է գետնին։ Մեքենավարը անիվներով է տրորում, ես՝ ոտքերով, նրա պապը՝ նռան ձեռնափայտով։ Գետնին փռված օդն է ժամանակը։ Հենց այդպես՝ գետնին փռված օդը։ Ընկավ ոտքերիդ տակ, կգնա, Վաղոյի բահը դիպավ՝ կգնա։ Չէ, քար է ու կա։ Իսկ անապատը ո՞վ է տրորում, որ ժամանակը հոսի։

Թե մի տեղ ոտք է դիպել, օտարիս է։ Հը՞, օտարիսները ոտնահետքերի տեղեր չե՞ն... Դարերի կյանք ունեցող աշխարհում, աշխարհի հետ ծնված անապատը ո՛չ կյանք ունի, ո՛չ տարիք։ Չի՛ ապրում։ Չապրեց՝ չի մեռնի... Բայց եղավ, որ աշխարհից վտարված մի անապատ՝ Տեր Զորը, մի անգամ արթնացավ հավերժական քնից. աշխարհից իր նման աքսորված ու մերժված հորս երկրացիների աղաղակող ոսքերի տակ արթնացավ, տեսածի համար փղձկաց, շաղ տվեց իր ավազահատիկ-արցունքները, իր պեծ-պեծ արցունքները։ Անտարբեր աշխարհի համար, իր քարացած ժամանակի համար լաց եղավ, լաց եղավ ու նորից փակեց աչքերը, դարձավ լքված շիրմաթումբ։ Սա՝ աշխարհի ոճրագործ մի գիշերվա «բացառություն»։ Իսկ ընդհանրապես անապատը չի ապրում, չի մեռնում, մի փշի կյանքից այն կողմ չի անցնում անապատի տարիքը։ Իրենից ծնվող ու մեռնող մի փշի կյանք։ Դրա համար է վրեժխնդիր դարձել։ Փշի պես ծակում է, օձի պես խայթում, խեղդում՝ տոթի ու ծարավի պես և ճաքճքած շուրթերով անիծող հազար բերան ունի։ Չար է։ Չա՞ր։ Չէ, մեղք է անապատը։ Լքված մարդու շափ մեղք են անապատներն ու լքված հողերը։ Չէ, կյանքում ամեն պատմություն մարդու քայլերի հետ է սկսվում, մատնածայրերից, հայացքից, այս Վաղոյի քլունգի ծայրից։

Վաղոյի տան հիմքը փոքրիկուց Նոռ պտղը եկավ։

— Բարի աշխատիք,— ասավ, քլունգն առավ, փորեց մի քիչ, հետո նստեց քարին, գլուխն առավ ափերի մեջ։ «Տուն շինել լավ բան է... տուն շինել՝ երկինք ծուխ հանել է, բայց... Բայց Թորոյի Թոռ էստեղ ինչի՞ պիտի հիմք փորեր»։

...Գարունը բացվեց թե չէ, բրիգադիր Հակոբը կանգնում է դռանը։

— Էլի ես, էլի դու, Վաղո ջան։

— Չէ, էզպիսի բան չկա, Վաղոն կոլխոզ աշխատող չէ։

Բա կիսատ տո՞ւնը։ Կոլտնտեսությունը փայտ կտա՞, կոլտնտեսությունը երկաթ-ցեմենտ կտա՞։ Չի տա։ Ուրիշ կոլտնտեսություն լիներ՝ հա. հող ունեն մարդիկ, ջուր ունեն, եկամուտ են ստանում, աշխարը գին ունի։ Փող աշխատել է հարկավոր, փող, շինարարություններում խնդրում են։

— Էս տարի լավ կլինի, Վաղո ջան, համ էլ կօգնենք՝ փայտ ու երկաթ կճարենք. տունը կիսատ չե՞նք թողնի։

Վաղոն նայում է կնոջը. «Մարդու խաթր կոտրել լավ չէ, ի՞նչ անեմ»։ Կինը հայացքը կախում է, խառնում զգեստի կոճակի հետ. «Իմ գործը չէ»,— ինչ իմանա՝ տարին ինչպես կլինի, բրիգադիրը կպահի՞ իր խոսքը՝ երկաթ-մերկաթ կտա՞... Վաղոյի ձեռքից պրծում չի լինի։

— Լավ,— Վաղոն համաձայնվում է,— ցանքից պրծանք, էլ չեմ գա։

Դաշտում չորսն են, երիտասարդը Վաղոն է։ Մյուսները, ինչքան հիշում է Վաղոն, էդպես են ու կան։ Քանդակի պես բան են դարձել։ Նույն փափախն է կամ ջարդված կազիրյոկով գլխարկը, նույն ոտնամաններն ու շորերը։ Ձեն էլ մաշվում։ Դեմքների կնճիռներն էլ քարացել-մնացել են։

— Ջորսով ի՞նչ,— սրտնեղում է Վաղոն։

Ցանքից հետո բրիգադիր Հակոբը էլի է բանակցում։

— Վաղո ջան...

Վաղոն էլի մարդու խաթրը չի կոտրում։

— Սարից սելավ կտրվեց, էլ չեմ աշխատի, տուն կիսատ մնաց, ա՛յ մարդ։

Օգոստոսին՝ կրկին բանակցություններ։

— Բա ցանքն ու ջուրը էրթա-կորի, չհնձինք, չկալսի՞նք, Վաղո։

Եվ ամեն տարվա հաշվետու ժողովին նախագահը Վաղոյի անունը կարդում է լավ աշխատողների ցուցակում։

Շրջկենտրոնի շինարարության աշխղեկն էլ լավ է ճանաչում նրան։ Աշնանը Վաղոյի անունը աշխղեկի ծոցատետրի մեջ է։

Տնից դուրս է գալիս լուսելուսին, թևատակին հացի կապոց, ձեռքերը բաճկոնի գրպանում, հացի պատառը ծամելով։

— Վաղո, էդ ի՞նչ կուտես էդպես անուշ-անուշ։

— Հաց։

Շինարարությունից մթանն է տուն գալիս՝ թևատակին մի քանի կտոր տախտակ, երկու կես երկաթաձող, գրպանում հացաշորը։ Փայտն ու երկաթը, շը՛խկ, գցում է պատի տակ, հացաշորը սեղանին։

— Ի՞նչ կա ուտելու։

Թորոսն ու Նարգիզը խլվլում են մահճակալին, Վաղոն լուռ աչքով է անում պլաստան աչքերով մանկանց, հետևում կնոջ շարժումներին և նկատում. «Ձմռան ամիսներին՝ կսիրունանա...»։

5

Տասը տարում Քարագլուխը մի քանի նախագահ է փոխել։ Ամեն նոր նախագահ հենց հաջորդ օրը պարզել է, որ հաշվապահն ու պահեստապետը, հաշվառիչն ու ֆերմաների վարիչները բանի պետք չեն և՝

նորերն է ընտրել, բայց բոլոր նախագահները Նախշուն Մամբրեյանին գտել են՝ հմուտ ու անփոխարինելի։

Նախշունը ծխախոտագործուհի է։ Եվ առաջավոր։ Շրջանի գյուղատնտեսության առաջավորների հավաք եղավ՝ մասնակից է։ Անցած գարնանը նախագահը օր առաջ զգուշացրեց.

— Նախշուն, պատրաստվիր,— և ավելացրեց,— իմացիր նաև, որ պատվոգիր ես ստանալու... Բա՞, դու կարծում ես, թե քո աշխատանքը գնահատող չկա՞։

Պատվոգիր... Քիչ բան չէ։ Շրջանում քանի՞ մարդ կա... Քանիսն են պատվոգիր ստանում... Մատների վրա կհաշվվեն։ Եվ՝ մեկը ինքն է։ Միակը՝ Քարագլուխ գյուղում, Չէ՞, քիչ բան չէ։ Եվ առաջին զգացումը ամաչելու հպարտությունն էր։ Հետո դա հոգու խորքում, ինչ-որ տեղ, քուն մտավ և հանդարտ ու լուռ աչք բացեց տագնապը։ Հազար աչքի ուղեկցությամբ բեմ պետք է ելնի, հազար աչքի դեմ-դիմաց պիտի կանգնի, շուրթ շարժի՝ ասի շնորհակալական խոսք... «Պատրաստվիր»,— հիշեց նախագահի պատվերը։ Ինչի՞ն էր վերաբերում... Երևի՝ շնորհակալական խոսքին։ Հենց՝ դրան։

Նախշունը պատվոգիր հանձնել-ընդունելը տեսել էր ու գիտեր՝ բեմում նստած ղեկավարներից մեկը աջով ջերմ-ջերմ սեղմում է պատվոգիրն ստացողի աջը, ձախով՝ հանձնում։ Հետո՝ շնորհակալական խոսք։ Ի՞նչ պետք է ասի։ Անցյալ տարի հարևան գյուղի հովիվը ի՞նչ ասաց։ Դե, նա՝ կարդաց, մոտեցավ ամբիոնին, գրպանից մի թուղթ հանեց, կարդաց, հենց երկրորդ տողից սխալվեց, ծիծաղեցին, սկսեց՝ նորից, էլի սխալվեց... «Պարտավորվում եմ հարյուր մայրից ստանալ հարյուր քսան մայր...»։ Նախշունը ժպտաց, և ուսնկից աշխատող ընկերուհին քաշեց մյուսի փեշը՝ մատնացույց արեց ժպիտը։

— Ինչ է ուրախացե՞...

Ընկերուհու շշնջոցը նաև Նախշունի ականջին հասավ, բայց նա չլսելու տվեց և հաստատ որոշեց. շնորհակալական խոսքն ասելուց չսխալվել։ Բայց... ի՞նչ է ասելու։ Երևկոյան ամուսնուն կուղարկի նախագահի մոտ. թող՝ գրի կամ գրել տա։ Չէ, կարդալով կսխալվի։ Երևկոյան ամուսնու հետ կորոշեն։ Կորոշեն՝ մի քանի անգամ կասի, անգիր կանի։ Այս այսպես։ Ուրի՞շ... Հա՞, լողանալ է պետք։ Անպայման։ Շորերը արդուկել է պետք։ Ախր, հազար աչք կա։

Բեմ բարձրանալուց իրեն ուղղված հայացքներում, թե կնոջ է՝ լիներ նախանձ, կնոջ նախանձ, թե տղամարդու է՝ սեր ու ցանկություն։ Հա՞՝ սեր ու ցանկություն։ Եվ ինքը շորորալով հպա՞ռ-հպարտ բարձրանար

քեմ, ընդուներ պատվոգիրը, չպատասխաներ ոչ մի տղամարդու հայացքի, ոչ մի, թեկուզ՝ պատվոգիրը հանձնող ղեկավար մարդու ու գլուխը բարձր պահած անսխալ ասեր շնորհակալական խոսքը և այդպես հպարտ ու հանդիսավոր բեմից իջներ՝ հայացքների տարափի տակ։ Չէ՞... Այդպես հաճելի երևալու համար լողանալ ու արդուկված շորեր հագնելը քիչ է։ Շատ քիչ է։ Նայեց ձեռքերին։ Սև, մի տեսակ կապույտ փայլով, հատվող ու իրար շալակ ելած երակներով։ Մատնածալերը՝ մամլված ու տափակ, կոշտ ու կնճռոտված, ափերը ճաքճքված, ճաքերում՝ հող, եղունգների տակ՝ հող։ Ապա և հայացքը սահեցրեց դաստակից արմունկը ձգվող, լցված ու ելած երակի վրայով և... տեսեց այդ կապտավուն ու ցցված երակը։ Ատեց, հոնքերը բերեց իրար, ափերում սեղմեց հողուրագի կոթը՝ իր ձեռք ու թևերից ավելի կոկ էր, իր ձեռք ու թևերից ավելի դուրեկան գույն ուներ։ «Երկար թևերով շոր կհագնիմ»։ Հոգնածություն զգաց. հողուրագը գցեց, նստեց ու, սիրտն ուզեց՝ մտքով հագավ երկար թևերով «խաս» շորն ու կանգնեց հայելու դիմաց։ Զգեստը կախվեց ուսերից պարկի պես։ Գոտի կապեց՝ զգեստը մոտ բերեց մարմնին։ Հետո մաղերը արեց երկու հյուս, շփեց մաշված հյուսերը, կախեց թիկունքին, և երկար ու մանրակրկիտ սկսեց ուսումնասիրել դեմքը։ Այտոսկրները ցցված էին ու կապտափայլ, քթարմատներից ու այտերից ակոսներ էին գնում՝ պարուրում աչքերը։ Հոգում ցավ զգաց, և դրանից ավելի խորացան ակոսները, ուզեցավ ջնջել՝ շփեց վարի կոպերը, և կողք-կողքի շարվեցին մանրիկ գծեր՝ սև ու սպիտակ, կարմիր ու սպիտակ, կապտավուն ու սպիտակ։ Չէ՞, ջնջվող չեն։ Ավելի լցվեց ու կոշտացած ափերով սղալեց դեմքը և այս անգամ շեկ աղվամազերը ցցվեցին... Իսկ ճակատի վերնամասի ճերմակը, հո, աչք էր ծակում։ Միշտ գլխաշորի տակ պահած երկու մատ լայնությամբ ճերմակ շերտը։ Ախր... Այդ ճերմակ պատառը դեմքի հետ կապ չունի։ Հա՛, կապ չունի. մի տեղից բերել են դաշտ ու կպցրել ճակատին։ Կամ... կամ հենց այդքանն է իրենը, դեմքից միայն այդքանն է մնացել, թաքնված գլխաշորի տակ։ Էգուց առաջավորների հավաք է, էգուց պատվոգրի համար բեմ է բարձրանալու, մարդիկ կնկատեն «ճակատի բաշը», կծիծաղեն։ Եվ որոշեց ճերմակ պատառը արևին տալ՝ գլխաշորը արձակեց ու պատճառաբանեց.

— Շոգ է։

— Դու պատվոգիր ստացար, էլ քեզ մրսել չկա՞,— կատակեց ընկերուհին, և Նախշունը զգաց, որ խոսքի մեջ՝ նախանձ էլ կա։

— Մենակ շրջկենտրոն էրթալուն քո մարդը համաձա՞յն է։

Հասկացավ նաև ընկերուհու ակնարկը, վիրավորվեց, բայց պատասխան չտվեց։

— Շրջկենտրոն հեռո՞ւ է, կհասնի-կգառնա, ի՞նչ կպատահի,— ասն տվող եղավ։

— Ինչ կպատահի՞... Հազար տեսակ մարդ կհավաքվի, տեսար մեկը մոտափոխ էղավ, փախցրեց Նախշունին։

Պարզ է, ընկերուհիները, խոսքները մեկ արած, խնդմնդում են, ծաղր անում և... նախանձից։ Հա՝ նախանձում են։ Թե չէ եղածներից ո՞վ է հուրի-փերի։ Իր նման՝ կոպտացած ձեռք ու տոտք, արևահար դեմք։ Եվ թող նախանձից տրաքվեն, պատվոգիրը իրենն է, Նախշուն Մամբրեյանին։ Հիմա ինքը կգնա տուն պատրաստվելու։ Իրավունքով կգնա։

Մեծահոգաբար չպատասխանեց։ Կովի համար հավաքած քաղհանը լցրեց գոգնոցը, հողուրագը ուսեց, ոչ մեկին չնայեց ու ասաց.

— Ես գնացի։— Եվ քայլեց ցուցամոլ հպարտությամբ։

Զբաղեցրեց դահլիճի վերջին կարգի աթոռներից մեկը, Պետրոսի ու Վաղոյի կողքին ու սպասեց։ Բեմը դեռ դատարկ էր։ Չէ, բեմում սեղաններն էին, շարված կողք-կողքի, ծածկված կարմիր պաստառով։ Սեղանին՝ ծաղկեփունջ։ Ամբիոնին՝ լի ջրաման և բաժակ։ Նախշունը իրեն պատկերացրեց ամբիոնի մոտ՝ ճառ ասելիս, հետո պաուզա՝ ջուր է լցնում-խմում, շարունակում խոսքը։ Պատկերացրեց ու ամաչկոտ ժպտաց։ Բեմի խորքում դուռ բացվեց, մարդիկ երևացին, և նա ձեռքը տարավ շուրթերը՝ սրբեց ամաչկոտ ժպիտն ու, ձեռքը շուրթերի մոտ պահած լրջացավ։ Հետո մեկը մոտեցավ ամբիոնին. ընթերցեց հավաքի նախագահության կազմը և... և...

— Մամբրեյան Նախշուն,— Քարագլուխ գյուղի կոլտնտեսության ծխախոտագործուհի։

Նախշունի ձեռքը գողաց շուրթերի մոտ, կարմրեց, շփոթված նայեց Պետրոսին ու Վաղոյին։

— Քու մարդ էսօր մաղարիչ-մաղարիչի վրա ունի,— ծիծաղեց Պետրոսը։

— Խնդրում եմ նախագահության անդամները գրավեն իրենց տեղերը,— պահանջեցին բեմից։

Նախշունը կոլտնտեսության ժողովների էր մասնակցել, ծնողական ժողովի, գնացել էր ուղիղ դաշտից՝ հողուրագով, առանց շորերը փոխելու, գլխաշորով, գնացել էր շորերը փոխած ու առանց գլխաշորի և ոչ ոք չէր նկատել՝ գլխաշորը կամ գլխաշորի տակից արևերես եկած ճակատի ճերմակ պատառը, չգիտես ինչն ու ինչը։ Իսկ այս մեկը ուրիշ է. ժամ-ժամ պտի նստի բեմում՝ անծանոթ հազար աչքի գիմաց և... Եվ նույնիսկ դահլիճում ներկա իրենց քարագլխեցիները, որ գյուղում իրեն

չեն էլ նկատում, հիմա մի բան կգտնեն, կխնդմնդան ու խնդմնդոցը կտեզափոխեն գյուղ... Եվ դանդաղում էր, հայացքով որոնում նախագահին. բեմ չբարձրանալու ճար պիտի խնդրեր։

— Դե, էլ, էլ,— Պետրոսը քաշեց թևից,— մարդիկ քեզ կսպասեն։

Շփոթված քայլեց դեպի բեմ, գլուխը կախ, խառնված քայլերով գնաց, բեմ բարձրացող աստիճանների վրա ծնկները դողացին՝ գայթեց, հետո աչքը դիպավ շարք սեղանների եզրի դատարկ աթոռին՝ նստեց ու ծնկները ամուր բերեց իրար։ Հետո աչքի պոչով նայեց Հարևանին՝ արմունկները սեղանին էր հենել, ափերը՝ ծնոտին։ Ընդօրինակեց։ Դողացին ձեռքերը՝ իջեցրեց ծնկներին, հարմար չէր, և՝ սահելով ելան, գոտու ճոթերի հետ շփոթված խաղ արին։ Ամբիոնի մոտ կանգնած մեկը բան էր ասում, թե ինչ, Նախշունը չլսեց։ Բեմում նստածները ծափահարեցին, դահլիճը արձագանքեց, Հարևան ձեռքերը ծափ տվեցին, ու՝ խառնաշփոթ միացավ։ Եվ ծափ տալու ժամանակ Նախշունը նոր գլխի ընկավ, որ Հարևան թևն ու ձեռք կնոջ է։ Ձեռքերը՝ ճերմակ ու հեշտալի։ Նշմարվող ոչ մի երակ, նույնիսկ մատնածալերն էին աննշմար, մատները ծորացող, վարդագույն եղունգներով... «Իմ ձեռքեր սեղանին չեմ դնի»։ Հետո, էլի կողքանց ու գողտուկ, հայացքը սահեցրեց մինչև ուսը, Հարևանուհու բաց թևի վրայով սահեցրեց՝ վեր ու վար արեց և չկարողացավ աչք կտրել։ Նայե՞ց, նայեց՝ իր բազուկից արմունկը ձգվող պրկված երակի տեղը, գոնե տեղը, որոնց այդ թևի վրա չգտավ, և աչքերը զգացին նաև թևի դալարությունն ու փափկությունը, զգացին այնքան շոշափելի, որքան մատները կզգային, եթե... Իսկ ի՞նչ կլինի, եթե... Եթե ձեռք տա, հա, բաց թողնի էդ անտեր գոտու ծայրը (հոգնեցրեց), շոշափի աղջկա թևը... Հենց այդպես՝ ա՛յ, էն կարմիր եղունգներից սկսի, բարձրանա մինչև ուսը, հետո շփելով իջնի վար, հետո... Հետո քաշի այդ ձեռքն ու թևը, մոտ բերի՝ քսի աչքերին, դեմքին-շուրթերին... Աչքերը խուտուտ եկան, ուզեցավ տրորել, բայց ամաչեց։

Ինչ-որ բանի համար, Նախշունը չիմացավ՝ ինչի, բեմում նստածները էլի ծափահարեցին, դահլիճը շարունակեց, Նախշունը էլի ուշացավ, էլի շփոթվեց, բայց և օգտագործեց առիթը՝ ձեռքերի հետ նաև գլուխը բարձրացրեց, նայեց աղջկան, հետո էլ աթոռը մոտ տարավ՝ թևը քսեց աղջկա թևին... Անուշ մի բույր դիպավ ռունգներին։ Օծանելիքի չէր, չէ։ Նախշունին ծանոթ է օծանելիքի հոտը, սա ուրիշ էր, սա հենց այդ թեվերի բույրն էր, դրանք այդպես էլ պիտի բուրեին, հենց՝ այդպես։ Եվ նա ամո՞ւր-ամուր շնչեց, էլի շնչեց ու նրան թվաց, թե այդ կում բույրը արդեն իրենը դարձավ, իր սեփականը թվաց, թե հիմա ինքը մի տեսակ ուրիշ է, երեկվանից մի՞ քիչ տարբեր։ Մի՞ քիչ։ Ու սիրտ արավ՝ նայեց

դահլիճին։ Անծանոթ մի տղամարդ թեքվել-շշնջում էր հարևանի ականջին։ («Հա՛,— Նախշունը կնոջ բնազդով հասկացավ,— խոսք էս աղջկա մասին է»)։ Հիմար ժպիտ կար տղամարդու դեմքին. անճար ցանկությունից ծնված հիմար մի բան։

Այդպիսի ժպիտներ դահլիճում շատ նկատեց, հա՛ նկատեց։ Եվ գլխի ընկավ, որ ձեռք ու ճակատի բաշ ծրարելու իր ճիգերը իզուր են՝ ուշադրություն դարձնող չկա։ Եթե որևէ մեկի հետաքրքրում է... հետաքրքրում է, այդ մեկը կողքին նստած աղջիկն է։ Ուրեմն իզուր է նաև բեմ բարձրանալուց շփոթվել, գայթել, ուրեմն՝ ոչ մի հայացք էլ չի ուղեկցել։

Այս «ուղղումից» հետո Հանգիստ շունչ քաշեց։ Չէ՛, վիրավորված շունչ քաշեց և վիրավորանքից ծնվեց համարձակություն, արհամարհանքի պես մի բան, մաղեց դահլիճի գլխին ու հայացքն ուղղեց վերջին շարքում նստած համագյուղացիներին։

Վաղոն, գլուխն ափերի մեջ, խոնարհված էր։ Ջերմություն զգաց Վաղոյի նկատմամբ, իրենից չորս տարով փոքր Վաղոյի նկատմամբ Նախշունը մայրական ջերմություն զգաց։ Եվ, չիմացավ ինչու, խղճաց Վաղոյին և, չիմացավ ինչու, ուզեց լինել կողքին, շփել խոնված մազերը։ Իսկ Պետրոսը բռնեց Նախշունի հայացքը, գլխով ակնարկեց աղջկան, բաց-բաց ժպտաց, սղալեց բեղերը։ Նախշունը զայրացավ «Ծակ գլուխ Պետրոսի՛ն տես, քո կնիկ քեզ լայաղ չէ, էլի՛... Ընկնի քու ձեռք (աղջիկը), ամիս հետո կդառնա քու կնկան հավասար՝ թոնդրի ջնջոց...»։

Հետո աղջկա կողքին նստած մարդը կանգնեց, ձեռքը դրեց աղջկա ուսին, ժպտալով ասավ.

— Ընկեր Սերոբյանը...

Անունն ի՞նչ է, անունը։ Ի՞նչ կլինի։ Համենայն դեպս՝ ոչ Նախշուն։ Հետաքրքիր անուն կունենա... Ուրեմն՝ ազգանունը Սերոբյան է ու հանրապետական (Նախշունը չիմացավ որ) երիտասարդական կազմակերպության անունից ողջույնի խոսք ունի շրջանի առաջավորներին։ Բայց աղջկա կողքին կանգնած մարդու նախաբանը երկար էր։ Հա՛, Նախշունը հասկացավ, այդքան նախաբան պետք չէր և... և պետք չէր, որ ձեռքը, թեախառն դրվեր աղջկա ուսին։

Նա արդեն անկաշկանդ էր և խեթ նայեց տղամարդու ձեռքին (ձեռքը սպիտակ էր ու փամփլիկ)։ Հետո էլ նույն հայացքն ուղղեց աղջկան (ուսը ազատելու փոխարեն ժպտում էր) և քանի որ Պետրոսի նկատմամբ զայրույթը դեռ չէր անցել, մտքով ասաց.

«Բա՛, ծակ գլուխ Պետրոս, աղջիկ էս ձեռքեր կընդունե... Քու թիակ

ձեռքեր՝ քու կնկա համար է ձեռք... Ձեր թիակ ձեռքեր մեզ համար են ձեռք...»։

Աղջիկը ելավ, Նախշունի հայացքը փաթաթեց ոտքերին, քարշ տվեց ամբիոնի մոտ։ Հագին գուլպա չկար, ոտքերը թևերի պես ճկուն ու ճերմակ էին, միայն աջ ծնկածալի մոտ, երկու մատ տեղ՝ կարմրին էր տալիս և դա՝ ոտը-ոտին գցելուց։ Հա՛, ոտը-ոտի գցած՝ նստել էր։ Եվ շատ էլ լավ է անում։ Չէ՞ մի իր պես...

Ջսպված, ամուր սեղմված ծնկները մի քիչ հեռացրեց իրարից։

Դահլիճը, անթարթ մի աչք՝ աղջկա դեմքին էր։ Իսկ դեմքը՝ ճակատ ու այտ, շուրթ ու աչք ճառագում էր՝ կանացի ու գեղեցիկ։ Դահլիճը շունչը պահել էր։ Եվ Նախշունը գիտեր՝ բառ ու խոսք լսել-որսալու համար չէ. գույն ու գեղեցկությունը քառասուն-քառասունհինգ գյուղի հոգերին խառնված արևահար դեմքով դահլիճը շունչը պահել ու շնչում էր կնոջ բույր, շնչում այնպես, ինչպես քիչ առաջ՝ ինքը։

Եվ նա նախանձեց ու... սիրեց աղջկան։ Սիրեց՝ որպես կորած մանկություն, որպես դպրոցական տարիների երազ, որպես իր բազուկից արմունկը ձգվող-ոլորվող երակից հարուցվող տրտմություն, որպես... ի վերուստ իրեն շնորհված, բայց կորած այն ուժը, որը քիչ առաջ Պետրոսի դեմքը դարձրել էր խեղճ ու կրակ, ժպիտը՝ հիմար։ Ե՛վ նախանձեց, և՛ սիրեց աղջկան, և՛ հպարտացավ կնոջով։

Նախշունի աչքերը էլի խուտուտ եկան։ Ու թվաց նրան, թե ամբիոնի մոտ կանգնած կինը իր... իր մասին է պատմում՝ Նախշունի կորած մանկության, Նախշունի կորած երազների, Նախշունի տրտմության և Պետրոսի հիմարացած ժպիտի մասին։ Եվ դրա համար շնորհակալ եղավ կնոջից։ Հիմա նա կգա, կնստի իր կողքին, ինքը աղջկա ձեռքը կառնի ափերի մեջ, կասի... կասի. «Դու շատ սիրուն ես, աղջի ջան», կասի. «Քու խոսքի մեջ սխալ չկար, դու հե՛չ չսխալվեցիր, ապրիս...», կասի...

Դահլիճը ծափահարեց։ Ո՛չ ոք տոն չտվեց, դահլիճն ինքը սրտանց ծափահարեց, և աղջիկը նստեց։ Ամբիոնը տրամադրած տղամարդը մեծավարի թփթփացրեց աղջկա ուսին, ասաց «Մալադեց» (և դա Նախշունին էլի դուր չեկավ), ապա և՛ խոսք, և՛ ժպիտով զրույցի բռնվեց աղջկա հետ, և Նախշունը սպասեց հարմար առիթի։ Հա՛ սպասեց։ Հա՛ վարանեց։ Հետո հիշեց, որ ինքը նույնպես ասելիք ունի. ուր որ է պատվոգիր կտան ու շնորհակալական խոսք պետք է ասի։ Մտքում տարավ-բերեց ասելիքը, շփոթվեց, տագնապեց և... Այդպես էլ իր խոսքը չասեց աղջկան։

Հասավ տուն, թերթի մեջ փաթաթած պատվոգիրը դրեց սեղանին

ու նստեց։ Դադրա՞ծ, դադրած էր։ Երբեք այդքան դադրած չէր եղել։ Երեխաները աղմուկով ներս մտան։

— Մա, բերի՞ր...

— Պատվոգիր բերի՞ր...

Կոպերը ծա՜նր-ծանր բարձրացրեց, նայեց երեխաներին, և աչքերը խնդրեցին. «սուս մնացեք, էլի»։ Հայացքով սաստել երբեք չէր հաջողվել, հիմա... ինչպե՞ս պատահեց, ինչպե՞ս հասկացան։ Եվ նա զգացվեց, քիչ մնաց աչք թացի, ու ծրարված պատվոգիրը հանդարտ մոտեցրեց սեղանի եզրին. «թող նայեն, էրեխա են»։ Մոր հայացքի տպավորությունը դեռ չէր անցել. երեխաները կուտակվեցին տան անկյունում, ուրախություն չշնչացին։ Միայն ամենափոքրը ճիչ ու ծղրտոցով թռավրոաց, ծափ զարկեց, և ծափի վրա Նախշունը մեկեն զայրացավ։

— Դուրս կորեք,— գոռաց,— դրեք էստեղ, դուրս կորեք։

Հետո, երբ մենակ մնաց, մնաց պատուհանի տակ թախծող մթնաբոցի հետ, սիրտն ուզեց գլուխը դնել սեղանին, աչքերը փակել ու երազել, երազել՝ դպրոցական տարբերների պես, և տարբերների հետ կորած երազներին մեկ-մեկ շունչ տալ... Անցած կարոտներից այրվեցին աչքերը։ Եվ մեկեն ուրի կանգնեց, կարևոր ու անհետաձգելի մի գործի հասնող մարդու պես ելավ, մոտեցավ պահարանին, գուրս բերեց լուսանկարների կապոցը։

Առաջինը ժպտաց դպրոցական Նախշունը, յոթերորդ դասարանցի Նախշունը։ Գլուխը ամաչկոտ թեքեց ու ժպտաց ամաչկոտ՝ գե առաջին անգամ էր կանգնում լուսանկարչական ապարատի առաջ։ Չթե զգեստ ուներ, փեշերը անհավասար ու երկար, թևերը չափից ավելի երկար։ Թե ինչո՞ւ։ Մատը դրեց լուսանկարի վրա ու զգեստի թևը հրեց վեր... Նախշունն ուզում էր տեսնել տարբերներ առաջվա իր թևերը, որոնք պիտի լինեին ճերմակ-ճերմակ ու դալար՝ ուռենու չիվ։ Չէ՛, չէ՛ էն աղջկա թևերի նման...

Եվ ունեցած մի քանի լուսանկարների մեջ որոնեց աղջկա ձեռքերը՝ չգտավ, որոնեց աղջկա թևերը, աղջկա ոտքերը, աչքերը, ճակատը, մազերը, ձայնը... իր բոլոր լուսանկարների մեջ որոնեց աղջկան։ Չգտավ։ Եվ հայտնվեց շրջանային թերթի խուճապած հոմարը։ Այնտեղ նաև Նախշունի լուսանկարն էր (հողուրագը ուսին, ծպտոդեմ) և նրա մատին ակնարկը՝ «Քարագլխի դուստրը»։ «Նա մանկուց երազում էր ծխախոտագործուհի դառնալ։ Եվ ահա...»— չշարունակեց։ Ծալեց թերթը, լուսանկարները հավաքեց, ծրարեց՝ պատվոգիրն էլ հետը, դրեց պահարանի գարակում՝ երազելու ցանկությունն էլ հետը, կանգնեց տան կենտ-

բոնում և նայեց շուրջբոլոր. ինչ-որ բան պետք է աներ, ի՞նչ էր... Հա՜...

Բակում կովը բառաչեց-կանչեց Նախշունին, և նա տարտամ դուրս եկավ։

6

Քարագլուխ գյուղում առաջին շնատերը Ավգին եղավ։

Է՜, քառասուներկու-քառասուներեք գարուն առաջ (երբ Զորի Միրոյի հիմնած գյուղը երեխա էր, երազում խնձոր գտած ու աչք բացելու հետ՝ կորցրած և կորած խնձորի համար թնկթնկացող երեխա) Ավգին դարձավ շնատեր։

Մի իրիկուն, երբ դաղրած գյուղը քնել էր, Ավգին դաշտի գյուղից եկավ, շան հետ զրուցելով եկավ, մտավ գյուղ։ Իսկ առավոտ շուտ մահակն առավ, ուսապարկն առավ, կանչեց շանը, կանգնեց գյուղի կենտրոնում ու սպասեց։ Ոչ ոք չէր ասել՝ գյուղին հովիվ է հարկավոր, Ավգին ինքն էր ուզում հովիվ դառնալ, ուրիշ ոչ մի բան՝ հովիվ, ինչպես էրգրի Ցրոնք գյուղում էր։ Եվ կորցրած գելխեղդի փոխարեն արդեն շուն ուներ, մնում էր՝ հոտ, ու նա մահակին հենված, սպասում էր գյուղի արթնանալուն։ Սպասում էր ու տխուր էր. ախր, գյուղի ծխերը քիչ, մեկ-երկու այծ ու մաքի ունեցող ծխատերերը քիչ (Ավգին պոչ հայացք էր դիպցրել դռներին՝ հաշվել էր ու գիտեր. գյուղում երեսուն այծ ու մաքի կա)։

Գյուղին հովիվ պետք չէր, բայց Ավգիին մնչացող հոտ էր հարկավոր։ Ո՜չ արտ, ո՜չ ջուր՝ հոտ, ինչպես էրգրի Ցրոնք գյուղում էր։ Եվ սպասում էր ու, ճպճպացնելով մանրիկ ու կապույտ աչքերը, ամոթ-ամոթ նայում դեռ գոց դռներին։

Չէ, ոչ ոք թող չմտածի, թե Ավգին լուսո առավոտի հետ խնդիրք ունի՝ ձեր ոչխարները պահեմ, ինձ հաց ու թաց տվեք։ Չէ՜, չէ՜, Ավգին համաձայն է թեկուզ անվարձ հովվության։ Ուրիշ էլ ի՞նչ, հովվությունից բացի աշխարհում էլի ի՞նչ գործ կա։

Եվ այդ առավոտվա հետ Ավգին խլված գործն էր ուզում, ուրիշ բան չէ՝ կորցրած հոտն էր ուզում։

Ու սպասում էր գյուղի աչք բացելուն։

Վա՜հ... Շան փոխարեն, եթե թուր ու թվանքավոր հարյուր ասկյար հայտնված լիներ, գյուղը չէր զարմանա։ Ավգիին նայող չկար, եկողը՝ հայացքը շան աչքերի մեջ, առավոտվա բարևն էր տալիս և հարց՝

— Ո՞ւմն է։

Հարցի հետ Ավգիի ճերմակող բեղերում ծլում էր հպարտությունը։

Այդ առավոտ գյուղի բոլոր «բարի լույսերը» ուղղված էին շանը, և նա, դունչը թաթին, ի պատասխան՝ ծմլտկոտում էր, շարժում պոչը։

Այդ առավոտ կորած շեների ու շների մասին շունը պատմություններ էր անում, բարի-բարի աչքերը թարթում, պատմություններ էր անում և ամեն մեկն ուզում էր, որ շունն իրեն նայի։

— Ժողովուրդ, գիշեր շան ձեն լսի ու հավատալ չեղավ,— ասաց Արոն և մեկեն բոլորը ցանկացան, որ շունը հաչի։ Իսկ շունը մտերմիկ շարժում էր պոչը. ծանոթանում էր գյուղ ու գյուղացու հետ։

— Ավգի, քու շուն էրգրի մեր շան նման է,— շարունակեց Արոն, հետո մոտեցավ՝ ձեռք տալու փորձ արեց։ Շունը բամբ-բամբ հաչեց, և գյուղը շենացավ, ամենքի դեմքին երևաց ժպիտ, և Ավգին սիրտ արեց.

— Ուլեր բերեք,— ասաց ու շփեց բեղերը, ասաց ու ոչ ոքի չնայեց, մնաց մահակին կոթնած։ Ավգին ցածրաձայն ասաց, վրա-վրա ասաց, և լսվեց խոսքը։

— Ի՞նչ,— հարկ համարեց Արոն։

— Ուլեր բերեք...— էլի կոպկախ, կոպերի տակ՝ և՛ խնդրանք, և՛ ամոթ։

Ավգին հովիվ է։ Սև մազ չես ճարի, ճերմակ են նաև կրծքի մազերը, եղել է ու կա փափախը, եղել է ու կա բամբակյա բաճկոնը՝ չի հագնում, ամառ-ձմեռ ուսին է գցած, շալվարի փողքերը միշտ բրդյա գուլպաների մեջ հավաք։ Դեռ ամուր է, բայց մի քիչ կռացած, այնպես թե՝ մահակին կոթնած է։ Սեփական ոչխարներն ու շունն առած անարև տնից դուրս է գալիս, քայլում գլուխկախ, հանդիպողը բարևի-չբարևի Ավգիի պատասխանը կա.

— Աստծու բարին,— ասում է վրա-վրա և դուրս է գալիս՝ «ասբարի»։

Գյուղի կենտրոնում հավաքում էր «բարի լույսերը», հավաքում է գյուղի ոչխարներն ու քշում։

— Ցը-ցը-ցը-ցը՛ը... Հուռի հո՛...

Հոտի պոչից քարշ է գալիս փոշին, և Ավգիի փափախը փոշոտ է ու փոշու գույն ունի, բաճկոնը փոշու գույն ունի, ուսապարկին փոշի կա։

Մեկը ուշացած բարևն ու ոչխարն է հասցնում, թե ով էր՝ Ավգին ոչխարից է ճանաչում, բարևե՞ց, չբարևե՞ց, Ավգիի պատասխանը կա.

— Ասբարի... Ցը-ցը-ցը-ցը՛ը...— Հաստ բեղերը այծի մորուքի պես խլվլում է։

Առավոտ է, մեկը հոտին քսվելով անցնում է։ Ո՞վ էր։ Ավգին չի նայել (փոշեթաթախ հայացքը հոտի վրա է թափառում), «բարի լույս» չի

ընկել ակռանը (առավոտ է՝ ասիանները արունկի-արուռնի հատի փոշոտ խշշոցով է լցված), բայց պատուհանը կա.

— Ասբարի...— կամ հենց ինքը, Ավգին, ազգանունը համագրուզացնենք Բայց՝ ո՞ւմ։ Միևնույնը չէ՞- ալիսացատեր էր։

— Յը-ցը-ցը-ցը՛ը... Ասբարի... Յը-ցը-ցը-ցը՛ը... Հուռի հո՞... Ասբարի... Հուռի հո՞...

Գյուղերին հոտի փոշոտ ոռոը դառնում է բզիկ-բզիկ ու թափվում ձոքը, ծերապունկին Ավգին թողնում է «աստծու բարին», և սարերն է տանում ինքնաբերաբար արտաբերվող մի քառանի երգը. «Հուռի հո՞...»։

Զմեռնամուտին, երբ մառախուղը ձորերից ելնում՝ սոված գայլի պես թափառում է գյուղի շուրջբոլոր, մի օր որդին հիշում է ու զգուշացնում հորը.

— Հայրիկ, պայման լրացե. հոտ ինչի՞ կբշիս։

— Պայման լրացե՞,— Ավգին զարմացած նայում է, որդուն չէ՝ գյուղի շրջակա սարերին,— էս ամիս հոկտեմբե՞րն է։

— Ի՞նչ հոկտեմբեր, նոյեմբերն է։

— Հա՛... Նոր հաշվո՞վ... է՛, նոր հե՞շ, նոր յորդա ձի է, հաշիվ հին հաշիվն է, լաու։

— Հնով ո՞վ կշարժվի, պայման՝ նորով է կնքած։

— Էղնի, լաու, գեղի կողմից սխալմունք է։

— Սխալ-ճիշտ, պայման լրացե։

— Է, դաշտ ու սար ձո՞ւն չկա... Էն օրվա անձրևից հետո, փշոր փափո՛ւկ-փափուկ։ Օշխար... Էնպե՞ս կուտե, էնպե՞ս անուշ, մարդ կայնի ու նայե։

Եվ մյուս առավոտ Ավգին էլի քշում է հոտը, իսկ Արոն խնդմնդում է քթի տակ.

— Ասվատուր, պայման ուղիղ էրկու շաբաթ լրացե ու Ավգին գլխի չէ։

Ոչ գրասենյակ, ոչ գրուցատեղ։ Եվ ամռան ամիսներին գյուղը մոռանում է Ավգիի գոյությունը։ Բայց անցած ամեռ, մի առավոտ, Ավգիի անունը կտրեց-անցավ թաղե-թաղ, տնե-տուն մտավ...

— Ավգին մահացե...

Ո՞չ ատամոքսի խոց ու սրտի արատ ուներ, ո՞չ գլխացավ, ո՞չ կռիվ էր գնացել ու վերադարձել գործող վերքով, ո՞չ... Ողջ կյանքում հովվություն արած Քարագլուխ գյուղի ճերմակամազ հովիվ Ավգին անցած ամռանը մարդասվարի մահացավ. քանց ու մնաց քնած։

Գյուղը առանձնապես չտխրեց՝ դե, Ավգին տարիքն առած մարդ, խերն առավ, աշխարհի շառը աշխարհին թողեց, գնաց։ Օղորմի։

Առանձնապես հիշողություններ չպատմեցին նրա մասին։ Չպատմեցին՝ չկար. Ավգին օրեր ու տարիներ անարև գյուղից դուրս էր եկել, անարև գյուղ մտել, ձմռանն էլ՝ իր գամ ու անասունի հետ։

Դաշտապահ Օսոն ուներ պատմելիք... Հանդիպում էին, Ավգին ուրախանում էր, ուրախությունից շփում կախ ընկած բեղերը. «Դու բարո՞վ ու խերով էկար, Օսո»,— հետո նստում էին (քարերից հարմարը Ավգին անպայման զիջում էր) ու հետաքրքրվում աշխարհով, գյուղ ու գյուղացով։ Հիմա-հիմա էլ Ավգիի ձայնը Օսոյի ականջներում է...

«Տնամերձներ բոլոր ջրվա՞ծ է, Օսո... Աստծուն փառք... Առաքելի տնամե՞րձ... Լա՞վ է, լավ է, Առաքել մենակ մարդ է, խեղճ մարդ է, օժանդակենք։ Առաքելի օչխար ես ձրի է կպահիմ»։

«Գեղի մեջ հիվանդ չկա՞, Օսո... Լա՞վ է, լավ... Հիվանդություն իմ Բաբիկին դավաճանող էն... էն Գևոյին նմանապես չեմ ցանկանա։ Է՞, Բաբի՞կ, Բաբի՞կ... Կմեռնիմ ու՝ ցավ իմ հոգու մեջ»։

«Ի՞նչ կզրուցին, Օսո, աշխարհք խաղա՞ղ է, պետությունների մեջ խառնակություն չկա՞... Խաղաղության համար սար ու ձոր, էս անլեզու անասուն նմանապես կուրախանա»։

«Օսո, կերևա իմ մեռնել մո՞տ-մոտ է. կպատահի՝ կմոռանամ իմ տեղ, կիմանամ, թե՝ մեր էրգիրն է ու հանգեր՝ էրգրին, օչխար՝ մեր Ցրոնք գեղին։ Մեկ էլ ուշքի կգամ... Հե՞յ վախ՝ Քանդած բերդն է ու Ցամաքսարի քարեր»։

Հա՞, հիմա, հիմա էլ Ավգիի ձայնը Օսոյի ականջներում է։ Հետո Ավգին բացում էր ուսապարկը, առնում կաթի ամանն ու անձայն ելնում։ Օսոն հասկանում էր, որ իր համար է՝ առարկում էր։ Ամեն անգամ առարկում էր, ամեն անգամ Ավգին կաթ էր տալիս, հետն էլ՝ բացատրություն.

«Քու օչխար քիչ է, ու դու շատ էրեխի տեր՝ Արոյի մաքին կթեցի,— ժպտում էր,— Արոն քսան-քսանհինգ մաքի ունե... Աստված տա՝ ավելի շատ ունենա»։

Հովիվ Ավգիի մասին դաշտապահ Օսոն ուներ հիշողություններ։ Պատմել էր ուզում և՝ լցված սրտով, բայց կաշկանդվում էր. իր ու Ավգիի հանդիպումները, արդեն անցած-գնացած հանդիպումները Արոն մտքում կտաներ, կբերեր ու կդներ քննարկման.

«Ժողովուրդ, էդքան օչխար ունիմ ու մի տարի կարգին կաթ չեղավ. իրիկուն հանդից տուն կհասնեն՝ կուրծեր դարդա՞կ-դարդակ...»։

Չէ՞, Ավգիի հիշողությունները թանկ են Օսոյի համար, ու ոչ ոքի չի տա։ Եվ՝ չպատմեց։

Գյուղի շրջակա սար ու դաշտերն ունեին պատմելիք հովիվ Ավգիի մասին, շատ ունեին, բայց ձմեռ էր, որ հովիվը մահացավ՝ և սարերը անլուր մնացին, հուշերը՝ ծնկահար ձյան տակ։

Գյուղացիները այսքանը հիշեցին միայն, Արոն հիշեցրեց.

— Ձեր միտքն է, չէ՞, ժողովուրդ...

Անցած ամռանը, երբ Ֆարեյի Սաքոն Այգեստափի սարի սրոտը պաշտպանում էր համագյուղացիների անասուններից, Ավգին զայրացել էր ու հայհոյում էր, կյանքում առաջին անգամ։

— Էդ օղորմած հոգին Սաքոյին կհայհոյեր ու սիրտ չէր հովնա, կհայհոյեր ու կհայհոյեր։

Արոն նաև հիշեց.

— Պայման լրանալու օր մտհան կաներ ու մինչև ձուն դնել հոտ կքշեր։

Այսքանը։

Բայց երբ գյուղահայաց կիրճը լցվեց գոլ մշուշով, երբ սարերը կարոտով կապույտ կանչ ճամփեցին հովվին, և Ավգին՝ պալա՞ն-պալան գոլորշի, խառնվեց սարերի կապույտ կարոտին ու գնաց, այդ ժամանակ Քարագլուխը մեկեն ու միանգամից հասկացավ, որ Ավգիի մահով մե՞ծ, շատ մեծ կորուստ է ունեցել։ Ավգիի մահը, կորուստ էր ու կորուստ։

Գյուղը կորցրել էր իր հովիվը։ Ավգիին չէ՝ իր հովիվը...

Գյուղը հովիվ չուներ ու ոչ ոք չէր ուզում Ավգիի փոխարեն վերցնել մահակ։

Եվ, երեկոյան, Արոն հարկ համարեց մտածել, թեկուզ մինչև լույս առավոտ մտածել՝ գտնել հարմար հովվացու, առավոտ կանուխ զրուցատեղում քննարկման դնել։ Հարմար տեղավորվեց թախտին, թիկնեց և ասաց Մխեին.

— Սկսիմ վերին թաղից, չէ՞։

Հետո թողեց հերթ ու կարգով թաղե-թաղ ու տնե-տուն մտնելու որոշումը, ունեցավ նոր միտք՝ դասակարգել-հաշվել։

Նախ, կոլտնտեսության ու գյուղխորհրդի նախագահներին, հաշվապահին, բրիգադիրներին, ֆերմաների վարիչներին, պահեստապետին, հաշվետարին, հաշվառուչին, մեխանիկին, գյուղխորհրդի քարտուղարին... իրենց գերդաստաններով, հովվություն անողների ցուցակից հանեց դուրս։

Դարձավ դպրոցի ուսուցիչները հաշվեց («Մխիկ, գեղ բո՞լ ուսուցիչ կա») ու, գերդաստաններով, հովվություն անողների ցուցակից հանեց դուրս։

Դարձավ շրջկենտրոնում ծառայող համագյուղացիներին։ Առաջինը բթամատի տակ ծալեց Մխեին, հա՝ առաջինը հաշվեց Մխեին, և կնճիռները լցվեցին հպարտ ժպիտով ու բթամատը ծալելու հետ՝ հովվության համար կազմվող աշխարհի բոլոր ցուցակներից գերդաստանի անդամները դուրս մնացին։ Արոն էլի չորս անուն-մատ ծալեց և գլխի ընկավ, որ շրջկենտրոնում ծառայող համագյուղացիների ճշտված թիվը կարելի է իմանալ որդուց։

— Մխիկ, մեր գեղից ինչքա՞ն ծառայող կա։

— Երեսունյոթ,— պատասխանեց չուշացած։

Այս էլ այսպես։

Հետո Արոն հարկ համարեց հաշվից դուրս բերել հողի բանուգործից ձեռք քաշած բանվորություն անող համագյուղացիներին։

Արոն մտքով տանից դուրս եկավ ու կանգնեց հարևանի դռանը. «Բենիկ՝ մեկ»։

— Մխի՞կ, էս մեր հարևան Բենոն էս տարի ո՞ւր կաշխատի։

— Շրջկենտրոնում, շինարարության վրա։

Բայց... բայց գուցեև Բենիկը համաձայնվի՞. «պաշտոնատեր չէ ու հովվություն՝ պատվին դեմ չէ... խելք ունենա կհամաձայնվի... Չէ՞...»։— Բենիկը հովվություն անող չէ։ Բենիկը, թե ուզում եք ճիշտն իմանալ, հեշ գյուղացի էլ չէ. մի կտոր հող ունի, կարգին չի մշակում։ Բենիկը բանվոր մարդ է, գյուղի հոտը չի քշի։

Արոն Բենիկից ձեռք քաշեց, անցավ ու, կարգով, բացեց Օսոյի դուռը։

— Մխիկ, Օսոյի տղերքից նամակ է ստացվե,— հիշեց ու ասաց որդուն,— պատմելով, հասած Ղազախստան՝ ու հարմար գործ չեն ճարե։

Ապա Օսոյի տնից դուրս եկավ, թաղից էլ՝ դուրս, մտքով հասավ Ջորի Թաղը, բացեց էլի մի քանի դուռ, էլի մի քանի մատ ծալեց և հասկացավ, որ հաշվելը անօգուտ է. վերջապես գյուղի համար այդքան կարևոր մարդուն՝ հովվին, նաև համագյուղացի բանվոր տղաների շրջանում որոնելն է իզուր։ Բայց Արոն ոչ մի, ոչ մի հաշիվ կիսատ թողնող չէ։ Արոն է ժամանակին պարզել. «Քարագլուխ գեղի մեջ մեր էրգրի ուղիղ քսան ու մեկ գեղից մարդ կա»։ Արոն գիտե ծխատերերի երեխաների ու ոչխարների թիվը։ Առանձին-առանձին։ Թող Աստուրը ծիծաղի («Ծաղրե, Աստվատուր, ծաղրե»), Արոն ինչ անում է՝ գյուղի համար է։ Արոն գիտի նաև... Շատ բան գիտի, բոլորն էլ՝ կարևոր, բոլորն էլ գյուղի համար։ Հիմա էլ գյուղը իր համար թող հանգիստ քնի, Արոն արթուն է։

Ուրեմն Բենիկին ավելացրեց Օսոյի երկու տղաները, գումարեց, ավե-

լացրեց, անցավ թաղե-թաղ, տնե-տուն մտավ՝ գումարեց, ավելացրեց, գումարեց...

— Յա՜,— զարմացավ Արոն,— իմ հաշվով, Մխիկ, դուրս էկավ ուղիղ՝ քառասուն։

— Ինչը՞ քառասուն եղավ։

— Գեղից դուրս գնացող-բանվորություն անողների թիվ։ Կպատահի իմ հաշիվ-սխալ է։

— Չէ, էդքան կլինի։

— Յա՜,— Արոն էլի զարմացավ։— Մխիկ, գեղ դարդակվեց։

Եվ հովվացու գտնելու համար Արոյին մնաց բախել որոշակի դրուներ, այնուամենայնիվ՝ հող ու ջրի հետ կապված ծխատերերի։

Օրինակ, Սաքոն կամ Սաքոյի հարևան՝ Սաքոյի մեծ որդին։ Արոն Սաքոյին հայհոյեց՝ «Հարամ մարդ է, հազիվ ուրիշի հանդին պահակ դառնա, գեղացուն օչխա՞ր կպահե»։ Սաքոյի որդու վրա ձեռքը թափ տվեց՝ «Հոր կտորն է»։ Ուրի՞շ։

Գևոն։ Արոն չարախնդաց։ Հա՛, հենց՝ Գևոն։ Առավոտ կանուխ թեկնածությունը մեջ կբերի ու կպնդի։ Բա ի՞նչ, գյուղը խելք ունենա, մի բերան դառած՝ կպահանջի։ Ինչո՞ւ չէ։ Քարագլխի համար ղեկավա՞ր է եղել։ Սուտ ղեկավար։ Հիմա էլ՝ սուտ պահակ։ Դատարկապորտի մեկը։ Գնա հովվություն արա։ Հա՛... Հետո Արոն իրեն բռնեց Գևոյի հետ հին հաշիվները լուծելիս։ Հասկացավ նաև, որ ոչ ինքը Գևոյի թեկնածությունը կառաջարկի, ոչ էլ գյուղը՝ կպաշտպանի։ Ախր՝ անճարի մեկն է. ո՞վ իր ոչխարը կվստահի։ Մեկը հենց ինքը, քսանհինգ-երեսուն ոչխար վստահի Գևոյի՞ն։ Հիմարություն։ Սար ու քարերի մեջ կկորցնի, գայլերին կտա, մահակն առած կդառնա գյուղ։ Չէ, Գևոն հոտ քշել չի կարող։ «Հարկ է՝ խելք գլխին մարդ»։ Հե՜յ, գիդի, հե՜յ, Ավգի...

— Ավգին մեռնի՞ ու Գևոն մնա,— Արոն գլուխը տարավ-բերեց,— արդա՞ր բան է, Մխե։

Որդին չպատասխանեց։ Խառնաշփոթ մի բան հա կա ու կա Մխեի դեմքին։ Թե ժպտում է, ժպիտն է վախվորած, մռայլ է, մռայլությունն է նվնվացող։

Հիմա էլ նստած է, ճակատին հավաքվել են մանրիկ-մանրիկ կնճիռներ՝ թնկթնկում են, սեղանին թափված են հին ու նոր անդորրագրեր՝ խառնում է իրար։

— Իմ խոսք ճիշտ չէ՞, Մխիկ։

— Չգիտեմ, ա՜յ հեր, չգիտեմ,— ձայնի մեջ ո՞չ կարգին զայրույթ կա, ո՞չ կարգին հոգնածություն։

Գիշերը վաղուց կիսվել էր։ Գարնան գիշեր էր, ու ձորերից հեղեղի ձայնն էր գալիս։ Քնել էր Քարագլուխը՝ ականջներում ձորերի ձայնը ու գյուղին հովվացու գտնելու գործը թողել Արոյին։

«Կամ Պետրո՞ս կամ Ավգիի՞ ազե՞ն»։

Եվ Արոն գտել էր հարմար թեկնածու, շտապում էր գալիս անկողնում,— «Հա՜, ուրիշ մարդ չկա, էդ էրկուսից՝ մեկ»— ու սպասում էր լույս առավոտին։

Առավոտը խշշալով մտավ գյուղ. դաշտերից ծիածան-խաղաղություն բերեց՝ ու պարան-պարան ծխերը աքլորականչերն առած բարձրացան ամպերը, ասրտերից մառկալի կանչ բերեց՝ և փթփթացին Քարագլխի տրակտորները, լեռներից հովվի կանչ բերեց՝ ու հովիվ Ավգիի շիրմաթմբից մի ծվեն գոլորշի առավ ոչխարների մայունն ու բարձրացավ լեռները, ձորերից սելավի աղմուկը բերեց՝ և զրուցատեղի աղբյուրի գոռ մեջ պղպջեց ու պայթեց գյուղի զրույցը։

Արոն ձեռքը մտերմիկ դրեց Ավգիի որդու ուսին, խորհուրդ տվեց.

— Քու հոր տեղ էս գեղի մեջ դարդակ մի թող։

— Հովվություն ժառանգակա՞ն է, քեռի Արո, իմ հոր սիրտ հովվություն կաւգեր, իմ՝ չէ,— նեգացած պատասխանեց Ավգիի որդին, և Արոն չփոթվեց առարկել։ Ոչ ոք չփորձեց։ Ավգիի որդին առավոտվա հետ տխուր էր. գարնան փափուկ առավոտը հոգն էր կանչում ու հայրը չկար, ոչխարները մայում-կանչում էին՝ չկար, առավոտվա հետ գյուղը հովիվ Ավգիին էր որոնում ու չէր գտնում։

Պետրոսի թեկնածությունը Արոն բացահայտ մեջ չբերեց. «Ճոռթած բեբան է»։ Արոն կանգնեց Ասատուրի կողքին՝ «Պետրոս՝ ավելի հարմար է»,— շշնջաց, անցավ-քսվեց Վազոյին. «կերևա՝ Պետրոս միտք ունի», անցավ, կանգնեց Սաքոյի կողքին, շշնջաց. «Պետրոս...»։ Եվ Պետրոս անունը բերնեբերան սվսվաց։

Արոն թարը ջուր գցեց, նստեց իր քարին և իբր՝ անտեղյակ, թազբեհն առավ ու խերի վրա գլորեց շառ-շառի վրա՝ աստված։ Բայց Պետրոսը գտավ ակունքը։

— Մխիկի հեր Արո,— ասաց բարձրաձայն (Պետրոսը ընդհանրապես բարձրախոս է. գյուղեզրի իր տան բակում գզվռտվող երեխաներին հայհոյում է, զրուցատեղում նստած Արոն ժպտալով ձայնագրում),— օրինակ, ինչի՞ քու Մխեն հովիվ չդառնա ու ես դառնամ։

Արոն թազբեհն կախեց թևից, գլուխը բարձրացրեց, աջ ու ձախ պարզեց ձեռքերը.

— Ժպտվուրդ, էս մարդ շա՞տ է։

— Չէ՛, չէ՛,— Պետրոսը հանգիստ լսող չէ,— ասա տեսնիմ,—

գարձավ հավաքվածներին,— ասեք տեսնիմ. Մխեն ինձանից ինչո՞վ է ավել։ Ծառայող է, հա՞...

— Հա՛։ Իմ տղի հետ գործ չունիս։

— Չունի՞մ... իմ տնամերձի չափ տնամե՞րձ ունի, իմ անասունից շատ՝ անասո՞ւն, շատ ու շատ՝ արտոնությո՞ւն...

— Քու գեղացին է, Պետրոս, չկամությունն լավ բան չէ,— կտրեց Աստատուրը, և Արոն շնորհակալ նայեց։

— Իմ գեղացին Սաքոն է, Սաքոյի տղեն է, Վաղոն է... Գեղի մեջ աշխատող մարդի՛կ։

— Լավ, Պետրոս, լավ, էստեղ ծառայողների հարց չենք քննի։— Միջամտողը Սաքոն էր, տոնով ու խոսքատակով Պետրոսին թև տվող։

— Չենք քննի՞... Մխեի տված օգուտ գեղին ի՞նչ է։ Շրջանին՝ ի՞նչ է։

— Էն՝ ինչ դու ու քու յոթ պորտ չեք տա։

— Յա՞... Քու Մխիկի ուժին ծանոթ չեմ, չէ՞. դասատուն կբռներ ականջից՝ կզարկեր պատին, պատից ծեփոն կթափեր, Մխեի գլուխ ցա՞վ չէր ունենա։

— Հերիք է քու բերան ավել-պակաս բացիս,— Արոն այս անգամ կամեցավ ձեռնափայտով վրա քշել՝ չթողեցին։ Եվ այդ մարտական փորձի համար Պետրոսը նույնիսկ ուրախացավ.

— Դե, տեսե՞ք, ժողովուրդ, տեսե՞ք, մեծ մարդու վարմո՞ւնք տեսեք,— իրավունքով շարունակեց,— էդ փետ տուր քու տղին՝ թող գեղի հոտ քշե։

— Գեղի հովիվ հարկ է էղնիս դո՛։... Դո՛։,— Արոն ձայնը բարձրացրեց. զրուցատեղին նախագահն էր մոտենում. Արոն խաղաց՝ չտեսնելու տվեց նախագահին ու շարունակեց,— ես նախագահի փոխարեն՝ հովվի կոպալ կդնենք քու ձեռք, քու սիրտ ուզեր-չուզեր... Հա՛... Նախագան ուզենա...,— խաղաց՝ իբրև թե հանկարծ նկատեց նախագահին ու հարգանքով լռեց։ Իսկ Պետրոսը, առիթ էր՝ ճայթել էր ու չէր հանգըստանում։

— Նախագան թող կոլխոզի՞ն հովիվ գտնի, թող ջրվո՞ր գտնի։ Է՛,— ձեռքը մեկնեց ձորի կողմ,— սելավաջուր անտե՞ր, անտեր կերթա։

— Քեզ մի աշխատել է հարկավոր, աշխատիր, քիչ խոսիր,— չոր կտրեց նախագահը։

— Ես իմ ուժի չափ ու ավելի կաշխատիմ։ Մյուսներ ո՞ւր են։

— Մարդու խոսք ճիշտ է,— հաստատեց Սաքոն։

Չէ՛, Պետրոսը պարտքի տակ մնացող չէ՛, Սաքոյի, Սաքոյի որդու, Վաղոյի, Ավգիի որդու խոսքն ու իրավունքը առավ ու սկսեց. կտրեց-

անցավ ձորը, ելավ, կանգնեց սարի վրա, այնտեղից նայեց՝ «Կնայիս կարգին գեղ է», իջավ, ցույց տվեց սարալանջի լքված հողերը՝ «Մարդու լաց կգա», հասավ նորից զրուցատեղ, մատնացույց արեց «խեղճ» Սաքոյին, Սաքոյի որդուն, Վաղոյին, էլի մի քանիսի ու նորից հարց տվեց. «Մյուսնե՞ր ուր են», Մխեի հետքով հասավ շրջկենտրոն՝ «Բոլոր իմ գլխին նարկոմ են դարձե», հետո անցավ կոնկրետ գործին՝ կազմեց երկու հոտ՝ մեկը ծառայողների ոչխարներից, մեկը՝ կոլտնտեսականների, առաջինին հովիվ կարգեց Մխիկին, մյուսը՝ ինքն արոտ քշեց, ապա հոտերը ցրեց. «Թե Արոյի Մխեն հովիվ չէ, Պետրոս՝ չէ ու չէ», հետո... Մեջ-մեջ ընդհատեցին՝ ձայնը բարձրացրեց, լուրջ ու կատակով բռնեցին թևից՝ ազատեց և գյուղն ու գարնան առավոտը կոխեց աղբյուրի գոի մեջ, հանեց և սահմանափակեց.

— Հը՞...

— Նախագահի հետ ճակատ տալո՞ւն տես,— ռեպլիկեց Արոն։

Նախագահը զայրացել-կարմրատակել էր. ձեռքը տարավ գրպանը, կնիքը հանեց, մեկնեց Պետրոսին։

— Ա՛ռ,— ասաց,— պեչատը առ ու դու ղեկավարի, տեսնեմ գյուղին հովիվ կճարե՞ս։

— Պետրոս, ամեն անգամ պեչատ չի ընկնի քու ձեռք, վերցրու,— Ասատուր քեռին խնդմնդաց։

Պետրոսը նայեց Ասատուրին, հավաքվածներին, նախագահին, կնիքին ու ժպտաց։ Անձի գոյության, սեփական անձը նախագահ մի մարդու կողմից ճանաչելու, թեկուզ մի պահ ճանաչելու հպարտությունը կար ժպիտի մեջ, նախագահ դառնալու անհեռանկար ցանկությունից ծնված ցավը կար ժպիտի մեջ, նաև՝ հանկարծակի ծնված ինքնավստահություն. ախր, նախագահի կնիքը գրպանից դուրս է բերել... Յա՜, ուրեմն՝ զայրացրել՝ կնիքը գրպանից հանե՞լ է... Եվ զզջում ու քծնանք կար Պետրոսի ժպիտի մեջ։

— Հը՞, պեչատը քեզ եմ տալիս՝ ղեկավարիր,— նախագահը քաշեց Պետրոսի թևից։

— Քու ասելով դժվա՞ր է, հա՞,— պատասխանեց՝ մտքով լուրջ, դեմքով՝ կատակ ու թևը ազատեց նախագահի ձեռքից,— թող, ջանըմ, թող... Քու պեչատ դիր քու ջեբ,— իրավունք տվեց և վերջին բառերի հետ հպարտ մի ժպիտ խաղաց աչքերում՝ նախագահի կնիքը գրավեց ու մեծահոգաբար վերադարձնում է։

— Տո, խղճո՛ւկ, իմ փոխարեն երկու օր աշխատես, երրորդին կփախնես գյուղից։

— Ինչի՞ կփախնիմ, իմ սիրտը ուտել-խմել չի՞ ուզե, ընկեր նա-

խագահ, ուտել-խմելուց ո՞վ է փախե,— շինծու ծիծաղեց,— ես բերան չունի՞մ, ընկեր նախագահ,— ծիծաղեց ու մտքում շարունակեց ավելի տեղին ասելիքը. «Ուրեմն քու բերան գոռգոռալու-կարգադրելու, կերուխումի համար է, իմ՝ մենակ խնդրելո՞ւ»։

— Պետրոս, քու ձեռք քու ծննդյան օրից կարճ է ու էրկար չի դառնա, ասածուն մատաղ էլ խոստանաս՝ կարճ է,— միջամտեց Ասատուր քեռին։

— Տո, խղճուկ,— հետևող լուրջ խոսքերին նախագահը նույնպես կատակ-բնույթ տվեց։

Շարունակվեց՝ նախագահն ու Քարագլուխ գյուղում աշխոր վաստակողների անունից՝ Պետրոսի խոսքերը շղարշեցին կատակով՝ հավատացրին իրար, թե վեճ չէ՝ մասխարություն է, հա՝ մասխարություն է։ Հավատացրին իրար ու չհավատացին։

Երկարեց՝ զրուցատեղում հավաքվածները հաճույքով ունկնդրեցին ու մոռացան, որ հովիվ չկա, հաճույքով ունկնդրեցին՝ ցախ գցեցին կրակի վրա։

— Գլխիդ փոխարեն ձեր տանը, եթե մի դդում լիներ, ավելի օգուտ էր,— նախագահը ասեց-ծիծաղեց՝ ծիծաղի ծայր բացեց և ամեն մեկն ուզեցավ, որ նախագահը նկատի, անպայման նկատի ու արժեքավորի իր ծիծաղը։ Պետրոսը վիրավորվեց. ձեռքը մեկնեց Սաքոյին, ասաց.

— Քու բերան ի՞նչ բացեցիր,— ծիծաղի տնաղն արեց, դարձավ խոսքն ուղղեց բոլորին,— թե էդ խոսք իմ բերանից էլներ՝ էքսան կծիծաղեք... Տո, մա՞ղ չեք, չէ՞։

Հետո խռով նստեց ու սուս մնաց։

Չէ՞, լավ չեղավ, Պետրոսը խռովեց. հիմա բահը կուսի, կգնա տուն։ Բրիգադիրը կկանչի՝ չի դառնա, թևից կքաշի՝ չի գառնա։ Լավ չեղավ, չէ՞... Եվ նախագահը աչքով արեց ու ասաց.

— Պետրոսի քիթը ի՞նչ սիրուն է, ժողովուրդ, նկատե՞լ եք։

Պետրոսը չպատասխանեց։

— Բա աչքե՞րը, աչքե՞րը...

Պետրոսը լուռ ծխում էր։

Հետո՝ մոտեցավ Պետրոսին, գլխարկն աչքերին քաշեց և ասաց.

— Եթե կատակի չես դիմանում, ինչո՞ւ ես մեջ ընկնում։

Չպատասխանեց, բայց հպարտության պես մի բան երևաց դեմքին. համենայն դեպս, նախագահը թե վիճում է՝ իր հետ է վիճում, թե մասխարություն է անում՝ իր հետ է, վերջապես... վերջապես իր՝ Պետրոսի գլխարկը աչքերին քաշեց՝ ոչ Սաքոյի, ոչ Սաքոյի որդու, ոչ Վա-

ղոյի... Քիչ բան չէ՞։ Բայց և լռեց, ու զրուցատեղը մի քիչ խաղաղվեց, և Արոն հովվության հարցը նորից մեջ բերեց.

— Բա գեղ հովիվ չունենա՞։

— Մարդ չկա, օրը մեկդ քշեք հոտը։ Հերթով։— Նախագահը հայտնեց իր կարծիքը, թողեց-գնաց, և Պետրոսը հասցրեց ետևից.

— Մի օր էլ հերթ քեզ կհասնի։

Հետո բրիգադիրը եկավ՝ լուրջ ու կատակով քաշքշեց Պետրոսի թեվից, և նա գնաց, բարձր-բարձր խոսելով։ Էլի գնացողներ եղան, գյուղին հովիվ ճարելու հոգսը Արոյին թողած գնացին, և Արոն, իր քարին նըստած, ընկավ խոհերի մեջ։

Հիշեց, որ անցյալ գարնան արդեն տասը օր էր «Հա՜, ուղի՜ղ տասը օրն», հոտը աբոտ էր գնում, մի քանի անգամ օդորմի ճանփեց Ավգիին, լռեց, մտածեց, լռեց մտածեց և դարձավ Ասատուրին.

— Ասատուր, արի էգուց էրթանք շրջկենտրոն։

— Ինչի՞ էրթանք,— զարմացավ Ասատուրը։

— Էրթանք շրջկենտրոն մեր Մխիթի մոտ. Մխիկ մեզ տանի շրջանի մեծավորի մոտ՝ խնդրինք, թող կարգադրեն նախագային, չոբան ունենանք։

Ասատուրը մի քիչ մտածեց և լուրջ-լուրջ հարց տվեց.

— Արո, քու ասելով Վարդոն խա՞ է։

Արոն նեղացավ. Վարդոն ի՞նչ գործ ունի այստեղ, խա է, թե խելոք՝ իր համար, հիմա խոսքը լուրջ գործի մասին է, լուրջ։

— Չէ՜, չէ՜, քո կարծիքն ի՞նչ է,— պնդեց Ասատուրը։

— Իմ կարծիքը մեկ է ու երկուս չի դառնա՝ Վարդոն ցնորված է։

— Արո, Վարդոն հազար անգամ քեզնից խելոք է,— Ասատուրը լուրջ ու շեշտված փակեց։

Ուրեմն, անցած ձմռան Ավգին մահացավ։ Ողջ կյանքում հովվությունն արած Քարագլուխ գյուղի ճերմակամազ հովիվ Ավգին անցած ձմռանը քնեց ու քնած մնաց։

Առանձնապես չտխրեց գյուղը։

Հիշողություններ չպատմեցին նրա մասին, չպատմեցին՝ չկար։ Դաշտապահ Օսոն ուներ հիշողություններ՝ թանկ էին՝ պահեց, գյուղի շրջակա սար ու դաշտերն ունեին պատմելիք, բայց ձմեռ էր, որ հովիվը մահացավ, և ծնկահար ձյուն էր նստած հուշերի վրա։

Բայց երբ գյուղահայաց կիրճը լցվեց գոլ մշուշով, երբ սարերը կապույտ կանչ ճանփեցին հովվին և Ավգին՝ պալա՜ն-պալան գոլորշի, խառ-

նրվեց սարերի կապույտ կարոտին ու գնաց, այդ ժամանակ Քարագլուխ գյուղը մեկեն ու միանգամից զգաց, որ Ավգիի մահը կորուստ է ու կորուստ։

Գյուղը կորցրել էր իր հովիվը։

7

Մահացավ Նհոն պապը... Օղորմի... Մահից մի ժամ առաջ մոտ կանչեց թոռան։

— Կալե, թուղթ ու մատիտ վերցու, արի։

Գալուստը նստեց, գլուխը կախ, թուղթը ծնկներին։

— Քարտեզ կիմանա՞ս գծես,— պապը մատը դրեց թղթի վրա,— գծե. էս Ճախրկանի ճամփեն է, կմտնի Կակվաձոր, կելնի՝ Ճախրկանն է։ Էս Վերին թաղն է։ Էստեղ ջուլհակ Մրկեի տունն է, կողք՝ Օհանին, էստեղ առու կա... գծե... առվի կողքը մեր տունն է, դեմ կաղնու ծառ կա, ճղեր՝ տանքին։ Տանիք չկա՝ փլավ, իմ աչքով տեսա, ծառից խաբրիկ չունիմ։ Գծե տուն, տանքուվ, ծառ՝ ճյուղերով, ճյուղեր՝ տանքին։

Հետո կանչեց որդուն.

— Ջլսիս քու մոր. տերտեր չկանչիս, չեմ սիրի։ Նվագ չեղնա։ Իմ դերեզմնին իր խաղ թող Օսոն ասե։ Օսոյին ասա Նհոն կխնդրեր, շա՞տ երգե, բարձր երգե՞։

Է՛հ, Նհոն, պապ, Նհոն պապ։

Հավաքվեց ամբողջ գյուղը, մեծ ու փոքր։ Տղամարդիկ նստոտեցին բակում, հող փորփրեցին, հողի հետ՝ հիշողություններ։ Աշակերտները ծաղիկներ բերեցին՝ ծաղկամաններից, պատուհանների դիմաց աճող աշնան սառը ծաղիկներից։ Վարդո մարեն դեզի միջից ջոկեց ծաղիկներ՝ չորացած, անբույր, տեղ հասցրեց, բոի մեջ մնացել էին ջարդված ծաղկակոթունները։

Մահացավ Նհոն պապը, օղորմի։

Սասնա Ճախրկան գյուղում ծնված վերջին մարդը։ Արևի տակ ապրող վերջին Ճախրկանցին։

Էհհե՛յ, խաբրիկ առեք Ճախրկանի սար ու ձորեր, Նհոն չկա։ Վերին թաղի ընկուզենի, թե կաս՝ դողա, էս գիշեր մինչև վերջին տերևը լաց եղիր՝ Նհոն չկա։

Բոլորեցին գերեզմանափոսը։

— Օսո, երգե։

— Իմ սիրտ չի օգնե։

— Նհոն քո երգն է ուզե։

Օսոն կոպալը խրեց հողակույտի մեջ, հենվեց կոպալին, հայացքը կախեց։ Երգի հետ թափեց արցունք՝ գլոր-գլոր։ Երգի հետ տնքոց ելավ հազար սրտից։

— Օսո, բարձր երգե... Նհո, հալվորիկ, Օսոն մշեցու երգն է կերգե, Ճախրկանցու երգն է կերգե, կլսի՞ս,— Վառե նանի աչքերից ոչ մի կաթ արցունք չէր ընկնում։ Ոչ ոք չէր բռնել թևից, ի՞նչ պետք էր. թրծված էր, դիմանում էր նանը։

Խևիկը հեռացել էր, նստել պատշարին, էլի սևեռուն, հոնքերի արանքը էլի խճճված։

Ո՞վ է մահացել։ Նհո պա՞պը։ Ում են թաղում, Նհո պապի՞ն։ Չէ՛, այդքան չէ միայն. այս մահի մեջ մահեր կան։ Մի մահ էլ կա, էլի կա, էլի կա։ Քանի՞ մահ... Աշխարհում էլի ո՞ւմ աչքերի հայելում մնաց Ճախրկանը։ Չկա։ Ճախրկան տանող ճամփեն, ճամփեզրի գերեզմանոցը։ Վերին ու Վարին թաղերը, Կրկեի տան աղբյուրը... Դեղձո՞ւնը։

«Խևո, դու իմ հոգին լավ կհասկնաս. ես Վառոյի մասին բան չունիմ ասելու, լավ ընտանիք էղավ, բայց Դեղձուն ուրի՞շ էր։ Սովասարի հովերը Դեղձունի ծամերու մեջեն կելնեն, ճակատ ճերմակ-ճերմակ Մասսի ձուն, աչքեր Անդոկա ձորի գիշեր, նայվածք՝ գլգլան ախպուր։ Ինչքան ապրիմ, Դեղձունի դարդ իմ սրտեն չելնա»։

Հիմա ո՞վ կհիշի Դեղձունին, մարդիկ ապրում են միայն իրենցից դուրս, ուրիշի մեջ։ Քեզանից հետո թե կա մեկը, թեկուզ մեկը և հիշում է քեզ, դու էլ ես ապրում։ Հիմա ո՞վ կհիշե...

Բարձրացավ մե՜ծ հողաթումբ։

«Մեռելների լռությունից ուռչում է հողը...»,— բանաստեղծության տողը եկավ ու խփեց Խևիկի քունքերին։— Այս տողը հայը պետք է գրած լիներ, այս տողը հիմա ես պետք է գտած լինեի և՝ հատկապես Նհո պապի համար, բայց նեգրն է գրել։

— Խևո, տես ինչքան հող կանգնեց Նհոյի գերեզմանին։ Օղորմած հոգու աչք կուշտ էր աշխարհքեն,— ասաց Արոն։

— Շիրմաթմբի տակ շատ բան թաղվեց, ախր, շատ, շատ, միայն Նհո պապը չէ։

Խևիկը ինչքան նայեց, հողաթումբն այնքան մեծացավ, թումբ չէր, բլուր էր։

Չէ՛, Նհո պապը իր մահով էլ մեծացրեց աշխարհը,— մտածեց Խևիկը,— ընդերքից դուրս մղած հողաթմբի չափ։ Հողի այս բլուրը կտար որդուն, կասեր. «Տար, լաո, լից դուան սալին, կանաչ ցանե»։ Կտա՛ր։ Ամեն սարի տակ Նհո պապի պես մեկ թաղված է։ Ընդերքը քանդել,

չգիտես ինչպես հրել է դուրս, որ հողը շատանա։ Եվ, ա՛յ, կանգնել են այս լեռ ու սարերը։ Աշխարհագրության դասագրքերում եղած թիվը ճիշտ չէ՝ մեր սար ու լեռների գագաթների ու փեշերի տարածությունը դուրս է մնացել։

Գյուղի նախագահը դամբանակաղ ասաց։ Հետո՝ էլի ուրիշները։

Այ մարդիկ, ի՞նչ եք խոսում։ Դուք ի՞նչ եք ճանաչում Նհո պապին։ Ձեզ հետ քայլում էր, ճախրկանցիների հետ ապրում-խոսում։ Բայց, հերն անիծած, ի՞նչ մարդ էր։ Սուզվում էիր, սուզվում, շունչդ կտրվում էր, տակը չկար։ Ճախրկանցու ձևի լող տվող էր՝ պետք։ Որտեղի՞ց։ Թե ճախրկանը չլիներ, նույն հոր ու մորից կծնվե՞ր Նհոն։ Չէր ծնվի։ Նույն կակաչն է՝ տարբեր սարերում՝ տարբեր հոտ ու գույնի։ Մարդն էլ իր սար ու ձորի, իր հող ու ջրի ծնունդն է։ Նհո պապը իր Ծովասարը, իր սարի այծյամները, իր Ծովասարի մռնչացող ձմեռը այնպես էր հիշում, ինչպես իր մանկության գառն ու գառան վզից կախված զանգակի հետ արած խաղը։ Ինչո՞ւ էր այդպես։ Անցած-գնացած էր դրա՞ համար։ Չէ։ Ծովասարն ու սարի ահեղ ձմեռը մնացել են յոթը սարից այն կողմ դրա՞ համար։ Չէ՛, չէ՛։ Դրանք Նհոյի տարերքն էին կամ Նհոյի բնավորությունը։ Բնությունը ոչինչ սխալ չի անում. աշխարհի մի անկյունում կանգնեցրել է Ծովասարի նման սար, սարին ծիլ տվել և այդ ծիլը եղել է՝ կաղնու, սարի գլխին նստացրել սաղական ձմեռ, հետո ծնել Նհոյին՝ տեղին այնքան հարմար, որքան կաղնու ծառը, որքան այդ ծառի տակի քարը, որքան այդ քարի մոտ թքոտող արշը, որքան այդ սարի գարնան հովը, և՛ աշնանային գույները, և՛ ձմեռվա բուքը։ Այդպե՞ս է։ Այդպես է ու կա։ Նհոն այնտեղից բացակա է, և սարը նրա պակասն է զգում՝ այնքան, որքան մի ծառի։ Հենց այդպես՝ Նհոյի փոխարեն սարից մի ծառ են կտրել-հեռացրել և այդ չափով Ծովասարի ստվերն ու հովն է պակասել, գույներն են պակասել, խեղճացել է ձմեռը։ Թե կտրվածի փոխարեն մի ուրիշ ծառ տնկեն, կփակվի՞ բացը։ Չէ. ախր, ոչ ոք կաղնի չի տնկել Ծովասարում՝ հողն է ծնել։ Նհոյի փոխարեն այդ սարի փեշի գյուղում մի ուրիշը թող ապրի՝ այնտեղ չծնված, չմեծացած Ծովասարում, կփոխարինի՞ Նհոյին։ Չէ։ Չէ՝ թեկուզ էգուց Նհո պապի ծննդավայրում էլ ծնվի, թե Ծովասարն էլ բարձրանա-իջնի։ Չի փոխարինի, որովհետև նա կլինի ինչ-որ հոր ու մոր ծնունդ և ոչ թե՝ աշխարհի այդ անկյունբնության։ Ծովասարը Նհոյի արյունակիցն է։ Համր արյունակիցն է։ Ծովասարը Նհոյի նախամարդ ապուպապն է։

Եվ Ծովասարն ու Նհոն իրար էին ճանաչում, մենք ու մեր Քարագլխի սարերը ճանաչում ենք իրար։ Նրանք իրար էին նման, մենք նման

ենք իրար։ Ի՞նչ եք խոսում երկար-բարակ. «Նհոն լավ մարդ էր, շալակով փուշ կբերեր...»,— դուք որտեղի՞ց եք ճանաչում Ճախրկանցի Նհոյին, ո՞ւմ եք մխիթարում։

Ասեք, որ թաղեցինք արևի տակ եղած վերջին Ճախրկանցուն՝ մի գյուղ-աշխարհ, մի հին ադաթ, լեզվի անուշ մի երանգ։

Ասեք, որ թաղեցինք մի աղջկա Ծովասարի հով ծամեր։

Ասենք, որ թաղեցինք աչք ու ունք բոլոր Ճախրկանցիների։

ՄԱՐՈՒԹԱ ՍԱՐԻ ԱՄՊԵՐԸ

ԷՍ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՕՐԵՐ... ԷՍ ՄԱՄՌՈՏ ՕՐԵՐ...

1

Պապի, քո նոր տարին շնորհավոր:

— Պապի...

Քույրերիս երեխաները՝ տղա, աղջիկ, մեծ, փոքր, լվացված-սանրված, թաց մազերով ներս են խուժում, շրջապատում հորս:

Հայրս նստած է վառարանի մոտ, թևերը ծնկներին ծալած և ինքնուն տարիների հեռվից մշուշոտ հայացքով նայում է պատուհանից դուրս: Մեր պատուհանները բացվում են դեպի հարավ, հայրս այդ մեկը հաստատ գիտի, ավելի ճիշտ՝ գիտեր: Հիմա, այս պահին, ես վստահ չեմ, թե հայրս հիշում է՝ որտե՞ղ է գտնվում ինքը, ո՞ր կողմն է նայում և ովքե՞ր են դիպչում ծնկներին հանգչող իր աջին:

Երեխաները հերթով բռնում են հորս աջը:

— Քո նոր տարին շնորհավոր, պա՛պ,— գոռում է Արտաշը:

— Աշո՞տ,— ձայն է տալիս հայրս,— դո՞ւ ես:

— Հա՛, պապ,— առաջ է գալիս Աշոտը,— Նոր տարիդ շնորհավոր:

— Աշոտ, դու հոս ի՞նչ կանիս. գառներն ո՞վ է քշե:

Տարիներ առաջ, երբ կառուցում էինք մեր այս տունը, և հայրս պահանջեց, որ բոլոր պատուհանները բացվեն դեպի հարավ, այն ժամանակ նա իր էրգրի մասին դեռ կարգին պատմություններ էր անում՝ տեղը-տեղին, ու հա՜ հիշում էր նաև, որ էրգրում իրենց գառնարածը Աշոտ անունով աչքաբաց մի տղա էր, որ Վարդավառի է՞ն առավոտ գառների հետ բարձրացավ դեպի Սև սար և գառների հետ էլ չվերադարձավ:

— Գառներն ո՞վ է քշե, Աշոտ,— կրկնեց հայրս:

— Պապի, ի՞նչ գառներ, գառ չունենք: Ձմեռ է, պա՛պ, Նոր տարի է,— Աշոտը գոռաց հորս ականջին,— Նոր տարի՜...

— Նոր տարի՞:

— Հա՛, պապ, Նոր տարի:

— Հայլեեե՜,— հայրս տմբտմբացրեց գլուխը և փորձեց ավելի հարմար նստել:— Էս հին ու նոր օրեր,— երգեցիկ, օրհնանքի պես ասաց հայրս, և Աշոտը օղու բաժակը խցկեց հորս բուռը,— էս մամոռտ օրեր անկոիվ ու անփորձանք ապրիք, էս մամոռտ օրեր... էս ո՞ր թիվն է,— հարցրեց հայրս:

— Յոթանասունչորս, պապ, յոթանասունչորս:

— Յոթանասունչո՞րս... Մուշեղ հո՞ս է... Մուշեղ, աշխարհք խաղա՞ղ է:

— Խաղաղ է,— պատասխանեցի ես, և քույրերիս երեխաները բարձրաձայնեցին՝

— Խաղաղ է, պապ, խաղաղ:

— Խաղա՞ղ ու խաղա՞ղ է... Մեր էրգրի կողմեն թվանքի ձեն չի՞ լսվի:— Հայրս առավ աթոռին հենված ձեռնափայտը, փորձեց ոտքի կանգնել և զգաց, որ մի բան խանգարում է:— Էս ի՞նչ է,— ցույց տվեց ամուր բռնած բաժակը:

— Բաժակ է, պապի, մեջը արաղ է: Խմիր: Արա՞ղ է:

— Արա՞ղ:— Հայրս կում-կում խմեց մինչև վերջ, ապա նորից թեվերը ծալեց ծնկներին և, հայացքը պատուհանից դուրս, լռեց:

Քիչ հետո հարց տվեց.

— Մուշեղ, Տոնեն էս տարի արաղ շա՞տ ուներ...

Տարիներ առաջ, երբ հայրս իր էրգրի մասին կարգին պատմություններ էր անում՝ տեղը տեղին, առիթով հիշում էր նաև, որ իր փոքր եղբայր Մուշեղը, տեսար, մի քանի ոչխար քշում-իջնում էր Մշո դաշտ, Տոնեի տուն և երկու-երեք օր հետո վերադառնում մի տիկ օղի շալակած:

— Մուշեղ,— հետո ասաց հայրս,— էս գարնան Սովասարի արտերն ի՞նչ ցանենք: Գարի՞ ցանենք, թե՞ գլգիլ:

— Է՜է, Օվե,— հորս համերկրացի Գրիգորը գլուխը տարավ-բերեց,— ասուված քու տունը շավերի, Օվե, դու էդ ո՞ւր ես հասե: Եվ նա մեկեն ու տաք սկսեց երգել:

— *Սասնո կելներ բարակ ծուխ, հոյ Նուբար...*— պարեք, ճժեր,— երգի հանգվույն կանչեց քեռի Գրիգորը,— *Սասնա սարեր քարուքար, հայ Նուբար...*— շախով պարեք, իմ խորոտիկ ճժեր,— խրախուսեց քեռի Գրիգորը:— *Նախշուն գոգնոց աղջիկներ, հոյ Նուբար, կանաչ վարոց հոտաղներ, հայ Նուբար, գարնան կելնեն Սովասար, հայ Նուբար, հայ Նուբար, Նուբար Նուբար...* Օվե՜,— կանչեց հորս համերկրացին,— էս ինչքան բոռ ունես... Պարե՛ք, իմ նախշուն, իմ կապույտ ճժեր, պա-

rե՞ք:— Դաշտով կանցներ ջուխտակ գետ, Հայ Նուբար, մեկ՝ Մուրադ, մեկ՝ Մեղրագետ, Հոյ Նուբար, Հայ Նուբար, Նուբար, Նուբար...

— Մուշեղ,— չոր ձայն տվեց հայրս,— կխաղա՞ս: Հա՞: Կխաղա՞ս,— կավարար կրկնեց հայրս:— Էսօր ապրելու օր է, դու կերգիս ու կխաղա՞ս:

— Ի՞նչ է, Օվե,— գոռաց հորս համերկրացին,— քու ուզածն ի՞նչ է:

— Բա էդ խոսք խո՞սք էր, Մուշեղ,— կովարար պատասխանեց հայրս,— երեկ չէ՞ մեր խոփ չարդավ: Մենք Գալշոյ Մանուկի տղեքն էղնինք ու մեր գութան կանգնի՞: Հա՞: Մեր գութան կանգնի՞: Էս գիշեր բաբոն թե սարից իջնի, ի՞նչ պատասխան կտաս, Մուշեղ,— չոր հարցրեց հայրս:— Շուտ ելի կանգնի ոտքի: Թե Խաբոն սարից իջնի, ի՞նչ պատասխան կտաս:

— Պապի՜,— հորս ականջի մոտ կանչեց Աբրահամը,— ի՞նչ գութան, ի՞նչ խոփ, նոր տարի է, Նոր տարի՜...

— Նոր տարի՞:

— Հա՛, պապ, Նո՜ր, Նոր տարի:

— Հայլեեե՜..— Հեռու-հեռվի՜ց, Մովսարի փեշի իր արտերից դարձավ եռ եկավ հայրս:— Էս հին ու նոր օրեր... Էս մամռոտ օրեր... Մուշեղ հո՞ս է:

— Հա՛, պապի, էստեղ է·

— Մուշեղ, աշխարհի խաղա՞ղ է:

— Խաղաղ է, հայրիկ:

— Խաղաղ է, պապ,— բարձրաձայնեցին երեխաները,— խաղա՜ղ է...

— Խաղա՜ղ ու խաղա՞ղ է... Դե, ասածն բարին, ձգուկ, փարոք ափերաջ:

ԹՈՒԽՈ ՄԱՆՈՒԿ

1

Այսօր շաբաթ օր է և առավոտ կանուխ Վարդո մարեն էլի գյուղեղրին նստած է՝ դաշտապահ Մոսեի ճամփեն է պահում։— Վարդո մարեն ունի ձյուն-ճերմակ մազեր՝ ամառ-ձմեռ գլխաշորի տակ, ծալ-ծալ փեշեր ունի և ծալ-ծալ դեմք, գլուխը ինքն իրեն տարուբերվում է. «չէ՛, չէ՛, չէ՛...»։— Ահա դաշտապահ Մոսեն գալիս է։ Վարդո մարեն նկատում է՝ մրմնջալով ու ծանր ելնում-կանգնում է ճամփի կենտրոնը և, ի նշան հարգանքի, բերանը գլխաշորի ճոթով ծածկում է ու սպասում, որ Մոսեն մոտենա։— Դաշտապահ Մոսեն յոթանասունն անց է արդեն. Մոսեն Վարդոյի Տոնեն որդու հասակակիցն է։ Գաղթականների հիմնած Քարագլուխ գյուղում երբ դպրոց բացվեց, Մոսեն ու Տոնեն կարգին պատանիներ էին և միասին առաջին դասարան գնացին։ Դպրոցը չավարտած պատերազմը սկսվեց՝ միասին կռիվ գնացին, Մոսեն, փառք աստծո, վերադարձավ, իսկ Վարդոյի միակ որդին դեռ չկա։

— Տուր, մարե։— Կռվից հետո մինչև հիմա Մոսեն Վարդոյին մարե է ասում։— Մոմերը տուր,— դեռ չմոռացած, դաշտապահը մեկնում է ձեռքը։

Բայց Վարդոն հազար անգամվա խնդրանքը նորից է կրկնում.

— Մոսե, լաո, մեջ իմ ոտքերին քելելու ուժ չկա, էս մոմերն կվաստիս Թուխ Մանուկին։— Խոսքի հետ գլխաշորի ճոթը թոզնում է՝ խաչակնքում, և երևում են մարեի ծալ-ծալ շուրթերը։

— Լավ, մարե։

— Ջմոռնաս, լաո։

— Չէ, մարե, չեմ մոռնա։

— Իմ կողմից կհամբուրիս Թուխ Մանուկին, իմ կողմից ներողություն կխնդրիս, տես՝ մեջ իմ ոտքերին ուժ չկա, իմ կողմից ներողություն կխնդրիս, Մոսե։

— Հա՛, մարե, կխնդրիմ։

— Մոսե, լաո, մեռնիմ իմ գառան, կնստիս Թուխ Մանուկի մոտ, շուրի մոմերն թամամ վառվին։

— Հա՛, մարե, հա՛։

— Գնա, լաո,— հանգստացած շունչ է քաշում Վարդոն,— Թուխ Մանուկ քու ճամփին թող կանաչ ցանե։

Դաշտապահը գնում է, մարեն ճամփի կենտրոնում մնում է կանգնած՝ հայացքը նրան ուղեկից, աղոթքը՝ մրմնջացող շուրթերին։ Ապա անհանգիստ շարժվում է ու կանչում.

— Մոսեե՛ե... դու դեպ Թուխ Մանուկ կերթաս, չէ՞։

Մոսեն լսում է, բայց չի նայում։

— Մտհան չանիս ու քու ճամփեն թեքիս, Մոսեե՛ե։— Հետո մշուշոտ նայում է լեռների ուղղությամբ, ուր Թուխ Մանուկը պետք է լինի, և շշնջում,— մեռնիմ իր զորությանն։

— Մոսե, լաո, դու կրակ ունի՞ս, կրա՛կ... պիչկա՛ կա՞...— Եվ գոգնոցի գրպանից հանում է լուցկին։— Մտհան արի ու չտվեցի... ճժերն ո՞ւր են,— նայում է շուրջբոլորը,— պիչկեն հասցուն Մոսեին... ճժեր,— անորոշ կանգնում է և էլի նայում դաշտապահին տարած ճամփին,— Մոսեե...

Եվ ձեռքը ճակատին, երկար նայում է, բայց դաշտապահին չի տեսնում։ Հետո գլխաշորի ճոթերը հավաքում է շուրթերին, աղոթք մանելով դառնում է դյուղ և քայլերի հետ գլուխը ինքն իրեն տարուբերվում է.— չէ՛, չէ՛, չէ՛...

2

Քսանմեկի գարնանը, երբ Քարագլուխ գյուղը նոր էր հիմնվում (և դեռ անուն չուներ) Վարդոն,— ջահելությունը էրգրում թողած, արդեն քառասունի մոտ, շեն մի օջախի յոթը հարսերից փրկված միակը,— Վարդոն նայեց շուրջբոլորը, տնտղեց տարբեր կածաններով այս ձորափը հասած տղամարդկանց և որոշեց, թե ում պետք է դիմել՝ կուլգետցի Նհոյին։ Եվ գնաց նրա մոտ։

Նհոն նոր շինած քողտիկի համար դուռ էր տաշմշում։

— Բարի աշխատիս, Նհո։— Եվ ապա Վարդոն հետաքրքրվեց, թե գաղթականների հիմնած այս նոր գյուղի «ռեսը» ո՞վ է լինելու։

— Ռես չեղավ, չե՞նք ապրի, Վարդո։— Հոգնած ու անտարբեր պատասխան տվեց Նհոն։

Ո՞չ, գյուղը առանց գլուխ չի կարող մնալ։ Վարդոն խեղճ ու այրի մի

կին է, բայց իր կարճ խելքով գտնում է, որ գյուղը «ռեսս» պետք է ունենա և «ռեսը» հարկ է, որ լինի Նհոն։ Եվ ապա պարզեց միտքը՝

— Նհո, մեջ գեղին եկեղեցի շինելու մասին մտածող կա՞։

— Է՛, Վարդո, հեղեղը ջաղացն է քշե, դու չախչախն է կորոնիս։

— Մեղա՜, տեր։— Վարդոն Նհոյի փոխարեն երկնքից ներողություն խնդրեց։— Էդպես մի խոսի, Նհո, քու հավատն էդքան շուտ մի կորցրու, Նհո։

Հետո Վարդոն հա գնաց-եկավ Նհոյի մոտ, հա գնաց-եկավ, Նհոյի կնոջը՝ Լուսոյին մեջ գցեց ու հա խնդրեց.

— Նհո, իմ հոգին, քու խոսք մեջ գեղին անց է. տղեքին հավաքե, եկեղեցի շինեք։ Ա՛յ, էնտեղ, էն քարափի գլխին, որ աչքն թամամ գեղին էղնի։ Պզտիկ մի եկեղեցի, Նհո, իմ հոգին, պստիկ-պստիկ եկեղեցի։

Նհոն երկար համոզում էր. ախր, այս քարափի գլխին վիրավոր ու մոլոր հավաքված տնանկների ու մի թիզ հողի մասին է մտածում է, մի պուտ ջրի, մի կտոր հացի մասին են մտածում, այդ կտոր հացն ու այդ պուտ ջուրը հենց Վարդոյին էլ է պետք, Վարդոյին և իր միևնույնը Տոնեին՝ շեն-դրնգուն մի օջախի վերջին ժառանգին, իսկ Վարդոն ինչի՞ մասին է մտածում։ Եկեղեցի։ Ում սիրտը եկեղեցի է ուզում, ահա՝ շրջակայքում, հարևան շեներում կա։ Թե չէ՝ իրենք տնանկ, անհող ու անուժ մարդիկ, նաև ժամանակն ու հավատն է փոխվել՝

— Իսկ եկեղեցի շինելու ժամանակ է, Վարդո։

— Պետք է, Նհո, պետք է. եկեղեցին ժողովրդին մեկ տեղ կհավաքե,— փորձեց համոզել և խիստ ավելացրեց։— Էրիկ չունիմ, Նհո, ես կշինեմ։— Եվ խնդրեց։— Իմ հոգին, Նհո, տղերքին ասա՝ պստիկ-պստիկ եկեղեցի՝ անուն դնինք Թուխ Մանուկ։ Էրորդ Թուխ Մանուկի փոխարեն։

Հետո ամիսներ անցան,— Վարդոն հույսը չէր կտրում Նհոյից,— գյուղը անուն ունեցավ, քարափի ծխերն ու ծխատերերը մտան կառավարական ցուցակներում, կառուցվեց գյուղխորհրդի գրասենյակ, շրջկենտրոնից բերած դրոշը ծփաց գրասենյակի կտուրին, գյուղխորհրդի նախագահ նշանակվեց Գևոն՝ շահել-շահել, բայց աչքաբաց շահել, և նա մեկ օրվա մեջ Վարդոյի հավատն ու հույսը կիրճից դուրս շպրտեց.

— Իմացած եղեք,— հայտարարեց Գևոն,— աստված գոյություն չունի։ Մինչև հիմա ինչքան խաբվել ենք, բավական է։ Ընկերներ, աստվածը սուտ է։

Վարդոն սխալվել էր. իզուր էր բանակցել Նհոյի հետ։ Գյուղի գլուխը Գևոն էր և անաստված։

Եվ մի առավոտ բռնեց Գևոյի ճամփեն։

— Գևո, լաո, աստծուն ինչի՞ խոսք կասես։

— Վարդո մորաքույր, ասու	ված չկա, խմացած եղիր։ Աստվածը հոգևորականների սուտն էր, որ միամիտներին խաբեն, շահագործեն։

— Գևո, քու բերանն արդարությամբ բաց, քու հոգուն մեղք մի արա, անեծք մի բեր քու ազգ ու տոհմի գլխին։ Քու հերն ապիսաս մարդ էր, Գևո։— Իր կողմից համոզեց Վարդոն։

— Մորաքույր, իզուր բաներ ես խոսում։

— Գևո, լաո...

— Ես քեզ համար Գևո-լաո չեմ,— հերսոտ կտրեց Գևոն,— և խմացած եղիր՝ աստված չկա և անուն տալը, պաշտելը արգելվում է։— Եվ գործնական հեռացավ։

— Գևո, կփոշմանես ու կզարկես քու գլխին,— ետևից հասցրեց Վարդոն և դարձավ աստծուն խոսք ասելու։— Քանի կենդանի եմ, տեր, խաղվ կմնամ Գևոյի հետ։

Եվ ամեն առավոտ-իրիկուն ձեռքը դրեց ճակատին, աչքերը կկոցեց, հեռու-հեռվից ազոթք ու համբույր ուղարկեց իր ճանաչ վանքերին՝ սուրբ Կարապետին, Առաքելոցին, սուրբ Նշանին, Մարութա Տիրամոր վանքին, Թուխ Մանուկին... կանչ՝ ճամփեղբերին կանգնած իր ծանոթ խաչքարերին։

Հետո, մյուս գարնանը, Վարդոն բանջարի գնաց, ամեն առավոտ Տոնն ուղալի հետ բանջարի գնաց, ձորից այն կողմ Վարդոն երկու շաբաթ բանջարի գնաց և ասուն դարձավ առանց բանջարի ու դաղրած, դաղրած և ձորից այն կողմ, սարալանջին, հայտնվեց փոքր մի մատուռ, մատուռում՝ փոքրիկ մի խաչքար։

Նա տատից սովորած մի պատառ շարականն էր հիշում,— տատը երգում էր Թուխ Մանուկի մոտ, տատը ասում էր, որ այստեղ անօրենները մանկտիք են կատորել և ի հիշատակ կառուցվել է, ահա, այս՝ Թուխ Մանուկը։ Տատը ասում էր՝ Հայոց աշխարհքում Թուխ Մանուկներ շատ կան, շատ-շատ և բոլորը՝ ի հիշատակ նահատակ մանկանց։— Վարդոն տատից սովորած մի պատառ շարականն էր հիշում.— «Կամաւոր պատարագ, մանկունք տիօք և կատարեալք իմաստութեամբ, որք փոխանակ կաթին արիւն զգինին զմայլեցուցին. բարեխօսեցէք առ տեր վասն մանկանց եկեղեցւոյ»,— երգեց իր հոգեհոգ մատուռի մոտ, արցունք ու շարականով և,— մի կտոր մամ ուներ,— մոմով օծեց իր մատուռն ու խաչքարը և կնքեց՝ Թուխ Մանուկ։

Գևոն խմացավ,— Գևոն չէր կարող չիմանալ,— խմացավ՝ փրփրեց, մատուռն ու խաչքարը քանդել-չարդելու փորձ արեց, բայց միջամտողներ եղան։

— Գևո,— ասաց Նհոն,— Վարդոն էզպեսով ապրել կուզե։ Իրար վրա գրած էն էրկու քարը գեղին ի՞նչ վնաս։ Թող մնան։ Հաշվենք, թե քու աչքերն էդ քարերին չի դիպե։

— Բա որ շրջկենտրոնում իմանան, ի՞նչ կասեն։

— Չեն իմանա, Գևո։ Գեղի անունից խոսք տամ՝ լուրը շրջկենտրոն չհասնի։ Չհասնի։— Պինդ կրկնեց Նհոն։

Եվ Վարդոյի Թուխ Մանուկը մնաց։

Մնաց միայն իր համար. ամեն կիրակմուտ Վարդոն անցնում էր ձորն այն կողմ՝ ճրագլույս ու մոմ էր վառում։

Իսկ պատերազմի հենց առաջին օրվանից,— կովի առաջին օրը Քարագլուխ գյուղից յոթը չահել ճակատ գնացին, մեկը՝ Վարդոյի միակ որդին էր,— և կովի առաջին օրվանից մատուռը դարձավ աղոթատեղի, կոչվեց Վարդոյի Թուխ Մանուկ, դարձավ զորավոր սուրբ։ Եվ մի շաբաթում խաչքարն ու մատուռը հնացան, ունեցան մոմ ու յուղի տարիքը, ունեցան Քրիստոսի տարիքը։

* * *

Երբ պատերազմը սկսվեց, Գևոն արդեն գյուղխորհրդի նախագահ չէր։ Բրիգադիր էր։ Եվ չնայած աջ ոտքը հանկարծակի, մի գիշերվա ընթացքում, բռնվեց ու Գևոն դարձավ կաղ, բայց նախկին աստիճանից ոտքը վար չէր գնում. գյուղում շրջում էր որպես տեր և հարկ համարեց կանգնեցնել կանանց հոսքը։ Մի կիրակմուտ կանգնեց գյուղեզրին, ճամփի կենտրոնում ու երբ կանայք Վարդոյի առաջնորդությամբ եկան՝ կանգնեցրեց։

— Խելք ունեցեք, ա՛յ կնանիք, ինչո՞ւ եք ընկել Վարդոյի խելքին։ Ձեր աչքի դեմը չէ՞ր, որ Վարդոն իր համար խաչքար տնկեց։ Էլ ո՞ւր եք հավատում էդ քարին։

Վարդոն խոստացել էր, որ խոով մնա անաստված Գևոյի հետ, բայց Ջամբեռից՝ ոտից- գլուխ չափեց Գևոյին և պահանջեց.

— Քաշվիր մեր ճամփից, անիծված։ Քու օղորմածիկ հոր խաթրին չէղներ, էս ճրագթաթ կզարկենք քու ճակատ։— Եվ երդումը դրժելու համար ներողություն խնդրեց։— Մեղա, տե՛ր, լեզու թրջեցի էս անիծվածի հետ,— ապա նահատակության գնացողի պես հպարտ-հպարտ քայլեց ու կանանց քաշեց-տարավ։

...Պատերազմից հետո շատերը երես թեքեցին Վարդոյի Թուխ Մանուկից։

Նաև Վարդոյի միակ որդին, Տոնեն չվերադարձավ կովի դաշտից,

բայց Վարդոն անխռով մնաց, Վարդոն մնաց իր հորինած Թուխ Մանուկի հետ։ Ամեն կիրակմուտ ճրագլույսը ձեռքին, մոմերը գրպանում՝ գնում էր։

— Վարդո, բա քու շքախումբն ո՞ւր է։— Թե Գևոն նկատեր՝ ֆկանչեր ու կխնդմնդար։

Իսկ Վարդոն ավելի ամուր էր պահում երդումը՝ խռով ու խռով էր Գևոյի հետ։

3

Քառասուն-քառասունմեկ տարի Վարդոն պահեց իր երդումը։

Գևոյին ազատեցին գյուղխորհրդի նախագահությունից, Վարդոն ձեռքերը մեկնեց երկինք, գոհություն հայտնեց աստծուն և նոր խնդիրք արեց.

— Գևոյին էդ էլ քիչ է, տեր։

Գևոյին ազատեցին բրիգադիրությունից, Վարդոն ձեռքը դրեց սրտին, հանգիստ շունչ քաշեց.

— Օխա՜ղ,— ասաց,— չմեռա ու տեսա, որ Գևոն գլուխն ի վար եկավ։— Եվ խոսքը հեռվից հեռու ուղղեց կոլտնտեսության նախագահին։— Անմեղ գառը տարավ ու գելին պահ տվեց՝ Գևոն ու կալի պահա՞կ։

Հետո, ինչպես սովորաբար լինում է՝ կռվից հաղթող դուրս եկածները թուլություն են ապրում, այդպես էլ Վարդոն էր. Գևոյին տեսավ, լփոխեց ճամփեն, մտքում էլ չանիծեց, թիկունքին չանչ չարեց և չիմացավ նաև, թե Գևոյի համար աստծուց ի՞նչ պատիժ խնդրի և ցանկացավ՝

— Տեր, դու Գևոյին կյանք տուր. թող քըռուքուշ ապրի։

4

Այն, ինչ այդ առավոտ լսեց Վարդոն, հավատալու բան չէր։

Անցյալ աշնանը, մի առավոտ, Նհոյի պառավը բացեց Վարդոյի դուռը։

— Է, Վարդո,— ասաց,— գեղ իրար է անցել, դու մո՞մ է կթափիս։

— Մա՞րդ է մեռել, լաո,— խաչակնքեց Վարդոն։

— Չէ, քուրիկ, չէ, Գևոն է դարձե խաղք[1]։— Եվ տեղը տեղին,

[1] Խաղք — խաչտառակ։

ինչպես Նհոյից էր լսել, այդպես էլ պատմեց։ Ուրեմն, անցյալ գիշեր Գևոն կոլտնտեսության կալից դարման է գողանում։ Ինքը որպես թե կոլտնտեսության կալի պահակն է, որպես թե դարմանն ու խոտը պաշտպանում է, որ ուրիշները չգողանան, բայց ինքն է գողանում։— Արևմեռին տես։— Գողանալը գողանում է, բայց տեղն ու տեղը մատնվում։ Իսկ նախագահը չի սպասում, որ լույսը բացվի, հենց կեսգիշերին Գևոյին, էդ արևմեռին, կանչում է գրասենյակ։ Դու պահակ ես, ասում է, թե գող։ Գևոն ձեռքը դնում է կրծքին, երդվում է, թե՝ սուտ է, զրպարտություն է։ Էստեղ նախագահը խաղք է անում. ասում է, թե՝ չես գողացել, թե՝ զրպարտություն է, եկ հենց հիմա Վարդոյի Թուխ Մանուկը գնանք՝ երդվիր։

— Էստեղ շփոթվեց (մոմ թափվեց կրակին, բայց ուշադրություն չդարձրեց), հավատալու բան չէր. երևի... երևի մեկն ու մեկը Գևոյին ձեռ առնելու համար,— հիմա ո՞վ չի կարող Գևոյին ձեռ առնել,— ձեռ առնելու համար հորինել է, իսկ Լուսոն միամիտ-միամիտ հավատացել է ու շտապել ուրախ լուրը հասցնելու իրեն՝ Վարդոյին։

— Չէ՛, Վարդո, չէ՛, եղած բան է. Նհոն ասաց։

— Հաա՜,— Վարդոն լրջացավ. թե Նհոն է ասել (իսկ Վարդոն Նհոյին հավատում է), ուրեմն ճիշտ է, ճշմարիտ է։— Հաա,— Վարդոն, ափն ի բերան, նայեց կրակի մեջ տժտժացող մոմին և մտածկոտ հարցրեց։— Մեջ գրասենյակին մարդիկ շա՞տ են էղե... ժողովուրդ ներկա՞ է էղե։

— Չէ՛, գիշեր է էղե, Վարդո, ու էդ արևմեռն ու նախագան։

Վարդոն ափսոսաց. լավ կլիներ, որ գյուղը, ողջ գյուղը մեծ ու փոքրով՝ ներկա լիներ։

— Գեղ կդրնգա,— ոգևորվեց Լուսոն։ Առավոտ շուտ նախագահը կանգնել է գյուղի զրուցատեղին, պատմել է ու ծիծաղել, ծիծաղել ու պատմել է և հիմա՝ շուրթից շուրթ է անցնում։— Գեղն կդրնգա ու էդ արևմեռ...

— Չէ՛,— Վարդոն շտապեց կտրել,— Գևոյին մի անիծե... Գևոն... Գևոն վերջը հալալ կաթնակեր դուրս եկավ։ Ուրեմն Գևոն Թուխ Մանուկ էրթալու, Թուխ Մանուկին երդում տալու ա՞հ է ունեցե... Գևո, աստծու օրհնանք թափվի քու գլխին, լաո, օղորմի քու անո՞ւշ հոր, Գևո... Գևո... ես էրթամ Գևոյին գտնիմ։— Վարդոն ժիր քայլեց դեպի սնդուկը և հանեց պահունի գլխաշորը։— Հա, ես էրթամ կալ... Գևոյին գործից խոմ չե՞ն հանե... մեղք է. էրեխեքի տեր, առողջություն վատ։

Վարդոն դուրս ելավ, քաղցր հայացք ձգեց Թուխ Մանուկի կողմը,— մեռնիմ քու սուրբ զորության,— մրմնջալով բարի լուրը հայտնեց, ապա կոլտնտեսության կալը տանող ճամփեն թողեց՝ եզր ու եզր փաթա-

թեց գյուղը, հասավ կալ, գտավ Գևոյին (Գևոն դեզի մոտ նստած էր) և հարգանքով բարևեց։

— Բարի լուս, լաո։— Եվ գլխաշորի ճոթերով բերանը ծածկեց. հարգանքի նշան էր. արժանավոր մարդկանց ներկայությամբ շուրթերը ծածկած է խոսում Վարդոն։

Գևոն խոժոռ նայեց։

— Գևո, օղորմի էն քու անո՞ւշ հորն։ Աստված մանանա թափե քու տան ու տեղի գլխին, լաո։

Գևոն մռայլ ոտքի ելավ։

— Օրհնանքդ քեզ մնա, նախագահից թուղթ բերե՞լ ես։

— Թո՞ւղթ,— Վարդոն չհասկացավ,— ի՞նչ թուղթ, լաո։

— Ի՞նչ թուղթ, լաո,— Գևոն ոխով տնազեց։— Դարման տանելու թուղթ։

— Է, աստված քու աչապի տուն շինե, Գևո։— Վարդոն բոլորովին չվիրավորվեց, որ Գևոն կոպտում ու տնազում է։— Դարմանի համար ես կգամ ու կհասնիմ կա՞լ, լաո։

— Բա ինչի՞ համար ես եկել ու հասել,— հեգնեց Գևոն։

— Եկա, որ քու հետ լեզու թրջիմ. խոով-խոով չմեռնիմ։ Մեղք է։ Թուխ Մանուկ վկա, Գևո, սիրով ու սրտով եկա-հասա հոս ու մեկնված սրտով է կխոսիմ։

— Հըմ,— հենց այնպես արձագանքեց Գևոն։

— Գևո,— Վարդոն ցածրացրեց ձայնը և նայեց շուրջբոլորը՝ հո մեկն ու մեկը իրենց չի լսում,— կհիշիս իմ խոսքը. ես չասի՝ աստծու անվան հետ գործ չունիս։ Ջասի՞, լաո։ Ես չասի՞, թե կփոշմանիս ու կզարկիս քու գլխին։

— Ի՞նչ ես գլխիցդ դուրս տալիս,— զայրացավ Գևոն։— Սա կոլխոզի կալ է, ի՞նչ գործ ունես, թող գնա։

Վարդոն բոլորովին չնեղացավ։

— Կերթամ, լաո,— հաշտ ու խաղաղ ասաց Վարդոն։— Էսօր թե իմ գլուխն էլ ջարդիս, ծպտուն չեմ անի։ Կհիշի՞ս, Գևո, ճրագթաթով քու ճակտին զարկել կուզեի, հըմը խաթր արի քու օղորմածիկ հորն։ Ջարդվեր իմ ձեռքն, լաո, ջարդվեր իմ ձեռքն. էսօր ես չիմացա, թե...

— Ի՞նչ ես ուզում,— ճայթեց Գևոն,— հեռացիր էստեղից։

— Գևո, իմ հոգին,— Վարդոն շշնջաց և դեմքը ավելի մոտեցրեց Գևոյին,— ե՞րբ էրթանք Թուխ Մանուկ։

— Այ գիժ պառավ, ի՞նչ ես ուզում ինձնից։

— Էսպես ձոր ու ձոր, ման գալեն կերթանք ու կդառնանք։ Մա՞րդ

չի իմանա, լաու էրթանք՝ Թուխ Մանուկից քու մեղքերին թողություն խնդրենք։ Մոմն ես կբերիմ...

Վարդոյից պրծում չկար, Գևոն ինքը թողեց հեռացավ։

Իսկ Վարդոն ոգևորված դարձավ տուն և ինքն իր համար մեկնաբանեց՝

— Գևոյի հոգին հըլա չի զուլալվե. մեջ Գևոյի հոգուն հըլա կռիվ կա։

ԿԱՆՉԸ

1

— Ալեեե՜... Ալե, իմ հոգին, Ալեեեե՜...

Սերունին, մահակին հենված, կանչում էր երգեցիկ։

Գառները շաղ էին եկել լեռնալանջին, իսկ Զորոն...— իսկ ծերունի Զորոն գառնարած չէր. գյուղը ընդհանրապես գառնարած չուներ, օրը մեկն էր քշում հոտը և այդ օր Զորոյի հերթն էր,— իսկ Զորոն՝ խոշորկեկ ու թավամազ, հենվել էր մահակին ու երգեցիկ կանչում էր.

— Ալեեե՜... Ալե, իմ հոգին, Ալեեեե՜։— Արևածագից մահակին հենված կանչում էր ու կանչում։

***

Է՜, ե՞րբ էր, էլի՝ գարուն, այսպիսի կապույտ ու փափուկ մի առավոտ կար, կապույտ աշխարհ, Մարութա սարը կապույտ քողն ի դեմքին, ձորերն ու կիրճերը կապույտ երկնքով լցված, ծերպերին ու ձորաբերանների թառած գյուղերի շունչը կապույտ էր, սանձը կտրած Տալվորիկի հևքից ձորը լցված կապույտը քլթքլթում էր... Մարութա սարի փեշին փռված գառներն ու ուլերը խլշկոտած ծանոթանում էին աշխարհի ու գարնան հետ. մատղաշները դունչ ու լեզվով, վախվորած հայացքներով շոշափում էին քարերը, քարերի նախշուն մամուռները, հոտոտում էին հողի բույրը, սեզերից ու չոր փշերից խրտնում, ճնճղուկների ֆրռռոցի վրա ծփում քարեքար... Մատղաշները ծանոթանում էին աշխարհի ու գարնան հետ, իսկ Զորոն՝ տասը-տասնմեկ տարեկան մի տղա կար՝ այծի մազից գործած շալվարով, այծի մազից գործած մուճակով մի տղա կար՝ Զորոն, կանգնած կապտաժեռ վեմին՝ պարսատիկը թափով

պտտում էր, վրրժժժ-վրրժժժ-վրրժժժ, և քարեր էր շպրտում դեպի ձորը։ Քարը սուլելով անցնում էր բանջարի ելած աղջնակների գլխավերևովով և գահավիժում ձորը։ Հետաքրքիրը հենց այդ էր. քարը սույլ ու թափով հասնում էր մինչև ձորը, իսկ ձորի վրա ուղեծիրը մեկեն կոտրվում էր, և, քարը քանց զարկված ագռավ, թպրտալով ընկնում էր ձորը։

Բանջար հավաքող աղջնակների նախշուն բույլքը վեռվեռում էր լանջն ի վեր։ Նրանցից մեկը, յոթ-ութ տարեկան պստլիկ Ալեն, սև-պըլպստան աչքերով ու ջուխտակ բարակ ծամով Ալեն, բոբիկ ու նախշուն գոգնոցով ու կրակի կտոր Ալեն, ամիկի պես՝ հենց իրենց թանիկ ուլի, հենց Զորոյի խլրտուն մատղաշներից էն ճերմակ ականջներով ուլի պես, քարեքար էր թռչկոտում... Ալեն... Ծաղկեպսակ էր գործել-դրել գլխին... Ալեն... Հովից տարուբեր գույնզգույն ծաղիկների մի փունջ... Պստլիկ Ալեն... Եվ Զորոն անակնկալ հասկացավ, զգաց, որ նա իր Ալեն է, ուրիշ ոչ մեկինը, իր Ալեն է ու կա։

Այս կապույտ աշխարհը իրենն է, այս դաշն առավոտը, մետաքսաքող Մարութա սարը իրենն, Տիրամայր վանքի գլխին որպես լույս իջած ճերմակ ամպի պատառն իրենն է, Տալվորիկ ծուռ գետի գոչգոչունը, գյուղի գլխին բզկտված ծուխը, այս խլրտուն ու խլուշտ-մլուշտ ուլերն ու գառները իրենն են, արևը, երկինքը, այս ծաղկած քարերը, ժայռը, որին կանգնած թափով պտտում է, պարսատիկը, վրժժժ-վրժժժ-վրժժժ, այս խելառ պարսատիկը իրենն է, Ալեն... ծաղկեպսակը գլխին քարից քար թռչկոտող պստլիկ Ալեն իրենն է, ուրիշ ոչ մեկինը չէ, իրենն է ու իրենը։

2

— Ալեեե՜... Ալե, իմ հոգին, Ալեեեե՜...

Ներունին մահակին հենված կանչում էր երգեցիկ։

Գարնան է՞ն առավոտը նրա համար էր այնքան լուրթ ու գեղեցիկ, որովհետև արևի խավարում պետք է լիներ...

Դալար վարոցով գառնարածը էն առավոտ նրա համար նկատեց, նրա համար գտավ իր պստլիկ Ալեին, որովհետև պետք է կորցներ...

***

Եվ հանդիպեց մեկ էլ հիսունհինգ տարի հետո...

Երբ ամուսնացնում էր իր կրտսեր որդուն, Զորոն որոշեց հարսանիքի խմիչքը անձամբ և անպայման Արարատյան դաշտից բերել...

Մյուս որդիներին ամուսնացնելիս նեղն էր և փոքրիկ հավաք արեց. հարսանքանման մի բան։ Իսկ, ահա, փառք, կարող է ողջ գյուղի, հեռու ու մոտիկ բարեկամների համար լի ու բոլ սեղան բացել, անարատ ու ընտիր գինով և անպայման՝ Արարատյան դաշտի և կա ու չկա՝ տնական։ Որքան էլ ավագ որդին, որ առանձին ծուխ էր, միջնակ որդին, որ արդեն առանձին ծուխ էր, որքան էլ համոզեցին՝ խմիչքը բերել գինու գործարանից,— գործարանի գինուն գինի չի հասնի,— Զորոն չհամոզվեց՝ Արարատյան դաշտից, կա ու չկա՝ Արարատյան դաշտից, և ընտրողը ինքը՝ Զորոն պետք է լինի։

Եվ առավոտյան նստեց մեքենա,— միջնակ որդին սեփական ավտո ուներ,— նստեց որդու կողքին ու իջավ դաշտ։

Գյուղեր մտան, դուրս եկան, մտան, դուրս եկան, ամեն գյուղում Զորոն, է՞, քանի կարասի գինի փորձեց, բայց ոչ մեկը սրտովը չէր։

Իրիկնապահ էր արդեն, խիտ ծառաշարքերով երիզված մայրուղով որդին սրդոռած թռցնում էր մեքենան, ծառերի արանքից հանկարծ մի ճանապարհ հայտնվեց, և Զորոն, չգիտես ինչու, խառնվեց իրար,— անցանք,— և ձեռքը գցեց ղեկին։ Մեքենան թռավ ճանապարհից և խճճվեց թփուտների մեջ։ Առանձնապես վթար չէր. դուռն մի փոքր քերծվածք, մի քանի խազ ու մազ, բայց որդին փրփրել էր։

— Քու սիրտ լեն պահե, լաո,— հանգստացրեց Զորոն,— կպատահի՝ բարին էս էր։

— Էս գեղ իմ սրտին դուր եկավ։— Հետո, գյուղի կենտրոնում, մեքենան կանգնեցնել տվեց,— լավ-վատ՝ էստեղից կառնինք։— Եվ մոտեցավ հավաքվածներին։

Բոլորն էլ գինի ունեին և պատրաստ՝ մառան առաջնորդելու։ Միայն մեկը՝ լողլող մի մարդ, սուս էր, և Զորոն հենց նրան դիմեց։

— Ինչո՞ւ չունեմ,— պատասխանեց մարդը,— այգի ունեցողը գինի էլ կունենա։

— Աստված վկա, իմ տղի հարսանիք քու գինով կանիմ,— հայտարարեց Զորոն։— Էրթանք ձեր տուն։

Որթատունկի թառման ճակատին առած գինեքույր տուն էր։ Տնամերձ ծիրանենու բունն ի կախ տաքդեղի կարմիր շարուկներ կային, և պստլիկ ու ժիր մի պառավ վար էր առնում շարուկները։

— Լավ տուն ու տեղ ունիս, ախպեր։— Տունն ու այգին, իրոք, Զորոյին շատ դուր եկան։— Ուրախ վայելում։

Խոսքի վրա պառավը կտրուկ շուռ եկավ։ Մեկ ուզեց տաքդեղը գցել մաղի մեջ և մոտենալ, բայց այդպես՝ կարմիր շարուկը թևին շարունակեց հետաքրքիր նայել անծանոթին։

— Քու նշանա՞ծն է։

— Հա։ Քո երկրացին է։

— Իմ էրգրացի՞ն... Հըմ-արի, հըմ-արի, իմ քուր,— խնդացավ Զորոն։— Հըմ-արի ծանոթանանք։

Պառավը մանրիկ ու չափուկ մոտեցավ, ժպտերես ձեռք տվեց. թևն ի կախ շարուկները խշխշացին, և նա մեղավոր նայեց, որ տաքդեղով է դիմավորում երկրացի հյուրին։

— Էրգրի ձեր գեղ ո՞ր մեկն է, քուրիկ։

Եվ պատասխանի վրա Զորոն կուչ եկավ, ինչպես կծկվում են շրջըրտված քարից։— Սարեկա՞ն,— դժվարությամբ մեկնվեց Զորոն,— Սարեկա՞ն,— և չնայած պառավը շատ մոտ էր, Զորոն դեմքը մոտեցրեց և կկոցած նայեց աչքերի մեջ... Հոգնած ու տխուր էին պառավի աչքերը, բայց խորքում շարաճճի ժպիտի մարմրող կայծեր կային։ Զորոն կախեց գլուխը, ապա մամտուն ու շեղակի նայեց կնոջ թևն ի կախ տաքդեղի շարուկին, հետո հեռու-հեռվից, շատ հեռվից եկող մի ժպիտ՝ կոտոր, մեղք ու կրակ, սարգսատայնի պես խճճվեց բեղին, և նա շշընջաց— Ալե՞ն։— Նույնիսկ պառավը լսեց իր անունը։— Ալե՞ն,— շշընջաց Զորոն ու ծանր շտկվեց։ Շտկվեց, ձգվեց, ձգվեց (վերջին տարիներին որդին հորը այդպես շիտակ ու ձիգ չէր տեսել), արտասովոր ձրգվեց և դիմացը կանգնած պստլիկ կնոջ գլուխն ի վեր նայեց հեռու, տընների ու ծառերի արանքից գտավ լեռնապարը և որքան շունչը հերիքում էր կանչեց,— Հըրիիի՜, Ալեե՜ն... Ալե՜ն,— հայացքը հեռու լեռներին՝ հա՜ կրկնեց,— Ալեե՜ն...

Պառավը ծգվված անտղում էր Զորոյին, որ կիսախուփ, մշուշոտ հայացքը հեռու, վերացած իր անունն էր կրկնում և ի պատասխան նրան, հարձագանք այդ հեռագնա ու տաք շշնջոցի՝ լացել էր ուզում։

Հետո Զորոն շաղված հայացքը դարձրեց պառավին և էլի շշնջաց.

— Ես Զորոն եմ... Ալե։— Եվ ձեռքերն առավ ափերի մեջ, քամեց, կպցրեց խոնարհված ճակատին, հետո մոտեցրեց շուրթերին։

Պառավը շփոթվեց։ Էրգրի օրենքով կինը պետք է տղամարդու ձեռքը գնար, և շտապեց համբուրել Զորոյի ձեռքը։ Արցունքներն արդեն թափվում էին, է՜, երբվանի՞ց մոռացված-մոլորված արցունքները ելք էին գտել, և հանգրվանը Զորոյի ձեռքերն էին։

Հետո այնպես եղավ, որ միմյանց ձեռքերն էին թոցնում համբուրելու համար, և տաքդեղի շարուկը, որ կախված էր պառավի թևից, չորացած տաքդեղի կարմիր շարուկը խշրվեց նրանց դեմք ու աչքերի մոտ, Ալեն փոշտաց, նա, որ հանդարտիկ թափում էր աչքերից, և լացը այն-

քան դուր էր գալիս, որորեց աչքերը և ջերմ ու մաքուր արցունքները պղտորվեցին, կծվացան կոպերի տակ...

Եվ դեմ-դիմաց կանգնած երկու երեխա բոունցքներով որորում էին կծկծացող աչքերը ու շաղված հայացքներով նայում էին իրար։

— Բաբո, ուշացանք,— հարկ համարեց որդին։

Զորոն սթափվեց։ Աչք դիպցրեց որդուն, ապա տնտղեց տանտիրոջը, դարձավ նայեց Ալեին և գլուխը տմբտմբացրեց։

— Ալեն...— կմկմաց. ինչ-որ բան էր ուզում ասել, բայց էլի դարձավ տանտիրոջը,— ուրեմն... քու նշանածն է... Բարի վայելում։— Եվ վրաղ ավելացրեց։— Գինին ո՞ւր է։

Մառանում տանտերը պղնձե չափով գինի լցրեց, գավաթի հետ մեկնեց Զորոյին, որ փորձի, իսկ Զորոն հենց չափով խմեց, մի շնչով դատարկեց ու փառավորվեց։

— Օխսա՜շ,— ափով սրբեց բեղերը։— Իմ սիրուն հոգեցավ... էսպես անուշ գինի իմ շրթին չէր դիպե, Ալե։ Անուշ գինի էր։— Եվ գլխահակ, և՛շեղ ու մի տեսակ իրենից զատվող հայացքը մառանի անկյունում կանգնած պառավի սոլերին, դիմեց որդուն։— Իմացա՞ր, լաո, թե արևծագից շուրի հիմա ինչի համար կմտնինք գեղերն ու կելնինք, կմտնինք ու ձեռնդարտակ կելնինք դուրս... Իմացա՞ր... Իմ ուզած գինին էս էր ու էս... էգե՛ք։

— Ինչքա՞ն, քանիսո՞վ,— հետաքրքրվեց տանտերը։

— Կարասը լրիվ իմն է։— Զորոյի ձայնի մեջ կռիվ կար։— Լցե՛ք ու առանց հախ ու հաշվի... Գինին անգին է,— բողոքեց Զորոն,— գինու արժեքն էլի գինին է, Ալե... Լցե՛ք։

Տանտերը մոտեցավ չափը վերցնելու, բայց Զորոն չտվեց։

— Ուրիշ բանով լցեք. էս իմ բաժակն է։

Որքան էլ որ տանտերը համոզեց, որ ոտքի վրա խմել պետք չէ. տուն կա, սեղան կա, քիչ հետո մարդավայել սեղան կնստեն, կզրուցեն, կարգին կծանոթանան, մանավանդ որ համերկրացի-համագյուղացիներ են հանդիպել, Զորոն չլսեց։ Որդին բշտեց, միջամտեց նաև Ալեն, բայց Զորոն տեղն ու տեղն էր ուզում խմել, հենց՝ պղնձե ամանով, հենց կարասից։

Սարսափած պառավը հաց ու մաց թերեց՝ հարմարեցրեց, սակայն Զորոն ձեռք չտվեց հացին, կարասին մոտիկ հենվեց պատին՝ լցրեց ու խմեց, լցրեց ու տակետակ խմեց... Եվ սրբում էր բեղերը ու բռի մեջ տնքում,— Ալե...

Պառավը նստել էր իր հարմարեցրած սեղանի մոտ և մտամոլոր նայում էր։ Քիչ առաջ, երբ Զորոն նոր մտավ բակ, նա ժիր ու կայտառ

էր, հիմա կուլ էր եկել, իրոք՝ մի բուռ պառավ, թմբիրի մեջ, աչքերը դեռ կծկծում էին, բայց զգում էր, որ ընդհատված անուշ լացը ալիք-ալիք բարձրանում է։

— Քու էրիկին տեսանք. Ալե. ուրիշ ի՞նչ ունիս։

— Փառք աստծո, տղեք ունեմ, ախպեր Զորո,— և որոշեց զսպել լացը,— հարսներ ունեմ, ամուսնացած աղջիկներ ունեմ, թոռներ ունեմ։ Դո՞ւ ինչ ունես, ախպեր Զորո։

— Փառք աստծո, տղեք ունիմ, Ալե, հարսներ ունիմ, կարգված աղջիկներ ունիմ, Ալե, բոլ թոռներ ունիմ, էս գինին էլ,— Զորոն էլի լցրեց պղնձե ամանը,— էս անուշ գինին էլ իմ փոքր տղի ուրախության համար է, հարսանիքի համար է, Ալե... Հրիի՜, Ալե, իմ հոգին։

Եվ սկսեց երգել։

Տանտերը, կարասի վրա խոնարհված, անթատակով բռնեց Զորոյին և տակետակ ժպտաց— գնահատեց իր գինու ուժը։

— Էս ի՞նչ անուշ գինի էր, Ալե,— երգի միջից ու երգահանգ կանչեց Զորոն։— Էսքան ժամանակ էսպես անուշ գինի էղնի հոս, ու ես անտեղյակ։ Հրիի՜ի, Ալեե։— Եվ կցեց կտրված երգը։

Տանտերն ու որդին ավարտեցին գինու չափն ու հաշիվը։ Զորոն երգում էր, տանտերը ծխախոտ վառեց ու նստեց կնոջ կողքին, Զորոն երգում էր, որդին գինով լի տիկ ու տակառիկները տարավ՝ տեղավորեց, դարձավ կանգնեց մառանի կենտրոնում, Զորոն ինքնամոռաց երգում էր։ Պղնձե ամանը դատարկ էր արդեն. վերջին չափ գինին, երգելիս, շաղ էր տվել, ինքն էլ չիմանալով, թե ինչպես, ոտից-գլուխ օծել իրեն։

— Հրիի՜ի, Ալեե։— Ինչպես սկսել էր, այնպես էլ ավարտեց երգը, աչքերը բացեց, սակայն ոչ մեկին չտեսավ, ոչ մոլորիկ Ալեին, ոչ խընդմընդացող տանտիրոջը, ոչ կողքին կանգնած որդուն, որ պղնձե ամանը առավ ձեռքից և մտավ թևը։

— Գնացինք, բաբո։

Զորոն թևը փախցրեց և պինդ սեղմվեց պատին։

— Մարաթուկ վկա, իմ ոտքն էստեղից դուրս չի էլնի։ Ալե՜ե...

Տանտերը առաջարկեց, որ գնան տուն. Զորոն պառկի, մի քիչ հանգըստանա։

— Հայ-հա՜յ, էլ իմ աչաց քո՞ւն կգա։— Եվ բռունցքներով տրոքեց աչքերը։— Ալե՜ե,— կանչեց Զորոն,— դու ո՞ւր կորար։

Հետո որդին նորից քաշեց, և Զորոն հրեց ու հայհոյեց, վիրավորեց նաև տանտիրոջը։ Երեխայի պես կառչել էր պատից և չէր ուզում պոկվել և մեջ-մեջ կանչում էր,— Ալե՜ե...

Եվ տանտերը տեղին դիտողություն արեց։

— Դու ինչ կվոնդի՞ս, հայ։— Զորոն ձայնի վրա չքշեց միայն նրա համար, որ կառչած տեղից չպոկվի, չհեռանա։— Հացն ու գինին, Տեր կենդանին, կզարկիմ ու քու կարասներ կանիմ ջարդուխուրդ։ Ձի՞ս կվրոնդիս... Ալե՜ե։

Ստիպված՝ որդին ու տանտերը քաշքշելով տարան, և Զորոն, կանչը շուրթերին, աջ ու ձախ որոնում էր Ալեին և չէր նկատում, և քաշքշելով ելավ մառանից։

Պառավը, որ հուզված կուչուրել էր, փլվեց ծնկներին և հոնգուր-հոնգուր լաց եղավ։ Դրսից լսվում էր կանչը,— Ալե՜ե,— ոչ ոք իրեն այդպես չէր կանչել՝ այդպես ջերմ, այդքան սրտանց, այդպես կարոտիկ, աղոթքի նման, երգի պես, հեռու լեռներից եկող արձագանքի պես...— Ալե՜ե,— գնալով հեռվից էր լսվում կանչը։

Զորոն մութ փողոցում կանչում էր, գյուղից դուրս ելան՝ նույնը, և մինչև քնելը։

Եվ քնած, շուրթերը խլվլում էին,— Ալե՜ե...

3

— Ալե՜ե... Ալե, իմ հոգին, Ալեեե՜ե...

Ծերունին մահակին հենված երգեցիկ կանչում էր ու կանչում։ Լանջը ի վեր մի մանչ ու մի աղջիկ էին բարձրանում. Զորոյի թոռնիկներն էին, կրտսեր որդու երեխաները, նրա, որի հարսանիքի գինին Ալեենց տնից բերեց։

Հարսանիքից հետո էլի մի երկու անգամ իջավ դաշտ. ի տես Ալեին, հետո ձմեռը վրա տվեց, հետո գարուն՝ Զորոն բան ու գործի, առօրյա հոգսերի հետ, երբեմն հիշեց՝ միտք դրեց իջնել դաշտ, և ամեն անգամ մի բան խանգարում էր... Եվ այդպես տարիներ անցան։

Վեց տարի։

Իսկ այսօր... Իսկ այս առավոտ Զորոյի հոգին տակնուվրա էր։

Մտհան էր արել գառները, իր տեղը, որ գյուղի թիկունքի սարն էր, իր գոյությունը... Դիմացը երկնագույնով լցված ձորերն ու կիրճերն էին, Արարատյան դաշտը՝ ծավե շղարշի տակ և այդ ծովածուփ շղարշի վրա՝ արծաթ գոտի — ելման Արաքսը, դենը՝ տակը փոթորիկ մտած վրաններ ի ելևէջ շարուկը— Հայոց լեռնապարը, բայց նրա համար գարնան մի ուրիշ առավոտ կար, աչքերի առջև գարնան հետ պսակադիր, է՜, մի ուրիշ աշխարհ՝ կապույտի մեջ սուզված ուրիշ սարեր, գժված մի ուրիշ գետ, արևի ու աշխարհի հետ ծանոթացող գառ և ուլերի մի ուրիշ հոտ կար, դալար վարոցով գառնարած մի տղա և քանջարհավաք աղջնակ-

ների մի նախշուն բուկ, և ծաղկեպսակով պսակիկ մի աղջիկ՝ քարեքար թռչկոտող։

— Ալեե՜,— հայացքը հորիզոնին կանչում էր ծերունին,— Ալե, իմ հոգին, Ալեեե՜ե...

Եվ թոռներին նկատեց այն ժամանակ, երբ կողքին էին, և աղջնակը փիսոյի պես քսվում էր սրունքներին։

— Բա գառներն ո՞ւր են, պապ։

— Գառնե՞ր,— ծերունին ուշ հասկացավ թոռան հարցը,— գառնե՞ր,— հեռու-հեռվից վերադարձած հայացքը պտտեց շուրջբոլորը։— Գառներին ի՞նչ կպատահի, գառնուկ։

Մնկները նվում էին, գետինը քաշում էր, տնքալով նստեց, բայց հորիզոնը ձգում էր հայացքը, իսկ միտքը անընդմեջ նույնն էր կրկնում։

— Ուտենք,— աղջնակը շտապ բացեց հացի կապոցը,— բոլո՛ր կուտենք, պապ։

«Գավաթ մի գինի կպիտեր։— Մտածեց Զորոն և տեղնուտեղը որոշեց։— Էլնիմ ու Էրթամ Ալեի մոտ»։

— Գառներն ո՞ւր են, պապ։

«Աստվածն իմ խելքի տունն ավերե,— հայացքը դաշտին մտածեց Զորոն,— Ալեն, հա՜ա, իմ աչաց դեմ, ու ես ինչքա՜ն ժամանակ չեմ տեսե զինք։ Էլնիմ ու Էրթամ Ալեին ի տես»։

— Գառները չկան, պապ։

— Չկա՞ն,— Զորոն մահակին հենված ոտքի ելավ։

«Էրթամ Ալեին ի տես»։

— Գառներն, է՜, էնտեղ են,— անորոշ մեկնեց փայտը։— Գնա ժողվե բեր, քու քրոջ հետ հաց կերեք, ես հասնիմ գեղն ու դառնամ։

Ճանապարհին, մինչև տուն հասնելը, Զորոն հա՜ մեղադրեց իրեն, որ այսքան ժամանակ Ալեին տեսության չի գնացել։ Եվ զարմացավ. ինչո՞ւ չի գնացել. ժամանա՞կ չկա, աչք ու ոտքի՞ց է տկար, կարողությո՞ւն չունի, ճամփա ու ավտո՞ չկա... Ախր, ինչո՞ւ չի գնացել, միտք բերած օրը ինչո՞ւ է հետաձգել այցելությունը։

Եվ, չգիտես ինչու, մեղավորը դուրս եկավ կինը։ Ու երբ տուն մտավ, կնոջ վրա զայրացած էր արդեն։

— Քու ձեռքի հացն հարամ է։— Ոտքը շեմից ներս գնելն ու կռիվը մեկ եղավ։— Հարամ է,— կրկնեց Զորոն։— Դու քու աջ ձեռքով հաց ես ուվե, ձախով իմ հոգին առե,— ասաց Զորոն։— Դու իմ հոգին իմ բերանն ես հասցրե։ Կպիտի էս փետ քու գլխին ջարդիմ։

Եվ փայտը, բռունցքի հետ, խփեց իր գլխին։ Խփեց ու նոր միտք ունեցավ.

«Աստվածն իմ խելքի տունն ավերե, Ալեին էլ ի՞նչ տեսություն... էլ ի՞նչ տեսություն... էրթամ զինք առնիմ ու գամ»։

Պառավը շփոթ ու շիվար կանգնել էր։

— Իմ խանգարիչ դու ես,— վերաձայնեց Զորոն։

«Մարդկանց խոսք ճշմարիտ է՝ հայի վերջին խելքն էղներ իմ գլուխ... էն օր, է՞ն գինու օր հարկ էր Ալեին առնեյ ու գայ»։

— Իմ խանգարիչ քու երեխեքն են։ Քու աղջիկներն ու քու տղեք»։

«Հենց էն օր հարկ էր Ալեին նստեցնեյ ավտոն ու բերեյ»։ Եվ մրտքով անցավ, որ տղան դեմ կկանգներ, թույլ չէր տա։

— Իմ խանգարիչ քու միջնակ տղեն է էղե, քու փոքր տղեն է, ու ես իր ձեռքի տակ կապրիմ... էս տուն բանտ է, իմ շունչ մեջ էս տան չի էլնի... Ես կբաժանվիմ։— Մեկեն ու հաստատ որոշեց Զորոն։

«Էսօր էն քողտիկ կարգի բերիմ, լուսուն էրթամ Ալեին առնիմ ու գամ»։

— Երկինք դիպնի երկրին կբաժանվիմ ու կբաժանվիմ,— պնդեց Զորոն։

«Խաթրով չեղավ՝ կփախցնիմ ու կբերիմ»։

— Բավ է, խաթրով էղնի կբաժանվիմ, զորով մնաց՝ կբաժանվիմ։

Եվ պառավի զարմացած, շփոթված հայացքի տակ Զորոն փնչալով քշեց դուրս։

Նոր տան թիկունքին քողտիկ կար. հին տունն էր, դուռը մեռաղալարով կապկպված։ Հին իրեր էին լցված քողտիկում։ Ներացած օրորոց, այրված վառարան, խոփ, գերանդի, եղան... Տանելի մի վառարան ընտրեց, երկու աթոռ, մնացածը կրեց-դասավորեց քողտիկի թիկունքին, մաքրեց պատ ու առիք, գուռը ամրապնդեց... կարգի գցեց հին տունը։

Իսկ երեկոյան, երբ տղաները հավաքվեցին-եկան, հայրը տեղադրել էր արդեն իր մահճակալը, անկողինը, աման-չաման էր բերել, մի պարկ ալյուր... Հայրը առանձին տուն էր ու դռանը նստած հանդիստ ծխում էր։ Տղաները իրար անցան,— ո՞վ է վիրավորել բաբոյին,— միմյանցից հաշիվ էին պահանջում, մորն էին հարցուփորձում, հենց իրենից՝ բաբոյից էին ուզում պատճառն իմանալ,— ո՞վ է վիրավորել,— իսկ Զորոն կարճ էր կապում.

— Աշխարհքն է վիրավորե Զորոյին... Մեջ աշխարհքին ինչքան մարդ կա՝ Զորոյին վիրավորանք է հասցրե։ Ու Զորոն աշխարհքի հետ խոով է ու...— «մենակ Ալեն... մեջ աշխարհքին՝ մենակ Ալեն»,— ու կբաժանվիմ։

Ինչ արին-չարին, տուն չգնաց և ոչ էլ՝ առանձին ծխատեր զույգ որդիներից մեկն ու մեկի հարկի տակ։

Բաժանումը հաստատ էր ու հաստատ։

4

Հաջորդ օրը կեսօրին Զորոն արդեն դաշտի գյուղում էր։ Մի քանի անգամ գնաց-եկավ Ալեի տան դիմաց՝ փողոցում էր ուզում հանդիպել, գնաց-դարձավ, կանգ տվեց ճյուղերը տան պատուհանին քսող թթենու տակ, թխկթխկացրեց պատուհանը և, թթենու բնի ետևը պահ մտած, սպասեց արձագանքի՝ Ալեն չի՞ երևա պատուհանի մոտ... Թե երևաց՝ ձեռքով նշան կանի-կկանչի։ Գնաց-եկավ՝ թխկթխկացրեց, պահ մտավ, բայց Ալեն չկար ու չկար։ Փողոցում երեխաներից բացի ոչ ոք չէր երևում. գարուն էր, ամեն մեկն իր բան ու գործին։

Եվ Զորոն ստիպված էր մտնել բակ։

Բակ մտնելն ու Ալեին տեսնելը մեկ եղավ՝ նույն ծիրանենու մոտ էր, որ գինի տանելու օրը տեսավ (տաքդեղի կարմիր շարուկն էր հավաքում)։ Հիմա ծիրանենու շուրջբոլորը բանջարեղեն էր ցանված, և Ալեն փխրեցում էր անում։

Շատ պստլիկ էր։ Նստած էր թմբին, ուս ու պարանոցով թեքվել էր կողքի և իմիջիայլոց,— Զորոյին այդպես թվաց,— իմիջիայլոց փխրեցնում էր ու դնդնում,— Զորոյին այդպես թվաց,— ոչ խոսք լսեց, ոչ դընդընոց լսեց, բայց նրան թվաց, թե Ալեն, իրոք, խաղ էր ասում, է՞, էրգրի հին խաղերից, գինին տանելու օրը ասած իր խաղերից մեկը Ալեն դնդնում էր։

Զորոյի ձայնի վրա պառավը տարիքին անսովոր կտրուկ նայեց։

— Իմ հո՞գին, Ալե։— Զորոն փայտը հենեց ծիրանենու բնին և պառավի ձեռքերն առավ ափերի մեջ։— Բարով տեսանք... Փոքրացե՞-դարձե բուռ մի... է՞ն Ալեի չափ։— Եվ գլխով արեց լեռների կողմ։— է՞ն պստլիկ Ալեի չափ։ Կհիշի՞ս... Օրն էսօրվա պես գարնան օր էր... Կհիշի՞ս... Քանց էսօր՝ իմ աչաց դեմն է։ Դու կհիշի՞ս... Քու գլխին ծաղկեպսակ կար, ու դու քանց ուլիկ՝ էս քարեն՝ էն քար, էս քարեն՝ էն քար։ Կհիշի՞ս... Օր է՞ն նշանավոր օրն իմ սիրտ ճղփաց...

Եվ ստացվեց այնպես, ինչպես առաջին հանդիպման ժամանակ. Զորոն՝ ձգված, մշուշոտ հայացքը հեռու լեռներին, իսկ դիմացը կանգնած պստլիկ պառավը՝ ծգվված, աչքը էրգրացու կիսախուփ աչքերին։

— Էրթանք տուն, ախպեր Զորո։

— Չէ, տուն չէ, տուն չէ, իմ հոգին,— աշխուժով վրա բերեց Զորոն,— ա՛յ,— այգու խորքում ջահել խնձորենի կար,— էն ծառի տակ։

Հետո պղնձե ամանով գինի խնդրեց և փայտն առավ, գնաց-նստեց խնձորենու տակ։ Գլխարկը հագցրեց ծնկին և նայեց լեռների կողմ։ «Իմ գործն արդար է, ու Մարաթուկն ինձ օգնական»։

— Իմ գործն արդար է, Ալե,— գինին առավ պառավի ձեռքից,— ու Մարաթուկն ինձ օգնական։— Խմեց գինին և գործնական շտկվեց տեղում։

— Դե հիմա հարց տուր, թե ինչի համար է էկե Զորոն։

— Ծանոթ բարեկամ մարդ ենք, ախպեր Զորո, էրգրացի գնալ-գալն աշխարհի օրենքն է։

— Հըմը էդքա՞ն, Ալե... Նոր,— Զորոն ձեռքը մեկնեց ծիրանենու կողմ,— նոր քեզ բան ասի... Օր էսօրվա պես անուշ օր էր, ու իմ սիրտ ճղփաց քու վրա, Ալե։

Զորոն սպասեց պատասխանի, իսկ պառավը հարցական նայում էր։

— Հաց բերե՞մ, ախպեր Զորո։

— Հաց չէ, գինի կպիտի։

«Յա Մարաթուկ,— մտքում օգնություն խնդրեց Զորոն,— քու սուրբ ձեռքով բորբոքած կրակ, քու սուրբ ձեռքով թող հով ու զով դառնա»։

— Էդ օր,— հենց պառավը հայտնվեց, Զորոն շարունակեց խոսքը,— էդ գարնան օր, որ Մարութա բարձրիկ վանք քու սերն ճիրեց մեջ իմ սրտին, Ալե, քու բոյ, ա՛յ, էսքան էր,— մի թիզ կտրեց գետնից։— Իմացա՞ր։ էն օր ես ուշքի եկա, որ Ալեն, բոբիկ ու շաղոտ ոտքերով Ալեն, ծաղկեպսակով Ալեն իմ Ալեն է։ Իմ Ալեն է ու իմ Ալեն է։ Իմացա՞ր... էն օր Մարաթուկ սեր տվեց, հըմը մեկել օր անօրեններն խլեցին... Բոբենին ընկավ մեջ մատղաշներին, ավեր ու կոտորում, առ ու փախ ու ալան-թալան էղավ ու արևի խավարում էղավ... արևի խավարում էղավ, Ալե, ու ես ու դու կորցրինք զիրար... Իմ խոսք ճշմարի՞տ է, իմ հոգին։

— Քու խոսքը կոտորումի մասին չէ՞, ախպեր Զորո։

— Կոտորումի մասին է ու... սիրո մասին է, Ալե։

Ծերունին գինի խմեց, նոր ծխախոտ վառեց և սպասեց արձագանքի։ Պառավը լուռ էր, ուս ու պարանոցով կողքի թեքված, և մաշված մատները խաղում էին կանաչների հետ։

— Նորեն դու իմ Ալեն ես,— շշնջաց ծերունին։— էն օրը չի կորե, Ալե, էն օրը կա, գարնան էն օր քանց իմ աչաց դեմն է... Ուլերն ու գառներ կխաղեն Մարութա փեշին, դու...

Նախորդ առավոտի հետ հայտնված, է՛, անցած-գնացած գարնան օրը, որ թավիշ ու գունեղ պարուրել էր ու պոկ չէր գալիս, Զորոն նորից պատմեց։

— Ըբը՜... Մարաթուկ կնքեց իմ սերն ու էն օրից չուրի էսօր էդ սուրբ մեղք մեջ իմ հոգուն է, Ալե... Ելի ու քու գոտին ժրե ու երթանք, իմ հոգին։

— Ո՞ւր,— զարմացած նայեց պառավը։

— Կհարցնե՝ ո՞ւր... Ըբը էսքան հեքիաթ ո՞ւմ համար էր, Ալե. ելի ու հետ իրար երթանք մեր գեղ։ Իմ քոչից բաժանվեցի ու բաժանվեցի, քանի մի տարվա կյանք է մնացե՝ հետ իրար ապրինք ու թող Մարաթուկի սրտով էղնի։

— Խելա՞ռ է,— ափն ի շուրթ, մեկուսի առավ պառավը և ակամա փորձեց գինին վերցնել Զորոյի դիմացից։

— Չէ՜, գինին չէ՜... Գինին էստեղ ի՞նչ մեղք ունի, գինին չէ, Ալե, էս է,— ափը դրեց սրտին,— էս է, իմ հոգին, էս է... էն խորոտ հեքիաթն ո՞ւմ համար էր, Ալե։ Էլ ինչի՞ էն լուս-առավոտ ծնվեց-եկավ աշխարհք, թե ես ու դու մեր գլուխ հետ իրար չդնինք մեկ բարձի...

Թե՝ չպիտի լինի... թե՝ չպիտի լիներ, էն կապույտ առավոտը ինչո՞ւ ծնվեց, թե Զորոն էդ առավոտ իր պստիկ, նախշուն Ալեին պետք է գըտներ ու իրիկուն չեկած կորցներ, էդ լույս-առավոտը ինչո՞ւ եղավ, Ալե... Եղավ, որ գար էս մեղավոր աշխարհի մեղքը ավելացներ ու երթա՞ր, եղավ, որ գար դաղեր Զորոյի հոգին ու երթա՞ր, որ Զորոյին ասեր, թե աշխարհում էսպես-էսպես անուշ բա՞ն կա, ասեր ու երթա՞ր, Ալե... Երա՞զ էր... Խորոտիկ հեքիաթ էր... Չէ, էն լույս-առավոտը եղել է ու կա։

— Ելի ու քո գոտին ժրե ու երթանք,— պահանջեց Զորոն։

— Ախպեր Զորո, երկինք վկա, դու քո խելքը թոցրել ես,— նեղսրտեց պառավը։

— Կփախցնիմ,— Զորոն բռունցքը խփեց գետին։

Պառավը ափի մեջ խնդմնդաց։

— Ինչպե՞ս կփախցնես, ախպեր Զորո։

— Պստլի՜կ, բուռ մի բան ես. կգցիմ մեջ պարկի ու... Դժվար չուրի գեղից դուրս գալն է։ Հետո աշխարհք թափի-գա, Ալեն իմ Ալեն է։ Կըփախցնիմ։— Պինդ կրկնեց Զորոն։

Բակից տղամարդու ձայն լսվեց. Ալեին էր կանչում։ Եվ ձայնը Զորոյի ականջին հնչեց որպես հեռախոսական,— ալո՜ո...

— Իմ մարդն է,— պառավը շտապեց ելնել։

— Քու էրիկ լավ մարդ է, հըմը՝ կփախցնիմ։ Գիշեր է մնացե՝ կըփախցնիմ,— և քաշեց փեշից ու շշնջաց։— Քու բերան գոց կպահիս ու ձեն-ձուն չես հանի։

Պառավը էլի խնդմնդաց և գոգնոցի ծայրով սրբեց բերանը։

— Ել, ախպեր Զորո, ել էրթանք տուն։

— Տունն ես ի՞նչ գործ ունիմ... Չիս կգցիմ գեղից դուրս, մուրն ընկավ՝ էլի կդառնամ հոս ու իմ աչք քու ճամփին։ Խոսք մեկ ու աստված մեկ։

Տանտերը նորից ձայն տվեց։

— Էստեղ եմ,— պատասխանեց Ալեն,— ախպեր Զորոն է եկել։

Զորոն քաշեց պառավի փեշը, տղամարդավարի կրճտացրեց ու բըռունցք ցույց տվեց։

— Կփախցնիմ, Ալե,— շշնջաց,— կամիս-չկամիս՝ կփախցնիմ։

— Հաա՜,— տանտերը հայտնվեց,— դո՞ւ ես։ Բարով ես եկել։ Գինի՞ ես ուզում,— ծիծաղեց տանտերը։

— Շատ կուզիմ, ախպեր։— Կոտրված խոստովանեց Զորոն։— Քու գինու պես գինի մեջ աշխարհքին չկա ու չի պատահի։ Մեծ բրթելու ու իմ գլուխը չարդելու իրավունք ունիս։

Մինչ այս, մինչ այն, գերդաստանը հավաքվեց,— զույգ տղա, զույգ հարս, թոռներ,— հավաքվեցին և նստեցին սեղան։

«Շեն տան սեղան է,— մտքում գնահատեց Զորոն։— Քանց հարսանիքի սեղան... Մարաթուկ վկա, իմ ու Ալեի հարսանիքն է»։

Գերդաստանն, իրոք, ուրախ էր, իսկ՝Ալեի որդիները՝ ոգևորված։ Գինին տանելու օրը տանը չէին։— Մի մարդ է եկել. իրենց մոր համերկրացի հետաքրքիր մի ծերունի, պղնձի չափով չգիտեմ քանի գինի է խմել, երգել է ու խմել, երգել է ու խմել, և դժվարությամբ են մառանից հանել գուրս։ Դրանից հետո՝ էլի է հայտնվել, բայց, ափսոս, որ դարձյալ չեն տեսել։— Եվ, տես, այդ հետաքրքիր ծերունին իրենց հյուրն է. ճերմակ, թավ բեղեր ունի, պինդ կնճիռներ, խոսում է բարձրաձայն, հաճույքով մինչև տակ խմում է և անմիջապես լցնում բաժակը։

— Դու մեր մորեղբայրն ես։— Կրտսերը ավելի խանդավառ էր։— Մոր կողմից մենք ոչ մի ազգական-բարեկամ չունենք, դու, իսկապես, մեր մորեղբայրն ես։

«Օտար կհաշվիս զիս, թե քեռի, քու գործն է,— Զորոն մտքում պատասխան տվեց,— հրմը էս գիշեր քու մոր կփախցնիմ... Կփախցնիմ, լաո»։

Կրտսեր որդին մորը շատ էր նման։

«Ալեն է ու կա»,— մտածեց Զորոն և հարց տվեց.

— Քու նշանածն ո՞րն է, գառ։— Եվ տղայի կինը, որ հենց իր ուսնկիցն էր, շատ դուր եկավ։

— Ձեր կենաց։— Վրա-վրա երկու բաժակ գինի խմեց ու ավելի ուշագիր նայեց տղային։ Տղայի բիբերը ուրախ առկայծում էին, և աչ-

քերի մեջ երգ կար։ Հա՝ երգ կար. Զորոն որքան նկատել է, այդպիսի աչքունքով երիտասարդները, բոլորը, ձայնեղ են լինում։

— Դու խաղ ասել գիտե՞ս։

— Գիտեմ,— ուրախ պատասխանեց տղան։

— Թե էդպես է, քու քեռու բաժակին մի խաղ ասա։

Տղայի երգի ընթացքում էլի խմեց ու զգաց, որ աչքերը մշուշվում են... Այդպես շո՞ւտ... փոքրիկ գավաթներով դեռ մի քանի գավաթ է խմել... Ուրեմն էլ խմել պետք չէ... Զորոն կերուխումի համար չի եկել... Տանտերը թող խմի... թող տանտերը խմի ու հարբի, որդիները թող խըմեն... իսկ Զորոն նպատակ ունի... Ո՞ւր է Ալեն։

Պառավը մանրիկ ու չափուկ դուրս ու ներս էր անում և շուրթերին գողտուկ ժպիտ կար։

— Ապրիս, լաո։— Զորոն բաժակը մոտեցրեց շուրթերին և երկմըտեց՝ խմի՞, չխմի՞, բայց խմեց։— Ավելի շնորհք ունենաս... Հիմա դու ականջ դիր, ես ասիմ իմ խաղ։

Եվ մինչև սկսելը Զորոն փակեց աչքերը և գլխահակ ուս ու իրանով տարուբերվեց, օրորվեց, օրորվեց, հետո ձայն տվեց իր երգին,— Հրիիի՜-աա՜խ,— և կանչի հետ ձեռքը բարձրացրեց գլուխն ի վեր ու սկսեց երգել.. Երգում էր խռպոտ, ծերունական բեկբեկուն ձայնով, աչքերը գոց, ինքնամոռաց ու քանդվելով։

Երգը բնության մասին էր. նախշուն քարերով ու գույնզգույն ծաղիկներով սարերի և սարն ի վեր ելվերող սայլուղու ու սայլի, և դեպի երկինք ճախրող բոց լծկանների, սարի կրծքին՝ դեմ արեգական փռված կորեկի կլոր արտի...— Զորոն ձեռքը բարձրացրեց գլխից վեր ու վար բերեց. մի շիշ տապալվեց, ուսնկից հարսը քաշվեց մի կողմ՝ ծերունու երգող ձեռքին ասպարեզ տալու,— երգը կանաչ վարոցներով հոտաղների մասին էր և բանջարի ելած նախշուն գոգնոցներով աղջիկների...

Երգը բնության ու սիրո մասին էր...

Զորոն ավարտեց երգը, բայց, դեռ երգի հետ՝ տարուբերվում-ճոճվում էր, աչքերը դեռ գոց էին և այդպես ու հակված կանչեց,— Ալեեեեե՜...

Ե՞րբ էր, երգի վերջին ելևէջը, թե՞ իր պառավի անունը տվեց, տանտերը չհասկացավ։

Ալեն բան ու գործ թողած կուչ էր եկել սեղանի եզրին. չկար պահ առաջվա կայտառությունը, շուրթերի անկյուններում ծվարած գողտուկ ժպիտը չքացել էր, տխուր ու շիվար մի պստլիկ պառավ համերկրացուն էր նայում։

— Ալեեեեե՜,— Զորոն նայեց պատուհանից դուրս. լեռների վրա արևն արդեն հանգչում էր։— Արևմարք չեղներ մեջ աշխարհքին,— երգա-

հանգ շշնջաց Զորոն,— կեսօր ու արևմարք ու իրիկուն ու գիշեր չեղներ, ամառ ու ձմեռ չեղներ... Կպիտեր՝ թաք գարուն... Թաք գարուն ու առավոտ... Ու մեծնալ չեղներ, Ալե, էրեխան մնար էրեխա, ես՝ էն նախշուն քարի վրա, դու՝ շաղոտ կանաչների մեջ ու քու գլխին ծաղկեպսակ ու քու գլխին ծաղկեպսակ, Ալե...

— Մա, քեզ հետ է։— Բոլորը սուս արած լսում էին ծերունու մենախոսությունը և տանտիրոջ կրտսեր որդին հուզվել էր։— Քեռի Զորոն քեզ հետ է, մա... Նստիր քեռի Զորոյի մոտ։

Իսկ մայրը դժվարանում էր ոտքի ելնել։

Տղան օգնեց՝ մորը բերեց քեռի Զորոյի կողքին նստեցնելու։

— Ցա՜, Մարաթուկ։— Զորոն ոտքի կանգնեց ու պառավին գիրկն առավ։

Հետո պառավը դեմքը սեղմել էր ծերունու կրծքին, իսկ Զորոն խոնարհել էր գլուխը, այտը հպել Ալեի մազերին և շեղ ու կիսախուփ նայում էր պատուհանից դուրս ու երգեցիկ կանչում.

— Ալեե՜ե... Ալե, իմ հոգին, Ալեեեե՜...

ՔԵՌԻ ԹՈՐՈՍԸ

1

Մի առավոտ, իսկ այդ երկու տարի առաջ էր, Քեռի Թորոսը արթնացավ և քշեց ուղիղ մարագ։ Կիսահագնվել, անլվա, ափալ-թափալ մըտավ մարագը և շվար կանգ առավ. մարագում ոչ մի գործ չուներ։ Ոչ մի անելիք։ Ասենք ինքն էլ պարապ էր. գարնան կես՝ ոչ խոտ, ոչ դարման. մի քանի շաբաթում դարմանե գաղջ մլուր էր գործվել պատ ու առիքին, և մարագը լցված էր խոնավության ու սարդոստայնի ծոծրակ խուտուտ տվող հոտով։ Եվ կիսամութ մարագի կենտրոնում կանգ տված Քեռի Թորոսը ծոծրակը քորեց. ի՞նչ գործով շտապեց մարագ... Ո՛չ մի գործ։

Հետո աչքն առավ դիմացի պատն ի կախ հին ու մին իրերի թնջուկը, իրար ագուցված մի քանի սամի ու գույնզգույն սամաթել, մի կծիկ սրեմ ու մի փոկ՝ բորբոսի կանաչ փառակալով։ Է՜, երբվանից էին, Քեռի Թորոսը երբվանից ոչ լուծ ու լծկան էր բանեցրել, ոչ սամի, ոչ սամաթել, ոչ սայլ ու փոկ։ Եվ այլևս ոչ ինքն է բանելու, ոչ այդ հնոտիները, որ միմյանց փաթաթված մարել էին։ Քեռի Թորոսի սիրտը ճմլվեց. այդ ճլվրս-

տան սամին ու ճոճռան փոկը աչքերը մարագի դռանը երկար սպասել էին, հուսահատվել և իրար գրկած հանգչել։ Եվ մի պահ մտքով անցավ, թե հենց դրանց համար է մարագ մտել։ Թնջուկը վար առավ. շուռումուռ տվեց, ապա փորձեց հանել կախիչը։ Իսկ կախիչը պինդ էր խրված։ Քեռի Թորոսը ուշադիր նայեց, շոշափեց՝ ափով մեկ սև փայտ էր, բայց շատ հետաքրքիր թվաց։ Նորից փորձեց դուրս քաշել... Հինկեկ կապուկը դրեց մի կողմ՝ երկու ձեռքով փորձեց... Չէ՝ արտակարգ պինդ էր խրված։ Եվ կախիչը ավելի հետաքրքրեց։ Ի վեր, ի վար մի քանի բռնցքահարված հասցրեց և, ծունկը պատին, թափով քաշեց... Յա՜... կախոցը... կախիչը իր սուրն էր... իր թուրն էր ու կար... Կարճկոթ թուրը, որի կա ու չկայի մասին մտհան էր արել։ Վաղուց էր մոռացել, որ սուր ունի, այն օրից, երբ կարճկոթ թուրը խրել էր մարագի պատը, այդ օրից... գոնե ինքը չէր հիշում, թե սուրը միտք բերած լիներ։

Փտե՞լ է, թե դեռ կենդանի է։

Արևի տակ շուռումուռ տվեց, ափով շփեց, շուռումուռ տվեց, շեղբը թեթև սեղմեց ծնկին... քիչ ավելի ամուր... ավելի ուժեղ... Չէ՝ կենդանի էր։ Ժանգը պատել էր, բայց ողջ էր։

Քեռի Թորոսը այդպես՝ կիսահագնվել, արևկող արեց և թուրը մեկնեց ծնկներին։ Հա՜ շուռումուռ էր տալիս ու հա ափով շփում, բայց սուրը անտարբեր էր. չէր ընդունում Քեռի Թորոսի ափը։ Խռովել էր։ Ոչ երբեմնի տիրոջ ձեռքի դողն էր ընդունում, ոչ արևի շողերը։ Հիշողություն ու փայլ կորցրած ժանգոտ երկաթի մի կտոր էր, իսկ Քեռի Թորոսը շուռումուռ էր տալիս ու շփում... Գիտեր, որ ինքը մեղավոր է։

Ժանգոտ սուրը ծնկներին երկար նստեց արևի տակ։

Հարսը մի քանի անգամ հացի կանչեց, իսկ նա ուտել չէր ուզում։ Հետո, երբ լսվեց ինքնաթիռի ձայնը, ուզեց անպայման նկատել։ Քեռի Թորոսը այդ օրը որոշեց անպատճառ տեսնել ինքնաթիռը։ Եվ տեսավ։ Եվ սուրը մեկնեց դեպի ինքնաթիռը,— է՜, էն է,— ուրախացավ, որ տեսել է ու ոտքի ելավ։

Գործնական մտավ տուն, թուրը դրեց բարձի տակ, ապա լվացվեց, սրբվեց, սրբվելուց Քեռի Թորոսը հիշեց, որ երկու շաբաթ է չի սափրվել, դարձավ սափրվեց, դարձավ նորից լվացվեց, հագնվեց կարգին, հետո պահած տեղից հանեց վառվռուն մետաքսաշորը...

Որդան կարմիր նախշած մետաքսի այդ կտորը մի ժամանակ հին մի գիրք էր ծրարել, ավելի շուտ՝ բզկտված մի մատենիկ... Տարիներ առաջ Երևան տարավ՝ հանձնեց ում որ պետք էր։ Այրված թերթերին հրաժեշտի համբույր տվեց՝ հանձնեց, իսկ մետաքսի կտորը պահեց։ Խնամքով պահել էր, բայց մի օր հարսը գտել-լվացել-արդուկել էր. ուզում

էր վզնոց դարձնել իր համար, և Քեռի Թորոսը ափերից դուրս եկավ։— «Հացի տեղակ՝ նշխարք»։— Ողջ գիշեր չէր հանգստանում Քեռի Թորոսը, իսկ գիշերը անկողնում լացել էր ուզում։— «Նշխարք՝ մեջ սապնաջրրին»։— Լվացվելուց շատ բան էր պակասել, այլևս չկար այն բույրը, որ ամեն անգամ խելքամաղ էր անում Քեռի Թորոսին։

Այնուամենայնիվ մետաքսաշորը նորից պահեց և, տես, որ պետք եկավ։ Պահած տեղից հանեց, փաթաթեց սուրը և ձեռնափայտով կանգնեց բակում։ Քեռի Թորոսն ուզում էր, որ նորեն ինքնաթիռի ձայն լսի, չնայած գիտեր, որ մեկ էլ իրիկնապահին է ինքնաթիռ գալու, բայց շատ էր ուզում նորից լսել ձայնը և նորից տեսնել ինքնաթիռը։

Հետո առույգ մի քանի քայլ արեց և տեղնուտեղը նկատեց, որ ձեռնափայտի կարիք չի զգում... Հա, ձեռնափայտն ավելորդ էր... Զարմանալի բան, արդեն քանի՞ տարի ձեռնափայտ էր օգտագործում, ձեռնափայտով էր իջնում գյուղ՝ գրասենյակ, հավաքատեղի, ձեռնափայտին հենված վերադառնում էր տուն, բայց տես, որ գավազանի պետք ամենևին չունի։

Քեռի Թորոսը՝ բարձրահասակ ու ջղուտ, այդ առավոտ, ահա, քայլում էր առանց ձեռնափայտի, ուսերը ետ էին գնացել, իրանը շտկվել էր, հայացքը հավաքվել գետնից,— մի գիշերվա մեջ որքա՞ն բան փոխվեց,— Քեռի Թորոսը՝ արծվաքիթ, խստությունը հոնքերի արանքում իրար զարկած կնճիռների մեջ, ահա, այս առավոտ վայրահակ ճամփով իջվարում էր շիտակ ու ձիգ և շիկակարմիր փաթեթը ձեռքերի հետ ետևը դրած,— առավոտվա հետ քանի՞ տարի վար ընկավ ուսերից,— Քեռի Թորոսը՝ հայացքը գյուղն ի վեր կտրող, քայլում էր հանդարտ և հարձագանք ականջն ընկած բարևների, ծանր շարժում էր գլուխը,— ամեն օր՝ բարև, առավոտյան՝ բարի լույս, կեսօրին՝ բարի օր, երեկոյան՝ բարի իրիկուն, ինչ դատարկ բաներով են զբաղված մարդիկ։ Փողոցը նեղ էր ու ծուռտիկ, մի ժամանակ ուղեկիցները երկկողմանի քարե պատաշարերն էին, ելնել-իջնելուց մի տեղ նստում էր. շունչ-քաշում. այն ե՞րբ էր Քեռի Թորոսը այդքան ծեր ու հոգնած, պատահում էր զրուցակից էր հանդիպում, և ճամփա ու տուն մոռացած զրուցում էին, որքա՞ն դատարկ բաներով է զբաղվել Քեռի Թորոսը։ Հիմա ի տեղ քարե ցանկապատերի մետաղալարերն էին, փշալարերը, բետոնե հիմքի մեջ խրված մետաղացանցը և ցանց ու փշալարերով բանտարկված այդ փողոցով Քեռի Թորոսը՝ բարձրագնա հայացքով ու հանդարտաքայլ, վար իջավ, հասավ գյուղի կենտրոնական փողոցը, այնտեղից թեքվեց ձախ և ուղիղ մինչև դարբնոց։

Եվ կլոր մեկ տարի, երբ գյուղի գլխին գվվում էր ինքնաթիռը, գյուղի երկնքով ամեն օր նույն ժամին ինքնաթիռ էր անցնում, երբ հայտնվում էր ինքնաթիռը, Քեռի Թորոսը գործնական ոտքի էր ելնում։

«Քու ծնողներ մինուկ թող պարծենան,— մտքում դիմում էր օդաչուին և որոնում ինքնաթիռը,— քու պապ մինուկ թող պարծենա, օղորմի իրեն,— շատ դեպքում ինքնաթիռը Քեռի Թորոսի աչքին չէր ընկնում, երկինք շպրտած կապույտ ու ձիգ պարանն էր,— գնա մինուկ դու պարծեցի,— դիմում էր օդաչուին,— քու համար ոչ սար, ոչ ձոր, ոչ պատ, ոչ ցանկապատ»։— Եվ պահ էր լինում, որ իր բոլոր թոռները՝ ուսուցիչ, բժիշկ, ինժեներ... բոլորը թվում էին փսլնքոտներ։

Ինքնաթիռի գվվոցը թե տանն էր ականջն ընկնում, ձմռանը կամ ամպ ու զամպ օրերին Քեռի Թորոսը ո՞ւր պետք է լիներ. ճիպոտը մի կողմ գցած մարդ, կոլտնտեսության գործերին արդեն չէր խառնվում, մի տարի էր գրասենյակ չէր գնում, սկյամբիլ խաղալուց (որ գյուղի ծերունիների մխիթարանքն էր) ձեռ էր քաշել, իսկ պատմություններ՝ էրգրից, կռիվներից, դաշտ ու կալից լսելու ու պատմելու ցանկություն չուներ, ուրդեն պատմում էր ինքն իր համար, թե տանն էր՝ փայտե թախտին մեկնված, մատների արանքում «ջղարան» ու թաղբեհն, ինքնաթիռի ձայնի հետ հանդարտ վրա էր գալիս, բարձի տակից վերցնում փաթեթը և ծուռտիկ փողոցով իջնում գյուղ։

— Եկա՞ր, Քեռի Թորոս։— Դարբնի համար Քեռի Թորոսը անսպասելի հաճախորդ չէր. Քեռի Թորոսը պետք է գար և պիտի գար օրվա այս ժամին, հենց հիմա, երբ գյուղի երկնքով ինքնաթիռ անցավ։

Քեռի Թորոսը լուռ անցնում-նստում էր իր տեղը, կլոր տարին ամեն օր՝ նույն տեղը,— հիմա էլ դարբնոցի անկյունում դրված կոճղը Քեռի Թորոսի անունով է,— անծպտուն նստում էր իր կոճղին և հանում ծխատուփը՝ արծաթե, կափարիչին ընծայագիր. «Քեռի Թորոսիկին»։ Վաթսունհինգ տարի առաջ, Թորոսը՝ տասնվեց-տասնյոթ տարեկան մի պատանի, թուրք ոստիկանապետին մերկ մատներով կրակ մատուցեց և այդ ծխատուփը ընծա ստացավ։ Իհարկե՝ ոչ ոստիկանապետից։

Այնտեղ, էրգրում էր. աշնան մի օր շեհիտ Մեհմետ էֆենդին իր կատաղի խմբով մութուլուսին գյուղ էր մտել՝ զինվորահասակ տղաներին հաշվառելու։ Կանգնել էր գյուղի կենտրոնում, Թորոսենց ընկուզենու տակ և սպասում էր, որ ասկյարացու տղերքը հավաքվեին... Տարիներ առաջ Թորոսը թուրք ոստիկանապետին էլի էր տեսել. նորից աշուն էր, Թորոսը

յոթ-ութ տարեկան երեխա, ընկուզենին թափ էր տվել և քրոջ հետ ընկույզ էր հավաքում-լցնում քթոցները, նույն շեհիտը հայտնվեց, մի քանի ընկույզ փորձեց՝ հավանեց և գլխով նշան արեց իր ոստիկաններին։ Եվ նրանք վրա պրծան։ Այդ ճպռոտ կատաղիները տեղնուտեղը քթոցներում հավաքած ընկույզները պարտակեցին ուսապարկերում ու գնացին, իսկ... երեխա մի տղա, որ Թորոսիկն էր, թավալվում էր ընկուզենու տակ, վիրավորանքից թավալվում էր ու լաց լինում... Հետո հայրը եկավ. շալակեց-տուն տարավ տղային... Հիմա նորից Մեհմետ էֆենդին իր կատաղիների հետ հայտնվել էր, ցցվել ընկուզենու տակ, ծխամորճն էր լցնում և սպասում, որ գյուղի ասկյարացու ջահելները ներկայանան։ Ոստիկանները հրացաններին հենված կանգնել էին թիկունքին, իսկ շեհիտը դանդաղ ու երկար լցնում էր ծխամորճը և գյուղատերին շտապեցնում։ «Համբերե, աղա, ժողովուրդը թող քնից ելնի, աղա»,— գյուղատերը մտախոհ էր. ինչպե՞ս վարվել, որ բոլոր ջահելները ցուցակի մեջ չմտնեն։ Եվ Թորոսը, արդեն տասնվեց-տասնյոթ տարեկան, փայտի բոցկլտուն կրակը մերկ մատների արանքում, կրակը ցուցամատով ու միջնամատով բռնած մոտեցավ շեհիտին. «Վառե քու ղայլոն, աղա,— ոստիկանապետը ետ-ետ գնաց,— մեկ ասկյարացու ես, քու ղայլոն վառե, աղա,— Թորոսը սուր նայում էր շեհիտի աչքերի մեջ,— վառե, աղա, էլ ի՞նչ ասկյարացու, թե կրակ չառնե մեջ իր մատներուն,— ոստիկանապետը ետ-ետ էր գնում,— քու ղայլոն վառե, աղա,— Թորոսը ատամները սեղմած նայում էր Մեհմետ բեյի աչքերի մեջ,— վառե»։— Շեհիտը ահաբեկված նայեց իր ոստիկաններին, և նրանք հասկացան, որ գյուղից հեռանալ է պետք...

Հաջորդ օրը գյուղապետը արծաթե ծխատուփ նվիրեց Թորոսին՝ «Քեռի Թորոսիկին» ընծայագրով։ Եվ այն օրից «Քեռին» Թորոսի անվան կեսն էր։

Դարբնոցի անկյունում իր կոճղին նստած, նախշուն փաթեթը ծունկներին, Քեռի Թորոսը սուսուփուս ծխում էր։ Եվ դարբինը չէր շտապում ճանապարհել նրան, խոսքը շուրթերին իր գործին էր։ Քեռի Թորոսը հեռանում էր կամ հակված էր ծնկներին, լսում՝ կես ու պռատ պատասխան էր տալիս կամ մտքերի հետ էր։ Դարբինը ավարտում էր ձեռքի գործը, նորն էր սկսում, միևնույն է, Քեռի Թորոսը չի շտապում, ուրիշ անելիք չունի, դարբնոցից ուղիղ տուն կգնա, տանն էլ անելիք չունի և հաջորդ օրը նույն ժամին նորից դարբնոց կգա։

— Տուր,— վերջապես հարկ էր համարում դարբինը։

Եվ Քեռի Թորոսիկը բացում էր փաթեթը. բացում էր հանդարտ, մի

տեսակ զգույշ, թվում էր, թե մետաքսաշորի միջինը ծիտ է, ապա հայտնված կարճկոթ թուրը պահում էր աչքերի դիմաց, «հալավ ու մաշավ»,— ամեն օր մտածում էր Քեռի Թորոսիկը և սուրը զույգ ձեռքով մեկնում էր դարբնին։

— Խնամքով սրե,— ամեն օր պատվիրում էր Քեռի Թորոսը։

Դարբինը, բաց ժպիտը դեմքին, վա՜յ Քեռի Թորոս, Քեռի Թորոսիկ, վերցնում էր սուրը, մոտենում պտուտակ հեսանաքարին, իսկ Քեռի Թորոսը լարված հետևում էր... Շեղբը պարուրած կայծերը սրից անդարձ հեռացող մասնիկներն էին, և կայծերը Քեռի Թորոսի աչքերից էին պոկվում, և աչքերը ցավում էին, ու մետաքսաշորը սեղմվում էր բռի մեջ։

— Բավ է,— և դարբնի ձեռքից վերցնում էր սուրը ու փորձում դաստակի մազերին։

— Հը՞, սրվե՞լ է, Քեռի Թորոսիկ,— դարբինը բաց ժպտում էր՝ վա՜յ, Քեռի Թորոս, վա՜յ Քեռի Թորոսիկ։

Քեռի Թորոսը լուռ փաթաթում էր սուրը և դուրս գալիս դարբնոցից։

Կլոր մեկ տարի Քեռի Թորոսիկը իր կարճկոթ թուրը հեսանել տվեց, ամեն օր, չհաշված ձմռան բացառիկ ցուրտ ու փոթորկոտ օրերը, երբ տնից դուրս գալը դժվար էր և դարբնոցն էր փակ, կլոր մեկ տարի՝ ամեն օր, չհաշված պատահական այն օրերը, երբ դարբինը բացակայում էր գյուղից, կլոր մեկ տարի՝ ամեն օր, չհաշված այն օրը, որ բժիշկ Թոռանը տղա էր ծնվել, և Քեռի Թորոսին Երևան տարան, որպեսզի իր անունը ընծայի ծոռին։

3

Նույն երազը մի շաբաթում երեք գիշեր այցի եկավ Քեռի Թորոսին։ Երեք անգամ՝ նույն սարսափելի երազը։

Երազում ինքն ու Մեհմետ էֆենդին նորից հանդիպեցին։ Տեր աստված, ոստիկանապետը այդ ի՞նչ կերպարանքով էր։ Դեմքը, իհարկե, նույնն էր՝ նույն կլոր ու արնմխած աչքերն էին, նույն նենգաղավ ժպիտը, իսկ մարմինը... մարմինը սև մի գունդ. ոչ կուրծք, ոչ իրան, ոչ ոտք, ոչ ձեռք, մարմինը խոշոր ու ճլատան մի գունդ էր, և այդ անճոռնի գունդը ուներ անհամար մագիլներ՝ երկար, օձանման, պիրկ, գալարուն։ Սյդպիսի կենդանի Քեռի Թորոսը կյանքում չէր տեսել... Բայց, ախր, նա էր, շեհիտը, որին ահա երրորդ անգամ է հանդիպում և երեք անգամ էլ նույն տեղում՝ իրենց ընկուզենու տակ։ Երազում Քեռի Թորոսը տեղը-տեղին հիշում էր՝ առաջին անգամ հանդիպեցին, երբ ինքը երեխա էր, իսկ ոստիկանապետը քառասունին մոտ, երկրորդ հանդիպմանը ինքը

արդեն կարգին ջահել էր, իսկ, ահա տարիներ են անցել, իր հաշվով վաթսունհինգ-վաթսունվեց, բայց շեհիտը... զարմանալի բան, շեհիտ Մեհմետի դեմքը չէր փոխվել։ Նա էր. երկրորդ հանդիպման ժամանակ, երբ մերկ մատներով կրակ մատուցեց, այդ օրը շատ մոտիկից ու սուր նայեց ոստիկանապետի աչքերի մեջ և արնապարտ այդ աչքերը մոռանալ չի կարող, շփոթել չի կարող... Նա էր ու կար կլոր աչքերի մեջ և փուչոտ դեմքին դարանած նույն դավադիր ժպիտն էր։ Իսկ մարմի՞նը... ճիրանավոր անհաշիվ սև մագիլներով ճլստան ու անճոռնի այդ գո՞ւնդը...

Եվ խտվտացող, կծկվող ու բացվող մագիլները տարածած ոստիկանապետը պտտվում էր ընկուզենու շուրջբոլորը, խարդախ ժպտում էր ու ոլորվում։ Մագիլները կառչում էին ընկուզենու բնից, ձգվում-փաթաթվում ճյուղերին, օձերի պես գալարվում սաղարթի մեջ... Ընկուզենին սրսփում էր և արմատների հետ երերում,— երազում Քեռի Թորոսը զգում էր, թե հողը ինչպես է դողում իր ոտքերի տակ,— իսկ ինքը քարացել էր և չէր կարողանում աչք կտրել Մեհմետի աչքերից։ Ամենասարսափելին հենց աչքերն էին, աչքերի ժպիտն էր. գիտեր, որ այդ սև մագիլների արմատները Մեհմետի աչքերի խորքում են,— երազում Քեռի Թորոսը նկատեց նաև, որ ճիրանները իրենց շարժումը՝ խտվտոցն ու գալարքը այդ ժպիտից են առնում։ Ա՛յ, եթե կարողանար թրատել այդ քստմնելի ժպիտը, Քեռի Թորոսը երազում փորձում էր բացել մետաքսաշորի փաթեթը, որի մեջ սուրն էր, փորձում էր մերկ սուրը ձեռքն առնել— եթե կարողանար թրատել այդ ժպիտը, եթե կարողանար՝ պիրկ ճիրանները պարանների պես կփռվեին ընկուզենու տակ, անշնչացած, կտորկտոր կկախվեին ծառի ճյուղերից... Հա՜ փորձում էր հանել սուրը, հա՜ փորձում էր, բայց մատները անշարժացել էին...- Անզոր կատաղությունից լացը գալիս էր, և ինքը, կախարդված հայացքը ճիրանները տարածած շեհիտին, փորձեց ատամներով բացել կապ ընկած-հանգուցված փաթեթը և ընթացքում նկատեց... տեսավ... տեսավ, որ Մեհմետը իր անճոռնի մարմնով ու մագիլներով կծկվեց... կծկվեց, փոքրացավ, բայց ավելի կատաղի էր ոլորվում ընկուզենու շուրջբոլորը, ավելի փոքրացավ, դարձավ ոզնու չափ, բայց միշտ սև, ճլստան և գալարուն մագիլներով,— դարձավ բռունցքի չափ,— բայց մոլեգին շարժումներով, ավելի պուճուրացավ, երազում Քեռի Թորոսի աչքերի դիմաց Մեհմետը տեղում մոլիգին պտտվող ածուխի մի կտոր էր, խճճված մագիլներով, մագիլները կարիճի խայթոցի չափ էին, կարիճի խայթոցի պես կեռ,— հետո դա էլ աչքադեմից չքացավ և հանկարծ զգաց... զգաց,— երազում Քեռի Թորոսը հանկարծ նրան զգաց իր կոկորդում... կարիճի կեռ խայթիչների

նման ճիրաններով այդ մոլեգին ածուխի կտորը, որը իբրև թե ոստիկանապետ շեհիտ Մեհմետ բեյն էր, զգաց իր կոկորդում։

Երազից հազով արթնացավ։

Քեռի Թորոսը մութ սենյակում աչք բացեց և անմիջապես ձեռքը տարավ կոկորդը։ Ինչ-որ բան էր դեմ առել կոկորդին, շատ որոշակի զգում էր։ Երազը՝ երազ, բայց կոկորդում մի բան կար. ահա քոր է տալիս, ճանկռտում է, ծանրացրել է շունչը։ Եվ ինչո՞ւ է հազում։ Եվ հազն էլ բռնել, և Քեռի Թորոսը ինքն էր փորձում ավելի խորքից հազալ-մաքրել կոկորդը, ազատվել կոկորդի այդ տհաճ խտվտոցից։

Քեռի Թորոսը պետք ուներ նաև շփելու փշաքաղված դեմքը, թևերը, կուրծքը։ Բայց հազը խեղդում էր։

Սենյակում գոնե մեկը լիներ։ Կնոջ մահից հետո, արդեն հինգ-վեց տարի, սենյակում մենակ էր քնում և առաջին անգամ մեկնումեկի անհրաժեշտությունը զգաց։ Մեկը լիներ՝ վառեր լույսը. խոր գիշեր էր, և քստմնելի երազը մթան հետ շաղված չէր ուզում սենյակից դուրս գալ. լույսը վառել էր պետք, իսկ ոտքն ու ձեռքը դեռ կաշկանդված էին, ինչպես երազում։ Մեկը լիներ՝ վառեր լույսը։ Նրան թվում էր, եթե լույս լինի, և՛ կոկորդի ճանկռտոցը կանցնի, և՛ հազը։

Քեռի Թորոսը մի կերպ անկողնուց պոկվեց, ափլփելով վառեց լույսը և, դեռ փշմտած, նայեց շուրջբոլորը... Կամաց-կամաց երազը սենյակից պոչը քաշում էր, բայց Քեռի Թորոսը զգաց, որ նա, նողկալի պատկերով այդ երազը, ընդհանրապես հեռացողը չէ, մթան մեջ ինչ-որ տեղ ծպավեց, ծառերի մութ սաղարթներում, դուռ ու պատուհանի տակ դարանել է և օձասառը հայացքով հետևում է իրեն... Հենց լույսը մարեց՝ ներս է խուժելու։

Սենյակի կենտրոնում կանգնած շփում էր կոկորդը և, հազից արցունքակալված, նայում էր հատակին, առաստաղին, փակ դռանը, բաց լուսամուտին, թախտի տակ, հետո հայացքը կանգ առավ բարձին, և Քեռի Թորոսը մեկեն բռնկվեց։

«Կչարդիմ»։— Եվ հերսոտ քայլերի հետ երազի շոշափուկները, որ երակների մեջ էին, երակների մեջ վխտացող սև մագիլները փրթիկ-փրթիկ եղան, և երազը արդեն սարսափելի չէր։ Քեռի Թորոսը բարձի տակից հանեց փաթեթը, սուրը ձեռքն առավ և արհամարհանքով նայեց բոցկլտացող շեղբին։ Սուտ էր. պողպատի այդ հրեղեն լեզուն սուտ էր խոսում, խաբում էր Քեռի Թորոսիկին։

«Մեջ երազին նմանապես պետք չեկար»,— տնքաց Քեռի Թորոսը

և մի պահ ցանկացավ դուրս գալ — թրատել գիշերվա մութը, որի մեջ երազի սատանորդի ծպիտն էր դարանած։

Այնուամենայնիվ հագնվեց, վերցրեց փաթաթված թուրը և եկավ դուրս։

Մինչև լույս Քեռի Թորոսը քայլեց բակում, տան շուրջբոլորը, ծառերի տակ, նստեց, վեր կացավ ու սպասեց լույս-առավոտին։ Իսկ արևածագի հետ իջավ գյուղ,— այդ ժամին դարբնոցը երբեք բաց չէր լինում,— նստեց փակ դարբնոցի դռանն ու սպասեց։

— Խե՞ր է... էդքան շուտ ինչո՞ւ ես եկել, Քեռի Թորոսիկ,— հետաքրքրվեց դարբինը։

— Էդպես պատահեց,— մռայլ պատասխանեց Քեռի Թորոսը և մեկնեց սուրը։— Կարգին սրե,— ասաց,— կարգին սրե,— խիստ կրկնեց Քեռի Թորոսը։

Հաջորդ գիշեր երազը նույն պատկերով նորից այցելեց Քեռի Թորոսին։

Շաբաթվա վերջին՝ երրորդ անգամ...

Այլևս ամեն արևամուտ Քեռի Թորոսիկի համար արևի խավարում էր՝ ահ ու փորձանք բերող։ Մթից ու անկողնուց սարսափում էր. լույսը չէր մարում, անկողին չէր մտնում։ Կլոր մեկ ամիս Քեռի Թորոսը շորերը չհանեց հագից, ողջ գիշեր ոտքի վրա ներս ու դուրս էր անում, նստում, վեր էր կենում, հազում էր ու շրջում բակում, տնամերձում, սենյակում, հետո, հալից ընկած, մեկնվում էր չքացված անկողնուն, աչք էր կպցնում ու հազով աչք բացում։

Գնալով հազը սաստկանում էր։

Եվ բժիշկ թոռը Երևանից եկավ։ Իսկ Քեռի Թորոսը բժշկի գնալու միտք ու ցանկություն չուներ, հատկապես Երևան, պրոֆեսորի մոտ գնալը ավելորդ էր համարում։

— Իմ ցավն ինձ հայտնի է, ջանըմ,— խորհրդավոր տմբտմբացնում էր գլուխը,— իմ թշնամին իմ աչքով տեսա. մկան չափ, սև-ճլքստան բան էր՝ կարմիճի խիթոցներով. ես ասիմ հըրիր, դու ասա հրզար խիթոց... իմ աչքով տեսա. ծփաց ու մտավ մեջ իմ կոկորդին ու էսպե՞ս,— Քեռի Թորոսը մատները խլվլացնում էր,— էսպես կխավտա։ Նստե իմ շնչին, կխավտա ու իմ ջեր կքաշե։

Քեռի Թորոսը այդպես էլ Երևան չգնաց։ Բժիշկ թոռան հետ պրոֆեսորը եկավ գյուղ։

Եվ պրոֆեսորն ու հիվանդը բակում հանդիպեցին։ Արևամուտ էր,

Քեռի Թորոսիկը դռանը նստած արևմաթքն էր նայում։ Չնայած շունչը ընդհատ էր, վրա-վրա պոռթկում էր հազը, և հազալիս ջլերը փրթիկ-փրթիկ էին լինում, սակայն Քեռի Թորոսը չէր տնքում, չէր տրտնջում, և հազի միջոցին նույնիսկ արևը արցունքակալված աչքերում էր։ Լեռան շեղբին արևը գլուխկոնծի էր տվել, ճառագայթները թռել էին դեպի երկինք և ամպե մի բարդոց բացավառվել էր։ Քեռի Թորոսիկը, է՞, արևմարք որքա՞ն էր տեսել, բայց առաջին անգամ էր նկատում, որ Արեգակի վերջին շողերը երկնքի բաժինն են, գնում են այնտեղ, որտեղից եկել են։ Կլանված նայում էր և դժգոհեց, որ պրոֆեսորն ու թոռը հայտնվեցին ու տեղավորվեցին իր կողքին՝ մեկը աջ, մեկը ձախ։

Պրոֆեսորը, Քեռի Թորոսը միայն մի հայացքը դիպցրեց՝ երիտասարդ էր, հազիվ ճերմակած քունքերով, պրոֆեսորը որոշեց նախ կատակ անել. ասաց, թե իրենց հիվանդանոցում սիրուն, առույգ մի պառավ կա, որ Քեռի Թորոսիկի մասին լսել է՝ Քեռի Թորոսի բժիշկ թոռն է պատմել, լսել է՝ շատ է ցանկանում տեսնել և ինքը հիմա եկել է Քեռի Թորոսիկին պառավի մոտ տանելու։

Քեռի Թորոսը չարձագանքեց. կատակը շատ անհամ թվաց, նամանավանդ շատ անպատեհ։ Նա հասկացավ, որ պրոֆեսորը դեռ Երևանից է այդպես որոշել՝ հիվանդ ծերունու հետ զրույցը սկսել կատակով... Եվ այս մաշված կատակով։ Այնինչ նա, պրոֆեսոր մարդը, եթե, իրոք, պրոֆեսոր է, ուրիշ խոսք պետք է ասեր... ուրիշ բան... երբ տեսավ, որ ինքը, Քեռի Թորոսը, որ մթից ու անկողնուց փախչում է, ինչպես գիշերվա ստատանայից— պրոֆեսոր մարդը այսքանը պետք է հասկանա— և դռանը նստած արևին է նայում, մայր մտնող արևի հետ է, պետք է խոսք բացեր հենց արևի մասին, միայն՝ արևի մասին։ Իսկ եթե պրոֆեսորը այդքանը չհասկացավ, ուրեմն Քեռի Թորոսը թույլ չի տա, որ իր հիվանդության մասին իզուր հարցափորձ անի։

— Իմ ցավն ինձ հայտնի է։— Ասաց և ոտքի կանգնեց։

Թոռն ու պրոֆեսորը, իրոք, խանգարում էին. Քեռի Թորոսն ուզում էր երկինք թռած շողերի հետ մենակ լինել։ Բայց հարկ համարեց պատվիրել.

— Էդ մարդի համար,— կողքանց նայեց թոռանը,— մի գառի վիզ կտրեք։— Ասաց և խոսքի հետ ուղեղից տաք մի հոսք խուժեց-ճնշեց քունքերը, ճակատը, գանգը, և աչքերը մթագնեցին։ Այդպես լինում էր, երբ հանկարծակի մի բան էր հղանում, շատ կարևոր մի միտք։ Նույնն էր... Քեռի Թորոսը ոտքը կախ գցեց, սրվեց, բայց հոսքը զարկեց ու անցավ։ Նա քաշեց դեպի տան թիկունքը. ուզում էր բարձրանալ մարագի տանիքը և այնտեղից նայել արևմուտք, մտմտալով ու քղքալով գնաց և մըտ-

քում նորից կրկնեց,— մի զառի վիզ կտրեք,— փորձեց բռնել տեղ չհասած միտքը, բայց այս անգամ ուղեղը ոչ մի արձագանք չտվեց։

4

Այդ օր— աշնանամուտի օր էր— Քեռի Թորոսը արշալույսին իրեն անկողնուց դուրս գցեց։

Վերջին երկու շաբաթում գամված էր անկողնուն, արդեն չէր խոսում. խոսել չէր կարող— ձայնը կորվել էր արդեն, շունչը հեղհեղ էր, ուժահատ, աչքերը փոս էին ընկել, և մահճին դամված խեղդվում էր հազից և մշուշոտ ու բորբոքուն հայացքով բաց պատուհանից նայում աշխարհին։ Իսկ թե դուրս էր ելնում՝ որդու, հարսի կամ մեկնումեկի օգնությամբ։

Իսկ այդ լուսադեմին Քեռի Թորոսը ծնկներում ուժ զգաց և՝ ձեռնափայտը բավ էր։ Ձեռնափայտին հենված ելավ դուրս։

Ոտքը շեմից դուրս դնելուն պես ջրվեժը խշշաց ականջների մեջ։ Մի պահ նրան թվաց, թե իրոք՝ ջրվեժի ձայն է... Ջրվեժի ձայն է, և ինքը կարող է խոսել, արտաբերել— քարվազի ձեն,— Քեռի Թորոսիկի շուրթերը շարժվեցին, բայց ձայնը ականջը չընկավ, ականջներում ջրվեժի խշշոցն էր... Իսկ որտեղի՞ց, ո՞ր սարի թիկունքից, ո՞ր ձորից է գալիս-հասնում գյուղ, որ ինքը առաջին անգամ է լսում... Հետո գլխի ընկավ, որ դա արշալույսի ձայնն է։ Արշալույսի ձայնն էր... Քեռի Թորոսիկը, է՞, քանի անգամ է դիմավորել արշալույս, իսկ ե՞րբ է պատահել, որ աղոթարանին ատքի վրա չի եղել, բայց նոր-նոր է լսում ձայնը։

Հետո նայեց երկինք։ Գլուխը բարձրացնելիս ուս ու պարանոցի ջլերը կարծես աքցանով քաշեցին, սկսեց հազալ, բայց շատ էր ուզում տեսնել աստղերը, գոնե մեկ հատիկ, հազից արցունքակալվել էին աչքերը, սրբում էր ու որոնում, գոնե՝ մեկ հատիկ, իսկ աստղերը չքացել էին արդեն։ Միայն Լուսաստղն էր թրթռում Հայոց լեռնապարին, իսկ Քեռի Թորոսիկը ուզում էր սովորական աստղեր տեսնել. Լուսաստղը նրան թվաց աստղերից տարբեր՝ կիսատ, կիսալուսին՝ նման մի բան։ Մի՞շտ է այդպես եղել... Միշտ՝ լեռնապարին ու հենց այդպե՞ս... Ջրվեժի ձայնը... Երկնքում ու երկրի վրա դեռ որքա՞ն բան կա, որ Քեռի Թորոսիկը չի նկատել, չի զգացել... Աղոթարանի ձայնը... Մի՞շտ է այդպես եղել...

Հրաշք է աշխարհը։

Հրաշք էր երկինքը, որ պայծառ օր էր խոստանում, հրաշք էր երկիրը, բացկուրծք սարերը, որ լուսաբացի կապույտ հորձանքն էին արձակել— Քեռի Թորոսը կոկորդը դեմ էր արել հովին և ղրթացնելով կուլ

էր տալիս— հրաշք էր մութ անձավներում խցկած ձորը, ձորով գետի պես արշալույսն էր հոսում, հրաշք էին իմաստուն քարերը, արշալույսի սարսուռով բռնված ծառերը, խոտերը, ընկուզենին՝ այդ գյուղում հիմնը-վելու առաջին գարնանը Քեռի Թորոսիկը իր ձեռքով տնկեց՝ տնամերձ հողամասի եզրին, ձորի կողմը, և ընկուզենին արդեն հիսունվեց տարեկան էր— հրաշք էր աշխարհի գետերի ու ջրվեժների տնազն անող թլորիկ առվակը... Այսպիսի հրաշք-արշալույս Քեռի Թորոսիկը առաջին անգամ էր տեսնում։

Չնայած ողջ գիշեր արևի մասին էր մտածել. այնքան երկար էր գիշերը, արևը այնքան հեռու։ Քեռի Թորոսիկը էրգրի չափ կարոտել էր արևին, և իրեն անկողնուց դուրս գցեց արևացայտը տեսնելու, բայց հիմա ուզեց, որ աղոթարանը երկարի։

Հրաշք էր արշալույսը՝ ջրվեժի նման հզոր, զմփզմփան, նորածնի պես անմեղ ու անարատ— կարծես աշխարհի առաջին լուսաբացն է— զուլալ ու անարատ, անմեղ ու անարատ... Այդ ինչպե՞ս է լինում։ Քեռի Թորոսը ծանր շնչում էր, կուրծքն ու թոքերը ճռճռում էին, ջլերը քանդվում, բայց նա, ձեռնափայտին հենված, առեղծված աշխարհի հետ էր. ինչպե՞ս է պատահում. ահա, արևը դուրս կգա, արևածագից առաջ ու հետո աշխարհը կլցվի մարդկանցով, հեղձուցիչ օրը կթավալվի երկրի վրա, արևի շողերը կթաթախվեն թույն ու փոշու մեջ, փոշի կմաղվի աշխարհի գլխին, մարդիկ օդի հետ աղու կշնչեն, ուրախության հետ՝ տխրություն, սիրո հետ՝ դավ, կսպանեն ու կսպանվեն, մարդիկ կծնվեն ու կմեռնեն, կգտնեն ու կկորցնեն, կծիծաղեն ու լաց կլինեն, տեսակ-տեսակ հիվանդություն բուն կդնի մարդկանց մարմնում... այս նողկալին, այս նողկալին.. գոնե ինքը, Քեռի Թորոսը գիտի, աչք-աչքով տեսել է, թե ինչ նողկալի տեսք ունի կարիճի կեռ խայթիչներով այս մոլեգին ածուխի կտորը... այդ նողկալին մագիլները կխրի մարդկանց կոկորդը — Քեռի Թորոսը մատներով աքցանեց կոկորդը— կպիտի խեղդիմ զինք— սեղմեց, բայց մատները անզոր էին— այդ նողկալու սև մագիլները նենգորեն կսուզվեն արևի շողերի մեջ և կկառչեն աշխարհի կոկորդին և շնչակտուր երկիրը... և օրը... և երկիրը... և արևը շնչակտուր կընկնեն լեռների վրա, մթնշաղը կթախծի օրվա կորուստը, հետո մթնշաղի աղնիվ, մանիշակագույն տխրությունը կպատանքվի սևով, հետո մարդիկ օձիքները պոկած անկողին կմտնեն՝ մի գիշերով մեռնելու-մոռանալու աշխարհը, բայց սարսափելի երազները վրա կքշեն։ Հետո... հետո այսպիսի արշալո՞ւյս... անմեղ, անվրդով, անարատ... Որտեղի՞ց է ծնվում այսպես անարատ, ո՞ւմ ժառանգն է։ Ուրեմն... ուրեմն— Քեռի Թորոսիկը թող հոգուն մեղք գործի— ուրեմն արշալույսը խաբում է...

Արշալույսը նոր ծնված այն երեխան է, հենց նոր աշխարհ եկած այն երեխան է, որ բոլոր նորածինների նման անուշ ձայն ունի, բայց մեծանում-դառնում է հոգեառ... Թե չէ, ահա, Քեռի Թորոսիկը խեղդվում է, իսկ արշալույսը այսպես անմեղ ու անվրդով, անվրդով...

Քեռի Թորոսը, թիկունքը ծառին տված, խեղդվում էր հազից, չհենվեր ծառին, ոտքի վրա չէր մնա, հազը կտապալեր։ Հետո մի կերպ շունչ առավ, ճիգով բարձրացրեց գլուխը և արցունքակալված աչքերով նայեց աշխարհին... Գեղեցիկ էր արշալույսը, արցունքների միջից՝ գունեղ ու ավելի խորհրդավոր... Շատ գեղեցիկ էր անտերը։ Եվ շատ անմեղ։ Քանց երեխան անմեղ, քանց երեխան անարատ... Իսկ արևացայտը... արեվածագը... արևը, ահա նորածին Արեգակը... Տես մորե-մերկ, լողացած այս հրաշք մանկիկը... Ինչո՞վ է մեղավոր։

«Երկինքն ու գետին ի՞նչ մեղք ունին,— ցավերն ու հիվանդությունները... հիվանդություններն ու ցավերը ոչ երկնքի գործն է, ոչ երկրի, ոչ երկնքից են գալիս, ոչ երկրից։ Հիվանդ մարդիկ սարերն են գնում, որ հովերն իրենց ցավը քաշեն, հիվանդ մարդիկ ծովերն են գնում, որ ջրերն իրենց ցավը քաշեն, արևի մոտ են գնում, որ շողերն իրենց ցավը քաշեն... Հիվանդ մարդկանց վերջին, ամենավերջին հույսը էլի բնությունն է... Երկինքն ու երկիրը ի՞նչ մեղավոր են. հիվանդությունն ու ցավերը մարդակերպ հոգեառների բանն է, սադայելների գործն է։ Բնությունն ի՞նչ մեղք ունի։ Քեռի Թորոսիկը շուրթ շարժեց, իմ ցավն ինձ հայտնի է։ իմ աչքով տեսա, թե դրրբն ուստից հասավ։ Քեռի Թորոսը, աչքը արևին, խոսում էր, չէր մտածում, ինքը գիտեր, որ խոսում է, շուրթ է շարժում, բայց ձայնը չէր ընկնում ականջը։

Որդին նստել էր պատի տակ և ալեխառն գլուխն առել ափերի մեջ։ Նա գիտեր, որ հայրը խոսում է... Եվ դա չէր ուզում տեսնել՝ անձայն խլվլացող հոր շուրթերը, բայց գիտեր, որ հայրը խոսում է, բան է ասում. բողոքում է, ով գիտե, գուցե իմացած մի քանի բառ աղոթքն է արտասանում, գուցե խաղ է ասում,— ձայնը կտրվելու նախօրեին Քեռի Թորոսը գիշեր մինչ ի լույս երգում էր՝ ընդհատումներով, հազալով ու շունչը տեղը բերելով մինչև լույս խաղ էր ասում, Քեռի Թորոսիկը երգել չգիտեր, բայց երգում էր, ավելի շուտ՝ երգ չէր, այլ երգի արձագանք։

— Էս արդար Արեգակն ի՞նչ մեղք ունի,— խոսում էր Քեռի Թորոսը,— հոս՝ լույս ու տաքություն, հոն՝ լույս ու տաքություն, էս սարի վրա կծաղկի, էն սարի վրա կծաղկի, էն...— Քեռի Թորոսիկը հիշեց էրգրի իրենց արևածագը՝ Ծովասարի թիկունքից էր,— վը՞ Ծովասարին կծաղկի,— Քեռի Թորոսիկին թվաց, որ այդ պահին իրենից մի մասնիկ, մի հյուլե տեղնուտեղը Ծովասար հասավ. չէ՞ որ ինքը Արեգակին է նայում,

արևը իր աչքերի մեջ է, իր հայացքը արևի շողերին է խառնված, իսկ Արեգակը մեկն է, միակն է, նույն Արեգակը հիմա, հենց այս պահին Սովասարին է նստած, նույն շողերը, որ իր հայացքը տարան, միևնույն շողերը այնտեղ են սփռված, էրգրում, իրենց սար ու ձորի գլխին, իրենց գյուղի վրա, ընկուզենու, էն ընկուզենու... Մարմնով դող անցավ. երազից հետո սարսափով էր հիշում իրենց ընկուզենին։ Եվ Քեռի Թորոսը, որ թիկնած էր ընկուզենուն, ափերով շոշափեց ծառի բունը— շատ զով էր— հետո ճիգով գլուխ բարձրացրեց— ծայրի ճյուղերը բոցավառվել էին արդեն։— Հիմա այնտեղ, էրգրի իրենց ընկուզենու կատարին նույնպես արև է դիպել... Սրսփոցը դեռ չէր անցել, և փշմտած դեմքը շփելու փոխարեն Քեռի Թորոսիկը ընկուզենու բունն էր շփում։

— Երկինքն ու գետին ու Արեգակն ի՞նչ մեղք ունին,— ասաց Քեռի Թորոսը,— իմ թշնամին հայտնի է. աչք-աչքով տեսա, դարձավ գունդ մի ու ծփաց մեջ իմ կոկորդին։ Էս է։— Քեռի Թորոսը աքցանեց կոկորդը,— կպիտի խեղդիմ գինք։— Եվ մատների անզորությունն էլի զայրացրեց նրան։ Հետո...

Հետո ուղեղից ասաք մի հոսք պոկվեց-զարկեց քունքերին— նույնն էր, ինչ երեկու ամիս առաջ, երբ Թոռան հետ պրոֆեսորն էր եկել, և ինքը պատվիրեց՝ «էդ մարդի համար մի գառի վիզ կտրեք»— ասաք հոսքը ճնշեց ճակատն ու քունքերը և այս անգամ տեղ հասավ... տեղ հասավ, և հայտնված մտքից Քեռի Թորոսիկի աչքերը բոցկլտացին... Տեր աստված, այս հասարակ բանը մինչև այսօր, մինչև այս առավոտ ինչպե՞ս չի անցել մտքով, ինչպե՞ս չի մտածել... փառք քեզ, Արեգակ, որ պայծառեցրիր Քեռի Թորոսիկի ուղեղը, խառնիխուռն մտքերի միջից գտար-մեկնեցիր այն միակը, միակ ճշմարիտը, որ, հա՜, գալիս էր՝ զարկվում քունք ու ճակատին, գալիս էր ու տեղ չէր հասնում։ Հազար փառք քեզ, Արեգակ, Քեռի Թորոսը այժմ և հավիտենից հավիտյան պարտք է, այն մյուս աշխարհից նույնպես քեզ կփառաբանի։ Չլինեիր դու... եթե, բան է, այսօր չլինեիր դու, հենց հիմա չծաղկեիր դու, Արեգակ, էգուց արդեն ուշ կլիներ. գիշերը, հավանաբար հենց գիշերը, Քեռի Թորոսի թշնամին, որ մագիլները խրել է կոկորդի մեջ, կխեղդեր Քեռի Թորոսիկին և կհաղթեր։ Եվ կհաղթեր... Հիմա արդեն ուշ է՝ չի կարող, Քեռի Թորոսի թշնամուն արդեն փրկություն չկա... Փառք քեզ, Արեգակ, հիմա արդեն Քեռի Թորոսիկը գիտի իր անելիքը... գիտի իր անելիքը և...

Շտապել է պետք, ի՞նչ իմանաս, թշնամին մի տեղթարթում, մի քայլի վրա, Քեռի Թորոսի գողդոջ մի քայլի վրա, մի շնչի հետ. Քեռի Թորոսիկի վերջին կում շնչի հետ կարող է փրկվել... փրկվել. խեղդել Քեռի Թորոսին և ինքը մնալ կենդանի...

— Չէ՛, էլ քեզ փրկում չկա,— Քեռի Թորոսը ցուցամատը ոխով տարավ-բերեց կոկորդին և դժվարությամբ հայացքը պոկեց Արեգակից։

— Անդո,— կանչեց Քեռի Թորոսը։ Նա ուզում էր անմիջապես իր սենյակը մտնել, իսկ որդին, գլուխը ափերի մեջ, նստած էր պատի տակ, հենց այն պատուհանի տակ, որ բաց նայում էր այգուն ու Քեռի Թորոսին։— Անդո,— նրան թվաց, թե կարող է նաև ձայնել,— Անդո,— և ձեռնափայտը թափով ու անհամբեր խփեց ծառի բնին՝ մեկ, երկու, երեք...

Որդին վախեցած բարձրացրեց գլուխը, իսկ Քեռի Թորոսը շարունակում էր հարվածել ծառի բնին։

— Անդո,— Քեռի Թորոսը նայեց դիմացը խեղճ կանգնած որդուն և նայեց շատ պինդ, վճռական։

Որդին զարմացավ. հոր աչքերը արտակարգ խլրտուն ու աշխույժ էին, այդքան կենդանի հայացք հայրը նույնիսկ այս անիծյալ հիվանդությունից առաջ, ավելի վաղուց չուներ։ Որդուն թվաց, թե հոր աչքերում նաև ժպիտ կա՝ մի տեսակ ինքնավստահ ու արհամարհական։

— Անդո,— Քեռի Թորոսի շուրթերը խլվլացին,— տղա, դու ինչի՞ համար ես սևասպի ու նստե,— զգաց, որ որդին հասկանում է,— թող ու գնա քու գործին,— ձեռքը մեկնեց դեպի սարերը։— Գնա, տղա, իմ թշնամու հախից ես կգամ,— և աչքերը բոցկլտացին։— Էս թշնամին մինակ իմ կոկորդին չէ,— Քեռի Թորոսի աչքերը ճչում էին։— Մինակ իմ թշնամին չէ. իմ թշնամին ճանկեր բովանդակ աշխարհքի կոկորդն է խրե, տղա, բովանդակ աշխարհքի։— Շուրթերը վրդով շարժվում էին, իսկ ձայնը աչքերից էր դուրս գալիս, խլրտում ու այրվում էին աչքերը։— Ու ես կպանիմ զինք։

Քեռի Թորոսիկը այնքան էր ափսոսում, որ ձայն չունի, որ միտքը որդուն չի հասնում... Ափսոս, հազար ափսոս, գոնե տառամանաչ լիներ. գրել իմանար ու գրեր, որ որդին իմանար... Թող բոլորը իմանային, որ այն, ինչ քիչ հետո պետք է լինի, ինքնասպանություն չէ, բոլորովին էլ ինքնասպանություն չէ, հե՛նց ինքնասպանություն չէ... Քիչ հետո Քեռի Թորոսիկը սուրը իր կոկորդին չի գեմ անելու... Քեռի Թորոսիկը քիչ հետո իր թշնամուն է սպանելու, կթրատի իր թշնամու լպրծուն ժպիտը, որ երազում չկարողացավ։

— Հասկացի, տղա։

Որդին հայացքը փախցրեց. անձայն խլրտացող շուրթերը գոնե ոչինչ, բայց հոր աչքերը՝ խլրտուն, այրվող, և բոցով բռնկված հայացքը սարսափազդու էին։ Եվ նա հայացքը փախցրեց ու կախեց գլուխը։

«Էս որոշումն հարկ էր՝ մեկ-երկու ամիս առաջ,— մտածեց Քեռի

Թորոսը։— Էս խեղճ տղին շատ տանջեցի... բովանդակ քոչին տանջանք պատճառեցի ու անտեղի... Էս որոշումն հարկ էր՝ մեկ-երկու ամիս առաջ... ավելի առաջ,— մտածեց Քեռի Թորոսիկը,— էն գիշերն... էն երազի գիշերն, որ արթնացա ու թշնամին մեջ իմ կոկորդին, հենց էն գիշեր հարկ էր սպանել զինք... Հրմբ՝ էն գիշեր... Անցա՜վ... Անցավ ու իմ թշնամուն իրավունք տվեցի, որ ինք տանջե ու խեղդե զիս... Ջուրի էսօր։ Ջուրի էսօր... Բայց էսօր...»։

— Փառք Արեգակին։— Քեռի Թորոսը նայեց արևին, հազաց և մտածեց, որ ուշանում է։— Գնա, տղա,— մատնացույց արեց ծիրանենու ճյուղից կախված գերանդին և ձեռքով արեց դեպի սարերը։— Գնա ու զիս մի խանգարե... Ուշ է։

Ոչ կարոտով նայեց որդուն, չնայած գիտեր, որ վերջին անգամ է տեսնում և ոչ վերջին խոսք ասելու պետք ունեցավ. Քեռի Թորոսը մեռնելու չէր գնում, այլ գնում էր կռվի. գնում էր իր ոսոխին սպանելու, և ձեռքով քշեց որդուն և անհամբեր հայացքով պահանջեց, որ շուտ հեռանա։

Վերջին մեկ-երկու ամսում, որ արդեն դարբնոց չէր գնում կարճկոթ թուրը սրելու, ամեն առավոտ ու իրիկուն երկնային տիրոջից մի ափ հող էր խնդրել։ Մի ափ հող... Ինչ սոսկալի բան կլիներ, եթե հանկարծ... հանկարծ ու երեկ Քեռի Թորոսիկը մեռած լիներ, երեկ, մյուս օրը, էն մյուս օրը, մի ամիս առաջ... Հանկարծ ու հիմա Քեռի Թորոսիկը շնչահեղձ լինի, կոկորդն իր ախոյանի մագիլների մեջ՝ պարտված ընկնի ծիրանենու տակ... Քեռի Թորոսին կթաղեն, իսկ այդ նողկալին կենդանի գմնա և հողի տակ նույնիսկ կժպտա նենգորեն։ Շտապել է հարկավոր։

Որդին արդեն հեռացել էր. Քեռի Թորոսը կարող էր գնալ... գնալ-մտնել իր սենյակը, բայց երկինքն ու երկիրը կալել-կապել էին, և ոտքը ոտքի առաջ չէր ընկնում։ Բայց— հարկ է շտապել— թշնամին կարող է փրկվել, շտապել է պետք... Արևին ու աշխարհին նայելու դեռ ժամանակ կլինի. Քեռի Թորոսիկը Արեգակին ու Երկրին մեկ էլ պատուհանից կարող է նայել...

5

Քեռի Թորոսը մտավ իր սենյակը, դուռը կողպեց-ստուգեց, իրոք՝ փակել էր, հետո մոտեցավ իր թախտին— երազից... հիվանդությունից հետո այդքան հանգիստ ու անկաշկանդ, այդպես անդող չէր մոտեցել անկողնուն— բարձի տակից հանեց փաթեթը և բացելիս մտածեց, թե մետաքսաշորը ի՞նչ է անելու... Մատենիկի փաթթոցն է եղել, տարուց ավելի թուրն է ծրարել, հիմա ի՞նչ է անելու...

Կարճկոթ թուրը ավելի հատու թվաց, հինգ-վեց շաբաթ դարբնի մոտ չէր տարել, բայց կարծես ավելի սուրսայր էր, քան երբևէ, որ ամեն օր հեսանելու էր տանում, ավելի ծանր էր և հատու, կտրուկությունը շեղբի մեջ զսպած։ Ի՞նչ խելք, ինչպե՞ս է ձեռքը բռնել ու այս հրեղեն սուրը որպես կախիչ թաղել մարագի պատի մեջ, թե երբ, Քեռի Թորոսը նորից փորձեց հիշել, բայց չհիշեց։ Իսկ եթե այն օրը պատահականորեն մարագ չմտներ, չնկատեր, սուրը կփտեր մութ մարագում, իսկ Քեռի Թորոսիկի ախոյանը այսօր, հենց այսօր...

— Ինչի՞ ես կծկվել։— Քեռի Թորոսը հանկարծ զգաց, որ կոկորդում ճանկռտոց ու տհաճ խտվոց չկա, ոչ քղկոց, ոչ հազ, և կարգին շնչում է։ Թշնամին կուչ էր եկել։— Կվախենա՞ս,— սրի ծայրը դրեց կոկորդին։— Բայց գիտեր, որ դեռ ժամանակը չէ. Քեռի Թորոսիկը մի անգամ էլ պետք է աչք դիպցնի աշխարհին։

Եվ մինչև պատուհանին մոտենալը զգաց, որ կարևոր մի անելիք ունի... ի՞նչն է... ի՞նչ պետք է անի... Սուրը ձեռքին կանգնած նայում էր անկողնուն, ուղիղ՝ ներքնակին, կռահում էր, որ անելիքը թախտ ու անկողնու հետ կապ ունի, բայց... ինչ պետք է անի... Հա՜ա... Քեռի Թորոսը ձեռքը տարավ ներքնակի տակ և հանեց ծխատուփը... Արծաթե ծխատուփը ձեռքն առավ և փառավոր ժպտաց. մի անգամ, աշնան մի օր Քեռի Թորոսիկը մերկ մատների արանքում առած կրակով քեզ, շեհիտ Մեհմետ, ընկուզենու մոտից քշեց, քեզ և քո կատաղի ոստիկաններին քշեց գյուղից։ Քեռի Թորոսը շոյեց ընծայագիրը՝ «Քեռի Թորոսիկին», գիրը մոտեցրեց աչքերին, ինչ սիրուն տառեր են... «Քեռի Թորոսիկին», ինչ գեղեցիկ տառեր են... Ափսոս, որ Քեռի Թորոսիկը կարդալ ու գրել չգիտի... Եվ ինչո՞ւ չսովորեց... ինչո՞ւ լիկյայական չգնաց...

Հետո սիրտը ծխախոտ ուզեց։ Մխել։ Քեռի Թորոսը ծխախոտ պատրաստեց,— ամսից ի վեր չէր ծխել, չէր կարող և ծխախոտ դուր չէր գալիս, իսկ ահա սիրտն ուզում է— վառեց ծխախոտը, ապա ծխատուփը դրեց նախշուն կտորի վրա, դարձավ փաթաթեց մետաքսաշորի մեջ— թող պահեն... Ցանկանում են պահել, թող պահեն, չեն ուզում՝ թող դնեն Քեռի Թորոսիկի հետ... իրենց գործն է, և սուրը ձեռքին կանգնեց բաց պատուհանի մոտ։ Ինչ անուշ օր է։ Եվ արդեն օրը ուրիշ ձայն ուներ. ամռան օրը լցված էր մեղուների պարսի գվվոցով։ Իրենք մեղրաճանճ չունեն— իզուր չեն պահում— բայց հարևանը— Քեռի Թորոսը չհիշեց, թե ով— բայց թաղում մեկը մեղրաճանճ ունի, մեղուները պարս են տվել. նոր ընտանիք են կազմում, մոտերքում մի ծառի գլխի հավաքված գվվում են։ Լավ կլիներ, եթե պարսը իրենց այգու վրա լիներ, հենց դիմացի ծիրանենու վրա։

Թոռնիկը վեց-յոթ տարեկան բարալիկ մի աղջնակ, վազվզում էր այգում, ափերը առաջ մեկնած ծիծաղում ու վազում էր, թիթեռնիկ էր ուզում բռնել։ Քեռի Թորոսը, ափսոս, թիթեռը չտեսավ, բայց համոզված էր, որ թիթեռի ետևից է վազում թոռնիկը։ Եվ որքա՞ն նման է Քեռի Թորոսիկին... Թոռնիկի աչքերը կապույտ չեն, բայց, ինչպես խնձորը երկու կես անես... Եվ Քեռի Թորոսի վերջին թոռն է, մնացած բոլորը, որ նոր պետք է աշխարհ գան՝ ծոռներ են լինելու, որդու թոռներ, թոռան թոռներ, որդու ծոռներ, ծոռան ծոռներ... Քեռի Թորոսիկը դեռ որքա՞ն ճամփա ունի անցնելու, սատանայի աչքը կույր, Քեռի Թորոսիկը դեռ որքա՞ն պետք է ապրի այս արդար արևի տակ։ Միայն թե... միայն թե մարդու մեջ թաքնված սատանան աչք չբացի, մարդը չպարտվի իր մեջ նստած սատանայից և դուրս չգա մարդու դեմ, բնության դեմ... միայն թե անօրենները դավ չկազմակերպեն Քեռի Թորոսիկի արյան դեմ, Քեռի Թորոսի կոկորդը բռնած թշնամին մագիլները չմտցնի Քեռի Թորոսիկի ցեղի երակներին։

«Թորոսիկի աչքերն ի՞նչ գույնի են»։

Քեռի Թորոսը հիշեց իր ծոռանը, բժիշկ թոռան որդուն, իր անվանակիր ծոռանը։ Անվանակոչությանը գնաց. բաշխեց իր անունը, բայց տես, որ աչքերի գույնը չի հիշում։

— Ձկուկ,— Քեռի Թորոսը շշնջաց ինքն իր մեջ,— ձկուկ,— կրկնեց Քեռի Թորոսը։ Այնպես ուզեց տեսնել իր ցեղի ամենամատղաշին, որը իրավունքով ամենամեծն էր, որովհետև իր տոհմակիցներից ամենաերկարը նա էր ապրելու այս աշխարհում. այո առավոտ՝ նա էր, և եթե Քեռի Թորոսը կա ու չկա վերջին խոսք պետք է ասի, վերջին ցանկություն ունի, նրան՝ Թորոսիկին է ապսպրելու։— Ձկուկ, մեծանաս ու չդառնաս Քեռի Թորոսիկ,— ինքն իր մեջ շշնջաց Քեռի Թորոսը։— Էղնի՛ ու, ձկուկ, ետ դառնաս իմ եկած ճամփով,— ցանկացավ Քեռի Թորոսը։— Էն ճամփեն, սար ու ձորի մեջ քանց թել խճճված կռվի ու կոտրտուքի իմ մոլոր ճամփեն, դու կծկիս ու ետ դառնաս, ձկուկ...

Հետո փորձեց հիշել իր մանկությունը, բայց միտք բերեց միայն մորմոք մի պատառիկ. ինքն ու քույրը ընկույզները հավաքել-լցրել էին քթոցները, և հանկարծ հայտնվեց Մեհմետ ոստիկանապետը...

Քեռի Թորոսը ձեռքը տարավ կոկորդը։

— Էլ իմ ձեռքից չես պրծնի։— Ասաց և մտածեց, որ դանդաղում է. ութսուն և ավելի տարի տեսել է այս աշխարհը, անուշ բան է անտերը, և հիմա նորից կալվել-կապվել է պատուհանի մոտ, իսկ... Հարսը ահա գալիս է։

Հարսը, ճիպոտը ձեռքին— գառներն էր հոտին հասցրել — դանթարը ուսած ելվեր փողոցով գլխահակ բարձրանում էր։

«Հալալ կաթնակեր դուրս եկավ,— մտածեց հարսի մասին։— Շատ չարշարեցի... Քու չարչարանքն ապաշխարանք, հարսնուկ։— Քեռի Թորոսին դուր եկավ, որ դույլերը լիքն են։ Հաջողության նշան է, և ցանկացավ մի բաժակ սառը ջուր խմել և մեղադրեց իրեն։ Հըմը գիս ետ է կպահիմ...»։

Սուրը ձեռքի հետ մեկնված էր պատուհանի գոգն ի վար։ Սուրը ձեռքին էր, և ախոյանը ծպտուն չէր հանում։

Քեռի Թորոսը բարձրացրեց սուրը, պատուհանից դուրս բերեց, թրով խաչ ձգեց երկնքին և հանդարտ մոտեցավ թախտին։

Հարդարեց անկողինը, ապա թախտի տակից քաշեց իր զգեստների ճամպրուկը, ընտրեց մաքուր ու ճերմակ ներքնաշորերը՝ հագավ, մեկնվեց անկողնուն և շոշափեց կոկորդը... Որտե՞ղ ես, դավադիր անօրեն, ինչո՞ւ ես սսկվել— Քեռի Թորոսն ուզում էր, որ իր թշնամին գլուխ բարձրացնի, իրեն զգալ տա— վախենո՞ւմ ես, խաբո՞ւմ ես Քեռի Թորոսիկին։ Չէ՞, Քեռի Թորոսիկը քեզ լավ է ճանաչում, եթե հիմա սուրը փաթաթի ու գնի բարձի տակ, դու օձի պես կկանգնես պարտիզ, և կարիճի խայթոցներդ կշոշափեն Քեռի Թորոսի կոկորդը, եթե հիմա Քեռի Թորոսիկը վեր կենա և հիմարավարի սուրը տանի-խրի մարագի պատը ու ետ դառնա, տուն չի հասնի, հա, չի հասնի, ճանապարհին դու կխեղդես Քեռի Թորոսին... Քեռի Թորոսիկը քեզ նոր-նոր չպիտի ճանաչի— գու վախկոտ ու նենգ, նենգ ու վախկոտ մարդասպան ես։

— Հըլա կխաբի՞ս գիս... կպիտի քեզ երկոտ կես անիմ, ճիշտ ու ճիշտ՝ երկու կես։— Քեռի Թորոսը շոշափում էր կոկորդը. ուզում էր ամենահարմար տեղը գտնել, ճիշտ տեղը, ամենաճիշտ տեղը... Ահա...

Քեռի Թորոսը սուրը բարձրացրեց։

Արևը ընկել էր մահճակալին, և թուրը կայծկլտաց բոցերի մեջ։

— Մեռնիմ քու զորության,— ծպտաց Քեռի Թորոսը...

Հետո... Հետո հաջորդ օրը, որ Քեռի Թորոսիկի թաղումն էր, հուղարկավորները — Քեռի Թորոսի թաղմանը հոծ բազմություն էր հավաքվել— մարդիկ պետք է զարմանային, թե ինչպես պայծառ է ծպտում Քեռի Թորոսիկը, կնճիռները ինչպես են ետ գնացել, և որքան խաղաղ է Քեռի Թորոսիկի դեմքը։

ՆԵՐՍԵՆ

1

Գլխավոր հաշվապահը գործնական ներս մտավ, մոտեցավ իր գրասեղանին, բայց չնստեց. նայեց օգնականին և ափերը եռանդուն շփեց իրար. լավ տրամադրության նշան էր։

— Տակսս,— հաշվապահը ուրախ աչքով արեց օգնականին։— Էսօր լավ օր է։— Ապա վերցրեց անգրել մի թուղթ, դարձավ թուղթը փոխեց. դարակից հանեց «խաս» թուղթ, մեկնեց օգնականին։— Գրիր։ Առաջինը՝ իմ անուն-ազգանունը։ Երկրորդ... ոչ, սպասիր,— նա թուղթը օգնականի գրասեղանից վերցրեց — դրեց հաշվետար Ներսեսի գրասեղանին։— Քո ձեռագիրը սիրուն է։ Գրիր։ Առաջին՝ իմ անուն-ազգանունը։

— Ի՞նչ բան է,— հարկ համարեց Ներսեն։

— Կիմանաս։ Գրիր իմ անուն-ազգանունը։ Երկրորդ,— մատնացույց արեց օգնականին,— անուն-ազգանունը։ Երրորդ՝ քո անուն-ազգանունը։

— Ջանըմ, ի՞նչ բան է։— Ներսեն ետ քաշվեց։— Ջիմանա՞մ, թե զիմ անուն-ազգանունն ինչի համա՞ր է կգրիմ։

— Մի վախեցիր, անունդ դատարան չենք ուղարկելու։

— Կխնայիս ու չե՞ս ուղարկի,— վիրավորվեց Ներսեն։— Ո՞ր մեկ մեղքի համար զիմ անուն հարկ է դատարան մտնի, ու դու՝ կխնայիս։

— Սկսվե՞ց...

Գլխավոր հաշվապահը շատ կուզենար ազատվել «ցիցգլուխ» իր հաշվային աշխատողից, բայց Ներսեն տեղափոխվելու կամ թոշակի գնալու մտադրություն չուներ, չնայած յոթանասունն անց էր, իսկ ազատել... ինչպե՞ս պատճառաբանել, ի՞նչ անուն դնել՝ բանիմաց է և աշխատանքի ներկայանում է ժամանակից շուտ, չնայած գյուղից է գալիս, որ շրջկենտրոնից ինը-տասը կիլոմետր հեռու է, սակայն գործատեղ է հասնում առավոտ շուտ և մինչև ներս մտնելը դեռ մի քանի պտույտ է անում հիմնարկի՝ շրջկոոպի շուրջբոլորը։ Քայլում է ձեռքերը քամակին դրած, միշտ մտազբաղ, մի տեսակ խռով ու հերսոտ։ Հետո մտնում է հիմնարկ, գրավում քսան տարվա իր աթոռը— յոթ գլխավոր հաշվապահ է ընդունել ու ճանապարհել — և սուսուփուս սկսում իր գործը. ինչ թիվ ու հաշիվ է՝ համրիչի հատիկները թափով զարկում է իրար գլխի, իսկ գրում է հանդարտ ու բծախնդիր. որքանոցից սովորած ճոթավոր ու գեղեցիկ տառերով։ Աշխատանքի ազատ պահերին դարակից հանում է գիրքը — սովորաբար՝ հայոց պատմություն է լինում — և

հոնքերը խառնած կարդում է ու փնչալով ընդգծում։ Խոսեցնես՝ կես ու պռատ՝ կպատասխանի, իսկ եթե խոսողը գլխավոր հաշվապահն է, վեհ է ստացվում։ Սկսում են հաշտ, վերջացնում՝ կռվով։

— Սկսվե՞ց,— նորից մաղձոտվեց գլխավոր հաշվապահը, բայց որոշեց չխորացնել՝ տրամադրությունը գցելու օր չէր։— Ա՛յ Ներսես, ի՞նչ անհամբեր մարդ ես, գրիր՝ հետո կիմանաս։

— Մինչև չիմանամ՝ չեմ գրի։

— Էս մարդը հեշ սյուրպրիզ չի սիրում։— Եվ հանդիսավոր հայտարարեց։— Էսօր մեր շրջկոոպի նախագահ Վիրաբ Եգորիչի ծննդյան օրն է։ Գրծա՞նք։

— Ի՞նչ ես ասում։— Ոգևորվեց օգնականը։— Հրավիրե՞լ է մեզ։

— Ողջ կոլեկտիվին՝ մեկ մարդու պես։ Դե, մենք էլ մարդ ենք՝ կազմակերպված ձևով, ինչպես որ պետքն է։

— Իհարկե... իհարկե,— օգնականը ոտքի ելավ։— Ո՞րերորդ ամյակն է, Վիրաբ Եգորիչը քանի՞ տարեկան դարձավ։

— Դու էլ հո Ներսեն չե՞ս, համբերիր. երեկոյան մեխակները կհաշվես՝ կիմանաս։— Եվ նորից դարձավ Ներսեին։— Հիմա ամեն ինչ պա՞րզ է։ Դե գրիր։

Ներսեն աջ ու ձախ փնչմնչաց և երկմտեց՝ իր անունը գրի՞, թե ոչ։ Ճիշտ է, որ նույն հիմնարկի աշխատողներ են, բայց միմյանց հետ ի՞նչ կապ ունեն, «նախագահի աշխարհն՝ ուրիշ, իմն՝ ուրիշ,— մտածեց Ներսեն,— ամիսը մեկ՝ պատահականորեն հանդիպեն կամ չէ, հազարից մեկ միմյանց բարևեն կամ՝ չէ։ Նախագահը իրեն կարծես չի էլ նկատում, ավելի լավ, ով էդ ավազակից հեռու է, աստծո տանն է մոտ։ Եվ արժե՞, որ իր ծանր տեղը թեթևացնի. վեր կենա — գնա՝ թե քո աշխատողն եմ, եկել եմ քո ծնունդը շնորհավորելու»։

Գլխավոր հաշվապահը հասկացավ Ներսեի երկմտանքը և ցանկացավ, որ նա հրաժարվի — կգա, ուրախությունը կհարամի — և մտածեց բարեկամաբար խորհուրդ տալ. թե, ա՛յ Ներսես, դու մեծ մարդ ես, գյուղ պետք է գնաս, Վիրաբ Եգորիչն է՝ հյուրերին մինչև առավոտ բաց չի թողնի... Բայց հասկացավ, որ Ներսեին բորբոքելու է, ավելի լավ է՝ թողնի իր կամքին։

«Փարեն կտամ, բայց չեմ էրթա»,— որոշեց Ներսեն և հոնքերը իրար զարկած գրեց իր անունը։

Ցուցակը գրեց-վերջացրեց, ապա գրպանից հանեց տասը ռուբլի և ցուցակի հետ մեկնեց հաշվապահին։

— Շատ է ու քիչ չէ,— ասաց։— Կգամ, թե տուն կերթամ, էդ էլ իմ բանն է։

— Թե չես գալու, վերցրու փողդ։ Հո աղորմություն չե՞նք հավաքում,— վիրավորվեց գլխավոր հաշվապահը,— վերցրու փողդ։

— Տվել եմ ու ետ չեմ վերցնի։

— Դու եկողը չես, գիտեմ։ Վերցրու փողդ։

Եվ Ներսեն զգաց, որ հաշվապահը չի ուզում, չի կամենում, որ ինքը երեկոյին մասնակից լինի։

— Կգամ,— կովարար պատասխանեց,— քեզնից շատ կամենիմ էդ մարդու տուն։

2

— Քանի՞ հատ եղավ,— նորից հարցրեց Ներսեն։

Գլխավոր հաշվապահի օգնականը, որ Ներսեին ուսնկից էր, սրբեց շաղված աչքերը։

— Մինչև քառասունը հաշվում եմ, հետո անտերունկը խառնվում են իրար։

— Քու դերածը հարամ է ու քու գրած թվերը՝ սուտ. փունջ մի ծաղիկն ի՞նչ է, որ դու կհաշվիս ու կսխալվիս, կհաշվիս ու մինչև վերջ չես հասնի։— Ներսեն արդեն տաք էր։ Նա որոշել էր ոտքի վրա մի բաժակ վերցնել՝ շնորհավորել իրենց նախագահին ու թողնել-գնալ գյուղ, բայց նստեց ու մնաց նստած։

Ընդարձակ ճաշասենյակը հյուրերով լեցուն էր, բոլորն արդեն՝ տաքդյուխ, և եթե Ներսեն դուրս գար, մանավանդ որ նվագախմբին ու դուռը մոտիկ էր նստած, ոչ ոք չէր նկատի։ Բայց տեղից չէր շարժվում. խմել էր ուզում և ընդհանրապես այդ զմբզմբան ուրախությունը դուր էր գալիս։

— Էն նկար կտեսնի՞ս,— Ներսեն մատնացույց արեց «Անհայտ կնոջ» դիմանկարը, որ դիմացի պատից հպարտ ու առինքնող հայացքի տակ էր առել սեղանակիցներին։

Հաշվապահի օգնականը գլխով արեց։ Նա կկոցած նայում էր Վիրաբ Եզորիչի դիմացը պոռթկած մեխակներին։

— Գիտե՞ս ում նկարն է... տիկին Արմենուհու,— բացատրեց Ներսեն։— Իմացա՞ր։

— Տիկին Արմենուհին ո՞վ է։

— Պարոն Կարապետի կնիկն է. մեր Հազվե քաղքի հայանի վաճառական պարոն Կարապետի կին տիկին Արմենուհին է։

Հաշվապահի օգնականը տարակուսած շարժեց ուսերը։

— Ըբբ՛։— Ներսեն բաժակը օդի լցրեց։— Քու բաժակդ վերցրու, խմինք... Դու իմ սրտին շատ դուր կգաս։

Այդ պահին Ներսեն բոլորին սիրուած էր։ Ուրախությունը մասնակից ով կար՝ պաշտոնավար ու անպաշտոն, սիրում էր։ Հատկապես՝ Վիրաբ Եգորիչին, որ հային վայել տուն է կառուցել — առաջին անգամ էր շրջկոոպի նախագահի հարկի տակ — լայն ու բացսիրտ ճաշասենյակ՝ նախշազարդ պատ ու առաստաղով։ Ներսեին հատկապես դուր էր գալիս «Անհայտ կնոջ» դիմանկարը, որը հանկարծ նրան հիշեցրել էր իր ծննդավայր Սասնո Հազվե քաղաքի վաճառական պարոն Կարապետի կնոջը՝ տիկին Արմենուհուն։ Հազվե քաղաքի հայ աղջիկներին դաշնամուրի անվճար դասեր էր տալիս։ Համաձայնեց սովորեցնել նաև Մուհամեդ բեկի աղջկան... Տիկին Արմենուհին՝ ամուսնուն թևանցուկ, հպարտ անցնում էր փողոցով, հանդիպողները խոնարհվում ու հարգանքով ճանապարհ էին տալիս. հայ, քուրդ, թուրք, կին-տղամարդ դուռ ու լուսամուտներից ծիկլակում էին — տիկին Արմենուհին է անցնում — իրենք՝ երեխաները, խաղը թողած, թե կռվում էին, կռիվը թողած, ձգվում էին և հայացքով ուղեկցում տիկին Արմենուհուն։

— Քանց էսօր կհիշիմ. տիկին Արմենուհին հենց էսպես էր,— Ներսեն մատը տնկեց դեպի դիմանկարը։— Ասուած է վկա, տիկին Արմենուհու նկարն է... Խմենք։— Սակայն ոչ ոքի չսպասեց, հայացքը նկարին՝ խմեց, ափով սրբեց բեղերը և շարունակեց։— Բայց էն փեսուրն ավելի է. տիկին Արմենուհու գլխին գլխարկ կար, գլխարկի վրա փեսուր չկար. էդ փեսուր սուտ-շանորդություն է։— Ներսեն խոսում էր բարձրաձայն և ոչ մեկին չէր դիմում, հայացքը «Անհայտ կնոջ» դիմանկարին՝ խոսում էր և աղմուկ-աղաղակի մեջ իր խոսքը միայն ինքն էր լսում։

Հետո էլի խմեց, ուզեց մի բան վերցնել սեղանից, բայց չկողմնորոշվեց։

— Ախպեր, էսքան բան ինչի՞ են լցրել սեղանին,— գանգատվեց Ներսեն։— Մարդ կշիվարի՝ ո՞րն ուտի, որը թողեմ։ Մարդուն ի՞նչ է պետք. կտոր մի հաց, ման մի ճաշ։ Ոչ էն կա, ոչ էն։ Հացն ո՞ւր է,— դարձավ հաշվապահի օգնականին,— կտոր մի հաց տուր։

— Սուս,— կամաց դիտողություն արեց ուսնդիցը,— Թամադան քեզ հետ է։

Ներսեն նայեց կանգնած Թամադային, բայց նա ընդհանրապես էր դիտողություն անում. լռություն էր խնդրում՝ Մազմանյանը խոսք է խնդրել, իսկ լռող չկա։

«Ի՞նչ իմ լսած ճիշտ է. էս մարդ մեր նախագահի աթոռին աչք ունի,— մտածեց Ներսեն և որոշեց ականջ պահել։— Ցնոնենք ի՞նչ կխաբրեն։—

Մի քիչ լսեց և զարմանքով գլխի ընկավ, որ, ի պատիվ Վիրաբ Եգորիչի, կենաց-մաղթանքները դեռ շարունակվում են։

— Հինգ ժամ է կխմինք ու էդ կենաց չպրծա՞վ։

Ուսնկիցը քաշեց Ներսեի փեշը և աչքունքով հասկացրեց, թե անհարմար է, մարդը խոսում է։

Իսկ Մազմանյանը խոսում էր կարելվույն չափ բարձրաձայն ու ոգևորված։ Եվ երկար խոսեց. հոբելյարին գնահատեց բազմակողմանի։ Նրա ճանաչած հոբելյարը որպես մարդ ազնիվ էր ու բարի, որպես ընկեր՝ հավատարիմ ու անփոխարինելի, որպես տնտեսական աշխատող՝ ձեռներեց ու ճկուն, որպես ղեկավար՝ անաչառ ու սկզբունքային, որպես քաղաքացի՝ ակտիվ ու անհաշտ հասարակության մեջ դեռևս գոյություն ունեցող խորթ բարքերի ու երևույթների նկատմամբ, որպես հարևան՝ կամեցող և ուշադիր, ապա գնահատեց որպես հավատարիմ ամուսին, որպես սիրող հայր... վերջը...

Ներսեն ուշադիր լսում էր և մեկ-մեկ աչք էր դիպցնում Վիրաբ Եգորիչին, որ ձեռքն ի ճակատ հակվել էր։ Իսկ Մազմանյանը խոսում էր զիլ ու ոգևորված, համարյա խանդավառ։

«Էս մարդն որ էսպես կխոսա, էն մարդու աթոռին աչք չի ունենա,— մտածեց Ներսեն։— Սուտ է։ Մեղք առնել է։ Մեր ժողովուրդ բամբասանք շատ կսիրե, ջանըմ»։

Ներսեն ունկ պահեց նաև հաջորդ բարեմաղթողին... նույնն էր ասում։ Ճիշտ է, Մազմանյանի պես ոգեշունչ չէր, խոսում էր հանդարտ ու մի քիչ կմկմալով, բայց նույն գնահատանքն էր։

«Ջանըմ, թե բոլոր նույնն է կխաբրին, ուրեմն, ճիշտ է,— մտածեց Ներսեն։— Հա, մեր ժողովուրդը բամբասանք շատ կսիրե։ Մեր նախագահի մեղքն անտեղի էդքան կառնին։ Համ ժողովուրդ կսխալվի, համ՝ ես։ Մինչև էսօր էդ մարդու դեմ ես մեղք եմ գործել։ էդ խեղճ մարդն ա՞մի հորն է սպանել։— Եվ ակամա նայեց «Անհայտ կնոջ» դիմանկարին։— Տիկին Արմենուհին է ու կա... Վիրաբ Եգորիչն ապրի, զորանա, որ մեջ իր տան էս նկարին տեղ է տվե... էն էլ՝ կենտրոնական տեղ»։

Եվ երբ թամադան էլի հարցրեց, թե ուրիշ ցանկացող չկա՞, Ներսեն ոտքի ելավ։

Գլխավոր հաշվապահը, որ վերին շարքում էր, անհանգիստ շարժվեց և հեռվից աչքունքով խոսեց Ներսեի կողքին փլված օգնականի հետ։

— Ժողովուրդ,— սկսեց Ներսեն,— էս մարդ,— ձեռքը մեկնեց Վիրաբ Եգորիչին,— շատ հայրենասեր մարդ է։ Հա՛, դուք ի՞նձ հարցրեք՝ հայրենասեր ու պատվավոր մարդ է։ Աշխատողների հանդեպ հարգանք

ունի, մեծ ու փոքր իր համար մեկ է։ Ազնիվ, հայրենասեր ու արդար մարդ է։

Վիրաբ Եգորիչը ոտքի կանգնեց։

— Երբ ընկեր Ներսեն է խոսողը,— ժպտադեմ ասաց նա,— պետք է կանգնած լսել։

Ներսեն գոհ մնաց, շոյվեց։

— Հա՛, ախպեր, հոգի ունիմ տալու,— շարունակեց և արդեն խոսք ու հայացքով դիմեց ուղիղ նրան, իբենց նախագահին։— Էսքան մարդ վկա, ու ես կհայտարարիմ՝ դու հայրենասեր, դու ազնիվ ու արդար մարդ ես։ Շատերն գուցե չիմանան, բայց ես քու աշխատողն եմ ու գիտեմ՝ էդպես է. դու մեծի հետ՝ մեծ, փոքրի հետ՝ փոքր, ով կուզե թող խոսի, բայց դու լիաշք մարդ ես. շատ ու քիչ քեզ համար մեկ է, քու ձեռք միշտ բաց է քու ընկերոջ համար, քու հարևանի համար, քու մարդ ու բարեկամի համար։

Բոլորը լուռ լսում էին, միակ խոսքը, որ բոլորը սուս արած լսեցին, Ներսեինն էր։

— Ապրես, Ներսե,— գլխավոր հաշվապահը ոգևորվել էր։

— Մալադեց Ներսեն,— մեկ-մեկ այս ու այն կողմից բացականչում էին, իսկ Վիրաբ Եգորիչը պարզապես հուզված էր։ Ում, ում, բայց Ներսեի խոսքը անսպասելի էր նրա համար։ Երբ Ներսեն բաժակը ձեռքին կանգնեց, նա տհաճ զգացում ունեցավ։ Տե՛ս, որ սխալվել է։

— Քու դատածն ու ունեցած հալալ էղնի քեզ։ Քու տունն էս շեն ու բոլ սենյակն, էն սիրուն նկարն իմ սրտին շատ դուր կգան... Առողջ ու շեն մնաս, օրհնանք քու տուն ու տեղին, քու սեղանին... Բայց բան մի ասիմ, քու սիրտ թող չմնա։ Մարդուն ի՞նչ է պետք. կտոր մի հաց. ման մի ճաշ։ Աշխարհն ինչ կա, չկա, թափել ես սեղանին ու մարդ կշիվարի՝ ո՞րն ուտի, ո՞րը թողնե։

Եվ Ներսեն ծափ ու ծիծաղի, նվագի տակ խմեց օղին, ափով սրբեց բեղերը և վերցրեց մի կտոր հաց։ Սակայն հաշվապահը պահանջեց, որ Ներսեն լցնի իր բաժակը.

— Ներսեի բաժակին ես պետք է երգեմ։— Եվ ոտքի կանգնեց։

3

Ներսեն երբ տուն հասավ, կեսգիշերն անց էր։ Կինը աչք դիպցրեց թե չէ, հասկացավ, որ էրիկը խմած է։

— Հա՛, վալլահ,— կռահեց կնոջ հայացքը,— խմեցինք ու լավ խմեցինք։ Մեր նախագան պատվավոր մարդ է։ Հա՛։ Շատ հայրենասեր

ու պատվավոր։ Ես էլ եկա, բաժակաճառ մի ասեցի, բաժակաճառ մի, որ իր յոթը պորտին բավ է։

— Դու ու բաժակաճա՞ռ,— թերահավատ նայեց կինը։

— Ինչի՞, Ներսեի հերն ո՞ւմ հորից էր պակաս։ Ասեցի ու լա՜վ ասեցի։

Հետո մի բաժակ թանչուր խմեց և անկոչին մանեշն ու քնեցը մեկ եղավ։

Սակայն կինը դեռ չէր հասցրել աչք կպցնել, Ներսեն արթնացավ։

Ներսեն աչք բացեց, տրսրեց դեմք ու ճակատ, ապա կիսախավարում ճանաչեց աչքերը. զգաց, որ տհաճ ինչ-որ բան է հիշելու... Հա՜, բաժակաճա՜ռը... բաժակաճա՜ռը, հիշեց ու տնքաց։

— Քեզ վա՞տ կզգաս։

Ներսեն չպատասխանեց կնոջը։

— Թանչուր բերի՞մ։

— Կաքի քու ձեն,— հերսոտեց Ներսեն, շուռ եկավ մյուս կողքի և փորձեց մանրակրկիտ վերհիշել իր բաժակաճառը... Թարսի պես լավ էր հիշում՝ տեղը-տեղին, քառ ու բառ։

«Քու հոգին ես ծախե»,— փնչաց Ներսեն և քուռ եկավ մյուս կողքի։

Եվ ինչպես սովորաբար՝ երբ մարդիկ իրենք սխալը արդարացնող պատճառներ են որոնում. որովհետև սխալն ընդունելը ավելի դժվար է, քան ինքնախաբեությունը, Ներսեն նույնպես փորձեց խաբել իրեն։

«Ջանըմ, էդ մարդ մեջ իր օջախին սեղան էր բացե, որ ուտենք-խմենք ու հայհոյե՞նք։ Կէզնե՞ր։ Չէր էզնի»։— Բայց այդ միտքը երկար չդիմացավ. ախր, մազթանքի խոսք, հա՜, հասկացանք, բայց կարելի էր երկու բառ ասել, ոչչություն ցանկանալ ու խմել։ Վերջ։ Կամ, ասենք, ո՞վ էր սպասում իր խոսքին, ո՞վ ստիպեց, թե՝ Ներսե, վեր կաց, ոտքի կանգնիր, բաժակաճառ ասա։ Ո՞վ էր ստիպել... ո՞վ ստիպեց, որ Վիրաբ Եզորիչի գովքն անի։ Եվ այն էլ ի՞նչ գովք... Մնում էր, որ դռան մոտից գնար, հասներ սենյակի վերին գլուխը, Վիրաբ Եզորիչի ճակատը համբուրեր։

«Ամո՞թ»,— փնչաց Ներսեն։

— Ես էլ շնչավոր եմ քու կողքին, ա՛յ մարդ,— չհամբերեց կինը,— քու ցավն ի՞նչ է, ասա, իմանամ։

— Քու ձեն,— սաստեց կնոջը, բայց մտքում պատասխան տվեց։— «Իմ ցավն էն է, որ էդքան մարդու ներկայությամբ շուն-շանորդություն արի... Ես էդ մարդու մասին ի՞նչ կմտածիմ, ու էդ մարդ ճիշտ ու ճիշտ իմ մտածածն է, բայց բաժակն առա իմ ձեռքն, ելա ոտքի. իմ մտածա-

ծին հակառակ խոսեցի։ Ամո՛թ։ Էդքան մարդու վկայությամբ... Էդքան մարդ հեչ. ցավն էն է, որ ես իմ հոգին ծախեցի։ Ամո՛թ։ Շուն-շանորդություն արի, իմ հոգին ծախի ու ներկաներ ծափ տվեցին»։

Ներսեն նաև հիշեց, որ գլխավոր հաշվապահը «ծաղկեցրեց» իր բաժակը. ի պատիվ՝ երգ ասաց։

«Բա ի՞նչ,— մտքում դիմեց հաշվապահին.— ես որ սատ խոսիմ, դու ուրախությունից կերգիս»։

Եվ, չգիտես ինչու, նա մտածեց, թե հաշվապահը առավոտյան անպայման ժպտալու է իրեն։ Հա՛, կդիմավորի ժպիտով։ Ներսեն նույնիսկ պատկերացրեց այդ երկդիմի, խնդմնդուն ու թափանցիկ ժպիտը,— էլ ո՞ւր էիր էդքան բարձր թռչում, գլուխդ ցցած գալիս-գնում ես, որպես թե՝ ինձպես ու Վիրաբ Եգորիչի պես պետ քեզ համար գոյություն չունի. որպես թե՝ ես Վիրաբ Եգորիչի ձեռքերին ջուր լցնող եմ, իսկ դու քո բարևն էլ շատ ես համարում, տեղի-անտեղի հակադրվում ես ինձ, որպես թե...— Ներսեն շատ որոշակի պատկերացրեց գլխավոր հաշվապահի խնդմնդոցը և զայրացավ։

«Էլի կհակառակվիմ»։— Բայց զգաց, որ էգուցվանից հաշվապահի և իր հարաբերությունը մի տեսակ ուրիշ է լինելու՝ այլևս անկաշկանդ ու ինքնավստահ հակադրվել չի կարող նրան։

Ապա, որտեղից որտեղ, մտքով անցավ, որ շրջկոոպի նախագահը առավոտյան կանչելու է իրեն... Մտածեց և տեղնուտեղը համոզվեց՝ էգպես է ու կա՝ կկանչի կաբինետ, ձեռքով կբարևի, խոսք կբացի անցած գիշերվա կերուխումի ու հոգնածության մասին, կտեղեկանա, թե Ներսեն գիշերը ինչպես հասավ գյուղ, ընդհանրապես կհետաքրքրվի Ներսեի կյանքով և մտերմաբար դիտողություն կանի, թե՝ ինչո՞ւ է մի տեսակ քաշված, ինչի՞ կարիք ունի. «դիֆիցիտ» ապրանք է, էս է, էն է... աշուն է, թեկուզ՝ ածուխ... Ով ասես, դիմում է, իսկ Ներսեն, որ «ոխտեմի» աշխատող է, քաշվել է մի կողմ։

Չէ, Ներսեն այլևս չի կարող նախագահի կողքով անցնել սովորականի պես՝ անփույթ, առանց հարկադիր բարև տալ ու առնելու։ Վերջացավ։

— Օհոոո՜,— բարձրաձայնեց Ներսեն և շարունակեց մտքում։— «Մի գիշերվա մեջ ինչքա՜ն բան փոխվեց մեջ իմ կյանքին, ու ես գլխի չեմ»։

— Ներսե...

— Քու ձեն,— կտրեց կնոջ խոսքը և տեղնուտեղը որոշեց.

«Էր էանչին չեմ սպասի, առավոտ շատ ես կմտնիմ իր կաբինետ...»։

Հենց այդպես. Ներսեն թույլ չի տա, որ գլխավոր հաշվապահը

խնդմնդա և ոչ էլ կնստի ու կսպասի նախագահի կանչին՝ առավոտյան կմտնի կաբինետը և ինչ որ պետքն է՝ կասի։ Այդպես։ Որոշված է։

Ներսեն հանգիստ շունչ քաշեց։ Նույնիսկ մտածեց մի երկու խոսք փոխանակել կնոջ հետ, հանգստացնել՝ առանձնապես ոչինչ չկա, բայց ավելորդ հարցուփորձից խուսափեց. ավելի լավ է քնել, որպեսզի առավոտ կանուխ...

«Ջանըմ, իրիկվա գործ լուսվան չեն թողնի»։

Եվ գործնական հագավ շորերն ու ելավ դուրս։

— Տղա, ելի,— կինը լուրը հասցրեց որդուն,— քու խև հերը գնաց։

Մինչև որդին հասավ, Ներսեն արդեն ասֆալտապատ ճանապարհին էր. ավտոյի էր սպասում։

— Ո՞ւր, բաբու։— Բռնեց հոր թևը և մոտիկից ստուգեց... Չէ՝ հարբած չէր, ինչպես մայրն էր ներկայացրել, շատ էլ լուրջ էր, զգաստ ու հանգիստ։— Էս գիշերով՝ ո՞ւր։

— Շրջկենտրոն կերթամ։

Եվ այլևս որդու հարցուփորձին չպատասխանեց, միայն պնդեց՝ երկինք ու գետին իրար գան, գնալու է և՝ առանց որդու։ Այնուամենայնիվ, որդին սպասեց. հույս ուներ՝ գոնե միասին կգնան։ Բայց Ներսեն իր խոսքի տերն էր՝ մենակ նստեց մեքենա։

— Տնի՞ց ես խռովել, բիձա,— հետաքրքրվեց վարորդը։

— Տնից չէ, լաո, ինձնից եմ խռովե։

4

«Դրա պալատն էս չէ՞ր»։— Ներսեն ուշադիր նայեց և հոմոզվեց, որ չի սխալվել. շիփ-շիտակ եկել-կանգնել է դռանը։

Ոչ լույսերն էին վառվում, ոչ էլ ձեն ու ձուն կար։

Ներսեն բռունցքով թակեց դուռը և սպասեց... նորից թակեց՝ ավելի երկար ու զիլ... պատասխան չկար։ Գուցե էլեկտրական զա՞նգ ունի։ Անպայման կունենա՝ առանց զանգի մնացող չէ։ Որոնեց զանգի կոճակը, բայց չգտավ։

«Ծսիմ ո՞ւր է թաքցրե, որ ամեն մարդ չգտնի»։— Եվ այս անգամ ինչքան ուժ ուներ, բռնցքահատեց դուռը... լույսը վառվեց, և Վիրաբ Եգորիչը ներսից ձայն տվեց։

— Ես եմ, Ներսեն է... հըլա բա՜ց, բա՜ց...

— Ներսե՞ն,— մարդը քնաթաթախ կանգնեց շեմին։— Ի՞նչ է պատահել, ներս արի։

— Չէ, իմ ուրքն էլ քո շեմից ներս չի մտնի։ Ես եկա զիմ խոսքն ետ առնիմ ու էրթամ։

Վիրաբ Ծգորիչը զույգ ափով տրորեց դեմքը և նորից նայեց... Չէ, երազ չէր, Ներսեն ձիգ ու համառ կանգնած էր դիմացը, և կովարար ասաց.

— Հասկացա՞ր... չեմ ուզի, որ իմ սուտ խոսքի վրա առավոտ բացվի։ Գիշերով եկա զիմ խոսքն ետ առնիմ ու էրթամ։ Ով ինչ ճառեց, աստված իր հետ, բայց ես զիմ բաժակաճառն ետ է կառնիմ, զիմ գովքն ետ է կառնիմ, ախպեր, հոգի ունիմ տալու... Դու ի՞նչ հայրենասեր, ժամանակ-ժամանակ կճառիս ու մարդկանց աչքին թոզ է կփչիս...

— Դու հո գիշերվա փորձանքը չե՞ս։— Շրջկոոպի նախագահը անհանգիստ շարժվեց, և Ներսեին թվաց, թե նա ուզում է ներս գնալ։

— Կխնդրիմ քչիկ մի համբերիս,— բռնեց թևը,— գիշերով էսքան ճամփա եմ կտրե, թող արա զիմ խոսքն ասիմ սլ էրթամ։ Հա։ Դու ինչ պատվավոր ու սկզբունքային մարդ,— շարունակեց Ներսեն,— իրիկուն, կերուխումի ժամանակ, Մազմանյանի հետ ջան ու զուրբան, առավոտ՝ թուր ու թվանք։ Դու ի՞նչ ազնիվ ու արդար, քու շահն ինչ պահանջեց, դու էն կանիս։ Դու ի՞նչ լիաչք մարդ, միլիոն ունենաս, էլի քիչ կթվա...

Շրջկոոպի նախագահը այլևս չհամբերեց.

— Ի՞նչ ես գլխիցդ դուրս տալիս,— թևը կոպիտ ազատեց Ներսեիցից։

— Հանգի՞ստ, հանգի՞ստ,— խրատեց Ներսեն,— խնդրիս էլ, էլ չեմ խոսի։ Ես գնացի...

ԴԱՎՈՆ

1

Հողե հատակին բացված անկողնում պառկած է Դավոն։ Խնամքով սափրված է, հագել է բոլորովին նոր սպիտակեղեն — դեռ անցյալ տարվանից էր գնել՝ հատուկ այսօրվա համար — և, օրն է՝ հագել է ու մաքուր անկողնում մեկնվել թիկունքն ի վար։ Աչքերը կիսախուփ են, թեվերը՝ ծաղկավոր վերմակին ձգած, շապիկի փողպատը բաց է, և կրծքի ճերմակ մազերը խճճված եղյամի պես գլխահակ խորհում են։

Պատուհանից ներս փրթած լուսե մի թել եկել է Դավոյին երկինք տանելու։ Արևի փունջը շուլալվել է նրան, խաղում է կրծքի ճերմակ մա-

պերի, կոտրված ճերմակ բեղի հետ, կարմիր ու կապույտ կայծկլտում կիսախուփ աչքերի դիմաց, խուտուտ տալիս կոպերը։

Դավոն լուռ է։ Միայն կոպերն են շողիկի հետ հարցուփորձի մեջ։ Ճակատն ու աչքերը խուտուտ տվող լույսի շողը, կոպերի վրա պարս բռնած կարմիր ու կանաչ պեծերը ինչ-որ բան են հուշում՝ անցած մի օր, մի դեպք, ցանկալի մի բան... Եվ Դավոյի խլվլացող կոպերը, ճակատի առնական կնճիռները լարված որոնում են...

Համերկրացի ծերունիները շրջապատել են նրան։

Առավոտյան, երբ Դավոն պատվիրեց, որ նոր տպիտակեղենը հագցնեն, ապա և՝ անկողինը թափտեց վար առնեն-բացեն գետնին և արդուն ուղարկեց Պշուկին կանչելու՝ իր համերկրացուն, անցած կռիվների զենքի իր ընկերոջը, բոլորը հասկացան, որ Դավոն ճամփորդ է... Եվ համերկրացի ծերունիները եկան-հավաքվեցին։ Առաջինը եկավ տոհմիկ երկաթագործ Համզե Պշուկը, եկավ Գեորգ Զաուշի արնակից մքթենցի Գրիգորը, եկավ Բշե Ավեն, եկավ խրբլշոդա Մանուկը, եկավ խութա Միրոն, եկավ Տիգրանը, հիթենքցի Մոսեն... Բոլորը եկան. Դավոն էր գնում։ Մարութա վանքում խաչի փոխարեն սուրը համբուրած տալվորոցի Դավոն գնում էր։ Արևմարքի հետ Դավոյի շունչը խառնվելու էր Մարութա սարի ամպերին, և Կաբլորաքարի կատարին ճախրող ծեր արծիվը կրծքից մի փետուր էր պոկելու, ու իրիկնապահի բոցերով այրվող փետուրը թպրտալու էր Տալվորիկի երկնքում։

Համզե Պշուկը ոտքը շեմից ներս դնելու հետ կանչեց.

— Դավո՜ն, ավեր տուն, կերթա՞ս... Կերթա՞ս։— Կրկնեց Համզե Պշուկը և ծունկ ծալեց ընկերոջ մահճի մոտ։— Ջիս մենա՞կ է կթողիս, Դավո։

Դավոն գտավ, սեղմեց ընկերոջ ձեռքը, և Պշուկը զարմացավ.

— Մեջ քու երակներուն էդքան ուժ կա, Դավո, դու ո՞ւր է կերթաս։

«Կռիվ է կերթամ, Պշուկ»,— Դավոն մտքում պատասխան տվեց և հանկարծ... հիշեց... Այն, ինչ այդպես լարված որոնում էր՝ գտավ, անցած-գնացած այն պատմությունը, որը աչքերին ընկած շողքն էր հուշում, կոպերի դիմաց թռվռացող կարմիր ու կանաչ պեծերի պարը, Դավոն հիշեց... Ծիցքարի կռիվն էր... Հիշեց ու ավելի ամուր սեղմեց ընկերոջ ձեռքը։

«Կհիշի՞ս, Պշուկ, Ծիցքարի կռիվ քու մի՞ռքն է»,— կնճիռները ոզոզվեցին ժպիտով։

— Քու ճակտին ուրախություն կա, Դավո,— նկատեց Համզե Պշուկը,— դու էրգի՞ր է կերթաս։

«Գռիվ է կերթամ, Պշուկ, կգա՞ս»։— Նրան թվում էր, թե կարող է բարձրաձայնել, բայց չէր հասկանում, թե ինչու բերան չէր բացում։

— Քու սիրան ի՞նչ կուզե, Դավո,— հիթենքցի Մոսեն անժամանակ հարց տվեց։

Դավոն գժգոհ տնքաց։

«Իմ սիրտ կուզե...— հետո ուզեց շուրթ շարժել, որ Մոսեն լսի և նրան թվաց, թե, իրոք, ձայնարկու ասաց,— զիս չիանգարիս, Մոսե, թող որ...— և սեղմեց ընկերոջ ձեռքը,— կռիվ է կերթամ, Պշուկ, կգա՞ս... Եվ զարկվեց՝ գավառան է... Ցիցքարի կռիվ քու մի՞տքն է... կհիշի՞ս...»։

2

Թշնամին բազմաթիվ էր։ Նեղում էր։ Նեղում էր հատկապես ձախ թևից։ Այդ կողմ, թշնամու ձախակողմյան ճակատի թիկունքին, գյուղ կար։ Բնակիչները հավաքվել էին գյուղեզրին, պարզ երևում էր, մեծ ու փոքրով, կին, տղամարդ հավաքվել՝ աղմուկ-կանչվռտուքով խրախուսում էին ցեղակից զինվորներին։ Մեծաղե իրերի շխկշխկոց, հրավառություն, ոռնոց, գյուղեզրի տան կտուրին կանգնած մեկը երգում էր՝ զիլ ու անբնդմեջ... Թալանչի ամբոխի ոռնոցը հեչ, բայց ռազմագաշտի գրլխին ծառացող այդ գանգուր ու արնաթաթախ երգը խենթացնում էր։ Եվ իրեն այնպես էր թվում, թե հենց այդ երգն է պատճառը, որ իրենց ձախ թևը թուլացել է, ձախակողմյան տզերքը այդ երգից փախչել են ուզում... Եվ ո՞ւր է զորավար Անդրանիկը. աջի կամ կենտրոնի հաշվին, թեկուզ մի դասակով, ինչո՞ւ չի ամրապնդում ձախ թևը...

Ձախակողմից ճապաղ մի բլրակ էր զատում ճակատները և ով առաջինը գրավեր բլրակին ցցված ժայռաբեկորը, հաղթանակը նրանն էր։ Կռվի ելքը որոշելու էր հարմար դիրքով այդ Ցիցքարը. զորավար լինել պետք չէր այդքանը հասկանալու համար... Պշուկին ուսնկից կռվում էր, բայց ուշքն ու միտքը Ցիցքարն էր... Ուր է, թե ինքն ու Պշուկը հաջողացնեին գիրք բռնել այդ քարի թիկունքին։ Լիներ ու դառնային ճնճղուկ, լիներ ու դառնային օձ, լիներ ու դառնային... Եվ քաշեց Պշուկի թևից...

«Ուրիշ ելք չկա»,— համաձայնեց Պշուկը։

«Ու զարկվել չկա։— Գոռաց ինքը ու նայեց Պշուկի աչքերի մեջ։— Ով զարկվեց՝ գավառան է»։

Հետո... Քարի թիկունքից իր ու Պշուկի հրացանները որոտում էին անընդմեջ. «ով զարկվեց՝ գավառան է»,— փոխնիփոխ գոռում էին ինքն ու Պշուկը, և նշան բռնելու ժամանակ չկար։ Եվ հարկ չկար. սրտներում գալարվող վրեժը հրացանների փողերից պոռթկում — պարպվում էր

թշնամու նամարդ ճակատին, շանթում ռազմադաշտին ծորացող երգը։

Իրիկնապահին թշնամին նահանջեց և մտան գյուղ։ Բնակիչները գյուղը չէին լքել, նույնիսկ չէին թաքնվել, գիտեին, որ գյուղ մտնողը Անդրանիկ փաշի բանակն է՝ ոչ ոքի մատով չի դիպչի։ Նրանք աղ ու հացով դիմավորեցին գյուղեզրին, հենց այնտեղ, ուր առավոտից հավաքված ոռնոցով ոգևորում էին ցեղակից զինվորներին։ Դիմավորողները ծերունիներ էին, կանայք, երեխաներ և մի երիտասարդ՝ բարձրահասակ, գեղեցիկ աչքունքով ու ինքնահավան կեցվածքով։ Նա, ամբոխով շրջապատված, բոլորից մի գլուխ բարձր, քաղցր-մեղցր ժպտում էր զորավար Անդրանիկին։

«Դու ինչո՞ւ զենք չես վերցրել,— փորձեց զորավարը,— և ինչո՞ւ չես կռվում»։

«Ես զենքի մարդ չեմ, մեծ փաշա,— երիտասարդի շուրթերից ծորում էր ժպիտը,— ես միայն երգել գիտեմ»։

Սա՞... ուրեմն սա՞ էր... սա՞... կատաղությունից լալկվեց ինքը, աչքերի դիմաց թռվռացին կարմիր ու կանաչ պեծերը, խենթացած քաշեց սուրը և լսեց Անդրանիկի սաստող ձայնը՝

«Դավո»։

«Փաշա, զիմ թև մի բռնե,— գժված դարձավ զորավարին և դեմքը հազիվ նկատեց. Անդրանիկի դեմքը նշմարվեց՝ պարուրված թռվռացող կարմիր ու կանաչ պեծերով։— Իրավունք տուր, փաշա»։

«Դավո, փեղեվանկը գեղեցիկ է և երգել գիտե. պետք է ապրի»։

«Իմ տոհմի էգն ու որձը գեղեցիկ չէ՞ր, փաշա։ Ո՞ւր են։ Իմ տոհմ երգ չունե՞ր, փաշա, ո՞ւր է իմ տոհմի երգ... Իրավունք տաս-չտաս՝ կրսպանիմ...»։

3

— Կսպանիմ, փաշա,— լսվեց Դավոյի կռվարար ձայնը։ —

Ներկաները անհանգիստ նայեցին Դավոյին, և Բչե Ավեն կանչեց.

—Ելի՛, ելի, Դավո, Տալվորիկ կռի՞վ է, տնավեր, ինչի՞ ես պառկե։

Դավոյի հոնքերը դժգոհ զարկվել էին իրար, և նա ծանր շնչում էր...

4

«Կսպանիմ»,— գժվել էր ինքը և նույնիսկ չզգաց, թե ինչպես թրոցրեց երիտասարդի գլուխը և... տեղնուտեղը ականջն ընկավ զորավարի հրամանը՝

«Մահ Դավոյին»։

«Փաշա,— Պշուկը կանգնեց Անգրանիկի դիմաց,— Դավոն է»։

«Մահ Դավոյին»։

Սասունցի զինվորներից էլի միջամտողներ եղան. Մանուկը, Իսրոն, Զոլոն, Ախոն... Բայց զորավարը իր որոշման տերն էր։

«Դու քաջ զինվոր ես, Դավո,— ասաց զորավարը,— ես քեզ չեմ մոռանա։ Բայց դու ստիպեցիր...— և աչքերը լցվեցին։— Ընդունիր վճիռը, Դավո»։

«Չեմ ընդունի, փաշա, քու վճիռը սխալ է»։

«Զինաթափ անել,— կատաղեց զորավարը,— կապկպել՝ գցել գետը»։— Եվ ընտրեց չորս զինվոր։

Իրիկնապահ էր։ Պատժիչ զինվորների առաջն ընկած քայլում էր դեպի գետը՝ Արածանին։ Գնում էր լուռ, գլխահակ։ Եվ այնքան փափուկ ու դուրեկան էր դարնան իրիկնապահը, փորփոշտ գետինը... Արեգակի իրիկնապահի շողերը կոպերին ու ճակատի վրա գնում էր. իրիկնապահի շողերը ձգում տանում էին դեպի արևմուտք... Լիներ ու այդպես գլուխկախ քայլե՛ր, այդպես լուռ ու անշեղ գնար ու հասներ Մուշ ու բարձրանար Կեպին, ելներ Ծիրնկատարի գագաթը ու բերան բացեր,— էհեհեհե՜եեե, Տալվորիկ, ես եկա...

5

Էհեհեհե՜եե, Տալվորիկ, ես եկա,— Դավոն նորից շուրթերը շարժեց. հուշերը ձայն առան։ Դավոյի ձայնը լսվեց հեռվից, բեկբեկուն, երգի արձագանքի պես։ Համերկրացիները նայեցին միմյանց. Դավոն արդեն գնա՞ւմ է... Գնում է և իր վերջին խոսքն ասաց։

— Էհեհեհե՜եե, Տալվորիկ, Դավոն եկավ,— լցված ու երգեցիկ կանչեց մքթենցի Գրիգորը և սկսեց երգել։

Գլգալեն շուրն էր իջնում
Մշո վերին սարերեն...

Երգը Դավոյի սրտին դուր եկավ. կնճիռները ժպտացին... Ուրեմն Դավոն չի գնացել, կա...

— Դավո՜ո,— կանչեց Համզե Պշուկը,— թե էրգիր է կերթաս, հետ էրար էրթանք, մինակ ո՞ւր է կերթաս, տնավեր։

«Մեջ ելման գետի քցվելու է կերթամ, Պշուկ, փաշի հրամանն է։ Կհիշի՞ս...»։— Դավոյի կնճիռներն ու կիսախուփ կոպերը խլվլոցով շոշափեցին արևի շողքը...

Այդպես իրիկնապահի արևը ճակատին ու աչքերի մեջ՝ քայլում էր գեպի արևմուտք։ Լիներ ու այդպես լուռ ու անշեղ քայլեր ու հասներ Մուշ ու ելներ Կեպին ու...

Բայց Արածանիի ափին կանգ առան։ Պատժիչ զինվորները խուսափուկ նայեցին իրեն։ Նրանք խուսափում էին նաև միմյանց աչքերին նայել, և զինվորներից մեկը վռազ ծխատուփը հանեց, ու նստեցին գետափին։

Գետը ելման գնում էր։ Առանց կապկպելու էլ այդ կատաղի ալիքներից չէր պրծնի. կքշվեր-կմիանար նրանց, որ, ասում են, հավաքվելխցանել են գետի հունը, և գետը ափերից դուրս է եկել, հեղեղել Արաբբոստանի անապատը...

Եվ մահապատժի հրամանի տակ նստած, ահ ու դողով նայում էր գետի պղտոր ու հուզված ալիքներին։ Չէ, ահուդողը մահապատժի հետ կապ չուներ։ Դավոն մեռնելուց չէր վախենում. Դավոյի ահն ու մահը վաղուց էր անցել. այն օրը, երբ Անդոկի գլխին, զինվորական խորհրդի ժամանակ, Փեթարա Ախոն առաջարկեց. եթե կա ու չկա՝ պատրուաբյուն է, նահանջ է, լավ է Անդոկի գլխին խարույկ սարքել, մեծ ու փոքրով լցվել խարույկի մեջ, մեծ ու փոքրով այրվել, Անդոկի գլխին ծուխ դառնալ... Եվ ինքը Ախոյի հետ համաձայն էր... Ա՜յ, էդ օրից տալվորիկցի Դավոյի ահն ու մահը անցել էր... Բայց Արածանիի ափին վախից փշշմրտել էր, գետի ալիքներին սարսուռով էր նայում — ուր որ է հայոց Արածանին չանչ արած մի ձեռք ցույց կտար իրեն, տալվորիկցի Դավոյին, սահմռկած մի աչք ցույց կտար իրեն, շեղլիկ մազերով մի աղջնակ հշպրտեր տալվորիկցի Դավոյի գիրկը...

Եվ խայթված վեր թռավ։

«Ինչի՞ եք նստե,— գոռաց, և պատժիչ զինվորները խառնված ոտքի ելան։— Բանակն հիմի կերթա, ինչի՞ կուշանաք»։

Զինվորները շփոթված նայեցին միմյանց, և մեկը արձակեց գետին։

«Դավո, ներող ելնա, բայց... փաշի հրամանն էր։

«Փաշի հրամանը սխալ է։— Պատասխանեց զինվորին։— Ու թե էդ հրամանը կատարել կուզեք, շուրի ձեզնից մեկ-երկուս չտանեմ իմ հետ, չեմ էրթա»։— Եվ քշեց զինվորների վրա, գիրկն առավ երկուսին ու քաշեց դեպի գետը։

Հետո այնպես եղավ, որ խճճված մեկնվել էին գետափին շատ մոտիկ, ելման ալիքների զարհուրելի շնչի տակ։

«Դավո,— հանքակտուր խոսեց զինվորներից մեկը,— էսպես պայման կապենք, զորավարին կզեկուցենք, թե՝ հրամանը կատարված է, իսկ դու զորավարի աչքին չերևաս»։

Եվ ոտքի ելան։ Զինվորները գնացին, իսկ ինքը մնաց գետափին, երեսն ի վար մեկնված՝ դեմքը հպած գարնանաբույր հողին, աչքերը փակ։ Արևը արդեն քաշվել էր, մթնշաղը դաշտ ու սարերին փափուկ թախիծ էր հյուսում, Արածանին գնալով մթնում էր — ինքը պառկած էր աչքերը փակ, ոտքերը դեպի գետը, բայց զգում էր, որ գետը մթնում է — և ալիքները ավելի հուզված էին, ավելի սաքսուազգու, գետի ահալի շունչը սողում էր ոգնաշարն ի վեր, դեպի ծոծրակը, գետի շունչը թունաբուրկվել էր ոտքերին ու ձգում էր... Ծառս ելավ և նայեց զինվորների ետևից։ Նրանք արագ քայլերով հեռանում էին, քիչ հետո կհասնեն բանակին... կմիանան բանակին և կշարժվեն դեպի արևմուտք... դեպի արևմուտք...

«Ով զարկվի՝ դավաճան է»,— գոռաց զինվորներին։ Էլի գոռաց...

7

— Ով զարկվի՝ դավաճան է։ — Դավոն ՝ներսն բացեց, ձայնը լսվեց քարանձավից։ Համզե Պշունկը, որ ծնկած էր ընկերոջ մահճի մոտ, մի պահ շփոթվեց. նայեց շուրջբոլորը, հետո՝ Դավոյին։ Դավոյի ճակատին կնճիռները խառնվել էին իրար։

8

«Ով զարկվի՝ դավաճան է»,— գետափին կանգնած գոռում էր, խոսքը որպես հայհոյանք շպրտում զինվորների ետևից և ուրիշ ասելիք չէր գտնում։

Հետո երկու օր ու գիշեր թափառեց բանակի հետքով։ Հոգվից մերժված—վտարված շուն էր՝ քարշ էր գալիս հոտի ետևից և շան պես հսկում բանակի թիկունքը։ Բանակը դանդաղ, բայց առաջ էր խաղում, շարժվում էր դեպի արևմուտք, դեպի հարավ-արևմուտք։ Եվ ինքը, արևվածագից արևմարք, լարված հետևում էր զորքի գասավորությանը, փորձում հականալ զորավարի հրահանգներն ու հրամանները, գուշակել կռվի ելքը։ Իրեն թվում էր, եթե ուշքն ու միտքը շեղի ուրիշ բաների վրա, բանակը, որի պահապան շունն ինքն էր, կարող էր հանկարծ նահանջել։

Իսկ երրորդ օրվա առավոտյան ճակատների գասավորությունը իրեն դուր չեկավ. թշնամին գիշերը ետ էր քաշվել — ամրացել աղեղնաձև մի

բլրակի վրա։ Բավականին հարմար դիրք։ Այդպիսի դեպքում Անդրանիկը փորձում էր պարզել՝ թշնամու թիկունքը լի՞քն է, թե՞ դատարկ...

Եվ գնաց կատարելու զորավար Անդրանիկի հրամանը։ Սողաց թշնամու թիկունքը և վերադարձավ իրիկնապահին։ Վերադարձավ թանկ ավարով՝ թուր ու թվանքով և սանձակոտոր մի ձիով։ Հիմա արդեն լքված չուն չէր, այլ ծանր հետախուզությունից հաջողակ վերադարձած զինվոր։

Իրիկնապահին ճակատների դիրքն ու դասավորությունը կարծես թե նույնն էր, ինչ առավոտյան, սակայն ինքը կրակոցներից հասկացավ յուրայինների թուլությունը. կրակում էին ընդհատ։ Դա նշան էր, որ զորավարը փամփուշտները խնայելու հրաման է տվել։

«Թե էդպես է՝ սրամարտ է պետք, փաշա»։— Եվ թռավ դեպի բանակը։

Թուրը մերկացրած՝ սուրաց։ Քշեց զորքի մեջ, անցավ զորավար Անդրանիկի կշտով և ընթացքում գոռաց.

«Թշնամու թիկունքը դատարկ է, փաշա... Դատարկ է»։

«Դավոն է։— Ականջն ընկավ զորավարի խնդուն ձայնը։— Դավո՜ն»։— Կանչեց զորավարը, և դա հնչեց հրահանգի պես. զորավարը, կարծես սրամարտի հրաման տվեց։ Ընթացքում աչք դիպցրեց ուսն ի ետ... Օ՜, Մարաթուկի Տիրամայր... արևի տակ վառվռում էին սրերը... Գալիս էին...

«Ով զարկվի՝ դավաճան է»,— գոռաց ուսն ի ետ և նորից մտավ ձիու ականջը։ Գնդակները վժժում էին գլխավերևում, ականջի տակ, բայց ինքը համոզված էր, որ չի զարկվելու. Դավոն այդպիսի դավաճանություն չի անի, տալվորիկցի Դավոն դեռ վրեժ ունի լուծելու։ Եվ թուրը ճակատին պահած՝ սուրում էր դեպի թշնամին, դեպի արևմուտք, դեպի հեռու լեռներին փշրված արևը։

9

Դավոն քամեց ընկերոջ ձեռքը, և Պշուկը նորից զարմացավ.

— Դավո, մեջ քու երակներուն էդքան ուժ կա, տղա, դու ո՞ւր է կերթաս։

«Կռիվ է կերթամ, Պշուկ, կհիշի՞ս...»։

— Ըբը քու սիրտն ի՞նչ կուզե, Դավո։— Հիթենքցի Մոսեն էլի իրենն ասաց։

— Ըբը քու սիրտն ի՞նչ կուզե, Դավո,— նեղսրտած հեգնեց խրբբլջոզա Մանուկը։— Դավոյի սիրտ տանձ ու խնձոր կուզե, Դավոյի սիրտ մեղր ու կարագ կուզե, Դավոյի սիրտ շարբաթ է կուզե, Բաղդադու խուր-

մա է կուզե, Դավոյի սիրտ հնդու նարինջ է կուզե, Մոսե, Դավոյի սիրտ քանց քու գլուխ ջոջ ձմերուկ է կուզե...

— Հրիի՜ի, ձմերուկ,— երգեցիկ կանչեց հիթենքցի Մոսեն։— Անտեր էրեվան, անտեր շուկա, ձմերո՜ւկ...

Դավոն տնքաց։ Թեքեց գլուխը, ուզեց թողնել Պչուկի ձեռքը, բայց ավելի ամուր կառչեց, ապա դեմքը նորից շտկեց և արևի շողքն առավ աչքերի վրա։

— Անտեր ձմերուկ,— հոգոց հանեց հիթենքցի Մոսեն և հուզվեց։— Իմ աչքերն ելնեն, Դավո, ու էն օր քեզ էդպես չտեսնեն։

10

Ամռան միջօրեի արևի տակ փոշու մեջ թավալվում էր շուկան՝ գզգզված մի աղբարկղ, շուրջբոլորը վխտացող որբերով։ Որբերը՝ թափառիկ շների նման լմկված, գողունի ու վախվորուկ հայացքներով, բայց միմյանց դեմ ատամ կրճտացնող ու անողոք։ Ձմերուկի կլեպ էին խլխլում իրարից, խաղողի չանչ, դեպի իրենց շպրտվող մի հատիկ կարիզի համար թափվում գլուխ-գլխի, գզվռտվում, թավալվում փոշու մեջ և փոշու մեջ կորած կորիզի համար սուր եղունգներով բզկտում իրար ու, փոշեթաթախ, արնլվիկ դեմք ու կրծքով, դառնում — նայում էին շուկայի կողմ։

Եվ այս բզկտված, անգույն ու անդեմք որբերի մեջ Դավոն որոնում էր տոհմակից, բարեկամ, ծանոթ... Անհույս էր, բայց փնտրում էր։ Եվ որբերը, այդ թափառիկ, վախվորուկ լակոտները, չգիտես ինչպես, հասկացան, թե մազ ու մուզի մեջ կորած այդ մարդուց պետք չէ վախենալ — չնայած սա իրենց տեսած մարդկանցից ամենավայրենի, ամենաահռելու դեմքն ուներ — և հավաքվեցին նրա շուրջբոլորը։ Ի՞նչ էին ուզում նրանից, չէին իմանում, բայց ճանճերի պես պարս կապեցին և սկսեցին զզզալ շուրջբոլորը։

Եվ Դավոն քշեց շուկայի վրա... Դավոն քշեց շուկայի վրա, ետևից որբերի գզգզված թափորը։ Շուկան ահից դողաց ու քար կտրեց։ Շուկայում ով կար ահով ու շնչահատ Դավոյին էր նայում — ո՞վ է, ո՞ր աշխարհից հայտնվեց՝ այծի մազից գործած շալվարով, գոտին մազե երկար փաթթոցով պնդած, մերկ թիկունքին քաշած այծենիով, բաց կրծքից ժայթքած մազերով, այտ ու երես մազի մեջ կորած, ո՞վ է, ո՞ր աշխարհից հայտնվեց, արնմխած աչքերով, կատաղի հայացքով այդ վայրենին։

Իսկ Դավոն ոչ մեկի չէր նայում, ոչինչ չէր տեսնում, շուկան տրո-

բելով գնում էր՝ շուլալված սովալլուկ որբերով։ «Գերեք... գերեք... գերեք»,— վայրենին տնքում էր, թե խոսում, ոչ մեկը չէր հասկանում և ոչ էլ՝ որբերը, նրանք գիտեին միայն, որ դա շուկայի վրա հարձակվելու խրախույս է։ Եվ աջ ու ձախ ալիք էին տալիս, չանթում ինչ պատահի՝ կլլում, լցնում ծոցները, գրկում և շտապ խույս տալիս, շուլալվում շուկայի տերերի հերն անիծած մարդուն։ «Գերե՛ք... գերե՛ք... գերե՛ք»,— տնքում էր Դավոն և տրորում շուկան։ Եվ մեկ էլ թիկունքից վնգստաց լսեց ու շուռ եկավ։ Ինը-տասը տարեկան մի աղջիկ, ձմերուկը ամուր սեղմած կրծքին, շան լակոտի պես վնգստում ու թավալվում էր, բայց ձմերուկը բաց չէր թողնում։ Երբ Դավոն շուռ եկավ, ձմերուկի տերը ծալեկեց, նա փախչում էր ձայնը գլուխը գցած՝ օգնություն աղաղակելով։ Դավոն չգնաց նրա ետևից. մոտեցավ, ծունկ ծալեց ձմերուկով լցված ջվալի տակ, և շուկայի չոված աչքի դիմաց ջվալը խլվլաց ու շարժվեց տեղից։ Քիչ առաջ, յոթը-ութը տղամարդով, ջվալը սայլից հազիվհազ վար բերեցին — գետ բերանն էլ չեն բացել — հիմա՝ այդ վայրենին շալակն առած տանում էր։ Բեռի տակից Դավոն չէր երևում. ո՛չ նախամարդու այծենին կար, ո՛չ խոնված բաշն էր երևում, ո՛չ մազակալած գեմքը, ո՛չ զարդանդուն աչք ու հայացք... Մնում էր միայն մի ուժեղ բեռնակիր։ Ձմերուկի շարժվող ջվալը, որ, տես, շուկայից դուրս եկավ ու գնում է, և մի ուժեղ բեռնակիր։

Եվ ամբոխը վրա տվեց ու տեղնուտեղը տապալեց բեռնակրին, իր բեռի հետ։

Եվ սարսափի կախարդանքից ազատված ամբոխը տրորում էր Դավոյին։ Դավոն ոչ դիմադրում էր, ոչ շարժվում, երեսի վրա փռված էր փոշոտ փողոցում, իսկ խենթացած ամբոխը տրորում էր նրան։ Շուկայի գժված տերերը ոտքի տակ էին առել սեփական վախը, որ սպանեն, ետ գառնան՝ շուկայից քշեն թափառող շներին։

Որբերը այս ու այն կողմերից ծիկրակում էին, ծղրտում, որբերը,— լի բերաններով, շուկայի բարիքներից խեղդվող կոկորդներով — վնգստում էին, ու Դավոն միայն նրանց ձայնն էր լսում և, հարձագանք՝ քունքերը զարկում էին. «Գերե՛ք... գերե՛ք... գերե՛ք...»։

Շուկայի տերերը, իրար հրմշտելով, Դավոյին ոտքի տակ էին առել՝ տրորում էին, տրորում էին, տրորում էին... Իսկ Դավոն անշարժ ու լուռ էր։

Հետո մեկը ուշքի եկավ, «հերիք է»,— ասավ, և քիչ առաջվա իրենց ահն ու սարսափը փողոց շպրտած, թեթևացած վերադարձան շուկա, իրենց բանին։

Փողոցում մնաց միայն Դավոն, երեսի վրա փռված։ Անցորդները ուշք չէին դարձնում նրան, ավելի ճիշտ՝ չէին նկատում — այդ օր ու ժա-

մանակի, փոշու մեջ թպրտացող գավառական այդ քաղաքի սովորական պատկերը — և Դավոյին չէին նկատում։ Իսկ որբերը խառնվել էին իրար, միայն նրանք գիտեին, թե ով է փողոցում ընկած՝ քիչ առաջվա իրենց ազատությունը, իրենց համարձակությունը, ծոցերն ու կոկորդները հաճելիորեն խուտուտ տվող ամենաանուշ բանը... այնտեղ՝ փոշու մեջ ընկած։ Եվ այս ու այն կողմից ձեն-ձենոց ողբում էին։ Հետո, չգիտես ինչպես, հասկացան, որ իրենց՝ որբերի լացնուկոծը վտանգավոր է, իրենց աղմկել չի կարելի ու սսկվեցին, մեկեն ու միանգամից հասկացան, որ շուկային այդ օրը մոտենալը վտանգավոր է, և շաղ եկան քաղաքում։

Իսկ Դավոն շարժվելու, ելնելու փորձ չէր անում. չէր ուզում։ Հողը ծծում էր ոսկորների տնքոցը, բարկ արևը սպեղանի էր մաղում ջնջված թիկունքին, և այդպես հաճելի էր։ Ինչո՞ւ աչք բացել, ո՞ւմ տեսնել, ի՞նչ տեսնել, ելնել ո՞ւր գնալ... ավելի լավ է մեռնել այդ տաք, սիրտ ու ոսկորների ցավը ներշնչող փոշու մեջ... Եթե վերջը այսպես պետք է լինի՝ ուրաց բոլոր կռիվների վերջը՝ պարտություն, ճիշտն այն կլիներ, որ Դավոն վերջին գնդակը մեխեր իր կրծքում և ընկներ այնտեղ՝ Անդոկի վրա, Սև սարում, Ծովասարի փեշին, Կարլորաքարում, Տալվորիկ գետի անուշ ջրերի մեջ... Հենց՝ այդպես։ Եվ այդպես էր պետք՝ վերջին գնդակը մեխեր կրծքում կամ ճակատը դեմ աներ թշնամու գնդակին և ընկներ այնտեղ։ Անցավ... Ու մեղավորը ինքն է, տալվորիկցի Դավոն է, որ սեփական կամք ու ձեռքով կորցրեց մեռնելու ամենաճիշտ պահն ու տեղը։ Եվ արժե, որ հիմա շանսատակ լինի այս փոշոտ փողոցում։ Եվ նա շարժվելու, ելնելու փորձ չէր անում։ Չէր ուզում։

Հետո հեռվից, կարծես երազում, լսեց իր անունը՝ Դավո...—

II

— Իմ աչքերն ելնեն, Դավո, որ էն օր քեզ էդպես չտեսնեին,— հուզվեց հիթենքցի Մոսեն։

Դավոյի շուրջբոլորը հավաքված համերկրացի ծերունիները գիտեին այս պատմությունը, բայց Մոսեն փորձեց պատմել, սակայն Համզե Պշուկը հերսոտեց։

— Բավ է էվել-պակաս խոսիս, Դավոն էդ մա՞ղն է ու դու է՞դ հիշեցիր։ Դավոյի վերջին շունչը մի հարամե,— նեղացավ Համզե Պշուկը և դարձավ մքթենքցի Գրիգորին։— Դավոյի համար երգ մի երգե։

Դավոյի կնճիռների մեջ նորից թրթռաց ժպիտը։ Հետո Պշուկը զգաց, որ Դավոն ձգում է իր ձեռքը և հակվեց նրա կրծքին։

— Պշուկ...

Ձայնը քարանձավից էր գալիս։ Պչուկին թվաց, թե Կաբլորաքարի քարանձավից լսեց Դավոյի ձայնը։

— Ձիմ ձեռքեր... չխաչիք,— ասաց Դավոն։— Ձիմ ձեռքեր թողեք... թող բաց մնան...

Դավոն գնում էր արդեն...

Պչուկը հազիվհազ զգաց, որ Դավոն իր ձեռքը սեղմում է։ Բայց կոպերը դեռ շոշափում էին արևը։ Պատուհանից ներս ընկած լուսե թելը դեպի երկինք էր ձգում Դավոյին։

Եվ Դավոն գնում էր։ Ձիու ականջը մտած, մերկացած սուրը ճակատին, Դավոն սուրում էր դեպի բլրակը՝ թշնամու դիրքերը... Իրիկնապահի արևը բոցկլտում էր մերկ սրին, համբուրում ճակատը, և աչքերի դիմաց կայծկլտացող կարմիր ու կանաչ պեծեր, Դավոն սուրում էր դեպի արևմուտք, դեպի հեռու լեռների վրա փշրված արևը։

ԾՈՎԱՍԱՐԻ ՕՀԱՆԸ

1

Օհանը աչքը կպցրել էր, թե չէ, լսեց կանչը՝

— Օհա՜ն...

Նա աչքերը բացեց և սարսռաց։

Նստեց անկողնում և մթան մեջ խաչակնքեց։

— Իմ հոր ձենն էր,— ակամա պատուհանից նայեց դուրս,— իմ օղորմածիկ հոր ձենն էր,— շշկլված հայացքը պտտեց սենյակում։

Թոռները խաղաղ քնած էին։ Նա որոնեց հոր անվանակիր թոռանը, նշմարեց, իջավ մահճակալից, չիմացավ ինչու, ուզեց արթնացնել նրան՝ հոր անվանակիր թոռանը, բայց խնայեց և ափլփելով գնաց ճաշասենյակ, առնցավ մյուս ննջարանը, ուր որդին և հարսն էին քնած։ Որդին առանց կանչի արթնացավ։ Հայրը, ոտից գլուխ ճերմակ՝ ճերմակ բեղ ու մազերով, ճերմակ ներքնաշորերով, անորոշ ահով էր լցրել սենյակը։

— Դու ձեն լսեցի՞ր,— հարց տվեց հայրը։

— Ի՞նչ ձեն, բաբո։

— Իմ հոր ձեն քու ականջ չընկա՞վ։

Որդին հասկացավ, որ հոր հետ անսովոր մի բան է կատարվում։ Եվ պահի մեջ զգաց՝ եկել է ժամանակը, որ հորը հայրություն անի։ Ու հավաքեց իրեն։

— Բարո, քո հերը կա՞, որ ձենը լսենք։ Դու մոռացե՞լ ես...

— Մոռացե՞լ ես։— Հայրը բարի քմծիծաղեց, ինչպե՞ս թե, ուրեմն Օհանը չգիտե՞, որ հայրը չկա։ Ախր, հորը Օհանի աչքի առջև են սպանել, ինքը քանի՞ անգամ է պատմել՝ սպանվեց Սովասարի փեշին, իր աչքի դիմաց։ Դա մոռանալո՞ւ բան է։ Այն ժամանակ ինքը տասնհինգ-տասնվեց տարեկան էր և ամեն ինչ լավ է հիշում։ Իսկ որ հիմա, մի քիչ առաջ, Օհանը իր հոր ձայնը լսեց, դա հաստատ ու հաստատ է։ Որդին կարող է չհավատալ, հարսը (որ արթնացել ու շիվար մեկ սկեսրայրին էր նայում, մեկ ամուսնուն) կարող է չհավատալ, բայց Օհանը իր ականջներին հավատում է։

— Էս դարնան գիշեր վկա,— երդվեց Օհանը,— իմ հոր ձենն էր։

Որդին ու հարսը տարակուսած նայեցին իրար։ Հետո հարսը ջուր բերեց և, չնայած Օհանը ծարավ չէր, տեղի տվեց հորդորանքներին՝ խմեց մի բաժակ ջուր և որդու ու հարսի ուղեկցությամբ գնաց պառկելու։

«Մտհա՞ն ես արե... Տղի խելք, մարդն իր հոր սպանվել կմոռնա՞»։

Օհանը այսօրվա պես է հիշում՝ հայրը ծոցից հանեց դանակը։ Ոսկրե կոթով, լայնշեղբ դանակ էր, հայրը նոր էր ձեռք գցել և պահում էր ծոցում։

«Թե մեռնել է, էլ խոխոալն ի՞նչ է»։— Հայրը հայհոյեց և բացեց դանակը։ Առավոտ էր. ասկյարները նորից խումբ-խումբ «սանրում» էին Սովասարի փեշերը։ «Կիրակո՞ս... Էլո՞... Սերո՞բ... Ռեհա՞ն...— ասկյարները հայերեն կանչում էին,— արե՞ք... արե՞ք,— որպեսզի թփուտ ու մացառների, քարերի մեջ թաքնվածները սխալվեն՝ խլվլան, մատնեն իրենց տեղը։ Երեք ասկյար գալիս էին հենց իրենց թաքստոց-թփուտների վրա և մեկը կանչեց,— Օհա՞ն...»։

«Ձեր արնախում...— հայհոյեց հայրը։— Գերդաստանից պուտ մի արուն է մնացե, է՞ն կուզեք»։— Եվ որոշեց հարձակվել հենց այն ասկյարի վրա, ով կանչեց՝ Օհան։ Հետո հայրը կարգադրեց, որ Օհանը տեղից չշարժվի, ինքը կզբաղեցնի մարդասպաններին, իսկ Օհանը, առիթից օգտվելով՝ փրկության ճար գտնի։ Եվ կարգադրեց խիստ... Եվ հոր վերջին համբույրը հերսոտ էր, թվաց՝ ոչ թե համբուրեց, այլ ապտակեց... Մարդասպանները մոտենում էին։ Եվ երբ զենքերը ուսներից վար առան. «սանրելու» թփուտը, հայրը, բաց դանակը ձեռքին, ծփաց... Ամեն ինչ կատարվեց ակնթարթում... Նա, որ կանչում էր՝ Օհան, տապալվեց, իսկ հայրը վազեց թփուտների հակառակ ուղղությամբ։ Եվ վազում էր զիգզագ։ Ասկյարները թիկունքից համազարկ տվեցին... Հայրը ծառս եղավ... Ջարկվեց... Ջարկված էր, բայց չէր ընկնում, ծալմվելով գնում էր. մար-

գասպաններին քաշում իր ետևից... Հետո ընկավ, փռվեց երեսի վրա, բայց ճիգով հավաքվեց և սկսեց գլորվել լանջն ի վար։

Ասկյարները վազեցին հոր ետևից։ Հետո մեկը ետ դարձավ՝ խուզարկեց ընկած ընկերոջ գրպանները, հանեց փոքրիկ մի կապոց, շտապ ծանր ու թեթև արեց, կապոցից ոսկե մի ատամ ընկավ, ասկյարը վերցրեց, թքեց ատամի վրա, ապա կապոցի հետ հարմար տեղավորեց իր գրպանում, առավ ընկածի հրացանը և նորից վազեց։

Հայրը գլորվում էր Սովասարի փեշն ի վար։ Ասկյարները հայհոյում ու կրակում էին, իսկ հայրը գլորվում էր, և կարծես, գնալով թափ էր առնում։ Թվում էր, թե հայրը սարի կանաչ ու փափուկ փեշին խաղ էր անում՝ գլորվում, գլուխկոնծի տալիս... Եվ մի պահ այնքան հաճելի թվաց, կանաչների վրա գլորվելը այնքան ցանկալի, որ Օհանը ուզեց գլոր-մլոր իջնել հոր հետքով, մանուկ օրերի պես խաղ անել Սովասարի լանջին։

«Ինչ անո՞ւշ կգլորվեր իմ հեր,— մտածեց Օհանը։— Թող որ մեռնելուց առաջ իմ հեր, քանց էրեխա, գլդորիկ խաղաց Սովասարի անուշ փեշին... Ինչ անո՞ւշ կգլորվեր իմ հեր,— կրկնեց Օհանը և ցանկացավ։— Բան չէ, հերիկ...— լիներ և Օհանը գլդորիկ խաղար Սովասարի լանջին, գլուխկոնծի տար, գլոր-մլոր իջներ, բարձրանար, գլոր-մլոր իջներ, ելներ... արևածագից մինչև արևայատոց խաղ աներ Սովասարի անուշ փեշին... Գլդորվեր, ելներ...

Եվ Օհանը սկսեց երգել։

Կանաչ վարոց հոտատներ,
Հոյ, Նուբար,
Նախշուն գոգնոց ազչիկներ,
Հոյ, Նուբար,
Գարնան կելնեն Սովասար,
Հոյ, Նուբար,
Հոյ, Նուբար, Նուբար, Նուբար,
Հոյ, Նուբար,
Սասնա սարեր քարուքար,
Հոյ, Նուբար...

Որդին ու հարսը տազնապով ներս մտան։ Որդին վառեց լույսը և կանգնեց հոր մոտ։

— Խաչո,— Օհանը հուզված նայեց որդուն,— իմ կյանքի մեջ էս երգն հազար անգամ լսած կամ, հազար անգամ երգած կամ, բայց նորո՞ր հասկացա, թե ինչքան ճիշտ ու ճիշտ է։ Օղորմի էս երգն ստեղծողի հոր... ճիշտ ու ճիշտ էդպես էր, Խաչո։ Գարնան բացվելուն պես...—

Օհանը ուզեց պատմել Սովասարի մասին։ Բայց երկմտեց։— Պատմի՞մ, թե՞ երգիմ։

— Քնիր,— խնդրեց որդին,— կեսգիշերն անց է, բաբո, քնիր։

Օհանը երեխայի պես տարուբերեց գլուխը։

— Իմ երգելն է կգա,— ասաց,— քնել կա ու կա, գառ։ Մեծ քուն կա։— Եվ մեկեն ու կտրուկ դարձավ պատուհանի կողմն։— Յա՜ա,— որքան շունչը հերիքում էր ձգեց՝ շշկլված, զարմանքով և կարևոր մի բան հասկացած տոնով։— Աստվածն իմ խելքի տուն շինեմ,— հայացքը աստղոտ երկնքին, ասաց Օհանը։— Իմ հոր ձենը նշան էր, թե իմ մահը մոտ է... իմ հերն ու Սովասար կկանչին դիս, խաչ։— Եվ դարձավ որդուն ու հարսին։— Առավոտ կերթամ,— հաստատ ասաց Օհանը և շեշտեց,— առավոտ ճամփորդ եմ։ Դե, քնեք, որ առավոտ շուտ էլնեք, ճանապարհեք դիս։ Ես էլ քնիմ։

Օհանը վերմակը քաշեց գլխին և քիչ անց արդեն հանգիստ քնած էր։

Իսկ արևից առաջ ոտքի վրա էր՝ արտակարգ աշխույժ ու գործնական։ Մի հարմար ձեռնափայտ ընտրեց, հնամաշ խուրջինը մարագի պուճախից բերեց-հանձնեց հարսին և պատվիրեց, որ տասնհինգ-քսան օրվա պաշար դնի՝ հաց և պանիր, ուրիշ ոչինչ պետք չէ։ Հա, նաև՝ մի քիչ աղ։ Էրգրի բանջարները, Սովասարի խավրծիլը՝ աղի հետ, անպատմելի բան է։

— Էսօր մնա,— փորձեց հարսը,— հաց թխեմ, քո շորերը մաքրեմ, էգուց կգնաս։

— Չէ,— կտրուկ մերժեց Օհանը,— իմ շորեր մաքուր են, հացն էլ ինչքան կա՝ բավ է։ Ջիս ճամփից ետ մի ձգե, հարսնուկ։

— Բաբո,— որդին, որ աստիճաններին նստած մոայլ ծխում էր, ոտքի ելավ,— էդ ի՞նչ ես մտցրել գլուխդ, ո՞ւր ես գնում, սահման կա, սահմանապահ կա։

Օհանը սրտնեղեց. պատահում է, որ որդին երեխայի պես է մտածում — սահման կա, սահմանապահ կա — կարծես ինքը, Օհանը, չի իմանում։ Օհանը հո փախստական չէ, հո գողեգող չի անցնելու սահմանը. շիփշիտակ կգնա հենց սահմանապահների հրամանատարի մոտ. կբացատրի, կպարզի իր միտքը, և հենց հրամանատարը ուղեկից կլինի՝ կբռնի Օհանի թևից, Արաքսը կանցկացնի այն կողմ, թուրքին կհրամայի՝ թող էս հալևորը գնա Սովասարը տեսնի ու հետ դա։

— Թե ռուսն հրամայեց, ասկյարն ո՞վ է, որ հրամանը չկատարի, աղա։

Եվ թող որդին հաստատ իմանա, որ Օհանը ճամփից ետ կանգնողը

չէ, ճանապարհի կեսից ետ դարձողը չէ։ Իսկ հիմա՝ շտապ կբարձրանա գերեզմանոց. պառավին լուր տալու, որ երգիր է գնում և մինչև ետ գալը, խուրջինը պատրաստ լինի։

2

Գերեզմանոցը գյուղից դուրս, բարձունքի վրա էր։ Օհանը կայտառ ու փութավուն ելավ դարը, բարձրաձայն հանգստություն մաղթեց բոլոր ննջեցյալներին, ապա կանգնեց կնոջ շիրմաքարի մոտ։

— Պառավ, երգիր կերթամ,— շտապեց հայտնել,— կղարմանա՞ս...

Գիշերը, ախր, հայրը ձայն տվեց կանչեց, և Օհանը այսօր ճամփաբդ է։ Բան է, թե տերը կամեցավ, Օհանը հենց այնտեղ Սովասարի անուշ փեշին կընդունի իր հավերժ քունը, թե՝չէ, մի քանի օրման կգա սար ու ձորերում, բանջար կուտի, աղբյուրներից ջուր կխմի, ծաղիկ կհավաքի, Սովասարի փեշերին գլդորիկ կխաղա, գլոր-մլոր կիշնի սարի կանաչ ու փափուկ լանջով, կբարձրանա, գլոր-մլոր կիշնի, կբարձրանա մինչև Սովասարի կատարի լճակը...

— Կհիշի՞ս, պառավ, գարնան բացվելուն պես...

Եվ նա էլի մտաբերեց երգը։

— Օղորմի էդ երգն ստեղծողի հոր... էդ երգն ինչքա՞ն Ճիշտ է, պառավ, անցած դիշեր նոր-նո՞ր հասկացա։

Եվ պատմելու փոխարեն երգեց.

Կանաչ վարոց հոտազներ,
Հոյ, Նուբար,
Նախշուն գոգնոց աղջիկներ,
Հոյ, Նուբար,
Գարնան կելնեն Սովասար...

— Ուշ է,— Օհանը աչք դիպցրեց արևին,— էրթամ-գամ, նոր պատմիմ... Թե գամ՝ քեզ համար ի՞նչ բերիմ։ Ի՞նչ բանջար՝ խավրծի՞լ, նուխի՞կ... ի՞նչ ծաղիկ բերիմ... Սովասարի գլխի լճակից՝ ջո՞ւր...— Հետո դարձավ ձայն տվեց իր համերկրացի ննջեցյալներին։— էրո՞, Մանո՞ւկ, Մուրդի՞կ... էրգիր է կերթամ, տղեք, ձեզ համար Սովասարի հոգ կբերիմ...

3

Երբ Օհանը գյուղ իջավ, դռանը ավտոմեքենա էր կանգնած։ Նա հեռվից նկատեց ավտոն և ուրախացավ.

«Հաջողության նշան է։ Մինչև շրջկենտրոն ավտոյով կերթամ»։

— Խաչո,— հեռվից ձայն տվեց,— ավտոն չթողիս էրթա, մինչև՝ հասնիմ։

Հարևանի դռանը կանայք գլուխ-գլխի հավաքված նայում էին Օհանին, անծանոթ մարդկանց կողմն և քչփչում։ Քիչ այն կողմ, փողոցը երիզող պատաշարի մոտ էլի մարդիկ կային, բայց Օհանը ուշադրություն չդարձրեց, ավելի ճիշտ՝ չուզեց նկատել. հարկավոր է սուսուփուս գնալ, թե չէ, տեսար՝ տարեկիցները ոտքի ելան, գոտիները պնդեցին, թե՝ մենք էլ ենք ուզում... Քանի՞սն են։ Յոթը... Կարգին մի խումբ... Իսկ սահմանապահ հրամանատարը խումբ մարդկանց էրգիր գնալու իրավունք չի տա, Օհանը սուսուփուս պետք է գնա։ Եվ որքան լավ է, որ ավտո կա։ Հենց դռանը կանգնած է։ Եվ այն էլ՝ որդու ընկերոջ ավտոմեքենան։

Օհանը ուրախ ողջունեց և շտապ որդուն ասաց, որ խուրջինը բերի։

— Ո՞ւր ես գնում, քեռի Օհան։

— Էրգիր է կերթամ, ախպոր տղա։ Իմ օղորմածիկ հերն է կանչե զիս, Սովասարն է կանչե... Կերթամ։

— Գնացինք, քեռի Օհան։

— Իմա՞լ։ Դո՞ւ էլ միտք ես դրե, տղա։ Չեղավ, ախպոր տղա, հեչ չեղավ։ Զիս կթողին, հըմը քեզ...

— Քեռի Օհան, ես քեզ մինչև սահմանը կհասցնեմ ու ետ կդառնամ։

— Էղավ։

— Խաչո,— Օհանը խառնվեց իրար։— Խուրջին բեր, հարսնուկ...

Հարսը, որ հազիվ էր զսպել լացը, փաթաթվեց սկեսրայրին և փղձկաց,— բաբո...

— Կնկա խելք,— Օհանը շոյեց հարսի մազերը,— փոխանակ ուրախանա, որ բաբոն էրգիր է կերթա, լաց կէղնի։ Անխելք, խաղաղ աշխարհ է, բաբոյին ի՞նչ կպատահի։ Խուրջին բեր, գաս։

— Խուրջինը մեքենայում է,— միջամտեց որդու ընկերը։

Օհանը տեսավ, որ որդին էլ է ավտո նստում. ուրեմն ուզում է իրեն ճանապարհել. դրա համար հուզվեց. բայց փորձեց որդուն ետ պահել. իզուր ինչո՞ւ կտրվի բանուգործից, ի՞նչ է, Օհանը էրգրի ճամփան չի՞ իմանում։

— Մինչև շրջկենտրոն թող ուղեկցի,— միջամտեց որդու ընկերը։

— Թող ձեր խոսքն էղնի,— համաձայնեց Օհանը։— Յա տեր,— աչք դիպցրեց երկնքին և ուրախ ու գոտեպինդ նստեց «Շտապ օգնության» ավտոմեքենան։

ՓՈՂՓՈՒՉ ՄԵԼՈՆ

1

Ասացին, թե Փողփուչ Մելոն մահացել է։

Ես նրան վաղուց գիտեի։

Մի ժամանակ մեր գյուղում դպրոցը յոթնամյա էր, և ով ուզում էր միջնակարգն ավարտել՝ պետք է շարունակեր հարևան գյուղում։ Ճմռանը դժվար էր, բայց, ընդհանրապես գնում ու վերադառնում էինք կարճ ճանապարհով։ Անցնում էինք գյուղի ձորը — այն ժամանակ ձորը գյուղից հեռու էր — բարձրանում գյուղահայաց դարը, շարունակությունը մինչև Դժնձոր քարակուտակներով ծանրաբեռնված արտեր էին, արտերի դարուփոս միջնակներով հասնում էինք Դժնձոր, իծաշարուկ իջնումելվերում, ապա մեր բացած կածանը կտրում էր ձորապռնկի արտը և բարձրավանդակի փեշին ճյուղավորվում, դառնում քանդված, տուտերը իրարից գնացած պարան։ Այդտեղից՝ Դժնձորի հետ վերից վար ձգվողոլորվող այդ բարձրավանդակի փեշից ամեն մեկը սարավանդում էր ինչպես հարմար էր գտնում։ Շաղ եկած ելնում էինք և բարձրավանդակի գլխին, ուս-ուսի նստած քարերի մոտ, հավաքվում։ Դա մեր «կայարանն» էր, ճանապարհը կես էր անում։

Թիկունք-թիկունքի թառում էինք քարերի վրա, և ես դեմքս միշտ դեպի հյուսիսակողմն էի անում. այդ կողմի վրա, բարձրավանդակի շեղբին ինձ տոհմակից մի տղամարդ էր թաղված։ Զարկվել էր այնտեղ և հենց տեղում էլ թաղվել։

Առաջին օրը, երբ միացա կածանով դասի գնացող-եկողների խմբին, բարձր դասարանցիները մեզ առաջնորդեցին, ու հասանք «կայարան»։ Բարձունքից նայեցի շուրջբոլորս, և իմ արնակցի գերեզմանը քաշեց հայացքս. ես հանկարծ գլխի ընկա, որ բարձրավանդակի հյուսիսակողմում, քարերի մեջ, ինձ ծանոթ քարակուտակն եմ որոնում։ Եվ ինձ թվաց, թե տեսնում եմ, երևում է։

Տունդարձին, «կայարան» չհասած, թեքեցի ճանապարհս։

Ճամփես թեքեցի դեպի մեր տոհմակից տղամարդու գերեզմանը և տեղնուտեղը հասուն զգացի ինձ... Ավելի հասուն էի, քան նախորդ օրը, քան առավոտյան, քան նոր՝ միջնակարգ դպրոց ոտք դնելու պահը, քան այն պահը, երբ որոշեցի այցելության գնալ և հիշել նրա մասին իմացածս բոլոր պատմությունները։

Առասպելներ էի լսել նրա մասին։ Բայց այդ բոլորի մեջ այն ժամանակ ինձ ամենաշատը դուր էր գալիս մի պատմություն՝ այնքան տե-

սանելի, որչափ էկրանով շարժվող պատկերը։ Ահա տասնվեց տարեկան կապուտաչ, բարակ ու ջղուտ մի տղա՝ ոտքերին թաղիքե մուճակներ, գոտուց կախ սուր մի դանակ, ուսն ի կախ ճտպտուն խուրջին՝ մի աչքում երկու բուռ գարի, պարան ու սանձ, մյուսում՝ չորս կտոր թաղիք ու այծի մազից ոլորած լարան, Սասնո սարից իջնում է Մուշ քաղաքը։ Նա թողել է Առաքելոց վանքի մոտով տանող ճամփան, թողել է մյուս բոլոր կածանները և ընտրել է նոր ուղղություն՝ Արջպլորի ծերպերով կորյունի պես ճկուն ու փափուկ իջվարում է։ Մինչև իսկ ինքը չի լսում թաղիքե ոտնամանների քստփստոցը։

Շունչը պահած անլուսին գիշեր է։

Մշո գետակը վշշում է քնած քաղաքի ականջի տակ և ավելի խորացնում գիշերվա լռությունը։ Տղան ձոր ու ձոր, գետի հետ, կտրումանցնում է Ջորի թաղը, ապա՝ Սուրբ Մարինեի թաղը և Տաշո թուրքական թաղում ելնում է ձորից։ Այս թաղում է ապրում այն բեկը, որ պուտպուտուրիկ մի ձի ունի... Նա մագլցում է գոմի կտուրը, երդիկն ի վար պարան ձգում, իջնում գոմը։ Ձին խլշտած փռնչում է, փորձում է կտրել կապը, իսկ տղան փաղաքուշ խոսքեր է ասում, շշուկով փաղաքշում է ու մոտիկ-մոտիկ անում... ահա՝ շոյում է արդեն, շոյում է, և բռով գարին մոտեցնում դնչին, խուրջինը կախում ձիու պարանոցից, շոյում է և փորձում բարձրացնել սմբակը, շոյում է և թաղիքի մի կտոր դնում սմբակի տակ, շոյում է և սմբակը առնում թաղիքի մեջ՝ կապկպում լարանով, շոյում է և սմբակները փաթաթում թաղիքով... Հետո սանձում է, դուրս քաշում ձին, ծփում մեջքին և ականջը մտած՝ փափուկ վարդում է դեպի Վերին թաղը. այս անգամ՝ այգիների միջով, Առաքելոց ճամփով՝ դեպի Ինկատար, դեպ Սասուն...

Ահա և բացատը։ Արշալույս է, և հայդուկները զենք են կապում... Եվ տասնվեց տարեկան մի տղա ձիու հետ կանգնել է Գևորգ Չաուշի դիմաց ու սպասում է վճռի։ Գևորգը սանձն առնում է տղայի ձեռքից։ Փորձնական հանձնարարությունը կատարված է։ «Բեկի ձին գեղեցիկ ձի է,— ասում է Գևորգ Չաուշը,— լավ աշխատ է, բայց մեզ պետք չէ,— խփում է ձիու դնչին։— Իսկ տղային զենք տվեք։ Փամփուշտ տվեք։ Փամփշտակալ կապեք։ Արժանի է»։

Առաջին անգամ, երբ լսեցի այս պատմությունը, հիշում եմ, խորը շունչ քաշեցի և հարցրի հորս, թե ես հոխպեր Իսրոյին նմանություն ունե՞մ։ Հայրս մտածեց-մտածեց, ինձ թվաց, թե չլսեց կամ պատասխանել չի ուզում, և առանց ինձ նայելու ասաց. «Իսրոյի աչքերն նմանապես կապուտ են»։

Երբ թեքեցի ճամփաս դեպի հոխպեր Իսրոյի գերեզմանը, աչքերիս

առջև այդ պատմությունն էր։ Եվ երբ բարձրացրի գլուխս, տեսա ոչխարի փոքրիկ հոտը։ Խոյեր էին։ Բոլորը կեռ, զորեղ պոզերով, ինչպես մեր գյուղի խոյերը։ Ակամա կանգ առա։ Մեր գյուղում հարու տվող խոյեր կային, երբ երեխա էին տեսնում, պոկվում էին հոտից և վրա քշում։ Ես գնում էի «վագրի սիրտ կերած» մի մարդու մոտ և ամաչեցի, որ խոյերի ահից կանգնել եմ։ «Թող գան»,— վիրավորված մտածեցի ես և, իրոք, ցանկացա, որ խոյերից մեկը... երկուսը պոկվեն՝ գան ինձ վրա։

Գերեզմանին մոտիկ, հարմար մի քարի նստած է խոյարածը։ Այն ժամանակ արդեն տարեց էր, ճերմակած մազ ու բեղով։ Սեպտեմբերի 1-ն էր, միջօրե, երկնքից դեռ ամռան կրակ էր թափվում, իսկ նա բամբակյա բաճկոն ու շալվար ուներ հագին։ Եվ փափախ։ Բարևեցի, բայց նա չպատասխանեց, կարծես չլսեց, թվաց նաև, թե չնկատեց ինձ։ Մտամոլոր, մշուշված հայացքով նայում էր գերեզմանի կուտակ քարերին։

Ես նստեցի նրանից քիչ հեռու, մի ուրիշ քարի և փորձեցի կենտրոնանալ, միտք բերել — հիշել Իսրոյի մասին իմացածս բոլոր պատմությունները։ Որոշել էի նաև երգել նրա լսած երգերից և ափսոսացի, որ ծերունու ներկայությունը պետք է խանգարի։ Ինձ ամենից շատ դուր եկած պատմությունը ճանապարհին հիշել էի արդեն։ Հիմա որտեղի՞ց սկսել...

Հանկարծ նկատեցի, որ ծերունու ծնկներին մեկնված ճիպոտը ծխում է։ Ուշադիր նայեցի։ Ճիպոտի ծայրին ծխախոտ կար... Ուրեմն՝ ճիպոտ չէր, ձեռնափայտ չէր, այլ՝ չիբուխ... Այդպիսի երկար ծխամորճ չէի տեսել։ Երկար մեկնված էր ծնկներին, իսկ ծայրի «ջղարան», թերթի, թե պրքի թղթով պատրաստված ծխախոտը, մարմանդ ծխում էր։

Նա ձեռքն առավ չիբուխը, տարավ շուրթերին. իրար վրա ձգեց, նորից մեկնեց ծնկներին, ապա բացեց գոտուց կախ կաշվե «քիսիկը», հանեց ծխախոտ, թերթի կտոր և սկսեց նոր «ջղարա» փաթաթել։ Խշրանք ծխախոտ էր՝ փաթաթելուց բթով տրորեց պինչը ու փոշտաց։ Փոշտոցի վրա մի խոյ պոկվեց՝ վազելով եկավ։ Ահա, եկավ հարու տալու, դիմադրել է պետք։ Ես ոտքի ելա։ Բայց խոյը ինձ ուշադրություն չդարձրեց, մլմլալով պտույտ արեց ծերունու շուրջբոլորը և ճակատը քսեց նրա ծնկին։ Եվ, տեսա, ծերունին ծխամորճի ծայրը դրեց խոյի բերանը։ Խոյը, ինչպես աղ ուտելիս, չփչփացրեց շուրթերը, ծխեց, էլի էր ուզում, բայց խոյարածը թեթև հարվածեց նրա դնչին, և խոյը գնաց՝ գլուխը թափ տալով, փոշտալով։

Եկավ մեկ ուրիշը... եկավ մյուսը... մյուսը... Հետո պոկվեցին-եկան խումբ-խումբ։ Եկան, իրար հրմշտելով բոլորեցին ծերունուն, և նա հերթով ամեն մեկին ծխել տվեց և՝ մի թեթև ապտակ։

Ծխախոտն արդեն չիբուխի շուրթն էր այրում. խոյարածը նոր պատրաստած ծխախոտը ականջակոթից առավ, վառեց, ամրացրեց ծխամորճին, մի քանի անգամ թունդ ձգեց և ծխամորճը նորից մեկնեց ծնկներին։

Կանգնած նայում էի այդ տարօրինակ ծերունուն և նրան շատ էի սիրում՝ հանդիպել էի ցեղակցիս գերեզմանի մոտ. ահա մտասույզ ու մշուշոտ նայում է գերեզմանի մամոտ քարակուտակին... Ես համոզված էի, որ նա Իսրոյին տեսել է, ճանաչում է. նրա մասին եղած բոլոր առասպելները գիտե։ Ինձ թվաց, որ այդ պահին խոյարածը Իսրոյի մասին է մտածում և մտաբերում է այն բոլոր պատմությունները, որ ես պետք է հիշեի։ Գուցե նաև երգել է ուզում և նեղսրտել է, որ ես հայտնվեցի։ Դրա համար էլ չի ուզում ինձ նկատել, մտածեցի ես։

Այդպես էլ նա ինձ չնկատեց, և ես հեռացա։ Անընդհատ ետ էի նայում. սպասում էի, որ երգ պետք է լսեմ և Դժնձորն իջնելիս թվաց, թե լսում եմ, ծերունին արդեն երգում է։

Երեկոյան որպես նոր՝ միշնակարգ դպրոցի առաջին օրվա տպավորություն, պատմեցի խոյարածի մասին, որ նա ձեռնափայտի չափ երկար չիբուխ ունի և խոյերին ծխել է սովորեցրել։

— Փողփուչ Մելոն է,— ասաց հայրս։

Ես մտովի նորից տեսա չիբուխը և, իրոք, ինչպե՞ս չէի նկատել, չիբուխը հենց սրնգի երկարությունն ուներ և սրնգի տեսք։

— Ճիշտ է,— ասացի ես,— նրա մուշտուկը սրնգի նման էր։

— Փողփուչ Մելոն է,— մի տեսակ հեռու տեղից վերադարձած ձայնով կրկնեց հայրս։— Էրգրի Կուսգետ գեղից էր... Մելոյի փողի ձենն ամբողջ Սասունն էր բռնե։— Հայրս ծնկներին հակված լռեց։ Դա հորս սովորական նստվածքն էր. այդպես՝ թևերը ծնկներին խաչած, հակված ու համբացած՝ հայրս էրգիր էր գնում։

— Ժամանակ-ժամանակ Մելոն կելներ սար՝ տղեքի քով... կելներ սար. տղեքի համար փող կփչեր... Գևորգ Չաուշի տղեքի...— հայրս մի պահ լռեց և ավելացրեց,— Իսրոն կսիրեր զինք... շատ կսիրեր զինք... Մելոն փողփո՞ւչ էր...

Հայրս «փողփուչը» ասաց մի տոնով, որի մեջ և՛ գնահատական կար, և՛ ափսոսանք, և՛ հուշ, կորուստ, կարոտ և չգիտեմ էլի ինչ, և ա՛յն, որ Փողփուչ Մելոն հիմա, կարծես թե սրինգ չի նվագում։ Ես այդպես հասկացա։

— Հիմա փող փչո՞ւմ է։

— Կփչեր,— կողմնակի պատասխանեց հայրս ու լռեց։

Հաջորդ օրը դպրոցում Փողփուչ Մելոյի համագյուղացի աշակերտները նույնպես հաստատեցին, որ իմ տեսած խոյարածը Փողփուչ Մելոն

է։ Այդ օրը նրանք հա՛ ծպտում էին ինձ, որ ես իրենց գյուղացի Փողփուլ Մելոյով հետաքրքրվում եմ, ճանաչում եմ նրան։ Իսկ դասից հետո նրանցից մեկը ինձ քաշեց դպրոցի անկյունը և գաղտնիք ասելու պես շշնջաց. թե՝ Փողփուլ Մելոն իմ տեսած չիբուխով նաև նվագում է. այդ երկար ծխամորճը միաժամանակ սրինգ է։ Լսողներ են եղել. քեռի Մելոն էդ չիբուխով նվագում է։ Ես մտովի նորից տեսա Փողփուլ Մելոյի չիբուխը... Նախորդ օրը շատ ուշադիր էի նայել, չիբուխի վրա ոչ մի անցք չկար՝ ինչպե՞ս է նվագում։ Իմ տեսածը ծխամորճ էր ու կար, միայն թե՝ սրնգի չափ երկար և սրնգի տեսքի։

Ցունդարձի ճանապարհին որոշեցինք հանդիպել Փողփուլ Մելոյին։ Մերոնք, մեր գյուղի աշակերտները, չէին հավատում, որ խոյերը ծխում են։ Ուրտակարգ ծխամորճը հեչ. բայց չէին հավատում, որ խոյարածը իր խոյերին ծխել է սովորեցրել։

— Հիմա կապացուցենք, որ դու փչան ես,— կրքոտ ու համոզված ասում էր տասներորդցի մեր պեպենոտ գերազանցիկը։ Նա դպրոցի բացարձակ գերազանցիկն էր, նրա անունով մեր ուսուցիչներն ու ծնողները մեզ խրախուսում-խրատում էին, մեզ ամոթանք էին տալիս։ Նա, իրոք, գերազանցիկ էր և խիստ կարգապահ։ Ցասը տարում ոչ մի ժամ չէր բացակայել և բոլոր աշակերտներին հանել էր իր դեմ, հատկապես՝ մեր գյուղի։ Նա ավելի շատ ուսուցիչ էր, քան՝ աշակերտ։ Մեզ այդպես էր թվում։

— Հիմա կապացուցենք,— մի տեսակ ոխով կրկնում էր, առաջ ընկած նայում շուրջբոլորը և ափսոսում, որ խոյերն ու խոյարածը չէին երևում։

Տեսանք երկու շաբաթ հետո։ Եվ առաջին նկատողը գերազանցիկն էր։

— Վերջապես,— ուրախացած մատնացույց արեց։

Եվ մենք «Կայարանից» բարձրավանդակի լայն շեղբով գնացինք դեպի խոյարածը։

Փողփուլ Մելոն նույն քարին, նույն դիրքով նստած էր՝ ծխացող չիբուխը ծնկներին երկարած, մշուշոտ հայացքը գերեզմանի կուտակ քարերին։ Ինձ թվաց, թե նա այդպես էլ տեղից չի շարժվել։

Մենք բարևեցինք բարձրաձայն ու խմբովի կանգնեցինք։ Եվ այս անգամ լսեցի նրա ձայնը՝ թավ էր ու երգեցիկ։

— Ասսու բարին,— պատասխանեց ու հետաքրքիր նայեց մեզ։

Խումբը լուռ ու սպասողական կանգնած էր։ Այդ պահին բոլորը ենթարկվել էին պեպենոտի տրամադրությանը. նրանց սպասողական հայացքներում նաև խիստ պահանջ կար, հարցապնդում,— ճի՞շտ է, որ

խոյերին ծխել ես սովորեցրել... Ցույց տուր տեսնենք— խմբի բուռ, բայց անտրոք հարցապնդումը թիմոթիյան էր հասնում. խոյարածը պետք է որ վիրավորվեր։ Նկատեցին՝ Փողփուչ Մելոն, ինձ համար շատ հարազատ մի մարդ էր, որին ահա երկրորդ անգամ եմ տեսնում և կլի իմ ցեղակցի գերեզմանի մոտ... Եվ զղջացի, որ պատմել էի նրա մասին։ Ինչու էի պատմել։ Արժեր, որ երկար չիքսվեմ խոյերի հետ ծխող հրաշք ծերունին մնար իմ գաղտնիքը։

— Գնանք,— ասացի ես։

— Սպասիր,— տասներորդցու և գերազանցիկի իրավունքով սատեց պեպենոտը։— Ի՞նչ ապացուցեցիր, որ գնանք։

Խումբը համառորեն սպասում էր, և Փողփուչ Մելոն ստիպված էր հարցուփորձել։ Ես դա ճիշտ հասկացա. նա ստիպված հարցրեց, թե ովքե՞ր ենք, ո՞ր գյուղացի ենք... Եվ երբ իմացավ մեր գյուղը, անմիջապես աչք դիպցրեց գերեզմանին, նորից նայեց մեզ, այս անգամ՝ զննող։ Եվ ես այնպես հասկացա, թե Փողփուչ Մելոն ասաց՝ այս գերեզմանն էլ ձեր գյուղացի է։ Գիտե՞ք։ Եվ հանկարծ գլխի ընկա, որ խմբից ոչ մեկը իմ ցեղակցի գերեզմանին չի նայել, չի նայում, մինչև իսկ աչք չի դիպցնում։ Դա շատ վիրավորական էր։

— Գնանք,— իրկնեցի ես։

— Այստեղ ծխող խոյ չկա,— հայտարարեց գերազանցիկը։

— Կա՛։— Եվ տեղնուտեղը ափսոսացի, որ երկու օր առաջ պաշտպանել եմ նրան. տղաների մի մասը ուզում էր Դժնձորում նրան դնգստել, իսկ ես դեմ կանգնողների թվում էի. մտածում էի, թե նախանձից ծեծել են ուզում... ոչ մի նախանձ, սա ծեծի արժանի է, դրան ծեծել է պետք։— Կա՛,— պատասխանեցի կումարար,— բոլորն էլ ծխում են։

Փողփուչ Մելոն հետաքրքրվեց, թե ես է՞լ նույն գյուղացի եմ։

— Հա՛... սա իմ հոխպոր գերեզմանն է։

Այս անգամ նա հետաքրքիր նայեց ինձ, մի բան շշնջաց, որ չլսեցի, հետո բացեց կաշվե ծխատուփը, հանեց ծխախոտի փշրանք, թերթի մի կտոր և փռշտաց... Հենց այնպես փռշտաց. և խոյերից մեկը պոկվեց ու վազելով եկավ...

Աչքերս մեկեն լցվեցին։

Բայց նրան, այդ քինոտ գերազանցիկին արտասուք ցույց տալ պետք չէր։ Եվ պետք չէր նրան ուսնկից նայել, թե հերթի կանգնած խոյերը ինչպես են ծխում։ Դա արդեն ինձ չէր հետաքրքրում։ Ես քաշվեցի մի կողմ, նստեցի մի քարի և, որպեսզի լաց չլինեմ, հիշեցի իմ սիրած պատմությունը։— Ահա, տասնվեց տարեկան մի տղա Ցաքոն սարից իջնում է Մուշ քաղաքը...

— Իսկ դու դրանով նվագո՞ւմ ես։

Հանկարծ լսում եմ պեպենոտի ձայնը և սրվում՝ ի՞նչ կպատասխանի... Փողփուշ Մելոն ի՞նչ կպատասխանի... ի՞նչ կասի... Իսկ նա լուռ է։

— Նվագո՞ւմ ես... դա սրի՞նգ է,— պոկ չի գալիս և կամակոր հայացքով ինձ է որոնում։

Ես ատամներս սեղմած ոտքի եմ ելնում. դրան պետք է ծեծել... ծեծել է պետք... ծեծել...

— Սրինգ չէ,— փոխարենը ինքն է պատասխանում՝ կես ծերունուն, կես ինձ։ Եվ շարախինդ հարցապնդում։— Ասա, դա սրի՞նգ է...

2

«Հը՞, Մելո, էդ փո՞ղ է...»

Մելոն կտուրին կրակ էր արել, շուղերը շարել կրակի մեջ և շիկացած շուղերով սրնգի երկարությամբ մի փայտ էր ծակում։

«Փող է կշինի՞ս, Մելո»,— հետաքրքրվում էին ներկաները, իսկ Մելոն անծպտուն փայտն էր ծակում։

Դա վաղուց էր. գաղթից հետո, այդ նոր գյուղում հաստատվելուց հետո առաջին գարնանն էր։ Զմեռնամուտին էին եկել-ծվարել լեռնային այդ խարխուլ գյուղում, գարուն էր բացվել, և մի իրիկնապահի տեսան, որ Փողփուշ Մելոն տանիքին կրակ է արել ու նստել կողքին։ Մարդիկ — Սասնո աշխարհից կային, Մուշից, Խնուսից, Ալաշկերտից...— որ այս ու այնտեղ՝ օտար պատ ու ցանկապատերի տակ նստոտած՝ մոլորվել էին՝ լուծ ու լծկանի, սերմացուի մասի՞ն մտածեն, թե՝ ելնեն կորցրածը գտնելու, Փողփուշ Մելոյին տեսան կտուրին նստած և հավաքվեցին-գնացին նրա մոտ. հիմա Մելոն կփչի իր փողը...

Թող Մելոն փչի իր փողը, և թող թոհուբոհից, լաց ու կականից խլացած ականջները բացվեն հեռացած-մոռացված հնչյունների առջև... Գարնան իրիկնապահին Սովասարից գյուղ իջնող ոչխարներն ու գառները ինչպե՞ս էին մայում-կանչում իրար՝ հիմա Մելոյի սրնգի շրթից կլսեն։ Հովը ի՞նչ էր շշնջում սարում ծաղիկների հետ գիշերող յայլավորների ականջին՝ Մելոյի սրնգի շրթից կլսեն։ Աղբյուրների արծաթե գլգլոցը, կիրճում գալարվող Տալվորիկ գետի վշշոցը, մութ անձավներում մոլորված Զենով Օհանի կանչը հիմա սրնգից կլսեն։ Արշալույսի սարսուռով թռնված դեղին արտերի շրշյունը, լորերի մանվող ֆռռոցը կորեկի փափուկ արտերում՝ կլսեն։ Հիմա Մելոն կփչի իր փողը, և մշուշոտ աչքերի դիմաց կհայտնվեն հեռացած-կորած պատկերները... Թող Մելոն նվագի,

և թող քարացած սրտները փափկեն. թող նոր գան, հայտնվեն կորած արցունքները...

Մարդիկ, որ պատ ու ցանկապատերի տակ մոլոր նստոտած էին, տեսան, որ Փողփուչ Մելոն կտուր է բարձրացել, ելան-գնացին նրա մոտ։ Գնացին, տեսան, որ Մելոն կրակ է արել և շիկացած միլերով սրնգի երկարությամբ, սրնգատեսք մի փայտ է ծակում։

«Մելո, բա քու փողն ո՞ւր է»։

Գիտեին, որ նա իր ծիրանի փողը հինգ տարի՝ թե՛ կռիվների մեջ, թե՛ փախեփախին գոտին խրած պահել է։ Ո՞ւր է։ Ծիրանի փողը ո՞ւր է։

«Քու ծիրանի փող կորե՞լ է, Մելո»։

Մելոն, գործի հետ, զլխով արեց՝ կորել է։

«Նոր փո՞ղ կշինիս»։

«Աստված էվելի շնորհք տա, Մելո, փող շինե, փող փչե, թող մեր հոգին քրքրվի...»։

Ոչ մեկի մտքով չէր անցնում, որ Մելոն չիբուխ է պատրաստում։ Մելոն, ախր, ծխող չէր։

Հաջորդ օրը և էլի մի քանի օր Մելոն դարձյալ նույն գործով էր զբաղված։ Իսկ շաբաթ հետո կտուրին հայտնվեց տարօրինակ չիբուխով։

Մելոն տանիք ելավ՝ չիբուխը սրնգի պես պահած, հետո չիբուխը խրեց գոտին, նորից կրակ արեց, անվարժ մատներով անճոռնի մի «ջղաբա» փաթաթեց-վառեց, ամրացրեց մուշտուկի ծերին և, կրակի կողքին նստած, ծխեց ու փչեց, ծխեց ու փչեց։ Գարնան իրիկնապահ էր, Փողփուչ Մելոն ծխեց ու փչեց դեպի մայր մտնող արեգակը...

3

Ասացին, որ Փողփուչ Մելոն մահացել է։

Եվ ես որոշեցի գնալ կրճատ, այն ճամփով, որով երեք տարի դրպրոց էի գնացել-եկել, չնայած գիտեի, որ կածանը արդեն չկա, արահետը փակվել է, ինչպես լեռներով ու դաշտերով ոլորվող առուն է լցվում հողով ու սեզով, երբ ակունքից կտրում են ջուրը։

Բայց ես գնում էի անշփոթ, չսխալվելու համար կողմնորոշվելու պետք չկար, և ինձ թվում էր, թե ոտքերիս տակ արահետը բաբախում է՝ զարթնել է կածանի հիշողությունը, և ծայրեծայր հոսում է թրթիռը։

Մեր «կայարանից» թեքվեցի բարձրավանդակն ի վեր։ Իմ ցեղակցի շիրմաքարի մոտ պետք էր մի բաժակ օղի խմել, և նստեցի այն քարին, որի վրա առաջին անգամ տեսել էի Փողփուչ Մելոյին։

Եվ վերջին անգամ, տարի առաջ, այդտեղ էի հանդիպել ընկերոջս,

ոչ հենց Փողփուշ Մելոյի համապատասխանին էր։ Այդպես, շիրմաքարի մոտ նստած զրուցում էինք, նկատեցինք, որ մեկը Դժնձորից ելավ և դեպի մեզ է գալիս։ Ո՞վ կլինի. կածանը վաղուց փակվել է, իսկ մարդը հովիվ չէր, դաշտապահ չէր։ Այդ կողմերը վաղուց հանդապահ չունեն։ Ո՞ւմ մորթով է անցել լուծած արահետը։

— Ըիի, Մելոն է։— Դեռ հեռվից ճանաչեց ընկերս։— Փողփուշ Մելոն է։

Նա էր։ Ջիրուխը ձեռնափայտի պես առաջ դցած, հակված ու ծանր բարձրացավ դեպի, եկավ։ Մենք ոտքի ելանք, բարևեցինք, և ես զիջեցի իր քարը։ Մի պահ գլուխկախ կանգնեց, և թվաց, թե մեզ չի նկատել, ապա նստեց իր քարին ու պատասխան տվեց.

— Ասսու բարին։

Եվ ափը ճակատին պահած նայեց։ Նայում էր, և շուրթերը դժգոհ խլվլում էին. ո՞վքեր են, ի՞նչ մարդիկ են, այստեղ ի՞նչ գործ ունեն, ինչո՞ւ են եկել։ Ապա բացեց ծխատուփը։ Նույն կաշվե «քիսիկն» էր, որ ես, է՞, տարիներ առաջ տեսել էի։ Եվ սկսեց «ջղարա» փաթաթել... Հիմա կփռշտա, և հատի խոյերից մեկը կպակվի-կգա, Փողփուշ Մելոյի ծնկին կքորի ճակատը, և նա չիբուխը կդնի խոյի շուրթերին։ Բայց խոյերի հոտ չկար. կոլտնտեսությունն արդեն քանի տարի է խոյ չէր պահում, և Մելոն արդեն խոյտաքած չէր, բայց առաջվա նման արշալույսին դուրս էր գալիս գյուղից և վերադառնում մթնշաղին։ Ես դա գիտեի։

— Որտեղի՞ց ես գալիս, քեռի Մելո,— հարցրեց ընկերս։

Մերունին ուշացումով պատասխանեց։

— Դու ո՞վ ես, որ զիս կճանչնաս,— հայացքը կախ ասաց Փողփուշ Մելոն։

— Ես ձեր գյուղացի եմ, քեռի Մելո, ինձ չե՞ս ճանաչում։

Նա բարձրացրեց գլուխը և փորձեց որոշել, թե խոսողը ով է։

— Ես եմ, քեռի Մելո,— ընկերս ասաց իր անունը,— ինձ չե՞ս ճանաչում։

— Չէ, լաու։— Մի քիչ լռեց։— Ուստից ճանչնամ... Քու հերն ո՞վ է... Էրգրի ո՞ր գեղից է։

Եվ ընկերոջս պատասխանի վրա զարմացավ՝

— Յա՜... Քոլոսկա Պետրոս հո՞ս կընակվի,— ծխացող չիբուխը ուղղեց ուսն ի հետ, դեպի իրենց գյուղը։ Հետո մեկին լռեց, չիբուխը երկարեց ծնկներին և կախեց գլուխը։ Տմբտմբացնում էր, և փափախի ջարդված ականջները ճոճվում էին։

— Քու հեր կապրի՞,— հարց տվեց և պատասխանի չսպասեց։— Քու հար կճանչնամ... Քու հերն ինձնեն քսան տարի փոքր է... կճանչնամ. մեջ

Քոլոսկիկն եմ տեսել... մեջ հարուստիքին եմ տեսել... Շատով կխաղեր։ Ջահել տղա էր, հրմը լավ կխաղեր... Յարխուշտա չէ, հրմը Գորանի շախով կխաղեր... Կեռգեր ու կխաղեր...

Փողփուլ Մելոն գլուխկախ խոսում էր։ Երկար խոսեց։ Մոռացավ, որ քոլոսկեցի Պետրոսի մասին էր պատմում, անցավ ուրիշ հիշողության, հետո՝ Սև սարի բացատի պատմությունը, թե ինչպես մի անգամ բարձրացել էր սար՝ «տղեքի» համար փող փչելու, ապա բացատրում՝ «տղեքը» Յարխուշտա պարեցին... Սպաղանաց Մակարն ու Իսրոն էին դեմդիմաց, Սպաղանաց Մակարը ծեր էր։ «Տղեքից» ամենամեծը Սպաղանաց Մակարն էր, իսկ Իսրոն՝ ջահել, և պարելուց Մակարի ափը... աջ ձեռքի ափը ճաք տվեց՝ արյուն ելավ...

Փողփուլ Մելոն, ծխացող չիբուխը ծնկներին, գլուխկախ երկար խոսեց։ Թռավ պատմությունից պատմություն, խոսքից խոսք... Անսկիզբ ու անվերջ խոսում էր։

Եվ հանկարծ գլխի ընկա, որ նա մոռացել է մեր գոյությունը։

Մոռացել էր մեզ, մոռացել էր իր տեղը, մոռացել էր, որ խոսում է... Նրան թվում էր, թե ինքն իր մտքերի հետ է, ամեն օրվա պես՝ հիշում է...

ԹԱԹՈՆ

1

— Սերոբ, գեղացիք բոլոր իրենց արտերն հերկեցին-ցանեցին, իմը մնաց։— Դեռ արևը չծագած Հլոյի Թաթոն կանգնեց հարևանի դռանը։— Գարունն անցավ-կանցնի ու իմ թաք արտ մնաց, Սերոբ։

Սերոբը հասկացավ, որ ծերունի Թաթոն լծկաններն է խնդրում։ Եզները... Այսօր կան, ահա ուս-ուսի կապված են գոմում, էգուց-էլօր պետք է քշի-տանի կոլտնտեսություն... Իր լեզվով պետք է թելադրի դիմում, թե՝ խնդրում եմ, ուրիշ ինչպե՞ս, շատ եմ խնդրում, որ ինձ, իմ հող ու ջրով, իմ ընտանիքով, իմ եզներով, սայլով, արտերով, իմ հավ ու ճվով... ընդունեք կոլտնտեսություն։ Իսկ ծերունի Թաթոն, որ մի լաթ արտից բացի, որ... որ մի խուրձ բեղից բացի ուրիշ ոչինչ չունի. ոչ ընտանիք-բանող ձեռք, ոչ լուծ ու լծկան, ինքն է ու իր շոր գլուխը, նույն իրավունքով պիտի կոլտնտեսություն ընդունվի և նույն իրավունքով՝ օգտվի բարիքներից։

Սերոբը ձեռքի ցախավելը շպրտեց արևածագը ազդարարող աքաղաղի վրա և հանեց ծխատուփը։

Թաթոն, որ պատասխանի էր սպասում, վիրավորվեց։

— Սերոբ,— ծանր տմբտմբացրեց ծերունին,— թե էրգրի մեր Արդվոնք գեղից պատահի ու մեկն հանդիպի քեզ...

Հուր ու սրից պոկված լինի ու՝ հանդիպի, տղամարդ լինի, թե կին, մեծ լինի, թե փոքր, միևնույնն է. Սերոբը թող հարց տա. եղե՞լ է մի գարուն, որ Հլոյի Թաթոն լուծ ու լծկանի համար խեղճացած լինի։

— Էս մանուկ արեգակ վկա, իմ ցավն ու կարոտ վկա, չի եղե, Սերոբ։ Էսօր էլ... գարունն անցավ-կանցնի ու իմ թաք արտ մնացե առանց ցանքի։

Ոչինչ, Թաթո, նեղսրտած մտածեց Սերոբը, հոգ մի արա, մի քանի ամիս հետո, աշնանը, Սերոբը, դիմումի հետ, եզները կհանձնի կոլտնտեսությանը և այն ժամանակ Սերոբն ու Թաթոն կհավասարվեն։ Այնպես որ, հաշվիր, թե այսօրվանից Սերոբը եզ չունի՝ ոչ զույգ, ոչ կենտ, հաշվիր, թե եզներից մեկը քոնն է, եզներից մեկի մի ոտքը, մի կճղակը, մի պոզը, մի մաղը քոնն է. տար, ինչպես ուզում ես այնպես վարվիր՝ ուզում ես լծկանների հերն անիծիր, մորթազերծ արա...

— Մեր հարևան գյուղում,— Սերոբը գլխահակ ծխում էր և ձեռքը անորոշ մեկնեց,— մի մարդ իր եզները մորթել է։

Ծերունին հարցական նայեց. հարևանը ինչ-որ բան է ակնարկում... Ի՞նչ է ուզում ասել։ Նա փորձեց բռնել հարևանի հայացքը, բայց Սերոբը հակված ծխում էր և, կարծես ինքն իր համար, շարունակեց՝

— Զույգն իրար հետ զարկել է գետին, իր ձեռքով մորթել։

— Ջի՞նչն է մորթե,— հարցրեց ծերունին։

— Եզները։

— Եզնե՞րը։— Այդպես էլ Թաթոն շիփ-շիտակ չէր հասկանում կատարվածը։ Գուցե հարևանը երկդիմի՞ է խոսում, գուցե՝ խաղերով է մերժում...

Է՜, հարևան, հարևան, Հլոյի Թաթոն այնքան ընկած-կորած մարդ դարձավ, որ դու շիտակ պատասխա՞նն էլ շատ ես համարում։

— Կոլխոզ տանելու փոխարեն,— Սերոբը նորից խոսեց և դարձյալ ինքն իր մտքի հետ,— զույգ եզը մորթել է։

— Յա՜, Մարաթուկ։— Ծերունին ըմբռնեց։ Հասկացավ։ Պատկերացրեց... Եվ մարմնով դող անցավ։— Յա՜, Մարաթուկ։— Խաչակընքեց ծերունին։ Նա փորձեց էլի ինչ-որ ասել, բայց ոչ մի բառ չգտավ։

Իսկ հարևանը ծանր ոտքի կանգնեց և բացեց դռան դուռը...

2

Երբ գյուղից դուրս ելավ — եզները լծի տակ, լուծն ի կախ արորը, շալակին պարանով կապկպված կես պարկ սերմացուն ու կես խուրձ խոտը — ծերունին մի պահ կանգ տվեց. փորձեց իր արտի ուղղությունը բռնել-գնալ անսխալ ու կարճ ճանապարհով։ «Երևացող է՞ն բլուր կանցնինք,— բացատրեց ինքն իրեն և եզներին,— բլրից էն կողմ ձորակ մի կա՝ կանցնինք, ձորակն անցանք, քչիկ մի կերթանք, կելնինք բլրակ մի...— Բլրակի անունն ի՞նչ էր,— մտածեց ծերունին,— էլի մտահան արի... տասնչորս-տասնհինգ տարի է հոս կբնակվիմ ու էս սար ու ձորի անուն չսովորեցի։ Հոս՝ լսի, հոն՝ մտահան արի։ Էդ բլրակն էլանքիջանք,— շարունակեց ծերունին,— քչիկ մի կերթանք, կհասնինք ձորին։ Հոն, ձորաբերանին իմ արտն է... Հո, ղուրբան, էրթանք... Յա՜, տեր»,— ուզեց երկնքից օրհնություն խնդրել, բայց հիշեց, որ հարևան գյուղում մեկը իր եզները մորթել է։

«Էդ մարդու հացն ուտելու չէ,— մտածեց նա,— հոգին չարքերին ծախած էդ անօրենի հացն հարամ է»։

— Հո, ղուրբան,— արտակարգ ջերմություն զգաց լծկանների նկատմամբ։— Գառ ջան, ախպեր ջան, հեր ջան... Հեր ջան։— Կրկնեց կրքոտ և ոտքը կախ գցեց։— Հրիի՜,— հայացքը կապույտով մշուշված Հայոց լեռնապարին, քակվեց Հլոյի Թաթոն։— Իմ ջոջ եզ, Հլո... Իմ ջոջ եզ, իմ հեր։— Հիշեց էրգրի իրենց ջոջ եզին, նրան որ Հլո հոր անունն էր կրում՝ թե ինչու և երբվանից, ինքն էլ չգիտեր։ Իրենց ջոջ եզան անունը Բաշե էր, բայց գյուղում Հլո էին ասում։ Այդպես էր կոչում նաև ինքը՝ Հլո հայրը։ Եվ կոչում էր շոյված, որովհետև իր անվանակիր եզը ուժեղ էր և աշխատասեր։

— Իմ ջոջ եզ՝ իմ հեր, դու ինչպե՞ս իմացար, թե էդ գարնան աչք փակելն ավելի լավ էր՝ քու երեց տիրոջ ետևից էրթալն ավելի լավ էր...

3

Հոր մահվան առիթով (Հլո հայրը 105 տարեկանում ձմռան մի արշալույս ելավ դուրս, երկար, երկար նայեց աշխարհին, դարձավ՝ քնեց ու մնաց քնած)... և հոր մահվան առիթով Թաթոն յոթ օր գոմ չէր մտել։ Իսկ ութերորդ օրը, մութուլուսին, երբ բացեց գոմի դուռը, անասունները՝ կովը, երինջը, արջառը, զույգ եզը մզզոցով ու մի աչք դարձած նայեցին Թաթոյին։ Չէ, անասունների ձեն-ձենոցն ու համախումբ նայվածքը խոտ ու դարմանի պահանջ չէր, Թաթոն դա հասկացավ, նրանք կարոտած

ողջունում էին իրենց տիրոջը և փորձում հասկանալ պատահածը։ (Թաթոյին թվաց նաև, որ անասունները ամեն ինչ հասկացել են, գիտեն՝ իրենց երեց տերը չկա... գնացել է)։ Հետո ջոջ եզը բռնեց տիրոջ հայացքը, և Թաթոն ցնցվեց. նրան թվաց, թե Հլո հայրն է նայում իրեն... ճիշտ ու ճիշտ հոր նայվածքն էր՝ հոգնած, մի քիչ տխուր, բայց պատրաստակամ։ Նա խաչակնքեց, որ պատրանքը անցնի, բայց եզան աչքերից համառորեն նայում էր հայրը։ Նա էր՝ հենց Հլո հայրը... Եվ մի՞շտ է այդպես եղել, թե՞... Կպատահի լուսահոգի հոր հոգին անցած լինի...

«Մեղա, տեր»։— Միրտ չարեց ավարտել միտքը։

Իսկ ջոջ եզան աչքերից նայում էր հայրը։

«Դու իմ Հլո հերն ես,— շշնջաց Թաթոն։— Իմ հեր չկա,— բարձրաձայն հայտարարեց նա։— Իմ հեր գնաց իր օղորմածիկ հոր կողքին ննջելու, բայց դու, իմ ջոջ եզ, դու իմ Հլո հերն ես»։— Եվ շոյեց եզան ճակատը։

Եզը հնազանդ երկարեց վիզը ու տխուր մզզաց։ Եվ ծռված հայացքում սպասում ու տագնապ կար։ Այդպես Հլո հայրն էր նայում Մարաթուկին կուտակվող կարկտաբեր ամպերին։

4

— Քու հոգին արդար ու իմաստուն էր, իմ ջոջ եզ։— Բարձրաձայնեց ծերունին։ Հուշերի ու բեռի տակ հակված գնում էր։ Շտկվեց, որքան տարիքն ու բեռը՝ կես պարկ սերմացուն ու կես խուրձ խոտը թույլ էին տալիս, շտկեց մեջքը և նայեց մշուշով պարուրված լեռնապարին։— Իմ Հլո եզ...

Դու ինչպե՞ս իմացար, որ գարունը արնոտ պետք է լիներ... Որ մեր բարձրիկ երկնքից, մանանայի տեղակ, արյուն պիտի ցողվեր մեր անուշ սար ու ձորերին, խելառ Դավթի որձ գետերի մեջ։ Դու ինչպե՞ս իմացար, որ էդ գարնան ու չուրի հիմա իրար հետ ակոս չենք բացի Մարութա սարի փեշին, կորեկ չենք ցանի, ու Մարաթուկի սիրուն սարյակները կմնան առանց կորեկի ու Արդվանքա անտառի արջերն ու քոթոթները էդ տարին ու չուրի հիմա կմնան առանց կորեկարտի... Դու ինչպե՞ս իմացար, որ լուսհոգի իմ հորից հետո խև Դավթի ցեղից ուրիշ մեկը էդ գարնան ու չուրի հիմա մեր կանաչ, մամոռոտ հանգստարանում էլ չի ննջի, մեր անուշ հողի մեջ հող չի դառնա... Դու ինչպե՞ս իմացար, որ քո լծընկերները էդ գարնան իրենց արդար վզերին լծի տեղակ անօրենի յաթաղանը պիտի առնեն... Դու ինչպե՞ս իմացար... էդ բոլորը դու ինչպե՞ս իմա-

ցար, իմ ջոջ եղ, իմ հեր։ Քո սիրտն ավետարա՞ն էր։ Իմ Հլո հոր հոգի՞ն կանչեց քեզ... Իմացար ու գնացիր քո երեց տիրոջ ետևից...

Ծերունին գնում էր՝ խոհերի ու բեռի տակ կքած։

Նորից ուղղեց շալակը՝ միմյանց ազուցված խոտն ու սերմացուն, աչք դիպցրեց արևին, լծկաններին շտապեցրեց և շարունակեց զրույցը.

— Էդ օրն աստված զիմ խելքն առել էր, իմ Հլո եղ, ու քու խոսքն էդ օր չհասկացա։ Էդքան տարի մենք հետ իրար վար ու ցանք արինք ու մեջ իրար աչքերի նայելով հասկացանք իրար։ Բայց էդ օր աստված զիմ խելքն առել էր, և ես քու աչքերի խոսքը չհասկացա։

5

Մի շաբաթ եղը բերանը չմոտեցրեց մսուրին։ Գերդաստանը սգի մեջ էր. երեկ-մյուս օր հեռացավ օջախի մեծը և, տես, երկրորդ կորուստն է վրա տալիս՝ ջոջ եղն է գնում։ Ամեն մեկը իր հերթին ջուր է հրամցնում եղին, տաք հացի իր բաժինն էր հրամցնում. մեկի չէ, մյուսի ձեռքից կընդունի, ու թե մի պատառ կերավ՝ փրկված է։ Բայց եղը բերան չէր բացում։ Բեկված հայացքը գոմի դռանը, տխուր մզզում էր։ Եվ չնայած արձակ էր. ազատություն էր տրված, բայց նա տեղից չէր շարժվում. մի շաբաթ է նստած էր՝ գլուխը կողերին ձգած, բեկված հայացքը՝ գոմի դռանը։

Թաթոն յոթը օր անկողին չմտավ, գոմի անկյունում նստած՝ հբսկում էր։ Իսկ կիրակի արշալույսին, երբ ծանրացած կոպերը կպցրեց ու բացեց, եղը կանգնած էր դռան մոտ և փորձում էր պոզերով բացել դուռը։

«Ցա՜, տեր»,— ուրախացավ Թաթոն, բայց եղան մզզոցից հասկացավ, որ ամեն ինչ վերջացած է. եղը մեռնելուց առաջ ուզում է աշխարհը տեսնել։ Ջոջ եղը տխուր մզզում էր և փորձում պոզով դուռը բացել։

(Այդպես Հլո հայրն էր երկու շաբաթ առաջ, արշալույսին, ափըլփում տան դուռը։ «Թաթո գառ, զիս հանեք դուրս... աչք դիպցնիմ աշխարհջին, դառնամ զիմ աչքեր գոցիմ»)։

Թաթոն բացեց գոմի դուռը, և եղան պարանոցը գրկած՝ եղան դուրս ու կանգնեցին բակում։ Թաթոյի թևի տակ գողում էր եղան պարանոցը՝ բանած-ողորկ-ճաքճքված-սևաթույր ու տաք... Ու եղան մաշկի տակով հոսում էր դողը։

Գարնանամուտի ծվվյան արշալույս էր։ Հալվել էին աստղերը, Մարթուկի գլխին մնում էր միայն լուսաստղը՝ սարի ճերմակ, կայծկլտացող կատարից թռած ձյունե մի պեծ։ Գյուղահայաց լեռնալանջը իր քար

ու թփուտներով դեռ ձյունածածկ էր, լանջի ճակատն ի վար սև ակոսի պես իջվարում էր հեղեղատի հունը, և տեղ-տեղ ձյունածածկը ճաք էր տվել. ջուրը ընկել էր ձյան տակ։ Ջորով դեռ հեղեղ չէր անցնում, բայց գարնան արշալույսում հեղեղատի հոտն ու խշշոցը կար... Եվ սարյակները եկել էին արդեն, ճկճկում էին քիվերին, տանիքներին, կիսատ դեզերի վրա։

Թաթոն եզան սրթսրթուն պարանոցը գրկած՝ նրա հետ և նրա փոխարեն նայում էր աշխարհին և գիտեր, որ նա էլ գարնան նույն նշաններն է տեսնում, նրա ծռված աչքերում էլ նույն պատկերներն են, թորշոմ սկանջներում՝ գարնան արշալույսի ձայները։

Հետո եզան ոտքերը ծալվեցին, և նա փլվեց բակում։

Արևածագից առաջ գյուղը արդեն դրնգում էր՝ Հլոյի տան ջոջ եզն է մեռնում... Ծերունիները եկան-հավաքվեցին Թաթոյի բակում։ Եվ մինչև իրիկնապահ, թիկունքները՝ որձաքարե պատերին, արդվոնքցի ծերունիները խոսքը շուրթից շուրթ առնելով օր ու դեպք հիշեցին պապ Հլոյի և Հլո եզան կյանքից։ Հիշեցին, թե ինչպես, դեռ ամիսներ առաջ, զառիվար՝ երկնքից կախված է՛ն, էն մյուս ու մեկել ճամփով Հլոն ու Հլո եզը խոտի տակ ճկուած սայլը գյուղ էին հասցնում անվթար։ Թե ինչպես Հլոյի տան ջոջ եզը Հլոյի կամ Թաթոյի խրախուսիչ ձայնը առնում էր թե չէ՝ կրակ էր կտրում և զառիվեր՝ երկինք ձգվող է՛ն, էն մյուս ու մեկել ճամփով ճախրում էր դեպի երկինք... Արդվոնքցի ծերունիները մեռնող եզան շուրջբոլորը նստոտած օր ու դեպք հիշեցին Հլոյի և նրա եզան կյանքից։ Եվ միտք բերեցին նաև, թե գյուղի ջրաղացքարը ինչպես հանեցին Տալվորիկի ձորից։ Ջրաղացքարը Տալվորից բերեցին յոթը տղամարդով և յոթը զույգ եզով։ Տղամարդկանցից մեկը Հլոն էր, իսկ եզներից մեկը Հլո եզն էր...

6

— Թե աստված կամեցավ ու նոր եզ ունեցա, կանվանիմ Հլո,— որոշեց Թաթոն։

Նա բեռի տակ խոնարհված քայլում էր՝ հայացքը շուլալած ոտքերին։ Այծի մազից գործած մուճակները մաշված էին. հարկ էր մի զույգ տրեխ ճարել։ Եվ տրեխի մասին մտածելիս նորից հիշեց, որ հարևան գյուղում մի մարդ իր եզները մորթել է... Էգուց չգնա՞ հարևան գյուղ...

— Չէ,— ինքն իր դեմ ելավ ծերունին։— Էդ անօրենից առած կաշին հարամ է։ Էդ անօրենի ձեռք դիպած կաշին կդառնա օձ ու կփաթաթվի իմ ոտքերին։

Հետո նա շալակի տակից աչքեց շուրջբոլորը և գլխի ընկավ, որ անցել է իր արտը։ Եվ դարձավ, կանգ տվեց արտի գլխին։

Թաթոն կանգնեց արտի գլխին, ծնկեց՝ զգույշ իջեցրեց խոտն ու սերմացուն, հետո թիկն տվեց բեռին և նորից տնտղեց իր արտը։ Զորաքին կպած մի լաթ էր՝ քարակուտակներով ծանրաբեռ և ճերմակ խճերի խիտ ցանքով։

— Մինչև արևը կոտրվի՝ կպրծնինք։— Ասաց լծկաններին։— Շընչիկ մի առնիմ, ակոս մի երկու բացինք ու ձեզ կեր տամ։— Ավելացրեց ծերունին։

Նա ճաքճքված մատներով ծխախոտի փշրանքից «ջղարա» փաթաթեց, հանդարտ ծխեց և լծկաններին պատմեց Էրգրի Սեմալ, Շենիկ ու Փեթար գյուղերի «անուշ թութունի» մասին ու ոտքի ելավ։

Ծերունին արորը ագուցեց լծին, սեղմեց մաճը, գլուխը բարձրացրեց՝ երկնքից օգնություն առավ, ապա ճոճեց ճիպոտը և շվարեց.

— Բա եզների անունն ինչպե՞ս է։— Թաթոն շփոթված նայեց լծկաններին։

Եվ մաճը թողած, դարձավ նայեց գյուղի կողմ։

— Սերոբ, անաստված մարդ,— դժգոհ դիմեց լծկանների տիրոջը,— դու եզներն առանց անունի՞ տվեցիր։ Աստված զիմ ուշքն ու միտքն է առե ու մտահան արի՝ չհարցրի, դո՞ւ ինչի՝ չբաշխեցիր։

Եվ այդ թյուրիմացության համար Թաթոն, չիմացավ ինչու, հայհոյեց հարևան գյուղացուն, նրան, որ իր եզները մորթել է։

Հետո նա հարցական նայեց լծկաններին. փորձեց գուշակել անունները, բայց չգտավ ոչ մի նշան. ոչ արտակարգ գույն, ոչ ճակատներին ճերմակ ծաղիկ, ոչ ընդգծված պոզեր... անունները հուշող ոչ մի նշան չկար։

— Հարկ էր, որ աստված ձեզ լեզու տված էղներ։— Բողոքեց ծերունին, լծկաններն արձակեց, սերմացուն ու խոտը զատեց իրարից. սերմացուի պարկը ծրարեց քարերով, իսկ խոտը դրեց եզների դիմաց և պատվիրեց.

— Կերեք... Ես հասնիմ գեղ. ձեր անուններն իմանամ ու դառնամ...

ՋԵՌՆՔԱՇ ՀԵՐՈՆ

1

Կեսօրին Հերոն այլևս չհամբերեց։ Պարկը սեղմեց թևի տակ ու ելավ դուրս։ Վաղ գարուն էր։ Եղանակը եթե այդպես տաք գնար, եթե չուշանար գարնան առաջին անձրևը, մի տասը օրից ձյունը կգնար, սար ու

դաշտ կբացվեին։ Տասը օր... տասնհինգ օր... բայց կովը կհամբերի՞, պոչից ընկած էն երկու ոչխարները կհամբերե՞ն։ Կես օր բան չեն կերել, մսուրներն են կրծում։

Աշնանը չտացվեց՝ Հերոն հիվանդացավ. լուր ուղարկեց քաղաք՝ տղային, որ գա ժամանակին անասնակերի հարցը լուծի, իսկ տղան եկավ, բժիշկ կանչեց, դեսից դենից դեղորայք ճարեց-լցրեց հոր կողքը — իսկ մի ավտո ծղոտի եղածն ի՞նչ է, երբ ասես, կբերեմ — հուսադրեց՝ էսօրէգուց գցեց, բայց չբերեց։

«Հարկ է, որ մարդն իր տղի ձեռքին էլ չնայեմ»։— Հերոն անցավ Հարևանի դռնով, աչք գցեց մարագի փակ դռանը — հարևանի մարագն էլ սրբվելու վրա էր, բայց շաբաթ առաջ՝ մի քթոց դարման տվեց, Հերոն գոհ ու շնորհակալ է, ապա կանգնեց փողոցում ու նայեց վեր ու վար։ Նա գիտեր իր գնալիք տեղը՝ ուղիղ կալ... ուղիղ կոլտնտեսության կալ՝ ուրիշ ճար չկա։ Բայց կանգնած վեր ու վար էր նայում, որպես թե՝ ո՞ւր գնալ, ո՞ր կողմի վրա։ Մի տղա էր թռվռալով գալիս։ Երբ մոտիկացավ, Հերոն ասաց.

— Կերթամ դաշտ, դեպ ձոր. քիչ մի խշվաշ-մշվաշ հավաքիմ-բերիմ... Ուրիշ ճար չկա...

Իսկ տղան չնկատեց էլ քեռի Հերոյին, գարնան հոտը պնչներում, խայտալով անցավ-գնաց։

Մինչև գյուղից դուրս գալը, կոլտնտեսության կալը գյուղից վար էր, ով հանդիպեց՝ կին, տղամարդ, երեխա, Հերոն հարկ համարեց բացատրություն տալ.

— Կերթամ դաշտ, դեպ ձոր. խշվաշ-մշվաշ հավաքիմ-բերիմ...

— Հերո, դաշտում հիմա ի՞նչ կա։

— Ինչ կա-չկա, կերթամ հավաքիմ-բերիմ։

Եվ երբ դուրս եկավ գյուղից, կալի վրա մեկին չքշեց, թեքվեց-գնաց դեպի ձորը և ինքն իրեն կրկնում էր.

— Էրթամ դեպ ձոր. խշվաշ-մշվաշ հավաքիմ,— բարձրաձայն կրկնում ու գնում էր, կրկնում ու գլուխկախ քայլում էր, ետ դարձավ քշեց դեպի կալը, նույնն էր բարձրաձայնում,— խշվաշ-մշվաշ հավաքիմ-բերիմ... ուրիշ ճար չկա։

Պահակը, որ ներքին թաղեցի Գևոն էր, չկար. փոխարենը երևի էլի տղային էր ճամփել, իսկ երեխան ինչ-որ տեղ իր համար խաղ էր անում։ Ասենք, Հերոն չնայեց էլ. գլուխ բարձրացնել — շուրջբոլորը նայել չէր կարող, իր խոսքը խլվլան շուրթերին, հայացքը կախ գնաց ու ծնկեց դարմանի շեղջի առջև։ Կաշվե ձեռնոցներ ուներ՝ հանեց-դրեց մի կոզմ,

բացեց պարկի բերանը ու սկսեց լցնել. «խշվաշ-մշվաշ հավաքիմ... ուրիշ ճար չկա... խշվաշ-մշվաշ...»,— ասում էր ու լցնում, ինքն իրեն ասում էր, չխոսել, չասել չէր կարող, և սեղմում էր պարկը...

Այդպես էլ Գևոն չերևաց։

— Գևո, օղորմի քու հոր։— Հերոն պարկը շալակեց, բայց գյուղ գնալու փոխարեն քայլեց ձորի կողմ։ Եվ երբ կալից ահագին հեռացել էր, նոր դարձավ դեպի գյուղը։

Փողոցում առաջինը ղանթարը ուսած մի կին հանդիպեց։ Ո՞ւմ կինն էր, ո՞ւմ հարսն էր, Հերոն ե՞րբ շիտակաչք նայեց։ Բայց հարկ համարեց խոսել։

— Հարս,— ասաց,— ձորից կգամ...

Կինը մտքի հետ գնում էր, Հերոյի խոսքի վրա ոտքը հարկադիր կախ գցեց։

— Ի՞նչ ասիր, քեռի Հերո,— հարցրեց կինը։

— Ձորից կգամ,— կրկնեց Հերոն։— Քիչ մի խշվաշ ժողվեցի-բերի։

— Խշվա՞շ։

Կինը զարմացած նայեց. Հերոյի դարմանոտ ոտն ու գլուխը դեռ հեչ, պարկի բերանը բաց էր և պարզ երևում էր, որ շալակինը դարման է։

— Հա, խշվաշ-մշվաշ,— վայրահակ ու կոպկախ կրկնեց Հերոն։— Ձորից ժողվեցի-բերի։ Շատ կար...

— Գժվե՞լ է,— մեկուսի ասաց կինը և հետաքրքիր նայեց Հերոյի ետևից։

Հերոն գնում էր պարկի տակ խոնարհված, ավելի վայրահակ, քան պետք էր, և ինքն իրեն խոսելով, «խշվաշ-մշվաշ»,— կինը միայն այդքանն էր լսում։

Եվ այնուհետև, մինչև տուն հասնելը, մեծ հանդիպեց, թե փոքր, Հերոն կրկնեց իր խոսքը և միշտ ավելացրեց. «էլի կերթամ... ուրիշ ճար չկա»։

Ամեն ինչ բարեհաջող էր... Մարագում զգույշ իջեցրեց պարկը և շիտակաչք նայեց... Ահագին դարման էր... Կարելի էր ավելի սեղմել պարկը, իզուր շտապեց. ո՛չ Գևոն կար, ո՛չ մարդ ու մուրդ, պարկը պինդ սեղմած պետք է լիներ... բայց եղածով պետք է գոհանալ։ Փառք, մի երեք օր կարելի է յոլա գնալ։ Երեք օր հետո մի բան...

«էլի կերթամ»,— մտածեց Հերոն և ձեռնոցով սկսեց թափ տալ վրա-գլուխը։ Եռանդում թափ տվեց և գլխի ընկավ, որ ձեռնոցի մեկը չկա։ Նայեց կողքբոլորը, ստուգեց գրպանները՝ չկար։ Որտե՞ղ կլինի։ Գուցե պարկի՞ մեջ է. պարկը լցնելիս դարմանի հետ... Եվ ափսոսաց, որ ձեռ-

նոցը մի երկու բուռ դարմանի տեղ իզուր կորցրել է։ Որոշեց պարկը դատարկել, միևնույնն է, դարմանը օրերի պետք է բաժանել։

Ձեռնոցը պարկում էլ չկար։ Իսկ ո՞ւր կլինի։ Կորե՞լ է։ Գնալիս կար, կալում, լավ հիշում է՝ զույգը միասին դրեց մի կողմ, ետ գալիս... Հերոն երկմտեց, ուզեց տեղնուտեղը հիշել, բայց լսեց կովի բառաչը և շտապեց գոմ։

Այդ երեկո Հերոն սկյամբիլ խաղալու չգնաց... հավաքատեղին ձգում էր, բայց ինքն իրեն համոզեց, թե սկյամբիլ խաղալու ժամանակն արդեն անցնում է. գարուն է։ Ավելի լավ է պառկել, ծխել ու մտածել։ Եվ, առանց զգեստները հանելու, մինչև ուշ գիշեր թիկունքն ի վար մեկնվեց մահճակալին ու ծխեց։

2

Հաջորդ օրը Հերոն մտավ ակումբ և առաջինը նկատեց պահակ Գևոյին։

Եվ պահակի ձեռքին՝ իր կորած ձեռնոցը։

— Ը՛հը՛,— ուրախացավ Հերոն,— իմ թաթման գտա։

— Ես էլ իմ դարմանի գողին գտա,— հանգիստ պատասխանեց պահակը։

Հերոն բերանբաց կանգնեց։

«Դարմանի շեղջի մոտ եմ թողի»,— հասկացավ։

Սայթաքել էր. թաթմանը պահակի ձեռքին տեսնելիս՝ տեղնուտեղը պետք է գլխի ընկներ... դեռ՝ իր մոտ մնացած թաքը ծրարեր... իսկ ինքը ի՞նչ արեց, տեսավ ու վռազ տեր կանգնեց։

«Դդում»,— ինքն իրեն ասաց Հերոն և փորձեց պահակի խոսքը ականջի ետև գցել. նստեց ձեռնոցի թաքը ծածուկ, իր հաշվով՝ ծածուկ, դրեց տակը, նայեց պատուհանից դուրս և ասաց.

— Անձրևը կամ դուռն է, կամ երդիկ։

— Քու թաթմա՞նն է,— պահակը մեկնեց ձեռնոցը։

Հերոն սուսուփուս մեկնվեց վերցնելու, բայց պահակը ձեռնոցը ետ քաշեց։

— Քու թաթմա՞նն է,— կրկնեց պահակը։

— Ախպեր, վալլահ, իմ թաթմանն է։ Տուր։ Տուր ու զողորմին ստացի քու հոր համար, Գևո,— խնդրեց Հերոն։— Ուստի՞ց գտար։— Հերոն նորից սայթաքեց՝ «ուստից գտա՞ր», սխալվեց, ասաց և նոր գլխի ընկավ. ախր, Գևոյի հարցապնդումը հենց նրա համար էր, որ կամաց-կամաց ձեռնոցի ճանապարհը բերեր-կանգնեցներ շեղջի մոտ, իսկ ինքը Գևոյին

օգնեց, որ տեղնուտեղը մատնացույց անի՝ շեղջի մոտից գտա։ Ասի էլ, մեղավոր չէ մարդը։

Իսկ Գևոն, կարծես, խնայեց.

— Ուր թողել էիր, էնտեղից գտա,— ասաց։

Եվ Հերոն թեթևացած շունչ քաշեց։

— Ջանըմ,— ժպտերես խնդրեց Հերոն,— իմ թաթմանը տուր, պրծնի-էրթա։

— Չեմ տա։ Մնա հիշատակ,— պատասխանեց պահակը և կեսլուրջ-կեսկատակ ավելացրեց,— ձեռնքաշ Հերոյից։

Հերոն սառեց... ձեռնքաշ... էս տարիքին լավ անուն վաստակեցիր, Հերո... ձեռնքաշ... Դե, գնա մեռի... ձեռնքաշ... անօրեն Գևո, բա Հերոն...— Նա ելավ, որ թաթմանը խլի Գևոյի ձեռքից, թաթմանով մի հատ հասցնի վզակոթին ու թողնի-հեռանա, բայց շատ թեսթափ էր։

— Աստված է վկա,— շշնջաց,— Հերոն ձեռնքաշ չէ։

Հասավ տուն և անմիջապես անկողին մտավ։

Կինը ինչպես ուզում է թող պահի անասուններին, Հերոն այլևս տերը չէ։ Ուզում է՝ կեր ճարի — պահի, ուզում է գոմից դուրս վռնդի և ով կամենում է՝ թող տեր դառնա, Հերոն այլևս տերը չէ, ուզում է... Իսկ ավելի ճիշտ, կինը թող լուր տա էն լակոտին. թող էն փուչ լակոտը, որ խոստացավ անասնակեր ճարել ու մինչև էսօր դեռ հույսով է կերակրում, քաղաքից գա՝ տանի-վաճառի՝ վերջանան-գնա, Հերոն տերը չէ։

Բայց կինն ու կովը հանգիստ չէին տալիս, և հաջորդ օրը կեսօրին Հերոն հասկացավ, որ իր արածը անխելքություն է։

«Ջանըմ, Գևոյի մեկ խոսքի համար պառկիմ-ու մեռնի՞մ»։

3

Եվ ելավ գյուղամեջ — ի՞նչ կա, ի՞նչ չկա — գարուն է. հովիվ, նախրորդ ընտրելու մասին մտածո՞ւմ են, թե չէ։ Բայց չուզեց ակումբ գնալ — շան կաթ ծծած Գևոն երևի ձեռնոցի թաքը տնկած նստել է վառարանի մոտ — թեքվեց դեպի գրասենյակ և հեռվից նկատեց, որ մի խումբ ջահելներ գրասենյակի դռանը կանգնած՝ խոսում-ծիծաղում են։

«Ինչի՞ կծիծաղին»,— մտածեց Հերոն։

Բայց տղաների տրամադրությունը դուր եկավ։ Այդ վարորդ Անդրուշը շատ խնդմնդուն, հանաքչի տղա է. ով կանգնեց մոտը, փորը կբռնի։ Հենց տղերքի... Անդրուշի մոտ պետք է գնալ։ Գնալ, մասնակցել ջահելների խոսք ու զրույցին և մի քիչ ծիծաղել։ Հենց այդպես՝ ծիծաղել։

— Ձեռնքաշ Հերոն եկավ,— քշփչաց Անդրուշը, և ծիծաղը նորից պոռթկաց։

— Ծիծաղեք, լաո,— բարևի փոխարեն ասաց Հերոն,— ում վրա կուզեք՝ ծիծաղեք... ուրախացեք։— Եվ ձեռնոցի թաքը դրեց անթատակը ու ծխախոտ հանեց։

— Քեռի Հերոն մեզ պես չահելների հերն է անիծել,— Անդրուշը ակնարկեց կաշվի ձեռնոցը։— Հըլա տուր, փորձեմ։

— Ա՜ռ, լաո, էս մեկն էլ քեզ էղնի։

— Բա մյո՞ւսն ուր է, քեռի Հերո,— խոսք բացեց Անդրուշը։

— Գևոյի մոտ է ու չի տա։

— Գևոն ի՞նչ մարդ է որ, ափսոս ձեռնոցը տվել ես։

— Իմ կամքո՞վ տվի, լաո, ես կորցրի, ինք գտավ ու չի տա։

— Դարմանի մեջ ասեղ կորցնես, Գևոն կգտնի։ Որտեղի՞ց է գտել, քեռի Հերո։

— Լաո, վալլահ, գլուխ չեմ հանի։ Գևոյի ասելով՝ կալ, դարմանի շեղջի մոտ է գտել։ Ջրեր կտանին ու կբերին զիս. իմ թաթման կալ, դարմանի շեղջի մոտ ի՞նչ գործ ունի, քամի՞ն քշեց-տարավ, ինչպե՞ս էղավ, ինչի՞ գնաց հասավ կալ ու Գևոն գտնի ու չտա։ Անդրուշ, լաո, պատահի ու տեսնիս զինք, իմ թաթման առ, բեր,— խնդրեց Հերոն։

— Հայ, հաա՜յ,— Անդրուշը դարձավ ընկերներին,— մարդիկ հատուկ վարչության նիստ են գումարել, քեռի Հերոն ձեռնոցի մասին է մտածում։

— Ի՞նչ վարչության նիստ։

— Կոլտնտեսության վարչության նիստ։— Եվ Անդրուշը ձեռք ու գլխով ցույց տվեց գրասենյակը։— Հաա՜, մարդիկ տաքացել-կպել են իրար։

— Ջի՞նչ կբաժանին, ի՞նչ կուզին իրարից։

— Հայ-հաա՜յ, բանից անտեղյակ մարդ... Տո, քո հարցն են քննում, քեռի Հերո, դու չգիտե՞ս։

— Ջիմ հա՞րց։

— Ա՜յո, քո հարցը։ Դարմանի հարցը։ Գևոն...— Անդրուշը միշտանկյալ հայհոյեց Գևոյին,— Գևոն քո ձեռնոցի թաքը տարել-դրել է նախագահի սեղանին։ Հիմա էլ վարչության նիստ է, ու մարդիկ տաքացել-կպել են իրար։

— Օհոոո՜, դընգ ու դրհոլի ձեն է,— գլուխկախ շշնջաց Հերոն, իր հաշվով մտածեց։— Դընգ ու դրհոլ է, ու ես՝ անլուր։

— Ա՜յ մարդ, աեօրենք բան են անում. հարցը քննում են և չե՞ն բարեհաճում մարդուն տեղյակ պահել, մասնակից դարձնել։ Իրավունք

չունեն,— կրկնեց Անդրուշը։— Ես կրողքեմ։ Քեռի Հերո, շատ մի մտածիր, տեսնենք ինչ են որոշում, էն ժամանակ... տղերք, բողոքելու ենք,— կոչ արեց վարորդ Անդրուշը, և բոլորը համաձայնեցին։

Հերոն կանգնել էր գլխահակ։ Սխախատը արդեն մատներն էր այրում, իսկ նա ուշքի չէր։ Հետո զցեց ծխախոտը, ձեռնոցով շփեց ձեռքը և մտամոլոր սկսեց խաղալ ձեռնոցի հետ։ Մինչև անցյալ տարի Հերոն երբեք ձեռնոց չէր ունեցել. ո՞չ բրդե, ո՞չ կաշվե, և չէր մտածել այդ մասին, բայց նախորդ գարնանը նվիրեցին, գյուղի թիկունքի սարում երիտասարդ մի երկրաբան կաշվե նոր ձեռնոցներ նվիրեց, և Հերոն սիրով կրում էր ու միշտ ջերմությամբ հիշում նրան։ Իսկ հիմա մարքում մեղմ կշտամբեց երկրաբանին. «էհա, էս անտեր թաթմանն ինչի՞ կայցրիր իմ փեղպատը։

— Դուք սպասեք,— ասաց վարորդ Անդրուշը,— ես գնամ ականջ դնեմ. հըլա տեսնենք ի՞նչ են խոսում։

Անդրուշը գնաց, քիչ հետո վերադարձավ, հայտնեց, թե Միսակ քեռին է խոսողը։ Միսակը՝ Հերոյի համերկրացին, էրգրի Հերոյի համագյուղացին։

— Միսակի ասածն ի՞նչ է,— հետաքրքրվեց Հերոն։

— Ասում էր՝ ամոթ չէ՞...

— Ամոթ քեզ,— չհամբերեց Հերոն և ձեռքը խոսքի հետ ուղղեց դեպի գրասենյակ՝ համերկրացի Միսակին։— Ամոթ քեզ,— կրկնեց Հերոն,— Մարութա սա՞ռն է իմ թիկունքին, ու ես չեմ բարձրանա իմ ծոցված խոտն ու տերև բերի ու կերթամ կոլխոզի կա՞լ։ Հա՞... Հա՞, Միսակ,— հարցապնդեց Հերոն։— Մյուսները ջահել են ու չեն տեսե ու չգիտեն, դո՞ւ ինչի քու խիղճ կծախես։

Ապա նա դարձավ տղերքին, պատմեց, թե ինչպես ելնում էին Մարութա սար — այսօրվա պես հիշում է — տուն-տնովի բարձրանում էին սար, կուտակում անասնակերը։ Ում ինչքան պետք էր՝ կուտակում էր և տեղնուտեղը թողած — ամռանն ու աշնանը՝ տեղափոխելը դժվար էր — իջնում գյուղ և սպասում ձմռանը։ Ձմռանը սահնակներով — սայլի մեծության սահնակներ էին, տակը՝ լայն դահուկներ — այդ սահնակներով ելնում էին Մարութակ, բարձում խոտ ու տերևը և քանց փոթորիկ իջնում գյուղ։

— Մտահա՞ն ես արե,՝ անասուված։— Հերոն խոսքը նորից ուղղեց դեպի գրասենյակ՝ համերկրացի Միսակին և վարորդ Անդրուշին խընդրեց։— Տես, էլ ի՞նչ կխոսա։

Անդրուշը գնաց, եկավ, թե՝ հիմա կուսակազմակերպության քարտուղար Վասիլյանն է խոսում։ Ասում է, որ Հերոն խախտել է հասարակա-

կան համակեցության կանոնները, որ վարկաբեկում է մեր հասարակությունը։

— Ճառե՜-ճառե՜,— Հերոն խոսքն ուղղեց Վասիլյանին,— մեջ լեզվին օսկոր չկա. հանգիստ կպտտի, ճառե՜... Օրն էն օրն էր, որ քու հեր, մեշոկ թևի տակ, կկանգներ իմ դռան։ Լաո,— և դարձավ տղաներին,— դրա հեր, հողեր լուր չտանին, դրա հեր թամբալ մարդ էր։ Անհատ ժամանակ, դուք փոքր եք, չեք հիշի, անհատ ժամանակ դրա հոր արտերից երկուսը խոզան էր. մեկել երկուս՝ մեջ մոլախոտերին կորած ու ինք, մեշոկ թևի տակ, խալխի դուռ... իմ դռան,— շեշտեց Հերոն։— Ու էդ հոր տղեն էսօր քարոզ կկարդա Հերոյի գլխին... ճառե՜-ճառե՜,— դեմքը գրասենյակին արած կանչեց Հերոն, որ Վասիլյանը լսի,— քու իրավունքն է։

— Շատ հոգ մի արա, քեռի Հերո,— նորից հուսադրեց վարորդ Անդրուշը,— մենք քեզ կպաշտպանենք։ Տեսնենք հըլա ինչպես կվերջանա։— Եվ նորից գնաց լուր բերելու։

Գնաց և վերադարձին հեռվից ձեռքերով ու դիմախաղով հասկացրեց, որ գործերը լավ են։ Վերջին խոսքը, հասկանալի է, նախագահին է պատկանում, իսկ կոլտնտեսության վարչության նախագահ Դավթյանը պաշտպանում է։

— Ասում է՝ մեծ մարդ է, ոչինչ, արել է, արել, երևի ստիպված է եղել։ Ասում է՝ եթե քեռի Հերոն էդքան նեղն է, պետք է օգնություն կազմակերպել։ Էդ մասին պետք է մտածել։ Մեր պարտքն է։

— Օղորմի ուր հոր։— Հերոն հանգիստ շունչ քաշեց և սիրտն ուղեց տղերքի ֆիլտրով ծխախոտից ծխել։ Ափը շնորհակալությամբ դրեց աչքերին՝ առավ, շուռումուռ տվեց ֆիլտրով ծխախոտը, գնահատեց. ասաց, որ աշխարհում լավ բան շատ կա։— Լավ մարդ էլ շատ կա,— ավելացրեց Հերոն։— Դավթյանի հեր, ձինք լավ կհիշիք, բարի մարդ էր։ Մտածող ու բարի ու կամեցող։ Հազար օղորմի։ Լավ մարդ էր ու լավ ժառանգ թողեց։ Արուն ջուր չի դառնա, լաո։

Հերոն հաճույքով ծխում էր և փառավորված տմտմբացնում գլուխը։ Ապա օրհնեց Անդրուշին և նորից խնդրեց, որ գնա, նոր լուր բերի։

Այս անգամ վարորդ Անդրուշը վերադարձավ հերսոտ։

— Էդ Միսակի ձեռքից պրծում չկա, ա՛յ մարդ, կանգնել է, թե...

Հերոն չհամբերեց, որ խոսքն ավարտի։

— Հըմ, թողեք ղիս,— դիմացը կանգնած տղերքին հրեց մի կողմ,— թողեք ղիս,— և հայհոյելով քշեց գրասենյակի վրա։

Միջանցքի դուռը բաց էր, հայհոյելով մտավ, թափով բացեց գրասենյակի դուռը և... շփոթված կանգնեց շեմին։

Գրասենյակում ոչ ոք չկար։

— Ցա՜,— զարմացած ձգեց Հերոն,— էսպես խաբե՞լ կէղներ, որ խաբեցին զիս։— Եվ լսեց տղերքի քրքիջը։

— Հա՜-հա՜-հա՜,— ձայնակցեց Հերոն և որոշեց դառնալ՝ տղերքի հետ մի լա՜վ ծիծաղել, բայց մտավ դատարկ դրասենյակը։

— Հա՜-հա՜-հա՜,— ծիծաղեց Հերոն,— Անդրուշ, աստված քեզ էվելի շնորհք տա... Հա՜-հա՜-հա՜... աստված քեզ ուրախություն տա, լաո... Հա՜-հա՜-հա՜...— Հերոն քայլում էր դատարկ դրասենյակում, օրհնում Անդրուշին ու ծիծաղում։— Հա՜-հա՜-հաա՜... էրգրից հետո էսպես ծիծաղած չկամ, լաո... հա՜-հա՜-հաա՜...

Հետո մեկեն լրջացավ, ափով սրբեց դեմք ու շուրթերի ծպիտը և գլուխկախ ասաց.

— Էրթամ դեպ ձոր. քիչ մի խշվաշ-մշվաշ հավաքիմ-բերիմ... Ուրիշ ճար չկա։

ԱՂՈՐԻՔ

1

Կլոր քսանհինգ տարի Խալեն բնակվում էր սարին թառած այդ փոքրիկ գյուղում, բայց տնամերձ-հողամասը երբեք այնքան ցորեն չէր տվել, որքան այդ տարի։

Պատերազմի հաղթական տարին էր։

Հա՜, տնամերձի բերքը առատ էր և կոլտնտեսությունից էր սպասվում կարգին բերք։

Փառք, գարնան հետ և՛ փայփայած հաղթանակը եկավ, և՛ առատ ու բարի անձրև, կալուկութի ժամանակ նույնիսկ այդ գյուղի, շրջակա գյուղերի, բոլորուն քարախեղդ լեռների համար անձրևը անպատեհ չէ, ժամանակին առատ անձրև եկավ, փառք տարվա տիրոջը, որ Զուկն էր, ճիշտ ժամանակին Խալեն երբեք անգամ ոռոգեց իր արտը և, բացառիկ հաջողակ տարի էր, ոչ մի հատիկ կարկուտ չընկավ արտ ու գյուղի գլխին, և Խալեն առոք-փառոք հնձեց ու կալսեց, չուլ ու փալասով ծրարեց թեղը, և երկու ցերեկ ու գիշեր մեծ ու փոքրով պահակ կանգնեցին, որ հավերը չփոտկեն թեղը, անասունները վրա չքշեն, քամին չտանի, մի շաբաթ Խալեն գիշերեց տաք թեղի մոտ և, ահա, անքաղ գիշեր քամհար մեքենայի հերթը հասավ...

Իսկ արևածագին Խալեն պանծացավ. ցորենի այդպիսի առատ շեղջ մեկ էլ էրգրում էր ունեցել. գաղթից չորս տարի առաջ։

Ամբարը արդեն պատրաստ էր. վերանորոգված, մաքուր, հիմա կկրի՝ կլցնի ամբարը, բերանը կծեփի ու կգնա կոլտնտեսության կալ... Ամբարը բերնե-բերան կլցվի, հաստատ ու հաստատ է — Խալեն աչքաչափ ունի — դեռ մի երկու կոտ էլ կավելանա։

«Կրիմ՝ լցնիմ մեջ ամբարն ու էրթամ գործի»։

Բայց չէր շտապում. ծխում էր ու պտտվում շեղջի շուրջբոլորը։ Արևը — ամռան վերջն էր և առավոտի մեջ աշնան շունչ կար — արևը այնպես փափուկ էր ու ջերմ, ինչպես աղորիքի շուրթերից սորսորացող ալյուրը։ Խալեն՝ տարիքը զելված տրեխի պես ոտքի տակ գցած — յոթանասունն անց էր, բայց պինդ թևութիկունքով — թավ հոնք ու ընչացքը մղեղոտ, փափախի տակից դուրս պրծած մազերը քրտինքով ու մղեղով շաղված թաղիք, դեմք ու պարանոցի կնճիռների արանքում մղեղ, ծոցը մղեղ, տրեխների մեջ դարման ու ցորեն, հաճույքով ծխում էր ու պտտվում ցորենի կոնաձև կուտակի շուրջբոլորը, և շեղջը ծիածանի գույներով փողփողում էր մղեղոտ թարթիչների դիմաց։

«Քանց արևով անձրև»։— Ջերմ մի ալիք կուրծքն ի վեր սահեց դեպի ճակատը, և նա տաք գլխապտույտ ունեցավ։

Կինը ներս ու դուրս էր անում և ամեն անգամ աչք էր դիպցնում ցորենին։ Աղջիկն ու հարսը... Հարսը...— Հե՜յ գիդի, լիներ ու որդիներից մեկը, կռվի դաշտում կորած որդիներից մեկը... մեկը, գոնե Սարհատը, որ ջահել կնոջն ու մատղաշներին թողած կռիվ գնաց ու չկա, լիներ ու վերադառնար... Մյուս երկու որդիները գոնե պսակված չէին, լավ է թե վատ՝ գոնե պսակված չէին. ջահել կին ու երեխաներ չթողեցին անտեր... Խալեն թե բախտ ունի. թե կորած որդիներից մեկն ու մեկը պիտի հայտնվի, այդ մեկը թող լինի Սարհատը։— «Մեղա, տղեք»,— Խալեն ներողություն խնդրեց մյուս որդիներից... Սարհատը գա, Խալեն անարատ ու արդար այս ցորենից տաք հաց կրաժանի գյուղով մեկ, գինի կբերի, ուրախություն կանի, այս արդար ու անարատ ցորենից...

Խալեն կանգ տվեց, նայեց շեղջին ու մտածեց.

«Էս շեղջը... երկինքն էս արդար ու բոլ ցորեն մխիթարանք է ուղարկեց»։

Կինը ներս ու դուրս էր անում, հարսն ու աղջիկը ծխախոտ հավաքելու էին գնացել, դպրոցահասակ երեխաներն ու թոռները՝ նույնպես, մանրիկ թոռներ թավռում էին կտուրի վրա։ Նրանց խաղ ու ձայնի մեջ ցորենի խնդությունը կար. ցնծալի աղմկում էին, բայց շեղջին մոտիկ չէին գալիս — պապը այդպես էր պատվիրել — աջ ու ձախ քար էին

շպրտում կչկչան հավերին. պապը այդպես էր պատվիրել՝ մինչև ցորենը չկրի-չլցնի ամբար, ոչ ճիժ ու պժի ոտք մտնի կալը, ոչ հավ ու ճիվ։

«Ուշ է՝ կրիմ-լցնիմ մեջ ամբարն ու էրթամ գործի»։

Խալեն հա՜ շտապեցնում էր իրեն ու հա պտտվում շեղջի բոլորը. ցորենի կույտից բաժանվել չէր կարող։ Այսպիսի լի ու բոլ շեղջը...

***

Հա՜, ցորենի այդպիսի շեղջ մեկ էլ էրգրում է ունեցել...

Ողջ գիշեր դարմանը քամուն տվեց — քամհար գոյություն չուներ— հովշունչ երկու գիշեր թեղը հովին տվեց, դարմանն ու ցորենը զատեց իրարից, իսկ առավոտյան ցորենի շեղջը ծանր ու մեծ նստած էր արևի տակ։ Փողփողուն շեղջը, արևածագն ու կանչը մեկ եղան՝

— Եկա՜ն,— ընկավ Խալեի ականջը։

Եվ Խալեն փոթորկվեց.

— Ջարդված հատիկ մի չեմ տա,— պատասխան տվեց կանչին, մոլեգնած մտավ մարագը. թաքստոցից վերցրեց «չախմախլի» հրացանը, պատրույգը, հրահան քարն ու պողպատի կտորը և ելավ սար և գիրք բռնեց ճամփեզրին։

— Ջարդած հատիկ մի չեմ տա։— Որոշումը հաստատ էր. հարկահանները յոթը կլինեն, թե քառասուն, թուր ու թվանքով կլինեն, թե թիկնապահ ասկյարներով, միևնույն է, Խալեն ջարդված մեկ ցորենահատիկ չի տա, մի մաղ հավկուտ չի տա։ Որոշված է։ Հարկահանները ցորենի շեղջին կարող են մոտենալ միայն... միայն Խալեի դիակի վրայով։ Այդպես։

Խալեն աչքն ի ճամփին, ոլոր-մոլոր կածանը Մշո կողմից էր ելվերում, աչքը ոլորանին լցրեց հրացանը, հրահանով կրակ արեց-կպցրեց պատրույգը ու սպասեց։

— Ձեր կրոն...— հայհոյեց ու հայացքով խուզարկեց ոլորանը,— ձեր անօրեն կրոն...— հայհոյեց ու սպասեց. բռունցքը խփեց քարին ու սպասեց, քարը զարկեց քարին ու սպասեց... Իսկ հարկահանները ուշանում էին... Արևածագից մինչև կեսօր — արևը կախվեց Սև սարի վրա, այրեց թիկունքը — մինչև կեսօր հայհոյեց ու սպասեց, հետո մտքով անցավ, թե անօրենները ճամփեն թողած ծերպերով են գյուղ մտել, որ հանկարծակիի բերեն։ Եվ խայթված վեր թռավ։ Հեռվից որոնեց շեղջը... Ցորենի կուտակը, կարծես, տեղում էր... Հա՜, ցորենը տեղում էր շրջապատված գերդաստանի մեծ ու փոքրով՝ հանկարծակի անհայտացած Խալեին էին սպասում... Իսկ ո՞ւր են հարկահանները... Աղմուկ-աղաղակ, իրարանցում չկար, գզրի կանչ չկար, գյուղի գելխեղդողները չէին զարկվում,

գյուղը խաղաղ ծխում էր... Որտե՞ղ են հարկահանները... Ախր, ինքը շատ պարզ լսեց՝ եկա՜ն...

Այդպես էլ, մինչ էսօր, Խալեի համար մութ մնաց, թե դա ինչ կանչ էր...

***

«Ուշ է՝ կրիմ-լցնիմ մեջ ամբար ու էրթամ գործի»։

Բայց ծխում էր ու պտույտ գալիս ցորենի կոնաձև կուտուկի շուրջը։ Հայացքի դիմաց արևով անձրևն էր՝ ծիածանի գույներով օծուն, շեղջից հաճելի գոլ էր ծլլում, և Խալեի կողը տաքացել էր, Խալեն որոշակի զգում էր. ցորենակողմի այտին, ուսին, կողերին դուրալի մի տաքություն էր պլլել։

— Քշա-քշա։— Թոռնիկներից մեկը փորձում էր պապի ուշադրությունը գրավել, բայց Խալեն չէր թեքվում, ոչ մի կողմ չէր նայում. հանդարտ ու համաչափ պտտվում էր աշխարհի առանցքի շուրջը։

— Պապի,— թոռը անվստահ մոտեցավ,— պապ... գեղի մեջ խաղող են բերել։— Եվ սպասեց, որ պապը նայի։— Գեղի մեջ խաղող են բերել, պապ։— Խնդրաձայն կրկնեց տղան։

— Խաղո՞ղ... Խաղողն ի՞նչ է։

— Խաղող։— Մոթոշեց տղան։— Ցորենով՝ երկու ու մեկ։

Խալեն կանգ տվեց և վռազ, ինչպես թիկունքից հայտնված հավին են քշա անում, կտրուկ թեքվեց թոռան կողմը՝

— Թռի կոտն առ ու արի։— Չէ, իրոք՝ ուշ է, ցորենն ամբարել է պետք։— Դե՝ շուտ... Խաղո՞ղ,— հեգնեց Խալեն,— աշխարհքի շենն ու ավերն սրա վրա է,— ձեռքը մեկնեց ցորենին։— Խաղո՞ղ... Կոտն առ ու արի։

Հետո Խալեն կրում էր ցորենը, կրում ու հաշվում էր՝ ամեն կոտի հետ մաղի մեջ մի քար էր ավելացնում, ամբարի շուրթն ի վար խշշացող ամեն մի կոտ ցորենի հետ Խալեն մաղթում էր. «Առ ու ուրախություն տուր»,— բարձրաձայն էր ասում, որ ամբարը լսի, իսկ երեխաները բոլորուն ու խելոք նստել էին ցորենին մոտիկ և հատ-հատ գցում էին բերանները, հատ-հատ՝ ինչպես խաղողի ողկույզից պոկած հատիկները։

Խալեն կրեց՝ լցրեց ամբարը, հաշվեց և աղոթաձայն մաղթեց ու լցրեց ամբարը և երբ վերջացնելու վրա էր, լսեց բրիգադիրի կանչը. «Խալե՜ն»,— կոլտնտեսության կալից էր կանչում։

— Էգա՜, էգա՜։— Ամբարի գլխից Խալեն տեսնում էր՝ կալում դար-

մանն են վրա տալիս, իսկ ինքը ուշացել է։ Վերջին կոտը բուռ-բուռ լցրեց, կարելի էր նաև ավելել, բայց բաշխեց թոռներին։

Երեխաները խառնվեցին իրար։

— Հատիկ մի ցորեն չմնա գետին։— Խիստ պատվիրեց Խալեն։— Գլխիկ մի հող խառնեք... Ճանկ մի-երկու էլ հավի կուտ խառնեք ու տարեք ձեզ համար խաղող առեք։

— Խալե՛ն,— բրիգադիրը կանչում էր, հա կանչում։

— Պրծա՞, էգա՞...

Խալեն ամբարի բերանը չուլ ու փալասով ծրարեց, բերնկալ սալքարը վրա բերեց, ափալ-թափալ ցեխ սարքեց, ծեփեց ամբարի բերանը, հետո, չնայած ուշանում էր, սիրտն ուզեց նստել լիքը ամբարին ու ծխել։

Գլուխը տաք պտտվում էր։ Մի շաբաթ, գիշերները, թեղին պահակություն էր արել — աչք էր կպցրել ու բացել, անցած ողջ գիշեր՝ քամհարի պոչը ձեռքին, ահա մի ամբար ցորեն կոտ-կոտ կրեց, բայց հոգնածություն չէր զգում։ Չէ, դադրությունից չէր գլխապտույտը. երկինքը կապույտ ազորիք էր, և արևը, որ արդեն կտրվել էր լեռներից, փափուկ ու տաք ալյուր էր մաղում Խալեի գլխին։

2

«Հարսնուկ բոբիկ... հարսնուկ բոբիկ ու չիփլախ։— Եթե ոչ մեկին ոչ մի մազ չգնի, հարսին, ճիտքը ծուռ մնացած հարսին Խալեն ոտից գլուխ հագցնելու է։— Ազնոն չիփլախ, Նախշուն բոբիկ ու չիփլախ,— Խալեն իր հաշիվների հետ էր։ Եղանը ձեռքին, մինչև ծնկները դարմանի մեջ խրված, աշխատում էր ու հաշիվ-մաշիվ անում։ Շուտով կոլտնտեսությունը բերք է բաշխելու և, որքան Խալեի ականջն ընկել է՝ աշխօրին չորս կիլոգրամ... Այսպես շեն կոլտնտեսությունը երբեք չի եղել՝ չորս կիլոգրամ... Գերդաստանով ունեն... կունենան... որքա՞ն աշխօր... Հա փորձում էր մինչև վերջ իր աշխօրի ու հասանելիք բերքի հաշիվը անել, բայց ոչինչ չէր ստացվում։ Իսկ որ ահագին ցորեն ու գարի է ստանալու՝ հաստատ է ու հաստատ։ Երկուսուկես կոտ հաշվապահի հորը պարտք է՝ կտա, ձմռան աղունը կառանձնացնի, մնացածը կտանի շուկա։ Իսկ ամբարը... Չէ՛, ամբարին ձեռք չի տա, մինչև գարուն ամբարի բերանը չի բացի. կոլտնտեսությունից սպասվելիքը բավ է և՛ աղունի համար, և՛ այլևայլ կարիքների։— Ազնոն բոբիկ ու չիփլախ։— Ազնոն հասած աղջիկ է. Ազնոյին նմանապես պետք է կարգին հագցնել, ինչ հարսի համար գնեց, նույնը՝ աղջկան։— Մուրդիկ բոբիկ, Քնոն բոբիկ

ու չիփլախ,— դպրոց են գնում, ամոթ է,— Նախշուն բոբիկ, Սմբոն բոբիկ, Աբեթնակ... Չէ, Աբեթնակը դեռ մատմիս երեխա է, դպրոց էլ չի գնում... Պատիկ թոռների համար Խալեն սոլ չի առնի, տրեխ կկարի, պատիկ թոռներին միայն շոր՝ կապույտ դեգենալից, դիմացկուն, կեղտակորուս»։

Եվ մղեղով, դարմանով, կալի խտուտ տվող բույրով ու արևով պարուրված Խալեն հանդարտ ու համաչափ դարման էր վրա տալիս — արեվի շողերից դեղին ու փայլփլուն կտոր էր գործում — դեռ արևածագից թերթերունքներն ի կախ ծիածանը փողփողում էր հայացքի դիմաց։

Երբեմն բրիգադիրի վերվերի ձայնն էր անցնում ականջի մոտով, հանձնարարություններ էր տալիս կալվորներին, մի երկու անգամ էլ Խալեին մոտեցավ՝ գովեց-խրախուսեց, երբեմն աչքը դիպչում էր կալեզրի խումբ գործավորներին, սիլոսի խրամատ էին փորում և բարձրախոսում։— Խալեն տեսնում էր, բայց չէր նկատում, լսում էր ու չէր հասկանում. իր գործ ու մտքերի հետ էր։

«Իմ խղճուկ պառավին նմանապես փոթ մի պետք է։— Կնոջ համար, է՛, երբվանից՝ ոչ շոր, ոչ սոլ։ Պատերազմից առաջ, երբ Սարհատ որդու հետ գնացին քաղաք հարսին պսակաշոր, նշանի մատանի ու զգեստ գնելու, այն ժամանակ կնոջը նույնպես շոր ու մոր առավ։ Էդ էր ու էդ... Եվ միտք բերողն ու նախաձեռնողը որդին էր, Սարհատն էր... Լիներ ու այս առատ աշնանը հայտնվեր... Կորած տղերքից մեկն ու մեկը երևար... Ա՛յ, այդ առիթով արժեր ամբարի բերանը բացել... Հա՛, գարուն չեկած, Խալեն մեն ու միայն այդ առթիվ կբացի ամբարի բերանը, դահոլ ու զուռնայով կբացի, ինչպես նպատակով պահած յոթը տարվա գինու կրասն են բացում... Հրաշք լիներ ու հայտնվեր որդիներից մեկն ու մեկը։— Անօրենները զիմ տղեք խլեցին — Խալեն հայհոյեց Հիտլերին — զիմ ասլան տղեք խլեցին ու երկինքն էս շեղջ մխիթարանք ուղարկեց։— Նրա աչքերի առջև էլի ցորենի կուտակն էր։ Կրել էր՝ ամբարել, բայց հայացքի դիմաց էլի շեղջն էր ու կար։— Էս արդար շեղջ մխիթարանք է։— Բայց այդ մտքի վրա այս անգամ մեղավոր զգաց իրեն. որդիներ է կորցրել և հացո՞վ պետք է ամոքվի, է՛, ասիմ որտեղ շաղ եկած արյան փոխարեն որպես սփոփանք մի կուտակ ցորե՞ն. մեղա, տղեք, մեղա, ի տեղ սիրով ու բարությամբ լի ջահել ու եռանդուն որդիների որպես սրտիհովանք տաք հա՞ց, մեղա, տղեք, մեղա։ Ցփնված — սառած արյան ամոքիչը դալար երակների մեջ բողբոջող արյունն է... Սարհատ որդու տեղը կանաչ է. Սարհատը ժառանգ թողեց... Ուր է թե, մինչև կոիվը, մյուս երկու որդիները նմանապես կարգված լինեին... Խալեն գիշեր կաշխատեր, ցերեկ կաշխատեր, եզի փոխարեն լուծ կքաշեր. քար կա-

ղար, հող կմաղեր, երկնքից աղոթք ու աղաչանքով, անեծք ու հայհոյանքով ջուր կբերեր, Խալեն... Խալեն ձեռնքաշություն կաներ և կպահեր իր ժառանգների ժառանգներին, իր արյան արյունը... Թե չէ՝ մարդ տղեք կորցնի ու հացո՞վ մխիթարվի։ Բայց արշալույսի հետ տան կշտին ճոթերը հավաք բազմած ծիածանը՝ ցորենի շեղջը Խալեի համար մնում էր։ Կար... Ու թե դա մխիթարություն չէ, այդքան ցորեն երկինքը որպես հովություն չէ ուղարկել Խալեին, ապա՝ որպես ի՞նչ... Այս լեռնային քարեմսուր գյուղում, ուր քսանհինգ տարի ապրում է Խալեն, այսպիսի առատություն չի եղել։ Պատահեց... Եղավ ու հենց այս նշանավոր տարվա հետ։ Հավատալու բան չէ։— Տարվա հետ՝ համ հաղթություն, փառք, համ հաղթություն, համ խաղաղություն, համ առատություն... Էղնելո՞ւ բան է... Էս շեղջ թե մխիթարանք չէ... Ու մխիթարանք չէ,— պնդեց Խալեն,— ուրեմն... ուրեմն փորձանք մի կա... Հա՜, երկու երանի հետ իրար Խալեին չի հանդիպի ու չի հանդիպի, ջանըմ, փորձանք մի կա։— Ասված թե մի բան տվել է Խալեին, մեկ ուրիշ բան է խլել, երբ Խալեն սխալվել է ու ծիծաղել, նույն օրը լալու պետք է ունեցել, թե առավոտյան է ծիծաղել, իրիկուն չեկած լացն է վրա տվել, թե իրիկունն է ծիծաղել՝ առավոտյան լացել է։ Միշտ ու միշտ էդպես. Խալեի բախտը հա մի կողմի վրա է պտտվել, միշտ՝ մի կողմի վրա, ինչպես աղորիքը։ Թե աղորիքն իր պտույտի ուղղությունը փոխեց, կփոխվի նաև Խալեի ճակատագիրը։— Աղորիք մեկ կողմի վրա կպտտվի, ջանըմ... Շեղջ մի ցորեն ու անփորձանք վայելո՞ւմ... Չէ՜, փորձանք մի կա։

Խալեն եղանը խրեց դարմանի մեջ, դադրած հենվեց եղանին ու նայեց շուրջբոլորը։ Կալեզրին սիլոսի խրամատ պատրաստողները գլխանց խոսում էին, աղմուկ-աղաղակ էր և, մեկ էլ, Խալեի ականջը ընկավ,— հեղե՜ղ...

— Հեղե՞ղ...— Խալեն ցնցվեց։

Եվ չիմացավ, թե ինչպես հասավ գործավորների մոտ, ո՞ւմ ձեռքից խլեց բահը, ո՞ւմ ձեռքից քլունգը խլեց, ո՞ւմ հրեց, որ քլունգը ձեռքից բաց չէր թողնում, ո՞ւմ հայհոյեց, որ ատամները բաց հոհռում էր... Եվ չիմացավ ինչպես հասավ ամբարի մոտ։

3

Հայլեեե՜ն... Հեղեղ է ու կատաղի հեղեղ... Սարից պոկված գյուղի վրա քշած այդպիսի ամեհի սելավ Խալեն չի տեսել։ Որքան ածդահա է այդ անիծվածը, որ ճոթ տալով, գյուղի առու ու փողոցներով բաշխվելով, բաշխվելով այսքանը բաժին է հասել Խալեին, և քշում է ուղիղ ամ-

բարի վրա, հենց՝ ամբարի... Խալեի հայացքի դիմաց պղտոր ու կատաղած ալիքները զարկվում էին ամբարին, գալարվում ու զարկվում էին ամբարի պատերին։ Եթե չթուլանա, եթե չդադարի՝ ամբարի պատը չի դիմանա։

— Հատիկ մի ցորեն չես տանի։— Հայհոյեց Խալեն։— Խալեին կտանիս ու հատիկ մի չես տանի։— Եվ քլունգը ձեռքին նետվեց հեղեղի մեջ ու զգաց, որ սխալ արեց. բահ ու քլունգով այդ հրեշի հունը փոխել չի լինի։ «Քու ուշք քու գլուխ պահե, Խալե,— մտքում խիստ զգուշացրեց իրեն,— էս հուշապի գլուխը հարկ է քարերով ջանջխիս»։

Եվ կից պատաշարից քարեր կրեց ու զարկեց հեղեղի գլխին, կրճատոցով հայհոյեց ու քարերը թափով շպրտեց դեպի ամբարը թռչող ալիքները,— հատիկ մի չես տանի,— կրեց ու զարկեց, բայց տագնապով, կռվով ու վճռականությամբ բռնկված աչքերի դիմաց քարերը կուլ էին գնում, հեղեղը քանց տաշեղ քշում էր շպրտած քարերը և ավելի կատաղի հարձակվում։

— Քու ուշք քու գլուխ պահե, Խալե,— ձայնարկու և ավելի խիստ զգուշացրեց իրեն,— քու բերած քարերն առվակ մի ջուր չեն կալի, էս անիծվածը հուշապ է։

Եվ պատաշարից ընտրեց մեծ քարերը։ Մեծ, որքան կարելի է՝ մեծ... Խալեն փափախը շպրտեց մի կողմ, այծենին հանեց-շպրտեց ու գրկվեց մեծ մի քարի։ Որձաքար էր ու խոշոր, բայց հենց դա էր պետք, հենց դրանով Խալեն պետք է ջնջիր վիշապի գլուխը, որձաքարով... դժվարը գետնից կտրելն է,— յա՜, տեր։— Չէ, Խալեի թևութիկունքի ուժը քամին դեռ չի քաշել, որ հեղեղը ամբարը քշի... Երկտակված, կուրծք ու ծունկներով հասցրեց քարը, բայց շպրտել չէր կարող, հարկ էր ճեղքել հեղեղը... Օհոո՜հոո՜ոհոո՜ո... ծունկն ի հար է... Մեկ է՝ մի հատիկ չի տանի։

Քարը թիկունք արած հենվեց ամբարին, կուրծքը՝ մոլեգին ալիքներին դիմադիր։

— Դե զարկ։— Խալեն փնչաց հայացքի դիմաց փրփրած ալիքներին։ Պետք են միայն այդպիսի քարեր, միայն այդպիսի խոշոր որձաքարեր... Ահա։— Ցա, տեր։— Ուժ տուր, Խալե, քո թև ու թիկունքի զորության տեղը եկել է, եղած-չեղածը թե հենց էսօր, հենց հիմա ծախսես ու սպառվես, արժի. ծախսելու ժամը հասել է... Ահա։— Ցա, տեր։— Փորձանքի ժամ է, վերջին շունչ տալու կամ շունչ փրկելու ժամ է... Օհո՜ոհո՜ոհոո՜ո... պակասելու, կտրվելու միտք չունի՝ ծնկահար էր ու ծնկահար էլ կա... Փութալ է պետք ու մեծ քարեր... այդպիսի խոշոր քարեր,— յա, տեր։— Թե աղիքի ոլորում էլ ստանաս՝ գրկիր. մեռնել-ապրելու ժամ է, ծունկ ծալիր ու վերցրու... Այդպես... Թե աղիք պետք է կտրվի, իզուր

տեղ չէ. հրեշի գլուխ ես շախշախում,— յա, տեր։— Ու թե պատահի ու աղի կտրվի, միևնույն է, խալեն շարունակելու է կռիվը՝ քարի փոխարեն ինքը իրեն քաշ-քաշ կտանի, կճեղքի սելավը, ի տեղ որձաքարի խալեն ինքը թիկունքը կտա ամբարի պատին, կուրծքը՝ ալիքներին։— Յա, տեր...

Եվ պատահած խոշոր քարի առջև ծունկ ծալեց, ուժը պատում էր թե չէ՝ կուրծքը տվեց և երկտակված տարավ՝ դեմ արեց ամբարի պատին։

— Դե զարկ,— խալեի հայացքի դիմաց հեղեղը փշրվում էր ուսընկից ու պինդ կանգնեցրած որձաքարերի կրծքին,— դե զարկ,— հեղեղի գլուխը արդեն փշրվել էր. հորձանքը փրփրած գալարվում էր ամբարի պատի տակ և քաշվում դեպի փողոցը։ Հիմա արդեն ստիպված է օգնել այդ նեղվյալին։ Որտե՞ղ է քլունգը... Ո՞ւր գցեց բահը... Այդպես... Հորձանքը հազիվ կոճերն է ծածկում՝ հավաք-ուռած մեջքով չէ, շաղ է եկել։ Քիչ հետո խալեն եղածն էլ կուղարկի գրողի ծոցը։ Քլունգը ուժգին ու փութկոտ իջնում էր, թափով ու վրա-վրա, և մի ափ հող թռավ դեմք ու ճակատին, լցվեց աչքերը։ Ուզեց հեղեղաջրով մաքրել, բայց թշնամի էր այդ տնաքանդ անօրենի հետ ու թևքով սրբեց դեմքը։

— Ջիմ շե՞ղջ կտաներ։— խալեն այնպես՝ հաղթական փնչաց, ինչպես ծունկը ցուլի պարանոցին սեղմած ցլամարտիկը։

Հետո նա աչք-աչքով տեսավ, թե ինչպես շաղ եկավ փողոցում, և երեխաները թռվռում էին գետնատարած սելավի բզկտված մարմնի վրա...

«Էս փորձանքից նմանապես պրծանք,— խալեն խոր շունչ քաշեց։— Ու բարին էն էր, որ փորձանքն երկնքից էր ու մարդուց չէր»։

Եվ նայեց շուրջբոլորը։ Կոլտնտեսության կալի կողմից ձայներ էին լսվում, փողոցում վազվզում էին երեխաները,— էդ սատկածի հետ կխաղան,— մտածեց խալեն, հետո աչք դիպցրեց երկնքին, և թերթերունքներից կախվեց մետաքսե քողը։

— Արևով անձրև է,— ժպտաց խալեն։

Եվ մի պահ զարմացավ երկնային հրաշքի վրա. քիչ առաջ գոռոնգոչուն էր, մտածեց խալեն, երկինքը պատռվել էր ու քանց կժի բերան բացես՝ հեղեղ էր թափվում, աշխարհանցում էր, մտածեց խալեն, ու հիմա՝ արևով անձրև...

«Կպիտի ղիմ փոթերն հանիմ ու կանգնիմ էս անուշ անձրևի տակ»։ Եվ փորձեց շփել թաց ճակատն ու երեսը, բայց ձեռքը ծանր կախվել էր, և ծնկներն էին դողում...

Երբ տուն մտավ, գերդաստանը հացի էր նստել։ Մխախոտի դաշտից ճաշվահացի եկած հարսն ու աղջիկը, երեխաներն ու թոռները շրջապատել էին հացի սեղանը։

— Հայ-հա՜յ, աշխարհքն իրարանցում է, դուք՝ անդա՜րդ ձեր հացին։

Հենց ոտքը շեմից ներս դրեց, դեռ բերան էլ չէր բացել, գերդաստանը ոտքի թռավ։ Բարոն առանց փափախի էր, առանց այծենու, առանց կոճակների, վերնաշապիկի թևքը պատռված, դեմքին, կուրծք ու պարանոցին քրտինքով շաղված հող ու մղեղ, թիկունքը ճղփում էր քրտինքի մեջ... արտակարգ մի բան պատահել էր. մեծ ու փոքր վեր թռան։

— Անձրև՝ քանց կժի բերան բացիս, հեղեղ աշխարհքն առե բերանն ու կերթա, կհարցնին՝ ի՞նչ է պատահե։

— Ի՞նչ հեղեղ, բաբո։

— Հեղեղ... հուշապբերան սելավ... Մեջ գեղին կպտտվի... Ուշ հասնեյ, շեղջն ու ամբարը կառներ բերանն ու կիջներ ձոր։

Տնեցիները դռների մեջ իրար զարկվելով դուրս թռան ու ծփացին գեպի մարագի թիկունքը, ուր ցորենի ամբարն էր։ Շնչակտուր հասան և շփոթված կանգ առան...

Ամբարի պատն ի հետ կողք-կողքի քարեր էին շարված, խոշոր-խոշոր որձաքարեր, և քարերի կուտակ կար ամբարի թիկունքին և աջ ու ձախ շաղ եկած քարեր կային, զիգզագ ու խորը մի առու էր բացված՝ ամբարի պատի մոտից ոլորվում էր դեպի փողոցը, տնամերձի պատաշարը ահագին տեղ փուլ էր եկել, քանդ ու քարափ էր, իսկ հեղեղ...

Իսկ հեղեղ չկար։

Ոչ հեղեղի ձայն։

Եվ ոչ հեղեղի հետք։

Ոչ տեղատարափ, ոչ արևով անձրև՝ ոչ գյուղի վրա, ոչ սարերի գըլխին։

— Խալե, ավեր տուն, ի՞նչ անձրև,— կինը չէր հասցրել դուրս գալ՝ արմանք-զարմանք էրիկին էր նայում,— ի՞նչ սելավ... Հըլը տես։

Արևը երդիկից ներս էր խուժել, միջօրե էր, և արեգակի ոսկեայությունը կանգնել էր տան կենտրոնում։ Խալեն շշմած նայեց կնոջը, արևն այունը շոշափեց, թևով թաղեց աբևի խուրձը և աչքերը տրորելով ելավ դուրս։

Հետո, բզկտված ու անդտակ Խալեն, շշկլված նայում էր. շոգ ամառ

էր կանգնել օրվա գլխին, առավոտյան օրվա շունչը աշնանային էր, հիմա՝ էլի ամառ, երկինք ու գետին բարկ, օդը խարկված։

Եվ երկնքում գոնե աղավնաթև ամպ չկար...

ԳԻՆԱՐԲ ԾԱՂԻԿ

1

Տրակտորները եկան...

Մինչև ճամփաբաժանը ասֆալտը նախշելով եկան, հետո թեքվեցին ելվերիկով, ճամփի հետ փոշոտվեցին, ճամփի հետ ծռմռվեցին ու ծառս եղան, ճամփի հետ շունչ քաշեցին սարի գլխին, ու երևաց գյուղը։ Առավոտ էր, և Արագածի համար փեշ, իրենց համար գագաթ այդ լեռները ճամփի վրա հանց կորեկ-արև էին փռել, այդ օրվա արևն էին տաքացնում քարերի գոգերում, օրվա խաղաղության խորհուրդն էին բացել երկնքի տակ։ Տրակտորները օղակ-օղակ աղմուկ կրակեցին. լեռների լռության թելը կտրվեց, և իր տան դռանը նստած Բարսեղ ծերունին խլվլաց, ափը աչքերին հովհար արեց...

— Պապի, տրակտոր է, տրակտոր։ Մեկ, երկու, երեք... վա՜ա, շատ են, պապ, շա՜տ։

— Յա՜։— Բայց զարմանք չէր։

Թող լինի վայրի մի երկիր և իր տոհմիկ Բարսեղ անունը այս լեռները բերած, թող լինի իննսուն տարեկան ու տառերին անծանոթ, լինի էրգրի նախկին նախրորդ, այս նոր գյուղի նախկին նախրորդ, բայց Բարսեղը չտես չէ. գյուղը տրակտոր ունի՝ ձայնը ականջին ծանոթ, գյուղով ու իր դռնով հերու տանկեր անցան՝ գնացին աչքից հեռու մի տեղ դատարկ փամփուշտներ կրակելու, գյուղի ու իր տան երկնքով օրական սավառնակ է անցնում, Բարսեղը Երևանում «Վարդանանք» ներկայացումն է տեսել...

— Տասը, պապ, տասը հատ են։

— Յա՜։— Զարմանք չէր, հենց այնպես պատասխան էր։ Բայց ելավ, ափի մեջ առավ թոռան ձեռքը, դնդնում էր՝ կտրեց. երգը տրակտորի աղմուկից փախցրեց-տարավ տան թիկունքը՝ կարտոֆիլի թփերի հետ դեղին-դեղին փռելու տնամերձի դադրած հողին։ Իսկ տրակտորները ուր ուզում են թող գնան, մի տեղ գործ ունեն, թող անցնեն գնան։

Հետո, երբ տրակտորների աղմուկը գյուղի գլխին դարձավ ծուխ, Բարսեղ քեռին կցեց կտրածը.

Աղչի, Հայկո, Հայկո,
Դոշերդ մի բանա...

Շարունակեց՝ ինչպես կիսատ մնացած զրույց, կիսատ մնացած միտք ու երազ։ Է՞, էրգրից սկսած նախորդ է եղել, օրերի զրույցը խաղն է եղել, զրուցակիցները՝ սարերն ու ձորերը։ Մի ժամանակ, երբ նախապան էր, երբ դաշտերում էր ասում խաղ՝ բոլորը մարդկանց մասին էր։ Հիմա, երբ ջահել օրերի զրուցակից լեռները մնացել են, է, յոթը սարից այն կողմ՝ ջահել օրերի զրուցակից լեռները կորել են, հիմա, երբ այս նոր գյուղի նախիրն էլ չի քշում, և գյուղի շրջակա սարուձորերն էլ հեռացել են, հիմա նույն ու բոլոր խաղերը մարդկանց չէ, նրանց մասին է՝ կորած... կորած ու հեռացած լեռների։ Եվ Բարսեղ ծերունու ձայնը հեռո՞ւ հեռվից, սարերի թիկունքից է գալիս՝ ամպոտ ու խոնավ և ոլործուն է, և մաշված ու պատառ-պատառ։ Դնդնում է՝ վերհիշում էր ու սարերի զրույցը, երգում է՝ իր կցկտուր զրույցն անում սարերի մասին, իսկ լսողներն ասում են՝ քեռի Բարսեղը լավ է երգում։

...Դոշերդ մի բանա,
Ասկյար իմ՝ կերթամ.
Սալդատ իմ՝ կերթամ...

— Պապի, ասկյարն ի՞նչ է։
— Ասկյար սալդատ է։
— Բա սալդատ ի՞նչ է։
— Սալդատ ասկյար է։

2

Տրակտորները կանգնեցին խուչերով արտերի մոտ։

Տղաներն իջան, դեմքներն այդ լեռների երկինքն արած, ծմկոտացին— թիկունք ու ողնաշարներից քամեցին հոգնածությունը, տղաները ականջներից թափեցին չնչված աղմուկը՝ ծտերը կտցահարեցին, տարան։ Ճնճղուկները իրենց աշխարհի տագնապի ազդանշան տարան, իսկ տրակտորիստներին թվում էր, թե նրանք, ծտերը, աշնանային իրենց երգն են ասում։ Ճնճղուկները խառնվել էին իրար, խմբով գնում, թաք-թաք դառնում էին, մեկ-մեկ գնում, դառնում էին խմբով, ճկճկում. ի՞նչ կա, ինչո՞ւ եք եկել։ Իսկ միջնակներով կտրված արտերում քարակույտերը (Բար-

սեղ ծերունին ասում է՝ խուչ) խաղաղ արևկող էին արել և քար ամրությամբ այդ տարվա աշունն էին մաշում։ Աչքամոտ քարակույտերի արանքներում լաթ-լաթ հող կար, գնալով տղաների հայացքի դիմաց քարակույտերը մոտենում էին, և լաթերը բարակում-դառնում էին հողով լցված-ծռմռված առու, գնալով քարակույտերը շատանում-մոտենում էին, և առուն դառնում էր գիծ, հետո այդ գիծն էլ էր կտրվում, մնում էին միայն քարակույտերը՝ իրար ձուլված։ Այնտեղ արևի շողերն ու մշուշը թրթռում-խաղում էին և, թվում էր՝ թե քարակույտերը քլթքլթում են։

Տրակտորները մտան արտերը...

Խուչերը խլխլացին, շարժվեցին, քարերը ծեծեցին իրար։ Է, երբվանից՝ հաշտ-հաշտ, այդպես հավաք մնում էին։ Իրարից արև ու հով, ջուր ու մամուռ չէին ուզում, ոչինչ չէին ուզում և չունեին կռիվ։ Հիմա քարերը վիճում էին, գլուխ-գլխի խփում, իրար հրում բուլդոզերի բերանը։ Խուչերով արտերում կռվող քարերը շփոթված էին. տրակտորների ու տրակտորիստների հետ կռվելը դժվար էր՝ իրար էին ծեծում։

Մինչև իրիկուն քարերը ծեծեցին իրար։

Մինչև շաբաթավերջ աղմկեցին շփոթված քարերը։

Ամսվա վերջ էր՝ արտերից հազար-հազար քարակույտ, գլխների տեր ծառերի պես, ծառերի հետ, թռել-գնացել էին։

Ջմեռնամուտ էր, տրակտորիստ տղերքը ձեռնոց էին հագել, հուսալքված ճնճղուկները իրարից բույն էին խնդրում. ճնճղուկները կլոցահարում էին արտերի վրա թափառող ծուխը, ծխի ճոթերի հետ շարժվում՝ տաքանում էին։ Ջմեռնամուտին քարակույտերը դարձան աղմուկ ու մարեցին։ Քարակույտերում թաքնված ճնճղուկները եղան ծուխ ու խառնվեցին ամպերին, և ձորապոնկին քառասուն արտի տեղակ փռվեց մեկը։

Խուչերով արտերի նախորդ ձմեռը ալիքավոր էր՝ թվում էր, թե արտերին նստած ձյունե սավանի տակ քամի է մտել, մոլորվել է. գալարգալար պտտվում է։

Հիմա քարակույտերը չկային, և ձմեռը արտին դուրան նստեց։ Քարակույտերը չկային, և գարունը չճմրթվեց, եկավ ու ընկղմվեց արտում։

3

— Երթանք Խուչերով արտերն. իմ թոռան գինարը ծաղի՞կ քաղիմ։

Բարսեղ ծերունին առավ ձեռնափայտը, բռնեց Մանուկ թոռան ձեռքից, ելավ դուրս։ Գիշերը անձրև էր եկել, լողացել էր գյուղը, արևկող ադած ծխում էր, և ծերունին փափո՞ւկ, փափուկ անցավ գյուղամիջով.

ելվերով դեպի խուչերով արտերը։ Արևը ցող հավաքող մանկտիք էր ուղարկել երկիր, մանկտիք էր ուղարկել, որ Բարսեղի թիկունքն ու ծոծրակը խուտուտ տան, և նա ճերմակ բեղերի տակ ժպտում էր ու գնում։ Չկար ինքնուն տարեկան ոսկորների վեճը, չկային ձնաբուքի պես կրտրակցվող, ձնաբուքի պես վնգստացող ձմեռվա խոհերը։ Եվ տարիներից ու հուշերից էր դատարկված։ Երազի մեջ էր. երազում ինքը գոլորշի էր, թավալվում-ելնում էր սարերը։

Չէ՛, ուղղակի գարուն էր, երկու երեխա ծաղկի էին գնում։ Այսքանը։ Միայն թե մեկը անհամբեր էր՝ պատահած ամեն ծաղկի ձեռք էր մեկնում, մյուսը համոզում էր.

— Հասնինք խուչերով արտերն. իմ թոռան Գինարը ծաղի՞կ կքաղիմ։

Քառասունյոթ-քառասունութ տարի առաջ, երբ իրենց կորցրած էրգրի անունով վրան խփեցին այդ լեռներում, աշուն էր։ Երբ ձորափը բաժանեցին, քարերը հավաքեցին՝ արին կուտակ-կուտակ, և ձորափը կընքեցին՝ խուչերով արտեր, աշուն էր։ Իսկ գարնանը Բարսեղը վերցրեց փայտը և շարունակեց էրգրում կիսատ թողած նախքարդությունը։ Եվ այդ գարնան խուչերով արտերում նա հանդիպեց, հանկարծակի հանդիպեց ծանոթի... Գինարը ծաղիկն էր։ Աչքերին չէր հավատում. ախր, Գինարը էրգրի սարերում մնաց, չգաղթեց՝ մնաց։ Լինելո՞ւ բան է... Չէր հավատում։ Իսկ Գինարը խատուտիկ աչքերով ժպտում էր։

— Քու անուն Գինա՞րը է։

Ծաղիկը գլխով արեց։

— Քու անուն Գինարը է, չէ՞։— Ծնկեց, շնչեց բույրը։ Կասկած չկար՝ նա էր։ Պոկեց՝ դրեց ծոցը։ Նախիրը թողեց. Գինարը որոնեց, հավաքեց՝ փունջ արեց, հավաքեց՝ ամրացրեց գլխարկին և աչք ածեց արևին՝ չթեքվե՞ց, իրիկուն չէ՞. ախր, էրգրից ծանոթ է եկել, գյուղ պիտի տանի։

Այդ իրիկուն Բարսեղը գյուղ իջավ՝ գլխին համբուրելու հյուրը։ Իջավ երգելով.

Սիծեռնակը ծիվ-ծիվ եկավ,
Հայոց երկրից լուր բերեց...

Այդ իրիկուն գլխարկի փոխարեն գլխին Սովասարից մի կտոր շաքր, էրգրից մի կտոր նշխար՝ իջավ գյուղ։ Բաժանելով անցավ գյուղամիջով, մինչև ուրախություն մաղեց, հասավ տուն՝ վերջինը մեկնեց կնոջը.

— Կճանաչի՞ս։

— Հրի՜, մեր Գինարբն է։

Նախրապան Բարսեղն ու գյուղի հովիվները ուրիշ տեղ չհանդիպեցին Գինարբի, միայն խուշերով արտերում կար։

...Հիմա նորից գարուն էր, Բարսեղն արդեն հայացքը ձեռնափայտին թեյած մի պստիկ, ճերմակ ծերունի, երկրի ու երկնքի արանքում կապույտ ցնորք, գնում էր։

Հասավ ջրամբարը, անցավ, հետո էլի մի քիչ աչքերն ու գետինը համբուրեցին իրար, և հայացքը ծանոթ սալաքարի փոսաջրի մեջ լող տվեց։ Հա, ուրեմն՝ հասել է։ Գլուխը բարձրացրեց ու նայեց... նայեց... նայեց... Աչքերի դիմաց ձգվում էր սև մի շերտ։ Աչքերը տրորեց, ճպճըպացրեց... Դիմացը թրթռում էր սև մի շերտ։

— Մանուկ, պա՞տ է...

— Հա՛, պապ։

Մարմնով դող անցավ։ Շվարած նայեց շուրջբոլորը՝ ծիածան էր փլվել, գույները թել-թել խճճվել էին, և սև շերտը գետնատարած ոլորվում էր փլված ծիածանի միջով։

Ճանապարհը անցել էր գլուխկախ, և ոտատակի գետինը՝ քարերը, խճերը, ճիմը, արտերն ու միջնակները, գոլը, արևը... ոտատակի գետինը ճանանչ էր եղել, ու գիտեր, թե ոտքերը իրեն ուր են տանում։ Ուրեմն ոտքե՞րն են սխալվել։

— Մանուկ, մենք գեզի առուն կարեցի՞նք-անցանք։

— Հա, պապ։

— Ջրամբարի մոտով անցա՞նք։

— Հա, ջրամբարը էն է։

Նայեց թոռան պարզած ձեռքի ուղղությամբ և տեսավ միայն գույների պարը... Բայց եթե ոտք ու ոտատակ խաբել են, թոռը խաբում է, սա հո սալաքա՞րն է։ Ախր, նա է, ջրափոսով սալաքարն է, ինչպես թոռը իրական ու մերձ։ Ձեռնափայտը թխկթխկացրեց քարին ու լսեց ծանոթ պատասխանը։ Խոնարհվեց, ինչպես տարիներ առաջ՝ հացաշորը վերցնելիս, և առավ նաև քառասուն տարվա իր հացընկերոջ բույրը։ Չէ՜, սխալմունք չկա. քայլերը շիտակ են բերել։ Միայն թե իր ու խուշերով արտերի արանքում կանգնած էր իրական մի պատնեշ՝ իրար վրա թափված քարերի գիզգզագ շարոց։

Ամեն ինչ պարզ էր... Անցած աշունքվան գյուղ մտած տրակտորների ազմուկը խառնվեց քարերի ձայնին, տաքացրեց ականջները և խըշշոցով բարձրացավ քունքերը։

Պատաշարի քարերը դեռ կարգին չէին տեղավորվել՝ նրա չանկրուտքից դուրս ցատքեցին, և Բարսեղը հաշվեց, թե՝ քարերը բողոքում են. փա-

Թաթվեց նրանց, քսմսվելով, քարերը շփել-շոյելով ելավ... Աչքերի դիմաց մթնեց դատարկ մի տարածություն։

«Խուշերով արտերի տունը փլեր է, Մանուկ»,— ասաց մտքում և ափլփելով իջավ ու նստեց օտարացած արտի փեշին։

Հողամասը դեռ ոչնչով զբաղված չէր. շաբաթ առաջ ավարտել էին գարնանահերկը՝ միջնակները, քարակույտերի տեղերն ու փոսերը քանդել-խառնել իրար, նոր քարեր էին դուրս եկել, և հիմա գոլը մարմանդ-մարմանդ արածում էր հերկի մեջ։ Չէ՛, Գինարը որոնելը միտք չուներ. Բարսեղ ծերունին արտ չմտավ, նստեց-մնաց։

...Հնձից հետո Խուշերով արտերը գյուղի ամենալավ արոտատեղին էր։ Գյուղի հովիվներն ու նախրապանները արտերը բաժանում էին։ Հետո պակասում էր արոտը, ջնջվում էին սահմանները, և Բարսեղի նախիրը ոտատակ էր տալիս բոլոր արտերը։ Կովերը անցնում էին քարակույտից քարակույտ, միջնակից միջնակ և արածած, էլի արածած, հա՛ արածած գետնից իրենց հոտն էին առնում և էլի ուտելու մի բան, իսկ Բարսեղը խուչին նստած՝ իր խաղերն էր ասում՝ մոլորվում հուշերի մեջ, ննջում էր, հետո կովերից մեկը բառաչում-իմաց էր տալիս, թե՝ նախիրը գնաց, ես ու դու մնացինք, կովը իմաց էր տալիս, գլուխը թափահարում գնում՝ ոտքերին շուալված փոշի։

...Բարսեղ քեռու ականջներում զրնգաց բառաչը. ոունգները փոշուց խուտուտ առան, նա գլուխը բարձրացրեց ու նայեց... Արտով մեկ գալարվում էր նախրի պոչից քարշ եկող փոշին։ Տրորեց աչքերը՝ պատրանքը ցնդեց, և հերկում ծխաց գոլորշին։ Պատրանքի հետ երգը հառել էր շուրթերը, և հուշերից մի բան ետ բերելու համար երգեց.

Աղջի, Հայկո, Հայկո,
Դուշերդ մի բանա,
Դուշերդ մի բանա...

— Անոթի ե՞մ։— Մանուկը նորից քաշեց պապի թևից, հետո ձեռքով ծածկեց պապի շուրթերը։ Ծերունին ուզեց ձեռնափայտով հասցնել թոռան նստատեղին, բայց խնայեց և, փայտին հենվելով, ելավ ու քայլեց ծեծված երեխայի պես։ Հետո քայլերի հետ թափվեց խռովությունը, և տեսավ, որ ոտքերի տակ նույն ծանոթ քարերն են, ծանոթ խճերը և ծիլերն ու շայիրն են ծանոթ, և արտերն ու միջնակները, և գյուղի ջրամբարն ու առուն, արևը, գոլորշին... Բոլորը ողջունում էին, ամեն մեկը իր լեզվով զրուցում էր, և նա բոլորին պատասխան ուներ։ Չէ՛, աշխարհում ոչինչ չի փոխվել, գարնան այդ օրվա ու արևի պես մնում է նույնը։

Եվ խուշերով արտերը կային, մնացին Թիկունքում՝ խուշերի ու Գինարբ ծաղկի հետ։

— Պապի՜, անոթի եմ։

— Իմ թոռան Գինարբ ծաղի՜կ կնվիրեմ...

Երգեցիկ ասաց, թողեց թոռան թաթը, ձեռքը գլխարկը տարավ... Հետո ոտքը, ձեռնափայտի հետ, դիպավ քարին, քայլերը ետ ու առաջ ընկան, ավելի խոնարհված ու ծռված գնաց, դեմքը ավելի մոտեցավ հողին. մոտ, շատ մոտ զգաց հողի շունչն ու շշնջոցը՝ կանչում էր, սիրտն ուզեց, որ գլորվի, գլորվի՝ երեսնիվար մեկնվի այդ գթասիրտ հողին, բայց, չիմացավ ինչու, չգլորվեց։ Եվ, հողի շշնջոցը ականջում, նորից բռնեց թոռան ձեռքը։

— Գինարբ ծաղիկներ կթողնիմ իմ թոռանն ու կերթամ։

4

Հասավ գյուղ, թողեց տուն տանող ճամփեն, գնաց կոլտնտեսության գրասենյակ, ձեռնափայտը մեխեց գրասենյակի կենտրոնում, ծա՜նր-ծանր նայեց նախագահին և ծա՜նր-ծանր շարժեց գլուխը։

— Ի՞նչ է պատահել, քեռի Բարսեղ,— հարցրեց նախագահը։

— Կհարցնի՞ս... Բա քո արածն արա՞ծ էր։

— Ի՞նչ եմ արել։

— Էն ափսո՜ս խուշերն ինչո՞ւ ես ավրե...

ՊԱՏՐԱՆՔ

1

Բազե Առաքելը արթնացավ արշալույսին։ Ութսուն տարվա սովորույթ էր. զարթնում էր լուսելուսին, և աչքը բացելու հետ հայացքը թռչում էր երդիկն ի բաց. «յա՜, բարի լուսո աստղ»։— Լուսաստղը, է՜, երգրի տուն երդիկին էր ծաղկում, նոր երդիկին ուրիշ երկինք էր բացվում, արշալույսին մանր-մունր աստղեր էին մարմրում երդիկի երկնքում և դրանցից ոչ մեկը Լուսաստղը չէր, սակայն Բազե Առաքելը երդումը ցուցամատին պնդում էր՝ է՜, էն է Լուսո աստղը։ Եվ նոր տուն կառուցելուց հետո էլ երդիկից, հացատնից, հողե հատակից ու երդիկից ձեռ չքաշեց։

— Ցա՜, բարի լուսո աստղ,— աչք բացելու հետ սովորականի պես շշնջաց, բայց զգաց, որ անսովոր՝ հաճելի մի բան խլրտում է ներսում... Հա՜ա, եղբոր որդու հարսանիքն է այսօր, Վաղարշակի հարսանիքն է, ախր։ Փառք աստծու։

Բազե Առաքելի եղբայրը երբ պատերազմ գնաց, եղբոր Վաղարշակ որդին գրկանոց էր, և Բազե Առաքելը հարսին գրկանոցի հետ իր տուն բերեց։ Եղբայրը կռվից չվերադարձավ, Վաղարշակը մեծացավ հորեղբոր տանը, հորեղբոր տնից բանակ գնաց և երբ վերադարձավ ծառայությունից՝ Բազե Առաքելը ունեցվածքը կիսեց՝ էս քեզ, եղբոր տղա, էս ինձ, էս քեզ, էս ինձ, էս քեզ, էս ինձ... Հիսուն ոչխար ուներ (խոշոր անասուն չէր պահում, բայց ամենաշատ ոչխարը միշտ էլ Բազե Առաքելն ուներ) Հիսուն ոչխար ուներ՝ ախպրաբաժին արեց։ Բայց եղբոր որդին մեկ-երկու տարում քամուն տվեց ունեցվածքը՝ ոչխարները ծախեց-ծախմխեց և անհայտացավ ու, քանի՞ տարի, մորը մենակ թողած, թափառում էր։ Եվ լավ է, որ հայտնվեց. գլուխը մտած քամին կարծես դուրս է եկել, փառք աստծու, վերջապես հայտնվեց և ահա ընտանիք է կազմում։

Բազե Առաքելը, մաղթանքը խլվլացող շուրթերին, կանգնեց բակում։ Ցմռան արշալույսի առնական շունչը ասեղնափայլ կայծկլտաց։ Աչքերի դիմաց թովուացող կայծերը Արեգակի սուրհանդակներն էին՝ օրը արևոտ է լինելու։ Եվ թող արշալույսի թևավոր հավքերը այսօրվա ուրախության լուրը հասցնեն նահատակ եղբորը։ Եվ թող լուսո աստղը...

Մաղթանքը Բազե Առաքելի շուրթերին կիսատ մնաց. նա գյուղահայաց լեռան լանջին, ձյունների մեջ ոչխարի հոտ նկատեց։ Այ քեզ հրաշք. ձմռան կեսին, լուսելուսի հետ այս հոտ ո՞ւր է գնում։ Այդպես՝ իծաշարուկ, մի մարդ ելվերող հոտի առջևից։ Բազե Առաքելը կկոցեց աչքերը— հա, էլի, մեկը՝ առջևից, մեկը՝ ետևից և՝ կողքից շունը... այո, սեղմ ու ձիգ հոտի կողքից շունն է վազում... ձմռան կեսին, ձյան միջով այս հոտը ո՞ւր է բարձրանում... Բազե Առաքելը տրորեց աչքերը և ընթացքում գլխի ընկավ՝ «Աստվածն իմ խելքն է առել, ախր՝ հոտ չէ, դա քանդած պատշար է... է՜, ի՞նչ, կոլեկտիվացումից առաջ, սարալանջում արտեր էին, ցանկապատերով զատված։ Հետո կամաց-կամաց արտերը լքվեցին, կմախքացան, պատշարները փլվեցին, շաղ եկան, իսկ սա — ոչխարի հոտ — իսկ սա Համբոյի ցանկապատն էր։ Այո, նրանը։ Համբոն հողակից հարևանի հետ տարին բոլոր վեճի մեջ էր և բարձր էր քաշել քարե ցանկապատը։ Լայն ու բարձր։— Հոտ։— Բազե Առաքելը ուրախ ժպտաց, տեսիլքը դուր էր եկել. ոչխարի հոտ. մի մարդ՝ առջևից, մեկը՝ ետևից, շունը կողքից ձնահյուս լանջով ելվերում է։ Աստված վկա,

գեղեցիկ պատրանք էր։— Բաղե Առաքելը ուշադիր նայեց լանջի քանդված պատաշարին...— Եվ, տես, խաբկանքն ու իրականը պատկերը որքան նման են. ահա...»։

Սակայն սթափվեց և մեղադրեց իրեն. այսօր մեծ հարկի, մեծ ուրախության տեր է, իսկ ինքը, ահա, դատարկ բաներով է զբաղված։ Եվ շտապեց դեպի դեղը, ձմռան արշալույսի առաջին գործը ոչխարներին կեր տալն էր, բայց լանջը ձգում էր։ Կատարից էլի նայեց՝ «Հարը գնում էր»։ Եվ հանկարծ Բաղե Առաքելը լարվեց — համբերն, համբերն — այդպիսի մի բան ոնց որ եղել է, այդպիսի մի պատկեր ինքը, սեղր, տեսել է... տեսել է...

«Հըրի՜ի...»,— և մշուշի միջից փափուկ լոպաչով հարանվեց պատկերը։

Մի տարի — էրգում էր, և ինքը արդեն կարգին չահել — մի ձմեռ, ձմռան կեսին հրդեհեցին ատրում կուտակված խոտն ու տերը։ Աստվոտյան ավագ եղբոր հետ սահնակները քաշեցին-բարձրացան սար և դեռ հեռվից տարօրինակ մի բան նկատեցին. համատարած ճերմակի մեջ սև, մեծ մի փալաս էր փռված՝ բղկտված եղբերով... Ցասկիան Ալին, որ աշնանը չորսը ոչխար պահանջեց, բայց չստացավ, Ալին գեղը վառել էր։ Խոտն ու տերը այրված էին, խակ հոտը ձմռան տակից դուրս բերել էր պետք։ Հայրը երկար չմտածեց. միակ հույսը մորեղբայրն էր, որ ամեն տարի երկու ձմռան անտառներ էր կտրտում։ Եվ առանձնացրեց ծանրած ոչխարները. նրանք, որ էսօր-էգուց ծնվելու էին, գտնեց հայրը, մնացածը, գաղթին մի հոտ՝ Լուսատոր հետ քշեցին։ Քեռու գյուղը Ճակատասարի թիկունքին էր. ստիպ կտրել էր պետք՝ քանի դեռ ձյան կեղևը պինդ էր, և արշալույսին քշեցին հոտն ու բարձրացան։ Ահա

2

Լուսատոր... Ճքճքան արշալույս... Ցնահրաս տար... ճերմակ լանջն ի վեր ձգվող հոտ... Հոտի առջևից մի չահել, ձախ ոտին հրացան, աջին՝ խուրջին... Հոտի հետևից մազմզոտ մի մարդ՝ հուրջը բաց, մահակը ձեռքին և հոտի շուրջբոլորը ծփացող մոխրագույն մի գամփռ...

Ծեգից մինչև ուշ գիշեր, ողջ հարանիքի ընթացքում այս պատկերը չհեռացավ Բաղե Առաքելից։ Եվ սարալանջի փլված պատաշարն էր ձգում։ Խնամու տանը հա շտապեցնում էր՝ ուշ է, ասում էր, հարսին արևով օջախ հասցնելն է կարգը, ուշ է։ Եվ խնամու դռնից առաջին դուրս եկողը Բաղե Առաքելը եղավ ու ոտքը շեմից դուրս դնելուն պես վազ տարալանջին նայեց։ «Հոտը գնում էր»։ Եվ մոտ կանչեց տնվանակիր

թոռանը — Առաքելը թոռներից ավագն էր. արդեն համալսարանի վերջին կուրսի ուսանող ու խորամանկեց, թե՝ աչքերը լավ չեն ջոկում, լանջում, ձյունների մեջ երևացող սև շարուկը ոչխարի հո՞տ է։

— Վա՜յ, պապ,— Առաքելը տաք էր. վրա պրծավ պապին,— էդ ինչ սիրուն բան ասիր, պապ ջան, դու բանաստեղծ ես, պապ։

Բազե Առաքելը հազիվ պրծավ թոռան գրկից և հավաքեց իրեն. այսո՞ր պետք է երեխա դառնար, հենց այսո՞ր, հարսանիքի տերը, այս ուրախության տերը ինքն է, ախր...

Ուրախ ու շեն հարսանիք էր, Բազե Առաքելի սրտով։ Լուսաստղի հետ հայտնված ճերմակ ու փափուկ պատկերը ապրշումե խանձարուրով փաթաթվել-կառչել էր կոպերից, իսկ նա ափով քշում էր ու գժված ուրախանում, խնդրում, որ բոլորը ուրախ ու տրամադիր լինեն։

Փորձեց նաև երգել, չնայած երգել չգիտեր։ Եվ պարեց։ Ջեռնափայտը շպրտեց ու «Յարխուշտա» պարեց Վաղարշակի հետ։ Իսկ երբ Համբոն ոտքի ելավ նորապսակներին մաղթանքի խոսք ասելու, ճերմակ ու փափուկ պատկերը թրթռաց Բազե Առաքելի հայացքի դիմաց։ Եվ նա իրավունք տվեց. ախր, սարալանջի «հոտը» Համբոյի երբեմնի ցանկապատն էր, այդ փլված պատաշարն, ախր, հիշեցրեց անցած-մոռացվածը։ Եվ ինչպե՞ս էր մոռացել. այդպես պայծառ մի արշալույս, այդքան գեղեցիկ մի պատկեր ո՞նց էր մտհան արել... Արշալույս էր, սարը՝ պեծպեծացող ճերմակ, ոտքերի տակ ճռճռում էր սառած ձյունը, հետքից, ձյան կեղեվը կճմտելով, հոտի շարուկն էր գալիս, իսկ երբ ափը խուրջինում աղոթում էր և պահում՝ շարուկը քանդվում էր. ոչխարները մղվում էին, այդ ժամանակ ինքը վազում էր, հետևից՝ հոտը։ «Վազե, Առաքել, վազե»,— կանչում էր հայրը։ Այտ ու երես այրող ցուրտ էր. աչքերը արցունքակալվել էին և մի պահ, երբ ուսն ի հետ նայեց, խճճված հոտը երևաց որպես ձյան վրա փռված գորգ...

— Ճիշտ է... Ճիշտ է, Համբո... Քո խոսքը ճշմարիտ է։

— Ի՞նչ է։— Բազե Առաքելը սթափվեց, նայեց տաք սեղանակիցներին, ապա Համբոյին։ Համբոն բաժակը ձեռքին հպարտ ժպտում էր. խոսքը արձագանք էր գտել։ Եվ նա ավելորդ չհամարեց կրկնել՝ այս անգամ հատուկ Բազե Առաքելի համար։

— Ասում եմ՝ առանց հալ ու մալի, առանց ունեցվածքի ի՞նչ երջանկություն։ Վաղարշակին եմ ասում։ Թաք տղա է, նոր ընտանիք է կազմում, բայց ծուռը նստենք, շիտակ խոսենք՝ մեր Վաղարշակն ի՞նչ կարողության տեր է։ Ցանկանանք, ուրեմն, և սրտանց ցանկանանք...

Արյունը զարկեց գլուխը, և Բազե Առաքելը վիրավորանքից կարմրատակած, գժված ոտքի ելավ։ Բազե Առաքելը ոտքի ելավ, փայտը

բարձրացրեց և պահանջեց, որ Համբոն դատարկի բաժակը և նստի։ Եթե խոսքի վրա խոսք ավելացնի, թե մի բառ ասի՝ ձեռնափայտը գլխին է իջնելու։

Համբոն շփոթված բաժակը վար դրեց ու խռոված նստեց։ Հարսանքավորները խառնվեցին, որդին ու Առաքել թոռը մեջ ընկան, իսկ Բազե Առաքելը ձեռնափայտը թափ տվեց ու պահանջեց՝ թող Համբոն անծրպտուն ոտքի ելնի, անծպտուն դատարկի բաժակը ու անծպտուն նստի։

Հետո Բազե Առաքելը բաժակը ձեռքն առավ և դիմեց Վաղարշակին։

— Ախպեր տղա,— հանդարտ ու հանդիսավոր ասաց և մի պահ լռեց։ Եվ կարծես սարից կանչեց՝— Վաղարշակը անտեր չի եղել։ Եվ հուզվեց՝ աստված է վկա, գյուղն է վկա, Վաղարշակը անտեր չի մեծացել և անտեր չէ։ Վաղարշակը հոր սիրո, հացի և ջրի կարոտ չի եղել և՝ չի մնա։ Բազե Առաքելը մեռած չէ։ Բազե Առաքելը մի հոտ ոչխար ունի, Բազե Առաքելի գոմում հարյուր ոչխար կա և այդ հարյուր ոչխարը Վաղարշակինն է։ Լույս առավոտի հետ, լուսո աստղի հետ Բազե Առաքելը հոտը իր ձեռքով կքշի ու կկանգնեցնի Վաղարշակի դռանը։ Այդպես։

3

«Լուսո աստղի հետ, ասի, հոտն իմ ձեռքով կքշիմ ու կկանգնեցնիմ քու դուռն... Իմ բերնի խոսքն հրմբ՝ ու էդ էր»,— Բազե Առաքելը ջանում էր պոկվել անկողնուց, բայց ականջներում-դեռ ծղրտում էր զուռնան, գլխում պատեպատ էր զարկվում դահոլի դմփրտոցը. գլուխը տրաքվում էր... Գիշերը որքան խմեց. հերսոտեց ու խմեց։

— Շան կաթ կերած,— հայհոյեց Համբոյին, բայց անկիրք ու մեղմիկ. այդպես նա իր թոռնիկին էր հայհոյում։

Իսկ ո՞ւր է Լուսաստղը։ Որտե՞ղ է... Ոչ, Բազե Առաքելը չի ուշացել. նոր-նոր արշալույս է և պարզկա՛ արշալույս է։ Որտե՞ղ է Լուսաստղը։ Հատկապես այսօր շատ էր ուզում տեսնել։ Եվ հորինե՞ց, թե նկատեց, դա իր գործն է, Բազե Առաքելը տեսավ Լուսաստղը— յա՜, բարի լուսո՛ աստղ։ Եվ սկսեց հագնվել։

Շապիկի վրա հագավ խամրած, կոլոլված օձիքով վերնաշապիկը, վրան քաշեց երկրորդը — Վաղարշակի զինվորական վերնաշապիկը քանի՞ տարի էր հագնում և հերթականությամբ՝ երկրորդը — վրան քաշեց երրորդը՝ որդու վերնաշապիկն էր, զոլավոր՝ կրծքին գրպան և ջարդված մեկ կոճակով — վերնաշապիկներից ոչ մեկը կոճակ չուներ։ Բազե

Առաքելը կոճակ ու կոճկվել չէր սիրում. վերնաշապիկների փողպատները բերում էր իրար, վերնաշապիկները պնդում շալվարի տակ ու վերջ — և փոխանի վրա քաշեց իրար հագած զույգ շալվարները ու սկսեց պնդել՝ մեկ փաթ, երկու փաթ — լուսհոգի կնոջ գործած գոտին՝ շալե ու նախշուն, բարակել էր. ձգվել, ոլորվել ու բարակել էր — երեք փաթ, չորս փաթ... Բազե Առաքելը պինդ ձգում էր, և գնալով վերնաշապիկների փողպատները հեռանում էին, փողպատները խառնվում ու ծալվում էին իրար վրա, և ճերմակամազ ու նիհար կուրծքը բացվում էր — հինգերորդ փաթի վրա գոտու ծայրը խրեց գոտու տակ, կոշիկները գցեց ոտքերը, դրեց փափախը՝ ականջակալներից մեկը կախվեց ծոծրակին, մյուսը՝ խաղաղ ճակատին, բամբակյա բաճկոնը նետեց ուսերին, վերցրեց ձեռնափայտը և բացեց դուռը։

Յուրտը մեկեն ու հանկարծակի շբխկաց դեմքին. Բազե Առաքելը պխապտույտ ունեցավ, աչքերը մթնեցին— երբեք ցուրտը հանկարծակի չէր բերել նրան — հա-հա գլորվելու էր, հենվեց պատին, քարերի ու թիկունքի արանքում խշրտաց եղյամը, և եղյամի խշրտոցի հետ զգաց թիկունքի տաքությունը, կոներում խլրտաց ուժը և զգաստացավ ու նկատեց, որ շունը դիմացը կկզած է։ Եվ շունը հարցական նայում էր։

— Լուսո աստղը վկա, դու իմաստուն կենդանի ես,— Բազե Առաքելը, աչքը սարին, փայտով շոյեց շանը։ Շեմի մոտից լանջի «հոտը» չերևաց։— Ես ու դու էսօր ճամփորդ ենք։ — Իսկ շունը ի՞նչ անել... Հոտի հետ տալ Վաղարշակին։ Առանց հոտի շունը իրեն լավ չի զգա։ Առանց ոչխարների. առանց Բազե Առաքելի շունը կտխրի։ Կկարոտի ոչխարներին՝ կվազի ոչխարների մոտ, կկարոտի Բազե Առաքելին՝ կվազի Բազե Առաքելի մոտ, մեկ՝ հոտի մոտ, մեկ՝ իր, մեկ՝ այստեղ, մեկ՝ այնտեղ և վազվզոցի մեջ կդառնա փողոցի շուն։ Ուրեմն, ուրեմն... Այդպես էլ չէր մտաբերում՝ վերադարձին շունը բերեցի՞ն, թե... Ասենք, շատ բան չէր հիշում. ինչպե՞ս հասան գյուղ, քեռին ինչպե՞ս ընդունեց հոտը, քանի՞ օր մնացին, ե՞րբ վերադարձան... չէր հիշում։ Միայն այսքանը՝ Լուսաստղի հետ քշեցին հոտն ու ելվերան...

Լանջի «հոտը» երևաց, և Բազե Առաքելը ոտքը կախ գցեց... Վա՜հ, այսօր որքան հստակ է երևում՝ քանդված պատաշար է ու կա։ Իսկ երեկ աչքը սարալանջին դիպցնելն ու տեսքելը մեկ եղավ։ Ինչո՞ւ այդպես եղավ... Մահակին կոթնած նայեց, հա նայեց. աչքերը շաղվեցին, ձյունածածկ լանջը թրթռաց հայացքի դիմաց, հոտը զիգզագ շարժվեց... Բայց դա արդեն ծալածալ մշուշի քուլաների մեջ լողացող ճակատասարն ու հոտն էին։

— Ուշ է,— սթափվեց Բազե Առաքելը։ Այսօր մեծ գործի տեր են, ախր։

Նա գնաց դեպի դեզը, բայց արտակարգ ցանկություն ունեցավ նախ գոմ մտնել։ Ոչխարների գոլը պարուրեց նրան։ Նա թիկնեց դռանը և շշնջաց. «Էսօր ես ու դու ճամփորդ ենք»։— Ոչխարները մղվեցին— սեղմվեցին Բազե Առաքելին, լուսամուտի մեջ ծփաց հոտը՝ քանդվեց ու բացվեց նախշուն գորգը, և Բազե Առաքելը կարծես նոր հասկացավ, որ այս նախշուն հոտը արդեն իր հոտը չէ։

«Ախպեր, ես էլ չհասկացա, թե՝ ինչպես եղավ»։

Իսկ դեզի մոտ բարձրաձայնեց.

— Աստված է վկա, ես էլ չհասկացա, թե՝ ինչպես եղավ։— Եվ մարագի կտուրից խռոված երեխայի պես նայեց Համբոյի տան կողմ... Այդ շան որդին կյանքում թե մի լավ բան է արել՝ լանջի պատաշարն է։ Հետո դեզից խուրձը պոկեց-նետեց ուտիչը։ Մեկ խուրձ, երկու խուրձ, երեք խուրձ... սովորականից մի խուրձ ավելի գցեց. հոտը թող կուշտ հեռանա դռնից։ Եվ գոտեպինդ իջավ կտուրից,— եղածն եղած է, ջանքմ,— գոտեպինդ մոտեցավ գոմին ու բացեց դուռը։— Դուրս եկ, նախշուն հոտ, դուրս եկ, Առաքելն այսօր քեզ ճանապարհելու է։

Ապա մոտեցավ թակեց պատուհանը։

— Ժողովո՞ւրդ։— Տեսնես որդին հիշո՞ւմ է, Բազե Առաքելի խոսքն ու պայմանը հիշո՞ւմ է։— Տղա՜։— Հիշում է ու հանգիստ քնե՞լ է։— Ելի՛։ Էսօր քնելու օ՞ր է, տղա։— Եվ շտապ դարձավ ու ձեռնափայտին կռթնած կանգնեց հոտի գլխին։ Ծանրածները, շատ ծանրածները հարկ է զատել. ճանապարհին հանկարծ կծնեն... Զուման՝ մեկ... Քոլեն՝ երկու... Փորձեց հիշել, թե այն օրը հայրը քանի՞սն առանձնացրեց։ Բայց դա բոլորովին հիշելու բան չէր։

Դուռը սառած ճռռաց, և Բազե Առաքելը առանց հոտից կտրվելու խնդրեց, որ որդին մի բաժակ օղի բերի։

— Մենք ուրախության տեր ենք, տղա, ուրախությունն հարկ է շարունակել։— Աչքը երկնքին՝ խմեց օղին և նայեց որդուն։— Մենք ուրախության տեր ենք ու մեծ գործի տեր ենք էսօր։— Նա հայացքով ակնարկեց հոտը։— Դու ընկերոջ-բարեկամի քեֆ-ուրախություն խոստացած կա՞ս։

Որդին լուռ էր։

— Թե խոստում տված կաս՝ մի ղոչ ջոկիր։

— Գիշերն ինչքան օրին սարքեցիր, հերիք է,— խռով ու կռվարար խոսեց որդին։— Հլա մի հաբցնող լինի. Համբոն ի՞նչ ասաց, որ փըրփըրեցիր։

Որդին սպասում էր պատասխանի, իսկ Բազե Առաքելը ճակատն էր տրորում. ախր, ինքն էլ չի հասկանում, թե ինչու տաքացավ։ Հետո մտածկոտ, կարծես ինքն իր համար ասաց.

— Եղածն եղած է։— Ճիշտ թե սխալ՝ հոտը խոստացել է արդեն։

Գիշերը, երբ հայրը «նվիրեց» հոտը, որդու մտքով չէր անցնում, թե առավոտյան նա հետամուտ կլինի իր խենթ ու խելառ խոսքին։ Զայրացավ և խոսք էր՝ շպրտեց։ Քիչ առաջ, երբ հոր կանչի վրա արթնացավ ու՝ հիշեց, երբ կանգնեց հոր կողքին և սկսեց տաք-տաք հանդիմանել՝ էլի չէր հավատում, բայց, տես, որ հայրը իր խոսքին տեր է կանգնում։ Խելա՞ռ է։ Համոզել է հարկավոր։

— Հայրիկ, ախր, դու խմած էիր։ Համ խմած էիր, համ զայրացած և մի բան ասիր։

Ոչ, Բազե Առաքելը խմած չէր։ Հետո խմեց. զայրացավ ու խոսեց։ Այս մեկ։ Եվ ապա, ընդունենք, թե՝ խմած էր և շատ խմած, և շատ զայրացած...

— Էդ խմած ու հերսոտած մարդն էլի Բազե Առաքելը չէ՞ր, տղա։

Որդին երկար համոզում էր. ախր, ի՞նչ է պատահել. Համբոն գըլխից դուրս խոսում էր, հայրը զայրացավ և մի խոսք շպրտեց։ Այսքան մի բան։ Եվ հիմա եկ ու Համբոյի պատճառով, խմած ու հերսոտ շպրտած մի խոսքի պատճառով զրկվիր հոտից։ Անմտություն չէ՞։ Ասենք թե՝ քառասուն-հիսուն տաքգլուխներ լսեցին ու էդուց կասեն՝ խոստացավ ու չկատարեց։ Ասենք թե Համբոն խնդմնդա՝ խոստացավ ու չկատարեց։ Հետո՞։ Զրկվե՞լ հոտից։

— Համբոն ո՞վ է, տղա։ Նրան ո՞վ է ինչ խոստացել, հարսանքավորներին ո՞վ է երդում տվել։ Ով ինչ ուզում է թող ասի՝ Բազե Առաքելին այնքան էլ չի հետաքրքրում։ Իսկ ի՞նչ կասի Առաքելը Առաքելին, տված ու չկատարած խոսքի համար Բազե Առաքելը ի՞նչ կասի Բազե Առաքելին։ Ահա։ Այսքան հասարակ մի բան դժվա՞ր է հասկանալ։ Որդին հո նորելուկ չէ, տղամարդ է, ճերմակած քունքերով այրմարդ է։— Դե գնա ու հարսին կանչե, ու եկեք։ Ուշ է։

Որդին խռոված տուն մտավ, իսկ տնից դուրս թռավ կինը՝ կիսահագնվել, ծղրտոցը դեմքին։

— Հարս,— Բազե Առաքելը հանգիստ դիմավորեց,— քու խոստացած մատաղացուն ո՞ր մեկն է։

— Ինչո՞ւ,— հարսը կովարար թևերը կանթեց։

— Հարս, դուրբան,— Բազե Առաքելը ճերմակամազ ծնոտն առավ ափի մեջ և խնդրեց, շատ խնդրեց, որ հարսը աղմուկ-աղաղակ չանի։— Քու մատաղացուն ցույց տուր, հարս։

Հարսը փոթորկվեց հոտի մեջ.

— Էս, էս, էս է, էս է... Բոլորն էլ մատաղացու են, ա՛յ հերիկ, քու ուզածն ի՞նչ է։

Հետո եկան՝ շարվեցին թոռները։

Թոռները լուռ ցանկապատել էին հոտը և, շփոթված ու խռով, մեկ ոչխարներին էին նայում, մեկ՝ գլուխկախ պապին։ Բազե Առաքելը խեղճացել էր. հարսի ողբի տակ, թոռների հանդիմանող ու խռով հայացքի տակ կորնել էր մահակին, կուչ էր եկել ու կախել գլուխը։ Անխիղճ բան է արածը, բայց ուրիշ ելք չկա... եղածն եղած է։

Միայն մեկը, թոռներից միայն պապի անվանակիր Առաքել թոռն էր շիտակահայացք նայում պապին։ Կանգնած էր ձիգ ու հպարտ և զվարթ ու հետաքրքիր նայում էր. կարծես առաջին անգամ էր տեսնում պապին։ Ափսոս, Բազե Առաքելը չէր նկատում։ Բայց երբ շտկվեց լուսաստղին նայելու, աչքը դիպավ Առաքել թոռանը... Ժպտո՞ւմ է, Առաքելը ժպտո՞ւմ է... Բազե Առաքելը բռունցքով տրորեց աչքերը և էլի նայեց՝ ժպտում էր... Առաքել թոռը ժպտում էր և որքան խնդուն ու զվարթերես է Առաքել թոռը։— «Իմ ասլան թոռ... մոտիկ արի, մոտիկ արի, քո ճակատն համբուրելու է»։

Եվ Առաքել թոռից թևավորված ձգվեց, անկաշկանդ նայեց շուրջբոլորը, ապա աչք դիպցրեց աղոթարան։ Հոտը քշելու ժամանակն էր։

— Էրեխեք, ձեզնից ո՞վ կօգնի իր պապին։

Հարսը, որ մորմոքը ափերի մեջ սեղմած, հոտի կենտրոնում շվարել էր, հասավ, թևերի տակ առավ երեխաներին՝ հրեց-հրմշտեց դեպի տուն, թափով հրեց նաև Առաքել որդուն, բայց Առաքելը շեղ նայեց մորը և մոտեցավ՝

— Ես կօգնեմ, պապ։

— Մեռնիմ իմ ասլան թոռան,— Բազե Առաքելը աշխուժացավ։— Դե, մատաղացուն զատե... Ապրես... Զունոն ծանրած է. տեսար ու ճամփին ծնեց՝ զատե... Քոլեն զատե...

Եվ անհանգիստ շարժվում էր. ձեռնափայտը աջ ու ձախ փոխանցելով, բաճկոնը վեր քաշելով, փափախը գլխին պնդելով, հայացքը հոտին անհանգիստ շարժվում էր և մի պահ կանգ տվեց, ճպճպացրեց և թոռանն ասաց.

— Առաքել, քու հավանած ղոչերից մեկն էլ զատե. ես ու դու քեֆ պետք է անենք... Ապրես։ Հիմա Առաքելը թող վռազ հացատուն մտնի. որսորդական հրացանն ու խուրջինը սնից կախված են՝ հրացանը վերցնի, խուրջինը վերցնի, երկու-երեք բուռ աղ լցնի խուրջինի աչքը ու վռազ դուրս գա։ Ուշ է։

Եվ Առաքելի թոռը՝ հրացանը ուսին, խուրջինը ուսին, ժպիտը դեմքին զգաստ կանգնեց պապի դիմաց։

Այդպես... Իսկ այժմ՝ ամենակարևոր պատվերը։ Ամենակարևորը։ Ուրեմն, հոտը Վաղարշակի տուն պետք է հասցնել լանջով։ Այո, այո, կա ու չկա՝ սարալանջով։ Մեկ է, որ Վաղարշակի տունը գյուղեզրին է, ծուռտիկ-մուռտիկ փողոցները կծկելու փոխարեն դիմացի փողոցով ուղիղ կգնան, դուրս կգան գյուղից, կշարունակեն սարալանջն ի վեր՝ մինչև... մինչև, ա՜յ, էն քանդված պատաշարը։ Այնտեղ, քարերի վրա մի քիչ շունչ կառնեն, հոտը աղ կուտի, ապա նոր կթեքվեն աջ՝ լանջի հորիզոնականով կգնան և հոտը կիջեցնեն ուղի՛ղ Վաղարշակի տան թիկունքը։

— Իմացա՞ր, Առաքել։

Թոռը հետաքրքիր նայում էր. լանջի, փլված պատաշարի, պապի երեկվա խոսքի. «էն երևացողը հոտ չէ՞», և այս իրական հոտի կապն էր ուզում հասկանալ, բայց դժվարանում էր։ Ազնիվ խոսք, շատ հետաքրքիր մարդ է պապը։

— Իսկականից դու բանաստեղծ ես, պապ։

— Հրմը ու քու ասածն է... Յա՜, բարի Լուսո աստղ։— Եվ հայացքը լանջին՝ թոռանն ասաց։— Կանգնի ճամփին, մեկ անգամ աչք դիպցրու Լուսո աստղին, կանչե շանն ու... կանչե հոտին։

Գյուղեզրին, լանջի փեշին, ոչխարները չենթարկվեցին Առաքելի կանչին։

— Աղ տուր, աղ տուր, Առաքել,— փութկոտ ու գործնական պատվիրեց Բազե Առաքելը,— քու ափն աղ արա՝ դիպցրու մեկ-երկուսի դնչին ու վազե... Վազե՜, Առաքել,— ջահելավարի կանչեց Բազե Առաքելը։— Վազե՜...

Խճճված հոտը քանդվեց և լանջն ի վեր ձգվեց թոռան հետքով։

Ճերմակ ու սառած լանջով Առաքելը ելնում էր ջահել բաշը թափ տալով, հետքից ոլորվում էր սեղմ ու հավաք հոտը, շունը ծփում էր աջ ու ձախ, Բազե Առաքելը ոտք էր փոխում չափուկ ու ժիր, մահակը կայտառ թափ էր տալիս և մի պահ նրան այնպես թվաց, թե Լուսաստղի հետ, Առաքելի հետ, հոտի հետ, շան հետ, ահա, ճակատասարն է բարձրանում։

Պատաշարի մոտ, պապի պահանջով, Առաքելը աղ ցանեց ձյան վրա։

— Տես,— Բազե Առաքելը ակնարկեց բոլորուն հոտը,— գորգի նման է... Գորգ է։

Թոռը նորից ոգևորվեց. ազնիվ խոսք, ինքը հրաշք պապ ունի, ուսանող ընկերներին պատմելու է պապի մասին։ Իսկ Բազե Առաքելը գնաց դեպի «քարե հոտի» «քարե առաջնորդը»։

Եվ որքան մոտենում էր, սիրտը այնքան անհանգիստ էր խփում։ Բազե Առաքելը հուզվում էր։ Եվ դողացող ձեռքով շոյեց քարը — ցից ու մամոռոտ քար էր — ապա նստեց ու թիկնեց քարին։

— Օխա՜ շ։— Իսկ հայացքի դիմաց փլված պատաշարն էր, շաղ եկած քարերը։ Ահա, որքան ուզում ես և ինչպես ուզում ես նայիր. բացաչք նայիր, կիսախուփ նայիր, ափդ հովհար արա և կկոցած նայիր՝ սովորական քարեր են ու կան... Քարը քար, բայց, աստված վկա, շատ գեղեցիկ են. առավոտից երեկո նայես՝ չես հոգնի... Հե՜յ գիդի, հա՜, այն օրը, անուշիկ այն լուսածագին, երբ հոր հետ, հոտի հետ, շան հետ ելնում էին Ճակատասարը, հրաշք լիներ ու տեղնուտեղը քարանային։ Հա՜, հա՜, երկնքից թող այդպիսի մի հրաշք լիներ և Ճակատասարի ձյունե լանջին քար կտրեին... Քարե հոտ, քարե շուն, քարե հովիվներ։ Գրողի ծոցն այն կյանքը, որ այդ օրն ի հետ ապրեց հայրը, ապրեց հոտը, ապրեց շունը, որ հետո գայլերի բաժին դարձավ, գրողի ծոցն այն կյանքը, որ այդ օրն ի հետ ապրեց ինքը, Բազե Առաքելը։

— Կրակե՞մ, պապ։

Բազե Առաքելը ուշացումով պատասխանեց... Ափսոս, որ այն օրը ինքը չկրակեց։

— Կրակե, Առաքել։

Հրացանը երկփողանի էր և վրա-վրա որոտաց։

— Օխա՜ աշ։— Հազար ափսոս, որ այն օրը ինքը չկրակեց։— Առաքել, մեկ անգամ էլ քու պապը թող կրակե։

Վերցրեց լցված հրացանը, թիկունքը սեղմեց քարին, ապա միտքը փոխեց. կկրակի կանգնած, ինչպես Առաքելը։ Բամբակե բաճկոնը ուսերից սահեցրեց. փափախը դրեց քարի գլխին, ծնկեց և ընթացքում հայացք նետեց երկինք — Լուսաստղը հենց գլխավերևում էր. և... և գըլխավերի երկինքը ինչո՞վ Ճակատասարի երկինքը չէր — հենվեց խզակոթը ձյան մեջ խրած հրացանին և, այն է պետք է ելներ, հրացանը որոտաց։ Թոռը ճչաց, թոցրեց հրացանը և, ինչպես օձն են շպրտում, շպրտեց խրտնած հոտի ետևից և երբ ծնկեց, պապի կոպերը արդեն փակ էին։ Բայց Առաքելը չհավատաց, որ պապը արդեն չկա. որովհետև պապի փակ կոպերին ժպիտ կար։

Բազե Առաքելը, գլուխը ուսին ձգած, հենված էր քարին, փակ կոպերը ժպտում էին, և կնճիռները կամաց-կամաց լցվում էին ժպիտով։

ԽՈՒԹԵՑԻ ԱՓՐԵՆ

1

Գյուղում քիչ տներ էին մնացել առանց տախտակե հատակի։ Այդ քչերից մեկը խութեցի Ափրեինն էր։ Նոր տուն էր կառուցել, տանիքը շիֆերապատել, հինգ-վեց տարի արդեն ապրում էր նոր տանը, բայց հատակը տախտակամածել չէր դասավորվում. երբ տախտակ էր պատահում՝ ձեռքին գումար չկար, իսկ խութեցի Ափրեն պարտք անել չէր սիրում, երբ դրամ ուներ՝ տախտակ չկար։ Ահագին տախտակ էր պետք. ճաշասենյակ, չորս ննջարան՝ մեկը իր և պառավի համար, մեկը՝ աղջկա, երկուսը՝ քաղաքաբնակ զույգ որդիների, որոնք ամեն ամառ հովեկներ էին։

Ճշմարիտն ասաց, Ափրեն առանձնապես մտահոգ էլ չէր, որ կարմրատուֆ պատերով իր նոր տունը հողե հատակով է։ Դա նույնպես դուր էր գալիս, հատկապես, երբ հատակը ջրցանված-ավելված էր լինում, և պատուհանից ներս ընկած շողերի մեջ փոշու զուլեղ հատիկները խայտում էին, ունչը խուտուտ տալիս։ Դա նրան հիշեցնում էր Էրգրում կիսատ մնացած իր մանկությունից հուզիչ մի պատկեր՝ կավածեփ պատերով մեծ հացատուն, երդիկից իջած արևի խուրձ, գրգռիչ բույրով ավել, արծաթագույն այդ ավելով ու երկար փեշերով հատակը մաքրող մի կին և լուսե սյան մեջ խովտացող փոշու խատուտիկ հատիկներ... Այնտեղ, Էրգրում, փլատակ դարձած իրենց տունը և մորը՝ Ափրեն ահա, այս պատկերով էր հիշում. երդիկից խուժած արևի խուրձը սյան պես կանգնել էր հացատան մեջ, մայրը— ծաղկավոր ու գեղանաքարշ փեշով— ջրցանած հատակն էր ավելում, փոշու պես-պես հատիկները լուսե սյան մեջ թովվում էին, ինքը՝ պնչներում խոնավ փոշու ու ավելի գրգռիչ բույրը, ցատկոտում էր շողքի մեջ, մոր փաղաքուշ ու խրախուսող խոսք ու ձայնի տակ ցատկոտում էր. փորձում բռնել լույսի մեջ թովոացող այդ լուսատատիկները։ Բայց նրանք չարաճճի ծիծաղում էին և լուսե սյունն ի վեր փախչում դեպի երդիկը...

Խութեցի Ափրեի բզկտված մանկությունից այս հուզիչ պատկերն էր մնացել, որը երբեմն այցի էր գալիս։ Հանկարծ Ափրեն բացում էր դուռը և, ո՜վ հրաշք, տան կենտրոնում՝ արևի շողերի մեջ ցատկոտում էր պորտաբաց մի մանչ։ Դա ավելի հաճախ պատահում էր հին տանը, որը Էրգրի իրենց տան նման երդիկ ուներ ու կավածեփ պատեր։ Եվ այնտեղ, հին տանը, մի անգամ Ափրեն տարօրինակ զգացում ունեցավ. դուռը բացելուն հետ՝ արևի շողերի մեջ հայտնված այն մանչը իրեն թվաց որպես թոռ; իսկ արծաթագույն ավելով ու երկար փեշերով հատակը մաք-

բող մայրը թվաց որպես իր հարսը։ Իհարկե, դա միակ դեպքն էր, որ երեխա Ափրեն հայտնվեց որպես Ափրեի թոռ և մայրը՝ որպես հարս։ Դա զարմանալի բացառություն էր։ Մանավանդ որ այդ դեպքից հետո շուտով տեղափոխվեցին նոր տուն, իսկ նոր տանը Ափրեի ուղեղում ննջող այդ սրտաշարժ պատկերը երբեմն է միայն աչք բացում. նոր տունը ճաղապատ պատուհաններով է. տուն մտած արևը սյուն չէ, այլ՝ սփռոց, և հատակին շաղ եկած լույս ու արևի վրա պատուհանի երկաթյա ճաղերը քառակուսի վանդակներ են գծում։ Իսկ երբ առաջին անգամ նոր տանն էլ, այնուամենայնիվ, հայտնվեց մանկության պատկերը, Ափրեն շատ հուզվեց։ Եվ ճակատը տրորելով, որ հիշել է, գնաց-կանգնեց շողերի միջև, սկսեց ափերը իրար բերել։ Կինը, որ ջրցանել էր ու հատակն էր ավլում, ձեռ առավ.

— Ճա՞նճ ես բռնում, Ափրե։

Այդ պահին Ափրեն նույնիսկ ուրախացավ, որ հատակը փայտ չէ, այլ հող, որ գետին կա, ջրցանել ու ավլել կա... Եվ ընդհանրապես՝ ինչո՞ւ անպատճառ տախտակամած հատակ, կարևորը այն է, որ տանիքը շիֆերի տակ է, և աշնանն ու գարնանը առաստաղը չի կաթում, մրկաթ չի անում, ինչպես հին տանն էր, կարևորը այն է, որ տունը լեն ու բոլ է. սրահ, մի ննջարան իրեն ու պառավին, մեկը՝ աղջկան, երկուսը՝ տղաներին... թե՝ ուզում են։ Երբ ուզում են՝ թող բարով գան, ամեն մեկը իր սենյակն ունի։ Հին տունը չէ, որ գերդաստանով ծվարում էին թոռների շրթին։ Չհաշվենք դեռ...

— Մի՞տքդ է,— ստիպված էր հիշեցնել կնոջը,— թաղա՝ ոչ ննջանվեցինք, մեր տունն ու տեղը Եփրեմի մարագն էր։

— Եփրեմի մարագն անցավ։ էն ուրիշ ժամանակ էր, ա՛յ մարդ, ժամանակները փոխվել են։

Կինը հանգիստ չէր տալիս. առավոտ-իրիկուն բռնում էր Ափրեի փողպատը, թե՝ գյուղում հատուկենտ տներ են մնում առանց տախտակե հատակի, և այդ տնատերերից մեկը ինչո՞ւ իրենք պետք է լինեն, գյուղի խեղճ ու կրակը իրե՞նք են, Ափրե՞ն է, խեղճ ու կրակը խութեցի Ափրե՞ն է։

Ափրեն չէր պատասխանում— ընդհանրապես Ափրեն սակավախոս մարդ է— լուռ ծխում էր։

— Զույգ հարսի տեր ես,— ամեն անգամ հիշեցնում էր կինը,— զույգն էլ քաղքցի, քաղքցու աղջիկ, գալիս են ու՝ հողե հատակ, գալիս են ու՝ հողե հատակ։ Ամոթ չէ՞։

«Քու հոր գանգը...— մտքում հայհոյում էր Ափրեն,— քու տղեքի ու իրենց վարձով տան տիրոջ հոր գանգը... քու քաղքցի հարսների հոր գանգը...»։— Ափրեն ծխում էր ու նախշում, իսկ կնոջը թվում էր, թե՝

մտածում է, ելք է որոնում. ահա, ոտքի ելավ Ափրեն, թող գնա գյուղամեջ, հարցուփորձի՝ ճար գտնի։

Ափրեն ոտքի էր ելնում, բամբակյա բաճկոնը գցում ուսերին— աշուն, թե ձմեռ Ափրեի օձիքը բաց է, բաճկոնը իմիջիայլոց ուսերին ձգած— և գլուխն առած գնում գյուղի հավաքատեղին։ աղբյուրի մոտ։ Աչքը աղբյուրին, ականջը տարեկիցների «փուչ» զրույցին, հակված ծխում էր ու մտածում, որ աշխարհում հող ու ջրից լավ բան չկա։

Բայց հանկարծ մեկը հիշում էր.

— Ափրե, տունդ պոլեցի՞ր։

Միշտ զարմանում էր, որ մարդիկ իր հողն հատակը չեն մոռանում։ Հիշում են։ Նրանց ի՞նչ գործն է։ Հողն հատակը իր ո՞ր պակասությունն է, ո՞ր մեղքը և միտք բերողի ու հարցնողի ո՞ր հոգսը։ Սովորաբար պատասխան չէր տալիս, և դրանից հարց տվողը չէր վիրավորվում. Ափրեն լ՝ ալարում է խոսել։ Բայց եղավ մի օր, բերան բացեց, ինքն էլ չիմացավ, թե ինչու պատասխան տվեց՝ մեկեն, առանց երկար ու բարակ մտածելու։

— Ահարոն,— դարձավ հարցնողին,— քու տունը պոլած է, ու գու՝ ուրախ։ Բա էգուց թե մեռնելու էղար, շունչ փչելուց քու թիկունքն ո՞ւր կզարկիս. թիզ մի գետին, բուռ մի հող ման կգաս ու չես գտնի։

Զրուցակիցները տարեկից-հասակն առած մարդիկ էին և Ափրեի անսպասելի պատասխանի վրա խլուշտ-մլուշտ նայեցին միմյանց, Ահարոնին։ Իսկ Ահարոնը խուսափուկ նայեց աջ-ու ձախ. կարծես ստուգեց՝ հո ուրիշ լսող չեղա՞վ, հետո շտկեց վերարկուն, փողպատները իրար բերեց, որ ցուրտ չառնի ու սկվեց։ Լուռ մնացին նաև մյուսները։ Եվ այդ շփոթ լռությունից հետո միայն Ափրեն անդրադարձավ իր խոսքին ու որքան մտածեց, պատասխանն այնքան տեղին թվաց, ճշմարիտ։ Եվ այդպես է ու կա։ Ծտայտու ով ուզում է թող հետաքրքրվի այդ չեղած տախտակներով, Ափրեն արդեն իր պատասխանն ունի... Ճիշտ է, այդ օրվանից զրուցատեղիում չարչրկված հարցն ու Ափրեի գտած պատասխանը կամաց-կամաց կատակի բնույթ էին կրում, բայց, այդուհանդերձ, պատասխանը Ափրեի համար չէր կորցնում իմաստը։ Միայն թե ափսոս, որ այդ գտածուրիկ խոսքը կինը չէր հասկանում, դեռ ծաղրում էր, ավելին՝ անճարակությունն արդարացնելու խորամանկ փորձ էր համարում Ափրեի խոսքը։ Եվ Ափրեն հոգու խորքում երբեմն համաձայնում էր— էն որ ճիշտ է՝ ճիշտ է, հոգեառ կինն է ասողը, թե տղամարդը, ճշմարիտը ճշմարիտ է— եթե հնարավոր լինի, Ափրեն հողն հատակը տախտակներով կպատի, օձիքը կազատի կնոջից և հանգիստ խղճալ կդնա զրուցատեղի։

2

Եվ եկավ այդ օրը։

Ափրեն տախտակները բերեց-թափեց դռանը, այն էլ մաքրած-հարթած տախտակներ։ Մնում էր գերանները շարել— գերանները վաղուց էր բերել-դասավորել ձեղունում— գերանները շարել-ուղղել հատակին ու տախտակները մեխել։ Եվ գնաց վարպետի մոտ։ Գնաց կամ ու կաց. վճարելու կոպեկ չուներ ձեռքին։ Մնում էր, որ վարպետը կեսգնով համաձայներ. տախտակները, ախր, մաքուր հղկված են, պատրաստի, և համբերեր՝ մինչև փող ընկներ Ափրեի ձեռքը. աշուն է՝ կոլտնտեսությունից ոչոսելիք ունի, ոչխարներ ունի վաճառելու։

Վարպետը իր հատակն էր տախտակապատում։

«Ցա»,— Ափրեն շատ զարմացավ. մտքով իսկ չէր անցել, որ այս վարպետ մարդու տունը այդքան ժամանակ հողե հատակով է եղել, ինչպես իրենը։ Իսկ ինչո՞ւ գյուղում ոչ ոք չի հետաքրքրվում, թե, ա՛յ վարպետ, տունդ ե՞րբ ես «պոլելու»։ Գոնե ինքը չի լսել, որ մեկնումեկը հետաքրքրված, հարց տված լինի։

«Կպատահի՝ չգիտեն»,— մտածեց Ափրեն և հարգանքով նայեց երիտասարդ վարպետի ականջկոթի մատիտին։

— Կպոլեմ, քեռի Ափրե,— գործի հետ պատասխանեց երիտասարդը,— հանդիստ գործ է։— Նա արդեն գիտեր, որ Ափրեն տախտակները բերել է։

Մի ժամ չկար, որ բերել էր, իսկ ուստեն գիտեր նաև, որ տախտակները հարթված են։

— Դրանց ռանդածը ի՞նչ պետք է լինի,— իր կարծիքը հայտնեց երիտասարդ վարպետը,— նորից պետք է ռանդել։

Խոսքը Ափրեին դուր չեկավ. նա հասկացավ, որ կեսգին վճարելու մասին ակնարկելն ավելորդ է։ Բայց, ախր, տախտակները դուրած են, մնում է մեխել, գերանները շարել ու մեխել։ Իսկ ի՞նչ կլինի, եթե... եթե ինքը, հենց՝ ինքը...

Ափրեն աչքի պոչով հետևեց ուստի շարժումներին։ Պահ առաջ նայում էր շիփ-շիտակ, հիմա, չիմացավ ինչու, վարպետի բանուգործին հետևեց գողունի։ Եթե երիտասարդը գլուխ բարձրացներ, Ափրեն կփախցներ հայացքը, կշփոթվեր, կխառնվեր իրար։

Վարպետը զուգահեռ շարված գերանների գլուխները սեպերով կիպկպցրեց պատերին, պնդեց — հասարակ բան՝ Ափրեն ինքն էլ կարող է— ապա պատուհանի գոգից վերցրեց թելի կնգուղը — այդ կանեփթելից Ափրեենց տանը որքան ուզես կա. աղջիկը ծխախոտի չորանոցից բերել

է — հետո վարպետը թելը ձգեց գերանների վրա. գերանները հավասար հարթության վրա՞ են՝ ստուգեց հարթաչափով...— Ա՛յ, այդ մեկն արդեն իրոք, վարպետի գործ է, երևի վարպետությունը հենց դա է որ կա։ Եվ որտեղի՞ց ճարել հարթաչափ... Դե՛, հարթաչափի հերն էլ անիծած, կարելի է նաև առանց հարթաչափի՝ մի մազ բարձր, մի մազ ցածր կամ թեք, նշանակություն չունի։

Ափրեն արդեն շիփ-շիտակ նայեց վարպետի շարժումներին և անկաշկանդ ասաց, որ հիմա վճարելիք չունի, պարզապես եկել էր խորհրդակցելու և դուրս եկավ։ Վարպետը նրա ետևից կանչեց — ասաց, թե անհանդգստանալու, շտապելու հարկ չկա. գործավարձը երբ եղավ՝ եղավ, բայց Ափրեն չլսեց։ Փորձառու հայացքով քննեց լեռներին կուտակված ամպերը — անձրևը կամ դուռն էր, կամ երդիկը— և շտապեց։

Հասավ տուն, տախտակները ներս քաշեց, ձեղունից վար բերեց գերաններն ու սկսեց...

***

Ամեն ինչ ստացվում էր անսպասելիորեն հաջող։ Եթե այդ էր հատակը տախտակապատելու վարպետությունը, Ափրեն վարպետ էր ու կար։ Ուրիշ բան է, որ կինը չէր համոզվում, պատեպատ էր ծեփվում, փեշերը թափ տալիս գործով կլանված Ափրեի գլխին, ախր, Ափրեն ո՞ր օրվա վարպետն է, որ թևերը քշտած մեջ է ընկել։ Տարիներով սպասելուց հետո, տախտակները մի կերպ ձեռք գցելուց հետո, տես որ՝ փչացնում է։ Իսկ Ափրեն սուսուփուս իր գործին էր. մտքում հանդարտ հանգով հայհոյում էր վարպետին, բոլոր վարպետներին, կնոջը և խփում մեխերը։ Երկրորդ օրը կինը նկատեց, երևի ճարահատ էր ու նկատեց, որ «կարգին պոլ» է ստացվում, համարյա այնպիսին, ինչպիսին Ահարոնինն է և սկսեց գովել Ափրեին։ Ցոփում էր շուրջբոլորը, շաղակրատում, գովում-խրախուսում, վարպետին վայել ճաշ եփում, խնդրում, որ Ափրեն չշտապի, շունչ քաշի, հանգստանա։ Իսկ Ափրեն անծպտուն իր գործին էր, ծեգից մինչև ուշ գիշեր՝ թրխկ ու թրխկ, երբ գործը ստացվում է, հոգնածությունը չի զգացվում։ Իսկ գործը ստացվում էր, իրոք, ստացվում էր՝ վկա կնոջ ոգևորությունը։

Չորրորդ օրվա կեսօրին տան հատակը արդեն տախտակապատ էր։ Վերջապես։

Ափրեն խփեց վերջին մեխը, մուրճի մի հարված էլ իջավ ընդհանուր հատակի գլխին— տախտակամածը համաձույլ դմփաց— և դատարկ

սենյակի արձագանքի վրա կինը ուրախ աղմուկով ներս ընկավ, փարվեց ամուսնուն, փորձեց համբուրել, բայց Ափրեն արգելեց։

— Դու կարգին վարպետ ես եղել ու մինչև հիմա չեմ իմացել, Ափրե։— Կինը ֆոֆռում էր ու շաղակրատում։— Տո, դու, որ էսպես վարպետ ես, ինչո՞ւ ես բահի պոչը բռնել, ա՜յ Ափրե, ա՜յ մարդ։

— Քու պապու պառեկ...— հայհոյեց Ափրեն։— Իմ պիշակ բեր, շատ մի խոսա։

— Էս բոպեիս։— Կինը թռավ կարգադրությունը կատարելու։ Կնոջ խոսքն ու պատրաստակամությունը, թեկուզև՝ խաղը ու խնդմնդոց, Ափրեին դուր եկավ. նա քթի տակ ժպտաց ու հաճույքով ծխախոտ վառեց։

— Դու գնա գրասենյակ,— կինը բաճկոնը գցեց ամուսնու ուսերին և դեռ մեղմիկ շոյեց թիկունքը,— մի քիչ ղրից արա, մինչև գաս՝ մենք մաքրած-դասավորած կլինենք։ Էն Ահարոնը էնտեղ կլնի, թևից բռնած քարշ տուր էստեղ,— պատվիրեց կինը։— Թող գա՝ իր աչքով տեսնի։ Մի բաժակ էլ արաղ կտամ էդ ղառղառին, միայն թե՝ բեր։

— Մի երկու շիշ արաղ կառնես,— հանկարծ վճռեց Ափրեն,— մի երկու հավ կմորթես,— կարգադրեց ու դուրս ելավ։

Չորս օր ոտքը բակից դուրս չէր դրել։ Կարգին անձրև էր եկել ու մաղմղում էր։ Ափրեն գլուխը բարձրացրեց ստուգելու՝ երկինքը բացվելու միտք չուներ։ Եվ լավ է, որ այդպես է. ամառը չորային անցավ, գոնե հիմա հողը, սարն ու ձորը խոնավություն առնեն։ Թող գա, որքան ուզում է թող անձրև գա, ոչ տունն է կաթելու, ոչ տախտակներն են դրսում, անձրևի տակ, ոչ... և ընդհանրապես անձրևը երբ էլ գա, որքան էլ գա՝ վնաս չունի։ Օգուտ է։ Ու, տես, կարգին անձրև է եկել ու գալիս է։ Ափրեի ոտքերի տակ ճռփում էր ցեխը։ Եվ մի պահ Ափրեն երեխա դարձավ. սիրտն ուզեց քայլել հենց այն տեղերով, ուր ցեխը ավելի շատ է, հենց՝ ցեխի միջով— չլմփ... չլմփ... չլմփ...— և ցեխակոլոլ բանվորական սապոգներով ու զուսպ ուրախությամբ բացեց գրասենյակի դուռը։

— Օ՜օ,— այս ու այն կողմից խնդմնդացին,— Ափրեն... ուստա Ափրեն։

Ոչ ոք չէր այցելել, բայց բոլորը գիտեին, որ Ափրեն ինքն է հատակը տախտակապատում։ Եվ ահա հայտնվեց։

— Պոլը պրծա՞ր։

— Պրծա,— հայտարարեց Ափրեն։— Պոլից էլ պրծա, ձեր հարցուփորձից էլ։ Ուրիշ ասելիք ունի՞ք։

— Գնանք՝ տեսնենք,— հարկ համարեց մեկը։

— Կերթանք։— Ափրեն այդ պահին խոսում էր անսովոր տոնով՝

հնամեն-հեռկատակ, սովորականից բարձրաձայն և պատասխանում էր անմիջապես։— Իրիկունն իմ հյուրն եք։

Նա օրակարգը համարեց փակված, տեսքն հավաքվածները հարցուփորձելու շատ բան ունեին — տախտակները հո չպակասեցի՞ն... Լավ է, որ չեն պակասել... Իսկ ավելացած այդ մի քանի տախտակը Ափրեն ի՞նչ է մտադիր անել... Կարելի է մեզվի մի երկու փեթակ պատրաստել, կամ... Ոչ՝ պահել, պետք է պահել. գուցե տախտակները թաց են, կշռանան, կքաշվեն իրարից և նոր տախտակի հարկ կլինի... Բայց, իրո՞ք, տախտակները շոր էին։ Հազիվ թե։ Ափրեն իզուր այդպես շտապեց։ Իրիկունը տախտակները բերեց, առավոտյան կպցրեց։ Սովորաբար՝ ամիսներով չորացնում են։ Օրինակ, Ահարոնը ողջ մի ամառ տախտակները շաբել էր արևի տակ։ Եվ այդպես էր պետք...

Բայց Ափրեն արդեն կես ու պուտ պատասխան էր տալիս և, մի տեսակ, անհանգիստ էր. ինչ-որ բան էր ուզում անել։ Հետո նա զգաց, որ տուն գնալ է ուզում. տախտակե հատակը ձգում է... Կգնա ման կգա իր տախտակեպատ հատակին, կինը չահելավարի կֆոֆուա շուրջբոլորը, կշաղակրատի— Ափրե, դու կարգին վարպետ ես... Ափրե... Մուրաբայով թեյ կուզե՞ս, Ափրե...

«Իզուր չթողեցի պաքեր գիս...»։— Ափրեն տաքի կանգնեց։

— Ով կուզե տեսնել զիմ պոյ, իրիկուն թող տուն գա։— Ասաց ու հրամ գուրս։

3

Իրիկնապահ էր։ Անձրևը դադարել էր, բայց էլի էր գալու, լիքը, ծանր ամպերը թափառում էին երկնքում, և ամպերի ճեղքերից ծիկլակում էր Արեգակը։ Ափրեն—չրլմփ... չրլմփ... չրլմփ— ցեխն ու ցեխաջրերը բավականությամբ տրորելով, հասավ տուն։ Դուռը կրնկի վրա բաց էր։ Կինն ու աղջիկը ճաշասենյակի հատակը խնամքով լվացել էին, և պատուհանից ներս ընկած շողերը սուզվել էին փայտե խոնավ հատակում։ Ափրեի հայացքի դիմաց մի պահ փայլատակեց մանկության պատկերը՝ մանկության երդիկից արևի փոշոտ ու գունեղ սյունը մի պահ բռնկվեց ու մարեց, և նա տրորեց աչքերը ու ներս մտավ— Թըխկ... Թըխկ... Թըխկ— աչքը տախտակե թաց հատակում սուզված շողերին, չափեց սենյակը. քայլեց երկարությամբ, քայլեց լայնությամբ, գնաց անկյունագծով, ետ դարձավ, բայց ոչ մի անկյունից արևի փոշոտ սյունը հայտնվել չէր կարող։— Թըխկ... Թըխկ... Թըխկ— դատարկ սենյակը գիլ արձագանք էր տալիս, և Ափրեն սրտնեղեց.

«Դրա ձեն»։

— Հոյ-հոյ-հոյ,— կինը ենջարանից նկատեց ու ծղրտալով հառաջ-կանգնեց Ափրեի դիմաց։— Ա՛յ մարդ, խելքդ հո չե՞ս թոցրել. բա էսպես տո՞ւն կմտնեն։ Սրա սապոգները, ցեխը։ Աղջի,— ձայն տվեց,— հելա արի հորդ խելքին մտիկ։

Աղջիկը աղմուկի վրա հայտնվել էր շեմին և, ափն ի շուրթ, նայում էր հոր ցեխակոլոլ ոտքերին, հատակին դաջված ոտնահետքերին։

«Ցա՜,— Ափրեն բերանբաց նայեց կնոջը, մի պահ թվաց նրան, թե անծանոթ մարդ է դիմացինը,— յա՜»,— օդի պակաս էր զգում։

— Վայրենին էլ էս տեսակ բան չի անի։ Կարծում է գետինն է։ Սա պոլ է, պոլ, հասկացիր։ Սրանից հետո — կինը կովարար մատնացույց արեց շեմի մոտ գցած լաթը — կոշիկներդ էնտեղ կհանես, հետո կմտնես ներս։ Դե, հանիր... Սապոգներդ հանիր, ա՛յ մարդ, ի՞նչ ես շշմել։ Հանիր։

«Հիմա... զիմ սապոգներ կհանիմ»։

Ափրեն բաճկոնը հանդարտ ուսից վար առավ, դրեց պատուհանի գոգին, ելավ դուրս, բակից վերցրեց լինգը, մուրճն ու աքցանը և ներս մտավ։

Որտեղի՞ց սկսել... Ո՞ւր է խփված վերջին տախտակը... Ահա... Ինչքան էլ պինդ է մեխված անտերը։ Այս մեկը պիտի ջարդել, ուզի-չուզի այս մեկը պետք է ջարդել...

Կինն ու աղջիկը սսկված ու տագնապով նայում էին։

Ուրեմն, առաջին տախտակը ջարդել... մնացածը հանգիստ է։— Թըրախկ... լինգի սուր ծայրը խրվեց՝ ծայրից ծայր ձեռք տախտակը։

Կինը ճչաց ու նետվեց դեպի ամուսինը, բայց Ափրեն հրեց նրան։ Կինը գլորվեց ու ափլփելով սողաց դեպի ամուսինը, բայց Ափրեն առանց նայելու ոտքով հրեց նրան։

— Թըրախկ...— տախտակը ջարդվեց։ Ափրեն հանգարտ քաշեց՝ մեխախառն շպրտեց մի կողմ։

Գետինը մի շերտ բացվեց։ Ահա։ Հողի զով բույրը պարուրեց Ափրեի գեմքը, և նա հանկարծ զգաց, որ հողն հատակին կարոտել է...

Լինգը գցեց հաջորդ տախտակի տակ։ Արդեն դժվար չէր. ճռնչալով ելավ տախտակը։

Կինը բակում կանգնած աղմկում ու կոծում էր, օգնություն էր կանչում, իսկ Ափրեն հանգիստ քանդում էր տախտակամածը, լինգը գցում էր թե չէ՝ տախտակները ճռնչալով թռչում էին...

Եվ մինչև հավաքվեցին-եկան, Ափրեն ճաշասենյակի հատակը քանդել էր արդեն։ Վրա պրծան. «Ափրե, գժվե՞լ ես... ի՞նչ է պատահել... Ինչո՞ւ ես քանդում, Ափրե...»։

Ափրեն լուռ մոտեցավ բաճկոնին, հանեց ծխատուփն ու լուցկին, ծխախոտ վառեց և դարձավ հավաքվածներին.

— Դուք ոչ պոլը շինելուց օգնեցիք, ոչ քանդելուց օգնեք։ Մենակ թողեք ինձ։

ԾՈՒԿԱՆ

1

Տոնեն դռանը նստած ծխում էր և հետևում հարևան բակի եռուզեռին— դրկիցը, կնոջ ու երեխաների հետ, վաճառքի ոչխարներ էր ընտրում և, հարձագանք ծերունու հայացքի, հենց այնպես կանչեց՝

— Քեռի Տոնե, ծախու ոչխար չունե՞ս։

— Չէ՛, ջանը՞մ։— Մերունին հանկարծակիի եկավ։— Եվ պատասխանեց անմեղ զարմանքով։ Բայց և տեղնուտեղը լրջացավ— դրկիցը ձե՞ռք է առնում... Դրկիցը, ախր, գիտի, որ Տոնեն ծախու ոչխար չունի, գիտի, որ Տոնեի ունեցած-չունեցածը մեկ հռիգ է... Գիտի և ձեռք է առնում... Հե՞յ, գիդի, հա՞ա, դրկիցը, որ հիմա կարգին տղամարդ է, շեն տան տեր, մի ժամանակ ծիկլակում էր՝ հաշվելու Տոնեի ոչխարները, ծկլվղում-համրում էր ու խառնում հաշիվը։ Այսօր էլ, ահա, այսպես՝ Տոնեի ունեցածը թաք մեկ հատիկ է։

Գարնանը չորսն ուներ՝ երկու ոչխար և երկու գառ։ Գառներից մեկը պառավը մատաղ էր խոստացել հիվանդ թոռան համար։ Ամռանը, որդին իր գերդաստանով, որդու հարևանը իր գերդաստանով, էլի մի քանիսը իրենց ճիժ ու պժերով քաղաքից եկան, մատաղը կերան ոտքի վրա, և սեղան բացելու համար Տոնեն մյուս դառն էլ մորթեց։ Մնացած երկու ոչխարներից մեկը ընկավ քարափից, դռանը պառկած երկու օր տնքաց և կոլտնտեսության վարորդներից մեկը փրկեց խեղճին ու տիրոջը։— Քեռի Տոնե, իզուր ինչո՞ւ ես չարչարում՝ լավացողը չէ։ Մորթիր՝ տանեմ տղիդ։— Հասցրե՞ց որդուն, չհասցրե՞ց, Տոնեն չիմացավ, բայց գոհ ու շնորհակալ մնաց վարորդից։ Եվ մնաց իր պառավի ու միակ ոչխարի հետ։

Հիմա աշնան երեկո էր, պառավը շեմին փլված ննջում էր, իսկ Տոնեն, աչքը տնամերձում արածող իր հռիգին, ծխում էր և փորձում հիշել, թե վերջին անգամ ե՞րբ է վաճառել ոչխար։ Մտածեց-մտածեց և վերջը գլխի ընկավ՝ ուզում է հիշել մի բան, որ չի եղել. ախր, ինքը ե՞րբ է շուկա

գնացել։ Ոչխար, իհարկե, վաճառել է, բայց ոչ ինքը, այլ՝ որդին։ Թե չէ ինքը ե՞րբ է ոտք դրել շուկա... Մի անգամ... Միայն մեկ անգամ. է՛, երեխա ժամանակ՝ այնտեղ, էրգրում... Մուշ քաղաքի շուկան... Հոր հետ մի ոչխար էին տարել Մուշ քաղաքի շուկան, թաք մի ոչխար։

— է՛, հերիկ, հերիկ,— տնքաց Տոնեն։— էն օրն, աշնան էն օրն ինչ անուշ օր էր։

Առաջին անգամ էր ոտք դնում քաղաք, առաջին անգամ էր տեսնում շուկա՝ գույնզգույն մրգերով, տաքդեղի կարմիր շարուկներով, կուժ ու կուլաներով, դուքանների շարքով, դուքանների ճակատներն ի կախ նախշուն չթեր, ալվան աբրեշում, դուքանների դռներին իրեն հասակակից տղաներ՝ մաքրազգեստ-մաքրաերես և սանրված, երգեցիկ ձայնով գնորդներ էին կանչում, շուկան լցված էր հրավերք կանչվոտուքով, փող ու սրնգի կանչով, դափ ու դահոլի կտկտոցով, շուկայի երկնքում գվվում էին մեղուները, օդը շաղված էր մրգերի ու գինու բույրով, անծանոթ մի բույր պնչները խուտուտ էր տալիս, և ինքը մտածում էր, որ դա՝ անծանոթ ու հաճելի այդ բուրմունքը, դուքանների դռներից առձայնող աշակերտների խաս զգեստներինն է...

Այնպես վերակենդանացավ անցած-գնացած աշնանային արևոտ օրը, ճանապարհը։— Առաքելոցի ճամփով մտան Մուշ քաղաք — գունեղ շուկան, որ տեսնելուն պես, չգիտես ինչու, հիշեց իրենց հարևանի աղջկան՝ նախշուն շորով, կուժը ուսին և ծիծաղը շուրթերին, գունեղ շուկան և շուկայում՝ իրենց տեղը. շուկա մտած կանգ առան. հայրն ասաց, որ իրենց տեղը դա է։ Հայրը նստեց մի քարի և ծխախոտ փաթաթեց, իսկ ինքը, ոչխարի կապը ձեռքին, բերանբաց նայում էր և ճպճպում կոպերը։ Եվ ճպճպոցի հետ արտևանունքներին թրթռացող շողերի հետ ծածանվում էր գույնզգույն շորով աղջիկը՝ կուժը ուսին, կարկաչը շուրթերին։ Մուշ քաղա՞քն էր... Մշո շուկա՞ն էր, թե՞ գունավոր երազ... Եվ այդ գունավոր երազը կտրակցվեց այնքան ժամանակ, քանի դեռ չէր հայտնվել առաջին գնորդը...

Մի մարդ եկավ, հին ծանոթի պես բարևեց հորը և հարցրեց.— որտեղացի՞ ես։— Մառնիկ։— Ապա պտտվեց ոչխարի շուրջբոլորը,— ի՞նչ արժի։— Իսկ հայրը կարճ կապեց։— Երեք։— Մի ուրիշն եկավ՝ ձեռքով կշռեց ոչխարի՝ դմակը։— Ի՞նչ արժի,— հարցրեց։— Երեք մանեթ,— պատասխանեց հայրը։

— Պակա՞ս։— Երեք մանեթ,— ծխելով և աչքը շուկային պատասխանեց հայրը։

— Հայ, ինձ նայիր,— պահանջկոտ խոսեց մարդը,— ինձ Պետրոս աղան է ուղարկել... Պետրոս աղան գիտե՞ս ով է. Մուշ քաղաքի առաջին

հարուստը։— Մարդը խոսում էր վրա-վրա և առանց պատասխանի սպասելու։— Ես էլ Մշո շուկայի առաջին միջնորդն եմ. ինձ քաղցր աչքով չնայեցիր, քո ոչխարը չի վաճառվի։ Իմ վարձն էլ, եղած-չեղած, կես արասի է։— Եվ վռազ անհայտացավ շուկայում և հայտնվեց Պետրոս աղայի հետ՝ Մուշ քաղաքի առաջին հարուստի։ Ուսնկից միջնորդը՝ զուսպ ու գործնական, ետևից մշակը՝ գլխահակ և մի կտոր պարան ձեռքին, Պետրոս աղան մոտենում էր հանդարտ, ձեռքերը ետևը դարսած և մատների արանքում տերողորմյան խաղացնելով։ Սև-սրածայր բեղեր ուներ, սև կապա, սև ֆես, սև օձիքակալով ճերմակ օձիք, և կրծքին վառվռում էր ժամացույցի ոսկի շղթան։ Պետրոս աղան բարևեց հորը, ձեռք մեկնեց, թռուցիկ աչք դիպցրեց ոչխարին, ապա ահագին ժամանակ լուռ ու գլխահակ խաղաց թաղբեհի հետ։ Հետո հարցրեց հոր անունը, հարցրեց իր անունը և արհշատություն ցանկացավ, հարցրեց երեխաների թիվը և բոլորին արհշատություն ցանկացավ, հետաքրքրվեց, թե՝ Մառնիկում ասա՞ս էր տարին, արտերը հո չկարկտահարվեցի՞ն, անասունները հո գարաղ չե՞ն ընկել, հարկահանության օրերին հո միջադեպեր չեղա՞ն... Մշակը, պարանը ձեռքին, թաքնվել էր աղի թիկունքին, միջնորդը լուռ քաշվել էր մի կողմ, իսկ Պետրոս աղան, տերողորմյայի հետ խաղալով, երկար հարցուփորձում էր՝ հանդարտատոն և հատիկ-հատիկ բառերով ու տմբտմբացնելով։— Մեկ խոսքով ասած, անփորձանք ու աղեկ եք ապրում։

«Գեշն ու աղեկն ուստի՞ց իմանանք, աղա Պետրոս,— պատասխանեց հայրը։— Գեղացի մարդ ու աշխարհից անլուր ու աշխարհի մարդկանց կյանքին անծանոթ։ Մենք ու՝ մեր սարն ու ձոր, մենք ու՝ մեր մալն ու գերդաստան։ Ըհը ու քաղաք իջա։ Տեսնիմ ինչ կա-չկա ու լուր տանեմ գուռ ու դրկիցին»։

Պետրոս աղան տմբտմբացնում էր, հետո համբիչը գցեց գրպանը, ծխախոտ հանեց, ծխախոտով հյուրասիրեց հորը, ապա ոչխարի շուրջբոլորը հանդարտ մի պտույտ գործեց և հարցրեց արժեքը։— Երեք մանեթ,— պատասխանեց հայրը։— Գինն ասա։— Երեք մանեթ,— կրկնեց հայրը։— Ամեն ապրանք իր գինն ունի, հայ, քո ապրանքը երեք մանեթ չարժի։ Գինն ասա։— Միջնորդն արդեն աշխուժացել էր, անհանգիստ շարժվում էր և, Պետրոս աղայից ծածուկ, նշանով հասկացնում էր հորը, թե՝ պինդ մնա։— Իմ ոչխարի գինն երեք մանեթ է,— պնդեց հայրը։— Երկու մանեթ,— Պետրոս աղան մեկնեց ձեռքը։ Թիկունքից միջնորդը տագնապով սաստեց հորը, և հայրը չընդունեց աղա Պետրոսի ձեռքը։— Երեք մանեթ,— կրկնեց հայրը։— Երկու մանեթ,— Պետրոս աղան փորձեց իլել հոր ձեռքը։ Եվ հայրը տաքացավ.— Պետրոս աղա, դու Մուշ քաղաքի առաջին հարուստն ու մեկ մանեթի համար էդքան կսակարկիս։— Պետրոս

աղան քմծիծաղեց։— Հայ, Պետրոս աղայի հարստությունը ջուրը չի բերել, Մառնիկի սարերի հեղեղը չի բերել ու լցրել Պետրոս աղայի սունդուկը, Մուրադ գետի հետ չի եկել, հայ։ Մեկ մանե՞թ... Պետրոս աղան մեկ մանեթով է ասպարեզ մտել։— Եվ գրպանից հանեց ոսկյա ժամացույցը։— Ուշ է։ Ապրանքիդ գինն ասա։— Հայրը տարակուսանքով նայեց ոչխարին, նայեց միջնորդին, և միջնորդը հասավ՝ Պետրոս աղայի և հոր ձեռքերը քաշեց-բերեց իրար,— կես-կես մանեթ բաշխեք մեկ-մեկու։ Երկու ու կես մանեթ։— Աղեկ,— համաձայնեց Պետրոս աղան։— Աղեկ։— Կրկնեց Հայրը։— Ոչխարն ուրախության համար էղնի։— Փողը ուրախ օգտագործես,— Պետրոս աղան կրկնակի հաշվեց դրամը և վերջում ավելացրեց մեկ աբասի։— Էս էլ իմ կողմից քեզ նվեր։— Հայրը առարկեց։— Նվեր մերժելը անպատվություն է, հայ։— Եվ աբասին խցկեց հոր բուռը,— երեխաների համար չամիչ կառնես։— Հետո հայրը ոչխարը հանձնեց մշակին։— Կապդ հանիր,— ասաց Պետրոս աղան։— Կապն ինձ պետք չէ։— Պետք չէ,— քմծիծաղով կրկնեց Պետրոս աղան,— էս աշխարհում անպետք բան չկա, հայ,— և մշակին ակնարկով հասկացրեց, որ կապը վերադարձնի։ Ապա մի մետաղադրամ սահեցրեց միջնորդի գրպանը և ինչպես եկել էր՝ հանդարտաքայլ, ձեռքերը ետևը դարսած, մատների արանքում տերողորմյան, այնպես էլ գնաց։

Հայրը, այնուամենայնիվ, ոչխարի կապը շպրտեց, ապա նվեր ստացած աբասին տվեց միջնորդին, և մտան շուկա։

Աղմուկ ու խառնաշփոթ էր շուկան։

Եզրից շատ էր գեղեցիկ՝ գունեղ, հեքիաթային։ Իսկ ծիածանով պարուրված պատրանքը, որ հայտնվեց հենց աչքը շուկային դիպնելու պես և անհայտացավ առաջին գնորդի հետ, չկար ու չկար։ Նույնիսկ կին չկար շուկայում։ Իսկ ինքը այնպես էր ուզում, որ նորից փողփողա չթե նախշուն շորով աղջիկը՝ կուժը ուսին, կաքկաչը շուրթերին։ Բայց կին էլ չկար շուկայում, զարմանալի էր՝ ոչ մի կին, ոչ մի աղջիկ, ոչ գույնզգույն խնձորների, ո՛չ տաքդեղի կարմիր շարուկի մոտ, ո՛չ ալվան մետաքսի ու ծիծաղկոտ չթերի, ո՛չ կուժ ու կուլայի մոտ։ Շիլաշփոթ էր շուկան, կանչվրտոց, ամեն կողմից կանչում ու քաշում էին հոր փեշը։ Իսկ՞ հոր որոնածը...

— Քեռի Տոնեն։

Հանկարծահաս կանչի հետ ծերունին ցնցվեց։ Իրականությունից վերացած և պոկված իր ճերմակ տարիքից, Տոնեն՝ կանաչվորած մի տղա, հոր հետ պտտվում էր Մուշ քաղաքի շուկայում, և հարևանի կանչի հետ Մշո շուկան միանգամից մթնեց-հուշը թռավ, ինչպես նետված քարից՝ ծիտը։— Իսկ հոր որոնածը... շուկայում հոր որոնածը...

— Մաքիդ մեզ հյուր է եկել, քեռի Տոնե, ուղարկե՞մ, թե՞ մնա։

Տոնեն դժգոհ նայեց հարևանի բակի կողմ և, ձեռնափայտին հենված, ծանր ոտքի ելավ։— Էդ հոիգի ձեռքը կրակն է ընկել. մենակությունից անտերը տուն էլ չի գալիս. մեկ սրա ոչխարների պոչից է կպչում, մեկ՝ նրա։ Դե եկ ու ամեն իրիկուն քարշ-քարշ տուն բեր և գիշերը մինչ ի լույս ականջ պահիր բոբոցին։ Էսպես՝ դեռ հիմա։ Ջմռանը, ամեն առավոտ ու իրիկուն, մեկ հոիգի համար ուտիչ բաց արա ու հսկիր։ Խելոք մարդը թաք ոչխար կպահի։ Մարաթուկ վկա, չի պահի։— Եվ մինչև դրկիցի մոտ հասնելը վճիռը արդեն կար՝ վաճառելու է ու վերջ։

— Քեռի Տոնե, եկար տանելո՞ւ։

— Չէ։

— Թող մնա, քեռի Տոնե, մնա թող մեր ոչխարների հետ,— աշխույժ վրա տվեց հարևանը։— Ջարշարում է քեզ։ Ուզում ես, ձմռանն էլ ես կպահեմ. որտեղ քսանը՝ էնտեղ էլ քսան ու մեկը։

— Չէ։ Ծախել...— կմկմաց Տոնեն,— ծախելն է ճիշտ։

— Ծախելո՞ւ ես է, շատ լավ,— վրա տվեց հարևանը։— Էգուց տասը ոչխար եմ տանելու, որտեղ տասը՝ էնտեղ էլ տասն և մեկը։

— Չէ, չէ, ես... ես...

— Հը, ուրեմն հարևանիդ չես վստահում, քեռի Տոնե։

— Չէ, չվստահել, չէ,— ծերունին խառնվեց իրար,— վստահելու ու չվստահելու հարց չէ... Գործ կա... Տղի հետ գործ ունեմ։— Եվ մտածեց, որ շուկա հասնելուց առաջ, լավ կլինի, մտնել որդու տունը. թոռանը վերցնել օգնական. երեխա-տղա է, կբռնի ոչխարի կապը...

— Է, շատ լավ, միասին կգնանք։— Հարևանը գործնական մոտեցավ. ձեռքով կշռեց Տոնեի ոչխարը։— Քանիսո՞վ ես մտադիր վաճառել։

— Քանի մանե՞թ... Շուկա է՝ նայած առնող, նայած միջնորդ... էսպես՝ երկ... երկու,— կմկմաց,— երեք։

— Այսինքն՝ քսանհինգ-երեսո՞ւն։

— Հըմը էդքան։ Երեք կասեմ, երկուս ու կեսով կտամ-կերթա։

— Թե էդպես է՝ ինձ տուր,— ծիծաղեց հարևանը։— Քեռի Տոնե, քո ոչխարին հարյուր ռուբլի մի կոպեկի պես կտան։

— Հայ-հայ-հայ... էդ մարդկանց փարեն ջո՞ւրն է բերե, էդ մարդկանց փարեն մեր Մառնիկա սարի հեղե՞ղն է բերե-լցրե սնդուկն, էդ մարդկանց փարեն Մուրադ գե՞տն է բերե։

— Էդ քո գործը չէ։ Դու ինձ թող, քեռի Տոնե, սկզբում քո ոչխարը կվաճառեմ, հետո իմը։

— Չէ, չէ։

— Քեռի Տոնե, ինչ ասեցի, առարկեցիր՝ չէ, չէ։

— Ջնեղանաց, լաո, շուկա է՝ ամեն մեկն իր գործին... Միջնորդ կա...
— Միջնո՞րդն ով է։

Հարևանի միամտության վրա Տոնեն ներողամիտ ծպտաց— միջնորդն ով է... Աստված քեզ բարին տա, մի ոտքը գյուղում է, մեկը՝ շուկայում, բայց, տես, որ միջնորդի մասին գաղափար էլ չունի։

— Միջնորդը շուկայի ամենքից կարևոր մարդն է,— բացատրեց հարևանին։— Առանց միջնորդի ոչխար ծախողի ձեռքն ու առնողի ձեռքն իրար չեն գա։ Հասնինք քաղքի շուկան, քու աչքով կտեսնիս։

2

Բեռնատարի խցիկը զիջել էին Տոնեին։

Վարորդը շատախոսում էր, իսկ Տոնեն կարճ էր կապում և փորձում հիշել՝ վերջիվերջո, հայրը ի՞նչ գնեց Մուշ քաղաքի շուկայում։ Գիշերը նա երկար մտածեց։ Մխեց ու շուռումուռ եկավ անկողնում, ծխեց ու մտմտաց, հիշողությունը էլի ու էլի սկսեց սկզբից, բայց, ինչպես ջրի շիթը, որ կանաչ առվակի հետ գալիս է ու առվակի հետ սուզվում ավազի մեջ, հիշողության այդ հատվածը կորչում էր. հարևանի կանչի վրա թռել էր ու չկար։ Եվ հիմա, վարորդի կողքին նստած, այնուամենայնիվ, փորձում էր հիշել։— Ուրեմն, Պետրոս աղան՝ ձեռքերը. քամակին, թազբեհը մատների արանքում գնաց, ետևից՝ մշակը— կապը ձեռքին— ապա հայրը նվեր ստացած մեկ աբասին տվեց միջնորդին, և մտան շուկա... Ամեն կողմից կանչում-հրավիրում-քաշում էին հոր փեշից, իսկ հայրը, հայրը... Հայրը ի՞նչ էր որոնում շուկայում... ի՞նչ գնեց... ինչպե՞ս դուրս ելան շուկայից... ինչպե՞ս գնացին գյուղ... ե՞րբ հասան տուն և ի՞նչ տարան տուն։— Հա մտմտում էր, իսկ վարորդը հա շատախոսում էր։— Բայց որ չվաճառեիր՝ ճիշտ կլիներ, քեռի Տոնե։— Չէ։— Ետ տանենք գյուղ։— Չէ։— Մի հատ էլ կգնես՝ կդառնա երկուս։— Չէ։— Երկու ոչխար պահելն արդեն հանգիստ է, քեռի Տոնե։— Չէ։— Փողի կարի՞ք ունես։— Չէ։—...։— Չէ...։— Չէ։

Վարորդին պարզապես ծերունու տոնն ու պատասխանն էր դուր գալիս— խաղալիքը գրկին մի երեխա էր նստած կողքին, և նա այդ երեխայի հոգու հետ խաղ էր անում. փորձում համոզել-վերցնել խաղալիքը, իսկ երեխան դժգոհ ու խռովկան դիմադրում էր՝ չէ, չէ...

Այդպես էլ ծերունին չկարողացավ կլորել հուշերը, և հասան։

Քաղաք չմտած մեքենան կանգ առավ։

Վարորդը իջավ, իսկ Տոնեն, ոչխարի կապը ծնկներին հավաքած,

սպասեց— այնուամենայնիվ, լավ կլիներ, շուկա հասնելուց առաջ մտնել որդու տունը և թոռանը օգնական վերցնել։

— Իշիր, քեռի Տոնե։— Վարորդը հաղիվ էր զսպել ծիծաղը. ուր որ է, ծերունին կպատասխանի՝ չէ։

— Իշնի՞մ։— Ծերունին տարակուսեց, բայց իջավ։

Հարևանն արդեն ոչխարները մեքենայի թափքից հրում էր վար։

— Էստեղից ոտքո՞վ էրթանք։

— Ո՞ւր, քեռի Տոնե։

— Քաղքի շուկան։

— Քաղաքը շուկաներ շատ ունի, քեռի Տոնե։

— Ջանըմ, շուկան, քաղքի շուկան,— նեղսրտեց Տոնեն։— Ոչխար ծախելու շուկան։

— Ոչխարի շուկան էս է։

Տոնեն տարակուսանքով նայեց շուրջբոլորը. դիմացը քաղաքն էր, ուր դեռ ոտք չեն դրել, իսկ ասֆալտապատ ճանապարհի երկու կողմերում խաղողի այգիներն էին։ Զոլ... Իսկ որտե՞ղ է շուկան։ Կամ ինքն ու հարևանը իրար չհասկացան, կամ... այնուամենայնիվ, նա մոտեցավ կապը ոչխարի վիզը գցելու, կամ...

— Քեռի Տոնե, ինչո՞ւ ես կապում՝ հանգիստ թող արածի։

— Արոտի չենք բերե, ջանըմ,— ...կամ հարևանը, վարորդի հետ խոսքը մեկ արած, իր հոգու հետ է խաղում։— Պրծի-էրթանք շուկա։

— Լավ, քեռի Տոնե, նստիր, ա՛յ, էն ծառի տակ, մի քիչ հանգստացիր, հետո կգնանք շուկա։

Եվ Տոնեն քաշեց ոչխարը ու նստեց հենց հարևանի ցույց տված ծառի տակ։

Հուշից պոկված-թռած պատառը ցավի պես տնքում էր ներսում, բայց տեղը կորածը որոնելու տեղ չէր։

Քիչ այն կողմ, ճանապարհի եզրին, մի կուտակ տաք ասֆալտ էր ծխում, և ժանգագույն արտահագուստներով կանայք ճանապարհն՝ էին կարկատում. լայնաթաթ բահերը լցնում էին տաք ասֆալտով և, դեմքները պոռթկուն ու բարկ ծխից փախցրած, ճկած տանում-դատարկում էին փոսերում, տփտփացնում բահով և նորից դառնում դեպի ծխացող կուտակը։ «Արագ-արագ-արագ»,— կարգադրում էր աշխղեկը՝ կուտակից հեռու քաշված, ճամփից դուրս քաշած իր մեքենայի մոտից։ «Քու պապու պառեկ...— մտքում հայհոյեց Տոնեն։— Ջանըմ, ե՞րբ կհասնինք շուկա»։

Ավտոները վզգալով գալիս էին և ճանապարհի այդ հատվածում դանդաղում-խճճվում, զայրացած ազդանշան տալիս, քշում իրար վրա,

քշում ասֆալտը կարկատող կանանց վրա։— Արագ-արագ-արագ,— միմյանց ծվատող ազդանշանների միջից, վարորդների անհամբեր կանչվռտուքի միջից և ասֆալտի բարկ ծխով պարուրված կանանց ծղրտոցի միջից կարգադրում էր աշխղեկը։ Եվ՝ վերվերի մի ձայն,— ի՞նչ արժի։— Հարյուր,— պատասխանեց հարևանը։ Տոնեն մեկ խճճված ավտոներին նայեց և փորձեց որոշել, թե հարցը որտեղի՞ց եկավ, մեկ՝ հարևանին և փորձեց որոշել, թե խոսքը ո՞ր ոչխարի մասին էր, բայց հարցն ու պատասխանը արդեն կորել էր ճամփի ջնջված աղմուկում։— Արագ-արագ-արագ։— Թիկունքին փշալարե ցանկապատն էր և խաղողի այգիներ, մի խումբ կանայք այգեթաղ էին անում, և մի կին կանչեց,— ո՞ր գյուղից եք։— Տոնեն սպասեց, որ հարևանը պատասխանի, իսկ նա չարձագանքեց կանչին— ոչխարները փշալարի տակ հավաքած հարևանը ավտոներից նետված հայացքներն էր որսում։— Ի՞նչ արժի։— Հարյուր-հարյուր։— Վայ թե հարևանը չի կատակում. վայ թե ոչխարների շուկան հենց այս է ու կա։— Տոնեն հանեց ծխախոտը, բայց չվառեց. մայթաձուքի հոտը խեղդում էր։

Հետո ասֆալտի կուտակը չքացավ, աշխղեկը ինչ-որ պատվիրեց ասֆալտագործներին, ապա նստեց մեքենան ու գնաց, ավտոները սկսեցին սուրալ, կանայք դեմքներն ազատեցին գլխաշորերից, հանեցին բրեզենտե ձեռնոցները, վզվզացող ավտոներին չանչ անելով՝ ճանապարհը կտրեցին-եկան և լուռ նստեցին Տոնեի ու նրա ոչխարի շուրջբոլորը։ Մի ավտո դանդաղեցրեց ընթացքը, և մեկը ձայն տվեց,— ի՞նչ արժի։— Հարյուր։— Տոնեն նայեց հարցնողին, նայեց հարևանին և էլի փորձեց որոշել, թե խոսքը ո՞ր ոչխարի մասին է, բայց հարցն ու պատասխանը շատ էին վերացական։— Այդպես էլ պետք է լիներ. չէ՞ որ դեռ շուկայում չէին. ահա այգեգործ կանայք ձայն են տալիս,— ո՞ր գյուղացի եք։— Չէ, ջանըմ, շուկա չէ,— պարզապես հարևանը ոչխարներին արածեցնում է, որ շուկայում նիհար չերևան և, ընթացքում, փորձում է մեկ-երկուսը վաճառել։ Իսկ շուկան, քաղաքի շուկան... Եվ դարձավ մոտիկ նստած կնոջը՝

— Քաղքի շուկան ո՞ր կողմի վրա է, հարս։

— Հարս։— Հեգնեց կինը։— Հողը իմ նման հարսի գլխին։— Կինը բրեզենտե ձեռնոցով թափ տվեց արտազգեստը։— Դու հարս ունե՞ս։

— Ունեմ։

— Երանի քո հարսին։ Քանի՞ ոչխար ունի հարսդ։

Տոնեն լռեց։ Փոխարենը պատասխանեց հարևանը։

— Քեռի Տոնեի հարսը քեզ պես քաղքցի է, քույրիկ։

— Հողեմ գլուխը։— Կինը անորոշ ուղղությամբ չանչ արեց։

Տոնեն կողքանց աչք դիպցրեց կնոջը և նորից կախեց գլուխը։ Հա ուզում էր վառել ծխախոտը, բայց քթի տակ բուրող մազութի հոտը խեղդում էր։— Ջանըմ, ե՞րբ կհասնինք շուկա։— Եվ այդպես՝ ոտքերը մեկնած, ոչխարի կապը փաթաթած ոտքին և մատների արանքում տրորվող ծխախոտին հակված, Տոնեն նկատեց մոտեցող ոտքերը, անմիջապես՝ մյուսը և երրորդը՝ շալվարի փողքերը ծալած։— Ջրվորնե՞ր են։— Եվ, մինչև կբարձրացներ գլուխը, ծալված փողքերով ոտքը աքացի տվեց ոչխարին։

— Էս ո՞նց է։

Տոնեն բարձրացրեց գլուխը։ Դիմացը ցցված երիտասարդը բոլորովին ջրվորի նման չէր— այսպիսի ջրվո՞ր կլիներ՝ հարդարված մազերով, ճերմակ երեսներով, փափլիկ ու ճերմակ ձեռք ու թևերով... Եվ սրան ուսնկից կանգնած մյուս երկուսը՝ նույնը։ Եվ իրեն ու ոչխարին չեն նայում, համախումբ դարձել են ճամփեզրին կանգնած իրենց ընկերոջը։ Ճամփեզրին մի ավտո է կանգնած, կողքին տերը՝ տարիքին անվայել գեր, կրկնակզակով և այնքան անգույն, որ, կարծես, արև չի տեսել։ Թևերը կրծքին ծալած ծխում է և հոգնած ու անորոշ նայում՝ ոչ այն է ոչխարը շրջապատած ընկերներին, ոչ՝ ոչխարին։

— Դուրդ գալի՞ս է։— Կամքին խոնարհ նայում են, իսկ նա, ի պատասխան, ծոմոում է շուրթերն ու ծխախոտը և հոգնած ու անտարբեր ուսերն է շարժում՝ ոչխար է, էլի։

— Ի՞նչ արժի։— Փողքերը ծալած երիտասարդը նորից է քացահարում ոչխարին և շտապ թափ տալիս շալվարը։

— Հարյուր։— Հարևանը արդեն վրա է հասել։

Գինը հարցնողը, անմիջապես նաև մյուս երկուսը, միաշունչ դառնում են նրան։ Իսկ նա թքում է ծխախոտը, հեգնանքով ծոմոում շուրթերը և ձեռքը հոգնած տանում է գրպանը։

— Վեր կաց, քեռի Տոնե,— հարևանը հրում է ծերունու ուսը։— Փողդ ստացիր։

— Յա՜ա... Հըմը էդպե՞ս։— Տոնեն շվարած մեկ հարևանին նայեց, մեկ՝ աքացիների տակ հրմշտվող ոչխարին։— Հըմը... էսպե՞ս։

— Ել-էլ։— Հարևանը օգնեց, որ ծերունին ոտքի կանգնի։

— Յա՜ա...

Եվ մինչ ծերունին ոտքի կելներ, նրանք ոչխարը քաշքշելով, ոտնահարելով հասցրին ավտոյի մոտ և իրար հայհոյելով (լո՞ւրջ, թե կատակ՝ իրար հայհոյելով), ոչխարին հայհոյելով՝ «կեղտոտ անասունը» շպրտեցին ավտոյի բեռնախցիկը։ Իսկ գերը, անտարբեր հայացքը անո-

բոշ մի տեղ, թղթադրամն էր մեկնել, թե՝ ում, չգիտեր և հետաքրքիր չէր՝ ով ուզում է վերցնի։

— Յա՜ա... Հրմը էդպե՞ս։— Տոնեն բերանբաց սառել էր։

Հարևանը շտապեց վերցնել դրամը։ Եվ երբ փողը խցկում էր ծերունու բուռը, նա ուշքի եկավ։

— Չէ՛։— Հրեց հարևանի ձեռքը և փայտով քշեց դեպի ավտոն։— Ծախու չէ։ Ոչխարն ծախու չէ։

— Խի՞ ես բալամուտ անում, այ բիձա։— Երիտասարդներից մեկը հրեց նրան։— Մի սատկած ոչխարով ուզում ես միլիոնչի դառնա՞լ...— և անվայել մի բառ ասաց ու բռունցքը մտցրեց ծերունու աչքը։— Կյանքում չհավատաս։

— Յա՜ա...

Ասֆալտագործ կանայք աղմկեցին, թղթադրամը պինդ պահած մոտեցավ հարևանը, այն կողմից նաև՝ գեր ու հոգնած երիտասարդը։ Ընկերները տեղ բացեցին նրա համար։ Նա ցցվեց ծերունու դիմաց և փընչաց։

— Փողի կարիք ունե՞ս, արա։— Ձեռքը տարավ գրպանը, հանեց ճոճռան մի թղթադրամ և շպրտեց ծերունու դեմքին։— Առ, գնա ապրի։

Ծերունին ակամա նայեց՝ էն ինչ դիպավ ճակատին... Ոտքերի մոտ անծանոթ մի թղթադրամ էր ընկած։ Եվ նա, Տոնեն, հայացքը թղթադրամին, հանկարծ հիշեց— գինի...— այն, ինչ երեկվանից և ողջ գիշեր մտմտում էր ու չէր գտնում, հիշեց՝ Մշո շուկայում հայրը գինի էր որոնում, արդար գինի... անարատ գինի...

Ժանգագույն արտահագուստներով կանայք ոտքի ելած ծղրտում էին (ի պատասխան ստանալով լուտանքներ), հարևանը դրամը ձեռքին սառած կանգնել էր, իսկ Տոնեն՝ ուսերը կոտրված և հայացքը ոտքերի մոտ ընկած թղթադրամին, հիշում էր— ուրեմն, Պետրոս աղայից նվեր ստացած մեկ աբասին միջնորդին տալուց հետո մտան շուկա, և հայրը մոտեցավ մի գինեվաճառի.

«Գինին արդա՞ր է»,— հարցրեց հայրը։

«Արդար է ու անարատ»։

«Մեկ բաժակ արդար ու անարատ գինի տուր»։— Խմեց և դժգոհ մնաց։— Արդար չէր։— Անցավ մյուս գինեվաճառի մոտ։— Գինին արդա՞ր է։— Արդար է։— Մեկ բաժակ արդար գինի տուր։— Խմեց և դժգոհ անցավ մյուսին։— Արդա՞ր է։— Խմեց և դժգոհ անցավ մյուսին... խմեց և դժգոհ անցավ... խմեց և հերսոտ անցավ... խմեց ու հերսոտեց... Հայրը Մշո շուկայի բոլոր գինեվաճառներին նույն հարցը տվեց, նույն պատաս-

խանը ստացավ, ամեն մեկին վճարեց ու խմեց, անցավ՝ վճարեց ու խմեց, վճարեց ու խմեց, խմեց ու դժգոհ մնաց, խմեց ու հերսոտեց, խմեց ու կատաղեց և շուկայի կենտրոնում ոտքը խփեց գետնին ու կանչեց՝

«Մեկ բաժակ անարատ գինի՞... Մեկ բաժակ արդար գինի՞...»։

— Քեռի Տոնե։— Հարևանը վերջապես բերան բացեց՝ ընկճված, փուշը թողած։

Նրանք արդեն չքվել էին, ճամփեզրի ծառի տակ կանայք նստոտել էին լուռ, խռովածների պես երեսներն իրարից թեքած, ճանապարհով վազվզում էին մեքենաները, մի ավտո դանդաղեց. «Ի՞նչ արժի»։— Հարևանը շտապեց և կակազեց։— Հար... հարյուր։— Եվ հրեց ծերունու ուսը։

— Քեռի Տոնե։

Տոնեն բարձրացրեց գլուխը, մշուշոտ նայեց Հարևանին և շշնջաց.

— Մեկ բաժակ արդար գինի։

ՄԻԱՅՆԱԿ ԾԱՌԸ

1

Գերանը ճկված տեղից ճաք էր տվել։

Գերանը վաղուց էր ճկվել, իսկ ճաքը նոր էր։ Հացատան առանցքային գերանը դեռ անցյալ գարնան անձրևների ժամանակ կքեց. գուցե՝ ավելի առաջ, բայց Հազրոն գարնանը նկատեց և որոշեց հենակել։ Եթե որդին հույս չտար— որդին գարնանը հայտնվեց՝ խոստացավ ու գնաց— եթե քաղաքաբնակ որդին չխաբեր, Հազրոն սյունը վաղուց ճարած-կանգնեցրած կլիներ՝ ամռանը, հարմար ժամանակ։

Արդեն ուշ աշուն էր. մառախուղը ճմլտկում էր գյուղում, թափառում գյուղի շուրջկալ լեռներում, լիզում քարերը, լիզում շիֆերածածկ կտուրները, իսկ Հազրոյի տանիքը հողե էր, մի շաբաթ էր սառը անձրև էր մաղմղում— կտուրի հողը ծանրացել էր— և գերանը ճկված տեղից ճաք էր տվել։

Հազրոն փայտե թախտին պառկած ծխում էր ու նայում մխոտ գերանի ժանգառե ճաքին։ Ճկվածքի կենտրոնից ճաքը թեքությամբ խուլ հոսում էր դեպի հեծանները։ Հենց հասնի հեծաններին, պարզ է... Երեկ առավոտյան երբ նկատեց՝ մազված էր։ Մի ցերեկ ու մի գիշեր էր անցել,

և արգեն գերանի մթե փաթեթը պատռվել էր, և մուրը թերթ-թերթ կախվել ճաքի շրթից։

Աբաց էր գործում ճաքը։ Շտապ հենակել էր պետք։

Հազրոն հայացքով որոշեց այն տեղը՝ ճիշտ թոնրի մեջ. գերանը կենտրոնածիգ է, թոնիրը՝ տան կենտրոնում, ճկվածքն ու ճաքը՝ հենց թոնրի գլխին, ուրեմն այունը պետք է կանգնեցնել թոնրի մեջ։

Թոնիրը լցված էր մոխրով— պառավի մահից հետո ո՞վ էր վառելու— և մոխրի վրա Հազրոն օջախ էր սարքել։ Կրակարանը կաեզափոխի պատի տակ. ծուխը պատ ու առիթ լիզելով-ծամվելով կհասնի երդիկին, բայց, ինչ արած, օջախը կսարքի պատն ի հետ, թոնիրը կդատարկի մոխրից և կկանգնեցնի այունը։ Եվ՝ էսօր-էգուց. հետո ուշ կլինի։

Իսկ սնացու չկա։

Երկու օր Հազրոն տալիս-առնում էր. խնդրե՞լ նախագահին, թե՝ ոչ։ Եվ հիմա, այս առավոտ, որոշեց չդիմել՝ նախագահը մաղձոտ է՝ կիսալքի. «Քեռի Հազրո, քաղաքաբնակ որդիդ մի այուն ճարելու շնորհք չունի՞»,— նախագահը եթե չդիպչի էլ Հազրոյի վերքին, եթե չմերժի էլ, այան փոխարեն միայն հույս կտա։ Եթե որդին է խաբում՝ ումի՞ց նեզանաս... Որդուն էլ երևի ուրիշներն են խաբում։ Խաբվածներն են խաբում։ Նախագահը հույսով կքնեցնի Հազրոյին, իսկ մի գիշեր ծածկը կնստի, և օր ծերություն Հազրոն կդառնա շան սատակ։

Դեռ լույսը չբացված էր հագնվել Հազրոն և թախտին մեկնված ծխում էր ու սպասում, որ օրը լրիվ բացվի։ Իսկ օրը նորից թոն ու թուխպ էր. երդիկի երկնքում սահում էին գորշ ամպերը, անձրևը դադար էր ավել, բայց երդիկը դեռ մաղմզում էր՝ սառը, փայլատ. դա անձրև չէր, այլ ուշ աշնանային օրվա սառնությունը։

Կատուն կուչ էր եկել Հազրոյի երկար ու նիհար սրունքներին, տխուր մոմառում էր և հոնքերի տակից հետախուզում տիրոջ հայացքը։ Տիրոջ հետ մեկ գերանին էր նայում— և գիտեր, որ գերանը ճաքած է— մեկ՝ կաթկթացող շուրթերով երդիկին և երբ կտրակցոն հայացքը դիպչում էր թաց մոխրով լցված օջախին, կատուն մլավում էր և նորից կառչում տիրոջ հայացքից։ Կարելի էր օջախը վառել կատվի համար, բայց բոց չէր բռնի. երդիկը թոն, իսկ օջախի խոնավությունը երևի մինչ ի թոնրի հատակն է ներծծվել։

Հազրոն կացինը վերցրեց թախտի տակից, հեսանը խրեց գետին և դուրս եկավ։ Դուռ ու բակից գյուղը չէր երևում. գյուղը տան թիկունքին էր. Հազրոյի տունը վարը՝ գյուղափեշ ճապաղ բլրակին էր. շրջկենտրոնից լեռնային գյուղը մտնող ճամփի պռնկին։ Ցածրիկ, կուչ եկած մի հացատուն՝ անկոփ քարերով, ի միջի այլոց, մի տեսակ ոտքի վրա շար-

ված, տան թիկունքին՝ փոքրիկ մի գոմ, իսկ մարագի միայն պատերն էին, մարագը այդպես էլ ծածկ չունեցավ— Հազրոն կարծում է, թե ինքը ճամփորդ է... Հինգ տարի տնանկ թափառելուց հետո, քսանի գարնանը հոր հետ երբ հայտնվեցին և գյուղի փեշին հիմք փորեցին, կարծում էին, թե էսօր-էգուց վերադառնալու են էրգիր։ Հայրը ծեր էր արդեն, շուտ մեռավ, իսկ Հազարապետը, Հազրոն, ահա ապրում է և խաբում իրեն, թե ինքը ճամփորդ է։ Մեծ աշխարհամարտին մասնակցելուց, կրռվից վիրավոր վերադառնալուց հետո էլ դեռ իրեն խաբում է. եթե տունը իր տեղում կարգին նստած չէ, այսպես՝ ոտքի վրա է, ուրեմն Հազարապետը-Հազրոն ճամփորդ է։

Հազրոն, կացինը ձեռքին, հեսանը գոտին խրած, կանգնեց ճամփին և նայեց գյուղին, շուրջբոլորը։ Գյուղի շուրջկալ լեռներում մտամոլոր թափառում էր մառախուղը՝ մեկ ուզում էր գյուղ մտնել, մեկ՝ մտափոխ, թավալվում էր լեռներն ի վեր։ Գյուղը լուռ ու խաղաղ էր։ Հազրոյից բացի ոչ ոք ձմեռնամուտի այս մգամած առավոտ այսպես կարիք չուներ. բոլոր տները թիթեղապատ-շիֆերապատ էին— մառախուղի շնչից ծխերը ծալվում էին թաց տանիքներին— կային երկհարկանի տներ, բոլորը ապակեպատ պատշգամբներով, բոլորը լուսավոր պատուհաններով, բայց գյուղը մերկ էր, թրջված ու կուչ եկած։ Դե, գյուղին շեն տեսք տվողը ծառերն են, իսկ լեռներում սեղմված այս գյուղին, քարախեղդ լեռներին Տերը ծառ չէր կամեցել։ Տնամերձերում նոր-նոր տնկել են ցրտադիմացկուն խնձորենիներ՝ կծաղկե՞ն, պտուղ կտա՞ն, դեռ հայտնի չէ։

Հե՜յ գիտի, հա՜ա, Գըլեգուզան— Գըլի... Ծառերի մեջ կորած էր։ Ընկուզենիների հետ, ձորն ի հետ երկկողմանի գնում էին տները, բոլորը՝ ընկուզենիների հովանու տակ, անխտիր ընկուզենիների հովանու տակ։ Եվ ձորն էր լցված ընկուզենիներով։ Հեռվից նայողը տները չէր տեսնում՝ միայն ընկուզենիներն էին... Եվ ձորն էր լցված ընկուզենիներով։

Հազրոն, հեսանաքարը գոտին խրած, կացինը ուսին, ծուռտիկ ու ցեխոտ ճանապարհով իջվարեց։ Հեռու չէր գնալու. ծառը, բարդենին, երևում էր՝ վարը, կիրճի գլխին, շրջկենտրոնից գյուղ եկող ճանապարհի շրջադարձին։

Կիրճն իջնող ճանապարհի աջ ու ձախում քլթքլթացող բլրակներին մի ժամանակ լաթ-լաթ արտեր էին կպած, բոլորուն քարե պարիսպներով, և ճանապարհին ուղեկից առու էր ոլորվում։ Կոլեկտիվացումից առաջ, մի գարնան, շրջանի հողաչափը, եռանդուն մի երիտասարդ, վարի գյուղերից բարդենու շվեր բերեց-տնկեց առուն ի հետ։ Երիտասարդը շվերը տնկեց, պատվերներ տվեց և գնաց ու գնաց։ Հազրոն չի հի-

շում, թե դրանից հետո այդ ջահել հողաշափը գյուղում հայտնված լինի, ասես ստվեր անհայտացավ։ Շվերից մի քանիսը չորացան, իսկ շատերը կանաչեցին։ Հետո, երբ քարե պարիսպները փուլ եկան, երբ լանջերի արտերը քայքայվեցին— կմախքացան, և առուն փակվեց՝ ծառերը չորացան, իսկ մեկը մնաց, համառեց ու անջուր ապրեց։ Մեկը՝ ա՜յ, այն միայնակ բարդենին, որի մոտ հիմա գնում էր Հազրոն։

Վարը, Հազրոյի հայացքի դիմաց, հավաք ու ձիգ թավալվում էր մխածլուլը։ Գետնասող մուժը բարդենու բնի կեսն էր բռնել, իսկ կեսը ոնն ու սաղարթը երևում էին։ Հետո մուժը քանդվեց-ծավալվեց և, հորիզոնն ու ճամփան բռնած՝ քշեց դեպի Հազրոն։

Տեսնես այնտե՞ղ էլ, էրգրո՞ւմ էլ նույն եղանակն է այսօր... Հիմա, այս պահին հայրենի գյուղո՞ւմ էլ թոն է ու մշուշ... Մուժը մտնում էր գյուղը, թավալվում ձորում, մոլորվում ծառերի մեջ, խճճվում ընկուզենիների սաղարթներում, իսկ երբ քաշվում էր՝ ծվեները ծառերի սաղարթներում խճճված-մոլորված մնում էին... Տեսնես այնտե՞ղ էլ այս առավոտ միգամած է... Այնտեղ ամեն օր, այնտեղ տարին բոլոր դուման է...

Գրլեգուղան դուման էր,
Գրլին մեջին կվառվեր,
Ելի կանգնի, Սերոբ ջան,
Ելի կանգնի, ախպեր ջան,—
Ելի վերցու հրացան...

— Ելի վերցու հրացան, ելի վերցու հրացան... Աղբյուր Սերոբը մեռնելու իրավունք էլ չուներ, նենգությամբ սպանեցին, բայց մեռնելու իրավունք չուներ... Աղբյուր Սերոբը... առյուծ տղերքը... համբերությունից դուրս եկած— գլխներից ձեռք քաշած այրեր... ինքնազոհություն... առասպելական-հեքիաթային հերոսություն... մեկը հազարի դեմ՝ կռիվ... գերությունից դուրս գալու հավատ... հույս, սերնդեսերունդ փոխանցվող հույս... հույս... և այդ ամենի արդյունքը և արդյունքը՝ մշուշով լցված ավերակներ... Որքան խորհրդավոր է աշխարհի բնությունը՝ մութ, խորհրդավոր, և որքան անստույգ է մարդու ճակատագիրը...

Մառախլապատ— մռայլ աշնանային օրվա տրամադրությունը փոխանցվել էր Հազրոյին։ Նա մշուշով պլլված, ճնշող խոհերի հետ ճամփեզրով գնում էր գլխահակ։ Թվում էր, թե անսահման է մառախուղի սահմանը, թվում էր, թե մառախուղը սար ու ձորերից այլևս հեռացողը չէ, և կորած է Արեգակը՝ այլևս չի հայտնվելու, քար ու ցեխով շաղված ճանապարհը թվում էր անվերջ, անսկիզբ ու անվերջ և միշտ էլ

մարդատ ու ատոր այս ճանապարհն է եղել ատքի տակ, և Հազրոն եղել է այդ խավար ճամփի ինչ-որ հատվածում, ոչ սկզբում, ոչ վերջում։ Եվ հիմա էլ տատված գիտե, թե այս ճանապարհը ուր է տանում։

Հազրոն բարձրացրեց գլուխը և շփոթված ոտքը կախ գցեց. ծառը, բարդենին, չէր երևում. հայացքի դիմաց համատարած մշուշ էր։ Ծառը չկար, և Հազրոյին այնպես թվաց, թե ինքը, իրոք, անծանոթ ճամփի վրա է։ Ապա թիկունքից ավտոմեքենայի ազդանշան լսեց և սթափվեց։ Բայց ետ չնայեց. անցիր, ճամփեզրին կանգնած Հազրոն քեզ ինչո՞վ է խանգարում։ Ավտոմեքենան հավասարվեց։

— Բարև, քեռի Հազրո։

Ո՞վ բարևեց, ո՞վ ճանաչեց Հազրոյին, զարմանալի է, որ աշխարհում ծանոթ կա։ Հազրոն չնայեց. ճամփեզրին կանգնած նայում էր վար՝ ուր միայնակ ծառը պետք է լիներ, բարդենին։ Իսկ ծառը չէր երևում։

Մեքենան թաղվեց մշուշի մեջ, և Հազրոյի հայացքի դիմաց ոսկեգույն թավռալ լույսերը՝ զույգ կայծոռիկները։ Կողք-կողքի թավռում էին, միշտ կողք-կողքի և՝ վեր ու վար, հետո լուսատուները թեքվեցին աջ և անհայտացան։ Դա ճանապարհի շրջադարձն էր. ուրեմն ծառը այնտեղ է։ Մոտ է։

Եվ քիչ հետո գծագրվեց ծառը։ Հազրոյին թվաց, թե երազում է տեսնում. երազները նրան հայտնվում էին այդպես՝ մշուշոտ, միշտ մշուշապատ։ Այդպիսի մի երազ, անորոշ ու անմարմին մի պատկեր, կարծես, անցյալ գիշեր նույնպես այցի էր եկել։ Ի՞նչ երազ էր... Թե՞ Հազրոյին է թվում... Հերն անիծած, գոնե երազները պարզ հայտնվեին, բարի, հաճելի, պայծառ ու պարզ, որ Հազրոն անհամբեր սպասեր գիշերվան և գլուխը սիրով գներ բարձին։ Հազրոյի պայծառատեսք երազները ի՞նչ եղան, ո՞վ պատեց մշուշով... Տարի՞քը... Կատո՞ւն, որ գիշեր ի լույս ականջի տակ մռմռում է։ Իսկ... իսկ Հազրոն ընդհանրապես պայծառ երազներ տեսնե՞լ է, թե՞ միշտ էլ այդպես են եղել՝ անմարմին ու մշուշոտ։ Ոչ՝ եղել են։ Պատահել է, որ Հազրոն պարզաչք է տեսել երազը։ Մեկը, գոնե մեկը չի մոռացել և մինչ ի մահ չի մոռանալու — Գարնան պարզկա գիշեր էր, և ինքը, Հազրոն, լեռան լանջին, մի քարի նստած ծխում էր։ Ոչ թե երազն էր խավար և գիշեր էր թվում, այլ, իրոք, գիշեր էր՝ լիալուսին կար, երկինքը լցված էր աստղերով. լանջում գարնան պարզկա գիշերն էր՝ մութ ու լուսով շաղված, լանջում գարնանային գիշերվա ցողն էր՝ ծաղիկներին, կանաչներին, թփերին, քարերի ու մամուռների վրա։ Լեռան փեշով գետ էր հոսում, և ինքը, Հազրոն, տեսնում էր, թե լուսնի ու աստղերի ցոլքերը ինչպես են բռնկվում ու մարում գետի ալիքներում։ Ծարալանջը էրզրի սարալանջն էր, գետը էրզրի

գետն էր, երկինքը էրգրի երկինքն էր, և ինքը, Հազրոն, էրգրում էր։ Երազը այսպես պետք է վերջանար, հենց այստեղ և այսպես՝ Հազրոն լանջի քարին նստած ծխում էր ու նայում ցոլարձակ գետին, բայց երազը շարունակվեց, շարունակություն ունեցավ։ Երազում հանկարծ լույսի մի խուրձ պլլվեց Հազրոյին, և Հազրոն, չգիտես ինչու, այդ լույսից խուսափեց. փախավ, իսկ լույսի խուրձը հետապնդեց։ Հազրոն շնչակտուր քարեքար էր նետվում-թաքնվում քարերի թիկունքում, իսկ լույսի խուրձը գտնում ու հալածում էր Հազրոյին, հալածում ու գտնում էր։ Ահա պարզաչք տեսած երազը։ Տարիներ են անցել, բայց կարծես անցած գիշերն է տեսել։ Եվ երբեք չի մոռանա։

Հազրոն կանգնեց ծառի մոտ և անորոշ նայեց շուրջբոլորը. ասես բարդենու կողքին մեկն էլ պետք է լիներ, մի ուրիշ բան էլ պետք է լիներ, որ չկար։ Ապա շուռ եկավ, նայեց գյուղի կողմ, գյուղը պատած էր մշուշով, և ցանկացավ, որ դեռ ճանապարհին լիներ։ Կարծես շուտ հասավ ծառին, հիմա տնից նոր-նոր դուրս եկած լիներ— իրոք, շուտ հասավ ծառին— իսկ ամենացանկալին այն էր, որ Հազրոն հիմա երազում լիներ. այն երազը ինչո՞ւ նորից այցի չի գալիս, մի օր նորից թող հայտնվի, թող գա և թող՝ հալածող լույսի խուրձն էլ հետը։ Ապա ուզեց շփել ծառի բունը, բայց ձեռքը ետ քաշեց և նորից մոլոր նայեց շուրջբոլորը...

Ծանոթ քարը ձգեց Հազրոյին։ Նա մոտեցավ, կացինը դրեց կողմ, նստեց քարին և հանեց ծխախոտը։ Հազրոն այդ քարին որքա՞ն է նստել։ Երբեմնի առուն հենց այդ քարի դեմով էր անցնում։ Բայց ո՞վ կասի, թե այստեղ, մի քանի քայլ այն կողմ, առու է եղել։ Առուն գյուղի տարեց մարդկանց հիշողության մեջ է միայն, առուն հենց հիմա Հազրոյի միջով քշքշալով հոսում է, իսկ, ահա, հետքն իսկ չկա։ Հայացքի դիմաց դեղին ու լուռ տերևներն էին։ Քամին ինչպե՞ս չի քշել... Եվ լավ է, որ չի քշել։ Եվ որքան լավ կլիներ, որ այս տերևները անվնաս ու անշարժ մնային, գարնանից աշուն, աշնանից գարուն այստեղ մնային՝ թող որ դեղին, թաց, մրսած։ Ձմռան տակից դուրս գային այսպես ու մնային՝ գարունքվանից աշուն, աշունքվանից գարուն։

Քարի շուրջբոլորը ջարդված շշերի կտորներ էին թափթփված։ Հազրոն հետևեց կտորներին և տեսավ, որ շատ են՝ անխնա սփռված են ծառի շուրջբոլորը։ Ծառին մոտիկ օջախ կար— մինչև հիմա ինչպե՞ս չի նկատել— շան վատակները կրակարանը շատ մոտ էին տարել բնին, և կրակը լիզել էր բունը։ Երևում էր, որ բոցը հենց մեկ անգամ չէ բունն առել բերանը։ Հանկարծ նկատեց, որ բնին նաև կացնահարված կան։ Նա շփոթված նայեց շուրջբոլորը և ոտքի ելավ... Այո, մեկը— տեսնես ով

ն— մեկը փորձել է ծառը կտրել և տակետակ— տեսնես ո՞վ է։— Ո՛չ, Հազրոն կկտրի... կկտրի ծունկն ի հետ, ավելի բարձրից... Հերն անիծած, վերջիվերջո այս ծառից մի բան պե՞տք է մնա, թե ոչ։ Մենմենակ, տնջուր, անխնամք այսքան դիմացել է, այսքան ապրել է և... Ոչ, Հազրոն կկտրի գոտին ի հար. վերջիվերջո այս ծառից մի բան պե՞տք է մնա, թե ոչ։

Հազրոն շփեց ծառի բունը։ Բնի կեղևը ճաքճքած էր, կտոր-կտոր. այդ կեղևը, ասես ծառն ինքը չէր ծնել, այլ կարկատան-կարկատան հավաքել էր— ծածկել իր բունը։ Եթե պլոկես այդ կեղևը և փռես, հայացքիդ տակ կհայտնվի ծարավից ճաքճքված մի լաթ հող։

Ծառը թաց էր, և բնի սևաթույր ճաքերի մեջ կուտակվում ու քանդվում էին ջրի կաթիլները։ Հազրոն հայացքը սահեցրեց բունն ի վեր։ Ծառի գլխավոր ճյուղերից մեկը չորացել էր։ Ճյուղը վաղուց էր չորացել։ Հազրոն նոր էր նկատում. չորուկի փտած կեղևները կախվել և սարդոստայնի պես ճոճվում էին։ Մյուս գլխավոր ճյուղին չորուկներ կային, բայց ճյուղը դեռ կենդանի էր։ Իսկ կենտրոնաձիգը առողջ էր, սլացիկ և այնքան կենսունակ, որ այս ուշ աշնանը դեռ լրիվ տերևաթափ չէր եղել, կատարին նույնիսկ դեղնականաչ տերևներ կային։ Որքա՜ն համան ու դիմացկուն է միայնակ ծառը։

Հազրոն նորից նստեց քարին, կացինը ձեռքն առավ և սկսեց սրել։ Կացինը սուր էր, բայց ժանգոտ. վաղուց չէր բանել, և Հազրոն սրաքարով ընդամենը ժանգն էր հեռացնում՝ երկար ու մանրակրկիտ։ Մի երկու անգամ փորձեց ոտքի ելնել, բայց էլի կաթ-կաթ ժանգ նկատեց շեղբին։

— Բարև, քեռի Հազրո։

Հազրոն թեքվեց, բայց մարդատար ավտոն արդեն շրջադարձն ի վար իջնում էր՝ թեթև, թռվռալով։ «Վարորդը ջահել է»,— մտածեց Հազրոն, ապա նոր անդրադարձավ՝ ախր, ձայնն էլ էր ջահելի։ Եվ սրա, և նրա, որ ճանապարհին հանդիպեց։ Բարևում են ու վռազ անցնում— շան կաթ կերածները— Հազրոյի պատասխանը նրանց պետք չէ. կամ ձեռք են առնում, կամ ուզում են, որ Հազրոն իրենց ավտոյի ետևից նայի։

Հազրոն բամբակյա բաճկոնը հանեց-դրեց քարին, հեսանը դրեց բաճկոնին, կացինը ձեռքն առավ և երբ շտկվեց, քարը քաշեց փեշից, կարծես թե՝ քաշեց. նա ասես ակամա փլվեց քարին, նոր ծխախոտ վառեց և թեքվեց գյուղի կողմը։ Իսկ գյուղը մշուշի մեջ էր։ Փորձեց գոնե ուրվագիծը նկատել, բայց մառախուղը խիտ էր։ Այնուամենայնիվ... այնուամենայնիվ, երևի պե՞տք էր նախազգահին հայտնել կամ, թեկուզ, ակնարկ անել, թե այսպես ու այսպես, Հազրոն այսպիսի միտք ունի։

Բայց այդ մտքի վրա քմծիծաղեց։ Մարաթուկ վկա, նախագահը այս ծառի գոյությյան մասին մոռացել է։ Որ այստեղ, կիրճի գլխին, ճանապարհին կպած ծառ կա, թաք մի բարդենի կա, նախագահը չգիտի։ Նա, այդ շան որդին, այս ծառի մոտով ամեն օր շրջկենտրոն է սլանում և ծառի մոտով ետ դառնում, բայց ծառը չի նկատում։ Մարաթուկ վկա, Մարաթուկ վկա, Հազրոն չի սխալվում. այս խեղճ ծառը, բարդենին, նախագահին ի՞նչ է տվել, ի՞նչ կարող է տալ, որ նկատի և չմոռանա և չկորցնի տեղը։

Աստված վկա, այս ծառը մեղք է. ահա մառախուղով պլլված, լքված ու մենակ դողում է։ Հազրոն կանգի-կտանի տուն՝ կտնկի իր թոռի մեջ և ինքն ու ծառը միասին կապրեն։ Քանի կա Հազրոն... քանի Հազրոն այստեղ է՝ միասին կապրեն...

Հազրոն կիսատ ծխախոտը շպրտեց, վերցրեց կացինը, կանգնեց ծառի մոտ և գոտկատեղից կացինը ուղիղ տարավ ու բնին նշան արեց. բունը գոտկահար թող մնա... եթե արմատները առողջ են՝ նորից շիվ կտա-կաճի, իսկ մնացածը Հազրոն կտանի տուն, կտնկի թոռի մեջ և միասին կապրեն։

Եվ կացինը թափով վրա բերեց— հը-ը-ը-ը... միասին կապրենք...

Ծառը ցնցվեց։ Անձրևակաթները շփշփացին կարկուտի նման, ծեծեցին նաև Հազրոյի թիկունքն ու գլուխը, բայց նա ուշք չդարձրեց։— Հը-ը-ը-ը...միա-սին կապրենք... միա-սին կապ-ր-ենք... միա-սին կապ-ր-ենք...— խոսքը ինքն իրեն տնքում էր Հազրոյի ներսում, կամաց-կամաց սուզվում երակներում, խոսքը դառնում էր ռիթմ և փոխանցվում կացնին— միա-սին կապ-ր-ենք... միա-սին կապ-ր-ենք... ապա մի տաշեղ... Հազրոյի ճակատին մի տաշեղ շրխկաց-ընկավ ոտքերի մոտ։ Տաշեղի վրա նա արյան հետք նկատեց։ Դադար տվեց և ափը տարավ ճակատը։ Արյուն չկար։ Իսկ տաշեղի վրա... Նա տաշեղը ձեռքն առավ... Տաշեղին վարդագույն մի շերտ էր ձգվում և վարդագույն մազմզուկներ կային... Հա՜, ծերությունն է մտել ծառի բունը, ծերությունը բուն է դրել ծառի բնում։ Եվ ինչո՞ւ է այդ անտերը այդպես գունեղ... վարդագույն։ Որպեսզի մոլորեցնի ու խաբի՞ ծառին...

Հազրոն, տաշուկը ձեռքին, թևաթափ կանգնեց։ Երակները դառնարկվում էին ռիթմից, «խոսքը» մարմրում էր ներսում, և նա զգաց, թե որքան գարշելի է ծառին խաբում— միասին կապրենք։ Նա մեղավոր ու կոտրված՝ ճակատը հպեց ծառին ու շշնջաց.

— Թե դու չօգնես Հազրոյին, ուրիշ ո՞վ օգնե։

— Բարի աջողում, քեռի Հազրո։

Հազրոն ցնցվեց։ Բայց գլուխ չբարձրացրեց՝ չնայեց։ Ինչ անդուր

ձայն էր... և ինչ լիտի ձայն էր... այդ շան արդեն կացինը չնկատե՞ց... Հազրոյի ձեռքի կացինը չնկատե՞ց... չտեսա՞վ, որ Հազրոն... Հազրոն կտրում է ծառը... Դա արդեն... արդեն շատ էր վիրավորական։ Շա՜տ։ Եվ վիրավորական ծառի համար։

Հազրոն ճակատը ավելի պինդ սեղմեց ծառին։ Բոլորը սատանի ձի հեծած թռչում են, բոլորը՝ ծառի մոտով, բոլորը տեսնում են, բայց ոչ մեկը չի նկատում այս խեղճ ու միայնակ ծառին։ Եթե ոտքով կտրեին այս ճանապարհը, եթե հոգնեին, ծառը երևի գոյություն կունենար։ Ծառը... ո՛չ, ծառի ստվերն ու հովը մեկնումեկը հիշում է այն ժամանակ, երբ կերուխումի ցանկություն ունի։

Ճակատը ծառին հպած, տապարը աջն ի կախ կանգնել էր Հազրոն։ Ոտքերի մոտ ծառին մոտիկ պատրաստած կրակարանն էր, կոպկախ հայացքի տակ՝ բնի այրվածքն ու հին կացնահետքերը։ Հազրոյից առաջ տեսնես ո՞վ է ծառը կտրելու փորձ արել։ Եվ... և ինչո՞ւ է ձեռք քաշել... Հին կացնահետքերը շատ թեք, մի տեսակ սայթաքուն էին, և Հազրոն գլխի ընկավ, որ ծառի բունը տաշտշել են կպչանի համար. չոր կեղևները պոկել են օջախը վառելու։ Մարաթուկ վկա, այս ծառը Հազրոյից բացի ուրիշ ոչ մեկին պետք չէ։ Եվ այսպես՝ անջուր ու անխնամք, այսպես ու այսքան ապրելուց հետո, եթե ոտքի վրա պետք է կպչան դառնա, ոտքի վրա ընկնի կրակի բերանը, ավելի լավ է դառնա սյուն։ Այս ծառից վերջապես մի բան պե՞տք է մնա, թե ոչ։

Թող դառնա սյուն։

Եվ կացինը տարտամ բարձրացրեց, անկիրք վրա բերեց ծառին, բայց կոթը բռունցքներում ֆռաց՝ կացինը բնին տափակ զարկվեց-զրնգաց, և ետհարվածի ուժը զիգզագվեց ու տաք գալարվեց քունքերում։

Օխա՜շշ։— Հազրոն սիրով ընդունեց ծառի հարվածը։

3

Մտքի հետ, գործի հետ, Հազրոն հանկարծ զգաց, որ մի ստվեր է թավռում թիկունքում։ Կացինը ձեռքին շուռ եկավ, շտկվեց և... իր ստվերը երկար ձգվեց ծառի ստվերի կողքին։— Վա՜հ, Արեգակը ե՞րբ է բացվել։

Մառախուղը ե՞րբ էր քաշվել, արևը ե՞րբ էր հայտնվել, որ Հազրոն չէր նկատել։

Մշուշը լեռներից կիրճ էր իջել, թավալգլոր լցվել էր ձորը, լեռների գլխին հիմա գորշ ամպերն էին ճոճվում, երկնքում միմյանց էին որոնում ցրիվ ամպերը, և գզգզված ամպերի արանքից ծիկլկում էր Արե-

գակը։ Հազրոյի հայացքի դիմաց լույս ու ստվերի հետաքրքիր խաղ էր. ծառի շուրջբոլորը ողողված էր արևով, իսկ քիչ այն կողմ ստվեր էր՝ խոնավ, մութ. լույսը ստվերն էր շեշտել, իսկ ստվերը՝ լույսը։ Աբ-տակարգ պայծառ էին շողերը՝ գունեղ, թրթռուն, թվում էր, թե ծառի շուրջբոլորը ծիածաններ են քանդվում ու հյուսվում։ Գյուղի մի մասը ողողված էր արևով— Հազրոն ափսոսաց, որ իր տունը արևի տակ չի ընկել. կտուրը մի քիչ կլորանար— իսկ մյուսը մութ ծխում էր, և ծխերը հազիվ էին զատվում ստվերից։ Գյուղից վեր, լեռնալանջին Արեգակը դեղին մի արտ էր փռել, իսկը ցորենի հասուն արտ, օղակված սահողի հերկով, ապա կլոր արտը ձգվեց, սահեց վեր, խամրեց ու սահեց դեպի գորշ ամպերը, արտը հնձվեց ու բարդացվեց լեռան շեղբին և բռնկվեց բոցերով։ Իսկ գյուղը լրիվ արևեց. ապակեպատ մի պատշգամբ բռնկվեց, լեռան փեշի բարձրանիստ տան կտուրին փայլփլեց հեռուստացույցի անտենան, և լույսով ցողված տանիքներին փողփողացին ծխերի կապույտ ժապավենները։

Հազրոն կացինը հենեց բնին. նստեց քարին ու հանեց ծխախոտը։

Քարը բարդենու սաղարթի ծարծրված ստվերի տակ էր, և ստվերը ճոճվում էր Հազրոյի գլխին։ Ծառը անշարժ էր թվում. բարդենու միայն վերին շվերն էին դողում, իսկ Հազրոյի գլխին տարուբերվում էր ողջ սաղարթի ստվերը։ Նա հետևեց դիմացը երկարած բնի ստվերին և նկատեց, որ նա էլ՝ բնի ստվերն էլ դողում է։

Բունը արդեն խորը կտրված էր. կացնի հարվածները հոսում էին ծառն ի վեր, և ստվերը դողում էր։ Մի պահ ստվերը խամրեց-կարմրեց և նորից խտացավ ու դոզաց։

— Բարի աջողում, քեռի Հազրո։

Հազրոն մինչև թեքվեց, ավտոն արդեն սլանում էր դեպի գյուղ։ Գյուղը դարձյալ արևի տակ էր։ Հազրոն դուսավ իր տունը... Տեսնես կատուն հիմա ի՞նչ է անում։ Երևի դանդաղ, արևի տակ նստած լվացվում է ու նայում ճանապարհին։ Սպասում է։ Կատուն Հազրոյին է սպասում, և Հազրոն կգնա։ Իսկ Հազրոյին ո՞վ է սպասում... Իսկ Հազրոն ո՞ւմ է սպասում...

Հեռվում, Արարատյան դաշտում, լույս ու ստվերի փոխնիփոխ խաղ էր. մի տեղ քաղվում էր արևը, ստվերում՝ բռնկվում, տեսար՝ ստվերը ծարծրվում էր, իսկ լույսի շերտը կարկատանվում ստվերով, և դեղին ու սև կարկատանները շատ-շատ փոխում էին տեղները։ Իսկ այն կողմ, Հայոց լեռնապարում, ճերմակ ու բարդ-բարդ ամպերի ճոճքն էր։ Մի տեղ ամպերի քարավանը լեռնապարից պոկվել-ձգվել էր երկինքն ի վեր. կորուղի նորից ետ դարձել լեռնապարը և ճերմակ ու փափուկ շրջափա-

կի մեջ առել կտավատի կապույտ մի արտ։ Իսկ արտի կենտրոնում մի ծառ կար։ Կտավատի ծաղկած կապույտ արտ՝ փռված արծաթավուն ծառի շուրջբոլորը։ Հաստաբուն էր ծառը և տարածուն սաղարթով. ծառը ընկուզենի էր և այդ ծառը կարող էր նաև... իրական լինել՝ աճած հենց լեռնապարին։ Հազրոն կկոցեց աչքերը... Այդպիսի մի ընկուզենի Հազրոն էրգրում ունի, այնտեղ՝ լքված տան լքված բակում։ Այդպիսի հզոր և ավելի հզոր և ավելի հրաշք, այնքան հրաշք, որ ուզում էին ոսկով գնել։ Մի տարի— գաղթից երկու տարի առաջ էր դա— աշնանը Մշո կողմերից նկած օսման ոստիկանը մի ամերիկացու հետ շրջում էին իրենց գյուղում. ամերիկացին տնտղում էր գյուղի ընկուզենիները և վերջում կպավ իրենց բակի ընկուզենուն։ Գնել էր ուզում։ Ոսկով գնել էր ուզում։ Ընկուզենու բնին դեպի խորքը աճած մի պալար կար, նա, ամերիկացին, այդ խլլիկն էր ուզում— թե այդ շան որդու ինչին էր պետք աստված գիտի— բնի այդ հատվածը՝ երեք-չորս թիզ, այդ հատվածն էր ուզում։ Տերը Հազրոն էր, Հազրոյի հայրն էր, Հազրոյի պապը, Հազրոյի ապուպապը— նա էր տնկել ընկուզենին— իսկ ամերիկացին՝ ափում երկու ոսկեդրամ, օսմանի միջոցով համառորեն պահանջում էր, որ հայրը ոսկիները վերցնի և կացին տա օսմանին։— Քո հավատն էլ, օսման ոստիկանի հավատն էլ...

Կտավատի ծաղկած-կապույտ արտը դնալով ընդարձակում էր սահմանները, իսկ ընկուզենին անփոփոխ մնում էր՝ հզոր բուն ու սաղարթով, արծաթափայլ և Հազրոն նորից մտածեց, որ ընկուզենին կարող է և իրական լինել՝ աճած հենց լեռնապարին... Տեսնես ընկուզենին... իրենց բակի ընկուզենին հիմա լրիվ տերևաթա՞փ է... Տեսնես էրգրո՞ւմ էլ նույն եղանակն է... Հայրենի գյուղում էլ երևի նույն եղանակն է... Հիմա, այս պահին, տան դիմացի ձորը լցված է մառախուղով, գետի շնչից քլթքլթում է և քշվում գետի հետ։ Հիմա դռան ընկուզենին թաց է. բնի կնճիռներով անշշուկ հոսում է անձրևաջուրը, ընկուզենին պարուրված է արևով, թաց ճյուղերը փայլփլում են, սաղարթին հատուկենտ տերևներ են մնացել՝ դեղին, դեղին, այնքան դեղին, որ կոթունները չեն երևում և, թվում է, թե տերևները ճյուղերի հետ կապ չունեն՝ արևից պոկված թերթեր են՝ սաղարթում թավռացող։ Հիմա երամից ետ ընկած մի ծվեն մրջ է խճճվել ընկուզենու սաղարթում և բղկտում է իրեն։ Մառախուղի ծվիկի մեջ մի տերև դեղձանիկի պես խառնվել է իրար։ ուզում է պոկվել-նստել արևոտ ճյուղին։ Իսկ բակն ու կտուրը... տան կտուրը պատած են բազմերանգ տերևներով։ Տերևները բաց ափերով անձրևակաթեր են պահել շողերի տակ, և մեծ ու միակ Արեգակը սուզվել է՝ ամեն կաթիլում առանձին-առանձին։ Ընկուզենին լուռ է։ Տունը լուռ է։ Ձորի երկու ափերով ձգված գյուղը լուռ է։ Լեռները... Ծովասարը, Ան-

դոկը, Սև սարը... Լեռները լուռ են... երկնքում, գյուղի երկնքում գորշ ամպերի ու արևի կռիվն է, համր գյուղում և համր լեռներում արևի ու ստվերի խաղը։ Եվ ձորով... տան դիմացի Ընկուզաձորով թավալվում է դումանը...

Հետաքրքիր մի պատկեր կտրեց հորիզոնը, կտրեց Հայոց լեռնապարը թռած Հազրոյի հայացքը և զարկվեց Հազրոյի աչքերին։ Հրաշք էր· կտուրի չափ հացատան կտուրի պես կլոր մի լույս վազում էր կիրճով։ Լույսը մեկեն բռնկվեց կիրճի ափին. ծաղկեց ստվերոտ-մութ ժայռերի վրա, հետո ափից թռավ կիրճը, սահելով կտրեց կիրճի ստվերոտ հատվածը, անհայտացավ լուսավոր շերտում։ Հազրոն շունչը պահեց. լույսի միջից բոլորուն լույսը դուրս թռավ, ցոլաց ստվերի վրայով, ապա մի պահ անհայտացավ ձորում՝ մշուշի մեջ, հետո պոկվեց-զարկվեց կիրճի մյուս ափի մութ ժայռերին և թռավ կիրճից դուրս... Թվաց, թե լույսը երկինք թռավ։

Հազրոյի շունչը կտրվում էր։ Նա հայացքը նորից սահեցրեց լույսի վազած հետքով, հետո լույսի սուփրեն որոնեց երկնքում։ Բարդենու ստվերը տարուբերվեց դեմքին, աչքերի մեջ, ստվերը կտրակցեց երկինք ուղղած հայացքը։ Հազրոն մի պահ գլխապտույտ ունեցավ։ Նա կոշտ ափով սղալեց ճակատն ու աչքերը և նայեց ծառին։

Ծառը նայում էր կիրճին։

Բնի կտրվածքը— արդեն կեսից ավելը կտրել էր— կտրվածքը Հազրոյի կողմն էր, քարի կողմն էր, Հազրոյի հայացքի դիմաց էր. ուրեմն այդ կողմը ծառի թիկունքն էր— ծառը թիկունքից են կտրում— իսկ ծառի դեմքը ուղղված էր դեպի կիրճը, նայում էր կիրճին։ Ծառը նայում էր կիրճին, և Հազրոն մտածեց, որ պահ առաջ ծառն էլ տեսավ այն, ինչ ինքը տեսավ՝ կիրճով ցոլած լույսի սուփրեն, լույսը... Այո, լույսը· տեսիլք չէր, բնությանն հրաշք էր։ Բնությունը այդպիսի հրաշքներ շատ ունի, ամեն օր ունի, ամեն օր՝ նորը և մեկը մյուսից գեղեցիկ ու զարմանալի։ Այն, ինչ այսօր, հիմա տեսավ Հազրոն, կյանքում չէր տեսել։ Եթե այսօր, հիմա չլիներ այստեղ, կիրճի պռնկին, ծառի մոտ, այդ հրաշքը չէր տեսնի։ Այսօր չէր տեսնի և այլևս չէր տեսնի. որովհետև բնությունը մեծ է, շռայլ է, և պատկերները, նույնիսկ զարմանահրաշ պատկերները, չի կրկնում։ Եթե հիմա այստեղ չլիներ՝ չէր տեսնի։ Ինքը չէր տեսնի, իսկ ծառը կտեսներ, որովհետև ծառը միշտ է այստեղ...

Հազրոյի դեմքով ստվեր անցավ։ Նա կնճռոտվեց և բռունցքով տրորեց ճակատը։ Ինչը որ անցավ մտքով, ինչ հասկացավ Հազրոն, ծանր էր, ցավոտ էր։ Լավ կլիներ, որ գլխի ընկած չլիներ, հասկացած չլիներ, բայց հասկացել էր արդեն։

Նա հասկացել էր, թե ինչու է ապրել ծառը։ Այսպես՝ ճամփեզրին լքված, այս տժացող կիրճի պռնկին, այս քարերի մեջ ծառը ինչու է համառել ու կանգնել այսքան ժամանակ։

Հրաշք տեսնելու համար։

Երկնքի ու երկրի հրաշագործությունները տեսնելու։ Ահա։

Ովքե՞ր են այս ճամփով անցուդարձողները, որ չեն նկատում ծառին— սատանի ձի հեծածները։ Եվ թող չնկատեն միայնակ ծառին. երկինքն ու գետինը ծառի համար հրաշքներ ունեն պահած՝ արևածագից արևամուտ և գիշերվա մութ ծալքերի մեջ։ Եվ միշտ գեղեցիկ և միշտ անկրկնելի և միշտ զարմանալի... Ահա լույս ու ստվերի հետաքրքիր խաղը, երկնքում ծաղկած կտավատի կապույտ արտը, երկնքում աճած ընկուզենին, ահա ընկուզենու սաղարթում խճճված մառախուղի բզիկը, դեղին տերևների բոերում՝ մի կաթ ջրի մեջ ծաղկած մեծ Աբեզակը, քարքարոտ լանջում՝ այս ձմռնամուտին ցորենի բարկ արտը, լեռներում բռնկված ամպերի հրդեհը... և այս ամենը, և այս ամենը՝ մի պատառ օրվա մեջ։ Եվ օրվա հրաշքների հրաշքը՝ լույսը-լույսի սուփրեն, որ վազում էր կիրճով...

Հազրոն բռունցքը խփեց նիհար ծնկին և նայեց բնի կտրվածքին։ Խորն էր կտրվածքը։ Ծառը մի քիչ, շատ քիչ հազիվ նկատելի թեքվել էր դեպի կիրճը, և մի պահ նրան թվաց, թե ծառը հակվել՝ լույսի ցոլքն է որոնում՝ այս կիրճում տեսած հրաշքներից վերջինը... Երևի հայանվեց հատուկ ծառի համար, որպեսզի տապալվելուց... տապալվելուց առաջ ծառը հովհարվի։ Այս ինչ արեց Հազրոն։

Ծառի ստվերը սրթսրթում էր գլխավերևում, ստվերը Հազրոյի հայացքը ճոճքի մեջ էր առել, նա ճոճացանցից պոկեց հայացքը և էլի նայեց կտրվածքին... Ուշ էր։ Շատ ուշ էր։

Կտրվածքի դողը բնին կանգուն շերտով հոսում էր ծառն ի վեր. ճյուղերը սրսփում էին, ճյուղերը արդեն կապերը կտրել էին իրարից՝ գողում էին զատ-զատ, ամեն մեկը իր համար, դեռ հրաժեշտ չտված տերևները ուրու տեսած ծտերի նման ալեկոծվել էին. տերևները լսել էին կացնի ձայնը, գիտեին, որ բունը կտրված է։

Բնի կանգուն շերտն ի վեր կտրվածքի սարսուռն էր հոսում ու ճյուղավորվում, իսկ վերից հավաքվում-գալիս և բնի հատվածքից պարպվում էր կացնի սարսուռը։ Այս ինչ արեց Հազրոն. դժվար ապրած այս ծառը ի՞նչ հանգիստ կտրեց Հազրոն։ Սա, այս համառ ու միայնակ ծառը անտառի ծառերից մեկը չէր, սա ջրերի հետ խաղացող գետափի ծառերից մեկը չէր, այգիներում գուրգուրվող ծառերից մեկը չէր... Ինչ արեց Հազրոն։ Միայն այսօր, հենց այսօր, հենց Հազրոյից ստացած կացնի դողը

չէր, որ բռնել էր ծառին. նոր չէր կացնի ահը՝ ծնված օրից էր բուն դրել՝ մենակությանն հետ, ի ծնե և մենակության հետ ու աճի հետ աճել էր։— Սա գուրգուրանքը անցուդարձողների անտարբեր հայացքներում որոնող հավատավոր ծառ էր, գետը քարե ընդերքում որոնող համառ ծառ էր, անտառից վտարված-վիրավորված ծառ էր, սա հրաշքներով ապրող երազկոտ ծառ էր... Այս ի՞նչ արեց Հազրոն։ Ծառը սպասում էր այսօրվան. գիտեր, որ ծառի պես չի մեռնելու. կանգնած չի մեռնելու. գիտեր, որ օրերից մշուշապատ մի օր սակրը մոտենալու է բնին, միայն թե չէր սպասում, որ սակրավորը Հազրոն է լինելու։ Ե՛վ այս ճանապարհին, և՛ այս տժացող կիրճին ծառը վաղուց հրաժեշտ տված կլիներ, եթե չլիներն երկրի ու երկնքի հրաշքները։ Եվ նա զսպել էր իր մեջ բուն դրած կացնի սարսափը ու որոնել հրաշքներ, օրն ի բուն էր որոնել. օրը կարող էր վերջինը լինել, և ծառը օրն ի բուն էր որոնել և գտել հրաշքներ, գտել ու որոնել և օրն ու կացնի ահը խեղդել հրաշքների մեջ։ Այսպես էր ապրել ծառը։ Ի՞նչ արեց Հազրոն... Եվ ուր էր ծառի պաշտպանը... Այս ծառի միակ բարեկամն ու պաշտպանը արևն է եղել։ Արեգակը։ Իսկ ո՞ւր էր անհայտացել առավոտյան և ինչո՞ւ իր ծառին չպաշտպանեց Հազրոյից։ Եթե լիներ, եթե առավոտը արևով բացվեր, Հազրոն հանցագործ չէր դառնա։ Ո՞ւր էր կորել արևը... Եվ ինչո՞ւ էր Հազրոն մոռացել արևի մասին։ Որքան անհավատարիմ ու ապերախտ է մարդը. մի պահ, միայն մեկ պահ անհայտացավ Արեգակը, կարծում է արդեն այրվել-հանգել է, մոխիր է դարձել։ Չկա։ Եվ որքան նեղսիրտ է Հազրոն։ Միամիտ ու նեղսիրտ։ Երբ արևը կա՝ մոռանում է ամպ ու մշուշի գոյությունը, երբ հայտնվում է մշուշը, Հազրոն- Արեգակն է կորցնում՝ տեղնուտեղը և ընդմիշտ։ Առավոտը մշուշապատ էր, և արևը մեռել էր արդեն Հազրոյի հոգում։ Հազրոն չկարողացավ կես օր, գոնե կես օր Արեգակը պահել իր հոգում և անձնատուր եղավ մառախուղին և մշուշը փաթաթվեց Հազրոյին, խցկվեց Հազրոյի աչքերը, թավալվեց Հազրոյի հոգում, հոսեց երակներով, և Հազրոն կացինը ձեռքն առավ... Մշուշը արդեն խեղդվում է ձորում, բայց ծառը արդեն կտրված է, Արեգակը արդեն ճեղքել է ամպերը, բայց Հազրոն արդեն հանցագործ է։ Առավոտյան ո՞ւր էր ծառի միակ պաշտպան Արեգակը։

Արևը պարուրել էր ծառին— ծառի շուրջբոլորը շաղ եկած մութ սավերները ավելի էին շեշտել աշնան արևի դեղինը— արևը գուրգուրում-սփոփում էր ծառին, վերջին մի կյանք էր խոստանում նրան, բայց ծառը դողում էր շողերի մեջ. ծառը գիտեր, որ արևը մնաս բարև է ասում, գիտեր, որ Արեգակը հրաժեշտի դեղին շապիկ է հագցնում իրեն։

Ծառը նկատելի թեքվել էր դեպի կիրճը։

Հազրոն արդեն ծառին չէր նայում։ Ծառի ստվերի մեջ, ստվերից էր զգում, որ ծառը գնալով ավելի է թեքվում դեպի լեռնանցքը, գլուխն ի վար սոթ տվող ստվերից էր զգում՝ ծառը գնում է։

Ծառը գնում էր, բայց Հազրոն այնպես էր համոզված, որ նա, ծառը, այդպես հակված դեռ որոնում է կիրճով ցոլած լույսը։ Ուր է թե՝ նորից կրկնվեր, ուր է թե՝ կրկնվեր, և տապալվելուց առաջ ծառը նորից տեսներ հրաշքը։ Գեղեցիկ հրաշք էր և թող կրկնվի ծառի համար։ Արեգակը բարի է. հիմա Հազրոն էլի կնայի լեռնապարին, և կիրճի մութ քարափին էլի կհայտնվի լուսեղեն հրաշքը՝ կբռնկվի քարափին, կկտրի Հազրոյից հայացքը և, ի տես ծառին, կցոլա կիրճով։

Հազրոն հայացքը պոկեց ստվերի ճոճքից, կկոցեց աչքերը և նայեց Հայոց լեռնապարին։

Ճերմակ ամպերի քարավանը քանդվել էր, լեռների երկնքում ցիր ու ցան լողում էին գունաթափ ամպերը, կտավատի կապույտ արտը չքացել էր, արտի հետ՝ ծառը, ընկուզենին։

Հանկարծ Հազրոյի մտքով անցավ, որ օսման ոստիկանը իրենց բակի ընկուզենին կտրած կլինի... Մտքի վրա ծառի ստվերը կտրեց Հազրոյի հայացքը, ապա ստվերը զարկեց Հազրոյի դեմքին, ճյուղի ստվերի զարկից շուրթերին մոտեցրած ծխախոտը դողաց, և սարսուռը ճյուղավորվեց Հազրոյի մարմնում։

Կտրել է... Օսման ոստիկանը ընկուզենին կտրել է... բակի ընկուզենին կտրել է... Այն ժամանակ, դեռ այն ժամանակ, երբ տերը, որպես թե տերը ընկուզենու կողքին էր՝ ուզում էին կտրել, հիմա... անտեր ծառ, անպաշտպան ծառ, միայնակ ու խեղճ ծառ... կտրել են։ Օսման ոստիկանը վաղուց է կտրել, իսկ Հազրոն— միամիտ Հազրո— իսկ Հազրոն իր հուշերում ընկուզենուն տեսնում է այնպես, ինչպես թողել է՝ աներեր բնով և տան ու ձորի վրա տարածած հզոր սաղարթով։ Հազրոն այդպես է թողել և այդպես հիշում է արդեն քանի՞ տարի և սպասում է... և սպասում էր, թե մի օր, մի հրաշք օր, պետք է գնար՝ հանդիպեր և տեսներ այդպես՝ արծաթափայլ հզոր սաղարթով և աներեր բնով։ Անտեր բուն, անպաշտպան բուն... օսմանը վաղուց է կացնի բերան տվել... Հիշել է, որ ամերիկացին ուզում էր ոսկով գնել, քմծիծաղել է ու կացնահարել, հայհոյել է տիրոջը, ընկուզենուն, որ այդպես հաստ բուն ունի ու կացնահարել, ոխով հայհոյել-կացնահարել ու տապալել է...

Ընկուզենին տապալվել է։ Ընկուզենին չկա։

Հազրոն՝ ծառի սրսփուն ստվերի տակ, բռնվել էր դողով։ Ջղերը կապերը կտրել էին իրարից. ոտքերը դողում էին առանձին, ձեռքերը առանձին, մատները առանձին, ծնոտը, շուրթերը... կոպերը թրթռում

էին առանձին, Հազրոն՝ ծառի ստվերի մեջ, ստվերի հետ դողում էր, և ճոճացանցի մեջ ընկած նրա մշուշոտ հայացքը ստվերի հետ անիմաստ երերում էր ոտքերի մոտ, քարի շուրջբոլորը։

Հանկարծ ծառի ստվերը մի պահ կարկամեց, ստվերը մի ակնթարթ անշարժացավ և բաց թողեց Հազրոյի հայացքը։ Եվ Հազրոն աչքերը փակեց։ Ծառը խուլ ճրթճրթաց՝ կարճ, կտրուկ և խուլ. երակ կտրվեց բնում։ Ճրթճրթոցը Հազրոյին հասավ կարծես երազում, հասավ ճանապարհի շրջադարձից շպրտված բարևի և մեքենայի աղմուկի հետ խառը։ Իսկ Հազրոն, աչքերը փակ, փորձում էր իրենց տունը տեսնել առանց ընկուզենու։

Հազրոն փորձեց առանց ընկուզենու պատկերացնել տունը, և տունը երևաց խղճուկ հյուղակ, անծանոթ, օտար, շատ օտար. այդ-կիսի տուն Հազրոյին անճանաչ էր, դա Հազրոյի տունը չէր։ Եվ ձորափն էր մերկացած ու օտար, և ձորը, և գյուղը՝ Գելին, և շուրջբոլորը, և՛ սարերը, և՛ երկինքը... Դա Հազրոյի տունը չէր, դա Հազրոյի գյուղը չէր, դա Հազրոյի երկիրը չէր, դա Հազրոյի երկինքը չէր։ Եվ արդեն մի տեսակ անհասցե էր Հազրոյի երազը, և անբուն էր Հազրոյի կարոտը։

— Ծա՜ռը,— տնքաց Հազրոն և բացեց աչքերը։

Դիմացը արդեն սաղարթի ստվերի մեծ մասն էր։ Եվ շատ ալեկոծ։ Նա հասկացավ, որ ծառը շատ է թեքվել, բայց գլուխ չբարձրացրեց՝ լնայեց։ Ստվերը հիմա չէր ճոճվում, այլ թպրտում էր և լաթ-լաթ շպրտվում Հազրոյի դեմքին. բզկտում հայացքը, ալեկոծ ստվերը Հազրոյի տակից փախցնում էր քարը, քարը, Հազրոյի ոտքերը, ձեռքերը, նա արդեն կառչել չէր կարող և հենարան չուներ, ոչորապտույտից, ստվերի ծեծկռտուքից նա կարող էր պաշտպանվել միայն աչքերը փակելով, բայց դա արդեն չէր ուզում... Հետո, ոտքերի մոտ, բռնցքաչափ մի քար ստվերի տակից պոկվեց-զարկվեց հայացքին։ Հազրոյին թվաց, թե ինքը այդ քարն էր որոնում... այդ քարը... հենց այդ քարը... Նա ձեռքը մեկնեց, բայց այդ պահին ծառի ստվերը նորից կարկամեց. մի ակնթարթ անշարժացավ, և ծառը ճարճատեց՝ վրա-վրա, և ստվերը սոթ տվեց վար, դեպի կիրճը։

Ծառը գնում էր։

— Ծա՜ռը,— տնքաց Հազրոն և, դողը ատամների տակ սեղմած, կառչեց բռնցքաչափ քարից, իսկ քարը խորընկա էր՝ չէր պոկվում։

Ծառը երակ-երակ կտրատվելով, խուլ ճթռտալով գնում էր, քաշում արևի մեջ թպրտացող իր ստվերը և գնում դեպի կիրճը։

Ծառը նորից կտրուկ ճարճատեց, և այս անգամ Հազրոյի դիմացից քամու բերան ընկած-բզկտված մի լաթ թռավ դեպի կիրճը։

— Ծա՜ղը,— գոռաց Հազրոն և շտապեցրեց գնաց սովերի ետևից։ Եվ, ասես երազում, ափլփեց բնի կանգուն հատվածը, որ արդեն կոճղ էր և կացինը ձեռքն ընկավ։

— Ծա՜ղը։— Հազրոն կացինը շպրտեց, կոճղին փաթաթված ոտքի ելավ և տարտամ բարձրացրեց հայացքը։

Ծառը երկնքում չէր։

Ծառը արդեն երկնքի հետ կապ չուներ. երկիրն էր ձգում նրան, կախվել էր կիրճն իջվարող թեքության վրա և ճռճվում էր։ Ճխլված մի ջիղ մնում էր դեռ, և ծառը Երկրի ուղղաձիգ կանչին դիմադիր խուսափուկ շարժումներ էր անում՝ աջ ու ձախ, աջ ու ձախ...

Հազրոն այնպես նայեց խոնարհված ծառին, կարծես ծառն ինքն էր մեղավոր, որ տապալվում էր։

Լքում է, մենակ է թողնում Հազրոյին։

— Բարի աջողում, քեռի Հազրո։

Բայց դա արդեն Հազրոյի համար չէր. աշխարհի ձայները, անցածգնացած և գալիք բոլոր ձայները խուլ գվվում էին Հազրոյի ականջներում։ Հազրոն ընդերքում էր, կանչերը համրացել էին. չկար հեռու երկրի անձավներում մոլորված զանգի ղողանջը, որ քուն ու արթուն զնգում էր Հազրոյի ականջներում, չկար հեռու երկրի կիրճ ու ձորերում մոլորված ճամփան, որ քուն ու արթուն թրթռում էր ծնկածալերում, ճանապարհը, որով պահ առաջ սլացավ ավտոն, բոլոր ճամփաները հիմա քակվում էին Հազրոյի ծնկածալերում, և ձեռնափայտը, որին հենված էր՝ կոճղն էր, որ պիտի անշարժ փտեր։ Հազրոն արդեն ճամփորդ չէր։ Ջկար կանչ, չկար ճամփա, չկար հորիզոն, չկար Հայոց լեռնապար, չկար երկնքում աճած ընկուզենու հրաշքը, չկար ընկուզենին, չկար հրաշք օր... Հազրոյի կարոտի թևերը հիմա ճնճղկան ջարդված թևեր էին, որ բեղի փոխարեն կախվել էին ծնոտին։ Աշխարհի կողմերը խառնվել էին իրար, թունջուվել ճակատին— Հազրոն կորցրել էր իր տեղը— աչքերը դատարկվել էին բոլոր հորիզոններից, մշուշապատ հայացքի դիմաց մնայն ճռճռվող ծառն էր։

Հազրոն դատարկվել էր աշխարհից։

Աշխարհը հիմա անձուկի գլխին կախված— ճռճվող մի ծառ էր... Ուր որ է տապալվելու է։

Եվ եթե զոցվել է աշխարհը և, եթե համբարձվել են հրաշքները, Հազրոն ո՞ւր է ապրելու և ինչո՞ւ է ապրելու։

Ինքն իրեն ուղղած հեգնական մի ժպիտ ուռուցիկեցրեց դեմքին։ Նա գլխարկը շպրտեց-բացեց ճերմակ գլուխը, օրորվելով գնաց-դանգնեց ծառի տակ և կանչեց՝

— Արի։

Կիրճը ձգում էր ծառին, իսկ ծառը խուսափում էր՝ աջ ու ձախ, աջ ու ձախ։ Դժվար ապրած ծառերը դժվար են մեռնում։

— Ծրի,— կանչեց Հազրոն։

Ծառը Հազրոյի գլխավերևում խռով ճռճվում էր. Հազրոյի կանչը օտարի կանչ էր, և ծառը չէր ուզում լսել, դեմքը շուռ էր տալիս՝ աջ ու ձախ, աջ ու ձախ...

— Ծրի,— գոռաց Հազրոն,— ես կտրեցի քեզ։ Ծրի։ Եկ ու տակով տար Հազրոյին, եկ ու ջախջախիր Հազրոյի հիմար գլուխը... Հազրոն շատ ապրեց այս աշխարհում, լքված ու մենակ երկար ապրեց, շատ հրաշքներ տեսավ, շատ հրաշքներ կորցրեց և էլի ապրեց հրաշքներ տեսնելու հույսով, բայց օր-ծերությունն կործանեց ամենամեծ հրաշքը։— Ծրի,— գոռաց Հազրոն։— Ես Հազրոն չեմ, արի, ես Հազարապետը չեմ, Հազրոն չեմ, ես կացնահար եմ։ Ծրի։

Հազրոն հայացքով կախվել էր ծառից, ճռճվում էր ու կանչում, իսկ ծառը խռով տատրաբերվում էր Հազրոյի գլխավերևում և ուզում էր Հազրոյի հայացքը պոկել-հեռացնել իրենից։ Բայց Հազրոն հայացքով կախել էր իրեն և ծառի հետ ճռճվում էր ու կանչում՝

— Ծրի։

Նա գիտեր, որ ծառը խռով է։ Խռով է և չի անսա իր կանչին՝ չի գա և գիբկրնդխառը չի մեռնի իր հետ. ծառը կպատժի՝ Հազրոյին կթողնի ոտքի վրա և կընդունի Երկրի կանչը։ Երկիրը մի վերջին, դեռ վերջին հրաշք երևի պահել է ծառի համար, և ծառը տապալվելիս կտեսնի։ Իսկ Հազրոյին կթողնի ոտքի վրա, այսպես՝ աշխարհից դատարկված, առանց աշխարհի, առանց հրաշքի, այսպես՝ դատարկ հայացքով դատարկ երկնքից կախված ճռճվելու։ Այսպես կպատժի ծառը։

— Արի։— Ճերմակ գլուխը բաց խնդրում էր Հազրոն։— Ծրի։

Ծառը Հազրոյի գլխավերևով սահեց դեպի ձախ, հասավ ճռճքի ձախակողմյան սահմանը, մի պահ դադար տվեց։ Հազրոն գիտեր, որ այդ է սահմանը, հենց այդքանը՝ հիմա կսահի աջ. Հազրոն ինքը թեքվեց, բայց ծառը չեկավ. ծառը խաբեց, սահեց էլի ձախ, Հազրոյին խաբա տվեց՝ սահմանը խախտեց, կտրեց Հազրոյի հայացքը և գնաց էլի ձախ, քիչ, շատ քիչ։ Եվ մի պահ բունը անշարժացավ, մի ակնթարթ բունը կարկամեց, իսկ սաղարթը թպրտաց։ Եվ պահի մեջ թվաց, թե բունն ու սաղարթը զատված են. բունը համրացավ, իսկ սաղարթը արևի մեջ թպրտաց, մի քանի շորուկներ ճրթճրթալով թռան, իսկ ծայրի, ամենածայրի շվերը ծառս եղան, և ծառը ցնցվեց ու ճթռտաց։

Ծառը ուսին հավաքած ստվերը շպրտեց կիրճը և տապալվեց։

— Աաա՜ա,— ոռնաց Հազրոն և գրկվեց ծառին։

Ծառը թպրտում էր։ Երկնքի սովոր սաղարթը գետնի հետ չէր հաշտվում. սաղարթը ծեփվում էր քարերին. սաղարթը ուզում էր ստվերի հետքով թռչել, իսկ բունը զսպում էր. բունը մոտ էր ապրել երկրին և գիտեր երկրի օրենքը՝ երկրում ծնվածը որքան էլ երկինք թռչի, երկիր է վերադառնալու։

— Ծառը։— Բնին գրկված տնքում էր Հազրոն։

Նա գիտեր, որ ծառը մերժում է իր գիրկը, ծառը ցնցվում և դողդոջ ապտակներ է դիպցնում Հազրոյին. գիտեր, որ ուշացած է իր գիրկը՝ ուշացած է, կեղծ է և տհաճ է ծառի համար։ Այս ջերմ փարված կուրծքը, այս պինդ փաթաթված թևերը, այս տաք-գուրգուրող այտերը առավոտի հետ էր պետք, մշուշով բռնված առավոտի հետ. երբ ծառը պլլված էր մառախուղով, և բնում բորբոքվել էր կացնի ահը։ Այն ժամանակ էր պետք, որ Հազրոն ջերմ-ջերմ փաթաթվեր, մշուշի միջով առանց կացնի գար՝ գրկվեր և միասին սպասեին արևին։ Հիմա արդեն ուշ էր՝ ուշացած էր, կեղծ էր և տհաճ։ Գուրգուրանքն ու ողբը ծառին պետք չէին։

Բայց ողբով բացված գիրկը Հազրոյին էր պետք. նա մխիթարություն էր հայցում։ Նա ուզում էր, որ ծառը փարվի իրեն և մխիթարի։

— Ծառը։— Ոչ ոք, ծառից բացի, ոչ մեկը Հազրոյին մխիթարել չէր կարող։— Ծառը։— Եվ որքան մարում էին ծառի ցնցումները, որքան ապտակները դողդոջ էին հասնում այտերին, Հազրոն ավելի պինդ էր փաթաթվում։— Ծառը։

Այդպես երկար մնաց Հազրոն։

Կիրճում դարձյալ լույս ու ստվերի խաղ էր, երկնքում ու երկրում հայտնվում ու համբառնում էին հրաշքները, բայց դրանք արդեն Հազրոյի համար չէին։

Հրաշքը Հազրոյի համար չէր։

Եվ ծառի համար չէր։

Ցնցումները դադարել էին, և ծառը հիմա սարսռում էր՝ դատարկվում կացնի սարսափից։ Սարսուռը շվերից հոսում էր ճյուղերը, ճյուղերից հոսում էր բունը և բնից հոսում էր կտրվածքն ի բաց։

Ծառը չէր մեռել։ Ծառը տապալվել էր, բայց չէր մեռել և չէր մեռնելու՝ մինչև լրիվ չպարպվեր սարսափից։ Երկար, շատ երկար էր պարպվելու. երկար էր ապրել դողը և երկար էր պարպվելու, քանի դեռ զեռունները չէին մտել մաշկի տակ, քանի դեռ չէր մաշկվել, քանի դեռ չէր ճաքճքվել, քանի դեռ մղմեղը չէր մտել բջիջների մեջ, քանի դեռ ամեն հյուսվածք թել-թել չէր ընկել քամու բերանը։

— Ծառը։

Հազրոն բերան չէր բացում, շուրթ չէր շարժում, բայց ներսում տընքում էր,— ծառը։— Ծառի սրսունքը ջիլ ու երակ բռնած՝ հոսում ու մաքում էր կղված ծնկածալերում։ Ապա դողը դարձավ սեփական՝ սկսվում էր ծնկածալերից և երակ ու ջլերով հոսում-պարպվում էր ծառի մեջ։

ԴԱՇՏԱՊԱՀԸ

1

Մոսեին ագռավի կոկոցը դուրս հանեց։ Մութուլուս էր դեռ, Մոսեն անկողնում պառկած ծխում էր, երբ կոցը ընկավ ականջը...

— Քու լեշակեր...— հայհոյեց և շամաշորով քշեց դուրս։

Ագռավը կտուրին էր, հենց՝ հեռուստացույցի անտենայինն։ Մոսեն գժվեց. ագռավ չէր սիրում։ Տանել չէր կարող։ Ատելությունը պապից էր գալիս։ Տասնյակ տարիներ են անցել, է՞, պապը ո՞ւր... Էրգիրը ո՞ւր, պապը ո՞ւր, Մոսեն ո՞ւր, բայց կարծես երեկ, աչքի առաջ է՝ ագռավի տեսք ու կռնչոցից պապը խենթանում էր. պատեհ-անպատեհ հայհոյում էր, քարկոծում-հալածում-հայհոյում։ Եվ երեխաների հետ պայման ուներ. ով մի ագռավ սատկացներ՝ մի լավ պարսատիկ նվեր էր ստանում։ Ագռավը շանը չէր տալիս (շունն ինքն էլ չէր ընդունում), սատկած ագռավը պապը շպրտում էր ձորից այն կողմ— գայլերին բաժին։

— Քու կոկոց...— Մոսեն քար վերցրեց, բայց չհասցրեց գարկել. ագռավը թռավ դեպի ձորը։ Ջքվեց։ Բայց, դե՞, լույս առավոտի հետ, պղտորեց Մոսեին։

Հայհոյելով հագնվեց, հայհոյելով կանգնեց բակում և վրդով նայեց ագռավի գնացած հետքով։

Գարուն էր, մայիսի կես։ Ձորից այն կողմ բլրաշարուկը թաց նիրհում էր. գիշերը էլի անձրև էր եկել, և երկինքը էլի մաքրվում էր ամպերից։— Երկինքը այս գարնան կարծես բարի է. ինչպես սկսել է, էլի մի ժամանակ շարունակի՝ գիշերը անձրև, ցերեկը արև, սարերը նորից կշնչավորվեն։ Նախորդ տարվա երաշտից արմատներն անգամ փչկեցին։ Բայց, տես որ, փառք, բացառիկ նպաստավոր է տարին։ Հայացքը թաց լեռներին, Մոսեն կամաց-կամաց մեղմանում էր և որոշեց, որ դաշտապահի ձեռնափայտը վերցնելու ժամանակն է։

Եվ մարագի անկյունից վերցրեց դաշտապահի իր մահակը ու փոշին թափ տվեց։

* * *

Երեսուներեք-երեսունչորս տարվա ասվորությամբ գյուղից դուրս գալով և ուղղություն վերցրեց դեպի ձորը։

Բայց ձոր չհասած՝ միտքը փոխեց. նախ կարելի է գյուղամեջ գնալ. նախագահը գուցե հանձնարարություններ ունենա։

Տարիներ, է՞, տարիներ առաջ, երբ Մոսեն նոր էր դաշտապահի փայտը ձեռքն առել, օ՜, այն ժամանակ և դեռ քսան-քսանմեկ տարի առաջ, դաշտապահ Մոսեն ամեն առավոտ, ամեն առավոտ նախագահից հանձնարարություններ էր ստանում և ամեն երեկո զեկուցում էր։ Ամեն երեկո։ Իսկ ահա, քանի՞ տարի է դաշտապահի ու նախագահի հանդիպումը պարտադիր չէ։ Պարտադիր չէ՞, թե՞ անհրաժեշտ չէ, Մոսեն գլուխ չի հանում։ Թե հանդիպում են՝ պատահական, և ինքը, Մոսեն, ոչ հանձնարարություն է ստացել և ոչ զեկուցելու բան ունի, այնպես՝ հարևան գյուղացի-ծանոթների պես հանդիպում են պատահական և բաժանվում։ Դաշտապահ Մոսեն չի էլ հիշում, թե վերջին անգամ երբ է հանդիպել նախագահին։

Գյուղի կենտրոնում նախագահը մենակ էր կանգնած։

Հավաքատեղին, իհարկե, մարդաշատ էր. շրջկենտրոն և չգիտես թե ուր տանող ասֆալտապատ ճանապարհի եզրին՝ խումբ-խումբ ջահելներ, առանձին շրջկենտրոնում ծառայության գնացողների խմբեր, առանձին՝ հանք ու թունել բանվորության գնացողների խմբեր (Մոսեն որոնեց որդուն և տեսավ՝ բեռնատար ավտոյի մոտ կանգնած), առանձին՝ զբաստաշրջելո՞ւ, թե՞ վագզի մրցամենների գնացող բարձր դատարանի աշակերտներ, պատերի տակ արևկողած թոշակառուներ...

Գյուղի կենտրոնը մարդաշատ էր, իսկ նախագահը մեն-մենակ էր կանգնած՝ խռով կեցվածքը հավաքվածներին ի տես։

Դաշտապահ Մոսեն բարևեց և կանգնեց կողքին։ Նախագահը բարևին պատասխանե՞ց։ Բարևի՞ն պատասխանեց, թե՞ հայհոյեց... Եվ էլի ինչ-որ փնթփնթաց։

— Չլսեցի։— Մահակին կոթնած՝ ձգվեց դաշտապահը։

Նախագահը կողքանց նայեց. այնպես, կարծես նոր նկատեց Մոսեին և ի միջի այլոց փնթփնթաց.

— Էգ ո՞ւր։

Ինչպես թե՝ ուր. բան գարան է, և Մոսեն՝ դաշտապահ։

— Հանդ։

— Հանդում ի՞նչ կա։

Այս ո՞վ է խոսում Մոսեի հետ։ Նախագահը չէ՞։

— Դու ասա, թե ինչ կա. ես հանդապահ մարդ...

Մոսեն դեռ պետք է շարունակեր խոսքը, բայց նախագահը կտրուկ ու մի տեսակ հանկարծակիի եկածի պես, դարձավ դաշտապահին՝

— Դու դեռ հանդապա՞հ ես։— Եվ թեթ նայեց դաշտապահի ձեռնափայտին։— Ինչքան գիտեմ, մենք հանդապահ չունենք։— Եվ նորից ղժգոհ հայացքը կախեց գյուղի գլխին։— Հանդապահ,— քմծիծաղեց,— դաշտապահ... Ինձ դաշտապահ պետք չէ։

Այդ ի՞նչ ասաց նախագահը... Կարո՞ղ է Մոսեն սխալ լսեց։

— Ինձ պետք չէ՞։

— Ինձ հանդապահ պետք չէ։

Մոսեն զգաց, թե արյունը ինչպես է խուժում քունքերը։ Ուրեմն... ուրեմն այսքան ու այսքան տարվա դաշտապահին այսպե՞ս են հրաժեշտ տալիս։ Վռնդո՞ւմ են։ Եվ ո՞վ։ Այսպես արհամարհանքով Մոսեին ո՞վ է վռնդում։ Գյուղ ու գյուղացու համար պատուհասի մեկը, որ իր տնամերձ ու խոհանոցից այն կողմ աշխարհ և իշխանություն չունի, մաղձոտ մի թանձրամիտ, որ իր ասածը չի հասկանում՝ «ինձ հանդապահ պետք չէ»։

— Քե՞զ հանդապահ պետք չէ, թե՝ ճանդին,— սրվեց Մոսեն։

Իսկ նախագահը հարկ չհամարեց պատասխանել։ Կանգնած էր՝ քիթը ցցած, քթի տակ փնթփնթոց, խառվ ու վերվերի հայացքը գյուղի գլխին։

— Իմ հարցին պատասխան տուր,— բորբոքվեց Մոսեն,— հանդապահ քե՞զ պետք չէ, թե՞ հանդին պետք չէ։

— Գլուխ չունեմ։— Նախագահը առանց Մոսեին նայելու հեռացավ։

Քիչ մնաց, հա, պահ մնաց, որ Մոսեն հասներ ու մահակի տակ առներ նախագահին, բայց զսպեց իրեն և բորբոք նայեց շուրջբոլորը։

Իսկ հավաքվածներից ոչ մեկը լուր չուներ, թե իր կողքին, հենց հիմա, գարնան այս կապույտ առավոտ ինչ տխուր բան կատարվեց— գյուղը արդեն դաշտապահ չունի։ Գյուղի շրջակա սարերն ու ձորերը, դաշտերը այլևս պահակ չունեն։ Պետք չէ։ Նախագահն է ասում. դաշտապահ պետք չէ։

* * *

Մոսեն ինքն էլ չիմացավ, թե ինչպես տուն հասավ՝ վիրավորանքից ու կատաղությունից մշուշված։

Եվ ինչո՞ւ տուն եկավ։

Հերսոտ գնաց-եկավ բակում, մտքում ու ձայնարկու հայհոյեց նա-

խագահին, բաիում պատեպատ զարկվեց և փլվեց սանդին։ Գլուխը պտտվում էր։

[Այդպիսի վիրավորանք... այդպիսի անարգանք, այդպիսի... այդպիսի նենգ-թիկունքից եկող հարված Մոսեն մեկ էլ... մեկ էլ բանակում է ստացել՝ այնտեղ, Արաքսի ափին, այն օրը, այն առավոտ, երբ թիթիզ մի լեյտենանտ մի տուփ պահածո հիմարավարի գլորելով, ոտքի տակ առած մի տուփ պահածո և ձեռքին կես բոքոն խաղացնելով մոտեցավ... մոտեցավ հենց իրեն, Մոսեին։ «Զինվոր Կիրակոսյան, առ ու, հայտե տուն»։— Եվ իրեն թվաց, թե թիկունքից դաշունահարեցին. գլուխը պտտվեց, հայացքի դիմաց լեյտենանտը ճոճվեց, հորիզոնը, լեյտենանտը, երկինքն ու գետինը խառնվեցին իրար, երկինքը փուլ եկավ գլխին և չգլորվելու համար՝ ծնկեց։]

Պատերազմական հինգը տարում Մոսեն այդպես ծանր չէր վիրավորվել։

Այդպես եղավ։

Այդպես զորացրվեց Մոսեն։

Եվ տունդարձի ճանապարհին հիվանդացավ։

Մոսեն, հերոս զինվոր Կիրակոսյանը, որ հինգ տարում օֆ չէր արել, միշտ՝ ճակատում, միշտ պինդ ու ձիգ-բացված թրի նման, որտեղից որտեղ հիվանդացավ, ինքն էլ չիմանալով, թե ինչպես և ինչով։ Պարզապես ծնկները չէին պահում։ Եվ երկար պառկեց, մինչև գարուն։ Իսկ գարնանը բժշկական հանձնաժողովը գտավ, որ նախկին ճակատային Մովսես Կիրակոսյանը երկրորդ կարգի հաշմանդամ է։

Այսպես եղավ։

Մոսեն այսպես դարձավ դաշտապահ։

2

Նույն օրը մենք իմացանք, որ գյուղի դաշտապահը քեռի Մոսեն է Իրիկնապահին, երբ կատարածուն հենց գրասենյակի կտուրից ձայն տվեց-կանչեց, և կանչը փոխանցումներով տեղ հասավ, և քեռի Մոսեն ձեռնափայտով հայտնվեց ու մտավ գրասենյակ, հասկացանք, որ դաշտապահը նա է լինելու։

Դպրոցի գարնանային արձակուրդների օրերն էին, մենք արդեն «սանրել» էինք գյուղամերձ դաշտերը, ձորում սավդուկ ու սավդուկի արմատ չէր մնացել, ձորից այն կողմ, բլրալանջերի արտերում, քյաթմաթ

չէր մնացել, սնձի առաջին ծիլերը թոցրել էինք՝ աղատ, անկաշկանդ, առանց տափեստափի, առանց ծիկլակելու ու ծլկելու. դաշտապահ չկար։ Իսկական սնձի ժամանակը դեռ նոր էր գալու, սնձի, գոզիկի, կոճղեզի, թթվառոշի, սիբեխի... ճիշտ է, գարունը երաշտ էր, բայց դե մի բան կճարեինք. քարերի տակից ինչ դուրս գար՝ մեզ համար էր, մեզ էր կանչում։ Ահա և՝ դաշտապահ։ Սար ու ձորերի նոր պահապանը և մեր նոր «թշնամին»։ Ինչպիսի՞ն է... Հերսոտ է։ Դա հո հաստատ ու հաստատ. մեր տեսած, մեզ հանդիպած բոլոր դաշտապահները հերսոտ էին։ Բայց գիտեինք նաև, որ քեռի Մոսեն հիվանդ է, վաղել չի կարող՝ մահակի տակից ծլկեցինք, պրծած ենք։ Բայց դե, կովից է վերադարձել. ի՞նչ իմանաս, թե ինչ «ֆինտեր» կունենա։

Եվ որոշեցինք առավոտ շուտ գյուղեզրին հավաքվել-փորձել նոր դաշտապահին։

* * *

Երբ հայտնվեց, մենք, որ ճամփի երկու կողմերը բռնած նստոտել էինք քարերին, խաղացինք, որպես թե ուզում ենք ծլկել։ Դաշտապահը քթի տակ ժպտաց ու անցավ։ Զինվորական հումազգեստով էր՝ գալիֆե շալվար, կիսաճիտք ծանր կոշիկներ, զինվորական բաճկոն և՝ մինչև վերջ կոճկած, զինվորական գոտին պնդած և գոտին ի կախ՝ զինվորական տափաշիշ։ Միայն գլխարկն էր կեպի և ձեռնափայտ ուներ։ Քթի տակ ժպտաց մեզ ու անցավ։

Գնում էր գլուխկախ ու տարտամ քայլերով, անկամ և ոտքը կախ գցեց։ Թվաց, թե շուռ է գալու դեպի մեզ, բայց ձեռնափայտով մի բան խաղացրեց գետնին և վերցրեց։— Էդ ի՞նչ գտավ, որ մինչև հիմա մենք չենք տեսել։— Պարկուճ էր։ Կրակված գնդակի պարկուճ։ Թխկթխկացրեց մահակին՝ թափ տվեց-դատարկեց հողից և փչեց մեջը։ Պարկուճը սուլեց։ Ուզեց շարտել, բայց էլի սուլեց։ Հենց այնպես սուլեց, մենք դա հասկացանք։ Ապա՝ փորձեց բարձր... դիլ... ավելի դիլ... որքան կարելի է՝ բարձր... ողջ շնչով։ Հետո... հետո դաշտապահը ձեռնափայտը շպրտեց, պարկուճը շուրթերի մոտ պահեց զույգ ձեռքով և փչեց այնպես, ինչպես մենք ֆուտբոլի գնդակն էինք փչում։

Խառնվեցինք իրար. մտածեցինք, թե դաշտապահի սուլոցը մեզ հետ կապ ունի։ Անորոշ վախ էինք զգում և պատրաստ էինք, իրոք, ծլկելու։ Բայց նա մեզ չէր նայում, սուլոցը հատուկ մեզ չէր ուղղում, երկար հասակով մեկ զսպանակվում էր— թոքերի օդը լցնում պարկուճը՝ երկար սուլում, ապա մեկնվում էր— խորը արտաշնչում և նորից ու նորից ու

նորից սուլում էր և՝ վրա-վրա։ Քեռի Մոսեն, ճամփի կենտրոնում կուչ գալով ու մեկնվելով, սուլում էր ճամփեն ի վեր՝ գյուղի կողմ, սուլում էր ճամփեն ի վար՝ դեպի ձորը, դառնում սուլում էր աջ, սուլում էր ձախ, քեռի Մոսեն գալարվում էր ու սուլում։ Այդ գալարումների մեջ եթե սուլոց չլիներ, կմտածեինք, թե գլխագար է։

Եվ փլվեց։ Թրմփաց փոշոտ ճամփին, բայց պարկուճը զույգ ձեռքով պահել էր շուրթերի մոտ և հևում էր պարկուճի մեջ։

Երևի օգնել է պետք։ Անվստահ շարժվեցինք դեպի քեռի Մոսեն։ Բայց չմոտեցանք. մենք վախենում էինք ոչ թե դաշտապահից, այլ հիվանդ զինվորից։ Ուրեմն, որ ասում էին՝ հիվանդ է, ուրեմն՝ այսպիսի հիվանդ է։

Քեռի Մոսեն, ճամփի կենտրոնում փլված, պարկուճը զույգ ձեռքով պահել էր շուրթերի մոտ և հևում էր։ Հետո բռունցք դառած ձեռքերը թրմփացին, կամաց-կամաց շտկվեց, տարտամ նայեց շուրջբոլորը, ճամփին, ապա մեկնվեց ձեռնափայտը վերցնելու ու նկատեց, կարծես նոր նկատեց բռունցքներում սեղմած պարկուճը։— Թյո՜ւռ,— թքեց պարկուճի շրթին, և պարկուճը նորից սուլեց։— Թյո՜ւռ— Եվ ցուցամատով սպառնաց։

Պարկուճը աջում էր, քեռի Մոսեն ձախ ցուցամատով սպառնաց, և հանկարծ նկատեցինք, որ նա ցուցամատ չունի։ Ձախի ցուցամատը տեղում չէր։ Թռած էր։ Նա մեկ էլ փորձեց շպրտել պարկուճը, բայց դրեց գրպանը և ձեռնափայտին հենված ոտքի ելավ։

Ելավ ծերունու պես և գնաց ծերունական քայլերով՝ մանրիկ ու զգույշ։

Մենք լուռ նայում էինք դեպի ձորը գնացող դաշտապահին, նայում էինք միմյանց և առանց խոսքի իրար հասկացանք՝ քեռի Մոսեին զայրացնել պետք չէ. մեղք է քեռի Մոսեն։ Բայց նաև չէինք կարող դաշտ չգնալ... Ուրեմն պետք է չքվել արտերից ու դաշտապահի աչքից հեռու։

Եվ որոշեցինք գնալ Դժնիձոր լողանալու։ Քեռի Մոսեն այդ կողմ չի գա։

Եվ ոչ մի դաշտապահ Դժնիձոր չէր գալիս։ Հազարից մեկ՝ չէին գալիս. ի՞նչ ձոր էր, որ դաշտապահները աչքը վրան պահեին. Դժնիձորը քարերից բացի ուրիշ պտուղ չուներ։ Եվ դեռ... և դեռ Արագածի ձնհալից խլած պարապ-սարապ քշում էր։ Արագածն ի Արարատ իջվարող մեր գողմերի բոլոր ձոր ու ձորակների շարուկում Դժնիձորը միակն էր, որ հեղեղաջուրը ոչ մեկին չէր տալիս՝ ոչ մի գյուղի, ոչ մի դաշտի։ Բոլոր ձոր ու ձորակները սելավը մի տեղ բաշխում էին, իսկ սա, ափսոս, ջուրը ժայռեղեն ափերի մեջ սեղմած քշում էր դեպի ղռերը, դեպի Արաքս։

Եվ մեր կողմերի հերոսոտ դաշտապահները և մեր գյուղի հերոսոտ ջրվորները Դժնիձորին մականուն էին կպցրել՝ Արաքսի վտակ։

Երբ քեռի Մոսեն հայտնվեց լողափում, մենք անակնկալի եկանք, ավելի շատ՝ ձորակապցի մեր ընկերները։ Նրանք առաջին անգամ էին տեսնում քեռի Մոսեին և դաշտապահ՝ զինվորական համազգեստով։

Ահագին ժամանակ նա լուռ կոթնեց ձեռնափայտին։ Մահակը այդ տարօրինակ դաշտապահին անվայել էր, չէր բռնում, մահակը նրա համար նաև կարճ էր, և նա աղեղվել էր ձորափին։

Մենք սպասման մեջ էինք։ Կեսս սալերի վրա, կեսը ջրում անշարժացած սպասում էինք. դաշտապահը ի՞նչ է ասելու։ Ինչպե՞ս է խոսելու, ինչ է ասելու։ Իսկ նա, ձեռնափայտին կոթնած, անորոշ նայում էր. կարծես մեզ չէր էլ նկատել։ Հետո շտկվեց և ձեռքը տարավ գրպանը։ Մենք վախեցած իրար նայեցինք. հիմա պարկուճը կհանի և... Բայց հանեց մախորկայի տուփը։

Քեռի Մոսեն ծուռ ժպտաց մախորկայի տուփին, ափով ու հեգնանքով կշռեց մախորկայի տուփը, «ջղարա» պատրաստեց, սկսեց գրպանները քրքրել և, էլի առանց մեզ նայելու, կանչեց՝

— Տղա՜։

Բոլորս զգաստացանք. ո՞ւմ է կանչում։

Դաշտապահը վերջապես նայեց մեզ։ Բոլորիս և երկար նայեց։ Հատկապես՝ մոտիկ կանգնածներիս։ (Առաջին անգամ էր, որ քեռի Մոսեին աչք-աչքի տեսնում էի՝ սուր հայացք ուներ, բորբոք ու կտրուկ։ Նրա հայացքի տակ գնալով ձգվում էինք։ Մեզ հետ նաև ինքը՝ դաշտապահը)։

Մեր դիմաց արդեն մի զինվոր էր կանգնած՝ բարձրահասակ ու ձիգ։ Այդ զինվորին միայն կեպին էր խանգարում և ձեռնափայտը։

— Վազքով՝ ինձ մոտ։— Հրամանով կանչեց քեռի Մոսեն։

Վերջապես։ Բայց էլի անորոշ էր՝ ո՞ւմ է կանչում։

— Բոլորը։— Հրամայեց քեռի Մոսեն և ավելացրեց։— Ժիվոյ-ժիվոյ։

Եվ այնպես զորեղ էր ձայնը և այնպես կտրուկ. ոնց որ մեր թիկունքին մտրակով շրմփացնես։— Աղնիվ խոսք, սրան հրացան է պետք, դաշտապահի մահակը ինչո՞ւ է ձեռքն առել։

Մերկ կանգնեցինք դաշտապահի դիմաց։

— Հագնվե՞լ...— մեր զգեստները մահակի տակ էին, այս ու այն

կողմ շաղ եկած,— հագնվե՞լ, թե՞ սպասել հրամանի։— Իսկ նա լուռ նայում էր՝ խիստ, կտրուկ, բայց աչքերի խորքում գուրգուրանք կար. մեզ ուղղված սեր ու գուրգուրանք։— Մեզ սիրում է, նա մեզանով հիացած է, մեզ ոչ մի վտանգ էլ չի սպասվում,— ամենքս հասկացանք դա, բայց կաշկանդված սպասում էինք. քեռի Մոսեի հայացքը, կեցվածքը տիրապետող էր։

— Հագնվե՞լ։— Հրամայեց դաշտապահը։ Նա չավելացրեց՝ ժիվոյ-ժիվոյ, բայց ձայնի մեջ դա կար։

Ծփացինք աջ ու ձախ (շտապելուց մեր խղճուկ շորերը փոխս էին ընկնում), ափալ-թափալ հագնվեցինք և սպասեցինք նոր հրամանի։— Հիմա ի՞նչ է հրամայելու դաշտապահը։

Եվ հրամանը եղավ ռուսերեն։ Չհասկացանք, թե ինչ պահանջեց։ Բայց խառնվեցինք իրար. պարզապես հրամանին չենթարկվել, քեռի Մոսեի ձայնի տակ անտարբեր կանգնելը հնարավոր չէր։— Այ թե ով է զինվորը, իսկական զինվորը։— Ողջ պատերազմի ընթացքում մենք կռիվ-կռիվ էինք խաղացել՝ տանիքների վրա, փողոցներում, դաշտում, բոլորս հրամանատարներ էինք, հերթով, բայց ոչ մեկիս և ոչ մի անգամ չհաջողվեց այնպես հրամայել, որ բոլորը ենթարկվեն։— Այ թե ինչ է նշանակում լինել իսկական զինվոր։— Քեռի Մոսեն ժպտաց մեզ և հրամանը կրկնեց հայերեն՝

— Ըստ հասակի մեկ շարք՝ շարվե՞ք...

Եվ անցավ շարքի երկարությամբ, ուշադիր զննեց, մի քանիսին տեղաշարժեց, իսկ ինձ, որ կենտրոնում էի, բերեց-կանգնեցրեց շարքի սկզբում։

— Քու աչքերն կապուտ են ու քու մազերն՝ շեկ,— այս անգամ խոսեց մեր գյուղի լեզվով,— հարկ է, որ դու շարքի սկիզբ կանգնիս։— Եվ հայացքը աչքերիս լռեց։ Ինձ թվաց, թե պետք է հարցնի՝ ո՞ւմ տղան ես։ Բայց քեռի Մոսեն նորից դարձավ կտրուկ զինվոր։— Հասկանալի՞ է։

Այդ հարցի, թե հրամանի մեն ու մենակ պատասխանը գիտեի, բոլորը գիտեին. բանակից, կռվի դաշտից եկել-հասել էր մեր գյուղը։ Եվ ես ձգված պատասխանեցի.

— Տակ տուշնա։

Դաշտապահը ժպտաց ինձ, ապա անցավ շարքի երկարությամբ (մի քանիսս ոտքներիս չանթ-մանթ ունեինք), մեր չանթերը հանել տվեց, որ հավասարապես բոբիկ լինենք, հին ու մին մեր շորերի վրա դժգոհ փնթփնթաց, ապա մի պահ գլուխկախ մտածեց և կտրուկ բարձրացրեց գլուխը.

— Հանվե՞լ։

Դա արդեն մեզ դուր չեկավ,— հագնվել... հանվել,— ձի՞ն է առնում մեզ։ Բայց հրամանը հրաման էր։

Եվ նույն «համազգեստով»— բոլորս մերկ, նույն կարգով շարվեցինք ձորափին։

— Աջ դա՛ր։

Ճակատով դարձանք դեպի ձորը։

— Այդպես։— Դաշտապահը խնդուն ու խրոխտ նայեց, ուզեց ափերը շփել իրար, բայց ձեռնափայտը խանգարեց։ Խեթ նայեց ձեռնափայտին, ձեռնափայտը շպրտեց, հիշեց, որ գլխին կեպի կա, կեպին շպրտեց ձեռնափայտի ետևից, ապա զինվորական բաճկոնը մինչև վերջ կոճկեց և կրունկը թափով շրխկացրեց կրունկին՝

— Ձգա՛ստ։

Առանց դաշտապահի մահակի և առանց կեպիի, մեր դիմաց արդեն իսկական զինվորն էր՝ ձիգ, բարձրահասակ ու ձիգ և առնական և բորբոք ու խրոխտ հայացքով և համարձակ ճակատով։ «Ազնիվ խոսք, մեր գյուղում քեռի Մոսեի պես ուժեղ մարդ չկա»,— մտածեցի ես և մտածեցի նաև, որ այդ մարդուն քեռի Մոսե ասելը սխալ է՝ ոչ քեռի Մոսե, ոչ դաշտապահ... բո ո՞վ է։ Զինվոր։ Անհաղթ զինվոր։ Հրամանատար... Այ թե կռվել է, հա՜. հայացքով է ֆաշիստներին քշել, հենց այս հայացքով, հենց այս աչքերով. այս ճակատով։— Շիկացած ճակատը կայծկլտում էր և անհնազանդ-ալեխառն մազերը հա քշում էր ճակատից ու խոսում։— Ուրեմն... ուրեմն մենք... մենք՝ մերկ երեխաներս, որպես թե զինվորներ էինք. հզոր և արդար և հաղթական մի բանակի մարտիկներ էինք՝ մեր թիկունքում թողած հեքիաթային հաղթանակներ— առասպելական պատմություն։ Մենք ծունկի էինք բերել աշխարհի ամենամեծ-ամենադաժան-ամենագեշ-ամենա... թշնամուն և մեր անցած ճամփաներին կործանել էինք շարք ու հաստատել բարին։— Մենք՝ ձորափին մերկ ու զգաստ կանգնած երեխաներս։ Նա էր ասում և՝ առանց ձեռք առնելու, հաղթած զինվորն էր ասում, մեր հրամանատարը, մեր գնդապետը՝ կրքոտ ու բորբոք և աչքերը բոց և ճակատը թրի պես բոցկլտուն և խոսքը հրեղեն։ Մենք անպարտելի զինվորներ էինք։ Եվ անպարտելի, որովհետև արդար ենք։ Բայց ահա անիրավ, նենգ և վախկոտ մի բանակ ձորից այն կողմ դարանակալել է՝ գետից այն կողմ, ձորից այն կողմ։— Եվ ռուսերեն բառեր էր որոտում և ձախ ցուցամատը ուսն ի ետ թափ էր տալիս դեպի թշնամին։ Ցուցամատը տեղում չէր. ցուցամատը չկար, բայց երբ ոխով թափ էր տալիս, ցու-

ցամաքը կարգին տեղում էր, կարգ և ապահովում էր թշնամուն։ Եվ մեզ, փառապանծ բանակի մեր գնդին, ահա, քախտ է վիճակվել ջախջախել այդ նենգ բանակը. գրոհով իջնել ձորը, գրոհով կտրել գետը, գրոհով բարձրանալ ձորից և կայծակի պես շրխկալ թշնամու նամարդ ճակատին և ճեղքել ճակատը, վախկոտ բանակը բզկտել-ցրիվ տալ և մրրիկի պես հետապնդել...

— Դե, հրաման տուր, հրաման տուր, գնդապե՞տ։— Ներսումս փոթորիկ էր. ես ուզում էի պոկվել— ավտոմատի կրակով իջնել ձորը, կրակով կտրել գետը, կրակով ելնել և սուրալ բոցեղեն գնդակների ետևից։— Դե, հրաման տուր, հրաման տուր, հրամայի՛ր, գնդապե՛տ։

Եվ քաշեց թուրը ու դարձավ դեպի թշնամին։— Ով քնած է՝ արթուն կացեք, ով արթուն է՝ ելեք կեցեք, ով կեցել է՝ սուր կապեցեք, սուր եք կապել՝ ձի թամբեցեք, ձի եք թամբել՝ ելեք հեծեք— հեռո չասեք, թե մենք քնած, Դավիթ գող-գող եկավ-գնաց։— Եվ թուր կեծակով թրատեց երեքինքը,— Հացն ու գինին, ուտ կենդանին,— կանչեց։— Ի մա՞ր...

Եվ մեր պոռթկուն գունդը տարավ...

Ինչպե՞ս իջանք ձորը, ինչպե՞ս կտրեցինք ուերուվը, ինչպե՞ս բարձրացանք... և, ահա, ճակատը։

— Ի մա՞ր...

* * *

Հիմա, երբ հիշում եմ այդ օրը և էլի շատ օրեր, որ մեր մերկ և սոված և գեղեցիկ գունդը հավաքվում էր Դժնիձորի ափին ու սպասում իր հրամանատարին, կոմբատ սեղմվում է։ Գաղտնի էր ձեռնափայտը քարշ տալով, մենք զգաստ շարքով ոտքանում էինք, նա ձեռնափայտը շպրտում էր մի կողմ, կառչում կեռին՝ մահակի եռանից։ Զինվորական բռնկունք մինչև վերջ կոճկում էր, խրոխտ կանգնում զգաստ շարքի դիմաց, և գունդը պատրաստում գրոհի։

Մեր ջղաղատեղ գունդը միշտ հաղթում էր, և մեր գնդապետը իր լեղած ցուցամատով լեղած շքանշանները էր կպցնում մեր մերկ ու նիհար կրծքերին։

Մենք որքան էինք սիրում մեր գունդը։

Մենք որքան էինք սիրում մեր հերոս գնդապետին։

Ինչքան էի սիրում քեզ, քեռի Մոսես։

«Ինձ դաշտապահ պետք չէ»... Հարամ կաթնակերներ... Հարամ կաթնակերներ...— Դաշտապահը չէր հանդարտվում։

Ուրեմն... ուրեմն Մոսեն ձեր թաշկինա՞կն է. պետք եղավ՝ ձեր քիթը կմաքրեք, մաքրեցիք՝ էշպրտեք մի կողմ... «Ինձ հանգստապահ պետք չէ»։ Շան ծիծ կերած, Մոսեն եբեսան-եբեսունչորս տարի քեզ համա՞ր է շփշփել՝ քեզ համար և քեզնից առաջ եկած ու գնացած մյուս նախապահնե՞ր։ Քեզ մշա՞կն է եղել Մոսեն։ Եվ ի՞նչ եք վճռել ձեր «մշակին»։ Հատկապես դու, մաղձոտ շանտրգի, դա ի՞նչ ես վճռել «քո դաշտապահին»։ Իր աշխատի հաստքով Մոսեն ատաք հով չի կարող պահել։ Իսկ Մոսեի փերդատանը ատաք չանչ է։ Եբեկվա աքը ու մենակ Մոսեն, փառք աստծու, այսօր ատաք ջոնչ է... Այնպես, որ Մոսեն իր համար էլ, հենց իր համար էլ չի աշխատում։ Պարզապես չի ուզում քեզ աքա խեղճ ու կրակ ատ ու ձորերը։ Այո, այո՝ խեղճ ու կրակ և լքված և որբացած։ Մոսեն հո գիտի. Մոսեն գարնանից ամոնամուտ չափշփում է հանդերում և գիտի, որ դա այդպես է։ Եվ այդպես է՝ հենց քո պատճառով, փաչ նախագահ։ Քեզ ո՞վ փոքրիքից գլուխդ պպանոցին, քեզ պես սարկամարին ո՞վ իշխան կարգեց այս սարերին։ Հանկարծ Մոսեն գլխի ընկավ, որ իր վիրավորանքը կատաղությունն ու վիրավորանքը ոչ այնքան իր համար է, իր՝ դաշտապահ Մոսեի, որին նախագահը վանում է, որքան՝ սարերի, կրծքներին քար սեղմած խեղճ ատ ու ձորերի, լանջերին կմախքացած արտերի, լանջերում հեղեղված ու փակված առուների, ամաքացած ե... և նախագահի համար արդեն անշահ դաշտերի։— Շահավետ դաշտ չկա և դաշտապահի կարիք չկա, ուրեմն։ Այդ անօրեն նախագահի խատրը ատ չէ՞։

— Մարաթուկ վկա՝ էս էր։

Թե չէ... թե չէ, Մոսեին ո՞վ կարող է ստիպել, որ Ֆեռնափայտյան առնի ու չափշփի՝ որպես հանդ ու շոլին սովոր մի հալեուր։

Ոչ, Մոսեն սարերը պետք է գնա որպես դաշտապահ։

Մոսեն կոչումով է դաշտապահ և անունով պետք է լինի դաշտապահ։ Եվ երբեք ու երբեք շրջակա սար ու ձորերը պահապանի այնքան կարիք չեն ունեցել, որքան հիմա, որքան այսօր, որքան այս առավոտ։ Նույնիսկ և նույնիսկ մահակը քիչ է՝ այսօր և այսօրն ի հետ դաշտապահ Մոսեն սարերը պետք է գնա հրացանով։ Հա, հա՝ զենքով։

Մոսեն Ֆեռնափայտը շպրտեց, կտրուկ ոտքի ելավ, թափով մտավ տուն (որդու որսորդական հրացանը պատից կախված էր), վերցրեց

հրացանը, կապեց փամփուշտակալը և զոտեպինդ քշեց դուրս։— Էս անիծյալ ագռավը հիմա հայտնվեր...

***

Գյուղեզրին, ասֆալտապատ ճանապարհից դուրս կանգնած ավտոյի շուրջբոլորը, ինչպես մեղրի վրա հավաքված ճանճեր, դզզում էին երեխաները։ Իսկ մեքենայի տերը՝ մի տղա, նորաձև զգեստներով ու երկար մազերով սիրունիկ մի ջահել, ավտոյի ռադիոընդունիչը բացել էր մինչև վերջ և ծորուն մեղեդու տակ օրորվում էր։

Դաշտապահ Մոսեն ոտքը կախ գցեց։ Երեխաները նկատեցի՞ն դաշտապահին։ Երևի՝ նկատեցին, բայց ուշադրություն չեն դարձնում. դե, դաշտապահն է, թող իր գործին գնա։— Երեխաները թաց ջնջոցներով ու եռանդով կպել էին ավտոյին։ Իսկ ղեկի մոտ նստած ջահելը ծխում էր և ծխի քուլաների հետ և ծխաքուլաների նման դանդաղ մեղեդու հետ ճոճվում էր։

— Դրա ձեն կտրե՛։

Ջահելը, դեմքը պարուրած ծխի միջից, նայեց դաշտապահին։

— Կտրե՛ դրա ձեն,— որոտաց դաշտապահը և հերսոտ մոտեցավ։— Իր ավտո՞ն, իր հագուստ-կապո՞ւստ, իր մազե՞րն ու իր ե՞րգ,— հեգնեց Մոսեն,— ու իր ե՞րգն... Ո՞ւմ թոռնիկն ես։

Ջահելը խռոված խաղում էր ղեկի հետ։

— Ո՞ւմ տղան ես։

— Քեզ ի՞նչ պատահեց, քեռի Մոսե։— Ջահելը, դժգոհ, հոնքերը վեր ձգած, դարձավ դաշտապահին։

— Էս էրեխեքին ինչի՞ ես հավաքել ավտոյի գլխին։

— Ե՞ս եմ խնդրել։

— Տուն չունե՞ն, տեղ չունե՞ն, դաս չունե՞ն։

— Կիրակի է,— վրա տվեցին մի կողմ քաշված երեխաները։— Դաս չունենք... Կիրակի է։

— Կիրակի է՝ գնացեք շոլ, գնացեք սարերն, գնացեք... Գնացեք ծաղիկ հավաքելու։ Դուք երեխա չե՞ք. ի՞նչ գործ ունեք սրա հետ։— Եվ հրացանով հրեց ավտոն։— Ձեր ծաղիկն է՞ս է, ձեր սարն է՞ս է, ձեր ձորն է՞ս է, ձեր հանդն է՞ս է, էս երկաթ ու ժեշտի կտո՞րն է ձեր սիրելի ծաղիկն ու ձեր սիրելի աղբյուրն ու ձեր սինձն ու ձեր գոզիկն ու ձեր խաղն ու ձեր սերն ու ձեր ուրախությունն ու ձեր... է՞ս է։— Դաշտապահը գժվել էր. կրակելու պատրաստ հրացանը պահեց ավտոյի գլխին։— Կպիտի առաջին գնդակն էս անզգամի ճակատին բացիմ։

Ավտոն մեկեն պոկվեց— ճղալով ելավ. ասֆալտապատ ճանապարհ և սուրաց դեպի գյուղ։

Իսկ երեխաները շաղ էին եկել և շշկլված նայում էին դաշտապահին, որ հրացան ունի, փամփուշտակալ ունի և հրացանի պես որոտում է՝

— Դե, շո՛ւտ,— կարգադրեց դաշտապահը,— դե, շուտ հավաքվեք ու իմ հետքով էգեք սարերն... Շո՛ւտ։— Խիստ պահանջեց ու քայլեց։

Եվ գնում էր ուսն ի ետ նայելով— երեխաները չե՞ն գալիս։ Մինչև ձորաբերան ոտքը կախ գցելով գնաց։ Երեխաները չկային։ Եվ ձորափին նստեց. դեռ սպասում էր։ Այսօր նա շատ էր ուզում, որ երեխաները՝ բոլորը-բոլորը, գյուղում որքան երեխա կա, բոլորը հավաքվեն-գան-անցնեն ձորն այն կողմ և շաղ գան սար ու ձորերում։ Առավոտ շուտ երեխաները, բարձր դասարանի աշակերտները, ինչո՞ւ էին հավաքվել գյուղի կենտրոնում... ո՞ւր էին գնում։ Զբոսաշրջելո՞ւ։ Խելոք դասատուներ... Այդ խելոքները իրենց աշակերտներին ամեն տեղ կարող են տանել զբոսանքի, բացի շրջակա սարերից։ Այդպես է։ Դաշտապահ Մոսեն հո լավ գիտի. արդեն քանի՞ տարի, երեխաները ոչ քյաթմաթ հավաքելու են գալիս, ոչ սնձի, ոչ գոզիկի, ոչ թթվաշոռի, անգամ... անգամ ծաղկի չեն գալիս... Ոչ երեխաները ցանկություն ունեն ձորն այն կողմ անցնելու, ոչ դասատուներն են խրախուսում։ Թե աշակերտներին դաշտ են տանում՝ դա ծխախոտի դաշտն է— ծխախոտ հավաքելու։ Ամեն սեպտեմբերի նախագահը մի «սեղան» է խոստանում դպրոցի դիրեկտորին, և դիրեկտորը աշակերտներին առած, դասատուներին և աշակերտներին հավաքած քշում է դեպի ծխախոտի դաշտը։ Ծխախոտ հավաքելու։ Այդպես է։ Դաշտապահ Մոսեն հո լավ գիտի. երեխաների ոտքը ծխախոտի դաշտից այն կողմ չի անցնում։

Մոսեն ետ նայեց... երեխաները չէին երևում։ Վազել են ավտոյի ետևից։

— Ես ձեր դաստիարակողի...

Նա հրացանը մեկնեց ծնկներին և շփեց հրացանի փողը։— Հե՛յ գիդի, հա, տարիներ-տարիներ առաջ Մոսեն ավտոմատ ուներ. Մոսեն զինվոր էր և ավտոմատ ուներ... Արաքսի ափին օրն ի բուն քանդում-յուղում-հավաքում էր ավտոմատը, մախորկա էր ծխում և սպասում գետն անցնելու հրամանին։ Նա ծխախոտ վառեց։ Մի տուփ մախորկա լիներ... էդ անտերի մեջ ուրիշ զորություն կար, ծխախոտից ավելի մի բան. մի տեսակ... ինչպե՞ս ասել՝ կարծես ծխելիք չէր, այլ զենքի մաս. ծանր մի բան գրպանդ վար էր քաշում՝ մի տուփ վառոդ կամ գնդակ կամ... ձեռքի ռումբ... էդ անտեր մախորկան զինվորին ավելի էր զինվոր դարձնում... Այ թե՝ մի տուփ լիներ։ Դաշտապահը շփում էր հրացանի փողը,

ծխում էր ու հա շփում հրացանի փողը։ Էն ագռավը ո՞ւր չքվեց... Զարկեր ու շպրտեր գայլերին կեր... Իսկ գայլ որտեղի՞ց... Գայլ էլ չկա։ Գայլերն էլ ոտքները կտրեցին էս խեղճ սարերից։ Մի ժամանակ՝ պատահեր ու մի ոչխար հոտից ետ ընկներ-մոլորվեր ու մնար, ա՜յ, այնտեղ, տեղն ու տեղը գայլի բաժին կդառնար։ որտեղից որտեղ գայլը կծփար-կբզկրտեր ոչխարին և ոսկորները շաղ կտար։ Իսկ հիմա... Հիմա ողջ սարալանջը բզկտված, ոսկորները շաղ եկած ոչխարի նման է։ Հենց այդպես է ու կա։ Այս սարալանջին, բլուր-բլրակների փեշերին մի հոտ ոչխարի համբանքով մեկ արտեր կային, ամեն մեկը իր տիրոջ անունով։ Շեն ու անուշ արտեր՝ անուշ ու թանկ անուններով։ Մի հոտ ոչխարի համբանքով մեկ արտեր՝ քարե ու նախշուն ցանկապատերով, նախշուն քարակուտակներով, թաց շուրթերով, ոլործուն առուներով... Ո՞ւր են արտերը, ո՞ւր են արտերը գրկած ցանկապատերը, ո՞ւր են քարակուտակները, ո՞ւր են առուները... Ոչխարի անհովիվ-անտեր մի հոտ թուփ աշնան մի գիշեր դուրս է մնացել՝ այնտեղ, ձորից այն կողմ՝ սարալանջին և... և գայլերի մի ոհմակ վրա է տվել և բզկտել հոտը։ Մինչև վերջին ոչխարը բզկտել է, և ոսկորները շաղ տվել։ Հենց այդպես է ու կա։

— Մի հատ գել էղներ։— Մոսեն ծխախոտը շպրտեց և հրացանը ձեռքն առավ։— Դրրըմփ։— Կրակեց ձորն այն կողմ և հրացանը նորից լցրեց։ Դրրըմփ... դրրըմփ... դրրըմփ...

Մոսեն կրքոտ կրակում էր ու վռազ լցնում հրացանը, վռազ լցնում ու կրակում ձորն այն կողմ։ Ձորը լցվել էր դմփրդոցով, հեռվում խուլ թավալվում էր արձագանքը, ձորի գլխին երակ-երակ քանդվում էր ծուխը՝ ծավալվում ու ծավալում վառոդի բույրը։ Ինչ անուշ հոտ ունի էս անտերը, Մոսեն երբվանից չէր շնչել բարութի առնական բույրը։ Նորից լցրեց հրացանը, բայց զսպեց իրեն, չկրակեց. շտապ ոտքի ելավ և գնաց(իր կրակածի հետքով։ Հին զինվորը արթնացել-թպրտում էր Մոսեի ներսում. նա շտապում էր— որտեղ գնդակը հասնում է և ետհարված չի գալիս, այդ տարածությունը զինվորը գրավել է. այդ տարածությունը պետք է ոտքով կտրել։ Եվ գործնական, անհամբեր և չահելավարի կրտրեց ձորը։ Նրան թվում էր, թե սարալանջին մի բան... մի բան փոխվեց. հենց կրակոցի հետ ինչ-որ բան փոխվեց այնտեղ։ Եվ երբ ձորից դուրս ելավ, կանգ տվեց ու խուզարկու նայեց։

Աղբյուրը բռնեց Մոսեի հայացքը։ Աչքի՞ն է երևում, թե մարդ կա աղբյուրի քարին նստած։ Եվ գնաց դեպի աղբյուրը։

Դեռ չմոտեցած, անծանոթը կանչեց.

— Բա՛րև, բա՛րև, ախպրացու։

Զայնը դաշտապահին դուր չեկավ։ Քեզ ո՞վ բարևեց, որ քաղցր ա եղբայրաբար պատասխան ես տալիս։

— Համա թե կարգին վախեցրիր, հա՞, ախպրացու։

Միջին տարիքի մեկն էր աղբյուրի քարին նստած, գեմքին՝ քաղցրմեղցր ժպիտ։ Ոնց որ սարդի հյուսած սարդոստայն։ Մոսեն սուր նայեց, և ժպիտը ավելի ծավալվեց, ավելի խճճվեց անծանոթի դեմքին։ Իսկ աչքերի խորքում Մոսեն ժպիտ չտեսավ։ Չկար։

— Էս կողմերում ի՞նչ կա, ախպրացու, որ դու էլ սրսորդական հրացան ես վերցրել։ Մեր մարդ ես... Ես ծերերին շատ եմ հարգում։ Մեր մարդ ես, իզուր քեզ մի չարշարի։

Աստված սիրես, այս ո՞վ է, որ մտերիմ-մտերիմ շատախոսում է և դեռ խորհուրդ է տալիս և... և հերթ չի տալիս, որ Մոսեն հարցուփորձի։

— Ես հրացան ունեմ, բայց ես հոտ էլ ունեմ. ա՛յ, էնտեղ,— անծանոթը ձեռքը մեկնեց դեպի Դժնիձոր։— Ընկերոջս ասի՝ դու կաց, ես գնամ տեսնեմ էն կողմերում ինչ կա-չկա։ Էս կողմերն ավելի լավ է... Ինչ աղբյուր է. անմահական ջուր ունի։ Մենք էլ վերցրել ու մեր վրանը չոր կիրճում ենք խփել։ Տեղափոխվել է պետք։ Նստիր, ախպրացու, ինչո՞ւ ես կանգնել։ Երևում է, մենք շատ կհանդիպենք, կբարեկամանանք։ Մինչև աշուն էս կողմերում ենք։ Աշնանը էլի կիջնենք ղռերը։ Տեսնենք։ Աշուն գա, բարին՝ հետը։ Նստիր։— Եվ հովիվը շարժվեց. ուսկից տեղ բացեց Մոսեի համար։

Շարժվեց և... Մոսեի աչքերը մեկեն կայծկլտացին. մի պահ նրան թվաց, թե աղբյուրի քարը արևոտ է... Բայց քարը փորփրված էր։ Նոր էին փորփրել... Երբեք Մոսեի մտքով չէր անցել, որ աղբյուրի քարը՝ արծաթավուն և գունեղ մամուռներով զարդարուն, որ աղբյուրի քարը, խորքում, այսքան կարմիր է և այսքան փափուկ։ Այդքան կարմիր և այդքան փափուկ։

— Էս ի՞նչ ես արել։— Հայացքը քարի ծուռտիկ ու կարմիր կտրվածքներին, հարցրեց դաշտապահը։

— Հեչ,— ժպտաց հովիվը,— երեխա ժամանակից մնացած սովորություն. որ քարին նստեցի՝ անունս գրում եմ։ Դպրոց կարգին չգնացի, բայց անունս կարգին գրել գիտեմ։ Հերիք է։— Ժպիտը հովվի դեմքից անպակաս էր։

— Քարն ինչի՞ ես նշտարի բերանն առել,— կարմրատակեց Մոսեն։

— Նշտա՞ր... Նշտարն ի՞նչ է, ախպրացու, սրանով եմ փորել։

Դաշտապահը չէր նկատել հովվի գուտին ի կախ գտնակը։

— Տուր տեսնեմ։

Հովիվը տատանվեց։

— Դանակն ինձ տուր,— որոտաց Մոսեն և, անհամբեր, դանակը ինքը պոկեց Հովվի գոտուց, բացեց և հրացանի փողի վրա ջարդեց դանակը ու շպրտեց։

Հովիվը ոտքի էր կանգնել, բայց դեռ փորձում էր ժպտալ։

— Էս կողմերն ինչի՞ ես աղտոտե։

Հովիվը հավ էր կերել, ոսկորները շաղ տվել շուրջբոլորը, իսկ աղբյուրի ակում ձվի կլեպներ էին լողում։

— Մաքրե քու կեղտերն։

Հովիվը անծպտուն կատարեց հրամանը։ Հավաքում էր շաղ տված աղբը և աչքի պոչով հետևում, թե փրփրած դաշտապահը ինչպես է տրորում-փորձում կրունկներով ջնջել քարին փորած իր անունը։

— Քու հավատ...— հայհոյեց Մոսեն։— Էստեղ արի։

Հովիվը կամուկաց մոտեցավ։

— Այ, էս կճեպ նմանապես վերցրու։

Հովիվը մեկնեց ձեռքը, և դաշտապահը ձեռքը տրորեց։

— Էս էլ քեզ խրատ, որ մեկ էլ, մեկ էլ դանակ շառնիս քու ձեռքն ու էս խեղճ քարեր չվիրավորիս։

— Բայց քո արածը մարդկություն չէր, ախպրացու,— բողոքեց Հովիվը, բայց դեռ փորձում էր ժպտալ։— Քեզնից էդպիսի բան սպասելի չէր։— Եվ ուզեց հեռանալ։

— Սպասի։ Քու հոտն ու քու վրանն ու քու ընկերն ո՞ւր են։

— Ասացի՝ էն սարի թիկունքին,— խռով պատասխանեց Հովիվը։

— Էն սարի թիկունքի կիրճն ու էն կիրճի թիկունքի ոարն նմանապես դաշտապահ Մոսեի տիրության տակ են։

Հովիվը զգաց, որ մեծ փորձանքը դեռ առջևում է. այս շորշրուկ ու խելառ ծերունուց ինչ ասես կարելի է սպասել։ Եվ նա ձեռքը դրեց անթատակ, կնճռոտվեց— ցույց տվեց, թե՝ շատ է ցավում։

— Լսեցի՞ր։— խիստ հարցրեց Մոսեն։

— Լսեցի։— Տնքաց Հովիվը։— Լսեցի։— Ցավը ատամների տակ սեղմած, շշնջաց Հովիվը։— Բայց մենք հենց մեր գլխին չենք եկել էս կողմերը։— Հովիվը խոսում էր ի միջի այլոց և կնճռոտվելով. այնպես թե՝ ողջ մտահոգությունը ցաված ձեռքն է։— Մենք իրավունք ունենք։

— Էդ իրավունքն ո՞վ է տվե,— հեգնեց դաշտապահը։

— Ձեր նախագահից թուղթ ունենք։

Մոսեն կարկամեց։ Մի պահ մտածեց, թե ինքը սխալ լսեց։ Բայց ականջներում մրջյունի պես տհաճ խլվլում էր «նախագահը»։ Եվ հրացանը բռունցքներում սեղմած՝ քշեց Հովվի վրա։

— Ի՞նչ ես ուզում, ա՛յ մարդ։— Հովիվը ետ-ետ գնաց։

— Թուղթ։— Կրճտացրեց Մոսեն,— թուղթ,— պահանջեց անհամբեր։

Եվ անհամբեր չանթեց հովվի ձեռքից, բայց չնայեց-չկարդաց՝ ճմռթեց-խցկեց հրացանի փողը և կրակեց։

— Թուղթ... Դե հիմա նոր գնա։ Գնա, ու ես քու հետքից կգամ։ Շուտ-շուտ գնա ու շուտ-շուտ հավաքվեք ու շուտ-շուտ չքվեք։ Մինչ իմ հասնելն ձեր հոտն ու ձեր վրան էդ կողմերում չէղնի։ Թե եղան ու թե տեսա, Հացն ու գինին, տեր կենդանին, քեզ ու քու ընկերոջն ու ձեր հոտն ու ձեր շունն ու ձեր վրան հրացանի բերան կառնիմ։ Դե գնա։

Հովիվը արդեն հեռանում էր, իսկ դաշտապահը չէր հանդարտվում՝

— Շուտ-շուտ գնա։

Ներսը փոթորկվում էր։ Վաղուց այդպես չէր ալեկոծվել Մոսեն։ Անհանգիստ շարժվում էր, հրացանը փոխում ձեռքից ձեռք, նայում էր հովվի ետևից և հայհոյում, նայում էր շուրջբոլորը և հայհոյում, լցված դարձավ գյուղի կողմ և բարձրաձայն հայհոյեց նախագահին. «Քու թուղթ... Հացկատակ շանորդի, դու ո՞վ ես, որ սարն ու ձորը նվիրում ես հովիվներին։ Ո՞վ է քեզ իրավունք տվել։ Նախագա՞հ ես։ Սարերի այսօրվա տե՞րը։ Այս սարերը... սարերը և դաշտապահ Մոսեն հարյուր նախագահ են օտարել, բայց իրենք մնացել միասին, իրար հետ ուս-ուսի։ Այս սարերի տերը դաշտապահ Մոսեն է։ Հա՛, դաշտապահ Մոսեն է։ Եվ Մոսեի տերը այս սարերն են։ Դու կա՞ս, չկա՞ս, փուչ նախագահ։— Քու թուղթ...»։— Հետո հրացանը ուղղեց աղբյուրի քարի փորվածքին, բայց զսպեց իրեն։ Հիմա էլ ինքը պետք է վիրավորի խեղճ քարին։ Եվ անունը ջնջեց քարով։ Ջնջեց-ջնջեց, ապա մի թուռ խոնավ հող բերեց-կապեց քարի վերքը և նորից հրացանը ձեռքն առավ։ Հարկ է շտապել հովվի հետքով։ Ոչ, շտապել պետք չէ՝ թող փասափուսեքը հավաքեն-հեռանան-չքվեն։ Թե չէ... թե չէ, տեսար, Մոսեն չհամբերեց ու... Ո՛չ, Մոսեն մարդասպան չէ, Մոսեն պարզապես հանդապահ է։ Դաշտապահ։ Երեսից ընկած այս սար ու ձորերի, դաշտերի պահապանն է Մոսեն։ Նա ծխախոտ հանեց և էլի հիշեց՝

— Ախ, մի տուփ մախորկա էղներ։

***

Դաշտապահը կանգնեց բլրի գլխին և սրտատրոփ նայեց դեպի կիրճը։— Աստված չանի, տերը չկամենա, թե՝ հոտ երևա, վրան երևա, հովիվներ ու շներ երևան։ Մարաթուկ վկա, Մոսեն էլ չի դիմանա. գլխի որդերը, հա-հա, շարժվում են։ Աչքերը մթնում էին։ Ջնայած հոտ չէր

երևում, բայց այն միտքը, որ կիրճում կարող է հատ լինել, խենթացնում էր։

Իսկ հոտ չկար, վրան չկար, հովիվներ ու շներ չկային։

Դաշտապահը տրորեց աչքերը և արդեն հանգիստ ու հանդարտ նայեց... Ոչ, չկան։ Գնացել են։ Չքվել են։

Եվ հեռվում, դեպի ղռերը իջվարող բլրաշարուկին շարժում նկատեց. քարերը կարծես խլվլում էին։ Հոտն էր։ Գնում էր դեպի ղռերը։ Իր եկած ճանապարհով հեռանում էր։ Այդպես։ Անտեր սարեր են գտել՝ արոտավայր են դարձնում։

Բայց այս ի՞նչ բան է, այս անիծյալները որտեղի՞ց հայտնվեցին։

Հովվի ու հոտի դեմ բռնկված, Մոսեն չէր նկատել, որ կիրճը լցված է ագռավներով։ Ագռավները՝ խումբ-խումբ, գլուխ-գլխի հավաքված, բղկտում էին կիրճում շաղ եկած աղտեղությունը։ Կռնչում էին ու բզկտում։ Կռնչոցով ոլորվում էին կիրճի գլխին և կռնչոցով խուժում։ Եվ կիրճն ու կիրճի երկինքը լցված էր ագռավներով ու կռինչով։ Որտեղ ագռավներն են կռնչում, այնտեղ բարու շունչը հոգեվարքի մեջ է... Չեր գուժկան... Բուում։— Խումբ ագռավներից մի քանիսը թրմփացին՝ երե՞քը, չո՞րսը։— Չեր մահաբեր... Բուում... Հարկ է վրա-վրա կրակել. թե չէ անիծվածները ցվրվում են։ Չեր լեշակեր... Բուում...

Եվ հեռվից, Դժնիձորի կողմից, դաշտապահը լսեց երեխաների արձագանք-կանչը— «Ուռա՜ աաա։— Թուլեքը եկե՞լ են... Մտածում էր, թե ավտոյի պոչից չեն պոկվի։

Ագռավները շաղ էին եկել, ավելի շատ կիրճի երդնքում էին կռընչում, գաշտապահի գլխավերևում։— Արդեն ամեն մեկին հատուկ մի գնդակ է պետք։ Եվ գլխավերևում կռնչացող ագռավներից մեկին նշան բռնեց։— Բուում։ Ագռավը քարի պես իջվարեց, բայց Մոսեն այլևս ուշք չդարձրեց. վռազ դարձավ Դժնիձորի կողմ։ Հետաքրքիր է, երեխաները կարկացին կարձագանքե՞ն։

— Ուռա՜ աա՜ա՜...

— Շան թուլեք։— Դաշտապահը ժպտաց և իջավ դեպի Դժնիձոր, դեպի լողափ։

***

— Օհո՜հոհոո՜ո՜... ծովափ են եկե։

Բոլոր երեխաները լողազգեստներ ունեին՝ գույնզգույն ու ձիգ, ուլերին դասդասված զգեստների կողքին՝ լիմոնադի— լիմոնադի՞, թե գարեջրի լիքը և դատարկ շշեր, փայլփլուն ռադիոընդունիչը զիլ ծղրտում էր

ձորի գլխին, ռադիոընդունիչի վրա՝ մի տուփ ֆիլտրով ծխախոտ և հեռաքրքիրը, ամենահետաքրքիրը հեծանիվներն էին։— Սար ու ձորով քար ու մացառների միջով ինչպե՞ս են վարել... Վարե՞լ են, թե՞ շալակել... Միայն թե՝ «ավտոյով» լինեն, միայն թե՝ ոտքերը գետնից կտրվի։ Ձեր դաստիարակողի... Սրանց մայրերը՝ ուսուցչուհի, մանկապարտեզի վարիչ ու դաստիարակչուհի, բժշկուհի, հաշվապահ ու գանձապահ, վաճառող, ակումբի ու գրադարանի վարիչ և դերասանուհի, և օդաչու, և... տիեզերագնաց... սրանց մայրերը ինչպե՞ս են թույլ տվել, որ իրենց «բալիկները» այս սառը և պղտոր հեղեղաջրում լողանան։— Դաշտապահը կտրեց ռադիոընդունիչի ճնճղոցը և կանչեց՝

— Էրեխեք... Վազքով՝ ինձ մոտ։

Երեխաները խռով նայում էին դաշտապահին, և կանչին ոչ մեկը չենթարկվեց։ Մոսեն կրկնեց կանչը՝ ավելի պահանջկոտ և ավելի զորեղ։

Երեխաները դժկամ շրջապատեցին դաշտապահին։

— Էս ո՞ւմն է։— Հրացանի փողով գլորեց ծխախոտը։

— Բոլորիս... Բոլորիս...

Երեխաները ճակատ էին կազմում։

Դաշտապահը խոժոռ նայեց։

— Թե բոլորինն է, ուրեմն՝ անտեր է։— Եվ ծխախոտը գրեց գրպանը։

— Էս ո՞ւմն է։— Հրացանի փողով հրեց ռադիոընդունիչը։

— Իմն է։— Մեկը շտապեց տեր կանգնել։

— Գու երգ չունի՞ս, տղա, որ էս ժեշտի կտրն ասե ու ընդել ես չոլերն։

Տղան չհասկացավ դաշտապահին, թե՞ պատասխան չէր գտնում։

— Քու հոգու մեջ երգ չկա՞, տղա, որ կանգնիս էս սարի գլխին ու երգես... Ձեր հոգու մեջ երգ չկա՞։— Դաշտապահը բորբոք նայեց երեխաներին և հրացանով նորից հրեց ռադիոընդունիչը։— Էս ո՞վ է, որ ձեզ համար երգ երգի, ձեր փոխարեն ձեր ձորի գլխին, ձեր սարի գլխին երգ երգի։ Ամո՛թ։

Տղաները լուռ էին։

— Էս ի՞նչ է։— Հրացանի փողով խառնեց շշերը։— Էս քաղցր ջուրն ի՞նչ է, որ գեղից շուրի էստեղ շալակե-բերել եք։ Թե ծարավ եք՝ ըմբ,— հրացանը մեկնեց հեղեղատը։— Կա ու չկա քաղցր ջո՞ւր է պետք։ Դուք տղա չե՞ք... Գա ու չկա ավտո՞ է պետք։— Եվ հրացանով ու արհամարհանքով հրեց մոտիկ հեծանիվը։— Ձեր սուաց տակ, ձեր բոբիկ ոտաց տակ հարկ էր որ սար ու ձոր դմփար... Դուք ի՞նչ տղա...

Տղաները լուռ էին, և Մոսեն զգաց, որ «գունդը» հավաքվում է։

— Ձեզնից ո՞վ պարսատիկ ունի։

Տղաները իրար նայեցին և հոնքերի տակից՝ դաշտապահին։

Երևի չգիտեն նաև, թե պարսատիկն ինչ է։

— Դավիթ տղան պարսատիկով վիրու էծ կորսար, գել կորսար, արջ կորսար, Դավիթ տղան պարսատիկով իր սարերի թշնամուն յոթը գազ գետնի տակ կանցկացներ, դուք պարսատիկ անուն լսած չկաք։ Դուք ի՞նչ տղա... Ագռավներն, հա՜ա— հրացանը մեկնեց բլրի կողմ— ձեր աչքերն է կհանին։ Դուք ի՞նչ տղա... Շարվե՛լ։— Հանկարծ որոտաց դաշտապահը։

Երեխաները հասկացան, որ դաշտապահի հրամանը չկատարել չեն կարող։— Հասկացան նաև, որ քար ու մացառների միջով դեպի բլուրն են վազելու։ Բայց բոբի՞կ։

— Թույլ տվեք բարձովկաները հագնենք։— Պահին ու հրացանակիր դաշտապահի կեցվածքին վայել՝ թույլտվություն խնդրեց մեկը։

— Բարձովկա ի՞նչ ասել է։

— Սպորտ-կոշիկները հագնենք։

— Հագնե՛լ։

Եվ երբ երեխաները շարվեցին՝ բոլորը լոդազգեստներով և բոլորը «բարձովկաներով», դաշտապահ Մոսեն հիշեց, է՞, դաշտապահության առաջին օրվա իր գունդը։— Այստեղ, հենց նույն տեղը— սալաքարերին շարված էր գունդը... Ինչքան խեղճ ու ինչ անուշ երեխաներ էին... Ո՞ւր գնացին... Ո՞ւր շաղ եկան... Ոչ մեկը գյուղում չէ, երևի՝ ոչ մեկը։ Սրանք ոչ անոթի են, փառք աստծո, ոչ մերկ, ոչ բոբիկ։ Սրանք, երբ թևեր առան, ո՞ւր են թռչելու։

— Իմ ետևից՝ վազքով դեպի բլուրը։

* * *

Ագռավները նորից իջել էին կիրճը և կիրճն ու կիրճի երկինքը լցրել կռկռոցով։

Կիրճի գլխին շարք կանգնած երեխաներին դաշտապահը ահագին ժամանակ նոր հրաման չէր տալիս։ Թող տեսնեն, թե ագռավները ինչպես են միմյանցից խլխլում աղտեղությունը և ատեն այդ լեշակերներին։

Հետո, հրացանով և գլխաբաց, ձգվեց շարքի առջև։ Նզովյալներ են գրանք։ Ի զարմանս երեխաների, դաշտապահը խոսեց մաքուր գրականով։— Արյունոտ մագիլներ ունեն, չար աչքեր, թունավոր կտուց և գուժկան ձայն։ Որտեղ անշունչ կամ տկար մարմին տեսան՝ մագիլները

խրում են, ում նայեցին՝ նրա ճամփեն օձն է կտրելու, կտուցները ինչին դիպավ՝ ավիրում է. քարը ճաք է տալիս, ջուրը ակունքից կտրվում է, կանաչը չորանում, հողը զրկվում պտղից, որտեղ կռնչացին՝ այնտեղ բարին տկարանում է և չարը՝ զորանում։

Տղաները ուշադիր լսում էին, ոչ մի դասի այդպես լուռ ուշադիր ու համախումբ չէին եղել, ոչ մի դասատուից այդպիսի տարօրինակ բաներ չէին լսել և ոչ մեկի մտքով չէր անցել, թե դաշտապահը կարող է զրուցանով խոսել և այսպես կրքոտ։ Նրանց հայացքի դիմաց դաշտապահն էր, համագյուղացի քեռի Մոսեն էր, Մոսե պապը և նա չէր, այլ՝ որտեղից որտեղ հայտնված մի որսորդ, բարձրահասակ, նիհար և տարիքին անսովոր ձիգ։— Իմ պապը իմաստուն մարդ էր։ (Ով հարյուր տարի և հարյուրն ավելի ապրեց՝ իմաստուն կդառնա)։ Իմ պապը իմաստուն էր և ասում էր՝ ով այդ նզովյալներին հանդուրժում է, նա չարն է հանդուրժում, բարին մերժում է և չարն է հանդուրժում և աշխարհի ու մարդու հանդեպ մեղք է գործում։ Իմ իմաստուն պապն էր ասում։ Եվ ագռավ զարկող մանչերին հատուկ նվեր էր տալիս։

— Կրա՜ակ...

Դաշտապահը կրակեց, և քարերով զինված «գունդը» ոմբակոծեց կիրճը։

— Ուռա՜աա՜...

— Կրա՜ակ...

Սկզբում դաշտապահը իր հրամանի հետ նաև գնդակ էր արձակում։ Բայց այդպես գնդակները չէին հերիքի։ Թող տղաները քարկոծեն, թող տղաները կռվեն։ Եվ կրակում էր մեջ-մեջ. այն ժամանակ, երբ տղաների եռանդը պակասում էր։

— Կրա՜ակ...

Մի դասաժամ, ուղիղ մի դասաժամ դաշտապահը մարտը վարեց՝ կրքոտ ու հին զինվորի հմտությամբ և զինվորական կարգ ու կանոնով։

Երեխաները հոգնել էին, բայց շարունակում էին քարկոծել՝ արգեն կիրճի երկնքում կռկռացող ագռավներին։

Դաշտապահը դադարի հրաման տվեց։

Տղաները հոգնած, բայց ուրախ շրջապատեցին իրենց հրամանատարին և սկսեցին շաղակրատել. ամեն մեկը պնդում էր, որ իր քարից, իր զարկից ագռավ է ընկել և ամեն մեկը վկայակոչում էր քեռի Մոսեին։ Իսկ դաշտապահը, գլուխշարժումով, բոլորի հետ համաձայն էր և հայտարարեց, որ բոլորն էլ անձնուրաց կռվեցին, և ինքը իր գնդից, իր հերոս զինվորներից և մարտի ելքից շատ գոհ է։

— Ամեն մեկիդ՝ մեկ պատատիկ նվեր։— Նրա աչքերից գեռ գինվորն ու հրամանատարն էր նայում՝ խիստ, բայց գոհ։

Հետո նստեց, հրացանը մեկնեց քարի հետ, գլխարկը դրեց և հանեց ծխախոտը։ Երեխաների ֆիլտրով սուրճն էր։ Դաշտապահը շպրտեց և խնդմնդալով հարցրեց՝

— Դրա խեր...

Երեխաները ուրախ ծիծաղեցին։

Եվ, ծխախոտ փաթաթելիս գաստառներին հայհոյեց՝ կեղտոտ-կեղտոտակ և էլի բարբառով։

Քարին նստածը արդեն դաշտապահն էր, քեռի Մոսեն, Մոսե պապը, ճերմակ մազերով, փոտրված ճերմակ բեղով, կնճռոտ ու մոսխոտ ճակատով։

— Էս գիշեր ձեզ համար պարապատիկ կպատրաստեմ։

Տղաները աշխուժացան։

— Ու էգուց կեսօրին, հլմց էս քարի մոտ, կսպասիմ ձեզ։

Մի պահ լռություն էր, և երեխաներից մեկը հիշեց՝

— Բայց էգուց մենք դաս ունենք։

— Ձեր դասի խեր...

Ապա լրջացավ, խիստ նայեց երեխաներին և գտավ նրան, ով պատասխանել էր։

— Տղա, էն դասն... էն դասն, որ էս չոր քարի հետ կապ չունի, էս չոր տարի հետ կապ չունի, էս անտեր հանդ ու չոլի հետ կապ չունի, էն դասն, որ էս լեշակեր ագռավների հետ կապ չունի, էն դասն փոշի է, տղա, էն դասն փոշի է ու փուշ է։

Տղաները լուռ նայում էին։— Ազնիվ խոսք, քեռի Մոսեն, Մոսե պապը հետաքրքիր մարդ է։

— Ես կգամ, քեռի Մոսե։

— Ես էլ կգամ...

— Բոլորդ էլ կգաք։— Առանց նայելու, համոզված տմբտմբացրեց դաշտապահը։— Դե հիմա գնացեք։ Անոթի եք։

Երեխաները վազեցին դեպի լեռափը։

Դաշտապահը խնդուն նայեց։ Տղաները վազում էին թեթև, աշխույժ և հաշտ։ Տղաները դաշտապահ Մոսեի հետևից եկան ակամա, մի տեսակ՝ խառով, իսկ ահա գնում են ուրախ և հաշտ։ Այս քարքարոտ լանջի հետ հաշտ, տարերի հետ, կիրճի հետ, ճանդերի հետ և իր՝ դաշտապահ Մոսեի հետ դաշն։

Բայց գլխարկիցում մի ագռավ զարհուրելի էր տանում։— Հիմա Մոսեն քո կոկորդը կկտրի։— Ցրեց հրացանը և նկատեց, որ գնդակը վերջին

էր։— Հարկավոր է որդուն ասել, որ գնդակներ բերի, գնդակներ, պատյաններ և մանրագնդակներ։ Շատ։ Հիմա Մոսեն քո կոկորդը...— բարձրացրեց հրացանը, բայց միտքը փոխեց,— ոչ, այս վերջինը Մոսեն չի կրակի։

— Ես զինվորն զինվոր չէ, որ վերջին գնդակն իր համար չի պահիս։

ՄԵՂԱՊԱՐԵՑԻ

1

Իրիկնապահ էր, երբ Տիգրանը ընդունեց հերթապահությունը։ Սովորությամբ, նախ հրացանը ստուգեց՝ Վասիլին նորից լցրել էր։ Չես հասկանում այս մարդուն, հազար անգամ ասել է, որ դրա կարիքը չկա։ Եթե կրակելու պետք լինի, որպես թե՝ դժվար է լցնել։ Եվ գնդակները հանեցրեց գրպանը։— Յոթը ամիս է պահակ է, բայց կրակելու ափթ չի եղել, յոթը տարի էլ մնա, այդպիսի տհաճ պատահություն չի հայտնվի. ո՞ր հիմարի, ո՞ր խենթի մտքով կանցնի կողոպտել ուժանակի պահեստները։ Ուժանակ... Պարզապես պետք է ուշադիր լինել, որ երեխաները մոտերքում կրակ չվառեն։ Երբեմն նաև փողոցները մաքրողներն են ակտիվանում. քաղաքի աղբը թողած, հասնում են այս արվարձանների չոր տերևները այրելու։ Նա ստուգեց նաև պահակատան հեռախոսը։ Աշխատում էր։ Հետո հրացանը ուսեց ու, երկաթակված, պահակատնից դուրս եկավ, ապա երկաթյա դարբասից դուրս եկավ, կողպեց դարբասը և քայլեց աղյուսաշար պարիսպն ի հետ։ Ուժանակի պահեստների շուրջբոլորը քաշված ցանկապատի հետ պտույտ գործեց և նորից կանգնեց դարբասի մոտ։ Կասկածելի ոչինչ չկար։ Եվ հանելին այդ դարբասի մայթն էր՝ ջահել կեչիների շարքով ու արևոտ։

Եվ ծխելով սկսեց վերուվար անել։

Փողոցը խաղաղ էր։

Այդ փողոցով ո՞չ տրամվայի գիծ էր անցնում, ո՞չ տրոլեյբուսի, ո՞չ երթուղային ավտոբուս։ Արվարձանի այդ փողոցի երկու կողմերում միայն պահեստներն էին և մայթերի հետ ձգվող աղյուսե պարիսպները՝ երկաթյա դարբասներով։

Իրիկնապահ էր. պահեստներում աբգին դադարել էր ելումուտը։

Դիմացի մայթին բարձրահասակ ու չորշրուկ մի մարդ հայտնվեց։ Մարդը քայլում էր ձեռքերը հետևը դրած, ձնառը կրծքին սեղմած և սևե-

ռուն հայացքը մայթին։ Չգիտես ինչու, Տիգրանը փորձեց որոշել, թե այդ մարդը ինչացո՞ւ է, ով կլինի։ Տնտղեց և կարգեց հաշվապահ— պահեստներից մեկի հաշվապահն է։

Հետո մի դարբաս ճռնչաց, մի գնդիկ աշխույժ դուրս պրծավ և շուրջբոլորը նայելով շտապեց։ Դարբասի մոտ կանգնած պահակը հարգանք-հայացքով ուղեկցում էր նրան, և Տիգրանը որոշեց, թե խլվլան գլխով այդ գնդիկը պահեստապետն է և, դուրս գալուց առաջ, մի բաժակ հյուրասիրել է պահակին։

Հետո նա ժպտաց իր խաղի վրա, պարապությունն ինչ խաղի մեջ առես կքաշի մարդու։ Սակայն խաղը նրան դուր էր եկել։— Էլի ո՞վ կհայտնվի։

Դիմացի մայթին ճմռթված վերնաշապիկով մի ջահել երևաց։ Եվ գնում էր ոչ թե փողոցն ի վեր, դեպի քաղաք, այլ քաղաքից էր գալիս և ուղղություն էր վերցրել դեպի մթերապահեստները։ Քայլում էր կամուկաց, մի երկու անգամ փորձեց ետ դառնալ, բայց ձեռքը թափ տվեց ու շարունակեց։ Տիգրանը երկար տվեց-առավ և վերջը որոշեց, որ ջահելը մթերապահեստի պահակի որդին է... Չնայած պահակի որդին կարող էր լինել նաև ինժեներ— ահա՝ իր որդին։ բայց դա պահակի որդին էր։

Հետո մի կին հայտնվեց։ Հնամաշ պայուսակ ուներ և, ժամանակից շուտ, հագել էր ռետինե երկարաճիտք կոշիկներ։ Տիգրանը տեղն ու տեղը գտավ՝ կինը պահեստներից մեկի հավաքարարն է։

Այնուհետև ահագին ժամանակ փողոցում ոչ ոք չերևաց։

Իսկ Տիգրանը սպասում էր։

Հրացանն ուսած քայլում էր դարբասի արևոտ մայթով և սպասում։ Փողոցն ի վեր-ի վար թե մարդ երևար՝ նա հեռվից կնկատեր, իսկ հանկարծակի կարող էր հայտնվել միայն դիմացի մայթի հետ ձգվող պարքսպի անկյունից՝ պահեստների փողոցին ուղղահայաց նեղլիկ փողոցից։ Եվ նա շուտ-շուտ նայում էր պարսպի անկյունադարձին։ Երբ պարսպի ուղղությամբ էր քայլում՝ աչքը անկյունադարձին էր, իսկ երբ ետ էր դառնում՝ ուսն ի ետ շուտ-շուտ աչք էր դիպցնում։

Իսկ մարդը ուշանում էր։

Եվ այնքան նայեց, որ մի պահ նրան թվաց, թե, իրոք, պայմանավորված է։ Իսկ երբ խաբկանքն անցավ, նա մտածեց. այնուամենայնիվ, մի մարդ այդ փողոցով գալիս է։ Ճամփա է ընկել և գալիս է։ Բայց ինչո՞ւ է ուշանում։ Արդեն նեղսրտում էր և ուզեց անցնել դիմացի մայթը ու հենց պարսպի անկյունադարձից նայել... Եվ այդ պահին հայտնվեց մարդը։

Կիսատ քայլի վրա Տիգրանը դայթեց։ Եվ, մի պահ, մարդը երևաց

խճճված— կի՞ն էր, տղամա՞րդ էր, ծե՞ր էր, թե ջահել— մի պահ, և Տիգրանը տեսավ... տեսավ Մգրե ծերունուն... Տեսավ և ցավոտ ու տհաճ մի ալիք կրծքի տակ գալարվեց, կատաղի ծեփվեց պատեպատ, ճնշեց քունքերը, և մշուշված աչքերի դիմաց պոռթկաց տեսիլքը— սար ու ձորերում թավալվող ծուխ, ծխի մեջ խեղդվող բոցեր, ճարճատյուն, կրակոց-տրաքոց, վայրի քրքիջ, բոցերի բերան ընկած ճիչ ու ծղրտոց, վայրի քրքիջ և ծխով փաթաթված, բոցերով պարուրված, ճիչ ու ծղրտոցի միջով և վայրի քրքիջի տակ գալիս էր ծերունի Մգրեն...

Տիգրանը տրորեց աչքերը և էլի նայեց։

Ծերունին՝ նիհար, խամրած գդակով, ձեռքերը խամրած պիջակի գրպանները խրած և ուսերը հավաք, անծանոթ ու մոլոր, խճճվել էր մայթին. շփոթ քայլ էր անում աջ ու ձախ և կտրակցոն հայացք էր նետում իր կողմ։— Այո, մգրեներից մեկն է... ծերունի Մգրեն է։ Եվ տաքացած կոպերի տակ ծավալվեց ու անշարժացավ՝ գյուղը, Քարագլուխ գյուղը, հողե տանիքներով, խղճուկ տները, գյուղեզրին՝ Մգրե ծերունու խրճիթը, խրճիթի ձմռան գիշերը, խրճիթի պատին պլպլացող ճրագը, ճրագի ու ծխախոտի ծխի մեջ հողե հատակին խոնարհ ու գլուխկախ նստոտած մարդիկ, կենտրոնում՝ Մգրե ծերունին և ինքը՝ թիկունքը խրճիթի պատին... Իրեն տեսավ ջահել, Տիգրանն իրեն տեսավ ջահել, ինչպես այն ժամանակ, իսկ Մգրեին՝ նույնը. ծերունին խրճիթի կենտրոնում հակված պատմում էր, պատմում էր, պատմում էր...

Տիգրանը շուռ եկավ՝ թիկունք արեց, բայց շրջվելիս նորից աչք դիպցրեց դիմացի մայթին մոլորված ծերունուն։ Այո՝ մգրեներից մեկն է... Ք՞ո Մգրե հերն անիծած... Որտեղի՞ց հայտնվեց... պատմում էր, պատմում էր... Տեսիլք-պատմության ավերակ բույնը ծերունի Մգրեի խրճիթն էր, և Մգրեն՝ պատմության ջարդված կարասը։ Անծեի պատերով, դատարկ և անթոնիր իր քողտիկի կենտրոնում փլված, աչքերը մարած օջախներ, ականջները ողբ ու կականով լցված և շուրթերին արյուն ու ծխով շաղված պատմություններ։ Պատմում էր, պատմում էր, պատմում էր... խրճիթը լցվում էր ծխով. բոլոր ունկնդիրները ծխողներ էին, բոլորը՝ ավեր էրգրից, բոլորն այրված գյուղեր էին թողել, մարած օջախներ. սար ու ձորերում՝ անթաղ նահատակներ, բոլորը հինգ տարի (մինչ այդ նոր բնակատեղին), հինգ տարի անկտուր, անկրակ թափառականներ էին եղել, և ոչ մեկի համար պատմությունը նորություն չէր, բայց լսում էին, ամեն մեկը նույնը կարող էր պատմել, բայց բոլորի փոխարեն պատմում էր նա՝ Մգրե ծերունին։ Պատմում էր, պատմում էր, պատմում էր— ոչ ոք չէր միջամտում— ծերունի Մգրեն ամեն ինչ հիշում էր, ոչ ոք չէր ընդմիջում. ի՞նչ պետք է ավելացներ, ոչ ոք

լաց չէր լինում, ոչ ոք չէր տնքում, լուռ, լուռ, ձիթի տակ խոնարհված, ինչպես ծերունի Մգրեն և նրա պես ծեր։ Մեծ ու փոքր չկար, բոլորը ծերեր էին։ Այդ խրճիթում, այդ գիշերներին, երեխան էլ ծերունի Մգրեի տարիքն ուներ. երիտասարդն էլ և ինքն էլ, որ այն ժամանակ ջահել էր։ Բոլորն էլ նույն կյանքն էին տեսել— ապրել և նույն տարիքն ունեին։ Եվ այդ կյանքի մասին պատմում էր մեկը՝ ծերունի Մգրեն։ Պատմում էր, պատմում էր... Տիգրանը ոտքը կախ գցեց. նա համոզված էր, որ մայթին մոլոր կանգնածը մգրեներից մեկն է։ Որտեղի՞ց հայտնվեց այդ խեղճը։ Ուսն ի ետ նայեց՝ ուզեց կանչել։ Պատմում էր, պատմում էր... Հուշը շարունակվում էր ներսում— աշունքվանից-գարուն՝ ամեն օր, երկար ձմռան երկար գիշերներին պատմում էր, պատմում էր... Եվ հանկարծ կտուրի ձյունը ճռճռում էր, և կտուրին... կտուրին... ուզում էր ձայն տալ-կանչել, բայց դեմքը կտրուկ թեքեց— հերն էլ անիծած—... կտուրի ձյունը ճռճռում էր— լրտես մի ականջ կպչում էր երդիկի շրթին, և Մգրեն ծերունին գլուխկախ լռում էր...— Տիգրանը հրացանի ուսափոկը սեղմեց բռում— ձեր հերն անիծած— ձգվեց և քայլեց՝ ինչպես հրացանի տակ առած գերի։

Գնալով լարվում էր։

Եվ առանց նայելու տեսավ, որ ծերունին կտրում է փողոցը։ Ահա՝ ոտք դրեց իր մայթին։ Պարանոցին, կարծես, սառը մի պապուկ թրմփաց— տհաճ մի դող սողաց թիկունքին, ողնաշարն ի վար, և նա զգաց, որ դա ծերունու հայացքն էր։ Ահա՝ հայացքով թիկունքից կառչած, հետքը բռնած գալիս է։ Եվ, ինչպես հեռվի հրդեհից քամու փախցրած բոցերի թերթեր, աչք ու ճակատին շպրտվեցին անցած տհաճ պատմությունների հորձանքից պոկված պատառիկներ՝ անմիտ և մութ և դաժան, նաև՝ ծռմռված ու աղավաղված գիմքեր և որտեղից-որտեղ՝ Քարագլուխ գյուղից. լրտեսող աչք ու ականջով բռնված երդիկից սկսած մինչև, է՞, մութ ու խոնավ անտառները։— Ձեր հերն անիծած... Այս հիմար ծերունին որտեղի՞ց հայտնվեց ու բորբոքեց ցավերը... Թող աչքից հեռանա։— Տիգրանը կտրուկ շուռ եկավ, և ծերունին ընդհեց, ինչպես թափառիկ շուն՝ շփոթված ու հարվածի սպասող։— Այո, այո, սա մգրեներից է... Ծերունի Մգրեն է։ Տիգրանը կախեց գլուխը։ Աշնուամենայնիվ, թող իր բանին գնա։ Եվ որոշեց գնալ-փակվել պահակատնում։ Բայց ամեն ոտքի տեղը զգաց, որ թիկունքից հառչած խեղճ հայացքի տակից պոկվողը չէ։ Եվ, դարբասի մոտ, ինքն իրեն խաբող մի քայլ արեց— հիմա կբացի դարբասը և, այդ Մգրեի քթի տակ, ճռնչալով կփակի ներսից, կփակվի պահականոցում և կհիշի իմացած հեքիաթներից մեկը։ Իսկ այդ Մգրեն ուր ուզում է թող գնա։ Դեպի դարբասը մի քայլ արեց և առանց

նայելու տեսավ, որ ծերունու քայլերը խառնվեցին։— Քո խեղճ ու կրակ հերն անիծած։— Եվ հրացանի ուսափոկը ձգած՝ լարված քայլեց։ Արդեն լսում էր ծերունու ոտքերի քստքստացը, և ծոծրակ ու պարանոցին բռնբռնվում ու մարում էր նրա պեծպեծ հայացքը։ Եթե շուտ գա՝ կտեսնի Մգրեի ճպճպացող աչքերը... Կհասնի պարսպի վերջը, ետ կդառնա-կնայի... Հերն անիծած, ինչպես դիջերվա խավարում լուսարձակից կուրացած նապաստակ, քշվում է այս խեզճի հայացքի տակ և հիմա, կախարդված, պիտի դառնա ու ընկնի գիրկը։ Եվ պարսպի հետ թեքվեց... Թեքվեց և զգաց, որ ծերունու քայլերը նորից շփոթվեցին։ Թող հույսը կտրի— գնա իր բանին։ Բայց համոզված էր, որ այդ Մգրեն իր հեռքը թողնողը չէ, և իրենք աչք-աչքի հանդիպելու են։

***

Պարսպի անկյունադարձից երբ հրացանակիր պահակը թեքվեց-ծրարվեց ծերունու աչքից, փողոցը մեկեն օտարացավ։ Պահ առաջ փողոցը գտածուրիկ էր՝ քաղաքի ամենախաղաղ փողոցն էր, և մայթը՝ ամենաարևոտը։ Այս քաղաքը ոտք դնելու օրից նա այսպիսի մի փողոց էր որոնում։ Եվ այս մտերմիկ մայթը։

Երբ փողոց մտավ, և հայացքը դիպավ հրացանակիր պահակին, մանկության մի հուշ պոկվեց նրանից։ Ինչպես մեկեն ու մթասին կատարվեց՝ փողոցը-մարդը-հուշը (կարծես ոտքի տակից թռած ծիտ), որ ծերունին գլխապտույտ ունեցավ։ Եվ գլխապտույտի մեջ նա հիշեց. Էրզրի գյուղ, փողոց, փողոցով ծփացող ութ-ինը տարեկան մի տղա (որ ինքն էր) և ցածրիկ տան անկյունից հայտնված զորնդեղ ու զորեղ բեղերով մարդը։ Հուշի հետ երբ գլխապտույտը անցավ, ծերունին նայեց դիմացի մայթի հրացանակիր պահակին։ Զգաստ կեցվածքը, բեղերը... փալաբեղը... Որքան նման է։ Կա ու չկա՝ Էրզրացի է։ Ուզեց փողոցը կտրել-գնալ դեպի պահակը, բայց կաշկանդվեց. հրացանակիր պահակը այնպես ձիգ ու զգաստ էր կանգնած և նայում էր տարօրինակ։ Փողոցի դատարկությունը նույնպես շփոթեցրեց։ Ինսովոր բանքաղաք, դատարկ ու լուռ փողոց, մայթերի հետ ձգվող խորհրդավոր պարիսպներ և հրացանակիր պահակ։ Գուցե ընդհանրապե՞ս այս փողոց մուտք գործելն արգելված է։ Եվ ոչ կարող էր ետ դառնալ— Էրզրացին ձգում էր— և ոչ կարող էր գնալ դեպի նա— հրացանակիր պահակը կաշկանդում էր։ Իսկ երբ պահակը շրջվեց, և ծերունու հայացքը դիպավ նրա մտախոհ ու ծանրաբեռն թիկունքին, նա արդեն կասկած

չուներ, որ պահակը էրգրացի է։ Եվ զգույշ ու մանրիկ կտրեց փողոցն ու բռնեց հետքը։

Եվ հիմա, երբ էրգրացին ցանկապատի հետ թեքվեց-անհայտացավ, դատարկ փողոցի օտար և սառը շունչը մեկեն փաթաթվեց ծերունուն։ Նա շփոթված նայեց շուրջբոլորը, ապա փութկոտ հասավ, պարսպի անկյունադարձից նայեց, և հուզմունքից աչքերը տաքացան։ Ահա՝ էրգրացին... Հա՛, հա՛, էրգրացի է, ուրիշ ոչ մեկը, հրացանակիր պահակը էրգրացի է, էրգրացի... Եվ հրացանը... հրացանը որքան վայելում է։ Մտքում չերմ խոսքեր ասաց բարձրահասակ ու թիկնեղ էրգրացուն և գնաց ետևից։ Իրիկնապահի արևը խաղում էր մոսինի սվինին. սվինը մի շողք անդրադարձրեց, բոցեղեն շողքը թռավ դեպի ծերունին, և նա կանգ առավ։ Վերջիվերջո, պահակ է, թող իր գործն անի. ահա՝ կհասնի պատաշարի վերջը, պատաշարի հետ կթեքվի և մյուս՝ դեպի փոզոցը թեքվող պատաշարի հետ նորից դուրս կգա փողոց։ Ավելի լավ է սպասել մայթին, հենց՝ դարբասի մոտ. պահակը... էրգրացին ուր էլ գնա, որ կողմից էլ հայտնվի, դարբասի մոտ է գալու։ Եվ դեմդիմաց կհանդիպեն, աչք-աչքի կդիպնի և... կճանաչեն իրար։ Հա՛, հա՛, կասկած չկա՝ նա է, էրգրացի է։— Ծառի տակ կանգնած նա էլի հիշեց էրգրի գյուղի զորնդեղ ծերունուն և, ինչպես այն ժամանակ, է՛, այն օրը, երբ վազքի մեջ շփոթվեց ու կորցրեց համագյուղացի հսկա ծերունու անունը, չհիշեց նաև քիչ առաջ հայտնված հուշի մեջ և չհիշեց հիմա։ Իսկ պահակ-էրգրացու անունը ի՞նչ կլինի... Եվ ինչպե՞ս է հասել այս քաղաքը՝ աշխարհի ծայրը... Քշած կլինեն... Քաշ տված կլինեն, ինչպես իրեն. որդին բերած կլինի կամ՝ թոռը... թոռը։ Կամ, ով գիտի, հայի բախտ, հայի ճակատագիր, հայի...

«Մարաթուկ վկա, աստծու ողորմությունն է... Հա՛, աստվածն է ուղարկե, որ ես մենակ չմնամ»։— Ծերունին հուզմունքից դողաց. պարսպի անկյունից հայտնվեց պահակը։ Տես որ, աչք դիպցրեց՝ տեսավ... Տեսավ և մոտենում է։ Հայացքը չէր կտրում պահակի հակված դեմքից։ Ահա-ահա՝ կբարձրացնի գլուխը, կնայի... կնայի, ու կգրկվեն։ Նա արդեն ժպտում էր և պատրաստ փաթաթվելու։ Հենց նայեց՝ ընկնելու է գիրկը։ Պահակը արդեն շատ մոտ էր։ Ահա-ահա՝ կհավասարվեն... Բայց ինչո՞ւ չի նայում։— Հայացքով ավելի պինդ կառչեց պահակի ծրարված կոպերից։ Մեկ քայլ— շունչը կտրվում էր— երկու քայլ— դեմքին զգաց նաև պահակի տաք շունչը— երեք քայլ— ծերունու շունչը կտրվում էր, և երբ պահակի հրացանն ու թիկունքը մնացին հայացքի տակ, նա խորը տնքաց.

— Օ՞ֆ-օ՞ֆ, մերիկ...

***

Այնպես խորքից տնքաց՝ քակվելով, երգեցիկ և այնպես հարազատ հնչեց՝ ջերմ բարևի պես, մտերմիկ խոսքի պես, հին երգի հանգվույն, որ Տիգրանի սիրտը թպրտաց։ Երբվանի՞ց չէր լսել։ Նա մտքում կրկնեց. «օ՛ֆ-օ՛ֆ, մերիկ»։ Բայց լսածն ուրիշ էր. ծերունու վիրավոր ու տաք շունչը սրտի պես տրոփում էր ներսում։— Ձեր անմեռ ցավի հերն անիծած։— Նա ուզեց շուռ գալ-կանչել էրգրացուն, բայց նրան արդեն իր կողքին էր զգում. հին մի պատմություն էին սկսել, ավարտեցին տնքալով և հիմա կողք-կողքի, գլուխկախ, քայլում են։ Այնուամենայնիվ, պարսպի անկյունադարձից նայեց։ Ծառի տակ կուչ եկած փոքրիկ մի ծերունի՝ ձեռքերը պիջակի գրպանները խրած, ուսերը հավաք, գլուխը տմբտմացնում էր և ինքն իրեն խոսում։ Խոսո՞ւմ էր, թե՞ դնդնում։

Տիգրանը երբ էլի մի պտույտ գործեց և նորից կանգնեց մայթին, ծերունին նստած էր դարբասամերձ փոքրիկ նստարանին, խոնարհվել էր ծնկներին և գլուխն առել ափերի մեջ։— Մգրեն է ու կա։— Եվ հեռվից, շատ հեռվից տաք մի հնչյուն պարուրեց նրան։ Մի պահ թվաց, թե դա ծերունու տնքոցն է. «օ՛ֆ-օ՛ֆ, մերիկ»,— որ այդպես երգահանգ, տաք հնչում է ներսում ու ծավալվում, բայց ինչ հաճելի էր ականջին, ուրիշ էր։ Եվ կամաց ու անշշուկ գնաց դեպի ծերունին։ Երգը մոտենում էր... Նա էր երգում. «Խուլնգո, խուլնգո»,— այսինքն. «Կռունկ, կռունկ, հեռավոր ու խորունկ տեղերեն կուգաս»,— ծնկներին հենված, գլուխն ափերի մեջ, երգում էր ծերունին. «Խուլնգո, խուլնգո, բույնդ շինիր ավերակ բերդի պարիսպների մոտ»։— Երգում էր ու երգի հետ օրորվում։

Ավարտեց երգը և, դեռ երգի հետ երերուն, նայեց դիմացը կանգնած պահակ-էրգրացուն և ցավով տմբտմբացրեց,— ըբը,— կարծես անցած-գնացած մի պատմություն էր սկսել էրգրացու համար, ահա՝ ավարտեց,— ըբը,— այսպես ու այսպես եղավ։

✝ Մեջ Սասնո աշխարհին իմ հոր նման երգ կապող ու երգող չկար։ Իմ օղորմածիկ հերն խաղասաց էր։ Մուշից կելնեն-կհասնեն իմ հոր մոտ, Վանից կելնեն-կհասնեն իմ հոր մոտ, Բուլանուխից, Խնուսից, Մոկսից, Ալաշկերտից, Կողպից, է՞, հեռու-հեռու աշխարհներից կելնեն-կհասնեն իմ հոր մոտ՝ հայ, քուրդ, ասորի, ու իմ հերն խաղ կկապեր ու իմ հերն կերգեր ու կսովորեցներ ու երգով ճամփու կդներ մարդկանց։ Ու էս երգն՝ «Խուլնգոն» կապեց քրդերեն։ Դիմացը կանգնած հրացանակիր պահակը բերան չէր բացում, արձագանք չէր տալիս, և ծերունին մի պահ կասկածեց՝ կարո՞ղ է էրգրացի չէ... Ո՞չ, ո՞չ, կասկած չկա... Եվ էլի շարունակեց։— Ուրեմն, այդ երգը, «Խուլնգոն», հորինեց քրդե-

բեն։ Եվ ոչ միայն դա, հայրը քրդերեն երգեր էր հորինում սիրուց վիրավոր հոտաղ մի քրդի մասին, Շեկո տան ասպետ թոռունների մասին և՝ ի սեր բարեկամության, և՝ ի հույս միասնության, որ հայն ու եզդինքուրդը նույն հողի վրա ապրեն հաշտ ու խաղաղ, ուս-ուսի։ Եվ որովհետև Տարոն աշխարհում բոլոր հայերը քրդերին գիտեին, իսկ բոլոր քրդերը հայերին չգիտեին, հայրը շատ երգեր հորինում էր քրդերեն։ Նա՝ բնության երգեր և հային, և քրդին հարազատ։— Բարանե, բարանե հուրկ,— այսինքն անձրև, մանրահատիկ անձրև, մաղմղիր դաշտերի վրա, մաղմղիր ձորերի վրա, մաղմղիր սարերին, անտառներին մաղմղիր, մանրահատիկ անձրև, դու մաղվիր որպես մանանա... Որպես օրինակ երգեց և էլի կասկածոտ հայացք նետեց դիմացը լուռ կանգնած հրացանակիր պահակին։

— Նստիր, էրգրացի, ինչո՞ւ ես ոտքի վրա։

Եվ երբ պահակը նստեց կողքին, նա հանգիստ շունչ քաշեց, շոյեց էրգրացու ծունկը և բռունցքով տրորեց աչքերը։

— Մեկ-մեկ կպատահի, իմ աչքերն իրենց-իրենց կլցվին։— Եվ երեխայի պես աչքերը տրորելով և շունչը ղռատացնելով՝ թեքվեց դեպի էրգրացին։— Ուրեմն, հայրը «Խուլնգոն» նույնպես կապեց քրդերեն։ Հորինեց՝ տվեց հայ ու քրդին և՝ վերջում, ի՞նչ եղավ. երգը դարձավ վեճի առարկա։ Ահա թե ինչպես. գյուղում (ոչ էրգրի) իր հարևանը քուրդ Մրազն էր, կտուր-կտուրի կպած։ Եվ ամեն երեկո, դռանը նստած, երբ ինքը երգում էր «Խուլնգոն», քուրդ Մրազը շարունակում էր, հենց ինքը ավարտում էր երգը, Մրազն էր սկսում։ Երգելը՝ երգել, հալալ լինի, հայրը հորինել է, որ և՛ հայը երգի, և՛ քուրդը, բայց ցավն այն է, որ քուրդ Մրազը երգում էր ու, դեռ երգը չավարտած, կանչում. «Հակե, բրե մըն»,— այսինքն, իմ ախպեր, նեղանաս-չնեղանաս, «Խուլնգոն» իմ հոր երգն է։— Դե եկ ու դիմացիր։ Եվ՝ հաղթեց, ցավն էլ այն է, որ քուրդ Մրազը հաղթեց։ Հաղթեց և ինչպես հաղթեց. «Խուլնգոն» սովորեցրեց իր որդուն, սովորեցրեց իր մյուս որդուն, սովորեցրեց մյուս ու մյուս որդիներին, և որդիները սովորեցրին իրենց որդիներին և, այսպես, հիմա ամեն մեկը մի սարի գլխի կանգնած երգում է. «Խուլնգո, խուլնգո, բույնըդ չինիր ավերակ բերդի պարիսպների մոտ»։— Մրազի որդիներն ու թոռները սարերի գլխին կանգնած երգում են իր հոր երգը, իսկ ինքը, Հակեն, երկու որդի զոհ տվեց Մեծ հայրենականին, մի աղջիկ ուներ, որ ամուսնացավ— գնաց (և աղջիկները «Խուլնգոն» երգո՞ղ են), մի որդի ուներ, որ վթարի ենթարկվեց և խելքը քամուն տված մի թոռ ունի, թաք մի թոռնիկ, որ հալևոր պապին քաշեց-հասցրեց այստեղ՝ աշխարհի ծայրը։ Ահա։

— Էս իմ պատմությունն, էրգրացի։— Ծերունին ձեռքը դրեց Տիգրանի ծնկին։— Իմ անունն, ուրեմն, Հակե է։ Դե դու էլ քո անունն բախշե քու էրգրացուն ու ասա՝ քե՞զ որ քամին է քշե-հասցրե հոս։

* * *

Եվ ամեն անգամ, երբ Տիգրանը հերթափոխի էր գալիս, Հակեն արդեն դարբասի մոտ սպասում էր՝ ձեռքերը պիջակի գրպանները խրած, ուսերը հավաք և խոնավ աչքերում՝ լացի պես ժպիտ և ժպիտի պես լաց։

— Դու իմ էրգիրն ես։— Երեխայի պես քսմսվում էր Տիգրանին։— Դու իմ էրգիրն-ես, Տիգրան։— Երեխայի պես բռունցքներով տրորում էր աչքերը։— Քազաքն օտար, քաղքի լեզուն ու մարդիկն օտար, փողոցն օտար ու տունն օտար ու հարսն օտար, թոռնիկն իր խելքը կնոջ ու գինու տված ու անծանոթ ու տան մանրիկ երեխեքի լեզուն օտար ու անծանոթ... Դու իմ էրգիրն ես,— ասում էր Տիգրանին։— Քու կողքին՝ ինչպես Էրգրի «Կռունկի աչք», աղբյուրի կողքին հով ու զով է, ու իմ շունչ կբացվի, հըմը կհեռանաս՝ իմ աչքերն կմթնդին, ու իմ շունչն կկտրվի։ Դու իմ էրգիրն ես, Տիգրան։

Եվ Տիգրանը գիտե, որ Հակեն շաղակրատ չէ։

Այդ օրը, երբ Տիգրանը եկավ, Հակեն ու Վասիլին դարբասի մոտ կողք-կողքի նստած էին։ Վասիլին խնդմնդալով ինչ-որ բան էր ասում, իսկ Հակեն՝ ձեռքերը ծնկներին, թիկունքը աղյուսե պատին, զգաստ, ծիգ ու լարված լսում էր և, հարձագանք, մեկ-մեկ գլուխը կտրուկ շարժում,— դա՛... դա՛...

Տիգրանը վիրավորվեց։ Եվ, դեռ չմոտեցած, ձայն տվեց՝

— Վերջ տուր հիմարություններիդ, Վասյա։

Վասիլին քահ-քահ ծիծաղեց.

— Ինչ ասում եմ, ասում է՝ դա, հայհոյում եմ, ասում է՝ դա։

Իսկ Հակեն խնդուն տաքի ելավ և ձեռքերը խրեց գրպանները։

Հենց դարբասի մոտ էլ Վասիլին հրացանը հանձնեց Տիգրանին և ծիծաղելով գնաց։

— Վասիլիի կողքին՝ քանց փշի վրա նստած, Տիգրան։— Գանգատվեց Հակեն։— Ախր, լեզուն չեմ հասկանա։

Եվ կողք-կողքի տեղավորվեցին դարբասամերձ նստարանին։

— Օխա՜սաշ,— հակվեց ծնկներին և գլուխն առավ ափերի մեջ։— Օ՜ֆ-օ՜ֆ, մերիկ... Վասիլին, ախր, հայերեն չգիտի։ Ո՜չ հայերեն, ո՜չ քրդերեն։ Թե իմանա՜ր... Հայ հո՜յ, էնքան հարցեր տայ ու էնպես բա-

ներ ասել՝ քրտինք տար ճակատին... Կհիշի՞ս ռուս սալդատների մուտքն Մուշ քաղաք, Տիգրան։

— Կհիշիմ։— Տիգրանը անձեռոցիկով փաթաթված հաց ու երշիկ մեկնեց։— Դու կեր, ես մեկ պտույտ անիմ ու գամ։

Ինչպես միշտ, Հակեն էլի հրաժարվեց հացից։ Եվ Տիգրանի հետ ոտքի ելավ ու նրա հետքով քայլեց պարսպի հետ։ Նրան դուր էր գալիս նայել հրացանակիր էրգրացու թիկունքին։— Հե՜յ գիդի, հաա՜, այն ժամանակ էր պետք հրացանը, կոտորումի ժամանակ հայ ամեն տղամարդու ձեռքին այդպիսի մի մոսին էր պետք։— Եվ, հայացքը հրացանակիր էրգրացու թիկունքին, հրացանին, նրանք բոլորեցին պարիսպը։

Երբ նորից նստեցին, նա շոյեց Տիգրանի ծնկներին մեկնված հրացանի փողը։

— Էս հրացանն էն ժամանակ էղներ քու ձեռքին, Տիգրան։

Տիգրանը կտրուկ նայեց. այդպիսի ցանկություն նա ունեցել էր այդ հրացանը ձեռքն առնելու պահին, յոթը ամիս առաջ, պահակության առաջին օրը, հենց հրացանը ձեռքն առնելու պահին։ Եվ հենց պահի մեջ էլ հիշել էր տասնյակ տարիներ առաջվա մղձավանջային այն օրը, երբ մի հրացան ձեռքն ընկնելու ցանկությունից գժվում էր։ Եվ հիմա, Հակեի խոսքի հետ հիշեց...— Օրը, ծամը, որ միջօրեի ժամ էր, տեղը, գյուղը, որ Մշո դաշտի Սուլուխ գյուղն էր, գյուղեզրի մարագը՝ լցված երեխաներով, ծերերով, կին ու աղջիկներով... Երեխաների աղեկտուր ողբը, կանանց ճիչն ու ծղրտոցը, անզոր կատաղությունից ծռմռված ծերունական դեմք ու աչքերը և... լույսը... խարխուլ պատից մարագն ընկած լույսի շողքը։ Եվ շողքի շոշափած կլոր քարը, որ պոկեց պատից, հետո՝ պլոկված ու արունլվիկ մատները, մարագի պատին մի թզաչափ բացված անցքը և... և հայացքի դիմաց բացված պատկերը... Մշու դաշտը... Մեղրագետը... Դաշտը, գետը, աղջիկը, ասկյարը, ասկյարների քրքիջը... Մի աղջնակ էր փախչում դեպի գետը, բարալիկ մի աղջիկ՝ իրեն հասակակից, տասնչորս-տասնհինգ տարեկան, բարակ-մարակ, պատառոտված շորերով և շաղ եկած մազերով... Աղջիկը շնչակտուր փախչում էր դեպի գետը, ետևից՝ մոլեգնած-ասկյարը, և մարագի փակ դռան ետևում, ինչ-որ տեղ խմբված ասկյարները քրքջում էին...— Ա՜խ, մի հրացան լիներ։— Մարագն ընկած լույսի փոշոտ շողքի տակ գալարվում են մահապարտները և քշում դեպի պատին բացված թզաչափ անցքը... Քթերին կառչած արունլվիկ մատները, սեղմած ատամների տակ ճխլվող տնքոցը. «Ա՜խ, մի հրացան լիներ»,— դաշտը, դեպի գետը խենթացած փախչող աղջիկը, ճերմակ շապիկով ասկյարը. «Ա՜խ, մի հրացան լիներ»,— ընթացքում ասկյարը սև փափախը շպրտում է, ասկյարները

հոհոում են. «Մի հրացան լիներ»,— ընթացքում ասկյարը արձակում է ճերմակ շապիկի կոճակները... ասկյարի քրտնած թիկունքը. «Մի հրացան լիներ»,— աղջիկը փախչում է հևիհև, ծոմռված, հակված, գետը արդեն մոտ է... ասկյարը մոլեգնում է. «Ա՜խ, հրացան լիներ»,— գետը շատ մոտ է, և աղջիկը գնում է թևերը բաց, թևերը գիրկ արած դեպի փրկարար ալիքները. «Ա՜խ... ա՜խ...»,— ասկյարը մոլեգնում է... ասկյարը... ասկյարի քրտնած թիկունքը...

Բուում...

Տիգրանը ցնցվեց։

Մերունին նույնիսկ չտնքաց։ Անշշուկ ու կամաց թեքվեց և գլուխը գրեց էրգրացու ուսին։

2

Երբ մեղադրյալը ներս մտավ, քննիչը՝ գլուխը չբարձրացրեց, ուղեկից միլիցիոներին ձեռքշարժումով հրավիրեց դուրս, իսկ մեղադրյալին թողեց ոտքի վրա— թող հասկանա, որ քննիչը փոխվել է։ Միլիցիայի քննիչը նրան զգուշացրել էր՝ ծերուկը շատ կամակոր է։ Նա թուցիկ աչք դիպցրեց։ Գեղեցիկ էլ ծերուկ է և մարտական բեղեր ունի։ Ոտքի վրա թող մի քիչ շփի բեղը և հասկանա, որ դատախազության քննությունը ուրիշ բնույթ ունի։

Իսկ մեղադրյալը երկար չսպասեց. նստելու իր տեղը գտավ՝ ահա պատի տակ դրված միակ աթոռը, քննիչին դեմ-դիմաց։ Եվ նստեց առանց իրավունքի։ Նստեց զգաստ, լայն ափերը դրեց ծնկներին, դեմքը դարձրեց դեպի բաց պատուհանը և մայթեզրի կեչիներն ի վեր, շենքերն ի վեր և բարձրահարկերի արանքներով նայեց հեռու-հեռու, ուր ուժանակի պահեստները պետք է լինեին— լուռ փողոցը, աղյուսե պարիսպները, արևոտ մայթը, դարբասը, նստարանը...— Հայացքի դիմաց Հակեն էր՝ ձեռքերը անդույն պիջակի գրպանները խրած, ուսերը հավաք, աչքերում լացի պես ժպիտ ու ժպիտի պես լաց, իսկ ականջներում տաք զբնգում էր Հակեի դանգատը. «Տիգրան, Վասիլի կողքին՝ քանց փշի վրա. ախր, լեզուն չեմ հասկանա։ Թե՝ լեզուն հասկանայ...»։

Քննիչը խոժոռ նայեց, փորձեց բռնել մեղադրյալի հայացքը և հայացքով նրան ոտքի հրավիրել, բայց նա չընդունեց քննիչի խայթող հայացքը։

— Ես կարող եմ ձեզ ոտքի հրավիրել։

Հանցագործը մնաց անշարժ ու լուռ, հայացքը պատուհանից դուրս։

Լաբված ու խիստ էր կեցվածքը, կիսագեմը, խռով ճակատը, հայացքը։ Եվ ընդհանրապես ազդեցիկ էր նա։

— Բայց խնայում եմ ձեր ծերությունը։— Իրենցից՝ երիտասարդներից պահանջում են հարգել տարիքը, բայց, տես. տարեցներ կան, որ հենց իրենք չեն հարգում ծերությունը։ Ահա՝ մի ոտքը գերեզմանում, մարդ է սպանել։ Հիմար ծերունի... Եվ ընդհանրապես հիմար. ընդունում է, որ ինքն է կրակել, ոչ թե հրացանը պատահական է բացվել, այլ ինքն է կրակել, բայց ոչ գործով տուժող հանգուցյալին սպանելու միտումով։ Չի էլ հասկանում, թե բացատրությունը որքան հակասական է՝ եթե սպանելու միտում չես ունեցել, ապա ինչո՞ւ ես կրակել, և եթե երրորդ անձը բացակայել է (և բացակայել է), ապա ո՞ւմ վրա ես կրակել։ Ահա այս հարցը պետք է ուղղել և ստիպել, որ պատասխանի։ Բայց դա միլիցիայի հարցաքննության ուղին էր (ճակատային, մերկ հարցեր՝ կիսատ-պռատ պատասխաններ), որը ոչ միայն չէր մոտեցրել հանցագործության բացահայտմանը, այլև ավելի էր խճճել գործը։ Պետք է սկսել սկզբից, ուղղել անմեղ թվացող հարցեր, խճճել ամբաստանյալին և բացել կծիկը։— Քննիչը հոնքերի տակից խուզարկեց։

Մեղադրյալը մնում էր նույն դիրքով՝ զգաստ, խոշոր ափերը ծնկներին, լաբված հայացքը պատուհանից դուրս։ Ուսերը հավաք, ձեռքերը պիչակի գրպանները խրած, Հակեն քայլում էր կողքից, խոսում էր ու դնդնում, դնդնում էր ու խոսում. «Է՜, Էրգիր, ավեր ու անտեր ու անուշ Էրգիր...»։

Ուր է նայում և ինչու է նայում այդպես լաբված— քննիչը հետախուզեց փողոցը։ Իսկ դրսում կասկածելի ոչինչ չկար. փողոցը առանձնապես բանուկ չէր, ծանոթ կամ անծանոթ մեքենա չկար կանգնած, մայթերին կասկածելի մարդիկ չկային, աշնան օր էր, կեչիներն արդեն դեղնել էին, և գլխահակ կեչիների դեղին վարսերին քննիչը ժպտաց. դրանք այն ծամերն էին, որ երեկոյան շոյում էր։ Այլևս այս ու այն կողմ զարկվել չկա՝ ամուսնանալ և վերջ։ Աշխատանքից հետո հանդիպելու են՝ կառաջնորդի ուղիղ տուն՝ ծնողներին ի տես։ Նա պատկերացրեց ընկերուհու և ծնողների հանդիպումը, ավելի բաց ժպտաց, բայց անմիջապես հավաքվեց և խիստ դարձավ դեպի մեղադրյալը— հո չնկատե՞ց ժպիտը։

— ...Հայրենիքն անուշ է, ես չեմ մոռանա,— դնդնում էր Հակեն ու խոսում։— Տիգրան, Էրգրի մեր գյուղում քանց դու զորնդեղ մի մարդ կար, զորնդեղ ու փալաբեղ քանց դու։ Հըմը իմ աչքն դիպավ քեզ, էդ մարդուն հիշեցի (անունն եմ մտահան արե), էդ զորնդեղ ու փալաբեղ մարդուն հիշեցի, ու դու դարձար իմ Էրգիրն... Հայրենիքն անուշ է, ես չեմ մոռանա, կաթնապու մայրիկ ջան, քեզ չեմ մոռանա...

«Դժվար ծերուկ է,— խուզարկու հայացքը մեղադրյալի կիսադեմին, մտածեց քննիչը,— ինչևէ, պետք է լինել կարուկ և խիստ»։— Եվ բացեց մեղադրական գործը։

Սկզբում հանցագործությունն ապացուցող ֆոտոփաստերն էին։ Սատանան տանի, ձեռքի տակ հենց այս գո՞րծը պետք է լիներ, այս արյունոտ լուսանկարնե՞րը և՝ հենց այսօ՞ր... Ծնողներն ինչպե՞ս կընդունեն ընկերուհուն։ Եվ լուսանկարները հավաքեց-շարտեց չհրկիզվող պահարանը։ Լուսանկարներն ինչո՞վ կօգնեն գործի բացահայտմանը։ Մանավանդ որ մեղադրյալը ընդունում է սպանությունը... Ընդունելը՝ ընդունում է, բայց սպանության պատճառի մասին՝ ոչ մի խոսք։— Ուրեմն, Տիգրան Բաղդասարի Նահապետյան, ազգությամբ հայ։ Անհանգիստ մարդիկ են այս հայերը, ուր գնաս՝ կհանդիպես։ Ահա,— ծնված հազար ինն հարյուր թվականին, Սասնո գավառում (Թուրքիա)։ Եվ հարցական դրեց. նախ՝ ինչպե՞ս է պատահել, որ ծնվել է Թուրքիայում և ապա՝ սույն գավառի ո՞ր գյուղում կամ քաղաքում։ Ահա մեղադրյալին ուղղվելիք առաջին հարցը։ Հետաքրքիր է նաև, որ գործով տուժող հանգուցյալը նույնպես Թուրքիայում է ծնվել։ Եվ՝ նույն գավառում։ Գուցե նաև՝ նույն գյուղում կամ քաղաքո՞ւմ։ Այդպես... անկուսակցական։ Դատված չի եղել։ Քննիչը հարցական դրեց՝ սա հայտաբարություն է։ Ընտանիքի կազմը՝ որդին, հարսը, հինգ թոռ։— Օ՜յ, օ՜յ, օ՜յ,— նա ժպտաց պատուհանի դիմաց գլուխն օրորող կեչիների դեզին հյուսերին։ Հի՜նգը... Մուսուլմանները ինչքան շատ երեխաներ են ունենում։ Այդպես։ Հազար ինը հարյուր տասնհինգին հեռացել է ծննդավայրից։ Ինչո՞ւ։ Պատճառը։ Հազար ինը հարյուր քսանին բնակություն է հաստատել Հայաստանի Թալինի շրջանի Քարագլուխ գյուղում։ Հետաքրքիր է. ուրեմն՝ տասնհինգին ծննդավայրից ճամփա է ընկել և միայն քսանին է հասել նոր բնակատեղի։ Հինգ տարի։ Շատ հետաքրքիր է։ Հինգ տարի որտե՞ղ է թափառել։ Այդ ընթացքում հանգուցյալի հետ հանդիպումներ ունեցե՞լ է։ Հետաքրքիր է նաև, որ հանգուցյալը նույնպես վերաբնակվել է Հայաստանի նույն շրջանը՝ և նույն թվականին։ Այդպես։ Հազար ինը հարյուր երեսունվեցին վերաբնակվել է Ուսուրիա։

Քննիչը կտրուկ հայացք նետեց հանցագործին։

«...Ու խև մեկ աղջիկ կար մեջ մեր գյուղին, Տիգրան։ Ու էդ խև աղջիկն ձմռան ցրտին կհաներ իր փոթերն ու կհագցներ ծառերին. կհագցներ՝ թե ծառերն չմրսին... Քամին էգավ էրան-լերան, ճերմակ թիթեռն քամու բերան... Հըմը ինձ էնպես կթվա, Տիգրան, թե էդ աղջիկն խև չէր... Ճերմակ վարդերն քամու բերան. քամին էգավ էրան-էրան...

Ու թե ասեմ՝ իմ սիրտն տաքացել էր էդ շլուտ աղջկա վրա, չզարմանաս... Խուլնգո, խուլնգո, հեռավոր ու խորունկ տեղերեն կուգաս...»։

«Ուրեմն, ասում ես, դատված չես եղել,— քննիչը մտքում դիմեց մեղադրյալին,— պարզապես տեղափոխվե՞լ ես— վերաբնակվե՞լ»... Ուրեմն՝ վերաբնակություն... Թող այդպես լինի, բայց չի՞ կարող պատահել, որ այդ տեղափոխություն-վերաբնակության պատճառը լինի գործով տուժող հանգուցյալը. չէ՞ որ նրանք կից գյուղերի բնակիչներ են եղել... Եթե սպանությունը պատահական չէ (մեղադրյալն ինքն է բացառում), եթե հարբածությունը բացառվում է (վկա՝ բժշկական եզրակացությունը), աշխատանքային լարված հարաբերություններ, շահերի բախում, հարևանական վեճեր-կռիվներ և նման բաներ բացառվում են (գործով տուժող հանգուցյալը միայն մեկ ու կես ամիս առաջ է վերաբնակվել այստեղ), ապա չի՞ կարող պատահել, որ նրանք հենց այս՝ վերաբնակության հողի վրա թշնամացած լինեն։ Կամ գուցե ավելի հեռվից եկող թշնամությո՞ւն... Կովկասցիներ են, ո՞վ է հասկանում՝ սերնդե սերունդ փոխանցվող արյան վրեժ, ոխակալություն, խուսափում, հետապնդում... Մանավանդ որ ծնունդով նույն երկրից են (Թուրքիա)։ Ուրեմն՝ միջտոհմային թշնամությո՞ւն, որ վաղուց ու հեռվից սկիզբ է առել ու շարունակվում է մինչև այսո՞ր, մինչև այստե՞ղ... Այդպե՞ս։ Հազար ինը հարյուր քառասունմեկին կամավոր մեկնել է ռազմաճակատ։ Հիանալի է։ Հազար ինը հարյուր քառասունհինգին նորից բնակություն է հաստատել Հայկական ՍՍՀ Թալինի շրջանի Քարագլուխ գյուղում։ Հարց՝ այդ գյուղում ի՞նչ ազգակից-բարեկամներ ունի։ Հազար ինը հարյուր քառասունիններին վերաբնակվել է Ալթայի երկրամասի Մամոնտով ավանը։ Նորից վերաբնակություն։ Արևավառ Հայաստանը թողած ի՞նչ գործ ունես Ալթայ։ Հազար ինը հարյուր հիսունչորսից բնակվում է Բառնաուլում։ Վերջապես, այս թափառումների պատճառը, բնից բույն թռչելու նպատակը... Պարզ է՝ անաշխատ ու բարեկեցիկ կյանք ստեղծելը չէ. ուր էլ տեղափոխվել է նա, որմնադիր է աշխատել։ Անտառահատ կամ՝ որմնադիր... «Վարպետ Տիգրանը...»,— ձեռքի տակ շինվարչության բնութագիրն էր,— թռչակի է անցել, բայց մարդիկ իրենց իրավունք են վերապահել բնութագիր ներկայացնել։ Եվ ի՞նչ հարգանքով են գրում՝ «Վարպետ Տիգրանը...»։ Վարպետն էլ՝ մեծատառով։ Մարդ է սպանել, բայց այս բարեպաշտների համար մնացել է Վարպետ Տիգրան։ Եվ հարևանների համար է Վարպետ Տիգրան, և քաղաքի պահակախմբի պետի՝ «Ուժանակի պահեստների պահակ Վարպետ Տիգրանը...»։ Դե ինչ, Վարպետը դարձել է մարդու ազգանունը, երևի պետք է, որ ինքն էլ այդպես դիմի։ Քննիչը հոնքերի տակից հետախուզեց։

Ամբաստանյալը լարված նայում էր դուրս։ Փողոցը, կեչիների արեվոտ մայթը, աղյուսե պարիսպը, պահակ Տիգրանը հրացանն ուսած քայլում էր պարսպի հետ, ետևից՝ Հակեն։— Առավոտ քար ձգեիր մեր ձորն, էդ քարի ձենն չուրի իրիկուն կդմփդմփար մեջ ձորին, քամին սխալվեր ու մտներ մեր անտառն, էդ քամին կմոլորվեր ու կմնար։ Ու գյուղի դիմացի սարեն գլոր-մլոր մի առու կիջներ, Տիգրան... Գլգալեն ջուրն էր իջնում վերին-վերին սարերեն, ծիծեռնակներն ծիվ-ծիվ եկան՝ գարնան գալը երգելեն...

Լարված է՝ դուրս է նայում, բայց սպասում է հարցաքննությանը, մտածեց քննիչը, լռությունը էլի մի քիչ ձգել (հոգեբանական գրոհ), ապա սկսել հեռվից՝ ուղղել անմեղ թվացող հարցեր, խճճել ծերուկին և անկատ մոտենալ հանցագործության բուն պատճառին։ Նա ուզեց զանգել ընկերուհուն, բայց ձեռքը լսափողից ետ քաշեց— հանցագործի ներկայությամբ չի կարելի. այսքան լռություն և հանկարծ՝ սիրազրույց։ Պետք է լինել կտրուկ և խիստ։ Բայց դժվար-ծերունի է։

— Մեղադրյալ Նահապետյան...

«Բայց չարն ե՞րբ թողեց, թե խնդանք մեր անուշ սարուձորերով, Տիգրան... Դնա, ծիծեռ, երգդ վերք է՝ քամուն տուր և պատվիրե մանուկներին— չմոռանան հիշատակ...»։

— Ինձ նայեք,— պահանջեց քննիչը և սպասեց, որ մեղադրյալը հայացքը դրսից կտրի։— Աշխատեք այլևս ինձ նայել և եղեք ուշադիր։ Ուրեմն այսպես, ձեր ծննդավայրը ինչո՞ւ որոշակի չեք ասել. ո՞ր գյուղում կամ քաղաքում եք ծնվել։

Ծերունու քունքն ի ճակատ պրկված կապույտ երակը զիգզագվեց, գողը թավ հոնքերի տակ կորավ ու հայտնվեց ընչացքներում։ Քննիչը միայն դա նկատեց՝ բեղերի թպրտոցը։ Նրան դուր էր գալիս մեղադրյալի զորեղ բեղը. այդպիսի փառահեղ բեղ միայն կինոներում էր տեսել, և ահա իսկականը, որը կարող է նաև տիրոջ փոխարեն պատասխան տալ։ Դե, իհարկե, խիստ, խիստ, որոշում է խիստ լինել և՝ դուք, ձեր, ձեր ծննդավայրը... Ահա և մարդասպանի հարցաքննության տոն։ Բնութագրերը երևի ազդեցին՝ վարպետ Տիգրանի հետ է խոսում։ Դե ինչ, ի՞նչ իրավական օրինականության և ի պատիվ այս փառահեղ բեղի, կարելի է նաև հոգնակի դիմել։

Ամբաստանյալը ուշացնում էր պատասխանը, և քննիչը կրկնեց հարցը։

— Ո՞ր գյուղում կամ քաղաքում եք ծնվել։

— Սևիդ։

— Ինձ նայեք և կրկնեք։

— Սևիդ։— Նայեց և շպրտեց քարի պես։ Նա խոսում էր անփույթ, բառերը արտասանում էր ճիշտ, բայց կոշտ ու կոպիտ. բառերը քարերի պես շպրտում էր։

— Դա... Սևիդը պյո՞ղ է, թե՞ քաղաք։

— Գյուղ։

Եվ դարձավ գեպի պատուհանը. Հակեն կանչում էր...

— Ուրեմն՝ գյուղ Սևիդ։— Քննիչը գրեց և հետևեց ընդգծված հարցերի հերթականությանը։ Մի փոքր վրիպել էր. առաջին հարցը այլ պետք է լիներ՝ ինչպե՞ս է պատահել, որ մեղադրյալը ծնվել է Թուրքիայում։ Դա պետք է լիներ առաջին հարցը, բայց որոշեց չանդրադառնալ, որովհետև այդ հարցը ավելի ջատ մեղադրյալի հոր հետ կապ ուներ։ Այդ և հաջորդ հարցը. թե՝ ինչո՞ւ է թողել ծննդավայրը։ Այն ժամանակ, ուրեմն, հազար ինը հարյուր տասնհինգին ամբաստանյալը եղել է 14—15 տարեկան և սեփական որոշմամբ ու սեփական նախաձեռնությամբ ծննդավայրից հեռանալ չէր կարող։ Այնտամենայնիվ։

— Մեղադրյալ Նահապետյան, ինձ նայեք... Դուք ինչո՞ւ եք հեռացել ձեր ծննդավայրից։

Մեղադրյալը ծրաբուն և հեգնոտ մի ժպիտ նետեց քննիչի գրասեղանին։ Այդ ժպիտը, որ հեգնանք պետք է արտահայտեր, հոգնած էր և այնքան փոքր, որ տեղն ու տեղը կարավ բեղերի տակ։ Եվ ավելի շուտ՝ ոչ թե քննիչին էր ուղղված, այլ՝ իրեն։ Ո՞վ է ինքը... ո՞վ էր Հակեն...— Անտեր է մեր ցավն, Տիգրան, ծեր ու անտեր, մեզ պես ծեր ու մեզ պես անտեր... Մեր մաշված մարմինն ու՝ մեր վերքն, մեր տկար հոգին ու՝ մեր ցավն... Մեր ցավն աշխարհի ցավն է, Տիգրան, բայց աշխարհից անանկատ։ Աշխարհի չափ մեծ ու աշխարհի ցավն ու աշխարհից անանկատ— լռենք քու անուն Տիգրան է ու իմ անուն Հակե...

— Նո՞ւ, ինչո՞ւ եք թողել ձեր ծննդավայրը։

«Քու ծննդավայրն ինչո՞ւ ես թողե»,— մաքում խոցված կրկնեց մայրենիով։ Մայրենիից և հեռվում՝ քարերի ու փշերի մեջ թաղած մայրենի բարբառից վազուց էր հեռացել, մայրենին հայտնվել էր Հակեի հայտնվելու հետ և հիմա նեքսում թպրտում էր ու ոնքում։ «Քու ծննդավայրն ինչո՞ւ ես թողե»։— Այդ հարցը շատերն են տվել։ Այդ շատերից շատերը որմնադրի ձեռքին ցեխ ու քար ու աղյուս հասցնողներ էին, և ինքը մտածում էր՝ դեռ նորելուկներ են, այդ շատերից շատերը աշխարհից անտեղյակներ էին, և ինքը մտածում էր՝ սրանց աշխարհը սատկած ճանճի պես իջել է գինու կարաստի հատակը, այդ շատերից շատերը հարցրել էին ի միջի այլոց և պատասխանի չէին սպասել, և ինքը մտածել էր՝ անմտորեն մարդկանց հոգին պղտորող թեթևաոչիկներ են,

բայց տես, թե ով է նույն հարցը ուղղում՝ իրավաբանը... քննիչը... դատավորը։ Ուրեմն ինչքան փոքր է ինքը, ինչքան ու ինչքան աննշան, աք իր ցավը՝ աշխարհին շատ մեծ և աշխարհի ցավն է նաև (այդպես էին մտածում ինքն ու Հաչիկն), սրան էլ չի հասել՝ իրավաբանին, քննչին, դատավորին։

— Ստատանան տանի, ինձ նայիր, վերջապես։

Ծերուին դարձավ և երկար ու խոր և խոցված նայեց. նա դեռ հույս ուներ, թե քննիչը կհիշի «իր մեղադրյալի» ցեղի արյունոտ պատմությունը և կասի՝ լավ, հասկանալի է։

Բայց քննիչը հերսոտ կկոցել էր, փոքրիկ ծերունու հոտոտ հայացքի ճամփեն։

— Պատասխանի եմ սպասում։

— Ախր դու...— ահա-ահա խոսելու էր հայերեն, բայց Հասցրեց շուռ տալ,— դու քննիչ ես։

— Դուք հանցագործ եք, բայց ձեզ հետ ես դուքով եմ խոսում։— Թե մեղադրյալը ինչ էր ուզում ասել, դա իր հերթին, բայց նրա հայացքը (կարծես մեղադրող է և ոչ մեղադրյալ), հայացքը, կեցվածքը, տոնը արդեն ջղայնացնում էր։

— Քաղաքացի քննիչ, չէ՞ որ դուք իրավաբան եք։

— Ես գիտեմ, որ իրավաբան եմ։ Հետո՞։

— Հետո...— նա ուզեց մեկնել միտքը, բայց լայն ափով շփեց ճակատ ու աչք և մտածեց, թե բարակ-մարակ այդ ջահելը որքան հզոր ձայն ունի։— Հետո... Հետո...— և որքան մերժող է հայացքը և որքան արհամարհող տոնը։— Հետո, ոչինչ... Դուք իրավաբան եք և գիտեք, որ մարդասպանին սպանությունն է հասնում։

Դարձյալ նույնը. դարձյալ ընդունում է, որ ինքն է սպանել, իսկ թույլ չի տալիս մոտենալ պատճառին։

— Բոլոր դեպքերում պետք է պատասխանել, ծերուկ։

Ծերուկը փոխարեն թող շուն ասեր, հոգնակի պետք չէ, թող եզակի դիմի, բայց ոչ այդպիսի տոնով։

— Նո՞ւ... Հարցը հիշո՞ւմ եք. ձեր ծննդավայրը թողնելու պատճառը։

— Պատերազմ։— Քաթի պես շպրտեց և ոնքոցով դարձավ դեպի պատուհանը... Այնտեղ, ուժանակի պահեստի աղյուսե պարիսպն ի հետ քայլում էր հրացանակիր պահակը, ետևից՝ ոնքաբաց մի ծերուկի... (Չէղներ էդ գարուն, Տիգրան...)։

Ախ, հա՞, առաջին համաշխարհայինը չէ՞ որ այդ թվականներին է եղել... Որքան շուտ են մոռացվում պատերազմները... Պատերազմ,

ուրեմն, էվակուացիա։— Քննիչը հիշեց մորը (ակնթարթում նաև՝ ընկերուհուն այսօր ծանոթացնելու է մոր հետ), հիշեց մորը, որ Մեծ հայրենականի ժամանակ Լենինգրադից էվակուացիայի է ենթարկվել և, մանկատնից մանկատուն ընկնելով, պատերազմից հետո հասել է այստեղ՝ Բառնաուլ։

— Այդպես... Պատերազմ, ուրեմն, էվակուացիա։— Հայացքը ծերունու ճերմակ մազերին՝ քննիչը մտածեց, որ էվակուացիայի ժամանակ մայրը եղել է 14—15 տարեկան, այնքան, որքան ծերունին առաջին համաշխարհայինի ժամանակ։— էվակուացիա, ուրեմն։ Այդպե՞ս։

— Այդպես։— Հայացքը պատուհանից դուրս տնքաց ծերունին,— «... էն գարուն ձյան տակից դուրս չգար...»։

— Մանկատներում եք եղել, ուրեմն։ Այդպե՞ս։

— Ոչ։— «էն գարուն փոթորիկի մեջ խեղդվեր ու մնար»։— Կամաց-կամաց կարծես կորցնում էր Հակեի ձայնը, և հրացանակիր պահակն էր երևում մշուշի մեջ։ Այնտեղ, մշուշոտ պարիսպն ի հետ, մշուշով պարուրված քայլում էր հրացանակիր պահակը, ետևից՝ տնքացող պստլիկ մի ծերունի... Մգրե ծերունի՞ն էր, Հակե՞ն էր։ Նա զգում էր, որ տեսիլքը մոտենում է՝ կրծքի տակ ռետինե մի ժապավեն էին ձգել, ժապավենը լարվել-պրկվել և գվվոցով թրթռում էր կրծքի տակ... Ահա-ահա՝ կտրվելու է... Կտրվելու է— պոկվելու է— պոռթկալու է կրծքի տակ։

— Ո՞չ։— Քննիչը տարակուսեց՝ եթե մանկատներում չի եղել, ապա, մինչև նոր բնակատեղիում հիմնվելը, որտե՞ղ է եղել։— Մեղադրյալ Նահապետյան, հազար ինը հարյուր տասնհինգին էվակուացվել եք և միայն քսանին եք հաստատվել նոր բնակատեղիում, արանքում անհայտացած հինգը տարի կա, այդ տարիներին որտե՞ղ եք եղել։

Ռետինե պիրկ ժապավենը պոկվեց-պոռթկաց, ցավոտ ու տհաճ մի ալիք գալարվեց կրծքի տակ, կատաղի ծեփվեց պատեպատ, ճնշեց քունքերը, և մշուշոտ աչքերի դիմաց հայտնվեց տեսիլքը...

— Հարցը հասկանալի՞ է, թե՞ կրկնեմ։

...Սար ու ձորերում թավալվող ծուխ, ծխի մեջ խեղդվող բոցեր,— ճարճատյուն, կրակոց-տրաքոց, վայրի քրքիջ, բոցերի բերան ընկած ճիչ ու ծղրտոց, վայրի քրքիջ, և ծխով փաթաթված, բոցերով պարուրված, ճիչ ու ծղրտոցի միջով և վայրի քրքիջի տակ գալիս էր ծերունի Մգրեն... Մգրե՞ն, թե՞ Հակեն...

Տիգրանը բռունցքով տրորեց աչքերը և կարծես հեռվից լսեց՝

— Հինգ տարի որտե՞ղ եք եղել։

— Ջոլեր։

Եվ գլխի ընկավ, որ պատասխանել է մայրենիով, մայրենի բարբա-

ռով։ Ուզեց կրկնել ռուսերեն, բայց համապատասխան բառը չէր գըտնում։— Պոլե... պոլե...— բայց դա չոլ չէր։

— Չոլեր,— ակամա կրկնեց։

— Քեզ քննելու համար, պարզվում է, քո լեզուն պետք է սովորեր։

«Պոլե...»։— Մեղադարտը բռունցքով տրորում էր աչք ու ճակատ, փորձում գտնել պատասխանը՝ չոլերին փոխարինող բառը, արտահայտությունը, բայց ուղեղի մշուշում խեղդվել էին բառերը։ Հիշելու համար նայեց պատուհանից դուրս, և նորից պոռթկաց կոպերի տակ դարձնակալած տեսիլքը։

— Սատանան տանի, ինձ նայեք, վերջապես։— Քննիչը բռունցքը խփեց սեղանին։

«Գլխանց... գլխանց գոռա»,— և դարձավ ու քննիչին նկատեց մշուշապատ ու որոնեց նրա աչքերը։— Հրդեհով բռնված իր հայացքը թող մարի քննիչի սառը աչքերի մեջ, թող քննիչի հայացքը նշտարի պես խրվի և շրջի աչքերի խորքում կայծկլտացող ածուխի կտորները, և թող այդ պողպատե ձայնը խլացնի ականջներում շիկացած ճիչն ու ծղրտոցը։

— Դուք թարգմանչի կարի՞ք ունեք։

Մեղադրյալը տարուբերեց գլուխը՝ ոչ։

— Թարգմանիչ պահանջո՞ւմ եք։

Քննիչը ձայնարկու պատասխանի էր սպասում։

— Եթե մարդը մարդուն չհասկանա, թարգմանիչը ինչո՞վ կօգնի։

— Ոչ թե՝ մարդը մարդուն, այլ մեղադրյալը՝ քննիչին և քննիչը մեղադրյալին։ Կարելի է մտածել, թե դուք մոռացել եք, որ նստած եք մեղադրյալի աթոռին։ Դուք չեք եկել ինձ հետ զրուցելու, ձեզ բերել են, որ պատասխանեք իմ հարցերին։ Հասկանալի՞ է։

Մեղադրյալը գլխով արեց՝ այո։

— Դուք մեղադրյալ եք, իսկ ես՝ քննիչ։ Հասկանալի՞ է։

Մեղադրյալը գլխով արեց՝ այո։

— Այդ իմաստուն տմբտմբոցը պատասխան չէ, հասկացեք վերջապես։

— Այո, հասկանալի է։

— Ահա այդպես։ Այդ դեպքում պատասխանեք՝ որտե՞ղ եք եղել հինգ տարի։

«Էս տղեն ի՞նչ կուզե իմ տկար հոգուց»։— Աչքը քննիչի պահանջկոտ աչքերին՝ մտածեց նա։— Պոլե... չոլ... չոլ... պոլե... որտեղի՞ց գտնել հարմար խոսքը... Պոլե...

— Դաշտերում...

Քննիչը գրասեղանին հակված-զսպանակված սուր նայում էր և ավելի սրվեց։

— Անտառներում, գազանների հետ։— Աչքը քննչի պահանջկոտ աչքերին՝ ավելացրեց մեղադրյալը։

— Ջորերում,— ավելացրեց մեղադրյալը։

— Քարանձավներում։— Ծերունու քունք ու ճակատին պրկված կապույտ երակը թրթռում էր։

— Ջոլեր,— մայրենիով ու մայրենի բարբառով ավելացրեց մեղադրյալը,— չոլեր... չոլեր,— շպրտեց քարերի պես,— չոլեր...

— Բավական է խեղկատակություն անեք։

Քննիչը ոտքը խփեց հատակին և ելավ ոտքի։ Ապա վերցրեց հեռախոսի լսափողը. «Այս կամակորին մշակել է հարկավոր, որ խելքը գլուխը գա»,— բայց լսափողը նորից շպրտեց տեղը։

«Ա՜խ, թող գա, թող հայտնվի Մգրե ծերունին,— մեղապարտը դարձավ դեպի պատուհանը,— Մգրե ծերունին, Հակե ծերունին, Հակեն, թող հայտնվի կրակոց-տրաքոցի տակ, ճիչ ու ծղրտոցի միջով, վայրի քրքջի տակ, և թող ճիչն ու ծղրտոցը խլացնեն իր ականջները, որ այս մերժիչ ձայնը չլսի, թող գա, թող հայտնվի մոլեգնած բոցերի հետ, և Հակեին պլված բոցերը թող այրեն իր հայացքը, որ չտեսնի այս մերժիչ աչքերը, թող գա, թող հայտնվի փաթաթված ծուխ ու մխով, և թող գանգը լցվի մուժով, և ուղեղը մթագնի, որ այս անմիտ հարցերը, դաժան խոսքերը չհասնեն ուղեղին։ Թող գա, թող հայտնվի տեսիլքը...»։

«Սատանան տանի, այս որքան դժվար ծերուկ է։ Ինչպե՞ս վարվել։— Խստությամբ արդյունքի հասնելը անհույս բան էր։— Ցավն այն է, որ հարցաքննության ելքը չի հետաքրքրում սրան, ճակատագրի նկատմամբ անտարբեր է։— Քննիչը ծխախոտ վառեց և խոով մոտեցավ պատուհանին։— Այսօր իզուր սկսեց այս հիմար ծերուկի հարցաքննությունը... Մութ ու տրամադրություն փչացնող գործ է... Ընդհատե՞լ... Ո՜չ։ Պետք է շարունակել, բայց որքան հնարավոր է՝ մեղմ և... Հենց այսօր է պետք հասնել արդյունքի։ Այդպես։— Նստեց և հետևեց անկետային տվյալների հարցականներին— ո՞րն էր հաջորդ հարցը։ Ահա՝ երեսունվեցին վերաբնակվել է Ուսուրիա... Ուրեմն՝ վերաբնակվել է։ Ախր, իրոք, կասկածելի բացատրություն է՝ վերաբնակվել է և ուրիշ ոչինչ... Եվ արդյոք սա, այս տեղափոխությունը, գործով տուժող հանգուցյալի հետ կապ չունի՞։

— Մեղադրյալ Նահապետյան։— Դիմեց մեղմ և սպասեց, որ նայի։

Մեղադրյալը դանդաղում էր։

— Խնդրում եմ ինձ նայել։

Մեղադրյալը խռով հայացքը կտրեց պատուհանից, բայց քննչին չնայեց. ձեռքերը ծալեց ծնկներին և գլուխկախ խոնարհվեց։

— Դուք հայտարարել եք, որ երբևէ դատված չեք եղել։ Պնդո՞ւմ եք ձեր հայտարարությունը։

Մեղադրյալը գլխով արեց՝ այո։

— Ուրեմն պնդում եք, որ դատված չեք եղել։

Մեղադրյալը գլխով արեց՝ այո։

Քննիչը դարձյալ ձայնարկու պատասխանի էր սպասում, և նա բարձրացրեց ճերմակ գլուխը և խորը նայեց։

— Նո՞ւ։

— Քաղաքացի քննիչ, թույլ կտա՞ք մի հարց ուղղել ձեզ՝ քննչին։

— Խնդրեմ։

— Հնարավո՞ր է առանց դատի ու առանց դատարանի վճռի մարդու ազատազրկել։

— Ո՛չ։

— Եթե այդպես է, ես նորից պնդում եմ՝ դատված չեմ եղել։

— Լավ։ Այդ դեպքում ասացեք, խնդրեմ, ձեր գյուղից... Քարաբուխ գյուղից ինչո՞ւ եք տեղափոխվել Ուսուրիա։

Մեղադրյալը տխուր քմծիծաղեց. «Բա դու քննի՞չ ես,— և դարձյալ հակվեց։— Մենակ դո՞ւ, Տիգրան, մենակ դո՞ւ, իմ ախպեր, ցավն հիշելու համար, ցավն պատմելու համար, պատմողին ականջ կախելու համար, ցավն ապրելու ու տնքալու ու ախ քաշելու համար ու կարոտի համար, Տիգրան, ու կարոտի համար մենակ դո՞ւ դարձար բնավեր...»

. . . . . .

«...Մեր ցավն ու մեր կարոտն մեր հոգու մեջ ինչո՞ւ կկամեն խեղդել, Տիգրան, ի՞նչ պահանջ էր, թե՝ մենք ու մեր ցավն բաժանվենք-հեռանանք իրարից ու անտեր թողնենք մեր խեղճ ու անտեր ցավն։ Դուռն ու երդիկն ինչո՞ւ կոզպեցին ցավի վրա, իմ ախպեր, ցավն ինչո՞ւ բանտարկեցին։ Ինչի՞ համար։ Ի՞նչ նպատակի համար, Տիգրան»։

— Պատճառը։— Քննիչը համառում էր։— Վերաբնակության նպատակը, պատճառը։

— Պատճառ չկա,— հակված ու խռով պատասխանեց ամբաստանյալը։

Քննիչը սպասում էր, որ շարունակի։

— Պատճառ չկար,— կրկնեց և մի տեսակ՝ ինքն իր համար։— Իսկ նպատակը անտառ կտրելն էր։

— Անտառ կտրե՞լը։

— Այո։ Անտառ կտրելը։

— Ուրեմն դուք գնացել էիք աշխատելու. անտառ կտրելու։ Այդպե՞ս։

Մեղադրյալը գլխով արեց՝ այդպես։

— Լավ։ Թող այդպես լինի։— Մոտենում էր բուն խնդրին, ուղղելու իր հարցերի հարցը և ընտրեց ազդու կեցվածք ու ազդեցիկ տոն։ Նա թևերը ծալեց գրասեղանին, ձգվեց դեպի ամբաստանյալը,— հիմա ինձ նայեք,— և շեղհայաց և համառ ու երկար նայեց նրան։ Եվ քմծիծաղով. որպես թե՝ իմացիր, ծերուկ, երեխայի հետ չես խոսում։— Մեղադրյալ Նահապետյան...— ստացվեց այնպես, ինչպես ուզում էր՝ գաղտնիմաց ու խորհրդավոր տոն։ Եվ դադար տվեց, որ ամբաստանյալը լարվի,— իսկ... իսկ հանգուցյալ Հակոբ Տոնոյանը բոլորովի՞ն կապ չունի գյուղից ձեր հեռանալու, այսպես կոչված վերաբնակության փաստի հետ։

— Ո՞վ, Հակե՞ն։

— Գործով տուժող հանգուցյալ Հակոբ Տոնոյանը։ Նա, որին սպանել եք։

Սերունին տնքաց, խոնարհեց ճերմակ գլուխը և բռունցքով տրորեց ճակատը։ Հակեն որքան լուռ, որքան անծպտուն-անշշուկ ու հանգարտիկ թեքվեց և գլուխը դրեց իր ուսին... Գոնե մի բառ ասեր...

— Կապ չո՞ւնի։

— Ոչ,— շշնջաց նա։

— Խնդրում եմ ինձ նայել։— Եվ բռնեց ամբաստանյալի հայացքը, այնպես թե՝ ես քննիչ եմ և ինչ-որ գաղտնիքներ ինձ արդեն հայտնի են, ծերուկ։— Ուրեմն, ասում եք՝ կապ չունի՞։

Մեղադրյալը գլուխը տարուբերեց՝ ոչ։ «...Գոնե մի բառ ասեր, գոնե անմիջապես շունչը չփչեր Հակեն...»։

— Քառասունինինին դուք նորից եք հեռացել Քարագլուխ գյուղից և ընտանիքով բնակություն հաստատել Ալթայի երկրամասում։ Այս վերաբնակությունը նույնպե՞ս կապ չունի հանգուցյալ Հակոբ Տոնոյանի հետ։

Սերունին փորձեց քմծիծաղել, բայց տխուր ու աննշան մի ժպիտ երևաց ու տեղն ու տեղը կորավ։ Եվ նա մշուշոտ հայացքը դարձրեց գետի պատուհանը։ «Տեղն ու տեղն իր շունչ չփչեր Հակեն, ու ես զիմ ճակատն սեղմեմ Հակեի վիրավոր սրտին ու կանչեմ՝ Հակե, իմ հոգին քա վիրավոր սրտին...»։

— . . . . . .

«Ու ես կանչեմ՝ մի էրթա, դիս մենակ մի թող, իմ տխպեր, իմ էրգիր, Հակե...»։

— Սատանան տանի, ինձ նայեք վերջապես։— Քննիչը ափերից դուրս եկավ և նորից բռունցքը խփեց գրասեղանին։

— Ի՞նչ է, տղա,— կտրուկ շուռ եկավ և զգաց, որ էլի վրիպեց՝ հայերեն է խոսում։ Բայց լցված վրա տվեց. «Քու ուզածն ի՞նչ է, իմ վերքերն մի փորփրե, խիղճ ունիս... Առավ իմ հոգին,— հուզված թեքվեց և այնպես՝ կարծես ուսնկից մեկը կար նստած և նրան գանգատվեց։— Առավ իմ հոգին։ Հակեն ի՞նչ մեղք ունի, Մգրեն ի՞նչ մեղք ունի, մեղքն ինչի՞ կձգին ցավի մեջ ծերացած էդ խեղճերի վրա»։

Քննչի զարմացած հայացքի տակ նա էլի ինչ-որ բառեր շպրտեց և գանգատվեց՝ մայրենիով ու հուզված, ապա հերսոտ ծխախոտ վառեց և հակվեց ծնկներին։ Ծխախոտը, ձեռքի հետ, դողում էր խռով դեմքի մոտ, և ծխելու համար նա բութը սեղմեց ծնոտի տակ և դողացող շուրթերն ու ծխախոտը միայն այդպես հասցրեց իրար։

Ինչպե՞ս վարվել այս խենթ ծերուկի հետ... Երևի իզուր բռունցքահարեց սեղանը... Որպես թե՝ որոշեց մեղմորեն հարցաքննել, բայց... սատանան տանի, այն հանգամանքը, որ դու քննիչ ես՝ օրենքն իրագործող, իսկ նա մեղադրյալ՝ օրենքին պատասխանատու, փափկությունը անկատ հրում է մի կողմ, և ձեռքդ ինքն իրեն դառնում է բռունցք։

Մեղապարտը ծնկներին հակված դողդողալով ծխում էր։

Բռունցքը՝ բռունցք, տոնը՝ տոն, բայց հարցը վրդովեց ծերունուն... Հարցերը։ Նա մոտավորապես գլխի էր ընկել, թե մայրենիով ու այդպես հուզված ինչ էր ասում մեղադրյալը, ինչի դեմ էր բողոքում՝ հարցերի։ Իսկ ի՞նչ, հարցեր չտա՞լ... Մարդ է սպանել՝ չհարցաքննե՞լ, չքացե՞լ խճճված կծիկը։ Իսկ ինչպե՞ս վճռել հենց իր՝ այդ հիմար ծերուկի բախտը։ Իսկ գուցե ուզում է ուրիշ քննչի տնօրինությա՞ն հանձնել գործը... Կամակոր ծերուկ է։

— Քուր ուզո՞ւմ եք— «Քննիչը, ով էլ լինի, նույն հարցերն է տալու, ծերուկ»։

Մեղադրյալը հակված տարուբերեց գլուխը՝ ոչ։

Գուցե իրո՞ք հետաձգել հարցաքննությունը... Ախր, տառապանքով, նույն հարցը հազար անգամ կրկնելով, այս կամակորի ատամների տակից աքցանով մի բառ պոկելով, ահա, ինչ-որ կետի արդեն հասել է, էգուց նույնը սկսել սկզբի՞ց։

— Հիմա ձեզ հանգի՞ստ եք զգում։

Ծերունին, հակված, գլխով արեց՝ այո։

— Ուրեմն կարելի է շարունակել։ Խնդրում եմ ուշադիր եղեք և աշխատեք չհուզվել։ Միևնույն է՝ այսօր, թե վաղը, ինձ կամ մեկ ուրիշի, դուք պարտավոր եք պատասխանել, ծերուկ։ Իսկ այժմ, ահա, այսպիսի

հարց՝ դուք երբվանի՞ց եք ճանաչում գործով տուժող հանգուցյալ Հակոբ Տոնոյանին։ Երբվանի՞ց եք ծանոթ։

Ամբաստանյալը ակամա բարձրացրեց գլուխը, աչք դիպցրեց պատուհանին և նորից հակվեց։ Փողոցը... պահեստների շարուկը... մայթերի հետ ձգվող պարիսպները... կեչիների արևոտ մայթը... աղյուսե պարսպի թիկունքից դիմացի մայթին հատվող փոքրիկ փողոցը...— այնքան հեռու էին թվում՝ կարծես մի ուրիշ քաղաքում, մի ուրիշ աշխարհում— աշնան իրիկնապահ էր, աղյուսե պարսպի անկյունից դիմացի մայթին հայտնվեց պստիկ մի ծերունի— ընդամենը մեկուկես ամիս էր անցել, բայց թվաց հեռու-հեռավոր մի օր՝ ուղեղի ծալքերում մշուշի մեջ լողացող։ Եվ ինչպես այն օրը, հիմա նույնպես մայթին հայտնված պստիկ ծերունին նախ հայտնվեց որպես ծերունի Մգրե, և Մգրե ծերունին ու մայթին մոլորված պստլիկ ծերունին, որ Հակեն էր, նույնացան-դարձան մեկ։ Եվ ինչպես այն օրը, հիմա նույնպես ձեռքերը պիշակի գրպանները խրած պստիկ ու մոլոր ծերունու հետ, որ մգրեներից մեկն էր, հայտնվեց Քարագլուխ գյուղը, խրճիթը, տեսիլքը, էրգիրը... Այնպես մեկ ու միասին ու նույնն էին՝ Մգրե ծերունին, Հակե ծերունին, հեռու լեռներում կորած Քարագլուխ գյուղը, ծխի մեջ խեղդվող խրճիթը— տեսիլքը, էրգիրը— ցավը, կարոտը— ցավը...

— Օ՞ֆ-օ՞ֆ, մերիկ,— և ինքը։ Նույնն էին։ Մեկ ու նույնն էին։

— Նո՞ւ, երբվանի՞ց եք ծանոթ։

— Վաղո՞ւց։— Ուշացումով և գլուխկախ պատասխանեց մեղապարտը։

— Կոնկրե՞տ։— Նորից քննիչը խոսեց՝ խիստ և կտրուկ— Կոնկրե՞տ, ծերուկ։

— Մնված օրից։

«Մնված օրից»,— կրկնեց մտքում։— Ես ու դու մեկ մարդ ենք, Տիգրան, մեկ ու նույն մարդն։ Ասա ինչո՞ւ. թե քու տեսածն ու իմ մեկ է, թե քու ապրածն ու իմ մեկ է, թե քու կորուստն ու իմ մեկ է, թե քու կարոտն ու իմ մեկ է, թե քու ցավն, Տիգրան, քու ցավն ու իմ ցավն մեկ է, ուրեմն, ես ու դու մեկ ու նույն մարդն ենք։ Ես ու դու ձեր գեղի օղորմածիկ Մգրեն ու մեր գեղի օղորմածիկ Կիրակոսն ու... ու թե ճիշտ կուզես իմանալ՝ քու հերն ու իմ հերն, քու պապն ու իմ պապն ու իմ պապի պապն նույն ու մեկ մարդն ենք. չունքի մեր ցավն նոր չէ, հին է մեր ցավն, Տիգրան։

— . . . . . .

— Մնված օրից,— կրկնեց մեղապարտը։

«Հըլա ծնվելուց էլ առաջ»,— ավելացրեց մտքում։— Հակեի գեմ-

քով ցավը՝ արյունոտ ցնցոտիներ հագած խեղճ ու կրակ այդ պատմությունը հեռվից է գալիս, տեսիլքը... տեսիլքը հայտնվել է նաև հորը, հայտնվել է նաև պապին, նաև՝ ապուպապին։ Ապուպապից ժառանգել է պապը, պապից՝ հայրը, հորից՝ ինքը, իրենից ժառանգել է որդին և որդուց՝ որդին, և տեսլահար է իր արյունը։ Իսկ ինքը կարծում էր...

— . . . . . .

— . . . . . .

...կարծում էր թե՝ ազատագրվել է. հեռացել է գյուղից, մարդներից, Մարդ ծերունու խրճիթից—ցավի ավերակ բնից և՝ փողոցը պրկել է... Զարմիտ-չարակամները գժտեցրին իրեն իր ցավի հետ, խռովեցրին իրեն իր ցավից, և ինքը միացավ նրան՝ այդ անմիտներին և հսկեց իր ցավը, ինչպես նրանք։ Հսկեց ու փորձեց խեղդել։

— Իսկ երբևէ վիճե՞լ եք։

Մեղադրյալը լուռ էր. թևերը ծնկներին ծալած-խոնարհված, և աչքերը փակ՝ ճոճվում էր։— Տեսնես, ի՞նչ է մտածում։ Գուշակ դառնալը երբեմն այնքան է պետք։

— Վիճե՞լ եք։

Մեղադրյալը գլխով արեց՝ այո։ «...Հսկել է ու հալածել...»։

— Իսկ ի՞նչ հողի վրա եք վիճել։— Ծերունին կարծես, բացվում է։

...հսկել է ու փորձել խեղդել։ Սակայն պարզվում է, որ ցերեկը ինքն է եղել իր ցավի հսկիչը, իսկ գիշեր՝ հակառակը, արթմնի եղել է իր ցավի հերն անիծող Վարպետ Տիգրան, իսկ քնած ժամանակ՝ ծերունի Մարդ, ծերունի Հակե, տեսլահար...

— . . . . . .

...Ծուխն ու մուժը սողացել-գալարվել-մոլեգնել են գանգում, իսկ ինքն իրեն խաբել է՝ գլխացավ է, կանցնի, ճիշն ու ծղրտոցը ականջմտուկների պես խլվլացել են ականջներում, իսկ ինքն իրեն խաբել է՝ ականջացավ է, կանցնի, բոցերը ձուլվել-դարձել են ածուխի շիկացած կտորներ և այրվել, ակնակունքներում, իսկ ինքն իրեն խաբել է՝ աչքացավ է, կանցնի... Տեսլահար է իր արյունը... արյունը։ Երակներում սուզված ցավը իր հետ տանջվել է, իր հետ հոգնել է, իր հետ ծերացել է և իր հետ գերեզման կգնա... Ոչ... ոչ, ցավն էլ այն է, որ անմեռ է ցավը՝ ժառանգել է արդեն. արյան հետ ժառանգել է սրդուն։ Եվ որդին... որդին...

Նա կտրուկ բարձրացրեց գլուխը.

— Ես ուզում եմ որդուս տեսնել։— Հարկավոր է որդուն ասել, որ թանավորված է...

— Նախ հարցիս պատասխանեք։— Տես, թե որտեղ է ապրում ընդ-

հատել հարցաքննությունը։— Նախ հարցիս պատասխանեք, ծերուկ,— քննիչը մեղմացրեց տոնը,— հետո կբացատրեք նաև, թե ինչու եք ուզում տեսնել ձեր որդուն։

«Դու թունավորված ես, տղա։— Շաղված հայացքը քննչին, մտքում խոսքն ուղղեց որդուն և նորից խոնարհվեց։— Քու տղեն, իմ թոռն, նմանապես թունավորված է»... Արյունը... Տեսլահար ու ցավից գերված է արյունը... Փողպատը պոկե՛լ-ազատագրվե՛լ... Ե՞րբ կտրեց երակը, որ մարմինը դատարկվեց արյունից, և արյան հետ ցավը հոսեր բաց երակն ի դուրս։ Միայն այդպես՝ երակները դատարկելով միայն կարող էր դատարկվել ցավից։ Ազատագրվե՛լ... Ուրեմն ինչի՞ համար էին անզոր ճիգերը, ցավը խեղդելու այդ անիմաստ փորձերը... Ինքնախաբեություն... Ինքնախաբեությո՞ւն, թե՞...

— Մեղադրյալ Նահապետյան...

Քննիչը սպասում էր, որ մեղադրյալը շտկվի, նայի, իսկ նա դանդաղում էր - ինքնախաբեությո՞ւն, թե՞...

— Ի՞նչ հողի վրա եք վիճել։

- Ո՞ւմ հետ։-- ...թե՞ դավաճանություն...

— Գործով տուժող հանգուցյալ Հակոբ Տոնոյանի հետ։— Կապսին շրջող բամբ և հատ-հատ շեշտեց քննիչը։

— Չեմ վիճել։

-- Մեղադրյալ Նահապետյան,— քննիչը ծուռ ու խոլոր նայեց,— պարզվում է, որ դուք կարող եք նաև խոսքից ետ կանգնել։ Ձեր եք, բայց կյանքի համար դեռ դողում եք։

Ծերունին քմծիծաղեց։

— Ջրաղացը կորցնելուց հետո չախչախի մասին մտածելն անմտություն է։

— Եթե այդպես է, ձեր խոսքից ինչո՞ւ եք հրաժարվում։

— Ո՞ր խոսքից։

— Քիչ առաջ ասացիք, որ Հակոբ Տոնոյանի հետ վիճել եք։

«Հակոբ Տոնոյան...— Այնպես օտար հնչեց, այնպես անծանոթ,— ո՞վ է Հակոբը, ո՞վ է Տոնոյանը, ո՞վ է Հակոբ Տոնոյանը... Իր բացած գնդակից, ուրեմն, նա՞ է սպանվել՝ Հակոբ Տոնոյանը... Երանի այդպես լիներ, երանի անիծյալ գնդակից սպանված լիներ նա՝ Հակոբ Տոնոյանը... Այդպես լիներ, և Հակեն լիներ հիմա... Լիներ։— Նա թեքվեց դեպի պատուհանը։— Հրմբ ու իմ աչքից կծրարվիս, կկարոտիմ քեզ։— Հակե՞ն էր ասում իրեն, թե՝ ինքը Հակեին...»։

— Ինձ նայեք։— Եվ ծերունու հայացքին դիմավորեց հեգնոտ ժպիտով. որպես թե՝ վախենո՞ւմ եք։— Ուրեմն հրաժարվում եք ձեր խոս-

քից։— Նա արդեն զգացել էր՝ Ծերունին շուտ է վիրավորվում, իսկ ով շուտ է վիրավորվում և բռնկուն է, նա ճշմարտություններ է շպրտում։— Վախենո՞ւմ եք։

— Հակոբ Տոնոյանը ինձ անծանոթ է։

Քննիչը, որ գրասեղանին հակված շեղահայաց ու հեգնոտ ժպտում էր, հանկարծակիի եկավ. ինչ-ինչ, բայց այդպիսի պատասխանի չէր սպասում։

— Այո, անծանոթ է։ Այդպիսի մարդու ես չեմ ճանաչում։— Մեղադրյալը բորբոք նայում էր՝ հարցապնդողի պես, ոչ թե պատասխանողի։— Իսկ Հակեն... Հակեն...— և ցավով տմբտմբացրեց,— Հակեն, երիտասարդ...— ասե՞լ... ասե՞լ, թե ոչ,— ի՞նչ պետք է ասեմ, դու չես հասկանա, բայց ասեմ... Իսկ Հակեն իմ ցավն էր։ Եվ իմ ցավն է։ Եվ իմ ցավի հետ վիճել եմ։ Վիճել եմ ու խոսել։ Վիճել եմ ու երես թեքել,— ինքց ծերունին։— Թե որ կռվացրեց, ով ինձ իմ ցավի դեմ հանեց, թե մեղավորներն ով ու ովքեր էին, դա ուրիշ հարց, վերջին հաշվով մեղավորը ես եմ։— Նա բռունցքը խփեց կրծքին։— Ես։ Ես եմ դավաճանել իմ ցավին։ Իմ խեղճ ցավին, իմ որբ ու անտեր ցավին, իմ ծեր ցավին, ինքս ինձ դավաճանել եմ։ Ու հիմա, հիմա, թե տղամարդ ես, թե իսկական քննիչ ես, դատիր ինձ դրա համար՝ իմ ցավին դավաճանելու համար։ Դրա համար հարցեր տուր և պահանջիր, որ պատասխանեմ և մպասիր, թե ինչ պատասխան պետք է տամ, դրա համար գոռա իմ ծեր ու հիմար գլխին, դրա համար բռունցքդ խփիր սեղանին, դրա համար հեգնանքով ու քմծիծաղով նայիր իմ աչքերի մեջ։ Դրա համար՝ թուլամորթության, իմ ցավին դավաճանելու համար։ Ու թե այդպես լինի, ես վեր կենամ ու համբուրեմ քո ճակատը, համբուրեմ ու խոնարհվեմ։ Ես, հալևորս, այստեղից մինչև քո ոտքերը շոքեշոք գամ... Ա՜խ։— Քակվեց ծերունին և ձեռքը տարավ գրպանը, ոնքալով ու ճերմակ գլուխը օրորելով՝ ծխախոտ վառեց և դարձավ դեպի պատուհանը։

«Ա՜խ, ինչո՞ւ էսպես էղավ...», — ինչո՞ւ այսպես անմիտ ավարտվեց կյանքը... Ինչո՞ւ ինքն իր դեմ ելավ՝ իր որբ ցավի դեմ։ Ումի՞ց էր փողպատը պոկում՝ այս դաժան աշխարհում անտեր ու մենակ մնացած մի երեխայից։ Ում էր խեղդում իր երակներում՝ մի որբի։ Չարի պահանջն էր... Ոչ, աշխարհում չարը միշտ էլ եղել է, մարդն ինքը չպետք է ենթարկվի չարի կամքին, մեղավորը ինքն է, ինքն է մեղավորը։ Գոնե հիմա... հիմա, երբ մեղադրական աթոռին է նստած, պետք է ընդունել։ Դատում են շեղած մի բանի համար՝ Հակոբ Տոնոյանին սպանելու, բայց ինքը հո գիտի. այլ է իր մեղքը, ուրիշ է և մեծ է իր մեղքը՝ դավաճանություն։

Քննիչը, հայացքը ծերունու խոռով կիսադեմին, փորձում էր կռահել, թե այդպես հուզված ու կրքոտ ինչ ասաց նա։ Ծերուկը իրոք բռնկվեց և ինչ-որ ճշմարտություն բացեց... Գաղտնիք շպրտեց։ Բայց ի՞նչ։ Նա միայն այնքան հասկացավ, որ մեղադրյալը խոսքից ետ չի կանգնել. հարձագանք (մտքի հետ) պարզապես գլխով է արել՝ այո։— Իսկ, հետաքրքիր է, ինչո՞ւ է ուզում տեսնել որդուն։ Երևի որդու միջոցով ուզում է բողոքարկել, փոխել քննիչը։

— Ջուր ուզո՞ւմ եք։— Որքան անհասկանալի ծերուկ է։

Մեղադրյալը տարուբերեց գլուխը՝ ոչ։— Թուլամորթություն-ինքնախաբեություն-դավաճանություն...։ Ա՛խ, ինչո՞ւ այդպես եղավ... Եթե չարը գժտեց իրեն իր ցավի հետ (և այդպես էր), ապա եկավ այն օրը, երբ թուլացավ չարի կամքը, շնչավորվեց բարին, և ինքը արդեն կարող էր հալածված ցավին տեր դառնալ։ Իսկ ինչո՞ւ չգնաց-չվերադարձավ Քարագլուխ գյուղ, իր ցավի բույնը՝ Մգրեի խրճիթը... Ինչո՞ւ չգնաց։ Ինչո՞ւ խաբեց իրեն, թե ինքը արդեն Մգրե չէ, այլ Վարպետ Ծիգրան...

«Ինչո՞ւ էսպես եղավ, Հակե»։— Եվ այնպես ստացվեց, որ հարցը արդեն ցավին էր ուղղված. ծերունի Հակեին ուղղված հարցը ուղղված էր ցավին...

Եվ, կարծես անակնկալ կանչից, նա կտրուկ բարձրացրեց գլուխը և նայեց պատուհանից դուրս։— Սուրբ Մարաթուկ, ահա և քեզ ուշացումով հայտնված հարց՝ ինչո՞ւ եղավ... ինչո՞ւ եղավ... Իրոք, բոցերից լիզված, խարնոտ ցնցոտիներ հագած այդ խեղճ ու կրակ պատմությունը ինչո՞ւ եղավ... Տեսիլքը ինչո՞ւ հայտնվեց։ Պատճառը։

«Պատճառն, Հակե, պատճառներն ու պատճառն»։— Հերն անիծած, զոր ու գիշեր ձեն-ձենոց պատմում էին, պատմում էին, խեղճ պատմությունը միմյանց շուրթերից խլելով պատմում էին ինքն ու Հակեն, հիշում էին, թե ինչպես եղավ, ինչպես և ինչպես, և ինչպես եղավ, բայց չմտածեցին՝ իսկ ինչո՞ւ եղավ, հարց չտվեցին, ոչ ինքը՝ Հակեին և ոչ Հակեն իրեն՝ ինչո՞ւ այդպես եղավ։ Պատճառը։ Իսկ չէ՞ որ դա էր կարևորը, կարևորը դա էր՝ պատճառը, պատճառը, Հակե, պատճառը։

Եվ դարձավ դեպի քննիչը.

— Գուցե այսօր հետաձգե՞նք քննությունը։— Խիղճ ունենար և այսօր, հիմա ընդհատեր հարցաքննությունը, և ինքը ծեր ու հիմար գլուխն ափերում սեղմած նստեր խցիկում ու մտածեր՝ պատճառը...

Քննիչը նայում էր մայթեզրի կեչիների դեղին վարսերին, ուշացումով դարձավ և, կարծես, ժպիտով։

— Պայմանով, ծերուկ, որ ասես, թե ինչո՞ւ ես ուզում տեսնել որդուդ։

«Պատճառն, Հակե»։— Տնքոցով հակվեց և բռունցքները քունքերին սեղմած և աչքերը փակ ճոճվեց։— Սուրբ Մարաթուկ, այս հասարակ ճշմարտությունը հիմա՞ պետք է հասկանար... Պետք էր, ուրեմն, իր ցավի հետ հալածվեր, պետք էր, ուրեմն, փախչեր ու նորից գրկվեր իր ցավին, կարոտած փաթաթվեր ու գժվեր ու... ու ինքնասպան դառնար և որպես մարդասպան նստեր մեղադրական աթոռին՝ քննիչի մտրակող ձայնի տակ և նո՞ր հասկանար և հասկանար... հասկանար մի ոտքը գերեզմանո՞ւմ, երբ օր չունի իսկ մեղքը քավելու։

— Նո՞ւ։— Քննիչը նայում էր պատուհանից դուրս։

Դուրսը այնքան հաճելի էր— այսպիսի արևոտ ու երկար աշուն մեկ էլ ե՞րբ է եղել— գրավող-հրապուրող, գուցե, իրո՞ք, ընդհատել հարցաքննությունը... Զգանգահարի՞ ընկերուհուն... Արժի հիմա ընկերուհու հետ թափառել փողոցից փողոց, դուրս գալ քաղաքից, ընտրել արևոտ մի բացատ և մեկնվել արևի տակ։ Այսպիսի արևոտ աշուն մեկ էլ ե՞րբ կլինի... Վայելել է հարկավոր... Իսկ ահա թե ինչով է զբաղված... Արևը վայելել է պետք...

— Նո՞ւ, ծերուկ։

Այս մեղմատոն հրավերով մեղադրյալը պետք է որ բարձրացներ գլուխը, բայց չարձագանքեց, թվաց, թե չլսեց նույնիսկ։ «Ա՜խ, Հակե, քու մեղքն ու իմն մեծ է— մենք մեր ցավին տեր չեղանք, Հակե, ո՛չ ես, ո՛չ դու։ Չիս հանեցին իմ ցավի դեմ, ու ես աշխարհն թողած կռիվ տվի էդ որբուկի հետ, իսկ դու քու վիզն ծռեցիր ու դարձար ցավին գերի... Գերի, Հակե, տեր չէ, գերի, իմ ախպեր»։— Այո, այո՝ գերի— երբ ցավը ընդունում ես ու հարցաքննում՝ որտեղի՞ց եկար և ինչո՞ւ կա՝ ու չկա՝ ինձ մոտ, դու ես նրա տերը, տերը դու ես, իսկ երբ պարանոցդ ծռում ես՝ իմն ես, ախպեր, եզած-կատարված բան է, ուզի-չուզի իմն ես, նա է քո տերը, ցավը... Ա՜խ, եթե այսքանը հասկանար այն ժամանակ, գյուղում, Մգրե ծերունու խրճիթում... Եթե հասկանար... Կմտներ այդ ավերակ խրճիթը ոչ թե ծերունի Մգրեի կողքին փլվելու, այլ գեմ-դիմաց կանգնելու, ոչ թե ականջը կախելու արյունոտ ու տխուր պատմություններին, այլ հարցնելու՝ ինչո՞ւ այդպես եղավ։ Ինչ որ պատմում ես, գիտեմ, այս խեղճերը նույնպես գիտեն, բայց ոչ մեկը չգիտի, թե ինչու այդպես եղավ, ո՞րն է պատճառը։ Պատճառները, պատճառը, քեռի Մգրե՝ եվ թող պատասխաներ, որպես մեծ մարդ, որպես կյանք տեսած-իմաստնացած մարդ թող բացատրեր։— Այս արյունոտ պատմության մեղավորները մեր արյան թշնամիներն են։ Միայն նրա՞նք։ Աջխա՞ռհքն է մեղավոր... Բոլորը մեղավոր են, բացի քեզնի՞ց, քեռի Մգրե, բացի ինձ-

նի՞ց, բացի այս խեղճ ու կրակների՞ց, որ խոնարհ ականջ են պահել։ Պատճառը, պատճառը, քեռի Մգրե...

— Նո՞ւ, ծերուկ։— Քաղաքն ի վեր թռած հայացքի տակ, հեռվում արևոտ մի բացատ կար, և դիմեց ի միջի այլոց։— Նո՞ւ։— Այդպես ի միջի այլոց կառապանն է դիմում գլուխքարշ բեռնաձիուն։

...պատճառն ու պատճառներն ասա և քո մեղքի բաժինը գտիր։ Գտիր և ընդունիր։ Դու քո մեղքի բաժինը ընդունիր, ես՝ իմը և մնացած բոլոր քո բախտակիցներն ու ցեղակիցները այս տխուր պատմության իրենց մեղքի բաժինը թող գտնեն և ընդունեն։ Բոլորը։ Չէ՞ որ եղածը մի մարդու գլխին, մի գերդաստանի գլխին եկած փորձանք չէր, այլ ժողովրդի ողբերգություն։ Այդ ողբերգության պատճառները, գլխավոր պատճառը։ Եվ ամեն մեկը մատը թող դնի իր երակին և հարց տա՝ ինչո՞ւ այդպես եղավ, մատը դնի իր երակի վրա և պատասխան պահանջի՝ այնքան և այնքան և այնպես պահանջկոտ և այնպես անհաշտ, որ տեսլահար արյունը շփոթվի երակներում։ Ամեն մեկը մատը նշտարի պես իր երակին թող դնի և բոլորը միասին՝ ցեղի երակին։ Այդպես, քեռի Մգրե, միայն այդպես։ Եթե քո պատմության կողքին հարց չպետք է դրվի, վերջ այդ պատմությանը, այդ պատմությունը թույն է։ Եվ եթե այդ հարցը նախ քեզ չպետք է ուղղես, աշխարհին ուղղելը իզուր է՝ ձյան փաթիլ... Այս հապարակ ճշմարտությունը եթե այն ժամանակ հասկացած լիներ՝ այնտեղ, գյուղում, եթե հասկացած լիներ... Երիտասա՞րդ էր... Իսկ Մգրե ծերունի՞ն... Այն ժամանակ նա, ախր, այսօրվա իր տարիքն ուներ... ավելի ծեր էր։ Ուրեմն, Մգրե ծերունուն պետք էր քշել իր խրճիթից, պետք էր խռովեցնել իր ցավի հետ, Մգրեն ինքն իրեն խաբելու համար հեքիաթներ պետք է հորիներ, վերջ... վերջը նստեր մեղադրական աթոռին, նո՞ր հասկանար...

«Ա՜խ, հայի վերջին խելքն իմ գլխում էղներ»։— Հայի վերջին խելքը... Հայտնվում է այնքան ուշացումով, այնքան ուշ՝ կյանքն ապրելուց հետո, մահից առաջ և հայտնվում է որպես... Որպես ի՞նչ։ Որպես ողջույն և որպես ափսոսանք։ Ահա՝ դատավճռից առաջ... մահից առաջ... Եվ ո՞ւմ է պետք։

— Ես ուզում եմ որդուս տեսնել։— Հուսով նայեց, բայց քննիչի հայացքը դրսում էր։

— Ինչո՞ւ։— Եվ չկտրվեց պատուհանից. հեռվում, քաղաքից դուրս, կեչիների արևոտ մի բացատ կար՝ լցված աշնան դեղին արևով... էգուցէլօր, շատ-շատ մեկ շաբաթ, և բացատում կմոլեգնի փոթորիկը։

Ամբաստանյալը ինքն էլ դարձավ դեպի պատուհանը։ Որդուն պետք է ասել, որ վերադառնա գյուղ։ Գնա և մտնի ծեր քավի ավերակ բունը

Մեր Մգրեն դեռ կա... կա, ապրում է դեռ, Հակեն, որ իր հասակակիցն էր, Մգրե էր, գյուղում իր հասակակիցներից դեռ կան՝ բոլորը Մգրե, և հիմա նստած պատմում են։ Աշուն է. և հիմա մեկը խրճիթի կենտրոնում փլված պատմում է, պատմում է, պատմում է... Եվ որդին թող գնա, քշի ուղիղ այդ խրճիթը, շրխկոցով բացի խրճիթի դուռը և ասի,— ինչո՞ւ։— Երբ էլ ներս մտնի, պատմության որ հատվածում էլ վրա հասնի, հարցը կլինի տեղին։— Ինչո՞ւ։— Ես Տիգրանի որդին եմ, թող ասի, ես ծերունի Տիգրանի որդին եմ, իմ հորը այս խրճիթից վտարեցին, և նա իր ցավից խռովեց, իսկ ես որդուս հետ եկել եմ՝ տեր դառնալու, տեր դառնալու նաև հորս փոխարեն և հարցնում եմ՝ ինչո՞ւ այդպես եղավ։— Եվ Մգրեին թող հանի իր տեղից։— Վեր կաց, ես եմ պատմելու։— Եվ նստի Մգրեի տեղն ու հարց տա։— Ինչո՞ւ։ Պատճառը։ Մեր արյան թշնամիների հերն անիծած, աշխարհի հերն անիծած, մատդ քո երակին դիր, քեռի Մգրե, և հարց տուր՝ ինչո՞ւ այդպես եղավ։ Պատճառը։

«Էդպես... Հրմը էդպես»։— Ցավը Մգրեի շուրթերին անտեր էր ու որբ էր։ Եվ այդպես էլ մնում է։ Որդին որդուն առած թող գնա. որդեգրի այդ ծեր ու դաղրած ցավը, ընդունի որպես որդի և որպես որդի դաստիարակի, կրթի և դաստիարակի։ Ահա այդպես։

«Հայի վերջին խելք...»։

— Քաղաքացի քննիչ,— մեղադրյալը պահանջկոտ դարձավ և սպասեց, որ քննիչը պատուհանից կտրվի,— ես ուզում եմ որդուս տեսնել։

— Ինչ ունես ասելու՝ ինձ ասա, ես կփոխանցեմ. միևնույն է, այսօր որդուդ հետ հանդիպելու եմ, ծերուկ։

Մի տեսակ, ի միջի այլոց ստացվեց. թորամանկելուց հետո պետք էր հետևել արձագանքին, բայց արևոտ մի բացատ ձգում էր նրան։— Հարցաքննությունը հետաձգել է պետք և... ճիշտ կլինի նաև, իրոք, հանդիպել ծերունու որդուն։ Նաև՝ գործով տուժող հանգուցյալի թոռանը։ Հենց այսօր ծանուցագրեր կուղարկի։ Վերջիվերջո, եթե հանցագործությունը թշնամական հողի վրա է կատարվել, ապա նրանց նույնպես հայտնի է։ Եվ նրանք երիտասարդ մարդիկ են, կովկասցի են, բայց նոր սերունդ և հին պատմություններին, ավանդական սովորություններին վերևից նայող...

— Որդուց բացի ուրիշ ո՞վ ունես քաղաքում։

— Չունեմ։

— Իսկ...— քննիչը ուզում էր հարցնել՝ իսկ գործով տուժող հանգուցյալը թոռից բացի ո՞վ ունի այս քաղաքում. Բայց տեղն ու տեղը հայտնվեց մեկ ուրիշ հարց և հարցի հետ նաև՝ անակնկալ մի միտք։ Հայտնված միտքը շփոթեցնելու չափ անակնկալ էր,— իսկ Հայաստա-

նում... գյուղում,— գյուղ Քարագլխի անունը մոռացել էր, շտապ աչք դիպցրեց գործին, բայց ոչինչ չնկատեց և շորոնեց՝ ծերուկը կհասկանա, թե խոսքը որ գյուղի մասին է,— գյուղում ազգակից-բարեկամներ ունե՞ք...

Ամբաստանյալը ուշացնում էր պատասխանը. «Ասե՞լ, որ ոչ մի բարեկամ և ոչ մի ազգակից չունի, ասե՞լ, որ ինքը, որը մի տղա, մենակ է հասել Քարագլուխ»։

— Ունե՞ք։— Մեղադրյալի պատասխաններից ոչ մեկին այդպես լարված ու անհամբեր չէր սպասել։

— Ունեմ։— Տնքաց ծերունին։

«Մեկն Հակեն էր»։

— Ունես, ուրեմն։— Քննիչը հանգիստ շունչ քաշեց։

Հայացքը մայթեզրի կեչիներն ի վեր և բարձրահարկերի տրանքներով հեռու-հեռու, մեղադրյալը գլխով արեց՝ այո։

«Ունիմ,— կրկնեց մտքում,— շատ ունիմ... Ամենքն էլ իմ արնակիցներն են. մեկ ու նույն բանն ասողը բոլոր մարդիկ բարեկամ ու ազգակից են»։

— Իսկ հանգուցյալը գյուղում հարազատներ ունի՞։

Մեղադրյալը գլխով արեց՝ այո։

— Այդպես... այդպես, ծերուկ, այդպես։

Այնպես մտերմիկ էր տոնը, այնպես ջերմ, որ ամբաստանյալը ակամա նայեց։ Խանդավառ ու հեռագնա ժպիտ կար քննիչի դեմքին, իսկ ձեռքերը, չգիտես ինչու, շփոթվել էին և գրասեղանի խառնափնթոր թղթերի մեջ ինչ-որ բան էին որոնում։

— Այդպես, ծերուկ, այդպես։

— Ես որդուս եմ ուզում տեսնել։

— Որդուդ կտեսնես, ծերուկ, հասարակ բան է դա, շատ հասարակ։ Դեպ, որդիդ ի՞նչ է աշխատում։

— Որդիս ինժեներ է։ Շինարար։

— Օ՜, շինարար, վարպետ Տիգրանի որդին է... Շինարար։ Հենց այսօր ես կտեսնեմ որդուդ, վարպետ Տիգրան։ Իսկ... իսկ...— իրենից զատված, դուրս թռած հայացքով և հեռագնա ժպիտով ու ներշնչված նայում էր մեղադրյալին և, և գլխի ընկավ, որ նրան ուղղվելիք հարց չունի։ Իսկ ձեռքերը գտան որոնածը՝ հեռախոսի լսափողն էր։ Եվ, համարը հավաքելիս, աչքով արեց և գլուխշարժումով խրախուսեց մեղադրյալին և դաղտնիքի պես շշնջաց.

— Լավ կլինի, ծերուկ։— Եվ լսափողի ու աթոռի հետ շրջվեց դեպի պատուհանը։

Այնուամենայնիվ, հետաքրքիր էր, քննիչի մտքով ի՞նչ անցավ-դարձավ, որ այսպես շառագունել է և այնքան է կորցրել գլուխը, որ իրեն, մեղադրյալին, աչքով է անում և... Վարպետ Տիգրան ասաց... Ի՞նչ պատահեց։

Քննիչը հակվեց լսափողին և սկսեց առանց նախաբանի։

— Կարո՞ղ ես գուշակել, թե ես ու դու ուր ենք գնալու...

— Ա՜խ,— Տիգրանը խորը տնքաց ու փակեց աչքերը։

Ամեն ինչ հասկանալի էր։— Քննիչը գնում է Հայաստան... Գնում է գյուղ... Գնում է Քարագլուխ... Քարագլուխ։— Եվ ծրարված կոպերի տակ խլրտաց գյուղը։— Անկոխ քարերով և հողե կտուրներով տները, կտուրներին՝ դեզեր և թիկունքներին՝ աթարի ամբարներ, պատաշարերի մեջ սեղմված ծուռտիկ փողոցները, ձորապռնկին՝ Մգրեի խրճիթը և իր տունը... իր տունը՝ մերկ, առանց դեզի և առանց աթարի կուտակի և դատարկ ժանգոտ փականք։— Իր տունը... գյուղի տները, Մգրեի խրճիթը և իր տունը նա տեսավ այնպես, ինչպես թողել էր երեսուն տարի առաջ, հազար ինը հարյուր քառասունիններին։ «Չիս քեզ հետ տար»։— խնդրեց մթությունում և պահի մեջ քննիչը որդու պես հարազատ թվաց։ Եվ ականջն ընկնող ձայնը, կարծես, քննիչի ձայնը չէր (—...չգուշակեցիր... ոչ, չգտար... ոչ, ոչ, սիրելիս, հեռու, շատ հեռու մի՝ տեղ)։— Աշուն է, ծերունի Մգրեի լաթ-արտում շաղգամի բազմերանգ փոերը հոգնած մեկնվել են արևի տակ, Մգրեն արտեզրին նստած ծխում է ու սպասում ձմռանը, խրճիթի անկյունից մի տղա ծիկրակում է հողից դուրս մղված մանուշակագույն գլխիկներով շաղգամներին, տնամերձի փորփոշտ հողերի մեջ երեխաները գլուխկոնծի են խաղում և գառների պես և գառների հետ կրծմրծում կաղամբների ճերմակ գլուխները, գյուղի բարակ ու տերևափառ առուներում ուռչում են տակառները, զանթարներն ուսած հարս ու աղջիկները ձորի աղբյուրից ջուր են բերում, բերնեբերան լի գուլլերի ջրե հայելիներում լողում են փայտե խաչերն ու կաղամբի թփերը, Նհոն... Նհո պապը փշե խրձի տակ հակված քայլում է ձորապռնկով...— Տիգրանը, աչքերը գոց, Քարագլուխ գյուղն ու գյուղի մարդկանց տեսնում էր այնպես, ինչպես թողել էր երեսուն տարի առաջ։ Նհո պապը փուշխրձի տակ հակված, հայացքը ոտքերի տակ և ատամների տակ տնքոց՝ քայլում էր ձորապռնկով, գյուղեզրին Վարդո մարեն՝ ափը աչքերին հովհար, կանչում է դաշտապահ Մոսեին— Մոսեեե՜... դու Թուխ Մանուկի կո՞ղմ կերթաս, Մոսեեե՜... էս մոմերն իմ տեղակ հասցրու ու վառե Թուխ Մանուկին, Մոսեեե՜...— «Չիս քեզ հետ տար, տղա»։— (— ...Հեռու, ավելի հեռու, սիրելիս, էկզոտիկ մի աշխարհ)։ Գյուղեզրին կանգնած Վարդո մարեն կանչում է ձորի կողմ,— Մոսեեե՜— ձորեզրի քարերի մեջ տնքում է մշեցի

Կրպեն՝ նոր արտ է պատրաստում։ Ձորը արձագանքում է մուրճ ու սեպերի զրնգոցին, անձավները տնքում են Կրպեի տնքոցի հետ, ձորից այն կողմ, լեռան լանջին, նախշուն քարերի մեջ խլպլտում է Ավգիի հոտը, հովիվ Ավգին, մահակին հենված, խլվլացնում է խուրձ-բեղերը,— հուռի-հո՜ո... ցը-ցը-ցը... հուռի-հո՜ո...,— իսկ լեռան թիկունքին «խուչերով» արտերն են — աշուն է— մերկ ու դադրած արտերի ցողունները հիմա նախիրն է լիզում, իսկ նախրապան Բարսեղը... քեռի Բարսեղը քարակուտակին նստած երգում է. «Աղջի, Հայկո, Հայկո, դոշերդ մի բանա, դոշերդ մի բանա...»։

Եվ ականջներում զրնգաց Հակեի երգը, «խուլնգո, խուլնգո, հեռավոր ու խորունկ տեղերեն կուգաս...»— «Չիս քեզ հետ տար ու էլի ետ բեր, տղա»։— (— ...Ոչ, այդքան էժան չէ, որ հեռախոսով ասեմ... Կես ժամից կհանդիպենք, իսկ մինչ այդ, դու փորձիր գուշակել, հիմարիկս...)— «Տար ու գիմ դատն հոն արա, տղա, մի գնդակ բաց իմ անարժան ճակտին, ու ես թող ընկնիմ ու թաղվիմ հոն, էն անուշ քարերի մեջ»։— Եվ հանկարծ գլուշ Քարագլուխն ու գյուղ Սևիդը, էրգիրը, ծննդավայրը՝ Սևիդը, նույնացան, փաթաթվեցին ծուխ ու դումանով, և նա հասկացավ, որ այլևս չի տեսնելու պռատ այն կյանքը, որ դեռ մնում է, քարշ կտա ով իմանա ո՞ր ծմակում, որ գրողի ծոցը և ցավն ու կարոտը սրտում մի օր կփակի աչքերը։ «Խուլնգո, խուլնգո...»։

— Այդպես։— Քննիչը ափերը եռանդուն շփեց իրար, իսկ հայացքով արդեն հավաքում ու սրբում էր գրասեղանին թափթփված հիմարությունները։— Մերուկ։— Այդպես՝ ափերը եռանդուն իրար շփելը և այդ ջահելավարի ու անմիջական տոնը միասին մի-մի թաս օղի խմելու հրավեր էր, կարծես, բայց Տիգրանը գլուխը չբարձրացրեց։

«Խուլնգո, խուլնգո, հեռավոր ու խորունկ տեղերեն կուգաս... Ինչ անուշ կերգեր Հակեն...»։

— Շատ հոգ մի արա, ծերուկ, ամեն ինչ լավ կլինի։

Հետո քննիչը մոտեցավ և ձեռքը դրեց մեղադրյալի հակված ուսին։

— Վարպետ Տիգրան, Հայաստանում հիմա ինչպիսի՞ եղանակ է։

— Անուշ եղանակ է։— Ուշացումով և աչքերը փակ ու մայրենիով շշնջաց Տիգրանը։— Անուշ, շատ անուշ եղանակ է...

«Ինչ անուշ կերգեր Հակեն... Խուլնգո, խուլնգո, հեռավոր ու խորունկ տեղերեն կուգաս, բույնդ շինիր ավերակ բերդի պարիսպների մոտ...»։

ՄՈՒՇ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԻՆ ԹԱՂԻ ՏՂԱՆ

1

Տարիներ, է՜, տարիներ-տարիներ առաջ, երբ Մլեհը՝ Մուշ քաղաքի Վերին Թաղի տղան (այդպես աշխատանքային ընկերներն էին կատակով դիմում և ինքն էր իրեն կոչում՝ խմած ժամանակ), երբ վարպետ Մլեհը երիտասարդ էր, մի օր, գարնան մի առավոտ, մի արծիվ մտավ քաղաք, տարօրինակ բան, բարձրիկ սարերը թողած՝ արծիվը քաղաք մտավ և նստեց որմնադիր Մլեհի դեմ-դիմաց։ Դե՜, արծիվ էր, հայացքը կտրել էր՝ ահա այնտեղ, քարակուտակի վրա, ցից մի որձաքար կա, և թևեց ու իջավ որձաքարին և նստեց որքան սիրտն ուզում էր (շատ պետքն էր, թե ինչ խոհերի մեջ պիտի գցի որմնադիր Մլեհին) և թևեց ու գնաց, երբ սիրտը ուզեց (և շատ պետքն էր, թե որքան երկար-երկար տառապանք պետք է թողնի Մուշ քաղաքի Վերին Թաղի տղայի համար)։

Այսպես եղավ. աշխատանքի ժամանակ, հենց քարը պատաշարին նստեցնելու պահին, ստվեր սահեց վարպետ Մլեհի գլխավերևով։ Եվ նա տեսավ, որ մի արծիվ իջավ քիչ հեռու՝ շենքի ապագա քիվի համար առանձնացված քարակուտակին և նստեց ցցված որձաքարին։ Սկզբում իմիջիայլոց ընդունեց և անմիջապես չանդրադարձավ, որ դա, ախր, հավքերի արքան է, իսկ հավքերի արքան հազարից մեկ մարդկանց մոտ չի գալիս։ Իսկ երբ արծիվը նստեց ու մնաց, որմնադիր Մլեհը մուրճը դրեց քարին, ծխախոտ վառեց և պատին նստած ծխեց ու մտածեց հավորքիների արքայի մասին։

Արծիվը երկար նստեց, և Մլեհը, աչքը արծվին, ծխեց ու հազար ու մի բան մտածեց։ Զարմանալի էր, որ արծիվը քաղաք մտավ։ Սարերը թողած, տաք ու զով քարափները թողած, բարձունքի իր բույնը թողած՝ ինչո՞ւ քաղաք մտավ։ Գուցե՝ թշնամուց հալածվա՞ծ... Եթե թշնամուց հալածված թողել է սարերը, թողել է քարափները, թողել է բարձրիկ իր բույնը և փախել մարդկանց մոտ՝ հօգնություն, ապա հիմար է այս արծիվը։ Բայց նա, հավքերի արքան, երկնքի տերն է. ոչ մի հավորիք երկնքում չի կարող հալածել նրան... Ուրեմն՝ երկրի իր թշնամուց է հալածվել... Իսկ երկրի վրա ո՞վ է արծվի թշնամին... Կարող է լինել օձը։ Կարող է լինել... կարող է լինել... Չի կարող չունենալ. արևի տակ կենդանի շունչ չկա, որ հալածող չունենա,— մտածեց Մլեհը,— որ հալածող չլինի և հալածող չունենա... Ո՞վ է հալածել արծվին... Վայ թե՝ օձը, վայ թե... Շատերը կարող են լինել և բոլորը օձի պես նենգ։ Եվ այս արծիվը փա-

խել է ոչ թե թշնամու ուժից, այլ նենգությունից, ոչ թե ուժեղ թշնամուց, այլ թույլ թշնամու մեծ նենգությունից։ Փախել-եկել է մարդկանց մոտ իմանալու, թե իր թշնամիները ինչո՞ւ են նենգ։ Այս արծիվը վայ թե ծեր արծիվ է, ծեր արծիվ է ու հա՜ ուզել է հասկանալ իր թշնամիների խարդախությունը, հինգ հարյուր տարի իզուր փորձել է հասկանալ երկրային իր թշնամիների դավերը և հիմա, մեռնելուց առաջ, եկել է մարդկանց մոտ... Վերջապես, ուզում է հասկանալ՝ նոր մեռնել։ Այս արծիվը իմաստուն արծիվ է... Արծիվները երևի ընդհանրապես իմաստուն են, որովհետև երկար, շատ երկար են ապրում... Իսկ տերը ինչո՞ւ է արծվին այդքան երկար կյանք կամեցել,— մտածեց Մլեհը,— հատկապես՝ արծվին։ Որ արծիվը ի՞նչ անի այս աշխարհում... Իսկ սա, այս արծիվը, քանի՞ դար է ապրել և ինչե՞ր է տեսել... Իսկ տեսածները հասկանո՞ւմ են արծիվները։ Տեսնում-նկատում-հասկանում և մտածո՞ւմ են։ Եվ հիշո՞ւմ են։ Հիշո՞ւմ են... Եթե հիշում են, ապա որքան դժվար են ապրում արծիվները։ Այս դաժան աշխարհի անցուդարձը տեսնել-հասկանալ-մտածել ու հիշել ու հիշել ու հիշել ու... հինգ հարյուր տարի ապրե՞լ... Եթե այդպես է. եթե տեսածները հիշում են, ապա արծվի ամենամեծ թշնամին հիշողությունն է։ Այո, հիշողությունը։ Երկնքում արծիվը թշնամի չունի, իսկ երկրի վրա արծվի ամենամեծ թշնամին հիշողությունն է... Եվ եթե այս արծիվը ծեր արծիվներից է, ծեր է, դարավոր հիշողություններով ծանրաբեռն, ապա նա փախել է հուշերով խճճված իր բնից... Որքան դժվար են ապրում արծիվները և որքան դժվար են մեռնում... Այնուամենայնիվ, քանի՞ տարեկան կլինի այս արծիվը... Արծվի տարիքը որոշելը դժվար է։

Արծիվը չէր գնում։ Նստել էր ապագա քիվի որձաքարին և շեղարծվենի նայում էր։ Մլեհը փորձեց բռնել հայացքի ուղղությունը, գոնե՝ ուղղությունը, բայց դա նույնպես դժվար էր։— Արծվի հայացքը որսալու համար արծիվ պետք է ծնվել... Բայց ո՞ւր է նայում արծիվը, ո՞ւմ է նայում։ Տեսե՞լ է իրեն։ Նկատե՞լ է։

«Կարո՞ղ է... կարո՞ղ է,— Մլեհի սիրտը թպրտաց,— կարո՞ղ է էս արծիվն էրգրի արծիվներից էղնի»։

Սև սարի արծիվներից լինի... Միրնկատարի արծիվներից... Արշալույսի արծիվներից... Կարո՞ղ է այս արծիվը Մշո գետի քարափների արծիվներից լինի, և ինքը՝ Մուշ քաղաքի Վերին Թաղի տղան, էլի է տեսել այս արծվին՝ այնտեղ, Մշո գետի քարափներին... Աչքը բացում էր թե չէ,— հիշեց Մլեհը,— պատուհանից նայում էր թե չէ, ձորի քարափին արծիվ էր տեսնում։ Կարո՞ղ է այս արծվին տեսած լինի այնտեղ, Վերին Թաղում, Մշո գետի քարափին, և... արծիվը տեսած լինի իրեն... Տեսած լի-

նի և հիմա տեսավ, երկնքից տեսավ՝ ճանաչեց և իջավ ու նստած իրեն է նայում, Մուշ քաղաքի Վերին Թաղի տղային։

— Ես Մուշ քաղաքի Վերին Թաղի տղան եմ։— Շշնջաց արծվին։— Հաչի Պետրոսի որդի Մլեհն եմ... Մուշ քաղաքի ու Վերին Թաղի տղան...

Արծիվը երկար նստեց։

Իսկ երբ թևեց, Մլեհի սիրտը թռավ արծվի հետ։ Մի բան հանկարծ պոկվեց սրտից և գնաց արծվի հետ։

Արծիվը դեպի Հայոց լեռնապար էր թռչում և, որտեղից որտեղ, Մլեհը հիշեց հեքիաթը՝ այն տղայի մասին, որ արծվի փրկարար թևերին նստած սավառնում է. կտրում է ցամաք ու ծով, մթով ու չարքերով լցված աշխարհներն ի վեր ապահով թռչում է դեպի իր աշխարհը, դեպի իր ափը՝ արևոտ ու լուսավոր և ջերմ։

* * *

Արծիվը այլևս չերևաց։

Մլեհն ամեն օր սպասում էր, բայց արծիվը այլևս չէր երևում։

Եվ այնքան նայեց այն քարին, որին նստել էր արծիվը, այնքան ու այնքան նայեց, որ քարը դարձավ արծիվ։

Եվ երբ շենքը գլխվում էր, երբ եկավ քիվի քարերը տաշելու օրը, նա առանձնացրեց արծիվ-որձաքարը և սկսեց տաշել։

Քիվի զարդաքանդակների շարակում հավքերի արքա նախատեսված չէր. և ինժեները փորձեց վարպետ Մլեհին մտքից ետ պահել, բայց Մլեհը, Մուշ քաղաքի Վերին Թաղի տղան էր, իսկ որձաքարը վաղուց արդեն արծիվ էր նրա համար, ու այդ արծիվը թևատարած պետք է պսակեր շենքը։

Եվ նա քանդակում էր արծիվ՝ թևատարած։

Աշխատում էր վերացած։ Որտեղի՞ց էր հիշում արծվի մանրամասները, որ այդպես տեղը-տեղին հայտնվում էին՝ պիրկ թևերը, լարված ճապուռները, կոր պարանոցը, աղեղված կտուցը, սուր աչքերը, կոպկախ ու շեղ հայացքը... Ե՞րբ էր բռնել արծվի հայացքը, այդ բոլորը ե՞րբ էր նկատել... Պարզապես որձաքարը քնած արծիվ էր և կամաց-կամաց արթնանում էր, բացում թևերը։

Եվ մի օր սրաշք ու թռիչքի պատրաստ արծիվը բարձրացավ շենքի քիվին։

Վարպետ Մլեհը նայեց հեռվից, և սիրտը թպրտաց, ինչպես այն օրը, երբ արծիվը թոցրեց իր սիրտը և թռավ դեպի լեռնապարը։ Եվ ինչպես այն օրը, Մլեհը նորից հիշեց հեքիաթը՝ տղայի մասին, որ արծվի

թներին նստած կտրում է ծով ու ցամաք, մթով ու շարքերով լցված աշխարհներն ի վեր թռչում է դեպի իր աշխարհը, դեպի իր կապույտ ափը՝ արևոտ և լուսավոր և տաք։

Նա, հայացքը քիվի արծվին, ծխախոտ վառեց և գլխի ընկավ, թե այն օրը ինչու հայտնվեց արծիվը, իր սարերը թողած, շիկացած ու զով իր քարափները թողած, բարձունքի իր բույնը թողած՝ գարնան այն օրը արծիվը ինչո՞ւ քաղաք մտավ և նստեց իր հայացքի տակ։

Եկավ, հայտնվեց, որ ինքը հեքիաթներ հորինի արծվի մասին։ Ահա՝ այս արծվի։

Օրն ի բուն հեքիաթներ պետք է հորինել՝ աշխատանքի ժամանակ, աշխատանքի հետ, փողոցում, տանը և քնած ժամանակ...

Օրերը պետք է լցնել հեքիաթներով։

2

Լինում է, չի լինում, մի տղա է լինում։ Ձայնեղ մի տղա, ճարտար և միամիտ և շատ մոռացկոտ։— Եվ, գործի հետ, օրն ի բուն հեքիաթներ էր հորինում։— Շատ ձայնեղ, ճարտար և միամիտ և շատ մոռացկոտ այդ տղան սիրում է թափառել սարերում։ Թափառել ու երգել և տնակներ ճարտարել իր համար։ Եվ ամեն անգամ, երգ ու խաղով տարված, այնքան է հեռանում գյուղից, որ կորցնում է գյուղի ուղղությունն ու տունդարձի ճամփան։ Եվ ամեն անգամ մոլորված տղային ծնողները որոնում-գտնում են և տուն բերում։

Շնորհաշատ և շուտ մոլորվող այդ տղան օրերից մի օր էլի տնից դուրս է գալիս, երգելով գյուղից դուրս է գալիս և երգելով, դաշնելով ու երգելով թափառում է սար ու ձորերում։ Երգում է ու ծաղիկ հավաքում, ծաղիկների մասին երգ է կապում ու երգում, վազում է թիթեռների ետևվից, վազում է ճնճղուկների ետևից, թիթեռնիկների ու ծիտիկների մասին երգեր է եղանակում ու երգում, աղբյուրի հետ խաղ է անում և աղբյուրի ծաղկուն քարերի ու զանգակ աղբյակի մասին երգ է երգում ու աղբյուրի գլխին ճարտարում տնակ և, խաղ ու երգով տարված, այնքան է հեռանում գյուղից, որ էլի մոլորվում է։ Այս կողմ է վազում՝ գյուղը չկա, այն կողմ է վազում՝ գյուղը չկա, ձայն է տալիս-կանչում՝ պատասխանող չկա, և մութը վրա է տալիս։ Նստում է աղբյուրի մոտ և սպասում. ուր որ է մայրը կգա... ուր որ է հայրը կգա։ Սպասում է, սպասում է, բայց մայրը չկա, սպասում է, սպասում է, բայց հայրը չկա։ Եվ քունը տանում է։

Տղան քնի մեջ դեռ ծնողներին է սպասում, բայց շարքերն են հայտնը-

վում։ Գիշերվա կեսին, երբ լուսինը կորչում է ամպերի տակ, շարքերը վրա են հասնում և գողանում տղային։

Առավոտյան, երբ տղան աչք է բացում՝ օտար աշխարհում է։

Մուրիկ-մուրիկ թափառում է, հարցուփորձ է անում՝ պատասխանող չկա, երգում է՝ ուշք դարձնող չկա, տղան որբ ու մենակ թափառում է երկրե-երկիր և մի օր էլ հասնում տուֆաշեն մի քաղաք։ Եվ բարձր ու գեղեցիկ մի շենքի քիվի նկատում է քարացած մի արծիվ։ Մարդկանցից հուսահատ, թափառիկ տղան դիմում է արծվին։— Արծիվ, արծիվ,— երգում է շրջմոլիկ տղան,— երգս խլացել է՝ տուր ինձ քո զորեղ ձայնը, ոտքերս մոլորվել են՝ ցույց տուր քո կապույտ ճամփեն, ծնկներս հոգնել են, արծիվ, տուր ինձ քո թևերը, աչքերս խռովել են՝ տուր ինձ քո աչքերը, արծիվ։ Արծիվ, արծիվ...— երգում է օտարիկ տղան և, հանկարծ, քարացած արծիվը բաբախում է, շարժվում, թափ տալիս թևերը և քիվից թռչում է տղայի մոտ.

— Նստիր թևերիս,— ասում է արծիվը,— ես քեզ կհասցնեմ քո մայրիկի մոտ։

...Գործի հետ վարպետ Մլեհը հեքիաթներ էր հորինում՝ բոլորը նույն թափառիկ տղայի և նույն արծվի մասին։ Իսկ բոլոր հեքիաթների հյուսվածքը նույնն էր. երգով տարված տղան մոլորվում էր, հափշտակվում շարքերից, դառնում շրջմոլիկ և նորից իր մայրիկի գիրկն էր հասնում նույն արծվի թևերով։

Դժվար խնդիր։

Հեքիաթի առաջին մասը հանգիստ էր հյուսվում. տղան առանց Մլեհին շարշարելու ինքն իրեն մոլորվում էր ու մնում մթան մեջ։ Եվ դառնում շարքերի բաժին։ Հեքիաթի երկրորդ մասն էր դժվար՝ քարացած արծվին շնչավորելը։ Ահա։ Ի՞նչ հրաշքով արծիվը քիվից պետք է իջներ և թևերը բացեր տղայի համար։

Առաջին հեքիաթում այդ հրաշքը հայտնվեց տղայի երգի հետ։ Բայց այդպիսի հրաշք կարող էր պատահել մեկ անգամ։ Իսկ հեքիաթներ շատ պետք է հնարվեին։ Ամեն օր։ Տղայի փրկության ի՞նչ հրաշքներ պետք է հորինել։

Եվ պրպտում էր, տառապում, տնքում, լարում երևակայությունը և, ինչպես ձայնեղ տղան էր երգի հետ ինքնամոռաց, այդպես ինքնամոռաց որոնում էր հրաշքը։ Եվ գտնում էր։

Մի հեքիաթում ձայնեղ տղան երգում է ու խնդրում, ողջ օրը երգով խնդրում է, բայց արծիվը այլևս չի լսում նրա երգը։ Եվ մթնշաղին, քիվի արծիվն ի վեր հայտնվում է մի ծերունի՝ ամպե շորերով, ամպե մորուքով և ոսկե գավազանով։

— Պապիկ, պապիկ,— խնդրում է տղան,— արծվին ասա, թող ինձ իմ մայրիկի մոտ տանի։ Ասա, խնդրում եմ։ Ես քեզ համար կերգեմ, պապիկ։

Եվ ամպե շորերով ու ամպե մորուքով ծերունին ոսկե գավազանով հարվածում է արծվին, և հավքերի արքան քիվից իջնում է ու թևերին առնում տղային։

Բայց այդպիսի հրաշք մեկ անգամ կարող էր լինել, մի հեքիաթում։ Իսկ հեքիաթներ շատ պետք է հորինվեին։ Ամեն օր։

Մի հեքիաթում հուսահատ տղայի կողքին, հանկարծ, մի աղջնակ է հայտնվում, կապույտ աչիկներով և արևաշող մազերով լուսերես մի աղջնակ։

— Քուրիկ, քուրիկ, ի՞նչ կլնի, արծվին ասա, թող ինձ իմ մայրիկի մոտ տանի։ Ասա, խնդրում եմ։ Ես քեզ համար կերգեմ։

— Ախպերիկին իր մայրիկի մոտ տար,— հրամայում է աղջնակը, և հավքերի արքան քիվից իջնում է ու թևերին առնում տղային։

Բայց այդպիսի հրաշք մեկ անգամ կարող էր չինել, միայն մի հեքիաթում։ Իսկ հեքիաթներ շատ պետք է հորինվեին։ Ամեն օր։

Իսկ հրաշքը... Հրաշքները այդքան շատ չէին։

Եվ մի օր վարպետ Մլեհը մտածեց փոխել հեքիաթի հերոսները։ Բայց արծվին հեքիաթից վտարելու մտքից տեղն ու տեղը հրաժարվեց. արծիվն իր արծիվն էր և իրենը պետք է մնար ողջ կյանքում։ (Նա արդեն ուրիշ շենք էր կառուցում, արծվից հեռու, բայց հայացքի տակ նա էր՝ պսակաարծիվը, տաշվող ամեն քարի վրա, պատին դրվող ամեն քարին թառած էր նա՝ արծիվը)։ Հավորքիների արքան հեքիաթում պետք է մնար, կա ու չկա՝ պետք է մնար, իսկ տղան... տղան... Ջայնեղ ու ճարտար և միամիտ և մտամոլոր ու մուրիկ տղան մեղք էր. հեքիաթում շատ էր շարշարվում։ Բայց Մլեհը արդեն շատ էր կապվել որբուկի հետ։ Եվ ձեռք քաշեց հեքիաթի հերոսները փոխելու մտքից։

Ելքը դարձյալ շրջմոլիկի փրկությունն էր։ Եվ՝ արծվի թևերով։ Միայն ու միայն՝ արծվի։ Եվ՝ քիվի արծվի։

Ելքը միայն հրաշքն էր։

Եվ վարպետ Մլեհը լարված որոնում էր, պրպտում, տառապում և գտնում հրաշքը։

Քիվի արծվին շունչ տալու հրաշքը կար, և հեքիաթը արդեն պատրաստ էր։ Եվ Մլեհը տուն էր գնում գինով։

— Ես Մուշ քաղաքի Վերին թաղի տղան եմ։— Ճամփին ով բարևվում էր, նա այսպես էր պատասխան տալիս։— Մուշ քաղաքի,— ոտքը կախ էր գցում ու շեշտում,— ու Վերին թաղի տղան։

Հրաշքը կար՝ հեքիաթը կար, և տուն գնալը ցանկալի էր։

Իսկ տունը Զանգվի ափին էր, քարափին կպած՝ անկոփ քարերով և, մի տեսակ, տեղում հարմար չնստած։ Քարը քարի էր դրել անիրավունք, ընդմիջումներով. որբանոցից ծլկելու արանքներում։ Եվ որբուհիներից մեկին ընկեր էր ընտրել, որ մենակ չգիշերի խրճիթում։

— Բաց, Աստղո, դուռը բաց,— գինով բախում էր դուռը,— ես եմ, Աստղո, Մուշ քաղաքի Վերին Թաղի տղան է... Բաց դուռը, Աստղո, ես քեզ համար հեքիաթ եմ բերե...

Այսպես՝ տարիներ շարունակ։

Այսպես՝ մինչև Հայրենական պատերազմը։

***

Պատերազմում, կռվի դաշտում, Մլեհը հեքիաթներ հորինելու ժամանակ չուներ։

~~Եվ ցանկություն չուներ։~~

Եվ պետք չուներ։

Պատերազմն ինքն էր հեքիաթ՝ չարքերի, չարքերից գերված տղայի և քարե արծվին շունչ տալու հրաշքի մասին։

Իսկ եթե, այնուամենայնիվ, հիշում էր հեռու-հեռվի քիվին քարացած իր արծվին, հիշում էր ավտոմատը կրծքին սեղմած և ժպիտով, և հայացքի դիմաց որձաքարե արծիվը տեղն ու տեղը բաբախում էր, իջնում քիվից և թևերը բացում շրջմոլիկ տղայքն։

Այդպես՝ մարտական ողջ ճանապարհին, այդպես՝ մինչև Բեռլին։

— Բաց, Աստղո, դուռը բաց,— Բեռլինում, այնուամենայնիվ, Մլեհը կորցրեց աջ ձեռքի մատները և տուն եկավ կռուփով և կռուփով բախեց դուռը,— դուռը բաց, Աստղո, ես եմ, Մուշ քաղաքի Վերին Թաղի տղան է։

Աշխատանքային ընկերները, նրանք, որ վերադարձել էին կռվից և անվնաս ոտք ու ձեռքով, որմնադիր ընկերները կարծում էին, թե Մլեհը արդեն մուրճ չի կարող բռնել՝ աջը, ախր, կռուփ է։ Բայց նա որմնադրի մուրճը վերցրեց ձախով և հենց առաջին օրը, գտավ հեքիաթային հերթական հրաշքը։

Եվ տուն եկավ գինով։

— Բաց, Աստղո, դուռը բաց, ես եմ, Մուշ քաղաքի Վերին Թաղի տղան է, դուռը բաց, Աստղո, քեզ համար հեքիաթ եմ բերե։

Այսպես՝ տարիներ, է՜, տարիներ-տարիներ երկար։

Լինում է, չի լինում, ձայնեղ մի տղա է լինում...— Գարնան գիշեր էր, հին դուռը կրնկի վրա՝ ի դիմաց հեղեղի խշշոցի, վարպետ Մլեհը բարձին թիկնած ծխում էր և փորձում նոր հեքիաթ կապել։

Զանգվի քարափին կպած հին տանը արդեն մենակ էր ապրում։ Մինուկ էր, և զոր ու գիշեր դուռը կրնկի վրա բաց. ամեն պահ վարպետ Մլեհին թվում էր, թե մեկնումեկը, ահա-ահա, հայտնվելու է։ Աստղոն արդեն չկար։ Զավակներն առանձին ծուխ էին կազմել-շաղ եկել քաղաքում, իսկ վարպետ Մլեհը, որ արդեն անցել էր հանգստի, հին տնից ձեռք չէր քաշել։ Փոքրիկ միջանցք, սենյակ, հին զգեստապահարան՝ սրտաձև հայելիով, եղեգնահյուս խշխշան աթոռներ, թախտը և թախտի դիմացի պատին՝ քանդակած արծվի մեծադիր լուսանկարը։ Մլեհի խընդրանքով փոքր որդին էր լուսանկարել և՝ վարպետ ձեռքով։

Փոքր որդին մոտիկ շենքում էր ապրում և ամեն առավոտ, աշխատանքի գնալու ճանապարհին, կանգնում էր շեմին.

— Մուշ քաղաքի Վերին թաղի տղա,— զվարթ կանչում էր որդին։

— Կենդանի եմ։— Կարծես քարանձավից, պատասխանում էր վարպետ Մլեհը։

— Ինչի՞ կարիք ունես։

— Կենդանի եմ,— կրկնում էր վարպետ Մլեհը։

— Նոր խրատ, նոր հեքիաթ՝ քոչդ հավաքեմ-բերեմ։

— Գործիդ գնա,— պատասխանում էր վարպետ Մլեհը։

Զավակներին ու թոռներին արդեն հեքիաթ չէր պատմում՝ սիրով չէին լսում, չէին հուզվում, չէին ապրում շրջմոլիկ տղայի ճակատագրով, և վիրավորվում էր վարպետ Մլեհը։ Եվ վերջին տարիների հորինած հեքիաթները միայն իր համար էին։

Լինում է, չի լինում, ձայնեղ մի տղա է լինում...— Գարնան գիշեր էր, դուռը կրնկի վրա՝ ի դիմաց հեղեղի խշշոցի, վարպետ Մլեհը թախտին մեկնված և հայացքը արծվի լուսանկարին՝ հեքիաթ էր հյուսում։ Հասել էր հեքիաթի բարձրակետին ու խճճվել. քարե արծվին թևավորող հրաշքը չկար ու չկար։

— Էդ անտեր հնարքներ խլսա՞ն[1]։— Նեղսրտած դուրս ելավ, նստեց դռանը և, աչքը մթով ու վշշոցով լցված ձորին, ծխեց ու շարունակեց պրպտել հեքիաթային հրաշքը։

Գնալով նյարդայնանում էր։

---

[1] Խլսել — Վերջանալ, հատել։

Շպրտեց ծխախոտը, բայց ձեռքը ինքն իրեն գնաց գրպանը։

— Թյու, սատանի պտուղ։— Որ հրաշքը չի հայտնվում, որ... դժվար... շատ դժվար է հայտնվում՝ ծխախոտն է պատճառը՝ ուղեղը մշուշում է... Հարկավոր է քիչ ծխել կամ հենց՝ թողնել։— Բայց ձեռքը ինքն իրեն հա գնում էր գրպանը։ Եվ ձեռքը խաբելու, ձեռքերը զբաղեցնելու-խաբելու համար հանեց դանակը, մի փայտ գտավ և սկսեց տաշմշել։— Ուրեմն... ուրեմն, լինում է, չի լինում...

Դռանը երկար նստեց։ Հեքիաթը սկսում էր սկզբից, հա սկսում էր սկզբից, խեղճ տղային տեղն ու տեղը մոլորեցնում (հանգիստ բան)— դարձնում թափառական, երկրե-երկիր, պտտում-հասցնում պսակաարծվի մոտ ու, տղայի հետ, շվարում։

Բոլոր հրաշքները հեղեղը քշել էր։

Հետո ցուրտ զգաց, դողը սողաց ջղերում, վարպետ Մլեհը սրսփաց և ներս մտավ ու առանց հանվելու մեկնվեց թախտին։

Եվ այդպես էլ՝ դանակն ու տաշմշված փայտը ձեռքին, փակեց աչքերը։

Աչք կպցրեց ու բացեց։

Վարպետ Մլեհը աչք կպցրեց ու բացեց, և հայացքը դիպավ դանակին։

Եվ աչքը բացելու հետ, հայացքը դանակի փայլուն շեղբին դիպնելու հետ թվաց, թե մեկը շշնջաց ականջին։ Եվ նա շփոթված ու զարմացած արձագանքեց շշնջոցին։

— Հայլեե՜ն...— Այս դանակը... դանակը ինչո՞ւ տեղ չի գտել հեքիաթում... Այսքան ժամանակ (է՜, որքան ժամանակ) դանակը... նշտարը ինչո՞ւ չի դարձել հեքիաթի հերոսներից մեկը... Թե չարքերը եղել են... չարքը, չարքը եղել է, եղել է ու գործել ամեն հեքիաթում, ապա դանակը... նշտարը պարտադիր պետք է լիներ։ Լիներ ու գործեր։ Եվ գործեր որպես գլխավոր հերոս։

Վրդով ոտքի ելավ, և ձեռքն ինքն իրեն գնաց դեպի գրպանը։ Հեքսոտ խփեց գրպանի ծխախոտին և սկսեց հուզված քայլել։

— Հիմար, դու հիմար։— Հորինած բոլոր-բոլոր-բոլոր հեքիաթներում էն խեղճ տղան ինչո՞ւ պետք է երդով տարվեր-միամտանար-մոլորվեր-կորցներ գյուղի ու տան ճանապարհը և գերվեր չարքերից, երդով տարվեր-միամտանար-մոլորվեր-գերվեր չարքերից, երդով տարվեր-մոլորվեր-գերվեր չարքերից, բոլոր, բոլոր-բոլոր հեքիաթներում՝ երդով տարվեր-միամտանար-մոլորվեր-կորցներ տան ճանապարհը և գիշերով գերվեր չարքերից և գիշերով գերվեր չարքերից, գիշերով գերվեր չարքերից, գերվեր չարքերից, գերվեր չարքերից...

— Հիմար, դու հիմար։— Տես որ, հորինված բոլոր հեքիաթներում

չարի կամքը կատարվել է։ Այո, կատարվել է՝ չարքը գերել է էն խեղճ տղային... Եվ ո՞վ է բոլոր ու բոլոր հեքիաթները այդպես հյուսել։ Ի՞նքը... Մուշ քաղաքի Վերին Թաղի տղա՞ն... Վարպետ Մլե՞հը... Ի՞նքը, թե չարիքը։ Չարի մատը խառն է, խառն է, իհարկե, բայց հեքիաթների հեղինակն ինքն է. չարը այդպես է կամեցել, և ինքը հլու-հնազանդ կատարել է չարի կամքը և հեքիաթները այդպես հյուսել։

— Հիմար, դու հիմար։— Այնինչ... այնինչ, հասարակ բան, մի հեքիաթում, միայն ու միայն մի հեքիաթում պետք է գերեր երգ ու խաղով տարված տղային։ Եվ այն էլ՝ ի խրատ։ Միայն մի հեքիաթում պետք է տղային դարձներ շրջմոլիկ, միայն մի հեքիաթում քարե արծվին շնչավորեր (հրաշքը մեկ անգամ է լինում), արծվին շունչ տար, ու տղային հասցներ իր մայրիկի մոտ ու վերջ։ Այսպես՝ միայն ու միայն մի հեքիաթում։ Իսկ մնացած բոլոր-բոլոր հեքիաթները պետք է հյուսվեին այն մասին, թե ինչպես ձայնեղ տղան կապույտ առավոտով հիացած երգում է ու թափառում սարերում, խաղ է եղանակում և երգելուց առաջ նշտարով ծակում է կրունկը, նշտարով ծակում է... ա՛յ, այսպես, և դանակով ծակեց իր կրունկը, նշտարով ծակում է, որ ոտքերը չմոլորվեն-չմոռանան գյուղի ճանապարհը։ Թե ինչպես ձայնեղ տղան, Արեգակով հրապուրված, կանգնում է սարի գլխին, որ երկնի, բայց արաբչագործելուց առաջ շուրջբոլորը նշտարով շրջագծում է. ա՛յ, այսպես, ա՛յ, այսպես,— և դանակով հերսոտ գծմծեց շուրջբոլորը,— ա՛յ, այսպես շրջագծում է. իսկ այն սահմանը, որ նշտարով է գծված, այդ սահմանից ներս չարքերը ոտք չեն դնում։ Թե ինչպես ձայնեղ տղան ձորով և ձորում խշշացող ջրերով և քարափներով հիացած, կանգնում է քարափի գլխին, որ ձորին ու քարափին դաշն տնակ սարքի, բայց տնակը ճարտարելուց առաջ նշտարը հեսանում է քարափին. ա՛յ, այսպես— և դանակը հեսանեց օդում, ա՛յ, այսպես, հեսանեց և էլի հեսանեց. ա՛յ, այսպես. իսկ այն քարափը, որը նշտար է հեսանել, այդ քարափին չարքերը չեն մոտենում։ Թե ինչպես ձայնեղ տղան...

Հեքիաթի տարբերակները, շրախկ-շրախկ, իրար ետևից գալիս էին՝ առանց ճիգի, առանց տառապանքի։ Վարպետ Մլեհը լցված քայլում էր (նա զգաց, որ սիրտը ծակում է, բայց ուշք չդարձրեց), դանակը ձեռքին հուզված քայլում էր, ընթացքում հրմշտում աթոռները՝ ասպարեզ բացում և վրա-վրա, շունչն ի բերան կապում հեքիաթներ։ Նոր հերոսով՝ նշտարով այնպես արագ էին հայտնվում տարբերակները, որ նա չէր հասցնում հեքիաթը մինչև վերջ հյուսել։ Եվ չէր համբերում՝ կիսատ թողած անցնում էր մյուսին։ Վարպետ Մլեհը շտապում էր։— Թե ինչպես... Թե ինչպես... Թե ինչպես ձայնեղ տղան նստում է աղբյուրի գլխին

արարչագործելու, և արևի տակ շիկացած նշտարը զովացնում է սառը ջրում. իսկ այն աղբյուրը, որի ակունքում նշտար է թշշացել, այդ աղբյուրին չարքերը չեն մոտենում։ Թե ինչպես... Թե ինչպես... Եվ թե ինչպես մի օր էլ...

Մի օր էլ երգով տարված տղան գյուղի ճամփան թող էլի կորցներ, և գիշերը վրա տար, և տղան աստղերի մասին երգ թող ստեղծեր, աստղերով հրապուրված երգեր դաշներ ու երգեր ու սպասեր մորը ու սպասեր հորը և սպասման մեջ քներ՝ նշտարը գլխի տակ դրած, նշտարը գլխի տակ դրած... Իսկ երբ նշտարը գլխիդ տակ ես դնում, չարքերը մոտ չեն գալիս։

Այսպես և այսպես։ Առաջին հեքիաթից հետո այսպես և այսպես, և այսպես պետք է հյուսվեն մյուս բոլոր հեքիաթները։ Հրաշքով այդ խեղճ տղային փրկելուց հետո մնացած բոլոր-բոլոր-բոլոր հեքիաթներից քարե արծիվը պետք էր դուրս շպրտել։ Քարը մեկ անգամ կարող էր դառնալ արծիվ. այդպիսի հրաշք կարող էր մեկ անգամ լինել, իսկ նշտարն ինքն է հրաշք։ Հրաշք։ Թալիսման։ Եվ թալիսման-նշտարով տղան ինքը կփրկեր իրեն։

Զայնեղ տղա։

Թալիսման-նշտար։

Եվ տղայի մոլորվելուն՝ թալիսմանը կորցնելուն հետամուտ չարքեր։

Ահա սրանց մասին և այսպես ու այսպես պետք է հյուսեր հեքիաթները և պատմեր... պատմեր Աստղոյին, պատմեր որդուն և զավակներին, և թոռներին և այդպես՝ որդվոց որդի։

— Հիմար, դու հիմար...

***

— Մուշ քաղաքի Վերին Թաղի տղա՞։— Որդին շեմին կանգնած կանչեց, բայց պատասխան չստացավ։ Քնա՞ծ է հայրը։

— Ինչի՞ կարիք ունես։— Կանչեց որդին և ներս մտավ։

Ներս մտավ և, ժպիտը դեմքին սառած, կանգնեց. հայրը՝ զգեստները հագին և գլխի տակ դանակ, թիկունքն ի վար մեկնվել էր հատակին։

— Հայրի՞կ։— Շշնջաց որդին և ծնկեց հոր մոտ։— Հայրի՞կ։— Զգույշ շարժեց հորը։— Հայրի՞կ։— Շշնջաց որդին։

Շուրջբոլորը, կարմրաներկ հատակին, ծուռտիկ-մուռտիկ շրջագծած, և գլխի տակ բաց դանակ, խաղաղ քնել էր Մուշ քաղաքի Վերին Թաղի տղան։

ՄԱՄՓՐԵ ԱՐՔԱՆ

1

Մամփրեն ահագին ժամանակ հետևում էր, թե երրորդ դասարանցի Թոռնուհին ինչպես է այբուբենը սովորեցնում եղբորը, որպես թե՝ նախապատրաստում է, որ տղան գալ տարի այբուբենը սերտած գնա դրպրոց։ Եվ, տես թե ինչպես է սովորեցնում. շուտասելուկի պես,— Ա—բ—գ—դ—ե—զ...,— առանց հնչեցնելու, առանց ներդաշնակելու։ Բա Մամփրեի սովորած այբուբենը ա՞յդ էր, այդպե՞ս էր։ Վարժապետ Տեր Հարությունը նահատակվեց, այբուբենը հո չփոխվե՞ց։

Իսկ երբ Թոռնուհին ճլոտեց Թոռանը, Մամփրեն էլ չհամբերեց.

— Աղջի, շան կաթ կերած։— Եվ հերսոտ ոտքի ելավ։— Սխալ-մխալ կզրուցե քիչ է, հըլը տղին էլ կճլոտե։— Եվ այբբենարանը խլեց-շպրտեց մահճակալին, իսկ տղային քաշեց ծնկների արանքը։

— Քու քուրն սուտասան է, ձգուկ, էդ փապռեճի[1] զրուցին ականջ մի պահե։

Ապա հերսոտ դարձավ Թոռնուհուն՝

— Էդ ի՞նչ սուտ ու փուտ է կսովորեցնիս տղին։

— Սուտը...— Թոռնուհին ուզեց շշպռել պապին, բայց զսպեց իրեն։— Գրքում է էդպես գրված։

— Բեր տեսնիմ,— խիստ պահանջեց պապը։

Թոռնուհին տարակուսած նայեց. պապը, ախր, տառաճանաչ չէ։ Ճիշտն ու սխալը էդ ինչպե՞ս պետք է ստուգի և այն էլ, այն էլ՝ գրքով։ Եվ փոթկացրեց ափի մեջ։

— Գիրքն հոս բեր... Շան կաթ կերած... Դե բաց ու ինչպես մեջ գրքին է, էդպես զրուցե։ Կարդա հատիկ-հատիկ,— խիստ պահանջեց Մամփրեն,— կարդա մեկիկ-մեկիկ ու մեկիկ-մեկիկ ցուցամատե։— Եվ աչքը բաց էջին լարված՝ սպասեց։

— Այբ-բեն-գիմ-դա-եչ-զա...

Մինչ Մամփրեն փորձում էր աչալուրջ հետևել, Թոռնուհու ցուցամատը ցոլաց, և նա շուտասելուկով կտրեց այբուբենի երկու շարքը։

— Համբերե։— Նեղսրտեց Մամփրեն։— Քեզ ասի հանդարտիկ կարդա։ Հատիկ-հատիկ կարդա ու ցուցանե։

— Ա՜յբ... բե՜ն... գի՜մ... դա՜...

— Համբերե։ Գիմ-ից հետո նորեն կարդա։

---

[1] Փապռեճ — Ասվում է զզզված, խառնված, լցանրված մազերով աղջիկներին։

Թոռնուհին շփոթվեց և սկսեց նորից.

— Ա՜յբ... բե՜ն... գի՜մ...— հարցական նայեց պապի աչքերին։

Մամփրեն լարված սպասում էր։

— ...դա՜,— Թոռնուհին մատնացույց արեց և ուզեց շարունակել, բայց Մամփրեն ընդհատեց։

— Համբերե։— լարված նայում էր տառերի շարուկին։— Հրլը գիմ-ն ցուցամատի։

— Էս է։

— Գիմ-ից հետո հարկ է, որ էղնի՝ ել, Հովակիմ։

— Ի՞նչ։

— Ել, Հովակիմ,— նեղսրտեց Մամփրեն։

— Ել, Հովակիմ։— Ափի մեջ փոթկաց Թոռնուհին։— Այդպիսի բան չկա։

— Լավ նայե։

— Չկա, ա՜յ պապ, չկա։— Չիք։— Եվ ափերը հաղթական շրխկ-շրխկացրեց։— Տեսար, որ սուտ ու փուտ չեմ սովորեցրել։ Դե, արի։— Եվ քաշեց եղբոր թևից։

— Համբերե։— Եվ թոռանը ծնկների արանքում սեղմած, մտածկոտ հայացքը այբբենարանին, Մամփրեն շշնջաց։— Թե էդպես է. գիրքն է սխալ կխաբրե... գիրքն է սխալ կզրուցե։

Թոռնուհին քաշում էր եղբոր թևից։

— Համբերե,— հերսոտեց Մամփրեն և թոռանը պինդ սեղմեց ծնկների արանքը։— Այբուբենը ես կսովորեցնեմ իմ ձգուկին։

* * *

Ա՜յբ, բե՜ն, գի՜մ,
Ե՜լ, Հովակիմ։
Դա՜, ե՜չ, զա՜,
Լծիր եզան։

Վարժապետ Տեր Հարությունը արտասանում էր, և իրենք խմբով կրկնում էին։ Տեր Հարությունը հայոց տառերն էր ասեղնագործում ճերմակ պաստառին, հետո էլ արտասանում այբուբենը, և իրենք խմբով կրկնում էին—

Է՜, ը՜թ, թո՜,
Վե՜ր կաց, Թաթո,

Ժե՛, ինի՛, լյո՛ն,
Կապիր քո շուն։

Տեր Հարությունը մեծ ու ճերմակ պաստառը կախել էր Տիրամոր նկարի կողքին և վառ կարմիրով հյուսում էր տառերը։ Հայոց տառերը կարմիր են, բացատրում էր Տեր Հարությունը, քանզի սուրբ Մաշտոցը իր սրտից է հանել ի լույս։ Եվ կարմիր են, քանզի թրծվել են արդար արեգակով։ Եվ կարմիր են, քանզի սրբազան կռիվների են մասնակից եղել։ Եվ ասեղնագործում էր հանդարտիկ, հեռվից ու մոտիկից ուշադիր զննելով, երբեմն այնպես վերացած, որ իրենց թվում էր, թե հայոց տառերը նոր-նոր հորինվում են, և Տեր Հարությունն է ստեղծողը։ Օրը՝ մեկ տառ։ Եվ օրեր շարունակ իրենք կրկնում, հա կրկնում ու սերտում էին այբուբենը—

Խե՛, ծա՛, կե՛ն,
Ո՞ւր է Հակեն։
Հո՛, ձա, ղա՛տ,
Միհրան, Միհրդատ։
Ճե՛, մե՛ն, հի՛,
Կգանք հիմի։

Գյուղում բոլորը գիտեին, որ Տեր Հարությունը ճերմակ պաստառին կարմիր տառեր է ասեղնագործում և, որպես թե՝ ի հիշատակ մշեցի այն ուսուցչի, որին սուլթանը, ասում են, կախաղան է հանել։ Մահապարտ այդ ուսուցիչն է հայոց այբուբենը հանգավորել այսպես,— Ա՛յբ, բե՛մ, գի՛մ, ծ՛լ, Հովակիմ,— ներդաշնակել այնպես, որ երեխաները շուտ սովորեն այբուբենը և բոլորովին չմոռանան—

Նո՛ւ, շա՛, ո՛,
Պրծի, Շավո,
Ջա՛, պե՛, ջե՛,
Ուշ է, Վաչե։

Ասում էին նաև, որ Տեր Հարությունը շուտով Հնդու աշխարհ պետք է գնա, և գրերը տանելու է Հնդու աշխարհի հայերին։ Ուրիշները թե՝ տառերը ասեղնագործում է ի սեր աշխարհի ծայրը հասած մեն ու մինուկ մի հայի, ճերմակ պաստառին հյուսած հայոց կարմիր գրերը նրան է ուղարկելու՝ աշխարհի ծայրը հասած ու մոլորված մինուկ ու մինուճար

պանդուխտ հային։ Նրան է ուղարկելու։ Ոչ, բոլորին առարկում էր գյուղի ամենատարեցը և գյուղի ամենահզոր ընկուզենու տեր Օհան պապը (ասում էին, որ նա, Օհան պապը, և իր հսկա ընկուզենին տարեկիցներ են)։ Ոչ, առարկում էր Օհան պապը, Տեր Հարությունը գրերն ուղարկելու է սուլթանին նվեր։ Այո՛, այո՛, նվեր, սուլթանին նվեր՝ ի հեճուկս— Դու մշեցի ուսուցչին կախաղան հանեցիր, իսկ սուրբ Մաշտոցի գրին ի՞նչ կարող ես անել։— Այս մեկ։ Եվ ապա։— Դու սուլթան ես, բայց քո սեփական տառերը չունես և քո արյունոտ հրամանները գրում ես այլոց տառերով։ Իսկ մենք թագավոր չունենք, բայց ունենք սեփական գիր։ Եվ, իմացած եղիր, որ սուրբ Մաշտոցի գիրն էլ մեր թագավորն է։ Եվ մենք քո արնոտ ձեռքը մերժում ենք և մեր արդարախոս ու արդարամիտ թագավորի ձեռքը համբուրում ու գնում ենք մեր գլխին։ Ա՛յ, այդպես։— Ամեն մեկն իրենն էր ասում, իսկ Տեր Հարությունը լուռ ու խորհրդավոր ասեղնագործում էր տառերը, օրը՝ մեկ տառ։ Երբեմն նաև պատմություններ անում սուրբ Մաշտոցի և նրա արարչագործ, անպարտելի, ասպետ զինվորների— գրերի մասին։ Հրաշք բաներ, որ լսում էին բերանբաց և ընկնում հեքիաթների աշխարհը... Բայց ամենաշատը, ամենաշատը այբուբենն էին սերտում. կրկնում, հա կրկնում ու սերտում էին—

Ռա՛, սե՛, վե՛վ,
Մագեց արև։
Տյո՛ւն, րե՛, ցո՛,
Մարդ ստեղծա։

Հետո մի մամիկ լուր տարածեց, թե Տեր Հարությունը երազ է տեսել. երազում ճերմակ ձիավոր սուրբ Սարգիսը հայտնվել է ու ասել՝ շուտով ջրհեղեղ է լինելու։ Ճերմակ ձիավոր սուրբ Սարգիսն է ձին կանգնեցրել ու ասել Տեր Հարությունին։ Եվ նա հիմա շտապում է ասեղնագործել հայոց կարմիր տառերը և ծոցը դրած բարձրանալ Արարատ։ Դրա համար էլ մեծ-լայն սավանի վրա է հյուսում և գլխա-գլխա-տառերով... Եվ գյուղը հավատաց։ Եվ հավատացին իրենք, երեխաները, հավատացին, որովհետև վարժապետը այդ օրը եկավ և հայտարարեց,— զավակներս, այսօր մեր վերջին դասն է. սուլթանը պատերազմ է հայտարարել աշխարհին Ռուսիս։ Եվ ես աճապարում եմ ավարտին հասցնել ասեղնագործ գիրն իմ։— Իսկ նախնական պայմանավորվածությունը այլ էր՝ քանի դեռ ինքը, վարժապետը, տառերն է հյուսում, այդ ընթացքում իրենք պետք է ամեն օր, չհաշված կիրակի օրերը, ամեն օր արտասանեին,

կրկնեին ու սերտեին այբուբենը և ապա, գործն ավարտելուց հետո, վարժապետը տառ առ տառ պետք է սովորեցներ գրերը։ Այդպես էին որոշել, բայց եկավ և ասաց։— Պատերազմ է, զավակներս, և ձեր հայրերին, հարկավ, ասկյար կտանեն։ Գնացեք ձեր հայրերի մոտ։ Եթե տերը կամենա՝ նորեն կհավաքվենք, և ձեզ կուսուցանեմ սուրբ Մաշտոցի գրերը։ Իսկ այժմ, զավակներս, վերջին անգամ միասին հնչեցնենք այբուբենն հայոց։— Եվ այբուբենի վերջը այնպե՞ս էին ձգում, այնպե՞ս էին ձգում, առանց պայմանավորվելու բոլոր երեխաները միաշունչ (և վարժապետն ինքն էլ, վարժապետն էլ) վերջը այնպե՞ս էին ձգում... Չէին ուզում, որ այբուբենը վերջանա—

Վյո՞ւն, փյո՞ռ, քե՞,
Քելե սրքե,
Ե՞վ, օ՞, ֆե՞,
Օ՞, ինչ զով է։

— Դե, զավակներս, տերն ընդ ձեզ։

Առավոտ էր, բայց գյուղը լուռ էր։ Այբուբենի դաշնած կանչերը, որ իրեն թվում էր, թե մշեցի վարժապետը իրենց գյուղից, հենց իրենց գյուղից է վերցրել, բարձրաձայն ու բարձրախոս իրենց գյուղացիներից՝ կտուրից կտուր, թաղից թաղ, արտից արտ, ձորից ձոր միմյանց ձայն տվող բարձրագոչ գյուղացիներից, այդ կանչերը չկային։ Այն, ինչ ամեն օր կար, այդ առավոտ չկար, իսկ այն, ինչ չպետք է լիներ, կար՝ գյուղի շներն էին խառնվել իրար, կտուրներին կանգնած, դնչներն ի երկինք կատաղի հաչում էին։ Շները ինչպե՞ս էին հասկացել, որ թուրքաց սուլթանը պատերազմ է հայտարարել ռուսաց ցարին։ Շները արևոտ ու զուլալ օրով և օր ցերեկով ձեն-ձենոց ոռնում ու հաչում էին, իսկ գյուղի այրերը հավաքվել էին Վարի թաղում, Օհանի ընկուզենու տակ... Մի մասը ուրախ էր, որ սուլթանը պատերազմ է հայտարարել՝ արյունով ներկված գահի վերջն է եկել, ուրեմն, և աստված մոլորեցրել է սուլթանին, և նա ռուսաց ցարին կռիվ է հայտարարել։ Ռուս սալդատների սվինները այս անգամ կփայլեն Միրնկատարին, կշողշողան Անդոկ լեռան կատարին։ «Քեռին» այս անգամ անպայման կգա։

Իսկ մյուս մասը նոր պատերազմը գտնում էր որպես նոր աղետ. ռուսը, իհարկե, կհաղթի, կասկած չկա. սալդատի սվինից ասկյարը դողում է, ռուսը միշտ է հաղթել և էլի կհաղթի։ Ռուսաց սվինը կհաղթի, այո, բայց վերջում, վերջում, ամենավերջում կհաղթի Եվրոպայի դիվանագիտությունը։ Այո, Եվրոպայի նենգ քաղաքականությունը հաղթող

գուրս կգա։ Ա՛յ, այդպես կլինի։ Այդպես եղել է և այդպես կլինի։ Եվ անիշխան ու անզեն ժողովուրդը կպատժվի իր երազի, հույսի և ուսապիրության համար։

Գյուղ հասած լուրը ավետի՞ս էր, թե՞ բոթ... Ավետիս է, թե՞ բոթ... Օհանի ընկուզենու տակ հավաքված այրերը այդպես էլ չորոշեցին, բայց որ գյուղը սուլթանի անարդար բանակին զինվոր չի տալու, դա արդեն քննելու բան չէր։ Ո՞վ, հայորդին դառնա յաթաղանակիր ասկյար և կռվի ռուս սալդատի դե՞մ... Չի եղել և չի լինի։ Պատմությունը այդպիսի մի օրինակ, գեթ մի փաստ չի արձանագրել։

Եվ մտախոհ ցրվեցին. ով «չախմախլի» թվանք ունի՝ թող լիցքավորի, ով թուր ունի՝ թող սրի, ով մի կարգին չախու ունի՝ թող սրի։

Հոր հետ քայլում էին լուռ, ելվերում էին իրենց թաղը՝ Վերին... Վերին թաղ, Վերին թաղ և Վերին թաղի վերին տուն... Տան թիկունքին սարալանջն էր, լանջին՝ շաղգամի արտը և շաղգամի արտն ի վեր՝ Մեհրեաղբյուրը։ Առավոտյան ինքը Մեհրեաղբյուրի ջուրը կապեց շաղգամի արտին և ապա գնաց այբուբենը սերտելու։ Իսկ, ահա, ջուրը կտրվել էր... Օսմանի լակոտ, Օսման, աղբյուրի ջուրը էլի նա է կտրել, այդ ճպռոտ լակոտը։ Որտեղի՞ց հայտնվեցին ու հարամեցին գյուղը։ Գյուղը, փողոցը, հողը, ջուրը, աղբյուրը։ Էն խեղճ պառավի (անունն ինչպե՞ս էր) պառավի հիմար որդին ղարիպության գնաց, գնաց հիմարը ու էլ չերևաց, և պառավը մեռավ և պառավի հիմար որդու փոխարեն, որտեղից որտեղ, այդ հարամ Օսմանը հայտնվեց ու տիրացավ տանը։ Իր անունը Օսման, լակոտի անունը Օսման, աշխարհում էլ ուրիշ անուն չկա։ Հայտնվեց, տիրացավ պառավի տանը և ասում է, թե տունը գնել է. գայմագամից, այսինքն գավառապետից թուղթ ունի։ Երեկ-մյուսօր է հայտնվել, բայց գյուղի անունը արդեն աղավաղել-հարմարեցրել է իր լեզվին, իսկ Մեհրեաղբյուրը կնքել է Աթաբունար, որպես թե հին անունը, աղբյուրի նախնական անունը այդ է եղել՝ Աթաբունար։ Սադայելի ծնունդ, այդպիսի բան ինչպե՞ս կարող է լինել. չէ՞ որ աղբյուրը Մհերի անունով է։ Առյուծ Մհերի անունով։ Աղբյուրն իր պատմությունն ունի. Մհերը, ուրեմն, Սասնա տան Մհերը, հենց այստեղ, այս սարի վրա է առյուծին հանդիպել, հանդիպել ու դատարկ ձեռք ճղել է առյուծին և, աստծո հրամանով, այդտեղից՝ առյուծին հանդիպած ու ճղած տեղից, աղբյուր է բխել։ Ա՛յ, այդպես է եղել։ Եվ Մհերը կնքվել է՝ Առյուծ Մհեր, իսկ աղբյուրը՝ Մեհրե։ Ա՛յ, այդպես է եղել...

Եվ լցված ու հերսոտ քշեց դեպի աղբյուրը... Սուլթանը ռուսաց ցարին պատերազմ է հայտարարել, վարժարանը փակվեց, հորը ուզում են ասկյար տանել, վարժարանը փակվեց, գյուղի շնորը օրը ցերեկով խլանվել

են իրար, վարժարանը փակվեց, դու էլ, Օսմանի ճպուռ լակոտ, դու էլ Մամփրեի՞ն ես կռիվ հայտարարել։ Հիմա կտեսնենք...

Այո, աղբյուրի ջուրը Օսմանն էր կտրել, իրեն հասակակից, ճպռոտ, բայց ցիցքիթ այդ լակոտը։ Ջուրը շուռ էր տվել իրենց տան կողմ և նստել էր ուրթին։

Եվ հասնելն ու ոտքի տակ առնելը մեկ եղավ... հետո թևից բռնեց-շպրտեց իրենց հարամ տան կողմ և դարձավ ջուրը կապելու։ Ծնկեց ուրթի մոտ և...

* * *

— Օխաաշշշ...— Մամփրեն, թոռանը ծնկների արանքում սեղմած, ձեռքը տարավ գլուխը։ Ոտքերի մոտ այնպես իրական պոռթկաց ցավը, ինչպես, է՞, այն օրը, երբ այդ նենգ լակոտը, այնուամենայնիվ, թիկունքից քարով զարկեց-ջարդեց իր գլուխն ու փախավ։ Փախչում էր և, ուսի ետ, քարերի պես շպրտում,— Աթաբունար... Աթաբունար,— տրպես թե՝ աղբյուրի անունը Մեհրե չէ, աղբյուրը քոնը չէ...

Մամփրեն ցավով տմբտմբացրեց անցած հուշերին— Օսման, դու ճպռոտ լակոտ էիր, բայց դու պարծենալու իրավունք ունես. նենգորեն ջարդեցիր Մամփրեի գլուխը և մնացիր անպատասխան... Կոտորում եղավ, գաղթ եղավ, և Մամփրեն ճար չունեցավ, քեզ ոտքի տակ գցելու հնար չունեցավ։ Մարաթուկ վկա, Մամփրեն քեզ այնպես կտրորեր, որ դու ալլես չէիր պղծի աղբյուրի սուրբ անունը։ Սուրբ և տիրակոչ։ Դու ամբարտավան անօրեն ես, բայց իրավունք ունես պարծենալու. աղբյուրի անունը, այնուամենայնիվ, պղծվեց, իսկ Մամփրեն հայոց գրին, այդպես էլ, անծանոթ մնաց... Տեր Հարությունը հյուսած տառերը դրեց ծոցն ու եկավ Ուրարատ, գնաց ու կորավ վիհերում ու ձյունների մեջ, և ինքը, Մամփրեն, հայոց տառերին անծանոթ մնաց։

Իսկ ե՞րբ սովորեր՝ կոտորումի ժամանա՞կ, գաղթի ճանապարհի՞ն, հետո... հետո՝ պատերազմի դաշտո՞ւմ... Ե՞րբ։ Բայց եղավ, այդպիսի մի պատեհություն եղավ, ախր, հայտնվեց, բայց այն էլ ինքը չկարողացավ օգտագործել. իր հիմար բնավորության պատճառով՝ խռովկանության։ Այս նոր՝ Քարագլուխ գյուղի սովետականացման առաջին տարիներին գյուղում անգրագիտության վերացման կայան բացվեց, ախր, լիկկայան։ Վարժապետը ջահել, իրենից շատ ջահել մի տղա էր։ Եվ, հենց առաջին օրը, ի՞նչ արեց այդ լզպորը. մատը մնկեց իր կողմ, թե՝ մեկից-տասը հաշվիր։ Վիրավորվեց, բայց, դե, վարժապետն էր պահանջողը, հաշվենք թե՝ Տեր Հարությունը։

Հարություն Աթայան

— Մեգ, էրգու, իրիք...

— Երկու... երեք,— ուղղեց լիկկայանի վարժապետը։

— Երկու... եր... երեք, չուրս...

— Չորս,— ուղղեց վարժապետը։

— Չուրս... չուր... չորս,— քրտնած տակից դուրս եկավ,— չորս, հինգ, վից...

— Վեց,— ուղղեց վարժապետը։

— Վից։

— Վեց։

— Վի... վից...— և հա փորձեց, վարժապետն էր ստիպում, ու հա անարդյունք և վիրավորված ու խռով թողեց-հեռացավ լիկկայանից։ Չլիներ այդ անհնազանդ «վիցը» (վեց-վեց-վեց... տես, թե ինչ հանգիստ է պտտում լեզուն, վից կամ վեց, ի՞նչ տարբերություն), չլիներ այն հիմար վարժապետը, այն ժամանակ Մամփրեն տառերը սովորած կլիներ։ Դրանից հետո այլևս ի՞նչ տառ, ի՞նչ գիր... Լավ է դեռ, Տեր Հարությունի սովորեցրած այբուբենն էլ չի մոռացել, զարմանալի է, որ չի մոռացել. քանի տարի է անցել. վաթսունչո՞րս, վաթսունհի՞նգ, բայց, տես, որ հիշում է,— ա՜յբ, բե՜ն, գի՜մ, դ, Հովակիմ...— Հա, լիկկայանից հետո այլևս ի՞նչ գիր. մինչև քիչ ու միչ ուշքի եկավ, էլի՝ պատերազմ, և Մամփրեն՝ ճակատային և գիր չիմանալու պատճառով, նամակ չգրելու պատճառով, գյուղում լուր էր տարածվել, թե Մամփրեն անհայտ կորած է։ Իսկ պատերազմից հետո... խենթություն կլիներ, որ կռվից տուն գալուց հետո Մամփրեն նստեր ու գրերը սովորեր։ Եվ, այդպես էլ, Տեր Հարությունի տված ժամանակը չեկավ։ Չեկավ և... բայց... գուցե հիմա՞ է, հիմա՞ է հայոց գիրը սովորելու իր ժամանակը։

— Հըմը թող գիս, ձգուկ։— Մամփրեն թոռանը հրեց ծնկների արանքից, ոտքի ելավ և սկսեց անհանգիստ քայլել։

«Մարաթուկ վկա, սուրբ Մաշտոցի գրերն սովորելու Մամփրեի օրն ու ժամանակը նոր-նոր տեղ է հասել»։

2

Եվ գյուղը դրնգաց. Մամփրեն որոշել է տառաճանաչ դառնալ։ Մամփրեն՝ ութսունին մոտ, ութսուն տարի առանց գրի յոլա է գնացել, իսկ ահա որոշել է գրել-կարդալ սովորել։

Ով լսում էր, հանկարծակիի եկած, Մամփրեի տան կողմն էր նայում. այնպես թե՝ տունը հրդեհվել է, հետո տեսնում էր՝ տունը խաղաղ ծխում է, դառնում ծիծաղում էր,— խելոքել է Մամփրեն։

Իսկ ով մուտք ու ելք ուներ Մամփրեի տունը, գնում-տեսնում էր. Մամփրեն՝ խելքը տեղը, շատ լուրջ, շատ զգաստ և շատ գործնական կուրծքն ի վար մեկնված է հատակին, դիմացը՝ այբբենարանը, դիմացը՝ տետրեր, ձեռքին կարմիր մատիտ և գլխավերևում, որպես ուսուցիչ՝ Թոռնուհին։

— Ասա ա։

— Ա՜յբ։

— Դմբո, այբ չէ, ա՜,— և խփում է գլխին։

— Աղջի, կամաց զարկ, իմ գլուխն է կցավա։ Ա՜։

— Մեծատառ Ա։

— Մեծատառ Ա։

— Մեծատառ չէ, դմբո, մե-ծա-տառ,— և խփում է գլխին։

— Կամաց զարկ, ձգուկ։ Մե-ծա-տառ Ա։

— Դե գրիր մեծատառ Ա։

Եվ Մամփրեն մատիտը երկար թքոտում է։

— Դմբո, մատիտը մի թքոտիր։

— Թող արա թրջեմ, որ գիրն լավ երևա, ձգուկ։

— Դրա համար էլ ասում եմ, սև մատիտով գրիր։

— Չէ, ձգուկ, սուրբ Մաշտոցի գրերն հարկ է որ գրվեն կարմիրով։ Ասա, ինչո՞ւ. քանզի սուրբ Մաշտոցը գրերն իր սրտից է հանել ի լույս։

— Լռությո՜ւն։

— Համբերե զիմ խոսքն ավարտիմ, ձգուկ, համբերե։ Ուրեմ, սուրբ Մաշտոցի գրեր կարմիր են, քանզի թրծվել են արդար Արեգակով։ Եվ կարմիր են, քանզի սրբազան կռիվների են մասնակից եղել։ Իմացա՞ր։

— Ուսուցիչը ե՞ս եմ, թե դու։ Դե գրիր մեծատառ Ա։ Հո չե՞ս մոռացել։

— Չէ, ձգուկ, չէ, մոռանալու բան չէ. ջուխտակ առվակ կողք-կողքի սարից կիջվարեն-կթափվեն պստիկ առվակի մեջ, ու առվակներն ավելի կլցվեն ու ավելի կբարձրանան ու աջակողմյան առվակից պստիկ մեկ առվակ ճոթ կտա դեպ աջ ու քչիկ կերթա ու էլի կդառնա իջվար։ Էս քեզ մեծատառ Ա։ Պատկերն իմ աչաց դեմն է, հրմը...

— Էլ ի՞նչ հրմը, գրիր։

— Մի զարկե, ձգուկ, համբերե, համբերե, քու դալար թևե՞րն են իմ ուսերին, համբերե։

— Ոչ մի համբերել, վատ եմ նշանակում։

— Կխնդրեմ համբերես, ձգուկ, կգրեմ։ Կգրեմ, ձգուկ, հրմը մատիտն է փոքրիկ։ Մատիտն է փոքրիկ, ու իմ մատներն էս պստիկ-պստիկ

մատիտ չեն բռնի։ Քու հորն ասա, թող մեծ ու հաստ մատիտ բերի։ Մեծ ու հաստ ու կարմիր։

— Հիմա գրո՞ւմ ես, թե՞ վատ նշանակեմ։

— Կգրեմ, ձգուկ, կգրեմ։— Եվ Մամփրեն նորից ու երկար թքոտում է մատիտը և, կուրծքն ի վար մեկնված հատակին, լուրված սկսում է։— Ըը՛... էսպես...

— Շատ մի երկարիր։

— Թող երկար էղնի, ձգուկ, մեծտառ է։ Մե-ծա-ուառ է ու... ու առուն ինչքան երկար, էնքան աղեկ ու էնքան գեղեցիկ ու բարին մեծ։ Աա՛յլ, էսպես։

— Լավ։ Երեք եմ նշանակում։ Կկրկնես, կարգին կսովորես մինչև գամ։ Զանգը տրված է։

Եվ Թոռնուհին զանգուլակը ծլնգացնում է պապի գլխին, իսկ Մամփրեն տնքալով ոտքի է ելնում։

Յա՛... Հարևանը, ժպիտը դեմքին, անկյունում նստած է։ Ե՞րբ է հայտնվել։ Ինչո՞ւ է եկել և ինչ է ուզում։

— Գրասենյակ չերթա՞նք, Մամփրե։

— Չէ, ջանըմ... Գրասենյակ։

Մամփրեի խելքն էր շատ, որ աշունքվանից գարուն գրասենյակից դուրս չէր գալիս։ Պրծա՞վ։ Այլևս՝ ոչ մի գրասենյակ։ Թող պարապ-սարապները գնան՝ ծխեն ու դատարկ խոսեն, խոսեն ու ծխեն և խեղդվեն իրենց ծխի մեջ։ Մամփրեն կարևոր գործ ունի, նպատակ ունի, Մարաթուկին տված ուխտ ու պայման ունի Մամփրեն. մինչև սուրբ Մաշտոցի գրերը չսովորի, ոտք չի դնի գյուղամեջ։ Վերջ։ Եվ... և խնդրում է, որ չխանգարեն իրեն։ Այդքան բան։

Բայց էլի գալիս էին, երբեմն նաև նրանք, ովքեր ընդհանրապես մուտք ու ելք չէին ունեցել Մամփրեի տանը։ Պարզապես հետաքրքիր էր. Մամփրեն ինչպե՞ս է սերտում ու գրում տառերը, ասում են՝ միշտ կուրծքն ի վար մեկնված է, ոչ թե սեղանի մոտ նստած, այլ հատակին պառկած, և Թոռնուհին հա խփում է գլխին ու սովորեցնում։ Եվ գալիս էին ի տես։

Բայց մի օր Մամփրեն կատաղեց։ Մի ջահել էր եկել և սուսուփուս, աննկատ նստել անկյունում, իսկ Մամփրեն այդ օրը սովորում էր մի տառ, որը իրեն դուր չէր գալիս։ Պետք է սովորեր ճիշտ արտասանել և վարժ գրել Թ-ն։ Իսկ տառը նրան դուր չէր գալիս, հատկապես Թ-ի կտիրը։ Այն, որ այդ տառը շիտակ առվակների սկզբունքից, կարծես, դուրս է. կարճ ու երկար, բայց միշտ շիտակ ու գեղեցիկ առուների պատկերը կարծես խախտում է. դա դեռ ոչինչ. պատահում էր նաև առու, որ մի

տեղ լճանում է, բայց Թ-ի կտիշը ուղղակի կատաղեցնում էր նրան։ Եվ սկզբում, նույնիսկ այդ տառը սովորելուց ուզեց հրաժարվել. այդքան տառերի մեջ մեկն էլ թող չիմանա։ Բայց թոռնուհին հարցը կտրուկ դրեց՝ կամ պետք է սովորի, կամ ինքը ընդհանրապես հրաժարվելու է ուսուցչությունից։ Եվ Մամփրեն համաձայնեց գրել Թ-ն, բայց առանց կտիշի։ Իսկ թոռնուհին բամփում ու ստիպում էր։ Իսկ երբ Մամփրեն աչքերը մոտիկ-մոտիկացրեց այբբենարանի Թ-ի էջին. զննեց և նկատեց, որ... օհո՞, Մամփրեն նկատեց, որ այբբենարանում Թ-ի գլխին նկարված է նաև Դ-ն և... և, ի՞նչ, Սասունցի Դավթի նկարը... Այո, այո՝ Սասունցի Դավիթը։ Ահա՝ հեծած է Քուռկիկ Ջալալին և Կայծակ թուրը թափով ետ է բերել ու թոցրել Թ-ի կտիշը։ Հենց այդպես։ Նկատեց և շուռ եկավ ու, առը-հա, թոռանը, աշակերտած շաբաթների ընթացքում՝ առաջին անգամ։ Բամփեց և թոռնուհու աչքն ու ճակատը բերեց-կպցրեց այբբենարանի բաց էջին.

— Քու աչքերն լեն բաց ու տես, տես՝ Դավիթն, Սասնո Դավիթն նմանապես էդ շարանուն տառի կտիշի հետ համաձայն չէ։ Համաձայն չէ ու, տես-տես, Թուրկեծակին քաշել ու, առը-հա, կտիշին։ Տե՛ս, տե՛ս։

— Դմբո,— թոռը պոկվեց պապի ձեռքից և սովոր թաթով բամփեց։— Դմբո, դա նկար է։

— Նկար է, հըմը ո՞ւմ նկարն է։ Տե՛ս, տե՛ս։— Եվ թոռան գլուխը նորից կպցրեց այբբենարանի բաց էջին։— Տե՛ս։

Այս ծեծկոտուքի վրա անկյունում նստած ջահելը փոթկաց, և Մամփրեն հերսոտ ոտքի ելավ...

Ո՞ւմ տղան էր, ո՞ւմ թոռն էր, Մամփրեն չիմացավ, բայց ձեռնափայտով հասցրեց արանքը ճզող ջահելի թիկունքին և հայհոյելով ու ձեռնափայտը թափ տալով՝ դուրս ելավ։

Ուշ աշնան թուխպ օր էր, էլի անձրև էր մաղում, և բակը թաց էր։

Մամփրեն ձեռնափայտը թափ տվեց ջահելի ետևից և դարձավ, հայհոյելով (ջահելը կարծում էր, թե Մամփրե պապը իրեն է հայհոյում), հայհոյելով ցեխի մեջ գծեց անդուր տառը, կտիշը երկար քաշեց և տրորեց,— քու կտիշ...— տրորեց, հայհոյեց ու տրորեց։ Մամփրեն ցեխի մեջ գցեց տառը, կտիշը երկար քաշեց և կայծակ թուրը, որ ձեռնափայտն էր, վրա բերեց,— քու կտիշ...— և թոցրեց կտիշը, Մամփրեն ցեխերի մեջ նկարեց տառը և տրորեց կտիշը և զարկեց-թոցրեց կտիշը և հայհոյեց, և հայհոյեց, և հայհոյեց...

Ջահելը ճամփեզրին կանգնած նայում էր փրփրած ծերունուն և արդեն գիտեր, որ նրա հերսն ու հայհոյանքը իր հետ կապ չունեն։ Եվ

այնքան վարակիչ էր ծերունու կիրքը, որ քահելը որոշեց գնալ և նրա հետ ոտքի տակ առնել տառի կտիշը։

Բայց Մամփրեն ձեռնափայտով նորից քշեց նրան։

Այդ օրն ի հետ, այլևս ոչ մեկը չայցելեց Մամփրեին։

Եվ կամաց-կամաց, ձմռան հետ, մոռացան նրան։ Թե հարսանիքների ժամանակ կամ տխրության (այդ ձմռան Մամփրեի համերկրացի Փոշփուշ Մելոն վախճանվեց) հիշեցին, հիշեցին ժպտալով,—ձմեռ է. փոթորիկ է մտել Մամփրեի գլուխը, գարնան հետ դուրս կգա։

—

3

Եվ գարնան հետ Մամփրեն հայտնվեց գյուղում։

Մամփրեն պատերազմից, կռվի դաշտից էր եկել, Մամփրեն զարիպությունից էր եկել, Մամփրեն սահմանն անցել-գնացել էր էրգիր և ահա եկավ։ Գյուղի հավաքատեղիում այդպես դիմավորեցին՝ նրանք, որ նստոտած էին քարերին, ոտքի ելան, նրանք, որ ոտքի էին՝ ընդառաջ գնացին, ձեռքսեղմում, նույնիսկ ողջագուրություն, և Մամփրեն թե ու թևատակն ազատելու համար թղթերը խցկեց գրպանները։ (Ճանապարհին ինչքան թուղթ ու թերթի կտոր էր հանդիպել, հավաքել էր, հայհոյել էր թափթփողներին ու հավաքել թևի տակ)։ Թղթերը խցկեց գրպանները, ձեռքվեց ու կարոտած նստեց իր քարին։

Եվ եղավ իմաստուն մի լռություն։

Գյուղի հավաքատեղիում այդպիսի խորհրդավոր մի լռություն մեկ էլ տարիներ առաջ էր եղել. երբ լուր հասավ, թե ռուս մի տղա, տոհմանունով Գագարին, Տիեզերք է թռել՝ դեպի աստված։

Եվ ինչպես այն ժամանակ, հիմա նույնպես, լռությունը խախտեց սարեկիցներից ամենաանհոգը՝ Անդարդ Ավեն։

— Է, Մամփրե, բարի տեսանք։ Քու չարչարանքն՝ ապաշխարանք։

Ա՜յ, հենց գա չէր ուզում Մամփրեն։ Հայացքը գարնանագոլ գետնին, Մամփրեն մտածեց. այնուամենայնիվ, լռությունը խախտողը Ավեն չպետք է լիներ. ցավի, ուրախության և խոսքի կշիռը չիմացող Անդարդ Ավեն չպետք է լիներ խորհրդավոր լռության խախտողը։

— Տառերն թամամ սովորեցի՞ր, Մամփրե։

Մշեցի Խաչոն, նեղսրտած, ձեռնափայտը դեմ արեց Ավենին.

— Համբերե։ Քանց երեխա ինչո՞ւ կթուռաս։

Մշեցի Խաչոն, որ Մամփրեին ուսնկից էր, վերականգնեց պահին վայել լռությունը, քղքաց-հասկացրեց, որ մեջ ընկնող-խանգարող չլինի, հարմարվեց իր քարին և ձեռքը հանդարտիկ դրեց Մամփրեի ծնկին։

— Օղորմի քու անուշ ծնողաց, Մամփրե։ Մարաթուկ վկա, քու արածն, քու արածն, Մամփրե, մեծ մարդու արած էր, մեծ բան էր։— Եվ խիստ բարձրացրեց ձեռնափայտն ու շեփ-հայացք նետեց Ավեի կողմ։— Ու ամեն մարդու բան չէ։ Օղորմի քու անուշ ծնողաց։— Կրկնեց մշեցի Խաչոն և շարունակեց բորբոք ու ներշնչված։

Եվ ասաց, թե ճշմարիտ է, որ ինքը աշնանից մինչև այսօր չի գնացել Մամփրեի տուն, Մամփրեին չի երևացել՝ պարզապես չի կամեցել խանգարել, բայց զոր ու գիշեր, մտոք, Մամփրեի հետ է եղել և աղոթել է, որ Մամփրեի ուխտը ի կատար ածվի։ Ինքն էլ փորձեց, ախր, հոգի ունի տալու և պետք է խոստովանի. ինքն էլ փորձեց սովորել սուրբ Մաշտոցի գրերը։ Երբ լուր առավ, թե Մամփրեն այդպիսի սուրբ ուխտ է կապել, ինքն էլ գոտեպնդվեց։ Բայց որդին խանգարեց. որդին աղջկա ձեռքից գիրքը վերցրեց-շպրտեց մի կողմ, թե՝ պապիդ իզուր մի շարչարիր։ Հա՛ փորձեց, հա՛ որդին դեմ կանգնեց, ինքը համառեց, և որդին համառեց. ինքը մշեցի էր, իսկ որդին մշեցու որդի՝ ավելի հաստկող և որդին ի չիք դարձրեց Խաչոյի ուխտը և... և մինչև այսօր, աշունքվանից մինչև հիմա Խաչոն որդու հետ ոչ հաշտ է, ոչ խոով։ Բայց Մամփրեն, Մամփրեն իր ուխտն ու պայմանը կատար ածեց։ Քիչ բան չէ. օր ծերություն, սուրբ Մարաթուկը Մամփրեին թող երկար կյանք տա, Մամփրեն երկար ապրելու իրավունք ունի, բայց օր ծերության մարդը ելնի ու սովորի գրերը, հաշվիր, թե այդ մարդը ոչ թե սովորել է, այլ, մեղա սուրբ Մաշտոց, մեղա. այլ՝ ինքն է հորինել։ Հա՛, Մարաթուկ վկա, այդպես է։ Ու հիմա, հիմա տարոնցի Խաչոն, Մաշտոցի հայրենակից Խաչոն ավելի շուտ Մամփրեի իմացած հայոց գրին է հավատում, քան իր որդու, քան իր թոռների։

— Օղորմի քու անուշ մոր, Մամփրե, սուրբ Մաշտոցի գրերն ի՞նչ տեսք ունեն ու ի՞նչ բնույթ ունեն։ Մեկ-երկու նմուշ պատկերե, Մամփրե։

Մամփրեն, որ գլուխկախ լսում էր Խաչոյին (փառք աստծո, ուրեմն գյուղում բոլորը չէ, որ իր արածը ընդունել են խենթություն), հիմա շտկվեց և ձեռքը տարավ գրպանը, որ ճամփից հավաքած թերթերից ընտրի գլխատառ գիրը և բացատրի, բայց միտքը փոխեց. գտավ մի կտոր ճիպոտ և ուղիղ մի գիծ քաշեց խոնավ գետնին։

— Էս ի՞նչ է, Խաչո։

Մշեցի Խաչոն երկմտեց, իսկ Անգարգ Ավեն ելավ-կանգնեց գծի գլխին և շտապեց՝

— Գիծ է։ Հիմա ես էլ գծեմ ու իմ պապի պապն էլ գա ու գծե։

— Համբերե,— Խաչոն ձեռնափայտով քշեց Ավեին։— Նստիր քու տեղն ու մեր արևն մի ծրարե։

— Հաշվենք, թե՝ առու է, խաչո։ Առվակ։— Մամփրեն գիծը խորացրեց։— Առվակ է ու ոչ թե դաշտի առվակ, սարից իջվարող առվակ է՝ շիտակ ու բարակ ու զուլալ։ Մեկ ուրիշ նմանատիպ առվակ կողքն ի հետ կիջվարե՝ շիտակ ու բարակ ու զուլալ։— Եվ զուգահեռ գծեց։— Ու էս ջուխտակ զուլալ առվակներն սարից կիջվարեն ու կհանդիպեն ու կմիանան մեկ ավելի պստիկ առվակի՝ լանջն ի հետ գնացող։ Էս է։— Մամփրեն ճիպոտով զուգահեռ առվակները միացրեց։— Միացա՞ն... Թե միացան, թե առվակներն զարկվան իրար, ուրեմն ջուրն կշատանա, ուրեմն առվակներն կլցվեն ափեափ, ուրեմն հարկ է, որ մի տեղից ջուրն ճոթ տա... էս է։ Ուրեմն ճոթ կտա, քչիկ մի կերթա ու... ո՞ւր պետք է էրթա, խաչո, սար է, չէ՞, ուրեմն կդառնա ու էսպե՞ս կիջվորե։ Էս էղավ, ուրեմն, սուրբ Մաշտոցի առաջին տառն ու մեծ տառն՝ Ա։

Պատի տակ նստոտածները՝ բոլորը համերկրացիներ (շատ չէին մնացել, եթե Անդարդ Ավեին էլ հաշվեին, ճամփորդ հինգ ծերունի), բոլորը տառերին անծանոթ, լուռ նայում էին Մամփրեի գծած տառին և սպասում, թե Մամփրեն էլի ինչ կասի։

— Գրերից մի քանիսն շիփ-շիտակ առվակների պատկերից փոխս են։ էն էլ թե ինչո՞ւ, սուրբ Մաշտոցի կամքն է։ Մեկ-երկուսն էլ կան, որ... որ, մեղա, մեղա, սուրբ Մաշտոց... էդ մեկ-երկուսն, խաչո, իմ սրտին դուր չեն գա։

Եվ գծեց Թ-ն ու կտիշը կտրեց։

— Կտիշ է, օձի կտիշ է, ու իմ սրտին դուր չի գա։

Այս մեկ։

Մյուսը։ Եվ գծեց Ք-ն։ Ա՛յ, մեծ առու է։ Առու է, թե գետ է՝ մեծ է. քանզի մի տեղ լիճ է կազմել։ Ահա։ Ապա մի առվակ (առվակ, թե գետակ) գալիս է, թափով գալիս-զարկում-կտրում է այդ մեծ առուն (թե գետը)։ Զարկում-կտրում անցնում է։ Կտրելը՝ կտրում է, բայց, չգիտես ինչու, չի ձգվում, չի երկարում՝ ա՛յ, այսպես... Եվ հատիշը՝ Ք-ի պոչը հատող գիծը, ձգեց ու տարավ. քանի ձեռքը երկարում էր և քանի ճիպոտը տանում էր՝ ձգեց։

— Ա՛յ, էսպես, աստված քու տուն սարքե, ինչո՞ւ ես առվակի դեմն առե,— դիտողություն արեց Մաշտոցին և ներողություն խնդրեց։— Մեղա, սուրբ Մաշտոց, մեղա։ Հրմը իմ կարճ խելքով, խաչո, էն առվակն, էն գետակն, որ մեծ առու ու գետ կկտրի, էդ առվակի ճամփեն հարկ է, որ ընկի երկար ու երկար։

Էլի լռություն եղավ... Մամփրեն այդ ո՞ր աշխարհն է հասել, ո՞ր աշխարհից է գալիս, ո՞ր աշխարհի մասին է այսպես ճարտար պատմում... Օր ծերություն Մամփրեն եկավ ու զարկեց (Դավթի հրեղեն թո՞ւրն

էր Մամփրեի ձեռքին), զարկեց և պարիսպներ խորտակեց, և հորիզոններ բացեց իր համար, երկրից հասավ մինչև երկինք և սուրբ Մաշտոցի հետ վեճի մեջ է։ Իսկ իրենք... իրենք մնացին իրենց քարերին կպած՝ քարի ոստի պես։

Նույնիսկ Անդարդ Ավեն էր անծպաուն ու բերանբաց նայում Մամփրեի գծած հրաշք տառին, որ տառ չէր, այլ գետ ու գետակի հանդիպում ու հատում։ Մամփրեն է ասում։

— Ուրեմն, խաչո, հայոց գրերն գետերի ու գետակների, սարն ի վար իջվարող ու սարն ի հետ գնացող առվակների՝ շիտակ ու զուլալ ու կանաչափ առվակների հոսք է, կյանքնք է ու հատոնք։ Էդպես պատկերացրու։

Ուշադիր ու լուրջ լսում էին (հաճելի էր ու շոյող), և Մամփրեն որոշեց հասկացածը մինչև վերջ բացատրել տարեկիցներին։

Ուրեմն՝ այդպես։ Բայց կան նաև տառեր, որ դաշտի, հարթավայրի առվակների պատկերն ունեն. ահա՝ ծայր առան, ոլորվեցին ու տեղն ու տեղը սուզվեցին, ահա՝ ոլորվեցին ու լճացան։ Տառերից մի քանիսն էլ, ուրեմն, դաշտային առվակի պատկերն ունեն։ Բայց այդ պատկերներով տառերը քիչ են։ Ինչո՞ւ։ Քանզի հայոց աշխարհը լեռնային է և գրերի շատը, ուզի-չուզի, լեռնային գետակների, առուների ու առվակների պատկերը պետք է ունենային։ Այս էլ՝ այսպես։

Սակայն տարօրինակն ու զարմանալին, անչափ զարմանալի հայոց գրերից վերջին գիրն է՝ ֆ-ն։ Ահա պատկերը։

— Սարեն էսպե՞ս,— և ճիպոտով գծեց,— մեկ գետակ, թե մեկ առվակ է ուղիղ կիջնի ու... ու, սուրբ Մարաթուկ, ու մեկ վիշապ, էսպե՞ս. փաթաթվել է սարից իջվարող զուլալ ու շիտակ գետակին... էսպե՞ս փաթաթվել է՝ գլուխն գետակի ակունքին ու կծոծած պոչն՝ գետակի վերջին։ Էսպե՞ս փաթաթվել ու կֆշշա ու կֆշշա։ Ֆ,— հնչեղ արտասանեց Մամփրեն,— ֆ,— կրկնեց,— վիշապի ֆշշոց կլսի՞ք... էդ է։ Փաթաթվել է շիտակ ու զուլալ գետակին ու կֆշշա, ու կֆշշա, ու կֆշշա...

Այս ի՞նչ փորձանք է, այս ի՞նչ արմանք-զարմանք բան է և ինչպե՞ս հասկանալ։ Գուցե Մաշտո՞ցն է սխալվել, մեղա՜, մեղա. տառապանքից, հոգնածությունից, ուրախությունից, որ վերջին գրին է հասել, սխալվե՞լ է։ Հազիվ թե։ Տարոնցի սուրբ Մաշտոցն անսխալական է։ Եվ Մամփրեն իր կարճ խելքով ահա թե ինչ է մտածում.

— Վա՜յ թե,— և թափով խփեց ծնկին,— վա՜յ թե, խաչո, սուրբ Մաշտոցն իր արարած տառերի ճակատագիրն է գուշակե։ Հա՜, Մարաթուկ վկա։

Տառերն արարելիս, վա՜յ թե, վերջին տառի պատկերն այդպես է

հայտնվել աչքի դիմաց՝ զուլալ գետակ ու գետակին փաթաթված վիշապ։ Այդ պատկերն է ցոլացել աչքի դիմաց, և սուրբ Մաշտոցն զգացել է նոր-նոր լուսաշխարհ բերած իր գրերի ճակատագրի համար, սոսկալի է ու ցավից տնքացել, արմանք-զարմանք քար կտրել և դրա համար էլ նախավերջին տառը, որ Օ-ն է, զարմանք ու ցավով բացված շուրթերի պատկերն ունի՝ Օ։

— Մարաթուկ վկա, էդպես է էղե, խաչո։

Իհարկե, Մաշտոցը կարող էր տեսիլքը չընդունել. կարող էր այդ չարակամ պատկերը շպրտել Եփրատն ու իր գրերի վերջին գիրը արտերը այլապատկեր, բայց չի կամեցել ոչ իրեն խաբել, ոչ ժողովրդին հայոց և, ցավն ի սիրտ, տեսիլքը ընդունել է՝ ի ցույց և ի զգուշացում...

— Մարաթուկ վկա, էդպես է էղե, խաչո։

Եվ Մամփրեն զուլալ գետակին փաթաթված վիշապը ցնցեց, ապա ձեռքը տարավ գրպանը և հիշեց.

— Գրերն սովորելուց թոռնիկն ստիպեց, թե ջղարեն թող։ Ու ես թարկեցի։ Հըմը էսօր իմ սիրտն ծխել շատ կուզե։ Եվ խաչոյի վառած ծխախոտն առավ ու հակվեց ծնկներին։

Ահագին ժամանակ լուռ էին։

Հայոց գրերը խլվլում էին Մամփրեի ներսում, թավռում էին հայացքի դիմաց, և նա անհանգիստ էր։ Տունը կանչում էր նրան։ Գրապահարանում նա՝ արդեն իր անկյունն ուներ՝ այբբենարանը, կարմիր տառերով լցված տետրերը, անգրել տետրեր, ծայրած ու անծայր կարմիր մատիտներ, ռետին։ Տետրերն ու մատիտները կանչում էին, և նա ուզում էր ոտքի ելնել, բայց գարնան առավոտի արևը շլացուցիչ էր դուրալի։ Գարնան արևը, խոնավ գետնի գույը, սարերի ձնհալով լցված գյուղի կենտրոնական առուն, աղբյուրի ծորանից պոռթկացող ջրի շիթը... Ջուրը փշրվում է քարե գոռում, և մանրիկ շիթերը պարս էին բռնել աղբյուրի գլխին։ Եվ Մամփրեն հիշեց. վարժապետ Տեր Հարությունը ասում էր՝ սուրբ Մաշտոցից առաջ հայոց գրեր են եղել և հայոց բան՝ փորված քարե սալիկներին։ Հայոց վայրագ թշնամին ջարդուփշուր է արել հայոց քարե մատյանները, և գրերը թաղվորվել են. կերպարանափոխվել մեղուների և թռել սարերը... Տեսնես, սուրբ Մաշտոցից առաջ եղած հայոց գրերի վերջին տառը ի՞նչ պատկեր է ունեցել...

— Մամփրե,— Անդարդ Ավեն խորհող լռությունն չի սիրում,— էսպես խմաստուն խոսք կա՝ ուսումն եփած հաց է, մարդու թեք տակ գրած։

— Թյուու,— Մամփրեն մեկեն բռնկվեց,— թյու էդ խոսքին առաջին անգամ շունչ տվողին, թյու էդ խոսքին թե ավաղներին։

Ուրեմն Մաշտոցը տառերը երկնեց նրա համար, որ հայերը այդ

գրերով հա՞ց աշխատեն։ Վարժապետ Տեր Հարությունը ասում էր, որ սուրբ Մաշտոցը հայոց առաջին դպրոցները բացեց հայոց երկրի սահմանաեզրերում։ Շրջում էր հայոց սահմաններով, վարժապետներ կրթում, դպրոցներ բացում, վարժապետներ կրթում, դպրոցներ բացում... Եվ այդ դպրանոցները բերդեր էին սահմանաեզրերում։ Բերդեր և զորանոցներ։ Քանզի տառերը, Մաշտոցի գրերը, զինվորներ են։ Գեղեցկադեմ, մաքուր և զուլալ և արի զինվորներ։ Զինվորներ։ Ոչ թե ասկյարներ, այլ զինվորներ։

Երկրի սահմանները պաշտպանող զինվորներ։

Արդարության, ճշմարտության համար կռվող զինվորներ։

Գեղեցիկն ու բարին պաշտպանող զինվորներ։

Եվ հայոց երկրի թշնամոց դեմ կռվող հերոս զինվորներ։

Ահա այդպես։ Եվ վարժապետ Տեր Հարությունն էր ճիշտ, ոչ թե Օհանը։ Ճիշտ չէր Օհանը. էրգրի իրենց գյուղի ամենատարեց մարդը, նա, որ հզոր ընկուզենի ուներ և իր ընկուզենու հասակակիցն էր, ճիշտ չէր, որ ասում էր, թե հայոց գիրը հայոց թագավորն է, արքան է։ Հայոց գրերը հայոց զինվորներն են։ Իսկ թագավորը, թագավորը Մամփրեն է, Մամփրեն է արքան, այսինքն նա, ով այդ զինվորներն ունի իր հրամանի տակ և նրանց կռիվ է տանում՝ հանուն հայրենիքի, հանուն արդարության, հանուն ճշմարտության, հանուն գեղեցիկի։ Իսկ Մամփրե արքան կարող է հանկարծ փսլնքոտի մեկը լինել և զինվորներին հիմար հրամաններ տալ, այդ դեպքում նա արդեն արքա չէ, այլ սովորական մի փսլընքոտ և հրաման տալու իրավունք չունի, այլ ամենաշատը, ամենաշատը, պետք է հետևի, թե իսկական արքայի հրամանի տակ զինվորներն ինչպես են շարժվում, դեպի ուր են շարժվում և ինչ են անում և եթե կարող է, թող մաքրի իր փսլինքը։ Այդ Մամփրե արքան կարող է հանկարծ նենգ մի ավազակ լինել, իսկ ավազակն արդեն արքա չէ, ավազակ է ու կա, և նրա պիղծ հրամանի տակ այդ զինվորները կարող են դառնալ ասկյարներ։ Այսպես։

Մամփրեն հերաստ ոտքի ելավ։

Եվ, առուն անցնելիս, ճիպոտի ծայրին առավ փսոր թղթերը. առվում, ցախերի մեջ խճճված փսոր թղթերը առավ ճիպոտի ծայրին և մեկնեց Ավեի ուղղությամբ.

— Ամեն հացակեր հայոց գրերի գլխին հարկ չէ, որ արքա դառնա։— Եվ թղթերը շպրտեց Անդարդ Ավեի ուղղությամբ և հայհոյելով գնաց։

Ճամփից տեսրերի ու գրքերի թերթեր, թերթերի պատառներ էր հավաքում, փչում ու ծալում թևի տակ և հայհոյում. հայհոյում էր գրի հետ

այդպես վարվող անհոգիներին, հայհոյում էր անորոշ, իսկ ամենաշատը, ամենակրքոտ՝ Ավելին։

Եվ լցված հասավ տուն, գրապահարանի իր անկյունից վերցրեց անգրել մի տետր, կարմիր մատիտ, նստեց սեղանի մոտ և թափով ու գլխատառերով գրեց.

«Մամփրեն արքա է, իսկ սուրը Մաշտոցի գրերն զինվորներ են»։

Նա գրել էր առանձին բառեր— ասա, արա, սար, տար— գրել էր անուններ— Արարատ, Սանասար, Սիրան, Տիրան...—բայց լրիվ մի նախադասություն, ամբողջական մի միտք՝ սա առաջինն էր։ Եվ գրեց առանց ճիգ ու չանքի, միանգամից և հուզվեց միայն գրելուց հետո, երբ զննեց թիկունք-թիկունքի զգաստ շարված կարմիր գլխատառերը։

Հետո գրածը խնամքով անջատեց տետրից, խնամքով ծալեց-դրեց ծոցը, նստեց դռանը և սպասեց. ուր որ է Թոռնուհին դասից կգա։

***

Սակայն առաջին հայտնվողը փոստատարը եղավ։

— Քեռի Մամփրե,—խնդմնդաց փոստատարը,— թերթերի՞ն ես սպասում։

Շան թուլա։ Եթե Մամփրեն գրել կարող է՝ ահա... (ինչպես է տաքացել կուրծքը. ծոցում, կարծես, լուր կա՝ տաք, թպրտացող), եթե գրել կարող է, կարդալ... կարդալը ավելի դյուրին է։

Եվ թերթերից ընտրեց փոքրածավալը. ինչ խոսք, փոքրը՝ մատչելի է... Հերթը մեծերին էլ կհասնի։ Բացեց շրջանային թերթը և մի լուսանկար մեկեն բռնեց հայացքը... Վա՜հ, սա իրենց հարևանուհի Սաղիկը չէ՞... Շտապ դարձավ հարևանի տան կողմ, չնայած գիտեր, որ Սաղիկը ձմեռանոցում է. Սաղիկը կթվորուհի է, իսկ ֆերման ձմեռանոցից դեռ գյուղ չի բարձրացել։ Սաղիկի սկեսուրը երեկ, հեռվից հեռու, հարսի հետ կռիվ էր տալիս, թե՝ եկ քո լակոտներին տեր կանգնիր, դռանը կանգնած նայում էր ձմեռանոցի կողմ և լացն ու հայհոյանքն ու անեծքը իրար խառնած կռիվ էր տալիս։

Մամփրեն ուշադիր նայեց լուսանկարին... Այո, Սաղիկն է։ Չնայած լուսանկարում սիրուն է. այնպես մաշված ու կնճռոտ չի երևում, ինչպես իրականում կա, բայց նա է՝ Սաղիկն է։

«Էս խղճուկ հարսնուկի նկարն ինչո՞ւ են կպցրե մեջ թերթին ու ինչ խաբրիկ է»։

Գիրկապ կարդաց ակնարկի վերնագիրը՝ «Քարաքլիխի դուստրը»։

«Դուստր ի՞նչ է»։— Գլուխը բարձրացրեց։

Թոռնուհին թվալով գալիս էր։

— Երեք հատ հինգ եմ ստացել։

Մամփրեն հեռվից ժպտաց Թոռնիկին և ձեռքը տարավ գրպանը։

— Տես ու գնահատե։— Եվ ամաչկոտ ժպիտը դեմքին՝ գլուխկախ ասաց։

— Արքա... Պահ-պահ-պահ, հենց տառերը սովորեց, դարձավ արքա։ Եթե այդպես լիներ...

— Անխելք փապուճ, համբերե, մեկնիմ գիմ միտք։

— Սոված եմ։— Եվ բամփեց պապին։— Ապրես։ Հինգ։

Մամփրեն, իհարկե, ավելի բարձր գնահատականի էր սպասում. ուսուցիչը գնահատեց միայն ուղղաշար տառերը, իսկ միտքը չհասկացավ։ Բայց Թոռնուհին շտապում էր։

— Համբերե, ձգուկ։ Դուստրն ի՞նչ է։

— Դուստր՝ աղջիկ։

— Լավ մտածե։

— Դուստր նշանակում է աղջիկ։— Եվ շտապեց տուն։

Մամփրեն գրածը խնամքով ծալեց-դրեց ծոցը և նորից թերթը ձեռքն առավ։ Ուրեմն՝ Քարագլխի աղջիկը... Թող այդպես լինի։ Աղջիկ, թե հարս, մեկ է, Ծաղիկի մասին է։ Բայց ի՞նչ են գրել։— Նա... մանկուց... երազում... էր... կթվորուհի... դառնալ...— Կարգին տեղ չհասավ։ Մամփրեն բառ-բառ կարդաց երկրորդ անգամ, երրորդ անգամ, ապա վարժ, ամբողջ նախադասությունը, միանգամից։— Նա մանկուց երազում էր կթվորուհի դառնալ։

— Թյու, սատանի ծնունդ։— Մամփրեն ինքն էլ չիմացավ, թե ինչպես ճմռթեց թերթն ու շպրտեց։ Բայց և շտապեց հովից թրթռացող թերթի ետևից։— Տառերն են ափսոս, սուրբ Մաշտոցի գրերի համար է մեղք։— Եվ թերթը հարթեց-դրեց անթատակն ու հուզված սկսեց քայլել տնամերձում։

Ծախված հոգի, քեզ ո՞վ է ասել, թե այդ խեղճ հարսնուկը դեռ մանկուց երազում էր կթվորուհի դառնալ։ Մամփրեն, ախր, լավ է ճանաչում. աղջիկ ժամանակ Ծաղիկը Մամփրեի ձախակողմյան հարևանն էր և դարձավ աջակողմյան հարևանի հարսը։ Էդ խեղճ աղջիկն, ախր ուսուցչուհի էր ուզում դառնալ, Մամփրեն հո լավ գիտի, մեկ՝ ուսուցչուհի, մեկ՝ բժշկուհի, մեկ՝ պարուհի, մեկ... Թռվռուն աղջիկ էր և հազար ու մեկ երազ ուներ... Սատանի ճուտ, ճշմարտությունն ասա։ Գրիր, որ աղջիկը, այսպես ու այսպես, հազար երազ ուներ, բայց, կյանք էր, վիճակ էր, բախտ էր, ամուսնացավ, երեխաները թափվեցին գլխին և երեխաներին

հաց ու թաց էր պետք, աշխատել էր պետք և Մաղիկ անվանակիր հարսնուկը փեշերը պոկեց երեխաներից և գնաց ֆերմա, դարձավ կթվորուհի։ Ճիշտը գրեիր, ճշմարտությունը գրեիր, արդարը գրեիր... Մարդու երա՞զն էլ խլեն մարդուց, նույնիսկ անցած-գնացած երա՞զն էլ խլեն... Սաղայելի ծնունդ, գրերին, արդարամիտ ու ճշմարտախոս ծնված գրերին ինչո՞ւ ես դարձնում ստալեզու-ստախոս և քեզ ո՞վ է իրավունք տվել, որ սուրբ Մաշտոցի զինվորներին այդպիսի պիղծ հրաման տաս։ Ո՞վ է իրավունք տվել... Այդ փսլնքոտը քանի՞ տարեկան կլինի... Քանի տարեկան էլ լինի՝ փսլնքոտ է, ինչպես Անդարդ Ավեն... Եվ Ավեի որդին է, թոռն է, արնակիցն է. Մաշտոցի գիրը նրա համար եփած հաց է, թեկ տակ դրած հաց՝ կեր ու ման արի... Այս փսլնքոտն է պատճառը, ծախված հոգիներն են պատճառը, որ մրոտած թղթերը, թերթերը, գրերը շանտի հետ քշվում են... Այսքանը դեռ գյուղում, փոքրիկ մի գյուղում... Իսկ քաղաքներ կան, աշխարհում աշխարհի չափ մեծ քաղաքներ կան... Անցյալ ամռանը, իրիկնապահին, ինքը, Մամփրեն, քիչ մնաց թե խեղդվեր Երևանի փողոցում։ Լեռներից հանկարծ մի քամի փրթավ[1]-մտավ քաղաք և թղթեր հանեց երկինք և թղթեր հանեց երկինք և թղթեր հանեց երկինք, կարծես չալթիկ ագռավների ոհմակ էր, որ խշշոցով հարձակվեց քաղաքի վրա։ Կպա մի թերթ, ամբողջական ու բաց ու մեծ մի թերթ, եկավ ու ծեփվեց Մամփրեի դեմքին։ Եվ ինչպես էր կառչել, ինչպես էր կառչել, պատռվում էր, ճղճղվում էր, բայց չէր հեռանում դեմքից։ Շունչը, հա-հա, կտրվելու էր։ Անցած ամռան այդ իրիկնապահի պատկերը՝ քաղաքի երկնքում խշրտացող թղթերը չալթիկ ագռավների ոհմակ երևաց աչքին, լեշակերների խշշացող ոհմակ. ալդպես երևաց, որովհետև ամռան այդ օրը ինքը, Մամփրեն, տառերին դեռ անծանոթ էր և մտահան էր արել վարժապետ Տեր Հարությունի խոսքը՝ գրերը զինվորներ են։ Իսկ հիմա, հիմա Մամփրեն հասկանում է, թե այդ օրը, այդ իրիկնապահին ինչ էր կատարվում քաղաքի երկնքում...

Պարտված զինվորների փախստական էր։

Այո՛, այո՛, այդպես էր, այդ էր. եթե տառերը զինվորներ են (և զինվորներ են), այդ զինվորներին սխալ հրամաններ էին արձակել, հիմար հրամաններով էին շարժվել ու պարտության մատնել և ահա՝ լեռներից իջած մի քամի և... պարտված զինվորները փախչում էին... Ա՛խ, այդ փսլնքոտը, Մաղիկի մասին գրողը հիմա ընկներ Մամփրեի ձեռքը... Բայց ո՞ւր էին փախչում պարտված գրերը այն երեկո... Պարտված գրերը ո՞ւր պետք է փախչեն, այս երկրից հո դուրս չե՞ն գա։ Նորից պետք է

---

[1] Փրթնել — պոկվել, ընկնել։

իջնեն երկիր, և երկիրը, երկիրը պետք է լցվի պարտված զինվորներով և գլուխը կորցրած պետք է պտտվի, պտտվի, պտտվի... Ինչքա՞ն գիր գրված կլինի աշխարհում։ Աշխարհի բոլոր լեզուներով ինչքա՞ն գիր գրած կլինեն։ Եթե փռես՝ երկիրը քառասուն տակ կծածկվի, գրերն էլ հետը։ Իսկ եթե այդ բոլոր-բոլոր-բոլոր գրվածքները ճշմարիտ լինեին, ինչի համար արարվել են աշխարհի բոլոր գրերը՝ ճշմարտությունը պաշտպանելու և սուտը մերժելու, արդարը՝ պաշտպանելու և անարդարը կործանանելու, գեղեցիկը պաշտպանելու և գեշը մերժելու, բիրտ ու նենգ ուժերի դեմ կռվելու, կռվելու և հերոսանալու, և սրբագործվելու... Եթե այդպես լիներ, եթե աշխարհի բոլոր գրերով բոլոր գրվածքները արդարաշունչ լիներին։ Այսպես եթե շարունակվի, այսպես եթե շարունակվի, աշխարհի բոլոր տառերը, որ ծնունդով անարատ են, տառերը, որ կոչումով ասպետ զինվորներ են, կբարոյալքվեն։ Հա՛, Մարաթուկ վկա, կդառնան գող, ավազակ, թալանչի, մատնիչ, նենգ, դավաճան, վախկոտ, սուտասան, ստոր, ստրկամիտ, ծախու, անուղղելի դասալիք... Եվ... և Երկիր մոլորակը ուղեծրից դուրս կգա... Ա՜խ, այդ վաճառված հոգին, այդ... այդ Սադայելի ծնունդը հիմա ընկներ Մամփրեի ձեռքը։

Երբ երեկո եղավ, և գերդաստանը քնեց, Մամփրեն վերցրեց տետրերը, վերցրեց այբբենարանը. տեսար ու գրերից մեկի պատկերը մտքից թռավ, վերցրեց մատիտներն ու ռետինը և նստեց սեղանի մոտ։ Հիմա Մամփրեն այդ փսլնքոտին այնպիսի դաս կտա. այնպիսի մի կոթոց կգրի, որ մուխը պնչերից դուրս գա և ողջ կյանքում ձեռքը գրերից ետ քաշի... Բայց ինչպե՞ս սկսել, ինչպե՞ս դիմել...

Եվ ծոցից հանեց գրածը— Մամփրեն արքա է, իսկ սուրբ Մաշտոցի գրերը զինվորներ են— հաճույքով կարդաց և մեկնեց սեղանին. պետք է գրել այսօրինակ՝ գլխատառերով, այսպես՝ թիկունք-թիկունքի, զինվորների պես զգաստ շարված և, անշուշտ, կարմիր մատիտով։ Եվ մատիտը թքոտեց։

«Տղա, փորի համար հոգին չեն ծախի։ Դու հոգի չունես, տղա, սուրբ Մաշտոցի արդար զինվորներին անարդար հրաման մի արձակե։ Դու արքա չես ու գրերին հրաման արձակելու իրավունք չունես։ Քու հարամ աչը քեզ քաշե, տղա։ Թե կընկնիս իմ ձեռքը...»։

Ստացվեց այնպես, ինչպես ուզում էր՝ գլխատառերը հավասար և ձիգ և առանց տողադարձի, որը Մամփրեն չսիրեց ու չընդունեց։ Միայն Թ-ի վրա աչը դողաց, բայց տեղն ու տեղը զայրացավ և գրեց թափով ու առանց կտրելի։ Մի քանի անգամ կարդաց գրածը, ծալեց ու գրեց սեղանին։

Այս մեկ։

Որքան բան կա գրելու։ Որքան և որքան ճշմարտություններ ունի ասելու Մամփրեն։ Ափսոս, հազար ափսոս, որ գրերի հետ ուշ ծանոթացավ— օր ծերություն։ Լավ էր գոնե, որ Մարաթուկը ուփսը կատարեց, և հիմա Մամփրեն կարող է Մաշտոցի զինվորները շարքի կանգնեցնել ու շարժել։ Որքան է խոսել և միշտ՝ ճշմարիտը, ժողովուրդին որքան և որքան է ոտքի կանգնել։ Հարյուր անգամ միայն՝ խաչոյի համար։ Այս, մշեցի խաչոյի արտի, արտերի համար նախագահի, նախագահների դեմ հա ճակատ է տվել. խեղճ մարդը, մշեցի խաչոն, տարին մի արտ էր պատրաստում լանջերին, ձորաբերանին, քարերի մեջ, նախագահը խլում էր, թե ու թիկունք չարդելով մշեցի խաչոն քարցանք սարալանջերից էր հողը խլում, ձորից էր հողը խլում, նախագահը... նախագահը՝ խաչոյից։ Եվ ինքը, Մամփրեն, ամեն ժողովի ոտքի էր կանգնում՝ արդար չէ, բոզոքում էր, սխալ է և բացատրում էր՝ արտը խաչոյից խլեցիք, իմացած եղեք, որ այդ արտը կկորցնեք. կտրորեք, կտաք բուլդոզերի բերանը, կլքեք-կտաք հեղեղի բերանը՝ կլցնեք ձորը (ինչպես որ եղավ, ինչպես որ եղավ)։ Թողեք, ասում էր, թող այդ լաթ արտը խաչոյի ձեռքին մնա և սարալանջին կպած։ Բայց լսողն ո՞վ էր։ Քանզի խոսքը բանավոր էր՝ քամու բերան ընկած աշնան տերև։ Իսկ գիրը, գիրը, ճշմարտախոս գիրը... Հաշվիր, թե խոսքդ քարի վրա ես քանդակել, ժայռերի վրա՝ միշտ աչքի դիմաց, հաշվիր, թե քանց ցորեն ցանել ես, և ծիլ է տվել, կանաչել է, հասունացել ու ծփում է։ Դե եկ ու մի նայիր, եկ ու ասա այստեղ արտ չկա և ասա, ասա՝ ցորենի հասուն արտը ոչ մեկին, ոչ մեկին պետք չէ։ Ախր, եթե Մամփրեն հայոց գրերին էն գլխեն ծանոթ լիներ։ Բայց ուշ չէ, բոլորովին էլ ուշ չէ, մի օրվա կյանք էլ ունենաս, այդ մեկ օրն էլ հարկ է, որ կովես արդարության համար, ճշմարտության ու գեղեցիկի համար... Խաչոն դեռ «ավելորդ» մի արտ ունի, մշեցի խաչոյի վերջին արտը դեռ մնում է սարալանջին, խաչոն առվույտ է ցանել ու սպասում է նախագահի վճռին։ Ոչ, այդ արտի ճակատագիրն արդեն Մամփրեն է վճռելու։ Մամփրեն հենց այս գիշեր Մաշտոցի ասպետ զինվորները կշարի և արևը չծագած կքշի ուղիղ կոլտնտեսության գրասենյակ։ Այդպես

Մատիտը բռում սեղմած, Մամփրեն մարտական քայլում էր. այլևս ոչ մի անկողին՝ առանց այն էլ քուն չի գալիս աչքերին. այլևս ոչ մի անկողին՝ առանց այն էլ ապրելու քիչ ժամանակ է մնացել, իսկ Մամփրեն անելիքներ ունի։ Գործ ունի։ Կռիվ ունի։ Զորօրինակ...

Տես, թե այդ հիմարները, կոլտնտեսության վարչության ու գյուղսովետի խելոքները ինչ են որոշել. որոշել են ծառերը կտրել և հրապարակ պատրաստել, ուռենիները իրենց հով ու զովով, անուշ ստվերներով սրբել և տեղը ասֆալտ փռել։ Ուրեմն աղբյուրի մոտի ուռենիները...

Եվ հանկարծ գայթեց։ Թվաց, թե տախտակապատ հատակին քար հայտնվեց-կտրեց ճանապարհը, զարկվեց ոտքին։ Մամփրեն գայթեց և ձեռքը տարավ գլուխը.

— Օխաաշշշ...— Ծոծրակի մոտ այնպես իրական պոռթկաց ցավը, ինչպես, է՞, այն օրը, երբ ինքը Մեհրեաղբյուրի մոտ Օսմանի նենգ լակոտ Օսմանին լավ տրորեց, ապա ծնկեց՝ ջուրը դեպի իրենց շաղգամի արտի կողմ շտկելու, իսկ այդ ճպռոտ լակոտը, այնուամենայնիվ, թիկունքից քարով զարկեց-ջարդեց իր գլուխն ու փախավ և ուսն ի ետ քարերի պես շպրտում էր,— Աթաբունար... Աթաբունար,— որպես թե՝ աղբյուրի անունը Մեհրե չէ, այլ Աթաբունար, որպես թե՝ աղբյուրը քոնը չէ, այլ իմը...

— Օսման, ես քու հավատը...

Գոտորունն ու գաղթը վրա տվեցին և Մամփրեի ու քո կռիվը կիսատ մնաց։ Եվ մնաց որքա՞ն ժամանակ, որքա՞ն ժամանակ, մինչև այսօր... Իսկ այսօր, հիմա, հենց այս գիշեր Մամփրեն քո նենգ հերը կանիծի... Ահա թե ինչի համար, թե ինչի համար, ինչի համար Մամփրեն սովորեց Հայոց գրերը... Ցա՜, Մարաթուկ...

Գլխապտույտի մեջ և աչքերը մթնված և շունչը հևհև ափլփում էր դեպի տեղանը և այն մտքից, թե կարող է հանկարծ շունչը փչել, Մամփրեն սարսռաց... Տեր աստված, այդպիսի դաժանություն չանես, այսքան կյանք ես պարգևել Մամփրեին, շնորհիր նաև մեկ գիշեր, թաք մեկ գիշեր, այս գիշերն ի լույս։ Եվ բավական է։ Եվ Մամփրեն գոհ կմնա։ Եվ Մամփրեն խաղաղ աչք կփակի։ Սուրբ Մարաթուկ, դու, դու ճանանչ ես, ախր, Մամփրեին, դու օգնիր, որ Մամփրեն իր անպատասխան կռիվը անի (ահա թե ինչի համար սովորեց հայոց գրերը), իր պարտք-կռիվը տա, ապա կամքը քոնն է։ Ցա՜, Մարաթուկ...

Բայց հայացքի դիմաց մշուշ էր, ճերմակն ու կարմիրը խառնվել էին իրար։ Նա բռունցքով տրորեց կուրծքը, քունքերը և օգնության կանչեց էրգրի սարերի շունչը, տրորեց աչքերը և օգնության կանչեց սարերին փլված ճանանչ եկեղեցիների զորությունը, և մատիտը ձեռքն առավ... Հիմա, հիմա... Ահա թե ինչի համար, թե ինչի համար սովորեց հայոց գրերը։ Հիմա...

Բայց մատները չէին ենթարկվում, ձեռքը դողում էր և հենց առաջին տառը ճզվեց։

— Քու անունը... Օսման։

Ոտքի ելավ և հուզված սկսեց քայլել... Հիմա, հիմա, սիրտը կհանդարտի, դողը հիմա կանցնի, աչքերը կլուսավորվեն, կհանդարտի սիրտը, և Մամփրեն քո հարամ հերը կանիծի, ճամփաների դարանակալ ավա-

զակ... Ահա թե ինչի համար, ինչի համար Մամփրեն սովորեց հայոց գրերը։ Համբերիր, հիմա, հիմա...

Հետո ննջարանից բերեց որդու ծխախոտը, վրա-վրա ծխեց և քշեց գեպի սեղանը։ Յա՜, Մարաթուկ...

Ընտրեց տետրերից լավագույնը, մատիտներից՝ ամենակարմիրը, թքոտեց մատիտն ու սկսեց.

«Օսման, ես քու հավատը...»։— Ո՛չ, սուրբ Մաշտոցի տառերով այդ հարամին հայհոյելը մեղք է։ Եվ բացեց տետրի նոր էջ։

«Օսման, թալանչի Օսման...»։— Ա՛յ, այսպես, հենց այսպես պետք է սկսել, բայց... անտեր աչը ինչո՞ւ է դողում։ Նա ձախով խփեց աչին և բացեց նոր էջ։

«Օսման, թալանչի Օսման...»։— Ո՛չ, մատիտը, կարծես, ուզած կարմիրը չէ, հարկ է ընտրել վառ կարմիրը, այն գույնով, որ վարժապետ Տեր Հարությունը տառերն էր գործում, այդ գույնով պետք է գրել՝ արնագույնով։ Եվ բացեց նոր էջ։

«Օսման, թալանչի Օսման...»։— Ո՛չ, տառերը, կարծես, փոքր ստացվեցին և ոչ այնքան զգաստ։ Հարկ է գրել գլխատառերով և այնպես շեշտ ու զգաստ, որ ավարառուն գրի տեսքից իսկ դողա։ Եվ բացեց նոր էջ։

. . . . . .

. . . . . .

. . . . . .

Լուսաբացին որդին հորը գտավ սեղանի մոտ մարած, ճակատը սեղանին, սեղմված բռունցքում մատիտը և ճակատի տակ՝ կարմիր գլխատառերով գիրը.

«Օսման, թալանչի Օսման, ուրեմն որպես ավազակ որ ճամփին կանգնեցիր, էդ ճամփեն քոնն է, հա՞։ Քու թալանչի ձեռքն, որ դուան դիպավ, էդ տունը քոնն է, հա՞։ Քու գիշատիչ աչքն, որ սարը տեսավ, էդ սարը քոնն է, հա՞։ Քու հարամ շունչն որ աղբրակին դիպավ, էդ աղբուրն քոնն է, հա՞... Աթաբունար... Մամփրեն ճար չունեցավ, թե քեզ տրորեր, տրորեր ու տրորեր, ու դու հասկանայիր, թե Տալվորիկի սարերում ու ողջ Սասնո սարերում Աթաբունար հարամանուն աղբյուր չկա։ Չկա ու չկա։ Աղբյուրի անունը Մեհրե էր ու Մեհրե կմնա՝ Մեհրեաղբյուր։ Պատմություն կա, արարիչ կա ու հնուց եկած զրույց. Առյուծ Մհերն էդտեղ, հենց էդ աղբրակի բխած տեղն է հանդիպել առյուծին ու ճղել զառյուծն ու, կամոք արարչի, տեղն ու տեղն աղբուր է բխել։ Եվ արարիչն ինքն է կնքել՝ Մեհրեաղբյուր։ Արարիչն է ծնել ու արարիչն է կնքել։ Օսման, թալանչի Օսման, ես էլ մեռնեմ, դու էլ մեռնես, աղբյուրի անունը Մեհրե էր ու Մեհրե էլ կմնա։

Մամփրե արքա»։

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

ՕՐՆ ԱՎԵՏՅԱՑ

Քսան որբ հավաքվեցին ս. Թեոդոս եկեղեցու բակում։

Ամառավերջի երեկո էր. գավթի սալահատակից, վանքի քարերից ծլում էր գոլը՝ ելնում էր ալիք-ալիք և որբերին բերում հաճելի ընդարմություն։ Ամառ էր, բայց նրանց չամրացած ոսկորներում ցուրտ կար, և տաքությունը դուր էր գալիս։ Գևորգ վարդապետ Դերձակյանի հայացքը սահեց, ծանրացավ՝ ու մեկիկ-մեկիկ ճպճպացին մանչերի կոպերը։ «Որբերը վախկոտ են լինում»,— մտածեց վարդապետը։ Նրանց աչքերում լաց կար, և վարդապետը նկատեց. «Եթե քիչ էլ լուռ կենամ՝ լաց կլինեն»։ Բայց կաշկանդվում էր մտքինն ասել. նա կուզեր, որ վեհափառի կարգադրությունը լիներ այլ՝ քեզ հետ էջմիածին, Գևորգյան ճեմարան ուսանելու կբերես վանքիս բոլոր որբերին,— այդպես լիներ՝ այս ամառան երեկոյի ավետապարգև։ Բայց վեհափառը պահանջել է միայն մեկը՝ քեզ հետ էջմիածին կբերես մի որբ, կընտրես ամենաձայնեղին։

Վարդապետի հայացքը կանգնեց Սողոմոնի դեմքին, ու մանչի լայն բացած խոշոր աչքերում թրթռաց հայացքը։ «Տանելու եմ Սողոմոնին, և այս որբուկները ավելի կորբանան»,— մտածեց վարդապետը. Սողոմոնի երգը նրանց օրվա ուրախությունն էր, հանապազօրյա հացն էր, տաքությունն էր, Սողոմոնի երգը նրանց բերում էր ուրիշ ձևի տխրություն, որբի տխրությունից տարբեր. դա անլաց տխրություն էր, հանգստացնող, անանձնական ու առնական տխրություն։ Ու այդ պահի տխրության մեջ նրանք որբ չէին։ Եվ դրա համար այդ պահն ու տխրությունը նրանց դուր էր գալիս։ Սողոմոնը պետք է գնար և նրա հետ՝ որբանոցի անանձնական տխրությունը։

— Որդյակը...

Մանչերը զգում էին, որ հայր Գևորգը արտակարգ մի բան է ասելու և ներքին դողով սպասում էին։ Իսկ վարդապետի դադարը երկար էր. նա

հանկարծ որոշեց, որ ընտրությունը թողնի նրանց՝ որբերին, միևնույնն է, Սողոմոնին են ընտրելու։

— Որդյակք,— կրկնեց և շարունակեց թուրքերեն. Քյոթահիայում արգելված էր հայերեն խոսքը. և երեխաները մայրենին չէին հասկանում։— Վեհափառը լուր է ուղարկել, որ ձեզնից մեկին սուրբ էջմիածին ուսանելու տանեմ։

Լույսի մի շող էլ թպրտաց մանչերի հոգիներում, ու նրանք ճոճվեցին։ Եվ որպեսզի որբերից ամեն մեկը չշտապի բուռը բաց անել դեպի ս. Թեոդոս վանքի բակը ծորացող միակ աստղի համար, վարդապետը փութով խոսքն առաջ տարավ.

— Վեհափառը պահանջել է՝ ընտրել լավ ձայն ունեցողին։

Տղաները շփոթված նայեցին աջ ու ձախ. շարքերում որոնեցին Սողոմոնին։

Նրանք, վանքի բակում հավաքվածները անաստղ ու անլուսին գիշերվա մենուկ ճամփորդներ էին՝ որբի անստույգ, բայց անպակաս ահով. Նրանք, գիշերվա անընկեր այդ ճամփորդները, օրը մի քանի անգամ շոշափում էին ծրարված թալիսմանը՝ անորոշ ահը խափանող, ուղեցույց այդ թալիսմանը և դա Սողոմոնի երգն էր։ Նրանց, վանքի բակում շարված թախտակիցներին ի վերուստ էր շնորհված այդ երգ-թալիսմանը և, հիմա, երկնքի պատգամախոս վեհափառի կարգադրությամբ՝ հայր Գնորգը խլում-տանում էր։

Հայացքներն ուղղված էին Սողոմոնին։

Հայացքները չէին ընտրել, չէին հրամցնում, այլ կառչել էին՝ «մի գնա, Սողոմոն»,— խնդրում էին,— «դու մեր ն ես, մեզ լքելու իրավունք չունես»,— պահանջում էին։ Իսկ վարդապետը հարցը վճռած համարեց. մոտեցավ ու շոյեց Սողոմոնի մազերը։

— Պատրաստ եղիր, որդյակ, առավոտյան ճանապարհվելու ենք։

...Երեկոն տրտմեց ս. Թեոդոս եկեղեցու բակում։ Համր ստվերները խտացան, մարմրեց սալահատակի ու քարերի գույը, մի չղջիկ սղոցեցանցավ, հետքով՝ ամռան գիշերվա սարսուռը։

— Յուրտ է,— ուսերը վրա բերեց մի մանչ,— գնանք,— բայց անշարժ մնաց։ Տղաները բոլորել էին Սողոմոնին։ Նրանք լուռ էին. Սողոմոնը իրենցից գնում էր, առավոտվա հետ օրվա երգն էր լքում նրանց։ Չէ՛, էդ չէր. նրանցից ամեն մեկը ուրիշ ասելիք ուներ։ Ուրի՛շ։ Բայց ոչ մեկի մոտ ասելիքը հավաստի չէր, ոչ մեկի մոտ զգացումը խոսք չէր դառնում։ Այդ պահին նրանց զգացումը մի բուռ կորեկի պես էր, մութ էր ու փոշոտ գետնին շաղ եկածը՝ կորեկ, հավաքել չէր լինում։ Այսպես է. խումբ որբերից մեկի առջև, երբ մի ճամփի տուտ է բացվում, երբ նա մի

քայլ հեռանում է բախտակիցներից ու որբությունից, նրա բաժին որբությունը մաս-մաս նստում է մնացողների ուսերին։ Եվ ահա ամռան այդ երեկոյի հետ, Քյոթահիայի հայ որբերի «միությունից» հեռանում էր Սողոմոնը՝ Թուրքական այդ քաղաքում վիճակված իր բաժին որբությունը թողնելով ս. Թեոդոս եկեղեցու պատի տակ ժողված մանչերին. և նրանք տեր էին՝ չեղած մի օրենքով։ Եվ նրանք շրջապատել էին Սողոմոնին, անշուշտ, թե իրենց ուզածը ինչ է։

Սողոմոնը կեցել էր գլուխկախ, մի տեսակ մեղապարտ, ու, չէր հասկանում ինչու, ոչ մեկին նայել չէր կարող։ Նրա ծանրացած կոպերի տակ անուշ տխրություն կար, որը եթե դառնար լաց՝ քավությունը կլիներ ընկերներին պաղունց-պաղունց որբություն բաշխած «մեղքերի» համար։ Բայց նա (իր արդար մեղքին անծանոթ) լաց չէր լինում, որովհետև ականջներում զրնգում էր լույս առավոտը։ Հա՜, գալիք առավոտը ձայն ուներ՝ ղողանջում էր կառք քաշող ձիերի զանգակների հանգով։ Ղողանջը արևի գույնն ուներ, արևի շողերի պես մաղմղում էր՝ կառքի վրա, ճամփին, անապատ հորիզոնում, լեռների վրա, ղողանջը շողերի պես ալիքվում էր դեպի երկինք, և օրը պանկե-պռունկ լցված էր դեղին զրնգոցով։

Թրը հենց մի դեղին զանգակ էր՝ կախված կառքը քաշող ձիու պարանոցից։

Գավթում մութ էր ու խմբված տղաների արանքում տխրել էր լռությունը. ոչ ոք այդ պահին իր խոսքը չէր գտել, չէր գանելու և մեկը կմկմաց.

— Սողոմոն... գնալո՞ւ ես...

Սողոմոնը գլուխը բարձրացրեց, և խճճվեցին զանգակների ծլնգոցները։ Նա ափսոսաց։ Նա ուզեց հավաքել ու էլի ներդաշնակել մեղեդին, բայց ականջներում նրա արձագանքն էր մնացել միայն։

— Գնալու եմ։

Ձայնի մեջ որբությունը մերժող աղերս կար, Քյոթահիայից ու որբությունից փախչելու ճիչ։

— Բայց դու հայերեն չգիտես։ Ճեմարանում...

Սողոմոնի ականջներում գլորվեցին ընկերոջ բառերը, կապարի հալած գնդիկների պես գլորվեցին, այրեցին ականջները։ Նա փորձեց հիշել, մեկ-մեկ հավաքել իմացած մայրենի բառերը... «Մարե»... Մարեն բառ չէր, անուն չէր, Մարեն շունչ ու շնչավոր էր՝ Մարիամ տատն էր, կերկերուն ու անո՜ւշ-անուշ ձայն ուներ։ Մարե՜... Ե՞րբ է սովորել...

Փոքր-փոքր էր, նստած էր բերանը խփած մութ թոնրի մեջ, տատի գրկում։

— Հասկացա՞ր, Թոնիկս,— սովորեցնում էր Մարիամ տատը,— ուրեմն ես նենեն չեմ, ես մարեն եմ, հայերեն ես կլինեմ մարե...

— Ջմոռանաս. դրսում, ուրիշի մոտ, ինձ մարե չասես, լեզուդ կկտրեն։ Մարեն չմոռանաս՝ մտքիդ մեջ մարե ասա, դրսում՝ նենե։

— Հասկացա՞ր, Թոնիկս, մենք գյավուր չենք, հայ ենք, մարեի լեզվով՝ կլինենք հայ։

Նա փորձեց հիշել, հատիկ-հատիկ հավաքել իմացած մայրենին... ուրեմն՝ Մարե... Հայրիկ... Հայ... Հայրենիք... Թոնիկ... ուրի՞շ, տատը ուրիշ ի՞նչ սովորեցրեց... ախր՝ մահացավ, ախր...

Սողոմոնը ուզեց լաց լինել. արթնացած Մարեի համար, որը բառ չէր՝ Մարիամ տատն էր, Թագուհի մայրն էր ու չկար, Հայրիկ բառի համար, որը բառ չէր՝ Գևորգ հայրն էր ու չկար, Հայի համար, որ գավթում խճճված որբ ընկերներն էին, արթնացած Հայրենիք բառի համար, որը բառ չէր՝ հեռո՜ւ-հեռու սարերից այն կողմի հողն ու ջուրն էր, սարերն էին ու սուրբ էջմիածինը։

— Դու մայրենի ոչ մի բառ չգիտես...

— Գիտեմ...

Նա կիսաձայն ասաց իմացած բառերը. կամաց ու հանդարտ՝ որ ուշ փերշանան... հետո քունքերում սկսեցին խշշալ մտերմիկ, բայց հեռավոր հնչյուններ, դրանք չիմացած բառերն էին, երակներում քնած մայրենին էր՝ ելք էր որոնում։ Սողոմոնը կնճռոտեց ճակատը, զայրացավ ու կրկնեց.

— Գիտե՛մ... ես երգե՛լ գիտեմ... հայերեն երգել գիտե՛մ...

Մայրենին քնած ոգեվ էր, քանասարկված ու քնած, որը մի շողքից աչք էր բացել-թպրտում էր հոգում, և Մարեի պես տաք ու շնչավոր բառերը արյան հետ խուժում էին դեպի քունքերը՝ լեզու պահանջում, և բառերը պեծ-պեծ թափվում էին նրա աչքերից։ Սողոմոնի աչքերը տաք էին, քունքերը ձգված, կոկորդը սեղմվում էր. բառերը եկել-հավաքվել-ինչուկվել էին՝ ձայն էին ուզում, և նա թերան բացեց.

Առավոտ լուսո,
Արեգակն արդար,
Առ իս լույս ծագյաս
Թխումն ի հորե,
Թխյալ ի հոգվույս,
Քան քեզ ի հաճույս

Նա գիտեր, որ դա հայերեն երգ է, հայերեն հնչյուններ, հայերեն խոսք, իմացած բառերը չկային երգում, բայց գիտեր, որ եղածը Մարեի

նման բառեր են, լույս ու ջերմության ունեն, արդարամիտ խորհուրդ, գետնից երկինք հառնող արդար աղոթք,— այդպես նրան հուշում էր մեղեդին։ Նա բառերի գույնն էլ էր զգում՝ արևով կնքված կապույտն էր,— մեղեդին այդպես էր հուշում։

Եվ նա երգում էր։ Չէ՛, տղաները լուռ խոնարհվել էին, իսկ Սողոմոնը դեմքը երկինք արած, մայրենիի աղոթքն էր անում, և նրա հոգում խլրտացող բառերը ալիք-ալիք ելնում ու աստղերի պես թառում էին երկնքում։

Երբ նա ավարտեց երգը, տղաները մեկիկ-մեկիկ բարձրացրեցին գլուխները։ Այդ պահին տղաների տխրությունը ուրիշ էր, այն էր, ինչ սովորաբար ունենում էին Սողոմոնի երգերից հետո, դա անուշ, անլաց, անանձնական տխրություն էր՝ երակներում մուգարված մայրենի հնչյունների իրիկնային կանչ։

* * *

Առավոտ լուսո... Արեգակն արդար...

Լույս առավոտվա հետ կառքը դուրս էր եկել Քյոթահիայից, և ձիերը վարգում էին ու փոշոտ ճամփեն պաչպչում սմբակներով։ Ձիերը աշխույժ ու կայտառ էին, որովհետև օրը առավոտ էր ու պայծառ, ականջների տակ բոժոժիկներ կային ու գիտեին նրանք, որ տերը ժպտում է իրենց։ Եվ կառապանը, իրոք, ժպտում էր։

Գևորգ վարդապետ Դերձակյանը կիսախուփ աչքերով էր, նա արդեն վայելում էր եպիսկոպոս ձեռնադրվելու արարողությունը, որի համար ս. Էջմիածին էր հրավիրվել։

Իսկ Սողոմոնը աչք ու ականջով զանգակների ղողանջ էր հավաքում։ Զանգուլակները մոտ-մոտ էին՝ ձիերի պարանոցներից ու անուրներից կախ, զանգակները աչքերի պես մոտիկ էին նրան, իսկ ղողանջները՝ հայացքի պես հեռու, նրանք գալիս էին հեռո՜ւ-հեռո՜ւ սարերից, ուր ցնցուղվել էր արևը։

Ղողանջը սարերի վրա փշրված արևի զրնգոցն էր։ Այդպես էր, իսկ նա արդեն ապրել էր այդ առավոտը. ապրել էր անցած գիշեր, ս. Թեոդոս վանքի բակում և դրա համար իրականությունը երազ էր ու երազում կրկնվում էր նույնը՝ փոշոտ ճամփի վրա ձիերը վարգ էին առել, նրանց պարանոցներին ու կողերին վետվետում էին զանգակները, և առավոտը ծլնգում էր զանգակների հանգով։ Ղողանջը արևի գույնն ուներ, արևի պես համատարած էր, և օրը պոնկե-պոռնկ լցված էր դեղին զրնգոցով։

Օրը հենց մի դեղին ու կլոր զանգակ էր, ղողանջելով գնում էր գեպի լեռները։

Առավոտ լուսո,
Արեգակն արդար,
Առ իս լույս ծագյա...

ՄԱՂԹԱՆՔ

Արևապատից հետո կացարանը տխրում էր, դառնում լուռ ու խորհրդավոր։

(Դա աշխարհի բոլոր տների բնավորությունն է. նրանք մարդկանց նման են, երեկոյի հետ թախծում են, և երբ վառվում են լույսերը, նրանք աշխարհին ու մարդկանց նայում են մթնշաղված պատուհանի մոտ կանգնած մարդու պես՝ չմարմնացած ահով, ստույգ ու անստույգ կարոտներով ու ցավերով)։

Արևապատոցից հետո ճեմարանի կացարանը ավելի լուռ ու խորհրդավոր էր, որովհետև կողքին կանգնած էր վանքը, ու երկնքից, որտեղից գիշերն էր իջնում, կացարանի գլխին տիրող աջն էր կախված՝ խաչակնքող ու զսպող՝ «խաղաղությո՛ւն ամենեցուն...»։ Եվ քանի որ կացարանի գլխից անպակաս էր խաղաղության պահանջը, կացարանի ու նրա կենողների խռովքը մեծ էր։

Տիգրանը նորից կարդաց նամակը, Մուշից էր, ծնողներից, հետո՝ բռի մեջ պահած, կանգնեց պատուհանի մոտ։ Պատերը սեղմում էին, ուսերին մթան ծանրություն կար, կոպերի տակ՝ կարոտի լաց։ Եվ նա դուրս ելավ, անցավ ծառերի արանքով, նստեց պարսպին մոտիկ ծիրանենու տակ։ Հողը խոնավ ու տաք էր, հողը իր կանաչ երգն էր ծլում՝ մթածրար, աչքից հեռու։ Տիգրանը գլուխը հակեց ծնկներին ու անձայն լաց եղավ։ Դա գարնան այդ երեկոյի նրա երկունքն էր, այնքան մաքուր, որքան հողինը։

— Տիգրա՞ն...

Տղան ցնցվեց, հետո շփոթված ժպտաց Սողոմոնին, արցունքները թաքցնել փորձեց, բայց նրանք կայծոռիկների պես շողում էին։

— Ի՞նչ է պատահել։

— Եսիմ,— Տիգրանը ուսերը քաշեց, հետո բացեց բուռը։ Սողոմոնը խլեց նամակը։

— Վատ լո՞ւր...

— Չէ՛... կարոտել եմ։

— Զուռնաչի,— Սողոմոնը կտտացրեց նրա ճակատին,— իմացա թե կոճակդ ես կորցրել,— կատակեց, լրջացավ ու լռեց։ Նրանք հասակակիցներ էին, ճեմարանի երրորդ դասարանի աղայք, բայց Սողոմոնը ավելի մեծ էր երևում. ճակատին նորելուկ կնճիռ կար, պիրկ այտոսկրերը՝ ցայտուն, հայացքը՝ 15 տարուց մեծ։

— Ո՞ւմից է,— նամակը կամացուկ վերադարձրեց Տիգրանին։

— Մարեի անունից։

— Մե՞ծ մարեի։

— Չէ՛։

Սողոմոնը հիշեց իր մեծ մարեի դեմքը, մոր դեմքը չէր հիշում ու՝ լփոռձեց. նրա համար մայրն ու տատը նույն դեմքն ու ձայնն ունեին, հիշեց մեծ մարեին ու լսեց նրա ձայնը. «նենեն չեմ, ես քո մարեն եմ...»։ Ամենաշատը այդ օր ու պահով էր հիշում՝ օտար աչք ու ականջից հեռու, շշուկով սովորեցնում էր «մարեն»։ Հիմա նա գիտեր բոլոր բառերը՝ էջմիածին գալու չորրորդ ամսում արդեն նրանք բոլորն արթնացան և բոլորը թե առան-թռան շուրթերից ու մեղուների պես դժգժում են շուրջբոլորը. երբ բերան բացի՝ նեկտարոտ թևերով կգան։

— Մեր շենին, օջախին, մեր... ամենքին կարոտել եմ,— հանգարտված ասաց Տիգրանը։

Սողոմոնի կարոտը հանգրվան չուներ՝ ո՛չ ճամփա, ո՛չ բակ, ո՛չ դուռ, ո՛չ տուն։ Նրա կարոտը մի որբ երեխա էր՝ մոլոր չափչփեց Քյոթահիայի փողոցները, այնտեղ մնացած ընկերների հետքով, հետո աչքերը կախ կանգնեց ս. Թեոդոս վանքի գավթում, այնտեղ մնացած ընկերների կողքին։

«Ինչպե՞ս են...»,— շշնջաց Սողոմոնը։

— Աղեկ են,— Տիգրանը պատասխան տվեց,— մարեն ասում է թե՝ առավոտ-իրիկուն քեզ համար աղոթք կանեմ։ Մշո սուրբ Կարապետին կաղաչեմ, ողջ ու առողջ, առոք-փառոք գառնաս տուն գաս... էդպես էլ գրել է տվել։ Նամակում մարեի մաղթանքն է։

Կացարանի պատուհանից պոկված լույսի բույլը խճճվել էր ծիրանենու սաղարթում, և ծառի տակ ու տղաների գլխներին լույս էր կաթկըթում։ Սողոմոնի հայացքը ընկերոջ ափում բնակալած նամակի ճոթին էր, ուր նույնպես լույսի փշուրներ կային։ Կիսամութի մեջ նրանք նման էին կաթիլների՝ շարժուն ու տաք էին, և Սողոմոնը մտածեց, որ աղոթքի ծնկած մայրն ու մլմլացող մոմը նման են. մոմի լեզվակը՝ մաղթող մոր երկինք հառած հայացքն է, մոմի հալոցք-կաթկթոցը՝ մաղթող մոր գոթ

հայցող արցունքներն են։ Երկուսն էլ նույն շունչն ու շշնջոցն ունեն, տաք ու ինքնամոռաց են... ու սիրեց Տիգրանի ձեռքում սեղմված նամակը։ «Թե իմս լիներ...»,— մտածեց Սողոմոնը և, չիմացավ ինչու, ուզեց վանել այդ ցանկությունը, բայց միտք առաջացավ. «իմս լիներ, ես պատասխան մաղթանք կգրեի մարեի համար... չէ, կերգեի... երգը մաղթանք է»։

— Երգե,— ճնշեց ընկերոջ ուսը։ Տիգրանը տարակուսած նայեց։

— Մարեի համար երգ ասա։

— Մարեի համա՞ր։

— Հա՛, մարեի համար։

Տիգրանը շերմ նայեց, նա Սողոմոնին սիրում էր և հիմա, երբ Սողոմոնը «մարեի» է ասում, ավելի սիրեց նրան։

— Ի՞նչ երգեմ։

— Կարոտի երգ ասա։

— Երգե՞մ,—Տիգրանը գլուխը կախեց; հենվեց ծիրանենու բնին ու զգաց, որ երգելու ցանկություն ունի, խոնարհվեց՝ որոնելու Մշո աշխարհի երգերից։

— Մշեցի պանդուխտի երգը ասեմ,—քնքշեց։

Ցորն օր, յոթ գիշեր
Շամամն ի գոտիս թոռմշեր,
Ցար մըզիկ դոնեն դուրս չելներ՝
Փշուր մի սիրտ մըզիկ հովներ։
Վա՜յ լո՜, վա՜յ լո՜, վա՜յ լո՜, վա՜յ լո՜։
Յաքսի խառվավ, շամամ թոռոմավ։

Տիգրանը աչքերը կիսախուփ երգում էր, թիկունք ու գլխով հենված ծիրանենու բնին. այնտեղից զովություն էր առնում, Սողոմոնը հակված լսում էր։

Երգը ծավալվում էր, և զարնան երկնքի տակ, կացարանի այգում դատարկվում էր մշեցի մանչի կարոտը։

Իսկ նրանց գլխավերևում, մթան մեջ, զորեղացել էր եկեղեցու խաչը՝ «խաղաղությո՛ւն ամենեցուն...»։

Կանչեմ՝ յար արի, յարիկ ձեն չի տա,
Ընկեր քաղքը քուն՝ անունս էլ չի տա։

Տղան ավարտեց երգը և նայեց Սողոմոնին։

— Աղվոր երգ էր,— ասաց Սողոմոնը,— ասում ես թե՝ պանդուխտի՞ է։

— Հա՞, մշեցի պանդուխտի երգ։

— Սխալ է։

— Ի՞նչն է սխալ,— զարմացավ Տիգրանը։

— Ասածդ պանդուխտի երգ չէր։

— Ուստից իմացա՞ր։

— Երգի խոսքերից և... պանդուխտը էդպես չի երգե,— պնդեց Սողոմոնը։

— Իսկ ինչպե՞ս...— Տիգրանը արդեն նեղանում էր. իր Մուշ աշխարհում բոլորը գիտեն, որ դա «Մշեցի պանդուխտի երգն է», իսկ Սողոմոնը, որ Մուշ ու կարգին մշեցի էլ չի տեսել՝ հերքում է։— Պանդուխտը ինչպե՞ս կերգե։

Սողոմոնը ուսերը շարժեց.

— Ես՞մ... ուրիշ ձևի...

Տիգրանը գիտեր, որ Սողոմոնը լավ է երգում. ճեմարանում նրան ասում են ձայնեղ Սողոմոն, վեհափառի հրամանով երգում է տաճարում, վեհափառի բազկաթոռի հետևում կանգնած երգում է, հուզում վեհափառին։ Բայց, ախր, մշեցի պանդուխտի երգը Սողոմոնը հենց հիմա իրենից լսեց. էլ որտեղի՞ց գիտե, թե երգը պանդուխտի չէ և... և որ ինքը սխալ է երգում։

...Գարնան գիշերը կես էր եղել, տղաները քնել էին, և ննջարաններ-ի պատուհաններից երազներ էր մաղվում։

Ննջարանների պատուհանները երազների պես բաց էին, երազների պես մութ։

Սողոմոնը անքուն էր։ Նա բաց պատուհանի մոտ շուռումուռ էր գալիս իր թախտին։ Ներքնակ ու բարձ չէր սիրում, ու թախտին միայն մի կարպետ կար։ Քիչ այն կողմ Տիգրանն էր քնած, լսվում էր նրա անխռով շնչառությունը, նշմարվում խաղաղ դեմքը, կրծքին հանգչող աջը՝ կիսախուփ, ինչպես երեկոյան, երբ նամակն էր պահել։ Սողոմոնը գիտեր, որ նամակը Տիգրանի բարձի տակն է, գիտեր, որ մարեի աղոթք-նամակն է խաղաղ քուն բերել նրան...

«Ու երգը,— ավելացրեց նա,— բայց պանդուխտի չէր... պանդուխտը ինչպե՞ս կերգե... ի՞նչ կերգե...»։

Նա հիշեց Քյոթահիայի իր ընկերներին, հավաքվում էին վանքի գավթում, խոսում էին, կատակում, ծիծաղում, լռում-տխրում էին և մեկն ասում էր. «մթնեց»։ Ամեն երեկո ասող կար «մթնեց»։ Իսկ մի իրիկուն «մթնեց» խոսքի վրա ընկերներից մեկը լուրջ-լուրջ առաջարկություն արավ. «գնանք՝ գնանք հայրենիք»։ Տղաները իրար նա-

յեցին ու պատասխան չեղավ, նայում էին մի տեսակ տարօրինակ... Ի՞նչ էր դա, ինչպե՞ս էին նայում, ի՞նչ էին ասում...

«Պանդուխտի երգը է՞ն իրիկվա մեր նայելուն նման է,— մտածեց Սողոմոնը,— տղայք հիմա էլ ամեն իրիկուն այդպես կնայեն... պանդուխտի երգը երևի հենց այդ է»,— կրկնեց։ Նա փորձեց սարքել երեք տարի առաջվա իր հայացքը և չնայած գիշեր էր ու չէր տեսնում աչքերը, բայց զգաց, որ՝ չստացվեց։

«Չի լինի, ես արդեն պանդուխտ չեմ... իսկ տղայք մնացին,— ցավով մտածեց,— համ պանդուխտ են, համ... նամակ չեն ստանում... մարեի աղոթք չունին...»։

Սողոմոնը նորից կապվեց Տիգրանի շնչառությանը։ Չէր հասկանում ինչու այդ գիշեր ուզում էր հա՜ ունկ պահել Տիգրանի շնչին։ Հիմա նորից Տիգրանը խաղաղ շնչում էր։

«Մարեի աղոթքը աղեկ օրոր է... ես պետք է որ ունենամ իմ մարեի աղոթքը,— մեկեն որոշեց նա։— Եթե մարեն լիներ՝ ինչպե՞ս կգրեր,— բառերի փոխարեն հնչյուններ թրթռացին, որոնք հեռո՜ւ, հեռու էին՝ իրենից ու ննջարանից դուրս, նրանք թրթռում էին մերկ երկնքում, ուր աչքերն էին թափառում։ Հնչյունները աստղերից կախված օղեր էին՝ արծաթե, մանրիկ, ու երբ կոպերը թարթում էր, նրանք մեկի՜կ-մեկիկ պոկվում էին աստղերից, զրնգոցով խառնվում իրար։

«Մարեի աղոթքը երգի նման է»,— նորից հիշեց։

Հետո նրանք պոկվեցին երկնքից, նրանք դարձան կապույտ ուլունքներ, կայծկլտացին, մոտիկացան, հավաքվեցին, եկա՜ն-եկան... հիմա նրանք կայծկլտում էին կացարանի դիմացի պարտեզի վրա, ծիրանենու սաղարթում, որի հովանու տակ կանգնած էին ինքն ու Տիգրանը, ապա հավաքվեցին, եկա՜ն՝ թռվռացին պատուհանի մոտ... Սողոմոնը աչքերը փակեց, և հնչյունները սոսափեցին ականջներում՝ դա նրանց միարանն էր. ամեն մեկը իր հանգով զրնգաց, ապա փերթ-փերթ ալիքվեց մեղեդին։ Այդպիսին նա երբեք չէր լսել...

«Մարեի աղոթքի երգը վառվող մոմի նման է,— որոշեց,— մարմանդիկ է, տաք է»։

Ապա և մեղեդուց բառեր կաթկթացին, մոմի հալոցքի պես կաթկթացին, միացան, կողք-կողքի շարվեցին՝ եղան խոսք.

Քեզի տեսնեմ, իմ հատորիկ,
Կյանքիս ուղին սիրակեզ,
Հայտ ու անհայտ դու որսնե,
Քեզի լինեն իրազեկ։

Մի թափառե կյանքի պարապ
Անապատում դու իզուր,
Քեզ պահապան սուրբ հրվատաս,
Հուսո, սիրո լույս ու հուր...

«Իմ մարեի աղոթքն է»,— ժպտաց ու նայեց Տիգրանի կողմը։ Նա կրկնեց հորինածը, հա՛ կրկնեց. դա իրեն դուր էր գալիս՝ մաղթանքը ավելի էր մտերմանում։ Հետո ուզեցավ գրի առնել՝ ոտքերը կախ գցեց թախտից և զզջաց որոշման համար. նրան թվաց, եթե թղթին հանձնի, աղոթքը կհեռանա։ Եվ նորից մեկնվեց մեն մի կարպետով ծածկված թախտին, խաղաղված գոցեց աչքերը, ականջներում՝ մարեի տաք շշնջոցը.

Օրի՛կ, օրի՛ն,
Իմ անուշին...

ԴԱՐՈՒՂԻ

Ամռան կես էր ու կեսօր. երկնքում ամպերն էին հալվել, երկրում՝ շշուկներն ու ստվերները։ Եվ օրը տապի նոպայի մեջ էր։

Մենուկ մի դարուղի էր ոլորվում, քերծվելով քարերից ու մացառներից։ Ու դողալով՝ մենուկ մի ոտավոր։ Նա սև աչքունք ուներ, սև բեղ ու մորուս, աջ ուսն ի վար՝ վեղար, տիվատապի պես ծանր ու ճնշող։

Քարերը տժժում էին, մացառները իզուր որոնում, սեփական ստվերները, անցորդը ճոճվում էր՝ խոնարհ ու անմռունչ, և նրա ոտնահետքերով դարուղին ծա՛նր, ծանր շնչում էր։

«Մի աղբյուր հանդիպեր»,— Սողոմոնը թրջեց չոքացած շուրթերը։

Սողոմոնը արդեն Սողոմոն չէր, ճեմարանի սան չէր, 31 տարու մեջ էր նա, «Մայր աթոռի» կուսակրոն վարդապետ էր, Բեռլինի երաժշտանոցը ավարտած երաժշտագետ Կոմիտասը, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի երաժշտության դասատու Կոմիտասը։ Միայն ճեմարանի ծեր պահակն էր շարունակում նրան Սողոմոն ասել և դա Կոմիտասին դուր էր գալիս։

«Էս սարերի աղբյուրները միայն բեկերի համար են»,— հիշեց օրեր առաջ մի շենում ձայնագրած երգը.

Գարշի՛ր, աղբյուր, բեկի տղին չուր տանեմ,
Գարշի՛ր, պարշի՛ր, բեկի տղին չուր տանեմ։

«Շուշանը լավ ձայն ուներ ու պիտի մարի, գնա»։— Կոմիտասի խո-

նարհված կոպերի տակ եկավ-ծվարեց օրեր առաջվա շենը՝ մլարած ու արմնկած սարին։ Եվ սարն ի վեր քայլեց լեռնցի մի աղջիկ՝ կապույտ երկար փեշերով, ծամերով ու ծամթելերով, կուժն ուսած։ Շուշանը շրջվեց-նայեց, աչքերը սև էին ու խոնավ, հայացքը գանգատավոր, ապա նորից՝ ելվերեց, շորորելով փեշերն ու ծամերը։ Հետո նա կանգնեց քարերի մեջ թաքնված աղբյուրի քով, ուսից ցած առավ կուժը, աղբրակի պես թաքնվեց քարերի մեջ, ճիտքը ծռեց ու նայեց ջրերին։ Նայե՞ց, նայեց, աչքերում փայլեցին արցունքները՝ հայացքը շաղվեց, և թվաց նրան, թե աղբյուրը պղտորվել է։ Աղջիկը երկար նայեց աղբրակի մոտ պղպջած ջրին, ջուրը ավելի պղտոր դարձավ, և նա սկսեց երգել։

Ու սարն ի վար ոլորվող առուն, ջրի փոխարեն տարավ նրա գանգատը.

Աղբյո՜ւր, գիտե՞ս բեկը մեզի ինչ կանի.
Կոդզպան. կնալանե. կսպանե...

Կոմիտասը տրորեց աչքերն ու շշնջաց.

— Երգը ժողովրդի պատմությունն է։

«Այս երգը արևմտահայերի այսօրվա օրն ու կյանքն է,— մտածեց,— ու զորավիգ ոչ ոք չունեն, արդար՝ ոչ մի դուռ, որուն գանգատվելու, փնտրելու գնան։ Ջկա ու աղբյուրին են գանգատվում»։

Նա շփեց ճակատը, և մատների տակից մրմնջող հիշողությունները միջօրեի տապի պես ծանրացան շնչին...

Վեց տարի առաջ էր, 1894-ին, էլի ամառ, ինքը Բեռլին ուսանելու չէր գնացել դեռ, ճեմարանում էլի երաժշտության դասատու էր, որ մշեցի Ցիգրանից նամակ ստացավ.

«...Սուլթան Համիդ մեծ բանակ ուղարկած է Սասունի վրա... շարդ է։ Մեր դաշտին ժողովուրդ բողոք է գրած սուլթանին... պատասխանին խպասինք»։

«Հիմար,— Կոմիտասը կանգնեց և, աչքերը փակ, գեմքն արեց երկնքին ու խոր շնչեց, բայց օդ չկար և, ինչպես նամակը ստանալու օրը՝ գայրացավ,— սուլթանը ինչպե՞ս չի իմացել, թե Մշո դաշտի ժողովուրդը համաձայն չէ։ Բողոք շուտ ուղարկեիք՝ Ձեզի փաշան չգնար Սասունի վրա»։

«Սասունում իր գործն ավարտած Ձեզի փաշան իջած է Մշո դաշտ, զորքի համար ժողովուրդեն ուտելիք ու հագնելիք կպահանջե, կատիպ ծողնել տուն ու տեղ, հող ու ջուր, երկրեն դուրս գալ։ Դաշտի 20 գյուղ (Ծատրագում, Մառնիկ, Խորանք...) ավերել է։ Բայց դուռում բողոք ուղարկված է սուլթանին, բոլորն ալ՝ անպատասխան...»։

Էն օրերին աշխարհի մարդկանց հայտնի էր դարձել սուլթանի ոճրագործությունը։ Թիֆլիսցի հայերը էջմիածին՝ Երիմյան Հայրիկին, լաց ուղարկեցին. «Ահա մի ամբողջ տարի է, ինչ Տաճկահայաստանի բոլոր անկյուններում կատարվում է մի սարսափելի...»,— Զեքի փաշան կոտորում էր։ Բելգիացի հայերը գրում էին. «Հայաստանի գավառներում...»,— Զեքի փաշան կոտորում էր։ Բաթումի հայերը գրում էին. «Ո՞ր հայն, արդյոք, կկարողանա անվրդով տանել...»,— Զեքին կոտորում էր։ Երևանցի հայերը գրում էին, Զեքին կոտորում էր։ Գյումրեցի հայերը գրում էին՝ կոտորում էր։ Անանուն մեկը մի գիշերվա մեջ բանաստեղծ դարձավ. «Հա՞ն կոտրնվեցեք...»,— Զեքի փաշան Մուշից դուրս ելավ։

«Հարկավ, լավ է գրած եղել»,— Կոմիտասը քմծիծաղեց։

Մուրացանը «Ինչպես էին մեռնում» պոեմը գրեց. արեց սասունցի նահատակ Ավոյի գովքը («Հայացքն ահեղ, հասակը՝ հսկա, բազուկն առյուծ կվանե»),— Զեքին հասավ սուլթան Համիդի մոտ, խոնարհվեց ու ասացավ «Նիշանի ֆետֆազ» շքանշանը...

Անգլիայի պառլամենտի անդամ Ստիվենսոնի նախագահությամբ Լոնդոնում անգլո-հայկական ընկերության միտինգ եղավ՝ «...կոտորածների առթիվ նշանակել հյուպատոսական քննություններ»,— պահանջեց, Համիդը քմծիծաղեց, պատասխանը թողնելով Սվազի վալուն. «Դուք, հայերդ, իզուր տեղը մեծ-մեծ հույսեր մի դրեք Անգլիայի կամ ուրիշի վրա։ Մենք արդեն գիտենք Եվրոպայի հետ վարվելու եղանակը... Եվ ձեր բոլորի հոգին կհանենք...»։ Մոսկվայում ռուս ուսանողները բողոքի ցույց արեցին, սուլթանի բանակը գնաց Կարինի վրա։ Լեհ ուսանողները ցույց արեցին, բանակը գնաց Բասենի վրա։ Կալկաթայում միտինգ եղավ, սուլթանի բանակը անցավ Բաղեշ։ Բոստոնում «հայոց միացյալ բարեկամների» ժողովում գրականագետ Ջուլիա Հաունը պահանջեց իր բողոքը տպագրել թերթում, ասկյարներն անցան Մարաշ։ Բիրմինգհամում օտարազգիները ծափահարեցին պրոֆեսոր Թումանյանին՝ Հայաստանի անցյալի մասին կարդացած դասախոսության համար, Ռեմզի փաշան գնաց Զեյթունի վրա։ Եվրոպական թերթերը գրեցին, և «Մշակը» արտատպեց. «Հայերը պաշտպանվում են հերոսաբար», Ալի բեյը Աղանայից դուրս ելավ, քշեց Զեյթունի վրա։ Ֆրանսուհի գրող Սևերինը հուսահատորեն ճչաց. «Բայց ես զարմանում եմ լռության դեմ, եսասիրությունից բխած այս եղեռնական ապատիայի դեմ...»,— և...

Կոմիտասը գայթեց. ոտատակից փրթավ մի քար, կածանն ի վար անձայն գլորվեց։ Նրա ծնկները դողում էին, էլի մի քանի քայլ փոխեց ու փլվեց ճամփապռնկի քարին, և աչք ու շնչին գետինն ավելի մոտիկացավ։ Գետինը հող ու բույս չէր, գետինը քուրա էր, ուր խարկվում,

խեղդվում, փոշիանում էր օդը։ Նա կոպերը վրա բերեց, և աշխարհը քողարկվեց վեղարով։

...Եվ ջարդի սահմաններին մոտիկ ու հեռու կենող հայերը թանկթանկ արցունք թափեցին նահատակ ազգակիցների համար, գրեցին ու փառաբանեցին նրանց «հերոսական մահերը» («Գրիգորի հարս Շաքեն կոչ է անում՝ սասունցի կանայք, ձեզ կմնա որոշել՝ գերի գնալ, անպատվել ձեր սրբունք, ի պարսավանս ամբողջ հայության, թե կհետևեք իմ օրինակին... Եվ նա նետվում է ժայռից ցած...», «Գրիգոր կգոչե՝ կեցցե Հայաստանը ու... կմեռնի»), ստարազգիները զայրացան՝ միտինգ ու ցույց արեցին, գրեցին բողոք, սուլթան Համիդը կանչեց զորապետներին՝ շքանշաններ ու մետաքսե դրոշներ պարգևեց նրանց և... Եվրոպական մամուլը ամփոփեց, զոհվել է էսքան, էսքան հայ, ավերվել է էսքան շեն, որբացել է էսքան մանուկ, աշխարհի տարբեր կողմերն են գազթել էսքան, էսքան, էսքան հայեր...

Կոմիտասը տրորեց ճակատը, գլուխը բարձրացրեց, աչքերը բացելու փորձ արեց, բայց գլխապտույտ ունեցավ. միջօրեն երերաց, աչքադեմով սոսոսորացին սև ու արնագույն շերտերը, և ինքն իրեն եկավ՝ «Կարմիր խենթությունը կմոտենա...»։ Նա ցնցվեց այդ մտքից, ապա զգաց, որ դա իրենը չէ, ինչ-որ տեղ կարդացել է կամ լսել... որտե՞ղ, ե՞րբ... հա՜, երեք տարի առաջ՝ Բեռլինում, Արշակից ստացած նամակում էր. «...Ինչպես Ժան-Ժորեսը կգուշակե՝ «...համբակները կարծեք նոր ջարդեր կխուժեն Հայաստանին մեջ։ Կարմիր խենթությունը կարծեք նորեն կմոտենա։ Եվրոպան այս անգա՞մ ալ պետք է թույլ տա ջարդ... բայց ոճիրը այս անգամ ավելի մեծ կըլլա... Կմտածիմ, թե Ժորեսը ճիշտ կգուշակե, Կոմիտաս... էգուցվան օրը մեր ժողովրդին ի՞նչ կսպասե...»։

«Ի՞նչ կսպասե...— Կոմիտասը մտքում կրկնեց նամակի տողը,— Եվրոպան այս անգա՞մ ալ պիտի թույլ տա ջարդ— քմծիծաղեց,— հարկավ»։ Եվ ժողովուրդն ինքը լավ է զգում իր մենակությունը. «Աղբյո՜ւր, գիտե՞ս բեկը մեզի ինչ կանե»։— Եվ այս երգին աշխարհում ոչ ոք ականջ չի դնի՝ և որպես գանգատ ու լաց, և որպես երգ։ Սրա լսողը միայն ինքն է՝ հորինողն ու երգողը։

«Ժամանակներս շեներում այսպիսի երգեր են ծնվում, նոքա անապահով կյանքի, խառը ժամանակի ծնունդ են... նոտատետրիս երգերից շատը խառնակ է»։— Այդպես էր. ամսից ավել էր, որ շենից շեն էր մըտնում, բայց հավաքած երգերից քչերն էին անխառն։

Թե սիրո էր՝ խոսք ու մեղեդու մեջ կորուստի ու բաժանման ցավ կար, օտար ճամփեքին հոգեվարքվող պանդուխտի կարոտ։ Թե աշխա-

տանքի ու բնության՝ խոսք ու մեղեդու մեջ նաև անհույս գանգատ և՛ սեր, և՛ լաց, և՛ ցասում։

«Այսօրվա սիրո երգեր հորինողները պղտոր, պղտոր աղբրակի նման են, իսկ երգողները՝ այդ պղտորված աղբյուրի քով ծնկած պապակ ճամփորդներ։ Եվ՝ չխմել չեն կարող, որովհետև ծարավ են... Այսօրվա աշխատանքի ու բնության երգերի հորինողները ամպոտ երկնքին տակ կծղած ցորենարտի նման են, իսկ երգողները երկնքի խորհուրդը հասկացած այն շինականների պես, որ կարկուտի ամպին են նայում ու մանգաղը զարկում քարին և չեն հավատում, թե արտը կարկուտից կազատեն...»։— Կոմիտասը անհանգիստ շարժվեց. քարը այրում էր, և փորձ արեց ելնել, բայց ոտքերը չէին ուզում։— «Մի քիչ հով գար»։

Հով արեք, սարեր չան, հով արեք...

«Պետրոսը սիրո երգ... երգ ասել չէր ուզում... է՞, վարդապետ, ո՞ւմ հավես կա,— հենց շարաթ առաջ, լսեց Պետրոսի կոտրված ձայնը,— ու երգածը անսիրտ էր... հիմա բոլորն էլ անսիրտ են երգում»,— սիրո, բնության ու աշխատանքի մասին երբևէ ծնված երգերը, մաքուր ու անխառն երգերը՝ հիմա երգվում են անցած-գնացածի պես։ Շինականը դրանց խառնում է իր այսօրվա կորուստն ու ցավը։ Շինականի այսօրվա կյանքը նման է երաշտ տարվա ամառնավերջի, ու երգերն ասում է այնպես, կարծես առատ մի աշունքվա մասին ունեցած հիշողությունն է պատմում։ Եվ այդ երգերը լսելու ու հասկանալու համար պետք է ետ գնալ, որոնել, գտնել ու ճանաչել է՞ն օրերի ժամանակն ու մարդը, բնությունն ու մարդը, աշխատանքն ու մարդը։ Երգի կորցրածը պետք է որոնել երգի միջոցով, գտնել ու վերադարձնել երգին։ Երգին ավելացրածը պետք է որոնել երգի միջոցով ու զատել։

«Երգն աղեկ երգ է, բայց Պետրոսն աղեկ չերգեց»,— նորից ափսոսաց Կոմիտասը։— Երգերը շատ են, կատարողները՝ շատ, ծնված ամեն մի երգ բերնե-բերան անցնելով դառնում է երգ՝ շատ-շատերի, բայց յուրաքանչյուր երգի համար ապրում է մեկը, որը ամենալավն է երգում դա։ Ու այն երգում է մեկ անգամ, որից առաջ ու հետո երգածները այդ մեն-միանգամվա մոտ ու հեռու կրկնություններն են։ Հնարավո՞ր է գտնել ամեն երգի ամենալավ երգչին, ու լսել մեն-միանգամվա նրա երգածը։ Հնարավո՞ր է... գժվար է... բայց յուրաքանչյուր երգի երգչին ու նրա մեկուկ կատարումը պետք է գտնել և, հարկավ՝ երգի միջոցով։

«Մակայն առաջինը պետք է ժողվել՝ էս սար ու ձորերում ցրված երգերը պետի ժողվել»,— նա բռունցքները սեղմեց քարին. ոտքերին ուժ

ովեց, ելավ, հակված քայլեց, և աչքերից խոհերի փոշի մաղվեց դարուղու վրա։

«Ամեն շինական հոգու մեջ երգ ունի, շատ կամ քիչ՝ ունի։ Եվ հիմա երգը հայ շինականի հոգում փակում է աչքը, ննջում է... պետք է փրկել»։— Հայ շինականն ու բնությունը եղել են մեր երգի ակունքը և անկեղծ երգերը ծնվել են այն ժամանակ, երբ բնությունն ու շինականը եղել են արնակից ու անխառով, եղել մի կտուրի տակ, եղբայրներ։ Այն ժամանակ, երբ շինականը իրեն կոչել է բնության տերը, իրավունքով՝ տեր, աշխատանքով՝ մշակ։ Երբ նա համոզված է եղել.

Սերմե՜, սերմե՜, ա՜յ մշակ,
Սո՜ւրբ ա, սո՜ւրբ ա քու փեշակ...

Ու երգը չի հորինվել, այլ ցորյանի պես ծլել է՝ ժամանակին, անարատ։ Ու երգը չի հրամցվել, այլ շինականների հոգիներում ալիքվել է կանաչ արտի պես, հոգիները լցրել առատ աշունքվա հույսով։ Ու՝ երգը չի մարել, այլ պտղել է, ինչպես ամեն հասուն արտ գալիք գարունքվան նոր հունդ է տալիս։ Եվ չհորինված, այլ ծնված աշխատանքային երգը պտղել է նորը՝ խաղաղ ձմեռվա ուրախության պար-երգ.

Յորեն եմ ցանե,
Ելել է պառկե,
Պղտիկ իմ սիրե, յա՜ր,
Ջեմ կրնա թարկե...

Երգի մեջ՝ լիքը հասկերի անկասելի շշուկը, պարի մեջ հասուն արտերի ծփանքը՝ դարձեդարձ, սահուն, հանգարտ, ծանր։

Հայ շինականն այսօր իր կյանքի, իր բնության տերը չէ, և ոչ՝ սուրբ փեշակով մշակ. այսօր բնությունն ու շինականը միասին չեն, նույն կտուրին տակ չեն ու ոչ մի սերմնացան հունդերի հետ երգ չի ցանում, այլ՝ գանգատ։ Շինականը իր հող ու ջրի ծառան է դարձել, իսկ ոչ մի ծառա երգ չի նվիրում իր տիրոջը, այլ՝ բողոքում է։

«Եվ ահ ու լացի, բողոք ու գանգատի մասին հորինվածները երգ չեն, լացը լաց կմնա, գանգատը՝ գանգատ, բողոքը՝ բողոք... բողոքը՝ բողոք... բողոքը...»։— Կոմիտասը տրորեց քունքերը, ճզմեց երակի հետ զարկվող բառն ու բարձրացրեց գլուխը. դարուղու վրա նորից փողփողացին սև ու կարմիր, կարմիր ու սև ծալքերը ու նորից ինքն իրեն եկավ՝ «Կարմիր խենթությունը...»։ Նա ձեռքը աչքերը տարավ, ու կոպերի տակ տրորվեցին խոհերը.

«Պետք է փրկել... սպանվածին հետ երգը սպանվել է, գաղթածին

հետ՝ գաղթել է ու կգաղթե, ապրողներին մեջ այսօր ննջում է երգը... փրկել է պետք»։

...Ամռան կեսօր էր, տիվատապ։ երկնքում ամպերն էին հալվել, երկրում շշուկներն ու ստվերները։

Մենուկ մի դարուղի էր ոլորվում, ու դարուղով՝ մենուկ մի ոտավոր։

Ամառ էր՝ շինականները կալ ու կութի հետ, շաբաթներով ոտք չէր գիպել դարուղուն, հիմա կար՝ երիտասարդ մի վարդապետ քայլում էր, ու վերջին ամսում առաջին անգամ, շնչում էր արահետը։ Եվ կեսօրն անց կածանն իր տաք ու ընդհատ շունչն առած կանգնեց սարի գլխին և հեռվում, մշուշի մեջ նշմարվեց ուշակորույս գյուղը։

«Արևապատին կհասանեմ»,— որոշեց Կոմիտասը։ Ներքևում ինչ-որ տեղ պետք է որ լիներ հնձվոր, կժի հետ բարդոցին սեղմված։

«Մի քիչ անձրև գար,— Կոմիտասը վեղարի ճոթով սրբեց խոնավ ճակատը։— Բայց շինականների համար հիմա անձրև պե՞տք է, չի՞ վնասի»,— ցանկության համար տարակուսեց և նորեն հիշեց Պետրոսից լսած երգը.

Ամպե՜ր, ամպե՜ր, մի քիչ ղո՜վ արեք,
Վարար անձրև թափեք, ծո՜վ արեք...

«Բայց դա ուրիշ երգ է, ամառվա շոգի հետ այնքան կապ չունի... Պետրոսը իր հոգու տապի համար էր ուզում ղով ու անձրև»։

Հո՜վ արեք, ամպեր չան, հո՜վ արեք.
Իմ գարդին դարման արեք...

«Շինականի սիրտը թե իր արտի վրա, հունձ ու կալի վրա տաք լինի, այսօրվա արևը կընդունե զովի պես, տոթը՝ անձրևի պես»։

Ներքևում, արտերի ճամփեքի վրա պետք է որ լիներ քրտնած աչքերով հացվոր։ Ծառերի սաղարթներում՝ բերանները բաց ծտեր։ Ինչ-որ տեղ կուչ եկած առուներ ու գետակներ պիտի լինեին, ափերին՝ հևացող հոտեր։ Մի հորթ պետք է որ մոզ կպած լիներ, հետևից՝ ոտքերը քարերին զարկող հոտաղ։ Պետք է որ լիներ պտուղների խուլ թմփոց։ Ջրերի վրա՝ մլակների գվվոց։ Գյուղի մի տան կտուրին հալված ծուխ պետք է լիներ, պատի տակ պառկած պառավ մի շուն, որ ալարում է քշել ականջներում լցված ճանճերը... Ներքևում հևացող կյանք պետք է լիներ, բայց խամրած ու լուծված հորիզոնում շարժվում էին ու ձայն ունեին միայն շոգի գունդ ու կծիկ երակները։ Եվ Կոմիտասի աչքերի դիմաց քարերը զնգում էին.

Հո՜վ արեք, սարե՜ր չան, հո՜վ արեք...

***

Գիշեր էր՝ լուսնկա, հազարաձայն։ Կոմիտասը շենի ամենալավ երգիչ Գրիգորի կողքին մեկնվել էր հողե կտուրին, ականջ պահել գյուղի ու գիշերվա շշուկներին։ Գրիգորը անկողին ուներ, իսկ Կոմիտասը՝ մեն մի կարպետ։

— Վարդապետ, էդպես հարմար չէ, գոնե բարձ բերեմ,— շարժվեց Գրիգորը։ Կոմիտասը բռնեց թևը.

— Պետք չէ, Գրիգոր, հավատա այսպես եմ սովոր։ Այսպես կթվա ինձ, թե գետնից շշուկներ կառնեմ... չե՞ս հավատա, դու էլ փորձի,— ծիծաղեց։— Ես պնչներիս ու ականջներիս մեջի մազերն էլ չեմ կտրում, նրանք էլ ձայներ կժողովեն։ Դու էլ փորձի։

Նրանք արդեն երկար զրուցել էին. շինականների օր ու կյանքից, բան ու գործերից, բերքից, հարկ ու տուրքից։ Գրիգորը ասել էր.

«Հարկն ու տուրքը իր հերթին, բայց հող ու ջրից, տնից քշվելու վտանգ կա, ջարդվելու վտանգ»։

Կոմիտասը մտքում համաձայնել էր, բայց պատասխանել.

«Մեռնելու մասին մտածել, մեռնելու մտքին հաշտվել պետք չէ, հաշտվեցիր՝ կմեռնիս։ Մտածեք թե՝ ինչ էլ լինի պետք է ապրինք ու ապրինք»։

Հետո կատակել էր.

«Գրիգոր, թե հյուր կունենաս, գիտե՞ս ինչպես փորձիր խելքի շատն ու քիչը. էսպես,— վարունգի կոթունի մասից կտրել էր, շփել-փրփրացրել-կպցրել ճակատին,— թե կպավ, ինչպես իմս, ուրեմն խելոք է»։

Կատակ երգ դնդնացել. «Պաքվա պանիլկեն կերալըմ, Նախշուն աքիր, սառը ջուր վրան խմալըմ, Նախշուն աքիր...»,— ցրել Գրիգորի մռայլությունն ու առաջարկել.

«Մի երգ ասա լսենք, Գրիգոր»։

«Ի՞նչ ասեմ. ես քո մասին լսել եմ, դու մեր ձայնեղ վարդապետն ես, երգով քեզ գոհություն տալը դժվար է»։

«Ինչ էլ երգես, գոհ կմնամ, Գրիգոր, երգիր»։

«Է՜հ, վարդապետ, դու էլ ժամանակ ես գտել երգեր գրելու, էլ չեն հարցնում ոչ կալ, ոչ կութ, ոչ հավես»։

Կոմիտասը մտքում տվել էր տեղին պատասխանը. «Գրիգո՜ր, Գրիգոր, ձեր իմացած երգերն ու պատմությունները ժողովելուն արդեն ուշացած ենք, էգուց գուցե ավելի ուշ, ո՜ւշ ու ո՜ւշ լինի, հասկացիր»,— իսկ Գրիգորի համար կատակել.

«Շենի հազար հարս ու աղջիկ, դռան ու կտուրին նստած, ձայնիդ են սպասում, անխիղճ, երգե»։— Եվ ինքն էր երգել՝

Օրն էր ուրբաթ,
Լուս ի շաբաթ,

...— Հազար ափսոս Մոկաց Միրզեն...— իրիկունն ու գյուղը լցրել քաղցրիկ ղողանջներով ու Գրիգորին տրամադրել երգի։

Եվ հիմա գիշեր էր՝ ցերեկվա զսպված շունչը լուսնի շողերի պես արձակ։ Կոմիտասը պառկած էր հողե կտուրին, կողքին՝ Գրիգորը, կողքին նոտատետրն ու մատիտը։ Նա դեռ Գրիգորից, կտուրների վրա իրենց գաղրությունը դատարկող շինականներից երգ էր սպասում։ Բայց չկար։ «Դադրած են, քնած կլինեն, Գրիգորին ես եմ արթուն պահել»,— մտածեց։

— Գրիգո՛ր, ամռանը, լուսնկային շինականների քունն անուշ է,— ասաց։

— Հա՛, էդ մասին երգ էլ կա, քո ասած բառերն էլ մեջը։

— Իրա՞վ,— ուրախացած նստեց-— ասա, Գրիգոր։

— Էհ, վարդապետ, հավես չկա, դադրած եմ, մնա լուսուն։

— Գրիգոր, ամռան գիշերվա ու շինականի քնի մասին երգը ամռան գիշերին պետք է երգվի, երգողը պետք է դադրած լինի։ Երգեր, լավ կհնչի։

— Վարդապետ, քնել կուզեմ։

— Գրիգոր...— ձայնի մեջ այրող ցանկություն ու մանկան խնդրանք կար, և Գրիգորը ամաչեց, որ մերժել է՝ նստեց անկողնում ու մեղանչեց.

— Վարդապետ ջան, ախր գյուղացիք քնած են։

— Վնաս չունի՝ հիմիկվա երգը օրոր է,— և որպեսզի Գրիգորը չերգի անսիրտ, տրամադրվի երգելուն, մեղմ ու երգեցիկ ավելացրեց,— օրի՛կ, օրի՛ն իմ անուշին։— Իր հորինած մաղթանքի, մարեի աղոթքի վերջին տողերն էին։ Կոմիտասի մրմունջ-օրորի հետ Գրիգորը ռիթմիկ շարժեց գլուխն ու սկսեց.

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, լե,
Վա՛յ լո՛, լո՛, լո՛, լո՛,
Շինականի քունն անուշ։
Երեկ էն օրեր,
Որ գնալենք սարեր։

Աջը արագ շարժվում էր տետրին. Կոմիտասը լուսնի շողերով երգն

էր նոտագրում ու երգի հետ՝ այդ գիշերվա արձակ շշուկները. տերևների սվսվոցը, առուների միջօրեի կորած շունչը, արտերում հալված մանգաղների զրնգոցը, որ բարդոցների բույրով գալիս էր, մի ուսապարկի մեջ այդ գիշեր լռած սրինգի կանչը, արևահար խոտերի, կալերի ու տավարի բույրը... շինականների դադրած շունչն ու երազները և բոլորը՝ լուսնի շողերով օծուն։

Գրիգորը ավարտել էր երգը, իսկ Կոմիտասի աչքը դեռ շարժվում էր։ Հետո նա բարձրացրեց գլուխը, և խոնավ հնչյուններով լցված աչքերը շշնջացին.

— Ես ձայնագրեցի այս գիշերը...

ԱՂԲՐԱՆՑ ԱՐՈՒՆ ՄԵՋ ՔԱՐԵՐՈՒՆ...

— Մարգարիտ...

Մարգարիտը ծնկները գրկած նստել էր տաք ավազներին, և հայացքը թրթռում էր ջրերի վրա։ Նա այնտեղ գտավ Կոմիտասի հայացքն ու ժպտաց։

— Մարգարիտ, ի՞նչ գիտես, թե այս ալյակներից մեկը Հայաստանն չի եկել-հասել այստեղ ու հիմա ուզում է ափ ելնել։

Ալիքները Ատլանտյանի ալիքներն էին, ափը՝ Անգլիայի Սպիտակ կղզու, իրիկնապահը՝ 1911 թվականի ամառվա։

— Տարօրինակ բաներ ես մտածում, Կոմիտաս։

— Հայ ջուր է, տիրոջ ետքեն վազեվազ աշխարհեն էլ դուրս կելնի, Մարգո։

Խճճված ալիքներում իրար գտած-միացած նրանց նայվածքը մի բուռ ծիածան էր՝ իրիկնային գույներով օծված մի կալյակ (որը պետք է որ հայրենի քար ու լեռների, ձորերի մեջ քրքրվող աղբյուրներից, առուներից, գետերից լիներ), ետևից հասան արձակ ալիքները, կալյակը փշրվեց, ծիածանի գույները շաղ եկան, և նրանց հայացքները զատվեցին, դարձան մեկուկ-մեկուկ ալյակներ ու թափառել սկսեցին օվկիանոսում։

Կոմիտասը մեկնված էր կողքի, և, ինչպես ավազից տիվագոլը, նրա մկանունք ու նյարդերից հոգնածություն էր անջատվում, որը նա հավաքել էր տաք ու փոշոտ ճամփեքից։ Եվ աչքերում էր ծխում խոնջանքը, ծխում էր խնկագույն ու խնկաբույր։

Նա երկար շրջել էր Արևմտյան Հայաստանում, անցել գավառից գա-

վառ, հավաքել մեռնող, գաղթող ու ննջող երգերը, սերմել հույս և ուրախության երգ, անցել էր Եգիպտոսի հայաշատ քաղաքներով և մյուռոնի փոխարեն նա՝ հայ սուրբը, Կոմիտաս վարդապետը, տարաշխարհիկ հայերին մկրտել հայ ոգով, ի տեղ նշխարի նրանց բերանները երգով քաղցրացրել։ Հետո շարունակել էր ճամփան, ու սև վեղարով ծրարած Հայաստան աշխարհը տարել-հասցրել Ալեքսանդրիա։ Այստեղ նա հավաքել էր հիսուն մանկտիք. աղոթքի տեղ երգ մրմնջացել՝ հոգիներում արթնացրել հայրենի լեռների շշուկները, ապա նրանց մատղաշ կոկորդները դարձրել սրինգ՝ ու փորձել, ու նվագել։ Եվ Ալհամպրա թատրոնի դահլիճում տվել համերգ՝ ամռան այդ գիշերվա արևելյան կարմրավուն ու տարփոտ ձայները մարել հայ երգով՝ Հայոց լեռներից բերած հովերի հորձանքով։

Իսկ առավոտվա հետ լրագրերը առ Կոմիտաս վարդապետ աղոթք էին արել.

«...Դուք Հայաստան ուխտագնացություն տարիք զմեզ... դուք Մասիսն ու Արագածը փոխադրեցիք հոս... ո՞վ ըսավ, թե լեռները չեն քալեր... Հայաստանը մեր լսելոք տեսանք մենք... ի՞նչ, վարդապետ, իրա՞վ է, արդյոք, Հայաստանի հայն ալ ցնծության ճիչեր, ուրախության շեշտեր, աղաղակնե՞ր ունի եղեր, մեր հեք սիրական եղբայրը, չէինք գիտեր ատիկա, անակնկալը փղձկեցուց զմեզ... ո՞վ սուրբ վարդապետ...»։

Ապա Եգիպտոսից անցել էր Ֆրանսիա, հասել Փարիզ, հասել իր հոգուն ու երգին աշակերտած Մարգարիտի մոտ ու, դեռ մի կարգին շունչ չքաշած, մոտեցել դաշնամուրին.

«Սիրելի Մարգարիտ, նախ և առաջ,— սկսել էր Մարգարիտին ուղղված իր նամակների տոնով և ոգևորված շարունակել,— Արևմտյան Հայաստանից մարգարիտներ եմ հավաքել, դադար չեն տալիս, խեղդում են, պետք է երգեմ։ Լսիր»։

Հետո Մարգարիտի հետ, Մարգարիտի խնդրանքով, երկու շաբաթով Սպիտակ կղզում հանգստանալու էր եկել, բայց դադար չուներ։ Առավոտից գիշեր հակված էր պանդոկի դահլիճում դրված դաշնամուրի մոտ, ներդաշնակում էր երգերը, ձայնագրածի կողքին ձայնագրում նորը, կամացուկ երգում՝ նոր ձայնագրածի վրա նորեն շարժում աչքը, անհանգիստ քայլում էր, ու ոտնաձայնի հետ մեղեդին ալիքվում էր դահլիճում։ Եվ առավոտից գիշեր տաք-տաք երգ էր ժայթքում Սպիտակ կղզում։ Անգլիացի հանգստացողները դահլիճի դռնից ծկլկում էին, բայց ոչ ոք ներս մտնելու, խանգարելու փորձ չէր անում։

— Ասում են այս հոգևոր հայրը հայ երաժիշտ է,— շշնջում էր մեկը

և, թեկուզ երևացողը Կոմիտասի թիկունքն էր, հարգանքով գլուխ էին տալիս ու հեռանում։ Դահլիճ ոտք դնողը միայն Մարգարիտն էր։

— Կոմիտաս, չէ որ դու հանգստանալու ես եկել։

— Երգերը ննջել չեն կամենում, Մարգարիտ։ Եվ ես չեմ կամենում, որ ննջեն։

— Գնանք մի քիչ շրջենք, աղաչում եմ։

— Մնա իրիկնապահին, քեզ համար նոր երգ ունիմ, կերգեմ։

...Եվ հիմա նորից արևմարք էր, օվկիանի վրա, հեռվում հրե լավա էր ժայթքել, և ալիքները իրարից առաջ անցնելով, իրարից երկնային գույներ ու շշուկներ փախցնելով, վազում, վազում էին հրափրփուրի մեջ մարելու։ Մարգարիտը ծնկները գրկած նստել էր, Կոմիտասը թիկնել, աչքերով ջրերի շշուկներն էր հավաքում։

— Մարգարիտ, ալիքները գանգատ ունին, նոքա անտուն են ու թափառական, և գանգատ ունին։

— Տարօրինակ բաներ ես մտածում, Կոմիտաս,— խոսքը կրկնեց Մարգարիտը և որպեսզի Կոմիտասը չգնա կնճռոտ մտքերի ետևից, հիշեցրեց,— դու ինձ խոստացար նոր երգ։

— Մնա լուսնկային։

— Բայց մենք ճաշի հրավեր ունենք։

Փոքրիկ պանդոկում Կոմիտասի ու Մարգարիտի հարևանությամբ կենում էր անգլիացի մի ընտանիք՝ կանոնիկ ու սառը բրիտանացի հայր, մայրը՝ սևահեր, ծիծաղկոտ ու սև աչքերով իռլանդուհի և երկու խարտյաշ մանկտիք։ Նրանք այդ օրը գնալու էին, և իռլանդուհին ճաշի հրավեր էր արել։

— Ամուսինը այս ջրի ձկանց պես պաղարյուն է, իսկ իռլանդուհուն մերժել չի կարելի,— ժպտաց Կոմիտասը և անսպասելի սկսեց երգը.

Գնաց ձմեռ, եկավ գարուն,
Հալեց ձնիկ վեր սարերուն,
Երթար, լցվեր բարակ առուն...
Աղբրանց արուն մեջ քարերուն,
Դեղին սուսան վեր սարերուն,
Փունջ մանուշակ մեջ ձորերուն...

Դիմացը մի օվկիանոս ջուր կար, ջրահեղձ հորիզոններ, ջրահեղձ կղզիներ, ջրահեղձ երկինք ու արև, Սպիտակ կղզին։ Իսկ «Աղբրանց արուն մեջ քարերուն» կարոտ էր մաղում՝ մի կաթ ջրի պապակ էր մաղմղում կղզու վրա, ծովափի ավազներին ու ժայռերին և օվկիանոսի վրա։

— Հոգնել եմ այս կղզուց, այս ջրից, Փարիզի փողոցներից,— լցված ասաց Մարգարիտը։— Եվ այս սառը Սպիտակ կղզին, սառը երկինքն

ու օվկիանոսը, այս սառը լուսինը չե՞ն զարմանում, թե տա՜ք-տաք, այս տաք երգերը ո՞ր աշխարհից են գալիս... մեր լեռներն եմ ուզում, Կոմիտաս, մեր Աղբրանց արուն... մեր ջրերը։

Մարգարիտի ձայնը մորը կորցրած երեխայի ձայն էր, թնկթնկոց էր։ Կոմիտասը շոյեց նրա մազերը և մտքում ասաց. «որբուկս»։ Որբո՞ւկս... բառը մեկեն եկավ, և նա զարմացավ դրա համար, Մարգարիտի մասին երբեք այդպես չէր մտածել։ Նորից նայեց՝ բոլոր անգամներից տարբեր՝ մի տեսակ գողտրուկ դողով, և Մարգարիտը, որ նստած էր ծնկները գըրկած, դեմքը թաղած գիրկ ու գոգի մեջ, մազերն արձակ, թվաց քիչ առաջվա երգի պես իրական ու մտերիմ և երգի արձագանքի պես հեռավոր։ Կոմիտասը ավելի ջերմ շոյեց մազերը, ուզեց, որ նա գլուխը բարձրացնի՝ նայի-ցրի պատրանքը, բայց Մարգարիտը ավելի կուչ եկավ, և Կոմիտասի դողացող մատների տակով հոսեց, լացի պես տաք-տաք հոսեց հեռավոր լեռների ու առուների կարոտը։

«Որբուկս,— կրկնեց մտքում և արդեն գիտեր, թե ինչու,— տարաշխարհի բոլոր հայերն են որբ,— մտածեց։— Հարյուր տարեկան է, թե հոր ու մորով մեկ տարեկան երեխա, եթե տարաշխարհիկ է՝ որբ է»։

Հետո ընդոստ ոտքի ելավ և բռնեց Մարգարիտի ձեռքը։

— Գնանք, Մարգո, կարոտդ այս ավազների մեջ մի դատարկիր, պահիր, նա քո հարստությունն է։

***

Հավաքվեցին ճաշասեղանի շուրջ։ Ամուսինները ճերմակ անձեռոցիկներ կախեցին երեխաների կրծքներին և շշուկով հասկացրին նրանց, որ համբերեն՝ վարդապետը պետք է օրհնի ճաշասեղանը։ Իսկ Կոմիտասից չէր պոկվում Մարգարիտի թնկթնկոցը։ Եվ այդ երեկո Մարգարիտը ոչ դաշնակահար էր, ոչ երգչուհի, երեխա էր, ծնողների թևերի տակ ծվարած անգլիացի այդ երեխաների տարիքին, միայն թե՝ մենակ ու անպաշտպան...

«Որբուկս...»,— և Կոմիտասը աչքը բարձրացրեց ու անբառ խաչակքնքեց ճաշասեղանը։

Ընթրիքը սկսվեց զուսպ ու անձայն։ Կոմիտասը, իր բնույթին հակառակ, չէր կատակում, Մարգարիտը փորձում էր ակտիվ երևալ, իրլանդուհուն չվիրավորել, անգլիացին ընթրում էր դանդաղ, կանոնիկ շարժուձևով ու մի տեսակ հոգնած, իրլանդուհին սովորական ծիծաղը հավաքել էր աչքերում։ Նա ավելի շատ մանչերին էր կերակրում և կամացուկ զսպում, որ բարձր չխոսեն և դա ի հարգանք վարդապետի։

— Ինչո՞ւ եք երեխաներին թշնամացնում ինձ,— ժպտաց Կոմիտասը,— ճանապարհին թե հայհոյեն՝ ո՞վ կպաշտպանի։

— Օ՜, ի՞նչ եք ասում, հայր սուրբ,— աչքերում թովոացող ծիծաղին իռլանդուհին ազատություն տվեց,— նրանք հայհոյել չգիտեն։

— Չգիտե՞ն,— Կոմիտասը գլուխն օրորեց,— ափսո՜ս։

Իռլանդուհին քրքջաց. ամուսինը լուրջ-լուրջ նայեց վարդապետին և հարց տվեց.

— Դուք ուզում եք, որ նրանք, ներեցեք, հայհոյե՞լ իմանան։

— Հարկավ,— նույնպիսի տոնով պատասխանեց Կոմիտասը,— եթե չգիտեն, ի սեր աստծո, սովորեցրեք, մեղք են երեխաները։

Կինը նորից քրքջաց, ամուսինը կարմրեց, կմկմոցով առարկեց վարդապետին, Կոմիտասը պնդեց խոսքը, հետո էլի կատակեց՝ ընթրիքն ու զրույցը դարձավ անկաշկանդ, և իռլանդուհին սիրտ արեց.

— Ներեցեք, հայր սուրբ, շատ կցանկանայի լսել ձեր ազգային երգերից մեկը։

— Սիրով,— Կոմիտասը գլխով խոնարհում արեց,— լսեցեք մեր «Կռունկը»։

— Կռո՞ւնկը,— ժպտաց իռլանդուհին,— ի՞նչ է նշանակում։

— Crane։

Կոմիտասը նստեց դաշնամուրի մոտ ու նայեց Մարգարիտին։ Նա տխուր ժպտում էր։

«Ես կերգեմ քեզ համար... քո մասին... քո փոխարեն»,— ասաց մտքում, և մատների տակից մի հնչյուն թե առավ, ապա ելավ, տիրակալեց շունչը. «Կռո՜ւնկ...»,— հոգուց փերթ-փերթ պոկված մեն մի բառի հետ շունչը գնաց, տարածվեց՝ այդ պանդոկից, Սպիտակ կղզուց դուրս ինչ-որ տեղ փռվեց մի հորիզոն, շունչը խորացավ և այդ պանդոկից ու Սպիտակ կղզուց դուրս բերված աշխարհն ու օրը մթնոլորտ ունեցան ու դուն. երկինքը աշնանային կապույտ էր ու ատոր, ձյուն-ճերմակ ամպեր էին լողում այնտեղ, հորիզոնը՝ մշուշոտ ու խամրած։ Հոգուց փերթ-փերթ անջատվող բառի հետ շունչը ալի՜ք-ալիք ծավալվեց՝ թևերից ամպերը թոթափած կենտ մի կռունկ կապույտ ծիր առավ, տառապած մի դեմք ուղղվեց երկինք, և նրա աղերսող աչքերի մեջ կռունկի աղեկտուր երգի հետ կաթկթեց կռունկի գագրությունն ու ետևում թողած տաք հորիզոնների ու աշխարհի, կորցրած երամի կարոտը։

...ուստի՞ կուգաս, ծառա եմ ձայնիդ,
Կռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս...

Իռլանդուհին կամաց թեքվեց դեպի Մարգարիտը.

— Կարոտի՞ մասին է։

— Այո՛, պանդուխտի երգ է։

Հասում էր Կոմիտասի ձայնը ու ձայնի հետ՝ լուծված բառերը։ Իոլանդուհու համար բառ ու խոսք չկար, կար միայն հայր սուրբից անջատվող անհատնում շունչ, և հեռավոր ու անծանոթ աշխարհում բացվել էր մի հորիզոն ու հորիզոնում՝ երկու շնչավոր՝ մի մարդ, մի կռունկ, երկրի վրա՝ խեղճ ու կրակ մի մարդ, երկնքում ուղղություն ու երամ կորցրած մի կռունկ։ Աշնան թախիծով լցված հորիզոնում երկու միայնակ հոգիներ հանդիպել էին. երկուսն էլ մեծ կորուստի տեր ու նույն կարոտի՝ տաք երկրի ու երամի։ Կռունկի հոգնած ու բեկված թևերից, երկար վիզ ու կտուցից կաթկթում էր նրա կաղկղան և տակնուվրա անում պանդուխտի հոգին. կաղկղան խոսում էր պանդուխտի հոգու հետ. կաղկղայի մեջ ախ կար, հեռավոր ու տաք մի երկրի հուշ ու կարոտ, կորցրած երամին գտնելու հուսահատ փորձ։

Պանդուխտը իր օր ու կյանքն էր պատմում կռունկին, գանգատվում պաղ մարդկանցից, պատմում էր կորուստների մասին, իր մենակության, կրքոտ էր պատմում. չպատմել չէր կարող, որովհետև խեղդվում էր, ուրիշ մեկին պատմել չէր կարող, որովհետև ականջող չկար, հասկացող չկար, իսկ կռունկը ուրիշ էր. նա իր պես թափառիկ է, նրա կաղկղայի մեջ իր ախ ու ցավից կա. պետք է որ լսի, պետք է որ հասկանա...

Իոլանդուհին սեղմվեց որդուն, ապա նրա դողացող ձեռքը գտավ մյուս մանչին՝ ձգեց, մոտ բերեց, երեխաներին հավաքեց իր թևի տակ։

— Թող հանգիստ նստեն,— կամաց ասաց ամուսինը։

Իոլանդուհին շաղված աչքերով նայեց նրան և առաջին անգամ ատելության պես մի բան ունեցավ ամուսնու նկատմամբ. անհոգ ու սառն էր նրա դեմքը, և իոլանդուհուն թվաց, թե է՞ն պանդուխտի գանգատը ամուսնուց է, և թվաց, թե հայր սուրբն ու Մարգարիտը գիտեն դա և դողով նայեց Մարգարիտի կողմը։

Մարգարիտի կեցվածքը վեհ էր. ձեռքերը կրծքին ծալած, գլուխը բարձր, աչքերը թախծալի։ Նա հզոր էր իր տխրության մեջ։

«Էն պանդուխտի նման է»,— մտածեց իոլանդուհին և փլված ուսերով կուչ եկավ։

...Այս սուտ աստվորիս բաներն իմացանք,
Աղուհացկեր մարդկանց կարոտ մնացինք...

Կոմիտասի շուրթերով բողոքում էր մի ողջ ժողովուրդ, իսկ իոլանդուհու համար բառ ու խոսք չկար, կար միայն հայր սուրբից գոլորշու պես դարձեղարձ անջատվող շունչը և տխուր ու ամայի հորիզոնում մի

պանդուխտ շարունակում էր իր մենախոսությունը, աչքերը՝ կոունկի թևերին։ Կոունկը գնում էր հոգնած ու հուսահատ, թևերին՝ պանդուխտի աչքերի ու ամպերի ծանրությունը։ Երկինքը նրան անդունդ էր հրում, իսկ երամը չկար ու չկար։ Հույսն ու հավատը լքել էին նրան, և նա իր ցեղին ու իր տաք երկիրը չէր հասնելու։ Կոունկը գնաց, հեռացավ. պանդուխտի ականջներում հիմա նրա կաղկղայի փշրված արձագանքն էր, պանդուխտին լքեց վերջին խոսակիցը, վերջին ընկերը, ու հարիզոնում մնաց մեն մի շնչավոր՝ մենակությունից կծկված մի պանդուխտ, և անհուսությունը փաթաթվեց նրան։

«Հիմա լաց կլինի»,— արցունքները կուլ տվեց իլանդուհին։

Բայց, չեղած տեղից, պանդուխտը ոգի առավ, նրա աչքերում ծունկ զարկած տարտամության ամպերի վրա փայլատակեց զայրույթը, նա հայացքը հեռացրեց կոունկի հեռացած ճամփից և... դաշնամուրի ստեղների վերջին ճողփյունի հետ, երգի վերջին բառի վերջին փերթերի հետ պանդուխտը ծա՜նր, ծանր, քամահրանքով շաղված ու պնդացած հայացքով նայեց դատարկ հորիզոնին։

Իլանդուհին փղձկաց, նա դեմքն առավ ափերի մեջ և գլուխը դրեց սեղանին։

«Դա ի՜նչ երաժշտություն էր... ի՜նչ ձայն էր... ես երբեք չպիտի մոռանամ... չպիտի մոռանամ...»,— կրկնում էր մտքում։

— Այս ի՜նչ արիք կնոջս,— ամուսինը ոտքի ելավ և դժգոհ նայեց Մարգարիտին,— տասը տարի է ամուսնացած եմ, նրան այս վիճակի մեջ չեմ տեսել։— Ձեռքը դրեց կնոջ ուսին,— հանգստացի՛ր, ի՜նչ պատահեց։

Կնոջ ուսերը ավելի ցնցվեցին, նա ուսը իրեն քաշեց և լացի միջից ասաց.

— Բայց նա չկարողացավ լաց լինել... ես լաց եմ լինում, որ նա չկարողացավ լաց լինել։

Ամուսինը ուսերը վեր ձգեց, ո՞ւմ մասին է խոսում կինը, «նա»-ն ո՞վ է։

— Եվ նա չպետք է լաց լիներ,— պատասխանեց Կոմիտասը,— տրխրությունը պետք է ուժեղ լինի, առնական։

Իլանդուհին հանդարտ բարձրացրեց գլուխը և արցունքոտ աչքերով ուշադիր նայեց հայր սուրբին։ Կոմիտասը տխուր ժպտաց, հետո իլանդուհին խոնարհեց գլուխը և, կարծես մեկուսի, շշնջաց.

— Եվ կոունկը չհասավ երամին։

— Չհասավ,— կրկնեց Կոմիտասը,— երամից կտրված կոունկները տեղ չեն հասնում, չեն հանգրվանում, մի տեղ ընկնում մեռնում են։

ՍՊԱՍՈՒՄ

Կոմիտասը ելավ հյուրանոցից, վերարկուի օձիքը բարձրացրեց, ձեռքերը խոթեց գրպանները և քայլեց արագ ու ճկուն։ Դեկտեմբերի կեսն էր. Փարիզի փողոցներում վնգստում էր ցուրտը։ Առավոտ շուտ չէր, արևն իր օրվա պռատ ճամփից մի երկու պարան անցած պետք է լիներ, բայց չկար՝ չքացել էր քաղաքի գորշ երկնքում, մի ծխնելուցից պոկված կայծի պես հալվել-կորել էր։

— «Le Mercure musical» ամսագրի նո՞ր համարը,— դիմացի մայթին սնկսնկում էր լրագրավաճառ տղայի ձայնը,— վերջի՞ն համարը։

Հանդեսի անունը Կոմիտասին հետաքրքրեց. երկու շաբաթ առաջ, երբ փարիզեցիներով խճճված «Սալ դե զ'. Ագրի քյուլտյորի» դահլիճում տրրվելու էր հայկական առաջին նվագահանդեսը, և ինքը բեմում վերջին կարգադրություններ էր անում, ականջն ընկավ՝

— Զարմանալի է։ Եկել են նաև Փարիզի գիտական ու երաժշտական հեղինակությունները։ Պարզապես անսովոր ու հրապուրիչ ծրագրերն են նրանց այսքան մարդ հավաքել։ Ես կասկածում եմ, թե մի բան կտա հայկական երաժշտությունը, այն էլ... մի կրոնավորի ղեկավարությամբ։

Խոսողը առաջին շարքում նստած մի երիտասարդ էր՝ ինքնագոհ ու վստահ։

Իսկ նվագահանդեսի վերջում, երբ դահլիճը հիացմունք էր աղմկում, երիտասարդը բեմ թռավ.

— Խնդրում եմ... խնդրում եմ ներեցեք ինձ,— խոնարհվեց։

Ինքը հոգնած ու անքեն ժպտաց, և երիտասարդը ավելի շփոթվեց։

— Հայր սուրբ...— կմկմաց։

Հետո իմացավ, որ նա «Le Mercure musical» հանդեսի աշխատակից էր։

— ...Ամենավերջին համարը, թարմ համարը,— մորմոքում էր տղայի ձայնը։

Կոմիտասը ակամա դանդաղեցրեց քայլերը, նա հանդեսը գնելու միտք չուներ, բայց լրագրավաճառը վազելով մոտ եկավ, ամսագիրը մեկնեց, կծվծաց.

— Մսյո...

— Մրսել ես, մանչ,— գնեց ամսագիրն ու շփեց տղայի քրտնած այտը։

— Մերսի... նոր համարը... թարմ համարը...— լրագրավաճառը վազեց փողոցով։ Կոմիտասը հայացքով ուղեկցեց նրան ու տխուր ժպտաց. «Դու որբ ես, մանչ»։— Եվ հանդեսը թերթատելով քայլեց։

— Օհո՜,— ոտքը կախ գցեց,— երիտասարդը նորեն մեղանչում է։— Ամսագրում նվագահանդեսի արձագանքը կար, տողերից բացականչում էին սենսացիոն բառերը.

«Հայ երաժշտություն... նորություն... հայտնագործություն...»։

— Նորեն նույն մեծամիտ ու վիրավորող տոնն է. հայտնագործում է նոր ժողովուրդ, որը հնությունից իր ծննդյան օրն է շփոթում, երգն ու երաժշտությունն է հայտնագործում, որը ժողովուրդը օդի պես շնչել ու շնչում է։

«Մի երաժշտություն, որը տանում է մեզ հեռու և ստիպում է ապրել մոռացված մի ժողովրդի կյանքով...»,— կոչում և ուսերին պարտք էր առնում հոդվածագիրը։

— Դատարկ խոսքեր,— Կոմիտասը քմծիծաղեց ու շարունակեց մըտքում։— Տասը-տասներկու տարի առաջ աշխարհը քեզ պես լրագրողներով լեցուն չէ՞ր, որ Սուլթան Համիդը, քեզ համար այսօր հայտնագործած ժողովրդի ջարդերով կարմիր խրախճանք էր անում... Եվ հիմա, նույնը շարունակվում է։ Հիմա...,— (այդ օրը 1906 թվականի դեկտեմբերի կեսն էր)։— Հիմա փուչ խոսքեր ասելու հերթը քուգտ է,—սրդոդած փակեց ամսագիրը, ճմրթեց բռի մեջ և արագացրեց քայլերը։— Ամեն ժողովուրդ, ինչպես ամեն մարդ, ինքը պետք է իր օր ու կյանքն ապրի, իր ճամփեն պետք է կտրի սեփական ոտքերով... Էսքան ժամանակ ո՞վ է ուրիշի ոտքերով քայլել։ Ո՞վ է շալակել ուրիշի սապատը։

Դեկտեմբերի կեսն էր։ Մրսած օր։ Եվ փարիզեցիները դուռ ու լուսամուտ գոցել էին օրվա դեմ։ Հատուկենտ էին անցորդները՝ աչքերը կկոցած ցրտակեզ մայթերին։ Թվում էր, թե պաղը երկնքի հետ կապ չունի, ամեն մեկի համար ոտատակից էր ծլլում ցուրտը, շինություններից, գոց դուռ ու լուսամուտներից և ծխնելույզների շուրթերից դժկամորեն անջատվող ծխի քուլաներից։

Փողոցի շրջադարձում Կոմիտասը մի դրամապանակ նկատեց։ Հնամաշ էր, պարունակությամբ աղքատ՝ եղած-չեղածը տասը ֆրանկ։

«Խեղճ ու կրակ մեկն է կորցրել,— տխուր մտածեց նա և նայեց շուրջբոլորը,— էս ցուրտ օրվա ապրուստն է կորցրել՝ կորոնի, կդառնա, ետ կգա... Հիմա կգա»,— համոզեց ինքն իրեն և նայեց ժամացույցին. 12-ին քառորդ էր պակաս, իսկ 12-ին Մարգարիտի մոտ ճաշի էր հրավիրված։

«Մի քիչ սպասեմ»,— որոշեց ու հանդարտ սկսեց քայլել՝ փողոցի շրջադարձն ու ետ, շրջադարձն ու ետ, ուշադիր՝ փողոցով անցնող հատուկենտ անցորդներին։ Եվ համոզված էր, որ կգա նա՝ ձմռան այդ պաղ

օրը ունեցած ափ կրակը կորցրած մարդը, ու ինքը անմիջնորդ կճանաչի նրան։

«Տխուր բան է օրվա ապրուստ չունենալը,— մտածեց Կոմիտասը,— դա մարդու ծնունդի դեմ, բնության դեմ բան է։ Ամեն մարդ հանապազօրյա հաց պետք է ունենա՝ օդ շնչելու բնական իրավունքով, հագուստ ու կապուստ պետք է ունենա՝ իր մորթու գոյության բնական իրավունքով։ Եվ հաց ու թացի, հագուստ-կապուստի համար չէ, որ մարդիկ աշխարհ են գալիս, դրանք ի վերուստ տրվում են նրանց ծնունդի հետ՝ տրվում են օդի ու մորթու պես... Իսկ եթե չկա՞, եթե չունի՞ն, ուրեմն մեծ ոճրագործություն է կատարվել։ Թունավոր սրեր են բացվել բնության դեմ...»։

Փողոցի շրջադարձից ելավ մի կառք՝ ոսկեգույն ծոպերով զարդարուն, և փողոցը լցվեց բոժոժների տաք ղողանջով։ Ձիերի հպարտ շունչը ռունգների մոտ դարձել էր եղյամ, կառապանը ձեռքերն էր փչում, իսկ հաստ վերարկուով կոլոլված ուղևորը մխրճվել էր կառքում, ցրտի դեմ ցանկել աչքերը։ Եվ Կոմիտասը ուզեց կանգնեցնել կառքը՝ գտած դրամապանակը պահել կուշտ դեմքով անցորդի աչքերի դիմաց և ասել. «Մսյո, դուք այս դրամապանակն եք որոնում, խնդրեմ, վերցրեք։ Ինչպե՞ս, ձե՞ռը չէ... Ոչինչ, վերցրեք, դրամապանակում տասը ֆրանկ կա, ածուխ կգնեք, ցուրտ է»։

Եվ մեկեն ծնվաած յդ ցանկությունը շնչավորեց մի հուշ, տասը տարվա տխուր մի հիշողություն։ 1896 թվականին էր, էլի ձմեռ, Բեռլինի բարձրագույն երաժշտանոցում ուսանելու առաջին ձմեռն էր... Բարերարի ուղարկած ամսական թոշակը վերջացել էր, սպասում էր հաջորդին ու՝ չկար։ Եվ դուրս էր եկել մի ծանոթից պարտք խնդրելու, բայց ինքնասիրությունը թույլ չէր տալիս բախել դուռը՝ հացի համար դրամ խնդրել, ու սոված չափչփում էր Բեռլինի փողոցները։ Հանկարծ ոտքերի մոտ նշմարեց կես մարկ, վերցրեց ու ավելի շվարեց՝ ի՞նչ անել, կես մարկով ոչ կարող ես պանդոկ մտնել, ոչ խանութ։

«Ես կես մարկանոց վիճակախաղի տոմս գնեցի, իսկ հաջորդ օրը շահեցի հարյուր մարկ,— հիշեց Կոմիտասը,— երկու օր նոթի-նոթի մտածեցի միայն ուտելու մասին, դրամի մասին, գտածս կես մարկով դարձա բախտ փորձող վաճառական և շահեցի հարյուր մարկ։ Բայց ես կարող էի կուշտ լինել (հարկ է, որ կուշտ լինեի) և այդ երկու օրը մարմնոք ապրելու փոխարեն, ապրեի հոգով, ինչի համար ծնվել եմ, ինչի համար ամենքն են ծնվում։ Ու ես...»։

Հետո նա հիշեց քաղցած ու կիսաքաղց անցկացրած էլի օրեր, Բեռլինում ուսանած տարիներից՝ ավելի շատ, և դրանք բոլորը համարեց ունայն և տխրեց, որ գալիք օրերից ոչ մեկը, գալիք բոլոր օրերը միա-

սին, էն փուչ օրերից ոչ մեկի պարապությունը լցնել չեն կարող։ Եվ չնայած այդ փուչ օրերի համար ինքը մեղք չունի, բայց երբ ականջներում էլի զնգաց Բեռլինի կոնսերվատորիայի պրոֆեսոր Շմիդտի խոսքերը՝ «Դուն, անպիտան, ինչ կվճարես, երբ ուտելու հա՞ց չունես։ Կարգելեմ քեզի մի պֆենինգ ինձի վճարելու այսուհետև»,— սառած դեմքը ամոթից տաքացավ։

«Իսկ ես այնուամենայնիվ վճարեցի նրան,— անվրդով շունչ քաշեց Կոմիտասը,— չեմ հասկանում, թե ինչո՞ւ են մարդիկ իրենց իրավունք տալիս ոտք դնելու ուրիշների զուտ անձնական աշխարհը,— վիրավորված մտածեց և զգաց, որ ներքին մի ձայն բողոքում է։— Պրոֆեսոր Շմիդտի մասին այդպես մտածելը անիրավություն է, նա բարի ու մարդասեր ծերունի էր, սիրում էր ինձ ու հետաքրքրվում ինձնով»։— Հանգրստացրեց իրեն, վանեց մեկեն հայտնված վիրավորանքը ու նայեց ժամացույցին, ժամից ավելի սպասում էր։

«Ուշացավ»,— ասաց և՝ այնպիսի տոնով, կարծես պատահական ու իրեն անծանոթ մեկի չէր սպասում, այլ բարեկամի, որի հետ նախապես պայմանավորվածություն ուներ հանդիպելու հենց այդտեղ՝ փողոցի շրջադարձում, հենց այդ ժամին, միայն թե, չգիտես, ուշանում է, չի գալիս... Բայց անպայման կգա, և ինքը պետք է սպասի, պարտավոր է։

«Գուցե գլխի էլ չէ, որ դրամապանակը կորցրել է։ Կիմանա, կգա, ցուրտ է, շուտ գար»։

Հետո աչքերում շողաց մի կարևոր միտք, և նա ուրախացավ, որ դրամապանակի տերը դեռ չի հայտնվել, լավ է, որ չի եկել, թե չէ արդեն ուշ կլիներ, շատ ուշ։ Եվ նա գրպանից հանեց հարյուր ֆրանկ, ճիշտ՝ հարյուր, շտապ բացեց դրամապանակը և հարյուր ֆրանկը ծրարեց դրամապանակի խորքում, տասը ֆրանկի տակ։ Ապա ժպտաց, ձեռքերը շփեց իրար, խոր շունչ քաշեց, հին ու ծանր պարտքերից ազատվողի պես հանգիստ. շնչից ու շնչի հետ հանկարծ հասկացավ, որ տասը տարի առաջ վիճակախաղով շահած հարյուր մարկը հոգու խորքում, իրենից էլ ծածուկ, պարտք է համարել։

«Ինչո՞ւ,— փորձեց հասկանալ,— ինչո՞ւ պարտք»։

«Որովհետև հարյուր մարդ այդ վիճակախաղում հուսախաբ եղավ, իսկ ես շահեցի, սեփականացրի հարյուր մարդու հարյուր մարկը»։— Մոգոնածի համար ժպտաց, զգաց, որ իսկական պատասխանը դարձյալ իրենից ծածուկ է, հոգու խորքում ննջում է, մի օր կհայտնվի, անսպասելի կհայտնվի ու կուրախացնի։

«Դրանք մեջս թուխս դրած իմ հավքերն են,— մտածեց մտքից ծրարված զգացմունքների մասին,— թող մնան, ձագ հանեն»։

Հետո ձեռքերը տաքացրեց շնչով, ետ ու առաջ նայեց մայթերի երկարությամբ և շարունակեց քայլել՝ փողոցի շրջադարձն ու ետ, շրջադարձն ու ետ...

«Ցուրտ է... Ուշացավ»։

Հիմա նա այնպես բծախնդիր չէր նայում անցորդներին, չէր որոնում դրամապանակի տիրոջը, երկժամյա ճամփապահումը ստեղծել էր պատրանք, թե ծանոթի է սպասում, որը եթե գա և ինքը չնկատի, կմոտենա էբարևի և կմեկնի և կմեկնի ձեռքը։

«Բա եղա՞վ, էդքան ուշանալ կլինի, մրսեցի»։

Հանկարծ սիրտը թպրտաց. դիմացից գալիս էր վտիտ մի մարդ՝ աշնանային հնոտի վերարկուի մեջ սեղմված։ Նրա հայացքը մոլոր էր, բայց ոչինչ չէր որոնում մայթերի վրա։

«Սա չէ,— որոշեց Կոմիտասը և ափսոսալու փոխարեն թաքուն ուրախություն ունեցավ ու կանգնեց՝ ինքը չի՞ ուզում, որ դրամապանակի տերը շուտ հայտնվի։ Չի՞ ուզում։ Ինչպե՞ս չէ, հենց հիմա թող գա, տեր կանգնի կորցրածին և ինքը թողնի գնա, ցուրտ է, Մարգարիտը սպասում է ախր...»։

Բայց կրծքի տակ դեռ ալիքվում էր մի տաքություն, տագնապն էր մարում՝ պահ առաջվա խեղճ ու կրակ մարդը, որը կարող էր դրամապանակի տերը լինել, անցավ, գնաց, տերը չէր՝ ու անցավ-գնաց... Եվ կրծքի տակ ալիքվում էր մի տաքություն՝ սրտադողն էր մարում։

Կոմիտասը ժպտաց իր ծածուկ զգացմանը...

«Մեջս թուխս դրված հավքեր ունիմ։— Մեկը աչք էր բացել, թպրտում էր։— Դուրս չեմ հանի... Իմ տաքությունն են, թող մնան... Ցուրտ է աշխարհը...»։

Եվ հոգու խորքում ծվարած զգացումը չուզեց մեկնել, մանրացնել, դարձնել անշապիկ բառ ու խոսք և բոբիկ-բոբիկ կանգնեցնել այդ ցուրտ մայթի վրա, իր կողքին։

Զմռան այդ օրը աշխարհում միլիոն ու մեկ մարդ հյուրընկալ է, միլիոն ու մեկ ճաշի հրավեր ունի (միլիոն ու մեկերորդը՝ ինքը Կոմիտասը), միլիոն ու մեկ մարդ համերգ ու թատրոնի տոմս է գնել, միլիոն ու մեկ մարդ աշխատում է, միլիոն ու մեկ մարդ մտածում, գլուխ է ջարդում, միլիոն ու մեկ մարդ մեռնում է, միլիոն ու մեկ մարդ ծնվում է... Զմռան այդ օր ու ժամին աշխարհում մի մարդ, մեկը, միայն մեկը, ձմրոնաշունչ փողոցում անծանոթի է սպասում— վերադարձնելու նրա կորուստը՝ ասաս ֆրանկ։ Հենց գար տերը, և ինքը դրամապանակը հանձներ նրան ու շարունակեր Մարգարիտենց տան ճամփեն, կդառնար միլիոն ու մեկերորդ ճաշի հրավիրվածը։

Եվ ինքը իր հետ դրամապանակի տիրոջ շուտ հայտնվելուն համաձայն չէր։

Զմռան այդ օրը աշխարհում միլիոն ու մեկը կողոպուտ էր անում, միլիոն ու մեկը կողոպտվում էր, միլիոն ու մեկ մարդ կորցրել էր դրամապանակը՝ մաշված ու նոր, լիք ու դատարկ, միլիոն մարդ դրամապանակ էր գտել, գրպանել ու գնացել էր իր բանին։

Զմռան այդ օր ու ժամին, աշխարհում մի մարդ, մեկը միայն ժամադիր էր կորած դրամապանակի տիրոջ հետ։ Դե թող շուտ գա, տեր կանգնի կորցրածին, երկար չորոնի, գլուխը չկոծի այդ փոքրիկ ու մեծ կորստի համար։

Իսկ ինքն իր հետ դրամատիրոջ շուտ գալուն համաձայն չէր։ Սպասումի ամեն մի րոպեն հպարտություն էր կաթել նրա հոգում և անխոստում և անպայման այդ ժամակոչության մեջ վեհություն կար՝ ցուրտ ու ձմեռ, օտար երկրում, մի ձախողակ մարդու ուրախացնելու համար ինքը մի ժամ կեցել է, երեք ժամ սպասել է... էլի կարող է սպասել...

Չէ՛, ոչ մեկի ճամփան էլ չի պահում, այլ բաց երկնքի տակ աղոթք է անում աշխարհի ձախողակ ու անօգնական մարդկանց բախտի համար, աղոթք է անում, և գանգատ է անում նրանց փոխարեն։ Եվ աղոթքը դեռ չի վերջացել, նրանց, այդ աշխատած և կարոտյալ մարդկանց գանգատն ու պահանջը շատ է, և ինքը երկար պետք է աղոթի նրանց բախտի համար...

Կոմիտասը նայեց աշնանային հնամաշ վերարկուի մեջ սեղմված մարդու ետևից և խղճաց նրան, որ դրամապանակի տերը չէր, և զգաց, որ կրծքի տակ դեռ տաք-տաք ալիքվում, մարմրում էր սրտաղողը. լավ է, որ տերը չէր։ Նա նորից ժպտաց իր գողտուկ զգացմանը ու էլի չփորձեց մեկնել։

Հետո փողոցը արձագանքեց սալարկի ու մետաղի կափկափոցին, ու երևաց փոքրաթիվ, ցածրիկ մի սայլակ։ Սայլակ քաշողը մարդ էր՝ պերկված ողնաշար ու պարանոցով, բաց օձիք ու շուրթերով, իսկ հայացքը կառչել էր սալարկից և թիկունքն ի վար ձգված պարանի պես ցնցվում էր։ Սայլակի վրա դաշնամուր կար, սայլակի կողքերից քայլում էին երկուսը, դեկտեմբերյան ցրտին վայել հագուստ-կապուստով տղամարդիկ, ձեռնոցավոր աջերով դաշնամուրի ապահովությունն հսկող։ Նրանց աչքերում սրտնեղություն կար և դա՝ սայլաքարշի ծանր ոտփոխումից։ Փողոցի սառցե կոշտուկներից սայլանիվները ոստոստում էին՝ դաշնամուրը ցնցվում էր, և ստեղների զնգոցը արծաթե անձրև էր մաղում։

«Մենակ քեզ հետ կարելի է զրույց անել էս աշխարհի ցավերի մասին,— դաշնամուրին շշնջաց Կոմիտասը,— մենակ քեզ հետ»,— կրկնեց լցված, և քայլերը նրան դաշնամուրի ետևից տարան։ Դաշնամուրից ան-

ջատվող հնչյունները սայլորդի շնչի պես անկանոն էին, նրա շնչի պես տաք։

«Դու ամեն օր էս էղպես նվագում,— մտածեց բեռնակրի մասին,— սա քո հորինած շարականն է, դու ուրիշը չունիս»։

Եվ ապա հիշեց.

«Իսկ ես ե՞րբ կունենամ դաշնամուր»։

Եվ հիշեց իր նվագարանը՝ հեռու հայրենի եզերքում, էջմիածնում թողած իր նվագարանը ու թվաց նրան, թե դաշնամուր ունենալու ցանկությունը դավաճանություն էր իր նվագարանի հանդեպ, և դաշնամուրը թողած ետ դառավ։

«Իմ ազնիվ, հավատարիմ նվագարանս, իմ անուշ սնդուկս,— շշնջաց նա և ավելացրեց,— ընկերս...»։

Հետո փափուկ մի տխրություն եկավ, փաթաթվեց նրան և դրանից ջերմացավ՝ այդ ցրտակեզ փողոցում, մեկեն հայտնված տխրությունը ուսերը ծռարող վերարկու էր։

«Ընկերս,— կրկնեց լսելի և մատները գրպանում ռիթմիկ շարժվեցին։ Նրանք նվագարանն էին շոշափում, ողջունում էին, նվագարանի հետ զրույց էին անում։

Հիմա, մի քանի ամիս էր, հեռու էր նրանից, է՛հ, քանի տարվա իր խաղընկերոջից։ Էղպես էր։ Դեմ-դիմաց նստած խոսակցում էին։ Եվ վիճում էին և խորհուրդներ շշնջում իրարու, հետո՝ մի խոսքի գալիս ու դառնում մի շունչ։ Եվ Կոմիտասը ոգևորված ելնում էր՝ որոնում մեկին, որ ներս բերեր, դարձներ ականջալուր՝ իր նվագարանի ավետիսին։ Եվ որոնում էր և չէր գտնում նրան՝ իր ու նվագարանի ոգևորությունը հասկացող մարդուն ու տուն էր դառնում, նստում նվագարանի կողքին, միասին լռում էին, երկար էին լռում։ Հետո Կոմիտասը մատները մոտեցնում էր նվագարանին և նորից ծայրը բացում զրույցի.

Սիրտս նման է էն փլած տներ...

Եվ նվագարանը հասկանում էր նրան ու արձագանքում.

Տո՛, լաճ, տնավեր...

Հիմա Փարիզ էր եկել ու պատմում էր ու իր «անուշ սնդուկի» տարիների զրույցը՝ Հայոց աշխարհի մասին, նրա մշուշված լեռների, այդ լեռնափեշերին խարխլված տների ու տնատերերի համառ ու հավատով աչքերից՝ թոնիրները լցված դեղին բոցերի մասին.

Եվ Փարիզը մատը խածնել էր. «Հայ երաժշտություն... նորություն... Հայտնագործություն...»։

Բեռնակիրն ու սայլակը արդեն չէին երևում, փողոցում մարել էր դաշնամուրի ծլնգոցը, բայց Կոմիտասի համար դեռ մնում էր և նա էլի հիշեց։

«Իսկ ես ե՞րբ կունենամ դաշնամուր... երաժիշտ եմ, 37 տարեկան ու դաշնամուր չունեմ»։

Չէ՛, դաշնամուր պետք էր, և ցանկանալը դավաճանություն չէր հին ու հավատարիմ նվագարանի հանդեպ։ Նրան ինքը չի օտարի, տանից չի հանի դուրս։ Նա կմնա, անկյունից կունկնդրի իր ու դաշնամուրի զրույցը։ Կլսի ու կժպտա լարերի դեղին ժպիտով։ Կլսի ու գուշակի պես կհաստատի իր ու դաշնամուրի ավետը։ Երբեմն նաև կմիջամտի, կօգնի, ախր, ինքն ու նվագարանը լավ են իրարու հասկանում, հին ընկերներ են։

«Եվ դեռ երկար կընկերակցենք... Մինչև դաշնամուր ունենամ, մինչև աշխատելու բոլոր հարմարություններն ունենամ, կյանքս կանցնի»։

Դեկտեմբերի կեսն էր։ Մրսած օր, և փարիզեցիները դուռ ու լուսամուտ կալել էին օրվա դեմ։ Թվում էր, թե պաղ երկնքի հետ, ամեն մեկի համար ոտատակից էր ծլլում ցուրտը, շինություններից, գոց դուռ ու լուսամուտներից և ծխնելույզների շրթերից՝ դեկտեմբերին անջատվող ծխի քուլաներից։ Հատուկենտ էին անցորդները, աչքերը կկոցած ցրտակեզ մայթերին, և Կոմիտասին ուշ դարձնող չկար։ Իսկ նա, աննահանջ, սպասում էր... Չորս ժամ է ետ ու առաջ էր անում, փողոցի շրջադարձն ու ետ, շրջադարձն ու ետ...

Չորս ժամ...

Եվ դրամապանակն էր մտահան արել, և ճամփապահի նպատակն ու հարկը։ Կար միայն կարոտյալ մեկի հետ հանդիպելու ցանկություն, կարոտյալ մի մարդու, որը ձմեռվա՝ այդ օրը աշխարհում ամենաշատը պետք է մրսած լիներ։ Թող դար, տեր դառնար այն աղոթքին, որ իր համար հայր սուրբն է արել երկրի պաղ գմբեթի տակ, աղոթել անարև առավոտից մինչև անարև արևպատոց։

Ու եկավ նա...

Դեռատի կին էր՝ այր մարդու բաճկոնով, այր մարդու ոտնամաններով, ճոթերը բզիկ գլխաշորով։

(Անակնկալ էր, չգիտես ինչու, մտքով չէր անցել, որ դրամապանակի տերը կարող էր կին լիներ)։

«Աշխարհում, բնության դեմ սուր վերցրածները շատ են,— նորից մտածեց Կոմիտասը— բնությունը սրան կին է երկնել, այր մարդու բեռ են բարձել ուսերին. կինը սպանում են, կնոջը ստիպում այրմարդ դառնալ»։

Դեռատի կնոջ աչքերում բողոք կար, և հույսը լացի պես կախվել էր

շուրթերից ու դողում էր։ Նա քայլում էր ցրտում ու անվստահ, և ոտքերը, հայացքի հետքով կամ ու կաց շարժվում էին. հայացքի հետ դողում, աչքթարթումի հետ կանգնում՝ ճչպտորում մի թիզ գետնին, մտածում աջ ու ձախ թեքվելու, ետ դառնալու մասին։

Կնոջ թափառիկ հայացքը հանդիպեց Կոմիտասին, հետո կծկվեց, կուչ եկավ ոտքերի մոտ՝ դարձավ գողտուկ հայացք, և նա կորածը փընտրել շարունակեց գողտուկ հայացքով ու հանկարծ զգաց, որ սալարկին կենտրոնացած հայացքը հիմա դրամապանակ չի որոնում, այլ ճիգով պահում է հենց նոր իրեն հանդիպած հայացքը և ինքը դրա իմաստն է ուզում հասկանալ։

«Աչքերը սև էին... Տխուր... Եվ...»։

Կինը լարված պահում էր Կոմիտասի դեմքը, աչքերը, հայացքը, կինը ձգտում էր աչքը չթարթել, չկորցնել այդ անծանոթ մարդու դեմքը, աչքերը, հայացքը։ Ախր, դրանք խոսք ունեին, և նրան թվաց, թե խոսքն իրեն էր ուղղված։

«Աչքերը սև էին, տխուր և տխրությունը... իմ համար էր»,— սիրտ արեց մտածել, և հուզմունքից շուրթերը դողացին, ու տաք դողը հոսեց ծնկներով։ Նա փորձեց բարձրացնել գլուխը՝ էլի նայել, բայց մի գթոտ ձեռք, որն էր Կոմիտասի հայացքը, գլխաշորի տակ մազերն էր շոյում, և կինը չուզեց շոշափել, ստուգել, պարզել չեղած տեղից մեկեն հայտնված գթասիրտ ձեռքը, որին նա, է՛հ, երբվանից սպասում էր...

Ապա կնոջ կախ զցած հայացքը առավ Կոմիտասի վերարկուի սև փեշերը, տաքատի սև փողկերը, սև ոտնամանները, որոնց վրա ասեղի պես փայլփլում էր ցուրտը, և դողը ծնկներից հասավ, շփոթեց ոտքերը։ Կնոջ քայլերը ավելի չկամ դարձան, շփոթ ու չկամ, ախր, էլի մի քանի քայլ՝ և ինքը կանցնի այդ անծանոթ մարդու մոտով, հետո այդ տաքուկ ձեռքի փոխարեն գլխաշորի տակ կսողոսկի ցուրտը, և ինքը կմնա ձմեռնաշունչ օրվա ու կորած դրամապանակի հետ։

— Մադմուազել...

Կինը ցնցվեց։ Խառնված ամեն քայլի հետ նա սպասել էր՝ ուր որ է կլսի այդ աչքերի ձայնը (ախր աչքերում իրեն ուղղված խոսք կար), շունչը պահած սպասել էր և Կոմիտասի ձայնի հետ ցնցվեց, դա շընչակտուր սպասման ճիչն էր։

— Մադմուազել, դուք որևէ բան կորցրե՞լ եք։

Աղջկա ոտք ու ծնկների դողը մարել էր, դարձել էր տաք թմրություն, կուզերը ծանրացել, իրար էին գալիս, և նա զգաց, որ հոգնած է, շատ է հոգնած և քնել է ուզում... Մի տաք անկյուն լիներ... Քնել է ուզում...

— Այո... դրամապանակս եմ կորցրել,— ասաց ցածրաձայն։

Կոմիտասը ձեռքը տարավ գրպանը։

— Ահավասիկ։ Վերցրեք,— տխուր ժպտաց,— իսկ ինչո՞ւ ուշացաք։— Աղջիկը թույլ մեկնեց ձեռքը, դրամապանակը առավ, գողացող մատներով փորձեց բացել։ Դա ակամա մղում էր, պահի հետ կապ չունեցող։ Կոմիտասը ափերի մեջ առավ նրա ձեռքերը։

— Բացել պետք չէ,— ասաց և, ինքն իր համար ավելացրեց,— ցուրտ է...

Հետո ձեռքերը գրպանեց, թեթև խոնարհում տրավ։

— Վաղը երեկոյան, հայկական եկեղեցում հայկական նվագահանդես կա։ Ձեզ հրավիրում եմ։ Անպատճառ եկեք։ Ցտեսություն։

Եվ նորեն գլուխ տվեց ու գնաց։

Աղջիկը մոլոր հայացքով հետևում էր նրան, ճկուն քայլերով հեռացող մարդուն, և մատները դրամապանակն էին շոշափում, որոնում այդ մարդու դեմքը, աչքերը, հայացքը, ձայնը։ Ու երբ Կոմիտասը ետ նայեց, ժպտաց, ձեռքով արեց, աղջկա շուրթերը դողացին։

Իսկ Կոմիտասը հեռանում էր՝ հոգում տխուր ու ծանր մի խաղաղություն։ Եվ հոգում նորեն անհասկանալի մի ալիք՝ զեռ, կտրակցում։ Ներսում էլի աչք էր բացել, թպրտում էր իրենից թաքնված մի զգացում, որի հեռու, հեռավոր արձագանքն էր միայն տեղ հասնում, այսքանը. Կոմիտասին թվում էր, թե այդ չորսժամյա սպասումը մի քիչ ուրիշ ձևի պետք է լիներ։ Ինչպե՞ս... Մի քիչ ուրիշ ձևի, ախր ինքը սպասում էր... այր մարդու, բայց կին հայտնվեց։

Նա նորից շրջվեց, նայեց, կինը դեռ կանգնած էր։ Նորեն թափահարեց ձեռքը, և նորեն ականջը թմբկահարեց թուխս դրած հավքերի թփռտուքը։

ՁԱՅՆԻԿԴ Ի ՀՈԳԻՍ...

Շոգենավը ժայռապորտից հավաքեց խարիսխները, ուղղություն առավ դեպի Պոլիս, ժայռ ու ափից այն կողմ թողնելով Ջիֆթե-Հաֆուզ զբոսավայրը՝ ծառ ու ջրավազաններով օծուն աղայանիստ մենատներ, ծառ ու ջրավազաններով ուղեկից ոլործուն արահետներ, պանդոկներ, չգիտես ինչ ու ինչ և... մի աքաղաղ։

Շոգենավով Պոլիս էր դառնում նաև Կոմիտասը, ամեն ատենվա պես՝ խմբով։ Խումբը մեծ էր. զբոսավայրում Կոմիտասին հանդիպել էին հեռավոր ծանոթներ, նաև՝ իրենց բախտը Պոլիսում նո՞ր-նո՞ր որոնող

հայորդիներ՝ տարբեր գավառ ու շեներից, տարբեր կածաններով հեռացած՝ թողած արտ ու այգի, դարբնոց ու բրուտանոց, ու հիմա Զիֆթե-Հաֆուզ զբոսավայրից Պոլիս էին դառնում։ Եվ նրանք՝ կորսված շարքը Պոլսում նոր-նո՛ր որոնողներն ու Կոմիտասի մյուս ճամփա-ընկերները ուշք ու մտքով դեռ զբոսավայրում տեսած աքաղաղի հետ էին.

— Զայնը ականջներուս մեջեն չի ելնի...

— Ըրը ուր գո՛ւյն, ուր դրվա՛ծք...— նորեկ մշեցին պոլսահայերենը դեռ չէր սերտել, և խոսքի մեջ շփոթմունք կար։

Եվ բերնե-բերան պատվաբանում էին պալատական աքաղաղի տեսքն ու կանչերը։

Կոմիտասը քաշվել էր կողմ, սուս էր, աղայատեր աքաղաղի գովքին անմասն, և նրա հայացքը հոգնած լողորդի պես ճապղում էր Բոսֆորի ջրերում։

Օրը գարնան օր էր. և շատ էր ջրերի աղմուկը։

«Նոր ծնված ջրեր են թափվել ծով,— մտածեց Կոմիտասը։— Առուները խաբել են սարերի նորածին ջրերին,— ավելացրեց,— առուները իրենց ոլորք գնացքի ու կանաչ ափունքի մեջ սարերի ջրերին մոլորել են՝ բերել-նետել են գետերը։— Եվ կարոտեց նրանց՝ սարերում ծնված ջրերին, և ցավեց,— ու գետերը կալել են նոցա, քշել ու թափել ծովը»։

Ալիքների մեջ նա որոնեց նորեկները և այդ փորձի համար ժպտաց. «Ծովերի ալիքները խառնածին են, ջրերը՝ ծեր... մի օրվա կյանք ունեցող սարերի ջրերը ծով հասնելուն պես ծերանում են... լեռներում ծնված ջրերի տարիքն ու գույնը խեղդվում են ծովում»։

Արևամուտի ժամն էր, ալիքները հյուսում ու քանդում էին իրենց խուճուճ ստվերները, ալիքները ծովի հատակն էին սուզում բուռ-բուռ կարմիր արև, և օրը մարում էր ծովում։ Շոգենավը սահում էր, ձգում ջրադրոշմ պոչը՝ զզզված, ալեկոծ ու աղմկոտ, և աղմուկի միջից Կոմիտասը զատում էր լեռներից քշված-բերված ջրերի բոզոքը։

«Նոքա իրենց լեռներն են ուզում,— մտածեց Կոմիտասը,— ու կգնան իրենց լեռները,— և ուրախացավ մեկեն հայտնված այդ մտքից,— պալան-պալան կլվեն ու ամպ դարձած կնստեն լեռներին»։

Նա ջերմ-ջերմ նայեց ծովում բաբախող արևին. լեռներից քշված ջրերի փրկիչը նա էր՝ բյուրապատկված, ալիքներին ձեռք մեկնած արևը։

«Եվ ծովում հանգչող արևից՝ հանգչող էս օրվանից մի բան ետ կգա,— միտքը շարունակեց,— գոլորշի դարձած մի օր այցի կգա որպես հիշողություն... Հարկավ, հիշողությունները գոլորշի են՝ անցած օրերից զատվող, որ տեղ հասնելուց դառնում են ամպ, թառում են մարդու ուսերին...»։

Պալատական աքաղաղի գովքը շարունակվում էր ավելի ոգեշունչ ու բարձրալուր, լսելի նաև Կոմիտասին։

— Խոսնակի կանչը ինձի երաժշտական պատկեր մը ներշնչած է, մտքիս մեջ կպատի, պետք է գրեմ,— երգահան Սինանյանը արմանք-զարմանք օրորեց դլուխը։

Ինչպես Ջիֆթե-Հաֆուզ զբոսավայրում աքաղաքը մտիկ անելու ատեն, Կոմիտասը նորից հիշեց իր հայրենի աքաղաղը և թեքվեց-նայեց Սինանյանին։

— Բանի մը պետք ունի՞ք, հայր սուրբ,— Սինանյանը պատրաստակամ շարժում արեց։

— Ո՛չ,— պատասխանեց Կոմիտասը, հետո էլի դարձավ դեպի ծովը և մտքում ասաց.

«Իմ սիրելի դժբախտ հայորդիներ, ուր է, որ դուք այսօր տեսնեիք ձեր հայրենի աքաղաղը... Էջմիածնի է՞ն աքաղաղը, որ իր քաղցր կանչերով հայրենի սիրուս հիմքը դրավ...»։

Եվ շոգենավի-դրոշմ ջրերի մեջ արևի փոխարեն թպրտացին հայրենի աքաղաղի կարմրկեկ թևերը, ու ձենձենոց ջրերի միջից այս անգամ անջատվեց՝ ականջին հասավ իր աքաղաղի ձայնը։

«Զայնիկդ ի հոգիս...»,— Կոմիտասը աչքերը փակեց ու ավելի իրական դարձավ իր աքաղաղը, իրական ու շոշափելի, ինչպես, է՞, երեսուն-երկու-երեսուներեք տարի առաջ, երբ ինքը Քոթահիայից նոր-նո՞ր Էջմիածին էր եկել ճեմարանում ուսանելու։

...Մայրենիի դաս էր... այն ժամանակ, այն օրն ինքը հայերեն հատուկենտ բառեր գիտեր միայն ու լարված հետևում էր ուսուցչի շուրթ ու շարժումներին, լարված լսում էր, ջանում կռահել ուսուցչի ասածը։ Եվ նրա խոսքերից կռահած բառերը ջոկջոկում-հոլովում էր մտքում։ Աշնան օր էր, և ճեմարանի բակում ծիրանենիները ճոճում էին իրենց դեղին մեղեդին։ Ճեմարանի բակում խաղաղ լռություն էր, և մի աքաղաղ կանչեց՝ խորացրեց լռությունը... անուշ կանչ էր, ու ինքը թեքվեց՝ լուսամուտից նայեց դուրս։ Խոսնակը կանգնած էր ծիրանենու տակ, վիզը թեք, աչքերը գոց և իր կանչի արձագանքն էր լսում։ Երփնազարդ էին փետուրները, կարմիր ու կապույտով, ոտքերը ցեխոտ էին, կատարի վրա չորացած-մնացած արյուն կար։ Խոսնակը լսե՞ց, լսեց իր կանչի արձագանքը, հետո դունդունաց, թախթփվեց. փետուրների միջից փոշի ելավ՝ կոցեց ու նայեց պատուհանին։ Ինքը ժպտաց նրան...

...— Սա աքաղաղը միստիկ առաքելություն մը ուներ, և կմտածեմ, թե Հուսեին բեկի հաջողությունները, ճշմարիտ, աքաղաղին հետ կապ ունին։— Կոմիտասի ճամփաընկերները շուրթ-շրթից խլում էին Ջիֆթե-

Հաֆուզի աքաղաղի գովքը, և զբոսավայրի այդ աքլորը արարչանում էր։

...Կոմիտասը ջրերի մեջ ժպտաց իր աքաղաղին, ժպտաց երեսուն-երկու-երեսուներեք տարի առաջվա Սողոմոնի պես և էն օրվա պես շշընջաց,— «Դու իմ խոսնա՞կն ես...— ու հաճույքամբ պարուրվեց էն օրվա հուշով,— խոսնակը աչքեց լուսամուտին, աչքեց ինձ, նորեն գդգդաց ու կանչեց. զրույց արեց-բան ասաց ինձ...»։— Եվ ինքը աքաղաղի պատմածը հասկացավ, մայրենի ուսուցչի էդ օրվա պատմությունից ավելի լավ աքաղաղի կանչը հասկացավ։ Աքաղաղի խոսքը աշնան օրվա մասին էր. կանչի մեջ օրվա փափկությունը կար՝ ծիրանենու աշնանային մեղեդին, արևի ոսկե զնգոցը, վանքի մամռոտ հիմնաքարերի զովությունը, ճեմարանի բակից դուրս ցաքուցրիվ տների ու փողոցների փոշոտ լռությունը և առուների սուս սվսվոցը, և տներից անդին կավե ցանկապատերին փայլփլող հարդերի դեղին բզզոցը, և ցանկապատված որթերի տաքուտաք գվոցը, և ցանկապատերից այն կողմ ճաքճքված ղռերի հևացող շունչը... Կանչի մեջ այդ ամենը կար, ինքը լսեց՝ կար։ Աքաղաղը կանչեց, նորեն թեքեց գլուխը, աչքերը փակ ականջ պահեց իր կանչի արձագանքին, հետո ծիրանենուց իջավ մի դեղին տերև՝ աքաղաղը վրա վազեց, կոցեց տերևը, էլի կոցեց և խաբվելու համար ծուռ նայեց ծառին ու բոզոք-զունզունաց։ Ինքը արդեն ուսուցչին չէր լսում. աչքի պոչով հետևում էր խոսնակին և չէր ուզում, որ նա թողնի-հեռանա։ Եվ ընդմիջմանը ելավ ու ոտքը շեմից դուրս դրեց թե չէ՝ զգաց աշնան այդ օրվա փափկությունը՝ ճիշտ ու ճիշտ խոսնակի ասածն էր։ Եվ ուրախացավ, որ աքաղաղն ամեն ինչ ճիշտ էր պատմել, և ուրախացավ, որ ինքը ճիշտ էր հասկացել նրան... մոտ վազեց, աքաղաղը խուսափեց, ապա դարձավ կչկչաց,— «Ի՞նչ ես ուզում»,— և ինքը ժպտաց նրան,— «Դու իմ խոսնա՞կն ես»։ Աքաղաղը տեսավ իր ժպիտը, գլուխը թեքեց, նայեց՝ ստուգեց տեսածը և հաշտ-հաշտ կոցեց գետինը,— «Հա՜, ես քո խոսնակն եմ...»։

...— Աքաղաղի փետուրներուն վրա գույներ կային, որ ես տեսած չէի։ Ուրիշ տեղ մը բնավ տեսած չեմ,— շշնջեց նկարիչ Գալֆայանը,— ես նորեն պիտի Չիֆթե-Հաֆուզ երթամ աքաղաղը տեսնելու, անոր փետուրներեն կտավներուս համար գույներ պետք է առնեմ։

— Ես անպատճառ կընկերակցեմ քեզի,— ցանկացող եղավ։

— Ես ալ կուգամ...

Պալատական աքաղաղին նորից և էլի ու էլի ցանկացողները շատ էին։

Կոմիտասը վիրավորված նայեց զբոսավայրի աքլորը ներբողող ազգակիցներին, և հայացքը նորից սկսեց թափառել ծով-հորիզոնում։

«Ո՞ւր է, ո՞ւր է հայրենի հող ու ջրեն սնված իմ աքաղաղը,— հուզված մտածեց նա,— պիտի տեսնե՞մ նրան, պիտի լսե՞մ դարձյալ, ա՞խ իմ հայրենի աքաղաղս...— Օրն ի բուն էջմիածնի փողոցներում դեգերում էր՝ փոշոտ էր, ցեխոտ ոտքերով, կատարը միշտ վիրավոր, բայց գլուխը բարձր, քիչ թեք պահած և արծվային կոպկախ հայացքով։ Ամեն տեղ տեսնում էր նրան, էջմիածնի բոլոր փողոցներում... Առուների ափերը քշփորում էր, մի հատիկի համար պաշպշում գետինը, կում ջրի համար երկնքից գոհություն առնում։ Տեսար, մեկեն սևեռվում էր, ակնապիշ նայում առվում բողբոջած ջրերին, ապա ականջ էր պահում ջրերի վրա, և կիսախուփ կոպերը ճպճպում էին.

«Շշուկներ էր հավաքում առվից»,— ժպտաց Կոմիտասը։

Եվ ծափ էր տալիս իր գտածի համար, և կանգնում-կանչում՝ իր զգացածը պատմում առվի մասին։ Թաղի շար երեխաները հենց կանչի ժամանակ էին քար նետում, ու կիսատ էր մնում նրա երգը։ Նա կիչկիչ-բողոքելով փախչում էր, թաքնվում իմ ցանկապատի ետևում, շարունակում իր փնտռտուքը, ծիկլատում էր և, հալածանքը մոռացած, հայտնվում ցանկապատին և նորեն կանչում։

«Ամեն տեղից կանչում էր իմ աքաղաղը... անծուխ երդիկների վրա նորա կանչը ծուխ էր դառնում, փլատակներին՝ շունչ, շորացած ծառերին՝ կանաչ, ցամաքած առուներին՝ ջուր...»։

Կոմիտասի ականջները ջեռ-ջեռ ղողանջում էին. նա երբեք այդքան չէր կարոտել իր խոսնակի կանչին։

«Ո՞ւր է, ո՞ւր է իմ հայրենի աքաղաղս... հիմա ո՞ր ավերակներին է ձայն տալիս»։

Է՜, ճեմարանային տարիների-իր աքաղաղը ապրում էր, միայն թե ինքը հեռո՜ւ, հեռու էր նրանից։

«Մեկ էլ կտեսնեմ, կլսե՞մ նորա կանչերը...»։— Ցեխապատ ծանրացած ոտքերով թրփ... թրփ... թրփ... գալիս էր, կամուկաց մտնում վանքի բակը։ Ցեխի հետ ոտքերին չուլ ու թել էր շուլալված լինում, կանաչ, շորացած մի շյուղ, տերև... դժգոհ կոցում՝ ազատվում էր տերև ու շյուղից, բայց թնջուկներից պրծում չկար։ Եվ չուլ ու թել քարշ տալով դանդաղ առաջանում էր՝ աջ ու ահյակ նայելով, կասկածելով, չէ՞ որ նրան քար նետողները շատ էին։

Կոմիտասը հիշեց Ջիֆթե-Հաֆուզի փայլ ու հոտով օծուն աքաղաղի վստահ շարժմունքը։ Նա իր աղա տիրոջ հետքով քայլում էր գոռոզ ու համարձակ, գիտեր, հասկացել էր, որ աղա տեր ունի, իրեն քար գցող չկա։

«Տիրոջից փայլ ու կանչ, երեսառած աքլոր էր»,— քամահրանքով մտածեց Կոմիտասը։

«Իսկ իմ աքաղաղի տերը ո՞վ էր... էդպես էլ չիմացա՝ ունե՞ր, թե ոչ... Եվ ահով ու դանդաղով էր վանքի բակը մտնում»։— Ինքը մի կտոր հաց ճարած մոտ էր վազում՝ աքաղաղը կանգնում-կչկչում էր, ծիկլատում, հետո ծանոթ-ծանոթ բացուխփում թևերը, պատրաստվում հափկափելու հացի փշուրները։ Եվ ուրախ ու մտերիմ պտույտներ էր անում իր շուրջբոլորը, մոտիկանում, թևերը բացում-քսմսվում իր տաբատի փողքերին, զունդունում։

«Գոհություն էր հայտնում ինձ»,— ժպտաց Կոմիտասը։

Ապա, սիրտ առած՝ թրփ, թրփ, թրփ... շրջում էր վանքի բակում, կանգնում, թեքում գլուխը, բբում վանքը, աչքերը ճպճպում, մոտենում՝ ճպլկտում էր վանքն ի վեր, շանգոտում վանքի պատը, ու թևերից թափ տալիս պարտությունը։ Հետո կտցում էր վանքի հիմնաքարերի մամուռը, համտես անում, կտցում և աչք ու կտուց պահում քարի վրա, և հասկանում, որ մամուռը ուտելու չէ, ուտելու չէ, բայց դուրալի բան է։ Եվ թևքերով շոյում էր մամոռտ քարերը, և դառնում-կանչում՝ վանքի ու հիմնաքարերի զովությունը հանում-փարում էր գմբեթի խաչին։

Մոմ ալեկոծ մտոք էր. արեգակը՝ շառագույն մի աքաղաղ, թպրտում էր ջրերի վրա, բոսոր փնտուրները շաղ էին եկել ալիքների ծալքերում, և Կոմիտասի հայացքը դադրած մի լողորդ՝ Բոսֆորի ջրերից աքաղաղի կարմիր կանչերն էր ժողվում։

«Ձայնիկդ ի՞նչես...»,— Կոմիտասը մտքում աքաղաղը կրծքին սեղմեց...

...— Մեկել անգամ ատ աքաղաղին պետք է ձեռք տամ, ձեռքս անպատճառ պիտի դիպցնեմ,— պալատական աքաղաղի դյութանքը Կոմիտասի ուղեկիցներից շատերին գլխահան էր արել, դարձրել երազող։

— Իսկ Հուսեին բեկը իրավունք կտա՞։

— Իրավունք կխնդրեմ ու ձեռք կտամ։

Կոմիտասը ակն ածեց խոսողին, ծանր քայլերով մոտ գնաց, մորմոք նայեց պալատական մի աքաղաղով այդպես ոգևորված իր հայրենակիցներին և ասաց.

— Ափսոս, որ ձեր հոգվո ականջները տակավին օտարոտի կանչերով ձեզ կոգևորեն...

ՁԱՅՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ...

Ղալաթիոն Պոլսո հայաշատ թաղամասն էր, թաղի շենք ու շինություններին ստվեր ձգողը՝ սուրբ Լուսավորիչը։ Կանաչ չէր բռնում Լուսավորչի բակում. վանքը զանգ զարկող ու խունկ ծխող ուներ, մոմ ու մատաղ խոստացող աղոթավորներ ու բակում հայոց ազգային Կենտրոնական վարժարանն էր՝ ելումուտ անող ոտք ու մտոք անհանգիստ պատանիք։

Էլի աշուն էր. վարժարանի սաները վերադարձել էին ամառային արձակուրդներից, Հայաստան աշխարհի բոլոր կողմերից եկել՝ վանքի բակը օծել հայոց ճամփաների փոշով, Ղալաթիոյի փողոցները լցրել ձայն ու ոտնաձայներով՝ արձագանքներով իրենց սար ու ձորերի։ Սեպտեմբերն էր՝ նոր էին եկել դեմքերին առած իրենց շեներից գույներ, աչք ու գանջներում՝ շշուկներ։

Եվ հիմա, 1912 թվականի աշնան այդ առավոտ, վարժարանի բակում ծաղկում էր նորեկ մի ուրախություն.

— Կոմիտաս վարդապետը մեզի երգեցողության դասեր պիտի տա։

— Հայր Կոմիտասը այսօր քաղցր ձայն ունեցողները պետք է ջոկե երգչախմբին համար։

— Կոմիտաս վարդապետը երաժշտանոց հիմնելու միտք ունի և այսօրվան ընտրած ձայնեղները երաժշտանոցին ուսանողներ ալ պետք է ըլլան։

— Հայր Կոմիտասը...

Եվ աղոթքի պես շուրթից շուրթ անցնող անունն էր սուրբ, և վարժարանի սաներից շատերը նրան չէին տեսել, ու մեծ էր անհամբերությունը։ Բայց դեռ մի դաս էլ պետք է առնեին, հետո նոր հավաքվեին վարժարանի դահլիճում՝ հայր սուրբին ի տես։

...Եվ եկավ հայր սուրբը։ Վարժարանի տնօրեն Նալբանդյանի ուղեկցությամբ ներս մտավ և դահլիճն ու ողջ ուսանողները մեկեն առավ աչքերի մեջ։ Ամեն մեկին թվաց, թե հայր սուրբը իրեն տեսավ, հենց իրեն նայեց ու տեսավ։ Իրանը կիպ-կալող ու երկարափեշ սքեմը գոց շուրթերի պես անժպիտ ու լուռ էր, իսկ սքեմի օձիքի ճերմակ երիզը հայացքի պես լուսանշույլ՝ սևը հերքող։

— Ահա ազգային Կենտրոնական վարժարանի ուսանողությունը,— մատնացույց արավ պարոն Նալբանդյանը, մի պահ լռեց և ուսանողներին նայելով ավելացրեց,— ահա մեր Կոմիտասը, մեր ազգին փառքը։

Կոմիտասը կողքանց ժպտաց նրան և թեքվեց, շշնջաց.

— Պարոն Նալբանդյան, Ձեր ներկայությունը գուցե կաշկանդի ուսա-

նողներում։ Կուզեմ մենակ մնալ նրանց հետ։— Եվ վարժարանի տնօրենը դուրս եկավ։

Կոմիտասը շեն նայեց ուսանողներին, երկար նայեց և ամենքը խընդակից դարձան նրան ու ամեն մեկը հայը սուրբին մոտենալու՝ աչը համբուրելու ցանկություն ունեցավ։ Բայց միայն ուրախ խլրտում, խայտում էին։

«Հայոց աշխարհի չորեք կողմերից մարդ կա հոս»,— ուրախ մտածեց Կոմիտասը։ Կար, և ամեն մեկը իր աշխարհի հորիզոնն ուներ կոպերի տակ և ամեն մեկի ձայնի մեջ՝ իր աշխարհի շշուկները կային։

«Եվ թող կամենա աստված, որ ամեն գավառից մեկը, գոնե մեկը ձայնեղ լինի, ու ես երգչախումբս հայոց աշխարհի բոլոր կողմերից ձայն ունենամ»,— ցանկացավ Կոմիտասը։

Նա հայոց աշխարհի դերվիշն էր. թափառել էր կածան ու ճամփեքով՝ անցել գավառից գավառ, շենից շեն. ժողվել երգեր, «Ապրեմ-չապրեմի» պես պահել ափի մեջ ու գուշակել նրանց՝ երգերի բախտը։ Ու ամեն երգի «ապրուկն» էր գուշակել և դա երգատեր սար ու ձորերի, երգատեր շեն ու շինականների շունչն էր եղել, ամեն երգի «չապրուկն» էր զատել և դա երգատեր սար ու ձորերի, երգատեր շեն ու շինականների դարավոր անտիրության լալինքն էր եղել ու օտարատիրող դրոշմը։ Նա հայոց աշխարհի ձայնահավաք դերվիշն էր. հայ շեն ու գավառներից ժողվել էր ձայներ ու գուշակել, «Հայոց աշխարհի բոլոր հնչյուններն ու երանգները պարունակող ձայն քչերը ունեին, շատ քչերը... Ձայն ամենայն ազգի պիտի հնչեցնել խմբովին...»։— Եվ հիմա հասել էր Պոլիս, մտել ազգային Կենտրոնական վարժարան՝ խմբելու ձայն ամենայն հայոց։

...Կոմիտասը շեն նայում էր ուսանողներին, զրուցում անքաղ և խոսքը գլխելու հանգով ասաց.

— Հարկավ, երգչախումբ կազմելուն դեմ չեք։ Եվ ձեզ շատ չեմ նեղացնի, ամեն մեկդ մեկ անգամ «ֆա՞» պետք է ասեք։ Ա՛յ, էսպես...

Նա թեթև մատնահարեց ձեռքն առած կամերտոնը ու ականջի մոտ պահելով ձայնեց՝ «ֆա՞...»։ Հետո մոտեցավ՝ լսեց առաջին ուսանողին։

— Հապա՝ նորեն,— առաջարկեց։

— Ֆա՞...— կրկնեց տղան, և Կոմիտասը գլուխշարժումով հաստատեց մտքինը՝

— Տրապիզոնցու լաճ ես,— ասաց։

Պատանին տրապիզոնցի էր, և ուսանողները խանդոտ մտածեցին, թե հայը սուրբն ու տրապիզոնցի իրենց ընկերոջ հայրը ծանոթներ են։

Կոմիտասը անցավ մյուսին.

— Հապա, մանչ։

— Ֆա՜...

Եվ տղայի պռատ այդ շնչից նրա ականջների մոտ, ուրտից ուր, զրնգաց մի հորիզոն, գետնից երկինք ու ծովեն երկինք թավալվող իր մշուշով։ Եվ մշուշը մշուշ չէր, այլ՝ շշուկների հալոցք, և Կոմիտասը գուշակեց շիկացած այդ շշուկների երկիրն ու ժպտաց։ Իսկ պատանին անլուր էր, որ բերան բացելու հետ վարժարանի դահլիճն ու հայր սուրբի լսելիքը լցրել է Փր աշխարհի հնչյուններով, նրա համար ձայնը իր ձայնն էր, միայն՝ իր, հատկապես՝ իր... Եվ ձայնում եղած-չեղածին նա այնքան էր անլուր ու միամիտ, որքան է՞ն լուսնկա գիշերին, երբ ծնողները երկնել են իրեն, որքան է՞ն առավոտին, երբ աչք է բացել և շուրթերի վրա մեկ էլ... ծլել է «Մարեն», մկրտված՝ Վան աշխարհից իր ապուպապերի ժողված շնչով ու գույներով... Եվ նա ձայնեց իր «ֆան» և՛ ահով, և հույսով Կոմիտասին նայեց. հայր սուրբը հավանե՞ց իր ձայնը։

Կոմիտասը շոյեց նրա մազերը։

— Տղա, վանեցի՞ ես,— ուրախ ասաց։

Ուսանողները զարմացած իրար նայեցին. ուրեմն հայր սուրբը տրապիզոնցի իրենց ընկերոջը չէ՞ր ճանաչում, նրա հոր ծանոթը չէ՞ր... ձայնի՞ց որոշեց։ Եվ սրան՝ վանեցի Արմենակին, իմացավ ձայնի՞ց...

— Դո՞ւ, մանչս,— Կոմիտասը ձեռքը գրեց հաջորդի ուսին։ Տղան շփոթված էր և կանգնելու փոխարեն կուչ եկավ։ Կոմիտասը ծիծաղեց և հիշեց վիպերգը՝

Իր ձեռ տվեց վեր Սպիտակ ձիու մեջքին.—
Սպիտակ ձին փոր էտու գետին։
Ցհան ասաց.— Սպիտակ ձի,
Ե՞րբ տի տանես ինձ, հասցնես Դավթի կովին։— Եվ...

վիպերգի տողով կատակեց աղայի հետ։

— Տի տանե՞ս ինձ հասցնես Դավթի կովին... Դե քեզ տեսնիմ։ Տղան շիկնած ոտքի ելավ՝

— Ֆա՜...

Կոմիտասը, հայացքը թեք՝ առաստաղին, ականջ պահեց ու լսելոք տեսավ էլի մի աշխարհ... Տարոն աշխարհն էր։

— Արմենակ Շահմուրադյանի մասին լսե՞լ ես,— հարցրեց,— քո հայրենակիցն է... ճոխ երգիչ է,— ավելացրեց գուրգուրանքով։

Ուսանողները շփոթվել էին, մի տեսակ վախվորած ու կտրակցոն էին նայում իրար, տագնապ ու անհամբերություն կար նրանց խորտոցի մեջ։ Մտքներում ասում-կրկնում էին իրենց «ֆան», ավելի համարձակները գողտուկ բերան էին բացում՝ շշնջում ֆա՜ ու ամեն մեկին թվում էր,

թե առաջին անգամ է ականջն ընկնում իր ձայնը, առաջին անգամ է լսում, ու զարմանում էին իրենցից անջատվող անծանոթ ձայնի վրա։

Իսկ Կոմիտասը չէր նկատում ուսանողների շփոթմունքը, հաջորդակի «ֆաերի» հետ նրա կոպերի տակ ծավալվում ու ծալվում էին հայոց աշխարհի գավառ-հորիզոնները, պոնկե-պոնկ՝ շշուկների ալիքավոր մշուշով, և ականջներում խոխոջում ու մարում էին հորիզոնների հանգվույն շշուկները։

— Կրկնի՛ր, տղա,— նա լայն ժպտաց. պատանու կոշտ ու փլոշտ ձայնի հետ հիշել էր սասունցի իր ծանոթ Պետոյին, տարիներ անց վարժարանի դահլիճում՝ պատանու ձայնի մեջ նորեն հանդիպել էր նրան, սասունցի Պետոյին, և շուտ բաժանվել չէր ուզում։

«Պետոյի ձայնի մեջ սարերից փրթած քարի արձագանք կար»,— Կոմիտասը ժպտաց իր Պետոյին, և տղան ժպիտից սիրտ առած կրկին ազմկեց.

— Ֆա՜...

— Դու ծռերի՞ց ես,— պատանու թիկունքին թփթփացրեց Կոմիտասը,— ծուռ սասունցի ես։

Եվ մտքում ցավեց. «Ձայն չունի։ Ափսոս... երգչախմբիս մեջ էս ծռերից մեկն ունենալն օգուտ է, պետք է. Սասունի երանգները ամենալավը սասունցու շնչով կդողանցե»։

— Հապա, մանչս,— Կոմիտասը ձեռքը դրեց հաջորդի ուսին։

— ...

— Ա՜, դու Շիրակ աշխարհից ես։

...Եվ մեկիկ-մեկիկ ձայնել տվավ ամենքին, ամեն մեկի շնչից գուշակեց նրա աշխարհն ու լսեց այդ աշխարհի շշուկները։ Նա հայոց աշխարհի բոլոր կողմերից երգչախմբի համար ձայներ ժողովեց՝ և՛ Տարոն աշխարհից, և՛ Վանից, և՛ Շիրակ ու Գողթան աշխարհներից, և... նորեն ցավեց Սասունից բացակա ձայնի համար ու մտքում որոշեց.

— «Ձայնեղ մի ծուռ կճարեմ»։

Հետո դադրած կանգնեց, հայացքով լուռ ու երկար համբուրեց դահլիճում ծվարած «Հայոց աշխարհը», մտքում գուրգուրեց. «Աշխարհիս չորեք կողմերեն երգչախմբումս ձայն ունիմ. հայ ձայն հնչեցնել կարելի է ու... երաժշտանոց հիմնել»,— և դարձավ ուսանողներին մեկնեց իր օրհնանք-ուրախությունը.

— Ապրեք, որդիք, դուք ամենքդ ձեզ նման եք... ձեր հող ու ջրի, ձեր ցեղի հիշատակներն ունիք, ձեր աշխարհների երկինքն ու շունչը։

Եվ սքեմի օձիքը բռլորող ճերմակը ցոլացներով ելավ գուրս։

Տ Ա Ր Ե Մ Ո Ւ Տ Ի Ն

(Անավարտ վեպ)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

— Երգիր, մա՛։

Ես գրքեր եմ թափթփել սեղանին, ձայնագրիչը տեղավորել գրքերի թիկունքին, միկրոֆոնը հարմարեցրել և սպասում եմ, որ մայրս երգի։ Եվ նա չպետք է իմանա, որ ձայնագրում եմ։ Ճշմարիտն ասած, տետր ու գրքերի թաքստոցն էլ պետք չէ, եթե չորսամյա աղջիկս՝ Ծովինարը, մորս անվանակիր, եթե հորս անվանակիր եղբորս չորսամյա տղան՝ Օհանը, չմատնի, մայրս որտեղի՞ց իմանա։

— Էդ ինչ պստիկ ու խորոտիկ բան է,— նկատում է մայրս։

— Այո, բայց դու երգիր, մա՛, երգիր։

— Խևիկ, աստված վկա, ձեն չի մնացե... Շունչ չունիմ։— Մայրս նստած է իմիջիայլոց, գլուխն ուսն ի թեք, և շեղ հայացքը մոխրամանին և մատներով խաղում է մոխրամանի հետ, մոխրամանի փոշու հետ։ (Երբևէ ես հարկ համարեցի դիտողություն անել, և մայրս պատասխանեց, մաքուր փոշի է, գառնուկ, իմ մատներն, էս կոշտ ու փլոշտ մատներն հող ու փոշու մեջ չե՞ն ծերացել... Մաքուր փոշի է)։ Մայրս նստած է իմիջիայլոց, հա-հա ոտքի պետք է ելնի, առիթ է որոնում և կողքանց նայում է բարկ վառարանի մոտ նստած հորս։— Չվառվի՞։

Հայրս մոտիկ է վառարանին, իսկ վառարանը՝ շիկացած կող ու կըշտով։ Դեկտեմբերյան սառը օդը ծխնելույզից խուժել է, բորբոքել... Իսկ հայրս վառարանից ետ չի քաշվում։ Նստած է ձեռնափայտը ոտքերի արանքում, թևերը ծնկներին ծալած, հակված ծնկներին, գլխաբաց է. մեկ հատիկ մազ չի պակասել, և մի հատիկ սև չկա՝ ճերմակ ու մաքուր, կարճ խուզած, գեղեցիկ, ճերմակ։ Հայրս հարյուրի սահմաններում է,— ճիշտ տարեթիվը ո՞վ գիտի. Լորիս Մելիքովի անունը օրորոցում է ընկել ականջը, և ահա էլի տարեմուտ է, դեկտեմբերի 31-ն է, մի քանի ժամ հետո աչքիդ մեջ խցկված, թերթերունքներդ ի կախ, ժամանակից մի

մսխալ կտրվելու է ու խաղվելու թիկունքիդ, և՝ Նոր տարի, Նոր տարեթիվ... Բայց դա ի՞նչ կապ ունի հորս հետ, հին ու նոր օրեր իրար խառնած, ժամանակի մեջ ճոճանակի պես տարուբեր, իր տեղն ու տարիքը կորցրած հորս Նոր տարի, Նոր տարեթիվ ի՞նչ կապ ունի։

— Երգիր, մա՛։— Ես կամակորության հասնող համառ եմ. միևնույնն է, մայրս պետք է երգի, պետք է երգի։ Ձերգեց՝ հարցեր կտամ (մայրս սիրում է, որ հարցեր են տալիս, իր խոսքն են ուզում), հարցեր կտամ-կպատասխանի, հանդարտ, սկզբում՝ իմիջիայլոց, հետո կխոսի տաք, լցված ու հուզված, անցած բաներ կհիշի՝ հրիի՜-ախ, կկանչի երգեցիկ և կսկսի երգել։ Կերգի մայրս, կերգի, բայց... մայրս ճիշտ է. արդեն շունչ չունի, առաջվա անուշ ու զուլալ ձայնը ո՞ւր է... Ձայնագրելու համար շատ եմ ուշացել, և ինչ հարց տամ մորս... Եվ նայում եմ պատուհանից դուրս։

«Մարութը չեկավ»։— Օղբայրս գնացել է տոնածառ բերելու։— «Միշտ ուշացել ենք, միշտ ուշանում ենք»։— Ես Երևանից եմ եկել՝ կնոջս ու երեխաներիս հետ, եղբայրս՝ Լենինականից կնոջ ու երեխաների հետ, ես մտածել եմ, թե Մարութը տոնածառ կբերի, Մարութը մտածել է, թե ես կբերեմ, և ահա՝ չունենք։ Ես Երևանից, եղբայրս Լենինականից շնորհ ենք արել մեր ծնողների հետ Նոր տարին դիմավորելու։ «Ուշացումը շղթայական ռեակցիա է, ուշացումը ուշացում է ծնում»։— Ձմեռն ուշացել է, դեկտեմբերի 31-ն է, բայց ձյուն չկա,— ձմեռն ուշացել է ու շարունակվել է գարնան մեջ, և գարունն է ուշանալու։ Ձյուն չկա՝ ոչ մեր դռանը, ոչ պատերի տակ, ոչ գյուղից դուրս, բլուր-բլրակներին, իսկ հորիզոնը պռատ է... Արարատն ու Հայոց լեռնապարը գորշ ամպերի տակ են, գետինը գորշ ու սառած, սառնությունից ճաքճքված, և ճաքերի մեջ՝ ցրտի երակները, սև կտրիչներ՝ ճաքերի մեջ և ճաքերի շրթին խլվլացող ոլորվող։ Եվ գորշ փսորված ամպերից սառնություն մաղող երկնքի և սև կտրիչներով գետնի արանքում՝ մեր ծխնելուղի մեջքակոտոր ծուխը։

Աղջիկս՝ Թրխկ-Թրխկ-Թրխկ աստիճաններով բարձրանում է,— երբ աստիճանները ամենօրյա ու մտերմիկ չեն, երեխաները ավելի պինդ են խփում Թրխկ-Թրխկ, բարձրանում է, բացում դուռը և խռոված նայում։

— Տոնածառ, հայրիկ,— պահանջում է խռովկան ու մոթոշ։

— Կլինի, ձգուկ, հորեղբայր Մարութը գնացել է։ Դու վար իջիր, խանգարում ես։

— Ի՞նչ եք անում,— քշում-կանգնում է դիմացս,— քո մամայի հե՞տ ես խոսում։

— Իմ մայրը քո ի՞նչն է։— Ծովինար Թոռնուհին իր անվանակիր տատի ձեռքից ե՞րբ է ձու ու կարագով հաց առել, պնդերես ու թաքուն,

ե՞րբ է քանդել տատի գրպանները, ե՞րբ է լացել ու կռվով իր անկողնուց փախել-տափ եկել տատի ծոցում... Այս տարօրինակ զգեստներով՝ ծալ-ծալ փեշերով ու ծոպավոր գլխաշորով տատը հայրիկի մաման է, որը իր տատն է։

— Քո մաման իմ տատին է։— Սա անգիր արած խոսք է. սովորել է Երևանում, մորս լուսանկարի առջև կանգնած, հարցական, ժպտուն և կաշկանդված հայացքը լուսանկարին։ Եվ ահա կրկնում է նույն հայացքը մորս, նույն հարցական, ժպտուն ու կաշկանդված հայացքը մորս։

— Դե գնա տատի մոտ, թող քեզ սիրի։

— Էս ի՞նչ է... Ասե՞մ ինչ է՝ մագնիտաֆոն... տատիկի՞ն ես ձայնագրում։

Այնուամենայնիվ տատը բառ է աղջկաս համար, սովորական բառ, ինչպես ինձ համար, որ ոչ տատ եմ տեսել, ոչ պապ։ Բայց ահա նույն օճորքի տակ՝ Սովինար մայրս, Սովինար աղջիկս, բայց Սովինար տատը... չկա։

— Մայրս քո ի՞նչն է։ Վիրավորված հրում եմ մագնիտաֆոնին ձեռքը մեկնած աղջկաս։

— Ինչո՞ւ կնեղացնիս զերեխեն։— Մայրս էլ է վիրավորված, գիտեմ, բայց զգացնել չի տալիս, այդպիսի վիրավորանքներ են մշուշել մորս աչքերի կապույտը։ Էրեխեն ի՞նչ մեղք ունի։ Արի, արի իմ գառնուկին բան տամ։— Մայրս ձեռքը տանում է գոգնոցի գրպանը, դա ինձ էլ է հետաքրքրում, մայրս գրպանում «անուշ» բան պահելու պետք ու սովորություն չունի. երբ աղջկաս տարիքին էր՝ գրպանում պահելու բան չկար, հետո... հետո ո՞վ է աչք տնկել-սպասել մորս գրպանին... բայց տես, որ մի բան դուրս է գալիս։

— Էս ի՞նչ է,— մայրս ինքն էլ է զարմանում, շփում է կոշտ մատներով, մոտեցնում աչքերին,— ջանըմ, էս ի՞նչ է։

— Չի՞ր է... էդ չիրն ուստի՞ց։— Հա՛, տվեց, տվեց... ո՞վ տվեց, երկու-երեք շաբաթ առաջ էն ո՞վ տվեց... ուշք ու միտք, հիշողություն չի մնացել... էն ո՞վ մի բուռ չիր բռնի լցրեց գրպանը, և ինքը բաժանեց հարևանի երեխաներին, բայց էս մեկը խոշոր ու քանց մոմ դեղին՝ մնաց։ Աստված վկա, էս մեկը, էս խորոտիկը պետք է պահել, տեսար, մեկ էլ տեսար... Ու բաժին եղավ իմ գառնուկին։

Մայրս շոյում է աղջկաս մազերը՝ շեկլիկ, փափուկ, ալիքավոր։

— Էս ինչ խորոտիկ մազեր ունի։— Տխուր ու երազկոտ նայում է ու շոյում. մանկության օրերի մազերն են, հենց իր մազերն են։— Քանց արևի շողք։— Տխուր ու երազկոտ հայացքը մազերին շոյում է։

Աղջիկս փիսոյի պես քսմսվում է մորս փեշերին և հոնքերի տակից նայում է հորս։

— Ինձ չի սիրում,— գանգատվում է,— ինձ չի նայում... Ինչո՞ւ չի նայում... Տխուր է, դրա համար, չէ՛, հայրիկ... Ասեմ ինչո՞ւ է տխուր, իր մամային է կարոտել, իր մաման ասե՞մ ուր է, իր մաման չի մահացել, չէ՞... Ասե՞մ ուր է իր մաման, իր մաման գնացել է Սասուն, իր մաման հոգնել, շատ-շատ հոգնել, գնացել է Սասուն։ Ճի՞շտ է։

— Ճիշտ է, աղջիկս։— Թող այդպես՝ շեկլիկ մազերը մորս շոյող ափի տակ, փիսոյի պես մորս փեշերին քսմսվելով շատախոսի, հա շատախոսի։ Ճիշտ է, ապրես։ Հետո։

— Հետո իր մաման ուզում է գալ, բայց չեն թողնում։

— Հայրիկ, իմ պապիին ձեռք տա՞մ։— Եվ ցանկալի վախվորուկ ժպտում է ու սեղմվում մորս։

Ես բռնում եմ Ծովինարի թևը, որ մոտեցնեմ, աղջիկս կաշկանդված նայում է հորս և դիմադրում. ես ականջի մոտ շշնջում եմ։

— Գնանք պապի ձեռնափայտը գողանանք։

— Հա,— խաղն ընդունած «դավադիր» ժպտում է, անվարան քայլ է անում և սեղմվում է ինձ։— Վախենում եմ։

— Ումի՞ց ես վախենում,— քաշում եմ թևից,— քո պապին է,— և աղջկաս ձեռքը բռնի կպցնում եմ հորս ձեռնափայտին։

— Մամա,— ճչում է աղջիկս։

— Վախեցավ էրեխեն,— մայրս ոտքի է կանգնում,— ոչ ինքն, ոչ իր փեսա։

Ես բորբոքված եմ, բայց փորձում եմ ժպտալ և խաղը շարունակել. հորս ծնկների արանքից փախցնում եմ ձեռնափայտը և դնում աղջկաս բուռը։

— Քոչիր,— հայրս այդպես մորս է դիմում։

— Ես եմ, հայրիկ,— կանչում եմ ականջի մոտ,— ես եմ՝ Խևիկը։

— Խևիկ... էգա՞ր։— Մի անգամ արդեն հարցրել է. առավոտյան սեղմեցի ձեռքը և ականջի մոտ կանչեցի. և իմացավ,— էգա՞ր,— և հարցրեց,— աշխարհք խաղա՞ղ է։

— Հիմա նորից հարցնում է։— Աշխարհք խաղա՞ղ է, Խևո։

Աղջկաս բազուկը պինդ բռնած, թաթիկը դնում եմ հորս ափի մեջ։

— Էս ի՞նչ է,— հայրս աչքերը մոտեցնում է ձեռք ու ափին ու շոշափում է։— Հայլե՞ե,— հորս խոշոր ափի մեջ ձեռքի կորիզ կա,— էս ո՞ւմն է։

— Իմ աղջիկն է, հայրիկ,— կանչում եմ,— Ծովինարն է։

— Հայլե՜նե,— հակված շոշափում է Սովինարի ձեռքը։— Հրեշտակ էրեխեն հեռացրու ինձմե... Դպրոց կերթա՞։

Սովինարը ցանկալի ժպտում է։ Ամեն օր մանկապարտեզի համար թնկթնկում է, իսկ հայրս դպրոց է ուղարկում, և ձեռնափայտը ամուր սեղմում է կրծքին՝ հաշվում է, թե ինքն է փախցրել և անկաշկանդ նայում է հորս։ Իսկ պապը շտկվում է, թիկունքը խփում է պատին, և արտակարգ ձգվում է իր կոճղին և մշուշապատ ու անորոշ նայում... Պատուհանը տեսնո՞ւմ է, ձմռան անձայն օրը տեսնո՞ւմ է, թե՞ ուրիշ պատկերներ են հորս հայացքի դիմաց։ Եվ մեկեն ու բարձրաձայն և հանդիսավոր սկսում է հայրս։— Ու էլան էրգու ախպեր, կանչեցին զուրանց Աստված, էլան վերցին զուրանց զավադեն[1] ու ընկան ճամփա։ Ընկան ու շատ պտտվան, զարկեցին, էկան զարիք էրգիր, էգան, գացին նեղ ձոր մի, տեսան՝ գետ մի կիգեր-կընցներ, առու մի ընդիեն կիգեր, կըզարկեր մըզ ըդ գետին, կը կտրեր զէդ գետ ու կը շերտեր շուր ի մեջ տեղ ու հպամ լե կը խառնվեր մեջ ըդ գետին ու կերթեր...

Ես ու մայրս տարակուսած իրար ենք նայում։ Մայրս առաջին անգամն է հորից այդ պատմությունը լսում, հայրս ե՞րբ է պատմություններ արել, ե՞րբ է պատմում,— ես առաջին անգամն եմ լսում, որ հայրս էպոս պատմի, ես ու մայրս նայում ենք տարակուսած. հայրս գիտի՞ որ պատմում է. իր տեղ ու պահի, իր տարիքի մեջ ներկա՞ է, թե ընկել է ուրիշ աշխարհ։— Ես էլ արտասանե՞մ,— աղջիկս՝ աչք ու կիսադեմով հորս, կիսադեմով ինձ քաշում է թևս,— ես էլ արտասանե՞մ,— իսկ հայրս ձիգ ու գլուխը բարձր հանդիսավոր պատմում է, վառարանի խողովակները զրնգում են. հայրս որոտաձայն պատմում է և... և աչքերի տարբալուծված կապույտում որտեղի՞ց են հայտնվել կապույտ կայծերը։— Ու էլան առան զառուն ու գացին էրգու ախպեր։ Գացին ու գտան զախպուր։ Ըդ ախպրի ջուր՝ լուլե[2] մի ջուր է. կիգա կկտրե թամամ զուր տկու առուն ու հեղ մ՝ լե կդառնա, հեղ մ՝ լե կխառնվի առուն։ Կը նստին վըր ըդ ական ու զուրանց բերդի հիմք թապլին։ Սանասար կերթեր նեջիր[3] ու Բաղդասար կը դատեր վըր բերդին... շենլիք ըդ վերքեր չըկեր...

Ինչպես սկսել էր՝ հանկարծ ու կտրուկ, այդպես էլ լռում է հայրս և ձիգ ու գլուխը բարձր, հայացքը պատուհանին նայում է։ Ապա մարում են աչքերում հայտնված կայծերը, հայացքը մշուշվում է, և հայրս կամաց հակվում է և թևերը ծալում ծնկներին։

---

[1] Զավադեն — օրապահիկ։
[2] Լուլա — խողովակ։
[3] Նեջիր — որս։

— Թող էլի արտասանի,— պահանջում է աղջիկս։

— Ասա թող արտասանի։ Ծովինարը բռնում է հորս թևը, փիսիկի պես հապճեպ ու վախվորուկ շանչում է ու սեղմվում ինձ։

— Չի արտասանում։ Դու ասա։

— Էլ չի արտասանի, ձագուկ,— ասում է մայրս։— Ես կանգնած եմ հորս կողքին ու տարակուսում եմ։ Հայրս իր մանկությո՞ւնը հիշեց՝ ձմռան գիշերների հավաքատեղին հիշեց ու պատմո՞ւմ էր... Հայրս գիտե՞ր, որ պատմում է։

— Օրեկան, ես ասեմ հարիր, դու ասա հազար, մտոք էրգիր է կերթա՝ ավեր ու անտեր Սասուն կերթա,— ավելացնում է մայրս։

Ես գիտեմ, որ այդպես է, ուրեմն քանի տարի հայրս ճոճանակի պես տարուբերվում է ժամանակի մեջ։

Մտքով՝ մեկ երեխա է սարի վրա, երեխաների, գառների հետ,— ասում է մայրս,— մեկ քեֆ-ուրախություն-հարսանիքի մեջ. և իբրև թե գուլաշչի և իբրև թե կարմիր-կանաչ կապած թագվոր է, որդի... ու մեկ էլ տեսար՝ կովի մուժ ու կոտորումի մեջ է սա, սա... սա անտանելի է արդեն. ձայնը գցում է գլուխը, գոռում է, որոտում, իր առաջին կնոջն է կանչում, առաջին կնոջից ունեցած երեխաներին է կանչում, իր եղբորն է օգնության կանչում՝ Խևո՞ռ... Ու կանչից անտեր տունը դղրդում է. կանչ ու որոտից աման-չամանները զրնգում են...— ես կփշաքաղվիմ, գառ։ Օհան, Օհան, թևից կքաշիմ, կքաշիմ՝ Օհան, Օհան... Տեսա՞ր, տեսա՞ր, դարձավ-եկավ. ուշքն եկավ գլուխ։ Ես կվախենամ գառնուկ, էս հալառն լրիվ գժվի. մեկ օր էլ մտոք էրթա ու էրթա...

— Իրենից դուրս է, որդի։

Ես առարկում եմ մորս։

— Իրնե դուրս է, որդի,— պնդում է մայրս,— առավոտից չուր իրիկուն իմ աչաց դեմն է, ես գիտեմ՝ իրենից դուրս է։

— Քու հեր գժվել է, խելիկ,— հանգիստ ասում է մայրս։

— Այդպես մի խոսիր, մա՛։

— Ինչո՞ւ կվիրավորվիս, թե մարդն իր տարիքն ու իր տեղը կորցրեց ու խառնեց իրար, էն մարդը գիժ չէ, ի՞նչ է, գառնուկ։

— Խևո՞ռ,— վառարանի մոտ ծնկներին հակված կանչում է հայրս։

— Ի՞նչ, հայրիկ,— ես ոտքի եմ կանգնում։

— Քեզ հետ չէ, իր ախպեր Խևոյի հետ է։— Մայրս չի նայում. աղջկաս գլուխը կրծքին սեղմած, շեկլիկ մազերն է շոյում, բայց գիտի։— Ես ձեզնից կիմանամ, իր ախպեր Խևոյին է կկանչե։

— Կխեղդվիս, տղա,— որոտում է հայրս, և վառարանի խողո-

վակները զրնգում են։ Հայրս մաշված, փոքր, վառարանի մոտ կուչ եկած մի երեխա, բայց հզոր ձայն ունի,— կխեղդվի՞ի... էգանք, մամո, էգանք...

Կատաղած մի գետ է ոլորվում ձորում. ձորը Տալվորի խորանձավ ձորն է, գետը՝ խելառ ու սանձակոտոր Տալվորիկը։ Գարնան կես է. բարձրիկ սարերի ձնհալը՝ ամպերից պոկված ճյուղավոր ու որոտան շանթ, քարափների գլխից գահավիժում է ձորը, լցվել է հեղեղի շնչով, և անձավներում քրտնում է սարսափը, զզզված ու խելառ գետերի սարսափը։ Քարափին տասը-տասնմեկ տարուն նորելուկ տղերք են նստոտած, կանաչ վարոցներով տղեք՝ այծի մազից գործած տրեխներով, այծի մազից գործած շալվարներով, Սուրբ խաչի ուլիկների մորթուց կարած այծենիները մերկ ուսերին քաշած, փոչոտ գլուխներով տղեք։ Ջարքեր են բրոնում. Տալվորի ձորում չարքեր կան, ձմռան գիշերների հեքիաթներից գիտեն. Տալվորի ձորում չարքեր կան, ցերեկները պահմտում են քարանձավներում, իսկ մթան հետ ելնում-դարանակալում են ծառերին,— ա՜յ, էն ընկուզենու սաղարթի մեջ, ա՜յ, էն կաղնին, որ բունը հեղեղի մեջ է, այդ կաղնին փչակ ունի, այնտեղ են դարանակալում, ա՜յ, էն քարափի թիկունքին, այստեղ, որ նստած են՝ այս քարափի թիկունքին... Չարքերը մթան հետ ելնում-դարանակալում-սպասում են մարդկանց։ Եթե մարդն ինքը շուտ տեսավ և աչը վռազ բռունցք արեց, չարքը կմնա սեղմված բռունցքում,— Ցա՜, Մարաթուկ, հացն ու գինին, տեր կենդանին,— և կարող է շպրտել գետը... Գժված գետը հայացքի տակ, նորելուկ տղեք են նստոտած քարափի գլխին և մեկը՝ կապույտ աչքերով, մութ կապույտ աչքերով ու սև, փոչոտ գլխով մի տղա՝ Խևոն է, անակնկալի է բերում,— չարքերը,— կանչում է լարված՝ ու բոցկլտուն հայացքը ձորին, հանկարծ կանչում է՝ տղեքը շտապ բռունցք են անում. բռունցքներում ճմռում չարքը,— Ցա, Մարաթուկ, հացն ու գինին, տեր կենդանին,— խմբովի վանկատում են, ատամները սեղմած ճմռում չարքերին և քարերի պես շպրտում գետը։— Դու,— Խևոն բոցկլտուն ու պահանջկոտ նայում է մեկին, Խևոն չի խուզարկել, բայց գիտի, որ նա ուշացել է աչը բռունցք անել. ուրեմն գերվել է չարքերից և ուրեմն թևերը խաչած պետք է պառկի, մինչև նոր կանչը։— Չարքը...

Գարնան կես է. Մարաթուկը, Ծովասարն, Անդոկը, պորտն ի հար գեռ ձյան տակ են։ Բարձրիկ սարերի կատարներին, բարձրիկ սարերի կուրծքը թրատած խանդակներում, գողիաթ ժայռերի ոտքերի տակ, ան-

ձավներում դեռ ձյուն կա, գարնան կեսն է. կեսօր է. արևի շողերը ձյան տակ կանաչ ծիլ ու ձնծաղիկ են դարձել, և երկնքից պոկված ձնհալը... ձնհալը... Սա արևի տակ շողշողացող ձնհա՞լն է, փրփուր ու ցողով ծիածան կապած ձնհա՞լն է, թե՞... վիրու այծերի հոտը։ Նրանք են վիրու այծերը, վիրու այծերը... Ահա, Մարաթուկի լանջին քարափի թիկունքից հանկարծակի խարույկ բռնկվեց,— դա վայրի այծերի հոտն է,— և քարափի թիկունքից պոկված հողմը բզկտեց խարույկը,— այծերի խրտնած հոտն է։ Գարնան շնչից գժված վայրի այծերը վերից, Մարաթուկի լանջից պոկված գալիս են, սարալանջին խարույկից քշված քամու բերան ընկած բոցեր են փողփողում։ Վայրի այծերի ընթացքին ոչխարի հոտ կա, ահա, ահա պտտահողմի բերանն է ընկնելու, բոցերթ այծերը սուրում են հոտի վրայով, թռչում են և քարափների գլխից,— շըրխկ, շըրփ, շըրփ,— գահավիժում ալիքների մեջ, գետի ու գետափի ծեծկված ժայռերին,— շըրխկ, շըրխկ, շըրմփ,— մեկը խճճվում է ընկուզենու սաղարթում, ջարդոտում ճյուղերը,— շըրմփ, շըրխկ, շըրխկ, շըրխկ...,— հեքիաթ է. կայծակի կտորներ են թշշում հեղեղատի մեջ, զարկվում ժայռերին, կայծկլտում ու քարափի գլխին շունչները պահած նորելուկների աչքերը բռնկվել են բոցով... Լիներ ու մարդ՝ քանց փոթորիկ ու բոց, քանց վիրու էծ ճյուղավոր սրտով։ Եվ մեկն նորելուկներից մեկը՝ մութ կապույտ աչքերով ու խռիվ սև մազերով,— Խևոն է՝ անհանգիստ շնչից ռունգները տրաքվում են,— այծենին շպրտում է մերկ ուսերից,— աչքերում վառվում են վիրու այծերի հրաշքը,— այծի մազերից գործած տրեխները շպրտում է,— վիրու այծերի հրաշքը ցանկալի, հրաշքը անհաս,— այծի մազից գործած շալվարը շպրտում է,— խռովքն է այրվում աչքերում. ո՞վ է ասում, թե վիրու այծերի հրաշքը մարդու համար երազ է,— նիհար ու ճկուն ցոլում է ժայռի շիթից,— Խևո՜ն,— և կանչում ժայռի կուրծքն ի վար կախված մասրենուց։— Տղա՜— վարը կատաղությունից ինքն իրեն բզկտող գետն է, ափերին ծեծկված ու ողորկ ժայռերը, լղված թփուտները, թեքված-տապալվող ուռենիներ, ալիքների թափից դողացող ընկուզենին և... մի մտրուկ փաթաթվում է ընկուզենու ճյուղին,— Խևո՜ն,— զելված կաշվից հյուսած մի մտրակ շառաչում ու կորչում է ալիքների մեջ,— կխեղդվես, տղա՜ա,— քարափի գլխից կանչում է Օհան տղեկը, քարափի գլխին տղեքը խառնվել են իրար,— Խևոյի հետ եկան, առանց Խևոյի ինչպե՞ս վերադառնան գյուղ,— սարալանջին ձուլված տան կտուրից ծխասյան կողքին կանգնած մի կին իր տղերքին, գարնան խելքին ընկած իր խելառ տղերքին է կանչում... կտուրի՞ն, թե՞ լանջին մի կին է կանգնած... Վարդե մայրիկն է... կանչո՞ւմ է... Ջորից, գետի վշշոցի միջից կարծես Վարդե մոր կանչն է լսվում։— Էգանք, մամո, էգա՜նք...

***

— Էս ինչ խորոտիկ մազեր են,— մայրս աղջկաս գլուխը սեղմել է կրծքին ու շոյում է մազերը,— քանց Արեգակի շողք, քանց խաս թել։— Տխուր ու երազկոտ հայացքը մազերին՝ շոյում է։— Կափսոսամ, թե էս կոպիտ ու անճոռնի մատներն դիպնի էս խորոտիկ մազերին։ Էս ինչքան խորոտիկ մազեր են։

— Քո մազերն են, ախր, մա՛։

— Իմ մազե՞ր,— մայրս մատներով սանրում ու շոյում է աղջկաս մազերը։— Շողք ու ապրշում են իմ ձգուկի մազերն։

— Ծովինարի քո հասակը հիշո՞ւմ ես, մա՛։

— Է, խևիկ... Քու հարց,— ցավով ու երգեցիկ ու փափուկ ասում է մայրս, և մատները կարկամում են աղջկաս մազերին։ Ապա գլուխը բարձրացնում է ու սրդողած նայում ինձ։— Ինչո՞ւ կհարցնիս, խևիկ, ինչո՞ւ հիշիմ, խևիկ, ի՞նչը հիշիմ, որդի։

— Այն օրորոցից, որ քո մայրն է ելել,— կարմրատակած ասում է մայրս,— այդ օրորոցը քառասուն անգամ կրակի բերան է ընկել, այն օճորքը, որի տակ քո մայրը աչք է բացել, այդ օճորքը քառասուն անգամ փլվել է, գարնան Արեգակը, որ քո մայրն է տեսել՝ խավարած է տեսել, այն ծաղիկը, որ քո մայրն է պոկել, այն ծաղկից արյուն է կաթել...

Աղջիկս նայում է մորս կարմրատակած ու հուզված դեմքին, և փափուկ սահում է տատի փեշերի միջից և գալիս սեղմվում է ինձ՝

— Քո մաման լաց է լինում, չէ՞, մի խոսիր, հայրիկ, հարցեր մի տուր տատիկին։

Մայրս արցունքն աչքերին շարունակում է,— քո մոր առաջին կուժը, որդի, հենց ուսի վրա գնդակից ցխվել է... Ի՞նչ ես հարցնում՝ քո մանկությունը հիշո՞ւմ ես,— ցավով հեգնում է մայրս։— Էրգրում ո՞վ մանկություն ունեցավ, Սասունում ո՞վ կյանք տեսավ... հիշում ենք, ու ծուխ է ելնում ոունգներիցս, բայց այդ ավերակ էրգրում ո՞վ կյանք տեսավ։ Քո հայրը, որդի, քո հայրը, որ քսանից-երեսուն տարի քո մորից մեծ է, ուրեմն, քո հայրը քսանհինգ-երեսուն տարի ավե՞լ է վայելել իր անտեր էրգիրը։ Չէ՛, որդի, չէ՛, այս խեղճ հալևորը այդքանով ավելի ավեր ու կոտորած է տեսել... Սասուն... ծուխ ու բոցով լցված թոնիր։ Այդ թոնրի անթեղը շաղված էր վառոդով, անթեղը վառոդով էր շաղված, որդի։

Խուսափուկ ու հարցական հայացքը մորս դեմքին, Ծովինարը ձգվում, շշնջում է ականջիս։

— Վառոդն ի՞նչ է, հայրիկ։

— Վառելու բան է, աղջիկս։ Պատուհանից նայիր հորեղբայր Մարութը չկա՞։

— Վա՜յ։— Աղջիկս այդ ինչպե՞ս էր մոռացել տոնածառի գոյությունը. ներս մտավ հենց տոնածառի գանգատ-պահանջով... Ինչպե՞ս էր մոռացել... Եվ այդ ի՞նչ ուրախություն էր, որ ծտի պես ոտքի տակից թռավ ու հովի պես ծփում է այս տոթ սենյակում։

— Մամո՜ռ...

Աղջիկս պատուհանին չհասավ. հորս որոտից ցնցվում ու զայթում է, մազերը շաղ եկած շուռ եկավ ու փաթաթվեց ինձ։

— Աման, դրա ձեն... էս ձեն...,— մայրս թևաթափ հենվում է աթոռի թիկնակին և ինքնիրեն շշնջում։— Նեղ վիճակի մեջ է։— Եվ վրդովված ու տապակվելով փորձում է ոտքի կանգնել։— Թող ես էրթամ ու էս սարսափելի ձեն չընկնի իմ ականջը, չլսիմ։

Ես մոտենում եմ հորս դարձի բերելու։

Աղջիկս շրջանցում է սեղանը, սահում է մորս թիկունքով, վախվորուկ հայացքը դեպի պապը, բացում է դուռն ու ասում,— քո պապան իր մամային է կանչում, չէ՞։

— Հայրի՛կ,— գոռում եմ ականջի տակ,— հայրի՛կ,— քաշքշում եմ թևից, բայց հայրս ամուր է։ Նրա բազուկը բոխս մեջ դողում է, ցնցվում է և մեկեն գլուխը բարձրացնում է, անորոշ ու խամրած նայում է ու որոտում.

— Մամո՜ռ...

Մի երեխա է խարխափում ձորում։

Ձորը գալարվում է ծուխ ու դումանի մեջ, անձավները խեղդվում են ծխից, ձորով փախչում է բզկտված գետակը։

Մի երեխա է խարխափում ձորում,— մամո՜ռ,— տասը-տասնմեկ տարու աղա՝կիսամերկ ու զզգզված և աչքերը... աչքերը կապո՞ւյտ են, թե ծխով լցված,— մամո՜ռ,— գիշե՞ր է, թե՞ ցերեկ, ձորի գլխին պլշած արեագույն սկավառակը Արեգա՞կն է, թե՞ լուսինը,— բաբո՜ռ։— Կեսգիշերին քնի մե՞ջ լսեց հոր կանչը,— էրեխեք,— ա՞ղբ բացեց տեսավ, թե՞ նրա՝ երդիկից բոցերը խուժում էին և օձերի պես սուլում գերանների վրայով,— Վարդեե, էրեխե՞ք,— դուռն ու շեմը բռնված են բոցով, հայրը տապալեց դուռը և... ո՞վ էր, խեի՞կն էր... խեիկը բոցերի միջով նետվեց դուրս, ո՞վ իր թևից բռնեց ու շպրտեց խևոյի ետևից,— փախեք, զատ-զատ փախեք,— էն ո՞վ թրմփաց իր գլխին, սարն ի վեր փախեք,

էրեխեք,— գիշերը, մութը ճարճատում ու այրվում էր... աշխարհը հրդեհվե՞լ է, թե՞ երազ է, կրակե շապիկ հագած կուռքեր են պարում չորս դին, պարում ու քրքջում են, և դրանց շնչից այրվում է դեմքը...

Բայց մեկը, կրակե շապիկ հագած այն մեկը հայրն է՝ կրակ բռնած ճերմակ վարտիքով, բոցերով փաթաթված այծենիով և հրացան ձեռքին,— բարո՞ռու։— Ջատ-ջատ փախեք, դեպ ձոր փախեք... դեպ անձավներ փախեք... Վարդե՜ն. էրեխեք, իսկ ո՞ւր կորավ խեփիկը... Շողոն, Սամթելիկը, Սեթը, Թորոսիկը, ո՞ւր է մայրը, հորեղբայրները, հարսնուկը, Վարդանը, ուր կորավ խեփիկը, ո՞ւր անհայտացավ հայրը։

— Մամո՜ռու...

Մի երեխա է գալարվում ծուխ ու բոցով լցված Տալվորի ձորում։

Քարափները ասկյարներով բռնված են,— էլ ո՞րտեղ կարող են պատսպարվել գյավուրները, ո՞վ կարող է ապավինել, այս ձո՞րը,— Թրրխ-Թրրրխկ-Թրրխկ,— այդ անձավնե՞րը, ասկյարները քարյուղը[1] շփում են անձավներն ի ներս, և բոցը վիշապի պես խուժում է անձավները և վիշապի պես դուրս գալիս անձավներից, գալարվում ձորում, բերանն առնում թփուտները, շուլալվում ծառերի բներին, քարյուղը շփում են, և բոցը վիշապի պես խուժում է, և վիշապի պես դուրս գալիս, բոցե երախում մի երեխա, գրկանոցով մի մայր,— Թրախկ-Թրրախկ,— ձեռքերը երկինք կարկառած մի մերիկ...— հա-հա-հա՜աա,— էս հուրին, կարմիր հագած ու փաթաթած էս հուրի-փերին... դեռ փրկությո՞ւն է որոնում, այս գետն է... հա-հա-հա՜ա...

Այս... բայց այս ի՞նչ կրակոց էր... սա ասկյարի հրացանի ձայն չէ... գյավուրին հրացան ո՞վ է տվել, գյավուրը զենք կրելու իրավունք չունի, ո՞վ է տվել, որտեղի՞ց է, Հալեպի՞ց... կա ու չկա ոսի աշխարհի՞ց,— Թրխկ-Թրրախկ-Թրրրխկ,— հրանոթ բերեք... սուլթանը էս գյավուրներին կոտորելու հրամանը ուշացրել է... սուլթանը ուշ-ուշ է հրաման տալիս,— Թրխկ-Թրխկ-Թրրախկ...— հրանոթ բերեք... և սարերի վիրավոր բաշերից որոտը շպրտվում է ձորը, ձորը ճարճատում-տնքում, ճաք է տալիս, գալարվում բոց ու ծխի մեջ, և ձորից փախչում է գետը (կրակ բռնած), կրակ ու բոցից թշշացող գետը. կարմիր շապիկ հագած այն աղջիկն է. խենթացած փախչում է ձորով։— Մամո՜ռ,— տասըտասանմեկ տարու մի տղա կրակե օղակի մեջ է... Բոցերը կտրիչները հանած պուչերին կանգնած օձերի պես շրջապատել են և ֆշշում են դեմքին,— մամո՜ռ։ Կարծես արձագանք կա, մեկը կանչում է, գետից մեկը կարծես կանչում է... Երանի ձկներին... Եվ լավ է գնալ... գնալ... ավելի

---

[1] Քարյուղ — նավթ։

լավ է դառնալ ձկներաց բաժին։ Օհա՜ն... Շողոո... Ծամթելիկ... Խևոո... Օհա՜ան... ձորը շնչահատ ծխում է, ծանր տնքում է ու ծխում։ Տալվորիկ ձորը, Տալվորիկ աշխարհը, Սասուն աշխարհը, առասպելներով ու արյամբ ներծծված այդ անաստված կիրճը, կրակով ու բոցով թրծված այդ թոնիրը ահա խուլ տնքում է ու ծանրահոտ ծխում։ Յոթ օր կրակե շապիկ հագած չարքերը պարում էին կիրճում,— ասկյարները հեռացան,— Օհա՜ան,— բոցերը լերդացել են սարերի գլխին. փախած շները սարերից գարձել են գյուղերը, ոռնում են հրդեհված փլատակների վրա,— ասկյարները հեռացել են. սուլթան Համիդի հրամանը ի կատար է ածված. ահա և նոր դաս. առավել անհնազանդ գյուղերը ահա նորից մոխրակույտերի գերեզմանոցներ են։ Բայց այս անիծյալ կիրճի անհանգիստ գյավուրները շատ մոռացկոտ են. տեսար նորից ծխեցին գյուղերը։ Մոռացկոտ ու անխոհեմ են, ով մնացել է, նորից կնայի հյուսիսային կողմ... հա՜, հա՜, նորից աչք կտնկի Հյուսիս, կխաչակնքի և իր ավերակին շունչ կտա։

Զմեռնամուտ է, արևմուտքում ամպերը արնագույն են կտրել, ուրեմն աշունը երկարելու է,— Վարդե՜ե... Ծամթելիկ... Խևո՜ո... Օհա՜ան։— Անձավներից ծուխը դուրս է սողում՝ ինքն իր հոտից կնճռոտված ու փախ, ծառերի փչակները ծխում են, ծուխը անձավներից գողեգող է ելնում, հանցագործի պես, գագաթները խուժել են ձորը, Տալվորիկ գետը փախչում է փշաքաղված,— Շողոո, Ծամթելիկ,— Իշխանձորցի Մանեն կա, վիրավոր ու կատաղած մի վագր, Իշխանձոր գյուղը հրոճարակ է. տունը մոխրաշիրիմ, շունը Անդոկից իջել, պտտվում է մոխրակույտի շուրջբոլորն ու կաղկանձում, հոտոտում, փշմտում ու կատաղած ոռնում է։— Վարդե՜ե,— Իշխանձորցի Մանեն կա՞... Իշխանձորցի Մանեն շնչո՞ւմ է։— Ամոթ սև ասկյարին։— Նահատակ Մանեն, այդ անհնազանդ ու ըմբոստ գյավուրը իր ավերակ գյուղը մտնելու իրավունք չունի, իր տան մոխրակույտին մոտենալու արտոնություն չունի։ Սուլթանի հրաման է, առավել անհնազանդ, անխոհեմ գյավուրները, այդ անիծյալ գյավուրները գյուղերից ու Սասուն աշխարհից պետք է հեռանան։ Թե կան,— ամոթ սև ասկյարին,— թե շնչում են և իրենց ավերակներին շունչ տալու նորից փորձ կանեն, ուրեմն այդ անիծյալ գյավուրների գյուղերը նորից կավերվեն, կհրդեհվեն ու հիմնահատակ կարվեն։ Այդ անիծյալ ըմբոստները, այդ Իշխանձորցի Մանեն... Նահատակ Մանեն... Շնչո՞ւմ է, ուրեմն նորից կվերականգնի իր ավերակը, նորից կկանգնի Սովասարի գլխին, Հալեպից բերած հրացանը ձեռքին արքայի պես կկանգնի սարի գլխին, կնայի հարավ, արևմուտք, արևագալի կողմ, Հյուսիս կնայի, կթևավորվի Հյուսիսից,— Ես Թլորիկ Դավթի ցեղն եմ. Սովասարը իմ որսատեղին է, և ոչ մեկ անօրեն այս սարը ոտք դնելու իրավունք չունի։— Այդ ըմբոստ գյա-

վուրները, այդ Իշխանձորցի Մանեն... Նահատակ Մանեն ուրեմն շնչո՞ւմ է,— ամոթ ասկյարներին,— Իշխանձորցի Մանեն թող իր գերդաստանի փերթերը հավաքի և Սասուն աշխարհից դուրս գա։— Վարդե՜ն... Սամթելիկ։— Զմեռնամուտ է, մթնշաղի հետ ձմռան սարսուռն է մաղվում ձորի գլխին։ Ինչո՞ւ է ուշանում ձյունը։ Ձյունը։ Մառախուղը։ Փոթորիկը... փոթորիկը։ Թող գա, թող խեղդի այս ձորի գարշահոտ ծուխը, փաթաթի ծառի վիրավոր բները։ Թող գա։ Ինչո՞ւ է ուշանում ձմեռը, ձյունը... Թող գա, թող առատ տեղա ու ծրարի այս վիրավոր ձորը, այս... այս...

Գետափին, մացառների մեջ մի երեխա է խճճված։ Շնչավո՞ր է... Տրոփում է, գետից շպրտված ձկան պես հևում-տրոփում է։ Տղա՞ է, թե՞ աղջիկ...

Տրոփում է... Օհա՜ն... ձգուկ...

Զմեռնամուտ է։ Լուռ ու ամայի Սասուն աշխարհը։ Մի մարդ է ոտք փոխում՝ բզկտված գերդաստանը շալակին,— անիծյալ կիրճում խեղդուկ լռություն է,— մի մարդ է ճռճվում, հրացանը ջարդված թևի պես ուսն ի կախ, խուրջինի հակերում երկու կխսաշունչ մանչ՝ երդիկից թրատված ծխասյուները թփրտում են կիրճում, հետքից ծնկակոտոր կինը, մի մարդ է գնում՝ որոտը ատամների տակ սեղմած։ Խեղդուկ ու ամայի է Սասուն աշխարհը։ Արևմուտքում կարմիր են ամպերը, ուրեմն աշունը երկարելու է. տնանկներին՝ աստծո ողորմություն. ձմեռը ուշ է գալու. Իշխանձորն ի դուրս, Սասուն աշխարհն ի դուրս ճամփա ելած Նահատակ Մանեին աստծո ողորմություն։ Պետք չէ, ողորմություն պետք չէ. Մանեին աստծո ողորմություն պետք չէ. Նահատակ Մանեն աստծուն վաղուց է ճանանչ և վաղուց թշնամի։ Ողորմությունն պետք չէ, թող ձմեռը գա, թող ձյուն գա, թող հուշիկ իջնեն փաթիլները, որ կանաչ գոգնոցներով աղջիկները պսակաշորի կարոտից արթնանան, թող փոթորիկ լինի, պտտահողմը թող պարի, որ ղորթերը արթնանան, անձավները թնդացնող դհոլը ահա այս վիրու այծի զգզված մորթին է, Արեգակին քնից արթնացնող զուռնան ահա այս քաղաքի շաղ եկած բոցեղեն փետուրներն են, այս ո՞ր ղորթի հարսանիքի արջառն են բորենիները լափել... Աստծո ծաղր այս ողորմությունը պետք չէ, թող ձմեռը գա, առատ-առատ ձյուն իջնի, որ նահատակ Մանեն պատանքի այս անաստված կիրճն ու հեռանա։ Պատանքի ու հեռանա։— Վարդե՜ն... Օհա՜ն... խեռ... ձգուկներ... Նահատակ Մանեն ահա ձեզ դուրս կբերի այս արյունոտ կիրճից, որ Սասուն է կոչվում, հա՜-հա՜, դուրս կբերի. սա Սասարն է. շուտով կհանդարտվի Միրնկատարը, իսկ Միրնկատարից անդին Միրնկատարի տեղն ի վար Մուշ քաղաքն է։ Մշո դաշտն է... Նահատակ Մանեն Միրնկատարից կիջնի վար ի Մուշ քա-

ղաքը-կանցնի, կկտրի Մշո դաշտը-կանցնի... կգնա, կգնա ու ձեզ կհասցնի ոսի հողը, հա՛-հա՛, հենց ոսի աշխարհը, ձգուկներ, որ այլևս ավեր ու կոտորում չտեսնեք։ Երեխա-երեխա, որքան տեսել եք՝ բավ է։— Օհանկ, Խևո... ձգուկներ։— Մարաթուկը, Տովասարը, Անդոկը, Տալվորիկը մնացել են թիկունքում, քիչ հետո կհայտնվի Միրնկատարը, Նահատակ Մանեն առանց ետ նայելու կիջվարի քաղաքն ի Մուշ, և Սասունը, այդ արյունհոտ աշխարհը կգոցվի այլևս։ Կգոցվի, ձգուկներ, կգոցվի։ Եվ Սասուն աշխարհը կդառնա ձեզ համար պատմություն՝ Թլոր Դավիթ... պառավի շաղգամի արտ... քարանձավներում վրնջացող Քուռկիկ Ջալալի... Կաթնաղբյուր... Երկաթի սյուն... Թուր Կեծակին... Մարութա սար... Սև սար... Սև սարը այս է, Դավթի որսատեղին է եղել, այս է, այս է... Քիչ հետո... մի քիչ հետո... Իսկ այս ի՞նչ քոշք է։ Հա՛, Մշո Օսման աղի քոշքն է, ամառանոցն է։ Օսման աղեն Դավթի որսատեղը գրավել է ու... Տե՛ս, Օսման աղեն, քանց ագռավ, կանգնել է կտուրին, հեռադիտակ էլ ունի, և փառավորվում է ծխացող կիրճով։ Սպասում է, թե երբ պետք է մարի... Հացն ու գինին, տեր կենդանին, Իշխնձորցի Մանեն այլևս ոչ մի քայլ չի գնա, չի հեռանա, Նահատակ Մանեն Սև սարից ու Սասուն աշխարհից հեռացողը չէ։ Օսման աղա, էս ձմեռնամուտին ինչո՞ւ ես քանց ագռավ թառել ամառանոցիդ գլխին։ Կողքինդ քո լամո՞ւկն է։ Էս ձմեռնամուտին ինչո՞ւ ես տոնական ֆես դրել։ Օհան, Խևիկ, Օսման աղի լամուկի ֆեսը տեսեք, տոն ու ուրախության նշան է։ Քո արնագույն ֆեսը... չէ՞, Վարդե, չեմ սատկացնի, էդ արնագույն ֆեսը կթոցնեմ գլխից,— Թըրախկ,— Օսման աղա, ձեռքերդ ալլահին մի մեկնի, Իշխնձորցի Մանեն թե ուզենա, քո ճերմակ ֆեսն էլ գլխիցդ կթոցնի, և քո մի մազը չի խանձվի, այս արծվաչք հրացանը Մանեին դեռ չի խաբել և իզուր չէր, որ Իշխնձորցի Մանեն զարիբության գնաց, կլոր մեկ տարի Հալեպում քեզ պես աղեքի համար ծառա եղավ, բեռնակիր եղավ և ձեռք գցեց ահա այս հրացանը։ Ուզո՞ւմ ես քո աղայավայել ճերմակ ֆեսն էլ թոցնի... դե ցած արի, Օսման աղա, ձեռքերդ ալլահին մի մեկնի, Նահատակ Մանեն իր գնդակներն այդքան էժան չի ծախսի, քոշքից վար իջի, բռնիր լամուկիդ ձեռքն ու հեռացիր Սև սարից։ Սև սարը Դավթի որսատեղին է, և Իշխնձորցի Մանեն դեռ չի մեռել։ Հավաքիր չաթուփոթերդ, հեռացիր. այդ քոշքը Իշխնձորցի Մանեի նոր գյուղն է։ Հա՛, հա՛, Նահատակ Մանեն նոր գյուղ է հիմնելու՝ այստեղ, Միրնկատարի տակ, Սև սարի վրա, Մուշից Սասուն եկող ճամփի վրա, թե ասկյարները գան՝ առաջինը Իշխնձորցի Մանեին պետք է հանդիպեն և Նահատակ Մանեին։ Դե գնա, Օսման աղա, լուր տուր, ասկյար հավաքիր ու եկ։ Այս տունը պետք է վառեք ու կիսամեռ երկու նորելուկ ու վիրավոր սրտով մի կին։ Իսկ Իշ-

խընձորցի Մանեին չեք գտնի։ Երբեք չեք գտնի, երբեք. նա լեռներում կլինի, ամպերի տակ։ Մարաթուկ վկա, Նահատակ Մանեն այլևս ծածկ չի ունենա, գլխի տակ բարձ չի ունենա։ Այսօրն ի հետ, Օսման աղա, Նահատակ Մանեի տունը քարանձավն է, բարձը՝ քարը և կողակիր հրացանը։ Գե գնա ու լուր տուր, ու ասկյարներ հավաքիր ու եկ։ Եկ ու այրիր Մանեի գյուղը,— անունն ի՞նչ դնենք. Օսման աղա, Սասնո այս նոր գյուղը ինչպե՞ս կնքենք. քոշքդ... Սև սարի բացատում քոշքդ փեթակի պես դրել ու Սև սարի մանանան ես հավաքում։ Սասնո այս նոր գյուղի անունը Փեթար դնենք, Օսման աղա։ Փեթար դնենք։— Դե ուրեմն լուր տուր, ասկյար հավաքիր ու եկ ու այրիր Մանեի Փեթար գյուղը։ Փեթարա Մանեն, հա՛, հա՛, Փեթարա Մանեն լեռներից կիջնի ու կգտնի Օսման աղին, հորից դուրս կգա ու քառասուն չախչի քարի տակ կգտնի Օսման աղին, Փեթարա Մանեն ամպերից կպոկվի ու քանց շանթ Օսման աղի երդիկից ներս կմտնի։ Ով այրի Մանեի Փեթար գյուղը, պատասխան տվողը դու ես լինելու, Օսման աղա։ Այս աշխարհում Նահատակ Մանեն ուրիշ թշնամի չունի, արևելքեն-արևմուտք, հյուսիսեն-հարավ ուրիշ ու ուրիշ թշնամի չունի։ Դու ես։ Արևի տակ՝ դու ես։ Օսման աղա, Արեգակից վեր աստվածն է։ Մարաթուկ վկա՝ այդպես է ու կա։ Դե գնա ու լուր տար, ասկյար հավաքի ու եկ, Օսման աղա։ Զաթուփոթերդ հավաքիր, բոնիր լամուկիդ ձեռքն ու հեռացիր Սև սարից։ Հեռացիր։ Բայց... բայց այդ հեռադիտակը Փեթարա Մանեին տուր... Տուր-տուր, Նահատակ Մանեին հեռադիտակ պետք է շատ... Այդպես... Եվ... այս գեղեցիկ հեռադիտակի համար Մանեն քեզ պարտք է, քոշքի համար՝ չէ, քոշքը Դավթի որսասարում է և ուրեմն իրավունքով՝ Մանեին, իսկ դիտակի համար՝ պարտք է։ Եվ մի օր ձմռան մի գիշեր... մի օր, ձմռան մի առավոտ Օսման աղան կարթնանա և իր սեղանին մի վիրու այծ կտեսնի... դե հեռացիր, Օսման աղա...

Վարդե... Օհան, խևո, ձգուկներ... բայց գեղեցիկ դիտակ է, Վարդե... Որտե՞ղ ես, Իշխանձոր... Ահա Անդրկը... Մարաթուկը... Ծովասարը... Տալվորիկը... ձորը... Տալվորի ձորը... Վարդե... որտե՞ղ ես, Իշխանձոր... Մի օր, մի օր Մանեն քեզ այցի կգա... Քուռիկ Ջալալին հեծած Նահատակ Մանեն գարնան մի արշալույսի կկանգնի քո ավերակների վրա...

— Խևո, ասում ես էգա՞ր։— Ահա և հայրս վերադարձել է իրական աշխարհ. սա իր տունն է, սա վառարանն է. ձմեռ է. սա կարմիր կողուկշտով վառարանն է, քաղաքաբնակ որդին է եկել, գոռում է ական-

չի տակ, սեղմում է դաստակը, փորձում է կոճղը հեռացնել շիկացած վառարանից։

— Թող գիս։— Վիրավորված է հայրս։— Թող գիմ թե։— Հորս մաշված ոսկորներում նկատելի ուժ կա։ Շփում է ազատված թևը. երևի ցավեցրել եմ, թևերը ծալում է ծնկներին և դեմքը խռոված շուռ է տալիս։— Խեռ, աշխարհք խաղա՞ղ է։

— Խաղաղ է, հայրիկ,— կանչում եմ,— խաղաղ է։— Շտապ միացնում եմ ձայնագրիչը։

— Խաղաղ ու խաղա՞ղ է։— Խռոված մի երեխա է հայրս, վառարանի կողքին ծվարած, և թվում է, թե այդ պահանջկոտ ու հզոր ձայնը դրսից եկավ, վառարանի զրնգացող խողովակներով հասավ։

— Խաղաղ է,— գլուխկախ, մատների հետ խաղալով տնազում է մայրս. եթե դու էդպես կտանջվիս ու կպահանջիս, քու ահից ո՞վ սիրտ կանի ելնի ու զաշխարհն խառնե իրար,— ասում է մայրս,— շուտ-շուտ պահանջիր, Օհան, հենց ուշքի կգաս, հենց աչք կբացիս՝ պահանջիր և որոտաձայն պահանջիր, որ լսեն ու չմոռանան։

Երևանում, երբ հիշում եմ մորս, տեսնում եմ կարտոֆիլի թփերի մեջ հակված հողուրագը ձեռքին։ Կարտոֆիլի թփերը խանձված են,— ջուր չկա,— հողին մոտիկ տերևները մորս մատների տակ խշրտում են, անձրև չկա։— Հողուրագը սուր չէ, խաղում է ջարդված պոչով կոթի հետ և փորձում է պնդել հողուրագի կոթը, սակայն ավելի շատ բանողը մորս մատներն են։ Ահա՝ գլուխն ի թեք, ծնկած է կարտոֆիլի թփերի մեջ, փբխթեցնում է և սուլված հայացքը՝ ինքն իրեն ուղղած մորս հայացքը ինքնամոռաց աշխատողի մատների հետ կապ չունի։ Այսօր, երբ եկանք ընտանիքով, երեխաներիս հետ հացատուն մտանք-դուրս եկանք, մարագ մտանք-դուրս եկանք և հարկ համարեցի շրջել տնամերձում։ Կարտոֆիլի տեղում հողը քրքրված էր, հացատան անկյունում կարտոֆիլի մի փոքրիկ կուտակ կար,— մամա՜, էս ինչքան շատ հուլունք կա,— հիացավ ու զարմացավ փոքրիկ Սովինարը, կաղամբի տեղում հողը կարծես փղձկացել էր և փղձուկ բներում եղյամն էր փառակալած, ոչ մի փառակալված, ճմրթված թուփ, ոչ մի կոթուն։ (Կաղամբի դեղնած թփերը դարմանի կողքինն էին, սմքած կոթունները՝ վառելիքի վրա)։ Ծառերի տակ ոչ մի տերև (մարագում դարմանի վրա խշխշում էին տերևները), ոչ մի տերև, ոչ մի շյուղ, ոչ մի խիլ, առվի ափերին ոչ մի բուռ սեզ... Մեր տնամերձը մաքուր ավելված էր, իսկ ձյան տեղը մաքրող քամին դեռ չի փչել։ Դեկտեմբերի 31-ն է, բայց ձյուն չկա։

Զմեռն ուշանում է։

— Առանց ձյան Նոր տարին գեղեցիկ չէ։

— Մինչև Նոր տարի ձյուն կգա,— ասում է մայրս։

— Նոր տարուն մի քանի ժամ է մնացել։

— Կգա՛,— պնդում է մայրս։

Դրսում, աստիճանների վրա ուրախ իրարանցում է։ Շրխկոցով բացվում է դուռը և շեմին հայտնվում է մեր գերդաստանը։ Նոր տարվա կերակուրներն են բերում, որ դնեն վառարանին։ Պղնձի մի կանթը կինս է բռնել, մյուսը՝ հարսս, արանքում աղջիկս ու եղբորս տղան կառչել են, կողքներին՝ Նարեկն է, երկամյա տղաս,— ծնկել է, որ արանքից դուրս չմղվի, ծնկած է կառչել, և շեկլիկ մազերն է երևում ու պղնձի շրթին կառչած ձեռքերը։ Երեխաներից միայն եղբորս երկամյա աղջիկն է պակասում. ննջարանում քնած է։ Նա էլ ահա արթնացավ ու թնկթնկում է։ Դռան արանքում թնջուկված հրմշտում են, սառը օդը մառախուղի պես ներս է խուժում, պլլվում վառարանին, պլլվում հատու, և հայրս գլուխը բարձրացնում է, և հորս մշուշոտ հայացքի տակ պղնձին շուլալված գերդաստանը շեմից պոկվում է ներս։ Աղջիկս կտրակցոն նայում է հորս, և վառարանին մոտեցող պղնձից բաժանվում է, ինքնակամ ձեռ է քաշում և գալիս սեղմվում է ինձ։ Մայրս փորձում է գրկել Նարեկին, իսկ տղաս խոովկանի պես մոթող ձեռք չի քաշում պղնձից։

— Հիսուս-Քրիստոս, էսպ ինչ ուժեղ է, քանց քո պապ Գլշո Մանուկ պինդ ու ուժեղ,— և մայրս խաչակնքում է ծնկածալ պղնձին ուղեկցող Նարեկին։

— Վառվեցիր, հայրի՛կ,— կինս փորձում է հորս հեռացնել վառարանից։

— Քոչի՞ր։— Հայրս այդպես մորս է դիմում, այդպես է դիմում՝ Քոչիր։

— Ես եմ, հայրիկ, Հասմիկն է,— կանչում է կինս։— Վառվեցիր։

— Դո՞ւ ես, Անթառամ (հայրս այդպես էր կոչում կնոջս), ղուրբան, էգա՞ր։— Հայրս նորից հակվում է ծնկներին և խոսում է գլուխկախ։

— Քու մամն իմա՞լ է, քու հերն իմա՞լ է։

— Լավ են, հայրիկ, լավ են։ Դու ինչպե՞ս ես... սոված չե՞ս։

— Էրեխեք դպրոց կերթա՞ն, հարսնուկ։— Հայրս խոսում է հակված. գլուխկախ ու երեսը պատն արած։

— Ծովինար, Օհանիկ, Նարեկ, մոտեցեք պապին, թող ձեզ տեսնի,— իսկ Հասմիկի ձայնը Օհանիկին չի հասնում՝ նա մի ձեռքով կրծքանշանն է պաշտպանել Նարեկից, մյուսով Ծովինարի գլուխը սեղմել ականջին և հայացքը ձայնագրիչին, քչփչում է։ Աղջկաս տարեկիցն է, բայց, տե՛ս, արդեն ծածկել է Ծովինարի գլուխը։

— Օհանիկ, քեզ հետ չե՞ս։— Հարսս մոտենում, քաշում է թևից։

— Լենինականից պարան պետք է բերած լիներիր, որ հիմա Օհանիկին կապեիր Օհան պապի ոտքից։— «Իսկ եթե... եթե Մարուքը Լենինականը թողնի ու գա՞, թողնի ու գա...»,— մտածում եմ ես։

— Քոչիր... Քոչիրն հո՞ս է,— հորս սովորական հարցումն է։ Մայրս հաշողել է Նարեկին գիրկն առնել, չրի հատիկով ուզում է խաբել Նարեկին, նստեցրել է գիրկը և մազերն է շոյում։

— Աղջիկներ չեկա՞ն... Սամթելիկ, Շողիկ, Շամրիկն էն հեռու երկրից չեկա՞վ։— Հայրս իր հեռու տեղերից վերադարձել ու հիշել է, որ իր Շամրիկ աղջիկը ապրում է հեռու մի երկրում։ Էդ երկրի անուն ի՞նչ էր...

— Ալթայի երկրամաս,— պատասխանում է կինս։— Շամրիկը հեռագիր է ուղարկել, հայրիկ, հեռագի՛ր։

Հայրս տնքում է, գլուխը մեկ աջ է թեքում, մեկ՝ ձախ, այդպես հակված ու գլխահակ, աջ ու ձախ ինչ-որ բան է որոնում, և մաշված թերթերունքներով կոպերը խլվլում են։

— Շամրիկն ի՞նչ է ուղարկել։

— Հեռագիր, հայրիկ, հեռագիր,— կանչում է Հասմիկը,— Նոր տարի է, Շամրիկն հեռագիր է ուղարկել։

— Նոր տարի,— կրկնում է հայրս. պարզապես լսել է ու կրկնում է։ Հետո մաշված թերթերունքներով կոպերը խլվլում են, տնքում է հայրս, գլուխը անհանգիստ մեկ աջ է թեքում, մեկ՝ ձախ, հակված ու գլխահակ ինչ-որ որոնում է ու... գտնում։ Նոր տարի՞,— շշնջում է ինքն իրեն։— Հայլեե՜եե,— և կանչի հետ կամաց-կամաց շտկվում է հայրս, թիկունքը խփում պատին, ձգվում և հարյուր տարվա հեռվից նորից կանչում,— հայլեե՜եե,— և մնում ձիգ ու մշուշոտ հայացքը պատուհանին։ Գնա՞ց հայրս... ո՞ւր գնաց հայրս... թե խամրած աչքերի դիմաց տարեմուտի անձայն ու գորշ օրն է և ծխնելուղի միջքակոտոր ծուխը։

Ծուխը հենց ծխնելուղի պռնկին կոտրվում է, ծալվլվում է, տանիքն ի վար սուլում դեպի տան դիմացի մրսած այգին և ծառերի գլխին բզկտվում...

Ծխի երակներն իրար հերն են անիծում, գզգզում են իրար, կապերն են խլում իրարից, ամեն երակ իրենն է ձգում, կռվով մոտենում են և կռվով ու գզգզված բաժանվում։

Մի անգամ... մի օր,— ես նոր էի սովորել դահուկ քշել և ա՛յ այնտեղ էի, ձորի այն կողմ, սարի պորտին, ձյունների մեջ խրված, և գյուղը հեռու էր, գյուղը այսքան տարածուն չէր, ճոթը հեռու էր ձորից, և մեր տունը այս չէր, երկհարկանի չէր, տանիքը թիթեղապատ չէր, հողե տանիք էր՝ այդ օրը ձյան տակ, այդ առավոտ մեր երգիկի ծխասյունը, եր-

դիկից բարձրացող ծուխը ինձ թվաց կռունկների երամ, սակայն ոչ երդիկից երկինք գնացող, այլ երկնքից ու երդիկից տուն մտնող, կռունկները ամպերից իջնում էին խառնիխուռն, իջնում էին գլխիվար ու խառնիխուռն և որքան մոտենում էին մեր տանիքին, այնքան հավաքվում, կանոնավորվում, մոտիկանում էին մեր տանիքին՝ երկճյուղ շարք կազմում, մոտիկանում էին՝ ճյուղերը զարկում իրար և ձուլվում և երդիկից խուժում ներս...

— Քոչիր,— այդպես ձիգ ու լարված և աչքը պատուհանին դիմում է մորս,— էս ո՞ր թիվն է, քոչիր։

— Օհան, թիվն ի՞նչ կհարցնիս, Օհան,— կանչում է մայրս։

— Աստծու աչք քու վրա էղնի, Օհան,— ուրախացել է մայրս։— Էղնի ու դու էդպես շիփ-շիտակ խոսիս, Շամրիկն էն հեռու երկրից թե կառնի-կթռնի ու կգա,— ուրախացել ու ոգևորվել է մայրս։— Թե քու հոգին չմոլորվի, և դու չկորցնես քու նստած տեղը, և քո խոսքը քո լեզվի վրա չմոլորվի՝ չընկնի սարեսար, չընկնի ձորեձոր, ու դու այդպես շիփ-շիտակ խոսիս, Օհան, քու հեռավոր աղջիկն կգա... այնտեղից շունչն ի բերան վազելով կգա, իր տնից մինչ ի քու ոտքեր չոքեչոք կգա, Օհան։ Ես էլ իր հետ, Օհան, աստված է վկա՝ ես էլ իր հետ։— Թաք քու հոգին չմոլորվի ու դու մտոք չընկնիս քարեքար, Օհան։— Մայրս հուզված է, նայում է շուրջբոլորը, նայում է սեղանին, ուզում է ոտքի ելնել, բայց գլխի է ընկնում, որ տղաս ծնկներին է, Նարեկին ավելի է պինդ սեղմում կրծքին և հուզված մատներով շփում է մազերը։

— Վառվեցիր, հայրիկ,— ահա հայրս զգաստ է. պետք է, որ իմանա վառարանը շիկացած է, և ինքը՝ մոտիկ։

— Մի քիչ հեռու նստիր,— և-կինս փորձում է օգնել։

— Թող զիս,— պահանջում է հայրս,— թող զիմ թև։— Եվ թևն ազատում է, կոճղը հեռացնում վառարանից, նորից հակվում ծնկներին և մեղմացած հարցնում։— Քոչիր հո՞ս է։

— Քոչի՛ր,— գնդակը թափով դիպչում է պատին ու ետ գալիս,— Քոչիր,— Օհանիկը կրկնում է հարվածը,— Քոչիր,— ո՞վ իմանա, թե Քոչիրն ի՞նչ բան է, միայն թե գնդակ չլելու հետ շատ հարմար է գալիս,— Քոչիր,— մայրը դիտողություն է անում, իսկ... գնդակը չլելու հետ Քոչիրը եռանդ է բերում,— Քոչիր...

— Իսկականից, մա՛, հայրիկը ինչո՞ւ է քեզ Քոչիր ասում։

— Իրենից հարցրու, Հասմիկ։ Հարցրու, թե էդ անիծված Քոչիրն ինչո՞ւ դարձավ ինձ կնքանուն։— Մայրս խոսում է գլուխկախ, գոտու հետ խաղալով։— Գաղթի օրերից չուրի էսօր մեկ օր, մեկ հեղ, թաք մեկ անգամ շուրթերից չպոկվեց Ծովինար անունը։ Ծովինար... Ծովինար... Ինչպե՞ս

ասել. թե կին ունի, այդ կնոջ անունը Մըյրո է, թե կին ունի, այդ կինը իր առաջին կինն է,— Մըյրո,— և ինչ սիրով է շշնջում՝ այս տուն ու տեղից անջատված-գնացած է, իր ավեր քաղաքիկը,— Մըյրո՜ռո,— և ինչ կարոտով է կանչում՝ մտոք աստված գիտե, թե որ սարից։— Մեկել օրչ մտոք հարսանիքի մեջ էր, գառնուկ, ու էդ հարսանիքն իր հարսանիքն էր, իր ու իր Մըյրոյի հարսանիքն էր,— մայրս ամաչկոտ ժպտում է։— Հավատա, գառնուկ, հավատա՝ իր ու իր Մըյրոյի հարսանիքն էր։— Ախր, հարսանիքը Խաբրիկ Նորեն պատմել է, այդ անաստված ու խենթ ֆիդայի Խաբրիկ Նորեն երգել ու պատմել է։ Հարսանիքին Սասնո բոլոր ֆիդայիներն են մասնակցել, այդ ավեր էրգրի խենթերը մասնակցել են։ Խաբրիկ Նորեն պատմում է։ Եթե պատմած էլ չլիներ, այս հալեորի խոսքից պարզ է։— Ի՞նչ էր ասում, ասա, ի՞նչ էր ասում,— մայրս էլի ժպտում է, և ափով ամաչկոտ սրբում ժպիտը,— Մըյրո, ղուրբան, բաց քու քաղ... քու քաղ բաց, քու էրես տեսնիմ։

— Էդ ինչքա՞ն խորոտիկ է,— ես շատ եմ ոգևորվում,— լա՞վ է, թե վատ, այդպես է, շատ եմ ոգևորվում,— ինչքան խորոտիկ է... Հայրիկ,— կանչում եմ, հայրս իրակա՞ն աշխարհում է, այստե՞ղ է, տա՞նն է, լսո՞ւմ է, լսո՞ւմ էր մորս, ծանրացած ականջներին իմ կանչը հասա՞վ։— Հայրի՞կ... Ափսոս, որ ես քո հարսանիքին չեմ մասնակցել։

— Գժվես դու,— ծիծաղում է կինս։— Մա՛, քո տղան խելառ է։

— Եվ թող գժվեմ ես։ Ափսոս, որ ես այդ աշնանը, այդ ձմեռը չեմ ապրել և հորս հարսանիքին չեմ մասնակցել։ Հազար ափսոս, որ Խաբրիկ Նորեի հետ, ֆիդայիների հետ, հորեղբորս հետ, պապիս հետ հորս հարսանիքին մասնակից չեմ եղել։

— Էլի գժվեց,— միջամտում է կինս։

— Դու այդ հարսանիքը չես պատկերացնում, Հասմիկ, բոլորովին չես պատկերացնում, իսկ ես տեսնում եմ։

***

Ահա Խաբրիկ Նորեն՝ բարդու պես ձիգ ու շնկշնկան, ահն ու մահը ծաղրող ժպիտը աչքերի խորքում, լայն ճակատին հավատարմություն ու երդում։

— Մա՛, Խաբրիկ Նորեին ես լավ եմ հիշում՝ ճերմակամազ տարիքում էլ այդպես էր ու կար,— մրմնջացող շուրթերին երգ,— ես վիրու չեյրան վըր Սասնո սարին, թըվանքով զարկին բրինդար արին,— տասնոցը այծենու տակ խրած, Սև սարի անտառով ահա իջնում է,— Խաբրիկ մը ճամփեք իմ հեռու յարին. դեղ առնե յիգա վըր բրինդարին,—

նախշուն խուրջինը ուսն ի կախ Միրնկատարի ու Արջգլորի արանքով իջվարում է գյուղ։ Մատների վրա հաշվվող տներ են։ Սև սարի կուրծքը խոցած ձորակի ափերին խրճիթները կարծես հեղեղն է բերել-շպրտել աջ ու ձախ. մեկը Նահատակ Մանեի, Իշխանձորցի Մանեի տունն է, կողքինը՝ ախպեցի Պետոյի, դիմացինը՝ տալվորցի Մուրդիկի, կողքինը՝ շուշնամերկցի Մանուկի, դիմացը՝ գըլեցի Արթենի, Սասուն աշխարհն է օրենքից դուրս վտարվածների խրճիթները Սև սարից պոկված հեղեղն է բերել շպրտել աջ ու ձախ։ Տների ճակատներին վիրու այծերի պոզերն են, տանիքներին դեզերը՝ թեք դրած փափախներ. ըմբոստները, Սասուն աշխարհն ի դուրս, օրենքն ի դուրս վտարվածները շեկ փափախները դրել են կտուրներին և բարձրացել սարերը։ Հիմա աշուն է, և ըմբոստները Տարոն աշխարհի ծուռ ֆիդայիները կածաններն են հսկում։ Աշուն է. հոգնած ու սայթաքուն կածաններով միամոլոր ոտք է փոխում կարիքը. խուլփեցի Ղազարը մի ջորաբեռ շաղգամ է տանում Մշո դաշտ. ցորեն պետք է բերի, իսկ գայլը դարանակալ հետևում է,— մշեցի Առաքելը մի ջորաբեռ գարի է բերում Սասուն. կորեկ պետք է տանի, իսկ գայլը դարանակալ հետևում է,— գըլեցի Դանոն մի ջորաբեռ ընկույզ է տանում Մշո դաշտ. խմիչք պետք է բերի,— իսկ գայլը դարանակալ հետևում է,— մշեցի Արամը մի աման նավթ է բերում Տալվորիկ. դարբին Համզեից երկաթ պետք է տանի,— իսկ գայլը դարանակալ հետևում է.— շենիկցի Գրիգոն մի կճուճ մանանա է տանում Մուշ քաղաք. դուքանչի Օհաննեսից չիթ պետք է բերի,— իսկ գայլը դարանակալ հետևում է՝ հիմա պետք է լափի, էգուց ձյուն կգա. կածանները կծածկվեն արյունով, հիմա, երբ կածանները կենդանի են ու բանուկ, գայլերը պետք է հոշոտեն ու լափեն։— Եվ ֆիդայիները հսկում են տրոփող կածանները, բարկացած հսկում են, դաղրած ու տաք կածանները։ Եվ նրանցից մեկը, Լեռան որդի, քարանձավի բնակիչ երդվյալներից մեկը ահա՝ Խաբրիկ Նորեն, գյուղ է իջնում,— մարե՞ն, քո որդին է գալիս,— Հավքիկ վըր ծովուն անունն էր արոր, վզիկն էր կարմիր, սրտիկ ահավոր, Կապիմ բեզարեն՝ էրթամ հըտ էնոր, էն իմ դարդ գինա, ես՝ գինամ էնոր,— մայրը մինուկ է ապրում, դռանը կանգնած դնդնում ու այծի մազ է մանում,— Հին տուն, հին երդիկ, հին աստված,— այծի մազի հետ հուշերն է մանում,— շեն տուն, տաք թոնիր, կապույտ երդիկ, մեծ աստված... Ամենը անցավ։ Հին տունը խլեզների բույն է, տաք թոնիրը՝ մի բուռ մոխիր, կապույտ երդիկը՝ այդ բուռ մոխրի տակ փչկած աչք, մեծ աստվածը... մեղա քեզ, տե՞ր, աստվածը, աստվածը ալան,— մայրը դռանը կանգնած է, վիրու այծի մազ է մանում,— ամեն ինչ անցած է, բոլորը գնացին ծուխ ու մխի մեջ, գնացին-կորան, մնացել է մի տղա, մինուկ մի տղա... Որտե՞ղ

ես, խելառ տղա, այսօր ո՞ր կածանի վրա ես, մահաշունչ ո՞ր ճամփի վրա, խև տղա... անիծված տասնոցը ծոցում, խաղը շուրթերին զոր ու գիշեր թափառում է գայլերի ոհմակով լցված այս աշխարհում, ականջներում գայլերի ոռնոցը, թիկունքին գայլերի կարմիր աչքերը... Քո շուրթերին ծաղկող խա՞ղն է քեզ պահում, թե՞ անիծված տասնոցը, տղա, հիմա ո՞ր կածանի վրա ես, ամեն կածան ոտաց տակի ամեն կածան օձ է, անաստված տղա,— մայրը դռանը կանգնած որդու ճամփաներն է փաթաթում իլիկի վրա, շեկ, կապույտ ու ճերմակ այծերի մազերը խառնել է իրար, որդու համար կաքվագույն այծենի պետք է գործի, Նորափեսի այծենին,— այդ ո՞ւմ երդում տվեցիր, որ քո տունը քարանձավը պետք է լինի, քո բարձը՝ քարը, քո ծոցինը՝ պողպատե շուրթերով անիծված տասնոցը, այդ ո՞ւմ երդվեցիր, անխելք տղա, աստծո՞ն... Մեղա, տե՜ր, ո՞ր աստծոն, այդ ո՞ր ամենակարող ու քեզ զորավիգ աստծոն խոսք տվեցիր, որ կարմիր-կանաչ չկապես, որ ուռքը[1] չառնես ձեռքիդ, չկանգնես էս անտեր տանիքին... էս անտեր երդիկից երեխայի ճիչ չպետք է ելնի։ Ո՞ր անխիղճը հորինեց այդ ուխտն ու պայմանը, Լեռան որդի, քարանձավի բնակիչ։

Իշխանձորցի Մանեն... Նահատակ Մանեն նույնպես դարձավ լեռան որդի, հազարից մեկ սարերից վար չի իջնում, Լեռան որդի է և քարանձավի բնակիչ, բայց տես, որ կին ունի, սերունդ ունի, հիմա ո՞վ հորինեց, ո՞ր անխիղճը հորինեց այս նոր ուխտ ու պայմանը՝ Լեռան որդի քարանձավի բնակիչ, միայն Լեռան որդի... Իսկ քո մայրը քո փ՞նչն է,— մայրը դռանը կանգնած վիրու այծի մազ է մանում, որդու համար կաքվագույն այծենի պետք է հյուսի։

Մրե, քո որդին գալիս է։ Ահն ու մահը հեգնող ժպիտը աչքերի խորքում, հավատարմությունն ու երդումը ճակատին, տասնոցը այծենու տակ խրած, ճտպտուն խուրջինը ուսն ի կախ։

— Մա՛, խաբրիկ Նորեին ես լավ եմ հիշում. ճերմակած տարիքում էլ այսպիսին էր, միայն տասնոցն էր փայտե, բայց հենց այսպիսին էր,— կաքվագույն խուրջինը ուսին ի կախ, երդը շուրթերին Խաբրիկ Նորեն ահա գյուղ է մտնում...— մեր դռան առաջ քառսուն կարաս, Ձեր դռան առաջ քառսուն կարաս,— աղջիկներ, հարսներ, մինչև Խաբրիկ Նորեն կհասնի ձեզ մոտ, կհասնի աղբյուրի մոտ, մի կժիկ ջուր լցրեք Խաբրիկ Նորեի համար, խնդմնդալն ու քչփչալը ձեր իրավունքն է, բայց Խաբրիկ Նորեն ծարավ է,— Ձեր դռան առաջ քառսուն կարաս, քառսուն կարսի գինին էր

---

1 Ուռք — Նորափեսի գրոշակ, որի վրա կատակ-մարտ են անում երկու կողմի հարսանքավորները։

խաս,— Հարսնուկ, աղջի, էդ կժիկ տուր Խաբրիկ Նորեին, Խաբրիկ Նորեն ծարավ է ու շատ է ծարավ... Օխա՜աաշ... այս ինչքան զով կժիկ է ու ինչքան անուշ ջուր է,— Քառասուն կարսի գինին էր խաս, Ամեն կարսին արծաթե թաս,— կժիկը Նորեն լցրու, Հարսնուկ, աղջի, Խաբրիկ Նորեն ծարավ է ու ծարավ,— Ամեն կարսին արծաթե թաս, Ամեն թասին պագիկ մի տաս։— Այդ երգը ո՞ւմ համար է, Խաբրիկ Նորե, այդ տաք, փոթորկուն երգը որտեղի՞ց է գալիս, թե կրծքիդ տակ սերը այնպես է վառվում, ինչպես երգը քո շուրթերին, կարմիր-կանաչ կապիր, նորաթեսի դրոշակը առ ու կանգնիր տանիքին։ Տե՛ս, մայրդ դռանը կանգնած քեզ է սպասում.— Մարե՜ե... Ի՞նչ անուշ բան ունես, Խաբրիկ Նորեն անոթի է, Խաբրիկ Նորեն ամպերի տակից է գալիս և անոթի է, սնդուկներում պահած ի՞նչ անուշ բան ունես, Խաբրիկ Նորեն շատ անոթի է և քեզ շատ-շատ-շա՜տ ու շատ է կարոտել, մարե, անուշ մարե, շատ-շա՜տ է կարոտել ու շատ վռազ է... Հիմա կզարկվի Իշխանձորցի Մանեի տուն, կդառնա տուն կգա ու... շատ-շա՜տ վռազ է... Վարդե մերիկ, Նահատակ Մանեն քեզ շատ է կարոտել,— վիրու էծի միս ունի՞ս, Վարդե մերիկ, մեկ կտոր Խաբրիկ Նորեին տուր, մնացածը դիր խուրջին, քունջ ու պուճախներում ինչքան անուշիկ բան ունիս, հանիր ու Խաբրիկ Նորեին տուր. Կեպինից Նահատակ Մանեի մոտից Խաբրիկ Նորեն բարի լուրով է եկել. Օհանն ո՞ւր է։— Մեր թագվորն էր քաջ, խաչկոտ խաչ ու մաչ, Պսակն էր կարմիր, արևն էր կանաչ։ Չէ, Վարդե մերիկ, Խևոյի հետ գործ չունես, Քարանձավ Խևոյի հետ գործ չունես. Խևոն Մարութա սարինն է. Կաբլորաքարինն է. Օհանն է քոնը,— Պսակն էր կարմիր, արևն էր կանաչ,— Խևոն չորս-հինգ վիրու այծ կզարկի, Օհանը թող Մուշ տանի՝ խմիչք բերի, Խևիկը... երազը հեչ. Վարդե մերիկ, երազը ոչ ու փուչ է, Խևոյի հայացքից գնդակները վանվում են, Խևոյին գնդակ չի բանի, Վարդե մերիկ... Խևոն չորս-հինգ վիրու այծ կորսա, Օհանը թող Մուշ տանի՝ կոնդոռա[1] ու մատանի ու պսակշոր բերի,— Խերն ու բարին մեր թագվորին,— հա՜, Վարդե մերիկ, հա՜, քո՝ հարսին հեռու չենք տանի. հիմա Խաբրիկ Նորեն կբարձրանա Կեպին, կիջնի Հավատորիկ գյուղ, կմտնի Շառոյի տուն ու թե՝ Շառոյի օջախում նշանելու աղջիկ եղավ՝ քո հարսն է։— Իսկ Օհանը կտուրին է. դեզի գլխին պարան է փռել խաչփառ և քարերի ծանրությամբ ձգում է,— հա՜, Վարդե մերիկ, Նահատակ Մանեի կամոք է, Նահատակ Մանեն Կաբլորաքարից բարձրացավ Կեպին և... բորենինե՞ր, գայլե՞ր այս կողմերը հո չե՞ն երևացել։

— Չէ՛, Վարդե մերիկ, ձվածեզի ժամանակ չէ։ Նահատակ Մանեն

---

[1] Կոնդոռա — կոշիկ։

Կաբլորաքարից բարձրացավ Կեպին, և աչքը խաբրիկ Նորեի ճամփին է, և խաբրիկ Նորեն վռազ է, շատ վռազ է... Խաբրիկ Նորեն պետք է զարկվի Կաբլորաքար. Գևորգ Ջաուշի մոտ ու բարձրանա Կեպին... Օհա՜ն,— Խերն ու բարին մեր թագվորին,— իսկ Օհանը այծի մազից գործած պարանով խաչակնքում է դեզը, և ամաչկոտ ժպիտը քթի ծայրից կախվում է պարանն ի վար։— Խաբրիկ Նորե, ղուրբան, դու կրակի՞ էիր եկել,— Խաբրիկ Նորեն վռազ է,— Խաբրիկ Նորե, ղուրբան, երեկվանից Խևոյի հրացանի ձայնն է լսվում, կարծես թե Խևոյի հրացանի ձայնն է՝ հեռվից, շատ հեռվից,— իսկ Խաբրիկ Նորեն հրացանի ձայն չի լսել և շատ վռազ է։— Մարե, քո որդին եկավ... Այս որքան նախշուն մանած է, անուշիկ մերիկ... Կապանը հաստ հյուսիր, անուշիկ մերիկ, ձմեռը խիստ է լինելու... Ախոն է գուշակել, Կաբլորաքարի գլխին Ախոն գուշակեց՝ սաստիկ է լինելու ու ձմեռը երկար, կապանը շատ հաստ հյուսիր՝ լեռներին հարմար, իսկ կանաչ-կարմիրը, մերիկ, թող... Այդ ինչքան ես ծերացել, անուշիկ մերիկ, ինչքան ես ճերմակել, անուշիկ մերիկ... իսկ կանաչ-կարմիր թող Օհանը կապի...

Հետո՞... հետո ձմռան արևոտ օր է։ Երկու օր առաջ փոթորիկ է եղել, յոթ օր, յոթ գիշեր կիրճ ու սարերում մոլեգին ոռնացել է բուքը, և յոթերորդ օրվա գիշերը Ախոն գուշակել է, որ բուքը խեղդվում է՝ արդեն մարում է ձմռան կիրքը, օրը արևոտ ու խաղաղ է լինելու, ու ուղիղ երկու շաբաթ Ծովասարի գլխին ծաղկելու է արեգակը. ով ճամփա ունի, թող կտրի, ով խոտ ու տերև ունի, սարից բերելու, թող սահնակը քաշի ու ելվերի, ով հարս ունի հեռվից բերելու, թող գաթա թխի, Խաբրիկ «աղվես» ճամփի, խնամու տուն և զուռնա-դհոլ կանչի։ Ուղիղ երկու շաբաթ արեգակը ծաղկելու է Ծովասարի գլխին։ Յոթ օր, յոթ գիշեր փոթորիկ է եղել. քամին գզել է ձյունը, գզել-մանել ու հյուսել է ձյունը, ոլորել է, հյուսել ու ձգել, ծեծկել ու ձգել ու հիմա սար ու ձորում պիրկ ձգված է մետաքսե ճերմակ քողը։ Ձյան մեջ փոթորիկի ուժը դեռ չի մարել, հյուսած ճերմակ մետաքսը դեռ ինքն իր մեջ ճգվում է, և քամու հրեղեն շունչը պեծին է տալիս, աստղաձև ու աստղափայլ պեծեր են թռչկոտում արծիվների շեղ հայացքի տակ։— Հարսանքավորները ճամփա են ընկել, ձիերի սմբակների տակ ճռռում է փոթորիկի ուժը,— ճերմակքող աշխարհի վրա բոցավառվել է արեգակը,— Հարսանքավորները ձիերի ու իրենց կոպերին մուր են քսել. ձյան ու արևի խաղից կքաղվեն հայացքները,— Ծովասարի գլխից ահա գլորվում է արեգակը,— դհոլի դմփրտոցը թավալվում է,— Հարսանքավորները ահագին ճամփա են կտրել, խնամու Հավատորիկ գյուղը երևում է. դհոլի դմփրտոցը թավալգլոր իջնում է դեպի գյուղ և գլոր-գլոր իջնող դմփրտոցից թրթռում է ապրշումն

ճերմակ ու ձիգ քողը, զուռնայի ծղրտոցը արևի շողերի հետ սոտ է տալիս,— երեխեք, մանկտիք, խելառ ճժեր, ձեզ ո՞վ է սովորեցրել տնազել՝ զուռնի ծղրտոցի ու արևի շողերի պես գլուխկոնծի տալ ու ծիծաղել... Խնամի, էս պայծառ օրը վկա, մեր ոտքը բարի է։— Իսկ նորափեսի դռանը փոթորկում են զորթերը, երկու օր առաջ պտտահողմն էր այդպես պարում, այդպես թեթև, ճկուն ու մոլեգին,— խնամի, իրավունք տուր հագցնենք մեր հարսնուկին—

Էն տնիկն,
Որ կը մտնիս՝
Դարկեն ի բաց,
Թուդիրն ի հաց։
Էն սեղան,
Որ կը նստիս՝
Սեղան ի շեն,
Սուփրեն ի լեն։
Էն գինին,
Որ կը խմիս՝
Ձեռ չդողա,
Կթեղեն շողա։—

Իսկ նորափեսի տանը զորթերի թերդպարը օղակել է թագվոր Օհանին. թերդպարը օղակել ու կարկամել է, Վարդե մայրը որդու կարմիր-կանաչն է կապում՝ կարմիր խնձորներով աղջնակների օրհներգի տակ—

Էն արտիկ,
Որ, կը վարիս՝
Սերմն արծաթի,
Կոուքն-օսկի։
Էն աղջիկն,
Որ կը սիրիս՝
Մեկ մարդու տեր,
Ցոթ որդու տեր։
Էն յաշին,
Որ կը հասնիս՝
Պսակն-արև
Գլուխդ վերև։—

Խնամի, պատերդ լայնացրու. Լեռան որդիներն են գալիս... Կրակի պես բակ են մտնում ֆիդայիները...

— Հասմիկ, այս ինչքան լավ է գրել... Մարութը չեկավ՝ մի բաժակ օղի խմեինք, այս ինչքան ճիշտ է գրել Կոստան Զարյանը,— «Հայոց դաժան լեռներում քայլում էին աստվածները բարկացած»,— կրակի պես

ներս են մտնում, հարսանիքը, բոցավառվում է,— Գևորգ, Անդրանիկ, Մակար... Լեռան որդիներ,— ինչպե՞ս հայտնվեցին բարկացած Աստված-ները այս մրոտ օճորքի տակ, ինչպե՞ս հայտնվեցին ու ժպտում են,— Գևորգ, Անդրանիկ, Մակար, Սմբատ... Լեռան որդիներ... Խաբրիկ Նորե... այս ծխոտ տունն ու այս սուրբ սեղանը ձեզ փեշքեշ... Նոր խմիչք բերեք... խորվուն[1] բերեք... Շառոյի օջախը որքան շենացավ, ուրախությունը որքան մեծացավ... Գալե, Ղազար, Խևո, Խաբրիկ Նորե... Լեռան որդիներ... Շառոն հիմա նոր արջառ կզարկի գետնին... Ոչ, ոչ, եղածը ֆիդայիների համար լի ու բոլ է, ֆիդայիների համար այս սեղանը թագավորի սեղան է, և թող ներող լինի Շառոն, որ ֆիդայիները զենք ու փամփուշտակալ չեն քակելու, այծենիները չեն հանելու, սեղան չեն նստելու, այսպես՝ ոտքի վրա ամեն մեկին՝ մեկ-մեկ փառչ գինի, և թող շատ զորթեր կանաչ-կարմիր կապեն, նախշուն գոգնոցներով շատ աղջիկներ պսակզորեր հագնեն, թող շատ լաճեր ծնվեն Սասուն աշխարհում, և այս դժնի լեռներում ուրախությունը թող հաստատ լինի. այս անօրեն երկրում է հորինվել՝ «Հարսն վըր ձիուն չես իմանա ո՞ւմ բաժինն է», հիմա թող հարսանքավորները ճամփա ելնեն ի սուրբ Կարապետ, Լեռան որդիները ամպերի միջից, աչքն ի հարսանքավորներին, ամպերի միջից կիջնեն սուրբ Կարապետի գավիթը։— Իսկ այն կողմից նորափեսա Օհանն է ահա ճամփա ելել. թիկնապահ զորթերով շրջապատված գալիս է,—

Սուրբ Կարապետ զորավոր խաչ,
Խաչն է օսկի, քարն է կանաչ,
Մարդ կա՞ էնօր չեղնի ճանանչ,
Մշո Սուլթան, սուրբ Կարապետ,

կաքվագույն ելակի վրա պնդել է լայն գոտին, խաչփառած կանաչ ու կարմիր ժապավենները փողփողում են արևի տակ, արախչու պուխը խուռուռ է տալիս ու քշփշում ականջի մոտ, և կապույտ աչքերը ամաչկոտ ժպտում են. քիչ հետո տեսնելու է նշանածին։ Առաջին անգամ։ Տեսնելու է քոռի տակ և պսակվելու է։ Գյուղում եկեղեցի չկա, և պսակը սուրբ Կարապետն է կապելու։— Կաղ լինի, կույր լինի՝ տե՞ր ես, որդյակ։— Տեր եմ,— կաղ լինի, կույր լինի, տե՞ր ես, որդյակ։—...— Բարձր ասա, որդյակ իմ, ձայնարկու ասա, որ Տերը վկա լինի քո ուխտին։— Կաղ լինի, կույր լինի՝ տե՞ր ես, որդյակ։— Տեր եմ։— Այդ որքան անուշ ձայն էր և ինչպես զնգաց Օհանի սրտում, քո ձայնը, Մըյրո, զուրբան, քո ձայնը քանց աղբյուրի՝ անուշ ու զուլալ, և զրնգաց Օհանի սրտում, և Օհանի մարմնով դող անցավ, անուշ դող անցավ, Մըյրո, զուր-

[1] Խորվուն — փակ թոնիրի մեջ ամբողջական ոչխարը խորոված։

բան... վերջապես քո ձայնը ընկավ Օհանի ականջը։ Իսկ քո երեսը ե՞րբ է տեսնելու՝ դեռ կես ցերեկ ու մի երկար գիշեր, էլի մի ցերեկ ու մի գիշեր, էլի... Օհանը դեռ նոր-նոր ուռքը՝ նորափեսի դրոշակն առած տանիք պետք է բարձրանա,— դեռ նոր-նոր «ուռքակոիվ» պետք է լինի։ Եվ կտուրին՝ ձյան մեջ բոցավառված նորափեսի դրոշի շուրջբոլորը երկբանակ ղորթերը ահա գուլաշ են բռնել, ջլապինդ զարկվել են իրար, մի աչք դարձած գյուղի խանդոտ հայացքի տակ ահա մլարել են՝ չքացել է ուռքը, զուռնի ծղրտոցի, դհոլի դմփրտոցի, ծափ ու ծիծաղի, կոչ ու կանչվռտուքի տակ բորբոքվել են ու մոռացել, որ կատակ-կռիվ է. հարսանիք է և ուռքակռիվ։— Ջահելներ, ղորթեր, մի խեցեք, ուռքակռիվ է,— գյուղի նահապետը ճերմակ գլուխը բաց՝ հրմշտվում է կրակված ջահելների արանքում,— հարսանիք է, ուռքակռիվ է, խելառներ, ղորթեր... Զուռնայի եղանակը փոխիր, «Քոչարի» նվագիր, զուռնաչի, թող ղորթեր «Քոչարի» բռնեն և թող պարի մեջ հանդարտվեն, հանդարտվեն ու հաշտվեն։ Այդպես՝ ձեռք-ձեռքի հետ,— պապը հեյրան իր խելառ ղորթերին,— ձեռք-ձեռքի հետ թող բռունցք դառնա, այդպես՝ ուս-ուսի հետ թող պատ դառնա,— պապը գժվի իր խելառ ղորթերի համար,— թիկունք-թիկունքի հետ թող բերդի պատ դառնա, այդպես... Եվ Բերդպարը մեկեն, հանկարծ ու մեկեն քարանում է... Ֆիդայիները այդ ինչպե՞ս հայտնվեցին... Բերդպարը մոլեգին ռիթմի մեջ քարանում է։ Այդպես՝ ձեռք-ձեռքի հետ բռունցք, ուս-ուսի՝ թիկունք-թիկունքներով կամար, ձիգ ու համախումբ հայացքով ղորթերը ֆիդայիներին են դիմավորում։ Պատվո հրամանը ո՞վ տվեց։ Զուռնայի կանչը զնգում է Սև սարի թիկունքին թեքվող արեգակի շողերի մեջ, հետո կիրճերում ինքն իրեն թավալվում է դհոլի դմփրտոցը, կտուրներին ու պատուհաններին թառած երեխաների թևերի տակ թպրտում է թռվռոցը, ափն ի բերան մայրերն աստծո մատներն են համբուրում, ճերմակ գլխով նահապետի մտքում ճմլկտոցով աչք է բացում շեկ ու ջահել մի վագր, գլուխ-գլխի հավաքված հարս ու աղջիկները ուզում են դեմքերը միմյանց թիկունքներում թաքցնել, բայց հայացքները փախչում են դեպի ֆիդայիները... Լռությունը շունչը պահել է։ Թնդացող այս լռության հրամանը ո՞վ տվեց... Նահատակ Մանե, ժողովուրդ, այս ի՞նչ լռություն է, Լեռան որդիները հարսանիքի են եկել, պարելու են եկել։ Ջահելներ, ղորթեր, պարը ինչո՞ւ եք սառեցնում, Լեռան որդիները ձեզ հետ նույն պարն են պարելու... Չէ, չէ, դեռ չեն մոռացել, պարելը դեռ չեն մոռացել, պարը, Բերդպարը ծնկածալերում քնած է եղել, երբ իրենք են քնել, Բերդպարը մկաններում պարել է՝ քարանձավում, մթան մեջ։ Եվ ինչ լավ եղավ, Նահատակ Մանե, որ Օհանի ականջը կտրեցիր». ֆիդայիները երբվանի՞ց դահոլ-զուռնայի ձայն

չեն լսել, է, երբվանի՞ց պար չեն բռնել։ Թափով պարեք, տղերք, շախով պարեք, այս պարը գտած է, գտածուրիկ է, այս պարը տղերք աստծո չէ, Օհան Թագավորի նվերն է, Լեռան որդիներին և գուցե վերջինը, ամենավերջին պարգևն է ֆիդայիներին։ Թափով պարիր, Սպաղանց Մակար, Թափով ծունկ ծալիր, ծունկ ծալիր ու Թափ տուր Թիկունքդ, հոգնե՞լ ես, Սպաղանց Մակար, մկաններդ ծերացե՞լ են...— Լեռան որդուն ջահել ու ծեր չկա, քարին հին ու նոր չկա, Սպաղանց Մակար, շախով ծունկ ծալիր, ծունկ ծալիր ու Թափ տուր քեզ և քո չպարած բոլոր պարերը Թող այս պարի մեջ պարեն, մկաններում հանգչած բոլոր-բոլոր, բոլոր պարերը այս պահ ու պարի մեջ հարություն առնեն։ Թափով պարեք, տղերք, շախով պարեք, տղերք, այս պարը գուցե վերջինն է. ամեն պար ֆիդայու համար վերջին պար է, տղերք, շախով պարեք, կրկնակի ծունկ ծալեք, ծունկ ծալեք, Թափով պարեք, տղերք, մոլեգին պարեք և Թող մկանները դատարկվեն պարի կարոտից։ Մոլեգին պարեք, տղերք, սա Օհան Թագավորի հարսանիքը չէ, հարսանիք է. մոլեգին պարեք, այդպես խենթ պարեք, Թող ձեր փչված հարսանիքները բողբոջեն ձեր երակներում, ձեր հարսը Մարութա սարի ամպն էր, որ երկինք չվեց, ձեր կարմիր-կանաչը շանթն է, որ փշրվեց Կաբլորաքարի գլխին, խենթ ու մոլեգին պարեք. պարեք, այդպես պարեք, Թող արյան ամեն մի գնդիկ՝ կարմիր-կանաչ կապի և արյունը խենթանա ձեր երակներում...։— Եվ կրքոտ կանչերը շուրթերին, պարում են ֆիդայիները, կանչվռտուքն ու գոլորշին քլքլում է նրանց շուրթերին,— երեխաները բերանբաց նայում են՝ ամպերից հայտնըված աստվածները ծիծաղել գիտեն,— ձեռք՝ ձեռքի հետ բռունցք, ուս՝ ուսի համախումբ ծունկ են ծալում, ձյան մեջ քնած փոթորիկը արթնանում է նրանց ոտքերի տակ և գալարվում շառաչող թիկունքներին... Կանայք, հարս ու աղջիկները այլևս չեն կաշկանդվում. շիտակաչք ու բորբոք նայում են և մղվում դեպի ֆիդայիները։— Եվ հաստա՞տ է ձեր ուխտը, Լեռան որդիներ, անխա՞խտ է, մինչ ի մահ ձեր տունը քարանձա՞վը պետք է լինի, և գրկինը հրացա՞նը, ձեր պսակը սառը պողպատի հետ անքակտելի՞ է, առյուծ տղամարդիկ։ Եվ ո՞ւմ հետ պսակվեն ձեզ համար ծնված աղջիկները, ո՞ւմ եք Թողել, անխելք այրեր, ո՞ւմ եք Թողել ձեզ համար, միայն ձեզ համար, հենց ձեզ համար ծնված հրեղեն աղջիկները։ Ձեր շուրջբոլորը Թավռացող, ձեր ժայռեղեն թիկունքներին փարվող, ձեր փոթորկուն խելառ ոտքերի տակ տրորվող շողերը, հրեղեն աղջիկների կանչերն են, ձեզ են կանչում, ձեր ըմբոստ ճակատներին կտրակցվող շողերը հրեղեն աղջիկների համբույրներն են,— ձեզ են կանչում... և մի օր... մի օր սուրբ Կարապետ, այդ օրը Թող ոչ ու փուչ դառնա, և մի օր... սուրբ Մարաթուկ... մի օր ձեր ճակատներին... այդ ըմբոստ ճակատներին

արքիեպիսկոպոսները կոչված... Այս ամբոխ ճակատները ճակատասարին են նվիրված, այս ժայռերեն թիկունքները լեռներին են նվիրված, և որքան թանկ են լեռները, այս շառաչող երակները գետերին են նվիրված, որքան թանկ է Տալվորիկ գետը, այս երկրի ընտրյալների աստծո շնորհն, կրակն ու ճրագը երկրի օջախներին է նվիրված, և որքան թանկ են օջախները, այս առյուծ տղամարդկանց բաժին հարսանիքները զորթերի հարսանիքներին են նվիրված, և որքան թանկ են այս արյունոտ լեռները, և որքան թանկ են այս արյունոտ գետերը, և որքան թանկ է այս արյունոտ երկիրը։ Եվ որքան թանկ է այս հարսանիքը... Օհան... Սա Օհանի հարսանի՞քն է... Օհանի բախտի ուսին արժիվն է նստել. Օհանի հարսանիքին ֆիդայիներն են պարում։ Արծվի թևերը թող բախվեն քո ուսերին, Օհան, պտտահողմ հագիր։

Խևիկ, ախպերիկ, Լեռան որդիք, Օհանը, որ այդպես ալեկոծ է, չիմանաք, թե քողքված հարսնուկի անուշ ձայնն է ընկել ականջը, չիմանաք, թե Օհանը իր հարսանիքի պարն է այսպես փոթորկում, Խևիկ, ախպերիկ, Խաբրիկ Նորե, Լեռան որդիներ, Օհանը ձեզ համար է այդպես գժվել, Օհանը ֆիդայիներին ուրիշ բան չունի նվիրելու, այս է՝ իր պարն է, իր հոգին է, այս կրակոտ պարն ու ալեկոծ հոգին է՝ և թող ձեզ ընծա լինի։ Օհանը հիմա նորափեսա չէ, Օհանը գյուղի ջահելներից մեկն է, այս գժված զորթերից մեկն է... պարեք, զորթեր, խենթացած ու խելառ պարեք. սա Օհանի հարսանիքը չէ, սա միայն Օհանի բախտը չէ, անցած գիշեր ձեր կտուրներին արծիվ է նստել, և տես, որ թերդպար եք բռնել ֆիդայիների հետ. ֆիդայիներին վայել պարեք, զորթեր, այնպես մոլեգնեք, որ փոթորիկը փոթորկվի, գոտի դառնա ձեր պարանոցներին, այդպես քրտնմխած ու խելագար պարեք և թող՝ ընծա լինի Լեռան որդիներին։ Զուռնաչին նվագում է՝ աչքերը փակ, դահուլչու աչը փայտի հետ գլխավերևում պտտվում ու թափ է առնում, պտտվում ու թափ է առնում, թափ է առնում,— քառասուն գիշեր քարանձավները չպետք է դատարկվեն դմփրտոցից,— զուռնաչին նվագում է աչքերը գոց, բայց փակ կոպերի տակ փոթորկվում է ֆիդայիների պարը։ Նորափեսա Օհան, քո խոստացած կոտ կորեկը զուռնաչին քեզ է բաշխում. այն նվագի տակ, որ ֆիդայիներն են պարում, այդ նվագը ընծա է,— զուռնաչին նվագում է կարմրատակած, կրակված, աչքերը փակ, որտեղի՞ց է լսվում արձագանքը, կանչերը որտե՞ղ են թափառում... բոլոր սարերից, բոլոր ձորերից, բոլոր կիրճերից, բոլոր անձավներից, բոլոր կողմերից արձագանքները թող հավաքվեն ետ գան, այսօր թող դառնան ետ գան. ֆիդայիները այստեղ են... Գևորգն այստեղ է, Անդրանիկն այստեղ է, Սպաղանցի Մակարն այստեղ է, Նահատակ Մանեն, Գալեն, Զոլոն, Ախոն, Շենիկա Մա-

նուկը, Ղազարը, Բրինդարը, Սմբատը, Կարոն, Խևոն.. Լեռան որդիները այստեղ են... Խաբրիկ Նորեն... Մարե՜ն... տես քո հյուսած կաքվագույն աբան ինչպես է վայելում Խաբրիկ Նորեին, նշանի համար հյուսած նախշուն աբան, տես որ փաթաթվել է պարով, թող որ աչք-աչքով տեսար՝ քո որդու կաքվագույն աբան, պարն է բոլորել... իսկ վաղը... սուրբ Մարաթուկ... Մայրը նայում է ափն ի շուրթ և աստծո ձեռքն է համբուրում,— սուրբ Մարաթուկ... Մշո սուլթան սուրբ Կարապետ,— Խաբրիկ Նորե, ընդունիր,— Մշո սուլթան սուրբ Կարապետ թող լինի ձեզ պահապան,— Լեռան որդիներ, ընդունեք մայրերի այսօրվա, այս իրիկնապահի ընծան և ձեզ հետ լեռները տարեք,— գլուխ-գլխի հավաքված ափերի մեջ մրմնջացող մերիկները այս ինչպե՞ս են մոռացել, այսքան մոտ, մոտ, մոտ կանգնած իրենց ջահելությունը, ճերմակ քողը գլխին, կողքներին կանգնած է ահա նորահարսը,— և ինչպե՞ս չեն տեսնում՝ մամիկները, կանայք, հարսները, աղջիկները, նախշուն գոգնոց կապած աղջնակները, բերանբաց մանկտիք... Վարդե մարե,— հարսը կանգնած է սկեսուրի կողքին և շղարշված աչքերի դիմաց գալարվում է ճերմակ մի փոթորիկ։— Թող բոլորը, բոլորը մեկ աչք դարձած նայեն հարսին, հարս Մըյրոն քողը... քողը քաշելու է, հարս Մըյրոն պետք է պարզաչք տեսնի ֆիդայիներին և ֆիդայիների պարը... և թող հարս Մըյրոն ահա... ահա այսպես՝ բացդեմք ու պարզաչք կնայի ֆիդայիներին և... և,— ինչ գեղեցիկ են ֆիդայիները... Օհանն ու Խաչիկը ինչքան նման են... ինչ գեղեցիկ են ֆիդայիները,— քառասուն ջրաղացի քար ծակած-դուրս եկած այս հայացքը ձեզ ընծա, Լեռան որդիներ... Այսպես։ Եվ եթե ուզում են ողջ ամեն... թող գյուղը ողջ ամեն դատի լեռների օրենքն ու ադաթը խախտած հարսին... Այսպես,— ինչ գեղեցիկ են ֆիդայիները,— և եթե ուզում են, թող հարսանգովք չերգեն... կարմիր խնձորներով աղջնակները թող Մըյրոյի հարսանգովքը չերգեն այս գիշեր...

---

* * *

Հարսը նստած է պսակաշորը գլխին, հարսը նստած է թոնրի մոտ, հարսանգովքը երգող աղջնակներով բոլորուն.

Էն քու չակատ, որ քի գասեն, ջրեդի մըյդեի նման ը,
Էն քու էրեսն, որ քի գասեն, խլաթա խնձորի նման ը,
Էն քու ընքներն, որ քի գասեն, խալմի քաշածի նման ը,
Էն քու աչքիր, որ քի գասեն, բիլոռի շուշի նման ը,
Էն քու քիթիկն, որ քի գասեն, սուլթան սիսեռի նման ը,
Էն քու պերան, որ քի գասեն, ժամդան խորանի նման ը,

Էն քու լեզուն, որ քի գասեն, բիլբուլի խոսալու նման ը,
Էն քու ծծերն, որ քի գասեն, բոստանի շամամի նման ը,...

Հարսը նստած է, հարսանգովքը երգող աղջնակներով բոլորուն.

Էն քու նստիլն, որ քի գասեն, սարերու սեյրանի նման ը,
Էն քու քելիլն, որ քի գասեն, չոլերու չեյրանի նման ը,—

ինչ գեղեցիկ էին Ֆիդայիները և ինչքան նման էին Օհանն ու Խևոն։ Ֆիդայիները բարձրացել են լեռները, Վարդե Մարեի նվիրած բրդյա գուլպաները հագած բարձրացել են լեռները. բայց հարսանքատանը դեռ բորբոքվում է նրանց շունչը. նրանց դատարկած փարչերում գինու գավերի մեջ, ջահել ու ծերերի աչք ու շուրթերին, մրոտ սյան ու առիքին, կլոր երդիկի վրա բորբոքվում ու բոցկլտում են նրանց շունչն ու հայացքները։ Եվ որքան խրոխտ է, զգաստ ու խրոխտ է նստած այսօրվա թագավորը։

Մեր թագվորն էր աչ, խաչկոթ խաչ ու մաչ,
Պսակն էր կարմիր, արևն էր կանաչ։
Կանչեք-բերեք զթագվորներ,
Որ գրկեր շորորն ի ծառին,
Մնդրիկ զարկեր սուրբ սեղանին
Խերն ու բարին մեր թագվորին։
Կանչեք-բերեք զթագվորներ,
Որ գրկեր շորորն ի ծառին,
Մնդրիկ զարկեր սուրբ սեղանին,
Խերն ու բարին մեր թագվորին։

Հետո... հետո էլի մի ցերեկ ու մի գիշեր է անցել և էլի գիշեր է, սյունից կախված ճրագը պլպլում է, պատի կավածեփ մրոտ պատի խորանում մոմեր են վառվում, քողքված հարսը խոնարհ կանգնած է տան կենտրոնում, թոնրի մոտ ժպտադեմ Օհանն է, երդիկից աստղեր են թափվում հարսի ճերմակքող գլխին, Օհանն ամաչկոտ ժպտում է և դողացող ձեռքը մոտեցնում,— Մրյրո, ղուրբան, բաց քու քող, քու էրես տեսնիմ...

***

— Իսկ ես, Հասմիկ, տաքսի ավտոմեքենան կանգնեցրի հանրակացարանի դռանը. հանրակացարանից միասին դուրս եկանք, տաքսի մեքենայով հասանք ձեր գյուղ, ես հորդ ասացի՝ եկել եմ աղջիկդ ուզելու, և հայրդ ասաց՝ քեզ հալալ է։

— Հայրս աղջիկը տվեց, որովհետև գիտեր, որ քո հոր հարսանիքին ֆիդայիները պարել են, և քո մայրը երգել գիտի։ Երգե՞ց... Երգիր, մա՛, մինչև չերգես, չի պոկվի։ Քո տղան է,— ժպտում է կինս,— քեզնից համառ է։

— Ձերն է լավ, գառնուկ, դուք եք ճիշտ։— Դա, իրոք, մորս կարծիքն է։— Թե չէ մեր էրգրի օրենքով ջահելները աչքերը փակ-փակ, փակ աչքերով գալիս կանգնում էին դեմ-դիմաց,— տե՞ր ես,— տեր եմ,— տե՞ր ես,— տեր եմ,— Եղավ ի՞նչ, խևիկ։

— Եղավ... ասեմ թե ինչ. ձեր էրգրի մտածողությամբ՝ այս օջախի աղջիկը այս օջախի որդուն վայելի, և ոչ մեկը իր բախտից չի խուսափել։ Ձեր էրգրի փիլիսոփայությամբ-մտածողությամբ, մա՛, մարդը շատ մեծ է, շատ հարուստ է, շատ խորն է. և խորքը ամեն ինչ ունի։ Ձեր էրգրի բոլոր կանայք իրար նման են, բոլոր տղամարդիկ իրար նման են։ Բացառիկների մասին չխոսենք. ժողովրդի կանչով ու կոչով ծնվածները աստվածներ են։ Ուրեմն՝ բոլոր կանայք իրար նման են, բոլոր տղամարդիկ իրար նման են։ Եվ ուրեմն այս կինը քեզ, Օհան, այս տղամարդը քեզ, Մբյրու։ Դու քո ուզած, քեզ ցանկալի կին ու տղամարդը որոնիր Մբյրոյի մեջ, դու քո ուզածը, քեզ ցանկալի տղամարդն ու մարդը որոնիր Օհանի մեջ։ Որոնեք և կգտնեք։ Եվ որոնել ու գտել են... գտել են, գտել են ու սիրել իրար ու... ամուր է եղել ընտանիքը։

— Ա՛խ, խաբրիկ Նորե, խաբրիկ Նորե... Մարուքը չեկավ մի բաժակ օղի խմենք։ Ես նայում եմ դուրս, և հայացքս ձգում են մշուշապատ լեռները... Խաբրիկ Նորեն կարող է այնտեղ լինի... Երբ մարդ գերեզման չի ունենում, նրան ամեն տեղ կարող ես որոնել։— Ես խաբրիկ Նորեին լավ եմ հիշում, մա՛։

* * *

Ահա գալիս է խաբրիկ Նորեն բարձրահասակ ու սլացիկ, մաքուր ու ճերմակ ներքնաշապիկի վրա այծենին քաշած, ալեխառն թավ բեղեր ունի և ճիպ-ճերմակ մազեր. ծեր է արդեն. բայց ձիգ ու շիտակիրան։ Գալիս է՝ նախշուն խուրջինը ուսին, գլուխը հակած, մտածկոտ, ծուխը շուրթերին ոլորվում է, և չի կարող պատահի, այդ ծխի մեջ՝ երգ էլ կլինի։— Խաբրիկ Նորեն ո՞ւր է գնում. գարուն է։— Ես կանգնած եմ մեր կտուրին, առավոտ է։ Երդիկներին ծաղկել են ծխասյուները, գյուղամերձ ձորի երկնքում թռվռում են մանուշակները, ձորից դեն գյուղի ձիգ ու լայնշի լեռան կրծքին, քարերի մեջ, քարերի հետ խլվլում են կապույտ հագած մարդիկ. իմ հայրը նրանց հետ է. լեռան պորտով առու է անց-

նում, այսօր՝ հունն են մաքրում, առուն ի վեր, լեռն ի վեր քարերի մեջ, քարերի հետ խլվլում է գյուղի հոտը։ Ես կանգնած եմ կտուրին, մեր հողե տանիքին արածում է գոլորշին, քուլաները ձվից ելած ձագերի նման ճվլկոտում են մեր կտուրին, նորելուկ ճտերը անշշուկ ոտքի են ելնում ու ճոճվում և տոտիկ-տոտիկ շտապում են, որպես թե և շփոթված ետ են դառնում և փափուկ գլորվում։ Երդիկից հացի բույր է պոռթկում,— մայրս հաց է թխում,— մեր կարմրկեկ աքլորը գլուխը թեք ականջ է պահում տան շշուկներին և արծվորեն շեղ հայացքով կախում երդիկից, գլուխը թեք՝ ականջ է պահում ծխացող կտուրին, կարմիր կոպերը ճպճպացնում գոլորշու մեջ և մի կտուց բույր առած ղունղունում է, թևավորվում և գարնան ուրախությունը թևավոր թևերի տակ և աքլորային հպարտությունը փքված թևերի տակ պտտվում է շուրջբոլորը, պտտվում է թևավոր ու փքված ու ղունղունալով երկիր մոլորակի պտույտներն է անում իր շուրջբոլորը, հետո կանգնում է մեր տան քիվին և ձգվում և կանչում լեռան գլխին զրնգացող Արեգակին և թռչում իր կանչի ետևից և,— թրփ-թրփ-թրփ, հասնում է առվին և կտուցին մնացած կանչը թափում ջրի մեջ։ Մեր տան մոտով անցնող առուն պղտորվել է, և մշեցիների թաղից մշեցի Բարսեղն ու մշեցի Ֆիդոն եկել ու նստել են առվի եզրին։ Եթե Բարսեղ պապն ու Ֆիդո տատը հայտնվել են, ուրեմն գարունը չի խաբում՝ եկել է ու էլ ետ չի գնալու։ Աշնան ցրտերին հալևորները անհայտանում են։ Փողոցից փողոց հոլ կովեցնող երեխաներս նրանց ոչ մի տեղ չենք տեսնում, թե երևա՝ Ֆիդո տատն է՝ հերսոտ աչքերով և քֆրկան շուրթերով, աշնան ցրտից մինչ ի գարուն հալևորները իրենց լուռ ու դատարկ քողտիկներում են։ Հիմա եկել են,— մեր թաղի առուն նրանց դուր է գալիս,— եկել ու նստել են՝ առվի եզրին, առվի եզրի միակ ուռենու տակ։ Բարսեղ պապը փլվել է՝ ոտքերը բաց մեկնած, իրանն ի հետ ծալվել է ծնկներին և ծնկների արանքում թաղրեհ է քաշում։ Նա առվեզրին թեքված մի մեծ սալ է, եթե կտուրից իջնեմ, գնամ ու փարվեմ, եթե Ֆիդոյից չվախենամ, գնամ ու փարվեմ Բարսեղ պապի թիկունքին, կստացվի, որ լողացել ու մեկնվել եմ գետափի թեք քարին։ Բարսեղ պապի կողքին հաստ ձեռնափայտն է, մի ծայրը՝ փափախի մեջ և ճերմակ ու փռչոտ գլուխը հակած ծնկների արանքում, թաղրեհ է քաշում։ Բարսեղ պապը չի լսում, ես նրա ձայնը չեմ լսել,— երեխաներից ոչ մեկը չի լսել,— նրա աչքերն ու հայացքը չենք տեսել, բայց սիրում ենք նրան։ Ասում են բութ մատով, բթով ու ցուցամատով կարող է ծիրանի կորիզը կոտրել։ Մենք չենք փորձել, մի անգամ, անցյալ աշնանը Ազատը համարձակվեց՝ ծիրանի կորիզը ձեռքին մոտեցավ Բարսեղ պապին և ուզեց կորիզը մտցնել պապի մատների արանքը, բայց Ֆիդոն ծղրտաց, ու մենք

փախանք։ Բարսեղ պապի կողքին փեշերը փռել-նստել է Ֆիդոն և հերսոտ նայում է շուրջբոլորը։ Կտուրից չեմ տեսնում, բայց գիտեմ, աշնան աչքերն են՝ հերսոտ, աչքերի մեջ և կռիվ, և աղաղակ, և ճիչ, և լաց, և շուրթերին անեծք ու հայհոյանք։ Մայրս գիտի, որ եկել եմ, և ես կտուրին սպասում եմ, որ մայրս ձայն տա, մայրս հաց տա՝ մի լավաշ ու մի բոքոն, որ տանեմ-փռեմ Բարսեղ պապի ծնկներին և ձեռքին ձեռք տամ և մատներս կպցնեմ մատներին։

Խաբրիկ Նորեն գալիս է գլուխկախ, և շուրթերի մոտ հայտնվում ու ծոծրակին հալվում է կապույտ ծուխը։ Մեր տո՞ւն է գալիս, Խաբրիկ Նորեն մեր տուն շատ է գալիս, ուրիշ գյո՞ւղ է գնում,— Խաբրիկ Նորեն քամու պես ազատ է,— եթե ուրիշ գյուղ է գնում, հետը գյուղից դուրս կգամ, կհասնեմ մինչև ձորափ, ձնծաղիկ հավաքող ընկերներիս ձայն կտամ՝ Բարսեղ պապն ու Ֆիդոն եկել են։ Կտուրից թռչում եմ բակ, ուրախությյան մի ապտակ եմ տալիս իր կտուրին երազող մեր շանը, բակից թռչում եմ և վազքով, հայացքս Բարսեղ պապին, վազքով հասնում եմ ճամփին և ծփում դեպի Խաբրիկ Նորեն։— Խևո՜ռ, Խաբրիկ Նորեն ինձ շատ է սիրում՝ իմ անունը Խևո է,— հեե՜յ գիտի, ղոչաղ Խևո,— և տաք ափը գլխիս, քայլում ենք. եթե առուն անցնի, ուրիշ գյուղ է գնալու։ Առվի մոտ ոտքը կախ է գցում, ձեռքը գլխիս կանգնում է ու նայում ջրերին, ծխում է ու ծխի միջից շշնջում,— մշեցի Բարսեղ, ուրեմն նկատել է,— վրա-վրա ծխում է ու նայում ջրերին, ապա գլուխը բարձրացնում է,— Ֆիդոո՜։—

Ջուրն է յելի առվներ,
Աստված վերցու զպառվներ։—

Ֆիդոն ծղրտում է, չանչերը ծվատում են օդը, ձեռքը մեկ Բարսեղ պապի գլխին է չանչ դառնում, մեկ գրող ու ցավ է ուղարկում Խաբրիկ Նորեին, իսկ Խաբրիկ Նորեն Ֆիդոյին չի նայում, ժպտադեմ երդում է ու քայլում դեպի մեր տուն.

Ջուրն է յելի չախչներ,
Աստված պահե զախչկներ։
Ջուրն է յելի չոր կորգեր,
Աստված պահե զխորդեր։
Կանաչ վարոց տղեկներ,
Նարմիր խնձոր ախչկներ։

Մեր շունը ուրախ կլանչում է ու ձգվում։ Բոլոր շները ծանոթ ու մտերիմ են Խաբրիկ Նորեին, ոչ մի շուն վրա չի քշում,— ասում են՝ Խաբ-

բիկ Նորեն շան լեզու գիտի,— թե գիշերվա ճամփորդ է Խաբրիկ Նորեն, և անծանոթ ճամփորը վրա է քշում զարկվելով գալիս է, որ գզի անծանոթ ճամփորդին, զարկվելով հասնում է, և Խաբրիկ Նորեի հայացքի տակ շարժում է պոչը, մտերմորեն շարժում է պոչը, կլանչում է, թավալվում ոտքերի մոտ։

— Ովոռ-Ովինա՜ր,— դեռ շեմից կանչում է Խաբրիկ Նորեն։— Խերն ու բարին մեջ քու թոնրին, Ովինար։

— Նստիր,— շշնջում է քույրս, հարսնուկի պես խոնարհ ու ամաչկոտ ու սիրով շշնջում է,— նստիր,— և ավելի շշուկով շշնջում է,— Խաբրիկ Նորե։— Բայց քույրս ի՞նչ մեղավոր է, որ ասում է Խաբրիկ Նորե, ես էլ եմ Խաբրիկ Նորե ասում, մեծ ու փոքր Խաբրիկ Նորե են ասում։

— Գարուն է, Ովո,— ոտքի վրա կանչում է Խաբրիկ Նորեն,— բարի գարուն էղնի, Խաբրիկ Նորե։— Մայրս թոնրի շրթին ծնկած, կարմրատակած հաց է թխում, ճակատին բողբոջել է քրտինքը։— Տաք հաց կեր, Խաբրիկ Նորե։

— Ովինար, գարուն է՛էէ,— երգեցիկ կանչում է Խաբրիկ Նորեն,—

Կանաչ վարոց տղեկներ,
Նախշուն զոգնոց աղջկներ,
Գարնան կելնեն Ովասար,—

երգում է Խաբրիկ Նորեն։— Գարուն է, Ովո-Ովինա՜ր,— կանչում է Խաբրիկ Նորեն։ Հետո նստում է, խուրջինը դնում է կոճղի կողքին, գլխարկը հագցնում ծնկին և մի լավաշ քաշում է ծնկներին։

— Շեն մնաս, Ովինար... Շեն ես ու շեն օջախի ժառանգ... հե՛յ գիտի, օջախ՝ ճիժ ու պժով զրնգուն, ասլան տղամարդկանցով դրնգուն ու հազարաթող։ Քու պապ Մլքեն ուներ վեց ախպեր ու հինգ տղա։ Ջոջ տղի անունն էր Խուգե ու մեկելին՝ Մակար, միջնեկ տղի անունն էր Սաքո ու մեկելին՝ Պողե ու պստիկին՝ Գրկե։ Քու հերն էր Գրկեն։ Գրկեն ախպերներից փոքր ախպերն էր ու ամենից ածդահա ախպերն էր ու ամենից զորեղ։ Ու էն աշնան, որ ձեր օջախն հազարաթող դարձավ, էդ աշունքվան կարգվեց Գրկեն։— Խաբրիկ Նորեն՝ թիկունքը սյանը, ծնկներին լավաշ մանրիկ-մանրիկ ուտում է ու պատմում։

Էդ աշնան ձեր օջախի հոտը ելավ ամառանոց. հոտը Ովասար ելավ,— չունքի ձեր գյուղը Գյարմավն էր, Գյարմավը՝ Ովասարի տակ ու Ովասարը՝ ամառանոց,— ելան կապեցին քոչը և քշեցին հոտը ու բարձրացան Ովասար, և մինչ ի աշուն կլորեց հոտը, հոտը կլորեց՝ հազար դարձավ ու Մրքեն՝ հազարաթող։ Եվ ելավ Մրքեն, հազարից ընտրեց ամենալավը, հոտից ամենագեղեցիկ ու ամենաուժեղ խոյը ընտրեց,

ընտրեց ու նշան արեց. Մրքեն օրհնված գոտի կապեց պոզերին, և խոյը թողեցին Սովասար և հոտը քշեցին ու իջան գյուղ։ Էդ աշնան մի թուրք եկավ, Դիարբեքիրի կողմերից եկավ ու դարձավ Մրքեին՝ հյուր։— Քու գալը բարի՞ է,— հարց տվեց Մրքեն։— Ասաց,— լսել եմ «յարխուշտի» մեջ Գրկեի դեմը կանգնող չկա, լսել եմ ու հարցուփորձով, հարցնելով եկել, ու կա ու չկա պետք է մրցեմ։— «Յարխուշտեն» քո պարը չէ,— ասաց Մրքեն։— Ասաց,— ես հայերի մեջ եմ մեծացել ու գիտեմ ու պիտի մրցեմ ու պիտի հաղթեմ Գրկեին։— Լավ ասին։— Ու ելան հարսանիք արին. չունքի թուրքի հետ մրցել չէր ուզում Գրկեն ու առանց հարսանիք պարել չէր ուզում։ Աշուն հարսանիք արին ու կարգեցին Գրկեին։ Գնացին խութ, գնացին ու խութից հարս բերեցին, կանչեցին յոթը զույգ դահոլ-զուռնա, մեյդան բացեցին, ու պարեց Գրկեն։ Ջարկեց ու ճաքեցրեց թուրքի ափը, զարկեց ու թուրքի մյուս ափը ճաք տվեց, զարկեց ու փշրեց թուրքի մատանին ու գլորեց թուրքին։ Թուրքը՝ խանչալ քաշեց։ Հասան Գրկեի եղբայրները, հասան ու խանչալը խլեցին, հասան ու տրորեցին թուրքին, թուրքի թևից բռնեցին ու շպրտեցին գյուղից դուրս,— որտեղից եկել ես, էնտեղ գնա։

— Առյուծ տղամարդիկ էին քո հորեղբայրները...

— Ո՞ւր են,— բորբոքված նետում է մայրս և բաթաթը թափով շրխկացնում թոնրի կողին։— Իմ առյուծ հորոխպերներն ո՞ւր են, Խաբրիկ Նորե։

— Էղել են, Սովինար,— Խաբրիկ Նորեն ծխախոտ է փաթաթում՝ հանդարտ ու մանրակրկիտ,— էղել են։

— Թուրքը գնաց։ Գնաց թուրքը, ու այդ աշունն անցավ, ու այդ ձմեռն անցավ, ու եկավ գարուն։ Գարունն եկավ, բայց գարնան հետ հազարաթող խոյը Սովասարից չեկավ։ Կանգնեց տանիքին ու նայեց Մրքեն։ Հազարաթողը չկա, կանգնեց ու նայեց՝ ելավ ու նայեց Մրքեն, օջախի մեծն ու փոքրը աչք պահեցին Սովասարի ճամփին, դուրս ու ներս արին՝ աչք պահեցին. շատ աչք պահեցին հազարաթողի ճամփին, չունքի գարնան հետ հազարաթողը եկավ, թե անփորձանք ապրեց սարերում, թե անփորձանք ապրեց ձմռան մեջ, փոթորիկի մեջ ու գել ու գազանի մեջ, թե անփորձանք անցկացրեց ձմռան ու գարնան հետ եկավ հազարաթողը ու կանգնեց տիրոջ դռանը, եկավ ու խառնվեց իր հոտին, ուրեմն բարի է, բարի է ու հաջողության նշան։ Քո պապ Մրքեի հազարաթողը Սովասարից չեկավ, ու Մրքեն ասաց,— Մարաթուկ վկա, էս տարի իմ օջախի գլխին փորձանք կա։— Նստեց ու շատ մտածեց Մրքեն և զինեց եղբայրներին և զինեց իր որդիներին և էլի քշեց հոտը Մրքեն, ու բարձրացան Սովասար։ Եվ էն կողմից, Մշո կողմից Հուսեին աղի մշակը եկավ։ Եկավ ու շատ պա-

հանջկոտ եկավ,— Իմ աղեն,— ասաց,— քառասուն ոչխար է ուզում։ Իմ աղի տունն,— ասաց,— հյուրեր են եկել, մեծավոր են ու շատավոր, ու իմ աղեն քառասուն ջոջ ոչխար է ուզում. քառասուն ընտիր ոչխար է ուզում։— Գնա ու քո աղին ասա, թող իր շատավոր ու շատ մեծավոր հյուրերին հավաքի ու ինձ՝ Մրքեին հյուր գա։— Ասա քառասունը քիչ է, Մրքեն հարյուր ոչխար կմորթի ու հարյուրն էլ ընտիր ու հարյուր տեղ կրակ կվառի։— Եվ եկավ Մրքեն Սովասարի գլխին դիրք բռնեց. ու իր եղբայրները ամուր դիրք բռնեցին. ու իր տղաները դիրք բռնեցին Սովասարի գլխին։ Եկավ Հուսեին աղան, հարյուր ասկյարի գլուխ անցած, եկավ ու հասավ Սովասար, ու կռիվ եղավ։ Եղավ կռիվ, սպանվեց քսանհինգ ասկյար ու ձեր օջախի տղամարդկանցից զարկվեցին չորսը. զարկվեց Մրքեն, ու իր եղբայր Հաղրոն զարկվեց, Աբեթը զարկվեց ու տղաներից՝ Խուգեն։ Էդ որ պատահեց, պատահեց իննսուն թվին,— չունքի հաջորդ տարի կոտորում եղավ, Սասունում նորեն կռիվ ու նորեն կոտորում եղավ ու ձեր օջախը քանդվեց ու շաղ եկավ Սովասարի շուրջբոլորը. Մրքեի եղբայրներից կենդանի մնաց Եղոն ու գնաց Քոփ, Մրքեի զոհված եղբայրների որդիներից կենդանի մնաց Աղոն ու գնաց Խիյանք, կենդանի մնաց Հուրեն ու գնաց Մթրբան ու մեկը գնաց Քաղքիկ, և մյուսը՝ Մթրբան, Մրքեի որդիներից կենդանի մնաց Սաքոն ու գնաց Քոփ, Պողեն իջավ քաղաք Մուշ, ու Գրկեն մնաց Գյարմավ։— Քո հայր Գրկեն մնաց Գյարմավ և ուներ յոթը տղա ու մեկ աղջիկ։ Էդ աղջիկը...

— Հըմը, էդ մեկ հատիկ աղջի՞կը պետք է մնար,— մայրս կարմրատակած ու հուզված կտրում է,— Գրկեի յոթ ազեկներն ո՞ւր են,— բռնբկվում է մայրս,— հըմը էն անիծված աղջի՞կը պետք է մնար, Խաբրիկ Նորե։

Իսկ Խաբրիկ Նորեն հանդարտ ծխում է ու շարունակում։ Վերջին անգամ երբ Գյարմավ մտա, մեծ կոտորումից հինգ-վեց ամիս առաջ էր։ Աշուն էր։ Տասնչորս թվականի աշունն էր, և աշխարհը խառնվել էր իրար, աշխարհը խառնվել էր իրար, և Թուրքիան ճակատ էր բացել ռուսի դեմ։ Ռուսի դեմ ճակատ է բացել. ասկյար էր հավաքում, ու եկավ Քարանձավ խևոն, հանձնարարություն տվեց ու ասաց, Խաբրիկ Նորե, կմտնես գյուղերն ու դուրս կգաս, շտապ կմտնես բոլոր գյուղերը և շտապ դուրս կգաս ու բոլոր ռեսերին կասես՝ ասկյարացու չտան. ասկյարների կռիվը ռուսի դեմ է, ու ոչ մեկ տղամարդ ասկյարացու չտան։ Գնա ու ընկա ճամփա ու մտա գյուղերը դուրս եկա, ու պատվիրեցի ու մտա գյուղեր դուրս եկա ու Գյարմավ մտա ու տեսա Գրկեին։ Գրկեն ուներ յոթը տղա ու մեկ աղջիկ։ Գրկեն, քո հայր Գրկեն ամուսնացել էր, ուրեմն իննսուն թվականին, իննսունից մինչ ի տասնհինգ թիվ, մինչև մեծ կոտորումը՝ քսանհինգ տա-

րի ու քսանհինգ տարում քսանհինգ կոտորում, ու Գրկեն կորցրել էր շատ երեխաներ ու էլ ուներ յոթը տղա ու մեկ աղջիկ։ Այդ աղջիկը դու էիր, Ծովինար։ Ու երեխաներից մեծը դու էիր։ Ամենափոքրը խաչիկն էր՝ երկու տարեկան, ու մեծը դու՝ տասը-տասնմեկ տարեկան։ Քո հայր Գրկեն մի ոսկի տվեց, ասեց,— Մուշ կիշնես, Պողեին տար,— ասեց,— թե պահի Մուշ իշնես, խաբրիկ Նորե, էս հատիկ ոսկին տուր իմ եղբայր Պողեին։ Եվ ելավ Քարանձավ Խևոն, գրել տվեց նամակ՝ հին ֆիդայի Կոտո Հակոբին, ու նամակը տվեց ինձ, ու ես իջա Մուշ քաղաք։ Հասա քաղաք Մուշ ու ոսկին տվեցի քո հորեղբայր Պողեին։ Առավ ոսկին Պողեն, կշռեց ափով ու ասաց,— փուչ է, խաբրիկ Նորե, մեկ գոռշի արժեք չունի, խաբրիկ Նորե, այս հատիկ ոսկու փոխարեն մեկ հատիկ փամփուշտ լիներ ավելի պետք էր, խաբրիկ Նորե, ասաց՝ աշխարհը խառնվել է իրար, քո հորեղբայր Պողեն գրագիր էր, Պողեն գրել ու կարդալ գիտեր ու ասաց՝ համաշխարհային կռիվ է, պատերազմը համաշխարհային է, խաբրիկ Նորե, ու օսմանցու ուզածը համաշխարհային տերություն՝ Ստամբուլից-Բաքու, Բաքվից-Թերեք ու էդ ճամփին ընկած քարը մենք ենք, խաբրիկ Նորե, խանգարողը մենք ենք, ու մեզ կկոտորեն, խանգարողը ռուսն է, ու ռուսի դեմ կռիվ է, ասաց հիմա գիշեր է, խաբրիկ Նորե, առավոտ կտեսնես՝ ասկյարները խրտվիլակներ են պատրաստել, ասկյարները խրտվիլակների վրա գրել են ռուս գյավուր, ասկյարները խրտվիլակների վրա գրել են հայ գյավուր ու էդ խրտվիլակները դրել են Առաքելոց բակում ու զինավարժություն են անում՝ կրակում են խրտվիլակների վրա ու սվիններով խոցում են ու թրերով կտրատում են, ասկյարները արյունն աչքերն առած՝ կրակում են ու խոցում են ու թպրտում են։ Ասաց՝ հիմա գիշեր է, խաբրիկ Նորե, կեսգիշեր է, առավոտյան խուժանը փողոց կլցվի, կքլթքլթա ու կոռնա՝ մահ գյավուրներին, գյավուր ռուսների բարեկամ գյավուր հայերին՝ մահ ու կքլթքլթա ու կոռնա... կոտորում կլինի, ասաց, խաբրիկ Նորե, մեծ կոտորում կլինի, կոտորում կլինի առավել չափով, առավել ու առավել չափով, առավել կռիվ ու ավեր ու կոտորում կլինի, քան իննսունմեկ թվի կոտորումն էր, ասաց առավել ավեր ու կոտորում կլինի, քան իննսունվերեք թվի կոտորումն էր, առավել կոտորումն կլինի, քան իննսունչորս թվի կոտորումն էր, առավել կոտորում կլինի, քան իննսունհինգ թվի կոտորումն էր, առավել կոտորում կլինի, քան իննսունվեց թվի կոտորումն էր, առավել կոտորում կլինի, քան իննսունյոթ թվի կոտորումն էր, առավել կոտորում կլինի, քան երեք թվի կոտորումն էր, առավել կոտորում կլինի, քան չորս թվի կոտորումն էր, առավել կոտորում կլինի, քան հինգ թվի կոտորումն էր, առավել կոտորում կլինի, քան...

— Հերիք է, Խաբրիկ Նորե, հերիք է, անասված, հերիք է ախպրուկ, հերիք է, Խաբրիկ Նորե։— Մայրս թափով ոտքի է կանգնում և կարմրատակած ու քրտնած ու հուզված ու բորբոքված, ալրոտ փեշերը թափ է տալիս բարկ թոնրին,— հերիք է, Խաբրիկ Նորե, հերիք քրքրիս զիմ հոգին,— մայրս թափով թափթփում է փեշերը և հացաբույր ծուխը պոռթկում է թոնրից,— ու հերիք է տանջիս քո հոգին, ախպրուկ, հերիք է... ինչ ունես-չունես, թափ էս թոնրի մեջ, թող վառվի ու ծուխ դառնա, ու դու պրծնիս, ախպրուկ։— Մայրս բորբոքված խոսում է առանց Խաբրիկ Նորեին նայելու, Խաբրիկ Նորեն ճերմակ գլուխը հակել է ծնկներին, մեծ քույրս մատները շուրթերի անկյունում թափում է աչքերից և արցունքների միջից մեկ մորս է նայում, մեկ Խաբրիկ Նորեին։— Գարուն է, Խաբրիկ Նորե, էգուց մեր ձորով հեղեղ կգա, Խաբրիկ Նորե, ձորով մեկ հեղեղ կգա, տար ու ինչ ունես-չունես թափ հեղեղի մեջ,— մայրս բաթաթը վերցրել է ու մոլորվել, խոսում է ու նայում շուրջբոլորը, ո՞ւր դնի, ու շպրտում է, և բաթաթը թրմփ ընկնում է օրորոցի մեջ, օրորոցում քնած փոքր քրոջս դեմքին,— ինչ ունես-չունես, տուր հեղեղը թող տանի։ Հերիք է, Խաբրիկ Նորե, հերիք է ախպրուկ։ Քար դարձիր, Օհանի պես, Օհանի պես քար դարձիր, քար, քար, քար,— մայրս թասի ջուրը որպես թե շպրտում է հատակին, բայց թոնրից թշշոցով պոռթկում է ծուխ ու փոշի, զարկվում երդիկ ու առիքին, և հացաբույր մեր տունը լցվում է խոնավ փոշու հոտով, և փոշի է նըստում հատակին, աման-չամանին, օրորոցին, շաղ եկած հացի վրա, և Խաբրիկ Նորեի հակված ճերմակ գլխին փոշի է մաղվում։ Եվ մայրս սկվում է և մայրս ահա նայում է Խաբրիկ Նորեին, Խաբրիկ Նորեն հակված ու փոշոտ գլխով, և մորս շուրթերը դողում են, և մոտենում, ծընկում է Խաբրիկ Նորեի մոտ, կարմիր ու տաք ու բողբոջած ճակատը դնում է Խաբրիկ Նորեի ծնկներին և, արցունքները կուլ տալով, շշնջում.

— Հերիք է, Խաբրիկ Նորե։ Այդպես՝ ճերմակ ու փոշոտ գլուխը կրծքին հակած, Խաբրիկ Նորեն ձեռքը դնում է մորս գլխին։

— Ծովինար,— Խաբրիկ Նորեն շոյում է մորս մազերը,— ձգուկ,— և ձայնը բեկվում է,— Խաբրիկ Նորեն ինչպե՞ս ազատվի իր ցավերից. Խաբրիկ Նորեի ցավերն իր քսիկի մե՞ջ են, քսիկի մրջի բուռ թուփունն է, որ Խաբրիկ Նորեն ձգե բարկ թոնրի մեջ ու պրծնի, Խաբրիկ Նորեի ցավերն խուրջինի մե՞ջ են, որ խուրջինը ձգե հեղեղի բերանն ու պրծնի... իմ ապրած կյանքն էդ է, ձգուկ, իմ տեսածն ու ապրածն ցավ է՝ ինչպես խաբիմ ու մոլորեցնիմ իմ մեջ, խելքիմ ու մոլորեցնիմ իմ ցավեր, գժվիմ ու մոլորեցնի՞մ, ձգուկ... Խաբրիկ Նորեն կմեռնի ու կթաղե իր ցավերն... ձգուկ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ելավ Քարանձավ Խևոն կանգնեց Ագռավաքարի մոտ և սուրը քաշեց պատյանից։ Անդոկի գլխին քարերի մեջ մի քար կար, քարերի մեջ, քարերի մեջ, քարերի մեջ, փայտերի մեջ մի ժայռ կար և այդ ժայռի անունը Քարանձավ Խևոն կնքել էր Ագռավու քար։ Կանգնեց Ագռավու քարի մոտ Քարանձավ Խևոն, ճակատը քարի հյուսիսակողմի մամռոտ ճակատին, կանգնեց Քարանձավ Խևոն և սուրը ձեռքն առավ։ Ասաց, Խաբրիկ Նորե, ահա կփորձիմ, ժամանակն է, ասաց, և ես պետք է փորձիմ հրաշք գոյություն ունի՞, մեր բախտի մեջ, մեր բախտի մեջ հրաշք գոյություն ունի՞, մեր բախտի մեջ, մեր ճակատագրի մեջ, Անդոկ սարի ճակատագրի մեջ հրաշք գոյություն ունի՞, Ագռավու քարի ճակատին հրաշք գրված է, թե ոչ,— ասաց Քարանձավ Խևոն, ահա կփորձիմ։ Քարի ճակատը եթե ճաք տվեց, եթե ճաք տվեց, ու բացվեց քարը, Խաբրիկ Նորե, ուրեմն հրաշք կա,— ասաց,— կա ու հրաշքին սպասող ժողովուրդը կփրկվի, կա, ու Անդոկ սարը կփրկվի։ Ահա ու կփորձիմ, ասաց Քարանձավ Խևոն և զարկեց։ Եվ զարկեց Քարանձավ Խևոն, և սուրը եղավ երկու կես։ Չկա, ասաց Քարանձավ Խևոն, հրաշք չկա, Խաբրիկ Նորե, տղերքին հավաքենք, և ելանք հավաքեցինք տղերքին։ Ո՞վ էր մնացել. Ախոն Անդոկ սարի հյուսիսային ճակատն էր պահում՝ երեսուն-քառասուն զորքով, Խևոն Անդոկի արևմտյան ճակատն էր պահում՝ երեսուն-քառասուն զորքով, Մնջոն Անդոկի արևելյան ճակատն էր պահում՝ երեսուն-քառասուն զորքով, Մանուկը Անդոկի հարավային ճակատն էր պահում՝ երեսուն-քառասուն զորքով, Զոլոն երեսուն-քառասուն զենքով մեկ հյուսիս էր զարկվում, մեկ հարավ, մեկ արևմուտք էր զարկվում ու մեկ արևելք։ Ո՞վ էր մնացել ֆիդայիներից, ո՞վ էր մնացել՝ Ախոն էր, հյուսիսային ճակատից եկավ, Խևոն էր Արևմտյան ճակատից եկավ, Մնջոն էր, արևելյան ճակատից եկավ, Մանուկը հարավային ճակատից եկավ, Զոլոն Սխտոր քարի մոտից եկավ, եկան հավաքվեցին Ագռավու քարի մոտ, և Քարանձավ Խևոն ասաց, Տեր Մինասին բերեք...

* * *

Խաբրիկ Նորեն նստած է օջախի մոտ,— մրոտ շուրթերով օջախն էր ունեցածը, Խաբրիկ Նորեն թոնիր չուներ. ո՞վ էր վառելու, ո՞վ էր հաց

թիանալու,— իրիկուն է, ճրագը պլպլում է պատին,— Խաբրիկ Նորեի տունը սյուներ չուներ. ո՞ւմ էր պետք մեծ տուն, առաստաղը պնդող սյուներով,— դիմացի պատին կախված է դատարկ փամփուշտակալը՝ վրան՝ տասնոցի դատարկ պատյանը, կողքին՝ դատարկ խուրջինը։ Ձմռան իրիկուն է. և Խաբրիկ Նորեի ժղլտունը[1] լցված է. ամեն մեկը իր հետ մեկ-երկու տարի[2] է բերել,— որտե՞ղ պետք է նստեին. Խաբրիկ Նորեն աթոռներ չուներ և ի՞նչ պետք է վառեր Խաբրիկ Նորեն։— Հատակը բռնած-նստոտած ծխում են. Համզեն ծխում է, Դանոն ծխում է, Երազահան Մլքիկը ծխում է, Վարդովցի Պետրոսը ծխում է, կուսգեղցի Հակոն ծխում է, բարե Մանուկը ծխում է, Խուգեն ծխում է, մշեցի Տոնեն ծխում է, Թորե Աթոն ծխում է... Խաբրիկ Նորեի երդիկը ծխում է... Խրճիթում ճոճվում է կապույտ ծուխը, ճրագի լեզվակը թրթռում ու ծալվլվում է կապույտ ալիքների մեջ։ Խաբրիկ Նորեն գլուխկախ ծխում է, նստել է օջախի մոտ մեկնված թաղիքին,— Խաբրիկ Նորեն անկողին չուներ, թախտ ու անկողին չուներ, ունեցածը թաղիքն էր և շատ-շատ էր քարանձավի սովոր լեռան որդու հարմար,— ձմռան իրիկուն է, և Խաբրիկ Նորեն թիկնել է օջախի մոտ և գլուխկախ ծխում է...

***

Եվ Տեր Մինասը եկավ։ Տեր Մինասը գլուխկախ և գլուխկախ նստեց քարին։ Տղերքից հեռու նստեց։ Մոտ նստիր, Տեր Մինաս, ասաց Քարանձավ Խևոն, մոտիկ նստիր, ասաց, ամենաբարձր քարին նստիր, ասաց, դու իրավունք ունես, բարձր նստիր և ականջ պահիր ռուսական բանակի հրանոթի ձայնը որտեղի՞ց է լսվում, քո ականջները սուր են, Տեր Մինաս, լսիր ու ասա ռուսական հրանոթի ձայնը որտեղի՞ց է լսվում։ Մշո դաշտից,— ասաց Տեր Մինասը,— հրանոթի ձայնը Մշո դաշտից է գալիս։ Ճիշտ է, ասաց Քարանձավ Խևոն, Մշո դաշտից է լսվում, բայց Մշո դաշտը մեծ է, Տեր Մինաս, որտեղի՞ց է լսվում հրանոթի ձայնը։ Ցրոնքի մոտերքից, ասաց Տեր Մինասը։ Ճիշտ է, ասաց Քարանձավ Խևոն։ Ցրոնքի մոտերքից է լսվում ռուսական հրանոթի ձայնը։ Իսկ երեկ որտեղի՞ց էր լսվում, հարց տվեց Քարանձավ Խևոն, և Տեր Մինասը չպատասխանեց։ Երեկ որտեղի՞ց էր լսվում, Տեր Մինաս։ Երեկ ավելի մոտիկից էր լսվում, ասաց Տեր Մինասը։ Ճիշտ է, ասաց Քարանձավ Խևոն, երեկ ավելի մոտիկից էր լսվում հրանոթի ձայնը, իսկ երեկ չէ մեկել օրը որ-

---

[1] Ժղլտուն — հավաքատեղ, պրուցատեղ։

[2] Տարի — լոր աթար։

տեղի՞ց էր լսվում։ Ավելի մոտիկից էր լսվում, ասաց Տեր Մինասը։ Ճիշտ է... գնալով ռուսական հրանոթի ձայնը հեռանում է։ Ինչո՞ւ է հեռանում, Տեր Մինաս, ասաց Քարանձավ Խևոն, ասաց, գլուխդ բարձրացրու, եթե կարող ես գլուխդ բարձրացրու և, եթե կարող ես, ասաց, մեզ նայիր, ինձ նայիր, Տեր Մինաս, և պատասխան տուր, ինչո՞ւ է հեռանում հրանոթի ձայնը։ Տեր Մինասը գլուխ չբարձրացրեց, պատասխան չտվեց։ Դու խաբեցիր մեզ, Տեր Մինաս, ասաց Քարանձավ Խևոն, դու մեզ շարեշար խաբեցիր, ասաց։ Ոչ ոք, ոչ մեկը, երբեք ու ոչ մեկը այնպես չէր խաբել մեզ, ինչպես դու խաբեցիր, Տեր Մինաս, ասաց Քարանձավ Խևոն, ոչ մեկը այնպես չէր հուսադրել մեզ, այնպես չէր հուսադրել ու միամտացրել մեզ, ինչպես դու, Տեր Մինաս, այնպես չէր հուսադրել ու միամտացրել ու մոլորեցրել մեզ, ինչպես դու, Տեր Մինաս, ասաց Քարանձավ Խևոն։ Վտանգի պահին դու ելար ու այս սարը եկար, ասաց, վտանգի պահին դու միշտ հայտնվել ես, Տեր Մինաս, վտանգների պահին մենք քեզ սպասել ենք, և դու հայտնվել ես։ Ինչո՞ւ ենք սպասել, սպասել ենք, ասաց Քարանձավ Խևոն, որովհետև մենք քրիստոնյա ենք, դու քրիստոնյա, մենք չարքերով շրջապատված, այս սարերում բանից անտեղյակ քրիստոնյա, իսկ դու աշխարհ տեսած, բանիմաց քրիստոնյա և քրիստոնյաների առաջնորդ։ Եվ քեզ սպասել ենք, ասաց Քարանձավ Խևոն, և դու հայտնվել ես։ Այս անգամ էլ վտանգի պահին, դու ելար ու հեռվից եկար ու հասար այս սարը, և մենք քեզ որպես Աստված ընդունեցինք, մեծ ու փոքրով քեզ որպես Աստված ընդունեցինք, ասաց Քարանձավ Խևոն, քո շունչը որպես երկնային շունչ ընդունեցինք, ասաց, և քո խոսքը՝ որպես Ավետարանի խոսք։ Դու ինչո՞ւ եկար հասար այս լեռները և ի՞նչ ասացիր մեզ, հարցրեց Քարանձավ Խևոն, և Տեր Մինասը պատասխան չտվեց, գլուխը չբարձրացրեց և պատասխան չտվեց։ Դու եկար այս լեռները ավետիսով՝ ռուսը գալիս է, ասիր, վերջապես գալիս է, երդվեցիր քո հավատով, Տեր Մինաս, փառք տվեք, ասիր, խուճապի մի մատնվեք, ասացիր դու, ելեք, մեծ ու փոքրով ելեք, ասիր, հազար բերան փառք տվեք՝ ռուսական բանակը սվինն շողշողացնելով գալիս է։ Դա քո խոսքն է, Տեր Մինաս։ Քո խո՞սքն է, հարց տվեց Քարանձավ Խևոն, և Տեր Մինասը գլուխկախ պատասխանեց, այո, ասաց Տեր Մինասը, ես այդպես ասացի։ Դու այդպես ասացիր, Տեր Մինաս, ասացիր և երդվեցիր քո հավատով. և մենք հավատացինք քեզ։ Ինչո՞ւ հավատացինք քեզ։ Քեզ հավատացինք, ասաց Քարանձավ Խևոն, որովհետև մենք քրիստոնյա էինք, դու քրիստոնյա էիր, մենք այս սարերի մեջ չարքերով շրջապատված, բանից անտեղյակ, դու բանիմաց քրիստոնյա և քրիստոնյաների առաջնորդ։ Եվ մենք քեզ հավատացինք, ասաց Քարանձավ Խևոն, հավատացինք ու միա-

մտացանք, միամտացանք ու մոլորվեցինք, Տեր Մինաս։ Ա՜խ, ասաց Ախոն, մեզ տեղն է, Տեր Մինաս, դու մենակ չէ, որ մեզ խաբել ես, ասաց Ախոն, և մեկ անգամ չէ, որ մեզ խաբում ես, Տեր Մինաս։ Հիշո՞ւմ ես ինչսունչորս թվի կոտորումը, ասաց, հիշո՞ւմ ես հինգ թվի կոտորումը, հիշո՞ւմ ես Տալվորի կռիվը, ասաց հիշո՞ւմ ես Կաթլորաքարը, հիշո՞ւմ ես, Տեր Մինաս, հիշում ես, Ախոն փրփրեց, և Ախոն թուրը քաշեց... և Ախոն թուրը քաշեց, որ ի՞նչ անի։ Ախոն թուրը քաշեց ու շպրտեց Տեր Մինասին. շպրտեց ու ասաց, վերցրու, Տեր Մինաս, առ իմ վիզը թոցրու, ինձ տեղն է, ասաց, վերցրու, իմ հիմար գլուխը թոցրու, ասաց, ու մեր հիմար գլուխները թոցրու, մեզ տեղն է, ասաց Ախոն, դու մեղավոր չես, դու մեղավոր չես, մենք ենք մեղավոր, ասաց Ախոն և տղերքը հաստատեցին, և հաստատեց Քարանձավ Խևոն։ Մեզ տեղն է, ասաց Քարանձավ Խևոն, դեռ քիչ է, ասաց, և արժի, Տեր Մինաս, որ մեր հիմար գլուխները թոցնես, անարժեք են, ասաց, մեր գլուխները եթե մնան մեր ուսերին, կմնան նրա համար, որ խաբվեն, եթե մնան,-ու մենք ապրենք, ասաց, դու նորից մեզ կխաբես, Տեր Մինաս։ Վերցրու Ախոյի թուրը, ասաց Քարանձավ Խևոն, և մեր գլուխները թոցրու... վերցրու, ասաց Քարանձավ Խևոն, վերցրու Տեր Մինաս, այդ սուրը Ախոյի սուրը չէ, իմ սուրը չէ, տղերքի սուրը չէ, Ախոյի սուրը չէ. քո սուրն է, Տեր Մինաս, քոնն է, ասաց։ Այդ սուրը, ասաց Քարանձավ Խևոն, քսանհինգ տարի Ախոյի ձեռքին է շողացել, բայց Ախոյի սուրը չէ, իմը չէ, իմը չէ, Ախոյինը չէ, ասաց Քարանձավ Խևոն, որովհետև իմ ու Ախոյի կամքով չէ քաշվել պատյանից ու դրվել պատյան, Ախոյի անվախ ձեռքով է քաշվել պատյանից, բայց ուրիշի կամքով, ասաց, և ուրիշի հրամանով ու Ախոյի պարտված ձեռքով դրվել է պատյան, ասաց Քարանձավ Խևոն, ես ո՞վ եմ, մենք ովքե՞ր ենք, Ախոն ո՞վ է, Ախոն միամիտ ու մոլորված հերոս է, Ախոն միամիտ ու ուշացած հերոս է, ու միշտ պարտված։ Ա՜խ, ասաց Քարանձավ Խևոն, մենք ի՞նչ էինք որոշել, տղերք, ի՞նչ էինք որոշել և ինչպես գործեցինք... մենք ուզում էինք... մինչև քո հայտնվելը, Տեր Մինաս, մենք որոշել էինք գրավել Մուշի թուրքական զինանոցը, ասաց Քարանձավ Խևոն, միանալ, ասաց,— Սասունի ու Մուշի զենքավորներին, միանալ՝ հարձակվել Մուշի ռազմամթերքների պահեստին, գիշերով հարձակվել-գրավել ռազմամթերքը, ասաց, զինել տղամարդկանց, բանակ կազմել, ասաց Քարանձավ Խևոն, զենքի ընդհատակ սասունցիներից ու մշեցիներից բանակ կազմել, ասաց Քարանձավ Խևոն, բանակ կազմել, ասաց, ու կռվել ասկյարների բանակի դեմ։ Եվ այդպես կլիներ, Տեր Մինաս, ու Մարաթուկ վկա, Մուշի զինանոցը մերը կլիներ, ասաց Քարանձավ Խևոն, մերը կլիներ. Պողեն կար, ասաց, որ հազար զինվոր արժեր, Կոտոն կար, որ

հազար արժեր, Բրինդարը՝ հազար ու հազար արժեր, Իսոն կար՝ հազար արժեր, Աստն կար, որ հազար արժեր, Մոսեն կար, որ հազար արժեր... Մարթուկ վկա, ասաց Քարանձավ Խևոն, զինանոցը մերը կլիներ, ու բանակը կլիներ, ու ժողովրդին փրկություն կլիներ, ասաց։ Բայց դու հայտնվեցիր, Տեր Մինաս, և մեր որոշումը ի չիք դարձավ։ Դու ասացիր, վտանգի ենթարկվել պետք չէ, ասացիր, եղած փոքրաթիվ ուժերով այդպիսի համարձակ քայլի դիմելը արկածախնդրություն է, ստույգ մահ է, պետք չէ, ասացիր, բարձրացեք Անդոկ, միացեք Մուշի զենքավոր տղերքի հետ ու բարձրացեք Անդոկ, հավաքեք, ասացիր, Սասնո ու Մուշի ժողովուրդը, բարձրացեք Անդոկ, պաշտպանվեք, սարը ձեզ կօգնի, ասացիր, գոտեպնդվեք ու պաշտպանվեք, փրկիչ բանակը օրհնված սվինը փայլեցնելով գալիս է, գալիս է, երդվեցիր, Տեր Մինաս, այս անգամ անտարակույս գալիս է, ասացիր։ Եվ հավատացինք քեզ, Տեր Մինաս, հավատացինք, ասաց Քարանձավ Խևոն, որովհետև մենք քրիստոնյա էինք, դու քրիստոնյա էիր, դու քրիստոնյա էիր, Տեր Մինաս, քրիստոնյաների առաջնորդ։ Եվ հավատացինք, ասաց, և ընդունեցինք քո առաջարկությունը և բարձրացանք Անդոկ և կամովին ընդունեցինք պաշարումը և յոթ ամիս է պաշտպանվում ենք։ Յոթ ամիս է, ասաց Քարանձավ Խևոն, ասկյարների քսան հազարանոց բանակը վիշապի պես փաթաթել է Անդոկը, և քսան այդքան խուժան բանակի թիկունքին օձերի պես քլթքլթում են։ Եվ մենք դիմադրում ենք, ասաց Քարանձավ Խևոն։ Ինչո՞վ ենք դիմադրում, Տեր Մինաս, հարցրեց Քարանձավ Խևոն, և Տեր Մինասը չպատասխանեց։ Ի՞նչ ուժով ենք դիմադրում, Տեր Մինաս։ Եվ Տեր Մինասը գլուխը չբարձրացրեց։ Ասկյարների քսան հազարանոց բանակի ու քսան այդքան խուժանի դեմ, ասաց, ամեն ճակատում քառասուն զենք է եղել, ու քառասուն զենք էլ կա, բայց այդ քառասուն զե՞նքը պահեց մեզ, հյուսիսային ճակատի քառասուն զե՞նքը պահեց Անդոկ սարի հյուսիսային ճակատը։ Քարե՞րը պահեցին, ասաց Քարանձավ Խևոն, հրանոթի դեմ՝ քար, զենքի դեմ՝ քար։ Անդոկում անշարժ քար չմնաց, բայց քարե՞րը պահեցին, Տեր Մինաս։ Անդոկում տղա երեխա չմնաց, ասաց Քարանձավ Խևոն, հրանոթի որոտի դեմ՝ տղա երեխաների ուռան է, ասաց Քարանձավ Խևոն, տղա երեխաները ուռա կանչելով քշում են հրանոթի վրա և խոտի պես հնձվում... Ա՜խ, ասաց Քարանձավ Խևոն, ո՞ւմ շլինքին պետք է նստի այդ երեխաների մեղքը... նահատակված մանչերի ուռա՞ն է պահել մեզ, Տեր Մինաս, Անդոկի գլխին ի՞նչն է պահել մեզ։ Մահով պաշարված սարում, ծովով պաշարված սարում, դատարկ երկնքով սարը, ի՞նչն է պահել մեզ, Տեր Մինաս։ Եվ Տեր Մինասը պատասխան չտվեց։ Հույսը, գոռաց Քարանձավ Խևոն, հույսը, գոռաց նա, հույսը, ասաց, որ լքում է մեզ, հույսը,

որ ռուսական հրանոթների ձայնի հետ հեռանո՞ւմ է, ասաց Քարանձավ Խևոն, գնալով հեռանում է, ասաց, օր-օրի հեռանում է,— ասաց։ Հույսն էր պահում, Տեր Մինաս, ասաց Քարանձավ Խևոն, որը ահա լքում է Անդոկ սարը, ահա ու լքում է ժողովուրդը։ Ա՜խ, ասաց Քարանձավ Խևոն, հույս շշնջացող քո հավատացյալ շուրթերը, Տեր Մինաս, ինչպես միամտեցրին մեզ, ա՜խ, ասաց Քարանձավ Խևոն, քո զորավոր աչը ինչպես մոլորեցրեց մեզ, և տեղն է, ասաց Քարանձավ Խևոն, որ թոցնես իմ հավատացյալ գլուխը։ Ահա և իմ սուրը, Տեր Մինաս, առ, ասաց Քարանձավ Խևոն և ձեռքը պատյանը տարավ և... ասաց, հրաշք չկա, տղերք, ասաց Քարանձավ Խևոն, Ագռավու քարը դատարկ է։

***

— Հրաշք չկա, տղերք,— ասաց Քարանձավ Խևոն,— Արծվիկը Խաբրիկ Նորեից առաջ է անցնում,— Ագռավու քարը դատարկ է,— շշնջում է և Խաբրիկ Նորեի պես գլուխֆախ տմբտմբացնում է. Արծվիկը կարող է շարունակել, ես կարող եմ շարունակել, մենք կարող ենք Խաբրիկ Նորեի փոխարեն պատմել՝ բերանացի ենք անցել Անդոկ սարի պատմությունը։ Մենք գլուխ-գլխի քոմվել[1] ենք դռան մոտ,— դռան մոտիկ Խաբրիկ Նորեի սնդուկն էր, սնդուկին դույլով ջուրն էր, դույլի կողքին ալյումինե բաժակը,— սնդուկի մոտ շունչ-շնչի սեղմվել ենք, բոլորս ղեղենալի շալվարներ ունենք՝ ձմեռ է. բոլորս բրդից ու մազից միահյուսված կոկորդավոր բաճկոններ ունենք, բրդից ու մազից միահյուսված գուլպաներ, ձմեռ է, բոլորիս տրեխներում դարման է լցված, և ոչ մեկիս գլխարկը իր գլխով չէ, կարտոֆիլի սովոր գլխարկները կազիրոկով ու անկազիրոկ մեր գլխարկները անհանգիստ պտտվում են, իսկ Սեփոն բոլորովին գլխարկ չունի։ Սեփոն Քարանձավ Խևոյի որդին է։ Քարանձավ Խևոն իմ հորեղբայրն է։ Որ Քարանձավ Խևոն իմ հորեղբայրն է, ես լավ չեմ պատկերացնում. ես հորեղբայր չեմ տեսել, իսկ Քարանձավ Խևոն ինձ համար երազ է։ Սեփոն Քարանձավ Խևոյի որդին է, բայց մենք լավ չենք պատկերացնում՝ Քարանձավ Խևոն մեր հայրերից տարբեր, մեր տեսած բոլոր, բոլոր մարդկանցից տարբեր, հեքիաթային մի հերոս է, իսկ Սեփոն... Սեփոն անգլխարկ մի տղա, սաթե մազերով և կապույտ, մութ կապույտ ու միշտ բռնկված աչքերով անգդակ մի տղա, այսքանը։ Սեփոն մեզանից մեծ է. մենք դեռ դպրոց չենք գնում, իսկ Սեփոյին արդեն դպրոցից հեռացրել են, հինգերորդում

[1] Քոմվել — հավաքվել։

պետք է լիներ, բայց հեռացրել են, և ծխում է։ Ահա Դանոն ուսն ի ետ շպրտում էր ծխախոտը, Սեփոն ծնկով խփում է Ջրդո Հաբեթի ծնկին և պահանջկոտ նայում, Ջրդոն թոցնում է ծխախոտի մնացորդը, և Սեփոն՝ դեմքը թիկունքիս, ծխում է։ Սեփոն կարող է նաև ազատ ծխել. ո՞վ է նկատողը, դռան մոտ թունջուկված, ծխով մշուշված երեխաներին ո՞վ է նկատողը. բոլորը ինքնամոռաց ծխում են։ Բարե Մանուկը ծխում է, Երազհան Մլքիկը ծխում է...

Դանոն Գնել տղային ծնկների արանքում սեղմած ծխում է,— տեր աստված,— տնքում է Դանոն, ինչո՞ւ էին ուզում սպանել մեզ, և ինչո՞ւ սպանեցին, ասկյարները ինչո՞ւ էին շրջապատել սարն ու բորենիների պես ատամները զընգզընգացնում էին, սոված բորենիների պես ինչո՞ւ էին ընկել ժողովրդի ետևից։ Մարաթուկ վկա, ուղեղիս մեջ չի մտնում, Դանոն բռունցքով խփում է գլխին, սպանեք էլ, չեմ հասկանա, բա մարդը... մարդը, եթե մարդ է ծնվել, բան ու գործը թողած՝ թուր ու թվանքն առած ընկնի անմեղ մարդու ետևից՝ կա ու չկա, պետք է սպանեմ. վեցյոթ ամիս նստի սարի տակ, թե էս սարի վրա մարդ կա, կին կա, երեխա կա, ե՞րբ կհաջողվի ու արյուն թափեմ... սպանեմ ու հոշոտեմ... չի հասնում, ուղեղիս չի հասնում, Դանոն խփում է գլխին, սպանեք, չեմ հասկանա ու... սպանեցին էլ, էլի չհասկացա... եթե մեկը լիներ, թե մեկը լիներ, կհաշտվեի, որ այդ մեկը մարդասպան է, մարդասպան է ծնվել, և արյուն թափելու մոլուցք ունի։ Իսկ հազար-հազար-հազար ասկյարն ու հազար-հազար-հազար խուժա՞նը... բոլորը մարդասպա՞ն էին ծնվել ու բոլորը մարդասպա՞ն են, բոլորը մե՞կ էին, մեկ մա՞րդ, մեկ հոգի՞ և մարդասպա՞ն... Մարաթուկ վկա, բոլորը մեկ մարդ էին ու մեկ հոգի, այդ մեկը մարդասպան էր և այդ մեկի անունը Օսման էր, անունը Օսման էր։ տնքում էր Դանոն, ես Օսմանի կրոնը...

Թորե Աթոն, ձեռնափայտը կողքին մեխած, ծխում է, մշեցի Տոնեն, Սմբատ տղային ծնկների արանքում սեղմած, ծխում է, Համզեն ծխում է։

Համզեն, տասնյոթամյա Մհեր որդուն ծնկների արանքում սեղմած, ծխում է, Համզեն Մհերին Մեհրե է ասում, և Մեհրեն մեր երազն է. Մեհրեն դպրոց է գնում, այն էլ՝ շրջկենտրոնի, և ամռանը հասունության վկայական է ստանալու, Մեհրեն ուժեղ է, ձորում ջրաղացի դռանն ընկած ջրաղացաքարը թնդացնում է, Մեհրեն քեռի Համզեի նման բարձրահասակ է, թիկնեղ և շատ է ուժեղ։ Համզեն, Մեհրեին ծնկների արանքում սեղմած, ծխում է։— Դանո, Դանո,— կանչում է Համզեն,— որ Օսմանը մարդասպան է, գիտեինք, որ մարդասպան է, հայտնի էր, Դանո, աշ-

խարհքին հայտնի է, Դանո, դու ասա, Վարդովցի Պետրոս, հայտնի՞ է, գրագետ մարդ ես, դու ասա, հայտնի՞ է...

Վարդովցի Պետրոսը ծխում է,— հայտնի է, Համզե, հայտնի է,— Վարդովցի Պետրոսը կալից է եկել, կոլտնտեսության կալի դեզերի պահակն է, կալից երեք կտոր տարթ է բերել և շարուկին նստած, ծխում է,— սուրբ Կարապետ վկա, Դանո, հայտնի է, պատմություն կա... հայտնի էր, Դանո, տնքում է Համզեն, գիտեինք, որ Օսմանը մարդասպան է, գիտեինք, տնքում է Համզեն, հենց մեծ կոտորումին չիմացանք, հենց Անդոկի գլխին չիմացանք, գիտեինք, Դանո, քանի՞ անգամ են ձեր անտեր գյուղը վառել, քո գերդաստանը կոտորել, քո տունը վառել, քանի՞ անգամ են մեր անտեր գյուղը վառել, իմ գերդաստանը կոտորել ու իմ տունը վառել, քանի՞ անգամ, Դանո... Գիշերը կոտորում ու այրում էին, առավոտյան գերդաստանի փերթերը հավաքում էինք, նորեն քար դնում քարի, նորեն վերականգնում տունը, նորեն վարուցանք էինք անում և ճիպոտը գլխներիս տակ դրած, Դանո, գլխներիս տակ դրած՝ կոկորդքաց քնում էինք։ Ինչո՞ւ էինք այդքան միամիտ, հավատացյալ ու միամիտ, ձեռքներս աստծո փեշերը գցած ու միամիտ... և Օսմանի վրա զարմանում ես, Դանո, իսկ քո վրա չե՞ս զարմանում ու զայրանում, իսկ իմ վրա չե՞ս զարմանում,— տնքում է Համզեն։ Անդոկ բարձրանալուց մեր գերդաստանը քառասուն տղամարդ ուներ։ Գերդաստանը քառասուն տղամարդով բարձրացավ սար՝ կռվելու ու պաշտպանվելու։ Ինչո՞վ կռվելու ու ինչո՞վ պաշտպանվելու։ Քառասուն խոփ ուներ՝ վերցրեց, քառասուն մանգաղ ու խոփով պաշտպանվելու ու քարով պաշտպանվելու։ Քառասուն տղամարդ, Դանո, քառասուն...

Ա՜խ, Քարանձավ Խևո, Քարանձավ Խևո,— Կուսգեղցի Ագեն նյարդային ծխում է,— ապտակը քիչ էր, Անդոկի գլխին ինձ հասցրած ապտակը ի՞նչ էր, Քարանձավ Խևո,— ծխում է ու նյարդային, իրար անցած մատներով ծխախոտ է փաթաթում,— արժեր, որ ապտակի փոխարեն մի գնդակ մեխեիր իմ ճակտին, գնդակը թանկ էր, ափսոս էր, բայց մի գնդակ ծախսած պետք է լինեիր Կուսգեղցի Ագեի ճակտին, Քարանձավ Խևո,— Կուսգեղցի Ագեն ծխախոտից նոր ծխախոտ է վառում և կիսատը շպրտում մեր կողմ։— Էկավ, մեր քոչքի մոտով կանցներ, ելա-կտրեցի ճամփեն, ասի, Քարանձավ Խևո, աստծո սիրուն, թե զենք ազատվեց, այս անգամ, երբ մի զենք ազատվեց, այդ զենքը ինձ տուր։ Քմծիծաղ տվեց Քարանձավ Խևոն, Կուսգեղցի Ագե, ասաց, Դավթի բերդը, Դավթի ավերակ բերդը ձեր գյուղին մոտիկ է. և քո աչքերի դիմաց է եղել, և Դավթի հեքիաթը գիշեր ու ցերեկ քո ականջին, և դու հիմա՞ հասկացար, որ զենքը պետք է, Անդոկի գլխին սատկելու ժամանա՞կ հասկացար,

Ագե, հասկացար ու նստած սպասում ես, որ տղերքից մեկը զարկվի, ու դու զենքի տե՞ր դառնաս, Ագե... ասաց ու ապտակեց։ Ապտակը քիչ էր, Քարանձավ Խևո,— Կուսգեղցի Ագեն հերսոտ ծխում է ու իրար խառնված մատներով ծխախոտ է փաթաթում,— Կուսգեղցի Ագեի ճակատին գնդակ էր պետք...

Քառասուն տղամարդ, Դանո, Մեհրեն ծնկների արանքում սեղմած տնքում է Համզեն, քառասուն տղամարդ,— ծխում է ու գլուխկախ տընքում,— մի բանակ, անզեն բանակ, տնքում է Համզեն, դեռ կովի մեջ չմտած՝ զինաթափ բանակ, տնքում է Համզեն, առանց կովի պարտված բանակ, տնքում է Համզեն... Քառասուն տղամարդ... Մեծն իմ հերն էր, հալևոր, բայց զենքի ընդունակ ու փոքր Մեհրեն՝ երեխա, բայց զենքի ընդունակ։ Ու թե ինչով կովեց իմ հալևոր հայրն ու ինչպես սպանվեց, դու ասա, Դանո, ու թե ինչպես կովեց տղա Մեհրեն ու ինչպես նահատակվեց, թող Խուգեն ասի։

Խուգեն Գալե տղային ծնկների արանքում սեղմած, ծխում է։ Խուգեն ծխում է ու նայում շուրջբոլորը, ծխում է ու ծխի միջից նայում հատակին, ծխի միջից, աչքերին թափված հոնքերի միջից Խուգեի հայացքը թափառում է հատակին ու խուրձ բեղերը խլվլում են,— Մեհրեն,— քրթմնջում է Խուգեն, Մեհրեն իմ կողքին էր, Մեհրեն... Մեհրեն ուռա՜ա կանչելով վազում էր, ու մեկ էլ տեսնեմ. Մեհրեն... Մեհրեն չկա... իմ կողքին էր ու մեկ էլ, մեկ էլ... Մեհրեն չկա...

Երբ Խուգեն խոսում էր, մենք լարվում էինք, Խուգեն խոսում էր երեխաների մասին, պատմում էր Անդոկի տղա-երեխաների մասին. դա շատ էր հետաքրքիր. ջոկատներ կազմած, քշել են հրանոթների վրա, փայտերով, ուռա գոչելով քշել են Անդոկը պաշարած հրանոթների ու ասկյարների ու խուժանի վրա։

Քարանձավ Խևո, ասա... ասաց Խուգեն, կմկմում է ու շպրտում բառը, թափառող հայացքը հատակին՝ վրա-վրա կմկմում է և բառերը շպրտում-հեռացնում է իրենից։— Քարանձավ Խևոն կանչեց քսան-քսանհինգ հոգի, կանչեց ասաց՝ մանչերը էս սարի գլխին... Անդոկի. Անդոկի գլխին մահ ու սարսափի տակ նստած են, զոր ու գիշեր մահվան սարսափի տակ նստած, նստած մահվան են սպասում... մանչերը էս սարի գլխին, Անդոկի գլխին օդ չեն շնչում, օդի փոխարեն, ասաց, վախ են շնչում, ահ են շնչում... Ի՞նչ եք մտածում, ասաց։ Մանչերը... մանչերը մեղք են։ Այսպես մահվան սարսափի տակ նստած, կդառնան սարսափի

գերի, վախը... վախը կմտնի սրտերը ու էլ դուրս չի գա... Մեղք են... մեղք են մանչերը։ Ու թե ազատվեն...ազատվեն պաշարումից, ազատվեն այս գերությունից, սարսափից գերված կլինեն, ասաց, բան է, թե չսպանվեն և կենդանի մնան, վախից գերված կլինեն... ասաց, էլ ո՞ւմ են պետք. տղա են ծնվել, տղամարդ չեն մեծանա, տղամարդ... տղամարդ չեն դառնա։ Իսկ թե սպանվեն, վախը սրտերը թող չսպանվեն, վախը սրտերից թող դուրս գա, նոր սպանվեն։ Մեղք են... մեղք են մանչերը, ասաց, տղա են ծնվել, թող տղամարդ զգան իրենց, գոնե... գոնե մի պահ տղամարդ զգան իրենց, նոր սպանվեն։ Մեղք են մանչերը. ի՞նչ եք մտածում։ Հավաքեք՝ ամեն մեկին մի-մի փայտ տվեք, որպես թե զենք է, խումբ-խումբ կազմեք, որպես թե զինվոր են, ուռա կանչել սովորեցրեք՝ որպես թե կռվող են. և թող փայտերը թափ տան, և թող ուռա կանչեն և թող քշեն ասկյարների վրա և թող փայտերը թափ տան և թող ուռա կանչեն և թող քշեն խուժանի վրա և թող փայտերը թափ տան և թող ուռա կանչեն և թող քշեն-հրանոթների վրա, և թող մանչերի սրտից ահը դուրս գա, և թող մանչերի սրտից սարսափը դուրս գա, և թող մահվան սարսափը ի չիք դառնա... մեղք են մանչերը, տղա են ծնվել, ասաց, և թող տղամարդ դառնան, հետո կամ կապրեն, կամ կմեռնեն... Մարաթուկ... Մարաթուկ վկա, Քարանձավ... Քարանձավ խևոն ասաց... և երեխաները, փայտերը թափ տալով, ուռա կանչելով, վազում, վազում էին, բայց շատ էին մոտենում ճակատին, ուռա կանչելով... կանչելով ոգևորվում, վազում. վազում էին, մոտենում... մոտենում ասկյարներին ու ընկնում կրակի տակ... հնձվում... հնձվում էին...

Երբ Խուգեն խոսում էր, մենք լարվում էինք, Խուգեն պատմում էր երեխաների մասին, միշտ տղա երեխաների մասին և խոսում էր հապճեպ և բառերը շպրտելով, բառերը խճճվում էին խուրձ բեղերի մեջ, և Խուգեն մատներով պոկում էր՝ Խուգեն վրա-վրա մատները շուրթերն էր տանում՝ նյարդային ու հանկարծակիի եկածի պես, և ամեն անգամ ինձ թվում էր, թե ծխախոտը վառեց Խուգեի շուրթերը։ Մենք Խուգեի հայացքը չէինք տեսնում... Խուգեն խոսում էր հայացքը հատակին, ծխի միջից, աչքերին թափված հարի ու խոիվ հոնքերի միջից Խուգեի հայացքը պտտվում էր հատակին, և ինձ թվում էր, թե հատակին մանր,մանր, մանր ուլունքներ են շաղ եկած, որ Խուգեն տեսնում է, իսկ ես չեմ տեսնում... Իսկ մի անգամ՝ վաղ գարնանը, ձյուների մեջ ես ձնծաղիկներ տեսա և մտածեցի, որ Անդոկ սարի երեխաների մասին պատմելիս Խուգեի թափառող հայացքի տակ այս է՝ ձյուների մեջ բացված ձնծաղիկներն են։

Մեհրեն... Մեհրեն ուռա կանչելով... կանչելով վազում էր ու մեկ էլ... մեկ էլ Մեհրեն չկա,— Խուգեն Գալուստ տղային ծնկների արանքում սեղմած քրթմնջում է, կմկմում ու շպրտում է բառեր, Գալուստը ծնկների արանքում ճզմվում է, Գալուստը ճմզկտում է ու խեղճ-խեղճ մեզ է նայում, բայց ոչ կարող է Խուգեի ոտքերի աքցանից պոկվել, և ոչ Խուգեն է բաց թողնողը,— երեխաների... երեխաների ջոկատները Քարանձավ Խևոն կազմեց, Մարաթուկ վկա... Քարանձավ Խևոն կազմեց... երեխեքը... երեխեքը...— ծխի միջից, աչքերին կախված խռիվ հոնքերի միջից հայացքը պտտվում է հատակին։ Ես ուզում եմ տեսնել Խուգեի հայացքը և չեմ ցանկանում, որ Խուգեի հայացքը հանդիպի ինձ։— Խուգեի հայացքը շատ տարօրինակ էր. հանկարծակիի եկածի պես սարսափած և միաժամանակ անվախ, կովազան, հարձակվող, ըմբոստ և միաժամանակ նահանջող, ներս քաշվող ու խուսափուկ։ Երբ Խուգեի հայացքը հանդիպում էր ինձ, ես շտապ նայում էի Բարե Մանուկին, որոնում Բարե Մանուկի հայացքը. Բարե Մանուկը չէր ժպտում, բայց նաև աչքերի խորքում նման մի բան կար, Բարե Մանուկը աչքով չէր անում, բայց ամեն անգամ ինձ թվում էր, թե աչքով արեց։— Երեխաները,— խլվլում են Բարե Մանուկի շուրթերը,— երեխաները,— Բարե Մանուկը ՀՀՆՁՈ՞ՒՄ է, թե՞ ես եմ լսում,— երեխաները անտեր։— Բարե Մանուկը հակված ծխում է ու ՀՀՆՁՈՒՄ,— երեխաները։— Մշեցի Տոնեն Սմբատ տղային ծնկների արանքում սեղմած ծխում է,— երեխաները, Խուգե, երեխաները,— տմբտմբացնում է գլուխը Մշեցի Տոնեն,— մեր մանչերը Անդոկի գլխին ուռա չգոռացին, Խուգե, ուռա չգոռացին ու չքշեցին ասկյարների վրա ու խուժանի վրա ու հրանոթի վրա, բայց ո՞ւր են մեր մանչերը, Խուգե... երեխաները... ո՞ւր են Մշո դաշտի երեխաները... երեխաները,— տնքում է Մշեցի Տոնեն։

Փողփուչ Նհոն, ծիրանի փողը ծնկներին մեկնած, հակված, ծխում է։— Փողփուչ Նհոն զրուցատեղի էր գալիս սրինգը ձեռքին, ամեն անգամ՝ սրինգը ձեռքին, բայց ամեն անգամ չէր փչում։ Եվ չեմ հիշում՝ մեկ անգամ բերան բացե՞ց, Խաբրիկ Նորեի տանը Փողփուչ Նհոյի ձայնը լսեցի՞նք մենք։ Նստում էր ճրագի տակ, ամեն անգամ նույն տեղը, սրինգը մեկնում ծնկներին և լուռ ծխում։— Փողփուչ Նհոն ճրագի տակ ստվերում նստած ծխում է։ Կողքին Երազհան Մլքիկն է։

Երազհան Մլքիկը շտկվում է, Երազհան Մլքիկը՝ Առաքել տղային ծնկների արանքում, ծխում է, ահա շտկվում է, պատն ի հետ ձգվում,— Համաձայն, իր տեսած երազի, ոչ մեկ երեխա չպետք է նահատակվեր,— հայտարարում է Երազհան Մլքիկը,— Անդոկի գլխին տեսած իմ երազի համաձայն ոչ մեկ երեխա չպետք է նահատակվեր,— զրնգում է Երազհան Մլքիկի ձայնը,— իմ տեսած երազն ի հետ, Անդոկի ոչ մի երեխա, ոչ

մեկ տղա ու ոչ մեկ աղջիկ,— շեշտում է Երազհան Մլքիկը,— ոչ մեկ կին ու ոչ մեկ տղամարդ,— շեշտում է Երազհան Մլքիկը,— ոչ մեկ ծեր ու ոչ մեկ ջահել, ոչ մեկ մարդ,— հայտարարում է ու ցուցամատով հաստատում է Երազհան Մլքիկը,— չպետք է նահատակվեր,— և առարկող, առարկություն ընդունող հայացքը դիմացի պատին, պատի՞ն, թե՝ առաստաղին, դադար է տալիս Երազհան Մլքիկը։— Եվ Մլքիկի հեռագնա հայացքի դիմաց Խաբրիկ Նորեի կավածեփ պատը չէ, առաստաղը չէ, սարդոստայններով բռնկված պատը չէ, մրոտ առաստաղը չէ. Երազհան Մլքիկը իր երազն է տեսնում՝ Անդոկի գլխին կապույտ երկինք, կապույտ երկնքում՝ գունեղ-գունեղ պատկեր...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներբ Միրոն 3
Կաղծանի համփորդները 94
Մարուքա սարի ամպերը
Էս հին ու նոր օրեր... էս մամռոտ օրեր 156
Թուխ Մանուկ 159
Կանչը 167
Քեռի Թորոսը 181
Ներսեհ 200
Դավոն 209
Մովսաարի Օհանը 220
Փողփուլ Մելոն 226
Թաքոն 235
Զեռնքաշ Հերոն 241
Աղոթքը 249
Գինարբ ծաղիկ 259
Պատրանք 265
Խուքեցի Ափրեն 276
Շուկան 284
Միայնակ ծառը 294
Դաշտապահը 313
Մեղապարտը 335
Մուշ քաղաքի վերին թաղի տղան 369
Մամփրե-արքան 380
Միրանի ծառ
Օրն ավետյաց 404

Մաղթանք 409
Դարուղի 414
Աղբրանց արուն մեջ քարերուն... 423
Սպասում 430
Զայնիկդ ի հոգիս... 439
Զայն ամենայն Հայոց... 445
Տարեմուտին *(անավարտ վեպ)* 449

ՄՈՒՇԵՂ ՀՈՎԵԻ ԳԱԼՇՈՅԱՆ

Զորի Միրոն

(վիպակ, պատմվածքներ)

МУШЕГ ОВЕЕВИЧ ГАЛШОЯН

Дзори Миро

(повесть и рассказы)

(На армянском языке)

Издательство «Советакан грох»

Ереван, 1983

380
15

Խմբագիր՝ Ռ. Մ. Մուրադյան
Նկարիչ՝ Ֆ. Ա. Գյուլանյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան
Վերստուգող սրբագրիչ՝ Հ. Ն. Զորյան

ИБ 4550.

ՎՅ 09494

Հանձնված է շարվածքի 26. 04. 83 թ.։ Ստորագրված է տպագրության 8. 09. 83 թ.։ Չափսը 60×84 1/16։ Թուղթ գրքալրագրային։ Տառատեսակը՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 29,3 պայմ. տպ. մամ., 29,63 պայմ.։ ներկ. թերթ., 27,4 հրատ. մամ.։

Տպաքանակ՝ 20 000։

Պատվեր՝ 833։ Գինը՝ 1 ռ. 80 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван-9, ул. Теряна, 91.

ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆՈՎ
ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

ՍՏԵՓԱՆ ԱԼԱՋԱՋՅԱՆ — Եղեգները չխոնարհվեցին,
Անառագաստ նավակներ

ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆ — Գարուն էր, ձյուն էր արել

ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ — Ռանչպարների կանչը